



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆ

**ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

II ՄԱՍ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2013

ՀՏԴ 809.198.1
ԳՄԴ 81.2 Հ
Ա 501

Հրատարակության և երաշխավորել
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի
գիտական խորհուրդը

Աճառյան Հրաչյա

Ա 501 Հայոց լեզվի պատմություն/Հ. Աճառյան.-Եր.: ԵՊՀ հրատ.,
2013. Մաս II.-624 էջ:

Սույն հատորով ամբողջանում է մեծանուն լեզվաբանի
«Հայոց լեզվի պատմություն» ուսումնասիրությունը:

ՀՏԴ 809.198.1
ԳՄԴ 81.2 Հ

ISBN 978-5-8084-1822-6

© Հ. Աճառյան, 2013
© ԵՊՀ հրատ., 2013

Ա Ռ Ա Զ Ա Ֆ Ա Ն

Բազմավաստակ հայագետ պրոֆ. Հ. Աճառյանի սույն գրքով ավարտվում է նրա «Հայոց լեզվի պատմություն» ստվարածավալ աշխատությունը, որի առաջին հատորը լույս է տեսել 1940 թվին, Երևանի Վ. Մ. Մուրտուզի անվան Պետական համալսարանի հրատարակչությամբ: Այս երկհատոր աշխատության մեջ հեղինակը նպատակ է ունեցել պատմա-համեմատական մեթոդով շարադրել հայոց լեզվի կազմավորման ու զարգացման պատմությունը, առանձնապես հայերենի բառակազմի և քերականության փոփոխությունները: Իր այս նպատակը հեղինակն իրականացրել է բազմաթիվ հայագետների և իր իսկ ուսումնասիրությունների մատակարարած հարուստ փաստական նյութի օգտագործումով, նրա հմուտ վերլուծությամբ հանգելով հետաքրքիր ու կարևոր եզրակացությունների՝ հայերենի պատմության զանազան հարցերի մասին: Աշխատությունը լեզվական հսկայական փաստական նյութի ընդգրկումով բացառիկ տեղ է գրավում հայագիտական գրականության մեջ: Նա ընդգրկում է այն բոլոր տվյալները, որոնք վերաբերում են հայոց լեզվի բառապաշարին, այս տեսակետից նա ամփոփում է հանդիսանում «Արմատական բառարանում» պարունակված նյութի: Հեղինակը, սակայն, չի բավականացել այդ նյութի դասդասումով ու շարադրումով, այլ գիտական վերլուծություններով կարողացել է գնահատել լեզվական իրողությունները, հատկապես բառակազմի մեջ եղած փոփոխությունները: Այս երկրորդ հատորում, շարունակելով հայերենի բառային կազմի կրած փոփոխությունների պատմությունը, հեղինակը հանգամանորեն շարադրում է հունական, եբրայական, արաբական, վրացական, թուրքական, եվրոպական, նոր եվրոպական և ռուսական փոխառությունները հայերենում, ցույց տալով նաև այդ փոխառությունների տեղն ու դերը հայոց լեզվի պատմության մեջ: Այս հատորում առանձնապես հետաքրքրական են այն գլուխները, որոնց մեջ քննության են առնվում հայերենի քերականության կրած պատմական փոփոխությունները, հայերեն բարբառների առաջացման, միջին հայերենի ու ժամանակակից հայերենի կազմավորման հարցերը: Հեղինակը լեզվական հարուստ փաստերի օգտագործմամբ նկարագրում է այն բոլոր քերականական փոփոխությունները, որոնք կրել է հայոց լեզուն զարերի ընթացքում, աշխատում է էջտեղ գրանց մոտավոր ժամանակը և գտնել այդ փոփոխություններն առաջ բերող պատճառները: Այս բոլորով էլ, ահա, սույն աշխատությունը դառնում է մի հարուստ գանձարան, որի մեջ ամփոփված է հայոց լեզվի պատմության մեծահարուստ փաստական նյութը: Հինց սրանից

է բխում այն մեծ գիտական արժեքը, որ ներկայացնում է Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը», սովյալ գեպուում, նրա երկրորդ հատորը, որ հանձնվում է հրատարակության: Աշխատության այս հատորը, սակայն, ինչպես հայտնում է հեղինակն իր առաջաբանում, գրված ու պատրաստ է եղել սովետական առաջին հատորի լույս ընծայման ժամանակ, այսինքն՝ ավելի քան 10 տարի առաջ և, բնականաբար, իր այդ վիճակով սույն հատորը չէր կարող արտացոլել սովետական լեզվաբանության մեջ 1950 թվին տեղի ունեցած իրադարձությունները: Լեզվաբանական ազատ դիսկուսիայի ժամանակ և նրանից հետո լույս տեսած ընկեր Ստալինի լեզվաբանական աշխատությունները արմատական հեղաշրջում առաջացրին սովետական լեզվաբանության մեջ, հանեցին սովետական լեզվաբանությունը լճացման վիճակից և զարգացման լայն հնարավորություններ ստեղծեցին նրա համար: Իր հանճարեղ աշխատությունների մեջ ընկեր Ստալինը ստեղծագործական մարգարեգով սկզբունքներով լուծեց լեզվաբանության տեսական կարևորագույն խնդիրները և զբաղվեց իսկ հիմնադրեց ստալինյան լեզվաբանական ուսմունքը: Ինքնին հասկանալի է, որ վաղուց արդեն հրատարակության պատրաստված այս հատորը կարիք ուներ վերանայման՝ ստալինյան լեզվաբանական ուսմունքի լույսով: Սակայն հեղինակի գառամյալ հասակն ու աչքերի ծայրահեղ տկարությունը, ինչպես հայտնում է ինքն իսկ՝ հեղինակն իր առաջաբանում, հնարավորություն չեն տվել նրան այդ բանը կատարելու: Այս պատճառով էլ գիրքը սովետական է հանձնվել ենթարկվելով միայն մասնակի խմբագրական շտկունքների: Սրանից էլ բխում է այն, որ աշխատության մեջ արտահայտված մի շարք տեսակետներ ենթակա են վերանայման ու քննադատական մոտեցման:

* *

Ինչպես առաջին, այնպես էլ այս հատորում հեղինակը հետևողականորեն պաշտպանում է այն տեսակետը, որ հայերենը հնդեվրոպական լեզու է և ցեղակից լեզուների շարքում առավել մերձավոր տեղ է զբաղում մի կողմից սլավոնական, մյուս կողմից իրանական ու հունական լեզուների միջև: Այս տեսակետը հեղինակը հիմնավորում է բազմաթիվ լեզվական փաստերով, և զբաղվել, իհարկե, առաքելիլու հիմք չունենք: Սակայն, ընդունելով լեզուների ցեղակցությունն առաստարակ և մասնավորապես հայերենի ցեղակցությունը հնդեվրոպական լեզուներին, հեղինակը լեզուների ցեղակցական կապերի առաջացումը բացատրում է «նախալեզվի տեսության» համաձայն: Լեզուները, ինչպես առաջին հատորում, այնպես էլ այս հատորում անվերապահորեն գործածում է «նախահայերենից», «նախացեղ», «նախալեզու» տերմիններն այն իմաստով, որով նրանք գործածվել են անցյալում: Լեզուները այն տեսությանն է հետևում, որի համաձայն ցեղակից լեզուները երբեմնի «նախալեզվի» շարունակությունն ու ճյուղավորումներն են: Ըստ այդ տեսության նախնական ժամանակներում գոյություն է ունեցել հնդեվրոպական միասնական մի ժողովուրդ, որ սպրել է մի որոշ տեղում, հեղինակի կարծիքով այժմյան Ռուսաստանում, հետագայում այդ ժողովուրդը մասնատվել է, նրա հատվածները գաղթել, տարածվել, բնակություն են

հաստատել Ասիայի ու Եվրոպայի զանազան մասերում՝ կազմելով առանձին ժողովուրդներ: Սրան համապատասխան էլ այդ նախնական միասնական ժողովրդի լեզուն՝ «հնդեվրոպական նախալեզուն» իր ճյուղավորումներն է առաջացրել, տարբեր տեղերում ու տարբեր հատվածներին մոտ գրագրացման տարբեր ընթացք ստացել և առաջ բերել հնդեվրոպական ցեղակից լեզուները, որոնք, ըստ հեղինակի, ոչ այլ ինչ են, եթե ոչ «հնդեվրոպական նախալեզվի» տարբեր էվոլյուցիաները: Հասկանալի է, որ ժողովուրդների ու նրանց լեզուների պատմական պրոցեսի այսպիսի պարզունակ ու միակողմանի բացատրությունը ընդունելի չէ: Իհարկե, չի կարելի ժխտել գաղթների գերը ժողովուրդների կազմավորման պրոցեսում, և մարքսիզմի կլասիկները շատ հաճախ են շեշտել պատմության ընթացքում տեղի ունեցած գաղթների հսկայական դերը: Սակայն, որքան էլ մեծ լինի այդ դերը, այնուամենայնիվ չի կարելի ժողովուրդների ողջ պատմությունը վերածել գաղթների ու տեղափոխությունների պատմության՝ անտեսելով ժողովուրդների կազմավորման ներքին պրոցեսի պատմական օրինաչափությունները: Ժողովուրդների առաջացումը կապելով «հնդեվրոպական նախացեղի» մասնատման ու գաղթների հետ՝ հեղինակն այդ ամբողջ պրոցեսը դիտում է որպես արդեն իսկ կազմավորված, մեկ ընդմիջող պատրաստի ժողովրդի գաղթականություն և զբաղվելով իսկ անտես առնում յուրաքանչյուր առանձին ժողովրդի կազմավորման պատմությունը: Մինչդեռ իրականում յուրաքանչյուր ժողովրդի կազմավորումը մի կոնկրետ պատմական իրողություն է իր հատուկ պայմաններով, առանձնահատուկություններով ու գրասկզբում: Այս նույնը վերաբերում է նաև հայ ժողովրդի կազմավորման պրոցեսին: Ելնելով իր ընդհանուր գրույթից՝ հեղինակը գտնում է, որ հայ ժողովուրդն էլ «հնդեվրոպացիների» մի գաղթականությունն է, որն իբրև պատրաստի ժողովուրդ զուրթ է եկել «հնդեվրոպական նախահայերենից», ներգաղթել է Հայաստան և, իրեն ձուլելով տեղական ցեղերին ու տոհմերին, շարունակել իր գոյությունը յուր նոր հայրենիքում: Հայ ժողովրդի կազմավորման այսպիսի բացատրության հետ համաձայնել չի կարելի: Անշուշտ, մենք չենք թառում այն ենթադրությունը, որ հայ ժողովրդի մեջ մտել են եկվոր հնդեվրոպական ցեղեր և որ, նույնիսկ, այդ ցեղերը կամ ցեղախումբը կարող են նշանակալից դեր խաղացած լինել հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում, մասնավորապես, որ լեզվական սովյալներն այդ ենթադրության օգտին են խոսում: Բայց այդ դեռ չի նշանակում, թե հայ ժողովուրդը, իբրև այդպիսին, եկել է ինչ-որ տեղից իբրև պատրաստի, կազմավորված ժողովուրդ: Որքան էլ շատ լինեն հայ ժողովրդի կազմի մեջ մտած եկվոր ցեղերը, և ինչպիսին էլ լինի նրանց խաղացած դերը, հայ ժողովուրդը, որպես այդպիսին, կազմավորվել է պատմական Հայաստանում, որ իր հայ ժողովրդի և՛ նախահայերենից է, և՛ հայերենից: Ինչ վերաբերում է հայոց լեզվի կազմավորմանը, ապա այդ հարցին էլ հեղինակը մոտենում է գուհիկ էվոլյուցիոնիզմի գիրքերից: Լեզուները ընդունում է այն տեսությունը, որի համաձայն եղել է «հնդեվրոպական» նախալեզուն, որից աստիճանական ձևափոխությունների ու ճյուղավորումների հետևանքով առաջացել են ցեղակից հնդեվրոպական լեզուները, որոնցից մեկն է նաև հայերենը: Լեզուների կազմավորման այդպիսի գրույթից ելնելով և հայերենը որպես «հնդեվրոպական նախալեզվի»

ուզգալի շարունակութունը դիտելով՝ հեղինակը հայերենին հարազատ է համարում միայն այն երևութիւնները, որոնք եղել են շնորհակալական նախալեզվում և օտար է համարում այն ամենը, ինչ որ չի եղել շնորհակալութեան: Լեզուների ցեղակցութեան պատմական հիմունքի և ժողովուրդների լեզուների կազմավորման այսպիսի մեկնաբանութունը վիճելի է: Բացահայտելով Մառի ու նրա հետևորդների սխալներն այս հարցում, ընկեր Ստալինը ցույց տվեց, որ լեզուների ցեղակցութունը պատմական իրողութուն է և չի կարելի ժխտել: Մահայն ընկեր Ստալինը ցույց տվեց նաև, որ լեզուների ցեղակցութունը դորժ չունի նախալեզվի տեսութեան հետ: Ելնելով ստալինյան լեզվաբանական ուսմունքից՝ սովետական լեզվաբանութունը լեզուների ցեղակցութունը դիտում է իրեն պատմական իրողութուն և ձգտում է լուսաբանել այդ իրողութունը պատմական մասերի վրայի հիմունքներով: Եվ թեև առայժմ լեզուների ցեղակցութեան պատմական հիմունքը դեռևս իր վերջնական լուսաբանութունը չի ստացել, այնուամենայնիվ կարելի է, թեկուզ և ընդհանուր գծերով, նկարագրել այդ պատմական իրողութունը: Եթե ընդունելով ստալինյան այն հիմնաբար դրույթը, ըստ որի լեզվի հիմքն են կազմում նրա բառային հիմնական ֆոնդն ու քերականութունը, լեզուների ցեղակցութունը պետք է բացատրել որպես նրանց բառային հիմնական ֆոնդի և քերականութեան միջև եղած ծագումնաբանական ընդհանրություն: Այստեղից էլ՝ ցեղակից կարելի է կոչել այն լեզուները, որոնց բառային հիմնական ֆոնդի ու քերականութեան մեջ կան ծագումնաբանական որակ կազմող բնութագրատարրեր: Անշուշտ այդ ընդհանրությունները տարբեր լեզուների մեջ տարբեր չափերով կարող են լինել, բայց դա չի նշանակի ցեղակցութեան բացասում, այլ միայն ցեղակցության կապերի առավել կամ նվազ մերձավորություն: Այսպես, օրինակ՝ առևերեն և ուկրաիներեն լեզուների բառային հիմնական ֆոնդի ու քերականական կառուցվածքի միջև եղած ծագումնաբանական ընդհանրությունները շատ ավելի շատ են, քան նույն լեզուների և, ասենք, հնդկերենի ծագումնաբանական ընդհանրությունները, բայց այդ չի նշանակում, թե առևերենը կամ ուկրաիներենը ցեղակից չեն հնդկերենին, այլ նշանակում է միայն, թե առևերենը և ուկրաիներենը իրար հետ շատ ավելի մերձավոր ցեղակցական կապեր ունեն, որի համար էլ նրանք մտնում են հնդկարոպական լեզուների մի ճյուղի՝ սլավոնական ճյուղի մեջ, քան՝ հնդկերենի հետ: Եթե լեզուների ցեղակցութունը պայմանավորված է նրանց բառային հիմնական ֆոնդի ու քերականական կառուցվածքի միջև եղած ծագումնաբանական ընդհանրությամբ, ապա՝ սրանից ինքնին բխում է նաև այն, թե այդ ընդհանրությունը ծագում է մեկ ընդհանուր աղբյուրից: Այդ ընդհանուր աղբյուրը սովետական լեզվաբանութեան մեջ առայժմ ընդունված է կոչել հիմնալեզու: Ըստ այսմ այդ ընդհանուր աղբյուրը՝ հիմնալեզուն, ընկած է ցեղակից լեզուների հիմքում, ծառայել է այդ լեզուներին որպես հիմք, որի պատմական զարգացմամբ, ժողովուրդների կազմավորման պրոցեսին զուգընթաց կազմավորվել են առանձին ժողովուրդների լեզուները: Ցույց տալով, որ ժամանակակից լեզուների աղմբը առաջացել են խոր հնադարում, ընկեր Ստալինը ցույց է տալիս նաև, որ առմային լեզուներից դեպի ցեղային լեզուները, ցեղային լեզուներից դեպի ժողովուրդների (народности)

լեզուները և ժողովուրդները լեզուներից դեպի ազգային լեզուները կատարված անցումները լեզվի պատմության որակական տարբեր էտապներ են ներկայացնում (տես Ի. Վ. Ստալին, Վարքսիցի մեջ և լեզվաբանութեան հարցերը, էջ 26—27): Ստալինյան այս դրույթից ելնելով էլ պետք է բացատրել յուրաքանչյուր լեզվի կազմավորումը, տարբեր պատմական փուլերում տեղի ունեցած նրա որակական անցումներն ու զարգացումը: Ցեղակից լեզուները, ունենալով մեկ ընդհանուր աղբյուրից՝ հիմնալեզվից ստացած հիմքը, զարգացրել, հարստացրել են այդ հիմքը յուրաքանչյուրն իր ուրույն ընթացքով, իր ուրույն պատմական պայմաններում: Այդ ընդհանուրին նրանցից յուրաքանչյուրը ավելացրել է պատմական զարգացմամբ ստեղծած իր սեփականը, որ և կազմում է ցեղակից լեզուների միջև եղած տարբերությունների էությունը: Այսպիսով՝ ցեղակից լեզուներն ինչ-որ նախալեզվի պարզ շարունակութունը չեն, այլ պատմական ընդհանրությունների հիմքի վրա զարգացած ուրույն որակներ: Սրանից էլ բխում է այն, որ ասենք, հայերենին հարազատ պետք է համարել ոչ միայն այն, ինչ որ ընդհանուր է ցեղակից լեզուներին, այլև այն, ինչ որ նա ինքն է ստեղծել զարբեր ընթացքում: Այսպես, օրինակ՝ ժամանակակից հայերենի և եզանակիցը (կասեմ, կասեի և այլն) ցեղակից լեզուների մեջ չկա. նա ստեղծել է ինճի իսկ՝ հայերենը, բայց հենց դրանով էլ նա նույնքան հարազատ է հայերենին, նույնպես բնիկ, ինչպես ասենք, եմ օժանդակ բայը, որ հնդկարոպական ծագում ունի: Նշանակում է, ընդունելով լեզուների ցեղակցութունը, և նրանց միջև եղած ընդհանրությունների ծագումը մեկ ընդհանուր աղբյուրից դիտելով՝ չպետք է ցեղակից լեզուները մի նախնական լեզվի պարզ շարունակութունը համարել, այլ ընդհանուր հիմքի վրա զարգացած ինքնուրույն որակներ՝ իրենց ընդհանրություններով ու տարբերություններով: Այս տեսակետից էլ, ասեմ, եթե ընդհանրությունների բացահայտումը կարեւոր է լեզուների ցեղակցութունը որոշելու համար, ապա նրանց տարբերությունների բացահայտումը խիստ մեծ արժեք է ստանում նրանց ինքնուրույնութունը և նրանց սեփական յուրահատկությունները որոշելու համար: Պրոֆ. Ն. Աճառյանը, ելնելով իր ընդհանուր դրույթից, այս երկրորդ հանգամանքին կարեւորություն չի տալիս և ամեն ինչ աշխատում է բացատրել կամ ցեղակցությամբ, կամ օտար ազդեցություններով, մի բան, որ իր ուսումնասիրութեանը տալիս է խիստ միակողմանի բնույթ:

* * *

Ինչպես առաջին, այնպես էլ այս հատորում զգալի տեղ է հատկացված բառային փոխառություններին: Մանրակրկիտ ուսումնասիրությամբ քննութեան առնելով հայոց լեզվի բառային կազմի պատմությունը, հիմնվելով մինչև այժմ եղած ընդունելի ստուգաբանութունների վրա, հեղինակը առանձին գլուխներում շարադրել է այն բոլոր փոխառությունները, որ կատարել է հայերենն այլ լեզուներից: Այս բոլոր փոխառությունները հեղինակը կոչում է մի ընդհանուր անվամբ՝ «ազդեցութուն» բառով: Այսպիսի ընդհանուր անվանումը առարկելի է, որովհետև նա չի բացահայտում լեզվական ազդեցությունների ուրույն բնույթը: Մեր կարծիքով հայերենի

և ուրիշ լեզուների միջև եղած պատմական փոխադարձ հարաբերությունները կարելի էր հետևյալ կարգերի բաժանել. 1. խաչավորումներ, 2. փոխառություններ և 3. ազդեցություններ:

Առաջին կարգին պետք է հատկացնել այն բոլոր օտար բառերը, որոնք մտել են հայերենի մեջ հայ ժողովրդի կազմավորման պրոցեսում նրան ձուլված զանազան ցեղերի ու տոհմերի լեզուներից: Դա վերաբերում է հայոց լեզվի՝ իբրև ժողովրդի (էթնոսի) լեզվի կազմավորման պրոցեսին, երբ հայերենը, խաչավորվելով այլևայլ լեզուների հետ՝ հաղթել է նրանց և հարստացել է նրանց հաշվին: Դա պատմական մի երկարատև պրոցես է եղել, որի ընթացքում հայերենը, որպես հաղթող լեզու, յուրացրել է հաղթվող լեզուներից որոշ տարրեր (մեծ մասամբ բառեր) և ժամանակի ընթացքում այդ յուրացրած տարրերը ձուլել իր սեփականին ու դարձրել իրեն հարգատա: Այստեղ մենք ունենք լեզուների խաչավորման պատմական պրոցես, որի մասին ընկեր Ստալինն ասում է. «Լեզուների խաչավորումը չի կարելի դիտել որպես վճռական հարվածի եզակի ակտ, որ իր արդյունքներն է տալիս մի քանի տարվա ընթացքում: Լեզուների խաչավորումը անական պրոցես է, որը շարունակվում է հարյուրավոր տարիներ... խաչավորման դեպքում լեզուներից մեկը սովորաբար հաղթող է դուրս գալիս, պահպանում է իր քերականական կառուցվածքը, պահպանում է իր բառային հիմնական ֆոնդը և շարունակում է զարգանալ իր զարգացման ներքին օրենքներով, իսկ մյուս լեզուն աստիճանաբար կորցնում է իր որակը և աստիճանաբար մահանում:

Հետևաբար, խաչավորումը ոչ թե տալիս է ինչ-որ նոր, երբորդ լեզու, այլ պահպանում է լեզուներից մեկը, պահպանում է նրա քերականական կառուցվածքն ու բառային հիմնական ֆոնդը և նրան հնարավորություն է տալիս զարգանալու իր զարգացման ներքին օրենքներով:

Ճիշտ է, այդ դեպքում տեղի է ունենում հաղթանակած լեզվի բառային կազմի որոշ հարստացում ի հաշիվ պարտված լեզվի: Բայց դա ոչ թե թուլացնում, այլ, ընդհակառակը, ուժեղացնում է այն» (նույն տեղ, էջ 65, 66—67): Այսպես է տեղի ունեցել նաև հայոց լեզվի հետ, որը խաչավորման դարեր տեղ պրոցեսում հաղթող է դուրս եկել և հարստացրել է իր բառային կազմը այն ցեղերի ու տոհմերի լեզուների հաշիվին, որոնք մտել են հայ ժողովրդի կազմի մեջ: Այս ճանապարհով հայերենին անցած բառերը, թեև ծագումով օտար, բայց ժամանակի ընթացքում մերվել են հայերենի բառային կազմին ու դարձել նրա սեփական ու հարազատ մի մասը: Այդ պատճառով էլ նա չի կարելի նույնացնել փոխառությունների հետ, որոնց մեծադուրյն մասի գործածությունը ժամանակավոր բնույթ է կրել: Այս առաջին կարգին պետք է հատկացնել առաջին հատորում նկարագրված շարքերը (լեզուներից) հայերենի մեջ մտած բառերը:

Երկրորդ կարգին պետք է հատկացնել հայերենում գործածված այն բոլոր օտար բառերը, որոնք պատմական որոշ ժամանակաշրջանում Հայաստանին տիրողների լեզվից են փոխառված: Այսպիսի փոխառությունները մեծ մասամբ արդյունք են այն ասիմիլատորական քաղաքականության, որ վարել են օտար բռնակալները հայ, ինչպես և ուրիշ ժողովուրդների

նկատմամբ: Այս կարգի փոխառությունների առանձնահատկությունն այն է, որ նրանք մեծ մասամբ ժամանակավոր բնույթ են կրում. այդ բառերը գործածվում են այնքան ժամանակ, որքան որ տեղում է փոխատու լեզվով խոսողների տիրապետությունը, իսկ տիրապետությունից հետո դրանց մի շնչին մասն է միայն մնում լեզվի մեջ: Այսպես, օրինակ՝ հեզինակի կողմից այս հատորում նկարագրված Հռոմեական փոխառությունները՝ գլխում ասվում է, որ հունարենից, ինչպես և լատիներենից հունարենի միջոցով փոխառված բառերի ընդհանուր թիվն է 1066, որից այժմ գրական լեզվում և բարբառներում գործածվում են միայն 202-ը. իսկ եթե այդ թվից էլ հանենք այն բառերը, որոնք թեև հունարեն են և գրաբարում գործածվել են, բայց ժամանակակից հայերենում գործածվում են իբրև նոր փոխառություն՝ հատկապես ուսուցիչից (օրինակ՝ լիմոն, պոետ, եթեր, սիտան և այլն), ապա՝ հազիվ հարյուր բառ կարող ենք զտել, որ փոխառված լինելով ուղղակի հունարենից, ժամանակակից գրական լեզվի մեջ գործածություն ունեն: Այդպես էլ թուրքական լեզուներից կատարված փոխառություններն են, որոնցից մի քանի բառ է միայն մտել գրական լեզվի մեջ: Այս կարգի փոխառությունների պատմական հիմունքը և լեզվի պատմության մեջ նրանց ունեցած նշանակությունը լուսաբանում է ընկեր Ստալինը. «Պատմությունը նշում է լեզվի մեծ դիմացկունությունը և վիթխարի դիմադրողականությունը բուն ասիմիլացիային: Որոշ պատմաբաններ այդ երևույթը բացատրելու փոխարեն սահմանափակվում են զարմանք հայտնելով: Բայց գրամանքի համար այստեղ որևէ հիմք չկա: Լեզվի դիմացկունությունը բացատրվում է նրա քերականական կառուցվածքի և բառային հիմնական ֆոնդի դիմացկունությամբ: Հարյուրավոր տարիներ թուրքական ասիմիլատորները ջանք էին թափում ազճատելու, խորտակելու և ոչնչացնելու բալկանյան ժողովուրդների լեզուները: Այդ ժամանակամիջոցի ընթացքում բալկանյան լեզուների բառային կազմը ենթարկվեց լուրջ փոփոխությունների, յուրացվեցին ոչ-բել թուրքական բառեր ու արասանյատություններ, եզան նաև բնականաբար» և «հեռացումներ»՝ սակայն բալկանյան լեզուները դիմացան և ապրեցին: Ինչպես: Որովհետև այդ լեզուների քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը հիմնականում պահպանվեցին» (նույն տեղ, էջ 57—58): Ստալինյան այս հստակ բացատրությունը լույս է սփռում նաև հայերենում եղած այն հազարավոր փոխառությունների վրա, որոնք կատարվել են հունարենից, պարսկերենից, արաբերենից, թուրքերենից և այլ լեզուներից: Պրոֆ. Կ. Անառյանը ամենայն մանրամասնությամբ հավաքել և ուսումնասիրել է այդ փոխառությունները, ցույց տվել նրանց տեղն ու դերը հայոց լեզվի պատմության մեջ. առանձնապես կարևոր է այն հաշիվը, որ նա կատարում է յուրաքանչյուր գլխի վերջում, պարզելու համար, թե փոխառված բառերից քանիսն են մնացել մեր լեզվի մեջ իբրև նրա բառային կազմի անհրաժեշտ հարստություն. նույնքան կարևոր է նաև այն, որ նա ցույց է տալիս, որ այդ շարքերը լեզուներից լուրջ փոխառություններ են: Հեզինակը հատկապես հաշոյ կերպով է նկարագրել թուրքական ասիմիլատորների երկարատև տիրապետության հետևանքները հայոց լեզվի, մասնավորապես արևմտահայ բարբառների վրա: Այս իրողությունները ուղղակի կերպով համապատասխանում են

ընկեր Ստալինի կողմից տրված հանճարեղ բացատրութեանը: Սակայն, ճիշտ կերպով շարադրելով փաստերը, հեղինակը չի հանում անհրաժեշտ եզրակացութիւններ, չի ցույց տալիս, որ այդ բացատրութիւնները, որոնք մենք փոխառութիւններ ենք կոչում, հետեանք են տիրողների աստիճիատորական քաղաքականութեանը: Հեղինակը ցույց է տալիս, որ այդ փոխառութիւնները մեծազույն մասը ժամանակավոր ու սահմանափակ գործածութիւն է ունեցել հայերենում, որ գրանցելը մի չնչին մասն է մնացել որպէս հայերենի բառային կազմի անհրաժեշտ տարր: Բայց չի հանգում գրանցելը բխող այն անհրաժեշտ եզրակացութեան, որ այդ փոխառութիւնները չեն ազնատել հայոց լեզուն, չեն փոխել հայերենի հիմնական բառային կազմը և քերականութիւնը: Հեղինակը ներկայացրել է փաստերը, ընթերցողներին թողնելով հանել այդ փաստերից բխող եզրակացութիւնները: Տարակույս չկա, որ ստալինյան լեզվաբանական ուսմունքով զինված ընթերցողների համար զժողոր չի լինի հանգել այն հետևութիւններին, որոնց մասին խոսեցինք: Իսկ եթէ ճիշտ են այդ հետևութիւնները, ապա ճիշտ է նաև այն, որ այս կարգի փոխառութիւնները այլ որակ և այլ բնույթ ունեն, ուստի և չի կարելի նրանք նույնացնել նախորդ կարգի մեջ մտնող խաչավորութիւնների ու հաջորդ կարգի մեջ մտնող ազդեցութիւններին հետ, կոչել միևնույն բացատրութիւն: Բացում է զբանով իսկ անտեսել նրանց ուրույն բնույթը: Այս կարգի մեջ պետք է մտնել առաջին և երկրորդ հատորում նկարագրված բազմաթիվ բացատրութիւնները, ինչպես՝ իրանական, հունական, արաբական, թուրքական և այլն:

Վերջապես, երրորդ կարգին պետք է հատկացնել այն լեզվական ազդեցութիւնները, որոնք արդուներ են հայերի և այլ ժողովուրդների միջև եղած դարավոր հարեանակալ եղբայրական հարաբերութիւնների: Այսպէս, օրինակ՝ հայ և վրաց ժողովուրդները հարեանակալ-բարեկամական հարաբերութիւնների մեջ են գտնվում իրենց ամբողջ պատմութեան ընթացքում. այսօր էլ սոցիալիստական ազգերի ստալինյան գաբաշրջանում, այդ բարեկամութիւնն ավելի ևս ամրապնդվել է: Հասկանալի է, որ այդ երկարատև բարեկամական հարաբերութիւնների հիման վրա տեղի կունենային և ունեցել են նաև լեզվական փոխազդեցութիւններ. իրենց պատմութեան ընթացքում հայերենը վրացերենից և վրացերենը հայերենից բազմաթիվ բառեր են փոխ առել: այդ փոխառութիւնները սակայն ոչ խաչավորութիւնների հետեանք են, ոչ էլ տիրողների աստիճիատորական քաղաքականութեան, այլ դարավոր հարեանակալութեան ու բարեկամութեան: Այս կարգին է պատկանում նաև ռուսերենի ազդեցութիւնը: Ճիշտ է, մինչև Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիան ռուսական ցարիզմը վարում էր իր տիրապետութեան տակ զանվող ազգերի ռուսացման քաղաքականութիւն, սակայն Սովետական իշխանութեան հաստատումով վերացվեց ազգային ճնշումը, վերջ տրվեց ցարիզմի այդ քաղաքականութեանը, և ստեղծվեց ազգերի իրավահավասարութիւն: Սովետական Միութեան ազգերը բարեկամութեան, եղբայրութեան, իրավահավասարութեան ու համագործակցութեան անխախտ սկզբունքներով կապվեցին միմյանց հետ: Եվ քանի որ ռուսերենի, հավասարների մեջ առաջինը հանդիսացող ռուս մեծ ժողովրդի մեծ լեզվի, բարեբար ազդեցութիւնը հայերենի, ինչպէս և մեր Միութեան ուրիշ լեզուների վրա, հիմնականում

սովետական շրջանին է վերաբերում, ապա բնականաբար այս ազդեցութիւնն էլ իր բնույթով տարբերվում է առաջին երկու կարգի բացատրութիւններից: Ռուսերենը հայերենի, ինչպէս և Սովետական Միութեան բազմաթիվ մյուս լեզուների համար իբրև առաջնորդ է հանդիսանում և իր բարեբար ազդեցութեամբ նպաստում մյուս ազգային լեզուների անսխալնթաց գարգացմանը:

Այսպիսով, երրորդ կարգի ազդեցութիւններն իրենց բնույթով տարբերվում են և՛ խաչավորութիւններից, և՛ երկրորդ կարգին վերաբերված փոխառութիւններից: Այս ազդեցութիւններն արդուներն արդուներն ուրույն պայմանների և ուրույն տեղ ու դեր ունեն մեր լեզվի պատմութեան մեջ:

Ենելով այս բոլորից, պրոֆ. Ն. Աճառյանի շնորհիվ լեզվի պատմութեան ինչպէս առաջին, այնպէս էլ երկրորդ հատորում նկարագրված բացատրութիւնները պետք է գնահատել ըստ իրենց բնույթի, պարզել, թե յուրաքանչյուրը վերը հիշված երեք կարգերից որին է համապատասխանում և ըստ այնմ էլ որոշել նրանց տեղն ու դերը հայոց լեզվի պատմութեան մեջ:

* *

Ինչպէս վերն ասվեց, այս հատորում առանձնապէս ուշագրավ են այն զուգորները, որոնք վերաբերում են հայերենի քերականութեան պատմութեանը: Հեղինակը հանգամանորեն քննութեան է առնում քերականական փոփոխութիւնների պատմութիւնը և շատ արժեքավոր եզրակացութիւններ հանգում: Այստեղ էլ, սակայն, պետք է նկատել ունենալ, որ հեղինակն առաջնորդվում է լեզվական անընդհատականութեան սկզբունքով, որ հիմնված է գոհեհիկ էվոլյուցիոնիզմի վրա: Հեղինակը հայոց լեզուն դիտում է որպէս մի պարաստի երկույթ, որը դարերի ընթացքում զանազան քերականական փոփոխութիւններ կրելով ձևափոխվել է, հասել այսօրվա վիճակին, առանց որակական անցումների:

Լեզվի գարգացման այսպիսի լուսարանութիւնը ճիշտ չէ: Անշուշտ, եզվի քերականութիւնը շատ ավելի դանդաղ է փոփոխվում և, հետևաբար, որակական անցումները տեղի են ունենում աննկատելի ու դանդաղ կերպով, բայց այդ անցումներն, այնուամենայնիվ, տեղի են ունենում: Բացահայտելով լեզվի գարգացման մասին Մառի, այսպէս կոչված, պայթիւնների տեսութեան սնանկութիւնը, ընկեր Ստալինը ցույց է տալիս, որ լեզվի անցումը հին որակից նոր որակի տեղի է ունենում ո՛չ թե պայթիւնի միջոցով, ո՛չ թե գոյութիւն ունեցող լեզուն ոչնչացնելու և նորն ստեղծելու միջոցով, այլ նոր որակի տարբերի աստիճանական կուտակման միջոցով, հետևաբար, հին որակի տարբերի աստիճանական մասացման միջոցով (նույն տեղ, էջ 63): Սրանից ինքնին բխում է այն, որ լեզվի գարգացման, սովյալ գեպընում հայոց լեզվի գարգացման պատմութիւնն ուսումնասիրելի, նշանակում է ցույց տալ, թե ինչպիսի նոր տարբերի աստիճանական կուտակումով ու հին որակի ինչպիսի տարբերի մասացումով ի՛նչ որակական անցումներ են կատարվել հայոց լեզվի պատմութեան ըն-

մանավորեց հայ ազգային լեզվի երկու ճյուղերի պատմական բախտը: Արեւելահայ հասփածի լեզուն գարձավ մեր պետական լեզուն, նա ստացավ զարգացման ամեն մի հնարավորություն և այժմ արդեն դարձել է համազգային լեզու, մինչդեռ նրա արեւմտահայ գրական ճյուղը՝ զրկված լինելով զարգացման հեռանկարից ու հնարավորություններից, աստիճանաբար դիմում է դեպի մահացում: Այս է ուսուցանում մեզ մեր ազգի պատմությունը՝ հայ ազգային լեզվի ու նրա երկու գրական ճյուղավորումների մասին: Հազվի չառնելով պատմական այս իրողությունները, պրոֆ. Ն. Անառյանը աշխարհարարի ու նրա երկու ճյուղավորումների գոյացումը կտրում է հատարակության պատմությունից և կապում առանձին գործիչների շարքովաշինական, շարքովաշինական ու շարքովաշինական գործունեության հետ: Մրանից էլ բխում է առանձին գործիչների դերի այն գերազանցատուությունը, որ արտահայտվել է առանձնապես 20-րդ դարում: Պետք է նշել մանավանդ այն կողմնակալ նախապատմությունը, որ հեղինակը տալիս է պոլսեցիներին՝ նրանց վերագրելով աշխարհաբարի մշակման ամբողջ պատիվը: Հասկանալի է, որ հեղինակի կողմից մեծարանքի այս տուրքը իր հայրենակիցների նկատմամբ, պատմության ավյալներով չի հաստատվում: Այս վերաբերում է հատկապես Շարենյան աշխարհաբարին, որի մշակողները, հեղինակի կարծիքով, նույնպես արեւմտահայեր են: Բնականաբար հեղինակի այս կողմնակալությունը զուրկ է պատմական հիմքից: Ինչ վերաբերում է առանձին գործիչների խաղացած դերին, ապա այդ էլ պետք է դիտել պատմական մոտեցմամբ և չվերագրել նրանց այն, ինչ որ ամբողջ հասարակությունն է պատկանում: Ընդհանրապես պետք է ասել, որ պրոֆ. Ն. Անառյանի մոտ պատմական երևույթների բացատրությունը հանգում է մեծ մասամբ անհասանելի դերի ու նրանց հատկությունների նկարագրության (օրինակ՝ Արշակունիների հարստության անկման, արաբական խալիֆաթի քայքայման բացատրությունը և այլն): Նույնիսկ այն փաստը, որ Շարենյանի հիմքում Պոլսի բարբառն է ընկած, նա բացատրում է պոլսեցի գործիչների գերով, անտես առնելով զրա իրական պատճառները՝ Պոլսի, որպես իր ժամանակի ամենապատկառն, քաղաքական ու կուլտուրական խոշոր կենտրոնի դերը: Պատմական երևույթների ու դեպքերի այսպիսի բացատրությունն, իհարկե, անհարկ է մարքսիստական պատմական մատերիալիզմի սկզբունքներին:

Ուշադրավ են սույն հատորում հայերեն բարբառներին նվիրված գլուխները: Հեղինակը ոչ միայն տալիս է հայերեն բարբառների գիտական դասակարգումն ու նրանց համառոտ նկարագրերը, այլև մանրակրկիտ քննություն վեր է հանում հին մատենագրության մեջ եղած այն բոլոր իրողությունները, որոնք վերաբերում են 5-րդ դարի հայերեն բարբառներին, զրանց հիման վրա քննում հայերեն բարբառների առաջացման մոտավոր ժամանակի հարցը, որոշում նրանց կրած լեզվական փոփոխությունների մոտավոր ժամանակաշրջանը: Այս բոլոր քննությունները հեղինակը կատարում է ամենայն բարեխղճությամբ ու մեծագույն հմտությամբ: Բայց որքան էլ լեզվական փաստերի վերլուծությունները մանրամասն ու գիտականորեն հիմնավորված են, այնուամենայնիվ հեղինակի եզրակացությունները հայերեն բարբառների առաջացման մասին քառարկելի են: Հեղի-

նակն այն կարծիքն է հայտնում, որ հինգերորդ դարում հայերեն բարբառներ չկային, այլ կային միայն ենթաբարբառներ (էջ 125, 134, 383 և այլն): Այնուհետև, պատմական հնչյունափոխությունների քննությունը հեղինակը ցույց տալով, որ մի շարք բարբառների ամենաբնորոշ հնչյունափոխությունները գազարել են գործելուց 11-12-րդ դարերում կամ ավելի ուշ, եզրակացնում է թե, օրինակ՝ Ազուլիսի և Ղարաբաղի բարբառների ժողովրդը ընկնում է 8-մի դարերում (էջ 377, 380), իսկ Հանինի բարբառները՝ 12-րդ դարից էլ ուշ (էջ 381), իսկ սրանից էլ եզրակացնում, թե հայերեն բոլոր բարբառներն առաջացել են 8-9-րդ դարերից հետո: Այս եզրակացություններն իրենց հերքումը կրում են հենյ իրենց մեջ: Նախ հինգերորդ դարի բարբառների մասին, հեղինակը թվում է մի շարք բարբառային տարբերություններ 5-րդ դարի մատենագրության լեզվում, բայց քանի որ այդ տարբերություններն այնքան շատ և խիստ չեն, ինչպես այժմյան բարբառների միջև եղած տարբերությունները, ուստի և հեղինակը չի ընդունում բարբառների գոյությունը 5-րդ դարում, այլ ընդունում է միայն ենթաբարբառների գոյությունը: Այսպիսի բացատրությունը հիմնված է կանխորոշ կարծիքի վրա, իրականում հենց հեղինակի ասածները հակառակ եզրակացության են բերում մեզ: Հայտնի է, որ բարբառները համաժողովրդական, ընդհանուր լեզվի ճյուղավորումներն են, առանց ընդհանուր լեզվի, ինչպես ցույց է տալիս Մտալինը, բարբառներ լինել չեն կարող: Ճիշտ այդպես էլ ենթաբարբառները բարբառների ճյուղավորումներն են, և ինչպես առանց ընդհանուր լեզվի բարբառներ չեն կարող լինել, այնպես էլ առանց բարբառների ենթաբարբառներ չեն կարող լինել: Եթե հեղինակն ընդունում է ենթաբարբառների գոյությունը 5-րդ դարում, ապա նա պետք է ինքնին արդեն ընդունի նաև բարբառների գոյությունը, որոնց ճյուղավորումներն են եղել այդ ենթաբարբառները: Իսկ եթե ենթաբարբառ տերմինը գործածում է պայմանական կերպով, ցույց տալու համար, որ հինգերորդ դարում բարբառային այնպիսի խիստ տարբերություններ չկային, ինչպիսիք կան այժմ, ապա այս գեպընդ էլ այդ ենթաբարբառներ անբժինը պետք է հասկանալ բարբառի իմաստով և, հետևաբար, դարձյալ ընդունել, որ բարբառներ եղել են: Ինքը՝ հեղինակը, ճիշտ կերպով ասում է, որ բարբառի ու ենթաբարբառի միջև բացարձակ սահմանագիծ գծվար է գտնել (էջ 103), ուստի և տարբերությունների առավել կամ պակաս լինելը չափանիշ չի կարող լինել ենթաբարբառների ու բարբառների: Թուևերեն բարբառների միջև եղած տարբերությունները ավելի քիչ են, քան Ղարաբաղի բարբառի մի քանի ենթաբարբառների միջև եղած տարբերությունները, բայց և այնպես, այդ քիչ տարբերություններով հանդերձ ուսուերեն բարբառներ գոյություն ունեն: Այդպես էլ, չնայած համեմատաբար նվազ տարբերություններին, հինգերորդ դարում կային բարբառներ, որոնց հետագա զարգացումը ավելի շատացրել ու խորացրել է այդ տարբերությունները: Ինչ վերաբերում է բարբառների առաջացման ժամանակին, ապա այս գեպընդ էլ ճիշտ փոստական ավյալների ու զրանց գիտական ստույգ վերլուծությունների հիման վրա հեղինակն, այնուամենայնիվ, անընդունելի եզրակացության է հանգում: Կարելի է առանց աստանվելու համաձայնել հեղինակի այն եզրակացության

հեռ, թե, օրինակ՝ Ղարաբաղի բարբառին հատուկ բ>զ, գ>կ, դ>ժ, ձ>ծ, ջ>ճ հնչյունափոխությունը դադարել է մտափորապես 11—12-րդ դարերում: Բայց սրանից բոլորովին էլ չի բխում այն, որ այդ բարբառն առաջացել է հենց այդ դարերում, որովհետև հեղինակի այդ փաստարկումները ցույց են տալիս ոչ թե այն, թե երբ են առաջացել այդ հնչյունական օրենքները, այլ այն, թե երբ են նրանք դադարել գործելուց: Ընդունենք, որ գ>կ հնչյունափոխությունը այլևս տեղի չէր ունենում 12-րդ դարում, բայց միթե դրանից կարելի է եզրակացնել, որ նա գոյություն չուներ 10-րդ դարում: Շատ հնարավոր է, որ այդ հնչյունական օրենքը սկիզբ առած լինեք 8-րդ դարում, թեև նաև ավելի շուտ և դադարեց գործելուց 12-րդ դարում: Հետևաբար, այդ բոլոր տվյալները, որոնք մանրամասնորեն քննություն է առնում հեղինակը 27-րդ գլխում, չեն կարող հիմք հանդիսանալ բարբառների առաջացման ժամանակը որոշելու համար: այդ տվյալները շատ մեծ գիտական արժեք են ներկայացնում, բայց ոչ թե այն նպատակի համար, որին հետապնդում է հեղինակը, այլ բոլորովին այլ բանի համար: Առանց այդ տվյալներն ունենալու էլ, մենք կարող ենք ենթադրել, որ 8-րդ դարից հետո հայերեն բարբառները աշխուժացման և նորանոր ճյուղավորումների պրոցես են ապրում: Այս ենթադրությունը հիմնված է պատմական տվյալների վրա: Արշակունիների դինաստիայի անկումից հետո, ինչպես պատմությունից գիտենք, Հայաստանը նորանոր մասնատումների է ենթարկվում. ավելի ուժեղանում են տարբեր նախարարությունների կենտրոնախույս ձգտումները և, հետևաբար, ավելի թուլանում են Հայաստանի տարբեր գավառների միջև եղած կապերը. այս բանն էլ բնականաբար հիմք է հանդիսանում բարբառների աշխուժացման, նրանց հետագա ճյուղավորումների ու նորանոր բարբառների առաջացման: Սակայն այս ենթադրությունը որքանով էլ հիմնավորված է տեսականորեն, այնուամենայնիվ կարիք ունի լեզվական տվյալներով հաստատվելու: Եվ ահա, պրոֆ. Ն. Աճառյանը սույն հատորի 27-րդ գլխում մանրամասն վերլուծություններով ցույց է տալիս, որ հայերեն բարբառներից շատերին հատուկ հիմնական հնչյունական փոփոխությունները տեղի են ունեցել այդ ժամանակաշրջանում, այսինքն՝ հայ միասնական պետականության կրախից հետո: Այս տեսակետից էլ, ահա, այդ չլուրջ հատուկ գիտական արժեք է ստանում:

Ամփոփելով հայերեն բարբառների մասին վերը ասվածները՝ կարող ենք զալ հետևյալ եզրակացություն. հինգերորդ դարում, անշուշտ, կային հայերեն բարբառներ, որոնք, սակայն, թե՛ բանակով շատ ավելի քիչ էին, քան սանք 10-րդ դարի բարբառները, և թե՛ ավելի քիչ տարբերություններ ունեին իրենց բառային հիմնական ֆոնդի ու քերականության մեջ: Հետագայում հայ պետականության կրախի հետևանքով բարբառներն աշխուժացում են ապրում, որի արդյունքը լինում է մի կողմից նրանց միջև եղած տարբերությունների խորացումը, մյուս կողմից՝ նոր բարբառների առաջացումը: Սա իր հերթին նշանակում է, որ հայերեն բոլոր բարբառների առաջացումը տեղի չի ունեցել միաժամանակ, մի քանի դարի ընթացքում, ինչպես ենթադրում է պրոֆ. Ն. Աճառյանը: Հայերեն բարբառներն առաջացել են տարբեր ժամանակներում. այդ պրոցեսը՝ բարբառների առա-

ջացումը, սկիզբ է առել հայ ժողովրդի լեզվի կազմավորման ժամանակից ու շարունակվել է մինչև ազգի գոյացումը, որ սահմանափակում է բարբառների հետագա ճյուղավորումները և տանում դեպի բարբառների ձուլումը մեկ ազգային լեզվի մեջ:

Վերջապես անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք սաել նաև հեղինակի լեզվի ու ոճի մասին: Հեղինակը մեր գիտնականների ավագագույն սերնդի ներկայացուցիչն է և գործածում է այնպիսի բառեր, քերականական ձևեր ու ոճեր, որոնք թեև անցյալում սովորական, բայց այժմ հնացած են և մեզ համար՝ խորթ: Այսպես, օրինակ՝ հեղինակը սիրում է գործածել -ուրյուն մասնիկով վերջացող բառերի հոգնակի սեռականի գրաբարյան ձևը (փոխառությունաց, թարգմանությունաց և այլն), որոշ բայերի անորոշ դերձայլ՝ -ի վերջավորությունը, կամ նաև՝ ներկան (օր. թվի-թվում է, ունիմ, լինիմ) և այլն: Այս առթիվ ինքն իսկ հեղինակը հետաքրքիր խոստովանություն ունի սույն հատորի 432-րդ էջում: Բացի դրանցից, հեղինակը գործածում է որոշ տերմիններ, որոնք մեր լեզվում ընդունված չեն (օրինակ՝ ձայնափոխություն, փոխանակ՝ հնչյունափոխություն), և վերջապես որոշ տերմիններ էլ գործածում է հին իմաստով. այս տեսակետից առանձնապես պետք է հիշել ազգ, ազգուպրուն բառերը, որ հեղինակը գործածում է թե՛ ազգ, թե՛ ժողովուրդ, և թե՛ նույնիսկ ցեղ իմաստով, մի բան, որ սովորական է եղել մեր լեզվի մեջ անցյալում, բայց ոչ այժմ: Այս և նման շատ ուրիշ օրինակներ թույլ են տալիս մեզ ասելու, որ հեղինակի լեզվին ու ոճին հատուկ է հնաբանությունների առատությունը, որ պետք է հաշվի առնեն ընթերցողները և գիտեն իբրև ոչ խրախուսելի երևույթ ներկա սերնդի համար:

* * *

Անշուշտ, հիշյալ դիտողություններով չեն սպառվում այն հարցերը, որոնց մասին հեղինակի արտահայտած տեսակետները կարող են վիճարկել լինել: Իր աշխատության մեջ պրոֆ. Ն. Աճառյանը շոգափել է հայոց լեզվի պատմության հետ կապված բազմաթիվ ու բազմատեսակ հարցեր, արտահայտել է իր կարծիքը այդ հարցերի մասին: Մենք աշխատել ենք կանգ առնել միայն կարևորագույն, սկզբունքային նշանակություն ունեցող մի քանի հարցերի վրա, համոզված լինելով, որ ստալինյան լեզվաբանական ուսմունքի հիմունքներով զինված մեր ընթերցողները կարող են ճիշտ կողմնորոշում գտնել մյուս, համեմատաբար ավելի պարզ հարցերում:

Գրոֆ. Է. Գ. ԱՂԱՅԱՆ

ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈՒԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հույները կամ հելլենները նախահայրենիքից հեռանալուց հետո, հետզհետե դեպի հարավ դիմելով՝ բնակվեցին նախ Հունաստանի հյուսիսային երկրներում: Մեր թվ. 11 դար առաջ նրանք մտան Հունաստան և քշելով կամ ձուլելով նախաբնիկ պելասգներին, վերջնականապես հաստատվեցին այնտեղ: Իբրև աղքատ երկիր, Հունաստանը չպիտի բավարարեր ժողովրդի պահանջները. հետևաբար շուտով ստիպվեցին նրանք ավելի հեռուները փնտռել իրենց բախտը: Ծովը և մոտակա բազմաթիվ կղզիները նոր ասպարեզ էին բաց անում նրանց առաջ: Այսպիսով հույները դարձան ծովագնաց, առևտրով զբաղվող ժողովուրդ և հիմնեցին բազմաթիվ և նորանոր գաղթականություններ: Նրանք անցան նախ Արշիպելագոսի կղզիները, հետո՝ մտան Փոքր Ասիա, ուր հիմնեցին նշանավոր գաղթավայրեր, ինչպես Ջմյուռնիա, Եփեսոս, Միլետ և այլն: Ավելի հետո տարածվեցին Սև ծովի և Մարմարայի եզերքները: Այս ժամանակից են մնում Սինոպ, Կերչ, Բյուզանդիոն և այլ քաղաքները: Մեր թվ. 9 դար առաջ Փոքր Ասիայի արևմտյան ծովամերձ մասերում կային բազմաթիվ հույն գաղթականություններ, որոնցից ամենամեծն էր Յոնիան: Շուտով սկսվեց մրցումը նրա և Լյուդիայի միջև, որ Փոքր Ասիայի բնիկ պետութայունների մեջ ամենից ուժեղն էր և լինելով ցամաքային վաճառական պետութայուն, իր ապրանքները արտահանելու համար դեպի ծով դուրս գալու պահանջ ուներ: Պատերազմը տևեց մեկ ու կես դար և Լյուդիան կարողացավ ընկճել Յոնիան, նվաճեց Ջմյուռնիան, հետո բոլոր մյուս հունական գաղութները և ամբողջ Փոքր Ասիային տեր դարձավ: Երբ պարսիկները դուրս եկան աշխարհակալության, Լյուդիան չկարողացավ տոկալ նրանց առաջ, և իր հետ բոլոր հունական գաղութներն էլ ընկան պարսկական լծի տակ (546): Այս պահից

սկսվում են պարսկական արշավանքները բուն Հունաստանի վրա, որոնց վերջին եզրն է Ալեքսանդրի արշավանքը դեպի արևելք և պարսից պետության կործանումը (334—330):

Ալեքսանդրի աշխարհակալությամբ հույները տեր են դառնում ամբողջ Արևելքին. մինչև Միր-Պարիա (Թաթարիստան) և Ինդոս շինվում են 70-ի չափ քաղաքներ, մեծ մասամբ Ալեքսանդրիա անունով, որոնց մեջ հաստատվելով մեծ ու փոքր հույն գաղութներ, դառնում են հունական քաղաքակրթության մի-մի կենտրոն և իրենց շրջապատի մեջ տարածում են հույն լեզուն, գիտությունները, արվեստները, մի խոսքով՝ հույն քաղաքակրթությունը:

Այն տեղերում, ուր հույն գաղթականները թվով ավելի շատ էին, պետական և քաղաքակրթական ազդեցությունը այնքան մեծ եղավ, որ մի քանի դար հետո, տեղացի բնիկ ժողովուրդները կորցրին իրենց ազգային հատկանիշները, կորցրին իրենց մայրենի լեզուն և ընդունելով հունարենը՝ հույն դարձան: Այսպես եղան Փոքր Ասիայի բոլոր ժողովուրդները՝ սկսած ծովեզերքից մինչև Եփրատ, այն է՝ Հայաստան: Իսկ այն տեղերում, ուր հույն գաղթականները նվազ էին թվով, կամ թե բնավ չկային, ազդեցությունը եղավ միայն կուլտուրական և չազդեց տեղական ժողովուրդների ու նրանց մայրենի լեզվի գոյության վրա: Այս կարգին են պատկանում Հնդկաստանը, Պարթևաստանը, Պարսկաստանը և Հայաստանը: Գիտենք, որ պարթև թագավորները «հունասեր» էին և իրենց զբաղմունքի արձանագրությունը փորագրել էին տալիս ամբողջապես հունարեն լեզվով: Բայց այնուամենայնիվ պարթևներն ու պարթևական լեզուն մնացին անաղարտ: Հայաստանի մեջ էլ հունական կուլտուրան որոշ ազդեցություն ունեցավ: Զարիազրես, Տիգրան Մեծ և ուրիշ հայ թագավորներ իրենց զբաղմունքի վրա գործ են ածում հունարեն լեզուն: Տիգրանակերտում հիմնվում է հունական թատրոն, և հույն դերասանները հունարեն լեզվով ներկայացումներ են տալիս: Տիգրանի որդին՝ Արտավազդը, ստացել է հայոց պալատում այնպիսի հունական կրթություն, որ մինչև անգամ գրել է հունարեն լեզվով ողբերգություններ, Խորենացու ասելով՝ հին հայոց մեջ նոտարական գրությունները լինում էին ինչպես պարսկերեն, նույնպես և հունարեն լեզվով. «Գիր պարսից և յունաց, որովք այժմ գիւղից և գաւառաց, ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց և հանուրց հակառակու-

թեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ զըուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպհական ազատութեան պայազատութիւն» (Խոր. Ա. դ): Այս բոլորով հանդերձ Հայաստանը չի կորցնում իր արևելյան կերպարանքը, և Մոմսենի բացատրությունով մնում է միշտ «ոչ-հունական երկիր» (immer ein un-griechisches Land geblieben*), և այդ ոչ միայն մակեդոնական-հունական տիրապետության ժամանակ, այլ և նրանց հաջորդ սելևկյան, հոգոմեական և ավելի հետո՝ բյուզանդական տիրապետության ժամանակ: Այստեղ է ահա արևմտյան փոքրասիական երկիրների և Հայաստանի տարբերությունը: Նախաքրիստոնեական շրջանում հայերենը հունարենից ոչ մի ազդեցություն չի կրել, և հայերը հույներից ոչ մի բառ փոխ չեն առել (սլաֆների նման) նախ քան քրիստոնեությունը:

Երբ քրիստոնեությունը մտավ Հայաստան, հայերը կամաց կամաց ուժանալով արևելքից՝ սկսան դառնալ դեպի հույները: Բացի կրոնակցությունից՝ այդ նույնը շեշտելու էր նաև քաղաքական կացությունը, ըստ որում պարսից Սասանյան թագավորները թշնամի լինելով հայոց Արշակունիների թագավորությանը, ուզում էին զահագուրկ անել նրանց, իսկ նրանք էլ, իրենց գահը հաստատ պահելու համար ստիպված էին խնդրել մի երրորդ ուժի օգնությունը: Այդ երրորդ ուժը հույներն էին: Այսպիսով Հայաստանը գտնվում էր երեք ազդեցության ներքո. պարսիկ, հույն և ասորի: Պարսիկների կողմնակից էր ազնվականության մի զգալի մասը, հույներին կողմնակից էին թագավորները և եկեղեցականությունը, իսկ ասորիներին կողմնակից էին եկեղեցականության մի փոքր մասը և պարսից պետությունը, որ հունական ազդեցության տարածման մեջ իրեն վտանգ տեսնելով՝ ստիպված էր դիջել գոնե ասորիներին: Քաղաքական հողի վրա հաղթող դուրս գալով՝ պարսիկները հույներին վտարեցին Հայաստանից, իսկ կրոնական և ուսումնական հողի վրա մրցակցության ասպարեզը մնաց հույներին և ասորիներին:

Արդեն ասել ենք, որ եկեղեցու և դպրոցի մեջ սկզբում ասորերենը և հունարենը հավասարապես գործածական էին. բայց շուտով ասորերենը տեղի տվեց, որովհետև իր դեմ ուներ ոչ միայն հունականի ավելի ուժեղ մրցակցությունը, այլև՝ հայ

*) Mommsen, Römische Geschichte. V. էջ 366:

ազգային գրականության ստեղծումը: Լուսավորչի ձեռքով հայ եկեղեցին ընդունելով Կեսարիայի հույն եկեղեցու հովանավորությունը, բնականաբար ուժ տվեց հունարենին, և այդ հպատակությունը անշուշտ շատ ավելի մեծ ներգործություն պիտի ունենար հայ լեզվի վրա, եթե Պապը (368—374) չմտածեր բաժանել հայկական եկեղեցին Կեսարիայի թեմից և նրանից անկախ չհրատարակեր: Շուտով սրան հաջորդում է մի ավելի նպաստավոր հանգամանք. Ե դարում ստեղծվում է հայ ազգային գրականությունը և դրանով վերջ է տրվում հունարենի գործածության՝ իբրև եկեղեցու պաշտոնական լեզվի: Հիշենք, վերջապես, այն հանգամանքը, որ հայ եկեղեցին ընդունելով դավանաբանական տարրեր սկզբունքներ քան հույն եկեղեցին, վեճի է բռնվում նրա հետ. նա չի ընդունում 451 թվի Բաղեղդոնի ժողովը և 554-ին համազգային ժողովով հայտարարում է բաժանված: Ահա այս բոլոր պատճառները միանալով՝ նորից փրկում են հայերեն լեզվի գոյությունը, ինչպես եղել էր նախաքրիստոնեական շրջանին՝ տարրեր պատճառներով: Հունարենների մեծ մասնակցությունը շրջանը, ճիշտ այնպես, ինչպես այսօր չվրպական լեզուները մեր ուսումնականների շրջանում:

Հայ ժողովուրդը պարսկական տիրապետությունից հետո մի քանի անգամ էլ ենթարկվեց հունական տիրապետության. Այսպես, նախ՝ 384 թվի դաշնագրությամբ Հայաստանի արևմտյան մասը (որ կազմում էր ամբողջ երկրի $\frac{1}{3}$ -ը) տրվեց հունաց և դարձավ պարզապես հունական մի նահանգ: Երկրորդ՝ Հերակլի ժամանակ, է դարի սկզբից մինչև վերջը, Հայաստանը ամբողջությամբ խլվեց պարսիկներից և ընկավ հունաց տիրապետության տակ, թեև այդ տիրապետությունը հաճախ ընդհատվում էր պարսկական, հետո էլ արաբական արշավանքներով, մինչև որ արաբները ամբողջապես տեր դարձան երկրին՝ 693 թվին: Երրորդ՝ 1021 թվին, Արծրունյաց թագավորությունը փոխադրվելով Սեբաստիա, Հայաստանի արևելյան և հարավային մասերը անցան հույներին, որոնց ավելացավ նաև հյուսիսային մասը՝ Բագրատունյաց թագավորության կործանմամբ, 1046 թվին: Այսպես՝ ամբողջ Հայաստանը մտավ հունաց տիրապետության տակ, թեև շատ շուտով թյուրքերը եկան և հույների իշխանությունը վերջ տվին (1064): Չորրորդ՝ Կիլիկիայում և Փոքր Ասիայում հայերը բավական ժամանակ մնացին հունաց տիրա-

պետության տակ, մինչև որ ԺԱ դարու կեսից հետո թյուրքերը խլեցին Փոքր Ասիայի կեսը, իսկ հայերը Կիլիկիայում հիմնեցին անկախ պետություն (1080):

Այս բոլոր չորս շրջաններում հայերը գտնվում էին երեսուսու երեսու հունաց հետ. հայ ժողովուրդը միշտ շփում ուներ հույն բանակի և հունական պաշտոնեության հետ. եղան հունարեն լեզվից զանազան փոխառություններ, բայց դարձյալ հունարենը մեծ ազդեցություն չուներ հայերենի վրա, որի պատճառը հայ ազգային գրականության գոյությունը, հայ եկեղեցականության թշնամական վերաբերմունքը դեպի հույն եկեղեցին, և հատկապես հույն գաղթականության բացակայությունն էր: Նույնիսկ արևմտյան Հայաստանում, ուր հայերը դարերով մնացին հունական տիրապետության տակ, և շատերը ընդունելով հունական դավանանքը՝ կաղձեցին հայ-հուռոմների համայնքը, դարձյալ հայերենը չազդվեց հունարենից, և նույնիսկ հայ-հուռոմները մնացին հայախոս: Այսպեսով ուրեմն՝ հունարենը միշտ էլ մնաց որոշ ուսումնականների շրջանում միայն սովորված և ժողովրդի մեջ բնավ չմտած մի լեզու:

Ամփոփելով նյութը այս փոքր սահմանում, մենք այժմ կարող ենք խոսել հունարենի ազդեցության հանգամանքների և արդյունքի մասին:

Ի դարից սկսած, հայ ուսումնաստեղ կրիտասարդները գնում էին Աթենք և Բյուզանդիոն՝ հունական բարձրագույն դպրոցներում կրթություն ստանալու: Երբ Մեսրոպը հնարեց հայերեն գրերը (հունական այբուբենի օրինակով) և հիմք դրավ հայ գրականության, սկզբում Աստվածաշունչը թարգմանվեց ասորերենից, բայց շուտով Պոլսից ստանալով հունարեն մի ընտիր օրինակ, Սահակ կաթողիկոսը իր աշակերտների հետ երկրորդ անգամ թարգմանեց նույնը հունարենի վրայից, որից հետո ասորերեն թարգմանությունը ջնջվեց: Սրան հաջորդեցին բազմաթիվ ուրիշ հունական գործեր, որոնք թարգմանվեցին հայերենի՝ սկսած Ե դարից մինչև ԺԲ դարը: Հիշենք հնագույններից Ոսկերեանը, Սեբերիանոսը, Եվսեբիոսի Քրոնիկոնը, Բարսեղ Կեսարացու Վեցօրեայք, Կյուրեղ Աղեքսանդրացի, Կյուրեղ Երուսաղեմացի, Վարք հարանց ևլն ևլն: Այս շարքը այնքան երկար է, և այնքան հարուստ է հայ գրականությունը հունական թարգմանություններով, որ Զարբհանալյանը նվիրել է նրանց համար 764 էջով մի ամբողջ հատոր (Մատենադարան հայկա-

կան հին Թարգմանութեանց նախնեաց, Դ—ԺԴ դար, Վենետիկ (1889): Կան գրվածքներ, որոնց հունարեն բնագիրը իսպառ կորած է և գտնվում է միայն հայերեն Թարգմանությունը. այսպես՝ Փիլոն Երբայեցու մի քանի ճառերը, Եվսեբիոսի Քրոնիկոնը, Տիմոթեոս Կուզ, Իսյուզոս, Իրենեոս և այլն: Որքան շնորհապարտ է գիտությունը և հատկապես հույն գրականության պատմությունը հայ Թարգմանիչների մատուցած այս գեղեցիկ ծառայության համար:

Թարգմանությանց միջոցին տառադարձված և ուսումնականների ու եկեղեցականների ձեռքով հայերենի մեջ զանազան ժամանակ մտցրած հունարեն փոխառությանց ընդհանուր թիվը 916 է, որ նախորդների ոճով դնում ենք այստեղ նախ այբուբենական կարգով և հետո՝ ըստ տեսակի դասավորելով.

1 Արբա	abbā
ագապ «ճաշ»	agapē
ագոն, ագոնիստայք «մրցանք»	agōn
ագրիտիս «սեզ»	ágrōstis
5 ադամանդ	adámas, -mántos
ադիալիպոս «անձանձրույթ»	adiáleptos
աթանասիա «անթառամ ծաղիկը»	athanasia
աթերայ (ուտելիքը)	athēra
աթղեստայք «ըմբիշներ»	athlētai
10 ալապատր «մարմար»	alábastron
ալլիուքիայ «կապակցություն»	allēlouchía
ալփ «ա տառը»	álfha
ալփարես «այբուբեն»	alphábētos
ախդեմիա	akadēmeia
15 ալան «բերդ»	ákra
ալատ (քարը)	achātes
ալատ (նավակ)	akátion
ալար (խտը)	ákoros
ալաքթազիկ «փուռ»	ákantha
20 ալիդաս (ուղղել սկիփաս) «ճճի»	skíphes
ակողութ (բյուզանդական տիտղոս)	akólouthos
ակոնիտոն (բույսը)	akóniton
ակումիտ (կրոնական տիտղոս)	akoímētos

աղարողոն «վերարկու»	anabólaion
25 աղբատրոյ «կիր»	alábastros
աղեկատ «հլ, իլիկ»	alekátē
աղթեկ «տուղտ»	althaía
աղիմայ (բույսը)	álīma
աղկէպ «եղիճ»	akalēphē
30 աղկիրոն (թռչունը)	alkyōn
աղմուր «աղաջրով համեմանք»	haimyrís
ամաղթ-եղջիւր	Amaltheías kēras
ամարանտինէ «աղամանդե»	adamanínē
ամբիոն	ámboñ
35 ամբովտ «տեղատվություն»	ámpōtis
ամեթովտ «սուտակ»	améthystos
ամնոս «դառն»	amnós
ամոնի, անմոնի «համեմ»	ámōmon
ամփիթատրոն	amphithéatron
40 ալբ (տառը)	álfha
ալբեր (օդ)	aēr
ալիզոն «լվախոտ»	aeizōon
անադանոս «գլխակարդաց»	anagnōstēs
անաթեմայ «նզովք»	anáthēma
45 անակիւղ «պարեզոտ»	anákolos
անափոստ «բյուզանդական տիտղոս»	?
անափորայ «աղբսագիր»	anaphorá
անգարիոն «տարապարհակ»	angarēion
անգեղոս «հրեշտակ»	ángelos
50 անդիլիպս «պաշտպան»	antilepsis
անդիտիտոն «հակաթույն»	antídoton
անդլիտերիոն (չափը)	antiletērion
անդրաքնէ «դանդուռ»	andrāchnē
անդրի, անդրիանդ	andriās, -ántos
55 անդրիաստ (մակդիր դիցուհու)	adrásteia
անեմոն «պուտ»	anemōnē
անթեմ «ծաղիկ»	ánthēmon
անթիսիպատոս	anthýpatos
անթիպատրիկ	anti-patríkios
60 անիդոլոն (կարգն ամիզալոն) «նուռ»	amýgdalon
*անիսոն (բույս և հունդը)	ánison

անկիրոս «խարխիս»	änkya
անկիւն «աթոռի թև»	ankōn
անոգանալ «կարդալ»	anaginōskō
65 անոն «թոշակ»	annōna <լատ. annona
անտիմիս «խորան»	antimínsion
Անտինոս (համաստեղություն)	Antínoos
անտիքրիստոս «նեո»	antíchristos
անտոն «քարայր»	ántron
70 անքիղոս (ձուկը)	*ánkulos
ապարալսամոն (խեժը)	opobálsamon
ապա-զոնեալ «պարտվիլ»	<ζῆνῆ «զոտի»
ապահիւպատ «փոխ-հիւպատոս»	apo-hypatos
ապահիւպատիկոս (նույն)	apo-hýpatikós
75 ապահիւպարքոս «փոխ-հիւպարքոս»	apo-hý'parchos
ապարքտիաս «հյուսիսային քամի»	aparktías
ապելիոտ «արևելյան քամի»	apēliōtēs
ապոկրիսիար «եկեղեցու սպասավոր»	apokristarios
ապոմամ «տատի տատը»	apomámmē
80 ապոպապ «պապի պապը»	apópappos
ապոստոլոս «առաքյալ»	apóstolos
ապորիւմայ (հեղուկաչափ)	apórryma
ապօտիքս «մուրհակ»	apódeixis
առգեղ «կավ»	árgilos
85 Առիս «Հրատ»	á'rēs
ասարոն (բույսը)	ásaron
ասպիդ (օձը)	aspís, -idos
ասպիս «վահան»	aspis
աստակոս «խեցզետին»	astakós
90 աստողարոն «աստղաբաշխի գործիք»	astrolábon
աստոնոմի «աստղաբաշխ. աղյուսակ»	astronomía
ասփաղօթ «նավթ»	ásphaltos
ասփոդէլոն «շրեշ»	asphódelos
Ատթիդի «Ատտիկյան պատմ.»	Atthís, Atthídos
95 ատրաք (բույս է)	andráchnē
արանգնոյն «սարդ»?	arachnion
արգ «գործ»	érgon
արգասիք	ergasía
արգաստէլ «արհեստանոց»	ergastérion

100 արգեստէս «հյուս.-արևմ. քամի»	argéstēs
արգիայ «սոսոգում», ուղղել արդիայ	ardeía
արգիտէս «արագ կայծակ»	argētes
արգիւրոն «արծաթ դրամ»	árgyron
արթր «հող»	árthron
105 արիէ՛ «հերձվածող»	A'reie
արծին (բույս է)	ársēn
արնի «արքեպիսկոպոս»	archē
արմինն «առազաստ»	ármenon
արշի «արքեպիսկոպոս»	archē
110 արվէս «հալվե»	alóēs
արտարոս «արդու»	artábē
արտեմիսին (բույս է)	artemisía
արտերի «շնչերակ»	artēria
արքեպիսկոպոս	archiepískopos
115 արքերէց «ավագերեց»	archierūs
արքիդիակոն «ավագ սարկավագ»	archidiákonos
արքիմանտրիտ «վանահայր»	archimandrītēs
արքտական «հյուսիսային քամի»	arktikós
արքտորոս «Արջի պոչ համաստեղութ.»	arktoúros
120 աւր «սյուք»	aúra
ափիմեոինոս «ամենօրյա»	aphēmerinós
ափինգ (կարդան սփինգ)	sphínx
ափսէ	hapsis
ափսիմք	apsínthion
125 բաթրոն «բազմոց»	báthron
*բաղանիք	balaneíon
բաղանտ «պարկ»	balántion
բաղաս(տ)իոն «վայրի նռան ծաղիկ»	balaústion
բաղբակ «փիփերդ»	bálbakon
130 բաղիստր «նետածիգ աշտարակ»	balístra
բաղսամոն «բալասան»	bálsamon
բասիլիկ «ձեռքի կրակ»	basilikós, -kē
բասիլիսկոս «մեծ օձ»	basilískos
բարբարիկ «վայրենի»	barbarikós
135 բարբարոս	bárbaros
բեմ «ամբիոն»	bēma
բեսին (չափ է)	bissín

բիբլոս «պապիրոս»
բիրեղ
140 բղակոնք «գիշերվա հսկիչ»
բղխոր(ոս) «կանաչ»
բորողոն «գոմեշ»
բոթինոս «հրեբևույթ»
բողեայ բիր «ծեծի գավազան»
145 բոմբիլոս «շերամ»
բոնոսոս «ցուլ»
բորբորիանոս (աղանդը)
բորբորիտոն
բրաբիոն «ծաղիկ, մրցանակ»
150 բրաքման «բրահման»
գալլոս «ներքինի»
գաղափար տես կաղապար
գայիսոն «մական»
գառագիղ «գաղանի վանդակ»
155 *գալաբ
գենեսիս «հարազատ»
գիււնիոֆն «փոքրիկ գորտ»
գոնգ (բույս)
գոնգեղ «շողգամ»
160 գուուայ «սափրիչ»
գրամատիկոս «քերականագետ»
գրամար (կշիռ է)
գրայիդայ «պառավ»
դափնի
165 *դելփին (ձուկը)
դեկանիոն «տասնապետ»
դեմարքոս «իշխան»
դեմեսոս «բաղանիք»
Դեմետեր «երկրի դիցուհին»
170 դեմոն «բազմություն»
դեսպոտիկոն «տիրական»
դեսպոտ «տեր, քահանա»
դիաթիկ «կտակ»
դիալեգիական

bíblōs
béryllos
phylákeion
chlōrós
bouíbalon
bóthynos
bolís
bombýlios
bónasos
borboríanoi
borborítai
brabeion
brachmán (<սանս·brahmán)
gállos

gaisón
galeagra
gabátha
gnésios
gyrínos
góngē
gongy'le
koureús
grammatikós
grammarion
graí'dion
daphnē
delphín
dekaníōn
démarchos
dēmósios
Dēméter
dēmon
despotikón
despótēs
diathékē
dialektikós

175 դիալոգ, դիալոդոս «տրամախոսություն»
դիակոն «սարկավագ»
դիասպր (շորեղեն)
դիատոն «ասուպ»
դիաւղոն «մրցախաղ»
180 դիափսաղմայ «պաուզա»
դիդրաքմայ (փող է)
դիմիսոն «բանա»
դիմոս «ինչք»
դիմոսական «ժողովրդական»
185 դիմոս «ուսմիկ»
դիոպտոս (գործիքը)
դոմեստիկոս «հավատագիրք»
դուակոն «վիշապ»
դուակոնառ «վիշապաձուկ»
190 դստիկոն «տան հարկ»
դրակոնդիկոն «նախշ»
դրակոնտէս «վիշապաձուկ»
դրաքմայ (կշիռ և փող)
դրիփաքտայ «ճաղեր»
195 դօրիքս «առու»
երենոս «սև փայտ»
եգոււմենոս «առաջնորդ»
երեր
եթիւա (թռչունը)
200 ելեկտրիոն «սաթ»
ելեփանդական (բորոտութ.)
ելիք «փայլակ»
*եկեղեցի
եկղեսիաստէս «քարոզիչ»
205 եկղեսիաստիկոս (տիտղոս)
եղաս «եղևին»
եղեբորոս (բույս)
եղեսպակ (բույս)
եղկիանոս (թռչուն)
210 եղուրոս «կատու»
եղոփին «եղջերու»
եմատիտէս (քար է)

diálogos
diakonos
díaspros
diattōn
díaulon
diápsalma
dídrachma
dēmósion
dēmósios
dēmos
dēmótēs
díoptra
dogmatikós
drákōn
drakonáριon
dístegon
*drakontikón
drákontes
drachmé
drýphakta
hrýax
ébenos
hāgemónios
aithér
aíthya
ēlektron
elaphantiakòs
helikias
ekklēsia
ekklēsiastēs
ekklēsiastikós
elátē
(h)eilléboros
eleíspakon
alkyōn
ailouros
elaphínēs
haimatítēs

նիփորոն «ուրար»
 եմպորիոն «վաճառանոց»
 215 եմփաս «ազդու խոսք»
 ենքեղէս «օձաձուկ»
 ենքեր «անձեռոց»
 եպարքի «նահանգ»
 եպարքոս
 եպենէս (խեցեմորթ)
 220 եպիդեմել «կառուցել»
 եպիդիմիական «համաճարակի»
 եպիկլինա (երկրաշարժ)
 եպիմանիկոս «բազպան»
 *եպիսկոպոս
 225 եպիտրոպոս «խնամակալ»
 եոիէս «քահանա»
 եոմոս «բանահյուսություն»
 ետեկնի «ծնիլ»
 երգիոն (նվագարանը)
 230 երկինք (բույս)
 երմու «փայլածու»
 եւթիփոնոն
 եւտուկարտոր «ինքնակալ»
 եւրակիկոն (քամի)
 235 եւրոնոտոս (քամի)
 եւրոս (քամի)
 եւրոսիդաս (քամի)
 եփենէ (թռչուն)
 եփրոսինայ «ուրախություն»
 240 եքթերան «ձկնական»
 եքինէիս (ձուկ)
 եքինոս «ջրի ողնի»
 եքսոդիոն «նուղարկավորություն»
 եքսորի տես աքսոր (տես Ա, էջ 337)
 245 զեփիւս
 զէլօտէ «նախանձավոր»
 զիւզոսաստ «ոռնիկ բաժանող»
 զիփական «խավարային»
 զմելիե «զբշահատ»

ὄμοφóριον
 empórtion
 émphasis
 enchéleis
 encheírtion
 eparchía
 éparchos
 ai pínnai
 epidémō
 epidēmía
 epiklínētes
 epimánktion
 epískopos
 epítropos
 hieréús
 eirmós
 éteken
 órganon
 erekínē
 hermés
 euthýphron
 autokrtáōr
 eurakyklon
 eurónotos
 eúros
 euró+?
 hēphānē
 euphrosýnē
 ichthyerā
 echenēĩs
 echinos
 exódion
 zéphyros
 zelōtē
 zygostátēs
 zipháiōus
 smílōn

զմիւռնիւս (կենդանի)
 զմոտս
 զմոնիս (քար է)
 255 զոդիակոս «կենդանակերպ»
 զոմ «նավակամուրջ»
 էլիոս «արեգակ»
 էնկոմիս «ներբող»
 *էփիմերոէ «տոմարագիրք»
 260 էքսարխոս «իշխան»
 թալատայ «ծով»
 թեմ
 թեմոփորոն «տաճար»
 թերիակէ «ղեղթափ»
 265* թերմոն «տաքացրած գինի»
 թեւելիս «փոթորիկ»
 թէատրիկոն «դերասանուհի»
 *թէատրոն
 թիակոս «խումբ»
 270 թիւինի (ծառ է)
 թիւմ (բույսը)
 թիւնոս (ձուկը)
 թողոփա (կենդանին)
 թրասկիաս «քամի»
 275 իբիդ (թռչուն)
 իդէայ «զաղափար»
 իդիսար (բույս)
 իդոս «երնույթ»
 իլ «զիճուցյուն»
 280 իկոն «արքի նկար»
 իկոնոմոս «տնտես»
 իկոսաէդոն «20-անիստ»
 իմալակեալ «կակուզ»
 իմարմինէ «բախտ»
 285 իմեոիական «ամենօրյա»
 իմիողեա «թփի 1 1/2 անգամը»
 իպպէ «ձիարձակարան»
 իպպոս (աստղ)
 իոիոն (ոտանավորի չափ)

smyros, my'ros, myraina
 smýrna, smýrra
 smý'ris, smý'ridos
 zōdiakós
 zeûgma
 hēlios
 enkōmia
 ephēmerides
 éxarchos
 thálatta
 théma
 thesmophórtion
 thēriakē
 thermón
 thy'ella
 theatrikón
 théatron
 thíasos
 thyĩ'a
 thy'mos
 thy'nnos
 antólōps
 thraskías
 íbis, íbidos
 idéa
 hōdy'saron
 eidos
 yls
 eikōn
 oikonomos
 eikosáedron
 malaōks
 heimarménēs
 hōmería
 hōmiolía
 hippeía
 híppos
 hōrōikón

290 իսրոլայիդէ՝ «կեցցեն»
 իսթմիա (մրցանք)
 իսխադաս «չոր թուզ»
 իսօն «բնագիր»
 իրենարքայ «հաշտարար դատավոր»
295 իրիս «ծիածան»
 իւպոդիակոն «կիսասարկավագ»
 լաբիրինթոս
 լագ «անառակ»
 լամբատք (օղեբեռւյթ)
300 լամբար
 լապտեր
 լառնակ «աճունակալ»
 լաւրա «վանք»
 լելափս (քամի)
305 լեպիզոքաղկոս «պղնձի փշրանք»
 լեպա «բորոտութուն»
 լէօնտօֆօնոս (կենդանի)
 լիբանոն (կնդրուկ)
 լիբանոս (խնկի ծառ)
310 լիբանովիտ (բույս)
 լիբանովտոն «խնկաման»
 լիբեռնեայ (նավ)
 լիբիտոն (ճգնավորի վերարկու)
 լիբոփիւնիկ (քամի)
315 լիզոն «պտակ»
 լիզիոն «ճորտ»
 լիթ «քար»
 լիթանիա (աղոթք)
 լիկդինոս «մարմարյա»
320 *լիմոն
 լիմոնիոն (բույս)
 լինգիբոն (քարը)
 լիպարեան (քամի)
 լիպիրիայ (ջերմ)
325 *լիտր (կշիռ)
 լիւանօտոս (քամի)
 լիփս (քամի)

eis pollà éte
 tà isthmia
 ischádas (հյց.)
 íson
 eirēnárches
 iris
 hypodiákonos
 labyrínthos
 lagneúō
 lampádes
 lampádos > պհլ-
 lamptēr > պհլ-
 lárnax
 laúra
 laílaps
 lepidóchalkos
 lēpra
 leontophónos.
 líbanon
 líbanos
 libanōtís
 libanōtón
 líberna
 lebitōn
 libophoínix
 ly'gos
 lízion < րա. ligium
 líthos
 litaneía
 ly'gdinos
 limóni
 leimónion
 lingoúrtion
 Lipára
 lipyria
 lítra
 libónotos
 lips

լողոտիաս «արժեք, գին»
 լուտաս (բույս)
330 *խալկին «կաթաս»
 խարտափիլակ «ձեռնադրվողի օժանդակը»
 խոսաֆուլ «զանձապան»
 խոսուկեփաղ «սուկեղլուխ»
 կաբոս (չափ)
335 կաթարոս «մաքուր»
 կաթեզր «նստարան»
 կաթողիկէ «ընդհանրական»
 *կաթողիկոս
 կալամոն «կղեզ»
340 կաղամար «թանաքաման»
 կաղամբի «խունկ»
 կաղանդիկոն «ամանոր»
 *կաղապար
 կամաս «կապա»
345 կամար (շենքի)
 կամփասակ (աման)
 կանարոս (աստղ)
 կանկեղ(ոն) «ճաղեր»
 կանոն
350 կապելիոն «գինեստուն»
 կապիլոս (բույս)
 կառարոս «խեցզետին»
 կասզրիոս «ջրշուն»
 կասիա «դարչին»
355 կասսիոպէ (աստղ)
 կաստանայ (շագանակ)
 կատէպիս «մրրիկ»
 կատիշիտիա «վարդապետ»
 կատովդէպս (կենդանի)
360 կարակին «քանոն»
 կարբ «խեցզետին»
 կարիդոս (խեցեմորթ)
 կարկինոս «խեցզետին»
 կափոս «ջերմ»
365 կեզար «խույր»

logáriasis
 lōtós
 chalkion
 chartophylax
 chrysophylax
 chrysoképhalos
 kâbos
 katharós
 kathédra
 katholiké
 katholikós
 kálamos, -on
 kalamártion
 ?
 *kalandikón
 kalopódtion
 kámason
 kamara
 kampsákēs
 kánōbos
 kánkelon
 kanōn
 kapēlōn
 kápniós
 kárabos
 kástōr
 kasia
 kassiópēs
 kastanéa
 kataigís
 katácheús
 katábleps
 karkínos
 kárabos
 karís, -ídos
 karkínos
 kaúsos
 kídaris

կեկիրաս «քամի»
 *կեղթ «կողով»
 կեմ «խոտից չվան»
 կեմետրիայ «գերեզման»
 370 կենդար «դև»
 կենդոնառ «հին շոր»
 կենդրովն, կենտրոն
 կեռաս
 կեռեայ «կայմ»
 375 կեստ «Աստղկան արկղը»
 կերան «բաժակ»
 կերատ (կշիռ)
 կերմոս «դրամ»
 *կերոն «մոմ»
 380 կերոնոս «բարկություն»
 կեփալ «գլուխ»
 կեփալա «գլխավոր»
 կեփաղ (ձուկ)
 կէտ (ծովային կենդանին)
 385 կիբիկոն «խորանարդ»
 կիթառ
 կիկի «զղթոր»
 կիկնոս «կարապ»
 կիմինոն «չաման»
 390 կինաբարիս (ներկ)
 կինամոմոն «դարչին»
 կինկղիս «ճաղեր»
 կիպարիս «նոճի»
 կիպերիս (բույս)
 395 կիպրոս (բույս)
 կիռ «տէր»
 կիռոնոս «կայծակ»
 կիփոս «խորանարդ»
 կիտոնտ (տիտղոս)
 400 կիրէլէիտոն «Տէ՛ր, ողորմեան»
 կիւաթոս (աման)
 կիւնիկ «կրկես»
 կիւնիկոս «շնական»

kaikias
 kálathos
 kēsmós
 koimētérion
 kéntauros
 kentōnárion
 kéntron
 kērasos
 keraían
 kestós
 kēras,-n
 kerátion
 kérma
 kēfós,-n
 keraunós
 kephalé
 kephalaíos
 képhalos
 kētos
 kybikón
 kithára
 kēkís
 ky'knos
 ky'minon
 kinnábaris
 kinnámōmon
 kinklís
 kypárisos
 ky'peiros
 ky'pros
 ky'ríos
 keraunós
 ky'bos
 koitōnítēs
 ky'rie, eléson
 ky'athos
 kynēgion
 kynikós

*կիրակէ
 405 կիփաս «մեծ բաժակ»
 կլիմ, կլիմայ
 կղեր «կրոնավոր»
 կղմիճար
 կնափ (բույս)
 410 կոկոմեղոն (սալոր)
 կոկորդիլոս
 կողոր (զգեստ)
 կողոսոս «արձան»
 կոմիտ «գիսաստղ»
 415 կոն «բրգաձև»
 *կոնդակ
 կոնդակ «նիզակ»
 կոնիոն «մոլախինդ»
 կոնք
 420 կոնքեղ «խեցեմորթ»
 կոռիանդրոն «գինձ»
 կովղոս «արձան»
 կոտիւղ (չափ)
 կորանգաս «աղուավ»
 425 կորրան «սաղավարտ»
 կորէս (դիցունի)
 կորիւբանտ «քուրմ»
 կորոդիոֆի «մարջան»
 կուլիբայ «հատիկ»
 430 կուլուռիայ «աչքի դեղ»
 կուրէտ (քուրմ)
 կոքղի (խեցեմորթ)
 կուան «հույն պտուղը»
 կուոնոս «երևակ»
 435 կտին (խեցեմորթ)
 կրինոն «շուշան»
 կրիտ «քարտուղար»
 կրիտիս «քննիչ»
 կրոմին «տիտ»
 440 կրովկոս «քրքում»
 հազնի (ծառ)

kyriaké
 sky'phos
 klíma
 klēros
 keramis,-idos
 knáphos
 kokky'melon
 krokódilos
 kolóbion, kolobē
 kolossós
 komētes
 kōnos
 kontákion
 kóndax
 kōneion
 kónchē
 konchy'le
 koriándron
 kolossós
 koty'le
 kórakes
 koryphaion
 kóres
 kory'bantes
 korállion
 kólyba
 koll'y'rión
 kourates
 kochlías
 kráneia
 krónos
 kténes
 krínon
 kritēs
 krómmyon
 krókos
 ágnos

հալուէ (ծառ)
 հաղիկա «հնդեղեն»
 հեղեմոն «կուսակալ»
 445 հեննետիկոն «թուղթ միաբանության»
 հերեսիովտ «աղանդավոր»
 հերետիկոս
 Հերմէս «Փայլածու»
 հեփտասագրոն (աստղ)
 450 հիդրա «վիշապ»
 հիմէն (չափ)
 հիպատիկեան (հալվե)
 հիպոդիմիսիկոս (ընդդժման նշան)
 հիւղ, հիւլէ
 455 հիւղէ «արեղակ»
 հիւղոս (կենդանի)
 հիւպատի «հյուպատոսութ.»
 հիւպատոս
 հիւպատիկոս «հյուպատոս»
 460 հիւպարքոս «կուսակալ»
 հիւպերէտ «փոքրավոր»
 հիւփոստազիզ «գոյություն»
 հնդիկոն «խեղակ»
 հորմայ «մանյակ»
 465 հոետոր
 հոողոմ «վարդ»
 հրիզոն «կորեկ»
 զանդանոն «խունկ»
 զափաթոն «ալիւրուկ»
 470 զենաի «զենջակ»
 զեպտոն (զրամ)
 զեւտիկոն «զետականք»
 զիմիսիկոս «վարիանաի նշանք»
 զորտոս «մուրացիկ»
 475 զրամ «զիր»
 մազնետիս «մազնիս»
 *մազտաքէ «ծամոն»
 մաքեմատիկոս
 մալաթրայ (բույս)

aloš
 alíkos
 hegemon
 henōtikón
 haireiōtēs
 hairetikós
 Hermēs
 heptásteron
 hy'dra
 hōmína
 hēpatikós
 hypolōmnískos
 hy'lē
 hēlios
 hy'llos
 hypateía
 hy'patos
 hypatikós
 hy'parchos
 hypēretēs
 hypóstasis
 indikón
 hōrmos
 hrētōr
 hrōdon
 óryzon
 ládanon
 lápathon
 léntion
 leptón
 leuítikón
 lōmnískos
 lētagas
 grámma
 magnētis
 mastíche
 mathēmatikós
 márathron

480 մակարի «եբրանելի»
 մակղաղիայ (կերակուր)
 մակեդոն «մասվաճառանոց»
 մակտրայ «ալյուրի տաշտ»
 մաղարիկոն (աման)
 485 մաղթ (խեժ)
 *մամ «տատ»
 մանգղիոն «բարան»
 մանդիա «շոր»
 մանդրա «փարախ»
 490 մանեակ
 մանիա «զառանցանք»
 մանրագոր (բույս)
 *մաուուլ (բույս)
 մատուոն
 495 մարկեղ «բրիչ»
 մարմար, -իոն
 մարտիրոզոզ «վկայաբանություն»
 մարտիրոս
 մեզաղէ «մեծ»
 500 մեթել «ցնդարանել»
 *մելան «թանաք»
 մելաւ «ոչխար»
 մելովտէ «ոչխարի մորթ»
 մեկոն «խաշխաշ»
 505 մեղանպտղական (ջերմ)
 մեղեդի
 մեղիզովտայ (բույս)
 մեղրապոպ «շամամ»
 մենիդոս (ձուկ)
 510 մեսեդի «կցուրդ»
 մեսմելիոն «սինձ»
 մեսմեղոն «խնձոր»
 մետաղ
 մետաքս
 515 մետրապոլիս «մայրաքաղաք»
 մետրապոլիտ
 մեքեմայ

makários,-ria
 magdalía
 mákellon
 mákra
 ? > ասոր. mlmbrkoa
 máltha
 mámma
 ? (mánganon)
 mandy'as
 mándra
 maníakēs
 manía
 mandragóras
 maroúlion
 marty' rion
 makéle
 mármaron
 martyrológion
 mártys,-tyros
 megále
 mytheúō
 mélan
 melon
 melōtē
 mēkōn
 melámpodos
 melōdia
 melilōton
 melopépōn
 mainis,-nidos
 *mesōdia
 mēspilon?
 melon?
 métallon
 métaxa
 mētrópolis
 metropolitēs
 mechanai

միզալիս (կենդանի)
 միթոստոս (դեղթափ)
 520 միթր (կրոնավորի թաղ)
 միլ «երկանաքար»
 միլոբուս «արոտ»
 միմ } «ծաղրածու»
 միմոս, մոմոս }
 525 միստեռիոն «խորհուրդ»
 միրաբադանոս (բույս)
 միւռինէս (ձուկ)
 *միւռոն
 միւսիոն «մողայիկա»
 530 միւրիկէ (բույս)
 մղոն
 մնաս (կշիռ և դրամ)
 մոթ (չափ)
 *մոլոշ (բույս)
 535 մոնադ «քանքար»
 մոնաքոս «ճգնավոր»
 մոնոզոն «արեղա»
 մորէ «համեմանք»
 մորէաս «թուլթ»
 540 մորոս «հիմար»
 մունի «բունոց»
 մուրիկ (բույս)
 յակիմբ (քարը և ծաղիկը)
 յամբիկոն «մեծավերջ (տաղ)»
 545 յապիւզայ (քամի)
 յասպիս (քարը)
 յարկ «թակարդ»
 յեռետիկոս սպիլատէս (վեճում հաղթող)
 յորելի (տարբերակի նշան)
 550 յորելիկ «կոթող»
 յովս (տաղը)
 յուդիդաս (ձուկ)
 նատիկ,-իփ (խմորեղեն)
 նարդէս «բոխի բույսը»
 555 նարդիստաքոս «սմբուր»

mygaléas
 Mithridáteios
 mítra
 my'lios
 melóbotos

 mimos
 mysterion
 myrobálanos
 my'rinos
 my'ron
 mousíon
 myríke
 mílion
 mnâs
 módios
 molóche
 monás,-nádos
 monachós
 monázōn
 halmyris
 moréa
 mōros
 mouni
 myríke
 hyákinthos
 iambikón
 iâpygos
 íaspis
 árkys
 hieratikós spelai'tes
 obelós
 obelískos
 iōta
 ioulís,-lidos
 nastískos
 nárdeas
 nardóstachys

նարդոս (ծաղիկ)
 նարկա (ձուկ)
 Եեկտար «աստվածբնակիք»
 նեմէ (մրցանք)
 560 նիփայ (ծաղիկ)
 նոմիկոս «նոտար»
 նոմիսայ «դրամ»
 նոմոս «օրենք»
 նոմոն «հուլիս ամիսը»
 565 նումիզմատայ «երամ»
 նօտոս (քամի)
 *շինիկ (չափ)
 շլոոս «կանաչ»
 շոնիտ «լական»
 570 սբողոս (դրամ)
 սղիմբիաս (քամի)
 սղոզոմեան «Ծաղկազարդ»
 սղոմպիադ (մրցանք)
 սմբոլոն «խորան»
 575 սպզիտ (մրցանք)
 սպզոն «զենք»
 սամիզայ (խեցեմորթ)
 սսարէ(ոս)
 սկան (հրեշ)
 580 սվասիս
 սվար «զրույց»
 սվարիստէս «խոսակից»
 սվիիանոս
 սրդուկ «ուղղափառ»
 585 սրթողոքս
 սրթոփնիա «շնչարգելութ.»
 *սրիզ «բրինձ»
 սրիկանոն (բույս)
 սրիւքս «վիթ»
 590 սրմիսկ «վզնոց»
 սուդետերոն «չեղոք»
 սուկենոս տես սվիիանոս
 սունիոմի (քար)

nárdos
 náрка
 néktar
 némea
 nymphaíā
 nomikós
 nómisma
 nómos
 nómōn
 nomísmata
 nótos
 choínix
 chlōros
 chérnibon
 obolós
 olympías
 eulogeméne
 olympíās,-ádos
 émbolon
 hoplíteas
 hóplon
 osmy'le
 óstreon
 óánnēn
 óasis
 óaros
 oaristéas
 ókeanos
 orthós
 orthódoxos
 orthopnoía > ասոր.
 óryza
 oríganon
 óryx
 hormískos
 oudéteron

 ōniōn

ուրանիսկոս «քիմք»
 595 ոփիտէս (քար)
 ոփսարի «ձուկ»
 ոքսիմելի «մեղրով քացախ»
 ոքսիրինքոս «նոտրագիր»
 ոքտաէդոնն «ութանիստ»
 600 պաղակ «ծերուկ»
 պաղատին «նավ»
 պաղատիտ «չոր թուղ»
 պաղմական «երկրաշարժ»
 պանդեմի «հասարակական տոն»
 605 պանդոկի
 պանեմոս «հուլիս»
 պանթեո «հովազ»
 պանթիոտայ «նվիրապետ»
 պանկրատ(իոն) (մրցանք)
 610 *պապ «հայրապետ»
 *պապա «հայրիկ»
 պապաս «քահանա»
 պառակաւտոս «մխիթարիչ»
 պառավատոս «ուրացող»
 615 պառեկիմանոս (տիտղոս)
 պառիկոս «հարկատու»
 պատագրոս «ոտքը հիվանդ»
 պատերիոն (բույս)
 *պատրիարք
 620 պարիստրոն «Բստրոսի շրջակայքը»
 պարոպսիդ (չափ)
 *պարսիմատ
 պեղագոս «մեծ ծով»
 պեղական (թռչուն)
 625 պենտաթղոս (մրցանք)
 պեմաէկոստէ «հոգեգալուստ»
 պեոպեոստ (դրամ)

պետարիոն տէս պատերիոն
 պերեոուա «հողեր տեսուչ»
 պերիարմենիաս (գիրք Արիստոտելի)

ouranístkos
 ophítēs
 opsáron
 oxy'meli
 oxy'ryndhos
 oktaedron
 palaiós?
 հյց. platón
 palathídos
 pálma+ական
 pandēmí
 pandokeion
 panémos
 pánthēr
 Panthoídes
 pankrátion
 páppos
 páppa
 páppas
 parákletos
 parabátēs
 parakoimómenos
 pároikos
 podagrós
 eupatórion
 patriárchēs
 parístrioi
 paropsis,-ídos
 paximádin
 pélagos
 pelekán
 péntathlon
 pentēkosté
 hypérperon >լա. hy-
 perperata

perlodeutēs
 peri hermēnefas.

630 պերիպատետիկեան «ճեմական»
 պերիտոմել «թլիպատել»
 պերիքոն (պերիդեքսիոն) (ծառ)
 պերոեւենդեդիոն «նախավետարան»
 պերոդ «շղարշ»
 635 պերսէ (ծառ)
 պեւկէ «սոճի»
 պիգասոս (ձին)
 պին, պինայ, պիննոս (խեցեմորթ)
 պիպոս (թռչուն)
 640 պիսիդոն «ծով»
 պիսինոն «ծովի բուրդ»
 պիտակ «թղթիկ»
 պիտուս (ծառ)
 պիւթիա (մրցանք)
 645 պիւթոն «հարցուկ»
 պիւթոս (աման)
 պիւոամուդէս «բրդաձեւ»
 պիւոիոն «ատրուշան»
 պիւրամիդ «բուրգ»
 650 պիքիւն «ջրանցք»
 պրակուուդ «կարկանդակ»
 պրայիդա (աստղ)
 պրատան (ծառ)
 *պեակ «ափսե»
 655 պնակիտ «այբբենի տախտակ»
 պոդիրի «երկար շոր»
 պոդիպոդ (խեցեմորթ)
 պոմպիլոս (ձուկ)
 *պոռնիկ
 660 պոռփիւռիկոն «ծիրանի»
 պոտատ «գրամ»
 պորփիր (քար)
 պուետէս, պուետիկոս «բանաստեղծ»
 պոետեք (օդերևույթ)
 665 պոիստիմոն «գրավ»
 պոռթես } «առաջադրույթուն»
 պոռթեսմիոս }

peripatētikos
 peritomē
 peridēxion
 proeuangēlion >սուր.
 perizōma
 perséa
 peúkē
 pēgastos
 pínna, pína
 pípos
 poseidōn
 by'ssinon
 pittákion
 pítys
 py'thia
 py'thōn
 píthos
 pyramoeidēs
 pyreion
 pyramís,-idos
 pēchys
 plakoús,-úntos
 pleiáda
 plátanos
 pínax,-akos
 pinakís,-idos
 podētes
 poly'pous,-podos
 pompílos
 pórnos, pórnē
 porphyrikón
 botínat
 porphy'ra
 poiētēs
 prēstēr
 próstimon
 próthesis
 prothēsmios

պոռմէական «Պոռմեւսին վերաբերյալ»
 պոռյզ «օծիտ»
 670 պոռտոն, պոռտին «առաջին»
 պոռտոնպատրիկ «մեծ պատրիկ»
 պոռտոպապ «հայրապետ»
 պոռտոսպաթար (տիտղոս)
 պոռտոստրատոր «գորավար»
 675 պոռտոֆրոնէս «նախաթոռ պատրիարք»
 պոտուկուրապաղատ «մեծ կյուրապաղատ»
 պոտուեւաստիոս «մեծ ազնվական»
 պոսէօթէօս «մերձեցիր, իմ աստված»
 պոսլաւմէն «միտ դնենք»
 680 պտեր (բույս)
 պտղի (ծառ)
 պրակ «գրքի մաս»
 *պրակտոր «հարկահան»
 պրաս (բույս)
 685 պրասիս (բույս)
 պրաստին «արվարձան»
 պրաքսիս «գործ»
 պրիոնէ (ձուկ)
 պրիստէ (ձուկ)
 690 պրիւտան «առանակալ»
 պրոթիագմենոս «պատարագ»
 պօտուուում «կրկես»
 ոարդոն «ցուպ»
 ոակայ «տխմար»
 695 ոաքիա «ալիքի պատառում»
 ոետին
 ոեփանին «բողկ»
 ոիզայ «արմատ»
 ոոյիկեան «դյուցազնական»
 700 ոարիթայ (չափ)
 ոալոն «խենթուկ»
 ոաղամանդր (սողուն)
 *սաղմոս
 ոաղմոսողոգ «սաղմոսասաց»
 705 սանգարակ (ներկ)

proméús
 proix,-ikós
 հյց. prōton,-ton
 prōto-patrikios
 prōtopápēs
 prōto-spathários
 prōtostrátōr
 prōtosphrontistēs
 prōtokouropalates
 prōtosebastós
 prósei ho Theós
 próschōmen
 pterís
 pteléa
 práxis
 práktōr
 práson
 prásion
 proásteion
 práxis
 príonai
 prístes
 pry'tanis
 proegiasménos
 hippodromia,-ómion
 hrábdon
 hraká<սոր. raqa
 hrachía
 hréíne
 hraphantis,-in
 hríza
 hserōíkós
 sabithá
 sálos,-on
 salamándra
 psalmós
 psalmológos
 sandarákēs

սատիրոս «կապիկ»
 սատոն (չափ)
 սատրապ «իշխան»
 սարդիոն (քար)
 710* սաւան
 սերաստէ «օգոստափառուհի»
 սերաստոս «օգոստափառ»
 սերենի «արմավենյա»
 սել(աս) «ասուպ»
 715 սեղակ (ձուկ)
 սեմագիր }
 սեմիար } «սղագրող»
 սենգելոս «դպրապետ»
 սեպեան (ձուկ)
 720 սերաստէս (օձ)
 սիաղոս (սիկղոս) (կշիռ)
 սիբիդիա «մարգարեուհի»
 սի կիրիէ «քեզ, Տեր»
 սիկղ (կշիռ և դրամ)
 725 սիդդորայ «վանկ, տառ»
 սիմեոիկոն «մասնակից»
 սիմէս (կշիռ)
 *սիմիդր «նաշիհ»
 սինագոլգայ «հրեից ժողովարան»
 730 սինդիկոս «փաստարան»
 սինդոն «կտավ»
 սինեդրիոն «ժողով»
 սինէհիս (ջերմ)
 սինկղիտիկոս «ծերակուտական»
 735 սինկղիտոս «ծերակույտ»
 սինտեկնոս «կաթնեղրայր, սան»
 *սինոն «սահման»
 սիտղ «դույլ»
 սիրայ «չվան»
 740 սիւնբոլոն «հանգանակ»
 սիւնիքոսական (ջերմ)
 սկալինեան (եռանկյուն)
 սկադիդ «բրիչ»

sátyros
 sáton
 satrápēs
 sárdion
 sábanon
 Sebastē
 Sebastós
 sebénion
 sélas
 sélachos
 semeiográphos
 semeiários
 sy'nkellos
 sepiá
 kerástēs
 síklos
 síbylla
 soi, ky'rie
 síklos
 syllabē
 sym-merízō?
 semídalís
 synagōgē
 sy'ndikos
 sindōn
 synédriōn
 synechās
 synkletikós
 sy'nkletos
 sy'nteknos
 sy'noros
 sitla<լտ. sítula
 seirá
 sy'mbolon
 synechōs
 skalēnós
 ?

սկամինոս «թուֆ»
 745 սկարոս (ձուկ)
 սկեպտոն «գավազան»
 սկետա «խարազան»
 սկեւոին «արկղիկ»
 սկիթոն «աստղաբաշխի գործիք»
 750 սկիլայ (հրեշ)
 սկիպտոս (շանթ)
 սկիւթիկոն «զմբուխտ?»
 սկիւտաղ «խարազան»
 սկորզոն «սխտոր»
 755 սմարաքթոս «զմբուխտ»
 սնդմայ «կապանք»
 սոդէն «խողովակ»
 սովուրոն «գրամ?»
 սոտերական «ընծա»
 760 սոփեստէս «իմաստակ»
 սոփի, սոփիայ «իմաստութիւն»
 սոփիա ոսթիւ «իմաստութեամբ և ուղիղ»
 սպաթար «բանտապետ»
 սպատաղանք «փափկակեցութիւն»
 765 սպուդեայ «ճանապարհ»
 սպունգ
 ստադիոն «մրցարան»
 ստամոքս
 ստատիկէ }
 ստաքտիկէ } «ստաշիս խեժը»
 770* ստեպլին «գազար»
 ստիխարին «վերարկու»
 ստիւրակ (խեժ)
 ստիքերոն «ոտանավոր»
 ստիքս «տարերք»
 775 ստոդոզի «կցուրդ, երգ»
 ստոմ «թրի բերան»
 ստոման (աման)
 ստոյա }
 ստոյիկեան } (դաս փիլիսոփայից)
 ստորովենի (ծառ)

sykaminos
 skáros
 skēptron
 skytís
 skébrion
 skiótheron
 skylla
 skēptós
 skythikón
 skytálē
 skórdon
 smáragdos
 syndesma
 sōlōn
 obolós, -ón
 sōtērios
 sophistēs
 sophía
 sophiā orthoi
 spathários
 spatálē
 spoudaíos
 spóngos
 stádion
 stómachos
 staktiké <պհլ.
 *staxsa
 staphylinos
 sticháron
 sty'rax
 stichérón
 stoicheíon
 stichología
 stóma
 stámnos
 stoà
 stōikós
 stróbilos

ստորիլոս (մրրիկ)
 ստրատ }
 ստրատելատ } «զորապետ»
 ստրատիգին «զորանոց»
 785 ստրորոդոն տես ստորովենի
 ստրոմ (խեցեմորթ)
 ստրովբիւղ «շունչան»
 սրիկոն (ներկ)
 սփենդոն «մատանու ակ»
 790 սփեռ «գունդ»
 սփիւրիկ «կողով»
 սքաստերիէ «ճախարակի չվան»
 սքեմ
 սքինոս «սեղ»
 795 սքինոս (ծառ)
 սքողաստիկոս
 սքողար «պահակախումբ»
 սոսամն «քունջութ»
 սփիտամոն (ծառ)
 800 վառ (եղանակի տեսակ)
 վասիլիոս «թագավոր»
 վասիլիսկոյ «արքայիկ օձ»
 վարքայ «նավակ»
 վլիտոն (բույս)
 805 վոռէ(աս) (քամի)
 *վրծին
 տալիթայ «աղջիկ»
 տաղանդ
 տառաղան «կողով»
 810* տառեխ
 տարտարոս «դժոխք»
 տաւոն (աստղ)
 տաքսիոս «հետևակ զինվորներ»
 տաքտիկոն «կարգ»
 815 տեառ «խուլը»
 տելետի «սրբազնագործութիւն»
 տելետիս «զլուխ հոնտորաց»
 *տետր(ակ)

stróbilos
 strátios
 stratelátēs
 stratēgion
 strómbos
 stróbilos
 syrikón
 sphendónē
 sphaira
 spyris, -idos
 schastería
 schēma
 schoínos
 schínos
 scholastikós
 scholárioi
 sesámē
 sphéndamnos
 bary's
 basileús
 basilískos
 bárka
 bífton
 boréas
 boúrtsa
 talithā <արամ. talīthā
 tálanton
 taláron
 tárīchos
 tartaros
 taúron
 taxiótes
 taktikón
 iára
 teletē
 teleiótes
 tetrás

տետրասկեղ «հենարան»
 820 տելթիէդէս (ձուկ)
 տիգրիս «վագր»
 տիմիոս «պատվական»?
 տիպ
 տիպոն «կանոն»
 825 տիտան «հսկա»
 տիւփոն «մրրիկ»
 տիփտիկոն «ցուցակ»
 տոկոս
 տոմ «հատոր»
 830 տոմար
 տոմս
 տուբի (ամիս)
 տոքսական «թունավոր»
 տպագիրոն (քար)
 835 տոկրուն (շոր)
 տուխտոն (ջերմ)
 տրակ տես տետրակ
 * տրապիզ «սեղան»
 տրապիզիտ «սեղանավոր»
 840 տրիբոզոս «փուշ»
 տրիգոն (ձուկ)
 տրիէր «եռաթի (նավ)»
 տրիւդոն «ափսե»
 տրմէս (կշիռ)
 845 տրոքիլոս (թռչուն)
 րաւդոս (օգերևույթ)
 * րոպէ
 փագրոս (ձուկ)
 փալկոն (բազէ)
 850 փալկեղն «ուրար, վեղար»
 փաղանդ «բանակ»
 փաղանդ «մորմ»
 փաղարիկ (թռչուն)
 փաղղոս «առնի»
 855 Փայիթոն «կուսնթաղ»
 փասեակ «զատիկ»

tetraskelós
 յգ. teuthídes
 tigrís
 tímios
 ty'pos
 ty'pon
 Titán
 ty'phōn
 díptychon
 tókos
 tómos
 tomáriton
 tómos
 tybí
 toxikón
 topázion
 tribōn
 tríton

 trápeza
 trapezítēs
 tríbolos
 trygōn
 triátes
 tryblion
 trimísson
 trochílos
 rábdos
 hropé
 phágnos
 phálkōn
 phákelos
 phálanā
 phálanx
 phalarís
 phallós
 Phaéthōn
 phasék

փասեան (թռչուն)
 փիլոսոփոս «փիլիսոփա»
 * փիլոն
 860 փիրիսկոպոս «քորեպիսկոպոս»
 փիւղակէ «բանտ»
 փիւնիկ (թռչունը)
 փիւսիկեան «բնագետ»
 փղոմոս (բույս)
 865 փոկ (կենդանին)
 փոսուայ «լուսատունիկ»
 փորոն «ուրար»
 փոատոր «գործակալ»
 փոենիտ «խելագարություն»
 870 փսալմոս «սաղմոս»
 փսաղտ «սաղմոսերգու»
 փսենաս «բեղմնափոշի»
 փսիաթ «խսիր»
 փսիաթին «փոքր խսիր»
 875 փսոլոս (օգերևույթ)
 փրուրիտոսիկ «պահակագոր»
 փրոսոփոն «գեմք»
 քաղազիր «մորթե անկողին»
 քաղբան (խեծ)
 880 քաղկանթոյ «ժանգառ»
 քաղկոլիբանոն (մետաղ)
 քաղկոս (դրամ)
 քամափիթոս «զաղձ»
 քանոնիկոն «քանոնով քաշված»
 885 քարադր (թռչուն)
 քարակ «մույթ»
 քարակտիր «նկարագիր»
 քարիւրդ «հորձանք»
 քարտ «թուղթ», քարտէս
 890 քարտուղար
 քեղիկոն «զլանի շրջագիծք»
 քեռինոս «թերակղզի»
 քիդոս «կերակուր»
 քիմեռ (հրեշ)

phasianós
 philósophos
 phelónēs
 *perískopos
 phylakē
 phoinix
 physikós
 phlómos
 phōkē
 *phōsourá
 [ōmo]phóriton
 phrátōr
 phrenítis
 psalmós
 psáltēs
 psēn, psēnas
 psíathos
 psiáthion
 psólos, psolóeis
 phroureítikós
 próssōpon
 chaládrion
 chalbanē
 chalkanthōn
 chalkolibanon
 chalkós
 chamaípitys
 kanonikón
 charadriós
 charax
 charaktēr
 chárybdís
 chártes
 chartoulártios
 helikón
 cherrónēsos
 chilós
 chimaira

895	քիմերոն «հս. սառուցյալ գոտի» քլամիդ «ծիրանի» քոնարոն «կորկուտ» քոռ (չափ) քորեպիսկոպոս	cheimérian chlamy's,-y'dos chóndros,-on chór chōrepískopos
900	քուզայ (չափ) քոսսելիթիս «ոսկեքար» քսեստ (չափ) քսենոդոչինի «հյուրատուն» քսիփիէ (ձուկ)	chouzâ chrysólithos xéstos xenodocheion xiphias
905	քրիայ «հիշատակ տեառն» քրիզմայ «բաղնիսի ցեխ» քրիսոպրասոս (քար) քրիստիանոս «քրիստոնյա» *քրիստոնեայ	chreía chrísma chrysóprasos christianós Christos,-on
910	քրոնիկոն «ժամանակագրութիւն» քրոնոգրափես «ժամանակագիր» օրթի «ուղիղ (կանգնեցեք)» օքսինտի «ասեղնագործ» օքսունական «ծիրանեզույն»	chronikós, ón chronographeús orthoí oxyntér oxy's
915	Ֆանոսել «կոկել»	phanós

1. Անուրջան եւ նրա զորութեանց մասին

ա) Բնութիւն.— այեր, անտոնն, արգիտէս, բոթինոս, դօրիքս, եթեր, ելիք, եպիկլինտ, զիփական, իրիս, լամբատ, կիոռնոս (կերօնոս), սվասիս, պաղմական, պոեստեր, սկիպոս, բաւզոս, փսոլոս:

բ) Մով.— ամբովտ, թալատայ, ովկիանոս կամ ուկենոս, պեղագոս, պիսիդոն, ուքիա, քարիւբդ:

գ) Երկնային մարմիններ, աստղեր.— առիս, անտինոս, արքտորոս, զիատոն, երմու, զոդիակոս, իպպոս, կանարոս, կասսիօպէ, կոմիտ, կոռնոս, հերմէս, հեփտաստերոն, հիւղէ, պղայիդա, սելաս, տաւռոն, փայլթոն:

դ) Քամիներ.— ապարքտիաս, ապելիոտ, արգեստէս, արքտական, աւր, եւրակիկլոն, եւրոնոտոս, եւրոս, եւրոսիդաս, զեփիւռ, էլիոս, թելելիա, թրասկիաս, լելափս, լիբոփիւնիկ, լիպարեան, լիւանօտոս, լիփս, կատէզիս, կեկիաս, յապիւզայ, նօտոս, ոդիմբիաս, պոեստեր, ստոռիլոս, վոռէ, տիւփոն:

ա) Դիցարանական.— ամաղթեղշիւր, անդրիաստ, բրաքման, դեմեաէր, իմարմինէ, կենդար, կեստ, կորէս, կորիւբանտ, կուբէտ, կոռնոս, նեկտար, պանդեմի, պանթիօտայ, պիզասոս, պիսիդոն, պիւթոն, պիւռիոն, պոռմէական, ռոյիկեան, սկիւլայ (սկիւղ), սիբիդդա, տարտարոս, տիտան, փաղոս, քիմեո:

բ) Քրիստոնեական.— ագաս, անաթիմայ, անգեղոս, անտիմիս, ապոստոլոս, անտիքրիստոս, արիէ, բորբորիանոս, դեսպուտ, դիաթիկ, դոմեատիկոս, եկեղեցի, եկղեսիաստէս, իկոն, լիթանիա, կաթարոս, կաթողիկէ, կանոն, կերոն, կիրէլէիսոն, կոնդակ, հեննետիկոն, հերեսիովտ, հերետիկոս, մակարի, մարտիրոս, մարտիրոզոզ, միւռոն, ողոզոմեան, որդուկ, որթողքս, պաւակաւտոս, պաուաւտոս, պենտեկոստէ, պերիտոմել, պերոնեւենգեղիոն, պոսսէօթէօս, պոսսիւռմէ, պրոժիպմենոս, սիւնբոլոն, սիկիբիէ, սկեւռին, սոֆիա ոսթիւ, սքեմ, տաքտիկոն, տելետի, տետրասկեզ, տիփտիկոն, փասեակ, փսալմոս, քրիայ, քրիստիանոս, քրիստոնեայ, օրթի:

գ) Եկեղեցական պաշտոնները.— արբա, սկումիտ, անագանոս, ապոկրիսիար, արհի, արշի, արքեպիսկոպոս, արքերէց, արքիդիակոն, արքիմանտրիտ, դիակոն, եկղեսիաստէս, եկղեսիաստիկոս, եպիսկոպոս, եռիէս, իւպողիակոն, խարտափիլակ, կաթողիկոս, կատիշիտիտ, կղեր, մետրոպոլիտ, մոնոզոն, մոնաքոս, պաս, սաղմոսողոզ, սենգելոս, սպուդեայ, պասպաս, պատրիարք պերետուտ, պոտոպաս, պոտոֆրոնտէս, փիլիսկոպոս, փսաղտ, քորեպիսկոպոս:

3. Մարդ եւ մարմնի մասեր

Արտերի, քասիլիկ, կեփալ, մունի, ուրանիսկոս, ստամոքս, փրօսփոն:

4. Հիվանդութիւն եւ նախնի բառեր

Անդիտիտոն, ափիմեոլինոս, զալլոս, ելեփանդական, եպիդեմիական, թերիակէ, իմեոիական, լեպո. լիպիլիայ, կարկինոս, կափոս, մանիա, մեղանպոզական, միթոլիտոս, որթոփնիա, պատագրոս, սինէհիս, սիւնիքոսական, տոքսական, տոիտոն, փոենիտ, քրիզմայ:

Ճ. Կենդանիներ

Ակիդաս, աղկիոն, ամնոս, անքիդոս, ասպիդ, աստակոս, արանգնոյն, ափինգ, բասիլիսկոս, բորոդոն, բոմբիւլոս, բոնոսոս, գիւռնիոյն, դելփին, դոակոն, դոակոնառ, դրակոնտէս, եթիւա, եղկիանոս, եղուրոս, եղոփին, ենքեղէս, եպենէս, եփենէ, եքթե-րան, եքինէիս, եքինոս, զմիւռնիա, թոզոփա, թիւնոս, իբիդ, լէ-օնտօֆօնոս, կառարոս, կասդրիոս, կատովղէպս, կարբ, կարիտոս, կարկինոս, կեփաղ, կէտ, կիկնոս, կոկորդիլոս, կոնք, կոնքեղ, կոքղի, կտին, հիդրա, հիւդոս, մելաւ, մենիդոս, միգալիս, միւ-ռինէս, յուղիդաս, նարկա, ոսմիդայ, ոստրէոս, ովան, որիւքս, ոփսարի, պանթեռ, պեղական, պին, պիպոս, պողիպոդ, պոմպի-լոս, պրիոնէ, պրիստէ, սաղամանդր, սատիրոս, սեղակ, սեպեան, սերաստէս, սկարոս, սկիւդ, սպուռգ, ստրոմ, վասիլիսկոյ, տա-ռեթ, տեթիէդէս, տիդրիս, տրիգոն, տրոքիլոս, փագրոս, փալ-կոն, փաղանգ, փաղարիկ, փասեան, փիւնիկ, փոկ, փոսուռայ, քարադր, քսիփիէ:

Զ. Ընտանիք եվ ընկերություն

Ապոմամ, ապոպապ, գենեսիս, գրայիդայ, դեմոն, դիմոս, դիմոսական, լիդրոն, զորտոս, մամ, պապա, պաղակ, պառիկոս, պոռնիկ, սինտեկնոս, տալիթայ:

Է. Երկրագործական

ա) Բույսեր.— ագրիտիս, աթանասիա, ակար, ակաքթագիկ, ակոնիտոն, աղթեկ, աղիմայ, աղկէպ, ամոնի (անմոնի), այիզոն, անդրաքնէ, անեմոն, անթեմ, անիդոլոն, անիսոն, ասարոն, աս-փոդէլոն, ատրաք, արծին, արվէս, արտեմիսին, ափսինթ, բա-ղաստիոն, բաղրակ, բաղսամոն, բրաբիոն, գոնգ, գոնգեղ, դափ-նի, երենոս, եղատ, եղբորոս, եղեսպակ, երեկինք, թիւինի, թիւմ, իդիսար, լիբանոս, լիբանովիտ, լիմոն, լիմոնիոն, լու-տաս, կալամոն, կապիլոս, կասիա, կաստանայ, կեռաս, կիկի, կիմինոն, կինամոմոն, կիպարիս, կիպերիս, կիպրոս, կիտրոն, կնափ, կոկոմեղոն, կոնիոն, կոռիանդրոն, կուան, կրինոն, կրո-մին, կրովկոս, հազնի, հալուէ, հաղիկա, հիպատիկեան, հնդիկոն, հոդոմ, հրիգոն, դափաթոն, մալաթրայ, մանրագոր, մառուլ, մեկոն, մեղիդովտայ, մեղրապոպ, մեամելիոն, մեամեղոն, մի-բաբաղանոս, միւրիկէ, մուրշ, մորէաս, մուրիկ, յակինթ, նար-

դոս, նարգէս, նարդիստաքոս, նիփայ, որիդ, որիկանոն, պաղա-տիտ, պատերիոն (պետարիոն), պերիքոն, պերսէ, պեւէ, պիսի-նոն, պիտուս, պղատան, պտեր, պտղի, պրաս, պրասիս, ռեփա-նին, սերենի, սկամինոս, սկորդոն, ստեպղին, ստորովենի (ստրո-բոդոն), սքինոս (խոտը), սքինոս (ծառը), սոսամն, սֆիտամօն, վլիտօն, տրիբոդոս, փղոմոս, փսենաս, քամափիթոս:

- բ) Գործիքներ.— մարկեղ, սկաղիդ.
- գ) Երկրագործական.— արգիայ, կեմ, ուիգայ:

Ց. Խառնարածություն եվ գյուղատնտեսություն

- ա) Մանդրա, մելովտէ, միլոբուտ:
- բ) Ձիու սարք.— սկետա, սկիւտադ:

Թ. Գիտություն եվ արվեստ

ա) Արհեստի վերաբերյալ.— աղեկատ, գուռայ, կաղապար, կանոն, կարակին, միլ, սողէն, սքաստերիէ, վրձին, տիպ, քա-նոնիկոն, ֆանոսել:

բ) Ուսում և գրականություն.— ալփ (աղփ), ալփարետ, ակադեմիա, այր, անոգանալ, ասթիդի, արթր, բիբրոս, գաղա-փար, գրամատիկոս, դիալեկտիական, դիալոգոս, եմփաս, եռմոս, էնկոմիա, էփիմերտէ, իռիոն, իսոն, կաղամար, կանոն, հիպո-դիմիսկոս, հոետոր, դեւտիկոն, դիմիսկոս, դրամ, մելան, յամ-բիկոն, յոետիկոս սպիլատէս, յոբելի, յովտ, ուղետերոն, ոքսի-րինքոս, պերիարմենիաս, պիտակ, պնակիտ, պուետէս, պրակ, սաղմոս, սեմագիր, սեմիար, սիդդորայ, ստիքս, ստիքերոն, սքո-ղաստիկոս, տելետիս, տետր, տիպ, տիտղոս, տոմ, տոմար, տոմս, տրակ, քարտ, քրոնիկոն, քրոնոգրափեւս:

գ) Նկարչություն.— անդրի (անդրիանդ), դրակոնդիկոն, իկոն, կոդոսոս, կովդոս, միւսիոն, յոբելիկ, վրձին:

դ) Երաժշտություն ևլն.— դիափսաղմայ, երգեհոն, թէատ-րոն, կիթառ, մեղեդի, մեսեդի, ստոդոգի, վառ:

ե) Խաղեր և մրցանք.— ագոն (ագոնիստայք), աթլետայք, բրաբիոն, դիաւդոն, թէատրիկոն, իպպէ, իսթմիա, կիւնիկ, նեմէ, ողոմպիադ, միւմ, միմոս, ոպդիտ, պանդեմի, պանկրատ, պենտաթ-լոս, պիւթիա, պլուտուռուլմ, սոտերական, ստադիոն, ստրովբիւդ:

զ) Աստղաբաշխական.— աստուղաբոն, աստուոնոմի, սկիթոնոն: յ) Երկրաչափական.— դիոպտոս, իկոսաէդոն, իմիոդեա,

կենտրոն, կիրքիկոն, կիվոս, կոն, ոկտաէդոսն, պիււուամուղէս, պիււրամիդ, սկալինեան, սփեռ, քանոնիկոն, քեզիկոն:

ը) Փիլիսոփայական.—ալիլուքիայ, իղէայ, իդոս, իմարմիւնէ, կիւնիկոս, հիւզ (հիւլէ), հիւփօստազիդ, մաթեմատիկոս, միւտեռոն, պերրիպատետիկեան, սոփեստէս, ստոյա, ստոյիկեան, փիլոսոփոս, փիւսիկեան, քարակտիր:

10. Գույներ

Բղխորոս, շլոոս, օքսուէնական:

11. Վաճառականություն եւ գրամական գործարք

Ապօտիքս, լողոռիաս, պոխտիմոն, պոթես (պոթեսմիոս), տոկոս, տրապիզիտ:

12. Շինություն եւ շինարարական

Ամբիոն, ամփիթատրոն, արգաստէր, բաղանիք, բեմ, գառազիդ, դեմեսոս, դիմիսոն, դատիկոն, դրիփաքտայ, եկեղեցի, եպիդեմել, եքթերան, գոմ, թեսմոփորոն, թէատրոն, լաբուրինթոս, լաւրա, կամար, կանկեղոն, կանոն, կապելիոն, կինկղիս, կոնք, մակեդոն, մատուռն, ոմբոլոն, պանդոկ, սինագոգիզայ, փիւղակէ, քարակ, քսենոդոհինի:

13. Հագուստ եւ զարդ

Աղարողոն, անակիւղ, դիասպր, եմիփորոն, ենքեր, եպիմանիկոս, լիբիտոն, կամաս, կեղար, կենդոնառ, կողոք, հորմայ, դենտի, մանդիա, մանեակ, մետաքս, միթր, որմիսկ, պերոգ, պոդիրի, պոսփիւրիկոն, սաւան, սերենի, սինդոն, ստիլարին, սփենդոն, սքեմ, տեառ, տոլրոն, փակեղն, փիլոն, փորոն, քլամիդ, օքսինտոի, օքսուէնական:

14. Առեւտրի եւ ըմպելիի

Աթերայ, ադոուր, թերմոն, իսխադաս, կուլիբայ, մակզադիայ, մորէ, նատիկ, նեկտար, ոքսիմելի, պաղատիտ, պաքսիմատ, պղակուղ, սիմինզր, քիդոս, քոնտրոն:

15. Մասնիկ սեւեսություն

Ափսէ, բաթրոն, բաղանոտ, գավաթ, զմելին, լամբար, լապտեր, լիբանոփոն, խալկին, կաթեղր, կամփասկ, կեղթ (կա-

ղաթ), էկերոն, կիւաթոս, կիփաս, կոնք, մակտրայ, մաղարիկոն, շանիտ, պիւթոս, պնակ, ստոման, սփիւրիդ, տառաղան, արապիդ, արիւղոն, փսիաթ, փսիաթին, քաղաղիր:

16. Թիվ, չափ, կօխ եւ գրամ

Անդլիտերիոն, ապորիւմայ, արգիւրոն, արտաքոս, բեսին, դրամար, դիդրաքմայ, դրաքմայ, լիտր, կարոս, կերատ, կերմոս, կոտիւղ, հիմէն, դեպտոն, մղոն, միաս, մոթ, մոնադ, նոմիւմայ, նոմիզմատայ, շինիկ, որողոս, պորոպսիդ, պեռպեռատ, պոտատ, սարիթայ, սատոն, սիաղոս, սիկդ, սիմէս, սոկոլոն, տաղանդ, տրմէս, քաղկոս, քոռ, քուզայ, քսեստ:

17. Մասնակներ, հասցայից նյութեր, խեմ եւ նմաններ

Աղամանդ, ալապաստր, ակատ, աղբետրոյ, ամարանտինէ, ամեթոփս, ապարալսամոն, առգեղ, ասփաղօթ, բիւրեղ, ելեկտրիոն, եմատիտէս, զմուռս, զմոնիտ, լեպիդոքաղկոս, լիբանոն, լիթ, լիկտինոս, լինզիրոն, կաղամբի, կինաբարիս, կղմինտր, կորոզիոն, կուլուռիայ, դանդանոն, մաքնիստիս, մաղտաքէ, մաղթ, մարմար, մետաղ, յակինթ, յասպիս, ունիոն, սփիտէս, պորփիւր, ռետին, սանդարակ, սարդիոն, ստատէ կամ ստաքտիկէ, սկիւթիկոն, սմարաքթոս, սպունդ, ստիւրակ, սրիկոն, տպագիրոն, քաղկանթոյ, քաղկոլիբանոն, քրիսոպրասոս, քաղբան, քոռսելիթիս:

18. Ճամբի վերաբերյալ (նավային)

Ակատ, անկիրոս, արմիոն, լիբեռնեայ, կեռեայ, պաղատին, վարքայ, տրիէր:

19. Ժամանակ (տոմար)

Կաղանդիկոն, կիւրակէ, նոմոն, պանեմոս, տուրի, բոպէ:

20. Երկիր եւ պեսություն

ա) Երկրի մասեր.—եպարքի, թեմ, կլիմա, մետրապոլիս, ովասիս, պարիստրոն, պիքիւն, պոտոլին, պրաստին, սինսո, քեռինոս, քիմեռոն:

բ) Պետական կազմ և պաշտոնություն.—ակոզութ, անափոռոս, անթիւպատոս, անթիպատրիկ, ապանիւպատ, ապանիւ-

լարեկ (ձառը)
 լեգեովն
 լեկաթ պապի նվիրակը»
 40 լիդատոն «կտակ»
 լիմպոս (քաղաքան)
 լոզիկ «վերարկու»
 * կաղանդ
 կանթեղ
 45 կանտիտատ (տիտղոս)
 կապիտոն «գլխահարկ»
 * կատապան «կուսակալ»
 կատինար «շղթա»
 կարդինալ
 50 * կեղար «մառան»
 կենդիղիոն «սպա»
 կենդինար (քաղ)
 կենսոն «տուրք»
 կինսոն (տիտղոս)
 55 կեստեոն «ջրամբար»
 կիարոն
 կիւեստոր «հարկահան»
 կիւեստոր «սուրհանգակ»
 կղեսուր «կիրճ»
 60 կնզուղ «վեղար»
 կոմենտարիոս «գորագլուխ»
 կուրապաղատ (պաշտոնյա)
 կուրատոր ()
 կրկէս
 65 * հոկտեմբեր
 հոռ «տոճիկ»
 դիբեղդոն «ձեռնարկ հավատո»
 մագիստրոս
 * մայիս
 70 * մանդիլ «գլխի թաշկինակ»
 մանիբուլ «բազպան»
 մանկիպէս «վերակացու»
 մանկլաւ «լախտ»
 մանկլաիկ «լախտավոր»

larix
 legio,-nis >legeðñ
 legatus >legáton
 legatum >legáton
 limbus
 lōdix
 calendae >kalándai
 candela >kandēla
 candidatus >kandidátos
 capitem >kápita
 catapanus >katepánō
 catena >katōna
 cardinalis >kardínalis
 cellarium >kellárium
 centurio,-nis >kentyriðñ
 centenarium >kentōnarium
 census >kēñson
 censor >kēñsōr
 cisterna >kisténa
 citrus >kitron
 quaestor >kyaistōr
 cursor >koúrsōr
 clausura >kl eisouira
 cucullus >koukouíllion
 commentarius >komentários
 curator palatii >kouropálatōs
 curator >kourátōr
 circus >kirkēñion
 october >oktōbríos
 erogatio >hróga
 libellus >libéllon
 magister >mágistros
 maius >máios
 mantile >mantēla
 manipulus >mánkipes
 manceps >mankláblion
 manualis clava >manklabitēs

75 մանտատոր «սուրհանդակ»
 մանէս «մեռելոց հողին»
 * մարտ (ամիսը)
 մեղիարբիս (չափ)
 միսալ «լատին պարզմատույց»
 80 մնուր «լատին քարոզիչ»
 մորթաղ «սանդ»
 * յուլիս
 * յունիս
 * յունուար
 85 նոթըրել «սնուցել»
 * նոյեմբեր
 նոզիլիսիմոս (տիտղոս)
 նումէր «գորագուհի»
 նոտար
 90 ոպսիտար «սպասավոր»
 ուլմուս «կնձնի»
 * ունկի (կշիռ)
 * ուրար
 ուրպ «քաղաք»
 95 պալատն
 պալիոն «եմիվորոն»
 պառոխ «տաներեց»
 * պաստեղ
 պատրիկ «իշխան»
 100 պղեմբատ «ձեծի գործիք»
 պոլիմիկուս «նախագահ»
 պոտոիքատոն «թիկնապահ»
 պոքսիտորայ «արքայի հուղարկավոր»
 պրեստոր «պաշտոնյա»
 105 պրոպոսիտոս «նախագահ»
 պրոքսիմոս (տիտղոս)
 ռեքտոն
 սակր «հրովարտակ»
 սանտատոր (իմ մանտատոր)
 110* սապոն
 սառարին (խեծ)
 սելէս, սելին, սելէն «աթոս»

mandator >mandátōr
 manes
 martius >mártios
 milliarius >miliarēsion
 missale
 minores
 mortarium?
 julius >iouílis
 junius >iouínios
 januarius >ianouários
 nutrio
 november >noémbrios
 nobilissimus >noobilíssimos
 numerus,-ri >noúmeros
 notarius >notários
 hospitarius >?
 ulmus
 uncia >ouunkia
 orarium >ōrárium
 urbs
 palatium >palátion
 pallium
 parochus >párochos
 pastillus >pástilos
 patricius >patrikios
 plumbatae >*ploumbáta
 primicerius >primikērios
 protector >protiktōr
 prosecutores >prosekoutōres
 praetor >praitōr
 praepositus >prai pósites
 proximus >próximos
 rector >hrektōr
 sacra >sákra
 mandator >mandátōr
 sapo,-nis >sápōñ
 sagapenum
 sella >sellion

սեկունդիկուս (պաշտոնյա)	secundicerius > sekoundikérios
սեղենդիար (պաշտոնյա)	silentarius > selentiários
115 սեմեք «նմանություն»	simile
սեմատոր «ծերակուտական»	senator > senátōr
*սեպտեմբեր	september > septémbríos
սիգէլ «կնիք, հրաման»	sigillum > sigillion
սիգնայ «զբոշակ»	signa
120 սիգնոն «զբոշակ»	signum > sígnon
սիկարեան «ավազակ»	sicarius > sikários
սիդիզն «նաշիհ հաց»	siligineus > silígnion
սիփիոն (բույս)	sempervivum
սկեպտոր «քարտուղար»	exceptor > exképtōr
125 սուզար «թաշկինակ»	sudarium > soudáron
ստրատոր «ծիապան կայսեր»	strator > strátōr
սրկուսք (=սկրիբուսք) «գրագիր»	scriba > skribas
սքրեթ «ծածուկ աղոթք»	secretus
*վեղար	velarium > *beláron
130 վեստարիս «հանդերձապետ»	vestiarius > bestiários
վեստիտորայ «զգեստավորող»	vestitor > bestítōr
վիզար «բզեշխ»	vicarius > ouikários
վիճիլ «գիշերային աղոթք»	vigiliae
վիռոն «փիլոն»	birrum > bírron
135 վլատ «ծիրանի»	blatta > bláttá
տարեռնի «պանդոկ, խանութ»	taberna > tabérna
տապեղ «նարտի»	tabula > tábla
տէգրէթալ «հրամանագիր»	decretalis
տիտղոս	titulus > títtlos
140 տիւրոն «նորակոչ զինվոր»	tiro, -nis > tírōn
տորդիկ (թոչուն)	turdus
տոսկլինար «սեղանապետ»	triclinarius > *triklinários
տրիբուն «ցեղապետ»	tribunus > triboûnos
*փեբրուարիոս (փետրվար)	februarius > phebrouários
145* փոս	fossa > phóssa
փորոն «հրապարակ»	forum > phóron
*փոռն	furnus > phoûrnos
օգոստոս, -ա «կայսր, -ուհի»	augustus, a > aúgoûsta, tos
օգոստալիոս «կուսակալ»	augustalis > augoustálios
150* օգոստոս (ամիսը)	augustus > aúgoustos
151 Ֆրա «հարանակից եղբայր»	frater

1. Բնության եվ նրա գորութեանց մասին

Ապոխալիստ, բուռնահիւս, կղեւուր:

2. Կրօնական բառեր

Ափոսթաթայ, բիրկաթոր, գորփուրալ, դիապօլուս, սելէս, էնչենիայ, իոռէկուլարիս, լադրիայ, լիկաթ, լիմպոս, կարդիալ, զիբեղոն, մանէս, միսալ, մուր, պառոս, սքրեթ, վիճիլ, Ֆրա:

3. Մարզ եվ մարմնի մասեր—չկա

4. Հիվանդութիւններ եվ նմաններ, բժշկական բառեր.—չկա

5. Կենդանիներ.—տորդիկ

6. Ընտանիք եվ ընկերություն.—չկա

7. Սրկուսքործական

Լարեկ, կիտրոն, ուլմուս, սիփիոն:

8. Խաւանքաւորություն եվ գյուղատնտեսություն.—չկա

9. Գիտություն եվ արվեստ (խաղեր)

Նոտար, տապեղ «նարդի»:

10. Գույներ.—չկա

11. Վաճառականություն եվ գրամական գործարք.—չկա

12. Շինություն եվ շինի մասեր

Գաղօֆիլակուս, կեղար, կիտեռն, կրկէս, տարեռնի, պալատն:

13. Հագուստ եվ զարդ

Լօդիկ, կնգուղ, մանդիլ, մանիբուլ, ուրար, պալիոն, սուզար, վեղար, վիռոն, վլատ:

14. Ուսելիք եվ քմայելիք

Սիդիզն, պաստեղ:

15. Մուսնիք տնտեսություն

Կանթեղ, կատինար, մորթաղ, սապոն, սելէս, փուռն:

այն պատճառով, որ նույն բառերը գործածական են արդի եվրոպական լեզուների, ուստի ենթի և կամ տաճկերենի մեջ: Այսպես են օրինակ՝

	ռուս.	ֆրանս.	անգլ.
եթեր	эфир	éther	
օվկիանոս	океан	océan	
զոդիակոս	зодиак	zodiaque	
զեփիւռ	зефир	zéphyr	
սիբիլա	сивилла	sibylle	
տարտարոս	тартар	tartare	
տիտան	титан	titan	
հերետիկոս	еретик	hérétique	
մարտիրոս	мартир(олог)	martyr	
որթոդոքս	ортодокс	orthodoxe	
սինոդ	синод	synode	
աբատ	аббат	abbé	
ստամոքս		estomac	
դելֆին	дельфин	dauphin	
կոկոսիկոս	крокодил	crocodile	
ուստրէ	устрица	huitre	æstëritya
պոլիպոդ	полип	polype	
սպունգ		éponge	sünger
փոկ		phoque	
անիսոն	анис	anis	anison
դափնի		daphné	tefne
եբենոս	эбеновое дерево	ébène	abanoz
լիմոն	лимон	limon	limun
կերաս	черешня	cerise	kiraz
կիտրոն		citron	
ալոէ	алоэ	aloès	
մանդրագոր	мандрагора	mandragore	
պրաս			prasa
կանոն	каноны	canon	qanun
հռետոր	ритор	rhéteur	
պուէտ	поэт	poète	
տիտղոս	титул	titre	
քարտ	карта	carte	kart

	ռուս.	ֆրանս.	տաճկ.
քրոնիկոն	хроника	chronique	
վրձին			fərxā
երգահոն	орган	orgue	
թատրոն	театр	théâtre	teatro
կիթառ	гитара	guitare	
մեղեդի	мелодия	mélodie	

Եթե այս բառերը եվրոպական լեզուների, ուստի ենթի կամ թուրքերենի մեջ գործածական չլինեին, վստահ կարող ենք ասել, որ հայերենի մեջ էլ չպիտի կենդանանային:

Մեր ասածին ապագույց է այն, որ բառերից մի քանիսը իրենց ձևն էլ են փոխել՝ համաձայն եվրոպական կամ ուսուսական արտասանության. ինչպես՝ որթոդոքս (այժմ օրթոդոքս), պուէտ (այժմ պոետ), մինչև իսկ սիեօդ՝ փոխանակ սիւննոդոս:

Գալով մեր զուտ ժողովրդական լեզվին, այստեղ զանազան բարբառներում գործածական հույն փոխառությունների թիվը 45 է միայն, իսկ լատինականներինը՝ 23: Սրանցից շատը՝ նոր գրական ձամբով կամ կրոնական լեզվի միջոցով (հիշենք հասկապես 12 ամսանունները), իսկ մի քանիսն էլ թուրքերենի մեջ գտնվելու պատճառով (ինչպես օրինակ՝ անիսոն, լիմոն, մառուլ, սինոս, մանդիլ, սապոն):

Այս բոլոր բառերը նշանակել ենք ցանկի մեջ աստղանիշով:

Այստեղ է հենց երևում հույն և պարսիկ փոխառությունների տարբերությունը, պարսկերենները իրրե հայ լեզվի անհրաժեշտ մաս կազմող, ժողովրդական խավերի մեջ մտած ձևեր, իսկ հունարենները ամենամեծ մասամբ անսովոր, անգործածական և անպետք: Հաջորդ աղյուսակի մեջ կարելի է տեսնել հունարեն, պարսկերեն, ինչպես և ասորերեն բառերի գործածականության համեմատությունը հին մատենագրության, արդի գրական հայերենի և բարբառների մեջ:

	պրս.	ասոր.	հույն.-լատ.
Փոխառությանց ընդհ. գումարը	960	209	1066
Որքանը գործածական է արդի լեզվում	574 (60տ)	109(52)	202(19)
Որքանը գործածական է բարբառներում	264(28)	56(27)	68(6)

Այս համեմատությունից պարզ երևում է, որ հունարեն բառերը քանակով թեև ամենաշատ, բայց որակով ամենավատն են:

Հայերենը հունարենից փոխ է առել նաև բազմաթիվ հասուակ անուններ: Մենք արդեն տեսանք, որ հայ ազնվականութունը, թագավորները, իշխաններն ու նախարարները սիրում էին գործածել իրանական անուններ: Երբ քրիստոնեությունը հաստատվեց հայոց մեջ, ինչպես ուրիշ քրիստոնյա ազգերի, նույնպես և հայոց մեջ սովորություն դարձավ դնել աստվածաշնչական անուններ, երբայական և հունական: Հետագայում այսպիսի հունական անունների թիվը հետզհետե ավելացավ: Արդար լինելու համար սակայն՝ ավելացնենք իսկույն, թե մեզ հայտնի չեն հին հայոց հասարակ ժողովրդական անունները: Մեզ ավանդված են միայն ազնվականների ու կրոնավորների անունները. առաջինները սովորաբար իրանական և հազիվ երբեմն հունական են, իսկ կրոնավորները՝ երբայական և հունական, և հազիվ երբեմն իրանական: Անտարակուսելի է սակայն, որ հին ժամանակ ժողովրդական անունները բնիկ հայկական էին (մեծավ մասամբ կորած և մեզ անհայտ), իսկ հետո կամաց կամաց հունացան:

Երբայական անունների մասին խոսելը պահելով հաջորդ զլխին, մենք այստեղ տալիս ենք այն հունական և լատինական (վերջինը աստղանիշով) հատուկ անունների ցանկը, որոնք գործածվել կամ գործածվում են հայոց մեջ:

Ազադորոն	Ակակ(իոս)	Ասթեր	Գերասիմ
Ազաթա	*Ակիւլինէ	Ատելփիոս	Գէորգ
Ազաթանգեղոս	Աղաթոն	*Ատրան	Գինոս
Ազաթոն	*Աղբիանոս	Արիստակէս?	Գորգ
Ազապէս	Աղեքսանդր	Արկաղիոս	Գրիգոր
Ազապի	Ամբրոսիոս	Արսէն	Դեմետր
Ազնէս	Անաստաս	Արտեմիս	Դեսպլինա
*Ազրիպպաս	Անաստասիա	Արքեղայոս	Դիմառիոս
*Ազրիանոս	Անդրէաս	[Ափրիկանոս]	Դիոնեսիոս
Աթանազինէս	Անդրոնիկոս	Աֆենտ	Դիոսիգորոս
Աթանաս	Անթիմոս	Բասիլ(իոս)	Ելեթիւրոս
Աթանասիա	Անիկտոս	*Բասոս	Եղէոն
Աթենադորոս	Անտիոքոս	Բարսեղ	Եպիփան
Ալեքս	Անտիպատրոս	Բիւզանդ	Երանոս
Ալեքսան	*Անտոն	*Գայիանէ	Երատոյ
Ալեքսիանոս	Ասթանէս	Գենարեթիոս	Երմոնէ

Եւազր	Էլպիս	Ղազար	Պողիկտոս
Եւզինէ	Թաղէս	Ղևոնդ	*Պօղոս
Եւզինէոս	Թաղիանոս	Ղուկաս	*Ռամելա
Եւթաղիոս	Թեկղի	*Ղունկիանոս	Ռեթէոս
Եւթիմիա	Թէոդոս	Մատթէոս	*Ռոմանոս
Եւթիոս	Թէոդորոս	*Մարկոս	*Սեկունդոս
Եւդաղ	Թէոփիլոս	Մարտիրոս	*Սեղբեստրոս
Եւպրաքսիա	Թէոփիստոս	Մելիտէ	Սոսթենէս
Եւսերիոս	Թէոփիստէ	Մերկեոլոս	Սուքիաս
Եւստաթէոս	Թէոֆանո	Մինաս	Սոփիա
Եւստաքիոս	*Իգնատիոս	Միւսոն	Ստեփանոս
Եւփիմէ	Կատարինէ	Յուլիանէ	*Սրապիոն
Եւքարիս	*Կիպրիանոս	*Յուստիանէ	Վասիլ
Եփրիանոս	Կիրակոս	Նիկեփոր	Տիմոթէոս
Եփրոսինէ	Կիւրեղ	Նիկողայոս	*Փաւստոս
Ջենոբ	*Կղեմէս	Ողոմպիադա	Փիլիպպոս
Ջենոբիա	Կոզմաս	Պանդալեոն	Փիլոն
Ջենոն	*Կոմիտաս	*Պետրոս	*Քրիստափոր
Ջոթիկոս	*Կոստանդին	Պրատոս	*Օգոստինոս
Ջոսիմա	Հեղինէ	Պողիկարպոս	

Անձնանունների ամբողջական ցանկը, թե երբ են գործածվել նրանք և ինչքան սովորական են եղել մեր մեջ, երևում է մեր կազմած ընդարձակ Հայոց անձնանունների բառարանից, որի 4 հատորը արդեն լույս է տեսել:

Հունարեն և պարսկերեն հատուկ և հասարակ անունները այն տարբերությունն ունին իրարից, որ մինչդեռ հունարեն հասարակ անունները ժողովրդական ընթացիկ լեզվի մեջ միշտ էլ եղել են անսովոր ու անհարազատ և այսօր էլ մեծ մասամբ ջնջվել անհետացել են, իսկ պարսկերեն հասարակ անունները մեծ մասամբ հաստատ մնում են, ընդհակառակը հատուկ անուններից պարսկական ձևերն են, որ ժողովրդական լեզվի մեջ բույն չեն դրել, և հունարեն ձևերն են, որ մինչև այսօր առատորեն գործածական են:

Նախորդ զլուխներում մենք աշխատեցինք լեզվական բառապաշարը առաջնորդ բռնելով դուրս բերել այս կամ այն շքրջանի քաղաքակրթության կամ կուլտուրական ազդեցություններից: Հունարենի համար ավելորդ ենք զանում այդ, և անհիւս դեպքում էլ՝ արդյունքը անձիշտ, որովհետև հունարեն

բառերը ըստ մեծի մասին զրթից գիրք անցած և ժողովրդի մեջ ի սպառ չմտած ձևեր են: Բացառութիւն են կազմում միայն մի խումբ կրոնական բառեր, որոնք քրիստոնեական կրոնի հետ մտել են հայոց մեջ և ապացուցում են վաղուց հայտնի այն իրողութիւնը, որ հայ եկեղեցին սկզբում հունյն (Կեսարիայի) եկեղեցու թեմարկութեան տակ էր: Երկրորդ, պետք է հիշել տոմարը, որ լատինականից անցել է մեզ և փոխարինել հին հայոց տոմարը: Զուտ կուլտուրական բառերից կարող ենք հիշել երկու բառ՝ բաղանիք և թատրոն, որոնց արժեքը հայտնի է:

Վերը, Ա մաս, էջ 292 համառոտ կերպով ասացինք, որ պարսկերենը ազդվել է հունարենից: Այս ազդեցութիւնը տեղի է ունեցել Արշակունցի շրջանին. այս ժամանակ է, որ շատ բառեր հունարենից անցան պարսկերենին: Այս մասին ավելի ընդարձակ տես Grundriss der iranischen Philologie, I. 2, էջ 6, MSL 17, 110 և 248, Revue des ét. arm. 1 (1920) էջ 11: Ասացինք նաև, որ պահլավերենը ուներ երկու բարբառ՝ հյուսիսային և հարավային: Երկու բարբառների ձայնական տարբերութիւնը ցույց տալու համար բավական է հիշել «սիրտ» բառը, որ հյուսիսային պահլավերենում ունի zird ձևը, իսկ հարավային պահլավերենում dil ձևը, որի շարունակութիւնն է արդի պրս. dil: Շատ ակնբախ տարբերութիւն է նաև այն՝ որ հյուսիսային պահլավերենն ուներ բառավերջում s, մինչդեռ հարավայինը ուներ h. այսպես հյուսիսում ասում էին xrus, հարավում xruh «ճիչ»: Արդ՝ հայերենում ունինք վնաս, պատուհաս բառերը՝ վերջածայն u-ով, իսկ պարսկերենն ունի gūnah (իմա wnah), bādāfrāh (պագենդ. pādāfrāh)՝ վերջածայն h-ով: Այս երևույթը ցույց է տալիս, որ հայերենի իրանական փոխառութիւնները հյուսիսային իրանական բարբառից են, ինչպես ասել ենք էջ 236—7, և ոչ թե հարավային բարբառից: Սակայն հայերենի հնադուրյն հունական փոխառութիւններն էլ հյուսիսային պահլավական բարբառից են. դրանք այն բառերից են, որոնք Արշակունցի շրջանին հունարենից անցան հյուսիսային պահլավերենին (պարթևերեն) և այնտեղից էլ հայերենին:

Հայերենի իրանական փոխառութեան ձայնական փոփոխութիւնները մեջ շատ կարևոր մի կետ է այն, որ իրանական ծ դառնում է հայերեն p. ինչ. frapāḍak>հրապարակ, spaḍapatl >սպարապետ, baoidi>բույր ևն: Կա երկու հունարեն բառ

որ նույնպես ներկայացնում են հայերենի մեջ δ>բ ձայնափոխութիւնը. սրանք են lampados>լամբար, դամբար և kalopódion>կաղապար: Ուրիշ ամեն տեղ հուն. δ տալիս է հյ. դ: Ինչձև միայն այս երկու բառերի մեջ պիտի ունենայինք p: Thumb, Byzantinische Zeitschrift 9,413 գտնում է, որ Փոքր Ասիայի հունական մի բարբառում δ դարձել է r. բայց այս բարբառը չէր կարող ազդած լինել հայերենի վրա: Ուստի ավելի լավ է հիշյալ երկու բառերը դնել իրանյան միջնորդութեամբ անցած հայերենի:

Պահլավերեն շատ բառեր ունին -ik վերջավորութիւնը, որ -իկ ձևով անցած է հայերենի. այսպես՝ պարսիկ, հնդիկ, տանիկ, խափշիկ ևն: Հունարեն pórnos կամ pórne բառն էլ տալիս է հյ. պոռնիկ, ուր -իկ վերջավորութիւնը բոլորովին անսպասելի է: Այստեղ էլ հարցը կարգվի հեշտութեամբ, եթե ընդունենք, որ հուն բառը անցել է մեզ պահլավերենի միջնորդութեամբ:

Պահլավերենի միջնորդութեան պետք է վերադրել նաև լապտեր<lampt+r և արգասիք<ergasia բառերը և թերևս ուրիշներ:

Դժբախտաբար պարթևական լեզուն անհայտ է, որպեսզի կարելի լիներ ավելի վճռաբար լուծել խնդիրը և ուրիշ անծանոթ բառեր էլ մեկնել:

Սակայն արգասիք, պոռնիկ, լապտեր ևն բառերի փոփոխութեան նոր բացատրութիւնը մեզ սովորեցնում է և մի ուրիշ բան: Այս բառերը հին հայերենի շատ սովորական բառերից են. մինչդեռ հունարենից փոխառյալ բառերը առհասարակ անսովոր, անզործածական և ուսումնականներին միայն հատուկ բառեր են: Ի հակառակն ենթադրել պետք է ուրեմն, որ այն հունական փոխառութիւնները, որոնք շատ սովորական բառեր են հայերենի մեջ, ուղղակի հունարենից չեն, այլ իրանյան միջնորդութեամբ:

Աղբյուրներ.— Brockelmann, Die Griechischen Fremdwörter im Armenischen, ZDMG 47, 1—42 (հայ թարգմ. Տաշյան, Վիեննա 1894):

2. Hübschmann.— Die Griechischen Lehnwörter im Armenischen, տես, Arm. Gram. էջ 322—389:

3. Thumb H.— Die Griechischen Lehnwörter im Armenischen. Byz. Zeit-IX (1900), 388—452:

ԵՐՐԱՅԱԿԱՆ ՓՈՒԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայերը և երբայցիք ուրիշ հարաբերություն չեն ունեցել իրար հետ, եթե ոչ իբր տիրող և նվաճյալ: Առաջին անգամ Տիգրան Մեծը երբ նվաճեց Պարսաստանը, բազմահազար հրեա գերիներ բերավ բնակեցրեց Հայաստանի զանազան քաղաքներում: Նրանք շատ հանգիստ ապրում էին Հայաստանում, աճում ու բազմանում երկրի բոլոր մեծ քաղաքներում, ուր թվով նույնիսկ գերազանցում էին հայերից: Այսպես, ըստ Բյուզանդի (Դ. 55), Արշակի գերության ժամանակ, երբ պարսիկները արշավեցին Հայաստան և բազմահազար գերիներ Պարսկաստան քշեցին, Արտաշատից գերի էին վերցրել 9000 տուն հրեա և 40 տուն հայ, Երվանդաշատից՝ 30.000 տուն հրեա և 20.000 տուն հայ, Չարհեհավանից՝ 8000 տուն հրեա և 5000 տուն հայ, Չարիշատից՝ 14.000 տուն հրեա և 10.000 տուն հայ, Վանից՝ 18.000 տուն հրեա և 5000 տուն հայ, Նախիջևանից՝ 16.000 տուն հրեա և 2000 տուն հայ, որով հիշյալ վեց քաղաքներից վերցրած գերիների թիվը լինում է 95.000 տուն հրեա և 42.000 տուն հայ, կամ տունը 5 շունչ հաշվելով՝ 475.000 շունչ հրեա և միայն 210.000 շունչ հայ:

Չենք խոսում այստեղ այն մասին, թե որքան ուղիղ են Բյուզանդի տված այս թվերը: Ամենքին հայտնի է, թե որքան չափազանցրած են դրանք: Բայց դա չի խանգարում միևնույն ժամանակ ցույց տալու համար, թե հրեաների թիվը հայերի թվից երկու անգամ ավելի էր:

Պետք է կարծել սակայն, որ հրեաների այս թվական առավելութունը հայերի համեմատությամբ (ավելի քան կրկինը) միայն քաղաքներում էր, որոնց մեջ հաստատված էին նրանք՝ առևտրական նպատակներով: Դյուղերի սովոր բնակչութունը հայ էր:

Ընդհանրապես գիտենք, որ հրեաները ուր որ հաստատվել են, շուտով կորցրել են իրենց լեզուն և ընդունել տեղական լեզուն: Այսպես պիտի լիներ նաև Հայաստանում:

Բայց նույնիսկ այն դեպքում, երբ հրեաները կորցրած չլինեին իրենց լեզուն, դարձյալ նրանք չէին կարող Հայաստանում խոսած լինել երբայրեն, որովհետև պատմությունից գիտենք, որ հրեաները Բաբելոնում գերության ժամանակ կոր-

ցրվին երբայրենը և երբ վերադարձան Երուսաղեմ, արդեն արամեախոս էին: Ուրեմն Տիգրանի բերած գերիներն էլ խոսեցին պիտի լինեին արամերեն, որ նույն է թե ասորերեն: Ասորերենը արդեն Հայաստանում խոսված լեզու էր: Հրեաները անշուշտ իրենց կրոնական հաստատությանց մեջ պահած էին երբայրեցիները, ինչպես մինչև այսօր էլ զանազան երկիրներում, բայց դրանով չպիտի կարողանային որևէ ազդեցություն գործել հայերենի վրա: Այսպեսով երբայրեցիների ուղղակի ազդեցությունը հայերենի վրա՝ ամբողջապես վերանում է:

Բայց երբայցիք, ինչքան էլ փոքրիկ ու աննշան մի ժողովուրդ, որ քաղաքական ոչ մի մեծություն չկազմեցին և որևէ ազդեցություն չունեցան ուրիշ ժողովուրդների վրա, այնուամենայնիվ գրական ու կրոնական տեսակետով շատ մեծ ազդեցություն ունեցան աշխարհիս մեծազույն մասի վրա: Հին Կտակարանը իբրև սրբազան մատյան ընդունվելով նախ քրիստոնեության, ապա և մահմեդականության մեջ, թարգմանվեց ամեն լեզվի և բազմաթիվ երբայրեցիներն բառեր նրա միջոցով մուտք գործեցին բոլոր քրիստոնյա, մասամբ նաև մահմեդական ազգերի լեզուների մեջ: Ամեն բառը համաշխարհային մի բառ է: Դրեթե նույնպես է նաև գեներ, որից ձևացել է մինչև անգամ Ֆրանսերեն *gêne* «նեղութուն», *gèner* «նեղել», *se gêner* «նեղվիլ»:

Հայերենի մեջ Ս. Դրքի և երբայրական գրականության միջոցով մտած բառերի ընդհանուր գումարը 138 է: Տալիս ենք այստեղ այդ բառերի այբուբենական ցուցակը:

	Երբայրեցիք	Հուն.
արբանա «բարձր տեղ»	habāmā	abbana
արիոն «աղքատ»	evyōn	ábion
արբոկ «չորից»	arba'	arbók
ազանովթ «թակույկ»	agganōθ	*aganθθ
5 ազադոսամթով «նունենի»!	hadadrimmon	
ադար (ամիսը)	adār	adár
ադոնա «Աստված»	adōnai	Adōnai
ազազայել «չար ոգի»?	'azāzēl	
ալէլու,-իա	halēlu yah	allēlouía
10 ալէփ, ալիփ «ա տառը»	alef	
ակեղդամայ «արյան գյուղ»	aqel-dām	akeldamá
ախքան (փուշը)	haxux	ákan, ákchouch
անիաս «եհովա»	ehyeh	

ամասարակովթ «աման»	hammizraqōṭh	*amasarakōṭh
15 ամատարա «նետի նպատակ»	mattāra	amattarī
ամէն	āmēn	amēn
ամոն «վարդապետ»	āmōn	
ամր «գիտություն»	ēmer, ōmer	
այն «ակունք»	‘ain	
20 անթանի «թշրին ամիսը»	hāṭānīm	athanīn
ապիովթ «կոնք»	siffōṭh	apphōṭh
ասիդ «թռչունը»	xasīdā	asīda
ատոր «աղոր, աթար, արբոր»		
«պանանորդ»	āter	
արարովթ «ձավար»	hā-rīpōṭh	araphōṭh
25 արարովթ «տափաստան»	arāboth	Arabōṭh
արգոր «քուրձ»	argaz	argob
արիովթ «բույս է»	oroṭh	ariōṭh
ափով «իրոք»	af hoa	aphphō
ափովսովթ «հիվանդ»	xafēšūṭh	aphphousōṭh
30 բադէն «շապիկ»	baddīm	baddīn
բակեղեք «տոպրակ»	bāciqlōnō	bakelleth
բամա «զոհի սեղան»	bāmā	bama
բարակ «փայլակ»	bāraq	
բաքայ «լաց»	bākā	
35 բեդեկ «խարխլած մաս»	bedeq	bedék
բեզակ «փայլատակում»	bāzāq	bézek
բելիար «սատանա»	bēli-ya‘al	belfar
բեհմովթ «մի մեծ գազան»	behemōṭh	
բեկզեբուդ «սատանայողես»	be‘elzebub	beelzeboúl
40 բէթ «չափ է»	bath	baith
բթուլ «կույս»	bātūlā	
բոյոս «սյուն»	bo‘az	boos
բոսոր «կարմիր»	bāšəṛā	bosór
բորկոնիմ «փուռ»	barqānīm	borkonīm
45 բուլ «ամիսը»	būl	boúl
գեդդուր «ավազակ»	gədūd	geddoúr
գեհ «վիհ»	gaia	gé
գեհեհ «դժոխք»	gēi-hinnom	géenna
գեդգեդ «անիվ»	galgal	gelgél
50 գերում «պանդուխտ»	gersom	gersám

գորաղին «սահման»	gəbul-im	
գոմեր «չափ»	‘ōmer	gomór
գունի «պարտեզ»	gan	
դարիլ «սրբութ. սրբոց»	dəbīr	dablr
55 դարում «հարավ»	dārōm	
եդեմ «գրախոս»	‘ēden	édém
ելովա, էլոյի «աստված»	ēlōha	elōaí
եղամ «գավիթ»	ailām	ailám
եղմոնի «այս ինչ»	almonī	elmōni
60 եմակ «ձոր»	‘ēmāq	emak
երգար ?		ergáb
երգազ «քուրձ»	argaz	ergaz
եփուդ «վերարկու»	ēfōd	ephoud
եփաթա «բացվիր»	iftā	ephphathá
65 զիու «ամիսը»	ziv	ziouí
էլ, էլոհիմ «աստված»	ēl, ēlōhim	elōé, elōeím
էլի էլի «աստված իմ»	ēli ēli	elōi
թալպիթ «աշտարակ»	talpiyōt	
թամուզ «ծաղիկ»	tammūz	
70 Թարար (իմա մարար) «դառնու- նություն»	marar	
Թաւ (տառը)	tāu	haū
Թեման «հարավ»	tēmān	tthaimán
Թերափիմ «կուռք»	tərafīm	*theraphím
Թեէ, Թէէ «սենյակ»	tāe	theé
75 Թուրէ «գիրք օրինաց»	tōrā	
իսեմովթ «ավերակ»	yəšīmōṭh	
լեւիաթան «ծովային կետ»	livyaṭān	leulathán
կադամադեկովթ (չափ)	mənaqqiyōṭ	metekōṭh
կադեսիմ «իզագող»	qədəšīm	kadēsím
80 կադէս «սուրբ»	qādēs	kādēs
կապպաթա «սալահատակ»		gabbathā
կեփազ «զուտ ոսկի»	fāz	képhaz
կորբան «տաճարին նվեր»	qārbān	korbān
կորոս (չափ)	kor	kóros
85 համօթ «մետաքսեղեն»	rāmōṭh	hramóth
լուտ «խնկի ծառ»	lut	
մազարովթ (աստղ)	mazzārōṭh	*mazarōṭh

ման «մանանա»	mān	mán
մաննայ «նվեր»	minxā	mánna
90 մաքման «սավան»	makbēr	*machman
Մեսիա	Māšīxa	Messías
մեքենովթ «խարխիս»	məkōnōḥ	mechōnōth
միսթաաղ «հանդերձապետ»	meltāhā	misthāal
յահ «աստված»	yāh	
95 յաքում (սյուն)	yākīn	iachouím
յեզեր «պսակ»	nēzer	iezēr
յորելեան }		
յորելեար }	yōbēl	iōbēlos
յորելի «շեփոր»	yōbēl	
100 նազովրի	nēzer «թագ»	nezer
նեկաթ «հովիվ»	nōqēd	*nekath
նեսար «չար դև»	ne'sār	neesár
նէեղաս (թռչուն)	ne'elāsā	neélasa
նէեսա (թռչուն)	nošā	neessa
105 նիսան (ամիս)	nisān	nisán
ովսաննայ «օրհնություն»	hōšī'anā	hōsanná
ովփազ «զուտ ոսկի»	paz	ōpház
ուրբայութիւն «պատրաստություն»	'rb	
110 ոփելեթին «պարսավոր»	pālēti	ho phelethi
ոքոզ «փուշ»	haxux	ochoz
պասքա «զատիկ»	pesax	páscha
ռաբբի }	rabbī	hrabbi
ռաբբունի }	rabbōni	hrabbouní
ռաիմ «սուրհանդակաց գունդ»	rāšīm	hrasím
115 ռափայ «հսկա»	rāfā	
սարաւովթ «աստված»	šəbāōḥ	sabaōth
սարաք «հյուսկեն»	səbākā	sabachā
սարեկ «ծառի ճյուղեր»	səbak	sabek
սաղա «ամենակարող»	šaddai	saddai
120 սաղեմովթ «ձոր, հովիտ»	šadēmōth	sadēməth
սաղերովթ «զորաշարք»	sədēroth	sadērōth
սատան	sātān	satān
սէրսէրիմ «երգ երգոց»	šir haširīm	
սիւան (ամիս)	sīvān	slouán

125 սոկքովթ «վրան»	sikkūt,	sokkōt
սորեկ «ընտիր» (խաղող)	sōrēq	sōrēk
սուարիմ «ժանտաթուզ»	šo'arim	souareím
վայքարովթ «անփառունակ»	i kābōd	ouaichabōth
տարիրոն «գահավանդ»	tābōr	Itaby'ron
130 փարազուն «?»	porāzōn	
փեղմոնի «այսինչ»	palmōni	phelmoné
քակով «սրահ»	ganzak	kakchō
քասդե (ամիս)	kislēv	chasleū
քերեթի(ն) «աղեղնավոր»	kārēti	cherethí
135 քեփուր «բաժակ»	kəpōr	kephouré
քոռին «թիկնապահախումբ»	kārī	chorri
քովթար «խոյակ»	kaftōr	chōthár
138 քովմարիմ «քուրմեր»	kəmarīm	chōmarim

Առաջին խնդիրը, որ ծագում է այս փոխառությանց առթիվ, այն է, թե արդյոք նրանք ուղղակի երբայական բնագրից են անցած հայերենին, թե՞ հունարենի վրայից, քանի որ ուղղակի բերան առ բերան փոխառության հարցը վերացված է մեջտեղից: Ուրիշ խոսքով՝ հայերեն Աստվածաշունչը թարգմանված է երբայեցերենից, կամ զոնե՛ երբայեցերենի համեմատությամբ, թե՞ ուղղակի հունարենից:

Մեր մատենագրության պատմությունը ընդհանրապես ընդունում է, որ հայերեն Ս. Գիրքը նախ՝ ասորերենից և հետո՝ հունարենից է թարգմանված և ոչ թե՛ երբայեցերենից: Կան այս առթիվ մի քանի աշխատություններ, որոնք հաստատում են այդ՝ բանասիրական ճանապարհով (տե՛ս Macler և Դուրյան): Բայց եթե նույնիսկ այդ բանասիրական ապացույցները չլինեին, երկար որոնումները կարիք չկա հաստատելու համար, թե հայերենի երբայական փոխառությունները կատարված են ոչ թե Ս. Գրքի երբայական բնագրից, այլ պարզապես նրա հունարեն թարգմանության վրայից: Երբայեցերենը ունի մի քանի հընչյուններ, որոնք չկան հունարենի մեջ. հիշենք հատկապես ց և շ ձայնները: Հույն թարգմանության մեջ այս հնչյունները դարձած են երկուսն էլ ս, որ գտնում ենք նաև հայերենի մեջ: Այսպես, օրինակ՝

երբ. ne'sār	յն. veesár	հյ. նեսար
nošā	veesoa	նէեսա
šəbāōḥ	σαβῶθ	սարաւովթ
šaddai	σαδδαι	սաղդայ
qədəšīm	καδῆσιμ	կաղեսիմ
qādēš	καδῆς	կաղէս

Երբ այն ցերեկն ունի նաև և հնչյունը, որ հունարենը չունի և տառադարձության ժամանակ ջնջում է. նույն ձայնը հայերենի մեջ էլ պակասում է. օր.

հրբ. halelu yah ἀλληλούια ալէլուիա
habāma ἄββαμα արբանա

Թե՛ և ձայնի ջնջման, և թե՛ շ ձայնի փոփոխության օրինակ է՝ հրբ. hōšī'anā ὠσαννά ովսաննա. հայերենը ունենալով ց (նակ ծ, ձ), շ և հ (նակ խ) ձայները, կարող էին մեր թարգմանիչները ամենայն դուրսությամբ հարազատ ձևով ներկայացնել երբայական հնչյունները, եթե ձեռքի տակ ունենային երբայական բնագիրը: Եվ եթե այսպես չի եղել, նշանակում է, թե մեր փոխառությունները հունարենի վրայից են և ոչ թե երբայեցերենի:

Այս բանը կարելի է հաստատել դեռ հետևյալ փաստերով:

Կան երբայերեն բառեր, որ հույն թարգմանություն մեջ վեր ի վայր են շրջված. սրանց դեմ էլ հայերենը հավատարիմ կերպով համապատասխանում է հունարենին և ոչ բնավ՝ երբայեցերենին. օր. i kābōd, ὀυακαβωδ վայքարովք (հին հայերը գիտեին, որ հույները օտարների վա ձայնը դարձնում են օսա. հմմտ. Ὀυακαροπατα վաղարշապատ): Նույնիսկ այնպիսի տեղեր, ուր երբայական բառը ունի մի տարբեր ընթերցված, սխալ ձև կամ աղճատում, հայերենը նույնն է հունարենի և ոչ թե երբայեցերենի հետ. օր. հրբ. ganzak, հն. ζααχῶ, հայ. քակքով, որ անշուշտ հն. χααχῶ ընթերցվածից է:

Ա. Թագ. Ի 19 և 41 կարգում ենք. Շնտցիս առ երգարաւդ այդուիկ... Եւ յարեաւ Դաւիթ յարգաբայն»: Երգար կամ արգար բառի դեմ երբայական բնագրում առաջին դեպքում գտնում ենք «Ծգէլի քար» և երկրորդ դեպքում՝ «Հարավի կողմից»: Հայտնի չէ ինչ թյուրիմացություն հույն թարգմանություն մեջ այս բառերը դարձել են արգաβ, Αργαβ: Հայերենն էլ ճիշտ սրանց հետևելով՝ դնում է երգար, արգար, արգոր:

Իբրև վերջին օրինակ հունարենի հավատարիմ հետևողություն՝ դնենք այստեղ ակքան, եկքան, և որոգ բառերի համեմատությունը:

Ակքան «փուռ» բառը գործածված է երկու անգամ Գ. Թագ. ԺԴ. 9: «Ակքան ի Լիբանանէ յղեաց առ եղևնափայտն... և կոխեցին զակքանն»: Երբայական բնագրում այս բառի դեմ երկու տեղումն էլ դրված է haxux, որի ուղղականն է xux «ուղտափուռ»: Նույն երբայական բառը գտնում ենք նաև Բ. Թագ.

ԻԾ 18, երկու անգամ գործածված, որոնց դեմ սակայն հյ. օրինակն ունի մի անգամ որոգ և մի անգամ եքլան: Այսպես «Ոքոզն որ ի Լիբանան է, յղեաց առ մայրսն... և եկեալ կոխեցին զամենայն եկքան»: Ուրեմն միևնույն երբայական բառի դեմ ունինք հայերենում երեք ձև. ակքան, որոգ և եկքան:

Ի՞նչ է այս դանազանություն պատճառը:

Այս դանազանությունը սլատճառը հունարենն է: Ս. Գրքի հունարեն թարգմանությունը առաջին և երկրորդ վկայություն մեջ դնում է ἄχαν, երրորդում ἀχουχ (այլ ձև. αχούζ) և չորրորդում ἀχουχ (այլ ձև. αχουχ): Սրանցից ոչ մեկը հունարեն չէ և անշուշտ հրբ. haxux բառի տառադարձություններն են: Ուրեմն ուղիղ ձևն է αχουχ, մյուսները բոլոր (ἄχαν, ἀχουχ, οχού) այլափոխյալ: Հունարենի մեջ կա ἄχανθα «փուռ» բառը, որի պատահական նմանությունը թելադրել է գրիչներին՝ αχουχ ձևը դարձնել վերջապես ἄχαν: Հայ թարգմանիչը տառադարձել է հունարենից այն ձևերը, որ գտել է իր գործածած ձեռագրում. այսպես αχού ընթերցվածը պահել է որոգ, իսկ մյուսները ակքան, եկքան: Սրանք հունարենի երեք ձևերից ոչ մեկի հետ նույն չեն. այլ ներկայացնում են նրանց խառնուրդը. այսպես ակքան կրում է երկրորդի առաջին մասը (αχ-) և առաջինի երկրորդ մասը (-αν): Սրանցից կարելի է հետևեցնել, որ կամ հն. բառը ուներ ուրիշ երկրորդական ընթերցվածներ և հատկապես մեր թարգմանիչ գործածած ձեռագրում ααχαν, εαχαν ձևերը, և կամ հայերենը պետք է կարգալ ակքուն, իբր հն. ααχουս, փոխանակ ααχουχ ընթերցվածի:

Այս բոլոր օրինակները ցույց են տալիս, որ մեր թարգմանիչները չեն ունեցել իրենց ձեռքի տակ Ս. Գրքի երբայական բնագիրը, այլ միայն հունականը, որից էլ տառադարձել են երբ. բառերը՝ հավատարիմ հետևողությամբ: Եվ եթե այսպես է, պետք է հետևեցնել, թե մեր նախնիք իրենց ուսման ծրագրի մեջ չէին առած երբայեցերենը. և հետևաբար երբայեցերենը նաև գրական ճանապարհով ուղղակի ազդեցություն չունի հայերենի վրա:

Բացի Ս. Գրքից՝ երբայեցերեն բառեր, թեև շատ սակավ թվով, գտնում ենք նաև մեսրոպյան շրջանի ուրիշ գործերի մեջ. ինչպես Եզնիկի, Կյուրեղ Աղեքսանդրացու մեջ և այլն: Սակայն սրանք էլ հունարենի միջոցով են: Եկեղեցական գրականություն պատմությունից գիտենք, թե հույն և լատին եկե-

ղեցու հայրերն էլ երբայեցերեն լեզուն չէին մացրած իրենց ուսումնասիրութեան ծրագրում և մինչև Ե դար, հազիվ երկու գիտնական անձնավորութուններ, Որոզինես (Գ դար) և Յերոնիմոս (Դ դար) բացառապես հետևած լինելով երբայեցերենի ուսման, կարողացած էին տիրանալ այդ լեզվին: Ընդհանրապես հույն և ասորի մեկնիչ հայրերը (Կյուրեղ Աղեքսանդրացի, Ոսկերեան, Եփրեմ և այլն) անտեղյակ լինելով երբայեցերենին, թարգմանութուններից էին օգտվում, երբ հարկ էր լինում Յոթանասնից հույն թարգմանութեան այս ու այն մութ կետը պարզարանելու համար (Դուրյան, Ուս. և քնն. 219):

Եթե մեսրոպյան ծաղկյալ շրջանին հայերը երբայեցերեն չէին սովորում, հավանական չէ, որ հաջորդ դարերում սովորեին, քանի որ նույն իսկ ասորերենի և հետո էլ իունարենի ուսումը հետգհետե վերանում էր: Թորենացին Գ. 62 գրում է, թե ուղարկվել է Երուսաղեմ և Պաղեստին, «անցաք ի սուրբ տեղիսն երկրպագել, և մնալ վայրկեան ի Պաղեստինացւոց հրահանգս», բայց այս պատմութունը եթե ստույգ էլ լինի, մի անցողական և մասնավոր դեպք է:

ԺԱ դարում ունինք Կարապետ Սասնեցի անունով մի գրող, որ թողել է մեզ Մեսրոպի վրա մի ներբողյան, բավական ճոռոմարան լեզվով: Դիտուն երևալու համար, իբ գովասանական տիտղոսների մեջ գործածում է նաև մի խումբ այնպիսի անսովոր բառեր, որոնք թեև աղավաղյալ և անհասկանալի, բայց երևում է, որ երբայեցերեն են. այսպես՝ ամատտարա աղէր, արգասիք և ատոր, բրուլ բուլոր անձամբ, գուեի պտղայից, գարասս ողկուզայից և այլն (էջ 59—65): Սրանք էլ հունական ճամբով են հասած:

Հունական փոխառութունների նման երբայական բառերն էլ հայերեն լեզվի մեջ մարմին ստացած ձևեր չեն. նրանցից հազիվ 15 հատը սովորական լեզվի մեջ մտել են, սրոնցից իբբ 6 հատը նաև արդի ժողովրդական լեզվի մեջ: Դրանք են՝ ազագայել, ալելուիա, ալքան, (որից գրական եկրանիկ), ամն, -բակեղեթ, բելիար, բէղզբուղ, բոսոր, զեհեն, եհովա, յորեղեան, ովսաննայ, ուբբի, ուբբունի, սատան, որոնցից շեղատառները գործածական են նաև ժողովրդական բարբառներում, բուլորն էլ իբբ կրոնական բառ, այսինքն գրական ճամբով, ((Ազագայել կա ազագիլ ձևով Լոռի և Փամբակ. հայերենից փոխառութեամբ մտել է նաև ուտիբերենի մեջ): Այս հանգամանքը թույլ չի տա-

լիս մեզ քննելու այդ բառերը քաղաքակրթական ազդեցութեան տեսակետով, ճիշտ ինչպես հունական փոխառութունները:

Երբայական փոխառութունների երկրորդ շարքն են կազմում հատուկ անունները: Սրանք էլ երկու կարգի են բաժանվում. ա) այն անունները, որոնք թեև Հին Կտակարանում կամ այլ տեղերում հիշված են, բայց հայոց մեջ չեն գործածված: Այս կարգի անունների թիվը շատ մեծ է. օրինակ՝ Ա. Մնացորդաց գրքից պատահաբար բացված մի էջում (Ա. մնաց. Գ. 24—26) գտնում ենք վեց տողի մեջ 11 անուն, որոնք են՝ Սամուէլ, Յամիե, Յարիբ, Սաղէմ, Բասան, Ասեման, Մագրա, Ամուէլ, Սարուդ, Ջարուր, Սեմէի: Սրանք հայ կյանքի և հայ լեզվի պատմութեան համար ոչ մի արժեք չեն ներկայացնում, ուստի մենք էլ նկատողութեան չենք առնում:

բ) Այն անունները, որոնք մտել են՝ ինչպես այլ քրիստոնյա ազգերի, նույնպես և հայոց մեջ, այսինքն գործածված են հայ անհատների կողմից: Այս կարգի անունների մի ամբողջական հավաքածո չկա դեռ: Քաղեղով իմ «Հայոց անձնանունների բառարան» կիսավարտ աշխատութունից, ղնում եմ այստեղ նրանց ցուցակը (ընդամենը 98 անուն):

Արզիու	Բարաղամ	Ենովս	Մանասէ
Արեդնագով	Բարթողիմէոս	Եսայի	Մանուէլ
Արէլ	Բեթղեհէմ	Եսթեր	Մարիամ
Արիսողոմ	Բենիամին	Երեմիա	Մելքի
Աբրահամ	Բենիկ	Եւա	Մելքիսեդեկ
Ադամ	Գաբրիէլ	Եփրեմ	Միսայէլ
Ադրամելէք	Գաղ	Ջաքարիա	Միսաք
Ազարիա	Գասպար	Ջօրաբարէլ	Միքայէլ
Ահարոն	Գեղէոն	Էմմանուէլ	Միքիա
Ահերմոն	Դանիէլ	Թամար	Մովսէս
Ամբակում	Դաւիթ	Թորգոմ	Յարեթ
Անանիա	Եզեկիէլ	Իսմայէլ	Յակոբ
Աննա	Եզր	Իսրայէլ	Յեսու
Ասանէթ	Եղիա	Լիա	Յոր
Ասքանազ	Եղիազար	Հեղի	Յովաբ
Բաղդասար	Եղիսէ	Մաթուսաղա	Յովակիմ
Բանարգէս	Եղիսարեթ	Մաղաքիա	Յովասափ
Բառնարաս	Ենովք	Մամբէ	Յովէլ

Յովհաննէս	Նաթանայէլ	Սահակ	Սիմէոն
Յովնաթան	Նոյ	Սաղաթիէլ	Սիոն
Յովնան	Շմուէլ	Սամուէլ	Սիրաք
Յովսէփ	Ռափայէլ	Սամփսոն	Սողոմէ
Յորդանան	Ռեբեկա	Սառա	Սոփոնիա
Նազարէթ	Ռուբէն	Սէթ	Փանուէլ
Նաթան	Սաղովկ		

ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆ

Ինչպես երբայական հասարակ անունները, նույնպես և այս հատուկ անունները, որ հիշեցինք, մտել են հայերենի մեջ ոչ թե ուղղակի երբայեցեղենից, այլ Ս. Գրքի հունարեն թարգմանութեան միջոցով: Ապացույցները նույն են: Այստեղ ապրիս ենք մի քանի անունների համեմատութիւնը, հայերեն, երբայեցեղեն և հունարեն լեզուներով, որով ամեն ինչ պարզ վում է:

Ամբակում	Habaquq	Ἄμβαχοῦμ
Անանիա	Hannaniyah	Ἄνανίας
Եզեկիէլ	Yəhezqel	Ἰεζεκιηλ
Ենովք	Hanōkh	Ἐνώχ
Սոփոնիա	Şəfanyā	Σοφονίας

Երբայական անունների մի մասն էլ մտել է մեր մեջ ասորերենի միջոցով՝ Ս. Գրքի առաջին (ասորական) թարգմանութեան, ինչպես և Եփրեմի, Զգոնի և այլ ասորական գործերի թարգմանութեանց վրայից: Այս մասին խոսել ենք արդեն վերջը, էջ 345: Չենք ուզում կանգ առնել նաև այն անունների վրա, որոնք հետո արարեցին, և ավելի ուշ՝ եվրոպական գաղանազան լեզուների միջոցով անցել են մեզ: Ինչպես Իբրահիմ, Դաւուտ, Եուսուֆ (=Աբրահամ, Դաւիթ, Յովսէփ) կամ Իզաղովրդական Եղսա, Եղսօ, Սարեթ) անվան սպանիական, ֆրանսիական և ռուսական ձևափոխութիւններն են ներկայացնում:

Հիշենք վերջապես երբայական մի այլ ազդեցութիւն, այն է՝ երբայական հատուկ անունների թարգմանութիւնը՝ հայերեն համապատասխան ձևերով. օր. Մխիթար, որ է Նաւում (=երբ. Naxum նշանակում է «Մխիթարի»): Երևույթը ճիշտ նույնն է հունարեն անունների հայ թարգմանութեան հետ. ինչ. Ստեփաննոս—Պսակ, Ապոստոլոս—Առաքեալ, Անաստաս—Յարութիւն և այլն:

Աղբյուրներ.—Macler, Les traducteurs arm. ont-ils connu et utilisé l'hebreu? ՀԱ 1927, 609—616:

Դուբյան Ե.—Մեր թարգմանիչներուն կարծեցյալ երբայագիտութիւնը (Ուսումն. էջ 211—25):

Այն բոլոր ազդեցութիւնները, որ նկարագրեցինք մինչև այստեղ, առհասարակ սկսել են գործել նախ քան մեր գրականութեան սկզբնավորութիւնը: Ոմանք այդտեղ էլ հենց վերջացրել են. ինչպես փոքր-ասիական, ասուրական, խալդյան և Հայաստանի մանր ցեղերի և հոռմեական ազդեցութիւնը: Մյուսները մեր գրականութեան հիմնադրութիւնից հետո էլ շարունակվում են, ինչպես են իրանական, ասորական, հունական և երբայական ազդեցութիւնները, ոմանք ավելի, ոմանք նվազ չափով: Հետագայում սկսվելու են ուրիշ ազդեցութիւններ, այն է արաբական, վրացական, թուրք-թաթարական, եվրոպական ու ռուսական, որոնց վրա խոսելու ենք ժամանակագրական կարգով:

Նախ քան Ե դարը հայերը գրավոր գրականութիւն չեն ունեցել. մինչև այդ ժամանակ հայերեն լեզվով ոչ մի տող, ոչ մի տեսակ գրութեամբ կամ այբուբենով գրի չէ առնված*): Եղածը միայն բանավոր գրականութիւն էր, որ բաղկացած էր ժողովրդական երգերից, զրույցներից ու առասպելներից, որոնք երգվում ու պատմվում էին բերնե բերան ավանդաբար: Այս շրջանը կոչվում է վիպասանական շրջան, հանուն այն երգիչների կամ վիպասանների, որոնք (հատկապես Գողթն գավառից) շրջում էին Հայաստանի այլ և այլ կողմերը և ժողովրդի մեջ երգում բանդիտի վրա այն վիպական երգերը, որ իրենք էին հնարում դուրսագնների, քաջ թագավորների և նշանավոր հերոսների վրա: Այս երգերից ամենամեծը մի դուրսագնեցեցութիւն էր, որ պատմում էր հայոց Արտաշես Ա թագավորի, մեծն Տիգրանի, Արտավազդ Ա-ի, Արտաշես Բ-ի, ինչպես և Միհրդատի, Հրադամիդդի և Տրդատ Ա-ի պատմութիւնը, ընդգրկելով Արտաշատի հիմնադրութիւնից (180 ն. Ք.) մինչև Ալանաց արշավանքը (72 թիվ), այն է՝ ամբողջ 252 տարվա մի շրջան**):

*) Ընդարձակ տես մեր «Հայոց գրերը», էջ 106—120:

***) Տես Աբեղյան, Հայ ժող. առասպելները: էջ 595—6:

Չենք հիշում Ձեռնարկ մեծ ու փոքր զանազան երգերը, որոնցով հարուստ էր այդ ժամանակի բանավոր գրականութունը: Երբ քրիստոնեությունը մտավ Հայաստան, հոգևորականությունը հակառակ կանգնեց այդ երգերին, հեթանոսությունն այդ Ձեռնարկներին: Սակայն ժողովուրդը բնականաբար չէր լսում այդ հոգևորականներին և իր զվարթ օրերին, խնջույքները և ուրախության ժամանակ զվարճանում էր նրանցով: Փավստոսը պատմում է, թե ինչպես իշխան և ժողովուրդը արհամարհում էին կրոնավորների քարոզները և սիրով ու հաճույքով լսում միշտ իրենց այդ հեթանոսական երգերը: «Զի ի վաղնջուց, յօրմէ հետէ առին նոքա զանուն քրիստոնէութեանն, լոկ միայն իբրև զկրօնս իմն մարդկութեան յանձինս իւրեանց և ոչ ջերմեռանդն ինչ հաւատովք ընկալան... Խառնադանճ բազմութիւն մարդկան ժողովրդոց նախարարացն և կամ շինականութեանն, եթէ զցայգ և զցերեկ նստեալ վարդապետացն և ըստ նմանութեան ամպոցն իբրև զյորդանեղեղ ինչ անձրևաց սաստկութիւն զվարդապետութիւնն ի վերայ հոսէին, և ոչ ոք ի նոցանէն և ոչ մի ոչ, և ոչ մի բան, և ոչ կէս բանի, և ոչ դոյզն յիշատակ ինչ, և ոչ նշմարանս ինչ զօր լսէինն, և ոչ կարէին ինչ ունել ի մտի: Վասն զի միաք իւրեանց ընդ անպիտանս ընդ անօգուտս և եթ զբոսեալ էին... ընդ չքոտի մտացն ի հնութիւն հեթանոսութեանց սովորութեանց, բարբարոս խուժադուժ միտս ունելով: Եւ զիւրեանց երգս առասպելաց զվիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն և նմին հաւատացեալք, և ի նոյն հանապազորդեալք» (Բուզ., Գ. Ժգ): Երգերի հետքերը գտնում ենք դեռ ԺԱ դարում. բայց ինքնին հասկանալի է, որ ոչ ոք մինչև այդ ժամանակ չպիտի հետաքրքրվեր նրանց հավաքմամբ կամ ուսումնասիրությամբ: Հետևաբար և այդ բոլորը մեզ համար անդարձ կորած է:

Մեր պատմահայր Խորենացին եղավ, որ առաջին անգամ ուշադրություն դարձրեց այդ երգերի վրա: Յանկանալով դրել հայոց ամբողջական պատմությունը և օգտվելով ամեն տեսակի աղբյուրներից, իբրև լուսամիտ մարդ նա ձեռք առավ նաև վիպասանական երգերը և վերակազմեց նրանցից Հայոց պատմության զանազան մասերը: Այսպեսով Խորենացին դարձավ «ամբողջ արևելքի ամենահնագույն գրուցապատումը... Ֆիրդուսիից (մ. 1020) մի քանի դար էլ առաջ» (Ֆեթթեր, Հայկ. աշխ. Վեննա, 1895, էջ 119): Այս առթիվ նա մեջ է բերում ի մեջ այլոց

12 վիպասանական հատված, երկուսից մինչև 9 տող, բոլորն էլ բառացի: Չենք հաշվում այն վիպասանական հատվածները, որոնց նյութը կամ բովանդակությունն է միայն հիշում: Եթե չլինեք Խորենացու այդ լուսամիտ մտածությունը, մենք այսօր գաղափար անգամ չէինք ունենա Գողթան երգիչների և վիպասանական արվեստի գոյությունը մասին:

Խորենացուց դուրս կա նաև երկու հիշատակություն. մեկը Տրդատի մասին մի կարճ հատված է, որ ավանդում է մեզ Ագաթանգեղոսը, երկրորդը՝ Նավասարդի երգից մի կտոր, որ ավանդում է մեզ Մագիստրոսը (ԺԱ դարից):

Այստեղ հավաքում ենք վերոհիշյալ բոլոր 14 հատվածները, այսինքն վիպասանական գրականության ամբողջ հաստատությունները:

- 1 1 Երկնէր երկին, երկնէր երկիր,
- 2 Երկնէր և ծովն ծիրանի.
- 3 Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ,
- 4 Ընդ եղեգան փող ծուխ ելանէր.
- 5 Ընդ եղեգան փող բոց ելանէր.
- 6 Եւ ի բոցոյն վազէր խարտեաչ պատանեկիկ.
- 7 Նա հուր հեր ունէր.
- 8 Բոց ունէր մօրուս
- 9 Եւ աչկունքն էին արեգակունք
Խոր. Ա. լա.
- 2 10 Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն
- 11 Ի Տուհաց*) գաւառէն, գճասաղ գետով,
- 12 Եկեալ նստեալ զՇրէշ բլրով,
- 13 զԱրտիմէդ քաղաքաւ, գճասաղ գետով,
- 14 Կոել կոփել զդուռնն Երուանդայ արքայի:
Խոր. Բ. կհ.
- 3 15 Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
- 16 Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց,
- 17 Եկ հաւանեաց բանից աչազեղոյ դստերս Ալանաց՝
- 18 Տալ զպատանիդ.
- 19 Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝

*) Տուհ գավառի անունը զարմանալի կերպով հիշատակված ենք գրում Գիտնիսիոս Թրապիցու հոյ Թարգմանության մեջ, էջ 20. ՀԱԳՃԱԿԱՆ է, որ ազգի է յայտական. որպես՝ զոգերձական, տուհ, վրացի:

20 Զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւնս
21 Կամ ծառայեցուցանել(ով) և ի սորկաց կարգի պահել,
22 Եւ թշնամութիւն յաւիտենական,
23 Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել:
Խոր. Բ. ծ.

4 24 Եւ ուստի տացէ քաջն Արտաշէս,
25 Հազարս ի հազարաց և բիրտս ի բիրտուց,
26 Ընդ քաջագլոյ կոյս օրիորդիս Ալանաց:
Խոր. Բ. ծ.

5 27 Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ,
28 Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
29 Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն,
30 Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն,
31 Ընկէց ի մէջք օրիորդին Ալանաց,
32 Եւ շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
33 Արագ հասուցանելով ի բանակն իւր:
Խոր. Բ. ծ.

6 34 Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի,
35 Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկանն:
Խոր. Բ. ծ.

7 36 Տենչայ Սաթինիկ տիկին տենչանս՝
37 Զարտախոյր խաւարտ և զտից խաւարծի
38 Ի բարձիցն Արզաւանայ:
Խոր. Ա. Լ.

8 39 Վիշապազունք զողացան զմանուկն Արտաւազդ՝
40 Եւ դև փոխանակ եղին:
Խոր. Բ. կա.

9 41 Ճաշ գործեալ Արզաւանայ ի պատիւ Արտաշիսի,
42 Խարդաւանակ լեալ նմին ի տաճարին վիշապաց,
Խոր. Ա. Լ.

10 43 Արտաւազդայ ոչ գտեալ, քաջի որդւոյն Արտաշիսի,
44 Տեղի ապարանից՝ ի հիմնանալն Արտաշատու,
45 Նա անց գնաց և շինեաց ի մէջ Մարաց զՄարակերտ:
Խոր. Ա. Լ.

11 46 Մինչ դու գնացեր
47 Եւ գերկիրս ամենայն ընդ քեզ տարար,
48 Ես աւերակացս որպէ՞ս թագաւորեմ:
Խոր. Բ. կա.

12 49 Դու յորս հեծցիս յազատն ի վեր ի Մասիս,
50 Զքեզ կալցին քաջք,
51 Տարցին յազատն ի վեր ի Մասիս,
52 Անդ կացցես և զլոյս մի տեսցես.
Խոր. Բ. կա.

13 53 Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի
54 Եւ զառաւօտն նաւասարդի,
55 Զվազելն եղանց և զվազելն եղջերուաց.
56 Մեք փող հարուաք և թմրկի հարկանէաք:
Մագ. ԼԳ.

14 57 Իբրև զսէզն Տրդատ, որ սիգայոցի
58 Աւերեաց զթումբս գետոց և ցամաքեցոյց,
59 Իսկ ի սիգալն իւրում՝ զյորձանս ծովուց:
Ագաթ. § 123

Այս երգերի նյութի մասին ավելորդ չենք համարում տալ
մի քանի պարզ բացատրութիւններ:

1. Վահագնի երգն է, որ ներկայացնում է այս աստվա-
ծացյալ դյուցազնի ծնունդը՝ այլաբանական պատկերով. Վա-
հագնը իրանական Vərəθraγna-ն է (հաղթութեան աստվածու-
թիւն), որ իրանյաններից փոխառութեամբ անցել է մեզ:

2. Վարդգեսի երգն է, որ Խորենացին համարում է Հայ-
կազանց Տրդրան Ա. թագավորի հոր՝ Երվանդի ժամանակակից:
Թվում է թե այդ Վարդգես պատանին սիրահարվել է Երվանդ
թագավորի քրոջ և եկել է խնդրելու նրա ձեռքը և նրա հետ
էլ ամուսնացել է:

3—13. Արտաշեսի մեծ երգից հատվածներ են.— Ալանաց
պատերազմի ժամանակ Արտաշեսը գերի է բռնում թագավորի
որդուն. նրա քույրը Սաթենիկ բարձրանում է Կուրի ափին՝ մի
ժայռի վրա և խնդրում, որ իր սիրու համար արձակե եղբո-
րը (3): Արտաշեսը լսելով Սաթենիկի խոսքերը և հավանելով
նրան՝ Սմբատի միջոցով խնդրում է նրա ձեռքը: Հայրը մեք-

ժուժ է, որովհետև Արտաշեսը չպիտի կարողանար վճարել արքայադստեր համար պահանջված օժիտը (4): Այս մերժման վրա Արտաշեսը իսկույն հեծնում է իր սև ձին, անցնում է Գուրը և գերելով օրիորդին՝ փախցնում է իր բանակը (5): Կատարվում է հարսանիք, որի ժամանակ ոսկի ու մարգարիտ են շաղ տալիս՝ արևելյան թագավորների սովորությամբ (6): Արտաշեսի ընտանեկան կյանքը բախտավոր չի լինում. նախ Սաթենիկը անհավատարիմ է Արտաշեսին և ապօրինի սեր է տաժում դեպի Արգավան իշխանը (7): Որդին՝ Արտավազդը լինում է չար և ստահակ, այնքան որ երգիչները պատմում են հետևյալը. իբր թե սկզբում Արտավազդը լինում է մի շատ գեղեցիկ մանուկ, որին սատանաները նախանձելով գողանում են օրորոցից և փոխարեն մի դևի ճուտ են դնում. դևը մեծանում է և դառնում Արտավազդ (8): Արգավանը, որին սիրում էր Սաթենիկ թագուհին, ուզում է դավաճանել թագավորին և դրա համար սարքում է մի խնջույք (9): Արտավազդն ըմբոստանում է հոր դեմ և վտարանջելով՝ գնում է իր համար շինում Մարակերտ քաղաքը (10): Արտաշեսի մահվան ժամանակ, երբ շատերն իրենց սիրելի թագավորից չբաժանվելու համար ողջ ողջ թաղվում էին նրա հետ, Արտավազդը նախանձելով՝ գանգատվեց նրա դեմ (11): Հայրը դադարեց անիծեց նրան, որ քաջքերը տանեն նրան Մասիսի խավար անդունդները բանտարկեն (12), որ և ըստ առասպելին իրոք կատարվեց: Որսի ժամանակ քաջքերը նրան տարին անդունդը և շղթայի գարկին. հավատարիմ շները հետևեցին նրան և սկսեցին կրծել շղթաները, որպեսզի կտորվին և Արտավազդը դուրս գա կործանելու աշխարհը: Բայց այդ շղթաները չեն կտորվում, որովհետև դարբինները զարկում են սալին և մաշված շղթաները նորից զորանում են: Այս վերջին մասը Խորենացին պատմում է քաղելով առասպելից, բայց բառացի չի դնում: Վերջին հատվածը ներկայացնում է Արտաշեսի կարոտ իղձը հայրենի նավասարդը տեսնելու (13):

14. Տրդատի երգը տալիս է Տրդատի քաջությունը ներկայացնող ժողովրդական մի ասացված:

Չխոսենք այս երգերի տաղաչափական արվեստի մասին, որովհետև դա բանահյուսության պատմության գործն է, և ուղղակի անցնենք լեզվին:

Արդյոք այս հատվածները հարազամ են, այսինքն ներկայացնում են իրոք այն ժամանակի լեզուն, երբ երգվել են, թե

կազմված են Խորենացու գրչով: Անշուշտ պետք չէ կասկածել, թե այս գրվածքները Խորենացու գրչից դուրս եկած լինեին, որովհետև մեծ է տարբերությունը Խորենացու հետմետրոպոլիտանի լեզվի և հիշյալ հատվածների մաքուր հայերենի միջև: Մենք այդ տարբերությունը ավելի լավ պիտի ըմբռնենք հետո, երբ մետրոպոլիտանի հայերենի հատկությունների մասին խոսենք: Բայց թե այդ հատվածները Խորենացու գրչից չեն, դրա համար ավելի զորեղ ապացույց է նրանց տաղաչափական արվեստը: Խորենացին արձակ է գրում իր պատմությունը, ուստի և տաղաչափյալ հատվածները իրենք չեն:

Բայց երբ ասում ենք, թե այդ հատվածների լեզուն հարազատ է պետք չէ առնել բառը իր ընդարձակ իմաստով: Հատվածների լեզուն ճշտիվ նույն է Ն դարի հայերենի հետ. բայց Ն դարի հայերենը չէր կարող ճշտիվ նույն լինել ն. Բ. 180 թվի, այսինքն 5—6 դար առաջվա հայերենի հետ: Արդ՝ վիպասանական երգերի հնագույն կտորները անշուշտ այդ ժամանակից են և հետևաբար պետք չէ որ նույն լինեին Ն դարի հայերենի հետ: Այս անելից դուրս գալու համար մենք պետք է ընդունենք ուրեմն հետևյալը. — Վիպասանական երգերը հորինված էին իրենց ժամանակի հայերենով. բայց ըստ որում ապրում էին նրանք ժողովրդի մեջ, ուստի դարուց դար հետզհետե ենթարկվեցին այն ձևափոխությանց, որոնք մտել էին հայերեն լեզվի մեջ: Օրինակի համար եթե Վահագնի երգի մեջ հուր հեք բառերը այն հնագույն ժամանակ pur per ձևն ունեին, հետզհետե անցան այն բոլոր ձևերից, որ կրեց ք բաղաձայնը՝ վերջապես հասնելու համար հ ձևին: Անշուշտ այնպես, ինչպես նույն երգի հաջորդ տողի մեջ մենք այսօր կարդում ենք մօրուս, առանց նույն իսկ լավ իմանալու թե հին ձևը մարուս էր թե մուրուս. բայց հաստատ իմանալով հանդերձ, թե անշուշտ մօրուս չէր: Վերջապես կարելի է նույն իսկ որ Խորենացու և Մագիստրոսի ժամանակ այս երգերը ճշտիվ այնպես չհնչվեին, ինչպես գրված են, այլ մի քիչ տարբեր արտասանությամբ, և Խորենացին ու Մագիստրոսը վերածած լինեին իրենց իմացած գրական հայերենի արտասանության: Այսպես մենք էլ, երբ լսում ենք ժողովրդի բերանից՝

Առաւօտուն կէլլէս, էրէստ վրլա,
ամենայն հանգստությամբ թղթի վրա արձանագրում ենք՝

Առաւօտուն կելնես, երեսդ լուս*:

*) Մ. Չերազ, Ազգային գառախաղութիւն, Կ. Գոլիս, 1876, էջ 98:

Մի քանի տեղ հայտնապես երևում են խորենացու սրբա-
գրությունները, օրինակ՝ Արտաշեսի երգի վերջում ի մէջք փո. ի
մէջս, զմէջք փխ. զմէջս և հասուցանելով փխ. հասուցեալ հե-
տին ձևափոխություններ են: Սաթենիկի երգի մի մասը (տող
19—21) ամբողջովին խորենացուց է անշուշտ:

Այս վերապահությամբ ընդունելով ուրեմն երգերի հարա-
դասությունը, անցնենք նրանց քննության:

Ամբողջ հատակոտորների 59 տողերի մեջ մենք գտնում ենք
ընդամենը 183 բառ, որոնց այբուբենական ցանկը հետևյալն է.

*ազատ 49, 51
*ազգ 16, 23
ագն տես դիւցազն,
վիշապազն,
Ալանք 16, 17, 26, 31
+ամենայն 47
+այլ 20
+այր 15
+անդ 52
անցանել 29, 45
աչագեղ 17
+աշկունք 9
*ապարանք 44
առաւօտ 54
+անել 15
*արագ 33
Արգաւան 38, 41
+արեգակն 9
արի 27
+արծուի 29
արտախոյր 37
Արտաշատ 44
Արտաշէս 15, 24,
27, 34, 41, 43
Արաւազգ 39, 43
Արտիմէդ 13
արքայ 14, 27
*աւերակ 48
աւերել 58

+բան 17
բանակ 33
+բառնալ 20
*բարձք 38
*բիր 25
+բլուր 12
+բոց 5, 6, 8
*գաւառ 11
+գեղեցիկ 27
+գետ 11, 13, 29,
58
*գէս տես Վարդգէս
գեալ 10, 45, 46
+գողանալ 39
+գործել 41
+գտանել 43
*դե 40
+դիւցազն 19, 20
+դենել 40
+դու 46, 49, քեզ 15,
47, զքեզ 50
+դուռն 14
+դուտար 17
+ելանել 4, 5
+էկ 12, 17
եղեզնիկ 3
եղէզն 4, 5,
+եղն 55
եղչերու 55

+ես 48, ինձ 53
երկին 1
երկիր 1, 47
+երկն 3
երկնել 1, 2
+երկոքին 23
Երուանդ 14
+եւ 2, 3, 6, 9, 21,
22, 24, 25 և այլն
+գարմ 20
+գի 19
+է, էին 9, 19
+ընդ 4, 5, 26, 29, 47
+ընկենոյ 31
*թագաւորել 48
թես տես սրաթե
*թմբկի 56
*թշնամութիւն 22
+թումք 58
իբրև 57
+իսկ 59
+իւր 33, 59
լինել 42
+լոյս 52
խարդաւանակ 42
խարտեաշ 6
խաւարծի 37
խաւարտ 37
ժառայեցուցանել 21
*ծիրանի 2
ծխան 53
ձով 2, 3, 59
*ձուխ 4, 53
+կալցին 50
*կամ 21
կացցես 52
կարգ 21
*կարմրիկ 3

+կենդանութիւն 20
*կերտ տես Մարա-
կերտ
կոյս 26
կոփել 14
կոնել 14
*հազար 25
հանել 28
+հասուցանել 33
+հաստատել 23
հատուած 10
հարկանել 56
+հարույ 56
+հարսնութիւն 35
հաւանել 17
+հեծանել 27, 49
հեր 7
հիմնանալ 44
+հուր 7
ձգել 30
*հաշ 41
+մանուկ 10, 39
Մասիս 49, 51
Մարակերտ 45
*մարգարիտ 35
Մարք 45
+մեք 56
+մէջ 23, 45, մէջք
31, 32
+մի՛ 52
+մի 19
+մինչ 46
+մօրոսք 8
+յաղթել 16
*յախանեական 22
յորձանք 59
+նա 7, 45
*նաւասարդ 54

- +ճոյն 42
- +ճստիլ 12
- շատ 32
- շէկ տես շիկափոկ
- շիկափոկ 28, 30
- *շիճեկ 45
- Շրէշ 12
- +ն 53,
- +ոչ 19, 43
- սսկէօղ 28, 30
- սսկի 34
- +ոբ 16, 57
- +որդի 43
- որպէս 29, 48
- +որս 49
- +ուեկ 3, 7, 8
- ուստի 24
- *պահեկ 21
- պատանեկիկ 6
- պատանի 18
- *պատի 41
- պարան 28, 30
- *պէս տես որպէս
- Սաթիճիկ 35, 36
- *սեալ 27
- +սէգ 57
- սիգալ 57, 59
- +սուր տես սրաթե
- ստրուկ 21
- սրաթե 29
- վագել 55
- վագել 6, 55
- *վասն 19
- *վարդ տես Վարդգէս

Այս 183 բառերից 16 հատը հատուկ անուն է, 167 հասարակ անուն: Հատուկ անուններից երկուսը (Այանք և Մարք) հայկական չեն: Եթե բոլոր բառերը վերածենք իրենց արմատական ձևերին

- Վարդգէս 10
- +վեր, ի վեր 49, 51
- *վիշապ 42
- վիշապազն 39
- +տալ 18, 24, 53
- *տանար 42
- տանել 47, 51
- *տեղ 34
- տեղալ 34, 35
- +տեղի 44
- տեճչալ 36
- տենչանք 36
- +տեսանել 52
- +տիկիճ 36
- տից 37
- Տուճաց գու 11
- Տրդատ 57
- *ցամաքեցուցանել 58
- ցաւեցուցանել 32
- փափուկ 32
- փեսայութիւն 34
- *փոխանակ 40
- փոկ, տես շիկափոկ
- փող 4, 5, 56
- *քաղաք 13
- քաշ 15, 16, 23, 24, 43, քաշք 50
- քաշազգի 20
- Քասաղ 11, 13
- *քէն 19
- +ող տես սսկէօղ
- օրէն 19
- օրիորդ 26, 31, 32

(օրինակ՝ Վարդգէս հաշվել երկու բառ, որովհետև կազմված է վարդ և գէս բառերից. ընդհակառակը եղեգնիկ, պատանեկիկ, տեղալ չհաշվել, որովհետև արդեն ունինք եղէգն, պատանի, տեղ արմատականները), այն ժամանակ կունենանք ընդ ամենը 162 արմատական բառ (միասին առնելով նաև բնիկ հայերեն ի, գ նախդիրները), որոնք ցուցակում շեղատառ են և ըստ ծագման բաժանվում են հետևյալ ձևով.

- բնիկ հայերեն բառեր 73 (45 տոկոս)
- պարսկերենից փոխառյալ 30 (18 տոկոս)
- անծանոթ ծագումով 51 (31 տոկոս)
- խաղի-վրացական (ծուխ, ծիրան, տեղ, գաւառ) 4 (2 տոկոս)
- ասուրական (քաղաք, փոխ) 2 (1 տոկոս)
- ասորական (ցամաք) 1
- հունական (մարգարիտ) 1
- Հատուկ անունները հաշվի մեջ չենք առնում:

Այս տախտակից հետևում է, որ վիպասանական հայերեն լեզվի մեջ անծանոթ և հնդեվրոպական բառերը կազմում էին մեծագույն տոկոսը. պարսկերեն փոխառությունները թեև հետազային գերազանցելու էին բնիկ հայերեն բառերից (960 ընդգեմ 924-ի), բայց այդ շրջանին բուն հայկական բառերից դեռ պակաս էին. իսկ ասորական փոխառությունները դեռ այնքան քիչ էին, որ համեմատությամբ բնիկ, պարսիկ ու խաղի-դյան բառերի՝ տոկոս էլ չէին կազմում: Չարմանալի է, որ այդ հնագույն ժամանակից ունինք նաև մի հունական փոխառյալ բառ (մարգարիտ), որ լեզվի պատմության հետ համաձայնեցնելու համար՝ պետք է համարել ավելի հոմեական փոխառություն, քանի որ լատինական margarita, margaritum ձևերը դեռ Կիլեւրոնի և Տակիրտոսի ժամանակից գործածական են:

Այս ամբողջ եզրակացությունը համաձայն է այն պատկերին, որ գծել էինք նախորդ 14 գլուխներում՝ հայերեն լեզվի պատմության վերաբերմամբ, և հաստատում է նրանց ճշտությունը փաստացի կերպով:

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ

Առաջին անգամ հայերենը գրի է առնվել Ե դարի սկիզբը մեր գրականության հիմնադիր Մեսրոպ-Մաշտոց վարդապետի, իր աջակից Սահակ կաթողիկոսի և սրանց գործակից զանազան աշակերտների ձեռքով:

Առաջին հայերեն խոսքը, որ Մեսրոպը իր ձեռքով գրեց Եղեռսիայում, հետևյալն է.

Առակք Սողոմոնի
Որդւոյ Դաւթի թագաւորի Իսրայելի
Գլուխ Ա.

Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանձարոյ, ընդունել զգարձուածս բանից, ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ և ուղղել զիրաւունս: Զի տացէ անմեղաց զխորագիտութիւն, մանկանց տղայոց զմիտս և զհանձար: Որոց իբրև լուիցէ իմաստունն՝ իմաստնագոյն լիցի, իսկ որ հանձարեղն իցէ՝ զառաջնորդութիւն ստասցի, ի միտ առցէ զառակս և զբանս խորինս, զճառս իմաստնոց և զառակս նոցա: Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն, հանձար բարի ամենեցուն որ առնեն զնա. պաշտօն բարի առ Աստուած՝ սկիզբն զգօնութեան. զիմաստութիւն և զխրատ ամպարիշտք անգոսնեն:

1545 տարի առաջվա հայերենի պատկերն է այս, բայց անշուշտ է՛լ ավելի հին է նա, քանի որ ճիշտ նման է վիպասանական հայերենին և քանի որ մի լեզու չի կարող մի օրում ծնունդ առնել:

Ըստ որում լեզուները ենթակա են մշտական փոփոխության, այս շրջանի հայերեն լեզուն էլ ապագային պիտի կրեք այլ և այլ փոփոխություններ: Լեզվական հայտնի տարբերություններ տեսնում ենք այն հայերենի, որ Մեսրոպյան զպրոցի արտադրությունն է կազմում, և այն հայերենի միջև, որ Մես-

րոպի, Սահակի և նրանց անմիջական աշակերտների մահից հետո գրի առնվեց:

Առաջինը կոչում ենք մեսրոպյան հայերեն, որ տևում է Ե դարի սկզբից մինչև կեսը (460 թ.), իսկ երկրորդը կոչվում է հետին կամ հետմեսրոպյան հայերեն, որ սկսվում է 461 թվից և ունի զանազան շրջաններ*):

Այս գլխում պիտի խոսենք մեսրոպյան հայերենի մասին: Այն բոլոր գործերը (բնագիր կամ թարգմանական) որ հասել են մեզ մեսրոպյան շրջանից, թվով 41 են և ըստ իրենց լեզվական հորինվածության կամ ոճի՝ բաժանվում են 4 դասի**):

Ա դասը կոչվում է Եզնիկյան և պարունակում է հետևյալ գործերը.— Աստուածաշունչ, Եզնիկ, Ոսկերերանի Մեկնութիւն գործերը.— Աստուածաշունչ, Եզնիկ, Ոսկերերանի Մեկնութիւն Եսայի, Սաղմոսաց, Մատթէի, Պողոսի, Ճառք (թվով 9, մյուսները հետին), Սերբիանոս, Եւսեբեայ Եմեսացւոյ ճառք (թվով 15), Կիւրդի Աղեքսանդրացւոյ Մեկնութիւնք Ս. Գրոց, Եւսեբիոսի Քրոնիկոն, Յերոնիմոսի յառաջարան Աստուածաշունչ գրոց, Վարք հարանց (մասն ինչ), Արիստիդեայ Աթենացւոյ Զատագովութիւն, Աբրահամ խոստովանողի Վկայք Արևելից, Կանոնագիրք (հին մասը), Հիւլպողիտ Բոստրացի, Գրիգորի Նէոկեսարացւոյ խօսք ի Ծնունդն, և այլ վկայաբանութիւնք, բոլորն էլ թարգմանութիւն՝ բացի Եզնիկից:

Բ դասը կոչվում է Եփրեմյան և պարունակում է հետևյալ գործերը.— Եփրեմ Ասորւոյ Մեկնութիւնք Հին կտակարանի, Համարաբառ, Թարգմանութիւն Աւետարանի, Մեկնութիւն Գործոց առաքելոց և թղթոցն Պողոսի, Ճառք և կցուրդք, Եւսեբիոս Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցական, Զգօնի ճառք, Զենութայ Ամթացւոյ ճառք, Այիթալայի Ուսուցիցւոյ ճառ, Հարուրնա Եղեռացի, Իգնատիոս հայրապետի թուղթք, ընդ ամենը 11 կտոր, բոլորն էլ թարգմանված ասորերենից:

Գ դասը կոչվում է Կիրեղյան և պարունակում է հետևյալ գործերը.— Կիրեղ Երուսաղեմացւոյ Կոչումն ընծայութեան, Բարսեղ Կեսարացու Վեցօրեայքը և իր Պատարագամատոյցը, Ոսկերանի Մեկնութիւն Յովհաննու (Ա.—ԺԳ ճառերը), Եւզբերանի Մեկնութիւն Յովհաննու (Ա.—ԺԳ ճառերը), Պատմութիւն հարանց Եփրատացւոց, ընդ ամենը 7 կտոր, առհասարակ թարգմանութիւն հունարենից և ասորերենից:

*) Մեսրոպյան հայերենը անցյալում կոչվել է «ոսկեղաբայան», իսկ հետմեսրոպյանը՝ «հետոսկեղաբայան»:

***) Հմմտ. Նորայր, Կորիւն վրդ. և նորին թարգմանութիւնք, էջ 16—35:

Ի դասը կոչվում է Ազաթանգեղյան և պարունակում է հետևյալ գործերը.— Ազաթանգեղոս, Կորիւն, Բուզանդ, Մակարայեցիք, Եւթաղ (ըստ Նորայրի), ընդ ամենը 5 կտոր, շատը բնագիր, փոքր մասը թարգմանական:

Այս չորս դասերի հատկութիւններն են. Եզնիկյանը բոլորից կանոնավորը, ճիշտը, հստակը, արվեստավորն ու գեղեցիկն է. Եփրեմյանը ամենից պարզն ու հասարակը. Կյուրեղյանը ներկայացնում է բարեխառն ոճ և բունում է երկուսի միջին տեղը. Ազաթանգեղյանը պերճ, բազմազարդ, մթին ու հաճախ անկանոն:

Չորս դպրոցների այս բաժանումը, որ նշանակեցինք, ոչ ժամանակի արդունք է և ոչ էլ տեղի. ըստ որում մեսրոպյան շրջանի այն կես դարը այնքան մեծ տևողութիւնն չէ, որ կարելի լինի շրջանների բաժանել և յուրաքանչյուրը վերագրել մի դպրոցի: Միևնույն ժամանակ գիտենք, թե բոլորն էլ գրական արտադրութիւններն են Սահակի և Մեսրոպի թեև տակ կազմված դպրոցի, ուստի տեղն էլ առանձին կարևորութիւն չունի: Մնում է միայն դպրոցների տարբերութիւնը վերագրել անհատական հայացքների և հեղինակների ոգուն կամ կրթութիւն: Այս է պատճառը, որ դպրոցների զանազանութիւնն համար կատարյալ բնորոշ գծեր չկան. և կան գործեր, որոնք ըստ այս բանասերի մտնում են այս դպրոցում և ըստ մի ուրիշ բանասերի մի ուրիշ դպրոցում:

Միևնույն ժամանակ նկատենք, որ մի որևէ գրական գործ, որ պատկանում է այս կամ այն դպրոցին, ծայրից ծայր չի ներկայացնում նույն դպրոցի հատկութիւնները և ըստ նյութի փոխվում է տեղ տեղ. օրինակ հենց Եզնիկը:

Տալիս ենք 4 դասերից մի քանի օրինակ՝ ընտրելով ամենից ավելի բնորոշները.

ա) Եզնիկյան դաս

1. Յորժամ զաներևութէն և զնորին զմշտնջենաւոր զօրութենէն ճառիցէ ոք, քանզի մարմնաւոր լեալ է, պարտի զմիտս յատակել և զխորհուրդս սրբել, զյոյզս շարժմանց պարզել, զի յայն զոր առաջի եղ՝ հասանել կարասցէ: Նա և որ ընդ ճառագայթս արեգականն հայել կամիցի, պարտի զպղտորութիւն աչացն, զաղտն և զբիժն ի բաց պարզել, զի մի մթարքն՝ որ զբրաւքն շողայցեն, արգել հայելոյ ի յատակութիւն լուսոյն լիցին...:

Արդ բարիք է արեգակն և գեղեցիկ բնութեամբ, և մեզ և

ամենայն արարածոց որ ի ներքոյ երկնից՝ յօգուտ և ի դարման իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան և յատակի լուցեալ՝ առ ի զխաւարն և զստուերն զերկուց մեծացն անօթոց ի բաց ի միջոյ փարատելոյ. բայց ինքն եթէ իցէ և եթէ չիցէ՝ զայն ոչ գիտէ, զի չէ ի բանաւորաց և ի մտաւորաց. նոյնպէս և այլքն յանշնչոցն արարածոց: Եւ թէ շուր թէ հուր թէ երկիր թէ օդ, թէ իցեն և թէ չիցեն՝ զայն ոչ գիտեն, և զսպասաւորութիւնն՝ յոր կարգեցան՝ անդադար մատուցանեն, վարելով այնր որ կազմեացն զնոսա...:

Այլ նա աւասիկ իբրև զկառս իմն լծեալ ի չորից երիվարաց զաշխարհս տեսանեմք, ի ջերմութենէ, ի ցրտութենէ, ի ցամաքութենէ և ի խոնաւութենէ. և զօրութիւն իմն ծածուկ կառավար, որ զչորս կազեցողսն ընդ միմեանս ի հաշտութեան և ի հաւանութեան պահեալ նուաճէր: Ամենայն կառք ի համագեաց երիվարաց լծին, բայց միայն այսց կառաց՝ որ ի չհամագեաց լծեալ են. և որ ի համագեացն լծեալ են՝ երբեմն սայթաքեն, երբեմն օձտեն և ի տազնապի զկառավարն և զանձինս կացուցանեն և երբեմն խորտակուին իսկ կառացն գործեն. և յորժամ ողջ կառքն իցեն, և ողջ կառավարն, և վարժ երիվարքն ուշ երեալ ի հանդէպ երեսացն և եթ արշաւին, և այս կառք գարմանալիք ի հակառակ և յանման երիվարաց լծեալ և ծածուկ ձեռամբ ուղղեալք, ոչ ի մի միայն կողմն ի հանդէպ երեսացն և եթ արշաւին, այլ յամենայն կողմանս վարգին և ընդ հանուր արշաւին և ընդ բնաւ սլանան և ամենայնի բաւական են: Յորժամ ընդ արևելս ընթանան, չէ ինչ արգել՝ թէ ընդ արևմուտս ոչ արշաւիցին. և յորժամ ընդ հիւսիսի վարգին, չէ ինչ արգել՝ թէ ընդ հարաւ ոչ սուրայցեն. զի ձեռն կառավարին բաւական է յամենայն կողմանս զիմեցուցանել և ընդ չորս անկիւնս տիեզերաց արշաւեցուցանել:

Եզնիկ, էջ 5—18:

2. Իցէ՞ տեսեալ յորժամ հրդեհ զմեծամեծ տանց հարկանիցի, զիարդ ցուանայ բոցն և ծուխն և անդր յերկինս կցի, և չիք որ ժտի մատչել և զչարն շիջուցանել. այլ ամենայն ոք ընդ անձին ձեպի և զիւրն միայն գիտէ. և հրդեհն ոչ մեղմով, այլ սաստիկ զամենայն ճարակեցի. և բազում անգամ ամենայն քաղաքն շուրջ կայցէ և տեսողք և եթ չարեացն լինիցին, և ոչ զօրավիզն և օգնականք: Եւ անդ իցէ տեսանել զի ոչ ինչ օգուտն

լինիցին որ շուրջն կայցեն, այլ իւրաքանչիւր ոք զձեռս ձգիցեն, և նոցա որ առ ժամայն իցեն եկեալ զտեղն իմն ցուցանիցեն, կամ ընդ պատուանս զբոցն ցոյացեալ, կամ զգերանսն որ հազ կիսայրեաց անկանիցին, կամ ողջոյն իսկ զփողոցսն որ միանգամայն ի սեանցն և ի մութից գերձանիցին և յերկիրն կորձանիցին: Իցեն թերևս և յազումք յանդգունք և ի վսեբ եկեալք որ և մօտ իսկ ժողիցին ի հրդեհ շինուածոյն հասանել: ոչ զի ձեռն տայցեն և զչարն շիջուցանիցեն, այլ զի ցանկալի իմն զտեսիլն համարիցին յորժամ ի մօտոյն ստոյգ կարիցեն նշմարել, որոց մինչ ի բացեայն կային չերևէր այնպէս: Եւ անտի զինչ օգուտ գտանիցեն, բայց թե միայն ֆուս: Եւ եթէ զեղեցիկ ևս և մեծամեծ շինուածքն իցեն, զայն համարին եղուկ և ողորմ բազում արտասուաց արժանի: Նա և է իսկ ողորմ տեսիլ. քանզի սիւնքն հանդերձ հաւեղազէս խոյակօքն մանրիցին և ի յատակսն կորձանիցին. եւ իցէ ինչ բազում զոր ինքեանք բեկտիցեն, կէսն ի հրոյն այրեսցի և զկէսն շինողացն ձեռքն մղիցեն ընկենուցուն, զի մի ևս քան զևս սաստիկ ջամբ հրոյն լինիցի: Անդ իցէ տեսանել և զբազում պատկերսն զոր ազգի ազգի նկարուք քանդակեալ դրօշեալ, յորժամ ձեղունքն բանայցեն և մերկ յարկացն լինիցին, բազում անշքութեամբ մերկացեալ խանձատեալ նշաւակ կացցեն. և զազգի ազգի զհանդերձսն, և զոսկեղէն և զարձաթեղէն անօթսն, զոր յանկարծ ուրեք տանուտէրն հանդերձ իւրով միայն ամուսնոնք տեսանէր, սապատք հանդերձիցն և խնկոցն կաւշարայք ի մարմարակու սենեակսն յերփնեքի կձէիցն դրուադացն՝ ամենայն միանգամայն ի միոյ հրոյն գոհիկ կաճառանոց լինիցի: Եւ հասանէ տեսանել այնուհետև աղբակիրս որթաւորս թիաւորս զամենեսեան խառն և անհարց ի ներքս մտեալ: Եւ ա յ ինչ ոչ իցէ անդ տեսանել, բայց միայն ջուր հուր և կաւ և մօխիւր և զփայտսն թերայրեացս:

Ոսկ. եփես., էջ 781—2:

բ) Եփրեմյան դաս

Յարեաւ թագաւորն և կանայք իւր, և ի բաց եղին զթագն ի վերայ զլիոյ թագաւորին. զի լուան թե վաղիւն չիցեմք: Ամենայն քաղաքն միաբան գոչեցին. վասն զի ի գոչել հողմոյն պղտորէր հող երկրին, զի երկինք խռովեալ էին. ամպք և մէգք զմիմեամբք պատէին և զօրացեալ թանձրփնայր մառախուղն, Փայլակն զփայլակն բախէր, որոտումն որոտման պատահէր:

կայծակունք զկայծակունս ստիպէին. դողումն անդ և հիանալ սրտի: Ամենայն մարդ ընդ զետին հայէր, թէ անաւասիկ տապալի: Հային ամենեքեան զմիմեանս ի կատարի աւուրցն: Ծհաս ժամն այն. կացին ամենեքեան յաստիճան մահու, բուռն հարին զմիմեամբք, վասն զի եհաս յուսահատութիւնն: Եւ ի լալն իւրեանց հայէին ընդ երեկսն, եթէ եկն գիշերս և երբ մեզ խաւար [անմեկնելի]. եկն գիշերս և հաւ չիք մեզ տեսանել զառաւօտն: Եւ ասէին՝ թէ յորժամ պահու կործանի, յերեկորեամյ երբեք տապալի, եթէ առաւօտուն կործանի. յորժամ պահու արդեք գայ ձայն գուժին: Կարծէին թէ յերեկորեայ տապալի. եկն երեկոյն, և նա կայր կանգուն: Ակն ունէին եթէ ի գիշերի ընկղմեսցի. եղև գիշեր, և նա կայր ևս տակաւին: Ակն ունէին եթէ առաւօտուն կործանի. բացաւ առաւօտն, բացաւ ողորմութեան և գթութեան դուռն ի վերայ քաղաքին. զի յայն աւուրսն երկիրն ի շարժմանէ ոչ դադարէր: Յայս վից եօթներորդսն երանի էր մեռելոց՝ քան նոցա: Կենդանի մեռեալ էին, և չէին թաղեալ: Եղբայր եղբօր պատահէր և ոչ ճանաչէր զկերպարանս նորա. և ոչ ունկն կարաց ի միմեանց մեկնել զձայն ի ձայնէ: Իրբև զխանձող կրակի էին ի պահոց. մորթ և ոսկերք լոկ մնացին:

Եփրեմ, Գ. 119.

գ) Կիրեայան դաս

Բարի և զեղեցիկ է ծով ի խաղաղ ժամանակի, յորժամ հանդարտացեալ կայցէ յալեաց և ի մրրկաց ի պարզ և յստակ ժամանակի. յորժամ միտ եղեալ նայիցիս ընդ ծիծաղել ջուրց նորա, որ յազգի ազգի գոյնս ցուցանեն զերփն երփն նարօտուց, մերթ ծիրանույ, մերթ կապուտակի, մերթ սևաներկ երանգաց, և յորժամ քաղցրաշունչ սողոխ վէտս վէտս զմկանունսն ճոճեալ ճեմեցուցանիցէ. յորժամ ոչ բունութեամբ օղոյ յանդգնութեան ծփեալ կոծիցէ զերկիր՝ զիւր դրացի, այլ խոր խաղաղութեամբ և ջերմեռանդ սիրով զիրկս արկեալ պատեալ կայցէ զցամաքաւն:

Առաջին գեղեցկութիւնն հովու այս է, զի նա է ակն մեծ խոնաւութեան ջուրցն բազմութեան, և յաներևոյթ և յանդունդս են գնացք իւրոյ յորդութեան, որպէս յայտ առնեն փորուածք երկրի և ցնցղկաձև երակք, որ են ի միջի նորա: Զի ջուրք ծովու փորեն. ծակտեսն զերկիր, որ և գնան ի նմա մանուածապատ շրջանօքն, շրջին կոծին ընդ վայրս բազումս, մինչ քամին

պարզին ազի ճաշակքն և դառնութիւնք, և ապա բխեն ի ներքոյ ի վեր քաղցր և անոյշ ճաշակօք, և առնին ըմպելի ուրախարար ամենայնի, որ զեռան յերկիր:

Բարի և զեղեցիկ է դարձեալ ծով, վասն երազընթացն զնացից շուրջն անդնդոցն, որ պայմանաւոր չափով բաժանին բաշխին ընդ ամենայն կողմանս, լինել հանգիստ ամենայնի: Բարի և զեղեցիկ է դարձեալ ծով, որ ասպնջական է հիւրամեծար զետոց բազմաց, որ յամենայն տեղեաց մտանեն ի նա: Առնու ամփոփէ զամենեսին, և ինքն կայ ի նոյն սակի և ի նոյն սահմանի առանց թերութեան, յաւելուածութեան: Բարի և զեղեցիկ է դարձեալ ծով, զի նա է ակն զլիաւոր՝ շուրջն օդոց, որ պարզին ելանեն ի նա ճառագայթիւք արեգական, յառնու ընդ աղօտ ի նուրբ ջերմությամբն քաղցրացուցանել զշուրջն քաղցրացուցիչ տապովն, որ ձգին ելանել ի բարձունս վերինս: Եւ առնուն ջերմութիւն ի տապոյն արեգականն, և ապա դառնան հովանան հովանեօք ամպոց, որ զնոսա ընդունին, ի շնչել հողմոց ամպավարաց, և ապա գան հասանեն շուրջն լինել յանձրես, թանան զերկիր և արբուցանեն զնա:

Բարի և զեղեցիկ է դարձեալ ծով, զի է պատճառք բարի, զի պնդէ ամբացուցանէ զկղզիսն, որ ի միջի նորս, և պահին առանց փասու, և առանց նենգութեան կերակրին ի նմանէ իբրև ի ցամաքի, և առնին ի նմա զեղեցիկ օթեւանք տեղառջէ ի տեղի, և ի հանգիստ այնոցիկ, որք շրջին ի նմա:

Բարի և զեղեցիկ է դարձեալ ծով, զի է պատճառք բարիքանգի նովին ընտրին և սահմանին աշխարհք ի միմեանց: Եւ է դարձեալ ճանապարհ յատակեալ ի շահ վաճառականաց, և ամենայն կերպարանօք լցուցիչ է կարօտութեան մարդկան: Շահ մեծաշահ է մեծատանց՝ բերելով զվաճառն ազգի ազգի, դարմանիչ և կերակրիչ է աղքատաց, զի դտանեն ի պատճառս նորս զպէտոս կարօտութեան կենաց իւրեանց:

Եւ ես զինչ իցեմ տկար մի տառապեալ՝ կա՞յ ճշգրտիւ պատմել զմեծապայծառ զեղ վայելչութեան ծովու:

Բարսդի Վեցօրեայք, էջ 78.

դ) Ազգաբնակչոյն դաս

Իդձք բազմացեալք ցանկալեացն զկամս նաւելոցն ի նաւահանգիստն հաւուցանել՝ խնդութիւն է խաղաղութեամբ վասն զի ի մէջ ընդոստուցեալ ալեացն որ ընդդէմ դառնան,

ածին օգովքն ի մարտ պատրաստին, ընչաքաղցիցն և օգարաւհացն ժամ եղեալ բազմաց, միաբան սանձեալ թիագերիվարս տախտակազործացն բեռնակապ երկաթազործացն՝ եանս քաջալերելով, կասկած երկիւղի սրտիւք ի կապոյտ ոին ձիարձակ լինին, անքայլ գնացիւք անընթաց ոտիւք ցեալ ի վերայ ծովուն մկանանց շուրջն ալեացն կուտաց. ուր բարկացայտ ալիքն լեռնաձև կուտակին, մէտ ի մէտ արհին, ըստ աղեգէտն պատմողին մարմնաքնար Դաւթեան այն, թէ «Ելանեն լեռնանան, և իջանեն դաշտանան». ուր մն ապրեալք ի ծփանացն՝ արշաւանս զնեն յիւրաքանչիւր առս, զայս վէպ պատմեն մերձաւոր սիրելեաց, զանցս եղեաշխատութեան ուղւոյն ճանապարհաց, զելէջս տարուբեր ադարն սահանաց, գրաւական եղեալ զանձինս շահաւորն օգթեան, և կէտ՝ զմահ մրցանաց յաղթութեան. ընդ մեծանալ յառացն փոխանակեն զինքեանս. զի թէպէտ և տեսանիցեն նութիւն սաստկութեան հողմակոծեալ ալեացն տատանելոց, յերփն երփն զերանգան շրջըջին ըստ սաստկութեան ծփայն, զիզագէզ յեղեղուկ փրփրացեալ զմիմեանց կարգեալ զկնի լիցին, և յափնածիր յաւազադիր սահմանս բարձրացելոցն լգէմ՝ հասեալ ի ցամաքակէտն ծիծաղեսցին:

Իսկ ի մէջ ըմբռնելոցն խորոցն անդնդոցն լցեալ խոռոցեալ խոխոջելովն ահափետ արարեալ զօրհասն գուշակեն. զի պէտ և զինքեանս շարժունս տեսանիցեն ի վերայ յաղթոցն բազմութեան, սասանելոցն սարսափելոցն, սակայն զկաշին առաջի անեալ ընդ միտ՝ ջանան դիմագրաւեալք ընդ տվութիւն հաագին ծովուն:

Ազգաթանգեղոս, յոջ.

Այս չորս դասերը մի մի բառով բնորոշելու համար կարող է ասել թե՛

Առաջին դասն է արվեստավոր,

Երկրորդ դասն է պարզ,

Երրորդ դասն է բարեխառն,

Չորրորդ դասն է պերճ:

Մեսրոպյան շրջանի գրվածքները թեև այսպես ոճով գաղան կամ իրարից աարբեր, բայց բառարանով ու քերականությամբ իրար հետ բոլորովին նույն են: Հետին հայերենից բանք տարբերվում են շատ որոշ գծերով, այնպես որ կարելի որևէ գրվածք լեզվից գատելով որոշել անմիջապես, թե որ

ժամանակին է պատկանում: Այս տարբերութունները բաժանվում են երկու կարգի՝ ներքին և արտաքին: Ներքին տարբերութուններն են լեզվի ճոխութուն, ասությանց կանոնավորութուն, հոմանիշների առատութուն, քերականական կանոնների միօրինակութուն, դարձվածների վայելչութուն, բնականութուն և այլ այնպիսի հատկութուններ, որոնց կարելի է վարժվել միայն հաճախակի ընթերցումով: Այսպես՝ երբ Եզնիկի վերև մեջ բերված հատվածում կարդում ենք՝

«Ո՛չ ի մի միայն կողմն ի հանդէպ երեսացն ևեթ արշաւին, այլ յամենայն կողմանս վարդին և ընդ հանուր արշաւին և ընդ բնաւ սլանան և ամենայնի բաւական են: Յորժամ ընդ արևելս ընթանան, չէ ինչ արգել՝ թէ ընդ արևմուտս ոչ արշաւիցին, և յորժամ ընդ հիւսիսի վարդին, չէ ինչ արգել՝ թէ ընդ հարաւ ոչ սուրայցեն. զի ձեռն կառավարին բաւական է յամենայն կողմանս դիմեցուցանել և ընդ չորս անկիւնս տիեզերաց արշաւեցուցանել», — տեսնում ենք, որ միևնույն «վազել կամ արշաւել» բառը կրկնված է 6 անգամ տարբեր հոմանիշներով. այսպես՝ արշաւին, վարդին սլանան, ընթանան, սուրալ, դիմեցուցանել. — միևնույն «ամեն կողմ» բառը կրկնված է 4 անգամ տարբեր ձևերով. յամենայն կողմանս, ընդ հաւուր, ընդ բնաւ, ընդ չորս անկիւնս և այլն:

Նույնպես երբ Բուզանդ (Դ. բ) գրում է՝ «Եւ սկիզբն գործակալութեանն հազարապետութեանն աշխարհատեսն խնամակալութեանն, աշխարհաշէն աշխարհատած դեհկանութեան, շինականաշէն ազգս Գնունեաց՝ հազարապետն ամենայն երկրին: Նոյնպէս ստրատելատութեան սպարապետութեանն զօրավարութեանն մարտի կուելոյ գործոյ ռազմիկ ճակատամուղ նիզակին իրափառն աղանազգիք աղանադրօջ արծուէնշանք վարժնակաւնիչք աներկիւղք քաջասիրտք նահատակք քաջանունք բարենշանք բարեհամբաւք բարեզործք յաջողակք ի գործ պատերազմաց ի բուն ի նախնեացն կարգեաց...», կամ նույնը՝ Գ. ի, «Եւ այնչափ զայրացոյց գրգռեաց յուզեաց դրդեաց սրտմըտեցոյց բարկացոյց...», կամ Բուզ. Դ. 6 «Սկսաւ նքողել ծարաւել նուաղել և ներգեկել դորսովել ի քաղցոյ կամ ի ծարաւոյ...», — այստեղ ուրիշ ոչինչ չենք տեսնում, եթե ոչ հոմանիշների գանազան խմբակցութուններ, ճոխությամբ ու առատությամբ գործածված:

Նույն իսկ ամենափառքիկ մի հատվածում, երբ կրկնութուն

է պատահում, մեծապայան շրջանի ընտիր հեղինակը գիտե գործածել գանազան հոմանիշներ. օր. Եզն. էջ 129, տող 4. «Արդ եթէ նա վասն նորա յաշտ առնէր, զի որդի լինիցի նմա, իսկ Որմիզը վասն նորա յժբ սակա առնէր, միջէ կասեմծ ինչ ուստեք էր նմա, և այնք աղագալ պատուիրէր նմա վասն իւր յաշտ առնել...»: Ոսկ. պօղ. Բ. 480. «Արդ ընդէ՞ք Թշնամանիցես գնոսա գմէ՞ խայտառակիցես, էրո՞ւմ այպն առնիցես...»:

Մեծապայան շրջանի հեղինակների լեզվի այս ճոխութունը ցայտուն կերպով երևան է՝ գալիս հայտնապես այն ժամանակ, երբ մարդ համեմատում է հունարենից կատարված հայերեն թարգմանութունները բնազրի հետ. օր. Եւթաղի հունարեն բնազրում կարդում ենք

«ἀχαλῆει γὰρ τὰ ἕκαστα καὶ λήγει πάλιν»

Հայերեն դարձած է՝

«ածէ գայ հասանէ յաստիս և դարձեալ միւսանգամ անդրէն դադարէ», ուր միայն ἀχαλῆω «ծաղկիլ, դարգանալ» բայի դեմ դրված է 4 բառ, և πάλιν մակրայի դեմ 3 բառ*):

Մակար. Ա. 42. «կարգեցաւ կազմեցաւ ճակատեցաւ պատրաստեցաւ, յարձակեցաւ, ի դիմի հարաւ...» (հույնը միայն «բանակը կարգնց»**):

Ո՛չ միայն գոյականներ, ածականներ և բայեր այսպիսի գանազանությամբ և հոմանիշներով կրկնվում են, ինչ որ շատ հնարավոր է ամեն լեզվի մեջ էլ, այլ և նախադրութուններ ու դերանուններ, ինչ որ շատ ավելի դժվար է: Այսպես Եզն. էջ 7—8 կարդում ենք՝

Քանզի ոչ եթէ կարօտ ինչ ոք իւիք էր, եթէ վասն այնորիկ խնայիցէ՞ իւր միայնոյ սեպհականեալ զկենդանութիւնն, և անզօր և սկար, եթէ անձին ևեթ խորիցէ զգօրութիւնն, և ոչ նվազ ի գիտութենէ, եթէ ինքեան ևեթ պահիցէ զգիտութիւնն...:

Ուր հոմանիշ են ոչ միայն կարօտ, անզօր, սկար, նվազ ածականները և սեպհականել, խորել, պահել բայերը, այլ և իւր, անձին, ինքեան, — միայնոյ, ևեթ, այնպես որ երեք շարք նախադրութուններ համապատասխան հոմանիշներով շարված են դեմ դեմի:

Արտաքին նշանները շատ ավելի բնորոշ և հասկանալի են: Թվենք նրանցից կարևորները.

* յ Վարդանյան, Եւթաղ, էջ 209—210, ծան.:

** Նուրյան, Ուսումնաս., Երուսաղէմ, 1935, էջ 335.

1) Մեսրոպյան հայերենը չգիտե մի խումբ բառեր, որոնք սովորական են հետին հայերենի մեջ՝ ինչպես՝ փարթամ, վսեմ, վեհ, արփի, բառ, բայ, սեռ, տառ, կենցաղ, սաղարթ, հրաշք, փեթակ, տեսակ, քանակ, որակ, էակ, տոփանք, տրոհել, հրճուիլ, որոնց փոխարեն ունի տարբեր հոմանիշներ. ինչպես՝ հրաշք բառի տեղ սովում է գորութիւն, արուեստ, նշան, սքանչելիք. — փեթակ բառի տեղ գործ է ածվում մեղուանոց. — տեսակ բառի տեղ աղգ և այլն, և այլն: Չկան նաև այսպիսի ածանց բառեր, ինչպես՝ գեղջուկ, վաղեմի և այլն:

2) Մի խումբ բառեր մեսրոպյան հայերենում ձևով փոքր ինչ տարբեր են. ինչպես՝ արծուի, հիւսիսի, պատասխանի արուեստ փոխանակ արծիւ, հիւսիս, պատասխան, արհեստ, որոնք հետին են:

3) Ապա, առ, բաղ, բաց, գեր, դեր, ենթ, հոմ, մակ, յար, ներ, շաղ, շար, պար, վայր, վեր, տար, տրամ, ստոր, փաղ մասնիկներով սկսվող բառերը չեն գտնվում մեսրոպյան հայերենի մեջ:

4) Ամէն բառը մեսրոպյան հայերենում կարող է բարդվել միայն բայարմատի հետ և ոչ թե ածականների հետ. ուրիշ խոսքով նշանակում է «ամեն բան», մինչդեռ հետին հայերենում նշանակում է «ամենից ավելի» և դարձել է գերադրական մասնիկ: Այսպես մեսրոպյան են ամենագլխ «ամեն բան գիտցող», ամենահնար «ամեն բան հնարող», ամենակեցոյց «ամենքին ապրեցնող», որովհետև կազմված են հնարել, գիտել, կեցուցանել բայերի արմատներից: Բայց հետին են ամենաբարի, ամենագեղեցիկ, ամենամեծ և այլն, որովհետև կազմված են բարի, գեղեցիկ և մեծ ածականներից:

5) Ունի մասնիկով կազմված իզական բառեր չեն գործածվում. ինչպես՝ սրբուհի, տիրուհի, մաքրուհի, իշխանուհի, երանուհի և այլն (կա միայն քաղունի, որ շատ քիչ է գործածված և այն էլ հետո է դրված՝ փոխանակ զղխոյ): Մեսրոպյան հայերենում իզական կազմելու համար դրվում է կին բառը պարզ կամ բարդութամբ. Չայր հզոր և զկին գորաւոր. իշխանակին:

6) -զան մասնիկը, որ այնպես սովորական է հետինների մեջ, բնավ չի գործածվում մեսրոպյան հայերենի մեջ. ինչպիսիք, սրբազան, հրաշազան, գեղազան, բազմազան, հիզան, որզան, բաղազան, բաղազանեալ, գերազան, մաքրազան և այլն, և այլն, կա միայն զանազան, որ սակայն չի նշանակում «զանազան»:

7) -նեմ մասնիկը, որ նույնպես հետին հայերենի մեջ սիրե-

լի մի ձև է, իսպառ անգործածական է մեսրոպյան հայերենում. ինչպես լուսանեմ, երկնանեմ, վեհանեմ, իսկանեմ, ատոքանեմ, արեհանեմ, արփիանեմ, սաղարթանեմ, սաղարթանեմափոթիթ, և այլն: Այսպես նաև փառ, ինչ. հրաշափառ, իրաւափառ և այլն:

8) -ային մասնիկը անսովոր չէ մեսրոպյան հայերենում, բայց գործածվում է միայն տեղական բառերի հետ. օր. կարելի է սոսել լեռնային, դաշտային, քաղաքային, հարաւային, հիւսիսային, ցամաքային, բայց կարելի չէ սսել երկնային, աստուածային, մարդկային, հրեշտակային, որոնք հետին ձևեր են. մեսրոպյան հայերենում սրանց փոխարեն գործ է ածվում երկնաւոր, երկնաւորական, աստուածական կամ աստուածեղէն, մարդկեղէն և այլն:

9) Ան- մասնիկով կազմված բացասական բառերը չեն կարող իրենց վերջում կրել -ելի մասնիկը. — այսպես հետին են անշարժելի, անայլայլելի, անխախտելի, անսասանելի և այլն բառերը, որոնց համապատասխան մեսրոպյան հայերեն ձևերն են անշարժ, անայլայլ, անխախտ, անսասան և այլն: Կան նաև անդնական, անբժշկական, կամ առանց զննելոյ, անհնարին առ ի բժշկութիւն և այլն, բայց ոչ բնավ -ելի:

10) ող- և -եալ ձևերով գերբայները շատ սովորական չեն մեսրոպյան հայերենում. այս ձևերը կազմվում են հարբերականով. ինչպես՝ որ շարժէ, որ միտին, որ շարժին և փոփոխի, փոխանակ ասելու՝ շարժողն, միտողն, շարժեալն և փոփոխեալն. — Եզնիկ (էջ 23) գրում է. «Քանզի յորում իցէ ոք, այն յորում էն, քան զայն որ ի նմա էն՝ մեծ գտանի» փոխանակ ասելու «պարունակողը պարունակյալից մեծ է»: Ող մասնիկի փոխարեն ավելի սովորական է իշ մասնիկը. ինչպիսիք արարիչ փրկիչ, շարժիչ, փոփոխիչ և այլն:

11) Երկրորդ լծորդության բայերի անորոշի վերջավորությունն է -ել և ոչ թե -իլ, թեև բայը խոնարհվում է -իւմ ձևով. ինչպես՝ խօսել-խօսիւմ, համարել-համարիւմ, պատշաճել-պատշաճիւմ և այլն. իսկ խօսիլ, համարիլ, պատշաճիլ ձևերը հետին հայերեն են: Այս հանգամանքը հաճախ պատճառ է դառնում, որ ներգործական և կրավորական բայերը շփոթվեն իրար հետ. այս պարագային մեսրոպյան հայերենը մի հարմարավոր դարձվածով դուրս է գալիս դժվար դրությունից. այսպես ըստ Եզնիկ՝ էջ 15, չեմ արժանի պաշտօն առնլոյ, այլ պաշտօն հարկա-

նելոյ: Իսկ Մտթ. Ի 28 նույնը դառնում է՝ Որդի մարդոյ ոչ
եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել:

12) Մեսրոպյան հայերենի սիրելի ձևերից է նույն բառով
կազմված բարդութուններ գործ ածել մոտ մոտի. ինչպես «Զօ-
րացուցանէ գանգորս մեծագոր գորութեամբ և ինքն ոչ թերանայ
ի գորացուցիչ գորութենէն. և պարգևէ գիտութիւն ամենայն ան-
գիտաց և ինքն բաւանդակ ունի յինքեան զամենագէտ գիտու-
թիւնն» (եզն. էջ 8): «Մեծապատիւ մեծապարգև մեծարեաց
գնա» (Բուզ. Գ. Ժ.): «Ոչ էութեան էականաց իրիք խառնիչ,
այլ գոյանալոյ դոյացելոցն գոյարար» (եզն. 239): Շահ մեծա-
շահ է մեծատանց (Վեցօր. 88):

13) Խառնել բայը, ինչպես հայտնի է, ունի երկու նշանա-
կութուն՝ «խառնել, յօգել, միավորել» և «խառնակել»։ մեսրո-
պյան հայերենում առաջին իմաստով խառն գրվում է բարդու-
թյանց վերջը, իսկ երկրորդ իմաստով՝ սկիզբը. հմմտ. ձագա-
խառն, ջրախառն, հողախառն, հրեշտակախառն և խառնախօս,
խառնածին, խառնագագան և այլն: Հետին հայերենի մեջ այս
նրբութիւնը չկա:

14) Երբեմն մեսրոպյան հայերենի բառերը թե ձևով և թե
նշանակութեամբ տարբերվում են հետիններից. ինչպես՝ այդ
շրջանում սառամանիք նշանակում է «ցուրտ քամի», իսկ հե-
տին հայերենում սառնամանիք է բառը և նշանակում է «սա-
ռույց»։ երկուսի տարբերութիւնը տեսնելու համար հմմտ. եզն.
17 «Կամ օղբ երբեմն զսառամանիսն շնչելով և երբեմն զխորշակն
բերելով», իսկ եղիշէ՝ «բազում ձմերաց հալեցան սառնամանիք»:

15) Շատ անգամ հետին հայերենը գործ է ածում մի բայ:
որի տեղ մեսրոպյանը մի ամբողջ ստացվածք ունի. ինչպես՝ պա-
տասխանի տալ կամ առնել՝ փխ. պատասխանել, աղօթս առնել,
աղօթս մատուցանել՝ փխ. աղօթել. գհետ երթալ փխ. հետևել,
երկիր պագանել, երկրպագութիւն առնուլ փխ. երկրպագել:
Նույնպես ողջունել, ուրախանալ, ուրախացուցանել:

16) -արեմ վերջավորութեամբ բայերը, ինչպես նաև օրան-
ցից կազմված գոյականները -ուքիւն մասնիկով՝ չեն ընդունված
մեսրոպյան հայերենում. ինչպես՝ փառատրել, փառատրութիւն,
պատասխանատրել, պատասխանատրութիւն, պարզեատրել, պար-
զեատրութիւն և այլն:

17) Փոխանակ ան՝ բացասական մասնիկի՝ մեսրոպյան
լեզվում շատ անգամ գտնում ենք առանց նախադրութեամբ

կազմված ձևեր. ինչպես՝ առանց հասանելոյ «անհաս», առանց
գիտութեան «անգետ», առանց շիջանելոյ «անշեջ», առանց պա-
տասխանի տալոյ «անպատասխանի», առանց զող ական հատա-
նելոյ է բնակութիւնն «բնակութիւնը ապահով է»:

18) Քաղաքների և երկրների անունները կազմվում են
հատկացուցիչով. ինչպես՝ աշխարհ Պաղեստինացուց (Պաղեստին):
աշխարհ Հայոց (Հայաստան), քաղաք Հոռոմայեցուց (Հոռոմ),
քաղաք Երուսաղէմացուց (Երուսաղէմ) և այլն*):

Այս բոլորից դուրս կան բազմաթիվ մասնաւոր ձևեր, ոճեր
կամ դարձվածներ և ասութիւններ, որոնք հատուկ են միայն
մեսրոպյան հայերենին և անծանոթ հետին հայերենին:

Կան երբեմն էլ այնպիսի գեղեցիկ ոճեր ու ասութիւններ,
որոնց քաղցրութիւնը միայն վարժված ականջը կարող է գգալ:
Օրինակի համար «ապերախտ գտնվեց» հասարակ ասութիւնը
մեսրոպյան հայերենում արտահայտվում է հետևյալ ձևերով.—

Անձիր լինել ի վերայ երախտեաց.

Ապաշնոր գտանել առ սք.

Ապաշնոր լինել գումհքէ.

Ապաշնոր երախտակորոյս երախտեացն լինել.

Ապախտիս հատուցանել.

Անշնորս գտանել առ սք.

Անշնորակալ գտանել առ սք.

Աղուփոի համարել առ սք.

Ժխտել գերախտիս.

Ի ժխտութիւն ելանել.

Ժխտող գտանել**)

Բայց այս բոլորը մի առ մի սովորեցնել բառարանի և
քերականութեան գործն է:

Այստեղ պիտի ավելացնենք մի կարևոր նկատողութիւն:

Առաջինը, որ մեր ամենահին հիշատակարանները Ե դարի
սկզբից են. բայց հարց է ծագում, թե նրանք ինչ հարազատու-
թեամբ հասել են մեր ձեռքը: Ամենահին հայ ձեռագիրը 887 թվից
է, որ է Մոսկվայի Հագարյան ձեռագրանի Ավետարանը: Ուրեմն նա

*) Իբրև օրինակ հիշենք, որ երկիրների անվանց մեջ թեև կարելի է
տեսնել Պարսկաստան, Հրէաստան, Ասորեստան, Տաճկաստան, բայց երբեք
կարելի չէ տեսնել Հայաստան, այլ միայն Հայաստան աշխարհ, Հայաստան
երկիր, աշխարհ Հայոց, երկիր Հայոց (Նարայր, Կոր. վրդ. էջ 37):

***) Վարդանեան, Նիւթեր հայերէն բառագրութեան, Վիեննա 1920, էջ 46:

400 տարի ավելի ուշ է, քան Թարգմանութեան Թվականը: Շատ ավելի վատ է Եզնիկը, որի վեհնեօտիկյան հրատարակութունը 21թ.—1280 թվի ձեռագրից է, իսկ այժմ աշխարհում գոյութուն ունեցող միակ ձեռագիրը (էջմիածնի, այժմ Երեվանի № 1111 ձեռագիրը), որ միևնույնն է, շուրջ 830 տարի ավելի ուշ, քան սկզբնագիրը: Ինչո՞ւ դարձի ընթացքում, ձեռքից ձեռք արտագրությամբ, ով գիտե որքան փոփոխութուններ են տեղի ունեցել: Ոչ մի գրվածքի սկզբնագիրը հասած չէ մեզ: Գրիչները երբեմն հապավել են այս ինչ կամ այն ինչ հատվածը, տեղ տեղ հավելումներ և անհատական բացատրություններ են ավելացրել, տեղ տեղ էլ փոխել են բնագրի լեզուն և իրենց ժամանակի սովորական հայերենին են վերածել: Այնպես որ ամենամաքուր մեսրոպյան մի գրվածքի մեջ անգամ հաճախ պատահում են հետմեսրոպյան լեզվի նեղքեր:

Օրինակի համար, Ոսկեբերանի Եսայեայ մեկնություն մեջ էջ 188, 211, 458 գտնում ենք անբնական ձևեր, որ պետք է ուղղել անբնական, ինչպես ունի էջ 199.—էջ 88 անհատապի պետք է ուղղել անհատա, ինչպես ունի էջ 115,—Նույնպես Եզնիկ էջ 195, 196 գտնում ենք փառատրություն, որ պետք է սրբագրել փառատրություն, ինչպես ունի արդարև Եզնիկի միակ ձեռագիրը:—Ոսկեբերանի մեկնություն Յովհաննու և Մատթէի մի քանի անգամ ունին պատասխանատրություն, որ պետք է ուղղել պատասխանատրություն, ինչպես ունին հաճախ Ս. Գիրքն ու Ոսկեբերանը:—Մեսրոպյան չէ -գան վերջավորությունը. բայց գտնում ենք զարմանազան Ա. Եզր. ա. 10. զարմանազանական Ոսկ. եփես., աստուածագան Եփր. պհ. Սերեր. էջ 199, հրաշագան Ոսկ. ես.—այս բոլորը հետնամուտ ձևեր են, որ պետք է սրբագրել: Իրավամբ էլ Վարդանյան ՀԱ 1913, 562 Սերերիանոսի (էջ 199) աստուածագան ձևը ուղղում է աստուածական, Գր. սքանչ. ծն. քս. ճառի մեջ զարմանազան ձևը դարձնում է զարմանական, իսկ Ա. Եզր. Ա. 10 զարմանազան բառը հասարակ լուսանցագրություն է, որ ապա բնագրի մեջ է մտել:

Պրոկղ և Ակակ, երկու հույն հայեր, առանձին առանձին նամակ են գրել Սահակին և Մեսրոպին՝ աղանդավորների մասին: Երկուսին էլ պատասխանում են Սահակ և Մեսրոպ առանձին նամակներով, որոնք գրեթե նույն են: Պրոկղի պատասխանը այսպես է սկսվում. «Ճառագայթք մշտնջենաւոր յաւիտե-

նական լուսոյդ որ առ մեր տկարութիւնս երևեցան ի ձեր լուսաւոր սրբութենէդ» (Գիրք թղ. էջ 9): Ակակի պատասխանն էլ միևնույնն է, միայն լուսաւոր բառի տեղ դրված է լուսաբեր (անդ, էջ 16): Արդ՝ երկրորդ գրություն մեջ կան զանազան ձևեր, որոնք չեն կարող մեսրոպյան լինել: Այսպես օրինակ՝ էջ 17 Որ աւելի քան զօրինացն չափն ջանան և նկրտին ըմբռնել զանբմբռնելին: Այս ձևերը հետին սխալ գրչություններ են, որ կարելի է ուղղել առաջինի համեմատ: Այսպես, նախորդ սըխալը էջ 11 ուղղիվ ձևով է՝ «որք աւելի քան զինքեան չափն ջանան և նկրտին ըմբռնել զանհասն զառանց բմբռնելոյն»: Բանասերները աշխատում են գտնել այս եղծումները և սրբագրել: Ձեռագրական սրբագրությունների այս գործում մեծ արդյունք ունին Նորայր և Վարդանյան: Գծախտաբար մեսրոպյան հայերենի գիտությունը բոլորին չի հասած. Կովկասում ոչ մի հայագետ չունինք, որ մեսրոպյան հայերենն ընդունի. իմանա և ուսումնասիրած լինի, բացի ակադեմիկոս Ստ. Մալխասյանից: Այս գործով զբաղվում է միայն Վիեննայի Մխլթարյան դպրոցը, որ և առաջին անգամ գիտություն մեջ գտավ ու պարզեց մեսրոպյան հայերենի զաղանթը՝ Գաթրըճյանի և Գարագաշյանի ձեռքով (1840 թ.*):

Վերևում հիշատակված ցուցանիշներով կարելի է միշտ որոշել, թե որևէ գրվածք, որ ավանդված է մեզ հնից, մեսրոպյան շրջանին է պատկանում՝ թե հետմեսրոպյան շրջանին: Իբր օրինակ առնենք Թորենացու հետևյալ հատվածը.—

«Այլ ասասցուք, թե է՞ր աղագաւ կոչի նա Մանեայ այլք: Քանզի էր կին ոմն Մանեայ անուն յընկերաց սրբոց Հռիփսիմեանցն, որպէս զՆունէ Վրաց վարդապետունի, որ ոչ շութափեաց հետևել նոցա ի գալն առ մեզ, գիտելով զամենայն տեղիս Աստուծոյ, բնակեցաւ...»:

Այս կարճ հատվածի մեջ հայտնապես մեսրոպյան չեն է՞ր աղագաւ և վարդապետունի (պետք էր ասել՝ առաջինի փոխարեն ընդէ՞ր, վասն է՞ր, է՞ր վասն, էրո՞ւմ և կամ պարզապես է՞ր. իսկ երկրորդի տեղ՝ առանց ունի մասնիկն ավելացնելու՝ վարդապետ). —հետևիլ բառը միայն 4 անգամ կա գործածված մեսրոպյան գրականություն մեջ, բայց մեսրոպյան չէ (պետք է ասել՝ զհետ

*) Ընդարձակ պատմ. տես Ակիբյան, Գոստական հայերէնը և Վիեննայի կան Մխլթարյան դպրոցը, Վիեննա, 1932, հատկապես էջ 139 և շար.:

երթալ, զհետ զեալ, զհետ լիենլ, զհետ գալ)։—վերջապես մեսրոպյան չէ գիտելով, թեև ունինք գիտելով գիտասլիւր ասացվածը*):

Լինում են դեպքեր, երբ մի միակ բառով կարելի է վճռել թե՛ արվածքը պատկանում է հետմեսրոպյան շրջանին. օրինակ՝ Զիւնդ միւսուրի ընդ պարագրելույն անպարագրելին (Աթան. Թ)։ Այստեղ միակ անպարագրելի բառը՝ իր պար նախամասնիկով և բացասականի հետ -ելի մասնիկով միաժամանակ երկու ապացույց է ներկայացնում հետնության։

Այնու ամենայնիվ հեշտ չէ ծանոթանալ մեսրոպյան լեզվի բոլոր զաղանիքներին և նրբութիւններին։ Օրինակ՝ Պոսում հրատարակվում էր «Ճաշակ սոկեղէն դպրութեան» (1886/7), ընտիր հայերենով, Խմբագիրներն էին Ա. Մ. Գարագաշեան և Յ. Գուրգէն, երկուսն էլ հավատարիմ մեսրոպյան առաջինը նույն իսկ մեսրոպյան հայերենի գյուտն անողներից մին, Չնայած դրան, Վիեննայի միաբանության անդամներից մեկը, Ն. Գ. Մէնէվիշեան, ՀԱ. 1888, 159, քննադատելով Ճաշակի լեզուն, գտնում է հետևյալ սխալները.

— Ճշ. Գ. 3 յապշուքիւն գրնթերցողս կրթել.—յայսպիսի ոճ չկա մեսրոպյան շրջանում, թեև ասվում է յապշուք կրթել.—բայց չկա յապշուքիւն կրթել, կա յապշուք դառնալ (Ե.ս. պամ. 652), որից կարելի է հեռակցնել թե պիտի ասելին յապշուքիւն գարձուցանել, բայց նույնպես չէ ավանդված։

— Ճշ. Գ. 19 Գրգռեաց յարոյց ամբաստանութիւն ի վերայ նորա։

Ամբաստանել բայի խնդիրը լինում է գ-սվ բացասական կամ վասն-ով սեռական. չկա ի վերայ։

— Ճշ. Գ. 6 լալ և հեծել պարտ իցէ ի վերայ տկարութեան մտաց ազդին.

Հեծել բայը առնում է միշտ ընդ նախդիրով կամ վասն նախադրությամբ խնդիր։

— Ճշ. Գ. 27 «Ճամարտակ գրախօսութիւն». առաջինը նոր է հարմարեցրած ճամարտակել բայից, երկրորդը՝ հատուկ է հետին գարերին։ Բուն մեսրոպյան շրջանի լեզվով պիտի ասվեր «անհանճար ընդվայրախօսութիւն»։

Այս օրինակները ցույց են տալիս որ մեսրոպյան մեծագույն վարպետներն անգամ կարող են սայթաքել։ Հետևաբար

և անհրաժեշտ է ունենալ մեսրոպյան հայերենի ամբողջական համարաբառը, ուր լեզվի բոլոր օրինակները մանրամասն հավաքված ու դասավորված լինեն։ Վիեննայի Մխիթարյանները կազմել են այդ աշխատութիւնը. բայց դա գտնվում է միայն իրենց մոտ ձեռագիր վիճակում, որովհետև այդպիսի անգնածավալ աշխատութիւններ անհրատարակելի են։

Ա Ղ Բ Յ Ո Ի Բ Ն Ե Ի

Գարագաշեան.—Նկարագիր ուսմանց. Վիեննա 1845։

Ակիւնեան.—Գասական հայերէնը և Վիեննական Մխիթարեան դպրոցը. Վիեննա 1932։

Նորայր.—Կորիւն վարդապետ և թարգմանութիւնը նորին. Տվդիս, էջ 16—35։

Գաթրճեան.—Մշտոցեան լեզուն. ՀԱ. 1913, էջ 719—723։

Գալեմքեարեան.—Ոսկեղարեան և ոչ-ոսկեղարեան հայերէնը. ՀԱ. 1903, էջ 257—272։

Մէնէվիշեան.—Ոսկեղարեան հայերէնի խնդիրը. ՀԱ. 1903, էջ 225 շար։

*Նույն Մէնէվիշեան, Արգարու գրոցը, Վիեննա, 1897, էջ 6Ա։

ԳՐԱԲԱՐԸ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՈՒ ԷՐ

Մեր ուսումնականները շատ անգամ են զբաղվել այն հարցով, թե ե՞ դարի հայերենը, այն լեզուն, որով զբաված են Ս. Գիրքը, Եզնիկը, Ոսկերեքանը և այլն, ժամանակի ժողովրդյան խոսակցական լեզուն էր, թե արվեստական մի լեզու, որ հորինեցին Մեսրոպ, Սահակ և իրենց երեց աշակերտները: Ոմանք առաջինի կողմն են, բայց շատերը երկրորդ կարծիքին են. ուրիշներ էլ բռնում են միջին դիրք, այսինքն ընդունում են, որ ե՞ դարից մեզ ավանդված այդ հայերենը (զբարբար) ժամանակի խոսակցական լեզուն էր, բայց Սահակի և Մեսրոպի ձեռքով զբաղական մշակութուն կրած, կոկված ու բարեփոխված էր:

Միանգամից ասենք, որ արվեստական լեզվի գաղափարը հակառակ է գիտական լեզվաբանության սկզբունքներին և օրենքներին: Ո՛չ մի տեղ, մարդկային պատմության ընթացքում տեսնված չէ ինքնահասարակ արվեստական մի լեզու կամ այդպիսի մի լեզվով զբաված զբաղանություն: Նույն իսկ այն արվեստական լեզուները, որ ժժ դարուց սկսեցին հորինել զանազան գիտուններ՝ միջազգային հաղորդակցության պահանջներին բավարարություն տալու համար, (ինչպես վոլապյուկ, էսպերանտո, իդո և այլն) դեռ մինչև այժմ, հակառակ գիտունների և պետությունաց և միջազգային զանազան կոնգրեսների ջանքերի և աշխատանքի, արմատ չեն բռնել: Նրանք անցել են և անցնում են նորաձևությունների նման, մինչդեռ զբարբարը (այսինքն Ե դարի բարվեստական լեզուն) դարեր շարունակ շարունակել է իր գոյությունը: Եթե այդքան գիտուններ, պետություններ և միջազգային կոնգրեսներ, այս լուսավոր դարերում չեն կարողանում ստեղծել ու պահել մի արվեստական լեզու, մթթե Սահակ ու Մեսրոպ և իրենց սակավաթիվ աշակերտների խմբակը ավելի ուժեղ էին քան այդ բոլորը, որ կարողացան թե ստեղ-

ծել և թե պահել այդ արվեստական լեզուն (զբարբարը) այնքան դարեր շարունակ:

Նախ հարց տանք.— ինչո՞ւ համար Սահակ և Մեսրոպ պիտի ստեղծեին արվեստական լեզուն.— անշուշտ այդ լեզվով մի զբաղանություն ունենալու համար: Իսկ ինչո՞ւ համար պիտի ունենային այդ զբաղանությունը.— ի հարկե ժողովրդի պահանջներին բավարարություն տալու համար: Ներկա դեպքում մենք գիտենք, որ Սահակի և Մեսրոպի նպատակը հայ ժողովրդի քրիստոնեական դաստիարակությունն էր, նրա ձեռքը հայերեն լեզվով զբաված Ս. Գիրք տալն էր: Եթե նազ գիրքը պիտի ծառայեր լոկ իրրև սրբություն կամ իրրև կուռք, ինչպես պիտի լիներ, եթե նա զբաված լիներ արվեստական մի լեզվով. այն ժամանակ թիչ կարիք կար այնքան նեղությունը թարգմանելու այդ արվեստական հայերենին, քանի որ հունարեն և ասորերեն Ս. Գիրքը արդեն կար և գործածվում էր հայ ժողովրդի մեջ: Եթե Մեսրոպ և բոլոր թարգմանիչները տառապում ու գանգատվում էին այն բանից, որ հայ ժողովուրդը ոչինչ չի հասկանում հունարեն կամ ասորերեն Ս. Գրքից, ինչո՞ւ պիտի տային նրա ձեռքը արվեստական լեզվով զբաված մի ուրիշ Ս. Գիրք, որ նույնպես անհասկանալի պիտի մնար նրան:

Կորյունը խանդավառությամբ պատմում է այն բոլորները, երբ Ս. Գիրքը հայերենի թարգմանված՝ ժողովրդին մատուցվեց:

«Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց, անպայման սքանչելի լինէր. յորում անկարծ ուրեմն օրեսուսոյց Մովսէս, մարգարէական դասուն, և յառաջագէմն Պաւղոս, բովանդակ առաքելական գնդոյն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ ի ձեռն երկուց հաւասարելոցն ճայարարառք հայերեմախօսք գտան:

«Անդ էր այնուհետև սրտալիր ուրախութիւն և ակնավայել տեսիլ հայելոյն: Քանզի երկիր, որ համբաւուցն անգամ օտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն աստուածագործ սքանչելագործութիւնքն գործեցան, առժամայն վաղվաղակի ամենայն իրացն եղելոց խելամուտ լինէր. ոչ միայն ժամանակաւ պաշտեցելոցն, այլ և յառաջագոյն յաւիտենիցն, և ապա եկելոցն սկզբբանն և կատարածի, և ամենայն աստուածատուր աւանդութեանցն: Իսկ իրրև զչափ առեալ զիրացն հաստատութեան, և համարձակագոյն և առաւելագոյն զաշակերտութիւնն նորագիււ վարդապետութեանն՝ խմբէին ուսուցանել և թեքել, և պատրաս-

տական քարոզութեանն անգէտ մարդկան յօրինել. որոց և ինքեանք իսկ ի կողմանց և ի դաւառաց Հայաստան աշխարհին յորդեալք և զըդեալք հասանելին ի բացեալ աղբիւրն զիտութեանն Աստուծոյ: Քանզի յԱյրարատեան դաւառին՝ ի կայս թագաւորացն և քահանայապետացն, բղխեցին Հայոց շնորհք պատուիրանացն Աստուծոյ» (Կորիւն, էջ 18—19):

Ամենաքիչ մի դար էր, որ հայերը քրիստոնյա էին. մի դար էր, որ քրիստոնեութունը քարոզվում էր նրանց մեջ և մի դար էր, որ նրանց ձեռքը տրված էր հունարեն և ասորերեն Ս. Գիրքը: Ի՞նչ զարմանալի ման է, որ այդ 100 տարվա ընթացքում, Հայաստանը տեղեկութուն անգամ չուներ Երուսաղեմի և Քրիստոսի մասին (երկիր, որ համբաւուցն անգամ օտար էր կողմանցն այնոցիկ, յորում ամենայն աստուածադործ սքանչելագործութիւնքն գործեցան): Եվ հանկարծ նույն անտեղյակ երկիրը բոլոր քրիստոնեական պատմութեան խելամուտ դարձավ (առժամայն վաղվադակի ամենայն իրացն եղելոց խելամուտ լինէր): Ինչպէս բացատրել այս հանկարծական փոփոխութեանը: Որովհետև Ս. Գիրքը, որ մինչև այն ժամանակ անհասկանալի լեզվով էր (հունարեն կամ ասորերեն), այժմ հայաբարբառք հայերենախօսք գտան, այսինքն թե գրված էր այն լեզվով, որ ժողովուրդը խոսում, բարբառում էր:

Այս մտածութեանները մեզ ստիպում են ընդունել որ այն լեզուն, որով թարգմանվեց Ս. Գիրքը, հայ ժողովրդին հասկանալի, այսինքն նրա խոսակցական լեզուն էր:

Մեր աչքի առջ իբր օրինակ ունինք հարյուրավոր դեպքեր զանազան գրականութեանց ստեղծման, մասնավանդ քրիստոնեական քարոզչութեան նպատակով, ինչպես եղավ Մեսրոպի ժամանակ. հայոց մեջ: Թողնելով սլավական և գոթական գրականութեանց ստեղծումը՝ Ալեքսարանի թարգմանութեան միջոցով, հիշենք անգլիացի ու ամերիկացի բողոքական միսիոնարների քարոզչական գործունեութեանը՝ Ափրիկէի գուլուաների, Ամերիկայի կարմրամորթների և կամ մեր հարևան անգրագետ քրդերի մեջ: Ի՞նչ են անում այդ քարոզիչները: Արդյոք որևէ արվեստական լեզու են ստեղծում և գրանով սկսում իրենց քարոզչութեանը: Ոչ. նրանք տարիներով մնում են այդ ժողովուրդների մեջ, ուշադրութեամբ լսում ու սովորում են նրանց խոսած լեզուն և հետո տառեր հարմարեցնելով՝ թարգմանում են Ավետարանը այդ խոսակցական լեզվով և սկսում են կարգալ ու

քարոզել: Ուրիշ կերպ վարվել ոչ կարելի էր և ոչ էլ պետք էր: Այսպես արին նաև Մեսրոպ և Սահակ:

Ասենք թե այն անգլիացի և ամերիկացի քարոզիչները օտար են այն՝ քարոզած ժողովուրդների համար, իսկ Սահակը և Մեսրոպը իրենց ժողովրդի հարազատ զավակներն էին. Այդ դեպքում օրինակ առնենք այլանացիներին, արխազներին, եզիդիներին և շատ ուրիշ ժողովուրդների, սրունք մինչև վերջերս անգլիա ժողովուրդ էին և այժմ միայն այրուբն հնարելով՝ հիմք դրին մայրենի լեզվով գրականութեան: Արդյոք նրանք հնարեցին որևէ արհեստական լեզու, թե գրեցին ու գրում են այնպես, ինչպես իրենք են խոսում: Բնականաբար խոսակցական լեզուն են անց կացնում գրականութեան, որովհետև ուրիշ կերպ կարող չեն:

Հակառակորդների դարմանքն ու տարակուսանքը հիմնվում է նաև ուրիշ երևույթի վրա: Ինչպէս կարելի էր, հարց են տալիս նրանք, Ե դարում, առանց նախավոր մի հին գրակալութեան ունենալու, հանկարծ գրել մի այնպիսի հարուստ, չքնաղ, սքանչելի լեզվով, որին երբեք հետո չհասավ գրաբար գրականութեանը հազարավոր տարիների ընթացքում:

Բայց այս երևույթը անսովոր չէ լեզուների պատմութեան մեջ: Մենք մեզ հետ ունինք այս կետում արաբերենը (Ղուրանի լեզուն), որի համար ահա թե ի՞նչ է գրում Ռընանը. «Մարդկային պատմութեան անակնկալ երևույթների մեջ ամենից տարօրինակը և ամենից անբացատրելին, թերևս, հենց արաբերեն լեզուն է: Այս լեզուն, նախապես անհայտ, երևում է մեզ հանկարծակի իր ամբողջ կատարելութեան մեջ, իր ձևունութեամբ, իր անհուն հարստութեամբ, մի խոսքով այնպես կատարյալ, որ այն օրվանից մինչև այսօր չի կրել ոչ մի կարևոր փոփոխություն: Նրա համար չկա ոչ մանկութուն, ոչ ծերութուն. հենց որ երևաց նա՝ իր հրաշալի աշխարհակալութեամբ, հենց նա լրումն էր ամեն բանի: Չգիտեմ, թե կարելի է գտնել մի ուրիշ օրինակ, որ մի լեզու մտնի աշխարհ նրա պես, առանց հնավիճակ մի շրջանի, առանց միջին աստիճանների և առանց սատանումների» (Renan, Hist. des langues sémit. I^a 1863, էջ 342):

Գրաբարը իբրև արվեստական լեզու ընդունելը ենթակայական (subjectif) մտածողութուն է: Մենք, որ տարիներ շարունակ աշխատելով, հազիվ կարողանում ենք սովորել գրաբարը և հիանում ենք միշտ նրա գեղեցկութեան, ճոխութեան ու

պերճութան վրա, չենք կարողանում ըմբռնել, թե ինչպես կարող էր նա լինել մի անզրագետ, հասարակ ժողովրդի խոսակցութեան լեզուն: Եվ այս անըմբռնելի երևույթը բացատրելու համար մերթ ընդունում ենք Գ կամ Դ դարում գոյութիւն ունեցած և հույն, պարսիկ կամ ասորի տառերով կամ դանիելյան նշանագրերով գրված հայալեզու գրականութիւն և մերթ ընդունում ենք, որ այդ լեզուն երբեք խոսված չի եղել, այլ հանճարեղ Մեսրոպի և Սահակի ձեռքով շինված արհեստական մի լեզու է եղել: Բայց, ինչպես որ անհիմն է ենթադրել նախամեսրոպյան որևէ հայալեզու գրավոր գրականութիւն, նույնպես և անտեղի է մտածել, թե գրաբարը Ե դարում շինված արհեստական մի լեզու է: Մի ամբողջ ժողովուրդ և նրա գլխով անցած հազարավոր տարիների ժամանակը—ահա սրանք են եղել հայերեն լեզվի հեղինակները և այս հեղինակները շատ ավելի մեծ բան են կատարել, քան իրենց ծնած հանճարեղ զավակները:

Եթե գրաբարի գեղեցկութեան, ճոխութեան ու պերճութեան, նույնպես և նրա գեղարութեան պատճառով մենք առաջնորդվենք մտածելու, թե նա մի արհեստական լեզու էր և ոչ խոսակցական, ուրեմն արհեստական պիտի լինեն նաև հին հունարենը, լատիներենը, սանսկրիտը և այլն, որոնք, սակայն, իրենց ժամանակին խոսակցական լեզուներ էին: Խոսակցական չպիտի լիներ նաև գերազանցապես գեղարու ռ հանելուկային կազմութեամբ արարեցները, որ սակայն այսօր անապատում թափառող անդրագետ արարի բերանում էլ է հնչում:

Այսօր գրաբարը չկա, և կան նրա փոխարեն բազմաթիվ հայ բարբառներ: Բայց գրաբարի հատկանշական կողմերի եթե ոչ բոլորը, գոնե մեծ մասը կարող ենք գտնել արդի հայ բարբառներում: Գրբ. առ իս նշանակում է «ինձ մտտ»։ կենդանի է Լարբարդի բարբառում. գրբ. յիճէն «ինձանից», ի քէն «քեզանից» կենդանի են Պոլսի բարբառում (իմէ, քէնէ ձևով).— գրբ. նմա «նրան» կենդանի է Արտահանի բարբառում.— գրբ. սոցա, դոցա, նոցա «սրանց, դրանց, նրանց» կենդանի են Խրիմի և Նոր-Նախիջևանի բարբառում՝ սացա, դացա, նացա ձևերով.— գրբ. ո՞յր «որի՞» կենդանի է Վանի բարբառում՝ վիբ. գրբ. է՞ր «ինչո՞ւ» կենդանի է Թավրիզի բարբառում ճէ՞ր ձևով.— գրաբարի ներկան արդի հայերենի ստորադասականի կամ ըզձականի ձևով էր. այժմ այդ ձևի փոխարեն ունինք ում, կը, ել

ձևերը. ինչ. տանում ևմ, կտանիմ, տանէլիմ. բայց գրաբարի ձևն էլ գտնում ենք Խոտրջուրի բարբառում. ինչ. նօ՞յ տանիս «ո՞ր ես տանում», տունն ի նի տանիմ «տուն (նիս) եմ տանում».— գրբ. ք հոգնակերտ վերջավորութեան տեղ ամենուրեք գտնում ենք եր, ներ, բայց ք ձևն էլ պահված է Երևանի, Նոր-Ջուղայի, Ազուլիսի, ինչպես նաև Մարաղայի բարբառում.— գրբ. ց-ով հորովումը գտնում ենք շատ տեղ. ինչ. Պլ. տղաք, տղոց.— վերջապես գրաբարի ամենաբնորոշ գ նախդիրը մինչև այժմ կենդանի է Մշո, Տիգրանակերտի, Սուշավայի, Սիրիայի բարբառում.— վերջինիս մեջ գտնում ենք նաև ի նախդիրը բացառականի և նախդիրի հայցականի մեջ (օր. ի փուրցունքա «ի փորձանաց», ի գէդէյնքա «ի գետին», ի չուրքէյն «ի չարէ»):

Գրաբարի արհեստական և ոչ խոսակցական լեզու լինելու գաղափարը մերժելուց հետո, անցնինք խոսել այն մեղմ կամ չափավոր կարծիքի մասին, որով գրաբարը համարվում է ժողովրդական լեզվի կոկված ու բարեփոխված մի վիճակը: Նրանք՝ որ հետևում են այս կարծիքին, իբր օրինակ մեջ են բերում մեր արդի աշխարհաբարը, որ հիմնապես մեր ժողովրդի խոսած լեզուն է, բայց գրագետների ձեռքով կոկված ու մշակված:

Այս օրինակը հենց ինքը իրեն է հերքում:

Ի՞նչպես կոկեցին մեր գրագետները հայ ժողովրդական լեզուն (ուսմկորենը). ի՞նչպես ստեղծեցին նրանից աշխարհաբար գրական լեզուն: Թե արևմտյան և թե արևելյան աշխարհաբարի հեղինակները առին ժողովրդական լեզուն այնպես՝ ինչպես կար, ջնջեցին նրա միջից օտար (սովորաբար թուրքերեն) բառերը, դրին նրանց տեղ հայերեն հոմանիշները, իսկ աղավաղյալ հայերեն բառերը փոխանակեցին գրաբարի ձևերով: Օրինակի համար ժողովուրդը ասում էր՝

Սապոնը փիս հոտ ունի.

Գրագետները դարձրին՝

Օճառը վատ (կամ գեշ) հոտ ունի.

Ժողովուրդը զանազան բարբառներով ասում էր.

Երև. էս տունը բարցր ա.

Պլ. աս տունը բարս է.

Վն. էսա տուն պանցր ի.

Ղրբ. էս տունը պէցիւր ա:

Գրագետները վերցնելով գրաբարի ձևերը, կազմեցին՝

Աշխ. Այս տունը բարձր է:

Քերականությունը, շարահյուսությունը և համաձայնությունը մնացին անփոփոխ, ինչ որ նշան է թե փոխվել էր լեզվի միայն արտաքին կողմը, իսկ ներքինը ամբողջ մնացել էր նույն: Ուրիշ խոսքով լեզուն փոխված չէր:

Բայց քանի որ լեզվի շինությունը նշանակում է հին ձևերի վերանորոգում, հետևաբար այս շինողական երևույթը տեղի կարող է ունենալ միմյանց այն պարագային, երբ լեզվի հնագույն վիճակը հայտնի է: Իսկ երբ այդ հին ձևերը հայտնի չեն գրական մնացորդներով, ուրիշ խոսքով՝ չկան, գրագետը ստիպված է լսածը զրի առնել ամենայն հավատարմությամբ: Ուրիշ կերպ նյութապես անկարելի է: Այսպես արին և պիտի անեին բողոքական միսիոնարները կարմրամորթները լեզվով Ավետարանը թարգմանելու ժամանակ, այսպես են անում նաև բոլոր անգիր ժողովուրդները, որոնք սկսում են իրենց համար գիր և գրականութուն ստեղծել: Այսպես արին նույն իսկ մեր գրական լեզվի հրատարակները այն բառերի հանդեպ, որոնց հին ձևը կամ չկար և կամ չգիտեին. օրինակ՝ հենց, հերթ, ալարիլ, ալանի, աթար, ալիշ, հարևան, ալոս, առեն և այլ բաղաժամով գավառական բառեր: Եվ կամ նաև այն օտար բառերի հանդեպ, որոնց համապատասխան չին հայերեն ձևը չկար. ինչ. նամուս, հարամ, հալալ, մահոտեսի ևն:

Արդ՝ Մեսրոպի կամ Սահակի առաջ կամ որևէ գրական մնացորդ հայերեն լեզվով. կամ նախնի դարերի հայերենի վիճակը ներկայացնող որևէ գրություն, որպեսզի իմանային, թե ինչպես է եղել այս ինչ կամ այն ինչ բառի հնագույն հնչումը, և ըստ այնմ բարեփոխեին կամ կոկեին: Մենք գիտենք, որ նախքան Ե դարը ոչ մի գրականութուն չի եղած հայերեն լեզվով: Ուրեմն Սահակն ու Մեսրոպը չէին կարող կոկել կամ հարդարել ժողովրդական հայերեն լեզուն, և ուրիշ միջոց չունեին, եթե ոչ ճշտիվ զրի առնել այն, ինչ որ լուսվում էր իրենք խոսում էին:

Հակառակորդները իբր ապացույց մեջ են բերում այսպիսի մի կետ.— Եթե ասում են, գրաբարը Ե դարի խոսակցական լեզուն էր, ուրեմն պետք է որ այն դարի բոլոր հեղինակների լեզուն էլ միատեսակ լիներ. բայց ընդհակառակը, մենք մեծ գանազանութուն ենք տեսնում Ավետարանի, Եզնիկի, Եփրեմի, Ազարիանգեղոսի, վերջապես մեսրոպյան շրջանի գանազան հեղինակների լեզվի մեջ:

Թե Ե դարի հեղինակների լեզվի մեջ մեծ գանազանու-

թյուններ կան, այդ ընդունում է ամեն ոք, և դրա համար էլ վերևում մեսրոպյան հեղինակներին բաժանեցինք չորս զպրոցի (Եզնիկյան, Կյուրեղյան, Եփրեմյան և Ազարիանգեղյան): Բայց այստեղ լեզու սանձով չպետք է շփոթել բառարանն ու քերականությունը ոճի հետ: Ե դարի բոլոր հեղինակներն էլ, ինչ զպրոցի էլ պատկանեն նրանք, միևնույն բառարանն ունին ու միևնույն քերականությունը. ամենամանրան տարբերությունն անգամ չկա նրանց մեջ որևէ բառի հնչման կամ գրության, որևէ բառի հոլովման և որևէ բայի խոնարհման մեջ: Չորս զպրոցների տարբերությունը կայանում է ոճի մեջ. մեկը պարզ ու հեշտ, մյուսը դարձարուն ու ծաղկավետ, մյուսը հորդ ու առատ, չորրորդը ծանր ու մութ: Բայց ոճը բոլորովին այլ հարց է. լեզուն հատարակաց է, ոճը հեղինակինն է. առաջինը ընդհանուր է, երկրորդը՝ անհատական: Ամեն մի հեղինակ, նայած իր կրթության, ճաշակին, զգացմունքների նրբության, նայած նույն իսկ բոլոր տրամադրություն, ունենում է առանձին սեփական ոճ: Բայց այդ չի նշանակում, թե նա դուրս է լեզվից ոչ, նա հասարակության անդամ է ու մի քայլ անգամ չի կարող շեղվել լեզվի մեջ ընդունված ձևերից:

Այսպես ուրեմն պիտի ընդունենք, որ Ե դարում առաջին անգամ զրի առնված լեզուն, որ հետո գրաբար անունն ստացավ, նույն ժամանակի ժողովրդական խոսակցական լեզուն էր. և ժողովրդական ու գրական լեզուների տարբերությունը, որ այժմ սովորական երևույթ է ամեն տեղ, գոյություն չունի այն ժամանակ մեր մեջ*):

«Ավետարանի լեզուն հավատարիմ պատկերն է այն ժամանակ խոսված լեզվին, այնքան հավատարիմ՝ որքան անգլիերեն Աստվածաշունչը հավատարիմ ցուցաբերում է ԺՁ և ԺԷ դարերու մեջ խոսված անգլիերենին»**):

Երբեմն այս բանը երևում է բավական հայտնի կերպով: Փավստոսը, որ այնպիսի փարթամ ու մթին ոճ ունեցող մի հեղինակ է, տեղ-տեղ, երբ առիթը ներկայանում է խոսեցնելու իր աշխարհիկ հերոսներին, դնում է նրանց բերանը մի լեզու, որ շատ հեռու է հեղինակի փարթամ լեզվից և կրում է հասարակ ժողովրդական անտաշ լեզվի ոճը***):

*) Աճառյան. Պատմ. հայոց նոր գրականութ., էջ 6—8:

**) Conybeare, Մասիս, 1893, էջ 213-4:

***) Գարեգաշեան, Ճաշակ Ոսկեղէն դպրութեան, էջ 43—51:

Ինուս կ'նք այստեղ այսպիսի շորս օրինակ.

1. Խոսում է Արշակ Թագավորը, երբ լսում է, թե Վաղե կայսրը աքսորել է Ներսեսին.

Քարինք բազումք ի վերայ կայսերն և ձեր ի բերելդ. քարինք և մեր շատ կան ի թափել զատամուսնս նորա ի տայն և ձեր ի բերելդ. զմեր վատթարութիւնս յի տարայց. արդ այդ՝ Երախտեացդ ես դարձուցանեմ (Բուզ. Դ. Ժա):

2. Խոսում է Մուշեղ զորավարը Պապի առջև, թե ինչո՞ւ է բռնել Ուռնայր Թագավորին, բայց չէ սպանել.

Ձիմ զընկերսն զամենեսեան ես կոտորեցի. իսկ որ թագուսն էին, նոքա իմ ընկերք չէին, այլ քո. եկեսցես, որպէս ես զիման սպանի, դու զքոյսն. այլ իմ յայր Թագաւոր ոչ ձգեալ ձեռն երբէք որ թագ ունի, և ոչ ձգեմ. և մի այլ ձգել լիցի՝ եթէ կամիս սպանանել զիս, սպան. այլ ես, եթէ գայ ինձ ի ձեռն երբեք այր Թագաւոր, որպէս եկն բազում անգամ, ես ոչ սպանանեմ զայր Թագաւոր՝ որ գում մի թագ ունի, եթէ ոք իսկ զիս սպանցէ (Բուզ. Ե. դ):

3. Խոսում է Շապուհ պարսից Թագավորը, երբ Դրաստամատը խնդրում է այցելել Արշակին.

Խիստ են խնդրուածքդ, զոր խնդրեցերդ. զի յաւուրց ժամանակաց՝ յորմէ Թագաւորութիւնս Պարսից կանգնեալ է, և բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ եղեալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել Թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ զոք է Թագաւորաց, յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եղեալ է, թող թէ զնա զայր Թագաւոր և զիմ ընկեր կապեալ եղեալ յայնմ բերդի զհակառակորդն. քան մինչ աշխատ արարեր զմեզ և դու աւաղիկ զանձն ի մահ եղիր յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք Թագաւորութեանս Արեաց ի սկզբանէ (Բուզ. Ե. է):

4. Հանդիմանաբար խոսում է Շապուհը Վասակ Մամիկոնյանին և Վասակը քաջաբար պատասխանում.

— Աղուէս, դու էիր խանգարիչ՝ որ այսչափ աշխատ արարեր զմեզ. դու ես այն՝ որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս. և զի՞ գործես. զմահ աղուեսու սպանից զքեզ:

— Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ. զի ցայժմ ես քեզ առիւծ էի և արդ աղուէս: Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի. մի ոտնս ի միոյ լերին կայր և միւս ոտնս իմ ի միոյ լերին կայր. յորժամ յաջ ոտնս

յնուրի, զաջ լեառն ընդ գետին տանէի. յորժամ ի ձախ ոտնս յնուրի, զձախ լեառն ընդ գետին տանէի:

— Աղէ՛ տուր ինձ գիտել, մի՞ ես լերինքն այնքիկ, զորս զուն ընդ ունջ տանէիր:

— Լերինքն երկուք, մի դու էիր, և մի Թագաւորն Յունաց: Այն մինչ տուեալ էր ինձ Աստուծոյ, զքեզ ընդ գետին տանէի և զԹագաւորն Յունաց. մինչև օրհնութիւն հօրն մերոյ Ներսէսի հանգուցեալ էր ի վերայ մեր, և Աստուծոյ զմեզ ի ձեռանէ չէր թողեալ. մինչև զնորա բանն արարաք, և խրատ նորա եկաց առ մեզ, գիտացաք տալ քեզ խրատ. մինչև մեզէն աչօք բացօք անկաք ի խորխորատ: Արդ զինչ և կամիս, արան (Բուզ. Դ. ծղ.):

Այս բոլորի մեջ մենք ուրիշ բան չենք տեսնում, եթե ոչ միևնույն բառարանը և միևնույն քերականությունը՝ ինչ որ մեսրոպյան շրջանի բոլոր գրվածքների մեջ: Տարբեր է միայն ոճը, խոսելու եղանակը, որ ունի հախուռն և անհարթ ձև:

Մի փոքրիկ ժողովրդական հատված էլ գտնվում է Եզնիկի մեջ. Մին ասէ թէ ի մերում գեղ ծովացու զկով զործեաց և զգոչիւնն հանապազ մեք լսեմք ամենեքեան: Եւ միւսն ասէ. Ջպայն իսկ իմ աչօք տեսեալ է:

Բայց նույն իսկ ինքը Եզնիկը երբեմն, հակառակ իր մշակված ու նուրբ ոճին, գործ է ածում ժողովրդական անմշակ ոճ, ինչպես հետևյալ հատվածում:

Ձի շունն, որ շնայ, մինչդեռ իսկ ի գործ շնութեանն իցէ, եթէ ոք շուն կոչէ զնա, ըմբոստանայ*):

Այս կարգի օրինակների վրա կարող ենք ավելացնել վիպասանական երգերը, որոնց հավաքածոն տեսանք վերը, գլուխ ԺԵ. Ոչ ոք չի կարող մտածել, թե այդ երգերը Խորենացու հնարածն են, որովհետև մեծ է վիպասանական հայերենի և Խորենացու հայերենի տարբերությունը: Մյուս կողմից չկա տարբերություն վիպասանական հայերենի և մեսրոպյան հայերենի միջև: Նաև կարիք չկա ենթադրելու, թե այդ երգերը ձևափոխված են Խորենացու կամ որևէ մի ուրիշի ձեռքով, քանի որ երաժշտական չափն ու բանաստեղծական հորինվածությունը ոչ կարիք կար փոխելու և ոչ էլ հնարավոր էր: Ուրեմն վիպասանական հայերենն ու մեսրոպյան հայերենը, որ միևնույնն են, ժողովրդի խոսած ու երգած լեզուն էին:

*) Meillet, Rev. des et. arm. հտ. I, էջ 13:

Գրարարի կենդանի ժողովրդական խոսակցական լեզու լինելու ապացույց է նաև այն, որ նա լիքն է կենդանի ժողովրդական առօրյա ձևերով ու դարձվածներով, նույն իսկ մի այնպիսի լուրջ փիլիսոփայական գրվածքի մեջ, ինչպիսին է Նզնիկը: Ահա մի քաղվածք այդպիսի դարձվածներից.

Չսակաւիկ ինչ գհայթայթանացն հնարս չմարթիւս իմանալ^{*}. էջ 139:

Փորձ իրացն իսկ ցուցանէ. 157

Շուրջ եկեալ յածի հնարս խնդրել. 46

Մի ինչ տարցիս ընդ միտ (վատ բան մի մտածիր). 60

Յորժամ տազնուպեալ ոք յուժեքէ իցէ. 90

Չես ոգի կլանել, չես ոգի առնուլ. 90

Մի օտարոտի ինչ զիրսն համարեսցիս. 94

Օգո՛ւտ ինչ իցէ այս գոր առնեմ, եթէ ի գուր ինչ ջանայցեմ. 113

Լինիցի՞ք և եթէ չլինիցի, և ի գուր ինչ վաստակիցիմ. 120

Ա՛յդ ինչ ի մտի է քո (միտքդ ա՛յդ է). 129

Մեծի ծաղու արժանի է. 131, 135

Չնմանէ յուրաստ եմ և զմիւսմէն խոստուկ (այն չեմ ընդունում, մյուսն ընդունում եմ). 136

Մի գխորհուրդս ի վեր հանցես (մարդու չասես). 138

Մեծամեծս կոտորես (չատ մեծ մեծ ես ջարդում). 289

Յականէ աղբերն պղտորեալ է ջուր նորա. 243

Ոչ խառն ի խուռն ինչ առնէ. 234

Տեսի ընդ առաւօտս զերկինս կարճրացեալ, անձրև լինելոց է. 186

Հարաւ շնչէ, խորշակ մեծ լինելոց է. 186

Յորժամ շողն ընդ երգ մտանիցէ, հողամաղք իմն երևին ի շողն. 228

Բանջար ընդ մտոյ եփեալ է (մտով բանջարեղեն է եփել). 287

Ի բանջարոյն ոչ կամիմ ճաշակել. 287

Եթէ ուտէր ոք, չփաստէր. 66

Վարագի ուտի միսն և ոչ փաստէ. 66

Չմիսն եթէ սիրտ ուրուք առնոյր և ուտէր, ոչ փաստէր. 66

է ինչ գոր ախորժեմ ուտել և է ինչ որ ոչ ախորժեմ ուտել. 283

Դատաստան կա իմ ընդ քեզ. 248

Ո՞ր ոք լիցի դատաւոր ի միջի մերում. 248

Արգահատել պարտ է և ոչ պատիժս ի վերայ հասուցանել. 59

Ոչ ինչ ի վճռականացն գործեալ է. 38

Անհնարին փասս գործէ (հանցանքը մեծ է). 38

Ոչ պարսաւանք ինչ են նմա և ոչ գովութիւնք. 41

Թագուցեալ զթշնամութիւնն՝ գաղտ կամի փասել. 46

Որչափ ի մեծութիւն հասանիցես, ի խոնարհութեան կայջիր գանձն. 224

Վրիպել չէ հնար ի սահմանելոյ հրամանէն. 161

Որ ինչ ի ճակատագրին գրեալ է հրամանացն, այնմ չէ հնար վրիպել. 161

է՛ջ ի տարապարտ հպարտութենէդ՝ չունել գանձնդ առ մեծարգիս. 148

Միթէ կասկած ինչ ուստեք է քեզ. 129

Չեղբորն չարաճճոյ գխորհուրդ ընդէ՛ր ոչ գիտաց. 126

Բերան ի բերան և ձեռն ի ձեռն ընդ բարեկամին իւրում խօսէր. 95

Ի մանկութենէ մարդիկ ի խնամս չարի միտեալ են. 44

Մեզ մի լիցի այնպիսի ինչ ասել. 36

Ամենևին այդմ խնդրոյ չիք սպառուած. 22

Ըստ նոցա մտացն է (դա իրենց կարծիքն է). 25

Լինիցի մեզ ոչ ի գուր ինչ զբանս ծախել. 22

Չի՞ պիտոյ է մեզ բնաւ մի ըստ միողէ թուել. այլ համառօտ իսկ ասել. 20

Յես այսր ամենայնի հաւանութեանց՝ յամառեալ զնձն ի մէջ բերես. 59

Իսկ եթէ ի նմին յամառութեան կացցես. 29

Մտաց բարբաջանք են և ոչ ճշմարտութիւն. 251

Յիւրեանց բանիցն իսկ ո՞չ ամաշիցեն. 209

Յիւրեանց իսկ բանիցն յանդիմանին. 192

Դու ո՞վ ես որ համարս պահանջես յինէն. 168

Դու ո՞վ ես որ պահանջես պատասխանի յինէն. 168

Ամենևին չէ հավատալի. 142

Ապաքէն մարդկան մտաց բաջաղանք են. 122

Վիճեալ ևս պնդի՞ս ի բանիցդ վերայ. 99

Ո՞յր բանից պարտ էր հաստատուն լինել. 74

^{*} Հաջորդ օրինակների մեջ գեմքերը հաճախ փոխել եմ, որպեսզի խոսակցության պատկերը ավելի պայծառ դառնա:

Ամենայն առասպելք են և պառաւաց զբողջիւնք. 99

Ի սնտոի յոյս կապեալ կաս. 105

Ի զուր ակնկալութիւն կապեալ կաս. 105

Կեղծիք են և ոչ ճշմարտութիւն ինչ իրաց. 107

Անմտութեամբ լի են բաջաղանքն. 119

Այս բոլոր պատճառաբանութիւնները ցույց են տալիս, որ մեսրոպյան շրջանում գրված հայերենը ճշտիվ ժողովրդի խոսակցական լեզուն էր*):

Գ Լ ՈՒ Խ ԺԸ

ՇԵՏՄԵՍՐՈՊՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ

Մեսրոպյան շրջանից հետո հայերենի բարեշրջության առաջին աստիճանը հետմեսրոպյան շրջանի լեզուն է:

Հետմեսրոպյան ենք կոչում այն շրջանը՝ որ անմիջապես հաջորդում է մեսրոպյան շրջանին, սկսելով 461 թվից: Մատենադրության պատմության մեջ սովորություն է՝ ինչպես մեսրոպյան շրջանն ընծայել առաջին թարգմանիչներին (Մեսրոպ, Սահակ և իրենց երեց աշակերտները), նույնպես և հետմեսրոպյան շրջանն ընծայել երկրորդ թարգմանիչներին, այն է Սահակի և Մեսրոպի աշակերտների աշակերտներին:

Մեսրոպյան հայերենի հատկությանց մասին խոսելու ժամանակ բնականորեն և զուգընթացաբար պիտի դնելինք հետմեսրոպյան հայերենի հատկությունները: Այսպես օրինակ՝ մի խումբ նոր արմատական բառերի երևումը (փարթամ, բուշք, փեթակ, կենցաղ), բառերի տարբեր ձևը (պատասխան, հիւսիս), մասնիկների ու բարդությանց նոր ձևեր (ինչ. պատասխանել, աղօթել, անշարժելի, պատասխանատուութիւն, փառատրել) և այլն: Այս բոլորի մասին նորից խոսել մի առ մի ավելորդ է: Այստեղ պետք է քննենք միայն այն հարցը, թե ինչից են առաջացել այդ տարբերությունները հետմեսրոպյան հայերենի մեջ:

Հին բանասերները այդ բոլորը բացատրում էին անկախութեամբ: Արշակունյաց պետության կործանումով և քաղաքական կյանքի անկումով ընկնում է հայ զպրոցը, հայկական կրթությունը, որի արդյունքը լինում է և հայերեն լեզվի անկումը: Բայց այս բացատրությունը նախ լեզվաբանական արժանիք չունի, երկրորդ՝ ենթադրել է տալիս, որ զբարբը մի արհեստական լեզու էր, որ Սահակն ու Մեսրոպը հնարելով տարածեցին Հայաստանում, իրենց հիմնած դպրոցների միջոցով:

Զհաշվելով թիվ 3 նշանակած նախամասնիկները, որոնք դրական մի խմբակի արհեստական ձևերն են և որոնց մասին

*) Գրքարքի խոսակցական լեզու լինելը պատճառաբանող և հաստատող վերջին հոգվածն է Աբ. Մովսիսյան, «Հայադիր զպրոցի ծագումը և նրա հետագա վիճակը», Գիտ. աշխ. XIII, էջ 388—390:

խոսելու ենք զլուսի Ի, հեամեստրոպյան շրջանի ֆնացյալ բոլոր յուրահատուկ ձևերը ունին երկու ծագում:

1) Այն ձևերը, որոնք բոլորովին նոր են հեամեստրոպյան շրջանի հայերենում, կամ նոր փոխառություններ են իրանական լեզվից և կամ հայերեն գավառական ձևեր, որոնք մեստրոպյան շրջանում գեո դուրս եկած չէին իրենց անձուկ շրջանակից և հեամեստրոպյան շրջանին միայն տարածվելով Հայաստանի ուրիշ մասերում, դարձան ընդհանուր սեփականութուն և մտան գրավոր լեզվի մեջ:

2) Այն ձևերը, որոնք ընդհանրապես նույն են մեստրոպյան ձևերի հետ և նրանցից մասամբ միայն տարբերվում են, արդյունք են լեզվի հետագա զարգացման, նմանաբանության (analogie), ընդհանրացման (généralisation) և այլ լեզվաբանական օրենքների:

Առաջին կարգին են պատկանում փարթամ, փեթակ, հրաշք, վսեմ, վեճ և այլն բառերը, որոնցից ոմանք հայտնապես գիտենք, որ պարսկական փոխառութուն են, ինչ. փեթակ, վեճ, մյուսնեբը թվում են, թե պարսկերեն պիտի լինին, ինչ. հրաշք, վսեմ, խի բոլորն էլ ընդհանրապես գավառական ձևեր են: Նույնը պետք է հասկանանք նաև արհեստ, պատասխան, արծիւ, հիւսիս և նման բառերի համար: Պատասխանի բառի համար հատկապես պետք է հիշել, որ դա ներկայացնում է իրանական մի բարբառ, մինչդեռ պատասխան մի ուրիշ բարբառ: — Բ կարգին են պատկանում հեամեստրոպյան հայերենի ֆնացյալ առանձնահատկութունները: Այսպես, երբ ամեն բառը դարձել է ընդհանուր գերադրական մասնիկ, դա արդյունք է ընդհանրացման. ամենագէտ բառը որ նշանակում էր «ամեն բան գիտցող», կարելի և շատ բնական էր հասկանալ նաև «ամենից ավելի գիտուն», այսպես հասկանալուց հետո մասնիկը պատրաստ էր և կարելի էր ամեն մի ածականի վրա կպցնել շատ վայելուչ ձևով: — Երբ կային Տիգրանուհի, Համազասպուհի, Սմբատուհի ևն իգական անունները, անբնական չէր հետևեցնել, թե ուրեմն ունի իգական մասնիկ է և նրանց օրինակով կազմել ամեն մի բառի իգականը: Բայց պետք է կարծել, որ ունի մասնիկի այս գործածութունը ուսումնականների արհեստական հնարքն է և ոչ բնիկ ժողովրդական: — Շատ կանոնավոր է այլն և ելի մասնիկների գործածութունը. գործածական էին ցամաքային, հիւսիսային և այլն ձևերը, միօրինակության օրենքով կարելի պիտի լիներ ասել

նաև աստուածային, մարդկային և այլն: Այսպես այլն մասնիկը դարձավ ավելի ընդհանուր, իսկ ական հոմանիշը տեղի տվեց գոնե մասամբ: Ամեն լեզվի մեջ էլ հոմանիշների մրցումը առաջացնում է կամ իմաստի տարբերացում և կամ եթե այդ կարելի և կարևոր չէ, մեկի կամ մյուսի ջնջումը: — Ավելի բնական է ելի մասնիկի գործածութունը. երբ ասում էին շարժելի, փոփոխելի, տանելի, ամենահեշտ ձևով կարելի պիտի լիներ ասել բացասական ան մասնիկի պարզ հավելմամբ անշարժելի, անփոփոխելի, անտանելի և այլն: Դեռ կարելի է կարծել, որ տարբերութուն դրված լինի անշարժ և անշարժելի, անփոփոխ և անփոփոխելի և այլն ձևերի մեջ: Առաջինները նրանք են, որ ինքնին այնպես են, երկրորդները՝ ուրիշի միջոցով: Այսպես՝ անշարժ թոր ինքնին իր տեղից չի շարժվում», անշարժելի «այն, որին չի կարելի շարժել»:

Շատ բնական և կանոնավոր է նույնպես իլ ձևով անորոշի կազմութունը. եթե սիրեմ տալիս էք սիրել, խաղամ տալիս էք խաղալ և թողում տալիս էք թողալ, ինչո՞ւ խօսիմ պիտի տար խօսել և այսպեսով էլ շփոթութուն առաջացնել և և բ լծորդությանց մեջ: Չկա ավելի բնական և կանոնավոր բան, քան խօսիլ ձևով անորոշի հորինումը, թեև այս դեպքում անկանոն պիտի մնային հոլովյալ խօսելոյ, խօսելով ձևերը, փխ. խօսլոյ, խօսով:

Ասացվածների տեղ առանձին բայեր գործածելու սովորութունը (պատասխանել, աղօթել փոխանակ պատասխանել առնել, աղօթս առնել) կարող է առաջացած լինել կամ որևէ գավառական ձևից և կամ բնական զարգացմամբ: Մենք էլ սրանից քառորդ դար առաջ գործ էինք ածում թեյի մեջ շաքար զցել ասացվածք, բայց հիմա արդեն ասում ենք շաքարել միակտուր բայը:

Մեստրոպյան հատկութուններից մի քանիսը այնպես են՝ որ նույն իսկ մեստրոպյան շրջանում բացարձակ չեն. օրինակ՝ երբ ասում ենք, թե օդ և եալ ձևով դերբայների փոխարեն գործ են ածվում հարաբերականով միասին դիմավոր բայեր (որ գործէն, փխ. գործողն, և որ գործին փխ. գործհալն) չի նշանակում, թե ող և եալ ձևով դերբայները ի սպառ գոյութուն չունին մեստրոպյան շրջանում: Նույնպես, երբ ասում ենք, թե երկիրների և քաղաքների անունները մեստրոպյան շրջանում հաճախ գործ են ածվում հատկացուցիչով (քաղաք Հոովմայեցոց փխ. Հոովմ և աշխարհ Պաղեստինացուց փխ. Պաղեստին), չի նշանակում, թե բուն անունները իսպառ անգործածական են: Հետմես-

րուպան շրջանի գործն է եղել ուրեմն, այս և նման դեպքերում ծանոթ, բայց քիչ գործածական մի ձև ավելի ընդհանրացնել, ավելի սովորական դարձնել:

Այս բուրբից հետևում է, որ հետմետրոպոլիտան հայերենը ոչ թե մետրոպոլիտան հայերենի աղավաղումը կամ անկուսումն է, հառաջացած քաղաքական կյանքի անկման պատճառով, այլ լեզվի բնական աճման ու բարեշրջության հետևանքը, որի մեջ գործոն դեր ունին ընդհանրացում, միօրինակություն, պարզացում և նման լեզվաբանական օրենքներ, որոնցով կառավարվում են բոլոր լեզուները: Իսկ եթե մեկը այսօր ավելի համ առնի մետրոպոլիտան մի գրվածքից, քան թե հետմետրոպոլիտան հայերենից, դրա պատճառը նախ՝ առաջին թարգմանիչների արվեստն է, որ անհատական գործ է և ոչ թե լեզվի քերականական հորինվածությունների արդյունք, և երկրորդ, ընթերցողի նախապաշար է, որ կարող է ըստ կրթության և ըստ սովորությունների անձից անձ տարբեր լինել: Հետմետրոպոլիտան հայերենն էլ, արվեստագետ հեղինակի գրչի աակ, կարող է դուրս գալ այնպես զեղեցիկ ու ճաշակավոր, ինչպես մետրոպոլիտան հայերենն է: Սրան իրրև ապացույց դնում ենք այստեղ երկու հատված հետմետրոպոլիտան ամենատաղիին հեղինակներից, այն է Փարպեցուց (Ն դարի վերջից) և Եղիշեից (նրանից քիչ առաջ):

1. Նկարագիր Այրարատայ

«Եւ խորհելով զայս ամենայն Արշակ թագաւորն ի միտս իւր՝ լքեալ մերժեալ թողոյր զբարի և զբնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց, գաւառն Այրարատու, գոյակապն և զհռչակաւորն և զականաւորն, զամենարոյսն, զամենարուղիսն, զամենալին, զամենագիւտն ի շահս և ի դարմանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան և սթափութեան. զղաշտս մեծատարածս և որսալիցս, զիւրինս շուրջանակի գեղեցկանիւտս և պարարտարօտս, զհոճեալս երէտվքն կճղակարածնիւք և որոճայնովքն, և այլովք ևս բաղձօք ընդ նոսին: Յորոց ի վերուստ ի կատարացն ջրոց հոսմունք, անկարօտ ոռոգման արբուցանելով զղաշտս՝ մատակարարէ անբաւ բազմութեամբ յոստանն, կանամբք, արամբք և ընտանեօք, զանպակասութիւն հացի և գինւոյ, զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զզանազանուսն իւզարուղիս սերմանցն: Իսկ ի լանջակողմանսն կամ ի սարահարթ տեղիս սփռեալ, յոր դիպեցուցեալ զհայեցած նորոգատեսիլ մարդոց՝ հանդերձս ինչ և ոչ ծաղկարոյս գոյնս կարծեցուցանեն

սփռեալքս պարարտարոյսք և պարարտարօտք պարարտահամք. որոց թանձրախիտ աճմունք խոտացն զանթիւ արօտականս ընտանի իշանց և զանհամբոյր բոյս վայրենի երէցն յագեցուցեալ՝ թանձրաթաղանթս, առոգագաւակս, սոնքացեալս զիրութեամբ զընաւ մարմինն ցուցանեն: Իսկ սաստկաբուրուսն անուշահոտ ծաղկանցն, որ զարանցն քաջաց որսասէր նետողացն և զհոտարած բացօթեպացն, ընձեռելով առողջութիւն՝ զորացուցանեն զզգայութիւն խելացն և նորոգեն: Անդ գտանին և ազգի ազգի արմատք բուսոց ի պէտս օգտակարութեան դեղոց, ըստ ճարտարագետ ճանաչողութեան ստուգահմուտ բժշկացն յօրինուածոցն, երագահաս ախտահալած սպեղանիք, և կամ արմամբ, յերկարելոցն ի ցաւս պատահացուցանեն առողջութիւն:

Իսկ դաշտացն ամենալրութիւն զկամս աշխատասիրացն կորգելով յինքեանց իրրև բանիւ, և աւլցեալ որ զինչ և է բարով՝ ևս առաւել փութանակի զդարձն առ ինքեանս հրաւիրեն միանգամայն, որք ոչ միայն երեւելութեամբն ցուցանեն, վերաբերեալ զշահաւորութիւն օգտից մարդկան, այլ առաւել յորդորախոյզ աշխատողացն՝ զառ ընդ երկրաւ ծածկեալ օգուտս ուսուցանեն, զանձել անձանց շահս և զվայելս այսր աշխարհիս ի մեծութիւն թագաւորաց և ի հաստատութիւն հարկահանաց, զուկի և զպղինձ և զերկաթ և զպատուական քարինս. զոր ընկալեալ արուեստող ձեռաց, զարդարեն զթագաւորս մեծատեսիլ զարդեօքն յօրինուածովքն, զոր ի խոյրսն և ի թագան և ի հանդերձսն յուկեհուռս պաճուճեալս ընդելուզանեն: Այլ և մածմամբ ջրոց, համածին անուշութիւնս մատուցանեն կերողացն զխորտկացն որոշութիւնս: Նաև զարմատս եղէգնասէր բուսոցն ոչ ընդունայն սնուցանէ յինքեան ամենաբաղձ դաշտն Այրարատոյ, այլ և ի նմանէ ծնեալ որդունս, ի զարդ կարմրատեսիլ գունոց, ընծայէ օգտասիրացն շահս և շքեղութիւնս: Եւս և գետոցն գնացք բազմակերպ ձկամբք մեծամեծօք և փոքումբք. զանազանեալ համովք և այլ և այլ տեսովք՝ ուրախացուցեալ լցուցանէ զշնորհս ընչից և հագուրդ որովայնից ժրացելոցն և անվեհեր ջանացողացն:

Մնուցանէ յինքեան երկիրն ջրովք արուեստիւք և զառաւելութիւն հաւուցն յուրախութիւն և ի սթափումն որսատենչ ազատացն զկրկջաձայն քաղցրաձայն առապարասէր վիմասոյզ սօրամուտ, երամս կաքաւացն և դալամբացն և կամ զեղէգնաբլնակ թփամուտ մացառաղօղ պարարտամարմին զանուշահոս:

ազգ ազարացն վայրենեաց. այլ և զջրասուզակ մամուսինդիր խօզակեր մեծանձունք և յաղթամարմինք հաւքն, փորն և թանձրն և սաղն, և կամ այլ բազում և անհամար ցամաքայնոցն և ջրայնոցն ջոկք թռչնոցն: Իսկ թակարդացն շրջափակութեամբք, երազագիւքն և դահողովքն, երեալ ի յորս գունդք նախարարացն որդւովքն ազատացն. ուր ոմանք զհետ ցուցն և այժմանցն արշաւելով՝ զխիզախական զաղեղնաձայնն և եթ բարբառիցին. և այլք զհետ բուլից եղջերուացն և եզանց ձիարձակ եղեալ, զգործ կորովաձիգ արանցն ցուցանեն. և կէսք սուսերօք իրրև զմենամարտիկս, զսաստկանդամ երամս վարսագացն զլորեցուցեալ սպանանեն: Եւ շատք ի մանր մանկանց նախարարաց որդւոցն դաստիարակօք և ծառայիւք զայլ և այլ սեռս ի թրջնոցն որսացեալ բազայիւք, դարձեալ բերիցեն ի յաճումն ընթրեացն ուրախութեան. և այսպէս առլցեալք իւրաքանչիւր որսով, զնան ուրախացեալք»:

Փարս. տպ. 1904, էջ 9—11:

2. Յետ պատերազմին

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք և զգուհալք էին իւրաքանչիւր բաստեռունս և ի դահաւորակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրեալ ուխտիւք, զի համբերել կարասցեն մեծի նեղութեանս: Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամճովք երէց, խոտարուտ կենօք իրրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենևին զսովորական փափկութունն: Սկսեալ ներկան մորթք մարմնոյ նոցա, վասն զի ցերեկ արևակէզք էին և զամենայն գիշերսն զետնաբեկք: Մոռացան զկանացի տկարութիւն և եղեն արուք առաքինիք ի հոգևոր պատերազմին. մարտ եղեալ կուռեցան ընդ մեղան կարևորս, հատին, կտրեցին և ընկեցին զմահաբեր արմատս նորա: Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեան, և սուրբ սիրով լուացին զկապուտակ ներկուածս նախանձուն. հատին զարմատս ազահութեան և չարացան մահաբեր պտուղք ոստոց նոցա:

Այլիք, որ ի նոսա էին, եղեն վերստին հարսունք առաքինութեան և բարձին յանձանց զնախատինս այրութեանն: Իսկ կանայք կապելոցն՝ կամօք կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս և եղեն կցորդ շարչարանաց սուրբ կապելոցն. ի կեանս իւրեանց

նմանեցին քաջ նահատակացն մահուամբ, և ի հեռաստանէ եղեն վարդապետք մխիթարիչք բանտարգելեացն: Մատամբք իւրեանց վաստակեցին և կերակրեցան, և զկարգեալ ոռճիկ նոցա յարքունուստ՝ ամ յամէ թողակ առնէին և տալին տանել նոցա ի մխիթարութիւն: Անարիւն ճիպուանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, և կենդանի են միայն զօրն ծծելով, զանմարմնոցն բերեն զնմանութիւն:

Բազում ձմերաց հալեցան սառնամանիք. եհաս գարուն և եկին նորեկ ծիծեռունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբեք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց: Մաղիկք դարնանայինք յիշատակեցին զսպասկասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա: Սպառեցան բարակք որսականք և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց: Բնագրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ամին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշկատեղս նոցա հայեցան և արաստուեցին. և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա: Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա:

Եւ իրրև այնպէս յամենայն կողմանց ալեկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն: Արտաքնոցն երևէին իրրև այլիք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրով:

Ոչ ևս սովորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստանէ, եթէ երբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին իղձք աղօթից նոցա, եթէ որպես սկսանն քաջութեամբ, ի նմին կատարեսցին ի երկնաւոր սիրովն:

Եղիշէ

Անուրանալի է, որ ոչ-մերսոպյան հեղինակներ ժողովան քաղված լեզուական անհարթութիւններ, լեզվի սխալներ, որոնց պատճառով էլ մենք սխալ զաղափար ենք կազմում նրանց մասին: Բայց դա նրանից է, որ այդ հեղինակները սկսել են գործածել արդեն ո՛չ թե իրենց խոսած լեզուն, այսինքն ժողովրդական կենդանի բարբառը, այլ նախորդներից ավանդված դրաբար լեզուն: Երբ մի հասարակ մարդ խոսում է իր բնական լեզուն, ինչքան էլ տգետ լինի, դարձյալ ճիշտ կխոսի: Իսկ երբ մի ուսումնական խոսում է ուրիշի լեզուն, ինչքան էլ գիտուն լինի, դարձյալ սխալ կխոսի:

Ե ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՐՔԱՌՆԵՐԸ

Լեզվաբանության ներածութիւնն զիտենք, որ շեղուցն այն անհրաժեշտ միջոցն է, որ ստեղծել է մարդկային ընկերութիւնը, իր անդամների միջև փոխադարձ հաղորդակցութիւնն պահպանելու համար: Մրանից դուրս լեզուն պոյութիւնն իրավունք չունի: Իբր այն, լեզուն պիտի լինի մի և միևնույն ամեն մի ընկերական խմբակցութիւնն համար, ապա թե ոչ այլ ևս չի կարող ծառայել իբրև միջոց հաղորդակցութիւնն և հետևաբար կզրկվի իր պոյութիւնն իրավունքից:

Բայց լեզուն իբրև մարդկային մտքի ստեղծագործութիւնն, իբրև պատկեր նրա քաղաքակրթական զարգացման և իբրև արդյունք մարդու ձայնական գործարանների գործունեութիւնն, չէր կարող մնալ քարացած վիճակում, նա շարունակ պիտի փոփոխվեր համաձայն բարեշրջութիւնն (էվոլուցիայի) օրենքներին:

Միևնույն ժամանակ մարդկային հաղորդակցութիւնն միութիւնը բացարձակ չէ. ամեն մի համայնք իր ուրույն կյանքն ունի. և այս ուրույն կյանքը, միացած կլիմայական տարբեր պայմանների և ձայնական գործարանների տարբեր տիպի գործունեութիւնն հետ, առաջ է բերում մարդկային լեզվի մեջ տարբերութիւններ:

Առաջինները կազմում են լեզվի դարից դար փոխափոխված կերպարանքները, երկրորդները ստեղծում են միևնույն շրջանում դանազան բարբառներ:

Այս երկու երևութիւնները անխուսափելի են ամեն մի լեզվի կյանքում:

Մեքսիկայի հայերենը մեր լեզվի կյանքի մեջ առաջին երևույթի այն առաջին պատկերն է, որ ավանդել է մեզ պատմութիւնը. նրանից առաջ եղած պատկերները, թեև գիտենք որ կան, բայց մեզ անծանոթ են: Բայց միևնույն ժամանակ, նույն այդ մեքսիկայի շրջանին, պետք է ընդունենք, թե կար նաև

երկրորդ երևույթը, այն է զանազան բարբառներ հայերենի մեջ, որոնցից մեկը միայն բարձրացավ գրականութիւնն, այն է մեքսիկայի կրկնորդ հայերենը:

Հայերեն բարբառների Ե դարում գոյութիւնն համար ունինք մի զորեղ պատմական փաստ. դա Եզնիկի մի վկայութիւնն է:

Սոսերով այն մասին թե ոգի, հոգի, շունչ կամ քամի ըստ էութիւնն միևնույնն են, Եզնիկը իբրև ապացույց մեջ է բերում բառերի հիմնական նշանակութիւնը և ասում է. «Ասի և դե ոգի. այլ ոգի չար... զոր թէպէտ և ի մեր լեզու այս շար ասեմք, որպէս ի խտրանաց հարցն մերոց առաջնոց ըստ սովորութեան ի մեզ կարգելոյ, այլ գիտեմք՝ եթէ այն հոգմ է և հոգմն՝ ոգի, ըստ յառաջագոյնն ասացելոյ: Քանզի յորժամ մեք ասեմք՝ թէ սիք շնչէ, ստորնեայք*) ասեն՝ այս շնչէ»:

Վերջին նախադասութիւնն իբրև փաստ է, որ Եզնիկը խտրութիւն է դնում Ստորնեայց հայերենի և իր խոսած հայերենի միջև: Եվ որովհետև Եզնիկը իբրև Կողբացի պատկանում է հյուսիսային Հայաստանին, ուստի Ստորնեայք բառով պիտի հասկանանք հարավային Հայաստանի ժողովուրդը, իսկ Եզնիկի շրջանը, այն է հյուսիսային Հայաստանը, կարելի է կոչել Վերին Հայաստանի գավառների այսպիսի բաժանմունք և միևնույն անուններով հայտնի է մեզ նաև ուրիշ տեղից: Բուզանդ Դ. իգ խուսելով պարսիկների արշավանքի մասին՝ Միրուսանի առաջնորդութիւնը, ասում է. «Անունին կոտորէին զամենայն բնակիչսն վերնագաւառացն Հայոց. մինչդեռ թագաւորն Արշակ ի կողմանսն ստորին գաւառացն, յԱնգեղտանն էր յուտեստ, զմիջնաշխարհն քանդեալ բրեալ զօրքն Պարսից ապականէին»:

Անցողակի հիշենք, որ Եզնիկի տված բաժանմունքը համապատասխանում է մեր արդի վիճակին. ինչ սր այնտեղ Վերին է կոչվում, մեր այժմյան արևելյան (կամ Թուսահայոց) կոչված բարբառն է, իսկ ինչ որ Ստորին է կոչվում, մեր այժմյան արևմտյան (կամ Տաճկահայոց) կոչված բարբառն է:

Բայց Եզնիկի վկայութիւնը միայն բարբառների անվանակոչութիւնը չի տալիս, այլ նաև այդ բարբառների մեջ մի

*) Այս բառը թեև տպագրութեամբ ասորնեայք ձևն ունի, բայց Եզնիկի միակ ձևագրութեան ստորնեայք. այս մասին տես իմ Քննութ. և համեմատութ. Եզնիկայ նորագիւտ ձևագրութեան, էջ 74: Հմմտ. նաև Հանդ. ամս. 1932, էջ 191-4, որ քննված է այս նորագիւտ ստորնեայք ձևի արժեքը:

բառի գործածութեան տարբերութիւնը: Այդ բառն է այս, որ գործածական էր թե՛ Վերին և թե՛ Ստորին Հայաստանում, բայց Վերին Հայաստանում գործածվում էր «սատանա» նշանակութեամբ, իսկ Ստորին Հայաստանում «քամի» նշանակութեամբ: Վերին Հայաստանում «քամի» նշանակութիւնը հայտնի չէր և այդ պատճառով է, որ Եղնիկը հաստատելու համար այդ նշանակութիւնը, որ ինքը բառի առաջին և հիմնական նշանակութիւնն է համարում, քանզի «որովհետև» ասելով մեջ է բերում ստորնեայց «այս շնչ» դարձվածը: Վերին Հայաստանում «քամի» իմաստով գործածական էր սիք (կամ սիք) բառը. բայց այդ չի ստիպում մեզ անպատճառ ընդունել, որ սիք բառը գործածական չէր Ստորին Հայաստանում, որովհետև սիք իբրև ասորական փոխառութիւն, ավելի Հարավային Հայաստանում գործածական եղած պիտի լիներ: Կատարվել է լեզվաբանական սովորական մի երևույթ. երկու հոմանիշներից (այս և սիք) հնազույնը տեղի է տվել նորի առաջ, բայց դեռ բոլորովին չի ջնջվել և պահվել է միայն «ոգի» կամ «չար ոգի» նշանակութեամբ:

Բարբառների գոյութիւնը և դարում կարելի է հաստատել նաև մեսրոպյան շրջանից մեզ հասած գրական գործերի լեզվական քննութեամբ:

Ամեն մի անհատ, որ դրում է որևէ ոչ-մայրենի լեզվով կամ բարբառով, ինչքան էլ լավ իմանա այդ օտար լեզուն կամ բարբառը, այնու ամենայնիվ իր մայրենի լեզվից կամ բարբառից որևէ հետք կթող ի: Երբ մի վանեցի գրում է գրական հայերեն, լինի դա արևելյան թե՛ արևմտյան բարբառով, անշուշտ մի քանի տեղ որոշյալ բառերի ը հոգը կուզ պիտի տա: Երբ Լեոն իր Հայոց Պատմութեան մեջ (Ա. էջ 690) գրում է. «Տիգրանից մոտ էր ապրում», դրանով մատնում է իր դարբարոցի լինելը (Հարբարդի բարբառում մօտ նախադրութիւնը վերցնում է բացառական խնդիր, մինչդեռ ուրիշ բարբառներում սեռական տրական խնդիր): Կամ երբ Մանանդեանը իր հրատարակած Նոննոսի մեջ (Marburg 1903, էջ 5, ծան.) գրում է պիտի լինի՝ փոխանակ պիտի լինէր, դրանով մատնում է, թե խոսում է կարնեցոց բարբառը: Նույն երևույթը տեղի պիտի ունենար անշուշտ նաև մեսրոպյան շրջանում:

Բայց դժբախտութիւնն այն է, որ մենք չգիտենք և չենք էլ կարող իմանալ մեսրոպյան շրջանի պաշտոնական կամ կենտրոնական գրական լեզուն իր անխառն ձևի տակ, որպեսզի ամեն

մի հեղինակի շեղումները բռնեինք: Չգիտենք նույն իսկ շատ երկերի հեղինակների անունը, ուր մնաց իմանալ նրանց որտեղացի լինելը, որպեսզի գոնե այդ միջոցով իմանայինք բարբառների որոշ հատկութիւնները:

Սակայն կարելի է, առանց այս նախապայմանների, քննել մեսրոպյան շրջանի հայերենը ինքն իր մեջ և եղած տարբերութիւններից եզրակացութիւններ հանել:

Այս մասին մի սոսկալի մանրագին աշխատանք է կատարել Նորայր Բիւզանդացին*, որ (թեև բոլորովին այլ նպատակով) կարդացել ու բառաքաղել է ամբողջ մեսրոպյան հայ գրականութիւնը և գտել այնտեղ 624 բառ, ոճ, ասացված կամ դարձված, որ հատուկ են Կորյունին, Ազաթանգեղոսին, Փավլատոսին, Մակարայեցոց գրքերին ու Եվթաղին, բայց չկան մյուս մեսրոպյան գրվածքների մեջ:

Գաղափար տալու համար այս աշխատութեան մասին, դենք նրանից երեք օրինակ.

1) Մեկի անունը տալու համար մեսրոպյան հեղինակները սովորաբար ասում են «որում կոչէին, որում անուն կոչէր, որ կոչէր, որում անուն, որում անուն կոչէին». բայց Կորյուն և իր խումբը սիրում են գործածել «որոյ անունն ճանաչէր». այսպես գործածված է 11 անգամ, իսկ մնացյալ մատենագրութեան մեջ ոչ բնավ:

2) Իբրև մակբայից հետո սովորաբար գործածվում է որևէ դիմավոր բայ. ինչ. իբրև ետես, իբրև լուա ևն. Կորյունի խումբը սիրում է գործածել իբրև մակբայից հետո անցյալ դերբայ. այսպես գտնում ենք՝ «իբրև ի վերայ հասեալ, իբրև կարգեալ, իբրև հայեցեալ, իբրև զգացեալ, իբրև տեսեալ, իբրև լուեալ, զոր իբրև լուեալ, իբրև գիտացեալ» ընդամենը 9 անգամ, իսկ մնացյալ մատենագրութեան մեջ և ոչ մի անգամ:

3) Նուազ «պինու մեծ բաժակ» բառը գործածված է Կորյունի խմբի մեջ 6 անգամ, բայց ոչ մի անգամ չկա մնացյալ մեսրոպյան գրականութեան մեջ:

Այս առանձնահատկութիւններից Նորայրը այն եզրակացութիւնն է դուրս բերում, որ Կորյուն, Ազաթանգեղոս, Բյուզանդ, Մակարայեցիք ու Եվթաղ միևնույն անձի գործերն են (առաջինը ինքնազիր, մյուսները թարգմանական) և այդ անձն է Կորյունը:

* Կորին վարդապետ և նորին թարգմանութիւնք: Տիգրս, 1900:

Ինչ վերաբերում է ոճերի, դարձվածների, զանազան ասու-
թյանց, բառերի այս կամ այն ձևով դասավորութան, կամ ու-
րիշ այս կարգի արտահայտութանց, Նորայրի եզրակացությու-
նը կարող է ճիշտ լինել: Բայց ինչ վերաբերում է քերականա-
կան ձևերի, մասնիկների, բառերի և մանավանդ արմատական
բառերի գործածութան, եզրակացությունը բացարձակապես
սխալ է: Անկարելի բան է ընդունել, որ օրինակ նուազ «բաժակ»,
ատրուշան «կրակատուն» բառերը, կամ անի հոգնակերտ մաս-
նիկը (աւազանի, կանանի, ազատանի, զլխանի ևն), որոնք միայն
Կորյունի խմբում են պատահում, հատուկ լինելին միայն Կո-
րյունի անձին: Քերականութուն և բառարան մասնավոր ան-
հատի գործ կամ սեփականութուն չեն: Դրանք հատուկ պետք
է եղած լինին մի որոշ բարբառի, որ խոսում էին Կորյունը,
Ազաթանգեղոսը, Բյուզանդը և Մակարայեցոց զբքի ու Եվթաղի
թարգմանիչը կամ թարգմանիչները:

Այս տեսակետով մոտենալով խնդրին, Նորայրի կազմած
աշխատութունը կարող է ուրեմն ծառայել մեզ՝ երևան հանելու
համար վերոհիշյալ բարբառի առանձնահատկությունները:

Ինչպես վերևում ասացինք, Նորայրի հավաքած հատկա-
բանությունները 624 հատ են: Այս թվից մի մասը բոլորովին
զուր է դրված, որովհետև՝

1) Իբրև պատմական բառեր անշուշտ գտնվելու էին միայն
Կորյունի խմբի մեջ, և ոչ ուրիշ տեղեր էլ. ինչ. Այրարատեան,
Նոր քաղաք (Վաղարշապատ), Մաղխագ, Մաղխագուրեան տուն,
Հայոց մեծաց ևն:

2) Թեև ցանցառ, բայց գործածված են մյուս մատենագրու-
թյանց մեջ և այդքան բավական է, որ Կորյունի խմբին հա-
տուկ ձև չհամարվեն. ինչ. նժոյգ, դեսպան ևն:

3) Հազվագյուտ են նաև Կորյունի խմբում և տարօրինակ
չէ, որ ուրիշ տեղ գտնված չլինեն. ինչ. քանձրախուռն, մեծա
լրջմտութեամբ, անշնորհ առնել:

4) Բոլորովին սովորական բառեր են և կարիք չկա բնավ
իբրև այս կամ այն հեղինակի հատկաբանություն հիշելու. ինչ.
Յուռաց և Հոռոմոց աշխարհն, երանելիմ Ղուկաս ևն:

5) Ծանոթ են ուրիշ հեղինակներից, բայց Նորայր աչքից
փախցրել է. օր. յանդիման լինել թագաւորին ճներկայանալ
ոճի համար տալիս է 12 օրինակ և ոչ մի օրինակ մյուս մատե-
նագիրներից. բայց հմտ. Յանդիման եղև արքային. ՍԳր. կայ-

անր ևս քեզ սարտ է յանդիման լինել. Գժ. Այս կարգի բառե-
րի և ոճերի մի ցանկ տես Հ. Մ. Կոզեան, Մակարայեցոց Բ
զբքին հայերէն թարգմանութիւնը, Վիեննա 1923, էջ 19—22:

Վերջապես մենք դուրս պետք է հանենք այն դարձվածնե-
րը, որոնք թեև կարող են համարվել որոշ հեղինակի նախասի-
րած ձև և ըստ այսմ օգտակար լինել Նորայրի մտադրած նպա-
տակին, բայց անկարելի է վերագրել որոշ բարբառի առանձնա-
հատկության, որովհետև ընդհանուր հայերեն են. այսպես զօրս
զօրութեան իւրոյ, բուն գունդն, ինքն իսկ թագաւորն, մանկիկ մի
փոքրիկ ևն:

Կատարելով այս գտումը և դուրս հանելով Նորայրի աշխա-
տությունից վերոհիշյալ հինգ կարգի ասությունները, մենք իբ-
րև Կորյունի բարբառին առանձնահատուկ ձևեր գտնում ենք
հետևյալները.

1. ԲԱՐԴ ԿԱՄ ԱԾԱՆՑ ՁԵՎԵՐ

Արուեստախօսել, անարգամեծար, առաքելակից, ամենա-
փրկիչ, յուսալից, հայրաբարոյ, փառաբանիչ, աստուածակարգ,
գեղարան, դիւրահաս (հեշտ), տօնախմբել, ինքնատես (ականա-
տես), կենդանատուր (կենսատու), մենակոխ (մենամարտող),
տեղապահ, ըստանձնել «կրել» (փխ. առնուլ՝ բառնալ ըստ ան-
ձին), միահաղոյն (այլք՝ միանգամայն), միասնական, տաճա-
րակից (սեղանակից), անպիտոյ (չպիտոյ), վկայարան կամ մար-
տիրոսարան (մատուռն), ձեռնադրել, աստուածակերպ, դասադաս,
վերնազաւառք (վերին կողմանք կամ աշխարհք), միջնաբերդ,
յառաջու (յառաջագոյն), կուսաստան (կուսանոց), առիւծաբար
(իբրև առիւծ):

— Հանապազ բառով բարդեր. — հանապազատարած, հանա-
պազարոխ, հանապազախօս, հանապազակիր, հանապազատես. —
մյուսներն ունին մշտնջենարուխ, մշտակիր, միայն մեկ անգամ
կա հանապազատուտ:

— Բարեացապարտ, չարեացապարտ.

— Աշխարհակիր, անուանակիր, խաչակիր.

— Նախավկայ, նախածանօթ (յառաջածանօթ).

— Զօրանխտ, թագաւորանիստ.

— Երկնաչու, ամպաչուել, նաւաչու (մյուսները շուրջ բառով
կազմված ոչ մի բարդ չունին).

2. ՈՃԵՐ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՆԵՐ

1. Որոյ անունն ճանաչէր.
2. Փոյթ ի վերայ ունել «ջանալ».
3. Տեսուչ եպիսկոպոս.
4. Ի ժամադիր կողմանս հասանել.
5. Թողուլ վերակացու (ետեղապահ, տեսուչ, պահապան են փխ. կացուցանել).
6. Որում անուն. փխ. որում անուն էր.
7. Գայ երևել (երևան եկավ, յայտնվեց).
8. Ի հանգիստ փոխել (թողել նահատակին).
9. Աստուածեղէն կրօն (աստվածապաշտութիւն).
10. Ծածուկ լուսաւորութիւն (գաղտնի խորհուրդ).
11. Կոյս կոյս (փխ. կողմանս կողմանս).
12. Խոտաճարակ լինել (խոտ ճարակել կամ ուտել).
13. Տեսանել ի բացէ (այլք ի բացուստ, ի հեռուստ, ի հեռաստանէ):
14. Գինի կամ բաժակ ի մատունս (փխ. ի ձեռս).
15. Ուխտ քահանայութեան (կղերականք).
16. Յայնժամ դեռ ևս.
17. Երևոյթ տեսիլ (տեսիլ ծանականաց).
18. Հրովարտակ առնել կամ տալ (հրովարտակ առաքել).
19. Փոխանակել կամ փոխանակ տալ զանձինս (տալ կամ մատնել զանձն վասն).
20. Ի հնոց ժամանակաց հետէ.
21. Ձեռն ի ձեռն (վաղվաղակի).
22. Բովանդակել զունդ կամ զօրս (զօրաժողով լինել).
23. Չօրաժողով է (այլք՝ զօրաժողով լինի).
24. Չօրահատոյց առնել (զորքի մի մասն ուղարկել).
25. Ի հարկի կացուցանել (դնեմ ընդ հարկաւ, հարկատու առնեմ և այլն):

3. ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՌԵՐ

1. Կղեր (կղերական, կղերիկոս).
2. Ատրուշան (կրակատուն).
3. Նուպ (բաժակ).
4. Գումարտակ (զունդ զօրաց).
5. Իգեակ (բերդ, ամրոց):

4. ԱՅԼԻՄԱՍ ԲԱՌԵՐ

1. Հայրենիք (հայր՝ նշանակությամբ գործածված).
2. Բնակութիւն («Սեպհականութիւն»).
3. Միամտութիւն (հավատարմութիւն).
4. Թափել (նշ. «հափշտակել», իսկ ըստ այլոց «յետ առնուլ զյափշտակեալն»).
5. Չանազան («աննման»).
6. Չգալ (չլուել, տեղեկանալ), իսկ ըստ այլոց «նկատել, զգալ».
7. Ի բարձուէ (ի բարձրութենէ):

5. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ

1. Իբրև մակբայից հետո գործածվում է անցյալ դերբայ՝ փոխանակ գիմավոր բայի. ինչ. իբրև հասեալ փխ. իբրև եհաս: Փոխանակ գիմավորի՝ անցյալ դերբայի գործածության այլ օրինակներ ևս կան:
 2. -անի հոգնակերտ մասնիկով կազմված բառեր. ինչ. աւազանի, կանանի, ազատանի, գլխանի (գործածված ընդամենը 39 անգամ. մնացյալ ամբողջ գրականության մեջ մեկ անգամ կանանի և մեկ անգամ ընկերանի):
 3. -ուքիւ մասնիկով բառերից բարդված ձևեր. ինչ. յարութենական, արդարութիւնաբեր, արքայութիւնաբեր, օծութիւնընկալու, օրհնութիւնաբեր, մխիթարութիւնաբեր, յարութիւնազործ, նեղութիւնակիր, փրկութիւնազործ, քաւութիւնաբեր, ամուսնութիւնընկալ, օրհնութիւնսընկալու: Այսպիսի կազմությամբ բառեր չկան մնացյալ հեղինակների մոտ, բացի երկու բառից, իմաստութիւնախնդիր և փրկութենական, երկուսն էլ ձեռագրական սխալ են թվում:
 4. Ինքնին թագաւորն, իշխանն փխ. ինքն թագաւորն...
 5. Յայնց պատճառանաց (յայս պատճառս):
- Այս հինգ կարգի առանձնատկությանց մի մասը կարող է նույնպես կեղծ կամ պատահական լինել (դատելով խնդիրը միայն բարբառային տեսակետով): Այսպես մենք գիտենք որ հայերենը բարդությանց մեջ բավական ազատ է. ուստի կարող է պատահել, որ Կորյունը անձնապես բարդ բառերի սիրող լիներ և այդպիսի բարդ ձևեր կերտելով իր գրվածքը զարդարեր: Այսպես են օրինակ աստուածակարգ, հայրաբարոյ, անարգամեծար են: Բայց ուր որ մի սկզբունք կա, կարելի է այնտեղ բարբառային առանձնատկություն տեսնել. այսպես, ըստ Նորայրի

մեսրոպյան ամբողջ գրականութեան մեջ շուրջ բառով բարգու թյուններ չկան և միայն Կորյունի խումբն է որ ունի այսպիսի բառեր (երկնաչու, ամպաչու, նաւաչու): Արդ այս բառերը կարող են այն բարբառին հատուկ լինել: Մյուս կարգերի առանձնատեսությունները, ինչպես վերևում էլ նկատեցինք, ավելի ուժեղ են և անշուշտ, ինչպես արմատական բառերը, ցույց են տալիս առանձին բարբառ:

Ենթադրելով, թե մեր պատճառաբանությունները բավական զորեղ են, և ընդունելով Կորյունի լեզուն իբրև Ե դարի առանձին բարբառ, մենք կարող ենք այժմ քննել, թե Հայաստանի մեր շրջանին հատուկ էր այդ բարբառը: Անշուշտ եթե իմանայինք, թե Կորյունը որտեղացի է, խնդիրը վճռված կլիներ. բայց այդ բանը հայտնի չէ. որովհետև ճիշտ չէ այն կարծիքը կամ ենթադրությունը, թե Կորյունը վրացահայ կամ նույն իսկ վրացի էր*):

Բայց հայտնի է, որ Կորյունը Այրարատյան գավառից չէր. որովհետև եթե գիտենք, որ Եզնիկը այս գավառից էր, իսկ Կորյունի լեզուն Եզնիկի լեզվից տարբեր է, ուրեմն և Կորյունը չի կարող լինել Այրարատից: Նմանապես Կորյունը Տարոնի շրջանից էլ չի կարող լինել, որովհետև Մեսրոպը՝ որ Տարոնի շրջանից է, Կորյունից տարբեր լեզու ունի Առակաց գրքում: Մնում են Հայաստանի արևելյան և արևմտյան գավառները. առաջինը Պարսկաստանի սահմանակից, երկրորդը Հունաց սահմանակից: Այս երկուսից բնորոշի է անշուշտ առաջինը. ինչպես ցույց են տալիս Կորյունի լեզվի առանձնատեսություններից մի քանիսը. այսպես 1) ապրուշան, նուագ, գումարտակ գուտ պարսկական փոխառությունց գործածությունը. 2) պարսկական անի հոգնակերտ մասնիկով կազմված բառերի հաճախությունը. 3) անցյալ դերբայի հաճախակի գործածությունը դիմավոր բայի փոխարեն, ինչ որ նույնպես պարսկերենում ընդունված ձև է: Արևելյան Հայաստանը անշուշտ ավելի ազդված պիտի լիներ պարսկերենից, քան Հայաստանի մյուս մասերը: Այս բանը երևում է նույնիսկ այսօր, հազարավոր տարիներից հետո: Հարևան բառը, որ իրանական հին փոխառություն է, գտնվում է միայն մեր արդի արևելյան բարբառներում. մինչդեռ արևմտյան բարբառները գործ են ածում դրացի բառը, որ բնիկ հայերեն է:

*) Տես իմ Ս. Մեսրոպի և զբերու զԷւոսի պատմութեան աղբիւրներն, էջ 7—8:

Երևան բերելով Ե դարի մի բարբառ (այն է արևելյան Հայաստանի բարբառը), մենք կարող ենք այժմ ընդհանրապես համեմատություն դնել այդ բարբառը մյուսների և հատկապես Եզնիկի, այն է գուտ Արարատյան բարբառի հետ և կշռել նրանց էական տարբերությունը:

Լեզվաբանությունը ներածությունը սովորեցնում է մեզ, որ մարդկային լեզուները բաժանվում են զանազան լեզվաբանների, որոնց ստորաբաժանումներն են ճյուղ, լեզու, բարբառ և ենթաբարբառ: Բացի առաջինից, որ մի մորից առաջացող բոլոր լեզուների ընդհանուր գումարն է ներկայացնում, ոչ մի տեղ որոշ սահման չկա: Չգիտենք և չի էլ կարելի իմանալ, թե ինչն է կազմում իրական սահմանը երկու ճյուղերի միջև, կամ ավելի խոր դնալով՝ ներ է սկսում լեզուն, ուր է բարբառը և ուր ենթաբարբառը: Ո՛չ միայն ամեն ինչ հարաբերական է, այլ և պայմանական ու պատահական: Դրա համար է, որ շատ անգամ գիտունները տարբեր տարբեր բաժանումներ են հետևում: Մի ժամանակ հնդկական և իրանական լեզուները տարբեր ճյուղեր էին հաշվում, այժմ միասին կազմում են Արիական խումբը: Այսօր էլ Բալթիկ-Սլավական լեզվաճյուղը շատերի համար կազմում է երկու առանձին ճյուղ (Բալթիկ և Սլավական): Ավելի վատ են ավելի փոքր ստորաբաժանումները, Յարական շրջանում ուկրաիններենը ռուսերենի մի բարբառն էր համարվում. միայն Սովետական իշխանությունն էր, որ ճանաչեց, թե նա անկախ լեզու է, համաձայն գիտություն: Սպաներենը և պորթուգալերենը համարվում են երկու տարբեր լեզուներ, բայց նրանց միջև եղած տարբերությունը ավելի փոքր է, քան հայերենի ու ղոկերենի. և սակայն այս վերջինը համարվում է բարբառ: Այսպիսի օրինակներ բազմաթիվ են: Իսկ բարբառների և ենթաբարբառների տարբերությունը շատ ավելի անորոշ է: Ընդհանուր սկզբունքն այն է, որ երբ երկու անհատ իրար չեն հասկանում, այդտեղ բարբառ կա. իսկ երբ հասկանում են իրար առանց դժվարության, այդտեղ ենթաբարբառ կա: Բայց չհասկանալու և հասկանալու միջև կան անհուն աստիճաններ. և անշուշտ այդ հասկացողությունը կամ անհասկացողությունը առաջանում է նաև մարդու սեփական ընդունակությունից: Շատ անգամ մեզ համար անհասկանալի է դառնում բարբառը, երբ այսինչ անձն է խոսում, բայց մի ուրիշի բերանում նույն բարբառը հասկանալի է դառնում: Միևնույն բարբառը անհասկանալի է, երբ

ականջով ենք լսում, իսկ երբ գրավոր ենք կարդում, ավելի հասկանալի է դառնում:

Այս բոլորը նկատի առնելուց հետո, այժմ հարց տանք, թե Ե դարի բարբառները ի՞նչ աստիճան էին ներկայացնում. այնպես էին, որ հայերը իրար չէին հասկանում, թե՞ ընդհակառակը արտասանական և այլ չնչին տարբերություններ միայն կային, որոնք գրավորի վերածվելու ժամանակ արդեն ջնջվում էին:

Այս հարցին մենք կարող ենք պատասխանել տեսականորեն և գործնականորեն:

Տեսականորեն մենք կարող ենք դատել հետևյալ ձևով:

Գիտենք, որ Մեսրոպը հնարելով հայերեն գիրը՝ նպատակ ուներ քրիստոնեական քարոզչություն: Նա ուզում էր տալ ժողովրդին Ս. Գիրքը, նրան հասկանալի լեզվով: Նա ման եկավ Հայաստանի բոլոր գավառները, թե պարսկական արևելյան Հայաստան և թե հունական արևմտյան Հայաստան, և ամեն տեղ դպրոցներ բանալով, սովորեցրեց հայ գիրը: Ըստ Կորյունի վկայության, նույնը արավ նաև Վրաստանում և Աղվանքում, որոնց համար հնարեց այբուբեն և թարգմանել տվեց Ս. Գիրքը իրենց լեզվով: Արդ, եթե Արարատյան բարբառը, որով թարգմանված էր Ս. Գիրքը, հասկանալի չլիներ Հայաստանի զանազան գավառներին, էլ ի՞նչ նպատակ ուներ այդ քարոզչությունը կամ այբուբենի ուսումը: Իսկ եթե միևնույն թարգմանությունը տարածվում է ամեն տեղ, նշանակում է, որ ժողովուրդը փոքր ջանքով կարող էր հասկանալ այդ լեզուն:

Գործնականորեն դատելով հարցը, մենք մեր առաջ դնենք Արարատյան (Եզնիկի) բարբառը և Արևելյան (Կորյունի) բարբառը, որ նախորդ քննություններով ձեռք բերինք. և համեմատենք իրար հետ: Մ'չ մի էական տարբերություն չկա երկուսի մեջ. նույն են բոլոր բառերը, նույն են ամբողջ հոլովումն ու խոնարհումը, նույն են շարադասությունը և համաձայնությունը. մի խոսքով երկուսն էլ միևնույն լեզուն է: Նորայրը (էջ 262) գտնում է, որ հանդերձ բառը Կորյունի իմբի մեջ հոլովվում է ո հոլովման համաձայն (հանդերձոյ, հանդերձով, ընդամենը 4 անգամ), մինչդեռ մնացյալ՝ գրականության մեջ հոլովվում է միշտ ի ձևով, միայն մի անգամ կա ի հանդերձոյ ձևը (Ղևտ. ԺԱ. 32): Արդարև մեծ տարբերություն, որի վրա կարելի է բարբառ հիմնել!!!

Այն բոլոր տարբերությունները, որ մենք տեսանք Կորյուն-

նի բարբառում, ոչ մի էական արժեք չունեն և ներկայացնում են միևնույն հայերեն լեզուն: Ի՞նչ էական տարբերություն կա, եթե մեկը խոտանարակ լինել ասի և մի ուրիշը խոտ ճարակել կամ ուտել. եթե մեկը զինի կամ բաժակ ի մատուցս ասի և մի ուրիշը բաժակ ի ձեռս: Եվ կամ ավելի խիստ ձևերից խոսելով, եթե մեկը ուրիմ ձևով բարբառություններ կազմի (նեղութիւնակիր, քառութիւնարեր ևն) և մի ուրիշը այդպիսի ձևեր չգործածի. եթե մեկը անցյալ դերբայ գործածի (իրբև հասեալ), իսկ մյուսը դիմավոր բայ (իրբև եհաս): Այս տարբերությունները այնքան անարժեք են, որ թույլ է տրված միևնույն Ս. Գրքի մեջ երկու տարբեր բարբառների գոյությունը. Հին կտակարանի ամենամեծ մասը և նոր կտակարանն ամբողջ Արարատյան բարբառով են, միայն Մակարայեցոց գրքերը Կորյունի բարբառով են: Եվ այս երկու բարբառները կողք կողքի պարել են միշտ, առանց որևէ անպատեհություն, առանց որևէ դժվարություն կամ թյուրիմացություն առաջացնելու: Դարեր ամբողջ կարդացել են Ս. Գիրքը և այժմ էլ, եթե Նորայրի քննությունները չլինեին, չպիտի էլ իմանայինք, թե նրանք տարբեր բարբառների արդյունք են:

Գլխավոր տարբերությունը երկու բարբառների միջև, ինչպես նախորեն ստացինք, մի քանի նոր բառերի գոյությունն է (ասորուշան, նուագ, գումարտակ, գղեակ, կղեր և ի հարկե ուրիշներ էլ). նաև որոշ բառերի տարբեր իմաստով գործածությունը, ինչպես միամտութիւն «հավատարմութիւն» (Արևելյան բարբառում) կամ այս «քամի» Ստորին Հայաստանի բարբառում: Սրանք սակայն նույնպես բարբառի էությունը չեն կազմում: Բարբառի էությունը կազմող տարբերն են ձայնաբանությունն ու քերականությունը:

Այս բոլոր մեր քննություններից հետևում է այն, որ մեսրոպյան շրջանում հայերենի բարբառները չկային. Հայաստանը չէր ներկայացնում մի այնպիսի երկիր, ինչպես Հունաստանն է, որ բաժանված էր զանազան բարբառների և որոնք գրական գործերի մեջ էլ պահում էին իրենց գոյությունը (հոնիական, ատտիկյան, դորիական և այլն): Հայաստանի զանազան գավառների ժողովուրդները իրար հասկանում էին հեշտությամբ, և գրական ու ժողովրդական լեզուների միջև խարություն չկար: Այն տարբերությունները, որ կարելի էր նկատել զանազան գավառների խոսակցության միջև, կազմում էին ոչ թե բարբառային տարբերություններ, այլ ավելի ճիշտ բառով՝ ներբարբառային:

Այս կարծիքն ունի նաև պատվականն Այտնյան, որ գրում է. «Արգէն Դ և Ե դարերէն կամ ավելի կանուխ՝ երկու էպպեզանազանեալ լեզու ունէ՞ր Հայաստան, ինչպէս մենք այս օրս Թէև որոշ պատասխան մը տալու չափ դրական ապացոյց մը չունենանք, ստոյգ կերևայ թէ չէ: Այլ այնչափ միայն, որչափ որ միշտ և ամէն տեղ կենդանի լեզու մը իւր բարձրագոյն և խոնարհագոյն կարգերը կունենայ, իւր զրաւորականն ու ժողովրդականը կզանազանէ» (Քնն. Քեր. էջ 120):

Այս եզրակացութեան հասանք մենք քննելով Կորյունի լեզուն և համեմատելով Եզնիկի լեզվի հետ: Բայց ընթերցողը իրավութեամբ ունի առարկելու այն պատճառարանութեամբ, թե Կորյունը այնու ամենայնիվ զրում է Արարատյան հայերեն բարբառով և ոչ թե զուտ Արևելյան բարբառով: Ուստի նրա գրքից ոչ մի գաղափար կարելի չէ կազմել ենթադրյալ Արևելյան բարբառի մասին: Այս առարկութեանը ճիշտ է: Ուստի մենք էլ հիմնովեցինք միմիայն նրա ներկայացրած աչքի ընկնող տարբերութիւնների վրա և հաստատեցինք, որ այդ աչքի ընկնող տարբերութիւնները անարժեք բաներ են: Բոլորովին այլ բան պիտի լիներ խոշորը, եթե իրոք Կորյունը գրած լիներ բուն իսկ իր բարբառով:

Սակայն նույն եզրակացութեան կհասնենք մենք նաև բոլորովին այլ ճանապարհով, արդի հայ բարբառների համեմատական քննութեամբ: Համեմատելով արդի հայ բարբառները իրար հետ, զուրս բերելով նրանք կազմող տարբերութիւնները, և մտավորապես հետ ետ տանելով նրանք առաջ բերող դարգացման և բարեշրջութեան ընթացքը, կգտնենք, որ բոլոր այդ բարբառները ունին մի ծագում, նրանց հասարակաց աղբյուրը մեծրոպայան հայերենն է, ուրիշ խոսքով Ե դարի գրաբարը:

Այս մանրամասն քննութեանը մենք պահում ենք ինչ պլանին: Այն եզրակացութեանը, որին մենք հասանք, տարօրինակ չպետք է թվի. նման օրինակներ շատ կան այլուր. տաճկերենը՝ որ առնչապէ՛ 690 տարուց ի վեր խոսվում է Տաճկաստանում, ոչ մի բարբառային տարբերութիւն չի ներկայացնում՝ սկսած Պարսկաստանի սահմանից մինչև Ադրբեյջանի եզերքը, Ռուսերենը՝ Լենինգրադից կամ Մուրմանսկից մինչև Խրիմ և Վլադիվոստոկ միևնույն լեզուն է. մալդաշերենը, որ աշխարհակալների մի փոքր խումբ Մալայան կղզիներից փոխադրեց Մաղազասկարի մեծածավալ կղզին (առաջին դարերին), բոլորովին օտար մի

աշխարհ և օտար ցեղերի մեջ, ոչ միայն տարածվեց ամբողջ կղզու՛մ՝ ջնջելով տեղական բնիկ լեզուները, այլ և ոչ մի բարբառ չի ներկայացնում այսօր, 1600 տարվա մեջ, ունենալով հանդերձ երեք միլիոն խոսող:

Հայ բարբառների մասին խոսել են նաև, թեև նույն իսկ Ե դարից ավելի ուշ, մեր հին քերականներից Թրակացու քերականութեան թարգմանիչը, Դավիթ մեկնիչ, Անանուն մեկնիչ, Մովսես Քերթոզ և մանավանդ Ստեփաննոս Սյունեցի:

Դիոնեսիոս Թրակացու հունարեն քերականութեան մեջ բնականաբար խոսք է լինում ռունարեն բարբառների մասին (ինչպես Եվոլիացոց և Դորիացոց) և մեջ են բերվում այս բարբառներից զանազան ձևեր: Հայ թարգմանը և մեկնիչները (Դավիթ, Անանուն և Մովսես) սրանց համապատասխան դնում են հայոց Գորդայ կամ Կորճայ բարբառը՝ չորս հետևյալ վկայութեանց մեջ:

1. Թրակացին (էջ 14, հույն բնագրում) արական հայրանունների համար իբրև մասնիկ հիշում է երեքը՝ նից (Ἄτρειδος), օն (Ἄτρειων) «և ըստ Եվոլիացոց բարբառին ἀδιος (Ἰπράδιος)».— հայ թարգմանը իբրև հայերեն հայրանունների մասնիկ հիշում է էն, էլ, իք, գէն, էն, լակ և սրանց համար օրինակ է տալիս Սամէն, Մանուէլ, Մանիք, Բարգէն, Մանէն, Արտակ (փակագծի մեջ ասենք որ այս բոլորը սուտ բաներ են), և որպեսզի եվոլիական բարբառին էլ համապատասխան մի բան գրած լինի, ավելացնում է «Եւ Գորդայիցն ինքեանց գաղափար յատկական, որպիսի Մանայն»: Նույնը կրկնում են մյուսները. «Եւ Գորդայիցն իւրեանց գաղափար յատկական Մանայն (Անանուն մեկնիչ, էջ 140). «Եւ ըստ Գորդայիցն Մանայն» (Մովսէս Քերթոզ, էջ 170):

2. Դավիթ մեկնիչ (էջ 105) գործիական բարբառը բացատրելու համար ստում է. Գորդայիցն գաղափար է, գի որպէս գոթա ծեքելով ի հոմանուն լեզուէ ի խօսս, նմանապէս և ի հոսս մին՝ Դովրացի իմն անուանեալ լեզու»:

3. Նույն մեկնիչը (էջ 112) խոսելով բայի սեռի վրա՝ ասում է, թե ներգործականն է գանեմ, կրավորականը գանիմ, միջինը (իմա հասարակը)՝ մոռացայ գոք կամ մոռացեալ եղէ: (Ուզում է ասել, թե մոռանամ բայը թե իբրև ներգործական է գործածվում և թե իբրև կրավորական «մոռացվի» նշանակութեամբ): Եվ ավելացնում է. «Բայց յայլ վայրս, որպէս Կորճայք, վարին

կրականին (իմա կրավորական բայ) ոչ հմտաբար, այլ ըստ սովորութեան»:

4. Անանուն մեկնիչ (էջ 147) բայերը ըստ կազմութեան բաժանում է երկու տեսակի. նախագաղափար և ածանցական. օրինակ ոռոգեմ նախագաղափար է, իսկ ոռոգանեմ ածանցական: Եվ ավելացնում է. «Եւ պարտ է գիտել եթէ ըստ մերումս բարբառոյ նախագաղափարաւ դարին Կորճայքը միայն: Իսկ ածանցական՝ ոռոգանեմ. արդ այսպէս և այլքն ամենեքեան»:

Այս բոլորից հետևում է, որ այն ժամանակներում գոյութուն ունեւ հայոց մեջ Գորդայ կամ Կորճայ կոչված մի բարբառ, որի առանձնահատկութուններից հիշվում են՝ 1) Մանայն ձևը փոխանակ Մանէն, 2) կրավորականի իմ վերջավորութեան տեղ եմ ձևի գործածութունը, 3) բայերի անեմ վերջավորութեան տեղ եմ:

Սակայն հայ բարբառների գոյութեան մասին շատ ավելի լիակատար տեղեկութուն է տալիս Ստեփաննոս Մյունեցին իր Քերականութեան մեջ (էջ 187):

Այստեղ նա խոսելով լեզվագիտութեան մասին, ասում է թե մարդ, որպեսզի լավագույն կերպով կարողանա հմտանալ իր լեզվին, պիտի իմանա նախ՝ շրջակա ազգերի լեզուն (որ շուրջ զքե սահմանակից աշխարհք իցեն՝ գիտութիւն լեզուաց նոցա), երկրորդ՝ իր լեզվի բարբառները և երրորդ՝ հին լեզուներ (հրէից և այլն): Երկրորդի մասին, որ մեզ համար կարևորագույնն է, ահա իր բառերը. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիտելն գրովանդակ գրառսն զեզերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին և զհուրայիմն և զՉորրորդ Հայեցիմ և զՍպերացիմ և զՄիւնիմ և զԱրցախայիմն. այլ մի միայն զՄիջերկրեայսն և զՈստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան. այլ և օգտակարք ի պատմութիւնս, զի մի վրիպեսցի անընդել գոլով լեզուացն»:

Մյունեցու այս խոսքերից ընդհանրապես այն են հետևեցրել, թե հին հայերենը ունեցել է 7 բարբառ (Կորճայից, Տայոց, Խուրթի, Չորրորդ Հայոց, Սպերի, Մյունայաց և Արցախի): Մրանցից դուրս է բուն հայերենը, կենտրոնական կամ պետական լեզուն, որ համարում են Արարատյան բարբառը, և որ Մյունեցին կոչում է «զՄիջերկրեայսն և զՈստանիկսն», խստիվ բաժանելով նախորդներից:

Մի անգամից ասենք, թե սխալ է Մյունեցու խոսքերը այսպես հասկանալ: Հիշատակված 7 անունները ներկայացնում են ոչ թե

հայերենի բարբառները, այլ Հայաստանում ապրող օտար մանր ազգութունների (արդի բառով փոքրամասնութեանց) լեզուները:

Վաղուց գիտենք արդեն, որ Հայաստանում ապրում էին բացի իսրայելից՝ 18 զանազան բնիկ ժողովուրդներ, ամեն մեկը իր առանձին ու սեփական լեզվով: Այս մասին հաստատ վկայութուններ տալիս են Սարաբոնը, Հերոդոտը և ուրիշներ (տես Ա. մաս, էջ 203): Այս փոքրամասնութունները կամաց կամաց ձուլվեցին Հայոց մեջ և վերջապես հայերենը ընդհանուր տարածվեց: Եթե նույն իսկ ժ դարում Ասորիները, Խուրթիցիները և Սասնեցիները շարունակում են դեռ իրենց սեփական լեզուն, Ը դարում (Մյունեցին մեռել է 735 թ.) ավելի ևս մեծ իրավամբ գոյութուն պիտի ունենային մյուս փոքրամասնութունները իրենց սեփական լեզվով: Մյունեցին հիշում է նրանցից միայն 7, մնացյալ 11-ի մասին լռութեամբ անցնելով (կամ որովհետև ծանոթ չէին իրեն, կամ այն ժամանակ արդեն բոլորովին հայացել էին և կամ այնքան աննշան մնացորդներ էին մնացել, որ Մյունեցին ավելորդ է համարում հիշատակել):

Ապացուցանելու համար այն՝ թե հիշված անունները հայերենի բարբառները չեն, այլ փոքրամասնութեանց լեզուներ, հարց ենք տալիս: Եթե դրանք հայոց բարբառներն են, ուր են հապա Բարձր Հայոց, Աղձնիքի, Մոկաց, Պարսկահայքի, Ուտիքի, Փայտակարանի, Գուգարքի և մանավանդ Վասպուրականի և Տարոնի հուշակավոր բարբառները: Ինչո՞ւ չեն հիշվում դրանք:

Ընթերցողն էլ փոխադարձաբար ինձ պիտի հարցնի, թե ուր են այդ բարբառները:

Հայաստանում խոսված հայերեն բարբառները Մյունեցին հիշատակում է միայն մի տառով՝ որ է Ս: Հոգնակիի այս ս վերջավորութունն է, որ նա կցելով զՄիջերկրեայսն և զՈստանիկսն բառերի ծայրին, պարփակում է բոլոր հայերեն բարբառները: Նա Միջերկրեայ կամ Ոստանիկ ասելով չի հասկանում Այրարատյան կենտրոնական բարբառը, ինչպես հասկանում են գիտունները: Ո՛չ, Այդ դեպքում ոչ հոգնակի պիտի գործածեր (որովհետև Այրարատյան բարբառը մեկ հատ է), և ոչ էլ Միջերկրեայ առանձին և Ոստանիկ առանձին պիտի հիշեր: Ոստանիկի ծայրին գրված հոգնակի նշանը ցույց է տալիս նմանապես, որ Ոստանիկ ասելով Մյունեցին չի հասկանում պալատական բարբառը կամ մայրաքաղաքի լեզուն, ինչպես

մենք ենք հասկանում, այլ մի քանի բուն հայ բարբառներ, Դրա համար է, որ իսկույն ավելացնում է այսոքիկ (բոլոր հայ բարբառները): Նույն հոգնակիի ս վերջավորութունը գտնում ենք նաև «եզերականն» բառի ծայրին և իրավամբ, որովհետե եզերական (= փոքրամասնությանց) լիզուները 7 հատ են:

Այսպիսով Սյունեցու տված այս վկայութունը մեզ ցույց տվավ, թե ոչ թե որոնք են հայ բարբառները Ը դարում, այլ թե որոնք չեն հայ բարբառները:

Այժմ մի քիչ ավելի մանրամասն մոտենանք հարցին և լուսարանենք Սյունեցու ասածները:

Սյունեցին երեք տեսակ լեզուների գիտութունն էր պահանջում. 1) շրջակա ազգերի լեզուները, 2) «չքս լեզուիդ գրառան գեզերականն», 3) հին լեզուներ: Սրանցից առաջինն ու վերջինը շատ որոշ և հասկանալի են. հասկածելին միայն երկրորդ խումբն է, ուր գտնվում են նույն 7 «եզերականները» (այն է՝ ծայրամասերի, ծայրազավառների): Այս եզերականները նա անվանում է բառ (գրառան գեզերականն), որով ոչ թե պիտի հասկանանք «բառ» (слово, mot, word) արդի մտքով, այլ «բարբառ»: Բայց այս բարբառն էլ ոչ թե արդի իմաստով «գավառաբարբառ, наречие, dialecte», այլ «լեզու», ինչպես որ ասում է նույն պարբերության վերջում (անընդել գորով լեզուացն): Հին հայերենում դեռ չկար այն տարբերացումը, որ ունինք այժմ բառ, բարբառ և լեզու բառերի միջև: Լեզու նշանակում էր թե՛ լեզու, թե բարբառ, թե ձայն և թե նույնիսկ «ազգ»: Օր. հելլեն և հայ լեզուաւ. Ընդ հոովմայեցւոց լեզուն արշաւէ. Գրեցաւ ըստ գաւառաց գաւառաց յիւրաքանչիւր լեզուս նոցա. Որ խօսիցին զՔանանայւոց լեզուն. ունկն դնէին յեղլեզուկ լեզուի նորա. Աշակերտեցէք ընդ ամենայն լեզուս (ազգերը): Նմանապես բարբառ նշանակում էր «ձայն և լեզու», օր. Լկզ առնիցէք բարբառով փողոյ. Որ կոչի ի հայ բարբառ կորուստ. Ի բարբառ հոռոմ. Յասորական բարբառոյն: Վերջապես բառ, որ ուշ ժամանակ հնարված բառ է, նշանակում է «ձայն, լեզու և բառ». ինչ. Ծս երգեմ և նա ոչ երգէ. իմ բառս քաղցր է և նորայն ոչ. Յարդ ևս բան ընդ իւրեանց աղխատրոյզ բառին պատմի. Որպիսի՞ ինչ նշանակէ բառն:

Եթե մենք դատենք միմիայն տեղից, որովհետև դրված են երկրորդ շարքում, անշուշտ պիտի հասկանայինք «բարբառ» մանավանդ որ կողքին դրված է «զքս լեզուիդ» հատկացուցիչը՝ «լեզու» լինելու դեպքում պիտի մտնեն առաջին խմբի մեջ՝

Սակայն, ինչպես ասացինք, Սյունեցին բարբառ է համարում նաև միևնույն երկրի կամ պետության մեջ խոսված գաճազան լեզուները: Այսպես, չնայած որ նախորդ հաշվով Սյունին բարբառ պիտի լիներ, քիչ հետո դառնում է առանձին լեզու: «Եւ գտանի սա յուովագոյն ի Պարսից և յԱղուանից և ի Սիւնեաց լեզուից, զի երկանունք և եռանունք են յուովք. որպես՝ Նիւ-գաստ, Նիւ-Խոսրով, Ջուան-Խոսրով, Վարազ-Խոսրով, Վարազ-Տրդատ և որք այսպիսիք» (էջ 205): Պարսկերենի և աղվաներենի հետ մեկ գծի վրա հիշելը ցույց է տալիս, որ Սյունին էլ առանձին լեզու է և ոչ բարբառ, և հետևաբար վերոհիշյալ 7 անուններն էլ առանձին լեզուներ են և ոչ թե բարբառներ:

Սյունեցու հիշյալ հատվածի քննությամբ զբաղվել է հատկապես Հյուբշմանը, «Armenische Grammatik», էջ 519: Նա հաստատում է, որ հիշյալ 7 անունները առանձին լեզուներ են և ոչ թե հայերեն բարբառներ, թեև նույն հեղինակը «Հին հայոց տեղւոյ անունները» աշխատության մեջ, էջ 56-59 վարանում է երկու կարծիքի միջև: Իրոք, հաստատապես օտար լեզու էր խուրայիքը, որ ըստ Tomashek, Sasun und Quellengebiet des Tigris, Wien, 1895, մինչև Ժ դարը խոսվում էր Խոյթ գավառում, օտարացեղ մի ժողովրդի մեջ: Հայ չէին նաև տայեցիք՝ Տայթի հին բնակիչները, որ Քսենոփոնը Τάοχοι անունով հիշում է խալիբների և փասիանացոց հետ և հայերից բաժանում է: Սպերացին էլ նույնպես առանձին լեզու էր, որ խոսում էին սպերացիք. և որ հիշում է Հերոդոտը՝ իրրև առանձին ազգութուն Σάσπερες ձևով: Դարձյալ Չորրորդ-Հայեցին հին Մոփաց նահանգի արամայեցի ազգաբնակչության լեզուն էր:

Մնում են Կորճայքը և Արցախը:

Կորճայքը Կորդվաց աշխարհի մի մասն է, և որովհետև զիտենք, որ կորդուացիք օտար ժողովուրդ էին (տի՛ս Ա մաս, էջ 202), ուստի Կորճայք էլ օտար էին և հավանաբար քրդական մի բարբառ էին խոսում:

Արցախի համար կարող ենք հիշել Եղիշեի մեկ վկայութունը, որով Արցախը գասվում է օտար ժողովուրդների շարքին. այսպես՝ «Ի Տմորիսն (ասորի) և ի Կորդիսն (քուրդ), յԱրցախ և յԱղուանսն, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց» (Եղիշե. Մատ. էջ 72): Բայց որովհետև Եղիշեի ժամանակ (450—1 թ.) Հայաստանը արդեն բաժանված, և Արցախը ուրիշ մի քանի նահանգների հետ նրա վարչական կազմից դուրս էր հանված,

ուստի կարելի է Եղիշեի խոսքը այս մտքով էլ հասկանալ և ոչ անպատճառ իբր օտար ցեղ (Հիւրը. Հին հայ. տեղ. ան. 57):

Ավելի լավ է Սյունյաց հիշատակությունը:

Սոր. Բ-ը պատմելով Վաղարշակի բարեկարգությանց մասին՝ Սյունիքը դնում է հայ լեզվի սահմանի վրա. «Եւ յարեւիլից կողմանէ զեզերբ հայկական խօսից կողմնակալս, զերկու ցեղից նահապետութեանցն՝ Սիսակեան և Կաղմեայն միայն...»: Մենք էլ գիտենք, որ Սյունիքը հայ լեզվի սահմանի վրա է, բայց հարց է, թե Սորենացին Սյունիքը սահմանից մյս կողմ է ընդունում, թե՞ այն կողմ:

Այս հարցը վճռելու համար կարելի է հիշել երկու բան.

1) Պրոկոպիոսը պատմում է, թե Կալաա (488—531) մի բանակ ուղարկեց Հոռովմեական Հայաստան. բանակը բաղկացած էր պարսկահայերից և սյունեցիներից, որ սահմանակից են Ալանաց (իմա Աղուանից)»: Այս վկայության համեմատ սյունեցիք Պարսկական Հայաստանի զինվորներից առանձին են, թեև Սյունիքը նույն ժամանակ Պարսկական Հայաստանի մասն էր:

2) Չաքարիա հետորի Եկեղ. պատմությունը 554/53 թ. հիշում է հայերից, վրացիներից և աղվաններից հետո «Երկիրն Սիսական (=Սիւնիք) սեպհական լեզվով...» Այս երկու վկայությունները ցույց են տալիս, որ Սյունիքը հայերից տարբեր ցեղ և լեզու է ներկայացնում, ինչ որ հաստատվում է նաև Ստեփաննոս Սյունեցու (տե՛ս նախորդ էջում) առանձին վկայությամբ:

Այսպիսով վերի չորս լեզուներին (Տայեցին, Խութեցին, Չորրորդ-Հայեցին, և Սպերացին) դալիս միանում են նաև Կորճայքը և Սյունիքը և իրենց հետ քաշում տանում են նաև Արցախը: Բոլորն էլ Հայաստանի փոքրամասնությանց լեզուներ են, հայերենից օտար:

Խնդիրն այսպես պարզաբանելուց հետո, այժմ բոլորովին հասկանալի է դառնում մեզ այն Յախատական վերաբերմունքը, որ մեր պատմագիրները ցույց են տալիս իրենց հպատակ այս փոքրամասնությանց հանդեպ:

Կորյունը (Ե դարի հայ պատմիչ, Մեսրոպի սիրելի աշակերտներից մեկը, նրա կյանքի միակ կենսագիրը, գրական գործիչ) խոսելով Նախիջևանի կողմերի ժողովրդի լուսավորության գործի մասին, ասում է. «Յայնժամ վաղվակի հրաման առեալ ի թագաւորէն (Մեսրոպ)՝ սկիզբն առնելոյ զխուժադուժ

կողմանն Մարաց, որք ոչ միայն վասն զիւական սատանայակիր բարուցն ճիւղադուժեան, այլ և վասն խեցբեկագոյն և խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին» (Կորյուն, տպ. Երևան 1941, էջ 54):

Խոսելով Սյունյաց երկրի լուսավորության մասին Մեսրոպի ձեռքով, ասում է. «Ապա յետ այնորիկ ի սահմանակից ի Սիւնական աշխարհն ելանէր... Առաւել զգազանամիտ զվայրենագոյն զճիւղադարոյ կողմանցն... մինչև ի նոցունց իսկ ի վայրենացն եպիսկոպոս տեսուչ եկեղեցւոյն Սիւնեաց կարգել» (անդ 60):

Երկու վկայություններից առաջինը վերաբերում է Մարիբին, երկրորդը՝ Սյունեցոց, երկուսն էլ օտար փոքրամասնություն Հայաստանում:

Նվաճող ազգերի վատ սովորությունն է անարգանքով վերաբերվել նվաճված ազգերին և ժողովուրդներին, հատկապես նկատի ունենալով նրանց օտար ծագումը: Կարդացե՛ք հատկապես Կորյուն, էջ 62, 10 68, 25 և 70, 27:

Սրանից տարբեր չէ նաև Սորենացին, որ նույն Աղվանից մասին ասում է. «Ստեղծ (Մեսրոպ) զնշանագիրս կոկորդախօս աղխագուր խժական խեցբեկագունին այնորիկ Գարգարացուց լեզուին» (Սոր. Գ. ծդ):

Աղվանից հետ Հայաստանի մարաց և սյունեցոց միևնույն ածականներով որակելը նշան է, թե վերջին երկուսին էլ առաջինի նման համարում են օտար և ոչ թե բնիկ հայ:

Օտարալեզու ժողովուրդների գոյությունը Հայաստանում չի խանդարում բնականաբար մյս, ինչ որ ասացինք սկզբից ևեթ, հայ բարբառների գոյությունը Հայաստանում: Թերևս դրա համար է, որ մեր պատմիչներն էլ հայերենի մասին խոսելու ժամանակ, երբեմն գործածում են հոգնակի թիվ: Օր. Սորենացին ասում է. «Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխօսս և զլեզուս հայկական (Սոր. Ա. ԺԳ). Խոստանայք հայկականացս լեզուաց առնել նշանագիրք» Սոր. Գ. ծբ):

Ստեփաննոս Սյունեցու վկայությունը պարզաբանելուց հետո, դառնանք դարձյալ մեկնիչների Գորդայ կամ Կորճայ կոչածին: Ո՞րն է այս երկու ձևերից ուղիղը.— Գորդայ ձևը հիշում են Թրակացին, Անանունը, Մովսեսը և Գավիթը՝ մի մի անգամ. Կորճայ ձևը հիշում են Գավիթը և Անանունը մի մի անգամ: Հին և հարազատ ձևը ուրեմն Գորդայ է: Այս բառը

ըստ իս նշանակում է եռամիկ, գոեհիկ և բնավ կապ չունի Կորճայքի հետ, որ ըստ Մյունեցու առանձին լեզու է: Գորգայ բառը ավելի հետո ջնջվելով լեզվից և այլ ևս անհասկանալի դառնալով՝ Թրակացու հավելված բառացանկում մի անձանոթ մեկնիչ կարիք է զգացել բացատրելու. և անշուշտ իրար կապելով Գորգայք, Կորդուք և Կորճայք նման բառերը, ավելացրել է այնտեղ «Գորդէիցն» Կորճիցն» բացատրությունը (էջ 61): Սրանից հետո, մյուս հեղինակները (Դավիթ և Անանուն) սկսել են սխալմամբ անխտիր գործածել երկու ձևերը իբրև հոմանիշ:

Ինչ էլ որ լինի, ճշտվում է Գորդայի՝ իբրև առանձին հայ ժողովրդական բարբառի գոյությունը և երևան են գալիս նույն իսկ այս բարբառի երեք առանձնահատկությունները, որոնք հիշեցրինք վերևում: Բայց այս առանձնահատկություններն էլ չեն ներկայացնում այնպիսի մեծ տարբերություններ (նույն իսկ Ե դարից բավական ուշ լինելով), որ կարելի լինի ասել, թե դա իրոք բարբառ է, այլ միմիայն ենթաբարբառ: Եթե Գորդաների մեջ ավելի ուժեղ լեզվական տարբերություններ լինեին, քերականները անպատճառ և անպատճառ պիտի հիշեին և այդ տարբերությունները առանձնապես պիտի շեշտեին, քանի որ պատրվակ էին փնտռում բարբառների հետքեր գտնելու, և Դիոնեսիոսի հիշած հունական բարբառներին համապատասխան ձևվեր գտնելու հայերենի մեջ:

Մինչև այսպեղ մեր ասածների ամփոփումը հետևյալն է:

1. Հինգերորդ դարում հիշատակված են Վերին և Ստորին Հայաստանի բարբառներ, որոնց վրա կարող ենք դեռ ավելացնել այսպես կոչված արևելյան և արևմտյան բարբառներ:

2. Այս բարբառները սակայն չունեին իրարից անջրպետող խոշոր տարբերություններ և բոլոր հայերը հեշտութամբ հասկանում էին իրար: Այնպես որ այդ բարբառները կարող ենք կոչել ոչ թե իրապես բարբառ, այլ ենթաբարբառ:

3. Հայաստանի հողի վրա, և հատկապես ծայրամասերում, խոսվում էին 19 օտար լեզուներ, որոնք—երկրորդ դարում նվաճված մասը ազգերի լեզուներն էին: Այս լեզուները կոչվում էին «եզերական»: Ստրաբոնի ժամանակ բոլորն էլ հայերեն գիտեին՝ իբրև պետական լեզու. բայց խոսում էին նաև իրենց լեզուն: Քանի առաջանում ենք դեպի նոր ժամանակները, եզերական լեզուները ջնջվում են և հայերենը տարածվում է ընդհանուր: Ութերորդ դարում նրանցից հիշատակվում

են 7, այն է. Կորճայքի, Տայքի, Խութի, Ծոփաց, Սպերի, Մյունիքի և Արցախի լեզուները: Մյուսները արդեն ջնջված կամ չբերված ջնջված էին:

Այժմ պիտի սկսենք քննել թե ինչ էին այն տարբերությունները, որ կարելի էր նկատել Ե դարի հայ բարբառներին (ավելի ճիշտ, ենթաբարբառներին) միջև:

1 Այդ տարբերություններից առաջին հերթին հիշատակելի է թրթռուն, խուլ և թավ բաղաձայնների փոխանակությունը: Սրա համար օրինակ է տալիս Անանուն մեկնիչը, էջ 149 բազուկ բառը, որ «էր իսկ ճշմարտապէս և ի տեսակի խօսիցն, որպէս բազուկ, պազուկ, փազուկ»: Այստեղ Անանունը «տեսակ խօսից» ասելով հասկանում է այն՝ ինչ որ մենք կոչում ենք բարբառ: Բուն միտքն այն է, թե տաղաչափները հաճախ լծորդ (=հանգավոր) բառեր են գործածում. բայց իրոք բարբառներում էլ կան այդպիսի լծորդներ. ինչպես բազուկ, պազուկ, փազուկ: Թեև Անանունի այս վկայությունը շատ անորոշ է և չենք կարող միայն նրա վրա հիմնվելով ընդունել թրթռուն բաղաձայնների փոխանակությունը խուլի և թավի հետ, բայց այլուստ մեզ հայտնի է, որ այդ երևույթը կար դեռ ավելի առաջ հայ ժողովրդական լեզվի կամ բարբառների մեջ, և կարող ենք հաստատել ավելի հին օրինակներով: Հունաբան դպրոցի լեզվում ունինք ենթակայ, ապաքարց, ներբող բառերը: Առաջինը ծագում է ենթ (այն է ընդ) «տակը» բառից, երկրորդը թարգմանաբար կազմված է հուն. apostrophos բառից, որ ծագում է apo «ապ» և stréphō «դարձնել» բառերից. ըստ այսմ հայերենն էլ ներկայացնում է ապադարձ ձևը (ինչպես որ դրված էլ կա Մյունեցի, էջ 217): Երրորդը՝ ներբող թարգմանաբար կազմված է հուն. en-kōmion հոմանիշից, որ ծագում է en «մեջ» և kōme «զեղ, արվարձան» բառերից, որով հայերենն էլ ներկայացնում է ներփող(ոց) ձևը: Վերջապես հիշենք բաղ «կից» մասնիկը, որ շարունակ գտնում է փաղ. ինչ. փաղանուն, փաղառութիւն ևն: Այս բոլոր օրինակները ցույց են տալիս, որ դ>թ, ձ>ց, ք>փ, մի խոսքով թրթռունի և թավի փոխանակությունը սովորական երևույթ էր հունաբանների ժամանակ (Զ դար):

Անանունի այս ասածը կրկնում է նաև Մովսես քերթողը հետևյալ ձևով. «Այլ էր իսկ ճշմարտապէս ի տեսակին խօսից, որպէս բազուկ և մազուկ» (էջ 174): Այստեղ Մովսեսը չի դնում Անանունի բազուկ, պազուկ, փազուկ բարբառային ձևերը, բայց

նրանց տեղ տալիս է մի ուրիշ բարբառային ձև (տեսակ խօսից), այն է բառի կրկնությունը մ բաղաձայնով: Այս երևույթը, որ շատ սովորական է այսօր թե հայերենում և թե ուրիշ զանազան լեզուներում (հաց մաց, պանիր մանիր ևն), գտնվում էր նույն իսկ Ե դարի հայերենում. հմմտ. լուռ մուռ, հեղձամղձուկ, շեղտամեղտ, խառնամառն, սուտմուտ ևն):

Վերջապես նույնը կրկնում է նաև Մտեփաննոս Սյունեցին, բայց շատ ավելի համառոտ և առանց օրինակի, հիշելով միայն ք, պ, փ, մ ձայների լծորդությունը, և բարբառները ծագումը բացատրելով արտասանական թերություններով (գնչու՝ այսինքն թյվատ և թոթով նախորդների պատճառով): Ահա իր բառերը. «Եւ եղև թիւրութիւն խօսիցն այսպէս. գնչուք (թլուտատ) և թոթովատք եղեալ յազգէն որ յառաջ քան զմեզ, որք ոչ կարէին զընտրութիւն առնել լծորդացն ի խօսս իւրեանց յաղագս մերձաւորութեան լծորդացն առ միմեանս, որպէս բեն, մենի, պէի և փիւրի և որք մի ըստ միոջէքն, սուանդեցաւ թիւրութիւն խօսից նոցա որդոց իւրեանց... իսկ սովորութիւնն վարժեալ պահեցաւ իբրև զօրէնս յիւրաքանչիւր գաւառի» (էջ 188):

2. Կային բառեր, որոնք սովորական էին այս կամ այն բարբառում, բայց կենտրոնական բարբառում չկային, հետևաբար չեն մտել Ե դարից մեզ ավանդված գրականության մեջ: Այսպիսի բառերից հիշում եմ հետևյալները, իբրև օրինակ:

Աճծեղ և կաշաղակ միևնույն թռչունի անուններն են, առաջինը այսօր գործածական է Ալաշկերտի, Ակնի, Զեյթունի, Խարբերդի, Հաճինի, Մուշի, Մոկաց, Ոգմիի և Վանի բարբառներում: Իսկ երկրորդը գործածական է Ախալցխայի, Ագուլիսի, Գորիսի, Երևանի, Ղարաբաղի, Մեղրիի, Շամախիի և Տփղիսի բարբառներում. Երկուսն էլ չեն ավանդված հին գրաբարից. բայց անշուշտ հնապես կար կաշաղակ բառը, որովհետև, ինչպես ակվերջավորությունը ցույց է տալիս, փոխառյալ է պհլ. *kašalak > պրս. kašala հոմանիշից:

Խլուրդ բառը ավանդված է մեսրոպյան շրջանից և այսօր էլ տարածված է մեր բոլոր բարբառներում: Միայն Խոտրջուրի բարբառն է, որ սրա փոխարեն ասում է ամբուդ, որ և զբարբառում գործածված է չորս անգամ ամբևտ ձևով: Որովհետև խլուրդ ասորական փոխառություն է, ուստի նա մտել է հարավից և գործածական է եղել հարավի բարբառներում: Հյուսիսում գործածական էր ամբևտ, որ թվում է թե բնիկ հայերեն է:

Երկուորի և սրա գգվականը՝ երկուորեակ «զույդ ծնված» հավասարապես ավանդված են մեսրոպյան շրջանից: Արդի բարբառներից Վան և Նոր-Բայազետ գիտեն ջամուկ բառը՝ նույն նշանակությամբ: Ծաղում է իրանյանից. հմմտ. զնդ. yama, սանս. yama, պհլ. yumak «երկվորյակ»: Պհլ. բառասկզբի Y դասում է պրս յ, ինչպես պհլ. yāvet > պրս. jāved = հյ. յախտեան, զնդ. yātu > պհլ. jātūk, պրս. jādū > հյ. ջատուկ «կախարդ»: Բայց այժմ պարսկերենում չկա ջամուկ բառի ժառանգը. ուստի նա գտնվել է ԺԱ դարից ավելի առաջ և պարսկերենից անցել է հայոց արևելյան բարբառին, մինչ մյուսները գործ էին անում երկուորի:

Հյ. ասում ենք դրացի, որ մեսրոպյան շրջանում ընդունված բառ է և մինչ այժմ էլ շարունակվում է շատ բարբառներում: Արևելյան բարբառներում այժմ գործածվում է հարևան, որ ունի իրանական կազմություն և անշուշտ պարսկերեն է: Առաջին մասն է հար < զնդ. haðō, պհլ. hað «զույգ», ուրից կազմվել են զնդ. haðōzāta > պհլ. *haðazāt, պհլ. *haðaka š, և պհլ. *haðavan, որոնցից փոխառյալ են հյ. հարազատ «զուգածնունդ», հարակաշ «զուգակից բնիկ» և հարևան «զուգարնակ, բնակակից»: Այս բառերը ոչ միայն գոյություն չունին արդի պարսկերենում, այլ և ավանդված չեն պահլավերենում: Կա միայն «հարազատ» բառը զնդերենում: Հայերենի մեջ նրանց գոյությունը ապացույց է, որ մի ժամանակ գոյություն են ունեցել պահլավերենում: Այդ շրջանում հարևան բառը անցել է մեզ, և անշուշտ գործածվելիս է եղել արևելյան բարբառում, մինչդեռ ուրիշ բարբառներում գործածվել է դրացի բնիկ հայ բառը:

3. Գրաբարում ունինք բառեր, որ հույովված են տարբեր ձևերով, և բայեր, որ խոնարհված են տարբեր ձևերով: Այսպես, լուսին, սեռ. լուսնի կամ լուսնոյ:

Աղախին, հգ. սեռ. աղախնաց, աղախնանց, աղախնայց, աղախնեաց:

Բնակիմ կամ բնակեմ, կտր. բնակեցաւ կամ բնակեաց, հգ. բնակեցան կամ բնակեցին:

Ջեռանիմ կամ ջեռնում:

Անցողական բայերից. լուսացանեմ կամ լսեցուցանեմ:

Բայերի չորս լծորդությունից կրկնակ տիպարներից. ոռոգանել կամ ոռոգել, սպանանել կամ սպանել, տարածանել կամ տարածել, երկիրպագանել կամ երկրպագել ևն:

Կարելի է ասել, որ այսպիսի կրկնակ ձևերից մեկը մի քարբառի էր սեփական, մյուսը մի ուրիշ քարբառի:

Իմ կարծիքով Ե դարի քարբառների զանազանությունը այս երեք կետերի շուրջն է եղել: Ուրիշ տեսակի տարբերություններ չկային: Չեմ ընդունում հատկապես ձայնավորների այն մեծ տարբերությունները ($a > o$, $i > a$, $e > i$ ևն), որոնք այնքան սովորական են արդի գանազան քարբառներում և որոնցով նրանք այնքան են ձևափոխվում, որ այլ ևս անհասկանալի են դառնում միմյանց:

Մովսես քերթովի «Մեկնութիւն քերականին» աշխատութեան մեջ մի տեղեկություն էլ կա է ձայնավորի մասին, որ սակայն լավ չի հասկացվում, մանավանդ որ հայտնի չէ, թե երևույթը հայերենի՞ համար է, թե՞ հունարենի:

Առաջ ենք բերում այդ հատվածը ամբողջապես (էջ 162—3, «Յաղագս է-ին երկայնութեան.—Երկայնութիւն է-ին առ այսոցն սոսի կարճութիւն ձայնաւորացն, Բայց ամենայն նիւթ վիցիւ բոյորի ձևով, ի վեր և ի խոնարհ, ի դէմս և ի թիկունս, յաջ և յահեակ: Իսկ ի տեսակս իմանալիաց երկարահնչումն և սուղ ասել սովորութիւն է յողական խօսից, որ ընդ զրոյն շարադրեալ լինի: Բայց նա առանձնացեալ ըստ ինքեան կատարէ բան և եթէ ոչ լիաձայնապէս, այլ ըստ խօսից ոմանց և էչն զնոյն ընու զտեղի փաղանունարաք»:

Ուզում է ասել, թե ձայնավորները լինում են կարճ կամ երկար, ինչ որ տառով էլ արտահայտվում է. է ձայնավորը ինքնին երկար է, բայց սրոշ քարբառներում Ե ձայնավորն էլ նույն դերը կատարում է:

Նույն նյութի մասին շատ ավելի ընդարձակ խոսում է Մազիսարոսը (էջ 235), նրա խոսքերից իմանում ենք, որ հարցը հայոց լեզվի է ձայնավորի մասին է, որով, ասում է նա, զանազանվում ենք հույներից: Իբր թե մենք է ձայնը առել ենք պարսկերենից, ինչ որ անմիտ խոսք է: Մինչև նույն ժամանակ նրա բացատրությունից երևում է, որ հարցը ոչ թե ձայնի երկարության մասին է, այլ տառի ձևի և անվան: «Քանզի այլոցն զծից ձայնաւորաց աւարտեալ երիւք և երկորդիւ յաւգաւորիւ յանգին, որպէս այր, եչ, ին, երթ, ոյ, իւն: Իսկ է-ն առանձին պարունակէ և ոչ զոք, ոչ սկսեալ յումեքէ և ոչ աւարտեալ որպէս երթ ի սկիզբն ունելով և լիւն և այլքն յաւարտի: Վասն որոյ սուղ սոքա անուանին»: Արդարև ա, ե, ի, ը, ո, ւ

ձայնավորները 2 կամ 3 զծերից են բաղկացած և նրանց անուններն էլ (այր ևն) մի քանի տառերից են բաղկացած կամ վերջում ունին որոշիչ հոդ (ինչպես ին, ճիւն): Իսկ է մի ուղղահայաց զծից է բաղկացած և անունն էլ մի ձայնավորից է բաղկացած՝ առանց որոշիչ հոդի: Մնացյալ խոսքերը (թե Աստված կոչվում է է և այլն) բնազանցական բաներ են և գիտութեան հետ գործ չունեն:

Թե Մազիսարոսի ասածները ոչ թե ձայնի, այլ տառաձևի երկարության մասին է, ավելի բացահայտ ձևով երևում է հունարենի մասին խոսածներից: Այսպես՝ «Արդ ի յունականին ոչ է է-ն երկայն ըստ մերումս, այլ ի-ն և ոչ սոցա միայն ին-ն առանձին է, այլ և նուազագոյն քան զնա ունելով զիծ, որ իտալա անուանի. Եւ է պատկեր զծին այնմ զիծ մի օտակ և յատուկ առանց նկատման... այլ է նոցա ին երկուս զիծ պատկանեալ մերձ առ միմեանս և լծեալ զծիւ զնոսա, զայնմանէ անուանեալ ասեն երկայն զսլ, սակս յերկուց բաղկացելոցն իաւտայիցն»:

Ուշագիտ ընթերցողը տեսնում է, որ խոսքը հունարեն I (կամ ι) և H տառերի մասին է, որոնցից առաջինը հասարակ մի գիծ է (կոչվում է iota), մյուսը բաղկացած է երկու զծից (իբր թե երկու iota-ից), մեջտեղից միութեան զծով միացած: Մինչ-գնա ըստ գիտութեան հուն. I և H ոչ մի կողմ չունին իրար հետ և երկրորդը ոչ թե I ձայնի երկարն է, այլ E ձայնի: Մազիսարոսը նոր հունարենի H=i հնչումը խառնում է հնի հետ:

Հայերենի մեջ էլ ըստ գիտութեան ավյալների է ոչ թե երկար ձայնավոր էր և գրանով էր գանազանվում ե-ից, այլ միայն փակ ձայնավոր, մինչդեռ Ե ձայնավորը բաց էր կամ միջակ:

Հայերենը կարճ ու երկար ձայնավոր չէ ունեցած:

Այս բարբից դուրս քերականների աված տեղեկությունները սխալ է ընդունել քարբառների մասին: Օրինակ՝ Մյուսնեցին ուզելով ստուգաբանել սոց և կրակ բառերը, ասում է. «Մտուգաբանին փոխադրելով զլծորդան և զքմակիցան, քանզի սոցն սոցց է, պակասեալ եթի և յաւելեալ ոյի, և կրակն կեբակ է ըստ գործոյն, փոխանակեալ զեթ եչի» (էջ 188): Ուզում է ասել թե սոց բառը ծագում է սոցոց նախածեից, իբր թե սոցալ բայից, որ կամ մեր իմացած սոցալն է՝ փայտի մեջ ետ ու առաջ երթալ զալուց ասնելով, և կամ ինչ որ բնածայն բառ

է: Հեղինակը չգիտեմ, որ այս բառը պետք է հանել սուղ «կարծ» բառից (սղոց=«կրճատող գործիք»): Հետևաբար արդի պարսկահայ բարբառի սողվածք ձևը կապ չունի այս ստուգաբանութեան կամ ենթադրյալ գավառական ձևի հետ:

Նմանապես կրակի բառը Սյունեցիին իր դատողութեամբ հանում է «ուտի» գաղափարից և դնում է կեր արմատից, իբր թե կրակ=կերակ «ուտող, կերող», գրա համար էլ ասում է Շրոտ գործոյն: Սա էլ կարելի չէ համարել որևէ հին գավառական ձև:

Թե այս բառերը գավառական ձևեր չեն, հայտնի է Սյունեցու այն ընդհանուր կանոնից, որ տալիս է քիչ հետո:—«Իսկ որք ոչ կարեն ստուգաբանել և բացայայտել զմի ոք յերկից վերասացեալ յեղանակացդ, թիւրեալ են զոր պարտ է փոխել զմի գիր յանուանէն և ի բայէ, ի ձայնաւորաց կամ յանձայնից, լծորդելովք յայտնեցելուովք, մինչև պատահեսցէ տեսութեան անուանն, որպէս վերադոյն ասացաք յաղագս կրակի թէ կերակ է և տրգալն՝ տարգալ և սղոցն՝ սողոց, ի փոխել զլծորդան և զքմակիցսն ըստ այսմ մտածութեան. ապա թէ ոչ փոխեսցես երկու կամ երիս ի լծորդացն և ոչ հանդիպեսցիս ստուգաբանութեանն» (էջ 190):

Ըստ այսմ Սյունեցին պատվիրում է, որ երբ ուզենանք գտնել որևէ բառի ստուգաբանութիւնը, պիտի փոխենք նրա միջից երկու կամ երեք լծորդ տառ, մինչև որ հասնենք (պատահենք) մայր բառին: Իսկ եթե չփոխենք լծորդները, ստուգաբանութեան չենք հասնի: Հետևաբար փոխողը մենք ենք և ոչ թե ժողովուրդը. և այն կերակ, սողոց, ինչպես և տարգալ բառերը մեր հնարածներն են և ոչ թե գոյութիւն ունեցող գավառական ձևեր: Ճիշտ ինչպես քիչ հետո քերտղութիւն բառն էլ ստուգաբանելով! դարձնում է ինքը գիրգելութիւն կամ գիրքողութիւն (էջ 191) և կամ ասում է թե «գրելիք քերել ասիւր անախնեօքն» (էջ 199):

Վերջապես սխալ է նաև Սյունեցու հիշած հոմանիշներն էլ վերածել բարբառային ձևերի: Սյունեցին ասում է. «Իսկ փաղանունք ասին, որ են զսյգ անուանք. անիւ և ճղուղ, առեղ և աւարտք, հեան և դանդանք, կունդք և ականոց, հեց և բոյթ, կապերա և գորգ, ձի և զգի, երամակապան և կուտպան, բիր և մահակ, սրոց բնութիւն մի և անուանք այլ» (էջ 209):

Ամեն լեզու էլ հոմանիշներ ունի. կարող է պատահել, որ այս կամ այն հոմանիշ ձևը մի որոշ բարբառից եկած ավելա-

ցած լինի լեզվի վրա. բայց դա օրենք չէ: Հոմանիշներն ընդհանրապես ներկայացնում են բառերի երանգներ և հաճախ իսկապես հոմանիշ չեն: Այսպես՝ այսօրվա հայերենում ունինք խնդրել, աղաչել, պաղատել, բախանձել, աղերսել, որոնք ներկայացնում են այն գործողութեան զանազան աստիճանները և իսկի էլ գավառական բառեր չեն: Նաև Սյունեցու հիշած բառերի մեջ գորգ և կապերա ամենևին հոմանիշ չեն: Այսպես և մյուսները: Եթե Սյունեցու այդ հոմանիշները իբր բարբառ ընդունենք, ուրեմն պաշտոնական լեզվի մոտ ընդամենը մի բարբառ պիտի ընդունենք, որովհետև մի բառին մի հոմանիշ է դնում: Թուսերենում OKO, OCH, ГЛАЗ հոմանիշ են. երեքն էլ նշանակում են «աչք». բայց այդ չի նշանակում, թե ռուսերենում երեք բարբառ կա: Նրանց համապատասխան հայերեն էլ ունինք «ակն», աչք, աղանող կամ ականողիք», որոնք բոլորը նշանակում են «աչք»: Մեր հին հեղինակները այս իմաստով սարքել են դեռ «հայարան, տեսարան, հայելիք, տեսանելիք, տեսարան, տեսանողական, տեսավորութիւն», թերևս և ուրիշ հոմանիշներ. ուրեմն, հայերենը 11 կամ ավելի բարբառներ ունի:

ՀՈՒՆԱՐԱՆ ՀԱՅԵՐԵՆ

Ե դարում, երբ հայերը սկսեցին թարգմանել հունարենից պատմական, նկարագրական, կրոնական ու բարոյական գրքավածքներ, հայերեն լեզուն ոչ միայն բավական էր հունարեն բնագրերի բոլոր նրբութունները դուրս բերելու, այլև իր ճիշտությամբ ու հարստությամբ շատ անգամ գերազանցում էր նրանցից: Այսպես, օրինակ՝ Ոսկերեքանի հայերեն թարգմանությունը այնքան պերճ, այնքան բազմազան, այնքան հարուստ լեզու ունի, մինչդեռ հունարենը նրա համեմատությամբ այնքան հասարակ ու սովորական է, որ կարծես թե Ոսկերեքանը հայերեն է խոսել և ոչ հունարեն, կամ թե բնագիրը հայերենն է, իսկ նրա անհաջող թարգմանությունը հունարենն է:

Ե դարից հետո, երբ հայերը ձեռք գարկին հունաց փիլիսոփայական գրվածքները թարգմանելու, տեսան, որ հայերենը բավական չէ փիլիսոփայական արվեստական մշակված լեզվի բոլոր նրբութունները պատկերացնելու: Այդ ըոպեից պահանջ զգացվեց հայերենի այս տևար կողմը գորացնելու, պակասությունը լրացնելու:

Թե ով եղավ, կամ ովքեր եղան, որ առաջին անգամ մտածեցին լրացնել հայերենի այս պակասը, մեզ հայտնի չէ: Ավանդությունը մեզ տալիս է ոմն Դավիթ Անհաղթ Հարքացի կամ Ներգյուղնացի փիլիսոփայի անունը, որ իբր թե ապրել է Ե դարի երկրորդ կեսում, սովորել է Աթենքում, կայսեր ներկայությամբ Պոլսում մրցել է հույն փիլիսոփաների հետ, հաղթել բոլորին և դրա համար էլ ստացել Անհաղթ տիտղոսը: Քննական բանասիրությունը առասպել է համարում այս բոլորը և հաստատում է, որ Դավիթին ընծայված գործերը հունարենից թարգմանություն են:

Ինչ էլ որ լինի, իրողությունն այն է, որ Ե դարից հետո 2—3 դարերի շրջանում դուրս են եկել մեր մեջ անհատներ, որոնք արհեստականորեն փոխել են հայերենը, համաձայն հունա-

րենի, որով և գրել և կամ ավելի ճիշտ՝ թարգմանել են բազմաթիվ փիլիսոփայական գրվածքներ: Այս հայերենը կոչվում է հունարան հայերեն: Քնննք այս հայերենի վիճակը կամ կազմութունը: Հունարան հայերենի ամենակարևոր կողմը իր բառարանն է, որ այս տեսակետից բաժանվում է երկու մասի.—

1) Հունաց փիլիսոփայական լեզվի հարստությունն են կազմում այն բառերը, որոնք կազմված են զանազան նախաձայնիկներով: Հայերենը թեև հետամասնիկներով շատ հարուստ, բայց չափազանց աղքատ է նախամասնիկների կողմից: Այսօր էլ երբ ուսական կրթություն ստացած մեր հայրենակիցները էլ երբ ունենում հայերենը համեմատելու ուսերենի հետ և առիթ են ունենում հայերենը անել ուսերենից հայեկամ ուզում են թարգմանություններ անել ուսերենից հայերեն, ամենից ավելի զանազանում են նախամասնիկների բացակայությունից հայերենի մեջ: Այսպես ուսերենը բացի ЛИТЬ «լցնել» սովորական արմատական ձևից՝ գիտե ասել НАЛИТЬ, ВЫЛИТЬ, ВЛИТЬ, ПОЛИТЬ, ПРОЛИТЬ, ПРИЛИТЬ, ПОДЛИТЬ, РАЗЛИТЬ, ОТЛИТЬ, ИЗЛИТЬ, ЗАЛИТЬ, ДОЛИТЬ, որոնց դեմ հայերենը առանձին բառեր չունի: Այդ չի նշանակում, թե հայերենը անկարող է ձև գաղափարները բացատրել, այլ թե բացատրում է կամ այդ գաղափարներով, ինչպես ոռոգել, ընել, ամել, ձուլել, հեռանալին արմատներով, ինչպես ոռոգել, ընել, ամել, ձուլել, հեռանալ, ամանել, քափել, վորել, դատարկել, պարպել և կամ հաղով, ամանել, քափել, վորել, դատարկել, պարպել լցնել, րակից բառերով, ինչպես վրան լցնել, դուրս լցնել, պակասը լցնել, մեշը լցնել, նորից լցնել և այլն: Ոչ մի լեզու չի կարող մի ուրիշ լեզվի կատարյալ պատկերը լինել: Բայց մեր այս կարգի ինտելիգենտները գոհունակ չեն հայերենից և ուզում են, որ հայերենն էլ կարողանար նույն լցնել արմատական ձևից կազմել զանազան ամանցներ, ճշտիվ համապատասխան ուսերեն ձևերին:

Ահա ճիշտ մեր արդի «ուսագետները» մտածմունքն ունենի և մեր հին հունարանները, որոնք չբավականանալով հայերենի արմատական ձևերով կամ նախաձայնիկներ, համաձայն հունարենի: Ահա այդ նախամասնիկներն են՝

ապ=άπο, άπ, άφ	բաց	άπο-	հակ=άγτι	ներ=έν
առ=αρος	գեր=ύπερ	ύπερ	համ=όμο	շաղ=ου
արա=είχ, εί	դեր=άγτι	άγτι	մակ=έπι	շար=ουν
բող=ου	ենթ=ύπο	ύπο	յար=παρά, ουν	պար=περι

ստոր=ὅπο
 վեր=ἀνα
 տար=παρα, δια
 փոխ=μετα

տրամ=δια
 փաղ=συν
 փար=περι

Այս նախամասնիկները հնարելուց հետո, մեր հունարան հեղինակները սկսեցին անխնա և ստրկորեն թարգմանել այն բոլոր հունարեն բառերը, որ կազմված էին համապատասխան մասնիկներով, առանց ուշադրութուն դարձնելու թե հայերենի մեջ այդ բառերի համազորները կան, թե՛ չկան. և թե հայ ժողովուրդը կարճ է արդյոք հասկանալ այդ նորակերտ բառերի իմաստը, թե ոչ: Ահա մի քանի օրինակ այդ թարգմանութուններից՝ համապատասխան այն հայերեն բառերով, որոնք արդեն զոյութուն ունենին լիզվի մեջ և գործածական էին մեսրոպյան հայերենում:

ἀπολογία	ապարանութիւն	Չատագովութիւն
ἀπόφθμι	ապուսել, ապասոցել	ժխտել, ուրանալ, մերժել
προσπίπτω	առանկանիլ	պատահել
ἔροχί	արտունութիւն	իրաւունք, առաւելութիւն
σύγκρισις	բաղդատութիւն	համեմատութիւն
ἀπο-τίθημι	բացադրել	մեկնել
ὑπερ-θετικός	գերադրական	գեր ի վերոյ
ἀντωνυμία	գերանուն	փոխանակ անուն
ὑποτίθημι	ենթադրել	դնել (դիցուք թէ)
ἀντίστασις	հակակայութիւն	խտիր
ὁμῶνυμος	հոմանուն	համանուն, անուանակից
ἐπιφάνεια	մակերեւոյթ	երեսք
παρτίθημι	յարադրել	կցել
ἐναντίος	ներհակ	հակառակ, ընդդիմակաց
ἐνεστώς	ներկայ	առաջիկայ
ἐνεργέω	ներգործել	ազդել
σύνδεσμος	շաղկապ	զօր, յօդակապ
συνεχίς	շարունակ	հանապազ
περιοχή	պարունակութիւն	բովանդակութիւն
ὑπογραφή	ստորագրութիւն	նկարագիր, ձեռնագիր
ἀναγινώσκω	վերձանել	ընթեռնուլ
παράδειγμα	տարացոյց	օրինակ
διαφέρω	տարբերել	որոշել, զանազանել

διάφορος տարբեր ընդհատ
 παρακοή տարալուծիւն անհնազանդութիւն
 διάθεσις տրամադրութիւն զգածուն, յօժարութիւն
 συλλαβή փաղառութիւն վանկ
 μεταβάλλω փոխարկել փոխել, յեղուլ
 περιαιρέω փարաբանալ ի բաց բառնալ

Հիշված նախամասնիկները կարող ենք կոչել պարզ. բայց հունարենը, հատկապես փիլիսոփայական լիզուն, ուներ նաև բարդ նախամասնիկներ, որոնք կազմված էին երկու պարզ մասնիկներից: Հունարան հեղինակները դրանք էլ թարգմանեցին անփոփոխ՝ նույն ոճով: Այս կարգի բառերը նախորդներ չափ առատ չեն, որովհետև առատ չեն նույն իսկ հունարենի մեջ: Ահա նրանցից մի քանի օրինակ.

προσεξερᾶζομαι առարտագործել յաւելուլ ինչ
 παρασυναπτικός տարբաղմատ յօդուածոյ (մասնիկ)
 ἐπισυνδῆω մակշաղկապել կապել երկիցս
 συγκατάθεσις բաղդատորութիւն հաւանութիւն
 ἐμπεριέγω ներպարունակել բովանդակել

կամ նույն ոճով՝ մակատրամատութիւն, գերպարունակ, գերստորակայ, հակատրամատեալ, ներառատութիւն, ներմակագրեալ և այլն:

2. Նախամասնիկավոր բառերից դուրս հունարենը, ինչպես և ամեն լեզու, ուներ մի խումբ այնպիսի բարդութուններ, որոնց կազմութունը հայերենից տարբեր էր: Հայերենը դարձյալ դրանց դեմ ուներ կամ առանձին արմատական բառ և կամ տարբեր ձևով բարդ կամ անհնգ ձև: Հունարան հեղինակները այս կարգի բառերն էլ սկսեցին թարգմանել բառացի. ինչ.

Ἐωσφόρος «Արուսեակ», կազմված է ἔωσ «այգ» և φορέω «հարստ կրել, զգնուլ» բառերից. հայերենը ուներ աստղ առաւօտու և արուսեակ գեղեցիկ բառերը. հունարենից թարգմանվեց վաղորդայնագեցիկ անճոռնի բառը (տես Տիմոթ. Կուզ, էջ 239 և 266):

Φιλονεϊκῶ «վիճել, կազել, հակառակել, յանդգնեալ վիճել». կազմված է φιλέω «սիրել» և νεκάω «յաղթել» բառերից. հունարանների համար պատրաստ է յաղթասիրել:

Մենթ.— Հունարան հայերենի մասին մի ընդարձակ մենագրութուն ունի մեր համալսարանի դասախոս Հ. Մանանդյանը, «Յունարան դպրոցը և նրա զարգացման շրջանները», Վիեննա 1928. աշխատութունը մեծազույն մասամբ զբաղվում է բանասիրական հարցերով. բայց ունի նաև լեզվաբանական կոզմեր: Իմ աշխատութունը զբաղված է նրանից առաջ և բարձր գիտնակի է նրանից:

Φιλοτιμέομαι *սպարժել, հպարտանալ, փառս անձին համարել, ճոխանալ, առատանալ (այսինքն «առատածեռն լինել»)»* կազմված է *φιλέω «սիրել»* և *τιμάω «յարգել»* բառերից. ըստ այսմ հունարաններն էլ թարգմանում են պատուասիրել. օր. Յուսայի պատուասիրել իմով ամենիմաստ արուեստիւս. Ծոր. Գ. 68. Պատուասիրէին (Սամարացիք) յաղագս Աբրահամու և նախահայր զնա անուանէին. Ոսկ. յ. ա. 38:

Γραμματικὴ *«քերականութիւն»*. կազմված է *γράμμα «գիր, տառ»* բառից և *αἵμα* էլ *γράφω «գրել»* բառից, որի առջին և նախնական նշանակութիւնն է *«քերել, ձանկոտել, փորագրել»*, ըստ որում հնագույն ժամանակներում գրչութիւնը բարձր փորելով էր. բառը հետո ստացավ պարզապես *«գրել, շարադրել»* նշանակութիւնը: Մետրոպոլիտան հայերենում բառի հոմանիշն էր *«գիրութիւն, արուեստ գիրութեան»*, որին չհավանելով մեր հունարանները բերել *բառից սարքեցին* քերականութիւն: Այս ձևով՝ բառացի թարգմանութեամբ կազմված բառեր են՝ *գիմառութիւն = προσωποποιία (դէմք առնել և ոչ թե առնել) բերանուն = φερώνυμος և իր անունները՝ բերանունութիւն = φερωνυμία, բերանունապէս = φερωνύμως* ևն:

Այս կարգի բառերից զուրս կան և այնպիսի բարդութիւններ, որոնք տարբերվում են հայերենից միայն դասավորութեամբ. այսպիս օրինակ հն. *φιλόλογος «բանասէր»* բառի կազմի մասերն են *φιλο- «սէր»* և *λόγος* բան, որոնք դասավորված են հայերենի հակառակ շարքով: Այս կարգի բառերը թարգմանված են հայերենի մեջ նախ մեր լեզվին հաբազատ կարգով, իսկ զուտ հունարան հեղինակների մոտ զուտ հունական շարքով: Այսպէս ևն:

φιλεργος	գործասէր	սիրագործ (Տիմ. Կուղ, 327)
μνητροπολις	քաղաքամայր	մայրաքաղաք
φιλολογος	բանասէր	սիրարան

Թերթելով ամբողջ նոր Հայկազյան բառարանը, հաշվեցի ու գտա, որ նախամասնիկավոր բառերի թիվը ընդամենը 1793 հաս է: Սրանց մեջ ամենամեծ թիվը կազմում են ներ նախամասնիկով կազմված բառերը (ընդամենը 185 բառ), ալեկի հետո գալիս են գեր նախամասնիկով կազմվածները (173 բառ), վեր «նորից» մասնիկով կազմվածները (140 բառ), բաց մասնիկով կազմվածները (131 բառ), արտ մասնիկով կազմվածները (129 բառ), մակ մասնիկով կազմվածները (121 բառ), տար մասնիկով կազմվածները (117 բառ), և այլն: Իսկ ամենափոքր թիվը կազմում են փաղ մասնիկով կազմվածները (11 բառ), փար մասնիկով կազմվածները (5 բառ) և դեր մասնիկով կազմված-

ները (նույնպես 5 բառ): Նույն 1793 թվի մեջ գտնվում են նաև այն բառերը, որոնց մեջ մասնիկը բարդութեան մեջ թաքնված է. օր. բառափառառական, սկզբնաճեղհակ, կիսեքսամայ ևն: Այս կարգի բառերի թիվը շատ փոքր է (1—2 տասնյակ միայն): Հունարանութիւնը չի սահմանափակվում միայն նախամասնիկներով և բարդ բառերի ստրկական թարգմանութեամբ. կան նաև ալեկի հետաքրքրական և բնորոշ գծեր. օրինակ զժուար բառով կազմված բարդութիւնները հայերենի համար բնական և օրինական են. *ինչ. դժուարագիտ «դժվար գտնվող», զժուարագործ «դժվար գործելու», զժուարալոյծ «դժվար լուծելու», զժուարալուչ «դժվար լսելու», զժուարախիլ «դժվար խլելու», զժուարածին «դժվար ծնվող», զժուարակատար «դժվար կատարելու», ևն, որոնք մետրոպոլիտան շրջանից են: Հունարան գպրոցը ընդունում է այս բառերը և նրանց ոճով կազմում է ուրիշ շատ բառեր էլ. *ինչ. զժուարածեռն «դժվար ձեռնարկելու» (δυσχερής), զժուարապատան «դժվար պատահելու» (δυσάντητος), զժուարավիճող «վիճասէր» (δυσερισ) ևն: Բայց սրա հետ հնարել է նաև զժոխ բառով կազմված ձևեր. *ինչ. զժոխալուայ «դժվար լվանալու» (δυσεκπλύτος), զժոխածեռնարկելի «անհաշտ» (δυσμεταχειρεστότατος), նաև զժոխաբանել, զժոխակենդան, զժոխելանելի, զժոխերասան, զժոխորսայի ևն:— Դժուարարգելի բառը կա նաև զժոխարգելի ձևով:***

Երեք բառով կազմված բարդութիւնները մետրոպոլիտան շրջանի սիրած ձևերն են. *ինչ. երեքամեայ, երեքամսեայ, երեքանկիւն, երեքատուածեան, երեքբողոքաձև, երեքգլխակիր, երեքգլանգեան, երեքթղեան, երեքժանի, երեքկարգեան, երեքկանսոր, երեքկուսի, երեքհազարեան, երեքձեղուանեայ, երեքուղկրան, երեքպարսպեան, երեքքարահեան, երեքքաղաքեան, երեքօրեայ: Այս ձևը ընդունում է հունարան գպրոցը և հորինում է նաև՝ երեքփափազեան, երեքկնայարկ, երեքլուսեան, երեքարփին և նման բառեր: Բայց սրանց դեմ հնարում է նաև եռ, որով կազմում է բազմաթիվ բարդեր. *ինչ. եռօրեայ (Մետր. երեքօրեայ), եռանկիւն (Մետր. երեքանկիւն), եռամեայ (Մետր. երեքամեայ), եռամսեայ (Մետր. երեքամսեայ) ևն:**

Հունարանութեան ազդեցութիւնը կարելի է գտնել նաև բացասական կողմից. օր. կենսագրութիւն (biographia) բառը, որ արդի հայերենի սովորական ձևերից մեկն է, չկա հունարան հայերենի մեջ, ուր մետրոպոլիտան շրջանի նման գտնում ենք այս իմաստով միշտ վարք: Պատճառը հունարանն է, ուր թե հին հելլենական և թե միջին բյուզանդական շրջանում նույնպես գոյութիւն չունի βιογραφία բառը, որ հասուկ է միայն նոր հունարանին: Հները գիտեն այս իմաստով βίος «կեանք, վարք»:

Միայն բառարանը չէ, որ նորոգեցին հունարանները, այլ ձեռք սուրին նաև հայերեն քերականութիւնը. ահա մի քանիսը նկատելի նորմուծութիւններն են:

1. Հայերեն լեզուն Ե դարում արդեն վաղուց ջնջած էր քերականական սեռը. հունարենը ունէր երեք սեռ. արական, իգական և չեզոք. հունարանները հայերենի մեջ էլ մտցրին սեռի տարբերութիւնը, բայց ոչ թե գոյականների և ածականների մեջ, այլ միայն մի բառի սա, դա, նա դերանունների մէջ. այսպես մի բառի արականն է եզ, իգականը մի, չեզոքը մու.— դերանունների համար իբր օրինակ հիշենք իգ. սէ, սեռ. սերա, սարա, տր. սեմա, հզն. սէք, սայք, սեռ. սացա, չեզոք սայց? այսպես և մյուսները. կա և նոյա (փխ. նոցա), որ հաճախ գործ է ածվում Տիմոթեոս Կուզի հակաճառութիւն մեջ: Այսպես և ներ նոջայ, ներ սոջայ Անյ. 462: Գոյականների մեջ սեռի գանձազանութիւն դնելու համար փորձեր եղել են, բայց այդ բոլորը չի հաջողվել (տես այս մասին Արուեստ Գիտնիսեայ քերականի և հայ մեկնութիւնք նորին, հատկապես էջ 238—244):

2. Հայերենի մեջ թիվը երկու է. եզակի և հոգնակի. հունարենն ունի նաև երկակի. հունարանները աշխատեցին այս թիվն էլ մտնել հայերենի մեջ. Գիտնիսիոսի քերականութիւն մեջ երկակի իբր մասնիկ նշանակված է ու, թե գոյականների և թե ցուցականների համար. այսպես՝ Պետրու Վերտու Պետրոսները. այսու, այդու, այնու «այս երկուսը, այդ երկուսը, այն երկուսը». անձնական դերանունների երկակիներն են մոնք, դոնք, Ռոնք «մենք երկուսս, դուք երկուսդ, նրանք երկուսը». ստացական ածականների երկակիներն են իմէն, քովրա, նովրա «իմ՝ քո՝ նրա ունեցած երկու բաները»:

3. Հորովման մեջ իբրև նորմուծութիւն կարող ենք հիշել սեռականի ոչ, ոյր, տրականի ում, ներգոյականի և բացառականի համար ըն, ց մասնիկները (առաջինը բաղաձայնով սկսող բառերի, երկրորդը ձայնավորով սկսող բառերի համար) ինչ. սեռոյր եզոյր ելոյր «սեռի միոյ եղելոյ», ձիոյր «ձիոյ», երկաբանչիւրոյր «ամեն մեկի», մարդոյր «մարդոյ», կենցաղում, ի քաղաքոյ, նոյր, նում, նով «նորա, նմա, նովաւ», ներկուց ընպակասեցելոց «երկու պակասածներից», ընտեղոյր «տեղից», ընպակասեցելոյ և նաւարտեցելոյ «պակասածից և ավարտածից», նանգից «վերջում» (յանգ բառից), ներ մարդումն միայնոյ, ներ մեռելումն մարդոյ:

4. Թվականների մեջ նկատելի է դասականների փոփոխութիւնը. երկիր, երիր, շորիր, ճնգիր կամ ճիւղգերիր, վեցերիր փե. երկրորդ, երրորդ ևն.— վերևում արդեն հիշել ենք եզ (արական)

և մու (չեզոք) նորմուծ ձևերը. հմմտ. եզ առ մու «մին առ մին կամ առ միւսն» սեռ. մոյր, տր. մում:

5. Միջակ անունների և անփոփոխելի մասունք բանիները մեջ հիշատակելի նորմուծութիւններ են՝ բարց «առանց», սերկ, սերկեան «այսօր», ոչ եզով իիք «բնավ», հայո՝ «այո» (Գիտնիսիոս, էջ 33, 275), որգոն, որգան, որբար, հիգան, հիբար «որպես, ինչպես» և այլն:

6. Բայը կրում է շատ զգալի փոփոխութիւններ. այսպես, մանում են երկակի թիվը, մի քանի նոր ժամանակներ, կրավորականի նոր ձև, դերբայների տարբեր կազմութիւն:

Իբր օրինակ տալիս ենք կոփեմ բայի խոնարհումը ըստ Գիտնիսիոսի քերականութիւն (էջ 45):

Ներգործական Կրավորական

Սահմանական եղ.

Ներկա

եզ. կոփեմ	կոփեմ
կոփես	կոփես
կոփէ	կոփի
երկ. կոփոմ	կոփովմ
կոփոս	կոփովս
կոփոյ	կոփով
հզ. կոփեմք	կոփիմք
կոփէք	կոփիք
կոփեն	կոփին

Անկատ.

եզ. կոփէի	կոփիի
կոփէիր	կոփիիր
կոփէր	կոփիւր*
երկ. կոփոյի	կոփուի
կոփոյիր	կոփուիր
կոփոյր	կոփուր
հզ. կոփէաք	կոփիաք
կոփէեք	կոփիիք
կոփէին	կոփիին

* Անկ. եզ. դ զեմքի իւր ձևը շատ է տարածված և նրանով ուրազրված են նույն իսկ մեծքոյան շրջանից հասած գրվածքներ:

Հարակատար

եզ. էկոփէի*)	էկոփիի
էկոփէիբ	էկոփիիբ
էկոփէր	էկոփիւր
երկ. էկոփոյի	էկոփուի
էկոփոյիբ	էկոփուիբ
էկոփոյր	էկոփուր
հզ. էկոփէաք	էկոփիաք
էկոփէիք	էկոփիիք
էկոփէին	էկոփիին

Փերակատար

եզ. էկոփեցի**)	էկոփեցայ
էկոփեցեր	էկոփեցար
էկոփեաց	էկոփեցաւ
երկ. էկոփոցի	էկոփոցայ
էկոփոցեր	էկոփոցար
էկոփոցր	էկոփոցաւ
հզ. էկոփեցաք	էկոփեցաք (էկոփիցաք)
էկոփոցէք	էկոփեցայք (էկոփիցայք)
էկոփեցին	էկոփեցան (էկոփիցան)

Կատարյալ

եզ. կոփեցի	կոփեցայ
կոփեցեր	կոփեցար
կոփեացր	կոփեցաւ
երկ. կոփոցի	կոփոցայ
կոփոցեր	կոփոցար
կոփոցր	կոփոցաւ
հզ. կոփեցաք	կոփիցաք
կոփեցէք	կոփիցայք
կոփեցին	կոփիցան

*) Այսպէս և էտաշէի, էհալէի, էքերէի, էքանդէի, էնկարէի, էուտէի, էրմուէի (Սիւն. քեր. էջ. 214):

**) Հստ այսմ և էհանի, էհատի, էտաշեցի, էհալեցի, էքանդեցի, էնկարեցի, էկոտորեցի, էտզանի (Սիւն. քեր. 214):

Ապառնի

եզ. կոփեցից	կոփեցայց
կոփեացես	կոփեցիս
կոփեսցէ	կոփեսցի
երկ. կոփոցից	կոփոցայց
կոփոացես	կոփոացիս
կոփոսցէ	կոփոսցի
հզ. կոփեսցուք	կոփիսցուք
կոփեսցէք	կոփիսցիք
կոփեսցեն	կոփիսցին

Հրամայական եղ.

Ներկ. և անկ.

եզ. կոփեա	կոփեաց
կոփեսցէ	կոփցի
երկ. կոփոա	կոփոաց
կոփոսցէ	կոփովցի
հզ. կոփեցէք	կոփիայք
կոփեսցեն	կոփիցին

Հարակ. և գերակ.

եզ. էկոփեա	էկոփիցիբ
էկոփեսցէ	էկոփիցի
երկ. էկոփոյա	էկոփոցիբ
էկոփոսցէ	էկոփովցի
հզ. էկոփեցէք	էկոփիցայք
էկոփեսցեն	էկոփիցին

Կատար. և ապառ.

եզ. կոփեսցիբ	կոփեսցիբ
կոփեսցի	կոփեսցի
երկ. կոփոսցիբ	կոփոսցիբ
կոփոսցի	կոփոսցի
հզ. կոփեսցիք	կոփեցարուք
կոփեսցին	կոփեսցին

Հղձակամ եղ.

Ներկ. և անկ.

եզ. կոփեըմ
կոփեըս
կոփեը

կոփիւմ
կոփիւս
կոփիւ

երկ. կոփորմ
կոփորս
կոփոր

կոփում
կոփուս
կոփու

հզ. կոփերմք
կոփերք
կոփերն

կոփիւմք
կոփիւք
կոփիւն

Հարակ. և գերակ.

եզ. էկոփեցիւ
էկոփեցիւր
էկոփեցեր

էկոփեալ իի
» իիւ
» իիւր

երկ. էկոփոցիւ
էկոփոցիւր
էկոփոցեր

էկոփուալ ուի
» ուիւ
» ուիր

հզ. էկոփեցիւք
էկոփեցիւրք
էկոփեցիւն

էկոփեալք իաք
» իիք
» իին

Կտր. և ապառ.

եզ. կոփեցիւց
կոփեաջիւր
կոփեացել

կոփիցայց
կոփիսցիւս
կոփիսցիւ

երկ. կոփոցիւց
կոփոսցելս
կոփոսցել

կոփոցայց
կոփոսցիս
կոփոսցիւ

հզ. կոփեացիւք
կոփեաջիւք
կոփեացելն

կոփիսցուք
կոփիսցիւք
կոփիսցիւն

Ստորադասակամ եղ.

Ներկ.

եզ. թե կոփիցեմ
թե կոփիցես
թե կոփիցէ

թե կոփիցիմ
թե կոփիցիս
թե կոփիցի

երկ. թե կոփիցովմ
թե կոփիցովս
թե կոփիցով
հզ. թե կոփիցեմք
թե կոփիցէք
թե կոփիցեն

թե կոփոցիմ
թե կոփոցիս
թե կոփոցի
թե կոփիցիմք
թե կոփիցիք
թե կոփիցին

Անկատար

եզ.

թե կոփեալ լինէի
» լինէիր
» լինէր

երկ.

թե կոփոյլ լինոյի
» լինոյիր
» լինոյր

հզ.

թե կոփեալք լինէաք
» լինէիք
» լինէին

Նույն բնոյ նախ.

Հարակատար

եզ. թե էկոփեցի
էկոփեցեր
էկոփեացր

թե էկոփեալ եմ
» ես
» է

երկ. թե էկոփովցի
էկոփովցեր
էկոփովցր

թե էկոփոյլ ոմ
» ոս
» ո

հզ. թե էկոփիցեմք
էկոփիցէք
էկոփիցեն

թե էկոփեալք եմք
» էք
» են

Գերակատար

եզ.

թե էկոփեցեալ էի
» էիր
» էր

երկ.

թե եկոփոցեալ ոյի
» ոյիր
» ոյր

Նույն բնոյ նախ.

հգ. նույն ընդ նախ. թե էկոփեցեալք էաք
 > էիք
 > էին

Կատար.

եգ. թե կոփեցից թե կոփեցայ
 թե կոփեցես թե կոփեցար
 թե կոփեցէ թե կոփեցաւ

երկ. թե կոփովցից թե կոփոցայ
 թե կոփովցես թե կոփոցար
 թե կոփովցէ թե կոփոցաւ

հգ. թե կոփեսցուք թե կոփեցաք
 թե կոփեսցէք թե կոփեսցեն
 թե կոփեցան

Ապառնի

եգ. թե կոփեցայցիմ կոփիցիս
 կոփիցի

երկ. թե կոփեցայցում կոփեցայցոս
 կոփեցայցո

հգ. թե կոփիցիմք կոփիցիք
 կոփիցին

նույն ընդ նախ.

Աներևույթ

Ներկ. և անկ.

կոփել կոփիլ

Հարակ. և գերակ.

էկոփել, էկոփոցել էկոփիլ, էկոփիցիլ

Անորոշ

կոփոցել*) կոփոցիլ

Ապառնի

կոփոցոցել, կոփոտոցել, կոփոցոցիլ, կոփոտոցիլ

*) Հստ ալմ ունինք բացասոցել, բացերևոցել, ապասոցել, ստորասոցել, երևոցել, լինոցել (Արխատ. յղ. մեկն., էջ 466—471):

Եթե բայը այսքան այլափոխված և հարմարեցրած էր հունարենի, ավելորդ է ասել, թե ինչ պիտի լիներ համաձայնութունը և շարադասութունը, որ առանց այն էլ մեծ ասարեութուն չունեն հունարենից և իր ազատությամբ կարող էր ստանալ ամեն ձև ու կարգ: Հունարան հեղինակների բոլոր թարգմանութունները կրում են ճիշտ հունարենի շարադասութունը, խնդրառութունը նույն ձևով է, ընդունված սովորութուն է անականները և դերբայները միշտ համաձայնեցնել գոյականի հետ և այլն: Ահա մի քանի կարճ օրինակներ.

Չ'ի վերայ եկելոցն գործս.

Կարող է գրովանդակն յայտնել զազգ.

Մանկան ելոյր և այրացելոյր և ներգործելոյր ինչ կամ դադարելոյր (այսինքն՝ մանուկ գոլով և յարբունս հասեալ և գործելով ինչ կամ դադարելով):

Այն բոլոր փոփոխութունները՝ որ վերևում նկարագրեցինք (բառական, քերականական և համաձայնական) մի անգամից անմիջապես տեղի չունեցան, այլ կամաց կամաց, սկզբում դանդաղ, միայն բառաբանական ասպարեզում և այն էլ կարևորագույն բառերի համար, իսկ ավելի հետո ընդարձակվելով բոնեցին ամբողջ բառարանը և քերականութունը:

Եղիշեի ամբողջ պատմության մեջ (Եղիշեի վրդ. Մատենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 5—158) կանխած հարուցող հինգ բառ կա, որոնք են՝ վերաբերիլ «վերե բարձրանալ», տարաբերիլ «տատանվիլ», բացատրել «թափել, նետել», յարակայութիւն «մշտագոյութուն» և տարաբաժին «զրկված»: Մրանց վկայութունները հետևյալներն են. Եւ անա վերաբերիմք ընդ քեզ ճախրելով, և իրրև բարձրաթոխս եղեալ՝ զամենայն փնասակար մրկածին օղովքս անցուցանիցեմք (էջ 6): Քանզի յոյժ սիրելի էր նմա խոովութիւն, արիւնհեղութիւն, վասն այնորիկ յաճն իւր տարաբերէր, եթէ յն թափեցից զբառնութիւն թիւնից, կամ իւր բացատրեցից զբազմութիւն նետիցն (էջ 7): Տեղութիւն յարակայութեան բոլոր աշխարհիս (էջ 27): Մի ոք զձեր բաժինն ի ձէնջ հատանիցէ և զձեզ օտարախորթ արարեալ՝ տարաբաժին հանիցէ (էջ 84): Այս բոլորն էլ սակայն, թեև հետմետրոպյան, բայց հունարան զպրոցի բառեր չեն:

Ուրեմն Եղիշեն բոլորովին ազատ է հունարանութունից: Փարպեցու բոլոր գրվածքների մեջ (Պատմութունը, հետն առնելով նաև Մահակի տեսիլը իր մեկնությամբ, ինչպես և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, տպ. Տիգրիս 1904) երկու խոնդրական բառ կա. — յեղափոխութիւն, շարագիր և շարագրել: Առաջինը գործածված է մեկ անգամ՝ հետևյալ հատվածում. Ընդ բազում

ճառս մատենից առաջնոցն պատմագրացն Հայոց անցի. յորոց ըստ յերկար ընթերցողութեան գտի ի նոցանէ զժամանակաց և զգարուց աշխարհիս Հայոց բազմադիմի յեղափոխութիւնս. յստոյք և յանսխալ կարգաւորութենէ Առաջին գրոցն, զոր յարմարպէս պատմեալ ծանոյց մեզ երանելին Ազաթանգեղոս (էջ 2, տող 22), Բայց այս բառը հունարան չէ և գործածված է Ազաթանգեղոսի մեջ (Վասն յեղանակաց յեղափոխ պատերազմաց). այս տեղից էլ վերցրել է Փարպեցին, ինչպես որ ինքն էլ ակնարկում է:

Երկրորդի վկայութիւններն են.— Կարգել զվաղնջուցն գրեալ շարագիրս տառիցն (էջ 16, տող 29), Երրորդ պատմութիւնս այս ի կարգէ նորին գրոց շարագրեալ տկարութեանս մերում (էջ 2, տող 1), Առաջին վկայութեան հետ ճիշտ նույն է զալիս Խոր. Գ. ծր՝ Չվաղնջուցն գրեալ շարագիր տառից (ըստ Արեղյանի հրատարակութեան), որ սակայն մյուս տպագրութեանց մեջ այս ձևն ունի. Չվաղնջուց գտեալ նշանագիր տառից: Ըստ այսմ վիճելի են շարագիր (որ հունարան բառ է, իբր sy'ngamma) և նշանագիր (որ մեսրոպյան է. հմմտ. Կորիւնի «նշանագիրս աղփարեւաց», որ համապատասխանում է Փարպեցու «նշանագիր տառից» ձևին):

Մյուս վկայութեան մեջ ձեռագրերի մի մասը ունի շարագրեալ, մյուս մասը շարադրեալ. բայց սրանցից թե առաջինը (=syngraphō) և թե երկրորդը (=syntihemi) հավասարապես հունարան են:

Ահա հունարան դպրոցի առաջին և միակ բառը, որ գործածված է Ե զարի վերջից:

Երբ անցնում ենք Խորենացուն, հունարան նախամասնիկները լայն ծավալ են ստանում. իսկ ավելի ուժեղ է Տիմոթեոս Կուզ. այս երկուսը դեռ բավական տանելի հայերեն են: Դավիթ Անհաղթի գործերի ամբողջ բառարանն ու քերականութիւնը այնպես հունարան են, որ կարծես թե առանձին լեզու է, որ հայերենով հասկանալ անհնարին կամ շատ դժվար է և որ հասկանալու համար պետք կա անպատճառ հունարեն իմանալու:

Հունարան դպրոցը ունեցել է անշուշտ զանազան դպրոցներ. դրան իբրև ապացույց կարելի է հիշել հենց այն հանդամանքը, որ միևնույն հունական մասնիկը մերթ այսպես և մերթ այնպես է թարգմանվում. այսպես հուն. σον լինում է բաղ, շաղ, շար, փաղ, յար. δια լինում է տար և տրամ. παρα լինում է յար, տար, ὑπο լինում է ստոր և ենթ, ἀντι լինում է հակ և դեր, ἄπο լինում է ապ և բաց, կամ թե միևնույն հայերեն նախամասնիկը

ներկայացնում է երկու տարբեր հունական մասնիկ. այսպես յար ներկայացնում է παρα և σον, տար ներկայացնում է παρα և δια*):

Այստեղ տալիս ենք մի քանի օրինակ հունարան հայերենի. Թիվ 1 6 Տիմոթեոս Կուզի հակաճառութիւնից հատվածներ են և իրենց դեմ ունեն նաև համապատասխան մեսրոպյան թարգմանութիւնը.— Թիվ 7 Խորենացուց մի հատված է, իսկ Թիվ 8—11 Դավիթ Անհաղթի գործերից՝ հունարան խրթնագույն լեզվի իբր օրինակ:

1) Չամենայն փոյթ արարեալ գրել ձեզ յաղագս հասարակական մերոյ փրկութեան, հարկաւորութիւն կալայ գրել ձեզ մաղթելով նահատակի մի հազ տուելով սրբոցն հաւատով: Քանզի առմտեցին ոմանք մարդիկ ի վաղուց յառաջադրեալք յայս դատապարտութիւն ամպարիշտք զԱստուծոյն մերոյ շնորհն փոխադրողի ի գեղխութիւն և զմիայն իշխանականն և զՏէրն մեր Յիսուս Քրիստոս ուրացողք (Տիմոթ.):

2) Եսասց իսկ Մարիամ առ հրեշտակն. Ի՞րբ եղիցի ինձ այս, զի զայր ոչ ճանաչեմ: Եւ ասէ նէմա հրեշտակն. Հոգի սուրբ վերեկեացէ առ քեզ և կարութիւն բարձրելոյ հովանասցի քեզ, զի և ծնիցեալն

Չամենայն փոյթ յանձին կալեալ գրել ձեզ՝ վասն մերոյ հասարակաց փրկութեանն, հարկ յանձին կալայ գրել ձեզ և աղաչել զի ճգնիցիք ի վերայ հաւատոցն, որ միանգամ աւանդեցաւ սրբոց: Քանզի սպրդեցին մտին ոմանք, որ յառաջագոյն իսկ կատարեալ էին ի սոյն դատաստան, ամպարիշտք, որ զԱստուծոյ մերոյ շնորհան դարձուցին յանկարգութիւն և զմի միայն զիշխանն և զՏէր մեր Յիսուս Քրիստոս ուրացեալք: (Յուդ. 3—4):

Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն. Զի՞նք լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ զիտեմ: Պատասխանի ետ հրեշտակն և ասէ ցնա. Հոգի սուրբ եկեացէ ի քեզ և զօրութիւն բարձ-

*) Մանանդյանը իր վերոհիշյալ աշխատութեան մեջ հունարան դպրոցի համար գնում է երեք խափ: Ամենաառաջին գործն է Թրակացու քերականութիւնը, որ Փիլոնի և Պիտոյից գրքի հետ կազմում է առաջին խափը (2 զարի առաջին կեսը). երկրորդ շերտը կազմում է Տիմոթեոս Կուզ. 552—564 թ. երրորդ շերտն են կազմում Դավիթ Անհաղթի թարգմանութիւնները, որոնք գնում են մինչև է գաբի վերջը: Այսպէսով հունարան դպրոցը 200 տարվա կյանք ունի: Իսկ Ակիւնեան, Դասական հայերենը, էջ 86, հունարան դպրոցի սկիզբը գնում է 572—603 թվերին:

սուրբ կոչեացի Որդի Աստուծոյ (Տիմոթ. էջ 292):

3) Եթէ փորձութիւն խնդրէք զյիսն խօսողի Քրիստոսի (էջ 211):

4) Զի նովաւ շինեցաւ ամենայն զ'ի յերկինս և զ'ի վերայ երկրիս, տեսանելիք և անտեսանելիք (էջ 313):

5) Յիսուս Քրիստոս, տուիչ չըն զինքն հակափրկանակ ի վերայ ամենեցուն (էջ 98):

6) Այլ են ոմանք որք անհաւատանան իրիս, իբր զի զԱստուած ոչ զիտացին: Զի՞նչ իսկ, ասա ինձ, դիւրագոյն յոչն էութենէ ի գոյն առածիլ, եթէ զլուծեալն յարուցանել զարձեալ: Այլ զի՞նչ ասեն.— Այս անուն, ասէ, նաւակոծութիւն համբերեաց և ընկղմեցաւ. և անկեալ՝ զնա ընկալան ձկունք բազումք, և ձկանցն իւրաքանչիւր անդամ կերալ. ապա սոցուն իսկ այսօցիկ ոմն յայսմ գոգի, իսկ ոմն յայսմ ըմբռնեցաւ և ծախեցաւ ի միւսմէ, և սա յայլմէ զմարմին ունելով պարենացեալ. և այսօցիկ դարձեալ յայլ գաւառս մեռան, և սքա թերևս ի գաղանաց, որք զձկունսն կերան՝ զառն ծախօզ. այսքանու խառնութեանն եղելոյ և ցանութեան՝

բելոյ հովանի լիցի ի վերայ քո. քանզի և որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է և որդի Աստուծոյ կոչեացի (Ղուկ. Ա. 34—35):

Եթէ զփորձ ինչ խնդրէք զՔրիստոսի, որ ինկս ընդձեզ խօսի (Ք. Կոր. ԺԳ 3):

Զի նովաւ հաստատեցաւ ամենայն, որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի, որ երկին և որ ոչն երկին (Կողոս. ա. 16):

Յիսուս Քրիստոս, որ եւ զանձն փրկանս ընդ ամենեցուն (Ա. Տիմ. բ. 6):

Այլ են ոմանք որ թերահաւատեն յիրացն. քանզի չգիտեն զԱստուած: Եւ արդ աղէ, ասա, որ դիւրագոյն իցէ. յոչընչէ՞ ի գոյածել, եթէ զքակտեալն և զլուծեալն միւսանգամ կանգնել: Այլ տես զի՞նչ ասեն.— Այս անուն, ասեն, նաւարեկութիւն կրեաց և ընկղմեցաւ. և իբրև անկաւ՝ ձկունք բազումք կերան զնա. և ի ձկանցն իւրաքանչիւր ոք մի անդամ եկեր. և ի նոցանէն ոմն յայս խորշ և ոմն յայսմ ըմբռնեցաւ, և եղն կերակուրայլոց. և նոցա մարմինքն այլուձ կերակուր անկան. և ի նոցանէ դարձեալ յայլ աշխարհ մեռան,

Թերևս զազանաց գէշ անկան որք զայն ձկունս կերան. և արդ որ այնչափ շփոթք և ցրումն անդամոց գործեցան

իբր դարձեալ յարիցէ այրն. և հողոյն ածող:

Էրձմ իսկ և զայս ասես, ի՞նչ մարդ. և շարս աղճատականս (հանես). որպէս անկարելի դնես... եթէ հեթանոսք իցեն, որ զայս տարակուսանան, առ նոսա բեր ասեմք... Այլք դարձեալ ասեն ի հրոյ ծախիլ և հանդերձիցն յարութիւն եղանել և ոտիցն զգետից:... Ո՞չ տեսանես թղինին, սրչափ ունի... սրչափ ստեղունս և սաղարթս, քանիօնս ոստս, արմատս, այսքան վերունելով և գոգացեալս. այս այսուհետև այսչափս, այսպիսիս ի կորեկանէ յայնմանէ լինի՞ ի վայր արկեցելույ և նորա ապականեցելոյ նախ. և եթ' ոչ փտեսցի և լուծցի, ոչինչ այսօցիկ եղանի: Եւ այդի իսկ այսպէս գեղեցիկս և տեսանելի և ընդունելի՞ ի թնձէն լինի նորա: Ո՞չ ջուր է մի ի վերուստ վայրեկեալն, իբր յայսքանս փոխարկեալ լինի. իբր յեղանի յայսքանս: ... Ինքեան, ասա ինձ, քանզի մօտագոյն, այս սերմնս վայրարկեալս. իբր յայս, իբր ի ձեռս, իբր ի սիրտ, իբր յայսքանս պատկանի և գաղափարի... արդեօք ոչ յոլովագոյն գոլ քեզ թուի սոցայն գոլ տարակուսանք...

(Տիմոթ. էջ 323—4):

զի՞նչ իցէ զի միւսանգամ այրն յարիցէ. և հողն ի մի վայր ածիցէ:

Ընդէ՞ր խօսիս զայդ, ի՞նչ այր դու. և տողս առանցելոց բանից յեռուս և անհնարին իմն զիրան հաշուիս: ... Եթէ հեթանոսք իցեն, որ յայն տարակուսանս մտանիցին, բազում ինչ ունիմք և առ նոսա ասել... Այլք դարձեալ ասեն. ի հրոյ ծախիլ և հանդերձից յարութիւն լինի և կօշկաց...

Չտեսանիցիս զթղինին, որպիսի է բունն, որպիսի շառաւիղքն, սրչափ տերեքն, քանի ոստքն, որպիսի պատեանքն մանր հատուցն գնդակեալք. և որ այնչափ և այնպիսի է, ի կորեկանէ միոց յերկիր անկելոյ ծնանի. և այն զի և նա նախ ապականեսցի. և թէ չլուծանիցի և չփտիցի, և ոչ մի ինչ անտի լինիցի:

Եւ որթն որ այնչափ գեղեցիկ է ի տեսանելի և քաղցր ի ճաշակել, յանպիտան թնահատէ լինի: Ո՞չ ապաքէն մի ջուր ի վերուստ իջեալ. զի՞նչ մարդ յայնչափ փոփոխմունս փոփոխի. զի՞նչ դառնայցէ յայնչափ պէսպէս գունակս... Բայց և ի քեզ իսկ ասա, զի մերձաւորագոյն իսկ է. սերմն որ սերմանի՞ զի՞նչ յայնչափ սրչափ պէսպէս, իբր ի ձեռս, որպէ՞ս ի սիրտն, զի՞նչ յայնչափ անդամս տպաւորի և յօրինի. և չթուեսցի՞ այս քեզ առաւել տարակուսանք (Ոսկ. Գող. հտ. Բ. էջ 445—7):

7) Յարահետեղք իմաստասիրացն և վերահայեցողք չափաբերապէս մակադրութեանց՝ զաստեղս ի լուսնոյ ասեն ընծուիլ և զլուսին արեգակամբ ուռնացեալ և զբոլոր արեգակն յարփայինն երկնէ. հիկէն արփուոյն հեղեալ զծագումն յերկաքանչիւր գօտիսն, և զանձնիւր գօտիսն ի ձեռն արեգական ընծուի՝ ըստ դասի, ըստ բերման, ըստ ժամանակի: Օրինակ իմն, այսպէս և մեք յաւետախաղաց շնորհիւ ցոլացեալ յիմաստայի ճառագայթից հոգևոր հարցն, ըստ հարաւային մասանցն պարսյածեալք՝ յեղեսացւոցն հասանէաք քաղաք. թեթևակի ընդ խորս դիւանին նաւեալ՝ անցաք ի սուրբ տեղիսն երկրպագիլ և մնալ վայրկեան ի Պաղեստինացւոց հրահանգս:

Եւ այնպիսեալ ուղապահեմիւ մտաք յեզիպտոս, յաշխարհն հաճաւատենչ, յանչափից հրաժարեալ ի ցրտոյ և ի տօթոյ, ի հեղեղաց և յերաշտից, ի գեղեցկումն մասին երկրի զգիլն ունելով, ամենազան պտղովք առլցեալ, և անձեռագործ պարբայեալ նեղսիւ, որ ոչ պահպանութիւն միայն, այլ և կերակուր նմա բաւական մատուցանել բնաւորեաց յինքենէ, և առզմամբ տէր գոլ պատահեաց և չորութեան և խոնաւոյ՝ առ երկրին գործաւորութիւն. և զանեղսն ի նմա դիւրածել զետոյն բերիւք՝ հանգիտակ կղզւոյ առատագիւսս առնէ, շուրջ պարունակելով և ընդ ամենայն հոսելով, արոհմամբ երկոտասանից վտակաց: Յորում բարեյարմար մեծն Աղեքսանդրեայ է շինեալ քաղաք բարեժամանակի մէջ ծովուն, և ձեռագործ լիճ կստուցեալ. յորոց օղսցն քաղցրախառնութիւն փչեցեալ, որ ի լճէն բերանք արձակին ի ծովն, և որք ի ծովէքն մօտի ելոյ որ ելանեն ստէպ ստէպ սղոխք օդոյ, անօսրունք այն որ ի ծովէն, և թանձունք որ ի լճէն, որոց խառնուածն առողջագոյն զհաստատութիւն կենաց գործէ:

Սորա առաջի այժմ ոչ անցեալ նստի Պղոտենիոս հինգապատար գազաթամբն, զանսպառ աշխարհ պատելով, այլ Մարկոս աւետարանական քարոզութեամբն. և ոչ վիշապազին դիւցազնակաց զբերգմանք, այլ սրբոցն վայելչանան վկայարանք: Եւ ոչ ի քօան և հինգն Տուրի՝ տօնի աղճատանք, զբեռնարարն պսակելով զբաստս և պաշտօն տանել լորտուաց, և աթերաց առնել բաշխումն, այլ ի մեհաւա՛ն նորին Տուրի՝ յայտնութեանն Տեառն կատարի տօն. զյաղթող նահատակս զովել, և օտարաց առնել ընդունելութիւն և յաղքատս տուրս: Եւ ոչ զոհել չար դիւին Սարապեայ, այլ զՔրիստոսի արիւնն մատուցանել պատարագ. և ոչ խնդրել հրաման պատասխանելոյ ի սանդարամեռէն

Պրոէլիագայ, այլ ուսանել զգօրութիւնս պէսպէս իմաստից ի նորն Պղատոնէ, յիմն ասեմ վարդապետէ, որում ոչ անարժան գտայ աշակերտ, և ոչ անկատար վարժամար ի յանգ ելեալ արուեստից՝ ինքնացայ:

Նաեւ յմիջադայ կամելով՝ յիտալիա բռնութեամբ անկաք հողմոց. և ողջունեալ ի հանգիստ սրբոցն Պետրոսի և Պաւղոսի և ոչ բազում ի Հոռովմայեցւոցն կացեալ քաղաքի, անցանելով ընդ ելլադայ յԱստիկէ, սակավ ինչ մնացաք յԱթէնս: Եւ ի կատարել ձմերայնոյն՝ դ՛մ եղեալ ի Բիզանդիոն ելանել, փափագելով մերոց հայրենեացն (Սոր. Գ. կբ):

8) Տեսաչ ասի և ի վերայ իւրաքանչիւրոյ կերպի՝ ըստ որում ստի. նախ տեսակ արժանի գոռոզութեան: Եւ ասի տեսակ և այս՝ որ ընդ բացատուեալ սեռիւս է, ըստ որում սովորեցաք ասել զմարդ տեսակ կենդանոյ՝ սեռոյր ելոյր կենդանոյր. և սպիտակն գունոյ տեսակ և եռանգիւնին ձևոյ տեսակ: Եւ եթէ գտնն բացատուելով՝ զտեսակն յիշեցաք, ասելով զյոլովիցն և զտարբերեցելոց տեսակաւ ի ներում գինչէն ստորոգեալ, և զտեսակն ասեմք զայն՝ որ ընդ բացատուեալ սեռիւն է: Գիտել պարտ է, վասն զի սեռն՝ որումն է սեռ, տեսակն՝ որումն է տեսակ, երկաքանչիւր երկաքանչիւրոյր՝ հարկ է և ներկոցունց բանս վարիլ երկոքումբք: (Ներած. Պորփիրի, էջ 230):

9) Արդ են ներ ձայնոջքն ներ անձինցն ախտիցն նշանակք, և զբիցեալքն՝ ներ ձայնոջացն. և որպէս գիրքն ոչ ամենեցուն նոյնք, և ոչ ձայնքն նոյնք: Բայց որոց այսոքիկ նշանակք առաջնոցն՝ սոքին ամենեցուն նոյն կիրք անձինն. և որոց այսոքիկ նմանութիւնք՝ իրք ահա սոքա. արդ յաղագս այսոցիկ ասացեալ է ներ յագագս ոգւոյն՝ քանզի այլոյ իրի է: (Պիրիարմ. 461):

10) Բայ է որ առնշանակէ ամանակ, որոյ մասն ոչինչ նշանակէ գատ, և է միշտ գայլմէց ասիցելոցն նշանակ: Եւ ասեմ, զի առնշանակէ ամանակ. որզան՝ ողջութիւն՝ անուն, իսկ ողջ է՝ բայ. քանզի առնշանակէ գայժմ դոյն. և միշտ, գայլմէց ասիցելոցն նշանակէ. որկէն՝ ենթակայից և կամ, նենթակայոջաց ասիցելոցն է: (Արիստ. յգ. մեկն. 463):

11) Բայց այս ոչ գնոյն նշանակէ և ոչ համանգամայն ի հարկէ. և երեւի է, զի և մու բացատութիւն՝ ըստ միոյ ստորասութեան. քանզի զսոյն պարտ է բացասոցել զբացասութիւն, զոր ստորասեացն ստորասութիւն. և ապոսմնել. կամ ըստ իւրա-

քանչիւրցն ումեքէ. կամ ապ ըստ բոլորէցն իմեքէ. կամ իբր ըստ բոլորէ, և ոչ գրորդէ: Եւ ասեմ, որզան՝ իք Սոկրատէս սպիտակ, ոչ է Սակրատէս սպիտակ. և եթէ այլ ինչ, կամ ապ այլոյ, զսոյն ոչ հակակայ, ալ եղիցի նորա միւս ևսն, ամէնում մարդ սպիտակ՝ ոչն ամէն մարդ սպիտակ, և ումեմն ոմն մարդ սպիտակ՝ ոչն ոք մարդ սպիտակ, իսկ իքում մարդ սպիտակ՝ ոչ իք մարդ սպիտակ: Արդ զի մու բացասութիւն, մում ստորասութեան հակակայէ՝ բացերևակի. (Անդ, էջ 468):

Հունարան հայերենի հորինվածութիւնը նկարագրելուց հետո, մնում է մեզ քննել թե արդյոք ինչ աղբյուրներէց օգտվելով կազմեցին կամ հնարեցին հունարանները իրենց այս նորելակ հայերենը, և թէ որքան ընդունելութիւն գտավ նա:

Ըստ ծագման հունարան նախամասնիկները կարելի է բաժանել 5 տեսակի. 1) նրանք, որ պարզապես հայերեն բառեր են. ինչ. առ (նախգիր), յար (կից), բաց (ի բացի, բացեայ), գեր (գեր ի վերոյ). 2) նրանք՝ որ հայերեն սովորական մի բառի արմատն են իրոք կամ ենթադրաբար. ինչ. փոխ (փոխել, փոխանակ), հակ (հակիլ, հակառակ), արտ (արտաքս, արտաքին, հմմտ. նաև արտ «վարած կամ վարելիք հող», որ նույն բառն է. հմմտ. լիթ. laũkas հող և laukė զուրսը, ասոր. barā արտ և արտաքս), ներ (ներքին, ներքս, ներքինի), բաղ (բաղբաղաբ «կցկցանք, յերկւրանք», զբաղել «մի բանի յարիլ, պարապիլ»), ստոր (ի ստորէ Սղ. ԺԳ. 37, Նորազիւտ Բ. մնաց. Ի. 6, ստորին, ստորենայք, ստորոտ), շաղ (շաղիլ, շաղապատել), պար (պար «կլոր պար», պար առնուլ, պարոյկ, պարոյր, պարուրել), տար (տար աշխարհ «հեռու երկիր», տարաշխարհիկ «պանդուխտ», տարաղէմ «հեռագնաց», տարակաց «հեռու կեցած», տարազիր, տարածամ, տարակարծ, տարապայման, տարապարտ, որոնք մեարդպան շրջանի հայերեն բառեր են և որոնցից դեպի տար «տարբեր» մասնիկը մի քայլ է միայն մնում):

3) Մի քանիսը հայերեն սովորական ձևեր են՝ ձևով կամ նշանակութեամբ փոփոխված. ինչ. ենք (ընդ «տակը»), փաղ (նույն ընդ բաղ), հոմ (=համ, որ փոխառյալ է իրան. ham մասնիկից. հունարան հեղինակները հունարեն ὅμο մասնիկին համաձայն համ ծանոթ ձևը դարձրել են հոմ), վեր (ի վեր «վերև» բառն է, որին տրվել է «նորից, վերստին, դարձյալ, կրկին» նշանակութիւնները՝ հանելով հ. վերստին մեարդպան բառից կամ հետեւելով հունարենին, ուր ἀνα իբր մակրայ նշանակում է «վեր», բարձրը», իսկ իբրև մասնիկ «յետս, հակառակ, նորից»), շար (հ. շարել «կարգել, դասել» բայից, արմատը շար, շարք՝ որին տրվել է «կից, յար, միասին» նշանակութիւնը), ապ (հ. ապ «բացասական մասնիկն է, որ պարսկական ծագում ունի և որ գտնվում է ապալեպ, ապենիազ, ապերասան, ապախուրել և այլն բառերի մեջ. պատահաբար նման է հ. ապ «հետո» բառի հետ, ինչպես և հուն. ἀπὸ «հեռու, բաց» և այլն, որ իբր մասնիկ նշանակում է «ժխտում, բացասութիւն, կատարում, վերադարձ և այլն»: Վերջապես փար նույն է պար ձևի հետ, ինչպես սոյնց են տալիս այս մասնիկով կազմված մի քանի բառերը, որոնք են փարաբառնալ, փարաբարձութիւն, փարագրական, փարաղրել, փարաղրութիւն, որոնք ունինք նաև պարաբառնալ և այլն ձևերով):

4) Մակ «վրա» մասնիկը, իբրև առանձին բառ գտնում ենք թուրքերենի մեջ մաք «վրա, ի վերայ» ձևով, որով կազմված են զանազան ածանցներ:

5) Բոլորովին անծանոթ են դեր և տրամ մասնիկները:

Քերականական ձևերի մեջ մի քանիսի ծագումը շատ պարզ է. այսպես երկակի ի ու մասնիկը առնված է երկու բառի վերջավորութիւնից, իգականի է մասնիկը (սէ, նէ) հանված է մի խումբ իգական հատուկ և հասարակ անունների ծայրից (Գայիանէ, Հոխիսիմէ, սերաստէ), արական եզ փոխառյալ է կովկասյան լեզուներից (հմմտ. չերքեզ. շՅ մեկ, կաբարդին շՅ մեկ, yizako միակ, եզակի), չերքեզ մու հիշեցնում է արդի գու. Ազլ. մույն «մեկ», մոնք, դոնք, նոնք հիշեցնում են արդի մերոնք, ձերոնք, անոնք ձևերը, հոլովական ոջ, ոյր, ում մասնիկները սովորական են մեարդպան հայերենի մեջ որոշ դեպքերում (հմմտ. տեղուջ, կղզուջ, սորա, այսր, այսորիկ, այլում, միւսում), ըն կամ ց եթե հ. ընդ բառը չէ, հունարեն εν մասնիկն է, սերկ «այսօր» բառը գտնում ենք այսօր Հավարիկի բարբառի մեջ իսէկի, իսէրկի «այսօր» ձևով, բայերի է նախահավելվածը սովորական է հին հայերենի միավանկ բայաձևերի մեջ (հետ, էած, էօծ) և նույն է հն. ց նույնիմաստ նախահավելվածի հետ, կրավորականի կոփիւր, բերիւր և այլն ձևը այսօր էլ գտնում ենք Կարնո բարբառի մեջ կիմիւր, կուտիւր, կեփիւր և այլն ձևերով):

Այս բոլորից հետևում է, որ հունարանների նորմուծութեանց մեծագույն մասը հանված է հայերենի արդեն ունեցած

տարրերից, որոնք ձևավորված են համեմատ հունարենի, երբեմն նույն իսկ ձայնով կամ հնչումով հարմարեցնելով նրան: Մեծամասնության օրինակից կարող ենք հետևեցնել, որ ֆուսայալ անծանոթ ձևերն էլ քաղված են հայերենից և ոչինչ չկա բոլորովին ինքնահնար: Ինքնահնար է միայն այդ տարրերի գործադրության ձևն ու եղանակը, որ հայերենի մեջ ոչ միայն գոյություն ունեցած չէ, այլ և նույն իսկ հակառակ է նրա ոգուն:

Վերջին հանգամանքը գուշակել է տալիս այն՝ թե ինչ ընդունելություն գտավ հունարան հայերենը մեր մեջ: Լեզուների ընդհանուր փորձից հայտնի է, որ քերականություն ստեղծել անկարելի է. այդ հողի վրա անհատական ջանքերը արժեք չունեն. նրանք միշտ էլ բախվել են ժողովրդի կամ հանրության ժայռ անտարբերության և ուշ կամ կանուխ ջնջվել են: Այսպես և հունարան հայերենը: Նույն իսկ այն ժամանակ, երբ հունարան հայերենը ապրում էր իր ամենափայլուն շրջանը, սովորական լեզուն չի դադարել գործելուց ոչ միայն ժողովրդի մեջ, ուր հունարան հայերենի ընդունելություն մասին խոսք չի կարող լինել, այլ և գրագետների շրջանում, որոնք սկսած Ե դարից մինչև ԺԳ դարը շարունակել են հետմետրոպոլիտան հայերենը հունարան դպրոցի հետ կողք կողքի: Հունարան հայերենը մնացել է ուրեմն առանձին մի խմբակի ուսումնական լեզուն՝ լայն խավերի համար օտար, անհասկանալի և անընդունելի:

Հայաստանի իր մասում արդյոք առաջացավ այս լեզուն: Meillet, Altarm. elementarbuch էջ 4 ասում է, թե հունարան հայերենի մեջ գտնվում են հյուս. արևելյան հայերենի քերականության առանձնահատկություններից մի քանիսը: Սրանից հետևում է, որ հունարան հայերենը Հայաստանի հյուս. արևելյան կողմը (Արցախ, Սիւնիք, Փայտակարան) ձևացավ: Բայց Meillet իր այս ասածը հաստատելու համար ոչ մի օրինակ կամ ապացույց մեջ չի բերում: Ես կարծում եմ թե ընդհակառակը այդ լեզուն կազմված էր Հայաստանի հյուս. արևմտյան շրջանում (Տայք և այլն), ուր կար հունասեր և հունամիտ հայություն: Եզ «մեկ», մակ «վրայ», սերկեան «այսօր», կրավ. բերիւր և այլ ձևերը հյուսիս-արևմուտքն են մատնանշում:

Մինչև Երբ տեղի հունարան դպրոցի գոյությունը: Ըստ Մանանդյանի, հունարան դպրոցը տևում է մինչև է դարի վերջը. նա անշուշտ Թ դարից այս կողմ չի գալիս, իսկ ԺԲ դարում ջնջվում է իսպառ: Այսօր հունարան դպրոցի գործերը հնություն

կարգն են անցած և կազմում են միայն բանասիրական հետաքրքրություն նյութ: Նրա հորինած քերականությունը ամբողջովին ջնջված է, պահելով միայն մի հետք, այն է ն է իգական դերանունը, որ իր ներս սեռականի հետ երբեմն գործածվում է բանաստեղծների լեզվի մեջ: Գալով բառարանական ատաղձին, կիրառության տեսակետից կարող ենք բաժանել հինգ կարգի.—

Ա.— Այն բառերը, որոնք չունենին իրենց համազորը մետրոպոլիտան հայերենում, լրացնում էին լեզվի թերի կողմերը, հետևաբար գտան առանձին ընդունելություն և այսօր էլ սովորական գործածություն ունին հայերենի մեջ: Այսպես են օրինակ՝ ենթակայ, տրամաբանել, տրամաբանութիւն, տրամագիծ, ապաքարց, առզանութիւն, մակբայ և այլ բառերը: Այս կարգի բառերը ոչ միայն ընդունված են արդի հայերենի մեջ, այլ և նրանց օրինակով կազմվել են բազմաթիվ նման ձևեր. ինչ. առարկայ, յարաբերութիւն, արտասպութիւն, պարբերական, շարունակութիւն, արտահագուստ, արտածամեայ, դերասան, դերակատար և այլ հարավոր բառեր, որոնք կազմում են մեր արդի լեզվի հարստությունը, և առանց որոնց մեր գիտական լեզուն շատ տկար ու աղքատ պիտի լիներ: Այստեղ է հունարան դպրոցի արժանիքը:

Բ.— Այն բառերը, որոնց համազորները թեև կային մետրոպոլիտան հայերենի մեջ, բայց չունենին պահանջված ուժը և կամ այնպես համարվեցին և մրցման ժամանակ տեղի տալով հունարան ձևերին՝ խափանվեցին. օր՝

ապացույց	ընծայութիւն
բողադրել	յողել
եզակի	միաւոր
յոզնակի	բազմաւոր
շաղկապ	զող
ներկայ	առաջիկայ
ներգործել	ազդել, յաջողել
ստորագրութիւն	ձեռնագիր
տեսակ	ազգ
մականուն	անուն յորջորջանաց

Այս կարգի բառերն էլ սովորական գործածություն ունին արդի հայերենի մեջ:

Գ.— Այն բառերը, որոնք իրենց համազորները ունենին մետրոպոլիտան հայերենի մեջ, բայց չունենին պահանջված ուժը և կամ այնպես համարվեցին և մրցման ժամանակ տեղի տալով հունարան ձևերին՝ խափանվեցին. օր՝

բոսպան հայերենի մեջ և նրանց հետ միասին և հավասար առ-
տիճանի վրա գործածվեցին և այժմ էլ գործածվում են օր՝

ներհակ—հակառակ
վերձանել—ընթերցանութիւն
ստորագրութիւն—նկարագրութիւն

Դ.— Այն բառերը, որոնք ունենին իրենց համագործնորդ մե-
բոսպան հայերենում, բոլորովին ավելորդ և անճաշակ նորարա-
նություններ էին, ոչ մի պահանջ չէին լրացնում, հետևաբար
թե՛ հին հայերենում, և թե՛ արդի լեզվի մեջ ընդունելություն
չեն գտել. օր՝

արտակացութիւն	ἔκστασις	զարմանք, հիացում
շարագիր	συγγραφεύς	մատենագիր
յարահետևող	παραχόλουθος	արբանեակ, աշակերտ
վաղորդայնագրեցիկ	ἑωσφόρος	արուսեակ
գերասպարել	ὑπερ-ασπίζω	պահպանել, խնամել
վերագրիսել	ἀναχομίζω	նահանջել
ններամիտ	ε ν-voos	խելացի, իմաստուն
ստորախշտեցուցանել	κατα-χοιμάω	հանդարտել

Ե.— Այն բառերը, որոնք չունենին իրենց համագործնորդ հա-
յերենում, թեև լրացնում էին իրենց ժամանակի գիտական պա-
հանջները, բայց հետո ավելորդ դարձան և իրենց անճոռնի
կազմության պատճառով էլ բոլորովին ջնջվեցին. օր՝

մակեռանկիւն—վեցանկիւն
մակաստկութիւն—առաւել սաստկութիւն
մակագոյեղուտ—գյատկութիւն բնական կամ պատահական՝
սեպհականեալ քան զայլ պատահմունս այլայլակս:

ներստորադրական—գորինչ ենթադրի իբրև ստոյգ առժամն:
Այստեղ վերջանում է հունարան հայերենի պատմություն-
նը: Ընթերցողներին համար հետաքրքրական պիտի լինի, ան-
շուշտ, իմանալ, որ նմանօրինակ մի շարժում տեղի է ունեցել
նաև եվրոպական մի նշանավոր լեզվի՝ ֆրանսերենի մեջ և այն
էլ շատ ավելի նոր ժամանակները: ԺՁ դարում դասական (հունյն
և լատին) լեզուների և գրականության ուսումը այնպես էր տա-
րածվիլ եվրոպայում, որ դպրոցական ծրագրի ներքին գրեթե ամ-
բողջ մասն էր կազմում: Ուսումնականներն ու գրագետները հիա-
ցած էին հունյն և լատին գրողների լեզվի ճոթությամբ, փայլով,
պերճությամբ և արվեստով: Շատերը ցանկանում էին այդ

լեզուների գեղեցկությունը փոխադրել և իրենց լեզվի մեջ:
Առաջին անգամ Joachim du Bellay 1548 թվին արձակեց իր
նշանավոր մանիֆեստը, որ կոչվում է Défense et illustration
de la langue française: Այստեղ հեղինակը առաջարկում է մի
նոր ծրագիր, այն է՝ ուղղակի ֆրանսերենի մեջ փոխադրել
հունարեն ու լատիններեն բառերը և ստեղծել մի անգամից մի
նոր բանաստեղծական լեզու: «Մեր նախնիք մեզ թողել են,—
ասում է նա,—մի աղքատ ու մերկ լեզու. նա պետք ունի զար-
դարվելու և այդ զարդը պիտի լինի ուրիշների փետուրները:
Դեհ, ֆրանսիացիք, քայլեցեք քաջաբար հոգովնական այն փա-
ռավոր քաղաքը և նրա կողոպուտներով զարդարեցեք ձեր տա-
ճարներն ու խորանները»:

Այս ծրագիրը գործադրության դրավ Ronsard (1524—85),
նա հիմնեց մի նոր դպրոց, որի սկզբունքն էր

et pouvoir en français parler grec et latin

ֆրանսերեն լեզուն վերածել հունարենի և լատիններենի: Այս
նպատակով բազմաթիվ հարյուրավոր հունարեն և լատիններեն
ուսումնական բառեր ֆրանսիական մի վերջավորությամբ օժ-
տելով՝ դարձրեց ֆրանսերեն: Ronsard-ի աշակերտները ավելի
առաջ տարին գործը: Նրանք չբավականացան լեզվի մեջ նոր
բառեր միայն մտցնելով, այլև ուղեցին վերակազմել ֆրան-
սերենի հին ատաղձը լատինական նոր կերպարանքով: Այսպես՝
ֆրանսերեն ասում են, օր՝ oiseux «դատարկապորտ», venger
«վրեժ լուծել», page «էջ», parfait «կատարյալ», pélerin «ուխ-
տավոր» և այլն: Վերանորոգիչները ջնջեցին այս բառերը և
նրանց տեղ հնարեցին otieux, vindiquer, pagine, perfect, pe-
grin և այլն, կաղապարելով այդ բառերը լատ. otiosus, vin-
dicare, pagina, perfectus, peregrinus հոմանիշների վրա, որոնք
նրանց մայր ձևերն են:

Ի՞նչ ընդունելություն գտավ այս նորամուծությունը Ֆրան-
սիայում: Ուսումնականների և գրագետների շրջանը հիացած
էր նրանով. ընդունելությունը ուրիշն շատ սրտազին էր, որով-
հետև նրանք բոլորն էլ արդեն հունարեն և լատիններեն սովորում
էին, և ֆրանսերենի այս նոր կերպարանքը ոչ միայն խորթ
չէր իրենց լատինավարժ ականջներին, այլև տալիս էր իրենց
ուսմիկից բարձր մի վիճակ: Իսկ ժողովուրդը... նա բոլորովին
անտեղյակ էր անցուղարձից և ամեն ինչ թողել էր ուսումնա-

կանները քմահաճույքին: Նա ոչինչ չէր կարող հասկանալ այդ լեզվից:

Այս վիճակը տևեց մինչև Malherbe (1555—1628), Նա էր, որ սկսեց հակառակ շարժումը: Նա վտարեց լեզվից բոլոր այս արհեստական օտարաձև նորարանությունները, պահելով միայն ժողովրդական հին ձևերը և բացառաբար, նորարանություններից մի խումբ (Brachet, Grammaire historique de la langue française. Paris, էջ 57—62):

Երևույթը նույնն է մեր հունարանության հետ: Այստեղ էլ կեղծ քերականությունը ամբողջապես և բառարանը մեծով մասամբ վտարված են, պահվում են միայն այն կարևոր բաները, որոնք անհրաժեշտ են արդի գիտական և փիլիսոփայական լեզվին:

Գ Լ Ո Ւ Խ Ի Ա

ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒՅՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՍ

Մինչև է դարը արաբները ընդհանուր պատմության համար աննշան մի ժողովուրդ էին, որ խումբ-խումբ ապրում էին Արաբիայի տաք սնապատներում՝ կիսավայրենի դրության մեջ: 611 թվին Մուհամմեդը սկսեց քարոզել իսլամը, և արաբների բաժան-բաժան ցեղերը կրոնի միությամբ միացած ու զորացած՝ դուրս եկան աշխարհներ նվաճելու (632): Ժամանակը չափազանց բարեպատեհ էր, հույները և պարսիկները իրար ջարդելով ուժասպառ էին եղած. քրիստոնեություն մեջ երկպառակություն էր տիրում, և արաբների թարմ ուժերի առաջխաղացման համար խոշոր արգելքներ չկային. ուստի կարծվածից էլ ավելի շուտ եղան նվաճումները: Գարժ ժամանակում նվաճվեցին Ասորիքը, Պաղեստինը, Եգիպտոսը, Պարսկաստանը, որից հետո էլ՝ Հայաստանը:

Առաջին արաբական բանակը ոտք կոխեց Հայաստան 640 թվին և մինչև Դվին առաջացավ: Այնուհետև սկսվեց պատերազմների մի երկար շարք արաբների և հույների միջև՝ Հայաստանի տիրապետության համար: 53 տարի տևեցին այդ պատերազմները, և վերջապես՝ 693 թվին արաբները պաշտոնապես տեղ դարձան Հայաստանի և հասան մինչև Գովկասյան լեռնաշղթան:

Քանիցս անգամ հայերը ապստամբեցին արաբների դեմ, թոթափելու համար հպատակության լուծը, բայց այդ ապստամբությունները բոլորն էլ անհաջող անցան և վերջիվերջո նպաստեցին միայն մի բանի, այն է՝ իրենց լուծը ավելի ծանրացնելու: Հայերը վերջապես համոզվեցին դրանում և այնուհետև լքված՝ տարան հպատակության լուծը մինչև թ դար:

Թ դարից սկսում է արաբական պետության քայքայումը, որի պատճառներն էին նախ՝ պետության ընդարձակածավալ տարածությունը, որ մեկ ձեռքի տակ կառավարել անհնար էր,

երկրորդ՝ արար իշխանների և ամիրապետների մեղկութունը, որ դիզված անբավ հարստության արդյունքն էր, երրորդ՝ կրոնական բազմաթիվ հերձվածները, որոնք ձևացան մահմեդականության մեջ, չորրորդ՝ պետութունը կազմող ցեղերի և ժողովուրդների բազմազանութունը և հինգերորդ՝ յուրաքանչյուր երկրի վրա նշանակված էմիրների անջատական ձգտումները: Ապստամբության ընդհանուր ոգին սկսում է տիրել արաբական պետության ոչ միայն քրիստոնյա, այլև մանավանդ մահմեդական դարձած ժողովուրդների մեջ: Այսպես՝ Աֆրիկայի արաբները կազմում են մասնավոր խալիֆայութուններ. Խորասանում հիմնվում է պարսկական Թահիրի պետութունը (820), Աֆղանըստանում՝ Սաֆֆարիների պետութունը, որ Պարսկաստանի մեծ մասին տեր է դառնում: Նույն ժամանակ Հայաստանում էլ Աշոտ Ա ճարպիկ քաղաքականությամբ ստանում է արաբներից Թագավորական տիրույթս և հիմնում է Բագրատունյաց Թագավորութունը (885): Այս Թագավորութունը սկզբում հարկատու էր արաբներին, որոնց կողմից նշանակված մի ոստիկան էլ նստում էր դեռ Դվինում. բայց քիչ-քիչ այս կախման կետերն էլ ջնջվեցին, և Հայաստանը կատարյալ անկախութուն ձեռք բերեց Աշոտի անմիջական հաջորդների օրով:

Հայերը երկրորդ անգամ հարաբերության մտան արաբների հետ ժի դարից սկսած: Արծրունյաց և Բագրատունյաց Թագավորության անկման ժամանակ շատ հայեր գաղթեցին Կիլիկիա և քրեյով տեղական հույներին՝ հիմնեցին Կիլիկիայի փոքրիկ իշխանութունը, որ Լևոն Բ-ի ժամանակ մեծ ու զորեղ Թագավորութուն դարձավ: Առաջանալով դեպի Եփրատ և դեպի Ասորիքի հյուսիսային կողմը՝ բնականաբար հայերը շփման մեջ պիտի մտնեին Հալբերի և Դամասկոսի արաբ սուլթանութունների հետ: Շուտով սկսվեց թշնամութունը հայ և արաբական իշխանութունների միջև. Հալբերի, Դամասկոսի և Եգիպտոսի սուլթանները քանիցս անգամ արշավեցին Կիլիկիա. հայերը դաշնակցելով Թաթարների հետ՝ հաջողությամբ դիմադրեցին արաբներին և մինչև անգամ նվաճեցին Հալբերը, Դամասկոսը, Երուսաղեմը և մտադիր էին նույնիսկ Եգիպտոս արշավելու: Սակայն Թաթարների դաշնակցութունը կես դար միայն տևեց. և 1302 թվին Թաթարները մահմեդականութուն ընդունելով, բնականաբար այդ դաշնակցութունն էլ լուծվեց: Հայոց նախկին դաշնակիցները դարձան թշնամի և արաբների հետ միացած՝

հարձակվեցին Կիլիկիայի վրա: Հայերը հետզհետե թուլացան, Կիլիկիան մաս-մաս նվաճվեց և վերջապես՝ 1375 թվին, ամբողջովին ընկավ Եգիպտոսի արաբների լծի տակ: Այնուհետև Կիլիկիան մնաց արաբ, թուրքմեն և թուրք իշխանութունների ձեռքը, մինչև 1517 թիվը, երբ Ասորիքի, Պաղեստինի և Եգիպտոսի հետ Օսմանցոց ձեռքն անցավ:

Հայ-արաբական հարաբերությանց այս համառոտ ամփոփումից երևում է, որ այդ հարաբերութունները պետք է բաժանել երկու մասի. առաջինը՝ արաբական տիրապետութունը բուն Հայաստանում, որ տևում է է դարի կիսից մինչև ժ դար (250 տարի) և երկրորդ՝ Կիլիկիայում և Ասորիքում, որ տևում է զանազան հանգամանքների տակ ժի դարից մինչև այժմ, քանի որ այսօր էլ հայերը Ասորիքում արաբական տիրապետության տակ լինելով՝ ապրում են արաբների հետ ամենօրյա հարաբերության մեջ: Ըստ այսմ էլ արաբական ազդեցութունը հայրենի վրա պետք է քննել երկու դիրքից՝ բուն Հայաստանում և Կիլիկիայում ու Ասորիքում:

Թեև արաբները դուրս էին եկել մարզաբեի պատվերի համաձայն անհավատներին դարձի բերելու, բայց իսլամի քաղաքութունը տեղի ունեցավ և հաջողվեց միայն կռապաշտ ու կրակապաշտ երկրների մեջ: Այսպես՝ Պարսկաստան, Աֆղանստան, Բելուջիստան, Հնդկաստան, Թուրքեստան, Կովկասի լեռնականները և Աֆրիկայի որոշ ցեղեր ընդունեցին իսլամութունը և իսլամության հետ արաբական գիրը, գրականութունը և քաղաքակրթութունը: Մեր հարևան Պարսկաստանում այնպես բարձր հաջողվեց իսլամը, որ կրակապաշտների փոքր մի խումբ միայն կարողացավ փախչել ու հաստատվել Հնդկաստանում, ուր մինչև այսօր շարունակում են իրենց գոյութունը՝ Փարսի անունով: Մնացյալ ամբողջ ժողովուրդը մահմեդական դարձավ: Պարսիկները մահմեդական դառնալով՝ իրենց հին կուլտուրային թշնամի դարձան և ոչ միայն ջնջեցին ատրուշանները, այլև ամբողջ իրենց գրականութունը, գրքերը և նույնիսկ պարսկական (պահլավական) գիրը: Նրանք ընդունեցին արաբական տառերը, բազմաթիվ փոխառութուններ արաբերեն լեզվից, այնպես որ պարսկերենը լի է արաբերեն բառերով:

Քրիստոնյա ժողովուրդները այսպես չեղան. արաբները ընդհանրապես կրոնական հալածանք չհանեցին քրիստոնյաների

դեմ. կատարված դեպքերը մասնակի բնույթ էին կրում. այս պատճառով էլ այդ ժողովուրդները քրիստոնեական կրոնի հետ միասին և նրա պատճառով կարողացան պահել իրենց լեզուն, գիրը, գրականությունը և քաղաքակրթությունը: Միայն այն քրիստոնյա երկրները, ուր արաբները կամ ընդհանրապես մահմեդականները հոծ բազմությամբ լցվեցին, չկարողացան դիմանալ և վերջ ի վերջո ամբողջապես արաբացան. այսպես՝ Պաղեստինը, Ասորիքը, Միջագետքը և Եգիպտոսը:

Հայաստանը պատկանում է Ա կարգի երկրների թվին, այսինքն՝ նրանց, որոնք ընդհանրապես գերծ մնալով կրոնական խոշոր հալածանքից և չունենալով իրենց մեջ արաբական խոշոր գաղթականություն, կարողացան պահպանել իրենց լեզուն, գիրը և գրականությունը: 250 տարիների այն շրջանը, երբ Հայաստանը մնաց արաբական իշխանության տակ, իր տնտեսությամբ բավական կարճ է հոռոմեականից և շատ ավելի կարճ պարսկականից: Որակի տեսակետից էլ նա շատ հետ է ոչ միայն պարսկականից, այլև ասորականից ու հունականից: Քրիստոնեությունից առաջ հայերը կրոնակից էին պարսիկներին. քրիստոնեության ներմուծությամբ նրանք կրոնակից դարձան ասորիներին և հույներին, նրանց կուլտուրական ազդեցությունը, գրին ու գրականության ենթակա էին երկար ժամանակ, մանավանդ, երբ սեփական գիր և գրականություն չունեին: Մինչդեռ արաբների ժամանակ այդպես չէր:

Իհարկե, հայերը բացարձակապես չեզոքացած չէին արաբներից. Հայաստանի մեջ կար արաբական իշխանություն և բանակ, զանազան քաղաքներում գտնվում էր արաբ գաղթականություն, այսպես՝ Խլաթի շրջանում, Դվինում, ավելի հյուսիս՝ Պարտավում, ուր, ըստ արաբ աշխարհագիրների, տեղական ընթացիկ լեզուներից մեկն էլ արաբերենն էր: Շատ հայեր գիտեին արաբերեն լեզուն, հատկապես նրանք, որ Բաղդատ ու Դամասկոս մի քանի տարի գերի մնալուց ու նույնիսկ հավատքը ուրանալուց հետո դարձել էին Հայաստան: Օր. Բագարատ Բագրատունի իշխանը, որ 835 թվին էլ-Մոտասսեմ ամիրապետից իշխանաց իշխան էր կարգվում Հայաստանում, այնպես էր տիրապետում արաբերեն լեզվին, որ նանա ասորի վարդապետը նրա խնդրանք ընծայում էր իրեն Հովհաննու ավետարանի մեկնու-

թյունը արաբերեն լեզվով, որ ինքն էր գրել նախ ասորերեն լեզվով և հետո Բագարատի համար վերածել արաբերենի*):

Այս բոլորով հանդերձ հայոց կրոնական տարբերությունը, հայերեն գրի ու գրականության գոյությունը և ազգային դիտակցության լայն ըմբռնումը մի մի թումբ դարձան արաբական ազդեցության առաջ և հայերենը չազդվեց նրանից այնչափով, որ ազդվել է մյուսներից: Չունենալով որևէ գրվածք այս շրջանի ժողովրդական լեզվով, մենք իսկապես չգիտենք, թե հասարակ ժողովրդի լեզուն որչափով ազդվել էր արաբերենից, Բայց գիտենք գոնե, որ դրական լեզվի վրա այդ ազդեցությունը չափազանց աննշան է: Այսպես Հովհաննես Ե կաթողիկոսը, որ թղարու կեսից մինչև Ժ դարու առաջին քառորդի վերջն ապրած հեղինակ է (մ. 929 թ.) և որ մոտիկ հարաբերություններ ուներ արաբ իշխանավորների հետ, իր ամբողջ պատմության մեջ (տպ. Երուսաղեմ 1867, էջ 457) գործ է ածում միմիայն երեք արաբական բառ. — սելամ ալէք (էջ 123)՝ իբր Ոգրայ արաբ ոստիկանի բերանից, կուրան (էջ 421) և մակուրան կուրան (էջ 314), որ թվի թե արաբերեն է. նույնպես նանա Ասորու Հովհաննու ավետարանի մեկնության մեջ, որ Բագարատ Բագրատունու խընդրանք նախ ասորերեն գրել է հեղինակը, հետո թարգմանել արաբերենի և արաբերենից էլ վերածվել հայերենի (Թ դար), տպ. Վենետ. 1920, ծայրից ծայր ոչ մի բառ չկա արաբերենից փոխառյալ: Ըստ Հյուբշմանի (Արաբական փոխառեալ բառեր, թրգմ. Տաշյան, էջ 49—50) «Սերեոսը ոչ մի արաբերեն բառ չունի՝ բացի անուններից: Անոնդ պատմիչը բացի անուններից և տիտղոսներից (ամիրալմուսնիք) միայն 2 բառ ունի. — Կուռայք (Կուրան ընթերցող) և Փուրկան (Կուրան), երկուսն էլ արաբական կյանքի բառեր: Սակավաթիվ բառեր ունին նաև Թ—ԺԱ դարերի մատենագիրները: Պետք է ընդունել սակայն, որ հասարակ ժողովրդի լեզուն սրանից շատ ավելի փոխառություններ ուներ:

Արաբերեն լեզվի ազդեցությունը գրական հայերենի վրա երևում է ուրիշ կողմից: Բանասերները արաբական ազդեցության են վերագրում այն ուղուցիկ, ճամբարտակ ոճը որ երևում է նույն շրջանի հայ հեղինակների գրությունաց մեջ: Իբրև օրինակ բերենք Հովհաննես կաթողիկոսի պատմությանից երկու հատված:

*) Նանայ ասորի, էջ 6—7:

Ի վիճի երկրաշարժը (զլ. 18)

Չայտու ժամանակաւ անագին իմն յեղակարծում ժամուսաստիկ շարժմանց եղելոց ի գիշերի ի Դուին քաղաքի, բազում սասանումն և սարսափումն և դղրումն և կործանումն զրնակչօք քաղաքին զեղեալ, հիմն ի վեր տապալէր: Վասն զի առնասարակ ի վայր փլուզեալ զպատուար պարսպացն և զապարանս գլխաւորացն և զտունս ուսմկացն, իբրև գերիզուտ վայրս առապարաց յական թօթափել տեսանիւր: Այլ և զաստուածաշէն եկեղեցիս կաթողիկոսարանին և զայլ ևս հաստահեղոյս վկայարանս դղրեալ քանդեալ աւերեալ ի վայր հոսէին, որ գրեթէ իբրև զփայարս վիմուտս դերբկաց սարսափելի տեսողացն երևիւր: Այլ և հեղձամղձուկ յարկածածուկ հողաթաւալ հողահեղձոյց սատակումն դիակոյտ բազմութեան, որ կարծրագոյն քարեղէն և անկարեկիր միտս էր ստացեալ՝ յարզարէր զնա ի բազում ողբս և յարտօրաթոր կականմունս: Թողում ասել զագգակիցս և զկարեկիցս և զլծակից հարազատութիւն մարդկան, որոց կակնումն և ողբումն և աշխարումն գուժից ճշոյ և կանչոյ և կառանչոյ, և աղիողորմ ձայնք երգեցիկ գուսանաց և սևազգեաց կանանց և արանց վշտահար հեծությամբ սգացելոց՝ մինչև յերկինս բարձրացեալ հասանէր: Իսկ զբազմութիւն դիականցն ոչ բաւեալ ալ զերեզմանացն, զբազումս ի վինս և ի խորափրտս և ի դարափլակս ընկեցեալ լինէին: Եւ այսպէս ահ բարկութեանն անափետ զամենեսեան առնէր, պաշարմամբ զգածեալ զմնացեալսն:

Նուիրաբերութիւնք Յուսուփայ

Եւ իբրև ի բաց եղաւ ձմեռնային ձիւնախաղաղ սառնամանեաց ցրտութիւնն, և գարնանային հարաւահողմն շնչեաց՝ զտեղին փոխարեբեաց, ապա ոստիկանն Յուսուփ բազում երկալարս սրավարս սօսս և անապարանոցս պատրաստեալ՝ բազմազան պճնայարմար զարդուք և զինուք ոսկեսանձ և ոսկենկար պաճուճանօք, այլ և թագ ևս յոսկւոյ սոփերայ կազմեալ ի նմա յելուզեալ յեռեալ վարսակալ մարզարտատող տպագարդութիւնս, և այլ ևս ականս պատուականս, և բազում և երևելի զգեստս արքունականս ոսկեճամուկս և շղաշատեռն հրաշանկարս միանգամայն առաքէ ի պատիւ մեծարանաց արքային Սմբատայ: Այլ և Աշոտի երիցու որդւոյ արքայի նորանշան իմն պատիւ յարդարեալ՝ իբր օղապարիկ իմն երիվար գեղեցիկ զարդուք և զի-

նուք և պերճասպաճոյճ երանգս զգեստուց և կամար ականակաւ: Ընդ մէջ ածեալ, և կացուցանէ զնա իշխան իշխանացս Հայոց: Բայց և ես ևս՝ որ զայս գրեցի, պատուեցայ պատուասիրաբար յոստիկանէն զգեստուք՝ ըստ օրինակի կարգիս, և ջորի պաճուճարար ոսկեգօծ զարդուք առաջի մատուցանելով ինձ: Իսկ արքայի խրախ լեալ ի բարեձիր պարգևս նորա և ընկալեալ մեծաւ շնորհակալութեամբ, ոչ սուկաւ ինչ քան թէ բազմամասնաբար յիւրմէն ևս նմա ընծայէր բարեվայելուչ և չքնադատես և երեւելի զարդս հանդերձանաց և նկարակերտ կազմուածս բազմականաց կարմրութեամբ որդանց և ըմբակս և նուազս. և կամար ի համակ ոսկւոյ՝ գործ հոռոմայական ճարտարաց, յերանգս զունակ գունակ ապակոյ, առուել ևս տասնապատիկ յաւելուածով՝ քան զմիանգամայն իսկ ընկալեալն առ ի նմանէն (ՅՏ. կթ. զուլի Խ):

Հովհաննես կաթողիկոսից մի քիչ հետո է Թովմա Արծրունին, որ լինելով Հայաստանի հարաւային արևելյան կողմից՝ ավելի մտտիկ էր արաբական աշխարհին և ավելի ազդված պիտի լիներ արաբերենից: Ահա նմուշներ նաև նրա լեզվից.

Ա.

Իսկ իբրև լուաւ թագաւորն զայս փոյժ աղաղակի հասեալ ի դուռն արքայի՝ մրմռեալ իբրև զառիւծ և իբրև զարջ տարակուսեալ՝ վառեալ լինէր իբրև զբոց հնոցի, իբրև զալիս ծովու դիգեալ կուտամբ փրփրեալ ծիրանագոյն արիւնանման, ուժգին գոչելով անդնդաքակ յուզմամբ, իբրև զհեղեղատ յորդահոս ի ճայթմանէ կարկտահոս ամպոց, հրախառն տոչորմամբ եռացեալ շուրջ զսրտիւն արիւնն՝ մաղձախառն բերմամբ յապուշ զմիտսն կրկեալ՝ կայր ի մէջ տարակուսի, խնդրէր գտանել զելն իբացն եկելոցն սու նա գուժկանացն (Արծր. տպ. Պատկ. էջ 114):

Բ.

Եւ ելեալ թագաւորն նստաւ յատենի ի բարձրաբերձ բեմի միոջ, ի մէջ աշխարհակոյտ ամբոխի անհուն բազմութեանն, և նրամայեաց ածել առաջի զկապեալսն, հարցանել և լսել ի նոցանէ: Եւ կայր զյօնսն պոստեալ, կոկողաբանէր ի յոխորտանօք, խրոխտայր և փոռգտայր, եռացուցանէր ի վեր մղէր զգառնութիւն ժահահոտ մաղձոյն չարաթոյն վատախառնութեանն, սրբու-

մտեալ անժուժկալ ի բարկութեանն ջերմագոյն արեանն մրբրկալից շարժմանն, և սկսաւ թափել զմահածին թրչնս իւր ի վերայ կապելոցն, իրբն զթոյնս իժի, առանց վեր ի վերայ դնելոյ սփռել տարածանել ի կորուստ և յապականութիւն բազմաց (Արժր. էջ 154):

Գ.

Ի սորս յերրորդ ամի թագավորութեանն ի վերայ Հայոց աստուածատուր բարկութեամբ անդնդաշարժ վրդովմամբք ներքնադոյն խորոցն պատահեալ միմեանց սահանախաղաց զղբրմամբ, հիմնաշարժ տապալմամբ, ներքսագոյն երկրի թուլացեալ պնդափակ աղխեալ սանդարամետական սահմանին, բարկութեան հողմոց շնչեալ ընդ ջրոցն խաւարայնոց, ի կոհակս անդնդաքակս զթանձրայտակ երկրի զկարծր և զծանրալիւր անկշիռ անբուութիւնն տատանեալ, մինչ յերեսս երկրի ի վեր մղեալ հանդէպ քաղաքին Արտաշատու, որ Բլուրն նորուն ասի, յորում շահաստանն Գուին, մարդախիտ պարսպաւոր պատնիշօք պատուարեալ և տուրեառիկ վաճառականութեամբ և ազգի ազգի պղծութեամբ յափրադեալ յգփացեալ՝ զնա ի հիմանց տապալեալ, բերանարաց դժոխարար լայնեալ զբերան իւր՝ յողունց քան թէ սակաւուց արար յիժիլ յանդունդս, որոց ոմանք և տունք նոցա գերնզմանք նոցին եղեն: Գունակ Կորխային բանակին յանդրնդաքակ տունսն զբնակութիւնսն արարին, անխայեալ ի նիւնուէականն ստրջացեալ նախ անդ ոչ անխայեալ առ քարեղէն սիրտ քաղաքացւոյն Գունայ: Նա և տեղիք սրբութեանց տունք աղօթիցն զշարժմանն կիրս կրեալ, պատումամբ որմաշարժ լինելով (Արժր. էջ 230):

Վերջապես տալիս ենք մի հատված Սահակի և Մեսրոպի անանուն պատմությունից (տպ. Սոփերք, հտ. Բ. էջ 5—42), որ մեր կարծիքով գրված է մոտավորապես 850 թվից առաջ*):

Այսպիսիս թերևս բարբառէին երանելի առաջնորդքն մերայսպիսի՝ ձայնս արձակէին վաճառականքն ամենառատք. այսպիսի թելադիր լինէին քարոզքն ճշմարտութեան, մշակքն հոգևորք, գործօնեայք գեղեցիկք, բեռնարերքն շահաւէտք, հարսնածուքն երանելիք, փեսաւէրքն փառաւորք, առթողքն արխ-

*) Տես Աճառեան, Ս. Մեսրոբի և գրերու զիւտի գաղտնութեան ոգրերնեքն ու անոնց բնութիւնը, Բարբիդ 1907, էջ 31:

կան, կուսատածքն պատուականք, վարդապետքն քաղցրուսոյցք, զայնակքն դիւրահամբոյրք, դաստիարակքն գորովագութք, զըպրապետքն բարեսէրք, հովիւքն քաջափառք, մատակարարքն երջանկացեալք, իմաստաւէրքն մեծարգոյք, բարեբերքն բերկբալիցք, ճանապարհորդքն ճոխացեալք, սիւնքն հաւատոյ, ամուլքն եկեղեցւոյ, արմատքն անմահութեան, քանոնքն արդարութեան, չափքն իմաստութեան, յարդարիչքն օրինաց, հիմնացուցիչքն հաւատոյ, արձանքն ամբութեան, պսակքն պճնութեան, զարդքն զգաստութեան, խահարարքն իմանալի, մատուակքն ցանկալի, բարձրացուցիչքն եկեղեցւոյ, մխիթարիչքն տրտմեցելոց, սանձքն անզգամաց, փարթամացուցիչքն հաւատացելոց, դաւանողքն ուղղափառութեան, հաստատիչք հաւատոց, նորոգողքն կարգաւորութեան, դարանակալքն իմաստութեան, պատմաբանիչքն փառացն Յիսուսի, ողբերգակքն զովելիք, որք խնդութեանն ոչ եղեն խրախակիցք, այլ տրտմութեանն գտան սզակիցք. որք ի բերկրութեանն ոչ վայելիցին ընդ բերկրեալսն, այլ ի դառնութեանն տխրեցան ընդ վտանգեալսն. որք յանդորութեանն ոչ էին զուարճակիցք. այլ ի թշուառութեան գտան չարչարակիցք. որք ի գերամբարձութեանն ոչ գտան բարձրացեալք. այլ ի տառապանսն նուաստացեալք. որք ցնծութեանն ոչ գտան դասակիցք, այլ ողբոցն եղեն ձայնակիցք (էջ 24—26):

Ճոռոմաբան այս ոճը տևում է բավական երկար. ԺԱ դարում դեռ Մագիստրոսը գրում է.

Աբաղձումն անձկութեան տեեշանաց քոց և զփափագ ցանկութեան տուփանաց, որ խանդակաբ ըղձմամբ յաւլժ տոչորէր, պասքմամբ կարօտեալ. (հյատ. Կոստ. էջ 22):

Ուր միմիայն «փափագի» ձևի տեղ 11 բառ է գրված: Բանասերները այն ենթադրությունը, թե այս շրջանի ուսուցիկ և ճամարտակ ոճը արարական ազդեցության արդյունք է, բնույթից չէ: Ուսուցիկ ոճի ամենամեծ ներկայացուցիչն է Թեոդորոս Քոթեմազի, որի լեզուն իր նորահնար կանգունաչափ անսովոր բառերով նմանը չունի հայ մատենագրության մեջ: Ահա մի հատված այս հեղինակից ևս:

Այսօր մեծ ինդութիւն ամենայն տիեզերաց. քանզի բացաւ դուռն արեւելեան աստղանշան ճանապարհաւն մոզս հանելով ընծայարեբս, երկնաւոր հրեշտակաց արքային մատուցանելով օսկի արքայական՝ ինքնահողարուսակ արուեստահնարագործութեամբ մաքրագտեալ և զունագարգեալ ի շողիւնս հրալու-

սոճաճանչադեղնութեանն... այսօր աւարտագործեալ կատարա-
շինեցաւ լրուին եկեղեցոյ՝ բազմայեղանակ նախազուշակ մար-
գարէիցն քարոզութեամբ... Այսօր վերահայեաց տեսակ գուար-
թածադիկ երփնազանագեղ գարունն, սաղարթաճեմափթիթ բու-
սով վայելչացեալք... Այսօր հոսանք հոգեխաղացք և վտակք
առատարուղիք միշտխողմեան տրամոռոգանեն զբուրաստան-
եալ աւետարանատունն մանկունս եկեղեցոյ... Այսօր հոգա-
տեղծեալ զարմ ադամածնութեանս՝ երկնաքաղաքացի անուա-
նակոչութեամբ զրեցան ի դպրութիւն կենաց... Այսօր ծով հա-
մատարած տարաբրութեան նուագարանօք սահմանագոչ վե-
րաճայթեցին խաղաղաշարժ գեղաճեմեալ... Այսօր և վերագա-
զաթնակատարահերձ կոնակ լերանց վարսագեղեալ պճնաղար-
դեցին գալստեամբ որդւոյն Աստուծոյ: Այսօր երկնահոլովակա-
նու տարերք երկուց լուսաւորաց ջան՝ պայծառ դամբարօք փայ-
լածին գալստեամբ որդւոյն Աստուծոյ... Այսօր ծովաքատակ մեղք
աշխարհի արտասահմանահալած փախչի... այլ և ի հեթանոս
շառաւեղագործեալ համարտոր տարածափիւռ ներծաւալեցաւ
ուղէշարձակ քաղցրարեղուն արմատոյն այնորիկ, որ ի քէն
յայտնեցաւ աշխարհի, որք պասքածարաւիք էին յամենայն սրբ-
տէ աստուածգիտութեանն... Դարձեալ եռանդնասէր և յորդոր
փութով և յորդորապահանջ հարկապահանջութեանս ըստ բազ-
մայեղանակարուն շառաւիղն գովասանութեամբ Հոգւոյն սրբոյ
վարսագեղութեանց խոյրապսակազարդ փաղփեւք ընծայարեմք
քեզ ի մերմէ նուաստաջան արուեստից, սվ Տիրուհի, սրբասնեալ
վերահոչակեալ քոյր մեր, դուստր մարգարէութեանց, ակն սու-
տակ և դահանակ լուսաջահայեց, ընտրաբանեալ ի մէջ դասե-
բաց Սիոնի:... որ խոխամեալ արբուցանես զյոզնազանագունակ
տունկս զրախտին փափկութեան... առ հոսանահոլովաշարժ վար-
դապետութիւնս աւետարանին Քրիստոսի... Ուրախացիր, Մա-
րիամ, տիեզերարդձ տուփ ոսկի, զարդարեալ անուշահոտ խըն-
կովք, և տաշտ մաքրափայլ իւղեփեցական բուրմամբ. քանզի որ-
պէս ի գունազանագեղ վարդից և շուշանաց և հովտածիժաղա-
սազարթ ծիրանաթոր մանուշակացն, վարդագեղեալ ունիս հիւ-
սակ... (տես Հով. Իմաստ. տպ. Վենետիկ 1833, էջ 173—181):
Քոթենավորի այս անսովոր բառերը 18 հաստ են, որոնք
հավաքում եմ այստեղ.—*հիահրաշափառազոյն (էջ 168), վեր-
նաքաղաքամայր (171), *համարտորապսակեալ (172), ինքնա-
հողաբուսակ (173), արուեստահնարագործութիւն (173), հրա-

լուսաճաճանչադեղնութիւն (173), սաղարթաճեմափթիթ (174),
*վերնագագաթնակատարահերձ (175), *երկնահոլովակառու (175),
արտասահմանահալած (176), *գեղաղեշարմատ (179), յորդորա-
պահանջ (179), խոյրապսակազարդ (180), լուսաջահայեց (180),
յոզնազանագունակ (180), հոսանահոլովաշարժ (180), գունա-
զանագեղ (181), *հովտածիժաղասազարթ (181): Այս բառերը
կան Հայկազեան բառարանում, բայց պակասում են նրանցից
վեցը, որոնք նշանակել եմ աստղանիշով: Առձեռն բառարանն
էլ հետևում է Հայկազեանին, բայց երկուսը (համարտորապսակ-
եալ և հովտածիժաղասազարթ) նշանակել է: Հրալուսաճաճանչա-
ղեղնութիւն բառի տակ Հայկազեանը գրում է. «եթէ չիցէ յաւե-
լուած իմաստակի ումեմն! (իմա սրբումն) Թաղէսս վարդապետի,
որոյ է և ճառ Համբարձման՝ իուկեալ այսպիսի բառիւք, զորովք
զանց առնեմք ի կարգի բառարանիս»: Այս հետաքրքրական
անձի, Թաղէսս վարդապետի ոչ թվականը գիտենք և ոչ էլ նրա
Համբարձման ճառը: Զարբանալյանն էլ իր Հայկական հին
դպրութ. պատմութեան մեջ (Վենետիկ 1897) նրա անունն ան-
գամ չի հիշատակում:

Արդ այս ամենաճամարտակ Քոթենավորը ապրած կամ գրած
է արաբների տիրապետութեանից առաջ: Մենք ճիշտ չգիտենք
Քոթենավորի թվականը, բայց գիտենք, որ է դարի հեղինակ է,
իր աշակերտներից է Սահակ կաթողիկոս Ձորափորեցին, որ մե-
ռավ 703 թվին, և եթե իր վարժապետի մահը զենեք 680-ական
թվերին, ճշմարտութեանից բնավ հեռացած չենք լինիլ: Արդ,
արաբները որ առաջին անգամ Հայաստան իբր փորձ արշավե-
ցին 640 թվին և միայն 693 թվին վերջնականապես տիրեցին
երկրին, չէին կարող 680-ին մեռած Քոթենավորի լեզվի վրա
ազդեցութեան ունեցած լինել: Սրանից հետևում է, որ մեր այս
ընթացի հեղինակների ճոռոմարան լեզուն ոչ թե արաբական ազ-
դեցութեան արդյունք է, այլ առհասարակ արաբական է, և որ
տարբեր չէ Սեբեոսի, կամ ավելի հին՝ Կորյունի և Ազաթանգե-
ղոսի լեզվից: Բյուզանդական հունարենում էլ սովորական էր
այս ոճը՝ փոխանակ նախկին հելլենական պարզութեան:

Արաբական ազդեցութեանը հայերենի վրա երևում է տա-
ղաչափութեան մեջ: Հնագույն հայոց բանավոր գրականութեան
մեջ գործածական էր վիպասանական շափը՝ որի օրենքները մեզ
հայտնի չեն, բայց պարզ է, որ վանկերի հավասար թվի և հան-
գերի նույնութեան վրա հիմնված չէր: Ե—Ձ գարերից մեր գրա-

կանութեան մեջ ոտանավոր գրվածքներ չկան. է—Ը դարից սկսում են երևալ շարականները, որոնց չափական արվեստը թվականի ու քանակականի մի տեսակ խառնուրդ է, առանց հանգի: Այսպես են մեր հին գրականութեան մեջ հայտնի առաջին երկու ոտանավորները. Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» շարականը և Դաւթակ քերթողի Ողբը (գրված 680-ական թվերին): Ավելի ուշ երևում է տաղաչափութեան երրորդ տեսակը, որի մեջ տողերի վանկերը հավասար են թվով, իսկ ամբողջ ոտանավորը ծայրից ծայր ունի նույն հանգը: Հիշենք Գրիգոր Մագիստրոսի «Մեծ են գործք Աստուծոյ» ոտանավորը 1016 տող՝ ամբողջը ին հանգով (ԺԱ դար), Շնորհալու (ԺԲ դար) Վրպասանութիւնը 1654 տող, ամբողջը եւալ հանգով. Նույնի Հիսուս որդին 3988 տող, ամբողջը ին հանգով և այլն, և այլն: Ոտանավորի այս տեսակը վերագրվում է արաբական ազդեցութեան:

Ոտանավորի հանգի հետ պետք է հիշել նաև այն, ինչ որ արաբերենում կոչվում է կաֆիյե: Արաբները սիրում էին ո՛չ միայն ոտանավորի, այլ և բանաստեղծական արձակի մեջ նախադասութունները միևնույն հանգով վերջացնել, մանավանդ անկանը գոյականի հետ նույնահանգ դուրս բերել: Այս ոճը շատ սիրված է նաև տաճիկների ու պարսիկների մոտ և մինչև այսօր էլ շարունակվում է: Օրինակ պրս. ասում են՝

dovlât-i âbâdmuddât հաւիտեանտե պետութիւն
pusâr-i hunârvar հնարիմաց որդի
duxtar-i 'ismâtpârvâr պարկեշտասուն դուստր:

Մինչև անգամ մեր արևմտահայ գրողները անցյալ դարում քնդունել էին կաֆիյեի դրութունը (տաճիկերենի նմանութեամբ) և գործածում էին իրենց արձակ գրութեանց մեջ: Ահա մի փոքրիկ օրինակ այդ ձևից.

«Մեր սրտերը յոյգերով, մեր աչքերը լոյսերով և մեր հոգիները յոյսերով լցված կսպասենք ձեզ»:

Արեգյանը իր Գրականութ. պատմութեան մեջ (տպ. 1944, Ա հտ. էջ 541) հիշում է Նարեկից մի հատված (բան 27), ուր ոտանավորի հանգը և բառերի կաֆիյան միացած են.

Դու լոյս ես և յոյս,

Եւ ես՝ խաւար և յիմար.

Դու իսկութեամբ բարի գովելի,

Եւ ես՝ համայնիւն շար ապիկար.

Դու տէր ստորիցս և երկնից,

Եւ ես՝ անիշխան շնչոյս և հոգւոյս.

Դու բարձրեալ ի կարեաց գատեալ,

Եւ ես՝ տաժանաւոր և վտանգաւոր.

Դու ի վեր քան զկիրս երկրիս,

Եւ ես՝ կաւ անարգութեան գարշութեան.

Դու... ֆնաս յաւիտեան յանրաւ բարձրութեան,

Եւ ես՝ միշտ կորնչիմ...

Ի քեզ ոչ է մթութիւն կամ նենգութիւն,

Եւ ես՝ բովանդակն իսկ իցեմ,

Որ զաւանդ իմ ոչ պահիցեմ:

Արաբական ազդեցութեան է վերագրվում նաև մութ ու խրթին գրելու այն ձևը, որ գործ են ածում զանազան հեղինակների՝ ցույց տալու համար մյուսներին իրենց խոր ու խորհրդավոր գիտութեան չափը: Ոճի պարզութիւնը այն ժամանակ տպութիւն էր համարվում: Այս կարգի հեղինակներից հիշենք Կարապետ Սասնեցին, բայց մանավանդ Գրիգոր Մագիստրոսը (ԺԱ դար), որ առհասարակ մութ ու անիմանալի լեզու ունի, բայց հատկապես իր մի քանի գրվածքների մեջ գործ է ածում մի այնպիսի լեզու, որ հասկանալու համար առանձին բանասիրական աշխատանքի պետք կա: Այսպես են իր Գամաղտականը (որ վերլուծեցին Նորայր և Մենելիշյան*), Մրգուզ փանաքը (որ լուծեց Աճառյան**), Բառոական բաղդատալիանը, Գանգիւն Բախիւն և Կէտ կարթիւ, որոնք դեռ անլույծ են ֆնում:

Գաղափար տալու համար ընթերցողներին նաև այս խորհրդավոր լեզվի մասին, դնում ենք այստեղ ամբողջութեամբ Մագիստրոսի Մրգուզ փանաքը իմ թարգմանութեամբ: Այս գրութիւնը միանգամայն ցույց է տալիս ոտանավորի այն ժամանակվա ձևը՝ ծայրից ծայր եւալ հանգով:

1. Մրգուզ փանաք ծրդեալ ծեքեալ՝ անհոյժ ոգեալ յառեալ,
2. Իրազեկ՝ խաստեալ, մանձրեալ, յարազինեալ, իսկոյն յահրեալ,
3. Մանչուկ մանչոն ճահճեալ, դամեկեալ, ըմբահակեալ,
4. Դիւրադատ պատեհեալ, անոահավար պարայածեալ,
5. Որջասոյզ և գրուանող ծեքեալ, նոծեալ, ապագոնեալ,

*) Վիեննա 1912:

**) Հանդէս ամսօրեայ, 1923, էջ 241—256:

6. Փինատ փէքդ փքացեալ՝ ալագինիւ բացասացեալ,
7. Հիկէն գոս կոյր կողանեալ, թափառական, կոկոզացեալ,
8. Ամայի բաղադրեալ, առվիրական ի գուր խոնջեալ,
9. Անխորասոյգ արգոբ կարծեալ՝ արտօրինեալ բարուրեալ.
10. Անդրուատ գրուահ բոսոր՝ անիրապէս ըմբոշխորեալ,
11. Անճոռնի տիպ դիմառեալ, ապաժաման լաւից եղեալ,
12. Ընկրկեալ, թոպեալ՝ թմրեալ թողեալ, ի յայտ տրամա-
կայեալ,
13. Բոսորագոյն հաշմեալ, չույածական արտալածեալ,
14. Իւղագործ կիւղ կածնական յուղեալ, խուղեալ եւ խող-
խողեալ,
15. Անհեթեթ, վիթխարացեալ, հրաշիմացոյ գաղափարեալ,
16. Մեղդէտ մախիգ զոփեալ՝ միտեալ, յարգեալ, առասու-
նեալ:

(Թարգմանութիւն)

- 1) Նայելով իմ հասարակ ըսածներուս՝ կցնդարանելի թե անոնք անպիտան, գձուճ ու աղտոտ բաներ են:
- 2) Երբ իրազեկ եղար, նախանձով վառեցար ու մրկեցար. ու զենք առիր, շուտ մը դեմս հանդպնեցար.
- 3) (Իբրև մանչուկ մը, փոքր տղա մը ստահակեցար, ընդ-վզեցար) և ըմբոստացար.
- 4) Դյուրին բան մը երեցավ քեզի, բայց հիմա ճամբող կորսնցուցած՝ ման կուզաս ասդին անդին.
- 5) Ուղիղ մեջ պահված՝ ծածուկ կցնդարանելի, հիմա (ընկճվեցար), պարտվեցար:
- 6) Խեղճ ու թշվառը հպարտացեր էիր, հիմա հայտնապես ու վճռարար անզեն ու տկար կոչվեցար.
- 7) Ինչպես կույր կղեգերիս թափառական, գու՝ որ մեծա-մտեր էիր.
- 8) Ի՞ գուր իբրար խառնեցիր (զրվածքես բան մը հասկնա-լու համար), ի՞ գուր և ի՞ գուր հոգնեցար:
- 9) Պարզ [կամ գյուրահասականալի] խոսք մը համարեցիր՝ բայց չափե դուրս դատապարտվեցար.
- 10) Նախատական ամոթալի խոսքը պարապ տեղը (կերար).
- 11) Դեմքդ անճոռնի կերպարանք մը առավ [քիթդ բե-րանդ թթվեցուցիր]. լավ բանի չհասար.

12) Ետ քաշվեցար, ծեծ ուտելով՝ թմրած մնացիր և հայտ-նի կերպով հասկցար [ըմբռնեցիր].

13) Ամոթահար ջարդվեցար, աստանդական հալածվեցար.

14) Թանաք-գրիչդ փնտոցիր, որոնեցիր և խուզարկեցիր:

15) Շատ մեծ, խոշոր, հրաշալի գիտուն կարծեր էիր քեզ.

16) Բանտարկված, անտեղյակ, նեղը մնացած, խոնարհե-ցար, կարգի եկար ու մարդ դարձար:

Ընթերցողը նկատեց արդեն, թե ինչպես տաղաչափական արվեստը, նույնպես և խորհրդավոր գրութիւնն այս ձևը հրեում են մեր մատենագրութիւնն մեջ ոչ թե է, Ը, Թ դարերին, երբ արարական տիրապետութիւնը տարածված էր մեր երկրի ամեն կողմը, այլ ավելի ուշ, հատկապես ժ/կ դարում, երբ հայոց Բագ-րատունի թագավորութիւնը արդեն վաղուց հաստատված էր, արաբները Հայաստանից հեռացած և նույն իսկ իրենց անկման շրջանն էին մտած: Այս պատճառով ազդեցութիւնը պիտի վե-րագրենք ոչ թե ուղղակի արաբներին, այլ մեր հարևան պար-սիկներին: Ինչպես արդեն գիտենք, է դարում պարսիկները ա-րարական տիրապետութիւնն տակ մտնելուց հետո, շուտով մահ-մեղական կրոնն ընդունեցին, որ և պատճառ դարձավ արարա-կան լեզվի ու գրականութիւնն շատ խոշոր ազդեցութիւն՝ պար-սիկների վրա: Պարսիկները ոչ միայն ընդունեցին արարական գիրը, այլ և պարտավորված սովորում էին արաբերեն լեզուն՝ դուրան կարդալու համար: Պարսիկները կնքեց բազմաթիվ փո-խառութիւններ արաբերեն լեզվից. բանաստեղծները և առնա-սարակ գրողները սիրում էին անխտիր լցնել իրենց զրվածք-ները արաբերեն բառերով. և Շահնամից հետո անկարելի է գտնել պարսիկ գրականութիւնն մեջ մի զրվածք, որ արաբերեն տեղի ու անտեղի փոխառութիւններով խճողված չլինի: Այսպես օր. Սաադին, որ պարսկապիւր ամենասիրված և նույն իսկ ժո-ղովրդական դարձած բանաստեղծն է (1175—1291), իր հռչակա-վոր Գուլիստանի ու Բոստանի մեջ գործ է ածում մի լեզու, որի կեսից ավելին արաբերեն է, չհաշվելով այն ստանավորները՝ որոնք ամբողջապես արաբերեն են: Այդ նույն հեղինակների մեջ արաբերենի գործածութիւնն իբր հետևանք՝ առաջացավ նաև խրթ-նարան ոճը.— պետք էր գրել այնպես, որ պարզ մարդը ոչինչ չհասկանա, իսկ գիտունն էլ դժվարութիւնով հասկանա:

Ահա այս ոճն է, որ պարսիկներից և Պարսկաստանի վրա-յով անցնում է նաև Հայաստան:

Արարենքը նշանավոր եղան գիտությունաց մեջ. Արրասյան խալիֆայության ժամանակ Բաղդադը դարձավ Պուսի մրցակիցը. աստղաբաշխությունը, մաթեմատիկան, երկրագործությունը, քիմիան և մանագանդ բժշկությունը արարենքի մեջ շատ սիրված ու մշակված գիտություններ դարձան: Այդ գիտությունաց վրա երևացին զանազան հեղինակների գործեր, որոնք այսօր էլ գիտությունաց պատմության համար մեծ նշանակություն ունեն: Բժշկական գրվածքներից քանի քանիսը լատիներենի թարգմանվելով եվրոպական գիտության սեփականություն դարձան, և ԺԱ-ԺՁ դարերում եվրոպացիք արար բժշկական գրվածքներ էին ուսումնասիրում: Այդ գիտությունները մտան նաև Հայաստան. ԺԲ դարում հայերը արարենքից թարգմանեցին Վաստակոց գիրքը (երկրագործության ու գյուղատնտեսության վրա հարուստ տեղեկություններով), Սմբատ Կ Ռուբինյանց թագավորը (1296—99) Սսի մեջ պաշտոն հանձնեց ասորի բժիշկ Ֆարաջին, որ երկար ժամանակ մնալով Բաղդադում՝ սովորել էր արարական բժշկությունը, կազմել հայերեն լեզվով մի Անասնարուժական գիրք. և բժիշկ Ֆարաջը հավաքելով ձնայ, Ապի-Յուսուֆի, Ռաշիդի և այլ բազմաթիվ հնդիկ ու արար նշանավոր բժիշկների գործերը, հայագգի արարագետ Թորոս քահանայի հետ թարգմանաբար հորինեց «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ»: Ավիլի շատ են աստղաբաշխական, հմայական ու կախարակական գրվածքներ, բոլորն էլ արարենքից թարգմանաբար կազմված: Վերջապես ունինք զուտ բժշկական գրվածքներ, թարգմանական կամ նաև հեղինակություն հայագգի բժիշկների, որոնց հնագույնն է բժիշկ Հովհաննես 870—880 թվերին, իսկ գլխավոր ներկայացուցիչը Մխիթար Հերացի, որ 1184 թվին գրեց «Ջերմանց մխիթարութիւնը», ջերմի բոլոր տեսակների վրա զուտ բժշկական գիրք:

Անկարելի էր, որ այս բոլոր թարգմանական գրվածքները և այն, առանց ազդեցություն մնային հայերենի վրա. և մենք տեսնում ենք, որ եթե Ը—Ժ դարերին հայ գրական գործերի մեջ գրեթե չկային արարենք բառեր, ընդհակառակը ավելի ուշ, ԺԱ—ԺԲ դարերում գրված աշխատությունների մեջ՝ նրանց թիվը հասնում է հարյուրների: Հատկապես բժշկության լեզուն (նրա հետ անբաժան հասկանալով նաև բուսաբանական լեզուն) զուտ արարենքն էր: Հայերեն բժշկական գրվածքների մեջ հաճախ ամենահասարակ բառերի տեղ (ինչպես թոք, զարկերակ և

այն), գտնում ենք նրանց արարենքն հոմանիշը: Բժշկական դեղատոմսերը կազմված են միշտ արարենքն բառերով, մոտավորապես այնպես՝ ինչպես այսօր գրում են լատիներեն բառերով: Հայերը թողել են մեզ նույն իսկ բժշկական բառարաններ՝ արարենքն, պարսկերեն, հունարեն, լատիներեն և հայերեն լեզուներով:

Մի գաղափար տալու համար այն ժամանակի հայ-արարական բժշկական լեզվից, ստորև դնում ենք մի դեղատոմս, որ հանված է Մխիթար բժիշկի աշխատությունից:

Հապ այարիճ՝ որ օգտէ գլխոյն և աչացն և ոսկերացն և հանէ զաւելուածքն և զգիճութեններն ի գլխոյն և ի յամենայն մարմնոյն: Առ հինգ ազգ հալիլէ, սապո, ըռեւանդ, կարմիր վարդ, դարիկոն, թրպութ կէս կէս դրամ. շահմ խանդալ, սակամոնի աֆթիմոն, հնդի աղ, քիթրէ, մուխլազրախ, անիսոն մի մի դանկ. պալասանի փայտ և պտուղ, ասարոն, սալիխայ, մազտաքէ, դարիսենի, սոււպուլ, զաֆրան, օշինդր, հայքար, ջհուտքար, լազուարդ քար, սուրինձան, պուզիտան, հապնիլ, կէս կէս դանկ. լոսէ զամէնդ մանտր և զսակամոնին խոշոր, և շաղէ սաթառճի ջրով, հապ արա:

Մխիթար բժիշկ, էջ 144:

Տարակույս չկա, որ արարական փոխառությունաց մի մասը՝ հունական փոխառությունաց նման զուտ տառադարձություն է և բնավ չէ մտած հայոց ոչ գրական և ոչ էլ ժողովրդական լեզվի մեջ: Մրան ապացույց է ծառայում այն հանգամանքը, որ նրանց մեջ կան այնպիսի ձևեր, որոնք առաջացել են արարական բառերի սխալ կետադրությամբ կամ սխալ ընթերցանությամբ: Այսպես՝ կլուճու «բոյս ինչ» Վստկ. 209. և թէ առնուս կլուճուս և եփես գինեաւ, օգտէ. այս բառի դեմ հույն բնագիրն ունի φλόμος «խոնդատ», որ արարենքն թարգմանություն մեջ

տառադարձվելով գրվել է سوسوموس fūmūs, հայ թարգմանը կարգացել է սխալմամբ سوسوموس qīnūs և կամ գուցե այդպես է գտել իր գործածած ձեռագրում. երկու դեպքումն էլ կլուճուս հառաջանում է ձեռագրի միջոցով և ժողովրդի բերանը մտած բառ չէ:

Ճապարս «մի տեսակ խաղող» Վստկ. 47. հույն բնագիրն ունի χλωρός, որ արար թարգմանություն մեջ տառադարձվել է سوسوموس xlōros. հայ թարգմանը գտել կամ կարդացել է سوسوموس

javars, որով կազմել է հյ. ճառարս ձևը: Այսպիսի բառ բնավ գոյություն ունեցած չէ ոչ արաբերենի և ոչ էլ բնականաբար հայերենի մեջ:

Փուրփուզնայ «մի տեսակ խաղող»։ Ազգ մի սպիտակ խաղող կայ, որում հոուսն ստինաս ասէ, և այլ կայ որում փուրփուզնա ասեն. Վստկ. 47. այս բառի դեմ հույն բնագիրն ըստ Ալիշան, Հրուս. § 3092 ունի կորկիմբական: Արաբերեն թարգմանություն մեջ բառը տառադարձվելով դարձել է قورقوتیا qōrquintiya, կետերը մասամբ ջնջվելով հայ թարգմանիչը գտել կամ կարդացել է قورفسنا fūrūsna, որով և կազմել հայերեն փուրփուզնայ անգո ձևը:

Բարբիզակ «ծամել, blitum» Գաղիան. արաբերեն یربوز yarbūz կամ یربوز բառն է, որի նախատառը սխալ կարդացվելով՝ եղել է یربوز barbūz և դրանից էլ առաջացել է վերի բարբիզակ ձևը:

Կարելի է հիշել դեռ մի քանի օրինակներ էլ, բայց այսքանն էլ բավական է ցույց տալու համար, թե արաբական փոխառությունների մի մասը՝ միայն ուսումնական ճամբով է հառաջացած և ժողովրդական լեզվի մեջ բնավ չէ մտած: Մնացյալների համար, ինչպես վերևում ասացինք, չունենալով ժողովրդական գրվածքներ, չենք կարող ասել, թե ինչ չափով ժողովրդական բառեր են, որ ժամանակից են մտած հայերենի մեջ, որ տեղով և որ լեզվից: Անուրանալի է, որ նրանցից շատ քչերն են միայն է կամ Ը դարից, մի մասը մտած է Ասորիքի արաբների միջոցով Կիլիկյան հայերենի մեջ, իսկ ավելի մեծ մասը Պարսկաստանի ու պարսիկների միջոցով արևելյան հայերենի մեջ: Արաբերենը այդ ժամանակ, ինչպես և հիմա, ամբողջ մահմեդական Արևելքի կուլտուրական լեզուն էր. բոլոր մեր շրջակա ժողովուրդները (պարսիկ, թուրք, քուրդ, թաթար, աֆղան և այլն) բազմաթիվ փոխառություններ էին կնքել արաբերենից և այդ փոխառությունները այնպես էին խառնվել բնիկ տարրերի հետ, որ անկարելի էր որոշել, թե որն է արաբական և որն է օտար: Կարող ենք ասել, թե արևելքում կազմված էր որոշ միջազգային բառարան. և ահա այդ բառարանը անցավ նաև հայերին, եթե ոչ ամբողջությամբ, դո՛ւնե մեծ մասամբ: Այսօր էլ նոր-նախիջևանի կամ ավելի հեռու Սուչավայի հայերը, որոնք արաբների երեսը բնավ չեն տեսած, ունին իրենց բարբառում

դանազան արաբական բառեր, որոնք բխում են նույն միջազգային բառարանից: Օր. ննխ. մախսում ասմեղ մանուկ» <արաբ. ma'sūm, սահաթ «ժամ» <արաբ. sā'at, Սչ. խամբթու ու դուլթթու «բախտավորություն» և հարստություն» <արաբ. qasimat u dovlat և այլն:

Օւ որովհետև այն ժամանակի Արևելքում ամենից կուլտուրական և հայոց հետ էլ ամենից ավելի շփման մեջ եղող երկիրը Պարսկաստանն էր, որ և նույն միջազգային բառարանի գլուխավոր հեղինակն ու տարածողն էր, ուստի մենք էլ հաջորդականի մեջ միասին հավաքում ենք այն բոլոր փոխառություններից, որ կնքել է հայերենը արաբերենից (ուղղակի կամ անուղղակի) և հետին շրջանի պարսկերենից: Դրանցից շեղատառերը արաբերեն են, մյուսները պարսկերեն: Այս կարգի պարսկերեն բառերը պետք չէ շփոթել այն հին իրանական փոխառությանց հետ, որ հիշել ենք վերը գլուխ ժ և որոնք պարսկերեն լինելուց ավելի պահլավերեն են, ըստ որում ներկայացնում են ոչ թե արգի պարսկերենի, այլ պահլավական ձևերը. հմմտ. նիզակ=պհլ. nēzak=պրս. nīzā. դրանք փոխառյալ են հայերենի մեջ հնադուրյան ժամանակներից սկսած մինչև մահմեդական շրջանը, իսկ մյուսները մահմեդական շրջանից հետո:

Շատ հեշտ չէ ամեն անգամ որոշել, թե այս ինչ բառը որ շրջանին է պատկանում: Ընդհանրապես մեր չափանիշն է բառի գործածությունը թվականը: Բայց այս միջոցը թեև հին շրջանի համար ճիշտ և ստույգ, սակայն նոր շրջանի համար վերճական չէ. որովհետև կարող է մի բառ փոխ. առնված լինել հին (պահլավական) շրջանում, բայց գործածված չլինել հին հայ մատենագրության մեջ, և միայն վերջին շրջանում դրի սուրված լինել: Սրա լավագույն ասպացույցն այն է, որ նույն իսկ այսօր կան բառեր, որոնք գործածական են միայն գավառական բարբառներում, ավանդված չեն հնից, և սակայն պահլավական փոխառություն են: Այսպես, օրինակ՝ ջամուկ բառը (տես վերը, էջ 321): Այս պատճառով լավագույն չափանիշը պետք է համարել բառի ձայնական հորինվածությունը: Սրինակ՝ իշտրմուղ <պրս. všturmurγ. բառը Hübschmann (Arm. Gram. էջ 157) դնում է հին պարսկական փոխառությանց շարքում: Բայց դա ճիշտ չէ. որովհետև բառը հին լինելու դեպքում պիտի ունենար դո՛ւնե *իշտրմարգ ձևը. հմմտ. լորամարգի և սիրամարգ.—պրս. γ-ի դեմ հայերեն գտնում ենք միշտ գ. իսկ մեծ հետնության

նշան է. այնպես որ հայ բառը կարելի չէ տառադարձել ištrmuł, ինչպես անում է Hübschmann (անդ), այլ միայն ištrmuç:

Ուշ ժամանակի փոխառությունց էլ մի մասը գրական ճամբով է առաջացած, այսինքն գրքերի միջից ձևապես տառադարձված: Այս բանը կարելի է ապացուցանել տառերի սխալ ընթերցումով. օր. անճուր «մկնականջ» <պրս. انچرك anġarak բառից՝ սխալմամբ կարգալով انچوك anġūk.— նույնպես ապրուր «ամբուլ» <պրս. ابرو abrūd բառից՝ սխալմամբ կարգալով ابرو abrūr:

Պարսկերեն բառերի մի փոքր մասն էլ կեղծ է. այսինքն նոր ժամանակ կազմված՝ հայ բանասերների ձեռքով, նոր պարսկերենի վրայից, տալով սակայն հին պարսկական (պահլավական) ձևը: Այսպես են ատրճամակ, շահպրակ և փերուզակ (քարը), որոնք ցանկում մենք դրել ենք անկյունավոր փակագծի մեջ:

Նախորդների ոճով ցանկը երկու տեսակ է. առաջինը պարզ այբուբենական և պարունակում է արարերեն փոխառությունները, որոնց թիվն է 702. երկրորդը արար և նորապարսիկ բառերի ցուցակն է, դասավորված ըստ նյութի: Երկուսի մեջ էլ աստղանիշ են այն բառերը, որոնք գործածական են արդի գրականում: (Նորապարսիկ բառերի այբուբենական ցանկը տես Ա. մաս, էջ 240—292, որոնց թիվն է 445):

	Արարերեն	ճճ.
1 Աալուսան «վառվառուկ խոտը»	aalusan	alysson
Ագատ «հասարակածի հատված»	'aqd	
Ադադ «քանոն»	'idāda	
Ադարոբ «մարգարիտ»	durra, durar	
5 Ադէմ «կաշի»	adīm	
Ազապ «չամուսնացած»	'azab	
Աթխար (բույսը)	aðxar	
Աթունի «հնոց»	atūn	
Ալաթահրի (բույս)	al-jahrī	
10 Ալամ «դրոշակ»	'alam	
Ալանի «հայտնի»	'alani	
Ալատնի (խոտը)	alatiñi	elatiñ*
Ալափ «խոտ»	'alaf	
Ալիկ «անասունի կեր»	'alīq	
15 Ալպուճ (բույսը)	al-buġġ	
Ալսուս (բույսը)	al-sūs	
*Ալքիմիա «քիմիա»	al-kīmyā	
Ախախիա (ծառը)	āqāqlā	
Ախինոս (բույսը)	aqinus	ākinos
20 Ախրոն (բույսը)	*aqiūn	échiōn
Ախլիմիա »	al-qalimīā	
Ախլսաչ »	axarsaġ	
Ախհաւան »	aqhavan	
Ախունա »	aqhūn	
25 Ակրաբադին «ղեղաղիբք»	aqrābādīn	
Ակրկարճայ (բույսը)	'āqir qarġā	
Աղալուճի «հալվելի փայտ»	*āġā'ūx <agállóchon	
Աղարիկոն (ոունկը)	āġārīqōn <agārikón	
Աղեղ (քարը)	'aqīq	
30 Աղիտայ «եփած ուլպ»	'aqīda	
Աճառ «տանիք»	iġġar	
Աճաս «սալոր»	aġāš	
Աճուռ (բույսը)	'aġūr	
*Աճպ-արար «ձեռնածու»	'aġab	
35 Ամանաթ «աւանդ»	amanat	
Ամարաթ «ձրի ճաշարան»	'imārat	
Ամիաս (խաղողը)	?	<ամբնիոս

Ամիր ալ մուսնիք «խալիֆա»
 Ամիր «իշխան»
 40 Ամլաճ (բույսը)
 Ամպաճ, անպ (պտուղը)
 Ամրուսիա (խոտը)
 Այպ «թերութուն»
 Այրաս «կապույտ շուշան»
 45 Անդարա (խոտը)
 Անդուն «զիշահոտ վարդ»
 Անճիտան (բույսը)
 Անճուպար »
 Ապուկալ(ամ)ին
 50 Ապուր «հարկ»
 Ապրախիլ «ասեղ խոզ (մազնիս)»
 *Ապրայ «ամանի քաշը»
 Ապրանճ (բույսը)
 Ասխիս »
 55 Ասկորդիոն »
 Ասմազուն »
 Ասպուր »
 Աստախոտոս »
 Աստուլուխիայ (բույսը)
 60 Ասրունճ «սիլիկոն»
 Ատիլ «քաշ»
 *Ատլաս (կտորեղենը)
 Ատմատ (բույսը)
 Արահան «զեղնցավ»
 65 Արաք (բույսը)
 Արիշ «սարփինա»
 Արճուան (բույս է)
 Արմինան »
 Արտանիսա »
 70* Աւշակ
 Ափարրիոն (բույս)
 *Ափրոն
 Աքիլիսիք (բույսը)
 Բար «դուռ»
 75 Բազազ «կերպասավաճառ»

amīr-al-mūminīn
 amīr
 anlaḡ
 anbaḡ, anab
 ? <ambrosia
 'ayb
 *ayras <iris
 onaḡrā <on'agra
 aniqun
 anḡidān
 anḡibar
 abūqalamūn
 'ubūr
 ibra «ասեղ»
 'abra
 abranḡ
 ašxīš
 ? <skórdion
 āsmānḡūnī
 'ašfur
 usḡūxūdūs
 ? <aristolochia
 asranḡ
 'ādil
 aḡlas
 aḡmaḡ
 araqaḡn
 arāk
 'arīš
 arḡuvān
 armīnīn <hórminon
 'artanīsa
 uššaḡ
 farbiḡūn <euphórbion
 afiyūn
 iklīl-ul-malik
 bāb
 bazzāz

*Բալասան
 Բալուտ «խոզկաղին»
 *Բակլայ
 Բահման (բույս է)
 80 Բասար «բանականութուն»
 Բարբիզակ (բույս է)
 Բզրկատուն (բույս է)
 Բզրուկ »
 Բլիլաճ (բույս է)
 85 Բութակ «քուրա»
 Բուխար «շոգի»
 Բուրգամուշ ալիսու=ն.
 Բուրհան «տաղնապ»
 Բուռճ «բեկեղին»
 90 Դահն-ազոյն «սիսեռազոյն»
 Դահունճ (թռչուն)
 Դաման «հարկ»
 Դարապ «փողերանոց»
 Դարիսվար (բույս)
 95 Դարշիշան (բույս)
 Դարունաջ (բույս)
 Դաւար «ոչխար»
 Դաւի «վեճ»
 Դաւիլ «մուրհակ»
 100 Դիֆլա «դափնեկարդ»
 Դունահհունար (իւղ է)
 Դմիշկ «պողպատ սուր»
 Դուռայ «հազուստ»
 Դուռէճ «սալամբ»
 105 Դուրճ «արկղիկ»
 Եամանի (քարը)
 Եաշմ »
 Եասպ »
 Եարիճփեկրայ (դեղ է)
 110 Երպատուր (բույս)
 Զահթեր (դեղ է)
 Զահրայ (ծաղիկ)
 Զանապ (համաստեղութ.)

balasān
 ballūḡ
 baqla
 bahman
 bašar
 yarbūz ?
 bizr-i-qatūnā
 bizr
 balīlaḡ
 butaḡ
 buxār
 ðevðroḡálinov
 buhrān
 butum
 ḡaḡīn
 ḡīhūḡ
 ḡamān
 ḡarb
 ḡālisar
 dāršīš'ān
 darūnaḡ
 davvāb
 da'va
 ḡaḡvīl
 dafla
 duhn-ul-ḡinnā
 dimīšḡ
 durra'a
 durraḡ
 durḡ
 yamanī
 yašm
 yasb
 ayārīḡ-i-fīḡra <hīera pikra
 yarbātūr
 sa'tar
 zahra
 ḡanab, zanab

	Զանճապիլ	zanĵabīl
115	Զառնար (բույս)	zarnab
	Զարեհ »	zarīh
	Զարու »	zirv
	Զարուր «ալոճ»	za'rūr
	Զափրան «քրքում»	za'farān
120	Զեհեա «խլամ կրոնավոր»	zahīd
	Զեհա «խլամ վանք»	zāvia
	Զիկ «եղբրքի շրջանակ»	zīq
	Զինչարակ «ժանգառ»	zanĵār
	Զինչուփր (ներկը)	zanĵāfr
125	Զիրպաճ (կերակուր)	zīrbāĵ
	Զլիլ «սահիլ»	zalaq
	Զոհալ «Երևակ»	zuḥal
	Զոհրայ «Արուսյակ»	zuhra
	Զուկակ «փողոց»	zuqāq
130	Զունար «գոտի»	zunnār
	Զուռոայ «կորեկ»	zurra
	Զուրափէ «ընձուղա»	zurāfa
	Զրևանդ (բույս)	zarāvand
	Հնջան «կոնք»	inĵāna
135	Հարեկ «ասպանդակ»	rikab
	Հողակ «ինչք»	arzāq
	Թալութայ (նավ)	Թարաթա?
	Թախթըղ «գրվածք»	taxtəṭ
	Թաղանդաստ (բույս)	tāyundast
140	Թաշանուճ «ջրածղութուն»	tašannuĵ
	*Թաս	ṭās
	Թարկել «թողնել»	tark
	Թեապիր «միջոց»	tedbīr
	Թիլ «քլուր»	tall
145	Թիմսահ «կոկորդիլոս»	timsāh
	Թմբուլ (բույսը)	tambūl
	Թմբհնդի (բույսը)	tamra-ul-hindī
	Թնուպ (ծառ)	tannūb
	Թուելիզ « ¹ / ₆₀ վայրկյան»	ṭāliḡat
150	Թուենիթ « ¹ / ₆₀ րոպե»	ṭāniyat
	Թուրայա (աստղ)	ṭurayya

	Թրմուս «բակլա»	turmus
	Թրպուտ (բույս)	turbud
	Ժիպակ «սնդիկ»	zībaq
155	Ճղուլ «գրոսանք»	ṣuyl
	Իպլիս «սատանա»	iblīs
	Լարյար «բաղեղ»	lablāb
	Լաղապ «պատվանուն»	laqab
	Լապսան «մանանեխ»	labsān
160	Լեհեֆ «ծածկոց»	liḡaf
	Լեղինջ «լեղակ»	liḡanĵ
	Լոկոն «կոծիկ»	luqun
	Լոչ «հիվանդի պապակ»	lavĵ
	*Լովիաս, լուպիա, լորի	lūbiya
165	Լուպնի (ծառը)	lubnī
	Լուք (բժշկական բժպելիք)	lu'ūq
	Լուք (ներկանյութ)	luk
	Լուֆ (խոտ)	lūf
	Լուֆահ (բույս)	luffāh
170	*Լպուտ «գգրար»	libād
	Խազամ «մեխակ»	xuzāma
	Խազիրան «գազի փուշ»	xayzurān
	Խալանջ (բույս)	xalanĵ
	Խալապայ «կոխիկ»	ṡalaba
175	Խալատ «սխալ»	ṡalaṭ
	Խալէ «նավ»	? <հն. galéa
	Խալիայ «կալաքար»	qalia
	Խալիզոն «խղունջ»	ḡalazūn
	Խալիփայ «ամիրապետ»	xalīfa
180	*Խահուէ «սուրճ»	qahva
	Խաղուկ «քրքումի յուղ»	xulūq
	Խամալոն (բույս)	xāmalyūn <հն. chamalleōn
	Խանազիրան (ախաղ)	xanāzīr
	Խանդակ «խրամ»	xandaq
185	Խանդարեկ (բույս)	qanṡārūn
	Խանթար (քաշ)	qanṡār
	Խանսար »	qansar
	Խապազ «հացագործ»	xabbāz
	Խառնուպ (ծառը)	xarnūb

190	Խասապ «թոր» Խասապարիբէ (բույս) Խաստ (չափ) Խաստ «մնացորդ պահանջ» Խարան «գլխահարկ»	qaşab qaşab-ul-ðarīra qisť qisť xarāj
195	Խարբախ (բույս) Խարշուկ «մանանեխ» Խարտալ «մանանեխ» Խաւաղան «ճգնածամ» Խափիթ (ծաղիկ)	xarbaq xarşūq xardal xafaqān řāfit
200	Խեր «բարիք» Խիարշամբար (բույս) *Խիկար «իմաստուն» Խիմուլակաւ (հող) Խիսմ «դատի մեջ ստիճ»	xayr xiyāršanbar hīqār qilīmūliya <հն. kimōlfa xasīm
205	Խիրու (ծառ) Խլեփ (ուռի) Խլէմս «եղիբամաս» Խնդուզ «ջրշուն» Խոզար «դալարիք»	ðiru կամ xiru xilāf ? <հն. klīma qunduz xazrā
210	Խոխ «զեղծ» Խուզամի (բույս) Խուլինջ (ախա) Խուխայ «կոխի» *Խումար «զարթխում»	xauxa xuzāmī qūlinj řaurā xumar
215	Խումբայ (ջերմ) Խուպաղ (բույս) Խուստ (բույս) *Խպիպ «կզակի տակի միւր» Խոխպիսուն «կպրածյութ»	humra xubbaz quşť řabab ?
220	Խսար «պաշարում» *Խսիր Կազ «մետաքս» Կալափտեի «ձութեի» Կալի «calali»	hisār haşīr qazz qalafat qalia
225	Կակիլայ (բույս) Կակուլայ (բույս) Կանդարայ «կամուրջ»	qāqilla? qāqulla qanřara

	Կաշհմար (բույս) *Կապալ 230 *Կապայ Կառան «չվան» Կառբ (բույս) Կարուբայ «միզաման» *Կաւաստ 235 Կափայ «ոտանավորի հանգ» Կիլկիլ (բույս) Կիփալ «եղակ» Կլայ «բերդ» *Կլայեակ «կլեկ» 240 Կլունու (բույս) Կլմուխ » Կնբիլ (բույս) *Կոլատ «կարծ» *Կողպեի 245 Կոստ (բույս) Կոտոր (բույս) Կումաշ «կերպաս» Կուպայ «զմբեթ» Կուպպայ «կապա» 250 Կուռար «ազոավ» Կուռայ «զուրան կարդացող» *Կուրան Կտրան «կուպր» Կրտիմ (բույս) 255 Կրտմանէ » Կրփէ «դարչին» Կոդայ (բույս) Հազազ » Հազր (հարկ) 260 Հլէլիճ, հալիլա (բույս) Հալպիպ (բույս) Հալֆա » Հաճ (փուշ) Համահիմ (բույս) 265 Համամա »	qisşā-al-himār qabāla qaba qarān qasb qārūrā qavvad qāfiya qulqu qīfāl qal'a qala'ī qlūnūs <phlōmos qalmūh, qulmūh qanbīl qulať qufl qust qaťaf qumās qubba řubba řurāb qurrā qurān qaťrān qarťam qardmāni qarfa qiðða ħađađ ħazīra halīlāř ħilbab ħalfa ħāj ħamaħim ħamāma
--	--	--

Համլայ «հարձակում»
 Համկնա (բույս)
 Հանդալ (բույս)
 Հանդադող »
 270 Հանթիթ »
 Հաշա »
 Հաշիշ »
 *Հապալաս »
 Հապըլիտր
 275 Հապըլմիթ } (բույս)
 Հապըլմուք }
 Հապըլնիլ }
 Հապըլպան }
 Հաջամ «սափրիչ»
 280 Հասակ (փուշ)
 Հասպա «քութեշ»
 Հավարի «խաշիլ»
 Հավարիօն «սպիղանի»
 Հավր (ծառ)
 285 Հատաղ (բույս)
 Հատատ «երկաթագործ»
 Հարան (բույս)
 Հարամի «ավազակ»
 Հարբ, հորփ «կոտեմ»
 290 Հարիրայ «խաշիլ»
 Հարիֆ «ընկեր»
 Հարմալ (բույս)
 Հաւայ «օդ»
 Հաւին «համեմանք»
 295 Հաքր «անարգ»
 Հեջուր «սենեկապետ»
 *Հերիսայ
 Հէճ (ուխտադնացութ.)
 Հիլա «սենդուլթյուն»
 300 Հիլիոն «ծնեբեկ»
 *Հինայ (բույս)
 Հլթիտ (խեժ)
 Հնդիպէ «եղերդ»

hamla
 hamqā
 hanzal
 handaqūq
 hantit
 hašā
 hašiš
 habb-al-ās
 habb-ul-γār
 habb-ul-?
 habb-ul-mūlūq
 habb-ul-nīl
 habb-ul-bān
 haššām
 hasak
 hašba
 havārī
 havariyyūn
 havar
 hadaq
 haddād
 haraš
 harāmī
 hurf
 harīra
 harīf
 harmal
 hava
 havāš
 haqīr
 hāšib
 harīsa
 hašš
 hīla
 haliūn
 hinna
 halit
 hindibā

Հնդկուկ (բույս)
 305 Հոտոտ (դեղ)
 Հուլաբ (բույս)
 Հուլպայ »
 Հուճրա «խորշ»
 Հումայդ «թրթնջուկ»
 310 Հուսամ (բույս)
 *Հուրի «զեղուհի»
 Հրշակ (բույս)
 Դադա «կոխիլ»
 Դալամ «գրիչ»
 315 Դալիայ (ուտեղիք)
 Դալիոն (բույս)
 Դամար «լուսին»
 Դամպիլ (բույս)
 Դայսում (ծաղիկ)
 320 Դանոն (նվազարան)
 Դատափ (բույս)
 Դատի «դատավոր»
 Դար «դափնի»
 Դարասէ (պտուղ)
 325 Դարազ (բույս)
 Դարիկոն «սունկ»
 Դաւլ «սայման»
 Դափեթ «բույս»
 Դաֆիլ «անդետ»
 330 Դիէֆ «պատյան»
 Դիկնոււմ «ծանաղա»
 Դիմոնայ (կավ)
 Դուլայ «զմբեթ»
 Դուլղաս (բույս)
 335 Դուլպ »
 Դրֆա «դանդուռ»
 Ծալղուզայ (ծառ)
 Ծանակ (բույս)
 Ծառայ «կարաս»
 340 Ծատէ (ծաղիկ)
 Ծատվար (բույս)

hindqūq
 hušaš
 hulb
 hulba
 hušra
 humaiš
 husāma
 hūriyya
 haršaq
 γaza
 qalam
 qalīa
 γāliyyūn
 qamar
 qanbīl
 qaysūm
 qānūn
 qašaf
 qādī
 γār
 qarasiyā
 qaraz
 γāriqūn
 qavl
 γāfaš
 γāfil
 γālaf
 ? <chālkanthon
 qīmūliyyā <kimōliā
 quilla
 qulqās
 qulb
 xarīa
 γalγūza
 γanāh
 γara <պրս. gara
 γa'da
 γadvār

Ճարհիր (բույս)
 Ճարտավար «քանոն»
 Ճաւարս (խաղող)
 345 Ճեմիայ «մզկիթ»
 Ճզահ «եղնգնաքար»
 *Ճիտ «վիզ»
 Ճիփս «գաճ»
 Ճնդիան (բույս)
 350 Ճսրով «բոնի»
 Ճուարիշ «ղեղերի խառնուրդ»
 Ճուլապ (լմպելիք)
 Ճուլինար «նոան ծաղիկ»
 Ճումճում (բույս)
 355 Ճունդիկ «զինվոր»
 Ճօզպէ «հնդկընկույզ»
 Ճօշիր (ծառ)
 Մազատ «աճուրդ»
 Մազրայ «արտորայք»
 360 Մալ «եղ»
 Մայազ «անմազ»
 Մալում «մոլլա»
 Մահակ «փորձաքար»
 Մահլապ (ծառ)
 365 Մահմէզ «կոշիկ խթան»
 *Մահտեսի
 Մահր «օտիւս»
 Մահրասայ «վարդապետ»
 Մաղապ (ծաղիկ)
 370 Մաղլաղ «զլուխոնծի»
 Մաղճուն «ղեղախոլուս»
 Մանաս «բազկերակ»
 Մամբար «մզկիթի բեմ»
 Մամիթա «բույս»
 375 Մամիրան »
 Մայս «բոխնչ»
 Մայտան «հրապարակ»
 Մանշուր «հրովարտակ»
 Մաշարայ «ածու»

jirjir
 jadval, jedver
 jāvars <լն. chlōrós
 jami'
 jiz'
 jīd
 jībs <լն. gy'psos
 janṭiān
 javr
 juvāris <պրս. guvāris
 jullāb <պրս. gulāb
 jul-i-nār <պրս. gul-i-nār
 jumjum
 jundī <պրս. ṡundi
 javz-i-bava
 jāvsīr <պրս. gāvšīr
 mazād
 mazra'a
 māi
 malas
 mu'allim
 mahakk
 mahlab
 mihmaz
 muqdisi
 mahr
 marxasa
 malāb
 mu'allaq
 ma'yūn
 ?>վր. մաշա.
 minbar
 māmīta
 māmīrān
 mays
 maydān
 mansūr
 mašāra

380 Մառելի «չրատ»
 Մասխարայ «ծաղրաշարժ»
 Մավզաճ (բույս)
 Մավիճ «վետ վետ»
 Մատպուխ «ղեղախաշու»
 385 Մարան (ծառ)
 Մարար (բույս)
 Մարմախուր (բույս)
 Մարքար «գրասոտ»
 *Մելիք «հիշխան»
 390 Մհերապ «մզկիթի խորան»
 Մէլ «հույս»
 Մէն (կշիռ)
 Մթխալ (կշիռ)
 Միւնայ «նալտհանդիստ»
 395 Մլհամ «սպեղանի»
 Մլհետ «ուրացյալ»
 Մլղուն «անիծյալ»
 Մկսար «միս ձեծելու տախտակ»
 *Մկրատ
 400 Մհրուզ «այրած (ղեղ)»
 Մղլակ «ղոռան փակ»
 Մճնեհ «պատերազմական մե-
 քենա»
 Մնթին «զիշահոտ»
 Մնիրայ
 405 Մշղիլ «գրաղիլ»
 Մշմիշ «ծիրան»
 Մու (բույս)
 Մուզ «մարխոշ»
 Մուլուխ (բույս)
 410 Մուլք «հարստություն»
 Մուխատրայ «փորձանքավոր»
 Մուխթասիպ «սուտիկան»
 Մուկլ (խուսկ)
 Մուղրէ «սուսր»
 415 Մուղրի «խլամ կրոնավոր»
 Մուճուր «ծառայ»

mirēix
 masxara
 mavizaj
 mavj
 maṡbūx
 murrān
 murār
 marmāxūz
 markab
 malik
 mihrāb
 amai
 mann
 miṡqāl
 mīnā
 malham <լն. málagma
 mulḥid
 mal'ūn
 miksār
 miqrāḡ
 maḥrūq
 miṡlāq
 manjanīq
 mintin
 mināra
 mašyūl
 mišmis
 mū
 muz
 malūx
 mulk
 muxāṡara
 muḥtasib
 muql
 mayra
 muqri
 majūr

Մուսիայ «զմասած դի»	mūmiyā
*Մունեռիկ «ջառչի»	munadī
Մունֆախդէն «քաղցու»	mayfuxtaj <պրս. may puxta
420 Մուշապաք «խուփ»	mušabbak
Մուշթարի «Լուսնթագ»	muštari
Մուսանջանայ (կերակուր)	mušanjana
Մոյիմանակ «մահմեդական»	muslimān
Մամար «մեխ»	mismār
425 Մասաին (զործիք)	mištarayn?
Մարուպ «երգիչ»	muṭrib
Մրուահար «հոգհար»	marvaḥa
Մրուր (աուրք)	murūr
Ցալաթ «պիտուլք»	ālat
430 Ցալամ «զրոշ»	‘alam
*Ցամբար (ծաղիկ)	‘anbar
Ցասպէ (բույս)	‘adba
Ցարար (ծառ)	‘ar‘ar
*Ցունապ	‘uinnāb
435 Նագրուն «բորակ»	naḡrūn
Նազլայ «հարբուխ»	nazla
Նալ «պայտ»	na‘l
Նալաթ «նզովք»	na‘lat
Նաղաշ «նկարիչ»	naqqāš
440 Նաղարայ «թմբուկ»	na‘ara > Թրք. naḡara
Նաղիշտ (բույս)	nāḡišt
Նաղտ «կանխիկ դրամ»	naqd
Նամամ (բույս)	nammām
Նաշ «դագաղ»	na‘š
445 Նապի (բույս)	nabq
Նասր «բույսերի շարք»	našb
Նասիճ «հյուսիս»	našij
Նասուր «մարմնի կոշտ»	nāsūr
Նասար «հայացք»	nazar
450 *Նարինջ	nārinj
*Նարճիս «նարկիս»	narjis
Նաֆաս «շունչ»	nafas
Նկատ «նշխարքի ծակծկիչ»	naqqāṭ
Նկերացող «ուրացող»	nakar, inkār

455 Նկատ «մարմնի կիտված»	nuqta
Նկրիս «ոտքի ցավ»	niqris
*Նշայ «ուլա»	nišā
*Նոպայ «տագնապ»	nōba
Նուկրայ «դեղ եփելու աման»	nuqra
460 *Նունուֆար	nīnūfar
Նուսխայ «օրինակ»	nusxa
Նուր «լույս»	nūr
Նֆլ (բույս)	nafal
Նաթրութիւն «խաբդախութ.»	šāṭir
465 Նակակուլ (բույս)	šaqaqul
Նահապ (բույս)	šāḥib
Նահմիանդալ (բույս)	šāḥmat-ul-ḥanzal > պրս.
Նահմլհամ	šāḥm-i-ḥantal
*Նամամ	šammām
470 Նամս «արեգակ»	šams
Նապահ (բույս)	šabah
Նառ «խոտովոթյուն»	šarr
Նառանել «ածելիով ճեղքառել»	šarṭ
Նարար «խմելու դեղ»	šarāb
475 Նարրաթ «օշարակ»	šarbat
Նաւայ (հիվանդություն)	šauša
Նաւքարան (բույս)	šavkarān
Նաք «պատուհան»	šaqq
Նեխ «խլամ վանահայր»	šēx
480 Նեհ (բույս)	ših
Նէր «երգ»	šī‘r?
Նէրմ (բույս)	šarm
*Նիպ «պաղլիղ»	šabb
Նիբայ «տանջանքի զործիք»	šaxr
485 Նինարմի (բույս)	sīh-armanī
Նուքահի	šukā‘ī
Նպրամ	šabram
Նրիք «ընկեր»	šarīk
Ուլակ «մոշ»	‘ulaiq
490 Ուշուր «տասանորդ»	‘ušr
Պաղրպանճ (բույս)	bazr-i-banj
Պալատուր (բույս)	balāḍūr

Գալգամ
 Գախարակ «ճախարակ»
 495 Գանձի «որոճ»
 *Գայտար
 Գանթումա (բույս)
 Գապլաս (բույս)
 Գապունան (բույս)
 500 Գառաշառան (բույս)

 Գասպայիճ (բույս)
 Գասպաս «հնդկընկույզի կեղև»
 Գատեխ «սեխ»
 *Գատինճան (բույսը)
 505 Գատլիլ «փշանալ»
 Գատրինջ (բույս)
 Գատրուճ (բույս)
 Գարաս «քոս»
 Գարգաս (բույս)
 510 Գարկուկ «ծիրան»

 Գարսինա (բույս)
 Գաքարայ «արջառ»
 Գիլիսկի (բույս)
 Գիլօր, պլօր «բյուրեղ»
 515 Գիպղայ «թութակ»
 Գնդեղ «կաղին»
 Գուլ (բույս)
 Գուկ «շեփոր»
 Գուսիր, պուսր, պսուր «արմավ»
 520 Գուրճ «բուրգ»
 Գուպա (բույս)
 Գրինկ (բույս)
 Գրիսմէն «մետաքսեղեն»
 Գրուխ «շրեշ բույսը»
 525 Գրքէ «ավազան»
 Գոպօսող «շողոքորթ»
 Զաթաղիկ «կաթուղիկոս»
 Զամ «գունար»
 Զհտաքար (քար)

balgam
 bakara
 bahman
 baytar
 bantuma
 bablaş <յն. péplos
 babūnaĵ <պրս. babūna
 baršāvšān <պրս. parsiya-
 vušān
 basbayiĵ <պրս. baspaya
 basbas
 haṭṭix
 bādinjān
 baṭṭāl
 badranĵ <պրս. badrang
 bādruĵ
 baras
 barzad <պրս. bərzad
 barquq <յն. praikókkion
 <լատ. praecoqua
 barsiānā
 baqara
 biliskī
 billūr
 babṛā
 bunduq
 bul
 hūq
 busr, bisr, busur
 burĵ
 bṭbāṭ
 birink
 ibrišum
 birvāq
 birka
 başbaša
 ĵatalīq
 ĵam'
 ĵuhūd

530 Զնիրայ «ծի»
 Զահար «զոհար»
 Զուաղ «պտասախան»
 Զուարդ «կոզու լեղի»
 Զուհի «ծագրածու»
 535 Զումլայ «գունար»
 *Ռահան (բույս)
 Ռամ «կախարդություն»
 Ռամասես «հողացով»
 Ռայ «զբոշակ»
 540 Ռայիս «զլիտավոր»
 Ռապաս «իջևան»
 Ռասան (բույս)
 Ռամ «տուրք»
 Ռասուլ «մարգարե»
 545 Ռասինէճ (խեժ)
 Ռասոպայ «տուփույտ»
 Ռափիկ «ընկեր»
 Ռեհ «քամի»
 Ռէսմ «սովորություն»
 550 Ռիսուէ «զերբակու»
 Ռուկ «բրինձ»
 Ռուկ «քոսորդ»
 *Ռուկ «զոշար»
 Ռուսուուզէլ «մարթային հի-
 վանդություն»
 555 Ռուսուն «Սուրբ քար»
 Ռոթլ «լիտար»
 Սադիր «ծաթրին»
 Սադրիլ «զազարիլ»
 Սալա «կողով»
 560 Սալաթ (բույս)
 Սալայ «աղոթք»
 Սալիխա (ծառ)
 Սակաս «խեղկասակ»
 Սակմիլ «հողմիլ»
 565 Սակա «ազամով»
 Սաղաղ (բույս)

janība
 jauhar <պրս. gōhar
 javab
 ? <պրս. gāv-zahra
 juḥī
 ĵumla
 raiḥān
 raml
 ? <հն. hrenmatisμός
 rāya
 raīs
 rabāṭ
 rāsan
 rasm
 rasūl
 raīnaĵ <հն. hrōtine
 raṭba
 rafīq
 riḥ
 rasm
 rida
 aruz
 rub'
 rubb

 ? <հն. erysipelas
 rukn
 raṭl
 sa'tar
 satr
 sala
 salat
 šalā
 salīxa
 saqaṭ
 saqm
 šagr
 ša'lab

Սաղաւաթ «ընծա»	şalavat
Սահ (ծառ)	sāḵ
Սամաղ (քար)	summaqī
570 Սամսար «հարկահաժար»	samsār
Սանամբքի (բույս)	sanāmakī
*Սանտալ (փայտ)	sandal
Սապո «հայվե»	şabr
Սասալիոս (բույս)	sāsāliyūs <հն. sésetis.
575 Սատա (խինիս) (բույս)	saṭaxīs <լատ. stachys
Սատապ (բույս)	sadāb
*Սատափ (խեցի)	şadaf
Սատէն (բույս)	sādaḵ
Սատիր «տապար»	sāṭūr
580 Սատիր «շիթիլ»	sadīr
Սատր «բազմոց»	şadr
Սատրինջ «շախմատ»	šatranj, siṭranj
Սարախ (բույս)	saraxs
Սարատան «խեցեփորին»	saraṭān
585 Սարիաթ «շտապում»	sur'at
Սարղանդ (բույս)	saryant
Սարմախ (բույս)	sarmaq
Սարու «մողես»	? <հն. saūros
Սափ «մաքուր»	şāf
590 Սափ «երակ»	şāfn
Սափարայ «սրինդ»	şaffara
Սափրայ «մաղձ»	şafra
Սաֆոսաֆ (բույս)	şa'şāf
Սեղմ (հիվանդութուն)	saqm
595 Սեպան «սև սաթ»	sabaḵ
Սերեֆիկ «սեղանավոր»	şarraḥ
Սէհլ «ծովափ»	sāḥil
Սէքին «հեղ»	sākin
Սթար «ծիրու ծածկոց»	satara
600 Սիտաթ «պատրաստութուն»	siyāsāt
Սիդիզոն (ներկ)	siḥiqūn
Սիսպար, սիսպան (բույս)	sisban
Սիֆուն «խողովակ»	*siḥūn <հն. siṣḥūn
Սլեհ «զենք»	silāḥ

605 Սղար «պաշարում» տես խտար	saḥq
Սղկել «փշրել»	su'ūḡ
Սղուա (դեղ)	saqanqūr
Սնգուր, սնգնգուր (ձուկ)	şundūq
*Սնդուկ	?
610 Սնոպար «զինծ»	sunbādaḵ
Սնպատիճ «փորձաքար»	şanaubar
Սնոպրի (ծառ)	sūrinjān
Սորնջան (բույս)	sulṭān
*Սուլտան	sunnat
615 Սունաթ «թլփատութուն»	sūs
Սուս (բույս)	*suraqastāna
Սուրազաստանայ (բույս)	suk
Սուք (դեղ)	sabistān <պրս. sagpistān
Սպտան (բույս)	sulūf
620 Սփուկ «զեղափոշի»	sakta
Սքիայ «կաթված»	su'd
Սոզ (բույս)	vaqf
Վախմ «վանքին կտակված հող»	vaxširaq <պհլ.?
Վահշիժակ-բակ (բույս)	vaḵḵ
625 Վան (բույս)	vars
Վարս (բույս)	vaqiya
Վաքիայ (կշիռ)	ṭalḥ
Տալիհ «բուսան պտուղը»	ṭalq
Տալիս (բույս)	ṭalāq
630 Տաղակ «սպահարդան»	daḵr
Տանք «լորի»	dand
Տանդ (բույս)	ṭābix
Տապախ (հիվանդութուն)	ṭabaq
Տապաղ «պնակ»	ṭabaqa
635 Տապաղայ «օդի խով»	ṭabāšīr
Տապաշիր «եղեգի հանդուց»	ṭabbār
Տապար (պտուղ)	ṭabarzād
Տապարգա (շաքար)	ṭabl
Տապլ «թմբուկ»	daharān
640 Տապրան (տոտղ)	
Տապրիզատակ տես տապարգա.	ṭarāḥīḥ
Տարասիս (բույս)	

	Տարդոն «թարխուն»	tarxūn
	Տարպայ «անդամ»	darba
645	Տաւթար	daftar
	Տետրատէօս (Զերմ)	tətrataūs <հն. tetartaios
	Տիրս «դոշար»	dībs
	Տիմեա «վերքի խոլու»	dimād
	Տիպի (խեժ)	dibq
650	Տլէ «սպեղանի»	ṭilā
	Տլիսմ } «կախարդանք»	tilism
	Տլսմաթ } «կախարդանք»	tilism+at
	*Տնազ	ṭnaz
	Տուխն «կորեկ»	duxn
655	Տուհա «ծխախոտ»	duxān
	Տուդաս (խոտ)	duʿas
	Տուդու (բույս)	dūqū
	Տրէզ «չորրի բանվածք»	ṭirāz
	Տրխանայ (կշիռ)	? <drachmē
660	Բամաք (սեղ)	rāmak
	Բուպ «քառորդ»	rubʿ
	Փահլ «արու ձի»	fahl
	Փատլայ «արտաթորություն»	faḍla
	Փարասիոն (բույս)	farāsiun <prasion
665	*Փարսախ	farsax <պհլ. frasax
	Փարտ «կենդ»	fard
	Փափղեմն (բույս)	falfīmūn
	Փեննա (ծաղիկը)	favāniyā <հն. palonia
	Փիլաք «երկինք»	falak
670	Փնտուկ «իջևան»	funduq
	Փու, Փու (բույս)	fū <հն. phou
	Փուրկան «դուրան»	furqān
	Փուրփուղնայ (խաղող)	qōrqintiya <հն.
	Փուփլէ, բուբալ (բույս)	fūfal <պրս. pūpal
675	Փստուղ «պիստակ»	fustuq <պհլ. pistak
	Քալաք «երկնքի պարունակը»	falak
	Քամունի «չաման»	kammūn
	Քապապա (բույս)	kabāba
	Քասապ «մսագործ»	qaşşāb
680	Քարաւէ, -ւիա (բույս)	karavia

	Քաքանալ (բույս)	kākunaļ
	Քաքուժ (կենդանին)	qāqum
	Քիլ «կիր»	kils
	Քնիշտ «տաճար»	kanīsat
685	Քշութ (բույս)	kušut
	*Քուժայթ «արմավազույն ձի»	kumait
	Քուշնայ (բույս)	kušna
	Քուշտ (բույս)	kušut?
	Քուսաթ (բույս)	kurraḥ
690	Քուրմ (ծառ)	qurm
	Քուրմ «խաղողի որթ»	karm
	Օնոսմա (բույս)	aunusmā <հն. ónosma
	Օշնայ «կաղնու մամուռ»	ušna
	Օտարիտ «Փայլածու»	ʿuṭārid
695	Փանիտ (շաքար)	fanīḍ
	Փաշարայ (բույս)	fāšīra
	Փառաշ «ոստիկան»	farraš
	Փար «մուկ»	fāra
	Փլեհիլ «ածիլ»	falāḥ
700	Փուլան «այս ինչ»	fulān
	Փուխ «գարեջուր»	fuqāʿ
702	Փոտանլ (բույս)	fūdanļ <պրս. pūdana

1) **Բնության եվ նրա զտությանց մասին.**

Ազատ, զանազ, զոհալ, զոհրայ, բուրայա, հաւայ, զամար, մառնիս, մուշքարի, շամս, ռեն, սարատան, տապաղայ, տապրան, փիլաք, քալաք (=ֆալաք), օտարիտ:

2) **Կրօնական բառեր (Կրօն, նախապաշարմունք, ոգիներ և այլն)**

*Ալք, գոռ, դանիշման, զեւիա, զեւիադար, զենետ, բափուտ, իպլիս, կուտայ, *կուրան, հէն, *հուրի, դադի, նեմիայ, մալում, *մանտեսի, մանրասայ, մամբար, մեհրապ, *մզկիթ, միհետ, միլուն, մեհրայ, մուղրի, մալիմանակ, նալաք, նկատ, շէխ, շաքաղիկ, ռասուլ, ռամ, ռոքուն, սալայ, սունաք, տաղակ, տլիսմ, տլմաք, փուրկան, քնիշտ:

3) **Մարգ, մարզու եվ անասնի մարմնի մասեր.**

Աղէմ, բասար (խեք), *խալ, խասապ, *խպիպ, կիփալ, *կոտոշ, *նիտ, նաֆաս, շուարգ, սափ, սափրայ, փատլայ:

4) **Հիվանդություններ եվ նմաններ, բժշկական բառեր.**

Աթաշակ, ակրաբադին, արակտն, բիմար, բուրճ, բուրհան, *գիթ, գոսակ, գարդ, եարիեփեկրայ, բաշանուն, թուխմայ, լոշ, լուք, խանագիրան, խարագայ, խաւաղան, խուլինջ, խումրայ, *կուզ, հասպա, հավարիօն, հոտոտ, հու, դլմոնայ, նուարիշ, նուլապ, մաղնուն, մանաս?, մատպուխ, միհամ, մհրուզ, մումիայ, նազլայ, նաշ, նասուր, նկրիս, *նոպայ, նուկրայ, նուսխայ, *շառտեի, շարաք, շարբաք, շուսայ, շուշտանդամ, պալղամ, պահրէզ կամ փահրիզ, պարաս, ռամատես, սուստուպէլ, սդուտ, սեղմ, սուք, սփուփ, սքքայ, տապախ, տեարատէօս, տիմետ, տլէ, բամաք, քաջալ:

5) **Կենդանիներ.**

Ապուզնայ, *բլրուլ, դահուն, դաւաք, դուռէն, գամբուռ, գուրափայ, բիմսան, թութակ, իկտիշ, իշտրմուզ, խալիզոն, խնտուզ, կուռար, մալ, մարքար, մեմուն, *շիշակ, պաքարայ, պղպղայ, շնիքայ, ռահվար, սակո, սարու, սնգուր, փանլ, քաքում, ֆար:

6) **Ընթացիկ եվ ընկերություն.**

*Ազապ, հարիֆ, մալազ, մուհուր, փրզանդ:

7) **Երկրագործական.**

ա) **Բույսեր.** — աալուսան, ազատդրախտ, ազարիոն, աթխար, ալաժանքի, ալատնի, ալպուն, ալսուս, ախախիա, ախինոս, ախիոն, ախլիմիա, ախլասաշ, ախհաւան, ախունա, ալիբ, ալրկարհա, աղալունի, աղարիկոն, աճաս, աճուռ, աժիաս, աժլան, աժպան, աժրուսիա, աճարա, աճուրն, *անճարա*, *անճարակ*, աճնիտան, *անճրիթ* — *տամ*, աճնուպար, ապրանն, *ապրուր*, *առօսան*, ախիս, աակորդիոն, աամանջուն, *ասպաղօլ*, *ասպանտ*, *ասպաստ*, *ասպարիմ*, ապուր, *ասպուրակ*, *աստախոտոս*, *ատմատ*, *արանդուպարանդ*, արաք, արիշ, արնուան, արմիման, արտանիսա, *աւթիմոն*, ափարբիոն, *ափիոն, արիլմեկիք, *բադիան*, *բալ, *բալասան, բալուտ, *բակլայ, բահման, բան, բանգ, բաշխ, բատավարդ, բարբիզակ, բեհշտի, բգրուկ, բգրկատուն, բէշ, բիլան, բուրգամուշ, բրնջաս, բտում, *գագար, գգմազ, գուլիսապան, գուլվարդ, դարունաշ, դարիսվար, դարշիշան, դիֆլա, երպատուր, *եղրեանի, զահթեր, զահրայ, զաննապիլ, զառնաք, զարեն, զարիբ, զարու, զարուր, զարրինարախտ, զափրան, զինչարակ, զուռոայ, զրեանդ, զրիշկ, զրմբատ, ջոազիան, թաթրա, թաղանդատ, *թարխուն, թմբուլ, թմրնետի, թնօպ, թութիա, թուտարի, *թուրինջ, թուրշա, թրմուս, թրպուտ, ժիթք, ժիրակ, իշխուն, լալա, լախլախայ, լապլապ, լապսան, լեղինշ, *լոբիա, լուպնի, լուֆ, լուֆան, խազամ, խազիրան, խալանջ, խամալուն, խանդալեկ, *խաշխաշ, լառ, լառաթուփ, խառնուպ, խասապարիթ, խարաք, խարբախ, խարգահրա, խարխուր, խարշուկ, խարտալ, խափիթ, խէրպուէ, խիար, խիարշամբար, խիլալ, խիր, խիրու, խլեփ, խոգար, խոխ, խորփրրոտ, խուզամի, խուպազ, խուռամ, խսլնջան, խուստ. կալի, կակիլայ, կակուլա, կանդանայ, կաշհմար, կասք, կիլկիլ, կլունուս, *կղմուխ, կնբիլ, *կոկան, կոստ, կոտոք, կրտիմ, կրտմանէ, կրփէ, կոշայ, նազազ, *հազարդարուն*, *հազարճաշան*, հալիլա (հլէլիհ), հալպիպ, հալֆա, հան, համանիմ, համամա, *համիշաբահար*, համկնա, հանդալ, հանդադուդ, հանթիթ, հաշա, հաշիշ, *հապալաս, հապրլուր, հապլմիթ, հապլմուք, հապլմիլ, հապլպան, հասակ, հավր, հատաղ, հարան, հարք, հարմալ, հաւաք, *հլ, հիլիոն, *հիմայ, հնդիպէ, հնդկոկ (հոտոտմաքի), հուլաք, հուպա, հումայզ, հուսամ, հրշակ, դալիոն, դամպիլ, դայսում, դատափ, դար, դարասէ, դարագ, դարիկոն, դափեթ, դուլգաս, դուլպ, դրֆա, ճալուզայ, ճանակ, ճատէ, ճատվար, ճարճիթ, ճաւարս, հնդիան, հուլիմար, հուպան, հումնում, հօզպէ, հօշիթ, *մահդանակ*, ման-

լայ, մաղայ, մամիթա, մամիթա, մայս, մավգան, մարան, մարար, մարգանգոռ, *մարխ, մարմախուր, *մեխակ, մեհրիկ, մեթին, մեթուր, մշմիշ, մու, մուլուխ, մուխալլասա? մոզ, *յամպար, յատպէ, յարար, *յունայ, նաղիշտ, նամամ, նանախու, նապխ, *նարինջ, նարնխ, նարմշուկ, նարտան, նիլ, նիշուզ, ննի, *նսուուֆար, նֆլ, շակա-կուլ, շահայ, շահթաուակ, շահմիանդալ, շահմիկամ, շահպալուտ, շահպանակ, *շահպրակ, *շամամ, շահկիար, շապան, շաքարան, շեն, շէրիշտ, շէրմ, շարալութ, շենարմի, շոմին, շուքանի, շուքուֆայ, շպրամ, *շրէշ, յաիկ, չաշմակ, չուքաղ, պագրպանն, պալատուր, պանմի, պանթումա, պապլաս, պապունան, պառշա-տոշան, պասպաս, պասպային, պատեխ, *պատիենան, պատրինջ, պատրուն, պարգատ, պարկուկ, պարսինա, պիլիսկի, պնդեղ (պըն-դուկ), պուլ, պուսը, պուտինա, պտպտ, պրինկ, պրուխ, *ռահան, ռասան, ռատպայ, ռաւանդիսենի, ռիպաս, ռուզ, սաղիր, սալար, սաղայ, սալիխա, սան, սանամբքի, սանտալ, սապո, սասալիոս, սատախինիս, սատապ, սատէն, սարախ, սարդանդ, սարմախ, սաֆ-սաֆ, սիսամբար, սիսպար, *սմբուլ, սնոպար, սոնոպրի, սորնշան, սուս, սուրաղաստանայ, *սպանախ, սպարակ, սպոտան, սոզ, վան-շիմակ, վան, վասմա, վարս, տալին, տալխ, տահմուշտ, տանը, տանդ, տապար, տաստանպունայ, տարասիս, տարդոն, տիվտար, տուին, տունա, տուղաս, տուղու, փարասիոն, փափղեմն, փեննա, փու, փուրփուզնայ, փուփլէ, փատուղ, *փրփրեմ, քամունի, քաշմ, քապապա, քարաւէ, քաքանաշ, քնար, քշուր, քոռի, *քուջնայ, քուշտ, քուռաք, քուրմ «խաղողի որթ», քուրմ (ծառը), օնոսմա, *օշնայ, ֆաշարայ, ֆոտանջ:

բ) Այլք.—ղլէֆ, մաշարայ, նասը, *չեչ, *սարբինայ, սատիր-պահէզ, տապաշիր:

Յ) Խաւճարածուրյուն եւ գյուղաօճեխուրյուն.— ալիկ:

բ) Ձիու սարք.—ըրբեկ, թանդ, լկամ, մանմէզ, մալ, սախ-տել, սրար, փալան, քնփուշ:

Ծ) Գիւրբյուն եւ աղվես.

ա) Արհեստի վերաբերյալ.—ալքիմիա, դաստաքար, *դինգ, դոին, *լպուտ, խապագ, խարուանդայ, կալափտել, *կալատ, հաջամ, հատատ, *մունետիկ, մամար, պախարակ, *պայտար, *ջուլ-հակ, սերեֆիկ, սիֆուն, փալանտուզ, *քիմիա, քասապ:

բ) Ուսում եւ գրականութիւն.— քախքըդ, կափայ, դալամ, տալար:

գ) Նկարչութիւն.— աղաղ, նարտավար, մստոին, նաղաշ:

դ) Երաժշտութիւն.— քարբուտ, *գոս, դամ, դաշտ, դանոն, մտրուպ, նաղարայ, նաֆիր, շէր, պուկ, սափարայ, տապլ:

ե) Խաղեր եւ մրցանք.— *անպարար, մագատ, մաղլադ, մաս-խարայ, *նարտ, շուհի, սատրինջ, սակատ, քուշտագիր:

10) Գույներ.— դահնագույն, *քումայք:

11) Վաճառականութիւն եւ գրամական գործարք.

Ամանաք, *ապրայ, բագագ, դարայ, խաստ, *կապալ, դաիլ, մագատ, մալ, մուլք, նաղտ, շրիք, շամ, շումլայ, ռեմոն:

12) Շինութիւն եւ շինքի մասեր.

Արունի, անառ, ամարաք, բար, գիկ, բալութայ, կանդարայ, ւայ, հունրա, դուլայ, մղլակ, նղմունք, շաք, պուրն, չափար, պրքէ, ռապատ, սայվան, սարուփարթայ, փնտուկ, քնիշտ:

13) Հագուստ եւ զարդ.

Ապուկալին, բալափուշ, դաստառչայ, դուռայ, գունար, *լաթ, *լաջակ, լեհեֆ, *խալխալ, կագ, *կապայ, կումաշ, կոռտիկ, կուպ-պայ, մավին, մրուանար, նասին, նկատ, շարփուշ, շմաթ, շուպ, *չմուշկ, *չուխայ, պեչայ, պրիսմէն, ռիտդէ, սարաղուճ, տուֆ, տրէզ, փարտայ, *քթան:

14) Ուտելիք եւ ըմպելիք.

Աղիտայ, գուլբայշաքար, գիրպան, թարխանա, լեղանգ, *խահուէ, հավարի, հարիրայ, հալին, *հերխայ, դալիայ, մուն-ֆախէն, մուստառ, մուտանջանայ, *նշայ, նշաստակ, *շիրիկ, *ռուպ, տապարգա, տապրիզատակ, տիրո, փենիտ, քուֆտայ, ֆա-նիտ, ֆուխա:

15) Մուտնից տնտեսութիւն, կարասիք.

*Ակիշ, բուրակ, բուխար, դաստապրիկ, դաստիշոն, դուրն, ընջան, *քաս, թափուր, թուայ, *խսիր (կամ հասիր), կառան, կարուրայ, *կոդպէք, հեմիան, ճառայ, մկսար, *մկրատ, մուշա-պաք, յալաք, չամչաշերեֆ, շովլի, սալա, սատուր, սատր, սինի, *սնդուկ, տապաղ, քաֆշայ, քոր:

16) Թիվ, չափ, կեփռ եվ գրամ.

Առիլ, դաստա, դահադրամ, թասու, թուխթ, խանքար, խանսար, խաստ, հաշտադրամ, հաւթադրամ, մէն, մթխալ, ուուզ կամ րուպ, ոօրլ, վաքիայ, տտտակ, *տրցակ, տրխանայ, տարպայ, փարսախս, քիլակ:

17) Մետաղներ, հանքային նյութեր, խեծ եվ նմաններ.

Աղարոբ, աղեղ, աշմ, ապրախիլ, ասրունն, *աւշակ, բարկ-ժատ, *բուստ, *գաճ, դնունադհունար, Եամանի, եաշմ, եասպ, զինջուփր, թանազ, թութի, ժիպակ, *լազուարթ, *լալ, լոկոն, լուք, խալիայ, խաղուկ, խիմուլակաւ, խոիպիտոն, կակիլայ, *կլայնկ, կարան, հլթիտ, ղկնդում, նգան, նիփս, մահակ, մահմուտայ, մարդասանկ, մարդարիշար, մուկլ, մուդրէ, նարրուն, *շիպ, պատ-ժախ, պիլօր, շիզաքար, շոհար, ռատիմէն, ոօշնայ, սամաղ, *սա-տափ, սեպան, սիզիգոն, սիբիխիշտ, սնպատին, տիպիս, քարու-պայ, քիլս:

18) Ճամփի վերաբերյալ.— խալէ:

19) Ժամանակ եվ տեղ.— բուեիդ, բուեմիթ, *շուտտ, (փետրվար):

20) Երկիր եվ պետութուն.

ա) Երկրի մասեր.— գարբանդ, գուկակ, թիլ, խլէմս, կլայ, մազրայ, մայտան, մինա, սէնլ, վախմ:

բ) Պետական կազմ և պաշտոնները.— ամիր, ամիրալ-մուսնիք, *գզիր, ըռքեպդար, թարխան, խալիփայ, նեշուբ, ճաշկիր, *մեիթ, մինապան, մուխթասիպ, շահնայ, ջիհանգիր, ռայիս, սամսար, *սուլտան, փաթշահ, փայիկ, ֆաուաշ:

գ) Վարչական գործարք և դիվանական գրություններ.— դալի, մահր, մանշուր:

դ) Հարկեր.— ապուր, դաման, խարան, հազր, մրուր, ուշուր, պաջ, ռասմ:

ե) Պատերազմ.— ալամ կամ յալամ (դրոշ), ալափ, բահա-դուր, գախմեի, *թալան, խանգակ, խուխայ, խսար, համլայ, հա-բամի, դագա, նունդիկ, մնենն, չարխաւոր, ջանդար, ռայ, սրս-հանգ, քմին:

զ) Ձենքեր.— բալաթիկին, դմիշկ, խալաչուրի, ճաւշանիոու, ճօշան, շիմշիթ, շխրայ, սատիր, սլեն, փիլիկոն, քէշ:

21) Սովորակած, կյանքի բառեր.

Այանի (յայտնի), արայլշ, բեչարայ, բէշմար, բէումէտ, բէսիֆաթ, բէտար, բեվաֆայ, բուխտան, գանդալ (կատակ), գաստրութիւն, *գիրտ, գրուստ, զլլիլ, ըոզակ, թագել, թաժայ, թամաշա, թարկել, թետպիր, ժղուլ, լաղայ, խալապայ, խալատ, խեր, *խիկար, խիսմ, խշկիլ, *խումար, *կոլոտ, կուշդ, հաքր, հիլա, դալ, դաֆիլ, *նորով, մէլ, մշղիլ, մուզ, մուխատրայ, նատար, նկիրացոդ, նուր, շաքրութիւն, շառ, շիւան, չախել, պատիլ, պօսպօ-սող, ջուապ, ռափիկ, ռէսմ, ռինտ, *սազիլ, սազրիլ, սակմիլ, սա-դաաթ, սաքիաթ, սափ, սէքիմ, սիասաթ, սղկել, *տաղել, *տնագ, տուրկան, փարա, *քիչ, քուշջ, քուշատ, ֆլենիլ:

22) Մակբայ և նմաններ.

*Ափսոս, բարէ (գոնե), գինահար, թէզ, ֆուլան:

Թեև ցանկը բավական սովոր է, բայց այնուամենայնիվ ամբողջական չէ. որովհետև մեծ մասամբ հրատարակված չեն դեռ այն գրությունները (միջնադարյան տաղեր, բժշկարաններ, ախտաբանական գրվածքներ, պաշտոնական կամ դիվանական գրություններ և այլն), որոնցով հարուստ է այն ժամանակվա հայ գրականությունը: Չունինք մի այնպիսի բառարան, ուր այդ բոլոր բառերը հավաքված ու ամփոփված լինեին. եղած-ներն էլ կրում են պատահական բնույթ, որովհետև այդ բոլոր բառերը համարվում են մեզանում խորթ ու անհարազատ տարր, գրական լեզվից իսպառ մերժելի և արժանի միայն ուսմական լեզվի մեջ գործածվելու: Սրանով արդեն մենք հայտնած ենք լինում, թե արաբական փոխառությունները ինչ ընդունելու-թյուն դտան հայերենի մեջ, եթե ոչ անցյալում, գոնե այժմ և ապագային: Նրանք իրենց գոյությունից մեծագույն մասամբ զրկվելով՝ մոռացության մատնվեցին. մի մասը եթե շարունա-կում է իր գոյությունը ուսմիկ կամ ժողովրդական լեզվի մեջ հայության գրեթե բոլոր գաղութներում, այդ բանը միմիայն պարսկերենի, թուրքերենի, թաթարերենի և տաճկերենի միջո-ցով է, որոնք ունենալով բազմաթիվ արաբական փոխառու-թյուններ՝ պատճառ են դառնում նույն բառերը հաստատուն պահելու դեռ հայ բարբառների մեջ: Գալով գրական հայերենին, նա չափազանց անողորք է այդ կարգի փոխառությանց վերա-

բերմամբ, որոնցից 111 հատ միայն ընդունել է իր մեջ (33 զուտ արարքերն, 58 նոր պարսկերեն): Այս բառերը նշանակված են մեր ցանկում աստղանիշով, և շատերը մեր արդի լեզվի անհրաժեշտ տարրերն են կազմում. ինչպես՝ բալ, բակլայ, թութակ, քիշ, մզկիթ, կաւատ, խալ, պատինճան և այլն:

Այն հեղինակը, որ ամենից ավելի շատ մթերք ունի արարքերնից փոխառյալ բառերի, Մխիթար Հերացին է (ԺԲ դար), որ գրել է իր «Ջերմանց մխիթարութիւն»-ը (հրտր. Վենետիկ, 1832): Այս գիրքը գերմաներենի թարգմանեց Seidel (տպ. Leipzig 1908), հարստացնելով այնպիսի ընդարձակ գիտական ձեռն բացատրութիւններով, որ գիրքը սովորական թարգմանութիւնից հետո, ստուգաբանական բառարանի երևույթ է ստացել:

Բառարանական արժեք ունի Ալիշանի «Հայրուսակը» (հրտր. Վենետիկ, 1895). որ հավաքուեմ է բոլոր հայերեն բուսանունների, միասին առնելով նաև արարքերնից փոխառյալ բուսանունները, որոնց ստուգաբանութիւնն էլ տալիս է: Սրանից ավելի արժեքավոր գործ է Նորայրի «Քննադատութիւն Հայրուսակի», որ մաս-մաս տպված է նախ Հանդ. ամս. 1921—6 և ապա արտատպված առանձին գրքով (?): Հեղինակը տալիս է այստեղ շատ բառերի բացատրութիւնը, արարքերն համապատասխան հոմանիշները, ուղղելով նաև Ալիշանի սխալները: Շատ լուրջ գիտական աշխատութիւն է:

Այս բոլորի նյութը և բառերի ստուգաբանական բացատրութիւնը հավաքելու մտքով եմ իմ «Արմատական բառարանի» մեջ, ավելացնելով իմ կողմից նաև շատ պարսիկ ու արաբ բուսանունների մեկնութիւնը, քաղելով Կամուսի ծովածավալ արարքերն բառարանից (տպ. Պոլիս Հիշքի 1250 թ.) և մանավանդ Steinschneider-ի արարքերն բուսաբանական բառերի սքանչելի բառարանից (տպ. WZKM հտ. 12):

Աշխատութիւնս ընթացքում հրատարակվեցին երկու պատկառելի գործեր: Առաջինն է Ամիրտովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ»-ը, աշխատակցութեամբ դեղագործ-գիտնական Կ. Բասմաջյանի (Վիեննա, 1927): Այս գործը, որ գրված է ԺԾ դարում, պարունակում է 3754 դեղանյութերի (մեծ մասամբ բուսական) ընդարձակ բացատրութիւնը: Սա մի տեսակ բառարան է արարքերնից հայերեն, ուր բառերը հայատառ արարքերն են (մինչև անգամ «հաց» բառը կոչված է արաբ. խու-

լալ): Հրատարակիչը ոչ միայն ամեն մի արաբ բառի մտաբեր է համապատասխան Ֆրանսերենը, այլ և տվել է բոլոր բառերի համար երեք տարբեր այբուբենական ցանկ՝ էջ XIX—XLIV նրանսերեն, էջ 625—691 (եռասյուն) և էջ 692—753 (երկսյուն)՝ արարքերն և հայերեն:

Երկրորդն է նույն Ամիրտովլաթ բժշկի կազմած «Օգուտ ժշկութեան» գիրքը, որ հրատարակեց հայտնի հայազետ Ստ. Դալիսայանցը (Երևան 1940 թ.): Եթե առաջինը դեղաբանական էր, այս երկրորդը ախտաբանական է: Հրատարակիչը՝ էջ 545—578 տալիս է երկսյուն ցանկ՝ գրքում պատահած բոլոր բժշկական և դեղաբանական բառերի, քաղելով բժ. Պ. Մելիք-Փարսաշանյանի և դեղագետ Յ. Սևպետճյանի անտիպ բառարանից:

Վերոհիշյալ երկու աշխատութեանց միջոցով մենք այժմ մեր ձեռքին ունինք ըստ կարելիության լիակատար արաբական բառերի բժշկական բառարան, բայց նրանցից ոչ մեկը չի տալիս բառերի ծագումը կամ ստուգաբանութիւնը:

Հետաքրքրական է իմանալ, թե մինչև երբ տեկց արաբական փոխառութիւնների գործածութիւնը մեր մեջ:

Տեսանք որ նրանց սկիզբը հազիվ 7-րդ դարից է: Չափազանց շատանում են ԺԲ դարի գրվածքներում: Սրանք մեծ մասամբ բժշկական և հատկապես բուսաբանական բառեր են: Բայց կան նաև սովորական կյանքի բառեր: Բժշկական բառերը շարունակվում են դեռ ԺԵ դարում: Ամիրտովլաթ Ամասիացին իր խոշոր գործերում մեծ տեղ է տալիս նրանց. նույնը շարունակում է բժ. Բունիաթ Սեբաստացին ԺԶ դարում (1630 թ.): Այնուհետև դադարում է, ըստ որում գալիս է եվրոպական բժշկութիւնը:

Բացի հասարակ անուններից հայերենը արարքերնից ու նոր պարսկերենից փոխ է առել նաև անձնական հատուկ անուններ: Ինչ.

Արդլա	Ազամաթ	Աղիդա
Արլարաս	Ազիդ	Ամադին
Աբլասադ	Ազիզմելիք	Ամբար
Աբլղարիբ	Ախի	Ամինագին
Աբուղամբ	Ահլիմելիք	Ամինիա
Աբուսահլ	Աղեղ	Ամիր

Ամիրազիզ	Արիֆ	Չարիֆ
Ամիրզովաթ	Աւալ	Չարաթ
Ամիրխէր	Աւդալ	Չենադին
Ամիրմելիք	Աւդուլ	Չենատմելիք
Ամիրմուլք	Աւլան	Չիադմելիք
Այնիմելէք	Բադալ	Չիրիդա
Անիֆա	Բադր	Չոհալ
Ապլջահապ	Բահրի	Չոհրայ
Ապուլասովադ	Բադի	Չուլալ
Ապուհամզա	Բաշարաթ	Էդիլ
Ապուդանամ	Բինաթ	Էլիազ
Ապուժայեայ	Բուլքարամ	Էմին
Ապուժկղէմ	Դաւուտ	Ըռանա
Ապուժուսէ	Դովլաթ	Համամ
Ապուպաքր	Դունիա	Հասան
Ապուջափր	Եադուբ	Չալալ
Ասադ	Եմենիկ	Սաֆար
Ասիլ	Եօնուզ	Նուբադին
Ասլի	Չահրդ	և այլն:

Ամբողջական ցուցակը տես իմ «Հայոց անձնանունների բառարանում»: Աղջային ու կրոնական տեսակետով այս կետը զարմանալի պիտի լիներ, եթե սակայն չնկատենք, որ փոխառյալ անձնական անունները ըստ իմաստի անմեղ ու սովորական բառեր են, ամականներ, պատկերավոր բացատրություններ, այն ժամանակները հայտնի եղած նշանավոր մարդկանց անուններ և երբեք չկա նրանց մեջ մեկը՝ որ հիշեցնե մահմեդական կրոնը (ինչ. Մուհամմեդ, Ալի և այլն):

Մենք մինչև այժմ չխոսեցինք Հայաստանից դուրս գտնված հայության մասին, թե ինչ ազդեցություն են կրել նրանք արաբներից: Այստեղ կա երեք խավ. հնագույն խավը Եգիպտոսի, Ասորիքի և Միջագետքի այն հին գաղութներն են, որ արաբական ահաբեկի մեծամասնության մեջ կուլ դնալով, ձուլվել անհետացել են: Երկրորդ խավը կազմում են այն գաղութները, որոնք թեև դեռ կրոն և ազգություն պահել են, բայց լեզուն կորցնելով ամբողջովին արաբախոս են դարձել. այսպես են Հալբի, Դամասկոսի, Բեյրութի, Մերզինի, Մուսուլի, Քերքյուքի

գաղութները, որոնց վրա պետք է ավելացնել նաև Սղերդը՝ որ թեև Հայաստանի մեջ է, բայց իբրև ծայրագավառ, շրջակա բուրդ ու արաբ մեծամասնության ազդեցությամբ կորցնելով հայերեն լեզուն, քրդախոս ու արաբախոս է դարձել: Երրորդ խավը կազմում են Ասորիքի հյուսիսային արևմտյան անկյունը գտնված հայ գաղութները (Չոք-Մարզուան, Անտիոքի գյուղերը, Սուեաիա և հատկապես Ջիսրի-Շուղուրի հայերը), ինչպես նաև Բաղդադի և Բասրայի հայերը, որոնք խոսում են հայերեն բարբառներ, բայց մեծապես ազդված արաբներից. հմմտ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, էջ, 213—214 դրված հատվածները: Այս երեքից դուրս իբրև չորրորդ խավ պետք է հիշել Ասորիքի նույն շրջանը ապաստանած մոտ 150.000 հայերին, որոնք թեև այժմ հայախոս, բայց շրջապատի արաբախոս մեծամասնության ազդեցության տակ՝ ուշ թե շուտ պիտի կրեն արաբերեն լեզվի կնիքը և մտնեն նախորդ երրորդ խավը:

Այս բարբառներն ունին արաբերենից փոխառյալ բազմաթիվ բառեր. ինչ. Սվեդիո բարբառում՝

- թմջրբիլ «փորձել» <արաբ. tajruba
- դուրդա «քվե, վիճակ քաշել» <արաբ. qur'a
- ռադա «կամք» <արաբ. irada
- ըրրոզ «բրինձ» <արաբ. aruz

Նույն իսկ հիլիկիայի հայ բարբառները ունին զուտ արաբերեն բառեր, որոնք Ռուբինյանց ժամանակից մնացած ձևեր են. ինչ. կանդարայ «կամուրջ» (Չթ. գանդայո, ՀՃ. գ'անդայո), խասապ «թոք» (ՀՃ. խասոբ «թոք, լյարդ»):

Ա Ղ Բ Յ Ո Ւ Բ Ե Բ

Hübschmann.—Die semitischen Lehnwörter im Altarmenischen, ZDMG 1892, էջ 226—228, հյ. թրգմ. Տաշեան, Վիեննա, 1894, էջ 49—70, Արարական փոխառեալ բառեր: Առաջինի ամփոփումը տես նույն հեղինակի Arm. Gram. էջ 259—280:

ՎՐԱՅԵՐԵՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՎՐԱ

Հայաստանի հյուսիսային կողմը, Սև և Կասպից ծովերի միջև և Կուր գետից մինչև Կովկասյան լեռները փոխադրված ընդարձակ երկիրը՝ անհիշատակ ժամանակներից սկսած՝ օրրան է եղել բազմաթիվ ցեղերի, որոնց թիվն այսօր 40-ի է հասնում: Այս ժողովուրդների և նրանց խոսած լեզուների թվումն ու ցեղակցական կապը տվել ենք վերը՝ գլուխ Թ:

Այս ժողովուրդների մեջ ամենամեծ և ամենակարևոր տեղը գրավում էին Վրացիք և Աղվանք, առաջինները արևմտյան կողմը՝ մինչև Սև ծով, երկրորդները արևելյան կողմը՝ մինչև Կասպից ծով: Թե Վրաստանը և թե Աղվանք՝ հայոց պես, շարունակ ենթակա եղան այն բոլոր արշավանքներին, որ գալիս էին արևելքից ու արևմուտքից: Նրանք էլ կրեցին իրար հետեւից մարաց, պարսից, մակեդոնացոց, սելեվկյանց և հռոմեացոց լուծը: Չափազանց սերտ են ամեն տեսակի այն կապերը, որ այս երեք ազգերն ու երկիրները կապում էին իրար հետ պատմական ամբողջ շրջանում: 37 թվին վրացիք՝ հռոմեացոց օգնությամբ Հայաստանի վրա թևարկություն ունեցան, որ տեղեց մինչև 54 թիվը: Այս 17 տարվա շրջանում Հայաստանի գահի վրա նստում էին վրացի թագավորներ և Հայաստանում էր գտնվում վրացական մի բանակ: 184 թվին, օսերի արշավանքի ժամանակ, վրացիք կարողացան ոչ միայն ազատել իրենց երկիրը նրանց տիրապետությունից, այլ և արշավելով Հյուսիսային Կովկաս, նվաճեցին բոլոր ժողովուրդները՝ ալաններից մինչև ափսապները: Սասանյանների ժամանակ, Վրաստան և Հայաստան, գրեթե միշտ դաշնակից, երկուսն էլ հավասարապես հարկատու վասալ թագավորություն էին: Հուլյն-արաբական հակամարտության ժամանակ, Հայաստանի պես Վրաստանն էլ նշավակ դարձավ երկու պետությանց ձեռքին: Արևելյան մասը անցավ արաբներին, իսկ արևմտյան մասը հույներին: Արաբների անկման ժամանակ, վրացիք էլ ապստամբեցին

և առաջին անգամ Աբխազիայում (746) հիմնվեց Արևմտյան Վրաստանի անկախ պետությունը, որից հետո կազմվեց Արևելյան Վրաստանի պետությունը (786): Բագրատ Գ մեծը (մ. 1014) իր գալիսունի տակ միացրեց երկու վրացական պետությունները և ստացավ շահնշահ տիտղոսը:

1046 թվին հայոց Բագրատունի թագավորությունը կործանվեց, և Անի մայրաքաղաքը հունաց ձեռքն անցավ: Քիչ հետո արշավեցին սելջուկները և մեծ կոտորածով գրավեցին Անին (1064): Հայ իշխաններն ու ժողովուրդը սկսան ցրվել և ապաստան որոնեցին Վրաստանում:

Այս ժամանակ Վրաստանն էլ ենթարկվել էր այն բոլոր աղետներին, որոնց ասպարեզ դարձավ ամբողջ Արևելքը՝ սելջուկյան արշավանքի պատճառով: Բայց Վրաստանը չընկճվեց և Մելիքաճի մահից հետո գլուխ բարձրացնելով, անկախ պետություն հիմնեց: Այս միջոցին վրաց թագավորն էր Դավիթ Բ Վերանորոգիչը (1089): Դավիթ երկրորդը, գիտակ բազմաթիվ լեզուների, որով ուղղակի հարաբերություն մեջ էր մտնում գանազան ցեղերի և ժողովուրդների հետ, ձեռք գարկեց մի մեծ Վրաստան կազմելու գործին:

Ասացինք, որ այդ միջոցին Անին գրավված և հայոց Բագրատունյանց պետությանը վերջ էր տրված: Սկսել էր հայերի մեծ գաղթը դեպի հյուսիս և արևմուտք: Անշուշտ Հայաստանի նարավային և արևմտյան գավառներն էին, որ գաղթում էին դեպի արևմուտք՝ Փոքր Ասիա և Կիլիկիա, ուր կազմվել էր Թուրքիայանց պետությունը: Իսկ Հայաստանի հյուսային գավառների բնակիչները, իրենց իշխաններով միասին, դիմում էին դեպի Վրաստան: Ընդհանրապես վրաց թագավորները և հատկապես Դավիթ Բ՝ մեծ սիրով ընդունեց գաղթողներին, հայ իշխաններին և զորավարներին պաշտոններ տվեց և իր բանակը հայ զինվորներով ստվարացրեց:

Այս բանակով Դավիթը նախ գրավեց Տփղիսը, որ իր տեղության մայրաքաղաք դարձրեց (1121), հետո նվաճեց Նուխին, Շամախին, Օլթին, Տավուշը, Լոռին, Տաշիրն ու Կյուրիկիի հայոց թագավորությունը և ամբողջ Կովկասը՝ Սև ծովից մինչև Կասպից ծով, իր իշխանության տակ առավ: Անիի հայերը կանչեցին նրան, և Դավիթը զորքով դիմելով Անիի վրա, միջի հայոց օգնությամբ գրավեց քաղաքը թուրք Ամիրայի ձեռքից:

Վրաստանի մեծացման և հզորացման այս աննախընթաց շարժումը իր գագաթնակետին հասավ Թամար Թագուհու ժամանակ: Ինքը, սերած լինելով բյուզանդական կայսերական ընտանիքից, վայելում էր արդեն հունաց բարեկամությունը: Ամուսնանալով օս իշխոսն Դավիթ Սոսլանի հետ և իրեն աջակից ընտրելով Ջաքարե և Իվանե հայ իշխաններին, ձեռք բերեց նաև այս երկու ժողովուրդների վստահությունը: Առաջինին գրավ ամիրսպասալար վրաց, երկրորդին՝ հայոց և վրաց աթաբեկ: Սրանք վրաց Թագավորության սյուները դարձան: Հայ-վրացական միացյալ բանակի գլուխն անցած՝ բազմաթիվ պատերազմներ մղելով շրջակա թուրք ամիրաների դեմ, գրավեցին Աղվանքը, Սյունիքը, Գանձակը, Շիրակը, Դվինը, Անին և մինչև իսկ Կարինը հարկատու դարձրին: Այսպիսով հյուսիսային և հարավային Հայաստանը նվաճելով և ամիրաներից մաքրելով՝ վրաց պետությանը միացրին: Արդարի՛ ի սուլթանը հարձակվեց Անի վրա, վրացիք նրան էլ հաղթեցին, արշավեցին Պարսկաստան և Ատրպատականի զանազան կողմերը ավերելով՝ գրավեցին Արդարի՛ն ու Թավրիզը (1210): Այսպիսով վրացիք հիմնեցին մի մեծ պետություն, որ տարածվում էր Բաթումից մինչև Թավրիզ, պարունակելով իր մեջ Վրաստանը, Հայաստանը, Աղվանքը և Ատրպատականը:

Վրացական այս գերիշխանությունը Հայաստանի ու Կովկասի վրա շատ կարճ տևեց և Թաթարների արշավանքի ժամանակ վերջացավ: Զալաբեղդինը գրավեց ու ավերեց Թիֆլիսը 1226 թ., Չարմաղանը ասպատակեց Աղվանքը, Վրաստանը, Հայաստանը (1236), գրավեց Անին ու Կարսը և բոլոր մասեր իշխանություններին վերջ տվավ:

Օսմանցոց ժամանակ Վրաստանը Հայաստանի պես տաճկական ու պարսկական հակամարտության զոհ դարձավ, մինչև ռուսական տիրապետությունը: Դրան վերջ տվավ Սոփետական իշխանությունը: Կովկասյան բոլոր ազգերը միացած՝ կազմեցին Անդրկովկասյան Ֆեդերացիան, որի մեջ մտնում էին Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը: Այժմ սրանք անկախ միութենական պետություններ են:

Հայ-վրացական հարաբերություններին այս համառոտ ամփոփումից երևում է, որ հայերը վրաց հետ սերտ հարաբերության

մեջ են եղել ամբողջ 2100 տարի, որ և շարունակվում է այսօր էլ: Այս թիվը գերազանցում է բոլոր նախորդ թվերը և նույնիսկ ավելի է. քան պարսիկներինը, ըստ որում մեր հարաբերությունները իրանյանների հետ սկսում են ավելի հին ժամանակից, բայց վերջանում են արդեն 11-րդ դարում՝ թուրքական առաջխաղացության պատճառով: Հնագույն շրջանում հայերեն ու վրացերեն լեզուների փոխադարձ ազդեցություն մասին արդեն խոսել ենք (գլուխ Թ): Այստեղ ուզում ենք խոսել այն ազդեցության մասին, որ վրացերենը ունեցավ հայերենի վրա ավելի նոր ու նորագույն շրջանում:

Վրացիք տիրեցին Հայաստանին և երկիրն իրենց Թևարկության տակ առին ամբողջ հարյուր տարի (ԺԲ դար): Այս շրջանին անշուշտ տեղի ունեցան բազմաթիվ պաշտոնական հարաբերություններ վրաց Թագավորների, Վրաստանի հայ սրաշտոնավորների և հայ իշխանների միջև: Այս ժամանակի գործ է, անշուշտ, վրաց պատմության Թարգմանությունը, որ համարում են Ժ—ԺԳ դարից (տպ. Վենետիկ 1884): Հեղինակն է վրացի Զուանշեր պատմիչը, իսկ Թարգմանչի անունն անհայտ է. նույն շրջանից է Պրոկրի Դիադոխոսի «Շաղկապք աստուածաբանականք», որ վրացերենից Թարգմանեց Միմոն քահանան՝ վրաց «Պրնձահանք» վանքում (1248 թ.): Կան Թերևս նաև ուրիշ գործեր, որոնք մեզ անհայտ են: Հարյուր տարին այնպես փոքր շրջան չէ, որպեսզի վրացերենը առանց ազդեցություն մնար հայերենի վրա: Բայց այն միջոցին, երբ վրացիք տիրեցին Հայաստանին, թեև վրաց գրականության ծաղկյալ շրջանն է, բայց հայերն էլ հետամնաց վիճակի մեջ չէին: Թեև ընկել էր հայոց Թագավորությունը, բայց Կիլիկիայում ծաղկյալ վիճակի էր հասել Ռուբինյան պետությունը և ԺԲ դարը հայոց գրականության էլ վերածնության շրջանն է: Թե արևելքում, և թե մասնավոր արևմուտքում երևան են գալիս նշանավոր մատենագիրներ, որոնց նմանը միայն Ե դարում ունեինք: Մի օտար ժողովրդի տիրապետությունը մի երկրի վրա, անշուշտ, այնպիսի մեծ ազդեցություն չի կարող գործել այդ երկրի լեզվի վրա, եթե նա գտնվում է ծաղկյալ ու բարգավաճ վիճակում, քան եթե նա զուրկ լիներ գրականությունից կամ ունենար մի խղճուկ գրականություն: Ահա այս պատճառով վրացերեն լեզուն հայերենի վրա չի գործել մեծ ազդեցություն:

Այնուամենայնիվ մենք ունինք 54 բառ, որ իմ կարծիքով հայերենը փոխ առած պետք է լինի վրացերենից՝ հիշյալ ժամանակաշրջանում և կամ քիչ հետո:

Այստեղ դնում ենք այդ բառերի այբուբենական ցանկը:

Վրաց.

- | | |
|--------------------------------|-------------|
| 1) ակութ «վառարան» | ակութա |
| 2) արտայայ «տավարի ազդրի միսը» | արտալա |
| 3) բալախ «փշախոտ» | բալախի |
| 4) բալղինջ «մուկ» | բաղլինջա |
| 5) բանդակ «ռուկ» | բադագի |
| 6) բոչոյ «փոքր ձի» | բաչա-ցխենի |
| 7) գմիր «ուժեղ» | գմիրի |
| 8) գուլայ «սիրտ» | գուլի |
| 9) դդաւփալ «թագուհի» (վրաց) | դեդոփալի |
| 10) դէդէպոււ «վրացի ազնվական» | դեդեբուլի |
| 11) դպէլ (տիտղոս) | տբելի |
| 12) երիսթավ «իշխան վրաց» | էրիսթավի |
| 13) թոկ «չվան» | թոկի |
| 14) թոշ «սառույցի կտոր» | թոշի |
| 15) խազ «գիծ» | խազի |
| 16) խատ «զարդանկար» | խատի |
| 17) խարբ «ազահ» | խարբի |
| 18) խիզան «պանդուխտ» | խիզանի |
| 19) խորբալ «ցորեն» | խորբալի |
| 20) խախա «գիրկ» | խուտվա |
| 21) ծէս | ծեսի |
| 22) ծիկնաւպար «դիվանադպիր» | մծիգնորարի |
| 23) ծինամծղոր «վանահայր» | ծինամծղվարի |
| 24) ծիտ | չիտի |
| 25) ծօ, ծօլա | ծուլի |
| 26) կացի «մանուկ» | կացի |
| 27) կեդ «մահակ» | կետի |
| 28) կինճ «մանր քար» | կինճի |
| 29) կիտր «վարունգ» | կիտրի |
| 30) կոճոխուր «ծոր» | կոճախուրի |
| 31) ճաղ | ճալի |
| 32) ճաղագ «անտառ» | ճալակի |

- | | |
|--------------------------|---------------|
| 33) ճիւ «սեղ» | ճիւի |
| 34) ճիւ «նինարութուն» | ճիւլքի |
| 35) ճղաւնդիտել (տիտղոս) | ճղոնդիդելի |
| 36) ճոն «մուշտակ կարող» | ճոնի |
| 37) մամթավար «պաշտոնյա» | մամաթ-մթավարի |
| 38) մամփուղ «իշխան» | մամփալի |
| 39) մանդիկ «մախաղ» | մանդիկի |
| 40) մաշիկ «կոշիկ» | մաշիա |
| 41) մարմաշ «բարակ կտավ» | մարմաշի |
| 42) շէթ «խենթ» | շեթի |
| 43) շոաս «պանրի շիճուկ» | շրատի |
| 44) շքրիկ «սուրհանդակ» | շիկրիկի? |
| 45) չեչ «կեղեանք» | չեչա |
| 46) չիտ «ճնճղուկ» | չիտի |
| 47) ջոխ «բիր» | ջոխի |
| 48) սոմար «չափ է» | սոմարի |
| 49) տխիլ «կաղին» | տխիլի |
| 50) տուտ «ճյուղ» | տոտի |
| 51) փիճի | փիճվի |
| 52) փոցխ | փոցխի |
| 53) քալա «քան, այ աղջիկ» | քալի |
| 54) քշփել «սաստել» | քիշպեբա |

Այս բառերից ինը պետական պաշտոնեություն անուններ են (արդյունք վրացական գերիշխանություն), 8 բույսերի անուններ, 4 կենդանիների անուններ, 4 տնային տնտեսության վերաբերյալ, մեկը երկրագործության, երկուսը գեղարվեստի և ֆուսյալը հասարակ կյանքի բառեր: Ամենից կարևորն է ծէս բառը, որ վրացական կարգերի և պետական օրենքի ցուցանիշն է:

Բայց սրանով չի վերջանում վրացերենի ազդեցությունը հայերենի վրա: Մենք գիտենք, որ հնագույն ժամանակներում հայ գաղութ կար Վրաստանում: 626 թվին, երբ խազարները առին ու կործանեցին Տփղիսը, այնտեղ կային արդեն հայեր որ Բերդի թաղում շինեցին իրենց համար մի եկեղեցի (632): Սակայն հայոց ավելի մեծ գաղթը տեղի ունեցավ Անիի կործանումից հետո. Դավիթ Բ Վերանորոգիչ՝ վրաց թագավորը, իրեն զիմոզ հայերին բնակեցրեց Տփղիսում և նրա շրջակա

գյուղերում: Ավելի հետո նա, հասկապես հայ գաղթականների համար, շինեց Գոռա քաղաքը (Ուռհ. էջ 356), որ այսօրվա Գորին է: Հայերը գաղթեցին ավելի հեռուները, մինչև Մինգրալիս և Վրաստանի գանազան կողմերը: Այսօր հայ բնակչություն կա Վրաստանում, բացի Տփղիսից և Գորիից, նաև Սղնախ, Չաքաթալա, Թելավ, Գուշեթ, Թիննեթի, Ցխինվալ, Գուդաուր, Բութայիս, Օսի, Լայաշ, Բաթում և Փոթի:

Մեծ է վրացերենի ազդեցությունը նրանց լեզվի վրա: Այս անսակեռից մենք կարող ենք բաժանել Վրաստանի հայերին երեք խմբի. ա) այն հայերը, որոնք շատ վաղուց են հաստատվել Վրաստանում և շրջապատված վրացական հոծ բազմություններով թողել են իրենց մայրենի լեզուն և զուտ վրացախոս են դարձել: այսպես են Գորի, Սղնախ, Թելավ, Չաքաթալա, Գուշեթ, Թիննեթի, Ցխինվալ, Գուդաուր, Բութայիս, Օսի, Լայաշ:

բ) նրանք, որոնք թեև հին են, բայց լինելով բազմաթիվ պահել են մինչև այժմ իրենց ազգային կուլտուրան և հայերեն լեզուն: Այսպես է Տփղիսը, որ ունի իր սեփական բարբառը: Այս բարբառն էլ սակայն մեծ չափով ազդված է վրացերենից և ունի շատ բազմաթիվ փոխառություններ վրացերեն լեզվից: Մի որևէ էջ Սունդուկյանի պիեսներից, բավական է այս ազդեցություն մեծությունը ցույց տալու համար:

գ) նրանք, որոնք նոր են, և դեռ չեն ազդված վրացերենից այն չափով, ինչպես է Տփղիսը: Այս կարգին են պատկանում Ախալցխա, Բաթում, Փոթի և այլն:

Քննել այս բոլորը մանրամասն՝ դուրս է հայոց լեզվի պատմության սահմանից, և պատկանում է յուրաքանչյուր բարբառի մասնավոր ուսումնասիրության:

Սակայն նույն իսկ Վրաստանից դուրս, բուն Հայաստանի հեռու գավառների ժողովուրդը ունի մի խումբ բառեր, որ վրացերենից փոխ առնելով մտցրել է իր բարբառի մեջ, որից էլ մի մասը անցել է մեր այսօրվա գրական լեզվին: Ահա այս կարգի բառերի մի ցուցակ.

Քիձա Երև. «հորեղբայր» <վրաց. քիձա.

Քիճ Երև. «խանութի աշակերտ» <վրաց. քիճի.

Քզանել (Ախց. Երև. Գ. Գրբ. Տփ.) «պոռալ, գոռալ, աղագակել» <վրաց. քզավիլի.

Քոխր. Գրբ. «բրեճ» բոխրել Գրբ. «բրեճով փորել», Հմշ. «հողը բրեճով փշրել մանրել» <վրաց. քխրա «փորել»:

Մուաղ Հմշ. Տր. Գրա. prunus laurocerasus <վրաց. ծղ'ավի:

Սապլի Երև. «ձագար» <վրաց. ձաբլի:

Ճոճ Բբ. «ճահիճ» <վրաց. ճոճի:

Մաճառ Երև. Գ. Տփ. «նոր գինի» <վրաց. մաճարի:

Միքամ Երև. մքամ. Լ. Գ. «իբր թե» <վրաց. միքամ:

Չիքիա Երև. Գրբ. Տփ. «Տփղիսի տարազով կանանց գլխի ձածկոցը» <վրաց. չիքիա:

Պոռո. Ազլ. Երև. Գ. Գրբ. Շմ. Տփ. «չրթունք» <վրաց. պրոշի:

Նույն իսկ կա վրաց քսանորդական գրություններ թարգմանաբար կազմված իրիք-քսան «վաթսուն», շոքս-քսան «ութսուն» ևն, որոնք ոչ միայն Տփղիսում ունին գոյություն, այլ և հեռավոր Դարաբաղում:

Հ ա վ ե լ վ ա ծ

Վերև հիշատակված 54 վրացական փոխառյալ բառերի վրա պետք է ավելացնել նաև հետևյալ երկուսը.—

Մեսխուր «ոստայնանկություն», ջուլհակագործություն». մի անգամ ունի Մագ. քեր. 228=Երզն. քեր. և ինքը համարում է վրացերեն բառ. «Ջգործ մատին ոստայնանկութեան, զոր այժմ առ մերս գործի, և մեսխուր (այլ ձ. մեսխուրան) անուանեմք զնա ըստ վրաց. իսկ նոքա մեսխիկա (այլ ձ. մեխիկա)»:— Չուրինովի վրաց. բառարանում նման ձև չպտա:

Սեճ «ցավ». այս բառը մի անգամ գործածված է Գամ. վր. 108 սեմփորի ձևով: Իմ Արմ. բառարանում մեկնել եմ իբր հուն. σμυροϋ «զանազան հիվանդությունների հավաքում»: Վրացի երիտասարդ գիտնական սիրելին Ի. Աբուլաձե գտավ որ սխալ է այս համեմատությունը. վրացերեն բնագիւրը ունի սեճի մուցլիսա «ցավ փորի», որից հետևում է որ հայ բառն էլ պետք է ուղղել սեճ փորի, որով սեճ դառնում է վրացերենից փոխառյալ բառ (տես Գիտ. նյութերի ժող. № 1, 1941 թ. էջ 30 ք).


ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ

Տեսանք հայերենի զարգացման առաջին և երկրորդ աստիճանները. այն է՝ մեսրոպյան և հետմեսրոպյան հայերենները:

Ըստ որում բարեշրջութունը (էվոլուցիա) կանգ առնել չգիտե. հետևաբար հայերենն էլ կանգ առնելու չէր նաև համեսրոպյան շրջանի վրա և շարունակելու էր իր բնական ճանապարհը, հետզհետե զարգանալով կամ փոփոխվելով: Այստեղ առաջ էր գալիս մի նոր հանգամանք: Ե դարի հայոց լեզուն՝ որ Մեսրոպի և իր անմիջական հաջորդների ձեռքով արձանագրվել էր գրքերի մեջ, հաստատուն ու անփոփոխ մնում էր նույն գրքերում: Եկեղեցին անձեռնմխելի պահում էր այն՝ իբրև սուրբ գրքերի լեզու և աշակերտներն ու հետագա հեղինակները սովորում էին դպրոցում, իբրև օրինակելի լեզու: Երբ նրանք պետք էին ունենում գրի առնելու իրենց մտքերը, աշխատում էին, որքան հնարավոր էր իրենց, հետևել այդ օրինակելի լեզվին: Այսպեսով Ե դարի լեզուն ոչ միայն Ե դարի գրվածքների, այլ և հետզհետե իրար հաջորդող դարերի գրվածքների մեջ մնում էր անփոփոխ, ենթարկվելով միայն անհատական ոճային փոփոխությունների և մերժելով ամեն օտար նյութական ազդեցություն: Ընդհակառակը՝ ժողովրդական լեզուն, որ Ե դարում նույն էր գրական լեզվի հետ, մի կողմից բնական աճումով և մյուս կողմից օտար ազդեցությունների տակ՝ հետզհետե փոխվում էր ազատորեն, այնպես որ գրական անփոփոխ լեզվի ու ժողովրդական հարափոփոխ լեզվի միջև տարբերությունը քանի գնում մեծանում էր:

Երկու լեզուների ընթացքը մենք կարող ենք պատկերացնել մի սուր անկյունով, որի գագաթը Ե դարն է, ուր գրական և ժողովրդական լեզուները նույն են. սուր անկյան հորիզոնական կողմը ներկայացնում է գրական լեզուն, որ սկսած Ե դարից մինչև անորոշ ժամանակներ մնում է անփոփոխ, իսկ շեղ կողմը

ներկայացնում է ժողովրդական լեզուն, որ հենց Ե դարից անմիջապես հետո, սկսում է հեռանալ և այդ հեռացումը (կամ անկյան բացվածքը) քանի գնում մեծանում է, մինչև հասնում ծայրահեղ չափերի:



Այս պատկերը դիտելուց հետո, ըստ ինքյան անտեղի է դառնում այն հարցը՝ թե երբ ոկավից ժողովրդական հայերենը: Այսպիսի սահման չկա: Սկզբնական շրջանում, երկու լեզուները այնպես մոտիկ են միմյանց, որ գրեթե խտրութուն չկա դեռ: Ո՛չ թե շատ դժվար, այլ անհնարին է որոշել թե երբ է վերջանում վերջալույսը և սկսում գիշերը, կամ երբ է վերջանում գիշերը և սկսում արշալույսը: Այդ շրջանին նույն իսկ «առամիկը» կարող է հասկանալ «գիտունին», եթե սա ուզենա մի քիչ ավելի հանդարտ կամ պարզ խոսել: Այսպիսի անցման դրության մեջ էր հունարենը Դ դարի վերջերը, երբ հին հունարենը վերջանում էր և սկսում բյուզանդական հունարենը: Պատմում են թե մի օր, երբ Հովհ. Ոսկեբերանը եկեղեցում քարոզ էր խոսում, ժողովուրդի միջից մի կին գոչեց. «Հայր սուրբ, պարզ խոսի՛ր որ բան հասկանանք»: Վարդապետը այնուհետև սկսեց իր ճառերը պարզ լեզվով խոսել (Այսն. Քնն. քեր. 133):

Այսպես նաև մեր մեջ:

Ձանազան հին հեղինակների մոտ պատահած ինչ ինչ հասարակ բացատրությունները ոմանք համարում են աշխարհաբարի առաջին հետքերը՝ իրավացի կամ անիրավ կերպով: Այսպիսի հետքեր ունին Փավստոսը՝ նույն իսկ մեսրոպյան շրջանից և Փարպեցին՝ Ե դարի վերջից: Իրավացի կամ անիրավ եմ ասում այն պատճառով, որ նախ այդ ժողովրդական ձևերից ոմանք կարող են ձեռագրերի մեջ հետին ներմուծությանց արդյունք լինել (ըստ որում Ե դարից մեզ հասած հայերեն ձեռագիր չկա և ամենահին հայ ձեռագիրը 887 թվից է), իսկ ուրիշներ նույն իսկ հին հայերենի մասնակի ձևեր են՝ որ հետո ժողովրդական լեզուն իրեն սեփական է դարձրել: Այսպես՝ աճի մասնիկը, որ գտնում ենք մեսրոպյան առաջանի բառի մեջ, բայց հետո դառնում է ժողովրդական լեզվի հոգնակիի մասնիկ՝ ճի. կամ եար, ճեար՝ որ հետո դառնում է աշխարհաբարի եր, ճեր մասնիկը:

Այս կարգի բոլոր ձևերի մանրամասն թվումն ու քննությունը (բառական, քերականական և համաձայնական) ունի Այտընեան, Քնն. քեր. Վիեննա 1866, էջ 64—118):

Առաջին հեղինակը, որ ժողովրդական ձևերի այնքան մեծ խառնուրդ է երևան հանում, որ կարելի է արդեն ժողովրդական գրող համարել, դա Հովհաննես Մամիկոնյանն է, Տարոնի եպիսկոպոս է դարձից: Ահա մի նմուշ նրա հայերենից.

Եւ յգեալ (Մմբատ՝ որդին Գայլ Վահանի) առ պարսից թագաւորն: Խոսրով և ասէ. Տուր ինձ երկոտասան տարւոյ հարկ, որ զօրքդ քո զիմ երկրիս զխոտն և զհացն կերան և զփայտան այրեցին, և զլրոյ՝ զոր արբին՝ զգինն և զտաճարացն զգինս՝ զոր իմ հայրն այրեաց վասն քո Գայլ Վահան. և դարձեալ զսապոնի գինսն վաթսուն հազար դահեկան, որ զքո զօրացն զգիշահոտ հալաւն և զարիւնաթաթախ հանդերձան լուանալ տուաք և ագաք. Ապա թէ ոչ, գամ հարեւր մարդով ի վերայ քո և զամենայն պարսիկս գերեալ՝ ի Տարօն ածեմ և ի քո աստուածքդ շուն խառանեմ, որ փոխանակ զոցա հաջեն ի ձեզ: Արդ փութով՝ զոր ինչ ասացի քեզ, արձակեա, ապա թէ ոչ, տեսանես թէ զինչ անցք անցանին ընդ ձեզ...

Իսկ Սուրէն քանզի իմաստուն այր էր, ասէ. Ո՛վ բարեպաշտ և հօր իշխան, թէ և զշուն դարապասիդ քո արածել տայիր, դեռ պարծանս է մեզ, որ ի դռան քում կայաք, թող թէ այժ արածել: Բայց թէ լսէք մեզ, առէք ի մէնջ հարեւր հազար դահեկան և երկու հազար ուղտ և վեց պարսիկ ձի, և մեզ տուրս տուք զայս կինս և զմանուկս: Իշխանն ասէ. Չայդ՝ որ բերեալ ես, այդ մեր է. զի զքո զուլօդ կարեմ և զոր ունիս՝ յիս առնում: Բայց թէ դոքա քեզ պիտոյ են, դու քրիստոնեայ լեր և կնքեաց, և զիս առ և ի պարսիկս զնա, և դոքա քեզ. ապա թէ ոչ, ձեզ այլ հնար իմացէք. Իսկ Սուրէն բերեալ ետ զհարեւր հազար դահեկանս և զուղտսն և զձիսն առաջի, և ասէ ցիշխանն. Աւաղիկ է տուքդ: Իսկ նա ասէ. Հաւանիմ արոցդ, բայց հարեւր և ութսուն հազար փայտ են տարեալ ի Քարքէոյ, և չորեքհարեր հազար դահեկանի խոտ են կերեալ ի դաշտէդ, և վաթսուն հազար դահեկանի՝ որ զեզն և զեղջերու և զնապաստակ երկթիս որսացեալ են և կերեալ. զլրոյ և զհացի գինն թողում: Բայց զանոյձ գինին Ասորոց և Սալնայ և զՄոսորայ այս երկու տարի է՝ որ յինէն կտրեալ էին, և ինքեանք արբին, զայն թող ասն, և զվեց գաւառին հարկն՝ զոր առեալ են, և զքաղաքին մուտն՝ զոր կերեալ են չորեքհարեր դահեկան, զայդ ամենայն թող բերեն. և դու քրիստոնեայ լեր, և զիս ի պարսիկս տար և դոքա քեզ (Մամիկ. էջ 36—38):

Այսպես ուրեմն է դարում արդեն ծլած պետք է համարենք այն ժողովրդական լեզուն, որին հետո «աշխարհարար» անունը պիտի հատկացնենք:

Ժողովրդական լեզվի գոյութունը այս դարում և գրաբարի անջատումը նրանից՝ կարելի է ապացուցանել նաև մի ուրիշ ճանապարհով:

Հոգեբանական երևույթ է այն, որ երբ մեկը գրում է իր խոսած բնական լեզվով, արտադրում է մի բնական, պարզ և կանոնավոր գրականութուն: Իսկ երբ նա գրում է մի այնպիսի լեզվով, որ իր խոսածը չէ, այլ սովորովի, այսինքն ուսման և կրթության միջոցով է ձեռք բերել, նայած իր կրթության ուղղության և աստիճանին, կարող է արտադրել երկու ձևի գրականութուն: Եթե ուսել է վարպետ ուսուցչի մոտ, ձեռք է բերել լավ հմտութուն հին հին հեղինակների լեզվից, ունի ճաշակ, գիտութուն և արվեստ, նրա գրականութունն էլ կլինի բավական հաջող նմանութուն հին լեզվին, ըստ կարելիվույն կանոնավոր և ճաշակավոր: Իսկ եթե ստացած ուսումը բավարար չէ, ճաշակն անճոռնի և արվեստը կեղծ, նրա գրականութունն էլ կլինի կեղծ, արվեստակյալ, սուղցիկ և ճամարտակ: «Մեռեալ լեզուն իւր հաճոյիցը խաղալիք ընելը՝ անոր բնածին գեղեցկութեանն և ուժոյն անտեղեակ ըլլալու բաւական յայտնի նշան է, և առերևոյթ ճոխութեան երևութոյն իրական աղքատութիւն ցոյց կուտայ... ուրիշ լեզուաւ մտածել ու խօսիլ և ուրիշ լեզուաւ գրել՝ պէտք էր սր դժուարաւ յաջողէք» (Այտն. Գնն. քեր. էջ 135):

Մեկնելով այս տեսակետից, երբ ձեռք ենք առնում մի թէոդորոս Քոթենավուրի գրվածքը (է դար) և տեսնում ենք այն անճոռնի արվեստակյալ ճամարտակ ուսուցչիկ լեզուն (տես էջ 177), խկույն հետևանքում ենք թե այս լեզուն սովորովի է, հետևաբար և ի հակառակեմ դատելով հաստատում ենք նրա հետ միասին ապրող մայրենի ժողովրդական լեզվի գոյութունը:

Հովհ. Մամիկոնյանից ավելի նշանավոր է նրանից երկու դար հետո ծաղկող Շապուհ Բագրատունին, որ գրել է Աշոտ Ա-ի և Բագրատունյանց պետության հիմնարկության պատմութունը: Հեղինակը զինվորական լինելով, իր այս աշխատության մեջ չի հետևել վարդապետների լեզվին, այլ գործ է ածել ամբողջովին ժողովրդական լեզուն. Ահա թե ինչ է գրում Հովհաննես պատմագիրը (կաթողիկոս 898—929 թ.) նրա մասին. «Զի թեպէտ ստուգութիւն սահմանական բանի բացատրութեան և զբոլորովին բաժանումն ապացուցից ոչ կարացեալ ըստ քերթողական հրահանգացն համառօտաբար ընձեռել, սակայն ըստ

իւրուան ժամանակի ընտանի գոյով նորա գրուցացն ամենայնի՝ գեղջուկ րանիւ բաւական քեզ տայ պատճառս տեղեկութեան» (էջ 167): Դժբախտաբար Շապուհի այս գործը կորած լինելով՝ չենք կարող գաղափար կազմել նրա և նրա միջոցով ժամանակակից ժողովրդական լեզվի մասին: Բայց ինչ էլ լինի, այն ժամանակի ժողովրդական լեզուն դեռ այնքան տարբեր է մեր այսօրվա աշխարհաբարից և դեռ այնքան մոտ գրաբարին, որ մենք կարողալիս գրաբար պիտի համարելինք:

Անա Շապուհից մի գար հետո Գրիգոր Նարեկացու տաղերից մի նմուշ, որ թեև ժողովրդական լեզվով գրված, բայց դեռ բավականին գրաբար է.

Վարդավառի տաղ

Այդ սօս ու տօսախ ծառերդ,
Վարդագոյն ոսոս արձակեցին.
Այդ նոճ ու բողբոջ ասրօսդ
Զարդ առեալ վարդն շուշանին:
Շուշանն շողէր հովտին,
Շողշողէր դէմ արեգականն.
Այն հիւսիսային հաւէն,
Հով հարեալ գոհար շուշանին.
Յայն հարաւային լեռնէն,
Քաղցր օդով ցօղէր շուշանին.
Շուշանն շաղով լցեալ
Շող շաղով և շաղ մարգարտով,
Մաղկունքդ ամէն շաղ առին,
Շաղն յամպէն, ամպն յարեգակնէն,
Աստեղքն ամէն շուրջ առին,
Դէմ լուսնին գունդ գունդ բոլորին,
Գունդ գունդ խաչաձև գնդակ,
Յօրինուած երկնից շուրջանակ:

Գրական լեզվի և ժողովրդական լեզվի տարբերութիւնը մեծագույն չափերի է հասնում ՓԱ դարից հետո, որ գուգադիպում է թրքական արշավանքներին և տիրապետութեան և միևնույն ժամանակ հայ պետական կյանքի քայքայմանը Հայաստանում: Հաջորդ գլխում մենք մանրամասն պիտի խոսենք թուրքերենի ազդեցութեան մասին հայերենի վրա: Այստեղ այն միայն ասենք, որ ժողովրդական լեզվի հեռագհետեւ աճող տարբերութիւնը թրքական ազդեցութեամբ այնպիսի մի նոր թափ է

ստանում, որ այլ ևս խոսակցական հայերենի ու գրական հայերենի տարբերութիւնը շատ մեծ է դառնում: Նրանք տարբերվում են միմյանցից ոչ միայն բառերով, հոլովներով, խոհարհումով ու սճերով, այլ և համաձայնութեամբ ու շարադասութեամբ: Պատակցական լեզուն ազավաղել, փոփոխել է շատ բաներ, ստեղծել է նորերը, օտարներից վերցրել է առատ բանամթերք և այդ բոլորը չկա գրական լեզվում: Հոլովներն ու խոհարհումը պարզվել են, փոփոխվել նոր կանոններ են ավելացել, բացառութիւնները ջնջվել, մինչդեռ գրական լեզուն տեղյակ չէ այս բոլորից: Վերջապես շարադասութիւնը հակառակ շարքն ունի այժմ, բայց գրական լեզուն մնում է այնպես, ինչպես առաջ էր: Երկու անջատ լեզուների գոյութիւնը այլ ևս փաստ է և հարկավոր է որոշել նրանք միմյանցից. գրական լեզուն ստանում է գրաբար անունը, իսկ ժողովրդական լեզուն կոչվում է գոեհիկ, միքմ լեզու, գեղջուկ բան, ռամկօրեն, սովորական խօսք, աշխարհական խօսք, աշխարհաբար: Այս բառերի հնագույն գործածութեան պատահում ենք Համամ Արևելցու (Ք դար) քերականութեան մեջ. «Մեքական է բառս ըստ մթին լեզուաց. ի վաղիւն... գոր գոեհիկքն յեզուց ասեն» (էջ 265, 271) Հովհաննես կաթողիկոսը իր Պատմութեան մեջ Ստեփաննոսի համար խոսելով ասում է. «Որ Կոնն ի ռամկաց սովորական խօսից անուանէր» (էջ 166): Ավելի հետո այս բառերը ավելի հաճախ են գործածվում: Այսօր լեզվաբանութեան մեջ զանազանութիւն է գրվում այս շրջանի ժողովրդական լեզվի և արդի ժողովրդական լեզվի միջև. առաջինը կոչվում է միջին հայերեն (ըստ ոմանց ստորին հայերեն), երկրորդը աշխարհաբար կամ մեր հայերեն, հակադրութեամբ գրաբարի կամ հին հայերենի:

Թե գրաբարը այլ ևս անհասկանալի էր ժողովրդին՝ վկայում է Սմբատ Գունդստապլ իր Դատաստանագրքի առաջաբանում.

Ես Սմբատս անարժան և մեղաւոր ծառայս Աստուծոյ, որդի Կոստանդեայ Թագաւորահօր և հղբայր բարեպաշտ Թագաւորին Հայոց Հեթմոյ, բազում աշխատանք աշխատեցայ ի Դատաստանագիրքս ձերացեալ մօօք. վասն զի այլակերպած էր և հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս՝ հայնց որ իսկի չէին ի հասկնալ և ոչ յօկտել գայր: Եւ ես բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի հին և ի դժուարաբառ և յանհասկընալի գրոց ի մեր հեշտալուր և ի սովորական բառս, ի թըւականութեանս Հայոց ՉժԳ ամին (1265): (Սմբատ Դատ. Հրատ. Karst, էջ 13):

Խոսքը վերաբերում է Մխիթար Գոշի Դատաստանագրքին, որի լեզուն, ինչպես նկատում է Հոֆմանյան*), այնպես պարզ ու հասարակ գրաբար է, չունենալով շատ ուրիշ հեղինակների խըթին բառերը և ուռուցիկ ոճը: Հայտնի է նույնպես, որ Դատաստանագիրքը (այսինքն օրենքների ժողովածուն) ժողովրդի հասարակ խավի համար չէ, այլ օրենսդետների, եկեղեցականների և պետական պաշտոնյաների համար: Եւ սակայն այդ պարզ գրաբարը նույն իսկ այս բարձրաստիճան մարդկանց համար այնպես անհասկանալի էր ժԳ դարում, որ Մմբատը ստիպվել է թարգմանել, իրը թե մի օտար լեզվի մասին լինել խոսքը:

Լեզվի տարբերությունը նույն իսկ զբաղեցրել է մեր հին հոգևորականներին, որոնք հարց են տվել թե ինչ արժեք ունի գրաբար աղոթքը շինականի համար, որ լսում է առանց հասկանալու կամ երգում և մրմնջում է առանց հասկանալու: Ահա թե ինչ է ասում այս մասին Գր. Տաթևացին, իր Քարոզգրքի մեջ, Ձմռան հատոր, զլ. ՀԹ, էջ 363 ա:

Այլ աստ հարցումն լինի, թէ ոք յորժամ յաղօթս կենայ և ոչ հասկանայ, զաղօթս իւր, և ոչ հասկանայ զքահանային զի խրթին բառով է, կամ այլ լեզուով, զի՞նչ օգուտ է նմա թէ ուշ դնէ: Պատասխանեն վարդապետք և ասեն, թէ յորժամ շինական ոք կայ յաղօթս կամ լսէ զաղօթս քահանային, թէ սուրբ սրտիւ և հաւատով լինի, ոչ է անօգուտ. որպէս թէ անի մի պատուական անկանի ի ձեռս շինական մարդոյ՝ որ ոչ գիտէ զգիրնս. և սպա տայ զակն ի ձեռս մարդոյ մի սառաֆի որ գիտէ զգիրնս. որչափ արժէ ի ձեռին սառաֆին՝ նոյնչափ արժէ ի ձեռս շինականին, թէպէտ ոչ գիտէ զգիրնս: Նոյնպէս աղօթք ի բերան իմաստնոյն որ հասկանայ, և ի բերան շինականին որ ոչ հասկանայ, ի սուրբ սրտէ ընդունելի են և միապէս առնուն զվարձս:

Հարցը ճիշտ այն է՝ որ 500 տարի հետո պիտի բարձրանար լուսավորչական և բողոքական եկեղեցիների միջև, այս անգամ մի քիչ ավելի հաջող լուծում ստանալով, քան Տաթևացու ժամանակ, այն է առաջ բերելով ս. գրքերի աշխարհաբար թարգմանությունը գոնե հայ ժողովրդի բողոքական հատվածի մեջ:

Այն ժամանակ, երբ ժողովրդական լեզվի ու գրական լեզվի միջև տարբերությունը շատ մեծ չէր և ուսմանը դեռ կարող էր զբաղեցնել լեզուն հասկանալ, գրագետները հարկ չէին տեսնում

*) Հետազոտությունը նախնայ ռամկօրէնի վրայ, Ա, էջ 35:

դիջելու իրենց դիրքերը և իրենց մտքերի գրավոր բացատրություն համար ուսման լեզվին դիմելու: Այլ բան էր անշուշտ բեռնացի խոսակցությունը, որ իհարկե չէր կարող ուրիշ ձևով լինել քան ժողովրդական լեզվով: Դարերի ընթացքում երկու լեզուների տարբերությունը հետզհետե սաստկանալով, նրա հետ էլ զբաղան լեզուն հասկանալը աստիճանաբար դժվարացավ: Իսկ երբ այդ տարբերությունը վերջապես այնքան մեծացավ, որ այլ ևս անկարելի էր իրար հասկանալ, նրանք որ պետք ունեին ուսմանը դիմելու, ստիպվեցին նաև գրավորի մեջ նրա լեզվին դիմելու. այսպես սկսեց միջին հայերեն գրականությունը:

Միջին հայերեն գրականության հնագույն հիշատակարանը Վահրամ սպարապետի որդի Գրիգորի պատմական ղեղադիրն է 1037 թվից, գրված բժիշկ Բուսայիդի ձեռքով: Ահա այդ գրվածքը:

Վասն լերդացաւի որ ի ջերմութենէ ցաւի, և գայն գրենք որ Գրիգոր Վահրամայ որդին իւրն արար և այնով յաջեցաւ յայնժամն ինչ նմա լերդն ի ջերմութենէ ցաւեցաւ, և գնաց ի Մուֆարգինն ի ՆՁՁ (=1037) թուականին, և Բուսայիդ բժիշկն զայս արար նմա և այնով յաջեցոյց: Եւ նմային նշանքն այս էր՝ որ թիկունքն և աջոյ բազուկն ցաւէր և ձեռքն ծանրանայր, և ընդ կողքն ի ներս խոցոտէր դեպ ի յետի կոյսն, որ կողքն հատանի: Երբ աջ դեհին պառկէր իիստ ցաւէր և ջերմանայր, և գիրն և այլ տաք իրքն ինչ սուէր՝ լստացնէր: Ապա ինչ այտ ցաւտ նմա դիպաւ և նա ի Մուֆարգինն գնաց, որչափ ձմեռուաւուրք էր, բժիշկն չարար նմա դեղ, ասէր՝ թէ Յայս աւուրքս դեղն չօգտէ զի մարդն այնց սառուցած լինի զերդ հողն և չօգտէ դեղն՝ ինչուր լքչի. բարի (բայց) հով ըմբելատան տայր՝ զերդ ծորի, զերդ նոսն, զերդ սքնքրին յամէն աւուր. և կերակուր զայն տայր զոր ախորժական լինէր:

Ապա երբ գարնանայինն մտաւ՝ զայս նմայ քառասուն աւուր նուսխաթ գրեց, և զամէն աւուր զգեղ և զկերակուր ուրիշ ի գիր եհան, և այնց սասց՝ թէ Ջայտ նուսխաթնիտ որ ի ժողով եմ ածել և քեզ համար ընտրել և ի գիր հանել, զկերդն ուժովացնէ և զցաւիւն տանի, և զայն շոքն որ ի լերդէն ի վեր ի թիկունքն է յելնել և ի ցաւեցնել՝ զայն կտրէ և զանձն զաւրեցնէ և զիրացնէ, և զոհմքն և զմտավածքն ի սրտէն (հանէ): Արդ՝ ինչ գարնանայինն մտաւ և Հոռի ամսոյ տասն էր, յառաջ արար՝ նմա դեղ տալոյ: Առջի դեղ՝ զայս ալրաս երես, որ զկերդն ուժովացնէ և հովացնէ: Առ... բզրդատնի ջրով շաղէ՝

զերդ այլ ակրասի ուսմ է, այնց որ ջրի շիւնի խիստ, և բլթնի արա՝ զամէն բլթի դրամ մի, և ի մաղի վերայ շարէ և շուք ընդ արև չորացու Եւ առ յիւրմէտ հինգ օր հետ իրաց՝ յամէն յեզեն արևահարուցն. և երբ յառուլ լինիս (Շառնելու լինիս)՝ այս նշանօքս զուգէ: Առ յիւրմէդ դրամ միս և մանդը աղա. և առ տասն դրամ նոան սքնքրին և հինգ դրամ յունապի ըմպելի... զայսոց յիրար խառնէ և զաղցած ակրաստիներս ի կթղայն ած. և յըմբելոյդ քիչ մի վերայ ած խառնէ որ տըրբի, և քիչ մի այլ կաթեցո և այլ տըրբէ. յենում (հետո) զըմբելիդ զամէն ի ներս արկ և խառնէ և խմէ և երեսուն դրամ հով ջուր արկ և խառնէ խմէ:

Եւ պահ մի կաց և ձի հեծիր և ի շուրջ եկ ի նուսխատեղ և ի կանաչի. և դարձիր և ի բաղնիս մուտ. բարի յամէն օր մի մտել. ի շարաթն երեք օր հերիք է... Եւ երբ մտես՝ յուշիկ մարձել տուր, և շատ ջուր արկ ի վերայ եղկ... և ի ներսն շատ մի յեմել. և երբ յիշեի լինիս՝ զանձնդ մանիշակեղով օծնէ: Եւ երբ ջուրն ի դուգել լինին՝ այս նշանով զուգէ... այնց որ ինչ ի ներս մտես՝ ինչուր վիզն թանուի... և ի ներս նիստ այնչափ որ վատուծիս ոչ: Եւ երբ էլնես՝ ի քիմքն մանիշակեղ հաստ. պառկիր պահ մի և հանգիր, և ի ցրտոյ պատրաստ կաց: Եւ ինչ ի ջրէն ելնես և զայտ ամէն անես՝ այնց արա որ օր հասարակ լինի, յենում հաց կեր և զհացն միամաղ տուր առնել... Եւ զայս ամէն զինչ զրած է՝ հինգ օր արա զղեղտ և զկերակուրա. և յետ հինգ աւուրն փոխէ և զայս արա զօր այժմ զրենք...*)

Այստեղ երբ խոսում ենք Միջին հայերեն գրականության սկզբնավորության մասին և երևան հանում նրա հնագույն հիշատակարանը, պետք չէ բնավ հասկանալ միջին հայերեն բանավոր լեզուն, որի ծագումը շատ ավելի հին էր քան գրավորը: Այստեղ էլ երևույթը նույնն է՝ ինչ որ մեսրոպյան շրջանի գրականության և աշխարհիս բոլոր լեզուների գրականությանց համար, որոնք միշտ սկիզբ են առնում որևէ խոսված ժողովրդական լեզվից և բնականաբար միշտ ավելի նոր են, քան այդ խոսակցական լեզուն:

Փի՛ գարի երկրորդ կեսից միջին հայերեն գրականությունը մեծ զարկ է ստանում. հրապարակ են իջնում այնպիսի նշանավոր գրողներ, ինչպես են Ներսես Շնորհալին, բժշկապետ

*) Յոֆանեան, Հետազոտութիւնք նախնեաց ուսմիօրէնի վրայ, Բ, էջ 415-6:

Միթթար Հերացին (իւր Ջերմանց միթթարությամբ), ավելի հետո Սմբատ սպարապետ (որ գրել է Տարեգիրքը, Դատաստանագիրքը և Անտիգը Անտիօքայ) ևն. Ռուբինյանց տերությունը իրեն պաշտոնական լեզու է ընդունում միջին հայերենը, ինչպես որ եկեղեցին պաշտոնական լեզու էր ընդունել զբարբառը: Մեր թագավորական դիվանատնից հրատարակված զանազան հրովարտակները, արտոնագրերը, առևտրական դաշնագրերը, մուրհակներ և այլն, որոնք մինչև այժմ ցան ու ցիր մնում են, բոլորն էլ միջին հայերենով են: Նույն իսկ նշանավոր եկեղեցականներ, ինչ. Ներսես Լամբրոնացին, Վարդան Արևելցի, Գրիգոր Կթ. Անավարզեցի, Հովհ. Երզնկացի և այլն. երբ դիմում են թագավորին կամ իշխաններին, ստիպված են լինում գրել միջին հայերենով:

Նկատելի կետը այն է, որ միջին հայերենը թեև պետական ու միանգամայն ժողովրդական լեզու, այնու ամենայնիվ չի կարողանում վերացնել զբարբառ գրականության գործածությունը, ինչպես այս շրջանում, նույնպես և հետո երկար դարեր շարունակ: Երևույթը ճիշտ նույն է՝ ինչ որ եվրոպական ազգերի գրականության մեջ, ուր տեղական լեզուների կողքին և ավելի մեծ չափերով ծաղկում էր միշտ լատիներեն գրականությունը: Մեր մեջ էլ երկու լեզու և գրականություն ապրում են կողք կողքի: Նույն իսկ միևնույն հեղինակը մերթ զրում է գրաբար և մերթ միջին հայերեն: Այսպես Շնորհալին իր առակներն ու հանելուկները գրել է միջին հայերենով, բայց իր Ընդհանրականը, Յիսուս որդին և ուրիշ գործեր՝ իբրև ավելի բարձր նյութ ունեցող գործեր, գրել է զուտ գրաբար լեզվով: Այսպես ուրեմն ծաղկում ու զարգանում է հին հայերեն գրականության կողքին նաև միջին հայերեն գրականությունը, որ գերազանցում է մյուսից իր բազմազանությամբ, մեծ ծավալումով, պետականությամբ և ժողովրդականությամբ: Մինչդեռ գրաբար մատենագրությունը երևան է հանում միայն կրոնական ու պատմական գործեր, միջին հայերեն գրականությունը երևան է հանում բացի սրանցից նաև գիտական գործեր (բժշկություն, անասնաբուժություն, քիմիա), երկրագործություն, արհեստագիտություն, օրենսգիտություն, գիվանագիտություն, աստղաբաշխություն և տոմարագիտություն (ախտաբք. վեցհազարեակք, ուսմզարկ, զիճ, երագահանք), ժողովրդական գրականություն (առակ, հանելուկ, առասպելներ, հեքիաթներ) և բանաստեղծություն: Վիեննայի միթթարյաններից Հ. Ղևոնդ Վ. Հովանյան

ուսումնասիրութեան նյութ է դարձրած միջին հայերենի գրականութեան պատմութիւնը երկհատոր մի աշխատութեան մեջ (Հետազոտութիւնք նախնեաց ուսման վրայ, Վիեննա 1897), ուր մի առ մի հիշում է միջին հայերեն գրող հեղինակներին, տալիս է նրանց երկերի բովանդակութիւնը, քննում նրանց ժամանակը, հորինման հանգամանքները և լեզուն: (Աշխատութիւնը դժբախտաբար կիսավարտ է):

Մենք այստեղ գնում ենք չորս հատված ևս միջին հայերեն գրականութեան այս շրջանի երկերից. առաջինը Շնորհալու ժողովրդական հանելուկներից (գրված 1166—1173 թվերին), երկրորդը Մխիթար Հերացի բժշկապետի Ջերմանց մխիթարութիւնից (գրված 1184 թվին), երրորդը Սմբատի Դատաստանագրքից (գրված 1265 թվին) և չորրորդը Լևոն Գ-ի Թագավորական հրովարտակը (գրված 1288 թ.):

1. Յամէն շրջի ինքն ի քարեր, Ունի ծախու մազէ քրձեր. Գինւոյ ունի աղուոր տրկեր, 'ւ օժտէ ձրի դանկի կոթեր: (Այծ): Իրք մի կայ 'ւ ինքն է ջրբեր, Հանց գինեխում մարդ չէ տեսեր. Խմէ ձգէ դառնայ ի վեր, Դարտակ նա չէ մարդոյ ընկեր: (Գինու գգում): Որպէս տիկին յուշիկ գնայ, Պարան յետեն ի քարշ կուգայ. Բազմի յոսկի բարձի վերայ, Որսիկ առնէ քան զբազայ: (Կատու):

2. Ապա գիտացիր որ այս ջերմս շատ այնոց հանդիպի, որ ի չորս տարւոյն ի վեր լինին մինչև ի քսան տարին, մանաւանդ ի դարնան աւուրքն. և այնոց որ արիւնն շատ լինի ի մարմինն, և այնոց որ կերակուր գայն ուտեն, որ արիւնն ընծայէ, զերդ գառին միսն, և կաթներն, և ձուի դեղնուցն, կարմիր և քաղցր գինին: Իսկ նշաննին որ հետ այդ ջերմանդ երկուեանայ այս են, որ բերանոյն առաստաղքն ուռչին, և խնձորքն. գլուխն ցաւի և ծանրանայ, և երեսն կարմրի, մանաւանդ այտերն, աչացն երական և քներոյն ուռչին, և լինի որ կարմիր շտեր երևենան, կամ դեպ ի կանանչն:

Այլ որ գիտենաս որ յառաջ քան զամենայն ստածումն

գիւանդին ուժն և զտարիքն և զկերպն և զերկիրն և ժամ, տես թէ օգնէ տարիքն, և այն զոր ասացաք, դու երակ առ սկիզբն այս ջերմանս, յառաջ քան որ յաւելնայ հիւանդութիւն. ապա թէ չօգնէ ուժն և տարիքն և այլն, դու պիկիք արկ, և արիւն հան. զի սկիզբն այս ջերմանս արիւն հանելն շատ օգտակար է: Այլ ի յաւելնալն և ի կատարելն հիւանդութեանն, որ է երրորդ ժամանակն, պատրաստ որ չառնուս երակ, զի չէ ժամանակ և ոչ պատեհ, այլ սկիզբն հիւանդութեանն առ զերակն: Ձի մեծ իմաստասէրն Գաղիանոս պատրաստեցոյց շատ, և ես տեսայ ի յիմ ժամանակս, որ ի կատարել ժամն հիւանդութեան երակն առին, և մեռան շատք. և այլ տեսայ որ պիկիք արկ, նա հիւանդն վատուժ էր, մեռաւ: Չէ պատեհ՝ յորժամ հիւանդն վատուժ լինի, արիւն հանել. թէպէտ և տարիքն և ժամն օգն լինին: Բայց երբ ուժն օգնական լինի, և ժամն չլինի, կարողք ենք ճարայրնել և երակ առնուլն. և այն որ տարիքն չօգնեն, կարող ենք ճարայրնել ապիկիք արկանելով ի սկիզբն հիւանդութեան, որ գերծանի հիւանդն: (Մխիթար Հերացի, էջ 65—66):

3. Յարագս այրուկնաց ամուսնութեան.

Հրամայէ աստուածային օրէնքս՝ որ այրն գլուխ է կնոջն և պատեհ է որ կինն հայնց կենայ ի յայրկանն ի համանքն՝ զէտ ոտքն ու այլ զօղուածքն ի զլիտոյն: Ապա ֆէ ուրդի որ վասն անհնազանդ լինելոյ կնկանն անհանգստութիւն կենայ յիրենց մէջն, նա կու տայ համանք օրէնքս որ բաժնեն, երբ այլ ճարակ չկենայ. և տայ այրիկն զինչ հետ իր առել լինի ի յինք, որ երթայ այրիկ մի այլ առնու: Ձի թէպէտ և յառջի կանոնքն չկայր այս որ կարէ վասն անհանգստութեան թողուլ, բայց յետև վասն անճարակութեան, որ տեսան որ այլ մեծ վզեն կայր ի ծայրն, նա զայս թուլցուցին: Բայց երկու դեհին հալփին որ ի խարճն գնաց, և պառիկիկիք որ երկուքն մաշեցին՝ վճար չկայ. ապա անսուս գինչ որ լինի գլուխքն դառնայ, և աճն ի կէս լինի. ու վասն արձելոյ կամ ստածելոյ կամ վասն այլ իրաց՝ վարձ կամ այլ աւելի պակաս չկայ: Այս է զոր գրեցաւ: (Սմբատ Դատ. հրտր. Karst, էջ 107):

4. (Աւետրական հրովարտակ որ մեր Լևոն Գ Թագավորը շնորհել է Ձեռնովայի վաճառականներին՝ 1288 թվին: Մագաղաթյա րնագիրը պահվում է Տուրինոյի դիվանում և նմանահանված է Սիսուան, էջ 387):

Այս մեր թագաւորական բարձր հրամանք է և հաստատութեան սիգեղ, Լեոնի ճշմարիտ ծառայի Աստուծոյ և նորին շնորհօք և ողորմութեամբ թագաւորի ամենայն հայրց, զոր պարզեկեցաք աստուածայնաստատ գուճինն ճնշվիզացն, ի իրնդրոյ պատուելի և իմաստուն իշխանին մեծապատուեալ վիզայրին ճնուվիզացն գուճինն ծովու այս դեհիս և մեր թագաւորութեանս կատարել և հաւատարիմ սիրելոյն սիր Պէնէթ Չաքարէին: Վասն ճնուվէզ վաճրուկներոյն, որ ինի իրենց սահմանն այսպէս. յառաջ որ մեր քաղքնոյն որ ի մեր ձեռք կան՝ նա բաժերն ու իրաւներն ինի որպէս Այասուն է, գարդել ի յայն անդեստընոյն՝ որ ի սիգեղն գրած կայ, և զինչ իսկի իրք ծախեն ի շուկայն սամսրով ու ի տունն ծախեն՝ նա քանց զսամսրչէքն այլ իրք չտան. և զինի թէ պլաթէով ծախեն ու թէ փարչով, նոյնպէս ու ձեթ թէ պլաթէով ու թէ ճառտով՝ որ անիկշեռ ծախվի՝ նա իրավունք չտան քանց սամսրչէքն ի պլաթէն նոր գրամ մէկ... Եւ վանց վաճրուկներոյն, որ եփ կու գան՝ նա զիրենց սնդիկնին կու բանան ու զիրենց իրքն ի գիր կու առնուն, նա չբանան զիրենց սնդիկնին ու ոչ մատնէհրեն ու ոչ գրեն զիրենց իրքն...:

Առն քազաւոր Հայոց

Այստեղ անհրաժեշտ է անել հետևյալ նկատողութիւններ:

Մենք եթե վերը (գլուխ ԺԹ) մերժեցինք հայերեն բարբառների գոյութիւնը և դարձում, նույնը անշուշտ չենք կարող անել ավելի ուշ, հատկապես ԺԱ—ԺԲ դարերի համար: Այս ժամանակ արդեն կազմված էին Հայաստանում և Հայաստանից գուրս գաղթավայրերում գանազան բարբառներ, իրարից ավելի կամ պակաս մեծ տարբերութիւններ: Միջին հայերենն էլ ուրեմն մի բարբառ չէր, այլ ուներ իր գանազան ձևերը, ինչպես հին բարձր գերմաներենը կամ միջին բարձր գերմաներենը: Այս գանազան ձևերը ընդհանրապես մեղ հայտնի չեն. կա նրանցից միայն մեկը (այն է Կիլիկիայի բարբառը), որ թեև գաղթավայրի մի բարբառ, բայց պետականութիւն շնորհիվ ստացավ ավելի պատվովոր դիրք և անցաւ գրականութիւն: Վերև հիշատակված գործերը առհասարակ կիլիկյան բարբառով են գրված: Այս բարբառը կամ լեզուն է՝ որ պիտի կոչենք այսուհետև կիլիկյան հայերեն և որ միջին հայերենի ճուղղերից մեկն է միայն: Կիլիկյան հայերենը բնականաբար գործ է ածում այն այբուբենը, որ ավանդված էր Մեսրոպից: Բայց տառերի հնչումը,

ուրիշ խոսքով ընթերցանութիւնը այլ ևս այն չէր, ինչ որ Մեսրոպի ժամանակ: Ամեն լեզվի մեջ էլ մի սովորական երեվոյթ է այս: Լեզվի ձայները մշտական փոփոխութիւն մեջ են, բայց գրութիւնը՝ իրրև քարացած մի մարմին, մնում է միշտ ձևով անփոփոխ, իսկ ձայնապես՝ հետևելով լեզվի գարե դարհաջորդական փոփոխութիւնց, ստանում է շարունակ նորանոր արժեքներ: Այսպես, օրինակ՝ որք բառը՝ որ Ե դարում հնչվում էր օրօ, իրապես էլ գրվում էր որք, որով գրութիւն և հնչում համապատասխանում էին իրար: Ժամանակ անցնելով այդ բառը սկսեց հնչվել uorօ, բայց գրութիւնը մնաց դարձյալ որք և միայն հնարվեց մի կանոն թէ ո տառը բառի սկզբում կարգացվում է uo: Այսուհետև բառը սկսեց հնչվել vorօ (վօրօ), բայց գրութիւնը մնաց դարձյալ նույնը և հնարվեցին նոր կանոններ, թե ո տառը բառի սկզբում կարգացվում է vo և ք տառը ք-ից հետո կարգացվում է փ: Այսպես հասկանալ և այն բոլոր պարագաների համար, երբ գրութիւն և հնչման մեջ որևէ տարբերութիւն կա:

Համաձայն այս ընդհանուր օրենքի՝ կիլիկյան հայերենն էլ պահելով ըստ կարելիութեան մեսրոպյան գրութիւնը և ձև անփոփոխ, տալիս էր նրան նոր արժեքներ, համաձայն իր նոր հնչումին:

- Այսպես՝ ե տառը հնչվում էր շեշտի տակ ie, շեշտից առաջ e. ինչպես՝ ընկեր օngier, մեռնիմ (mernim):
- Ո տառը բառասկզբում հնչվում էր vo, իսկ բառամիջում իրր փակ o, որ մտտեանում էր ու հնչման:
- Այ թե բառավերջում և թե բառամիջում հնչվում էր a:
- Ոյ բառավերջում հնչվում էր o, բառի մեջ ձայնավորից առաջ հնչվում էր ay, իսկ բազմաձայնից առաջ հնչվում էր օ-ի մտտիկ և հնչունով:
- Իւ բառավերջում, ինչպես նաև բառի մեջ ձայնավորից առաջ հնչվում էր iv, իսկ բաղաձայնից առաջ ւ. դրա համար էլ հաճախ միևնույն բառը գրվում է մերթ իւ և մերթ ոյ տառերով:
- Եւ հնչվում էր ev կամ iev, ինչպես որ աւ՝ ձայնավորից առաջ և բառավերջում հնչվում էր av:
- ու բաղաձայնից առաջ և բառավերջում ուներ բաց և հնչումը, իսկ ձայնավորից առաջ հնչվում էր արդեն իրր բաղաձայն v, բացառութիւն բողոքի և այլն ձևով անկատարների մեջ, ուր ուներ նույնպես ւ հնչումը:

Բաղաձայնները ենթարկվել էին ձայնաշրջութան օրենքին. պ, կ, տ, ծ, ճ հնչվում էին իրրև թրթռուն b, g, d, j, չ, իսկ բ, գ, դ, ձ, ջ հնչվում էին իրրև խուլ p, k, t, c, ճ, այս ձայնաշրջութան չէին ենթարկված ստ, շտ, սպ, շպ, սկ, շկ խմբերը, որոնք հին հնչման համեմատ կարդացվում էին st, št, sp, šp, sk, šk և ոչ թե sd և այլն. նույնպես նգ, նբ, նդ, նձ, նջ կարդացվում էին ng, nb, nd, nj nǝ և ոչ թ nk, np և այլն. սրա համար էլ անխտիր գրվում էին վերի ձևերով և կամ նկ, նպ, նտ, նծ, նձ: Այս բոլորը վերածելով մի լեզվաբանական ֆորմուլայի, կարող ենք ասել թե խուլերը դարձել էին թրթռուն և թրթռուները խուլ, միայն ուղղակից հետո մնում էին անփոփոխ: Շատ անգամ կ տառը հնչվում էր դարձյալ հին ձևով k, իբր համապատասխան արար. q տառին:

Մյուս բաղաձայններից դ արդեն ուներ կոկորդական չ հնչումը և j բառասկզբում կարդացվում էր h:

Կրիլիկյան հայերենը ստեղծել էր նաև երկու նոր ձայն (մի ձայնավոր և մի բաղաձայն), որոնք չկային մեսրոպյան շրջանում և հետևաբար մեսրոպյան այբուբենի մեջ առանձին նշան չուներին:—Մրանք էին օ և ֆ տառերը՝ որ հուներեն այբուբենից առին:

Այս օ տառի համար զանազան սխալ կարծիքներ կան. կարծում են, թե մեսրոպյան շրջանին օ հնչումը գրվում էր ա, որ կրիլիկյան շրջանում էլ շարունակվում էր և հետո դյուրութայն համար ստեղծվեց օ տառը: Եթե մեսրոպյան շրջանին օ ձայնը գրվում էր ա, ապա ինչո՞ւ համար էր հնարված ո տառը: Երբ համեմատում ենք մեսրոպյան շրջանում կատարված բազմաթիվ հուներեն փոխառությունների հայերեն տառադարձությունը հուներեն մայր ձևի հետ, տեսնում ենք որ հուներեն օ-ի դեմ հայերեն գրվել է միշտ ո. այսպես օրինակ որդոս=հն. ὀρθός, որթողքս = հն. ὀρθόδοξος, պողիպող = հն. πολίποδος և այլն: Ընդհակառակը հայերեն ալ գրություն դեմ գտնում ենք հն. α. ինչ. ալգոստոս=αἰγούστος, Պողոս = Πάυλος և այլն: Առաջին համեմատությունից հետևում է, որ ո տառը հնչվում էր մեր այսօրվա օ-ի պես, կամ որ նույն է՝ օ հնչումը գրվում էր ո: Երկրորդ համեմատությունից հետևում է, որ ալ հնչվում էր հն. α. ձևի նման և որովհետև հուներեն α չուներ օ հնչումը, ուստի և ալ չէր հնչվում իբր օ: Միևնույն ժամանակ կարելի չէ ասել որ ալ հնչվում էր այսօրվա պես ալ, որովհետև այդ պարագային ինչ պատճառ կար որ ալ չգրեին, այլ գրեին ալ:

Իրապես ալ հնչվում էր հին լատինական α կամ արդի գերմանական α կերպարբառի նման, որ արագ արտասանված առ հնչյունն է ներկայացնում: Ժամանակ անցնելուց հետո ո և ալ փոխեցին իրենց հնչումը, մանավանդ այս վերջինը: Կրիլիկյան շրջանում ո ուներ փակ օ (կամ ու-ի մերձավոր) հնչյուն, իսկ ալ ձայնավորից առաջ դարձել էր av, բաղաձայնից առաջ՝ բաց օ: Տարբեր օ-երի համար հարկավոր էին տարբեր նշաններ. առաջինը մնաց ո, երկրորդն էլ կարող էր, իհարկե, մնալ ալ, եթե սակայն այս ալ-ը ձայնավորից առաջ տարբեր և բաղաձայնից առաջ տարբեր հնչում չուներ: Մի ժամանակ մտածեցին այս երկուսը տարբերելու համար առաջին դեպքում լ-ի վրա դնել թավ նշան (ալ), իսկ երկրորդ դեպքում դնել ∞ կամ ուրիշ մի նշան: Բայց որովհետև այս նշանները ալելի երկար էին, ուստի վճռեցին, շատ իրավացի կերպով, առաջինը պահել անփոփոխ ալ, երկրորդի համար փոխ առնել հն. օ տառը: Փրանսիացիք էլ այսօր մեր այն ժամանակվա կրիլիկյան հայոց պես ունին երկու տեսակ օ, որ գրում են օ և α ձևով, բայց կարիք չեն զգում փոխելու α գրությունը, որովհետև α ունի միայն օ հնչյունը և երբեք չի հնչվում av:

Պ տառի համար առանձին տեսիլ էրան չկա. այդ հնչյունը չկար հին հայոց ձայնական գրություն մեջ. երբ նրանք լսում էին օտար ազգերից Ֆ ձայնը, իրենք արտասանում և հետևաբար գրում էին փ, ճիշտ ինչպես արդի Ղարաբաղցիք կամ Մարաղայի հայերը, որոնք շարունակում են դեռ թուրքերեն կամ աուսերեն ֆա, ֆարբիկ, ֆայտոն ևն բառերը հնչել փա, փարբիկ, փայտոն և այլն: Ժամանակ անցնելով՝ հայերենի մեջ մըտավ նաև այս ձայնը, այնպես որ այլևս կարիք էր զգացվում նրա համար էլ մի նոր նշան ունենալու. և ահա, ԺԲ դարում փոխ առնվեց հուներենից Ֆ տառը: Ավելացնենք միայն այն, որ պետք չէ կարծել, թե այդ տառը կամ հնչյունը միմիայն օտար բառերի համար էր. բուն հայերեն բառերն էլ, թեև հազվադեպ, ունեին նույն հնչյունը. օր. ինչֆի Վմինչևա:

Կրիլիկյան հայերենի ձայնախոսությունը (կամ ձայնական գրությունը) ընդհանուր գծերով նկարագրելուց հետո, անցնենք համառոտ կերպով դիտելու նրա ձայնաբանությունը, այսինքն այն ձայնական փոփոխությունները, որ կրիլիկյան հայերենը մուծել էր հին հայերեն բառերի հնչման մեջ:

Ա և Ե ձայնավորները երեք և ալելի վանկով բառերի մեջ

կորչում են. ինչ. գանկավոր (գանգառավոր, պատճառի (պատճառներ), հաւասար (հաւասար), վաճակներ (վաճառականներ), վայր (վայրէ), լինելու (լինելու), ունելու (ունելու) և այլն:

Այ գառնում է ա. ինչ. հար, մար, ձագ (հայր, մայր, ձայն):

Յա բառակազմում գառնում է յե. ինչ. յեմեմ (յամեմ), յեքակ (յարակ, յարակայ), յիմեցնել (որ է յեմեցնել, հինը յամեցուցանել):

Ե ձայնավորը վերածվել էր բառակազմին միավանկ բառերի մեջ ye, բազմավանկ բառերի մեջ e, շեշտի առկա ie, և ուրիշ առկա e. ինչ. ես (yes), եմ (yem), աներ (anier), երկու (ergu), ընկեր (əngier), մեռնիմ (mernim) և այլն:

Նայերի մաս է վերածվում էր ի. ինչ. իրեք (երեք), աւիրեմ (աւերեմ), աւերեմ (աւերեմ): Ղ ձայնի մաս բառակազմում գառնում էր ա. ինչ. աղբայր (եղբայր), աղին (եղին), աղաւթ (եղաւթ), աղջուր (եղջուր):

Նախորդին հակառակ ի ձայնավորը նայերի մաս գառնում էր ie. ինչ. պեղծ (պիղծ), անկիշեռ (անկիշու):

Ը ձայնավորի առկա հաճախ գառնում ենք ի. ինչ. յիստակ (յասակ), գիծար (գիծար), կիշեք (կիշեք), իսղեռակ (սղեռակ):

Ս ձայնավորը միավանկ բառերի սկզբում գառնում է vo, բազմավանկների սկզբում, բառամիջում և բառավերջում՝ o. ինչ. ով (վով), որ (վոր), որը (vorp), բայց հազն. orpier:

Սև ձայնավորը բառակազմում դ-ից առաջ գառնում է բ կամ o. ինչ. օգորգ, բղորգ (ուղորգ), բղուզ (ուղեզ), օղերակ, բղերակ (ուղերակ), բղեռիլ (ուղեռիլ), օղեմ (ուղեմ):

Սյ երկբարբառը գառնում է ու. ինչ. լուս (լոս), քուր (քոր) և այլն:

Իւ երկբարբառը գառնում է ոյ, որ հնչվում էր օ. ինչ. այրոյն (արին), հարոյր (հարիւր), այլոյր (այլիւր), առոյծ (առին), աղբոյր (աղբիւր) հոյս (հիւսն), հոյր (հիւր), ձոյն (ձին) և այլն: Նույն երկբարբառը դ-ից առաջ գառնում է ե կամ ի. ինչ. գեղ (գիւղ), երկեղ կամ երկիւղ (երկիւղ):

Սա երկբարբառը կրճատվելով գառնում է ե. ինչ. յամեանն (յամեանն), յաւիտենն (յաւիտեանն), բարեն (բարեանն), արենն (արեանն), սե (սեաւ) և այլն:

Բազմաձայնների մասին արդեն առել ենք. ավելացնենք այստեղ, որ բ-ից հետո թրթուռն պայթուցիկ բազմաձայնները

գառնում են թալ. ինչ. եփ (երբ), դերթ (գերդ, դիարդ), կարք (կարգ), որց (ործ), վարց (վարձ):

Այս ձայնափոխություններից ոմանք բառի պատկերի մեջ մեծ փոփոխություն չեն մտցնում. բայց կան բառեր, որոնք դրարարի համեմատությամբ գրեթե անճանաչելի են դարձած. ինչ. շաք (չափ), հաւերք (հրաւէր), համաւք (հրաման), ճանպահ (ճանապարհ), սուլի (սուրբ), սպկիկ (մաքուր, սուրբ), այնեմ (առնեմ, անեմ), աղջկին (աղջիկ), պոման (պայման), վոթել (վայթել), վանց (վասն), պացխուն (պատասխան). արդի աշխարհաբարի կամ բարբառների հետ նույն ձևեր են՝ արցունք, ծանդր, մանդր, ծունդր, պանդրուտի և այլն:

Կրիկյան հայերենը ունի նաև բոլորովին նոր բառեր, որոնք չկան գրաբարի մեջ. օր. ակուայ, աղէկ, դահ, հայնց, կտրիճ, ճորտ, ճիճն (միշտ), փնտուել, խէչ (կողքին), հոսովրել «խէջքը բռնագրավել և արգելքի տակ դնել», ըսովկիլ «ստանձանափակվել, գոհանալ» և այլն:

Քերականություն.

Յոթ տեսակ հոլովում կա, որոնք սեռականի կազմության համեմատ կոչում ենք ի, ոյ, ու, այ, ոջ, աւ և օր հոլովում: Ճաւիս ենք այստեղ մի քանի օրինակ այս բոլորից:

1) Պղինձ, պղնձի, ի պղնձէ, պղնձով.

արոյն, արոյնի (կամ արին), յարոյնէ, արոյնով.

ձոյն, ձոյնի և այլն.

2) Անսուն, անսնոյ, ի յանսնոյ, անսնով.

3) Վաճուկան, վաճուկու, ի վաճուկնէ, վաճուկնով.

4) Փուլան, ֆուլանայ.

5) Բուր, քուրոջ, ի քուրոջէ, քուրոջով.

6) -ութիւն, -ութեան (ութեն), կնկան, ձկան, տան,

7) Աղբայր, աղբաւր, յաղբաւրէ, աղբաւրով,

հայր, հաւր, ի հաւրէ,

քոյր, քաւր և այլն:

Բացառիկ հոլովում է ներկայացնում՝

օր, աւուր, յօրէ, յօրվընէ, օրով:

Այս բոլորից ավելի հետաքրքրական է գործիականի օմ վերջավորությունը, որ գտնում ենք 6-րդ հոլովման և ուրիշ շատ բառերի մեջ. ինչ. ձկում, ոսպում, սխտում, արջասպում, եւէզում, պտղում, անձում, կաթում, բութում, ձեռում, ոտում և այլն:

Հոգնակիի կազմութունը

Հին հայերենի ք վերջավորութիւնը կիլիկյան հայերենում թեև գոյութիւն ունենք, բայց սահմանափակված էր միայն ձայնավորով հանգող բառերի համար. այսպես, օրինակ՝ որդիք, տանցիք, քրիստոնէք, պախրէք, վկայք, ակոսայք, ծառայք, քահանայք, տղայք, ածուք, ալիկիք, տարիք, աղիք և այլն:

Բացի սրանից, կիլիկյան հայերենը իբր հոգնակեցւո գործ է ածում վեց ուրիշ մասնիկներ, որոնք գրաբարում հավաքական կազմելու համար էին գործածվում: Սրանք են՝

1) եր (կարգա րեր).—Այս մասնիկը գործ էր ածվում միայն քաղաձայնով հանգող բառերի ձայնի, թե միավանկ և թե բազմավանկ բառերի համար. ինչ որքան, մունետկեր, հիվանդանոցեր, հաւուկթեր (ձուեր), աչքլութեններ (աչքի ցովեր): Հետագայում այս մասնիկը պիտի ընդհանրանար թե ձայնավորով և թե քաղաձայնով վերջացող բառերի համար, բայց բազմավանկների համար պիտի դառնար ներ:

2) նի.—Այս մասնիկը գործ է ածվում միայն նրկվանի բառերի համար. ինչ. աճնի (ամաններ), արոյննի (արիւններ), իրիցնի (երեցներ), նանգնի (ճանապարհներ), պոմըննի (պայմաններ): Այս մասնիկն է, որ հետագային միանալով էր մասնիկի հետ՝ պիտի կազմեր արդի աշխարհաբարի ներ մասնիկը՝ նիկի հետ:

3) վի, ուի, իի.—Այս մասնիկը շատ սահմանափակ գործածութիւն ունի. եղած օրինակները հետևյալներն են. աչվի, ձեովի, սովի, միջուի, դովի, իրվի, մտվի, տնովի, շնվի.—ուրիշ օրինակ չկա: Բոլորն էլ միավանկ են: Քննութիւնները ցույց են տալիս, որ այս մասնիկը հայերենի հնագուշտ երկակի մասնիկն է և ըստ այսմ վերի օրինակներն էլ նախկին երկակիներ են. այսպես աչք, ձեռք, ոտք, մէջք, նմանապիս և դուռ, որ գուրջ հոններն է նշանակում. մյուսները նմանութեամբ կազմված ձևեր են:

4) Տի.—Այս մասնիկով ունինք միայն ծակտի, այրկտի (չրիկներ) և կնկտի բառերը,—այս միևնույն մասնիկը միանալով նախորդ վի մասնիկի հետ՝ դառնում է վտի, որով ունինք քուրվտի (քուրեր). ճիշտ այնպես՝ ինչպիս ունինք ներ, որ գուձարն է նի և եր մասնիկների:

5) աճ.—Այս մասնիկով են կազմված ձիան, իշան և ջորեան (ջորիներ) բառերը. ուրիշ օրինակ չկա:

6) սաան.—Այս մասնիկը գործ էր ածվում միայն ի վերջա-

ցող անշունչ առարկաների համար. ինչ. շինեստան, տեղեստան, խմելեստան, ըմբելեստան, հայրենեստան, մայրեստան և այլն:— Ի ձայնավորով վերջացող շնչավոր առարկաների հոգնակին կազմվում էր ք մասնիկով:

Այս բոլորից դուրս կային նաև ուրիշ մասնիկներ և մասնիկների ուրիշ խառնուրդներ, ինչպես՝ այք, իք, նիք:

Հոգնակիի հոլովումը հետևյալ ձևով էր.

Ու.	հայրենիք	դեղեր	տերևնի	ձեովի
Հ.	գհայրենիք	դղեղեր	գտերևնի	ղձեովի
Ս—Տ	հայրենից	դեղերոյ	տերևնոյ	ձեովոյ
Բց.	ի հայրենից	ի դեղերոյ	ի տերևնոյ	ի ձեովոյ
Գծ.	հայրենիօք	դեղերով	տերևնով	ձեովով
	հայրենիօք			

Ու.	քուրվտի	ձիան	տեղեստան
Հ.	դքուրվտի	ղձիան	գտեղեստան
Ս—Տ.	քուրվտոյ	ձիանոյ	տեղեստանոյ
Բց.	ի քուրվտոյ	ի ձիանոյ	ի տեղեստանոյ
Գծ.	քուրվտով	ձիանով	տեղեստանով

Միևնույն ժամանակ գործածած հայերերում կա նաև ս հանգով հոգնակի ուղղական. ինչ ձեռս, որովայնս, հոգս, շաքս, (փխ. ձեռք, որովայնք, հոգք, չափք). սրանցից, ինչպես հայտնի է, հոգս սովորական է այժմ արևելյան հայերենի մեջ, իսկ շոքս բոլոր բարբառներում:

Ավելայնք վերջապիս, որ կիլիկյան հայերենում կային միևնույն ժամանակ զուտ գրաբարածե հոլովներ, ինչ. աղրբայ, քրտնօք, ի նալծնայ և այլն:

Թվական անուններ

Գրաբարից տարբեր ձև ունին՝ մէկ կամ մեկ, երկու կամ երկուք, իրեք, չորս, հինկ, իաւթն, տասնումէկ, տասնուերկու, քսանուերկու, քառսուն, իաւթնասուն, հարոյր և այլն:

Իերանունները իրեց հոլովմամբ

ես	դու,	դուն	մենք	դուք
զիս	զքեզ		զմեզ	զձեզ
իմ	քո		մեր	ձեր
ինձ	քեզ		մեզ	ձեզ

յիսնէ	ի քնէ		
յիսմէ	ի քնմէ	ի մեզնէ	ի ձեզնէ
իսնով	քնով		
իսմով	քնով	մեզնով	ձեզնով

իւք	իրենք		
սիւք	զիրենք		զիրար
իր, իրեն	իրենց		իրաց
յիրմէ	յիրմնցնէ կամ	յիրենցմէ	յիրացմէ
իրմով	իրմնցնով	իրենցմով	իրով

սա	դա	նա	սաքա	դաքա	նաքա
զսա	զդա	զնա	զսաքա	զդաքա	զնաքա
ոարա	զարա	նարա	սացա	դացա	նացա
—	—	—	իսացմէ	իդացմէ	ինացմէ
—	—	—	—	—	—

այս	այտ	այն	այտք	այտոք	այնոք
զայս	զայտ	զայն	զայտք	զայտոք	զայնոք
այտոր	այտոր	այնոր	այտոց	այտոց	այնոց
յայտոր	յայտոր	յայնոր	յայտոց	յայտոց	յայնոց
այտով	այտով	այնով	այտովք	այտովք	այնովք

Ըստ Մխիթար Հերացու

բց. յայնորէ, հգ. այնոնք, զայնոնք, այնոց, յայնոցէ:
Յուցական գերանուն (և ածական) են՝

իսա	իտա	ինա
հյց. զիսա	զիտա	զինա

ուրիշ հոլովներ չունին.

Անփոփոխելի բառեր, միջակ անուններ են.

հայնց, այնց, հանց, հէնց.

հանչաք, այնչաք, այդչաք, այսչաք, որչաք, միաչաք.

հայնցեղ.

հիմա, հիմայ, յիմայ.

հօս, հօտ, հօն, ի հօս, ի հօտ, ի հօն.

այլ վայր, այլվայր, այլուայր, այլուի.

առջի, յառջի, յետև, հետև, վերև, ներքև, դրուցև, վերջև, յերջև, ստորև, ընդ ներքսէ, ընդ նեքսէ, ընդ դրացէ, ընդ դրուցէ, ի դրացէ, ի դուրք, ի ներք, ցներքս, ցներքսև, ցներքև, ցներքսէ, ցդրուց, ցդրուցէ և այլն:

Անտից, աստից, յայսկի, յայնկից:

Ի հետ, յետ «միասին», ի հետ ու ի հետ, ի հետ ու ի հետ, ի հետ ի հետ, հետ մի այլ, վաղ, ի վաղէ, յեզուց:

Այլ, այլ չ, մենակ, միմակ.

իսկի, վատահի, ամենս, լուկ, բահրակ, ի լման, ճիճն, ի ճիճն, քիչ, չէ, չ,

զինչ ցեղ, ով զիտէ, ոտին մի «մի անգամ»,

ձւր, է՞ր, քանի՞, աւելի, այլ աւելի, մէն «լուկ, միմիայն»,

չատ. զ, ի, ց, ընդ, ըստ, առ.

ի թէչ, զարթ, զարդ, զարթել (բացի).

վանց, քանց, ինչու, ինչվի, ինչֆի, առանց:

Շաղկապներ

ու, ու վ, վ

նա, նայ

ամ «ուրեմն»

հապա, ապա

այլ

կամ, կամ... կամ

ոչ, ու ոչ, ու ոչ... ու ոչ

որ (զի)

եֆ (երբ)

զէդ, զէտ (իրբ)

ինչուր (մինչև)

եթէ, նա թէ, ապա թէ, ամ թէ, որ թէ, և թէ

թէ չի, թի չի «եթե ոչ»

քաւէլ (բացի)

Բայլը ամենից ավելի ձևափոխյալ վիճակն է ներկայացնում:

Լծորդությունները գրաբարի սկստեղ էլ չորս են. եմ, իմ, ամ, ում. բայց նկատելի են հետևյալ նոր հանգամանքները.

1) Լծորդությունները իրենց ղերքերը փոխել են. այսօր ինքն գրաբարի այս ինչ բայլ որ պատկանում է այս ինչ լծորդության, վերածվել է մի ուրիշ լծորդության. օր. *կլանեմ* > *կնում*, *կլանեմ* > *կնում*, *յօժարիլ* > *յօժընալ* և այլն:

2) Ա, Բ, Գ լծորդությանց երկրորդ տեսակի միջին ա ձայնը կորել է. ինչ. բաժնեմ (բաժանեմ), բաժնիմ (բաժանիմ), ամբընամ, լուկնամ (լոգանամ), յօժընամ, շողնամ, լմնամ (լցուիլ) և այլն:

3) Չորրորդ լծորդութեան առաջին տեսակը (ուժ) ջնջվել է. նուժ է միայն երկրորդ տեսակը—նուժ, որին անցել են նաև ուրիշ բայեր. ինչ. երևում, մտնում, գտնում, կրնում, հեծնում, սկսնում և այլն. այսպէսով—նուժ ձևով բայերի թիվը շատացել է:

4) Գրաբարի մեջ կրավորականը յուրահատուկ ձև չուներ, այլ երկրորդ լծորդութեան ձևը ծառայում էր առաջին և երկրորդ լծորդութեան կրավորականի համար. միջին հայերենը ստեղծել է կրավորականի համար առանձին մի ձև, որ է՝ ուիմ, միմ, ւիմ, որ շարունակվում է նաև արդի հայերենում: Բայց միջին հայերենը ունի մի խումբ կրավորական ձևեր, որոնց կազմութունը չի համապատասխանում արդի ձևերին, ինչ. գողընվիլ (գողացվել), յիմընվիլ (իմացվել), բանվիլ (բացվիլ), լվանվիլ, տվիլ (տրուիլ):

5) Ընդհանրապես խոսելով գրաբարի մեջ բայի սեռը անորոշ էր. միջին հայերենը ստեղծել է երեք սեռ. կրավորականի համար ուիլ ձևը ստեղծելուց հետո, ներգործականին հատկացրել է ել և չեզոքին իլ վերջավորութունը: Այսպես են օր.

ներգ.	չեզ.	կրաւ.
բաժնեմ	բաժնիմ	բաժնուիմ
եփեմ	եփիմ	եփուիմ
այրեմ	այրիմ	այրուիմ

Դժբախտաբար այս գեղեցիկ զանազանութունը ընդհանրացած չէ նույն իսկ միջին հայերենի մեջ, այնպես որ սրանց կողքին գտնում ենք նաև իմ վերջավորութեամբ ներգործական բայեր էլ. ինչ. ունիմ, տանիմ, ընդունիմ և այլն:

6) Անցողականը կազմվում է գնեմ, եզնեմ, ացնեմ մասնիկներով. ինչ. ուսցնեմ, սեզնեմ, փոքցնեմ, յերցնեմ (յարուցանեմ), անցցրնեմ, պակսեցնեմ, վզենկեցնեմ, յեմեցնեմ, թուլացնեմ, զօրացնեմ:

Ոոնարձման գրութունը ամբողջապես փոխված է և համարյա թե նույն է արդի արևմտյան կամ կը ճյուղի բարբառների խոնարձման հետ:

Ներկան կազմվում է կու մասնիկով, ամեն տեսակ բայերի համար անխտիր.—նկատելի է, որ արդի արևմտյան աշխարհաբարը միավանկների մոտ ունի կու, բազմավանկների մոտ գործ է ածվում կը, իսկ ձայնավորով սկսող բայերի համար դնում է կ. այսպիսի զանազանութուններ չկան կիլիկյան հայերենում.

օր. կու ասեմ, կու բաժնեմ, կու այնէ ասնում է», կու հային ընայում են», կու գայ զգալիս է»:

Անցյալ անկատարը ճիշտ նույն ոճով է. ինչ. կու կարծէր կու հայէր, կու երթային և այլն:

Ապառնին կազմվում է երբեմն ներկայի նման և երբեմն էլ կամի բայով. ինչ. կու տամ, կու ասեմ, զնալ կամի, կամի ելենի, կամի մեռնիլ և այլն:

Անցյալ կատարյալը պահում է դ՛ն գրաբարի ձևը, ինչպես է նաև արդի աշխարհաբարում և բարբառների մեծագույն մասի մեջ.—նկատելի է, որ շարունակվում է դեռ կատարյալի և կամ է հավելվածը. ինչպես՝ էած, եհաս, եզարկ և այլն.—գալ, տալ, դնել բայերը ստացել են բոլորովին նոր ձևի կատարյալ երեկ (եկա), երես (տուեց), երեղ (դրեց):

Հրամայականը գրաբարի ոճով է. ք դեմքը՝ է. ինչ. այրէ, օծնէ, մանդրէ, ընկնէ. անցողականի մեջ ոչ կամ ու. եոցոյ, թանձրցոյ, կաթեցոյ, իջու, կակղցու, հովցու, շողցու, չորցու.—ստորագայանք ներկայացնում է գրաբարի ներկան. այսպեսով կիլիկյան հայերենի սահմ. ներկան զանազանվում է ստորագասայանից միայն կու մասնիկի հավելումով: Կան մի ջանի բայեր, որոնց ստորագասականը տարբերվում է ներկայից՝ սասանալով ենամ ձևը. այսպես են հետևյալ բայերը.

ներկ.	ստոր.
լինամ, լիննամ	լինիմ
ուենամ, ուենամ	ուենիմ
կենամ	կամ
դիտենամ	գիտեմ
կամենամ	կամիմ
կարենամ	կարես
ուղենամ	ուղեմ
պարտենամ	պարտիմ
պիտենամ	պիտիմ
թվենամ	թվիմ
այժենամ, աժենամ	այժեմ, աժեմ
ծարվենամ	ծարվիմ
ճանչենամ	ճանչեմ
ուռենամ	ուռիմ
ամաչենամ	ամաչեմ
մօտենամ	մոտիմ
վախենամ	վախեմ

Բայերի վերջավորութուններից փոխված է ներկա հոգ. առաջին դեմքը (նք փոխանակ գրաբար մք). տարյալի հոգնակի ա դեմքը միայն ք հանգն ունի և աշ հարարի նք ձևը չկա դեռ: Կատարյալի եզ. ք դեմքն ունի փոխանակ գրաբար եք. հփեցիք, դբիք, եկիր. — եզ. գ դեմք փոխանակ եաց. կտրեց, քչփեց, գահեց, խանգրեց, հա առջընտրեց և այլն. շատ անգամ դարձած է ալ, ինչ. տե եղաւ, ելաւ, մտաւ, իջաւ և այլն:

Դերբայները պահում են գրաբարի ձևերը՝ ենթարկվ միայն ձայնական փոփոխութեանց. ինչ.

ներկ. դերբ. օղ, աղ. — կորսնօղ, գրաւկնօղ, հոգցօղ, հս նօղ և այլն:

ապ. դերբ. լի. — ընդունելի, անբժշկելի. — լոյ վերջավոր թյունը կազմում է ածական. ինչ. գայլ դեղերն որ հալելոյ է գայլ դեղերն որ աղալոյ է. գայն խիժերն որ չէ լուսելոյ:

անց. դերբ. ել. ինչ. կարգել, կցել, յեմել, հովցել, յիմլ լմցել, յաւելցուցել, եկել. կրավ. բերուել, լսուել և այլն:

Կայն գործածութեան է արված -աձ ձևով դերբայներ ինչ. ածած, համած, սայգած, քշտած, տահրկած:

Սրանցից կազմվում են բաղադրյալ ձևերը. ինչ լուսել լուսել լինիմ, կրաւ. լուսուել եմ, լինիմ:

լուսել էի, լուսել լինէի, լուսուել էի, լինէի.

լուսել լինամ, լուսուել լինամ.

լուսել լինայի, լուսուել լինայի.

Կրաւ. { լուսած եմ, լուսած լինիմ
լուսած էի, լուսած լինէի
լուսած լինամ, լուսած լինայի

Հետաքրքրական է բացասական բայի կազմութեան, դրաբարը մի շատ պարզ ձև ունի. նա պահում է դրականի խոնարհման ձևը անփոփոխ՝ ավելացնելով միայն ոչ կամ չ մակբայը:

Իսկ կիրիկյան հայերենը այս դրութեանը շարունակում կատարյալի և ստորագասական ներկայի և անցյալի համար, իս սահմանական ներկան ու անկատարը կազմում է բոլորովին նոր ոճով: — Առում են բայի անորոշ ժամանակը, դնում են նրա վրա ի կամ չ նախդիրը և կցում են էական բայի բացասական ներկա և անկատար ձևերին. ինչ. չեմ յերթալ, չեմ յառնուլ, չես ի կարել, չէիր ի խօսել, չէ ի վճարել, չէ ի հասնել

չէ ի հաճեցնել, չէ ի հրամայել, չէ ի տալ, չէր ի փնտոել, չեն ի յայրել և այլն. եզ. գ դեմքում «չէ ի» կարող է սղվելով տալ շի, ահա լուսեմ բայի խոնարհումը.

չեմ ի լուսել	չէի ի լուսել
չես ի լուսել	չէիր ի լուսել
{ չէ ի լուսել	չէր ի լուսել
	չի լուսել
չենք ի լուսել	չէիք ի լուսել
չէք ի լուսել	չէին ի լուսել
չեն ի լուսել	

Կատարյալն է չլուսեցի, չլուսեցիր և այլն, ստորագասականը՝ չլուսեմ, չլուսէի և այլն: Ապառնին նույն է ներկայի հետ:

Հրամայականը գրաբարի պես լինում է մի լուսեր, մի առնուր, մի մատներ, բայց հետաքրքրական նմանողութեամբ՝ չետեկելով սահմանականին, մերթ ծայրի ք դարձնում է չ և մերթ էլ իրրե երկրորդ դեմք դարձնում է ա. ինչ. մի տալ, մի առնուլ, մի արգիլել, մի լսել, մի արծկեր, մի շինես, մի արգիլես, մի դնես, մի ընդունիս և այլն:

Սահմ. բացասականի այս ձևը սերիշ բան չէ, եթե ոչ մի տեսակ ներգոյական. չեմ ի լուսել, չես ի տալ նշանակում են լուսելու գործողութեան մեջ չեմ, տալու գործողութեան մեջ չես և այլն: Այսպես բմբունելուց հետո՝ պեսք էք սպասել որ հաստատականի մեջ էլ սահմանականը այսպիսի ձև ստանար, և իրոք Վարդանի և այլ գրողների հայերենում գտնում ենք՝ են ի կուռիլ «կուլում են», եմ յանձնել, է ի վառիլ, հաւատալ եմ, է ի գալ, ոնց հլնեմ ի դուրս՝ երբ երկինքն ի շուրջ է ի գալ եւ զիս ի ներք է ի յունել. ինչ ցեղ ելնեմ, երբ երկինքն ի վրայս է ի փլչել եւ զիս ի ներքեն է յարգելել:

Այս ձև սահմանականը նախարանն է արևելյան հայերենի ում ձևով ներկայի, որ նույնպես սերիշ բան չէ, եթե ոչ ներգոյական հոլով. չեմ խաղում, չեմ ծնծում բուն նշանակում են «խաղի մեջ չեմ», «ծնծի մեջ չեմ» և այլն:

Անկանոն բայերը գրաբարի մեջ թեև այնքան շատ ու այնքան դժվար չեն, որչափ ուրիշ լեզուների մեջ, բայց այնուամենայնիվ լեզվի ընդհանուր պարզութեան և միօրինակութեան մեջ ներկայացնում են անհարթութեաններ: Միջին հայերենը

այստեղ էլ դրել է իր ձեռքը: Նախ որովհետև գրաբարի ապառ-
նին և ստորագասականը ջնջված են, հետևաբար և դժվարու-
թյունների մի նշանավոր մասը ինքնին վերացված է բոլոր ան-
կանոն բայերի մեջ: Երկրորդ՝ անկանոն բայերից մի քանիսը
ամբողջապես գործածությունից դուրս են ընկած: Մնում է ուրեմն
մի խումբ անկանոն բայերի կատարյալը, հրամայականը և ան-
ցյալ դերբայը, որոնք շարունակում են դեռ իրենց գոյությունը:
Բայց այստեղ էլ միջին հայերենը շատ անգամ անկանոն ձե-
վերը ջնջելով՝ վերածել է կանոնավորի, կամ գոնև ավելի հեշ-
տացրել:

լսեմ—կտր. լսեցի, հրմ. լսէ, լսեցէք.

(փխ. լուայ, լուբ, լուարուք).

ճանաչեմ—կտր. ճանաչեցի (փխ. ծանեայ):

դնեմ.—կտր. դրի, գրիք, եզիք, դրաք, դրիք, գրին (փխ.
եդի, եդիր, եդ, եդաք, եդիք, եդին).

տամ—կտր. տուի, տուիր, երետ, սուաք, տուիք, տուին
(փխ. ետու...).

առնեմ—կտր. այրի, այրիր, արար, այրաք, այրիք, այրին
(փխ. արարի, արարեր, արար, արարաք, արարիք, արարին), հրմ.
այրէք (փխ. արարէք):

Այստեղ վերջ ենք տալիս կիլիկյան հայերենի նկարագրությանը:
Ամփոփելով մեր խոսքը կարող ենք ասել, որ միջին հայերենը կանգ-
նած է գրաբարի և աշխարհաբարի միջև, իբրև երկուսի միացուցիչ
օղակը: Կան դեպքեր, ուր նա դեռ գրաբար է, ինչպես հայցակա-
նի զև բացառականի ի, յ նախդիրների գործածության մեջ. բայց
ավելի շատ են այն դեպքերը, ուր նա բոլորովին աշխարհաբար է.
ինչպես կտր. դրի, գրիք, տուի, տուիր, և այլն: Ավելի քիչ են այն
դեպքերը՝ ուր նա, իբրև անցման շրջան, ներկայացնում է միաժա-
մանակ թե գրաբարը և թե աշխարհաբարը, ինչպես հոգնակիի կազ-
մության մեջ, ուր ձայնավորով վերջացող բառերը ստանում
են ք) բաղաձայնով վերջացողները եր և այլն: Աշխարհաբարի
հետ համաձայնության դեպքերը ավելի կշատանան, եթե փոխա-
նակ առնելու գրական աշխարհաբարը, համեմատության առնենք
արդի գանազան բարբառները. այսպես այն գանազանությունը,
որ գտնում ենք միջին հայերենում հոգնակիի կազմության մեջ
(ձայնավորով հանգող բառերի համար ք, բաղաձայնով հանգող
բառերի համար եր), մինչև այժմ էլ կա Նոր-Ջուղայի հայոց

բարբառում.—հայցականի զ նախդիրը կա Մշո և Սուչավայի
հայոց բարբառում.—բացառականի ի նախդիրը Սյուբրիո հայոց
բարբառում.—կատարյալի երետ, երեդ, երեկ (տուեց, դրեց,
եկավ) ձևերը կան Նոր-Ջուղայի բարբառում (արետ, արեկ).—
ձայնավորի մտ կու մասնիկի գործածությունը առանց սղման՝
էա նույնպես Թիֆլիսի բարբառում (կու առնիմ, կու ազատիմ,
կու աղօթիմ, կու էրիմ և այլն). և այսպես ուրիշ շատ մանրա-
մասնություններ:

Վերջին անգամ պետք է կրկնել այն՝ ինչ որ ասացինք
վերևում, թե միջին հայերենը մի բնդհանուր լեզու չէր, այլ թե
կային Հայաստանում և Հայաստանից դուրս բազմաթիվ միջին
հայերեն բարբառներ, որոնցից մեկն էլ կիլիկյան հայերենն էր,
որ պետականության շնորհիվ բարձրացավ գրականությանը: Ու-
րիշ բարբառները հնոքեր եղան են գալիս տարբեր վայրերում
դրված քրթերի և արձանագրությունների մեջ:

Բոլորից ամենահինը պիտի համարենք Համամ Արևելցու տված
տեղեկությունները իր Քերականության մեջ: Թոսելով բայերի
թորդության մասին (էջ 265), այս հեղինակը գանազանում է
երեք ձև. ա, ու և եա. առաջինին իբրև օրինակ տալիս է գամ,
գաս, գայ, երկրորդին՝ առնում, առնուս, խիկ օրրորդին՝ զեամ,
զեաս, որի համար ասում է հատկապես թե «Ծեքուպան է բառ
ըստ մթին լեզուաց» (հմմտ. Ղարաբաղի բարբառով կյամ, կյաս,
կյա): Նույն հեղինակը հիշում է նաև յեզուց, եզուց օտոզլրդա-
կան բառի գործածությունը, որ հիմա արևելյան հայերենում
սովորական է. «ի վաղիւն... զոր գոհնիկքն յեզուց ասեն. եզուց
դանամք» (էջ 271):

Միսթար Հերացու հայերենում հոգնակի ուղղականը վեր-
ջանում է ս, մինչդեռ Կիլիկիայում այդպիսի բան չկա.—ը ձայ-
նի տեղ հաճախ գտնում ենք ի. ինչ. շն. փոխանակ շը, իսպի-
տակ փոխանակ սպիտակ և այլն. անցյալ դերբայը վերջանում է
եր, մինչդեռ Կիլիկիայում վերջանում է ել:—Վարդանի գրվածք-
ներում գտնում ենք ներգոյական հոլովի և սահմանականի ում
ձևը, որ արևելյան հայերենի սկզբնավորությունն է. ինչ ի
սրտումս, աղօթք են առնում: Բջնի մի արձանագրության մեջ,
որ գրված է 1358 թվին, գտնում ենք հետևյալ բարբառային
ձևերը:

հգ. սեռ.-երի (փխ.-երոյ). ինչ. ձորտերին.

բերաց (փխ. երեր «բերաւ, բերեց»):

Ախրապատինի մեջ գտնուած ենք չաքս (փխ. չաք, որ է չափ), տեսել (փխ. տեսուլ, որ է տեսանել), երիկ (կիլիկյան այրիկ «ամուսին»), ոյր (փխ. իր), ոյրեն, յոյրմէն (փխ. իրեն, յիրմէն) և այլն:

Արձանագրութիւնների և հիշատակարանների մի կանոնավոր հետազոտութիւն պիտի կարողանա անշուշտ ավելի շատ բան ասել այս շրջանի հայերեն բարբառների վերաբերմամբ:

Ա Ղ Բ Յ Ո Ւ Բ Ն Ե Բ

Միջին հայերենի ուսումնասիրութեան համար կա երկու գլխավոր աղբյուր, գրանք են Այտնյանի Քննական քերականութիւնը և Հոփանյանի «Հետազոտութիւնք», որոնք հիշեցինք վերը՝ էջ 227 և 236.

Բայց այս երկուսից շատ ավելի կատարյալ է Karst, Historische Grammatik des Kilikisch — Armenischen, Strassburg 1901 (մասնական թրգմ. տես Բազմ. 1900, ապա ընդհատված): Այս գործը կիլիկյան հայերենի ընդարձակ և մանրամասն քերականութիւնն է, որից քաղեցինք և մենք վերը՝ էջ 236—252:

Գ Լ Ո Ւ Խ Ի Գ

ՅՈՒՐԲԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՏ

Բաղդադի խալիֆաները չկարողանալով դիմադրել արաբական պետութեան զանազան կողմերը ծագող ապստամբութիւններին, պետական ծառայութեան էին կանչել Միջին Ասիայի իրենց հպատակներից թուրքեր, որոնք շատ հարգված էին իրենց քաջութեան համար: Այս թուրքերից նրանք կազմել էին զանազան գնդեր, որոնք տարածված էին ոչ միայն Բաղդադում, այլև Եգիպտոս, Փոքր Ասիա, Ասորիք և բոլոր սահմանների վրա: Թզարի կեսին Հայաստան արշավող Բուզա գորավարը նրանցից էր: Երբ թուրքերը շատացան ու զորացան, սկսան իրենք էլ ըմբոստանալ և այլ ևս խալիֆաների հրամանին ուշադրութիւն չէին դարձնում: Այսպես կազմվեցին արաբական պետութեան զանազան կողմերում թուրք-մոնղոլական այլևայլ պետութիւններ, ինչպես էին Սամանիների պետութիւնը՝ 901 թվին, Բուխարա և Սամարղանդ մայրաքաղաքներով, և Ղազնևիների սուլթանութիւնը՝ Աֆղանիստանի և Հնդկաստանի կողմերում (Ժ դարի վերջը):

Թուրք ցեղերից սելջուկները Կասպից ծովի հարավային եզերքով դիմեցին դեպի արևմուտք. նրանց մեջ նշանավոր եղավ Տուղրիլ բեկը, որ Միջագետքը տակնուվրա անելուց հետո մտավ Հայաստան, Վասպուրականի կողմից, 1021 թվին, առաջին անգամ: Վասպուրականի Սենեքերիմ թագավորը դիմադրեց նրան, բայց հաղթվեց: Տուղրիլը շարունակեց իր ասպատակութիւնները մինչև Նախիջևան, որտեղից ետ դառնալով՝ մտավ Պարսկաստան: Այստեղ՝ Սորասանի մեջ, նա իրեն թագավոր հայտարարեց և Իրաքը, Մուսուլն ու Բաղդադը գրավելով՝ հիմնեց թուրք-պարսկական նոր պետութիւն: Այնուհետև Տուղրիլը երեք մեծ արշավանքներ էլ կատարեց Հայաստան 1042, 1047 և 1048 թվերին և ամբողջ երկիրը՝ մինչև Տարսն, Հաշտյանք, Կարին, Բասեն, Տայք և Սպեր, ասպատակեց: Իր հաջորդը՝

Ալփասլան, առավ Անին, Սերաստիան, որ այն ժամանակ հայկական վասալ իշխանութիւն էր կազմում, առաջացավ մինչև Կեսարիա, իսկ նրա հաջորդ Մելիք շահի ժամանակ (1086—1092) ամբողջ Հայաստանը պաշտոնապես գտնվում էր սելջուկների իշխանութիւնի տակ: Այս թագավորի օրոք սելջուկյան պետութիւնը հասնում էր իր գագաթնակետին. Եգիպտոս, Ասորիք և ամբողջ Փոքր Ասիա, արևելքից էլ մինչև Բուխարա, Սամարղանդը և Գալկարի պետութիւնը մտնում էին սելջուկների իշխանութիւնի տակ: Այնպես որ նա իր մեծութեամբ գերազանցում էր հին պարսից միապետութիւնից և արաբական խալիֆայութիւնից: Մելիքի մահից հետո սելջուկյան պետութիւնը մասնատվեց, կազմվեցին զանազան սուլթանութիւններ և մի խումբ մանր իշխանութիւններ (աթաբեկութիւններ), հատկապես Ատրպատականում և հարավային Պարսկաստանում ձևացած աթաբեկութիւնները: Առաջիններից կարևոր են մեզ համար Հալեբի, Դամասկոսի, Իկոնիայի և Նիկիայի սելջուկյան թուրք սուլթանութիւնները, որոնց հետ Կիլիկիայի հայերը հարաբերութիւն մեջ էին շարունակ: Մեր երկրում՝ Հայաստանում էլ կազմվեցին զանազան հայ իշխանութիւններ և մահմեդական ամիրայութիւններ (Խլաթ, Դվին, Կարս, Անի), որոնք իրենց գոյութիւնը շարունակեցին մինչև թաթարական արշավանքները:

Թաթարները (հատկապես մոնղոլ թաթարները) դուրս եկան Միջին Ասիայից 1203 թ. Չինգիզ խանի առաջնորդութեամբ գրավեցին ամբողջ Թաթարստանը, Չինաստանը, Մանջուրիան, Կորեան, Թուրքեստանը, Պարսկաստանը, հետո՝ Ռուսաստանը, Խրիմը, Լեհաստանը, Հունգարիան և մինչև անգամ Դանուբ գետն էլ անցան: 1236 թվին Աղվանքն ու Վրաստանը գրավելով՝ ներանք մտան Հայաստան, ամբողջ հրկրին տիրեցին, հետո անցան Միջագետք և Բաղդադի ամիրայութիւնը վերջ տվին: Իրենց իշխաններից մեկը (Հուլաղու) աթոռը դրավ Ատրպատականի Մարաղա քաղաքում և հիմնելով պարսկական-թաթարական նոր հարստութիւն, իր իշխանութիւնի տակն էր պահում Հայաստանը: Այս ժամանակից հայերը մտնում են թաթարների մոտ զինվորական ծառայութիւն և նրանց հետ միասին գնում են հեռավոր արշավանքների: Բաղդադի արշավանքին Պոռ իշխանը իր գնդով մասնակցում էր կռվին: Նույն Պոռ իշխանը մասնակցել է նաև Մուֆարդինի արշավանքին: Բուրթեյ իշխանը մասնակցում էր Խփչաղների պատերազմին՝ Թերեք գետի ափում:

Տարսայիճ իշխանը մասնակցել է Խորասանի, Շամի, Դարբանդի, Համսի, Համայի արշավանքներին: Հայերը կազմում են նաև մի քանի գաղութներ թաթարական երկրներում. այսպես՝ Վոլգայի եզրերը գտնված զանազան քաղաքներում. Սարայ, Աստրախան, Ղազան և այլն: Նույն միջոցին Կիլիկիայի հայերը քաղաքական դաշն են կապում թաթարների հետ: Սմբատ սպարապետը, և նրանից հետո Հեթում թագավորը, անձամբ գնում է Կարակորում մայրաքաղաքը՝ Բայկալ լճի վրա, թաթարների խանի մոտ և նրա հետ կնքում հարձակողական և պաշտպանողական դաշնագրութիւն՝ Փոքր Ասիայի Սելջուկյանների և Եգիպտոսի Մեմլուք պետութիւնի դեմ (1254 թ.): Թաթարական մի բանակ գալիս է Կիլիկիա և միանալով հայոց հետ՝ արշավանքներ է մղում դեպի Ասորիք և Պաղեստին: Այս դաշնակցութիւնը տևում է կես դարից ավելի, մինչև 1302 թիվը, երբ թաթարները մահմեդականութիւն են ընդունում և թուրքերի, թուրքմենների ու արաբների հետ միացած՝ սկսում են իրենց ասպատակութիւնները Կիլիկիա, որոնց վախճանն է լինում Կիլիկիայի թագավորութիւնի կործանումը:

1340 թվին թաթարական մեծ պետութիւնը քայքայվեց, և նրանից ձևացան մանր մուկեր պետութիւններ: Հայաստանն էլ թեև պաշտոնապես գտնվում էր Պարսկաստանի թաթարական պետութիւնի ենթակա, բայց միևնույն ժամանակ երկրում իշխում էին զանազան ցեղեր. այսպես՝ արևմուտքում թուրքմենները, արևելքում՝ թուրքացած պարսիկները և հարավում՝ քրդերը:

Փոքր դարի վերջում (1372 թ.) Սամարղանդից դուրս եկավ էօզպեկ թաթարների առաջնորդ Լենկթիմուրը, որ իր նախորդ Չինգիզ խանի պետութիւնը վերականգնեց: Չինաստանից մինչև Փոքր Ասիայի ծովեզրերը և Մոսկովայից մինչև Եգիպտոս իր իշխանութիւնի տակ առավ: Նա Հայաստան ասպատակեց երկու անգամ. բոլոր քաղաքները, ինչպես և Փոքր Ասիայի Սերաստիա հայաշատ քաղաքը, չարաչար հարվածներ կրեցին: Հայաստանը էօզպեկ թաթարների ձեռքը մնաց մինչև այս անարկու բռնավորի մահը (1405):

Լենկթիմուրի մահից հետո Հայաստանը դարձյալ անցնում է թուրքմեն, թուրքացած պարսիկ և քուրդ իշխանների ձեռքը, մինչև որ Ուզուն Հասանը բարձրանալով պարսից գահի վրա՝ տիրում է ամբողջ Հայաստանին (1468 թ.): Այդ ժամանակից սկսվում է մի երկարատև պատերազմ թուրք-պարսիկների և

օսմանցիները միջև՝ Հայաստանի տիրապետութեան համար, որ տևում է 250 տարի: Օսմանցիք առաջին անգամ Հայաստան են մտնում 1473 թվին. այնուհետև Հայաստանը, ինչպես նաև Կովկասը, Վրաստանը և Ատրպատականը, մասամբ կամ ամբողջովին, մերթ տաճիկների և մերթ թուրք-պարսիկների ձեռքն է անցնում. բայց սովորաբար Հայաստանի արևելյան մասը մնում է թուրք-պարսիկների, իսկ արևմտյան մասը՝ տաճիկների ձեռքը, մինչև որ Ռուսաստանին են միակցվում Հայաստանի հյուսիսային և մասամբ էլ արևելյան նահանգները: Այս վիճակը տևում է մինչև առաջին համաշխարհային պատերազմը, որից հետո հայ տարրը արդեն բնաջնջված էր Մարմարայից մինչև Արաքս. իսկ բուն Հայաստանը Հոկտեմբերյան ռևոլյուցիայի շնորհիվ ազատագրվեց ցարիզմի լծից և ապա՝ սովետական կարգերի հաստատումով ստեղծեց իր պետականությունը:

Թուրք-հայկական հարաբերությունների այս ընդհանուր տեսությունից երևում է, որ հայերը 900 տարի ամբողջ գերիշխանություն տակ են ապրել թուրք-թաթարական ցեղի զանազան ժողովուրդների, այն է՝ սելջուկներ, Պարսկաստանի թուրքեր, մոնղոլ թաթարներ, էզգրեկ թաթարներ, թուրքմեններ և վերջապես՝ օսմանցիք կամ տաճիկներ: Այս ժողովուրդները թեև առանձին առանձին անուններ են կրում, բայց լեզվով այնքան մեծ տարբերություն չունին միմյանցից և միևնույն բուրբերեն բառի տակ կարող ենք հասկանալ բոլորի լեզուն:

Այս երկարժամանակյա հարաբերությունների արդյունքն է եղել թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա. ազդեցություն, որ գերազանցում է բոլոր նախկին ազդեցությունները, նրանց հետ նաև պարսկերենի ազդեցությունը, այն մեծ տարբերություններ, որ նախորդները գրական լեզվի վրա են ազդել, իսկ սա ազդել է միայն որոշ բարբառների վրա և մուտք չի գործել գրական լեզվի մեջ: Վաղ ժամանակներից, դոնե ժ. Պ. դարից սկսել էին հայերը սովորել թուրք կամ թաթար լեզուն: Այսպես՝ Կիրակոս պատմիչը (1201—1272) խոսելով մոնղոլ-թաթարների լեզվի մասին, ասում է. «Այլ եւ խօսք նոցա խժականք անձանօթք ի մէնջ. քանզի կոչէին զանունն աստուծոյ Թանկրի»¹⁶ և գմարդն՝ էրէ և գհին՝ եմէ պփնի. և զանուն հօր՝ էքրա¹ և մօրն արա և գեղբայրն՝ աղա^{2,17}, և զքօյր՝ արաքնի, և զգլուխ՝ բորօն, և զաչս՝ ճիտօն³, և զականջս՝ շիքիճ, և զմօրուս՝ սախալ¹⁸, և զերեսս՝ յիւզնիւր¹⁹, և զբերանն՝

աման, և զատամն՝ սիդուն-սխուր, զհացն՝ օրմար²⁰, և զեզն՝ օրար, և զկով՝ ունէն⁵, զոչխար՝ դօյնա²¹, և զգառն՝ դուրդան, և զայծ՝ իման⁶, և զձի՝ մօրի⁷, զջօրի՝ լուսա, զուխտ՝ բաման, և զշուն՝ ճօխա⁸, և զգալլ՝ զինա⁹, և զարջն՝ այբբու²², և զաղուէս՝ հոնքան, և զնապաստակն՝ բօրիլա-բուլա¹⁰, և զհաւ՝ բախեա²¹, և զաղաւնին՝ բօրուչին⁵, և զարծիւ՝ բուրբուի-դուլ, և զշուրն՝ ուսուն^{11,26}, զգհին՝ տարասու, և զծով՝ նաուր տանդը²⁷, և զգետ՝ մօրան ուլանու¹³, և զթուր՝ խօլաու, և զաշեղն՝ նմու, և զնետն՝ սմու¹⁴, և զթագաւորն՝ մէլիք, և զպարսն՝ նուին¹⁵, և զմեծ պարոն՝ էքա-նուին²⁸, և զերկիր՝ էլիրկան, և զերէկինք՝ գօգ²⁹, զարեգակն՝ նարան, և զլուսին՝ սարա, զաստեղս՝ հուտուտ-սարդա, զոյս՝ օտուր, և զգիշեր՝ սոյնի, և զգրապիր՝ բիբիքչի³⁰, և զսատանայ՝ բառահուտ էլէպ. Եւ զայլ այսպիսի խրժական անուանս, զոր ի բազում ամաց մեզ անձանոթ՝ իսկ այժմ կականայ ծանուցեալ (Կիրակոս, Վերնետիկ 1865, էջ 149—150):

Նմանապես Մարտիրոս մեծ իշխանի որդի Օրբելիի դերեզմանի վրա գրված է. «Որ էր աստուածային շնորհօք լցեալ այնչափ, մինչ զի ի կէս տարուջ զհայ գիրս և ի մի ամուջ զմուղային ուսաւ, զտեսողսն զամենեսեան զարմացոյց»: (Տեա Վիմական տարեգիր, էջ 132, արձ. 1291 թվից):

Մանրություն.— Կիրակոսի հիշատակած այս բառացանկը Մոնղոլական գրականության ամենահին հիշատակարանն է: Բաների ուղղագրությունը ընդհանրապես ճիշտ է. համեմատել օրինակ մոնղոլ. ečige¹ «հայր», axa² «եղբայր», nidān³ «աչք», saxai⁴ «մորուս», ūniye⁵ «կով» (ալեի հարմար է մանչուր. unen «կիթան կով») yamaan⁶ «այծ», morin⁷ «ձի», noxai⁸ «շուն». čino⁹ «գալլ» (Клюкин-ի բառարանը, էջ 48, чинó, „волк“, որից հայանի է թե Կիրակոսի զինա ձևը պետք է ուղղել շինա), iūlay¹⁰ «հապաստակ», usun¹¹ «ջուր», nuur¹² «լիճ», muren¹³ «գետ», sumun¹⁴ «նետ», noyan¹⁵ «պարոն». Թուրք-թաթարական բառեր են՝ tangri¹⁶ «աստուած», aya¹⁷ «եղբայր», saqai¹⁸ «միրուս», yūz¹⁹ «երես», ekmek, etmek²⁰ (չաղաթ. otmak) «հաց», qoyun²¹ «ոչխար», ayu, ayqu²² «արջ», tavuq, tovux²⁴ «հավ», gügerčün²⁵ «աղափնի», su²⁶ «ջուր», dengiz²⁷ «ծով», yeka²⁸ «մեծ» gög²⁹ «երկինք», bitikči³⁰ «գրագիր»:

Դիտելի մի կետ էլ այն է, որ թուրքական ազդեցություն ենթարկվել են ոչ թե միայն Հայաստանը և Փոքր-Ասիո հայերը, որոնք երկար ժամանակ մնացին տաճիկների տիրապետության տակ, այլ և զրանցից դուրս գտնված հեռավոր գաղթա-

կանությունները: այսպես՝ Կովկասի, Նոր-Նախիջևանի, Խրիմի, Բուսինի, Բուլղարիո, Տրանսիլվանիո, Հունգարիո, Լեհաստանի, Ֆրանսիայի, Անգլիայի, Եգիպտոսի և մինչև Ամերիկայի հայոց բարբառները: Սրա պատճառը նախ այն է, որ այդ երկիրներին մի քանիսը նախապես հպատակ էին արդեն տաճիկներին, կամ ուրիշ թուրք-թաթարական ժողովուրդներին, հետևաբար այս տեղերի հայերն էլ կրել են նրանց ազդեցությունը: այսպես են Կովկասի, Խրիմի, Բուսինի, Բուլղարիո և Տրանսիլվանիո հայերը: Երկրորդ՝ մյուս երկիրների հայերը կամ գաղթել են Հայաստանից և կամ թուրք-թաթարական տիրապետության տակ գտնված մի որևէ երկրից: այսպես՝ Նոր-Նախիջևանի և Գրիգորուպոլսի հայերը գաղթել են Խրիմից, Հունգարիայի և Լեհաստանի հայերը գաղթել են Խրիմից կամ Թաթարիստանից: Ֆրանսիայի, Անգլիայի, Եգիպտոսի և Ամերիկայի հայերը գաղթել են Պոլսից, Զմյուռնիայից, Խարբերդից և Տաճկաստանի ու Արևելյան Հայաստանի ուրիշ քաղաքներից:

Ի հարկե այս բոլորի վրա նույն կերպով և նույն ուժով չէ ազդած թուրքական տիրապետությունը, այլ կենտրոնական տեղերում ափելի գործը, իսկ կենտրոնից հեռու տեղերում և բուն Հայաստանում համեմատաբար ավելի տկար: Այս տեսակետից բոլոր հայերին կարող ենք բաժանել երեք սատիճանի:

1. Նրանք որ թուրքական ազդեցության տակ բոլորովին կորցրել են հայերեն լեզուն և թրքախոս են դարձել:
2. Նրանք, որ թեև պահել են հայերենը, բայց ունին մեծ քանակությամբ թուրքական փոխառություններ:
3. Նրանք, որոնց մեջ այդ փոխառությունից թիվը չափազանց մեծ չէ:

Առաջին սատիճանին են պատկանում՝

1. Գրեթե ամբողջ արևմտյան Փոքր-Ասիան, սկսած Քասթամունիի մոտերքից մինչև Զիլե, այստեղից հարավ մինչև Կեսարիա և Կեսարիայից հարավ-արևելք՝ Սոի ու Այնթաբի վրայով մինչև Եփրատ: Այս սահմանադրից արևմուտք՝ մինչև Մարմարայի, Արշիպեղաշուսի և Միջերկրականի ծովեզերքները գտնված բոլոր հայերը տաճկախոս էին դարձել: Բացառություն են կազմում Պոլսի, Նիկոմիդիայի և Զմյուռնիո շրջանի հայերը, նույնպես Անկորայի, Այդընի և Յոզղադի գյուղերից մի քանիսը:

2. Փոքր-Հայքի մեջ Նիքսար, որ Եփրոկիո հյուսիս-արևելյան կողմում թրքախոս հայոց մի կղզյակ է կազմում:

3. Կիպրոս կղզին, որի հին գաղթականությունը թրքախոս էր, բայց նոր գաղթականությունը հայախոս է:

4. Մարմարայի մյուս երեսը, Եփրոպական Թուրքիա, արևելյան Բուսինի (Թրակիա) և Բուլղարիա մեծ մասամբ թրքախոս են, րադասությամբ Ռոդոսթո և Մալկարա հայաշատ քաղաքները: Բուլղարիո և արևելյան Բուսնիլի հին գաղթականությունը ամբողջապես թրքախոս էր, բայց 90-ական թվականների նոր գաղթականությունը մեծ մասամբ վերականգնեց հայերենը այս երկիրներում:

5. Բուսինիո հայաբնակ քաղաքներից նրանք՝ որոնց հայ ժողովուրդը նախապես Բուլղարիայից է գաղթել. սրանք էլ նոր գաղթականների շնորհիվ մասամբ հայախոս դարձան:

6. Բեսարաբիա՝ նախապես Բուսնիո սլաոնականի ու պատճառով թրքախոս է. այսպես նաև նրանց գաղթաձայերը, ինչպես Գրիգորուպոլիս, Օդեսա և Խերսոն:

7. Տրապիզոնի արևելյան կողմը՝ Լազիստանի հայերը:

8. Ախալքալաքի արևմտյան կողմի գյուղերից չորսը:

9. Օլթիի շրջանում գտնված 7 հայ գյուղ:

10. Մոզգոսի մոտ Նոր-Եգեսի: ավանը (հին անունը Լուսոս):

11. Սևրմիո լճի հարավային կողմերում՝ Մովսեսբուրդի և Միանդաբի, մի խոտքով՝ պարսկական Քուրդիստանի հայերը:

12. Ափեյադենեք սրանց վրա նաև ուտիացի հայոց գյուղերից մի քանիսը (ինչպես Սուլթան-Նուսի և այլն), և վերջապես՝

13. Լեհաստանի հին հայ գաղթականությունը, որ հիմա ջնջված է:

Կերոնիչյալ բոլոր տեղերի հայերը իրենց մայրենի լեզուն կորցրած խոտում են թուրքերեն՝ թե տանը՝ իրենց ընտանիքում և թե գուրքը՝ շուկայում կամ փողոցում: Եկեղեցում անպամ, ուր արարչությունը կատարվում է գրաբար, քարոզ և ծանուցյում կատարվում են թուրքերեն լեզվով: Փոքր-Ասիո հայերը իրենց մայրենի լեզվից պահել են միայն 150 – 200 բառ*), որոնցից շատերը մտել են նաև սեղացի թուրքերի և թրքախոս հույների լեզվի մեջ՝ լեզվի նույնություն պատճառով: Բեսարաբիո հայերը այնպես են յուրացրել թուրքերենը, որ այդ լեզուն կոչում են

*) Նրանց ցանկը տես Ս. Միթաբեան, Բիւրակն 1898, էջ 783 – 790 և 865 – 866:

քիզիմըէ «մերերեն»։ Լեհաստանի հայերը թեև նախապես հայախոս էին, բայց Վոլոյայի ափերից ստվար թվով թաթարախոս հայերի մի գաղութ ընդունելով իրենց մեջ, իրենք էլ թաթարախոս դարձան։ Եվ թաթարերենը այնպես արմատ բռնեց նրանց մեջ, որ հիմնեցին հայատառ թաթարերեն գրականութիւնը և մինչև անգամ եկեղեցական գրքերը և աղոթքները թաթարերենի վերածեցին։ Դնում եմ այստեղ իբրև օրինակ այդ լեզվի՝ Ներսես Շնորհալու Նորաստեղծեալ երգի թաթարերեն թարգմանութիւնը, որ կատարվել է 1530 թվին։

Եանկի եառադը՝ սօզու թանկրինինկ հիչլիքդան
Աւալ զօզնու զօզնունկ
Տա զօգտակի չէրուվարընը՝ թէնսիգ
Անկլօվուչի ֆրիշլալարնը՝
Տա սէզիքլի էլէմէնդալարնը՝ տէօրդսուն
Պարշիլըխտա պօլկան պիրլադը՝
Պայսիլարը՝ պիրա տայլմա հայպաթլանը՝ յըր
Երրորդութիւն այդովսուզ։

Հայատառ թաթարերեն այս գրականութիւնը ընդհանրապես մնում է անտիպ և չուսումնասիրված։ Եվ պիտի մնա այդպես մինչև այն օրը, երբ թաթարական լեզվաբանութիւնը և բանասիրութիւնը կծաղկի և կզարգանա, ու կսկսի հետաքրքրվել հնության այս հետաքրքիր մնացորդներով։ Առ այժմ նրանք պահվում են ձեռագիր փեճակում եվրոպական գանազան գրադարաններում։ Բավական հարուստ է այդ կողմից Վիեննայի Միթթարյանց մատենադարանը։ Հրատարակված բնագիրներից կարևոր է հիշել Ալիշանի «Կամենից» (տպ. Վենետիկ 1896) աշխատութիւնը, ուր հրատարակված է նաև հայատառ թաթարերեն մի ժամանակագրութիւն, 1611 թվից մինչև 1652, էջ 68—112։

Մի հատված էլ մեջ եմ բերում այստեղից։

1621. Դադար ուշուն։— Թվ. ՌՀ. Յունիս այրնա. Տինսիգ Դադար քէլտի Բամէնէց չօվրասինա սալալարկա, նէչիք Բանովցեակա, տա Օսդրօչինչակա տա Բօտակա. խայսի քի 30 աթլը էտի, տա ասրը պէք պուզույէտիլար. տա պէշ աթլը Դադար քէլտիլար Տօլուշքակա. էվէդ սալաչի տօրուսդիդ էդմատի սալակա, քէնտիլարի տա պիր Դադար

պիր սալաչի խաթունուն խզը պլա թուզուբ պաղլաքէտի, նէտա քի էրի օլ խաթունունկ երիշտի, Դադարկա, տա օլտուրտու Դադարնը, խայսի քի խութխարտը խաթունուն տա խզընտա, ալտը Դադարտան իքի աթ տա եարաղըն, տա պաշըն քէսիր քէլդիտի շահարկա. նէտա քի օլ պաշըն խազուխ ուսնա խօյտուլար խալակա խարշը վալ ուսնա (էջ 91—92)։

(Իմ քարգմանութիւնը)

1621. Թաթարների մասին.— Թվ. ՌՀ, հունիս ամսին. անհավատ թաթարը եկավ Կամենից շրջանի գյուղերը, ինչպես Պանովցիա, Օստրօչինչա և Ռոդա. նրանք 30 ձիավոր էին. բայց շատ կատաղի էին. հինգ թաթար ձիավոր եկան Դոլուշկա, բայց գեղացիք չթողեցին մտնել գեղը։ Թաթարներից մեկը բռնեց մի գեղացի կին՝ իր աղջկա հետ միասին և սկսեց կապոտել։ Այդ միջոցին վրա հասավ նույն կնոջ ամուսինը, թաթարին սպանեց և կնոջն ու աղջկան ազատեց։ Թաթարից խլեց երկու ձի և գենքերը, գլուխն էլ կտրեց ու բերեց քաղաք, ուր այդ գլուխը ցիցը դարկին և բերդի դեմը պատի վրայ կախեցին։

Ճիշտ ինչպես Լեհաստանում, նմանապես և Պոլսում, թուրքախոս հայերը ստեղծեցին հայատառ տաճկերեն գրականութիւնը։ Նախապես հրատարակվում էին հայտարարութիւններ, փոքրիկ տետրակներ, աշուղական կամ ժողովրդական երգեր, բայց հետո այդ գրականութիւնը շատ ավելի մեծացավ, տարածվեց ու ճոխացավ։ Բազմաթիվ հայ աշուղներ իրենց բանաստեղծութիւնները հրատարակեցին այս ձևով (ինչպես՝ Նամի, Սերվերի, Պիտարի և այլն), ֆրանսերենից բազմաթիվ վեպեր թարգմանվեցին, չորս կամ հինգ օրաթերթ հրատարակվում էին Պոլսում այս ձևով (այսպես՝ Մանգումէի էֆքեար, Թերճիմանը էֆքեսուր, Թերճիմանը հադիգաթ, Ճերիտէի շարգիյէ, Մեճմուլայի ախպար, Միւնատի և բողոքականների թուրքերեն Աւետարեք շարաթաթերթը)։ Այս թերթերից ոմանք այնպես առաջադիմեցին, որ նույնիսկ հայերեն թերթերից ավելի էին տարածվում. Մինչև անգամ նշանավոր տաճիկներ, որոնք տաճկական թերթերից համ չէին առնում, սովորել էին հայերեն տառերը և կարդում էին հայոց հրատարա-

կած այս հայատառ թուրքերեն թերթերը, որոնք ավելի լավ խմբագրված և քաղաքական անցուղարձին ու միջազգային կացության ավելի իրազեկ էին: Հայատառ տաճկերեն գրականության ավելի զարկ տվին Պոլսի և Փոքր Ասիայի հայ կաթողիկոսները, որոնք հերձվածողի մոլեռանդությամբ խորհելով հայ անունից և իրենք իրենց ֆրանկ կոչելով, հայ չլինելու համար հայերեն չէին խոսում, այլ միշտ թուրքերեն. և ըստ այսմ մշակում էին հայատառ թուրքերեն գրականությունը: Բայց բացի կաթողիկոսներից, Փոքր Ասիայի հայությունն էլ և նույնիսկ Պոլսի հայախոս հասարակ դասակարգը, որ գրաբար չէր հասկանում և գրական աշխարհաբարն էլ դժվար էր հասկանում, հաճույքով կարդում էր հայատառ թուրքերեն գրականությունը: Հայատառ թուրքերեն գրականության զարգացման համար կային ուրեմն նպաստավոր հանգամանքներ ու նա կարող էր թերևս ավելի մեծ չափեր ընդունել, և հայտնի չէ, թե ուր կտաներ մեզ այդ իրողությունը, եթե չգտնվեին մի քանի ուրիշ բարեհաջող հանգամանքներ, որոնք կասեցրին հայատառ թուրքերեն գրականության առաջդիմությունը և վերջապես մեռելության դատապարտեցին:

Այս բարեհաջող հանգամանքներից առաջինը թուրքերեն գրության կնճռոտությունն էր. նույնիսկ թուրքերը չէին կարողանում վարժվել իրենց դժվարընթեռնելի գրության, որի համար էլ այժմ անցել են լատինական այբուբենի գործածության: Այս պատճառով ահա հայերը ինչքան էլ որ թուրքերեն խոսեին, այնուամենայնիվ հեռու մնացին թուրքական գրերից, կապվեցին հայ գրին և հետևաբար հայ շրջանակի մեջ մնացին: Բացի սրանից կրոնական տարբերությունն էլ որոշ չափով կասեցնում էր թուրքերեն գրի ուսումը. Երեմիա չէլեպին իր «Օրագրության» մեջ (էջ 150) այսպես է խոսում իր տաճկերեն ուսման մասին. «Եւ օրս պրծայ զՏաճկապէ Էլիֆայէն և մտայ ի նոր բան գոր կոչի ամմէ. և վէլիֆն Աւագ երկուշարթի սկսայ ի յոգորմութիւնն Քրիստոսի ապաւինելով. զի բազում անգամ ի մանկութենէ ի հետ հարկեալ ի ծնողաց և շատ նախատինս կրեալ վասն բանիս, զի պիտանի էր հանապազ. և այժմ ձեռս հարկաք բանիս. միթէ Աստուած յառաջացուցէ» (թվ. 1656):

Հատվածիս միտքը մութ է. արդյոք ծնողները նախատում էին Երեմիային, որ նա չէր սովորում «ամմէն», թե ընդհակառակը արգելում էին սովորել: Բայց երևի թե հակառակն է ճիշտ. Երեմիան ուզում էր սովորել «ամմէն», իբրև կյանքում հար-

կավոր բան, իսկ ծնողները (հասկապես քահանա հայրը) արգելում էին սովորել այն, իբրև իսլամական կրոնի բան:

Երկրորդ բարեհաջող հանգամանքը թուրք գրականության աղքատությունն էր. կրթական ոչ մի ասպարեզում նա ոչինչ չուներ մեզ տալու: Թեև հայերը թուրքական բռնակալ լծի տակ էին, և թուրքերը ջանում էին վերացնել հայ գրականությունը, այնուամենայնիվ, Պոլսում հայ գրականությունը, հատկապես հայ լրագրությունը թուրքականից շատ ավելի բարձր էր. նույնիսկ այն հայ մտավորականները, որոնք արևելքին սիրահար կամ թուրքերի հետ եղբայրակցության կողմնակից լինելով՝ աշխատեցին տարածել մեր մեջ թուրք գրականության գլուխ գործոցները, շուտով հիասթափվեցին, որովհետև կարելի չէր Շեքսպիրը, Գյոթեն, Հայնեն, Դանտեն, Լամարտինը և եվրոպական գրականության մյուս գլուխ գործոցները թողած՝ Շինասի, Յիսաթ հանըմ կամ Լեյլա հանըմ կարդալ: Եթե թուրք գրականությունը ուսականի նման մեծ բարձրության վրա կանգնած լիներ, թուրքախոս հայերը ամբողջապես կհարվեին թուրք գրականությանն ու լեզվին: Այս պակասը լրացնելու թերևս թարգմանական թուրք գրականությունը. բայց այս կողմից էլ նա անհունապես ցածր էր մերից: Հայերը գրաբար կամ աշխարհաբար թարգմանած ունեին Հոմերոսը, Վիրգիլիոսը, Դանտեն, Վիկտոր Հյուգոն, Լամարտինը, Շեքսպիրը, Գյոթեն, Միլտոնը և այլն. մի խոսքով հունական, լատինական, անգլիական, գերմանական, իտալական և մանավանդ ֆրանսիական գրականության բոլոր նշանավոր գրական գործերը. իսկ թուրքերը այս կողմից ոչինչ կամ շատ աննշան բան ունեին: Ավելացնենք նաև այն հանգամանքը, որ հայ աշակերտությունը միշտ ֆրանսերեն կամ անգլերեն բավական սովորած լինելով, կարող էր ի հարկին օգտվել այդ լեզուների գրականությունից և կարիք չուներ դիմելու թուրք գրականության:

Երրորդ բարեհաջող հանգամանքը նույն այն կաթողիկոսությունն էր, որ նպաստում էր հայատառ թուրք գրականության զարգացմանը: Կաթողիկ հայերը ընդունելով թուրքերենը և զզվելով հայերենից, հենց սրանով էլ պատճառ դարձան, որ հայերի մեջ ստեղծվի հակազդեցություն: Իր ազգին ու կրոնին հավատարիմ մնացած սովոր հայությունը ստեղծ հայատառ թուրքերենից, իբրև կաթողիկոսների լեզվից: Եվ խոսքը, անշուշտ, մեծամասնությանն էր:

Չհաշվելով այն աշխատանքը, որ թափեցին հայ մտավորականները հայ գրական լեզվի տարածման համար (որովհետև այս նյութի մասին խոսելու ենք առանձին գլխով), իրեն չորրորդ բարեհաջող հանգամանք հայատառ թուրքերեն գրականության անհաջողության, պիտի հիշենք այն, որ այդ գրականությանը մշակողները վերջերին ո՛չ թե ժողովրդական հասարակ թուրքերենը, որ ամեն հայ գիտեր և խոսում էր, այլ այն բարձր որակի գրական թուրքերենը, որ մշակում էին տաճիկ գրագետները և որ հասկանալու համար նախ արարներն պետք էր իմանալ, հետո՝ պարսկերեն, իսկ թուրքերենը կարելի էր նաև չիմանալ, որովհետև այդ լեզվի մեջ միայն էական բայն էր թուրքերեն: Նրանք պարտական էին այդպես անել նույնիսկ հակառակ իրենց կամքին, որովհետև պարզ և հասկանալի ժողովրդական թուրքերենը նախ շատ աղքատ էր և անընդունակ սովորականից բարձր մտքեր արտահայտելու, և երկրորդ՝ այդ լեզվով գրելը համարվում էր ռամկուլություն, գոեհկուլություն: Այդ լեզուն վերապահված էր միայն ժողովրդական երգիծական գրականության: Եղավ ժամանակ, երբ հայ խմբագիրները տեսնելով, որ իրենց այդ բարձր թուրքերենը անհասկանալի է մնում ժողովրդին, յուրաքանչյուր հողվածի հետ տալիս էին նաև դժվարիմաց բառերի բառարանը թուրքերենից հայերեն, ուրիշ խոսքով հենց իրենք նպաստում էին հայերենի տարածման: Մեր աննման երգիծաբան Պարոնյանը «Հաստատամություն» վերնազրով մի հողվածի մեջ (Խիկար, 1886, էջ 138—142) ծաղրում է այդ գրական լեզուն էլ և այդպիսի լեզվով գրողներին էլ: Նա ներկայացնում է մի մարդու, որ «Մանգումէի էֆեբաբ» թերթի մեջ մի հողված կարդալու համար նախ՝ աշխատում է բերան անել անծանոթ բառերի ցուցակը, և երկու շաբաթ է չի հաջողվում. նույնիսկ «Իւնֆիւլմանը շէպպէթ—ժադիկ հասակ» բառը արտասանել չի կարողանում, այնքան արտասովոր է այն: Նրա կիրնը, որին հաճախ կանչում է մարդը սովորած բառերը հարցնել տալու համար, գանգատվում է այդ բոլոր գրողների դեմ և ասում. «Անանկ դժուար բաներ գրողներուն ալ միտքը չեն հասկնար որ, եթէ ինքզինքնին մտիկ ընել տալ կուզեն նէ՛ ամենուն հասկցած լեզունով գրեն, որ մտիկ ըլլուին. աս մեկ կողմէն բառերը գոց ընելով, մյուս կողմէն մոռնալով տարին մեկ յօդուած պիլէ չպիտի կրնան կարդալ: Մարդս դաղէթա կը կարդայ նէ՛ արապի, ֆարսի սորվելու համար

կը կարդայ: Ամա ան չէ, անանկ դժուար բաներ չդնեն նէ՛ իրեցն քածներուն պարապ խօսքեր ըլլալը մէյտան պիտի ելնէ, վարպետութեամբ խրթին բառեր կը դնեն կոր քի ուսուլով մը պարտկեն իրենց պակասութիւնը...»:

Ահա այսպես հայատառ թուրքերեն գրականութունը հետզհետե թուլացավ. Փոքր-Ասիո թրքախոս հայութունը դըպրոցների և Պոլիս պանդխտելու շնորհիվ վերստացավ մայրենի լեզուն. Բուլղարիայի և Ինուսիսիայի հայերը Տաճկահայաստանից եկած նոր գաղթականության շնորհիվ մեծ մասամբ հայախոս դարձան. Բեսարաբիայի հայերը բիզիմջէն թողնելով սկսան նետհետե ուստախոս դառնալ, ինչպես որ Լեհաստանի հայերն էլ թաթարերենը թողնելով լեհախոս էին դարձել և հետո լեհացել: Վերջապես հասան այն եղերական օրերը, երբ տաճիկները իրենք ոչնչացրին Փոքր-Ասիո և Կիլիկիո մեջ՝ իրենց լեզվի տարածման հիմնական սյուները, այն է թրքախոս հայութունը, մնացյալ ամբողջ տաճկահայության հետ: Այսպես նաև պարսկական Գուրգիստանում:

Վիեննայի ուսումնականներից Ֆրիդրիխ Ֆոն Կրելից—Գրայֆենհորսթ առանձին գրքույկով ուսումնասիրել է հայատառ թուրքերեն այս գրական լեզուն (Studien zum Arm.-Türkischen, Wien 1912, նախապես հրատ. SWAW հտ. 168): Իր եզրակացությունն այն է, որ հայոց մշակած հայատառ թուրքերենը մի առանձին բարբառ է, որ կոչում է հայաթուրք բարբառ և որ ունի իր առանձին ձայնափոխությունները, առանձին բառեր և առանձին քերականական ու շարադասական կանոններ, որ չկան բուն թուրքերենում: Մի ջախջախիչ գրախոսականի մեջ (Bulletin de la Société de Linguistique de Paris, № 61, էջ 219—224) ևս ցույց եմ տվել, որ հեղինակի այս եզրակացությունը բացարձակապես սխալ է և թե այդ սխալը առաջացել է նրանից, որ հեղինակը մի կողմից հայատառ թուրքերեն բառերը տառադարձում է սխալ և մյուս կողմից թուրքերեն լեզվի բառերը կարդում է սխալ: Այսպեսով երկու սխալների համեմատությունից առաջանում են ավելի սխալ եզրակացություններ: Իրականությունն այն է, որ յուրաքանչյուր թրքախոս հայ խոսում է ճշտիվ իր շրջանի թուրք ժողովրդական լեզվով, նմանապես պոլսեցի հայը թուրքերեն խոսելիս, խոսում է ճիշտ Պոլսի ժողովրդական թրք. լեզվով: Նրանք որ կրթված են թրքական գրական լեզվով (պետական պաշտոնյաներ, գրողներ, ուսու-

ցիւներ և այլն), բնականաբար ի հարկին խոսում են ճիշտ նույն դրական լեզվով: Հայաստան թուրքերեն պրականութունը այս վերջին ձևով է միշտ, բայց կարող է երբեմն ժողովրդական կամ գավառական թուրքերեն մի ձև ներմուծված լինել՝ պատահմամբ կամ դիտմամբ: Հայոց գործածած թե խոսակցական և թե գրական թուրքերենը ամենևին չունի տարբերություն շրջապատի թուրքերի խոսած ու գրած լեզվից:

Ի հաստատութուն մեր ասածի դնում ենք այստեղ Պոսի «Միածան» թերթի 1869 թ. № 11-ից հետևյալ հատվածը: (Այս թերթը հրատարակվում էր հայաստան թուրքերեն «Մանգումէի էֆթեար» թերթի փոխարեն, որ տաճկական դրաքննության կողմից ժամանակավոր դադարման էր դատապարտված: Հատվածը հայթայթից ինձ իմ նախկին աշակերտ և այժմ գործունյա դիտական աշխատող ու սիրելի ընկեր Գուռնիկ Ստեփանյանը):

Ա գ գ ա յ ի ն

Պու սալը կիւնիւ, Կիլիկիանըն քեաֆֆէի վիճակաբընա, Սիս Նիկողոս եպիսկոպոսունուն կաթողիկոս թանըլմամաւընա տայիր Բաթրիքիսանէ Թարաֆընտան պիթը շրջաբերական իրսալ գըլընմըլ տըր:

Երնէ եէվմի մէզքիւրտէ, Խաոն ժողովուն գարաը իւզրէ, Եէտի-Գուլէտէ վապը խասթախանէմիզին, Չաթը հազրէթի Շահանէ Թարաֆընտան Թայեին պուլըլմուլ ուլան եէվմիիէ էթմէյին 200 օգլանա շըղարըլմասընա տայիր Պապը-ալիյէ պիր Թագրիբը եաղըլմըլ տըր:

Խաոն ժողով մարիֆէթիլիէ Թէշքիլ ուլունան Գաաա-տանական ժողովուն ազալարը շունլար տըր:

- | | | |
|------------------------------|----|--------------|
| Մայր եկեղեցի քահանայարընտան | S. | Աթանաս |
| Մամաթիա | » | S. Արիտակէս |
| Պալաթ | » | S. Յարութիւն |
| Օրթաքէօյ | » | S. Իգնատիոս |
| Աւետիս աղա Շամտանճեան | | |
| Գրիգոր | » | Գուեռմճու |
| Հաճի Միհրան աղա Չարպխանէլեան | | |
| Սարգիս | » | Արապեան |

Այս լեզուն ճիշտ ու ճիշտ այն է, որ պիտի գործածեր գուտ թրքական մի լրագիր. ներմուծված են միայն հայ կյանքին հասուկ բառերը, որոնք դրինք շեղատառ: Հասարակ ժողովուրդից մի անհատ էլ պիտի խոսեր միևնույն ձևով, միայն արարերեն բառերի տեղ դնելով հասարակ թուրքերեն. ինչ-

քեաֆֆէի=պիւթիւն

տայիր=իշուն

իրսալ գըլընմըլ=կէօնաէրիմիլ

եէվմի մէզքիւրտէ=օ կիւնտէ

վապը=պուլունան են:

Այս լեզուն այնքան հավատարիմ է իսկականին, որ հայերը մինչև անդամ թուրքերենի գրության ճիշտ պատկերը տալու համար՝ ق گ տառին հատկացրել են հայերեն գ, ڭ k տառին ք, ٚ t տառին ք, ٚ է տառին դ, որոնք արեւմտ-

յան գրական արտասանության մեջ միևնույն հնչումն ունին:

Այժմ խոսենք թուրքերենի ազդեցության երկրորդ աստիճանի մասին, այսինքն այն հայերի մասին, որոնք թեև չեն կորցրել մայրենի լեզուն, բայց ունին թուրքերենից բազմաթիւ փոխառութիւններ: Սրանք բնականաբար ունին զանազան աստիճանավորումներ, որ չենք կարող այստեղ մի առ մի կշռել ու որոշել: Ընդհանրապես խոսելով՝ այս կարգին են պատկանում այն տեղերի հայերը, որոնք Հայաստանի ընագավառներից դուրս են ապրում և հոժ թրքության մեջ ու նրանց գեթ լեզուներից են ներքու Այսպես են հիտոտոսթոկամ Թեքրատաղ (Եվրոպական Թուրքիա կամ Թրակիա), Պոլիս, Նիկոմիդիոն և Ատափազարի շրջանը, Ջմիւռնիո շրջանը, Պոնտոս, Խրիմ և Նոր-Նախիջևան, և պարսկական Գուրդիստանում էլ՝ Մարաղա: Քանի գտնք դեպի բուն Հայաստան, թուրքերենի ազդեցութիւնն էլ այնքան կպակասի: Այսպես՝ Վան, Մուշ, Ալաշկերտ, Երևան, Տիգրիս, Հարաբազ, Ադուլիս և պարսկահայության մնացյալ մասը պատճանում են ազդեցության երրորդ շրջանին. իսկ Փոքր-Ասիոն արեւելյան և Հայաստանի արեւմտյան մասը (Եվրոպիա, Սեբաստիա, Կարին, Ախալցխա ևն) բռնում են երկրորդի և երրորդի միջին տեղը:

Թուրքերենի ազդեցութիւնը հայերենի վրա ուսումնասիրելու նպատակով ես հրատարակել եմ մի աշխատութիւն, որի վերնագիրն է «Թուրքերենի ազդեցութիւնը հայերենի վրա և թուրքերենէ փոխառեալ բառերը հայերենի մէջ», Վաղարշապատ,

1902 թ.: Այստեղ հավաքված են Պոլսի հայոց ժողովրդական բարբառում գործածված բոլոր տառերին բառերը, համեմատությամբ Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի բարբառների: Այդ փոխառությունների թիվը Պոլսի բարբառում 4000 է*), Վանի բարբառում՝ 2100, Նոր-Նախիջևանի բարբառում՝ 1170, իսկ Ղարաբաղի բարբառում՝ 800: Ն. Նախիջևանի բարբառի փոխառությունաց մեջ մտած չեն սահայն բազմաթիվ թաթարական բառեր, որոնք Պոլսի տառերինում և հետևաբար նաև պոլսահայոց բարբառում գործածական չեն: Այսպես նաև Ղարաբաղի բարբառում կան բառեր, որոնք միայն ազերի լեզվի մեջ գոյություն ունենալով՝ մտած չեն հիշյալ ցանկի մեջ: Կարող ենք ուրեմն ասել, որ մոսավոր հաշիվով Վանի և Ն. Նախիջևանի բարբառներում գործածված թուրքական փոխառությունները պոլսահայոց թրքական փոխառությանց կեսն են կազմում, իսկ Ղարաբաղի բարբառում գործածվածները՝ սրանց կեսը, այն է՝ 1000 բառ: Երևանի բարբառը կարող է ունենալ մինչև 800 թուրքերեն փոխառյալ բառ**):

Մեր ուսումնասիրությունից երևում է, որ՝

ա) թուրքերենը, որի մատենագրությունը այնքան խեղճ է և այնքան էլ ուշ է սկսվում, ոչ մի գրական փոխատվություն չի արած մեզ. մեր փոխառությունները բոլորն էլ պատկանում են ժողովրդական փոխառությանց տեսակին, առաջ են եկած բուն ժողովրդական թուրքերենից և բերնե բերան խոսակցության միջոցով: Սրան իբրև ապացույց ծառայում է նաև այն հանգամանքը, որ գրական թուրքերենի բառերը գոյություն չունեն մեր փոխառությանց շարքում, նրանց ամբողջությունը բաղկացած է միմիայն այն բառերից, որոնք առհասարակ գործածական են խոսակցական-ժողովրդական թուրքերենի մեջ: Եվ երկրորդ՝ այն, որ մեր թուրքական փոխառությունները ձևով նման են թուրքերենի ժողովրդական ձևերին և ոչ թե գրականի:

*) Նույն դրբում (էջ 9) փոխառությանց թիվը դրված է 4200. բայց այդ թվից պետք է հանել նոր հունարեն, իտալերեն ևն բառերը, որոնց թիվը կարելի է դնել 200:

***) թուրքերենից փոխառյալ բառերի վրա մի ընդարձակ հոգված ունի E. Sluszkiewicz, Remarques sur la langue turque des Arméniens et sur les emprunts turcs de l'arménien, Lwów 1939, արտատպ. Rocznik orientalistyczny, հտ. XIV, էջ 136-154 (շարունակելի): Այստեղ խոսում է նաև իմ վերոհիշյալ աշխատության վրա, որ կոչում է «հին, բայց չգերազանցված գործ»:

հետ՝ ամեն անգամ, երբ այդ երկուսի մեջ որևէ ձայնական տարբերություն կա:

բ) Յուրաքանչյուր գավառում թուրքական փոխառությունները առնված են նույն գավառի ժողովրդական թուրքերենից, կամ ավելի ճիշտ այն գավառի ժողովրդական թուրքերենից, որտեղից որ գաղթել են. այսպես՝ գիտենք, որ Լեհաստանի հայերի թաթարերենը Վուլգայի շրջանից է բերված. Նոր-Նախիջևանի հայոց թուրքական փոխառությունները Խրիմից են բերված. նմանապես Պոլսի հայոց փոխառությունները այնպես են, որ ցույց են տալիս, թե նրանք փոխ են առնված Խրիմի բարբառից (տե՛ս Քնն. Պոլսահայ բարբ. էջ 9):

գ) Ըստ այսմ որոշ գավառների թուրքական փոխառությունները կարող են նույն գավառի թուրքերենի ձևերից տարբեր լինել և բնականաբար նման՝ նախաբնակ գավառի թուրքերենի հետ: Կարող են միևնույն ժամանակ մի քանի ձևեր միասին գոյություն ունենալ: Այսպես, օրինակ՝ բուն պոլսեցի հայերը գործ են ածում երեք տեսակ թուրքերեն. 1) Պոլսի թուրքերի խոսած ժողովրդական թուրքերենը, որ գործ են ածում, երբ ամբողջովին թուրքերեն են վարում խոսակցությունը. 2) Պոլսի գրական թուրքերենը, որ գործ են ածում գրագետներն ու պաշտոնյաները. 3) թուրքերեն փոխառություններ, որ հայերը գործ են ածում միմիայն հայերեն խոսակցության մեջ. օրինակ՝ غرمت

«պանդխտություն» բառը ժողովրդական թուրքերենով արտասանվում է զուրբեթ qurbet, գրական թուրքերենով՝ դուրբեթ yurbet, հայոց փոխառությանց մեջ՝ խուրբեթ xurbet: Այս երեք տարբեր ձևերը փոխ առ փոխ գործ են ածում Պոլսի հայերը, նայելով թե ում հետ են խոսում, կամ ինչ հանգամանքներում*):

Ձեռք բերելով հայերենի զանազան բարբառների թուրքական փոխառությանց թիվը, մենք կարող ենք այս թվերը համեմատել մեր շրջակա ազգերի թուրքական փոխառությունների թվի հետ և կշռել մեր ու նրանց կրած ազդեցության աստիճանը:

Մեր շրջակա ազգերն էլ այս կողմից գտնվում են ճիշտ այն դրությունում մեջ, ինչ որ մենք. այստեղ էլ կարելի է գտնել մեր երեք աստիճանները. Օրինակի համար. Պարսկաստանի քրդերի մի մասը, Ղարաբաղի քրդերն ամբողջովին, Լազիստանի արևմտյան մասի բոլոր լազերը, Փոքր Ասիայի կենտրոնական

*) Տես իմ «Մատենախոսականը», BSL № 61, էջ 210:

ըրջանի բոլոր հուշները, բուլղարական փոմաք ցեղը ամբողջովին կորցրած իրենց մայրենի լեզուն, թրքախոս են դարձած: Պոլսի և շրջակայքի հուշները, բուլղարները, ուսմենները, ալբանացիները, լազերը, քրդերը, վրացիները ունին բազմաթիվ փոխառություններ թուրքերենից: Թուրքերենը ազդել է նաև ամբողջ բալկանյան ժողովուրդների, հունգարերենի, լեհերենի և ուսերենի վրա, որոնք նույնպես ունեն շատ փոխառություններ: Franz Miklosich սլավոնագետ լեզվաբանը, որ հավաքել է ուսումնասիրել է թուրքերենից փոխառյալ բառերը արևելյան և հարավային-արևելյան Եվրոպայի լեզուների մեջ (այն է՝ նոր հունարեն, բուլղարերեն, սերբերեն, ուսմիներեն, լեհերեն, հունգարերեն, ուկրաիներեն, ուսերեն և այլն), գտնում է 2500 փոխառություն*): Այս թիվը թեև Պոլսի փոխառությունների կեսին է հասնում, բայց երկու և կես անգամ ավելի է բուն Հայաստանի փոխառություններից և հավասար է միայն արևմտյան Հայաստանի փոխառությունների թվին:

Չենք ուզում առանձին ցուցակներով թվել այստեղ հիշյալ 1000-ից 4000 թուրքական փոխառությունները այբբենական կարգով և բոլոր տեսակի, ինչպես արել ենք մյուս լեզուների փոխառությունների համար: Փափագողները կարող են դիմել մեր վերահիշյալ աշխատության, որ բոլոր փոխառությունների այբբենական ցանկն է: Միայն ընդհանրապես ասենք, որ բացի քրիստոնեական կրոնի վերաբերյալ բառերից, մնացյալ բոլոր տեսակներից էլ թուրքական փոխառություններ կան, սկսած ամենահասարակ կենսական բառերից (ինչպես՝ սիւտ «կաթ», չէմ մէ «աղբյուր», եօղուրտ «մածուց») մինչև բարձրագույնը (ինչպես՝ տուլյու «զգացում», նէֆսանիյէթ «ատելություն», հակառակություն», թէնէզուր «զիջողություն» և այլն): Պատահում են հաճախ այնպիսի նախադասություններ, որոնք ծայրից ծայր թուրքերեն բառերից են կազմված. օրինակ Պոլսի բարբառով «հելվաճիին խալպ պէշլիսը եութուրմիշ ըրի», կամ «սա ենիչէրիին խալփախին թեքմէ մը երլեշգիրմիշ ընեմ քի խոսխոճաման խալփախը եօխուշ աշաղի թեքեր մեքեր գա».— Նոր-Նախիջևանի բարբառով՝ «ասլան, խափլան, խուրպաղա, թոսպաղա, ալայ ճանավարները հոն էին»: Թուրքական փոխառությունները այնպիսի մեծ թիվ են կազմում Պոլսի հայոց ուսմիկ բարբա-

*) Die türkischen Elemente in den Südost-und Osteuropäischen Sprachen. Wien 1889—90.

ուսմ, որ եվրոպացի ուսումնականներից մեկը (Balbi), հայերենը Պոլսում միայն լսելով՝ իր «Լեզուների դասակարգության» մեջ գետեղել էր թրքական լեզվախմբի մեջ*):

Նշանավոր հայագետ Քերովբե Պատկանյանը իր մի աշխատության մեջ (Материалы для изучения Армянских наречий, I, Санктпет. 1875, էջ XV) տալիս է մի հատված՝ բանաստեղծ և վիպասան Պատկանյանի «Չախու» գեղեցիկ պատմվածքից (առաջին 7 տողերը), որի մեջ թուրքերեն բառերը գրում է արաբական տառերով: Այսպեսով անմիջապես աչքի են ցայտում օտար բառերը: Օրինակում եմ այստեղ այդ հատվածը՝ միայն արաբական այբուբենը վերածելով լատինականի, ընթերցողների դուրբություն համար:

Bahar-ը daha հասած չէր ama, ան տարին տաքը ամպէս կանօխ կօխիլ էր վօր, փետերվարի տասներհինկինքսանին artəx erişda արօտը, panjar-ը (=բանջար) կետինէն մէկ xarəş վեր էլիլ էին. Մառտին կօլօխօվ artəx səvərxəx-ները էկիլ էին հեռու տեղերէ ու kiremit-ներուս araləx-ը başlay-իլ էին իրենց պուշը խօրթելու. turna-ները, yabani xaz-երը sürü sürü կանչվըռտեղէն yali-ին semt-էն տէպի Ռասէի semt-երը թռչելէն կերթային. ալ վախ չիքար:

Մի լեզու մի ուրիշ լեզվից փոխառություններ կնքելիս սովորաբար փոխ է առնում գոյականներ, քիչ անգամ ածականներ և ավելի քիչ անգամ բայեր.— Թվական անուններ, մակբայներ ու շաղկապներ փոխ չեն առնվում: Բայց հայերենի թրքական փոխառությանց մեջ այս կարգի բառերն էլ փոքր թիվ չեն

*) Անեկգոտներ կան Պոլսում՝ հայոց խոսած այսպիսի լեզվի մասին:— Մի հայ գիշերով մի թուրք հրուշակավաճառից առևտուր է անում և վճարում է նրան 5 դրուշ: Այդ միջոցին մոտ է գալիս իր ծանոթներից մեկը և հարցնում. «Ի՞նչ կընէս կոր ծօ՞»:—Սա պատասխանում է. «Լէլվաճիին խալպ պէշլիսը եութուրմիշ ըրի—հրուշակավաճառին կեղծ հնգանոցը կեքցրի»: Թուրքը հասկանում է և իսկույն դրամը ետ տալիս:

Երկու հայ կանգնած են. մի ենիչերի անցնում է նրանց մոտով. հայերից մեկը ասում է իր ընկերոջ. «Սա ենիչերիին խալփախին թեքմէ մը երլեշգիրմիշ ընեմ քի, խօս-խօճաման խալփախը եօխուշ աշաղի թեքեր—մէքեր գա».—սա ենիչերիի գլխարկին այնպես քացի տամ, որ ահագին զուրաբը գառիվայրից ցած գլտոր գլտոր գա՞: Ենիչերին բնականաբար հասկանում է այսպիսի «հայերենը», թուրք քաջում և նրա գլուխը կտրում:

կազմում: Շատ բարբառներում 70, 80, 90 թվականները թուրքերեն են գործածվում. ասում են՝ եթմիշ, սէքսէն, տոխսան, և միավորների հետ՝ եթմիշ մեկ, սէքսէն վերկու, տոխսան վերէք և այլն. այսպես Գոլում, Նոր-Նախիջևանում, Կարբինում, Լենինականում և այլն: Ռոտոսթոյի հայոց բարբառում 70-ից մինչև 99 ամբողջապես թուրքերեն են թվականները: Այսպես՝ անթմիշ, եթմիշ բիր, եթմիշ իքի, եթմիշ իւշ և այլն: Համշենի հայերը իրենց խոսակցությունը վարում են հայերեն ու թուրքերեն միաժամանակ լսառն. այնպես որ միևնույն նախադասության մի մասը հայերեն է, մյուս մասը՝ թուրքերեն: Օրինակ՝ Էնիր Խաչոզին քիշ մը յարալադիլէր «նրանք Խաչիկին մի քիշ վիրավորեցին», Իրաց հետ ուշալում «իրար հետ հարմարվենք», Էղառ մեզի հետ կոշտի «առավ մեզ հետ միացրեց», Գեղ թե գաս, իրաց հետ տողուչուրուք «եթե գյուղ գաս, իրար հետ կ'ըզվենք», Դունք շատ փարակազոնուրսունուզ «դուք շատ փող եք շահում»:

Ահա թե ինչպես է նկարագրում Այտընյանը հայերենի այս խայտառակ վիճակը.—

«Չկայ, որչափ գիտենք, ծանօթ լեզուաց մէջ լեզու մը՝ որ այնչափ օտարութեանց անձնատուր, այնչափ կերպարանափոխ եղած, վերջապէս այնչափ ինք զինքն ուրացած ըլլայ, ինչպէս մեր վերջին դարերուն հայերէնը: Լեզուի մը՝ որուն միայն առաջին կարգի հիմնական բառերը դուրս առնելով՝ մնացած ամէն մասն օտարացած ըլլայ, դոյական և անական, բայ և շարկապ՝ մեծաւ մասամբ. որ մինչև նախադրութեանցն ու նաև թուական անուանցը մէջ օտար բառեր ընդունած ըլլայ.— լեզուի մը, կըսեմ, այս աստիճան հասնելը՝ ճաշակազէտ զգացողութեան առջև անզգայութիւն և բանականութեան տտեանին առջև անտարակոյս ոճիր մը համարուելու է: Եթէ մեր հասարակ լեզուին բաղկացուցիչ տարերացը մէջ ազգաբանական վիճակագրութիւն մը հաստատել ուզենք, այնպիսի անախորժ հետեանք մը կունենանք, որ հարկ կըլլայ մէկ խօսքով ըսել, թէ այս լեզուն քերականութեամբ հայերէն է, և բառարանով՝ տաճկերէն... Հայերէն լեզուին այս ընդհանուր ազականութեանը մենք մեր օրովը հասած՝ տեսած ու լսած ենք, և դեռ ընդհանուր ռամկօրէն լեզուն այս տխուր վիճակին մէջն է. դեռ օտարութեանց Չափն՝ անչափութիւնն է. (Այտն. Բնն. քեր. էջ 232 - 5):»

Այն՝ ինչ որ ասացինք մինչև այժմ, պատկանում է արդէ հայերեն բարբառներին. քանի դնանք դեպի հինը, բնականաբար ապեցութեան չափն էլ կ'փոքրանա և փոխառյալ բառերի թիվն էլ կ'պակասի: Իմ Արմատական բառարանում հաշվաքլած հին հայերենի թրքական փոխառութեանց թիվը 170 է. այս բառերը ցուցակագրում եմ այստեղ՝ նախ այբուբենական կարգով հետ ըստ նյութի դասավորութեամբ:

- ազազուն «ատամ» <թրք. azu
- աթարէկ «արև. թրք. atabeg
- *ալոճ «արև. թրք. alıç
- աղալ <թրք. ağal «փարսի»
- աղթարմայ «կաթուիկ հայ» <թրք. aqterma
- աղիակ «ոչխարի հարկ» <թրք. ağal haqqə
- աղութ «հակինթ» <թրք. yaqut
- ամիրէշխամ «մի տեսակ սենյան»
- այլղան «իշխան» <թթր. eyl-xan
- 10 անտուզ «բույսը» <թրք. anduz
- ասախ «օրենք» <թրք. yasaq
- արապան «թմբուկ» <թթր. balaban
- արզուչի «աղբսամատույց» <թրք. araxçi
- արխ «առու» <թթր. arx
- արդուչի «դատավոր» <թթր. yar uđi
- արտուճ «գիհի» <թրք. ardəj
- արքայուն «քրիստոնյա» <մոնղ. arkaun
- աւզան «երզիչ» <չաղաթ. avzan
- *բարան «պարիսպ քանդող մեքենա» <թրք. ?
- 20 բալբարան «թմբուկ» տես արապան
- բալիշ «դրամ է» <չաղաթ. baliş
- բաղամ «փայտը» <թրք. baqam
- *բարութ > վառող <թրք. barut
- բաւքայ «լմբիշ» <թթր. bükā
- *բեղ «ընչացք» <չաղաթ. biğ
- *բէկ «իշխան» <թրք. beg
- բիդիկի «գրադիր» <թթր. bitikçi
- բիճ «պոռնկորդի» <թրք. piç, biğ
- *բուխբիկ <թրք. buxari
- 30 բուղայ «ցուր» <թրք. buya

- բրինձ «պղինձ» <Թրք. pirinj
 դէիմ «հագուստ» <Թրք. giyim
 գաբանք «փեղկ» <Թրք. kepenk
 *դղման «կերակուր է» <Թրք. tutmağ
 դուղայ «ցցունք» <Թրք. tuğ
 դում «հարբուխ» <Թթր. tumav
 դոստաբան «գավաթ» <չաղաթ. tostaqan
 եառլեխ «արտոնագիր» <Թթր. yerliq
 *ելակ «մորի» <Թթր. yilak
 40 ելասար «չղջիկ» <Թրք. yerasa
 էլլի, էլլի «դեսպան» <Թրք. elçi
 երեմուկ «խոշոր ալյուր» <Թրք. irmik
 *էրջիկ «էպրաս» <Թրք. erişgi
 զադառ «շուն» <Թրք. zayar
 զամպախ «շուշան» <Թրք. zanbaq
 զերտայ «կզաքիս» <Թրք. zerdave
 *դիլ «սուր» (ձայն) <Թրք. zil
 զմրութ «զմրուխտ» <Թրք. zümrüt
 զնջիլ «շրթա» <Թրք. zenjil
 50 զողալ «հուն» <Թթր. Թրք. zoğal
 Թաթուրա «արջընկույզ» <Թրք. tatula
 *Թադար «աման. 2. հարկ» <չաղաթ. tayar
 Թանկա «դրամ» <չաղաթ. tanka
 Թաւլի «նարդի» <Թրք. tavli
 Թէնսուխ «անուշահոտություն» <օսմ. tensux
 Թոզախ «պրտուրի փունջը» <Թթր. tozaq
 Թուման «10.000» <Թթր. tuman
 Թուման «գավառ» <Թրք. tuman
 Թօզ «փոշի» <Թրք. toz
 60 Թօփալախ «քույս է» <Թրք. topaləq
 Իամ «իջևանագետ» <Թթր. yam
 Իւզէրլիկ «փեղկենա» <Թրք. üzərlik
 Լադմ «ական» <Թրք. lağəm
 Խար «կաթի փոխատվություն» <Թրք. qab
 *Խաթուն «տիկին» <չաղաթ. xatun
 Խալան «հարկ» <Թթր. qalan
 Խաղա «մուշկի յուղ» <Թրք. qalya
 *Խամաճիկ «տիկնիկ» <Թթր. quma-çik

- *Խամութ «ձիու լծան կաշի» <Թթր. qamut
 70 Խանթէփար «մի տեսակ բույս» <Թթր. ?
 Խանտալայ «մլուկ» <Թթր. qandala
 Խափանք «կշիռ աստեղատունը» <չղթ. qapan
 Խափչուր «ոչխարի հարկ» <Թթր. qubjür
 Խիպիլիկ «մղձալանջ» <Թթր. kâbäläk
 *Խոզակ «նոճիի պտուղ» <Թրք. qozaq
 Խորոտիկ «գեղեցիկ» <չաքութ. kârâtik
 Կապակ «կարճ կապայ» <Թթր. kepek
 Կատրազա «նավ է» <Թրք. qadərğa
 Կոթրու «առանց կշռելու մի անգամից լվճառում»
 <Թրք. götürü
 80 Կուկնար «փիճի» <Թրք. köknar
 Կուպալ «հաղարջ» <Թրք. ?
 Կրիտ «խոտ է» <Թրք. girid-otə
 Դնթմար «ծաղիկ է» <Թրք. qatmer
 Դան «իշխան» <Թթր. dan
 Դանարայ «սպանդանոց» <Թրք. qan...
 Դատիֆա «թավշածաղիկ» <Թրք. qadife
 Դարանֆիլ «մեխակ» <Թրք. qaranfil
 Դարաչալու «քույս է» <Թրք. qaraçalə
 Դարխու «անիծյալ» <Թթր. qarçu ?
 90 Դարփուզ «ձմերուկ» <Թրք. qarpuz
 Դճի «վայրի մանանեխ» <Թրք. qəçə
 Դմուզ «ձիու կաթով բմպելիք» <չղթ. qimiz
 Դումայ «սպորինի կին» <Թրք. quma
 Դուռութայ «ժողով» <Թթր. qurultay
 Էիմ «հողի գուղձ» <չաղաթ. çim
 Էմրի «գձուձ» <Թրք. çimiri
 Էոթ «ծայր» <Թթր. çot
 Էալ «տուրք» <Թթր. mal
 Էանդլայ «նախամարտիկ» <Թթր. ?
 100 Էանօշայ «քույս է» <Թրք. menefşe
 Էասուրայ «մաքոք» <Թրք. masura
 Էէշում «չնչին, խեղճ» <Թթր. meşum
 Էուշալիկայ «պայմանագիր» <Թրք. müçelgya
 Ետեկ «ձի» <Թրք. yedek
 Եուս (իմն յուս=յօտ)

- յօտ «հալուէ» <թրք. öd
 նոյին «մոնղոլ իշխան» <մոնղոլ noyan <չին. lao-ye
 շարմաշուրայ «բաղեղ» <թրք. sarmaşəq
 շիքիլոն «նստարան» <թթր. ?
- 110 սրտու «բանակ» <թրք. ordu
 ուսկուլի «վուշ» <թթր. usgul
 շաշտա «վեցաղի ջութակ» <թրք. çašta
 շարր|ծաղիկ| «վրան[ածաղիկ]» <թ. čadər
 շաուշ «ոստիկան» <թրք. çavuş
 չեխ «չուսն քշելու ձայն» <թրք. čəx
 չիգիտամ «ծաղիկը» <թ. čigdim
 չում «հուն» <թթր. čum
- *չոքել «ծունր դնել» <թրք. čökmek
 չքնտուր «ճակնդեղ» <թրք. čukundur
- 120 չորտիկ «բույս է» <թրք. çordik
 պասխաղ «հրամանատար» <թթր. bašboç
 պատեա «բաժակ» <թրք. badya
 պկամ «ծառ է» <թրք. baqam
 պոխտախ «կնոջ գլխարկ» <թթր. boçtaç
 ջաթան «թաթար խանի որդի» <?
 *ջիգր «վրեժ, ոխ» <թրք.
 ջիտայ «երկարության չափ է» <թ. jida
 ոռհիակ «քող» <թրք. urpäk
 սաղ «ծանծաղ» <թրք. səç
- 130 սայայ «պարզ, անգարդ» <թրք. saya
 սանջախ «դրոշակ» <թրք. sanjaç
 սուպղար «հաշմանդամ» <թթր. ?
 սար, սրո «ջնարակ» <թրք. səř
 սեկուտ «ուռի» <թրք. sögüd
 սեկուլա «ընտիր կերպաս» <թրք. iskerlet
 սղամիշ «պարղև» <թթր. siurçamiş
 սնիարա «փորձաքար» <թրք. sənpara
 սուբայ «միայն, լոկ» <թրք. subay
 սուլու «հաճար» <թթր. sulu
- 140 սուսար «կուզ (անասունը)» <թրք. sansar
 սուբասթ «հարկ» <թրք. sürsat
 սրմայ «ոսկեթել» <թրք. səřma
 վարսամ(ան) «սուսամբար» <թրք. marsemani

- վոյվոտայ «հարկահավաք» <թրք. voyvoda
 տաղմաճի «դրոշմահար» <չաղաթ. tamğačə
 տամղա «դրոշմ» <թրք. tamğa
 տառ «նեղսիրտ» <թրք. dar
 տառուղայ «ոստիկանապետ» <չաղաթ. daruça
 տերփու «խարտոց» <թրք. döřpi
- 150 տղղու «հարկ» <թթր. turçu
 տմաղուն «հարբուխ» <չղթ. dumayü
 *տոպրակ «պարկ» <թթր. tubrak
 տուզրայ «թուրք զինանշան» <թրք. tuçra
 *տրմուխ «փոցխ» <թրք. tərmeç
 փայիզայ «թաթարական պատվի տախտակ» <չին. pai-tseu
 փարաճիկ «թուրք կնոջ շրջազգեստ» <թրք. feraçe
 փերոմ «լաստ» <թրք. pereme
 փիթրախ «խոտ է» <թրք. putraq
 փիլթայ «պատրույգ» <չղթ. piltā
- 160 փուր «կեղև» <թթր. pür
 փոաստ «պրաս» <թրք. prasa
 քալամաչի «թարգման» <թթր. kälimäçi
 քաշ «քար է» <թրք. qaş taşə
 քեշ «չորթան» <թրք. keş
 քեշի «պահակ» <?
 քեսիկթոյ «զինյալ դոնապան» <թթր. keşik
 *քութէշ «հարսանիթ» <թրք. qurd-ešni
 քսխայ «սատրելու սոխ» <թրք. kisxa
 *թաղայ «ցցունք» <չղթ. otayā
- 170 օսր «ղարբնի սալ» <թրք. örs

- 1) Բնության և նրա զորությանց մասին. — արխ, խափանք.
- 2) Կրոնական բառեր. — աղթարմայ, արքայուն:
- 3) Մարդ, մարդու և անասնի մարմնի մասեր. — ազազուն բեղ:
- 4) Հիվանդություն, բժշկական բառեր. — դում, խիպիլիկ, սուպղար, տմաղուն, քութէշ:
- 5) Կենդանիներ. — բուղայ, ելասար, զաղառ, զերտայ, խանտալայ, յետեկ, սուսար:
- 6) Ընտանիք և ընկերություն. — բիճ, դումայ:
- 7) Երկրագործական, բույսեր, և այլն. — ալոճ, ամիբիշ-

խամ, անտուզ, արտուճ, բաղամ, ելակ, զողալ, թաթուլա, թոզաթ, թօփալախ, իւզէրիկ, խանթէփար, խոզակ, կուկնար, կուպալ, կրիտ, դաթմար, դատիֆայ, դարանֆիլ, դարաչալու, դարփուզ, դճի, ճիմ, մանօռայ, յօտ, շարմաշուրայ, ուսկուլի շատրձադիկ, չիգիտամ, չում, չքնտուր, չօրտիկ, պկամ, սեկուտ, սուլու, վարսամ(ան), տրմուխ, փիթրախ, փոսսա, քսխայ:

8) Խաշնարածություն և գլուղատնտեսություն.— աղալ, խամութ:

9) Գիտություն և արվեստ.— արապան, աւզան, գիլ, չաշտա, տերփու, օսր:

10) Գույներ.— չիք:

11) Վաճառականություն և դրամական գործարք.— կոթրու:

12) Շինություն և շենքի մասեր.— բուխերիկ, գափանք, լազմ:

13) Հագուստ և զարդ.— գէիմ, դուղայ, թէնսուխ, խազա, կապակ, պօխտախ, ոսփակ, սկեռլատ, սրմայ, փարածիկ, օթաղայ:

14) Ուտելիք և ըմպելիք.— գդմած, երեմուկ, երշիկ, դմուզ, քեշ:

15) Առտնին տնտեսություն, կարասիք և այլն.— դօստաքան, դնջիլ, թաղար, խար, դանարայ, մասուրայ, շիքիլոն, պատեա, սար (սըռ), տպրակ, փիլթայ:

16) Թիվ, չափ, կշիռ և դրամ.— բալիշ, թանկա, թուման, ջիտայ:

17) Մետաղներ, հանքային նյութեր, խեժ և նմաններ.— աղութ, բրինձ, գմրութ, խաղա, սնփարա, քաշ:

18) Ճամբի վերաբերյալ.— իամ, կատրաղա, փերում:

19) Ժամանակ և տեղ.— չիք:

20) Երկիր և պետություն.

ա) Երկրի մասեր.— թուման.

բ) Գետական կազմ և պաշտոնեսություն.— աթարէկ, այլդան, արդուչի, բէկ, բիդիկչի, ելչի, խաթուն, դան, մանղայ, նոյին, չաուշ, պասխաղ, ջաթան, վոյվոտայ, տաղմածի, տառուզայ, քալամաչի, քեշիկ, քեսիկթոյ:

գ) Վարչական գործարք և դիվանական գրություններ.— ասախ, արդուչի, եաուլի, դուռութայ, մուչալիայ, սղամիշ, տամղա, տուզրայ, փայիզայ:

դ) Հարկեր.— աղլհակ, թաղար, խալան, խաիչուր, սուբսաթ, տղղու:

ե) Պատերազմ.— որտու, սանջախ:

զ) Զենքեր.— բարան, բարութ (վառօդ):

21) Սովորական կյանքի բառեր.— բաւքայ, թաւլի, թօզ, խամածիկ, խոբոտիկ, դարխու, ճմրի, ճոթ, մէշում, չիխ, չօքել, ջիգր, սաղ, սայայ, սուբայ, տառ, փուր:

22) Մակբայ և նմաններ.— չիք:

Այս ցանկը կատարյալ չէ և չենք էլ կարող ճիշտ ու կատարյալ ձևի տակ դնել հետևյալ պատճառներով.—

1. Թուրք-թաթարական լեզուները խիստ բազմաթիվ փոխառություններ ունեն կնքած արարերներից ու պարսկերենից. ազատ կարող ենք ասել, թե այն միջազգային բառարանը, որ կազմվել էր արևելքում, և որի մասին խոսեցինք էջ 186-ին, ամբողջապես սեփականություն էր դարձած նաև թուրքերին: Որևէ բառ որ օրինակ՝ արաբերեն է ինքնին և գտնվում է հայերենի մեջ, կարող է թե՛ ուղղակի արաբերենից, թե՛ պարսկերենից և թե՛ թուրքերենից անցած լինել մեզ. բայց կարելի չէ ամեն անգամ ճշտել, թե հատկապես որ լեզվից է: Այն 1147 բառերը, որ մենք թվեցինք վերևում, իբրև միջազգային բառարանից վերցրած, կարող են լինել նաև, գոնե մասամբ, թուրքերենից: Կան նույնիսկ բառեր, որոնք թեև ուղղակի արաբերենից և կամ ուղղակի պարսկերենից են (ինչպես քաս բառը), բայց վերահաստատված են հայերենի մեջ թուրքերենի միջոցով: Այս երեք վոյթը նույն է հոռմեսական փոխառությանց երևույթի հետ: Ինչպես հոռմեսական փոխառությունները բյուզանդական շրջանում հունարենի կաղապարով վերահաստատվեցին հայերենի մեջ, նմանապես և արաբերեն և պարսկերեն բառերը թուրքերենի կաղապարով վերահաստատվեցին հայերենի մեջ: Սրա պարզ ապացույցն այն է, որ հիշյալ 1147 արաբերեն ու պարսկերեն բառերից այսօր մեր լեզվի մեջ կյանք ունեն գրեթե միայն այն բառերը, որոնք թուրքերենի մեջ էլ կան: Օրինակի համար՝ բժշկական փոխառյալ բառերից, որոնց թիվն ընդամենը 31 է, այսօր բարբառներում կենդանի է միայն 18 հատը, ճիշտ նրանք, որոնք արդի թուրքերենի մեջ էլ կան: Ինչպայնուր կորած են, ճիշտ նրանք, որոնք արդի թուրքերենի մեջ չկան: Այս դատողությամբ կարելի էր թուրքերեն բառերի վերոհիշյալ ցանկը շատ ավելի ճոխացնել՝ միևնույն արաբերեն և պարսկերեն բա-

ոերը այստեղ էլ դնելով: Բայց այդ բանը չարինք մենք, և ցանկում գրինք միայն այն բառերը, որոնք ըստ ծագման պատկանում են այբայական լեզվախմբին, մի քանիսը նույն իսկ ծագում են չինարենից. ինչպես են իամ, նոյին, փայիզայ:

2. Ինչպես արարական շրջանի, նույնպես և թուրքական շրջանի հայ ժողովրդական գրականությունը հայտնի չէ մեզ. կամ էթե կան գրվածքներ այդ ժամանակի լեզվով, հրատարակված չեն դեռ. այս պատճառով նույն շրջանի թուրքական փոփոխությունը ամբողջությունը հայտնի չէ մեզ:

3. Ինչպես այսօր մեր գրական լեզվի մեջ, նույնպես և այն ժամանակ հայ հեղինակները չէին սիրում ժողովրդի և նույն իսկ իրենց խոսակցություն մեջ գործածված թուրքական բառերը մտցնել իրենց գրվածքների մեջ. և եթե եղել են իսկ ուսմկարան հեղինակներ, որոնք այդպիսի թուրքական փոփոխություններ գործածել են իրենց գրվածքների մեջ, մեր բառագիրները վտարել են բառարանից:

Անա այս երեք պատճառներով թուրքական փոփոխությանը թիվը իրականից շատ ավելի փոքր է դառնում և սահմանափակվում է վերոհիշյալ 170 թվի մեջ: Այդ դեռ հին գրական լեզվի վիճակն է: Ավելի անողոր է արդի հայերեն գրական լեզուն, որ սկզբունքով մերժում է իր միջից ամեն թուրքական փոփոխություն: Վերի ցանկից միայն 20 բառ մնում է այժմ հայ գրական լեզվի մեջ, որոնցից ոմանք սխալմամբ հայերեն կարծելով պահել են, ուրիշներ իբրև թուրքական կյանքին հատուկ բառեր: Բոլոր այս բառերը նշանակված են ցանկի մեջ աստղանիշով: Արևելյան գրականում մուտք են գործել նաև մի քանի թրք. բառեր, որ չկան ոչ միջնագարյան լեզվում և ոչ էլ արևմտյան գրականում. օր. յույա գնալ, մեխ, մեխել, թող, բելլազող, դաղել, դարաղ, դարաղել, օջախ, չօյ, զրո, սվաղ, սվաղել, գավթել, քոչ, քոչել, քոչվոր, յայլաղ, յար, նէյնիմ ևն:

Այժմ պետք է մի քանի խոսք ասել թուրք-մոնղոլական կուլտուրական ազդեցություն մասին, քողելով վերի բառացանկից:

Բնություն և նրա գործունեությունը մասին գրեթե ոչինչ չկա մենք հիշատակել ենք երկու բառ. այն է արխ «առու» և խափանք «հշիռ աստեղատուն»: Առաջինը ոչինչ չի տալիս մեզ, որովհետև ջրանցքներով հողը ոռոգելու արվեստը շատ հին է հայոց մեջ, որ շարունակությունն է իսլաղյան շրջանի թուրքական արխ բառը կարող է առառավելն ջրաբաշխություն մի նոր թուրք-

կան դրության արդյունքը լինել: Ջարմանալի է, որ աստղաբաշխական բառերից միայն խափանքն է անցել հայոց: Մինչդեռ հին թուրքերը աստղաբաշխական արվեստի մեջ բավական մեծ առաջադիմություն ունեին:

Կրոնական բառերից բնական է ոչինչ պետք չէր սպասել. աղբարմայ (հայ կաթոլիկներին տրված մի ածական) շատ ուշ ժամանակի բառ է և մի ծաղրական արտահայտություն, որ վերջված է թուրքերենից. իսկ արքայուն՝ քրիստոնյաներին տրված տեղական մի անվանակոչություն է:

Մարդու և մարմնի մասերի համար նույնպես միայն երկու բառ ունենք. ազագուն «ատամ», որ ոչ մի արժեք չունի, և բեղ՝ որ գարմանալի կերպով եկել մտել է հայերենի մեջ՝ դուրս վտարելով ընչացք և պերենչտ համանիշները, և մինչև այսօր էլ միակ գործածականն է թե արևմտահայոց մեջ (պեխ ձևով) և թե արևելահայոց մեջ (բեղ, բեղեր ձևով): Միայն Ավեղիայի (Ասորիք) հայ բարբառում գտնում ենք մրգօնք «բեխեր», որ հին հայոց մուղ «բեխ» բառն է:

Հիվանդությունը համար ունենք օ բառ, որոնցից երկուսը (դում, տմաղուն «հարբուխ») միևնույն ծագումն ունեն. սրանցից առաջինը մինչև այժմ էլ գործածական է ճրթմի և Նոր-Նախիջևանի հայոց բարբառում: Մյուսներից խիպիլիկ փոխանակված է այժմ մղծաւանց բառով (խիպիլիկ պահված է բարբառներում «թեթևադիկ» կամ «ինչ որ երևակայական ոգի» իմաստով), իսկ բուքլը «հարսանիթ» սովորական է Կովկասում. — սապղար ջնջված է:

Կենդանիներից ունենք 7 բառ. — բուղայ «ցուլ» բառը մտել է մեր մեջ՝ թերևս իբրև մի առանձին տեսակ, որ և մնում է մինչև այժմ. — գնդատայ և սուսար անցած պիտի լինեն իրենց արժեքավոր մորթի համար. — խանտալայ թերևս նկատու մի միջատ է, որ Միջին Ասիայից փոխադրվել է Հայաստան: Ջարմանալի է, որ մինչև այսօր էլ այդ միջատի համար ընդհանուր մի բառ չունենք. խանտալայ բառը պահված է ճրթմի և Նոր-Նախիջևանի հայոց բարբառում: Վրաստանում գործ է ածվում բաղիլնջ, ուրիշ ամեն տեղ տե՛կ. բախտարիթի բառը. իսկ իբրև գրական հայերեն գործածվում է կամ փայտոջիլ, որ նույն տե՛կ. բառից թարգմանաբար կազմված նոր ձև է, և կամ մալ, որի նշանակությունը տատանվում է և որի դեմ արևմտահայերը ունեն մուլ (այս բառը չէ ավանդված հնից և հանձնել է ժողո-

վերջական բարբառներից): Անարժեք բառեր են ելլաւար «չղիկ» գաղառ (չունը), իսկ յետեկ (ձի)՝ իշխանական սովորութունների արդյունք է:

Ընտանիքի և ընկերային կյանքի մասին բառ չունենք: Տարօրինակ կերպով փոխ է առնվել բին «անհարազատ զավակ», իսկ զումայ «երկրորդական կին»՝ թուրքական (մահմեդական) կյանքի հատուկ բառ է:

Երկրագործական բաժնից ունենք 40 բառ, որ բոլորի մեջ ամենահարուստն է. սրանցից 38 զանազան բույսերի անուններ են. ճիւղ «գուղձ» պահված է այժմ էլ վայառականներում, իսկ տրմուխ՝ որ երկրագործական մի գործիքի անուն է, այժմ ավելի գործածական է փոցիս ձևով:

Պաշնարածութան վերաբերմամբ ունենք միայն աղալ «փարախ» բառը, որ ոչ մի նորութուն չի մտցնում, իսկ ձիու սարքի վերաբերյալ խամուր բառը անշուշտ կուլտուրական նորութուն էր, որ և անցիլ է նաև ուսներենի և ուսներենի միջոցով էլ նորից ետ առնվել հայերենի մեջ:

Գիտութանց վերաբերյալ ոչ մի թուրքական փոխառյալ բառ չունենք հայերենի մեջ. երաժշտական արվեստից ունենք միայն ալգան «երգիչ», զիլ «սուր ձայն» և երկու երաժշտական գործիքներ՝ արապան «թմբուկ» և շաշա «վեցադի շուժակ» (բոլորի էլ բուն ծագումը պարսկական է): Արհեստների համար ունենք երկու գործիք, այն է տերփու «խարտոց» և օսը «գարրների սալ, գնդան»:

Գույների մասին ոչ մի բառ չկա:

Վաճառականութան համար ունենք միայն կարրու, որ առևտրի հետաքրքրական մի ձև է. ապրանքը առանց կշռելու մի անգամից գնահատում և վաճառում են:

Շինարարական բաժնից ունենք երկու հետաքրքիր բառ՝ բուխերիկ և գաբանք.— առաջինը պատի մեջ շինված վառարանն է, որ համապատասխանում է ֆրանսիական cheminee-ին (ուսու. КАМИН): Հնապետների գործն է ապացուցանել, թե հին հայոց վառարանը թոնիրն էր, որ վառվում էր սենյակի մեջտեղում և որտեղից ծուխը բարձրանում էր դեպի հրդեհը. իսկ բուխերիկը մտավ թուրքերի միջոցով. շինված էր պատի մեջ և ծուխը բարձրանում էր պատի մեջ շինված անցքով:

Երգիկի ծածկոցն է գափանք, որ ըստ իս նախ հայերենից անցել է թուրքերենի և հետո թուրքերենից նորից անցած:

հայերենի (տես իմ Արմ. բառ. հա. 7, էջ 110).— Վերջապես ունենք լաղմ «տեղան» բառը, որ շինարարականից ավելի առավելակալան պետք է համարել:

Հագուստեղենի վերաբերյալ ունենք 11 բառ, որոնցից ինչք (գէթմ, կապակ, պոխտախ, սօնփակ, փարաձիկ) շորի տեսակներ են. երեքը (սրմայ, դուղայ, օթաղայ)՝ շորի կամ գլխարկի զարդ, երկուսը (թէնսուխ, խաղա)՝ անուշահամութանց տեսակներ, մեկն էլ (սկեղալա) բնախր կերպատի տեսակ:

Ուսուցիչներից ունենք 5 բառ.— սրանցից ամենանշատաբերքերն է երջիկ, որ ձեռած. համեմատ և աղիքի մեջ լցնելով շորացրած հում միսն է (արդի ուսուցչական գայրասի մի տեսակը): Հայերը հնուց ի վեր գիտեին նույն միջոց համեմտելով շորացնել, որ կոչվում էր ապուխա (հմմտ. թուրք. ժբ. 32՝ Ապխաեցին իւրեանց ապուխա ապուխաս շուրջ գրանակաւն): Ապուխա ձեռած չէր, այլ փերթ փերթ կտրված միս: Ժբ դարից հետո ապուխա պատրաստելու արհեստն անցավ լեհերին, որոնք նյութի նեափոխ առին հայերից նաև abucht բառը: Հայերը թուրքերից և թաթարներից սովորեցին երջիկը, որ սովորական է այժմ էլ (երջգիգ ձևով) Թրիմի և Նոր-Նախիջևանի բարբառում:— Հետաքրքրական է նույնպես զղման, որ արդի երջան է, իտալական մակարոնի արանյան տեսակը, և այս պատճառով էլ արևմտահայ գրականում հատկացված է ձիւտ մակարոնի:— Չուս թաթարական արդյունարբութուն է զմուզը, որ ձիու կաթով պատրաստված մի տեսակ ըմպելիք է (ուսու. կուժիս): Հիշատակելի են նաև երեմուկ, որ խոշոր աղացած մի տեսակ ալյուր է (իր ուսուսական манная крупа) և քեշ՝ որ շորաթանն է կամ նրա մի տեսակը:

Առտնին անտեսութան մեջ ունենք 11 բառ. սրանցից առանձնապես կարևոր են՝ խաբ «կաթի փոխանակութունը մտակ հարևանների միջև», սար կամ սրա՝ որ հողե ամանները խորակելու կամ ջնարակելու մի ձևն էր, և առպրակ՝ որ հայոց մեջ գործածական պարկի մի ուրիշ ձևն էր: Ամանեղենի նոր տեսակներ էին՝ դուտաբան, բաղար և պատեա: Սովորական բառեր են փիլթայ «պատրույգ», զնջիլ «չղթա»: Թերևս նոր ձևի առարկաներ էին մասուրայ «ոտայնանկի մաքուր, բարբառ» և շիքիլոն «նստարան»: Վերջապես ունենք դանարայ «պատեալանոց», որի հայերեն ձևն է սպանդանոց. բայց այս բառը արդեն

մոռացվել էր մեր մեջ. այնպես որ Լժ. կոչ. ստիպվել է մեկնել «Սպանդանոց կոչի, ուր զանուշահամ կերակուրս առնեն»!

Հափի և կռի մասին ունենք 4 բառ, որոնց մասին խոսել ավելորդ է, քանի որ այս կարգի բառերը ջնջվում և փոխ են առնվում միշտ տիրապետող իշխանութայնց հետ:

Մետաղներից, հանքերից ու նմաններից ունենք 6 բառ, որոնք նույնպես առանձին արժեք չեն ներկայացնում:

Ճանապարհորդության վերաբերյալ 3 բառ ունենք, իսկ, կատարողա և փերում. վերջի երկուսը, որոնք նազի տեսակներ են, հվրոպական ծագում ունեն. իսկ իսկ «իջևանի պահպան»՝ գուտ թաթարական բառ է. որ ծագում է չին yima ձևից և թափանցել է նաև պարսկերենի և ռուսերենի (ЯМ, ЯМЩИК). ուկրայներենի և մինչև լեհերենի մեջ:

Ժամանակի և տեղի մասին բառ չկա:

Վարչական բառերի թիվը 39 է, մեկով միայն պակաս՝ երկրագործական բառերից. որանք վերաբերում են թաթարական և մոնղոլական պետական կարգերին. մեծ մասամբ պետական պաշտոնյաների և դիվանական գործողությունների հատուկ բառեր են, որոնք թաթարների ու մոնղոլների անկման հետ ջնջվեցին: Մնում է միայն խաթուն բառը, որ նախապես «իշխանուհի» նշանակություն ուներ, իսկ այժմ հասարակ ճափկին» իմաստն ունի: Գարևոր են հարկերի տեսակների անունները (6 բառ), որոնք նույնպես այժմ վերացված են: Հիշատակության արժանի են նաև բաբան (պարիսպ քանդելու պատերազմական մեքենա) և բարուք՝ որ գիտական կեղծ ստուգաբանությունները ստանալով վառոչ (իբր թե վառ օդ) ձևը՝ կենդանի մնում է արդի լեզվի մեջ:

Վերջապես հիշենք սովորական կյանքի բառերը (17 հատ), որոնցից կենդանի են այժմ թոզ, խամաճիկ, խորտիկ, նոք, շիգր և շոքել՝ գունազան բարբառների մեջ, իսկ վերջինը այնպիսի մեծ ընդունելություն է գտել, որ նույն իսկանցել է գրականին և հետզհետե վտարում է ձերադրել, ծուեր ղնել ձևերը:

Մակրայների և նմանների վերաբերյալ բառեր չկան:

Մինչև այստեղ խոսեցինք այն ազդեցություն մասին, որ գործել է թուրքերենը հայերեն բառամթերքի վերաբերմամբ: Այժմ պետք է խոսենք նրա ազդեցության մասին հայ լեզվի ոճաբանության, քերականական կազմության, շարադասության և իմաստաբանության վրա:

Ոճերը կամ դարձվածները, որոնք իրապես բառամթերքի մի ուրիշ մասն են կազմում, մեծ չափով ազդված են թուրքերենից. բազմաթիվ ոճեր, որ թուրքերենն է գործածում, բառացի թարգմանված են հայերենի. օրինակ՝

Թրք. կուլակ ասմակ.— ականջ կախել, ականջ դնել—լսել. էլ վերմէք—ձեռք տալ—բազել.

էլ վուրմակ—ձեռք զարնել—սկսել.

Գյէօզէ վուրմակ—աչքի զարնել—հայտնի երևալ.

Բոյա վուրմակ—ներկ զարնել—ներկել.

Յիւզ վերմէք—երես տալ—շփանցել.

Թութուն իջմէք—(ծխախոտ) խմել—ծխել.

Այաք յուր—ոտաց ճամփա—արտաքնոց.

Այաք կաբը—ոտքի աման—կոշիկ.

էլ չէքմէք—ձեռք քաշել—հրեժարվել.

Իսյակ հմէք—ձեծ ուտել—գան ըմպել, ծեծվել.

Նէֆէս չէքմէք—չուռն քաշել—չնչել.

Ռէսմ չէքմէք—պատկեր քաշել—նկարել.

Թէլգրաֆ չէքմէք—հեռագիր քաշել—հեռագրել:

Այս ոճաբանություններից ոմանք սուրբերվում են իրարից գործածություններ և նշանակություններ, համաձայն տեղական թուրքերենի. օրինակ՝ ծխախոտ խմել, սիգար խմել և այլն ձևը գործածական է միայն արևմտահայոց մեջ և չկա արևելահայոց մեջ, որովհետև նույն ոճն էլ կա միայն արևմտյան թուրքերենում (տաճկերենում) և չկա արևելյան թուրքերենում: «Ձեռք քաշել» գործածական է միայն արևմտյան հայոց մեջ, «հրեժարիլ» իմաստով և չկա «ստորագրել» նշանակությամբ, որ հատուկ է միայն արևելյան հայոց, որովհետև տաճկերենի մեջ չկա այս իմաստով, այլ միայն արևելյան թուրքերենի մեջ:

Այս ոճերից ոմանք մոտենում են բուն հայ ոճաբանության, ուրիշները բոլորովին տարբեր են և նույն իսկ հակառակն են. օրինակ՝ ձեռք զարնել «սկսել, ձեռնարկել» նման է քրաբարի բուն հարկանել դարձվածին. հայերենի մեջ ձեռն տալ նշանակում է «օգնել, օժանդակել» կամ նաև ձեռն տալ «պարտությունը խոստովանել, գիջանել», իսկ արդի ոճով «բառել» հայերեն ասում են զան ըմպել, իսկ այստեղ ծեծ ուտել. տարբերակ են ոտաց ճամբա, ծխախոտ խմել, պատկեր քաշել և նման ոճեր:

Ինչ որ ասացինք բառերի համար, նույնը կարող ենք ասել նաև ոճերի համար. այսինքն թե այդ ոճերը կարող են մեր մեջ պարսկերենից թարգմանված լինել, որովհետև նրանցից շատերը կան նաև պարսկերենում, և կամ պարսկերենից թուրքերենի և թուրքերենից էլ հայերենի անցած լինել:

Քերականության մեջ էլ ունենք հետաքրքրական նորություններ, որոնցից հիշենք այստեղ մի քանի կարևորները.

1) Մի խումբ անականների, հատկապես գույն ցույց տվող անականների գերադրականը կազմելու համար, մեր բարբառները և արևմտյան դրական լեզուներն ստեղծել են մի խումբ նախամասնիկներ, որոնք բառի համեմատ տարբերվում են և կարող ենք ասել, որ ամեն մի բառի համար առանձին ձև ունեն. ինչպես կաս-կարմիր, դեփ-դեղին, ճեփ-ճերմակ, սեփ-սև, կափ-կանաչ, կըս-կլոթ, շիփ-շիտակ, լեփ-լեցուն և այլն: Ինչպես տեսնում է, այս նախամասնիկները ձևացած են բառի առաջին բաղաձայնից + նրան հաջորդող ձայնավորը + ս կամ փ, որի ընտրությունը համար կանոն չկա: Նախամասնիկներ արդեն չկան հայերենի մեջ, իսկ մասնիկների այսպիսի հորինվածությունը ընդհանուր օտար է հայերենին և մտել է արևմտյան թուրքերենից (այն է տաճկերենից) և իրիմի թաթարներից, որոնց մեջ սովորական է հմմտ. տճկ. զըփ-զըրմըզը, սիմսիյահ և այլն:

2) Բաղադատականը քան զ-ջնջված է, նրա փոխարեն դրված է բացառական հոլով. օրինակ՝ ասկէ (աւելի) մեծ. դերադրականի համար ամեն կամ նույն իսկ էն, ինչպես՝ ամենեն մեծ, է՛ն մեծ:

3) ս, դ, և դիմորոշ հոդերը, որոնք գրաբարի մեջ ցուցականի նշանակություն ունեն (քաղաքս—այս քաղաքը, քաղաքդ—այդ քաղաքը, քաղաքն—այն քաղաքը), արդի հայերենի մեջ ստացել են ստացականի նշանակություն (հիշյալ բառերը նշանակում են իմ քաղաքը, զո քաղաքը, նրա քաղաքը): Այս երկվորյալը կարող է պարսկերենից անցած լինել մեզ: Բայց թուրքերենի ազդեցությամբ և նրա նմանությամբ նա հասել է ծայրագույն աստիճանի և դերանունների մեջ մտնելով և հատկացուցիչներն էլ իր մեջ ներփակելով՝ առաջ է բերել բազմաթիվ խճուղված ձևեր. ինչպես՝ գլուխներնիս, իմիններս, մերինները, մերիններունը, մերիններունինը, մերիններունինէն:

4) Հարաբերական ոչ բառով կազմված նախադասություն-

ները վերացված են և նրանց տեղ դրվում են դերբայներ՝ ող և ան վերջավորությամբ:

5) Հայերենը գիտե մի տեսակ սահմանական ներկա և մի տեսակ անկատար, ինչպես են նաև հին ու նոր եվրոպական լեզուները. այսպես գրաբար սիրեմ, սիրէի, արևմտյան գրական կսիրեմ, կսիրէի, արևելյան գրական սիրում եմ, սիրում էի: Թուրքերենը (ինչպես և արդի անգլերենը) զանազանում են երկու տեսակ ներկա և անկատար. մեկի մեջ գործողությունը ընդհանուր է, իսկ մյուսը միմիայն այս րոպեի համար. երկրորդը կարող ենք կոչել շարունակական ներկա և կամ անկատար, առաջինը՝ բուն ներկա կամ բուն անկատար. այսպես թուրք. yerim «կուտեմ» (օրինակ՝ ձուկ կամ միս կուտեմ, ընդհանրապես ուտելու սովորություն ունեմ), բայց yeyoram «ուտում եմ» (այս վայրկյանիս նստած ուտում եմ, ուտելու գործողություն մեջ եմ): Թուրքերենի օրինակով ներկայի և անկատարի այս երկրորդ ձևն էլ հնարվեց ու մտավ հայերենի մեջ: Մրա գործածությունը սահմանները և հնարված ձևերը շատ կարևոր են մեզ՝ ուսումնասիրելու համար որևէ լեզվաբանական նոր երևույթի հորինման ու տարածման եղանակը: Շարունակական ներկայի և անկատարի ձևերը չկան Հայաստանի, Կովկասի այլ վայրերի, պարսկահայոց և նույն իսկ Թրիմի, Նոր-Նախիջևանի և Ավստրիայի հայոց բարբառներում: Նրանք գոյություն ունեն միայն Հայաստանի արևմտյան սահմանից, այն է՝ Շարին-Կարահսարից սկսած մինչև Ռոտոսթո՝ Մարմարա ծովի մյուս երեսը, այսինքն այն սահմանի մեջ, որ թրքական ազդեցության երկրորդ աստիճանն է կազմում և տաճիկ ժողովրդի ամենախիտ մասն է:

Շարունակական ներկան և անկատարը կազմվում են միևնույն մասնիկով, որ տեղից տեղ տարբերվում է: Այսպես՝ արևելքից արևմուտք ընթանալով՝ Շարին—Կարահսարում տար, նույն շրջանի գյուղերը տէ, Համշենում ունի, կունի, Տրապիզոնում էր, Ասլանբեկում՝ հայէ, Պոլսում, Սերաստիայում, Եվրոպիայում, Ռոտոսթոյում՝ կոր, Արաբկիրում՝ ընը, նը, բ, Ջմյունիայում յոր: Այս զանազանությունը ցույց է տալիս, որ ձգտումը կամ պահանջը ընդհանուր է եղած, բայց միջոցները զանազան, ուստի ամեն մի տեղ մի նոր մասնիկ է երևան եկել, որոնց շատերի ծագումն էլ հայտնի չէ. այսպես՝ հայտնի չեն տէ, տար, ունի, հայէ, նը, բ. վերջինը՝ յոր, միևնույն է ինչ

որ տաճկերենի յոր մասնիկը, որի վրա մեր սահմանականի կ'մասնիկն ավելանալով ձևացել է կոր, ճիշտ ինչպես որ Համշենում ունի մասնիկի վրա ավելացնելով նույնը՝ դարձել է կունի:

6) Թուրքերենի ազդեցութեամբ կամ նմանութեամբ հայերենի մեջ ստեղծվել են նաև բայական մի խումբ նոր ձևեր. այսպես՝ պատմական կոչված եղանակը՝ որ պատմում է դեպքը ոչ թե ականատեսի կողմից, այլ ուրիշի միջնորդութեամբ. ինչպես պիտի երթա եղեր, բերելու ըլլա նե եղեր, այսինքն լսել եմ, որ իբր թե գնալու ես, լսել եմ, որ իբր թե եթե բերելու լինի... և այլն: Այս ձևը ցույց է տալիս նաև այն, որ պատմողը չի հավատում իր ասածին և միայն իր լսածն է հայտնում և կամ նաև ցույց է տալիս ծաղր ու հեգնանք: Պատմական եղանակը համապատասխանում է ճիշտ տաճկերեն իմիջ ձևին, որի հարազատ թարգմանություն է եղեր:

Մրանից դուրս կան նաև ուրիշ բայական ձևեր, որոնց վրա չեմ ուզում ծանրանալ այստեղ, նրանց մանրամասն քննությունը թողնելով իմ «Լիակատար քերականություն», որի վրա աշխատում եմ անա մի քանի տարուց ի վեր*):

Այժմ անցնենք շարադասության հետաքրքրական հարցին: Եթե մեկը նույն իսկ մի շատ հասարակ հայացք գցի գրաբարի և աշխարհաբարի շարադասության վրա և համեմատի նրանք իրար հետ, պիտի տեսնի այն անպիսի զանազանությունը՝ որ կա երկուսի միջև: Ահա նրանցից մի քանիսը.

1) Հին հայերենը սովորաբար բայը խոսքի սկզբում կամ խնդիրներից առաջ է դնում. արդի հայերենը ընդհակառակը աշխատում է ամենից վերջը գցել. ինչ. Եմուտ նոյ և որդիք նորա ի տապանն.—նոյը և նրա որդիները տապան մտան: Ջի՛նչ արարից վասն որդւոյ իմոյ.—Տղիս համար թ'նչ անեմ: Լնւր, որդեակ, խրատու հոր քո.—Տղաս, հորդ խրատը լսի՛ր:

2) Գրաբարը հատկացուցիչը հետո, հատկացյալը առաջ է դնում. աշխարհաբարը ճիշտ հակառակը՝ հատկացուցիչը առաջ և հատկացյալը հետո է դնում.—ինչ. Չտունն Պետրոսի—Պետրոսի տունը:

3) Տուցական և ստացական ածականները գրաբարի մեջ գոյականից սովորաբար հետո են դրվում և համաձայնում են. աշխարհաբարի մեջ ճիշտ հակառակը՝ գոյականից առաջ են դրվում և չեն համաձայնում. ինչ. Տուն իմ—իմ տունը. Այրս այս—այս մարդը, Հօր իմում—իմ հորը:

*) Այժմ հանձնված է ապագություն:

4) Թվականները գրաբարի մեջ պահանջում են հոգնակի գոյական, իսկ աշխարհաբարում եզակի. օր. հինգ տուն և ոչ թե հինգ տներ:

5) Նախադրությունները գրաբարի մեջ գոյականից անպատճառ առաջ են դրվում. աշխարհաբարում անպատճառ ետ են դրվում. այսպեսով նոր լեզվում նախադրություն բառը իմաստ չունի, որովհետև հետադրություն կա միայն. ինչ. Առաջի հօր իմոյ—իմ հոր առաջ. Ընդ սեղանով քով—քո սեղանի տակ:

Այս տարբերությունները առանձին առանձին առնելով գուցե այնչափ ծանր չթվին մեզ, բայց երբ նկատենք նրանց ամբողջությունը և մի աշխարհաբար նախադասության շարադասությունը համեմատենք գրաբարի հետ, պիտի տեսնենք, որ ամբողջ շարքը հակառակ կողմն է շրջված:

Ճիշտ է որ գրաբարը հին հնդեվրոպական լեզուների ոճով ազատ էր շարադասության մեջ և կարող էր բառերը այսպես կամ այնպես շարել. օրինակ ածականը գոյականից առաջ կամ հետո դնել, հատկացուցիչը հատկացյալից առաջ կամ հետո դնել (Վայոց ձոր, Հայոց աշխարհ կամ աշխարհ Հայոց), ենթական բայից առաջ կամ հետո դնել և այլն, բայց այնու ամենայնիվ սովորական գրվածքների մեջ ունեւր մի որոշ կարգ (վերլուծական շարադասություն), որ համապատասխան է լիովին եվրոպական լեզուների, օրինակ Ֆրանսերենի շարադասության և հակառակ է արդի հայերենին, որի շարադասությունը համապատասխանում է ճիշտ թուրքերենի շարադասության:

Ահա երկու նախադասություն հին և նոր հայերենով՝ համեմատված Ֆրանսերենի, ռուսերենի և թուրքերենի հետ.

1) Գրաբ. Տեսի զթռչունն որ երգէր ի վերայ ծառոյն.

Ֆրանս. J'ai vu l'oiseau qui chantait sur l'arbre.

ռուս. я видел птицу, которая пела на дереве.

Աշխ. ծառի վրա երգող թռչունը տեսա.

Թրք. Աղաջըն իւսթիւնդէ էօթէն քուշու գէօրդիւմ.

2) Գրաբ. Թերթք գրոց Լևոնի՝ որդւոյ զբացոյ իմոյ.

Ֆրանս. les feuilles des livres de Léon, fils de mon voisin.

ռուս. листы книги Левона, сына моего соседа.

Աշխ. Դրացիիս որդու՝ Լևոնի գրքերի թերթերը.

Թրք. Կոնչումուն օղլու Լևոնըն քիթարլարընըն եսփրքը-

ինչքց է առաջացել արդյոք հայերենի շարադասութեան այս հեղաշրջումը. ինչ է պատճառը, որ հայերենը՝ որի շարադասութեանը նման էր իր շրջակա և տիրող ազգերի լեզուներին, այն է լատիներենի, հունարենի, պարսկերենի, արաբերենի, ասորերենի և նույն իսկ քրդերենի շարադասութեան, հանկարծ հեռանում է այս բոլորից և նմանվում է թուրք-թաթարական լեզուների շարադասութեան: Բոլորովին պատահական է այս նմանութեանը և հայերենի շարադասութեան հեղաշրջումը պատճառներ չունի:

Իմ նախորդ աշխատութեաններից երկուսի մեջ շոշափել եմ այս հարցը. նախ «Պատմութիւն Հայոց նոր գրականութեան» (Վաղարշապատ 1906), էջ 10՝ երևույթը համարել եմ պարզապես թուրք լեզվի ազդեցութեան արդյունք: Ավելի ուշ (Հայ Բարբառագիտութիւն, Մոսկվա—Նոր-Նախիջևան 1911, էջ 24) կասկածով եմ վերաբերվում հարցին: «Ամեն ինչ կը կատարվի ճիշտ այնպես, որ կարծես թե նոր հայերենի շարադասութեանը թուրքերենի վրա կաղապարված է: Այս հետաքննելի խնդրի մասին տես Pedersen KZ 32, 472»:

Լեզվաբանական երևույթների մեջ վճիռը հաճախ պատմական է պատկանում: Այսպես նաև այստեղ:

Է դարի պատմագիր Հովհաննես Մամիկոնյանը, ինչպես տեսանք վերը էջ 228, գրում է այնպիսի մի լեզվով, որ տեղ տեղ շատ չի տարբերվում արդի աշխարհարարի շարադասութեանից և երբեմն էլ բոլորովին նույն է: Ահա մի քանի օրինակ.

Տնւր ինձ երկոտասան տարւոյ հարկ, որ զօրքդ քո վիմ երկրիս զխոտն եւ գհացն կերան եւ զփայտն այրեցին.

Եւ դարձեալ զսապոնի գինսն վաթսուն հազար զահեկան, որ զքո զօրացն զգիշահոտ հալաւն եւ զարիւնաթաթախ հանգերձան լուանալ տուաք և ազաք. Չորեքհարիւր հազար դահեկանի խոտ են կերեալ ի դաշտէդ.

Չջրոյ եւ գհացի գինն թողում.

Այս երկու տարի է, որ յինէն կտրեալ էին.

Հովհաննես Մամիկոնյանից երկու դար ավելի ուշ՝ Նարեկացին էլ ճիշտ աշխարհարարի շարադասութեամբ գրում է.

Այդ սօս ու սօսաթ ծառերդ՝ վարդագոյն սստս արձակեցին (տես վերը՝ էջ 230):

Եթե այս երկու հեղինակները թուրքերի արշավանքից (1021) է՛լ ավելի առաջ գրում են արդի աշխարհարարի շար-

քով, ուրեմն փոփոխութեանը կատարված է ոչ թե թուրքերենի ազդեցութեամբ, այլ նրանից անկախաբար:

Նույն իսկ վիպասանական երգի մեջ տեսնեք,

Ընդ եղեղան փող ծուխ ելանէր.

Ընդ եղեզան փող բոց ելանէր.

որ համապատասխանում է ճիշտ արդի աշխարհարարի (արևմտյան գրական) հետեյալ ձևին.

Նդեգին փողէն ծուխ կելնէր,

Նդեզին փողէն բոց կելնէր:

Մենք սրանով չբացատրեցինք, թե ինչն էր շարադասութեան հեղաշրջման սխառոտ, բայց հաստատեցինք նրա գոյութեանը մեր լեզվի հնագույն շրջանում, ինչպես և թուրքերենից անկախ լինելը: Թերևս թուրքերենը իր կողմից առանձին զարկ տված լինի այդ շարժման, բայց այնու ամենայնիվ շարժումն անկախ է:

Մնում է մեզ խոսել բառերի իմաստարանական կողմի մասին, որ շատ կետերով նույնանում է ռուսականության հետ:

Չուտ թուրքերենը աղքատիկ լեզու է. նա ընդհանրապես չունի բառեր բարդելու սովորութեանը, որով կարելի էր նորանոր բառեր ստեղծել լեզվի մեջ: Հարուստ չէ նաև մասնիկների կողմից, որով չափավորվում է նաև ածանց բառերի թիվը: Իր այս թերին լրացնելու համար նա դիմում է փոխառության: Փոխառությունները կատարվել են ընդհանրապես արաբերենից ու պարսկերենից: Ես հաշվեցի Պետրոս Զեքի Կարապետյանի տաճկերեն ընթացքի բովանդակած բառերը և գտա 29,326 բառ, որից միայն 6812 բառն է թուրքերեն, մնացյալը փոխառյալ է: Այնպես որ փոխառութեանց թիվը մոտ 4՛, անգամ գերազանցում է յնիկ թուրքական բառերից:

Լեզուն հարստացնելու երկրորդ միջոցը, որին գիմել է թուրքերենը, բառերին նորանոր իմաստներ տալն է: Այդ նորանոր իմաստները ավելացել են նաև հայերեն համապատասխան բառի վրա: Այս է, ինչ որ կոչում ենք իմաստարանական կողմ:

Ինչում ենք այստեղ մի քանի օրինակ.

Թրք. (<պրս.) իցեր նշանակում է թե «թոք» և թե «լարդ». զանազանելու համար ասում են ազ (սպիտակ) իցեր

«Թոք» և qara (սև) jiger «լյարդ»․ սրան հետևելով հայերեն էլ ասվում է ներմակ բոք «թոք», սև բոք «լյարդ»:

Թրք. timur, ժղ. demir «երկաթ» նշանակում է նաև «նավի խարխուխ»․ հայերենի մեջ էլ երկաթ բառը ստացել է այս երկրորդ իմաստը․ ինչ. նալը երկաթ նետեց:

Թրք. bilmek «գիտնալ»․ 2. կարծել»․ ըստ այսմ հյ. գիտնալ նշանակում է նաև «կարծել»․ ինչ. ես հայ գիտցայ «կարծեցի թե հայ է»:

Թրք. almaq «առնել»․ 2. գնել»․ 3. տիրել, զրավել»․ 4. ընդունել»․ նույնպես նաև հյ. առնել բայը․ ինչ. երկու հաց առի (գնեցի)․ Քաղաքը առին (զրավեցին)․ Ներկեցիք, բայց ներկ չե առեր (ընդունիլ):

Թրք. basmaq «կոխել»․ 2. տպել»․ 3. ճնշել, սեղմել»․ 4. թեվակոխել, սկսել»․ 5. ոստիկանության կողմից տունը հանկարծ խուզարկության ենթարկել»․ 6. հրդեհը հանգցնել»․ Այսպես նաև հյ. ինչ. այս գիրքը ո՛ր տպարանը կոխված է․ Ուժով կոխե՛. Հինգ տարեկանը նոր կոխեց․ Տաքը կոխեց․ Ոստիկանները գիշերը տունը կոխեր են․ Կրակը կոխեցին (հրդեհը հանգցրին):

Թրք. sürmek «քշել»․ 2. վանել»․ 3. աքսորել»․ 4. փորը լուծել»․ 5. անցկացնել»․ 6. տևել»․ այսպես նաև հյ. ինչ. Սա ճանճերը քշե՛. Բանտարկյալները Պենկագի քշեցին․ Փոքս կը քշե կոր․ Կեղծ հիմնգնոցը քշեցին․ Սուտը իրավի տեղ կը քշեն․ Երկու ամիս քշեց:

Թրք. çekmek «քաշել», որի ստացած բաղմաթիվ իմաստների համեմատ էլ հայերեն ասվում է․ Երեք ամիս կը քաշե (կտևի)․ Ցավ քաշել․ Ախ քաշել․ Պատկեր քաշել․ Ճիկարա մը քաշե (ծխել)․ Չեոք քաշե (թո՛ղ, հրաժարվիր)․ Կյանք կը քաշե․ Հօրը քաշեր է (հրահ է նմանում)․ Շունը քաշեց․ Չոքս օխա կը քաշե․ Մանր կը քաշե (կշռել)․ Գանակ քաշեց․ Մաքուրի քաշեցի (մաքրազրեցի)․ Թի քաշել (թիավարել), ևն ևն:

Արևելյան բարբառներում էլ ունինք մեքաշ կամ մի գլուխ, որ նշանակում է «շարունակ» և կազմված է թրք. bir baş «մի գլուխ» ձևի վրայից․ ինչ. Մի գլուխ (կամ մեքաշ) գովում է․ Երբեմն այս թարգմանութունները սխալ են կատարվում օրինակ․

Թրք. sahat iki sularənda «ժամը երկուսի կողմերը»․ այստեղ su փոխ է առնված պրս. su «կողմ» բառից, բայց ժողո-

վորդը կարծել է, թե թրք. su «ջուր» բառից է, ուստի և կազմել է ժամը երկուսի շուրերը» տարօրինակ ասացվածք:

Երիմի և Նոր-Նախիջևանի հայերը գործ են անում ինչ բառը բացասական «ոչ» իմաստով․ օր. ինչ աւ, ինչ աւ «ոչ այս, ոչ այն»։ Այս ձևը առաջացել է թրք. ne bu, ne o «ոչ այս, ոչ այն» ձևից, որի մեջ ne «պրս. ne «ոչ» բառը առնվել է երբև թրք. ne «ինչ»:

Թրք. işin bitdi նշանակում է «գործս վերջացավ, բանս վերջացավ»․ այստեղ bitdi «վերջացավ» առաջանում է bitmek «վերջանալ» բայից և զուտ թուրքերեն է: Բայց կա նաև թրք. bitmek «բուսնիլ», որի հետ շփոթելով առաջինը, հայերենի մեջ թարգմանել են բանս բուսաւ «գործս ծանր դրություն ստացավ» (տես «Յուշաբան», Վիեննա 265):

Այս անսովորից շատ զվարճալի և տարօրինակ է պրս. pūšī բառը: Սա մէ տեսակ շոր է, որ կանայք իրենց գլխին են կապում: Ծագում է պրս. pūš-īdan «ծածկել, հագնել» բայից: Հայոց մեջ դարձել է փոշի և պահել է նույն «գլխաշոր» իմաստը: Բայց հիմա էլ կարծելով թե այս փոշի բառը «հողի փոշի» իմաստից է, դարձրել են բոզ «գլխաշոր» (Ախտայի և Մարաղայի բարբառ):

Երբեմն էլ լատի ձևն ու նշանակութունը հարմարեցրած է թուրքերենի վրայից: Այսպես՝ սարսել «ցնցել» խառնուրդն է հյ. սարսել «վախենալ» և թրք. sarımaq «ցնցել» բայերի.— փառատել «գիշատել, պատառոտել» խառնուրդն է հյ. փարատել «ցրվել, վանել» և թրք. paralamak «գիշատել, պատառոտել» բառերի (որից և փաբատան «շորերը շուս մաշող»):

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈՒԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԼԱՏԻՆԱԲԱՆ ՀԱՅԵՐԵՆ

Հայոց շփումը եվրոպացոց հետ սկսվում է Կիլիկիայում, ժԱ. դարի սկզբից, երբ զանազան եվրոպացի ուխտավորներ սկսել էին ուխտի գալ Երուսաղեմ: Զանազան արկածախնդիր ասպետներ այս ժամանակ դիմում էին դեպի Ասորիք և այնտեղ գործ ու պաշտոն որոնում: Նույնիսկ Ռուբինյան իշխանությունից առաջ, նրա նախորդակին, երբ այլևայլ հայ իշխաններ Հունաց կայսրության հովանու տակ փոքրիկ ինքնավարություններ էին կազմել, հիշատակված են եվրոպացի ասպետներ, որոնք նույն հայ իշխանների ծառայության մեջ էին մտել: Այսպես, օրինակ՝ 1073 թվին, երբ հունադավան հայ Փիլարտոս իշխանը Զահան գավառի, Անտիոքի, Ուռնայի և շրջակա քաղաքներին տեր դառնալով՝ Մարաշում իր աթոռը հաստատեց, հայերի և այլազգիների հետ իրեն ծառայության կանչեց նաև մի խումբ եվրոպացի կոմսեր: Պաշակրաց ժամանակ հայոց և եվրոպացոց հարաբերություններն ավելի սերտացան: Նույնիսկ առաջին խաչակիրները (1096 թ.), որ կես սիլիոնանոց բանակով անցան Կիլիկիայից, մեծ օգնություն գտան մեր Կոստանդին Ա. իշխանից, որին իրը շնորհակալություն տվին մարկիզ տիտղոսը: Ասորիքում եվրոպացիք հիմնեցին մի խումբ փոքրիկ ավատական իշխանություններ, որոնցից նշանավոր են Անտիոքի, Եդեսիայի և Տրիպոլիի դքսությունները և Աքիայի կոմսությունը: Երուսաղեմում հիմնվեց առանձին եվրոպական թագավորություն: Այս իշխանություններից շատերը անմիջական կապ ունեին հայոց հետ, Եդեսիայի դքսության հպատակների մեջ, քաղաքացի բնակչության մեծամասնությունը հայերն էին կազմում. սրանց ազդեցությունը այնքան մեծ էր, որ լատին իշխանները ամուսնանում

էին հայ իշխանուհիների հետ, որպեսզի իրենց դիրքը ավելի ամուր լինի: Երուսաղեմի լատին թագավորների թագուհիները դրեթե բոլորը հայ էին: Բոլոր եվրոպացի իշխանները հայոց օգնություն էին փնտրում և իրենց բանակը աշխատում էին գորացնել հայ զինվորներով:

Հայ-եվրոպական շփման մեծագույն թափը Լեոն Բ-ի ժամանակ եղավ: Ընդունելով իր թագը երրորդ խաչակրության առաջնորդ՝ Գերմանիո Ֆրեդերիկոս և Հենրիկոս Զ. կայսրների ձեռքից (1199 թ.) և հիմնելով Ռուբինյան թագավորությունը, նա կարգավորեց իր երկիրը եվրոպական կարգերով, որոնք պատվաստեց հին հայկական կարգերի վրա: Նա ընդունեց ավատական թագավորության ձևը, որ Եվրոպայի մեջ այն ժամանակ սովորական էր. պարոն, գուռնդատալլ, մարաջախտ, ջամպլայն, ջանցլեթ, պրոկսիմոս, սինիջալ և ուրիշ լատինական անուններ ու պաշտոններ հայոց մեջ մտան: Հրավիրվեցին Ֆրանսիացի, իտալացի, գերմանացի ու անգլիացի բաղամթիվ պաշտոնյաներ, զորավարներ, դատավորներ, ասպետներ, վաճառականներ և այլն: Սրանց հետ եկան եվրոպացի գաղթականներ և հաստատվեցին Կիլիկիայում: Այս գաղթականների մեջ հիշատակելի են ձենովացիք, որոնք պարապում էին մշակութամբ, վենետիկցիք, որոնք պահում էին հյուրանոցներ, գինետուներ, կաշու, կտավի և երկաթի գործարաններ և այլն: Այսպես նախահանգիստը ժԳ և ժԴ դարերում Արևելքի ու Արևմուտքի կապն էր դարձել. Իտալիա, Ֆրանսիա, Սպանիա և բովանդակ Եվրոպա նրա միջոցով հազորդակցության էին մտած Պարսկաստանի, Հնդկաստանի և Զինաստանի հետ. Ֆլորենցայի, Պավիայի, Վենետիկի, Ջենովայի, Պիզայի, Լիվոռնոյի, Սիլիկիայի, Կատալոնիայի, Սպանիայի, Անգլիայի, Մարսիլիայի և Կրետե ու Կիպրոս հաստատված եվրոպացոց նավերը անդադար ելումուտ էին գործում ներմուծության և արտածության համար: Այսպես մի եվրոպական քաղաք դարձավ. այնտեղ էին զանազան եվրոպական ազգերի գուռնցիներ, հյուպատոսները. եվրոպացոց թվի շատության պատճառով այնտեղ բացվեց մինչև անգամ դպրոց՝ լատիներենի ուսման համար:

Լեոն Բ-ի դուստրը՝ Զապել, ամուսնացել էր Անտիոքի իշխանի որդու՝ Փիլիպպոսի հետ, որով Լեոնի մահից հետո Կիլիկիայի հայկական գահը նրան անցավ: Այնուհետև ավելի է գորանում ինամությունը հայ թագավորների և եվրոպացի իշխանական

տոնների միջև, այնպես որ վերջապես հայոց գահը անցնում է եվրոպացոց ձեռքը: Բնականաբար այս նորեկ թագավորները իրենց հետ պիտի բերեին բազմաթիվ հետևորդներ, որոնց բաշխում էին պետական մեծամեծ պաշտոններ, հողեր և կալվածներ:

Այս բոլոր հարաբերությունները, եվրոպական դադութները, պաշտոնյաների բազմությունը և այլն, չէին կարող առանց ազդեցության մնալ հայ կյանքի վրա: Ժամանակակիցները խոսում են երեք տեսակ նոր փոփոխություն մասին, որ սեղանի եվրոպացոց ազդեցության արդյունքն էին, այն է՝ կրոնական և ծիսական նորմություններ՝ կաթոլիկ եկեղեցու համաձայն, եվրոպական տարագ և արգուզարդ, եվրոպական ավատական վարչական ձև ու պաշտոններ: Այսպես է գրում օրինակ՝ Լամբրոնացին 1195 թվին գրած մի նամակում, որ ուղղել է Լևոն Բ-ին. «Որպես հրամայեցէք դուք մեզ՝ մեր առաջին հարցն շաւղաց ընթացակիցս լինել, լիք (լերուք) եւ դուք ձերսն: Մի կայք բացաղուի ըստ Լատինացւոց իշխանացն եւ թագաւորացն, զոր Հայք մաղակաթացն ասեն ձև. այլ դիք շարփուշ, որպէս ձեր նախնիքն: Աճեցուցէք զհերս եւ զմօրուս, որպէս ձեր հարքն: Զգեցէք դուռայ լայն եւ թաւ, եւ մի փիլոն եւ զսպեալ պատմուճանս: Հեծէք ի սախտեալ երիվարս ճուշանով եւ ոչ յանսախտըս լատինս լեհիով: Տուք պատիւ անուանց ամիրայ եւ հեճուպ եւ մարզպան եւ սպայատալար եւ այսպիսիս, եւ մի սիւր եւ պրոքսիմոս, գունդուստապլ եւ մարաջախտ եւ ձիափոր եւ լիճ, որ Լատինացւոց է օրէն: Արդ փոխեցէք դուք զայս լատինացի ձեւս եւ զանուանսն ի պարսիցն եւ ի հայոցն ձեւս եւ անուանս ըստ ձեր հարցն, եւ բարեզարդեցէ՛ք զձեր արքունիսդ առաջնոցն սովորութեամբն և մեք հաւանիմք Զորոյգետացնացն եւ փոխեմք զմերս» (տպ. Վնենս. 1838, էջ 234—5):

Երբ տարագ, վարչական ձևեր և կրոնական ծեսեր ու սովորություններ մտնում էին Կիլիկիայի հայոց մեջ, անկարելի էր որ սրանց հետ միասին նաև իրենց անունները չփոխադրվեին: Վերևում տեսանք մի խումբ պաշտոնների անուններ, որ մտել են այն ժամանակ հայերենի մեջ և որոնցից ոմանք շարունակում են իրենց գոյությունը մինչև այսօր էլ (ինչ. սլարոն, մարաջախտ): Բայց հայերենի փոխառությունները եվրոպացիներից միայն այս փոքր սահմանի մեջ չէին, այլ կային անշուշտ գանաղան ասպարեզների վերաբերյալ տեսակ տեսակ փոխառություններ:

Ինչ աղբյուր ունինք այս փոխառությունները հավաքելու համար:

Միակ աղբյուրն է բնականաբար այն ամբողջ գրականությունը, որ ավանդված է մեզ այն ժամանակից: Բայց այս էլ մի քանի պակասություն ունի. նախ որ այդ աղբյուրներից շատերը հրատարակված ու տպագրություն մատչելի դարձած չեն. այսպես են բժշկարաններից, տոմարական գրվածներից և դիվանական թղթերից շատերը: 2) Գրվածքներից մի քանիսը բառարանական բնույթ կրելով՝ կարելի չէ իմանալ թե հիշատակված եվրոպական բառերը պարզ տառադարձություններ են, թե իրոք ժողովրդական լեզվի մեջ գործածական ձևեր: 3) Այդ գրականությունը, ինչպես ամեն մի գրականություն, չի կարող լեզվի լրիվ պատկերը լինել և անշուշտ բոլոր եվրոպական փոխառությունները նրա մեջ ավանդված չեն: 4) Վերջապես նույն իսկ այս պայմանների տակ, ամփոփված ու հավաքված չեն այն բոլոր բառերը, որոնք գործածված են հղել այդ զանազան գործերի մեջ, Karst-ի աշխատության մեջ կան բազմաթիվ եվրոպական բառեր, բայց կարելի չէ անմիջապես օգտվել նրանցից, որովհետև կան նրանց մեջ անխտիր նաև վերոհիշատակյալ 2-րդ կարգի բառերից, որոնք ժողովրդական հարազատ փոխառությանց հետ գործ չունին:

Ինչ որ կարելի է եղել ինձ հավաքել բառարաններից ու հրատարակված զանազան բնագրերից՝ կազմում է 87 բառերի մի հավաքածու, որ ըստ նախորդների, դասավորում եմ հետևյալ երկու ցուցակների մեջ:

- | | | |
|---------------------------------|-------|---------------|
| 1. անբրուր «կայսր» | Փր. | empereur |
| 2. անսիզ «օրենք» | | assises |
| 3. արծուէսք «արքեպիսկոպոս» | | arcevesque |
| 4. արմա «գինանշան» | իտալ. | arma |
| 5. արտիճուկ «կանկառ» | | artificio |
| 6. աուզաթ «փաստարան» | | avvocato |
| 7. բասաճ «խաչակրաց արշավը» | Փր. | passage |
| 8. բէլ «կնքահայր» | | baile «դայակ» |
| 9. բլայթ «դատի մեջ պաշտպանութ.» | | plaid |
| 10. բրաջուր «լատին քարոզիչ» | | prêcheur |
| 11. բրինձ «իշխան» | | prince |
| 12. բրվլէճ «արտոնություն» | | privilège |
| 13. գաղջեր «տոնապան» | իտալ. | calzare |

14. գան (չափ է)
15. գոնթ կղմս
16. գումին «համայնք»
17. գունդատապլ «ախոռապետ»
18. գունց, գունս «կոմս»
19. գանփլ «տաճար»
20. դուրէթ «ցցունք»
21. դրավէրս «խաչի թեքք»
22. դրոյսք «ծամթել»
23. լեկաթ «պապի նվիրակ»
24. լեհլի «ձիու ծածկոց»
25. լին «ճորտ»
26. լիվր (դրամը)
27. կալօփ «ձիու վազք»
28. կարդինալ
29. հանապ «բաժակ»
30. հանէղ «սարք»
31. հաստատ «ախաղոր»
32. ճնիժ «եղինջ»
33. մա(յ)ստո «խորհրդական»
34. մարաջախտ
35. մարդիդ
36. մարիաճ «ամուսնություն»
37. մարկ (դրամ)
38. մնուր «քարոզիչ»
39. մորթաղ «սանդ»?
40. մորտ «ամանի ձեփ»
41. ունծայ (կշիռ)
42. պակ (զարդ)
43. պալլ «իշխան»
44. պաներ «դատի կանչող»
45. պատրոն (տխաղոս)
46. պարոն
47. պացին «կոնք»
48. պուրճէս «քաղաքացի»
49. պրացօլ «բազպան»
50. պրէֆաց, պրէֆատիօն, փրէֆացիօ
«պատարադի նախարան»

- Փր. canne
comte
լտ. commune
իտալ. contestabile
հֆր. cuens
Փր. temple
toupet
traverse
trousse ?
légat
մրդ. lilach
Փր. lige
livre
galop
cardinal
hanap
harnais
hastai
genisse
հֆր. maistre
mareschalt
mardis
Փր. mariage
marc
լտ. minores
mortarium
Փր. mortier
once
bague
bail
banier
patron
baron
bassine
bourgeois
մլտ. brazalis
լտ. praefatio, -nes

51. ջարիստր «գրքի գլուխ»
 52. ջարրոն «վեղար»
 53. ջալունջ «զանգատ»
 54. ջամբո «դիվանատուն»
 55. ջամբուլայն «սենեկապան»
 56. ջամուայ «սենյակ» տես ջամբո
 57. ջանուն «կրոնավոր»
 58. ջանսլեր (պաշտոնյա)
 59. ջաստել «պատժել»
 60. ջաստէլ «զղյակ»
 61. ռիճ «հարուստ»
 62. ոայզայ «բռնագրավում»
 63. սայզել «ըմբոնել, բռնագրավել»
 64. սինիջալ (պաշտոնյա)
 65. սիր «արքա»
 66. սպառան «այտուց»
 67. սրօս «այտուց»
 68. սքրեթ «ծածուկ աղոթք»
 69. սօլ «կողիկ»
 70. սօլ (դրամ)
 71. վէսք «եպիսկոպոս»
 72. տամ «իշխանուհի»
 73. տամոջել «ազնվական օրիորդ»
 74. տուայր «օժիտ»
 75. տուգատ (դրամ)
 76. տուկ «դուքս»
 77. տուպլ «կրկին»
 78. տֆնդել «արվելի, պաշտպանել»
 79. քիթ «ազատ, զերծ»
 80. քումանտուր «հրամանատար»
 81. օդրել «արտոնել»
 82. օն (չափ)
 83. օփրանտ «ծամուց»
 84. ֆայլել «դատը կորցնել»
 85. ֆարսին «ձիու քոս»
 86. ֆրա «լատին կրոնավոր»
 87. ֆրեր «խաչակիր զինվոր»
- հֆր. chapistre
chaperon
chalonge
chambre
chambrelan
Փր. chanoine
chancelier
հֆր. chastier
chastel
Փր. riche
հֆր. saisia
Փր. saisir
sénéchal
sire
հֆր. esparvain
Փր. suros
լտ. secretus
solea
հֆր. sol
իտալ. vescovo
Փր. dame
իտալ. damigella
Փր. douaire
ducat
duc
double
défendre
հֆր. quite
Փր. commandeur
հֆր. otréier
Փր. aune
հֆր. ofrende
Փր. faillir
farcin
լտ. frater
Փր. frère

- 1) Քննության և նրա գործության մասին.— չիք.
- 2) Կրոնական բառեր.— արծուէսք, բրաջուր, դանփլ, դրավէրս (թևեր խաչի), լեկաթ, կարդինալ, մնուր, օֆրանթ, ջանուն, սքրեթ, պրէֆաց, վէսք, ֆոս.
- 3) Մարդ և մարմնի մասեր.— չիք.
- 4) Հիվանդություններ և նմաններ.— սպառան, սրոս (ձիու ուղի ալուս), ֆարսին (քոս).
- 5) Կենդանիներ.— ճնիժ.
- 6) Ընտանիք.— բէլ ?
- 7) Երկրագործական.— արտիճուկ.
- 8) Անասնապահություն և գյուղատնտեսություն.— գուրթ (ձիու ճակտի ցցունքը), լեհլի, կալօփ (ձին վազեցնել).
- 9) Արհեստի վերաբերյալ.— ջարթատր (գլուխ).
- 10) Գույներ.— չիք.
- 11) Վանառականություն.— չիք.
- 12) Շինարարական.— չիք.
- 13) Հագուստ և զարդ.— գաղջեր, դրոյսք, պակ, պրացօլ, ջարթոն, սուլեր.
- 14) Ուտելիք և ըմպելիք.— չիք.
- 15) Առտեին տնտեսություն.— հանապ, հառնէզ, մորթալ (սանդ), մորտ (ծեփ), պացին (կոնք).
- 16) Թիվ և չափ.— գան, լիվր, մարկ, ունծայ, տուպլ, սուլուգատ.
- 17) Մետաղներ.— չիք.
- 18) Ճամբի վերաբերյալ.— չիք.
- 19) Ժամանակ և տեղ.— չիք.
- 20) Երկիր և պետություն.— անբրուր, անսիդ, արմա, աուգաթ, բասաճ, բլայթել, բրինձ, բրվլէճ, գունդստապլ, գունց, Կոնթ, գումէն, լիճ, հաստատ (գինվոր), մայստո, մարաջախո, մարգիդ, պայլ, պաներ, պատրոն, պարոն, պուրճէս, ջալունջ, ջամբո, ջամբուլայն, ջանսեր, ջաստել (պատժել), ջաստէլ (դղակ), սայզայ (գրալուճ), սայգել, սինիջալ, սիր, տամ, տամոջել, տուկտֆնդել, օդրել, քուճանտուր, ֆրեր, ֆայլել.
- 21) Ասվորական կյանքի բառեր.— մարիաճ, ուճ, սայգել (ըմբռնել), տուայր, քիթ (աղատ, գերծ).
- 22) Դերանուններ, շաղկապ և նմաններ.— չիք.
Վերոհիշյալ փոխառությունաց առթիվ քննության առնելու հետևյալ խնդիրները կան.

1) Արդյոք վերոհիշյալ ցանկը ամբողջական է:
Այս մասին արդեն մի քիչ առաջ խոսել ենք: Որովհետև մեր աղբյուրներից շատերը դեռ հրատարակված չեն, մյուս կողմից որովհետև ոչ մի գրականություն կարող չէ լեզվի մեջ գործածված բոլոր բառերը գործադրության դրած լինել, ուստի և ցանկը չի կարող ամբողջական լինել: Այս բանը կարելի է և ուրիշ կողմից էլ ապացուցանել: Ջեյթունի արդի բարբառում կատմող ձևով մի բառ, որ նշանակում է «տան պատի մեջ բացված կամ առանձին տախտակով շինված պահարան»: Սա անշուշտ ֆրանս. armoire «պահարան, դարան, շկաֆ» բառն է: Ե՞րբ կարող է այս բառը մտած լինել Ջեյթունի բարբառի մեջ: Ժ՞ դարից հետո, երբ Ռուբինյան պետությունը ջնջվեց և խաչակրությունները վերացան, եվրոպացոց ոտքը արդեն կտրվել էր Ասորիքից, ուստի չէր կարող որևէ ֆրանսերեն բառ մուտք գործել Կիլիկյան բարբառի մեջ: Փոխառությունը չէր կարող կատարվել նաև անուղղակի գծով, որովհետև ոչ թուրքերենի և ոչ էլ հարեվան որևէ հայ բարբառի մեջ չկա այս բառը: Ուստի պետք է ընդունենք, որ փոխառությունը տեղի է ունեցել ժ՞ դարից առաջ և որովհետև այդ բառը գործածված չէ միջին հայերեն գրականության մեջ և ըստ այսմ պակասում է վերի ցանկում, հետևաբար գրականությունը, կամ որ նույն է, վերոհիշյալ ցանկը ամբողջական չէ: Կան անշուշտ դեռ մի խումբ ուրիշ կարևոր եվրոպական փոխառություններ, որոնք մուտք չեն պտած այդ ցանկում:

2) Արդյոք այս փոխառությունները գրական են, թե ժողովրդական:
Անշուշտ կլինեն բառեր, որոնք զուտ գրական ճանապարհով են մտած, բայց վերոհիշյալ բառերի բնույթը այնպես է առհասարակ, որ ժողովրդական են, այսինքն գործածված են իրապես խոսակցական լեզվի մեջ: Քիչ առաջ հիշված ամուսնուր Ջեյթունի բարբառում ապացուցանում է, որ եվրոպական փոխառությունները նույն իսկ ժողովրդական լեզվի մեջ էին թափանցել: Հաճո՞ բարբառով կա մինչև այժմ հանօր «թաս» բառը, որ ուրիշ բան չէ, եթե ոչ վերոհիշյալ հանապ <ֆրանս. hanap «մի տեսակ բաժակ ոտքով ու կափարիչով, որ գործածական էր եվրոպայում ամբողջ միջին դարում» (Ֆրանսիայի մեջ մինչև ժ՞ դար, Ֆերմանիա մինչև ժ՞ դար):

Մեր բարբառների մեջ ընդարձակ տարածություն ունի

սօլ «կոշիկ» բառը, որ գիտեն Արարկիր, Ապարան, Արճեշ, Բաղէշ, Թավրիզ, Խոյ, Խլաթ, Հազգո, Մոկք, Մուշ, Մարաղա, Նոր-Բայազետ, Շատախ, Ողմի, Սալմաստ, Սասուն, Սուրմալու, Վան, Կղի, որից կան նույն իսկ սօլկար, սօլկրնոց բառերը: Արդ, այս բառը լատ. solea կամ ֆրանս. soulier բառն է:—Մեծ տարածություն չունի, բայց Սիբաստիայում գործածական է լէնիլի Եմինդար, գրք. ակումբ մաշկեայ, որ միջին հայերենի լենիլի Եմինդարի ծածկոց՝ եվրոպական ձևով՝ բառն է և փոխառյալ է միջին բարձր գերմ. lilach ձևից: Այս օրինակները բավական են ապացուցանելու համար, որ եվրոպական փոխառությունները կրում են ժողովրդական բնույթ, ուստի և կատարված են ուղիղ գծով:

3) Ի՞նչ կուլտուրական արժեք են ներկայացնում այս փոխառությունները:

Հունական և մանավանդ պարսկական փոխառությունները քննելու ժամանակ՝ մենք կարողացանք երևան հանել կուլտուրական այն խոշոր ազդեցությունը, որ ունեցել էին այդ մեծ ազգերը հայոց վրա: Այդ ազդեցությունը երևան եկավ նրանից, որ փոխառությանց ցուցակում ամեն մի ստորաբաժանմունքի դեմ բառեր կային: Այսպես չեն սակայն եվրոպական փոխառությունները. բազմաթիվ ճյուղերի, ինչպես բնության և նրա գործությանց մասին, մարդու և մարմնի զանազան մասերի մասին, ընտանիքի կազմության, գույների, վաճառականության, շինարարության, ուտելիքի և ըմպելիքի, մետաղագործության, ճամբորդության, ժամանակի և տեղի, ինչպես նաև դերանունների, շաղկապների և նմանների վերաբերյալ ոչ մի բառ չկա ցանկում: Այս նշան է, որ այդ ճյուղերի կողմից եվրոպացիք որևէ ազդեցություն չեն գործել: Եվրոպական փոխառություններ կան կրոնական բաժնում, առանին տնտեսության վերաբերյալ, երկրի և պետական կազմակերպության մասին, դրամի ու քաշի մասին, հազուստեղենի մասին և մի քանի բառ էլ հիվանդությունց, կենդանիների, երկրագործության, անասնապահության, արհեստների և սովորական կյանքի մասին: Պիտի սահմանափակվենք ուրեմն մենք էլ այս փոքրիկ շրջանի մեջ:

Ամենից ընդարձակ բաժիններն են կրոնականը (13 բառ) և պետականը (38 բառ): Այս 51 բառերը, որոնք ամբողջ եվրոպական փոխառությանց $\frac{2}{3}$ են կազմում, ուրիշ բան չեն, եթե ոչ նյութական ապացույցներ կամ փաստեր այն իրողության,

որի մասին պատմությունն էլ է վկայում, այսինքն եվրոպացոց կրոնական և վարչական ազդեցությունը.— առաջինը կաթոլիկական կարգերի ներմուծմամբ և երկրորդը՝ ավատական կարգերի մուտքով հիլիկիայի թագավորության մեջ: Ավելացնենք այստեղ միայն այն՝ որ վարչական կամ պետական ազդեցություն ասելով պետք չէ միայն հասկանալ զուտ քաղաքականն ու զինվորականը, այլ նաև դատական կարգերի ներմուծումը, որին իբրև սպացույց են ծառայում մի խումբ դատական բառեր, այն է բլայթել «դատարանի առաջ իր դատը պաշտպանել», անսիզ «դատաստանագիրք կամ մատյան օրինաց», ջալունջ «դատական բողոք, գանգատ, արդի բառով հայց», ջաստել «պատեծել», սայգայ Վեճի տակ եղած մի բանի գրավումը կամ նրա վրա դրված արգելքը դատական իշխանության կողմից», սայզել «գրավել», տֆնդել «պաշտպանել», ֆայլել «դատը կորցնել» (ընդամենը 8 բառ):

Մյուս բաժինները միասին ունին ընդամենը 24 բառ, որ կազմում է ամբողջի $\frac{1}{3}$ մասը: Ամբողջի համեմատությամբ սա մի շատ փոքր թիվ է, մանավանդ երբ առնենք յուրաքանչյուր ստորաբաժանմունք առանձին: Համեմատությունը էլ ավելի կփոքրանա, երբ նկատենք, որ հիվանդությունների, անասնապահության և հագուստեղենի վերաբերյալ բառերից 7 վերաբերվում են ձիերի հիվանդությանց, կազմին, վազբին և ձիավորի հագուստին, մեկը՝ հառնէզ Եսպաս, կահ, կազմած գրեթե նույնպես ձիերի, որսի և զենքի համար է, և մեկն էլ ջարբոն՝ կրոնավորի վեղարի համար է: Այսպեսով այս 9 բառերն էլ կանցնեն իրապես ասպիտական կյանքին (որ է պետական) և կրոնականին: Սրանով այս երկուսից դուրս մնացած բառերի թիվը կվերածվի 15-ի:

Երկրագործական բաժնից կա միայն մի բառ, որ է արճնուկ կամ արախնուկ. սա արևմտահայոց մեջ կանկառ, ռուս. артишок կոչված բույսն է, որ տալիս է շատ համեղ մի կերակուր: Այս բույսը ունի իր հետաքրքրական պատմությունը: Սա գիտական լեզվով cynara (ցինարա) կոչված բույսն է, որի ընտանին ծանոթ էր արարների մեջ al-haršaf անունով: Արարների ձեռքով հիշյալ բույսը ներմուծվեց Սպանիա, որտեղից մտավ Իտալիա, Ֆրանսիա, Հոլլանդիա, Անգլիա, ԺՁ դարի կեսին Շվեյցարիա, այստեղից Գերմանիա և Գերմանիայի վրայով Ռուսաստան: Երկրից երկիր անցնելով բույսի արարերեն անունը հետզհետե

փոխեց իր կերպարանքը. Իտալիայում կոչվում էր articiocco, ֆրանս. եղավ artichaut, գերմ. artichoke, որից էլ ռուս. артишоки: Ռուսերիցանց շրջանում իտալական ձևով ներմուծվելով հիլիկիա, կոչվել է հյ. արտիճուկ կամ արճնուկ: Չգիտեմ, թե այս բույսը այժմ էլ մշակվում է հիլիկիայում. բայց հայտնի է, որ հովկասում և Ռուսական Հայաստանում չկար. միայն վերջերս, սովետական շրջանում, տաճկահայ գաղթականները սկսեցին փորձեր անել Երևանի շուրջը նույն բույսի մշակութունը առածելու:

Անասնապահական ճյուղից կա միայն ճնիժ «երինջ» բառը, որի գոյությունը թերևս պետք է բացատրել կովի մի առանձին եվրոպական տեսակի ներմուծումով դեպի հիլիկիա:

Աստուրի տնտեսության բաժինը գիտե երեք տեսակ ամանեղենի անուն, որոնք են հանապ Երաժակ», մորթաղ «սանդ», պացին «կոնք». սրանցից դուրս կա մորտ «ամանների բերանը գոցելու հատուկ ծեփ կամ շաղախ. lut»: Ամանեղենի փոխադրությունը երկրից երկիր ծանոթ երևույթ է. նորամուծյ առարկայի հետ գալիս է նաև իր անունը:

Սրանցից դուրս մնում են փողերի անուններ՝ լիվր, մարկ, սուլ, կշիռքի մի փոքր չափ՝ ունծայ, գրական՝ ջաբխտը Եգրբի գլուխ», զարդեղենի վերաբերյալ՝ պակ «մի տեսակ կանացի զարդ», և սովորական կյանքի բառերից՝ սայգել «բարձր», աուայր «օժիտ», քիթ «գերծ», ազատ»: Սրանով էլ սահմանափակվում է եվրոպական քաղաքակրթության ազդեցությունը հայ կյանքի վրա, հիլիկիայում:

4) Փոխառությունները ինչ տարածություն ունեցան. արդյոք նրանք սահմանափակված էին միայն հիլիկիայում, թե կային նաև բուն Հայաստանում:

Այս հարցին չի կարելի միանգամից դրական կամ բացասական պատասխան տալ. որոշ բառեր նայելով թե իրենց նշանակած առարկաները ինչքան տեղ մուտք էին գործել, տարածված էին նաև ավելի հեռուները. մյուսները մնացել էին անշուշտ միայն հիլիկիայում. օրինակ սուլ բառը՝ ինչպես տեսանք, հասել է մինչև հովկաս և Ատրպատական և մինչև անգամ մուտք է գործել ուրիշ հարևան ժողովուրդների մեջ. այսպես ջրդերի, զազանների, ասորիների և քաղղեացոց.—արմա բառը գիտե Միսսա Համդեցին.—կաթոլիկական կրոնի վերաբերյալ բառերը

գտնվում էին նաև Հայաստանի, Ատրպատականի և Վրաստանի կաթոլիկացած շրջաններում. օր. Երնջակի շրջանից ունինք զանազան ֆրանսեր.—քաղաքական բառերից պարոն և ջամբո ստացել են լայն տարածում. այնպես որ Սիմեոն կաթոլիկոսը իր հավաքածուն կոչում է ջամբո: Բայց պետք է կարծել, որ մնացյալ բառերը ընդհանրապես տեղական նշանակություն են ունեցել:

5) Ինչքան կյանք ունեցան այս փոխառությունները և մինչև երբ ապրեցին մեր լեզվի մեջ:

Քանի որ, ինչպես տեսանք, փոխառությունները, մեծ մասամբ վարչական ու կաթոլիկ կրոնին հատուկ բառեր էին, քնականարար հիլիկյան թագավորության կործանումով և եվրոպացոց վտարումով պիտի վերանային: Ժողովրդի մեջ կարող էին իրենց գոյությունը շարունակել այն բառերը միայն, որոնք զուտ քաղաքակրթական նշանակություն ունեին, մինչև որ նոր առարկաներ գալով փոխարինեին նրանց: Այդպիսիներե թիվը արդեն շատ քիչ էր:

Հիշատակված 87 փոխառություններից միայն վեցը այսօր գործածական են հայերենի մեջ. սրանք են կարդինալ, սուլ, հանապ, մարաջախտ, մարդիզ, պարոն.—սրանցից կարդինալ և մարդիզ նոր փոխառություններ են ֆրանսերենից, մարաջախտ և պարոն զրազետների ձեռքով վերակենդանացրած բառեր են, և միայն հանապ ու սուլ բառերն են՝ որ գործածական են բուն ժողովրդի մեջ. ավելացնենք նաև սրանց վրա Ջեյթունցոց առձուր, որով պիտի ունենանք 3 բառ, գրական բառերի հետ միասին ընդամենը 5 բառ, որ մնացել են եվրոպական միջնադարյան ազդեցությունից:

Բառերի քննությունը վերջացնելուց հետո պետք է տեսնենք, թե ինչ ազդեցություն է գործել Եվրոպան հայերեն լեզվի ներքին կազմության, ոճաբանության և քերականության վրա:

Այստեղ ունինք խոսելու ավելի առատ նյութ, քան բառական փոխառությանց մասին էր:

Լեզվի պատմիչները այս շրջանի ծնունդն են համարում մի բոլորովին նոր հայերեն, որ կոչում են լատինաբան հայերեն, և որի հորինումը վերագրում են ունիթոռներին:

Մենք էլ ծանոթանանք ուրեմն նախապես այս անվան հետ և պատմենք համառոտիվ. թե ինչպես և երբ երևան եկան նրանք մեր երկրում և ինչ եղավ նրանց գործունեությունը:

կիլիկիայում ձեռք բերած հաջողութիւններից քաջաբեր-
վելով պապերը ուզում էին Արևելքում կաթողիկոսական պրոպա-
գանդան ավելի հաստատուն ու տեական հիմքերի վրա դնել:
Այս նպատակով կազմվեց միաբանողների կամ լատին բառով
ունիթոնների կարգը, հետևյալ հանգամանքների տակ*):

1316 թվին Արևելք ուղարկվեց Բարթոլոմեոս անունով մի
նշանավոր եպիսկոպոս, որ Իտալիայի Պոլոնիա քաղաքիցն էր:
Երկու ընկերներով միասին Բարթոլոմեոսը նստալ Ատրպա-
տականի Մարաղա քաղաքը, որ այն ժամանակ Թաթարաց Հու-
լաղու խանի լաթոսանիստն էր և այս ուսումնասիր իշխանի
շնորհիվ բավական ծաղկած վիճակ ունեւր: Թաթարները նախ
քան մահմեդականութիւն ընդունելը համակիր էին քրիստո-
նեության, ուստի իրավունք տվին Բարթոլոմեոսին ազատ ու
համարձակ գործելու: Հետ այսմ Բարթոլոմեոսն էլ սկսեց իր
քարոզչական գործունեութիւնը, շատերին հրապուրեց իր կողմը
և տեսնելով, որ գործը հաջող է գնում, շինեց մի վանք, որտե-
ղից սկսեց քարոզիչներ ուղարկել շրջակայքը: Իր գիտնական
համբավից հրապուրվելով Հայաստանից զանազան վարդապետ-
ները դալիս էին նրա մոտ աշակերտելու: Սրանց մեջ նշանավոր
եղավ Քոնսեցի Հովհան վարդապետը, որ տարի ու կես մնալով
Բարթոլոմեոսի մոտ, սովորեց լատիներենը և սովորեցրեց հա-
յերենը նրան և նրա ընկերներին: Իսկույն սկսեցին զանազան
լատիներեն աստվածաբանական գրքեր հայերենի թարգմանել:
Քոնսեցին այնքան սիրեց Բարթոլոմեոսին, որ համոզեց նրան
վերջապես գալ Հայաստան և հաստատվել Քոնսի վանքը
(1330): Այստեղ բացին վարդապետարան, ուր սովորում էին
քաղմաթիվ հայ վարդապետներ: Քոնսեցին ընդունեց լատին դա-
վանութիւնը և հաջողեց իրեն հետ միացնել նաև Քոնիի ժո-
ղովուրդը: Այնուհետև ավելի ընդարձակելու համար ասպարեզը,
որոշեց բոլոր հայերին գալանափոխ անել և այս նպատակով
լատին վարդապետների օրինակով կազմեց կրօնափորական մի
ուխտ՝ որ կոչվում էր միաբանող եղբայրներ կամ լատիներեն
բառով fratres unitores: Մի քանի դար տևում է սրանց կրօնա-
կան գործունեութիւնը, հաջողում են իրենց հետևորդների թիվը
հասցնել մինչև 20,000 ամբողջ Հայաստանում, Ատրպատական

*) Ալիշան, Միսական, էջ 362 և այլն: Զարբհանալիան, Պատմ. հայերէն
գալուսթեան, հատ. Բ. էջ 194—212:

նում և Վրաստանում, որից հետո հետգհետե պակասելով ոչըն-
չանում են:

Կրօնական պատմութիւնը թողնելով մի կողմ, տեսնե՞ք
մենք ունիթոնների գրական գործունեութիւնը:

Քոնի հաստատվելուց մինչև ժԴ դարի կեսը, այն է 25
տարվա ընթացքում մեղ հայտնի են 25 կտոր թարգմանու-
թիւն, որոնք հետևյալներն են իրենց ժամանակադրական կար-
գով:

- 1) Բարթոլոմեոսի Քարոզչիքը.
- 2) » Կանոնական թուղթ.
- 3) » Յաղագս վեցօրեայ Արարչութեան.
- 4) Ս. Թովմայի Ակուինացույ Յաղագս խորհրդոց եկեղեցուց.
- 5) » Գիրք ընդդէմ հեթանոսաց.
- 6) » Յաղագս բնութեանց և անձնաւորութեան
Քրիստոսի.
- 7) Պետրոսի Արագոնացույ Գիրք դատաստանաց.
- 8) » Կանոնագիրք կամ իրաւագիրք.
- 9) » Յաղագս եօթն մեղաց.
- 10) Նույնի Գիրք Առաքինութեանց.
- 11) Յաղագս Մոլոթեանց.
- 12) Յաղագս խոստովանութեան.
- 13) Գիրք դժոխոց.
- 14) Սուր Պետրոսի.
- 15) Ժամագիրք Գովինիկեանց.
- 16) Միսայ, որ է Պատարագամատոյց.
- 17) Այբերդի Աստուածաբանութիւն.
- 18) Արիստոտելի Վերլուծութիւն ստորոգութեանց.
- 19) Ս. Օգոստինոսի Կանոնք.
- 20) Կացուցմունք (իմա Մահմանագրութիւն) կարգի եղ-
բարց Քարոզողաց.

- 21) Գիրք յաղագս հոգւոց.
- 22) Յաղագս Հրեշտակաց.
- 23) Կայծականց գիրք Բեզայի.
- 24) Գանձ վարդապետութեան Քրիստոսի.
- 25) Մեկնութիւն պատարագի Իննովկենտեայ Գ.

Այս թարգմանութիւնները կատարվել են մեծ մասամբ
լատին Բարթոլոմեոս եպիսկոպոսի, Պետրոս Արագոնացու (սպա-
նիացի) ձեռքով, մի քանիսն էլ Հովհան Քոնսեցու, Հակոբ վար-
դապետի և Հովհաննես Զահեցու ձեռքով:

Մեր մեջ տիրում է այն կարծիքը, թե հիշյալ լատին քաղաքիչները հայերեն լավ չիմանալով և կամ գիտամոմբ հնարեցին մի նոր տեսակի հայերեն, որ ըստ ամենայնի ձևված էր լատիներեն լեզվի վրա և դրա համար էլ կոչվում է լատինարան հայերեն:

Այս կարծիքը, որի հեղինակը, ինչպես երևում է, Ջարբահալյանն է (անդ, էջ 49), բոլորովին սխալ է: Լատին քաղաքիչները բնավ կարիք չունեին հայերենի համար նորանոր ձևեր հնարելու: Նրանք եթե տգետ էին հայերենի գիտություն մեջ, առ առավելն քերականական սխալներ պիտի անեին, և ոչ թե հնարեին նոր նոր ձևեր կամ աային հայերենին մի նոր կազմակերպություն, ինչ որ ոչ թե տգետի գործ է, այլ ընդհակառակը պահանջում է ավելի մեծ հմտություն, միայն ի չարք գործադրված:

Մեր ասածին իբրև ապացույց բավական է մեջ բերել մի նմուշ Դոմինիկյան Ֆրա Պետրոս Արագոնացու լեզվից. (Յառաջարան Առաքինութեանց գրքի, հանված Երևանի Թանգարանի ձեռագրից):

Վասն Այսորիկ ես նուստ Ֆրա Պետրոս ի կորգէ քարոզողաց երանելոյն Դոմինիկոսի կամեցայ հաւաքել բանս ինչ ի յառաքինութեանցն որ սփռեալ կայր ի գիրս. թէպէտ փոքրութիւն մտաց իմոց ոչ բաւականայր առ այսմ վասն դժուարութեանց նիւթոց եւ արժանաւորութեանց, բայց սակայն յադթահարեալ ի սիրոյ եղբարցն աղաչանաց ոչ վայել էր ընդդէմ ասել. վասնորոյ ապաւինեալ ի տէրն առաքինութեանցն ի Քրիստոս փրկիչն մեր, որ է գորութիւն և իմաստութիւն Հօր, համարձակիմ սկիզբն աննել գրոց առաքինութեանց ի յօգուտ խոնարհաց. զի վասն նոցա ասէ Քրիստոս (Մատթէոս ԺԱ). Գոհանամ զքնն, Հայր, աէր երկնի եւ երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտ...

Ինչպես երևում է, այս հայերենը շատ կանոնավոր է և լատինարան կոչվելու ոչ մի պատճառ չունի:

Լատինարան հայերենը հորինված է ավելի ուշ, ԺԶ դարուն, Հռոմում:

Այս ժամանակ հայերը Իտալիայում կազմում էին մի ուժեղ գաղութ: Նրանք ուժեղ էին ոչ այնքան թվով, որչափ իրենց առևտրական գործունեությունները. այս պատճառով էլ տեղական իշխանությունները քաջալերում էին նրանց ամեն կերպ

և աալիս էին այնպիսի արտոնություններ, որ նույն իսկ Իտալացոց չէին տալիս: Այսպես 1579 թվին Վենետիկի հայ գաղութը կազմում է ինքնավար Ազգային Սահմանադրություն: Նույնը տեղի է ունենում ավելի մեծ չափով Լիվոռնոյում և այլն:

Այս հայերը բնականաբար պատկանում էին իրենց ազգային եկեղեցուն. Պապը ուզենալով որսալ նրանց, 1584 թվին հիմնեց Հռոմում Հավատոյ տարածման Միաբանությունը (Propaganda della fede), որին իսկույն հաջորդեց առանձին հայ ապարան: Այս ապարանը եղավ Պրոպագանդայի գործիքներից մեկը և նպատակ ուներ իր տպած կաթոլիկամիտ գրքերի, միջոցով կաթոլիկությունը տարածել Հայոց մեջ: Այս ապարանը մինչև 1728 թիվը բավական ընդարձակ գործունեություն ցույց տվեց և տպեց շատ հայերեն գրքեր, ինչպես Տոմար Գրիգորեան, Կոնդակ Պապի, Այբբենարան, Քերականութիւն, Կղեմէս Կալանոսի Միաբանութիւն Ս. Եկեղեցւոյն Հայոց ընդ Ս. Եկեղեցւոյն Հռոմայ, Բառգիրք հայ-լատին և այլն: Ահա այստեղ, Պրոպագանդայի այս շրջանում, կազմվում է լատինարան հայերենը, որ պետք է կոչել ոչ թե ունիթոսական, այլ կոնցիլյան հայերեն և որի հեղինակներն են Հռոմի դպրոցում սնված հայ կաթոլիկ վարդապետներ: Այսպիսիներից նշանավոր են Հովհաննես Հոլով և Բարսեղ Հոլով, երկուսն էլ Կոստանդնուպոլսեցի: Այս հայերենը համարվում է բարձր լեզու և շուտով տարածվում է ոչ միայն Հռոմի դպրոցի շրջանում մեծացած կաթոլիկ հայոց մեջ, այլ և դուրսը, նույն իսկ ազգային եկեղեցուն հավատաբերի մնացած հայ ուսումնականների մեջ: Այստեղ դնում ենք մի քանի նմուշներ լատինարան հայերենից:

Ես եմ ճանապարհ անաղարտելի, ճշմարտութիւն անստելի եւ կեան անեզրանալի: Ես եմ ճանապարհ ուղղագունեղ, ճշմարտութիւն վեհագունեղ, և կեան ճշմարիտ, կեան երանելի եւ կեան անստեղծ... Մարգեցի ուրեմն ծառայ քո ըն կենի քում, զի անդ է կեցութիւն իմ եւ սրբութիւն ճշմարիտ... Յորժամ ոք իրաւապէս արգելեցեալ է եւ ունի գրարի հաճութիւն եւ զառաքինական գիտաւորութիւն հաղորդելոյ, ոչ զրկի ի պտղոյ սրբազնութեան: Եւ թէպէտ իւրաքանչիւր ոք ջերմեռանդ վարէ յամենայնում աւուր եւ յամենայնում ժամու, առ հաղորդութիւնն Գի, առողջատարաբար եւ թարց արգելման մերձենալ, սակայն պարտի նաւուրս ոմանս եւ ընկացուցեալս ժամանակս, զմարմին փրկչին իւրոյ ըզձականաւ վերայարգությամբ սրբազ-

նապէս վերընդունիլ եւ յաւէտ վերադիտել զպատիւն Այ, քան թէ խնդրել զիւրն մխիթարութիւն: Քանզի այնքանիցս խորհրդաբար հաղորդի եւ աներևոյթաբար կերակրի, որքանիցս զներմարմնութեանն Քի խորհուրդ վերայարգէ եւ սիրով նորին բորբոքի:

(Քոմայի Գեմբեցւոյ, Յաղագս Համահետեւմանն Քրիստոսի, էջ 467, 469 և 562):

Անկարելոյ, յոգնակի՝ անկարելունք:

Տեղի ինչ, շրջափակեցեալ պատուարաւ, եւ լարաբաժնեցեալ ի ներքս յորձապատիւք ճանապարհօք եւ համանմանիւք: Չորք եղեն անկարելունք մանաւանդակունք եւ ուշիմազոյք. այսինքն կրէտականն, Եգիպտականն, Լէմինիականն եւ Իգալականն: Եւ վիճակեցաւ այսմ անուան, ի գործոցն իւրոց արտակացելոց, իբր ասիցէր. անկար ի ներքս, ոչ գոյ ճար արտեւանելոյ: Քանզի ի համանմանութենէ յորձապատեաց եւ բազմապատկից ճանապարհացն, դժուարին իմն էր եւ գրեթէ անկար զելն նորին գտանել, եթէ անգամ մի եւ եթ ներամտէր ոք. զի որքան ջանայր խուզմամբ հպիլ յ'որ մտեայն էր, այնքան տարաձգիւր յելիցն եւ մոլորեցեալ վերադառնայր ի նոյն տեղի: Ուստի եւ արտասանեն վիպասանք, զերծեցեալ Թէզնու ասթեւագի ի յանկարելոյ անտի կրետականէ, (յ'ես սատակելոյն զմինսօցոյն առասպելական,) թելիւն Արիատնեայ, փաղանշանելով զուղիսն, ընդ որ անցեալն էր: Աստուտ, ամենայն իբք դժուարիմացք եւ խրթնածածուկք եւ իրակութիւնք աշխատայորք, յարանուանին անկարելունք. այնու, զի չկարէ, կամ դժուարապէս ըմբռնել մարթանայ միտս մարդկային, զիմաց եւ զհուն նոցին. 'ի Յունաց եւ 'ի Լաթինացոց Լուպիլինթուս վերածայնի: (Չեորածութիւն յերկինս, թարգմանեցեալ ի հոյակական բարբառ, ի Վարդանայ Յունանեան, յամի ներմարմնութեան տեառն 1671 եւ ըն թուարեւոյթեան Արամազնուոյ 1120, յԱմսդէլրոզամի, էջ 292—4):

Արդ ծանօթութիւնս այս յառաջագայի ի հնգից զգայութեանց գլխաւորաց մարմնոյ, այսինքն ի տեսակէ, որ է յաչս, ի լսակէ՝ որ է յականջս, ի հոտոտակէ՝ որ է ի քիմս, ի ճաշակէ՝ որ է ի բերանն եւ ի շօշափակէ՝ որ է ի ձեռս: Յառաջագայի եւս նոյն ծանօթութիւնս ի յիմացողականէ զգայութեանէ, որ է ի յերեւակայութիւնս մտաց եւ ասի նախկին պատճառ եւ առաջին սկիզբն սիրոյ: Իսկ ըստ Արիստոտէլի՝ ըն զիրս հոգեաց եւ ըն

զիրս զգայութեան եւ զգալեաց, յառաջագայի ծանօթութիւնս այս յաչաց: Վասն զի նախ շարժի կամն իւրաքանչիւրոյ ուրուք ի ծանօթութենէ յայսմանէ, յետոյ շարժի յիշողութիւնն, զկնի որոյ դառնայ կամն եւ սկսանի հաճիլ ի յայն եւ ապա երեւակայութիւն իրին. որով ներընկալաւ հոգին զայսպիսի հաճութիւն, շարժէ զիղձ իմն ի սրտի առ ի ստացումն իրին հաճոյացելոյ: Իսկ իղձս այս ծնանի ի յուսոյ իմեքէ կարողանալոյ, ունել զայն, որում հաճեցաւ: Եւ յայսմանէ ըղձէ յառաջագայի զերազանց զօրութիւնն սիրոյ, որ է հիմն եւ արմատ բնաւից զօրութեանց, զի ըստ փորձացուցման սրբոյն Քոմայի եւ այլոց փիլիսոփայից, ոչ ոք զօրութիւն կարէ զու առանց սիրոյ: Ըստ որում և սուրբն Պօղոս յայանաբանէ. ըն արակոջ որ առ Կորընթացիս: Եւ այսպէս համայնք զօրութիւնք սկսանին ի ճանաչմանէ սիրոյ: Ուստի եթէ ոք կամիցի թարց սխալման զանազանել զզօրութիւնն ի մոլութեանց, պարտի զգուշապէս նշմարել, թէ ըն կիտում, նորում կամի առնել, շարժիցի ի սիրոյ, թէ ոչ. եւ այսպէս հաւաստեաւ կարասցէ իմանալ զճշմարտութիւնն իմն եւ զայս, զի ըստ սրբոյն Օգոստինոսի, պարտ է պահել զկարգ 'ն ամենայնում սիրելութեան: Քանզի նախ սիրելի է Աձ, երկրորդ ծնողքն եւ հայրենին, եւ երրորդ մերձաւորքն եւ այլք ի մարդկանէ ըստ իւրաքանչիւրոյ աստիճանի:

(Նորադոյն ծաղիկ զօրութեանց, թարգմանեցեալ ի Յունանսիսէ վարդապետէ Կոստանդինուպօլսեցւոյ, Հոտմ 1671 թ., էջ 12—15):

Պատանեկաց յերկրուկն վար, նոցին իսկ ըն բնաւս կողմանս ներմիտոզն բար, ընտանեաց յսկզբան փափկակի դիպմամբ, ճշմարտագոյն քան աստեղաց ի ծնիցեալս փշմամբ, բազմիցս, նամենայնում ներմակակերպին:

(Չտութիւն հայկարանութեան, էջ 203):

Այժմ պետք է քննենք լատինարան հայերենի հորինվածությունը: Այս մասին մենք ունինք մի պատվական առաջնորդ. դա է լատինարան գրող Հովհաննես Հոլով վարդապետի քերականությունը, որ կոչվում է Չտութիւն Հայկարանութեան (Pvritas linguae armenicae), տպված Հոլովում, 1674 թ., որին և հետևում ենք քայլ առ քայլ*), թվելով միայն այն փոփոխությունները, որ մտցրին լատինարանները մեր լեզվի մեջ: Հար-

*) Մասամբ նաև Չարբհանայան, Պատմ. հայ. գրք. Բ. 51—53:

կազմը դեպքում լրացնում ենք մեր քաղվածքները այլ աղբյուրներից, հրատարակված առձեռն գրականություններից:

Հոլովման մեջ եղած նորմուծություններն են.

1) Ներգոյականի կազմությունը. — բացի սովորական ձևից լատինարան հայերենը ընդունում է նաև ըն նախամասնիկի կամ նախդիրի գործածությունը թե եզակիում և թե հոգնակիում: Ձայնավորով սկսող բառերի մոտ այս մասնիկը դառնում է ն և ուղղակի կցվում բառին: Օրինակ. Եզ. — ըն բանում, նուկում, նարեան, նաղբեր (աղբյուրում), նԱղամում, նՍասյոջ, նանձին, նաստեղ, ընհօր, ընկնոջ, ըն գեղջ, ըն տեառն, նաուր, ըն քեռ, ըն թուռջ:

Հոգ. — ըն բանս, նոսկիս, ըն միաս:

Ինչպես երևում է այս օրինակներից, ըն նախդիրը ինքնին բավական չէ կազմելու համար ներգոյական հոլովը, այլ ինչպես լատիներենում, պահանջում է որ գոյականն էլ տրական կամ ավելի ճիշտ հին ներգոյական հոլովաձևն ունենա. սրա համար էլ կցվում են եզակիում ում, -ոջ, -եր, -եղ ձևերը, իսկ հոգնակիում -ս:

Ներգոյականի այս կազմությունը միայն գոյականների հատուկ չէ բնականաբար, այլ նաև ածականներին, միջակ անուններին և դերբայներին. օր. ոմն — նումեմն. նումեք, նիմիք, — հգ. նոմանս.

ձր, — ձ. — նորում, նժում — հգ. նձրս, նձյս.

Գերբայ. — նելն (ի լինելն), նեղանիլն, ըն լինելն, ըն սիրելն, կրավ. ըն սիրիլն, ըն լուահալն, ըն լնուլն:

Գերանուններից կա միայն՝

Նիւրեան, նիւրեանս, նայամիկ, նայսոսիկ, նինքեան, ներնոյնում, նիմում, նիմս և այլն, իսկ անձնական դերանունների մեջ մուտք չի գտած:

2) Ի հոլովումը ընդհանրացել է և այնպիսի բառեր, որոնք թեև բ են հանգում, բայց գրաբարի մեջ հոլովվում են -ու հոլովմամբ կամ այլ ձևով, լատինարան հայերենում հոլովվում են -եր ձևով. ինչ.

արտօսը — արտօսեր

ծաղը — ծաղեր

մեղը — մեղեր

կղմինտը — կղմնտեր

քաղցը — քաղցեր, բց. ի քաղցերէ, գրծ. քաղցերբ.

3) Անեզական բառերը ք-ի հապավումով վերածված են եզակիի. ինչ. կեան, միտ, աչ, վար, մեղ, փառ, օրէն, կամ, բար, արտեւանուն, հայրենի (փոխանակ ասելու կեանք, միտք, մեղք, փառք, օրէնք, կամք, աչք, վարք, բարք, հայրենիք). — նույնպես հոլովման ժամանակ՝ ըն մտում, հոգ. ըն միտս, ներ մեբում խօսում (մեր լեզվի մեջ):

Սրա հակառակ անհոգնական անունները գործածում են իբր հոգնակի. ինչ. Չկարս քոյինս Մարդիկք:

4) Ածականների աստիճանները.

Բաղդատականի համար հատկացված է զոյն մասնիկը, իսկ գերադրականի համար գունեղ. ինչ.

խոնարհ խոնարհագոյն խոնարհագունեղ

սպիտակ սպիտակագոյն սպիտակագունեղ

բարի բարեգոյն բարեգունեղ

Սրանք համաձայն լատիներենի կարող են տալ մակբայներ. ինչ. որոշագունեղապէս:

5) Ածականների համաձայնությունը. —

Ածականը գրաբարի մեջ հետադաս լինելու դեպքում համաձայնվում է, նախադաս լինելու դեպքում չի համաձայնվում: Լատինարան հայերենի մեջ ածականը չպարտի համաձայնիլ ընդ գոյականին միշտ և ամենուրեք, այսինքն «չ միայն մինչ հետևի գոյականին, այլ և մինչ նախադրի նմին»^{*}). սրա համար էլ գտնում ենք միշտ հայերենի համար խորթ դարձվածքներ. ինչ.

անուանց յատկից արականաց շար. հտ. անուանց»

ի յեզականում սեռականում «եզ. սեռ. -ում»

ըն յոգնականում թուռջ «հգ. թվում»

ըն չափաւորի քաղցեր

ի վերայ վախճանականաց տառից բայից հրամայականաց.

ըն վերջնում անկատարից բանից

ըն վերջնում աւարտեցելոց բանից

նազգում իւրաքանչիւրում

յատուկ է հմտի քերականի արտաբերելն և արտադրելն զայն, որ ի ներտրամագրեցելում բանում:

յորժամ խորհիմք զներտրամագրեցելոյ բանէ.

յարմարից բայից անկիցն գտեցելոց պատշաճաւորութիւն.

^{*}) Զաութիւն Հայկաբանութեան, էջ 161:

Միջակ անուններից նշանակելի են՝ իւրաքանչ, երկաքանչ, որոնցից տարբեր են իւրաքանչիւր, երկաքանչիւր:

Բայերի մեջ, ինչպես սպասելի էր, նորմուծութունները ավելի մեծ են քան մյուս մասունք բանիների մեջ.

1) Լծորդութուններ.— Գրաբարի չորս լծորդությանց տեղ լատինաբանները ընդունում են քերականության մեջ 3 լծ. եմ, ամ, ում. բայց այս չի նշանակում, թե ջնջում են երկրորդ լծորդությունը. ոչ. այլ վերապահում են սովորաբար կրավորականին:

2) Բայերի ժամանակներն ու ձևերը.—

Հայերենը, ինչպես գիտենք, ունի 10 բայական պարզ ձև. Սահմանական եղանակի ներկա, անկատար, կատարյալ և ապառնի, Հրամայականի ներկա, Ստորադասականի ներկա, Աներեւոյթ, ներկա, անցյալ և ապառնի դերբայ: Բողադրյալ ձևերից սովորաբար կարող է կազմել անցյալ և ապառնի դերբայներից հարակատար և վաղակատար ձևեր: Այսպեսով ընդամենը լինում է 14 ձև:

Լատինական բայը շատ ավելի հարուստ է հայերենից. նրան հետևելով լատինաբան հայերենի հեղինակներն էլ հնորել են՝

1) Հրամայական եղանակի ապառնին.

2) Ստորադասականի անկատար, դերակատար և ապառնի.

3) Ըղծականի ներկա = ապառնի, անկատար, կատարյալ = հարակատար, գերակատար.

4) Աներևոյթի կատարյալ և ապառնի:

Ահա սիրեմ բայի ամբողջ պատկերը ըստ լատինաբան հայերենի.

Սահմանական եղանակ

Ներկա—սիրեմ

Անկատար—սիրէի

Կատարյալ—սիրեցի

Հարակատար—սիրեալ եմ

Գերակատար—սիրեալ էի

Ապառնի—սիրեցից.

Հրամայական եղանակ

Ներկա—սիրեմ

Ապառնի—սիրեսցիք.

Ստորադասական եղանակ

Ներկա—եթէ սիրիցեմ

Անկատար—եթէ սիրիցէի

Կտր.—հարակ.—եթէ սիրեալ իցեմ.

Գերակ.—եթէ սիրեալ իցէի

Ապառնի—եթէ սիրեալ եղէց.

Ըղծական եղանակ

Ներկա և ապ.—երանի թէ սիրիցեմ.

Անկ.—երանի թէ սիրիցէի.

Կտր. և հրկ.—երանի թէ սիրեալ իցեմ

Գերակ.—երանի թէ սիրեալ իցէի.

Աներևոյթ եղանակ

Ներկա—սիրել

Կտր.—հրկ. գեր.—սիրեալ գոլ.

Ապ.—սիրելոց գոլ

Ընդունելություն

Ներկա—սիրող

Կտր. հրկ. գեր.—սիրեալ

Ապ.—սիրելոց

Խոնարհման այս պատկերը հորինելու համար լատինաբանները օգտվել են մի կողմից գրաբարի պաշարից և մյուս կողմից հունաբան դպրոցի նորմուծութուններից: Օրինակ. հրամայականի ապառնին կազմելու համար օգտագործել են գրաբարի հրամայական ներկայի երկրորդ ձևը, առաջինը վերադասելով միայն ներկային. այսպես.

Հրամ.

Ներկա

սիրեմ

սիրեցիք

Ապառնի

սիրեսցիք, սիրեսցեա

սիրեսցուք

սիրեսցիք

Ստորադասականի անկատարի համար վերցրել են հունաբանների կազմած ձևը.

ա լծ.	բ լծ.	գ լծ.
Սիրիցէի	լուանայցէի	լնիցէի
սիրիցէիր	լուանայցէիր	լնիցէիր
սիրիցէր	լուանայցէր	լնիցէր
սիրիցէաք	լուանայցէաք	լնիցէաք
սիրիցէիք	լուանայցէիք	լնիցէիք
սիրիցէին	լուանայցէին	լնիցէին

Մյուս ժամանակները կազմված են գրաբարից հարմարեցնելով:

Ըղձական եղանակը անունով միայն եղանակ է և ստեղծված է միայն հարմարելու համար լատինականին: Այստեղ ըղձական և ստորագրասական միևնույն ձևերն ունին. միայն ըղձականի սկիզբը դրվում է երանի թէ, իսկ ստորագրասականի սկիզբը՝ եթէ:

Գրաբարից հարմարեցրած են նաև աներևույթի երկու նոր ձևերը (կատարյալ և ապառնի):

Խոնարհման միջոցին նորմուծություններ չեն եղած. միայն ում լծորդության խոնարհման ժամանակ ներկայի և անկատարի ու վերածվում է տեղ-տեղ ոյ. այսպես՝ լնում բայից՝

- ներկ. լնում, լնուս, լնու
- լնումք, լնոյք, լնուն,
- անկ. լնոյի, լնոյիր, լնոյր
- լնոյաք, լնոյիք, լնոյին.

զարթնում բայից՝

- ներկ. զարթնում, զարթնուս, զարթնու
- զարթնումք, զարթնոյք, զարթնուն.
- անկ. զարթնոյի, զարթնոյիր, զարթնոյր
- զարթնոյաք, զարթնոյիք, զարթնոյին.

Դերբայները հոգնակիում համաձայնվում են.
 սիրեալք եմք, սիրեալք էք, սիրեալք են.
 սիրեալք էաք, սիրեալք էիք, սիրեալք էին
 սիրեալք իցեմք, սիրեալք իցէք
 սիրեալք իցէաք, սիրեալք իցէիք և այլն:

Անկանոն բայերի խոնարհումը տեղ տեղ կանոնավորված է. օրինակ՝

- Հսեմ—կտր. լսեցի
- ապ. լսեցից
- հրմ. լսեա
- ստոր. լսիցեմ
- հրկ. լսեալ եմ.

- Ճանաչեմ.—կտր. ճանաչեցի
- ապ. ճանաչեցից
- հրմ. ճանաչեա:

Տամ բայը դարձել է տրեմ, և խոնարհվում է ըստ այսմ՝ տրեմ, տրէի, տրեցի, տրեալ եմ, տրեալ էի, տրեցից, տրեա, տրիցեմ, տրիցէի:

Մեղանչեմ.—կտր. մեղանչեցի, ապ. մեղանչեցից, հրմ. մեղանչեա:

Ունիմ.—կտր. ունեցի, ունեցեր, ունեաց, ունեցաք, ունեցիք, ունեցին, հրկ. ունեալ եմ, ապ. ունեցից, հրմ. ունեա:

Լատինարան հայերենի մեջ ճանաչեմ և ծանիմ, ունիմ և կալնում տարբեր տարբեր բայեր են:

Կրավորականի կազմությունը.—

Ինչպես հայտնի է, գրաբարի մեջ կրավորականի կազմությունը բոլոր բայերի համար ընդհանուր և միաձև չէ. կան բայեր, և կամ բայերի զանազան ժամանակներ, որոնք հասարակ են, այսինքն՝ թե ներգործականի և թե կրավորականի համար միևնույն ձևն ունին: Ինչպես հունարանները, նույնպես և լատինարանները ձեռք զարկին այս միանմանությունը վերացնելու և ամեն ներգործական ձևի դեմ աշխատեցին հնարել համապատասխան կրավորական ձև: Առաջին լծորդության կրավորականն է միշտ իմ.—երկրորդ (ամ) լծորդության կրավորականն է իմ կամ անիմ. հետևյալ ձևով.

- | | |
|-----------------------|-------------------|
| բանամ—բանիմ | հաւատամ—հաւատանիմ |
| թանամ—թանիմ | իմանամ—իմանիմ |
| բառնամ—բառնիմ | խոստանամ—խոստանիմ |
| որսամ—որսանիմ | լամ—լալիմ |
| աղամ—աղանիմ | տամ—տուլիմ |
| ողբամ—ողբանիմ և այլն: | |

Երրորդ (ոււմ) լծորդութեան կրավորականն է անիւմ. օրինակ.

- հեղում — հեղանիւմ
- առնում — առնանիւմ
- զեղում — զեղանիւմ
- թողում — թողանիւմ
- ընկենում — ընկենանիւմ
- կլում — կլանիւմ
- կալնում — կալնանիւմ:

Թոնարհման ժամանակ Ա լծորդութեան կրավորականը գրեթէ անփոփոխ է. միայն անկատար ժամանակները ստանում են մի ավելորդ ե, հետևյալ ձևով.

սահմ.	ստոր.
սիրեէի	սիրիցեէի
սիրեէիր	սիրիցեէիր
սիրիւր	սիրիցիւր
սիրեէաք	սիրիցեէաք
սիրեէիք	սիրիցեէիք
սիրեէին	սիրիցեէին:

Բ լծորդութեան կրավորականի պատկերն է.

- ներկ. — լուանիւմ, լուանիս, լուանի,
- լուանիւմք, լուանիք, լուանին.
- անկ. — լուանէի, լուանէիր, լուանիւր,
- լուանէաք, լուանէիք, լուանէին.
- հրկ. — լուանեցեալ եմ...
- լուանեցեալք եմք...
- գերակ. — լուանեցեալ էի...
- լուանեցեալք էաք...
- ստոր. — լուանիցիւմ, լուանիցիս, լուանիցի,
- լուանիցիւմք, լուանիցիք, լուանիցին.
- անկ. — լուանիցէի, լուանիցէիր, լուանիցէր,
- լուանիցէաք, լուանիցէիք, լուանիցէին.
- կտր. հրկ. — լուանեցեալ իցեմ...
- լուանեցեալք իցեմք...
- գերակ. — լուանեցեալ իցէի...
- լուանեցեալք իցէաք...

Գ լծորդութեան կրավորականի պատկերն է.

- ներկ. լնանիւմ, լնանիս, լնանի
- լնանիւմք, լնանիք, լնանին.
- անկ. լնանէի, լնանէիր, լնանիւր
- լնանէաք, լնանէիք, լնանէին.
- կտր. լցայ, լցար, լցաւ,
- լցաք կամ լնանեցաք, լցայք, լցան.
- հրկ. լնանեցեալ եմ...
- լնանեցեալք եմք...
- գերակ. լնանեցեալ էի...
- լնանեցեալ էաք...
- սպ. լցայց, լցցիս, լցցի
- լնանիցուք, լցցիք, լցցին.
- հրմ. լցիր, մի լնանիր կամ մի լնանիցիս
- լնանիցի, մի լնանիցի
- լցարուք, մի լնանիք կամ լնանիցիք
- լնանիցին, մի լնանիցին.
- հրմ. սպո. լնանիջիր կամ լցցիս, մի լնանիցիս
- լցցի, մի լնանիցի
- լնանիցուք, մի լնանիցիւք,
- լնանիջիք կամ լցցիք, մի լնանիցիք
- լցցին, մի լնանիցին.
- ստոր. ներկ. լնանիցիւմ, լնանիցիս, լնանիցի.
- լնանիցիւմք, լնանիցիք, լնանիցին.
- անկ. լնանիցէի, լնանիցէիր, լնանիցէր
- լնանիցէաք, լնանիցէիք, լնանիցէին.
- կտր. լնանեցեալ իցեմ...
- լնանեցեալք իցեմք...
- գերակ. լնանեցեալ իցէի...
- լնանեցեալք իցէաք...
- սպո. լնանեցեալ եղէց կամ լիցիւմ...
- լնանեցեալք եղիցուք կամ լիցուք...
- աներևութ ներկա. — լնանիլ.
- կտր. հրկ. գեր. — լնանեցեալ գոլ.
- սպ. — լնիլ, լնանիլ.

Այնու ամենայնիվ լատինաբանները չկարողացան բոլոր հասարակ բայերը ջնջել և պարտավորվեցին նրանց մի մասը գոյությունը ճանաչել. այսպես ըստ լատինաբանների հասարակ բայ է խոստովանիմ, որ սահմ. ներկայի, կատարյալի, ապառնիի, հրամայականի և ստորադասականի ներկայի մեջ թե ներգործական և թե կրավորական միևնույն ձևն ունի. մյուս ժամանակներում զանազանվում է նախորդների ոճով. ինչ.

անկ.—ներգ. խոստովանէի, կրավ. խոստովանեցի.
հրկ. » խոստովանեալ եմ » խոստովանեցեալ եմ
գեր. » խոստովանեալ էի » » էի
ստոր. անկ. » խոստովանիցեի » խոստովանիցեցի.

Անկանոն բայերի կրավորականի մեջ հիշատակելի ձևերն են. Ուտել.—անկ. ուտեէի, կտր. ուտեցայ, հրկ. ուտեցեալ եմ. գերկ. ուտեցեալ էի, ապ. ուտեցայց:

Լսեմ.—անկ. լսեէի, կտր. լսեցայ, հրկ. լսեցեալ եմ, գերկ. լսեցեալ էի, ապ. լսեցայց:

Ճանաչեմ.—անկ. ճանաչեէի, կտր. ճանաչեցայ, հրկ. ճանաչեցեալ եմ, ապ. ճանաչեցայց:

Տամ.—տրիմ, տրեէի, տրեցայ, տրեցեալ եմ, տրեցեալ էի, տրեցայց, տրիր, տրիցիմ, տրիցեէի.

Ունիմ.—կտ. ունեցայ, ունեցար, ունեցաւ... հրկ. ունեցեալ եմ, ապ. ունեցայց, հրմ. ունիր:

Բառակազմության համար ընդունվում են հունարան զբարոցի բոլոր տեսակի նախամասնիկները. ինչ. ապ, առ, ներ, արտ, գեր և այլն: Սրանց համար ահա թե ինչ է ասում Հոլովը. Որոց բնաւից կիրառութիւնն եղել հնարեցեալ ի բանաստեղծից ոչ միայն առ ի գեղեցկացուցանել գշարագրութիւնս, այլ և առ ի գտել եվ պարզել զգիտաւորութիւնս արտագրութեանց եւ առ ի կատարունակել զմերայինն հայկարանութիւն: Քան զի միեւնույն բառն առակցութեամբ սոցին ելուզանել կարէ զանազանս իմացուածս. սրգոն. ենթադրութիւն, ստորագրութիւն, վերագրութիւն, արտագրութիւն, տրամագրութիւն, տարագրութիւն, շարագրութիւն, փաղագրութիւն, մակագրութիւն, ընդդիմագրութիւն, առագրութիւն, ներագրութիւն, յարագրութիւն, միջագրութիւն և այլն*):

Այսպես և այլ ոճով կազմված են բազմաթիվ բառեր, ինչ. հոլովախնդրու, կատարունակել, ստորակցական (վիս. ստորադաս-

*) Զուտթ. հայկ. էջ 155:

սական), պարբեր «շուրջը» (օր. պարբեր գարեգակամբն), երկպատկապէս «երկու ձևով», համահաստուածն, եզերեցեալ (յանգած, վերջացած, իբր ֆր. terminé). օր. եզերեցեալ ի լի (լի հանգող), ստորանկիլ, մանաւանդականութիւն, նույն իսկ փոխ են անել զուս լատիններն բառեր. ինչ. լա. ledere «Ֆիասել» բայից լետեմ, լետես, լետէ*):

Ահա այս է լատինարան հայերենը:

Պետք է կարծել, որ լատինարան հայերենը, որ ծնունդ էր Հոմի և կաթոլիկ հայերի, տարածվեց միայն Հոմում և կաթոլիկ հայերի շրջանում: Ընդհակառակը: Որովհետև պապական իշխանությունը այն ժամանակ իր վրա էր վերցրել ամբողջ եվրոպայի գրականության ցենզուրան, ուստի նույն իսկ այն գրքերը, որոնք հրատարակվում էին լուսավորչական հայ վարդապետների ձեռքով, Հոմից դուրս, ուրիշ երկիրներում, նույնպես ենթարկվում էին պապական գրաքննության և վերածվում լատինարան հայերենի: Այսպեսով լատինարան հայերենը բռնի և պարտադիր կերպով տարածվում էր ամբողջ հայ գրականության մեջ: Քիչ քիչ այն կարծիքը կազմվեց հայ գրապետների շրջանում, թե լատինարան հայերենն է բարձր ու գիտնակալ լեզու, որին պետք է ձգտեն բոլոր մեծ գրողները:

Ի՞նչ եղավ լատինարան հայերենի վախճանը:

Ամեն մի լեզու, որ կեղծ է և անհատական քմահաճույքի արդյունք, ուշ թե շուտ պիտի վերացվի: Այսպես եղավ նաև լատինարան հայերենը: Նա ապրեց ու գործեց երկու ամբողջ դար. սկիզբ առնելով Հոմում Կոնստանդնուպոլիսի կաթոլիկների մոտ՝ 1580-ական թվերին, ապրելով իր լավագույն շրջանը ժի դարում, երբ բոլոր հայերի համար էլ դարձավ բարձր ու գիտնական լեզու, իր մայրամուտն սկսեց Վենետիկում, Մխիթարյանների մոտ, ժԸ դարին: Մխիթար արքան, կրոնի մեջ թեև հետևող Հոմի, զգաց ու հասկացավ թե լատինարան հայերենը նորամուտ և անհարազատ մի լեզու է (տես ՀՀԲ, յոջ.), և թեև ինքն էլ տվեց իր ժամանակի տուրքը, բայց ակամա: Նա հորդորում էր իր աշակերտներին հետզհետե հեռանալ այդ լեզվից: Նրանք կատարեցին իր պատվերը: Առաջին մեծ հարվածը տվավ Հ. Վրթանձու Ասկերյան, որ 1751 թվին հրատարակեց Կովզնոյի փիլիսոփայության չորս հատորները, «Թարգմանեալ զգուշութեամբ ըստ հայկազնեան լեզուիս ոճոյ»: Չամչյանի քերականության հրատարակութեամբ (1779) մեռավ լատինարան հայերենը:

*) Զարբ. անդ. էջ 53:

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐՔԱՌՆԵՐԸ

Այն բոլոր ձևափոխութիւնները, որոնց ենթարկվում էր հայերենը, բնականաբար միաժամանակ և միանման կերպով չէին առաջանում Հայաստանի ամեն մի անկյունում: Այսպեսով այն տարբերութիւնները, որ գոյութիւն ունեին դեռ Ե դարում հայ ժողովուրդի խոսած լեզվի մեջ՝ Հայաստանի զանազան վայրերում, հետզհետե ավելի մեծացան ու շեշտվեցին: Երբ սկսեց հայերի մեծ արտագաղթը դեպի զանազան կողմեր, հատկապես դեպի հյուսիս և դեպի արևմուտք, հաղորդակցութեան կապը ներքին և արտաքին հայութեան միջև կարվեց: Ամբիւսցանք սրա վրա հայ պետական կյանքի ջնջումը, մի քաղաքական կենտրոնի բացակայութիւնը, տարբեր տիպի օտար ազդեցութիւններ զանազան երկիրների հայ գաղութներում և վերջապես կրթութեան պակասը,— ահա այն պատճառները, որոնք առաջ բերին փոքրաթիվ հայ ժողովուրդի մեջ համեմատաբար մեծաթիվ բարբառներ:

Այս բարբառների թվումն ու դասավորութիւնը տալ սկսեցուց առաջ, անհրաժեշտ է մի անդամ ևս շեշտել այն, ինչ որ ասացինք վերը, էջ 123, Ե դարի հայ բարբառների բաժանման և նկարագրութեան առթիվ: Այսինքն թե ինչ է ընդհանրապես բարբառը, ինչ է ենթաբարբառը կամ դավառականը, ուր է սկզբում և վերջանում նրանց սահմանագիծը, ինչն է որոշում և տարբերում նրանք իրարից կամ միացնում և զուգորդում իրար հետ: Իրտինք որ լեզվաբանութեան մեջ այդպիսի ճիշտ, կտրուկ և իրական տարբերութիւններ չկան: Լեզուն ներկայայնում է անթիվ անհամար զանազանութիւնների մի շարք, որոնք մի կետից սլանալով քանի հեռանում, աստիճանաբար ու ավելի են շեշտվում: Ամեն մի վայրում կան մի խումբ երևույթներ, որոնք նույն կամ նման են այս հարևանի հետ, ուրիշ երևույթներ,

որոնք նույն կամ նման են այն հարևանի հետ. այսպես շարունակաբար: Բայց չկա մի վայր, որի լեզուն ամբողջութեամբ նույնը լիներ մի ուրիշ վայրի կամ ուրիշ վայրերի լեզվի հետ, որով կարելի լիներ առանձնացնել նրանք մի անվան ստակ: Խիստ կերպով արահայտվելով, բարբառների ու ենթաբարբառների միջև բացարձակ սահմանագիծ գտնել շատ դժվար է: Շատ բան էլ կապված է ոչ-լեզվաբանական հանգամանքների հետ, ինչպես օր. քաղաքական, կամ ազգային ու ցեղական: Այդ բաժանմունքները պիտու են հնարած միջոցներն են՝ աշխատանքի հեշտութեան համար: Այս բանը գեղեցիկ կերպով երևաց այն լեզվաբանական ատլասից, որ պատրաստեցին ֆրանսիացի լեզվաբանները իրենց երկրի համար և որի օրինակով պատրաստվում են նաև նմանները ուրիշ երկրներում:

Լեզվաբանական ատլասը գումարն է բազմաթիվ քարտեզների, որոնց յուրաքանչյուրը նվիրված է մի որևէ բառի կամ մի որևէ լեզվական (ձայնաբանական կամ քերականական) երևույթի: Զանազան գծերով նշանակված են ամեն մի երևույթի սահմանները: Համեմատելով այդ քարտեզները իրար հետ, տեսնում ենք, որ ո՛չ մեկը ճշտիվ չի նույնանում մյուսի հետ, և բոլոր սահմանագծերը խաչաձևում են իրար:

Առանձին բարբառների և ենթաբարբառների սահմանը որոշելուց ավելի հեշտ և ճիշտ է նրանց դասակարգութիւնը: Այստեղ գոնե կարելի է ընդունել որևէ խոշոր լեզվական տարբերութիւն իբրև հիմք և ըստ այնմ կատարել խմբավորումներ:

Ի՞նչ բան այդոք ավելի հարմար է ընդունել իբրև մի այսպիսի հիմք հայերեն բարբառների դասակարգութեան համար: Զայնաբանական տարբերութիւնները չեն կարող այս դեպքում որոշիչ դեր կատարել: Եթե առնենք օրինակի համար հայերենի պայթուցիկ բաղաձայնների հնչման կամ փոփոխութեան եղանակը զանազան վայրերում և այս կետը դարձնենք բարբառների դասակարգութեան որոշիչ նշան, կստանանք մի բոլորովին անմիտ խմբավորում: Օրինակի համար Նոր-Նախիջևանի բարբառը, որ քաղաքի և 5 գյուղերի հետ միասին կազմում է մի կատարյալ, մի բացարձակ ընտրոշ և անբաժանելի ամբողջութիւն, պայթուցիկ բաղաձայնների հնչման տեսակետով պիտի բաժանվեր երկուսի. քաղաքը իր երեք գյուղերով պիտի կազմեր մի խումբ (Նոր-Նախիջևանի բարբառ), իսկ մյուս եր-

կու գյուղերը պիտի երթային միանային հեռավոր մի բարբառի (թեկուզ խարբերդի կամ Սեբաստիայի), ըստ որում քաղաքը իր 3 գյուղերով գիտե զանազանել միայն թրթռուն և թավ աստիճանները (բ, փ, գ, ջ, կն), իսկ մյուսները սրանց հետ գիտեն նաև շնչեղ թրթռուն ձայներ (բ', գ', դ', կն): Նույնպես քաղաքը և իր 3 գյուղերը հայերենի պ, ք կն ձայները վերածել են հավասարապես բ, իսկ մյուս երկու գյուղերը վերածել են պ>բ, իսկ ք>բ':

Ուրիշ օրինակ. — Ենթադրենք վերցրինք հ>խ ձայնափոխությունը, որ գոյություն ունի զանազան բարբառներում և ուրիշ տեղեր չկա: Այս պարագային Մշո բարբառը, որ Բուլանդիի և Ալաշկերտի հետ մի ամբողջություն է կազմում, պիտի բաժանվի երկուսի. Բուլանդիսը պիտի միանա Վանի, Խոյի, Սարմաստի, Ուրմիայի և Մարաղայի բարբառներին, իսկ Մուշ և Ալաշկերտ պիտի միանան Խարբերդի, Երզնկայի, Պոլսի, Երևանի ևն բարբառների հետ: Տեսնում ենք, որ ձայնարանական տարբերությունները ծիծաղելի արդյունքների են հասցնում գործը և հարմար չեն իբրև հիմք ծառայելու մեր բարբառների դասակարգության համար:

Նույնչափ անհարմար են նաև համաձայնական և շարադասական տարբերությունները, որոնք նախ հաստատուն չեն և երկրորդ՝ բարբառից բարբառ այնքան էլ մեծ տարբերություն չեն ներկայացնում:

Իբրև ամենահարմար հիմք կարող են ծառայել ձևաբանական սարբերությունները, որոնք ավելի ակնհայտ և ամենքին էլ մատչելի են: Ո՞վ կարող է չգգալ քաղաքից եմ գալիս և քաղաքէն կուգամ նույնանիշ ձևերի տարբերությունը:

Յրանսիացի բարբառագետներն էլ գտան, որ բարբառների դասակարգության համար ձայնաբանական տարբերությունների վրա հիմնվել անօգուտ է և հրաժարվելով նրանից, անցան ձևաբանական կողմին (տես BSL հտ. 19 (1916), № 62, էջ 31):

Ձայնական տարբերությունների վրա կարելի է հիմնվել միայն այն դեպքում, երբ բարբառները շատ նման են իրար, ձևաբանական խոշոր տարբերություններ չեն ներկայացնում և եղած չեղածը մի քանի ձայնական տարբերություններ են: Այսպիսի երջանիկ լեզուներից է օրինակ՝ ռուսերենը, որ բարբառագետները բաժանում են օ հնչող կամ a հնչող խմբերի:

Բայց ամեն մի շնչին ձևաբանական տարբերություն էլ չի

կարելի բաժանման հիմք ընդունել և նրա վրա հիմնել դասակարգությունը: Այսպես, օրինակ՝ իրեն կամ իրան, ծառեր կամ ծառենր, գիճիք կամ գիճիճեր, գիճիի կամ գիճու, քաղաքների կամ քաղաքներու ևն ևն, ինչքան էլ որ իրարից տարբեր են, սակայն շատ անբավարար են բարբառների գիտական դասակարգության իբր հիմք ծառայելու:

Իմ կարծիքով դասակարգության իբրև լավագույն հիմք կարող է ծառայել խոնարհման մեջ սահմանական ներկայի և անկատարի կազմության եղանակը, որին բարբառախտաբար գուզադիպում է նաև ներգոյականի և երբեմն էլ բացառականի կազմության եղանակը: Բարբառների մի մասը հիշյալ բայական ձևերը կազմում է ում մասնիկով, մի ուրիշ, ավելի սովոր մասը՝ կը նախամասնիկով և մի ավելի փոքր՝ մաս էլ՝ ել վերջավորությամբ: Այսպես՝ բերում եմ, բերում էի, — կը բերեմ, կը բերէի, — բերել եմ, բերել եմ էք:

Ահա սրանք էլ կազմում են հայ բարբառների դասակարգության երեք մեծ ճյուղերը:

Խնդիր է, թե ի՞նչ անունով պետք է անվանել սրանցից յուրաքանչյուրը: Մեր մեջ սովորական էր դարձել երկու տեսակ անվանակոչություն. արևելյան և արևմտյան, կամ ռուսահայ և տաճկահայ: Այս անունները ըստ իս սխալ են և անհարմար, թեև շատ ընդունված և տարածված: Արևելյան և արևմտյան կոչումը սխալ է այն պատճառով, որ այսպես կոչված բարբառներից շատերը գտնվում են երկայնություն միևնույն աստիճանի վրա և իրար համեմատությամբ արևելք և արևմուտք չեն ընկնում: Օրինակի համար Աղբակ և Լոռի՝ երկուսն էլ գտնվում են երկայնության 44-րդ աստիճանի վրա. բայց առաջինը պատկանում է արևմտյան բարբառին, երկրորդը՝ արևելյան: Ավելի զարմանալի դեպքեր էլ կան. օրինակի համար Արզվինը շատ ավելի արևմուտք է քան Ախալքալաքն ու Լենինականը. բայց վերի բաժանմունքով Արզվինը արևելյան բարբառ է, մինչդեռ Ախալքալաք և Լենինական արևմտյան են:

Ռուսահայ և տաճկահայ բարբառներ հորջորջումը ավելի տարօրինակ է և իրականությունը լիովին անհամապատասխան: Նախկին Ռուսական կայսրության սահմաններում գտնված հայերից շատերը խոսել են և խոսում են տաճկահայ բարբառներ, ինչպես որ Տաճկաստանի հայերի մի մասն էլ խոսում է ռուսահայ բարբառներ: Օրինակի համար նախկին Ռուսական կայսրու-

թյան մեջ նոր-Նախիջևան, Ղբիմի թերակղզին, Սոխում, Բաթում, Ախալքալաք, Ախալցխա, Ալեքսանդրապոլ, Կարս և Նոր-Բայազետի գյուղերը խոսում են տաճկանայ բարբառները։ ընդհակառակը Տաճկաստանի մեջ Բայազիդ, Պուրտուր, Էօզեմիշ խոսում են ուսանայ բարբառները։ Բացի սրանից այս անվանակոչությամբ պարսկանայ, բուլղարանայ, հունգարանայ, ռումինանայ, եգիպտանայ, ամերիկանայ ևն գաղութները անտես են առնվում և ուսանայ կամ տաճկանայ անվան տակ մտնում անհարմար կերպով։

Իսկ այժմ, երբ Ռուսաստանի և Տաճկաստանի սահմանները դրվել են, երբ այլևս Հայաստանի մի մասը անկախ է, ուսանայ կամ տաճկանայ անունները բոլորովին անտեղի են և հնուժյան անճիշտ ննացորդ։

Իմ «Բարբառագիտության» մեջ (էջ 34) ես առաջարկել եմ մի ուրիշ նոր անվանակոչություն, որ ոչ միայն հիշյալ անպատեհություններից ազատ է, այլև այն առաջնությունն ունի, որ իր մեջ է կրում բարբառները տեսակը որոշող գլխավոր հատկությունը. այն է՝

Ա) Ում ճյուղ. այս անունով հասկանում ենք արևելյան կամ ուսանայ կոչված բարբառների ամբողջությունը։ Այս ճյուղին պատկանող բարբառների մեջ սահմանականի ներկա և անկատար ժամանակները, ինչպես և ներգոյական հոլովը շինվում են ում մասնիկով։ Այս մասնիկը նույն բարբառների հիմնական հատկանիշն է, ուստի և այդ բարբառները կարող են նույն անունով կոչվել։

Բ) Կը ճյուղ. այս անունով հասկանում ենք արևմտյան կամ տաճկանայ կոչված բարբառների ամբողջությունը։ Այս ճյուղին պատկանող բարբառները ներգոյական հոլով չունեն, ում մասնիկը չեն ճանաչում և սահմանականի ներկա և անկատար ժամանակները կազմում են կը մասնիկով. սա իրենց հիմնական հատկանիշն է, ուստի և կարող են կոչվել նույն անունով։

Գ) Ել ճյուղ. հիշյալ երկուսից տարբեր մի նոր ճյուղ է, որին պատկանող բարբառները ոչ ում ունին և ոչ կը, այլ սահմանական ներկա և անկատար ժամանակները կազմում են անորոշ դերբայի կամ աներևույթի միջոցով և եմ էական բայի հարադրություն, որ կարող է թե նախադաս լինել, և թե՛ հետադաս։ Նախադաս լինելու դեպքում բոլոր բարբառներն էլ նույն

ձևն ունեն. ինչ. ես իմ ուզելի (Մարաղա), ի՞նչ իմ անելի (Ուրմիա), պան ի անելի (Խոյ), վո՞րտի էս էրթի (Արդվին). բայց հետագաս լինելու դեպքում անորոշ դերբայը գանազան կրճատվենք է կրում և մինչև անգամ անորոշի վերջավորությունն լձայնը կորցնում է։ Այսպես, ունինք՝ խոսելիս էմ (Արդվին), ուզես ես (<ուզելիս ես, ուզելս ես) շուղում ես», թալես էր (<թալելիս էր, թալելս էր) «թալում էր» (Ուրմիա) ևն (տե՛ս իմ Քնն. Մարաղայի բարբառի, Երևան, 1926, էջ 267—270)։

Մեր մեջ բարբառների այս ճյուղը առնասարակ անտեսված էր, կամ ում ճյուղի տակ էր հասկացված։ Բայց նրանց անջատումը անհրաժեշտ է։

Այժմ թվենք այն բարբառները, որոնք ընկնում են հիշյալ երեք ճյուղերի տակ։

Ա) Ում ճյուղ

Այս ճյուղը ունի 7 բարբառ.

1) Երևանի բարբառ.— Խոսվում է Երևան քաղաքի և նրա շրջակա գավառների մեջ. հատկապես Երևանի, Էջմիածնի և Նոր-Բայազետի շրջաններում։ Հարավից տարածվում և մտնում է Պարսկական Ատրպատական, արևմուտքից Կաղզվան, մեջն առնելով նաև Սուրմալուի գյուղերը (բացի Իգդիրի շրջանից, որ Խոյի գաղթականություն է)։ Հարավ-արևմուտքից մտնում է Արևմտահայաստան և հասնում մինչև Հին-Բայազետ, հյուսիսային և հարավային կողմերից շփվում է Կարնո և Ղարաբաղի բարբառների հետ, որոնք իր այս երկու սահմաններն են գծում։ Հյուսիսային կողմից ձևացնում է մի առանձին կղզյակ Բորչալուի գավառում (Շամշաղի մի մասը, Լոսի և շրջակաները). իսկ Տփղիսի Հավլարար թաղը թեև Երևանցոց գաղութ է, բայց այժմ խոսում է Տփղիսի բարբառով։

Բարբառիս հիմնական կենտրոններն են՝ Երևան, Նորք, Քանաքեռ, Էջմիածին, Օշական և Աշտարակ։ Ունի երկու ենթաբարբառ, որոնք են Բայազետ (Հին և Նոր) և Աստապատ։ Բայազետի ենթաբարբառը պարունակում է Հին-Բայազետ քաղաքը Արևմտահայաստանում, Կաղզվան, Մակու (Պարսկահայաստանում) և Նոր-Բայազետ՝ Սեանի լճի կղերքը, իր 10 գյուղերով, որոնք Հին-Բայազետի գաղութ են։ Աստապատի ենթաբարբառը խոսվում է Հին-Ջուղայի մոտ Աստապատ գյուղում և իր շրջակաները։

Երևանի բարբառը ձայնախոսական տեսակետով շատ հավատարիմ է հին հայերենին. ունի ա, է, ը, ի, օ, ու ձայնավորները, բայց չգիտե էօ, իւ, ինչպես նաև ե, ո երկրարբառները: Բաղաձայններից բ, գ, դ, ձ, ջ պայթականները հնչվում են ջընչեղ թրթռուն, իսկ ուղականից հետո, ինչպես նաև օտար բառերի մեջ՝ պարզ թրթռուն: Անփոփոխ է մնում պ, կ, ա, ծ, և և փ, ք, ք, ց, չ բաղաձայնների հնչումը:

Ձևաբանական տեսակետով ներկայացնում է գրաբարից զանազան շեղումներ, բայց որովհետև արևելյան գրական լեզուն հիմնված է այս բարբառի վրա, ուստի սխալմամբ համարում են «ամենամաքուր» բարբառը:

Հակառակ իր մեծ կարևորության այս բարբառը դեռ ուսումնասիրված չէ. բայց կան բազմաթիվ գրվածքներ այս բարբառով, որոնցից ամենահարազատը, հինն ու ընդարձակը Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» է՝ Բանաքեռի խոսվածքով:

2) Թրիլիսի բարբառ.—Այս բարբառը այժմ խոսվում է Թրիլիսի հին և բնիկ հայ բնակչության մեջ. բայց կարելի է կարծել, որ նախապես տարածված լիներ Վրաստանի այլ մասերում էլ, հատկապես հայաշատ վայրերում: Այսօր էլ Թրիլիսի բարբառը հետզհետե կորչելու վրա է, զիջելով մի կողմից վրացերենին ու ռուսերենին և մյուս կողմից՝ հայ գրական լեզվին:

Այս բարբառի գլխավոր հատկություններն են հետևյալները. թրթռուն պայթականները հնչվում են պարզ և լիակատար թրթռումով. խուլերը արտասանվում են կոկորդի սեղմումով, նման վրացերենին. բաղաձայնների մեջ ավելացել է դ՝ ձայնը, որ հատուկ է վրացերենին: Բառասկզբում ե ձայնը դառնում է յի վերջավանդում՝ ի. ինչ. յիս, յիփ, յիզը, քիզ, գիշիր.— ո դառնում է բառասկզբում վու, վերջավանդում՝ ու (վուրփ, վո՛րթի, շուրս, գուրձ, փուր, նուր): Բացառական հոլովը կազմվում է էմեն մասնիկով (գրէմէն, տնէմէն, մահէմէն). հոգնակի ուղղականը՝ իր, նիք, սեռականը էրու, նէրու (գիվիր, նրնգիրնիր, նրնգիրնէրու).— ապառնի մասնիկն է կու, որ հաճախ ձայնավորի մոտ չի կրճատվում և մի քանի բայերի մոտ էլ կազմում է կօ. ինչ կու սիրիմ, կու առնիմ, կու ազատիմ, կօծիմ, կօնիմ, կօսիմ:

Այս բարբառով կան գրված բազմաթիվ աշխատություններ, շատերը գրական մեծ արժանիքով, ինչպես են՝ Սայաթ-Նովայի

տաղերը և Մուսղուկյանի Թատրերգությունները: Բարբառիս լավագույն ուսումնասիրությունն է Томсон, Грам. современ. армянского языка гор. Тифлиса (Պետերբ. 1890):

3) Ղարաբաղի բարբառ.—Բոլոր հայ բարբառներից ամենամեծն ու ամենատարածվածն է: Իր սահմանները փոփոխ են հյուսիսից մինչև Դեբեդեզ և Կովկասի վերջին ծայրերը, հարավից մինչև Թավրիզ, արևելքից մինչև Կասպից ծովի եզերքները, արևմուտքից Սևանա լիճը և Երևանի ու Կարնո բարբառների սահմանագիծը: Ղարաբաղի բարբառը այս սահմանից դուրս շատ հեռու տեղեր էլ է գնացել. Փոքր-Ասիայում, Չմյուռնիայի և Այդրնի մոտերը կա մի հայ գաղութ, որ մի երկու դար առաջ Ղարաբաղից հեռանալով հաստատվել է այս տեղերը: Թեև հիշյալ գաղութի մեծ մասը հետո տաճկախոս է դարձել, բայց երկու տեղ՝ Բուրդուր և Էօզեմիշ դեռ իրենց մայրենի բարբառը անկորուստ պահում են: Կասպից ծովի արևելյան երեսից մինչև Թուրքեստան և Սիրիեր ցրված հայ գաղթականների մեծ մասն էլ Ղարաբաղից են:

Ըստ այսմ Ղարաբաղի բարբառի գրված գլխավոր տեղերը հետևյալներն են. Շուշի, Գանձակ, Նուխի, Բաքու, Դեբեդեզ, Շամախի գյուղերը, Աղստաֆա, Դիլիջան, Ղարաքիլիսա, Ղազախի գավառը, Բոլնիս-Սաչեն, Գորիս, Չանգեզուր, Ղափան, Պարսկաստանում՝ Ղարաղաղի ամբողջ գավառը, Թավրիզի հյուսիսային կողմում՝ Մուսումբար հայ գյուղը, Թավրիզի Լիլավա թաղը, որ Մուսումբարի և Ղարաղաղի գաղութ է և Տաճկաստանում էլ՝ Բուրդուր և Էօզեմիշ: Ղարաբաղի բարբառի ենթաբարբառներն են՝ Ղարաղաղ և Ղաղախ:

Բարբառիս հիմնական մասի բնորոշ գծերն են.

Ձայնական մասը հարստացած է մի քանի հնչյուններով, որոնք չկան գրաբարում. այսպես՝ ո, ը, էօ, իւ, գյ, կյ, քյ, հյ.— ա դառնում է հաճախ ո, է (ինչ. հոնդ, լուվ, պէն, տէ՛րտակ).— ե, է դառնում են ի (ինչ. թիլ, իվիլ, տիրէվ, ցիրէվ, տիզ «դեզ»).— ի դառնում է է, ը (ինչ. քէթ, տա՛րէ, յէթօէ, լղէ, հէնգյ, մրէս, սրէրտ).— ո դառնում է էօ, ու (ինչ. չէօթ, կյէօղ, կյէօթ, տուրուն, յէխուտ, կո՛ւտէմը).— վ ձայնից հետո և բառասկզբում ո դառնում է ը (ինչ. թքա՛վրէր, շրնրնա՛վրէր, վրէննը, վրէխնար, վրէսկրէն).— ու դառնում է օ, իւ, էօ (ինչ. շօն, բօթ, բօօ, բօթթ, ծիւկըր, ծիւ, նիւր, հէօլ, էօրփթթ, կյրլէօխ).— ոյ դառնում է իւ

(ինչ. պիւն, րիգիւ, կյո'պիւտ).-- ով դառնում է ավ (կավ, ծավ, խրավէլ, աղավ, փրէղավ).-- բոլոր ձայնավորները շեշտից առաջ սղվում են. ինչ. ըվրտա'րան, դա'շանք, բրբսպըշտո'թուն, սո'ր «այսօր».)-- բոլոր թրթռուն պայթուցիկները դառնում են խուլ և միայն ուղականից հետո պահվում են. ինչ. պէ'րան, պէն, տէօնը, ճէ'ղաց, պիրթ, պըմբա'սէլ, պէ'մբակ, տընէղ. -- հ ձայնը բառակզրում ու-ից առաջ՝ փակ վանկում դառնում է վ (վընդ, վընտ, վընթ).-- գրաբարի և հանգը հաճախ պահվում է (տէօնը, ծիւկեր, մօկեր, ճօնը, կարեր, մաներ «մատն», վընէնը «ոտն», սառնը կն):-- Ֆ հնչումը մտած չէ բարբառիս մեջ և հին հայերենի նման դեռ այժմ էլ օտար բառերի ֆ ձայնը դառնում է փ (փա'րբիկ, փա'միլ, փոս, փոնոր, փայտօն):-- Հոլովման մեջ սեռականը հակառակ Երևանի բարբառի ստանում է նոզ (կրի-քօ'րէն հոբը, ճղացէն ճիւրը).-- բացառականը կազմվում է աւն, գործիականը ավ վերջավորութեամբ (տէ'ղան, տէ'ղավ). -- անցյալ դերբայը վերջանում է ալ (սի'րալ ըմ, տա'րալ ըմ). տեղ տեղ կան ապառնիի համար սիբըլա'կան ըմ, սիբըլա'ցուք ըմ, ձևերը:

Դարաբաղի բարբառով կա հարուստ գրականութուն. ամենից նշանավորներն են Տմբլաչի Խաչանի գրվածքները Դարաբաղի բարբառով և Ճուղուրյանի պատմվածքները Լազախի ենթաբարբառով: Բարբառիս ուսումնասիրութեանց մեջ մեծագույնն է Աճառյանի «Քննութուն Լարաբաղի բարբառի» (Վղըշպտ. 1901):

4) Շամախի բարբառ.-- Այս բարբառը խոսվում է գլխավորապես Շամախի քաղաքում և նրան մոտիկ մի քանի գյուղերում՝ մինչև Լուբա: Մնացյալ գյուղերը Լարաբաղի, Խոյի և Սալմաստի գաղթականներ լինելով՝ պահում են իրենց մայրենի բարբառը: Շամախեցիների մի ստվար գաղութ էլ կա Բաքվում: Բարբառս շատ կետերով նման է Լարաբաղի բարբառին. գլխավոր տարբերութունները հետևյալներն են.-- քէ և հյ ձայնները չկան այստեղ. ընդհակառակը, առատորեն կա ֆ, որ պահասում է Լարաբաղում: Շեշտը վերջավանկի վրա է. մինչդեռ Լարաբաղ, Երևան ևն՝ նախավերջին վանկի վրա է.-- ք ձայնը հաճախ դառնում է ի. ինչ. ախչի'գի, միտիք անիլ, վիզի'գիս, ի'նքի ևն.-- աւ դառնում է ո, օ ձայնավորներից առաջ օ, էօ (առօտ, հարկօօր, կնքօօր, շնօօր, տոնոգչէօօր):-- Բացառականը թեև Լարաբաղի բարբառի նման ստանում է աւն, բայց

գործիականը առնում է օվ (ցէքա'ն, ցէքօ'վ ժձեռքից, ձեռքով): -- Գերանունները ստանում են հաճախ ավելորդ իկ մասնիկը, որ մինչև երեք անգամ կարող է կրկնվել. ինչ. տիւ, տիւիգ, տիւի'գիթ, տիւիգի'գիթ, տիւիգիգի'գիթ, յէս, յէսիգ, յէսի'գիս, յէսի-գի'գիս, յէսիգիգի'գիս, նա, նաի'գի, նաիգի'գի, նրաքի'գի, նրաքիգի'գի ևն:-- Հական բայի ձայնավորը ուղականի մոտ դառնում է ա. անցողականի մասնիկն է ցունիլ. երկուսի համար իբրև օր. հասացուրալ ամ, հասացուրալ էս, հասացուրալ ա, հասացուրալ անք, հասացուրալ էք, հասացուրալ ան:

Այս բարբառը ուսումնասիրված չէ դեռ. բայց կան մի խումբ գրվածքներ այս բարբառով, ինչպես Արեւիյանի և Գյոզալ Աղաբաշու երգիծական գրվածքները:

5) Պարսկահայոց և Աստրախանի բարբառ.-- Երևի թե այս բարբառի նախավոր կենտրոնը եղել է Հին Նախիջևանը, որի ննագույն բարբառը այժմ ջնջված է: Հին Նախիջևանից ժողովուրդը գաղթել է երկու ուղղութեամբ. մեկը Պարսկահայ ձյուղն է. բռնում է այժմ Թավրիզի Դալա թաղը (որ Աստրախանի մայրաքաղաքի բնիկ ժողովուրդն է), էնգելիից մինչև Նոր-Ջուղա, իր մեջ ունենալով նաև Թեհրան, Դազվին, Ռաշտ, Համազան, Սուլթանաբադ, Սպահանի գյուղերը և Նոր-Ջուղայի մեծ մասը: Երկրորդն է Հյուսիսային Կովկասի մի քանի քաղաքները՝ Աստրախան, Ղզար, Մոզդոկ, Մաջաու կամ Ս. Խաչ, որոնց հետ պիտի դնել նաև Բաքվի բնիկ հայերը, որոնք այժմ գրեթե անհետացել են:

Այս բարբառը բռնում է Երևանի և Շամախի բարբառների միջին տեղը. ձայնավորները սովորաբար համաձայն են Երևանի բարբառին, բաղաձայնները Լարաբաղի կամ Շամախի բարբառին: Հոլովումը, դերանունները, բայերի ներկայի կազմութունը նույնպես Երևանի ձևով են. Բնորոշ հատկութունն է հոլովման մեջ սղման և ամփոփման կանոնի ջնջումը. օր. Աստրախանի և Ղզարի բարբառով՝ շունի, ծուկի, կառի «գառան», ճէրի «ճօր», յէգի, տունի, տունից, տունօվ, տուռի, ճուռի, մուկի, միսի, կարիի, կիճիի ևն: Հոգնակիում՝ ձայնավորահանդ բառերը ստանում են ք և հոլովվում են իբրև եզակի. ինչ. կիճիք, կիճիքի, կիճիքից, կիճիքով, կատուք, կատուքին, կատուքից, կատուքով:-- Խոնարհման մեջ բնորոշ է անկատարի և կատարյալի կազմութեան եղանակը: Անկատարում է ձայնավորը հաջորդական ի-ի

մոտ դառնում է ի. բացի սրանից, թե անկատարի և թե կատար-
յալի եզակի առաջին դեմքը ստանում է մ հանգը, որ ներկայի
նմանությամբ է առաջացած. այսպես՝ էական բայից իիմ, իիր,
էր, իինք, իիք, իին. բացասականը չիիմ, չիիր, չէր, չիինք, չիիք,
չիին: Խոնարհման մեջ՝ ասըմ էիմ կամ ասըմ իիմ, ինգնիիմ, ինգ-
նիինք, կխաղայիմ, կէրթայիմ, կպէրէիմ ևն: Այսպես նաև կատար-
յալը՝ ասամ կամ ասացիմ, էկամ, տվամ, քթամ, կնացիմ, պէրամ,
կանչամ, սիրէցիմ, առամ, տիրամ, հանամ, թողամ ևն:

Այս բարբառը ուսումնասիրված չէ. թեև կան բավական
նմուշներ Թավրիզի և Աստրախանի բարբառներով:

6) Զուղայի բարբառ. — Այս բարբառը խոսվում է Պարսկաս-
տանի խորքում՝ Սպահան հին մայրաքաղաքի կողքին գտնված
Նոր-Ջուղա արվարձանում և նրանից ավելի հարավ՝ Շիրազ,
Բուշիռ, և ավելի հեռու՝ Հնդկաստան, Բիրմանիա և Զավա:
Ամբողջ այս շրջանի հայութունը սերունդն է այն գաղթակա-
նության, որ 300 տարի առաջ Շահաբասը տարել էր Հայաս-
տանի արևելյան գավառներից: Հատկապես Նոր-Ջուղայի գա-
ղութը առաջացել է Հին-Ջուղայից, որ Արաքսի ձախ ափին
այժմ հասարակ գյուղ է, իսկ այն ժամանակ հռչակավոր քա-
ղաք էր:

Բարբառիս առանձնատկութունները հետևյալներն են. —
ձայնավորներն ու բաղաձայնները գրեթե անաղարտ պահված
են. կան ե և ո երկբարբառային հնչումները, յ թրթռուն ձայնը
և մի տեսակ փափուկ ՚ — Հոգնակի կազմելու համար երեք ձև
կա. միավանկ բառերը ստանում են էր, բազմավանկ բառերը՝
եթե վերջանում են բաղաձայնով, ստանում են նէր, իսկ եթե
վերջանում են ձայնավորով՝ ստանում են ք: — Հոլովումը Երևա-
նի բարբառին նման է. — թվականների մեջ կա դասականի մի
առանձին ձև, որ կազմվում է ում մասնիկով. ինչ. խընգում,
վեցում, օխտում, տասում, խէրըրում, ղզարում: — Խոնարհման
մեջ սահմ. ներկան և անկատարը թեև կազմվում են սովորա-
կան ում ձևով, բայց սրա հետ կա նաև ման ձևը, որ հատուկ է
միմիայն այս բարբառին. — էական բայի ներկան՝ բացի հգ. բ
դեմքից, ամեն տեղ ձայնավորը դարձնում է ա. ըստ այսմ խո-
նարհվում է՝ գ'ոլման ամ, գ'ոլման աս, գ'ոլման ա, գ'ոլման անք,
գ'ոլման էք, գ'ոլման ան, «չալիս եմ...». — անկ. գ'ոլման ի, գ'ոլ-

ման իր, գ'ոլման էր, գ'ոլման ինք, գ'ոլման իք, գ'ոլման ին. — Կա
ապառնի մի տեսակ, որ կազմված է պլա մասնիկով. ինչ. պլա
սիրեմ, պլա սիրես, պլա սիրի ևն. նշանակում է «կարող է լինել
որ սիրեմ...»: — Ապառնի դերբայի համար կա լեց վերջավորու-
թյունը. ինչ. սիրելեց, խաղալեց, մնալեց ևն:

Այս բարբառով գրված գրականության մեջ նշանավոր է
Սարգիս Գիլանենցի ժամանակագրությունը. կա նաև ընդար-
ձակ մի ուսումնասիրություն՝ Աճառյան, Քննություն Նոր-Ջու-
ղայի բարբառի (Երևան 1940):

7) Ագուլիսի բարբառ. — Այս բարբառը խոսվում է Նախիջե-
վանի հյուսիսային կողմը մի փոքր շրջանում, որ բաղկացած է
11 գյուղից, որոնց կենտրոնն է Ագուլիսը (այժմ ավեր): Սովո-
բաբար այս շրջանի հայերին կոչում են Զոկ, որից էլ բարբա-
ռը՝ զոկերեն: Բոլոր հայերեն բարբառներից այս միակն է, որ
ստացել է այսպիսի անուն, իբր թե մի առանձին լեզու լիներ.
և այս շատ իրավամբ. որովհետև նա այնքան տարբեր է մյուս
հայ բարբառներից, որ կարող էր իբրև առանձին լեզու համարվել:

Բնորոշ հատկութունները հետևյալներն են. — Ձայնական
դրությունը նույն է Տփղիսի բարբառի հետ, միայն ավելացել
են այստեղ ո, էօ, իւ ձայնավորները և գյ, կյ, քյ բաղաձայն-
ները. — ա ձայնը վերջավանկում դառնում է օ, էօ, ռնգականից
առաջ էյ ու (հօց, մօրդ, հոօգյ, բէօրձ, բէօհ, նէօլ «գնալ», նմուն,
ծշուն, վունք). — ե դառնում է ո, ա, ի (տրկիւ, փոստ, բոբոն,
ա՛յստդ, ա՛րկաք, ա՛րագ, միծ, իս, իգնը). — է դառնում է ի, այ,
ա (աղվիս, տայր, պայտք, ագյ «էգ», մաշը). — ի դառնում է այ,
ա, ո (մայս, սա՛յրիլ, թայեր «թի», այնը «ինը», կայր «կիր»,
հայն, քայնք «քիթ», սարա, հանգյ, կղազ «կորիզ», սո՛րիւն, ծո՛-
րիւն «ծիրան»). — ո դառնում է ու, իւ, է, ո, ա (հուտ, գյիւղ
«գող», փէ՛րձիլ, գյոթձիլ, հատած). — ու դառնում է իւ, օ, է (դիւ,
բիրդ, սօտ, ցօրտ, կէշտ, էրբոթ). — բաղաձայնները պահում են
իրենց հարազատ հնչումը, ավելի հարազատ քան որևէ բարբառ.
այսպես որ նույն իսկ ք ձայնին հաջորդող թրթռուն պայթու-
ցիկները, որոնք ամեն տեղ վերածված են շնչեղ խուլի, այստեղ
նույն են թրթռուն. ինչ. մօրդ, վէօրդ, վրողավիւր, իոձ, օրջ ևն.
— ի, ց ձայները հաճախ դառնում են հ (տհուտ, գյըլիւհ, հրօտ,
ծահիլ, ձօհ, կա՛հիլ, քացահ, մոտ՛հի «մոռացի՛ր», մոտ՛հուլ ըմ
«մոռացել եմ»). — շեշտը նախավերջին վանկի վրա է. Ղարաբա-

դի բարբառի նման այստեղ էլ շեշտից առաջ գտնված բոլոր ձայնավորները ջնջվում կամ վերածվում են ը— Հնչյունների մեջ սեռականը կազմվում է ի վերջավորութայամբ. բայց հատուկ անունների վրա դրվում է ա կամ էօ. գործիականը ստանում է ալ, էօլ, ներգոյականը ամ, ում: Հոգնակին կազմվում է երեք ձևով. ար, նէր և ք:— Շատ փոփոխված է խոնարհումը. հայերենի չորս լծորդություններից մեում են միայն երկուսը՝ իլ, օլ: Օրինակի համար՝ փոխանակ ասելու ճասել, հեռանալ, հազար, ասում են պարզապես ա՛հիլ, հոռ՛հիլ, հա՛զօլ: Սահմանական ներկայի և անկատարի բունը կազմելու համար դնում են ում, ամ, ում մասնիկները. ձայնավորով սկսվող բայերը ստանում են նակ և նախամասնիկը. օր. կտրում ըմ, նահամ ըմ, հոռոտմ ըմ: Անկատարի սովորական ձևը ջնջված և նրա տեղ հնարված է մի բոլորովին նոր ձև. այն է ներկայի բոլոր դեմքերի վրա ավելացնել նէլ. ինչ. նահամ ըմ նէլ, նահամ ըս նէլ, նահամ ա նէլ, նահամ ըք նէլ, նահամ ըն նէլ ճասում էի» ևն: Այս նէլ ձևը գրաբարի լեզվի դերբայից է առաջանում: Նկատելի է որ բայերի բոլոր ժամանակների մեջ էլ հգ. ա և բ դեմքերը նույնացած են, ստանալով երկուսն էլ ըք ինչ. նա՛համ ըք (ասում ենք, ասում էք), նա՛համ ըք նէլ (ասում էինք, ասում էիք):— Ջնջված է նակ կատարյալի սովորական ձևը և նրա տեղ դրված է գրաբարի հարակատարը կամ ներկան. այսպես՝ ա՛հալ ըմ, ա՛հալ ըս, ա՛հալ ըն կամ ա՛համ, ա՛հաս, ա՛հան նշանակում են ճասացի, ասացի, ասացին»:— Հարակատարը այսպեսով գործածվելով իբր կատարյալ, նրա պաշտոնը տրված է հարակատարի երկրորդ ձևին, այն է՝ ա՛համ ըմ, ա՛համ ըս, ա՛համ ա ճասել եմ, ասել ես, ասել է», որի վրա ավելացնելով անկատարի նէլ ձևը, ստանում ենք գերակատարը. ա՛համ ըմ նէլ, ա՛համ ըս նէլ, ա՛համ ա նէլ ճասել էի. ևն»:— Ապառնին չի կազմվում կը ձևով, այլ անորոշ դերբայի հետ խոնարհելով էական բայը. ինչ. նա՛հիլ ըմ, նա՛հիլ ըս, նա՛հիլ ա ճասեմ, ասելու եմ ևն»: Պիտի ձևի փոխարեն ունինք մո՛տում տ կամ մո՛տուլ տ. ինչ. մո՛տում տ քա՛կիմ ճթակելու եմ», մո՛տում տ նէլ քա՛կիմ ճթակելու էի»:

Ազուլիսի բարբառի համար կա երկու ուսումնասիրություն՝ Սարգիսյանց, Ազուլիցոց բարբառը կամ Ջոկերի լեզուն, Մոսկով 1883 (որի երկրորդ մասը պարունակում է բազմաթիվ նմուշներ) և ավելի մանրամասն՝ Աճառյան, Քննություն Ազուլիսի բարբառի, Երևան, 1935:

Այս ճյուղը ունի 24 բարբառ.

1) Կարնո բարբառ.— Այս ընդարձակածայալ բարբառը բանում է Կարին, Բարբրդ, Կարս, Օլթի, Լենինական, Ախալքալաք և Ախալցխա քաղաքները՝ իրենց շրջակա բազմաթիվ հայաշատ գյուղերով:— Ձայնական դրությունը Երևանի բարբառին նման է. ձայնավորները պահում են իրենց հարազատ հնչյունը (տեղ տեղ մտել են Ե և Ո երկբարբառային հնչյունները).— քաղաձայնները ունին չորս աստիճան, գրաբարի վրա ավելացնելով նակ շնչեղ թրթուռն բաղաձայնների խումբը. այսպես՝ բ, բ՛, պ, փ,—գ, գ՛, կ, ք, ևն: Բառասկզբում կա մի տեսակ թրթուռն և, որ նշանակում ենք յ ձևով. ինչ. յարուք, յալօ (Հարություն, Հակոբ):

Քերականության մեջ հատկանշական կետերն են.

1) էստան ձևով հոգնակին (բ՛անելստան, բ՛աղնելստան, մատնելստան, տարէստան). 2) տրական ձևով հայցական, որ սովորական է ում ճյուղին, բայց չի գտնվում ընդհանրապես կը ճյուղի մեջ. ինչ. կատվին սըպանէցի, կօվին մորթէցի ևն. 3) սահմանական ներկայի և անկատարի հետադաս կը մասնիկը, որ ձայնավորով սկսվող բայերի սկիզբն էլ է դրվում. ինչ. սիրէմ կը, կէնէմ կը:

Կարնո բարբառով կան զանազան մանր-մունք գրվածներ և մի փոքր ուսումնասիրություն ուսերեն լեզվով (Томсон, Краткий очерк фонетики и морфологии ахалцыхского говора, Петерб. 1887):

2) Խոտրչուրի բարբառ.— Խոտրչում էր Կարին քաղաքի հյուսիսային կողմը Խոտրչուր կոչված ավանում, որ մի քանի թաղերից կամ գյուղերից էր բաղկացած, և որի մի զաղութն էր Ախալայի մոտ կազմված համանուն կոմունան:

Այս բարբառի գլխավոր հատկությունն այն է, որ աշխարհաբարին հատուկ սահմանական ներկայի կազմությանն ոչ մի եղանակը չգիտե և պահում է գրաբարի ձևը մինչև այժմ անփոփոխ: Այսպես՝ տանիմ, տանիս ճտանում եմ, տանում ես», նստիմ ճնստում են», պառկի ճպառկում է» ևն: Միայն ձայնավորով սկսվող բայերը ստանում են կ մասնիկը (կասիմ, կելենեմ, կիեց-

նու), միավանկ բայերը ստանում են կու (կուզան, կուտա), Երբեմն էլ բաղաձայնով սկզբող բայերը ստանում են կը կամ կու, սը կարող է նաև հետադաս լինել. ինչ. կը մեան, կու գայթի, նեղվորի կու:

Չայնարանության մեջ հետաքրքիր երևույթ է բաղաձայնի հնչումը, որ թեև երկու ձայնավորի միջև պահվում է բայց բաղաձայնից առաջ դառնում է յ, ինչ. ջույտ շուրդ», եօ՞ջ տանիս եօ՞ւր ես տանում», դ՛այց մ՛ալ Վ՛մի անգամ էլ:

Հոգնակին կազմվում է միավանկ բառերի համար ի մասնիկով, բազմավանկների համար նի մասնիկով: Օրինակ՝ ածի «այծեր», լվի «լուեր», ջրին «ջրերն», ծովին «ծովերն», ախր՝ընի «աղբիւրներ», տալընի «տավարներ» ևն: Երևույթը բացատրվում է բ>յ ձայնափոխությամբ, որով եր դարձել է իյ, ներ>նիյ, ապա բառավերջում և ի ձայնից հետո յ կորչելով (հմտ. մեր>մի), Ֆնացել է ի, նի: Նախկին բ ձայնի հետքը պահում են դե իսորի բայ օրերս», ծովըններէն «ծովերից» ևն:

Հոլովման մեջ հայցականը դրվում է արականի ձևով, որով բարբառու միանում է մի կողմից Կարնո և մյուս կողմից ում ճյուղի բարբառների հետ:

Ապառնին կազմվում է կը կամ պիտի մասնիկով,

3) Մշո բարբառ.--- Գտնվում է Կլանա ծովի արևմտյան երեսը. իր կենտրոնն է Մուշ քաղաքը. հյուսիսից տարածվում է մինչև Խնուս և Ալաշկերտ, հարավից Բաղեշ, արևելքից հասնում է մի կողմից Մոկս և մյուս կողմից Դիադին, արևմուտքից Լճե, ձապաղջուր ևն: Այսպեսով Մշո բարբառի գրաված տեղերն են՝ Մուշ, Մասուն, Բաղեշ, Խիզան, Խլաթ, Արճեշ, Բուլանջիս, Մանազկերտ, Խնուս և Ալաշկերտ: Մրանց գաղութներն են Ապարան և Նոր-Բայազետի հարավային կողմում 21 գյուղ: Կան և երեք գյուղ խնուսցի գաղթականներ Ախալքալաքի մոտ:

Մշո բարբառի ձայնական դրությունը Կարնո բարբառին նման է. ա, էօ, իւ ձայները պակասում են, բայց կան և և ո երկբարբառային հնչյունները՝ շատ որոշ: Պայթուցիկ բաղաձայնները ունին չորս աստիճան (բ, բ՛, պ, փ ևն): Բառասկզբում գտնվում է թրթռուն յ ձայնը, որ հաճախ ավելանում է այնպիսի բառերի սկիզբը, ուր գրաբարում պարզ ձայնավոր միայն կա (ինչ. լէժան, լախոռ, լախր՛ուր, յըմէն, յամբուր «ամուր», յանգան ևն): Կան դեպքեր, երբ մինչև անգամ հայերենի թավ ձայ-

ները վերածվում են պարզ խուլի. ինչ. աճի, հայուաեն ևն: Հ ձայնը բարբառիս մի մասի մեջ պահվում է իբրև հ, մյուս մասի մեջ դառնում է իս:

Քերականության մեջ հետաքրքրական կետերը հետևյալներն են. 1) Հայցականի գ նախդրի գործածությունը. ինչ. ըզ հաց, ըզ մրր տուն. 2) Նախդրի հայցականի ի, յ նախդիրը. ինչ. շուր օրիկն ի մահուն, կէրթամ յարս. 3) Մտացական ածականները կարող են դրվել գոյականից հետո. ինչ. ձ՛էնէ մզի, բ՛էրնէ բզի, սիրտ ձ՛գի իրար շուգա, ձ՛էնէ ընձի. ձ՛էնէ ձ՛գի. լէզ ուրանց, բուկ ուրանց. 4) Նախադրությունները հաճախ գոյականից առաջ են դրվում գրաբարի պես. ինչ. վըր մըր տան, մըշ մըր տան, մըտ ընձի, քանի՞ տարի առաջ քզնէ. 5) Կոչականը վերջանում է օ. ինչ. յա՛րօ, յա՛կօ, Մա՛րօ, լա՛օ, մա՛մօ, քո՛ւրօ. 6) Անկատարի եզ. ա դեմքի տեղ գործ է անվում հոգնակին. ինչ. յես կուզէք «ես կուզէի», մընք կուզէնք «մենք կուզէինք» (այս բանը նրանից է, որ եզ. անկ. ա դեմքը՝ կուզի նույն է ներկ. եզ. գ դեմքի հետ). 7) Հարակատարի վրա հաճախ էական բայը կրկնվում է. ինչ. յօրի՞ իս դեր իս, յէ՞րփ իս էկեր իս. 8) Հրամայականի թող մասնիկը կրճատվելով դարձել է թըխ կամ ք. ինչ. թըխ մեա, թըխ աաա, թըխ առնէ կամ քառնէ՛, քէրթա՛. 9) Միավանկ գալ, տալ, լալ բայերը ստանում են ի նախաձայնը. իգ՛ալ, իտալ, իլալ. 10) Անցողականի մասնիկն է ցու. ինչ. կհարցում, կհարցուս, կհարցու ևն. 11) Դերբայի համար կա ուկ մասնիկը. ինչ. մէռուկ, փիցուկ, կտարուկ, գ՛րուկ:

Մշո բարբառով հրատարակված են բազմաթիվ գրվածքներ, որոնցից մեծագույնն է Պատկանյանի МУШСКИЙ ДИАЛ. Գետրբ. 1875. իսկ բարբառիս ընդարձակ ուսումնասիրությունն ունի Մսերյանց, ЭТЮДЫ ПО АРМ. ДИАЛЕКТОЛОГИИ, Մոսկվա 1897—9:

4) Վանի բարբառ.— Տարածվում է Վանա ծովի արևելյան երեսը. իր կենտրոնն է Վան քաղաքը. սահմաններն են հյուսիսից մինչև Դիադին՝ Բայազետի արևմտյան կողմը, հարավից Մոկս, Ոզմի, Շատախ և Աղբակ, արևելքից մինչև Պարսկաստանի սահմանը, իսկ արևմուտքից մինչև Մշո բարբառի սահմանագիծը: Հստ այսմ Վանի բարբառը (հատկապես Մոկաց ենթաբարբառը) հայերեն լեզվի հարավային սահմանագիծն է, որից հետո քրդախոս ու արաբախոս հայերն են: Դիադինի գաղութ է Բասարգեչար՝ Սևանի լճի հարավային-արևելյան ափի մոտ:

Վանի բարբառի ձայնական գրութունը հարուստ է ձայնավորներով. հայերենի սովորական ձայների վրա ավելացել են այստեղ ա, էօ, իւ, ինչպես նաև ե, ո, էօ երկբարբառային հնչյունները: Վերջինիս համար հմմտ. պէօն «բույն», լէօս «լույս», առվէօտ «առվույտ» են: Բաղաձայնների մեջ ավելացած են գ, կ, ք, հ, յ: Ծնչեղ թրթուռն բաղաձայններ չկան:

Ձայնական փոփոխությանց մեջ նկատելի են ա դարձած ա, այսպես է միշտ վ ձայնից հետո (վախ, ծավար, վագել, վաղ, նույն իսկ Վոն քաղաքի անունը).— ու դարձած իւ և ոյ դարձած ո (պիւք, կյորիւն, տիւ, թիւք, լեզիւ, կապոտ, ճկոթ, վոժ ևն).— Թրթուռն պայթուցիկ բաղաձայնները դառնում են խուլ, ճիշտ ինչպես Ղարաբաղի բարբառում (պոն, պուլիս, կյրլէօխ, տի, ծեռք, ծիւ, ճիւր).— հ դառնում է խ (խուս, խիրուս, խավ, խաստ). ք դառնում է ո՝ շչական և ատամնական բաղաձայնների մտ (կյէօժօժ, առչ. առտ).— ք դառնում է բաղաձայնից առաջ հ (ինչ. այնլէօք):

Հորովումը նման է Երևանի բարբառին, ըստ որում բացառականը կազմվում է ից մասնիկով և հայցականը շնչավորների համար նման է տրականին. միայն ներգոյականն է պակասում: Հոգնակի մասնիկներն են բացի եր և ներ ձևերից, նաև յնտեր. ինչ. կյիճիյնտեր, մառանյնտեր (գինիներ, մառաններ): Հոգնակի սեռականը կազմվում է աց մասնիկով և ոչ թե ի կամ ու. ինչ. խացերաց, կյիճիյնտերաց:

Բարբառիս մեջ ը հոդը անգործածական է. թեև կա ն հոդը. Բայերի խոնարհման մեջ աշխարհաբարի սովորական ձևից շեղող երևույթներ չկան:

Ունի երեք ենթաբարբառ. Դիադին, Մոկք և Ոզմի. առաջինն ավելի մոտիկ է դրական լեզվին: Մոկաց ենթաբարբառում ի և ե հաճախ դառնում են ք (խրճգ խարքր տարր, սեռականի վերջավորութունը՝ տրղր՝, վարղր՝, բայերի վերջավորութունը՝ բարքր՝, բոնքրն, տր բոնքրմ, տր տէք ձը «պիտի տաք ինձ»).— ո դառնում է ու. ինչ. խնձուր, փուքր ևն:

Ոզմի ենթաբարբառը ունի էյ, օյ, էօյ երկբարբառները և կոկորդական դ՝ ձայնը (թէյգ, խնամէյ, կոէյվ, հաշէյվ, խէյլէյ, ձ՛օյ, մօթ, մօւկ, խօւմ, ծուց, գուրտ).— ո դառնում է ու. ինչ. խուփ, խմուր, ծուց, գուրտ.— իւ դառնում է օ, օյ, է (խօւս, օւսէյ, խէյրօն, խարէր, օղէս).— այս ենթաբարբառը ճանաչում է նաև շնչեղ թրթուռներ:

Վանի բարբառով գրված գրութուններ շատ կան. լավագույններն են Շերենցի «Վանայ սազը» և Տեր-Սարգսյանի «Պանդուխտ վանցի»: Մոկաց ենթաբարբառով են Աբեղյանի Դավիթ և Մհերը, Գարեգին Հովսեփյանի Սասմա ծոբը ևն: Բարբառիս ուսումնասիրութունն ունի Աճառյան, Lautlehre des Van-Dialekts, որ ներկայացնում է միայն ձայնաբանութունը:

5) Տիգրանակերտի բարբառ.— Այս բարբառի կենտրոնն է Տիգրանակերտ քաղաքը. Մոկաց ենթաբարբառի նման սա էլ հայերեն լեզվի հարավային սահմանապահն է, որից ավելի հարավ խոսվում են քրդերեն ու արաբերեն: Հարավ-արևմտյան կողմից տարածվում է մինչև Ուրֆա կամ Եղեսիա, որի մոտից սկսելով Եփրատը քաշում է բարբառիս արևմտյան սահմանագիծը մինչև Արղնի և այստեղից էլ ուղիղ գծով մինչև Լճե, Հյուսիսային և արևելյան սահմանագիծը կազմում է Մշո բարբառը: Ըստ այսմ Տիգրանակերտի բարբառի գրաված տեղերն են՝ բացի Տիգրանակերտ քաղաքից, Հազրո, Հազգո, Խիան, Սևերեկ, Եղեսիա և Լճե: Վերջինս բուն քրդախոս է, բայց այնտեղ հաստատված բազմաթիվ տիգրանակերտցի գաղթականները նորոգել են հայերեն լեզուն:

Տիգրանակերտի բարբառը բունում է Մշո և Մալաթիայի բարբառի միջին տեղը: Ձայնավորների մեջ չափազանց առատ է ա, իսկ էօ, իւ հազիվ երբեմն երևում են օտար բառերի մեջ: Պայթուցիկ բաղաձայնները ունեն միայն երկու աստիճան՝ թրթուռն և թավ: Ավելացել են չորս նոր բաղաձայն (', հ', դ', լ'). սրանցից առաջին երեքը փոխ են առնված արաբերենից և գտնվում են միայն արաբական փոխառութանց մեջ. ինչ 'աղ'— բար «կարիճ», 'էօմբ «կյանք», գա'բար «ծոթրին», դ'ալբ «կեղծ», հ'ալվո «հրուշակ», 'ունեար «յունապ». իսկ լ՝ փափուկ լ ձայնն է և գտնվում է բուն հայերեն բառերի մեջ (ուլ՝, քլ'ուխ, փուլ՝ք, լ՝վեռուլ, լ՝օգեռլ ևն): Բացի սրանցից կան գ, ք ձայները: Հազգոյում կա ՚ կիսաձայնը (w). ինչ. ւրբ, ւրբէն, ախստ (վեր, վերայ, vaqt):

Ձայնական փոփոխությանց մեջ հիշելի են ա՝ որ շարունակ դառնում է ա. ինչ. տմփտրդավտե, քովտրտե, ստրգովտք, շաղտրք ևն. անփոփոխ է մնում միայն ո ձայնի մոտ.— ո դառնում է ու. ինչ. նուր, փուր, փուս, սուխ, չուր, չուրս.— ու մնում է անփոփոխ.— ե վերջավանդում դառնում է ի (էրիս, գիղ «տեղ»),

քիզ «դեղ», տրիվ «արև», տսիդ «ասեղ».—իւ դառնում է ի, ա (տրիև, հոտրիբ, տլիբ, սուն, ցուն):—Բաղաձայններից թրթռուն պայթուցիկները դառնում են թավ, խուլերը դառնում են թըր-թռուն (փէրտն, փօրիգ, բոնտգ): Հազգոյի մեջ, ուր կան նաև շնչեղ թրթռուն բաղաձայններ, խուլերն էլ դառնում են այսպես. օր. գ'աննավ, գ'նիգ, գ'ելս, գ'ուզէր, գ'արավ՝ Վհանգնեց, կնիկ, տեղ, կուզեր, տարավ:—Հաճախ բաղաձայնները կրկնվում են. ինչ. էժժն, բըմմոգ, յօ'բբէ, զըզդէ, բօբթու, բըբրիք ևն:

Քերականության մեջ կարևոր կետերն են. 1) ը հոգը դառնում է է. ինչ. փէրտնէ, շո'ւնէ, սո'ւնէ: 2) Հայցական հոլովը կարող է ստանալ գ նախդիրը. բայց պարտադիր չէ: 3) Բացառականը թեև ստանում է է մասնիկը, բայց զերբայները՝ ուց (սիրէլուց, խօսէլուց): 4) Հոգնակիի նշաններն են՝ իր, թիր, ճի (հոցցիր, ճրէշդոգէի): 5) Դերանունների մեջ ունենք յէսի՝ իբբ հայցական ես բառի: 6) Ցուցականների երեք աստիճաններից ջնջված է այդ և մնում է միայն երկու դեմք (այս և այն): 7) Ստացական հոգերը ստանում են ի հենարանը. ինչ. սրգի'սի սո'ւնէ, հօբբո'ւսի, գո'ւնէ: 8) Բայերի ապառնին կազմվում է մրն մասնիկով. ինչ. մրն ուզիմ, մրն փէրիմ, մրն ուզէի, շը'մրն ուզիմ, շը'մրն ուզէի:

Այս բարբառով գրված հատվածները շատ աննշան են. ո՛չ մի ուսումնասիրություն չկա:

6) Խարբերդի և Երզնկայի բարբառ.—Բարբառիս երկու զըլխավոր կենտրոններն են Խարբերդ և Երզնկա. առաջինը հարավային, երկրորդը հյուսիսային ծայրում: Մյուս զլխավոր տեղերը, որոնք պատկանում են հիշյալ բարբառին, հետևյալներն են. Բալու, Ճապաղշուր, Չմշկածագ, Չարսանձաք, Քղի, Տերսիմ և Գամախ: Բարբառիս ամբողջ արևմտյան սահմանագիծը կազմում է Եփրատ գետի հոսանքը. Հյուսիսային սահմանն է Պոնտական լեռնաշղթայի մի գիծը, իսկ մյուս սահմանները Գարնո, Մշո և Տիգրանակերտի բարբառների սահմանագծով են որոշվում:—Խարբերդի մի գաղութ է թվում Մանիսայի վերին թաղը:

Այս բարբառի ձայնական դրությունը ընդհանրապես հավատարիմ է հին հայերենին. ավելացել է միայն ա ձայնավորը (պակասում են էօ, իւ, ինչպես նաև ե, ռ երկբարբառային հնչումները): Բաղաձայնները ունին 3 աստիճան (բ', բ, փ), ավելացել են գ, ը, ք մականները: Չայնական փոփոխությունց մեջ նկատվում են ոչ դարձած օ (լու, բօր, բնգօզ), իւ դարձած ի (արիև, արի'իր, ալիր, ախը'իր), այ դարձած ա (մտր, փոդ, հուլի):—պայթուցիկ բաղաձայններից թրթռունները դառնում են շնչեղ, խուլերը թրթռուն. այնպես որ խուլ ձայները վերացված են:—Բառակազմի ոչ ջնջվում է պ, ա բաղաձայններից առաջ (բաննէլ, բիդագ, դէղձէլ, դարդին, դէրշ, այսինքն՝ սպաննէլ, սպիտակ, ստեղծել, ստեպղին, ստերջ):—Տերսիմի մեջ կա զարմանալի մի նորություն, որ չի պատահում ո՛չ մի բարբառում. և, ջ, շ, ջ բաղաձայնները դառնում են ձ, ձ', ց, ս. ինչ ձէրմագ, ձ'ուր, ցամից, քսւէցի, մէցը ձ'ուր ցիգա:

Քերականությունը համապատասխան է արևմտյան գրական լեզվին. ապառնին միայն կազմվում է դը մասնիկով, որ պիտի ձևի համառոտությունն է: Բացասականում այս պ ձայնը դառնում է վ. ինչ. դը սիրիմ, շըվդի սիրիմ:

Ընդհանրապես խոսելով՝ Խարբերդի և Երզնկայի բարբառը Կը ճյուղի բարբառների մեջ ամենից ավելի հավատարիմն է գրական հայերենին, ճիշտ ինչպես Երևանի բարբառը Ում ճյուղի բարբառների մեջ:

Այս բարբառով գրվածքները քիչ կան. որևէ ուսումնասիրություն էլ գոյություն չունի:

7) Շապին-Գարահիսարի բարբառ.—Պոսվում է համանուն քաղաքի և Ածպտեր գավառակի մեջ. բունում է Խարբերդի և Երզնկայի, Սերաստիայի և Եվդոկիայի բարբառների միջին տեղը: Չայնական դրություն մեջ նկատվի են ա ձայնավորը, պայթուցիկ բաղաձայնների երեք աստիճանները (բ, բ', փ)՝ ճիշտ Խարբերդի պես և բառակազմի հազազը՝ Մշո և Գարնո բարբառի պես: Այստեղ ո ձայնավորը դառնում է էօ և ե դառնում է շեշտի տակ ի. ինչ. գ'էօրձ, Բէօնէօս «Պետրոս», քիզ ճիզ:

Քերականության մեջ երեցած նորությունը շարունակական երկայի ձևն է, որ այս սահմանից սկսելով տարածվում է դեպի արևմուտք՝ մինչև Ռոտոսթո: Շապին-Գարահիսարի մեջ շարունակականը կազմվում է տար մասնիկով, գյուղերում տէ մասնիկով (հնչվում են dar, de). ինչ. կրսիմ տար, կէհամ տէ:

Այս բարբառից ոչ բնագիր կա և ոչ որևէ ուսումնասիրություն:

8) Տրապիզոնի բարբառ.—Պոսվում է Տրապիզոն և հարևան հյուսիսարևելյան և Կիրասոն քաղաքներում: Շատ նման է Պոլսի

և Երբմի բարբառին. սրանց նման զուրկ է ա, է, օ ձայներից-
քիչ անգամ պատահում են էօ, իւ. պայթուցիկ բաղաձայնների
եւայակ շարքը վերածված է երկուսի, թրթռուն և խուլ հարկա-
բաղես վերածվելով թրթռունի: Կա սակայն խուլ կ հնչյունը՝
թուրքերենից փոխառյալ բառերի մեջ:

Առանձնահատուկ ձայնական փոփոխություններ չկան:
Խոնարհման մեջ նկատելի են հետևյալները. 1) Մահմանա-
կան ներկայի և անկատարի մասնիկն է ձայնավորով սկզբող
բառերի համար գ, բաղաձայնով սկզբող բառերի համար հետա-
դաս գու. ինչ. գուզիմ, սիրիմ գու, նայէի գու: 2) Շարունակական
ներկան կազմվում է էր մասնիկով. գառնիմ էր, սիրիմ էր: 3) Շա-
րունակական անկատարը՝ ունի մասնիկով. ինչ. գէփէյի ունի,
նայէի ունի: 4) Բացասական բայերի մեջ դերբայն էլ է խոնարհ-
վում օժանդակ բայի հետ. ինչ. շիմ քամ, շիմ ուզիմ. կամ էս-
կան բայի կրկնությունը՝ շինք իմացիր ինք:

9) Համընթի բարբառ.—Այս բարբառի կենտրոնն է Համըն-
գավառակը՝ Տրապիզոնից դեպի արևելք. ԺԸ դարի սկիզբը այս-
տեղի հայերը բռնի մահմեդականություն ընդունելով՝ տանիկ
կոչվեցին, բայց մինչև այժմ պահում են հայերեն բարբառը ըն-
տանիքում, և թուրքերի մոտ՝ իբրև ծածկակցու: Սրանք են
մահմեդական հայերը: Բայց միևնույն ժամանակ բռնությունից
ու հալածանքից փախչողները ցրվելով ու հաստատվելով զանա-
զան տեղեր, իրենց հետ տարին նաև Համընթի բարբառը: Այս-
պիսի փոքր գաղութներ կան Տրապիզոնից մինչև Սամսոն, Սի-
նոպ և Նիկոմիդիա: 1890-ական թվերին, տաճկահայոց կոտոր-
ածների ժամանակ, այս գաղութներից զանազան հատվածներ
նորից գաղթելով՝ հաստատվեցին Սև Մովի ուսսական փերը՝
Սուխում, Սոչի, Ադլեր, Գազրի, Մծարա ևն, ուր այսօր կազմում
են շատ առողջ մի համայնք:

Այսպիսի ցրված մի գաղութ չէր կարող ընականաբար պա-
նել մի միակ ամբողջություն: Գլխավորապես երկու տիպ կարե-
լի է նկատել բարբառի մեջ. մեկը բուն լեռնային տիպարը,
որի ներկայացուցիչն է Մալա գյուղը, մյուսները Տրապիզոնի
մոտիկ գյուղերի բարբառը, որ կրել է քաղաքի խոշոր ազդեցու-
թյունը:

Բուն Համընթի բարբառի հատկանիշները հետևյալներն են:
1) Ձայնական դրություն մեջ ունի ա, էօ, իւ, ինչպես նաև երկ-

բարբառային ե, ո հնչումները. 2) ա ձայնավորը անգահանի մոտ-
դանում է օ (ինչ. օմիս, օմուր, օֆնգ, օելուխք «անանուխ»):
3) բաղաձայններն ունեն երեք աստիճան. բ, բ՛ կամ պ և փ.
թով բաղաձայնները (փ, բ, թ, ց, չ) վերածվում են Համընթի
բարբառի ձանիկի ճյուղում բառամիջում և բառավերջում պարզ
խուլի (պ, կ, ա, ծ, ն), ինչ որ ուրիշ տեղ գոյություն չունեցող
նոր երևույթ է. 4) բ բաղաձայնը ատամնականի մոտ դանում
է շ, ուրիշ բաղաձայնների մոտ յ. ինչ. մաշտ, դայրագ, շիյս:

Քերականության մեջ նկատելի կետերն են. 1) Հոգնակին
կազմվում է իր կամ էր, նիր կամ նի և ք մասնիկներով (վեր-
ջինը ձայնավորահանգ բառերի համար). ինչ. հացէր կամ հա-
ցիր, խնծոյնիր կամ խնծոյնի, կինիր, կողիր. 2) Մահմ. ներկան և
անկատարը կազմվում են ավելացնելով ձայնավորով սկզբող
բառերի սկիզբը գ, բաղաձայնով սկզբող բառերի վերջը գու. ինչ-
գուզիմ, բ՛էրիմ գու, գուդէի, բ՛էրէի գու: 3) Շարունակական ներ-
կան կազմվում է ունի կամ գունի մասնիկով: 4) Ապառնիի մաս-
նիկը (բիրի) միշտ հետագաս է և առաջին դեմքում գրկվում է
նախաձայնից. ինչ. բ՛էրիմ իդի, բ՛էրիյի, բիրի, բ՛էրիս բիրի ևն:
5) Հարակատարի և գերակատարի մեջ իբրև օժանդակ գործ է
ածվում ունիմ բայը. ինչ. գ՛նացած ունիմ, աստած ունէյի: 6)
Անորոշ դերբայի վերջավորությունն է ուշ՝ բուր բայերի հա-
մար. ինչ. խօսուշ, էշտուշ, բ՛էրուշ: 7) Բայերի հարցական կազ-
մվում է թէ մասնիկով. ինչ. շի՞ն թէ գ՛ալ, գ՛ալ շի՞ն թէ, շի՞ն
գ՛ալ թէ:

Այս բարբառով կան հրատարակված զանազան գրվածքներ.
առանձին ընդարձակ ուսումնասիրություն կազմել եմ 1944 թ.
մեր Ակադեմիայի պատվերով (հրատարակված 1947 թ.):

10) Մալաբիայի բարբառ.—Խոսվում է Մալաթիա քաղաքի
և շրջակա գյուղերի մեջ՝ մինչև Հյուսնիմադուր: Թե տեղով և
թե բարբառային դիրքով բռնում է Տիգրանակերտի, Խարբերդի,
Արարկերի և Կիլիկիայի բարբառների մեջտեղը: Այս բարբառն
էլ հայ լեզվի հարավային սահմանապահներից մեկն է, որից հա-
բով խոսվում է քրդերեն, թուրքերեն և արաբերեն:

Այս բարբառով գրված աննշան ընդիրներ միայն կան և
ուսումնասիրության փոքր մի փորձ: Սրանցից տեսնում ենք որ
1) Մալաթիայի բարբառը պայթուցիկ բաղաձայններից գիտե-
զանազանի միայն երկու աստիճան (թրթռուն և թով): Հայե-

դենի թրթռուն և թավ ձայները հավասարապես դառնում է
թավ (ձիշտ ինչպես Տիգրանակերտի բարբառում), իսկ խուլիքը
դառնում են թրթռուն. ինչ. փարց, փէրէլ, փանցրր, քոս շուռ,
քանագ զդանակ): 2) Ե ձայնավորը դառնում է ա, ինչ. ման
«մեծ», փառ «բեռ», սառ «սիսեռ», լառ «լեռ», յափ «բերք»: 3) Ու
դառնում է օ. ինչ. քոս «շուռ», չոս «ջուր», հօ՞ւմ «ո՞ւմ»: 4) Պ
դառնում է նույնպես օ. ինչ. քօր, լօս, փօն «քույր, լույս, բույն»:
5) Ի դառնում է ի. ինչ. ախփիր, հէրիր, էրին.

Քերականության մեջ հետաքրքրական է սահմ. ներկայի
և անկատարի շարունակական ձևը, որ կազմվում է ա վերջա-
վորությամբ: Ըստ իս այս ա կրճատված է անա մակբայից:

11) Կիլիկիայի բարբառ. — Այս ընդհանուր անվան տակ ամ-
փոփում ենք Չեյթունի, Հաճինի, Մարաշի և սրանցից ավելի
հարավ՝ Քիլիսի, Փայասի, Ալեքսանդրեոտի, Անթաթիայի մեջ
խոսված հայերենը: Թեև սրանք իրենց մեջ ներկայացնում են
բավական մեծ տարբերություններ, սակայն ընդհանուր հատկա-
նիշները ավելի մեծ ու հասարակաց լինելով՝ կարելի է դրանք
ենթադրաբար համարել:

Այս բոլորի մեջ ամենից ավելի ուսումնասիրված են Չեյ-
թունի ենթաբարբառը (Հ. Ալլափերդյան, Ուլնիա կամ Չեյթուն,
Պոլիս 1884) և Մարաշի ենթաբարբառը (Մելիք Ս. Դավիթ բեկ
ՀԱ 1896, և Հ. Վարժապետյան, Բիւրակն 1898—1900): Մյուս-
ների մասին կան մանր մունր բնագիրներ և տեղեկություններ:
Տպագրության պատրաստ է իմ ընդարձակ աշխատանքը (Քրե-
նություն Չեյթունի բարբառի), որ կազմել եմ 1945—6 թ. մեր
Ակադեմիայի հանձնարարությամբ:

Չայնական գրության կողմից Կիլիկիայի բարբառը շատ
հարուստ է. այսպես՝ Չեյթունցիք ունեն բացի ա, ե, ո, էօ, իս
ձայնավորներից, որ շատ տեղեր կան արդեն, մի բոլորովին նոր
ձայն, որ ներկայացնում է ր և ա ձայնավորների միջին աստի-
ճանը կամ որ նույն է՝ բաց ր՝ (Ղ): Անտիոքի գյուղերում կան
օր, էյ, իյ, այ երկբարբառները, որոնք ուրիշ տեղ չկան: Բաղա-
ձայնները ունեն երեք աստիճան (բ, բ', փ), բայց Չեյթունի մի
թաղում կա նաև պարզ խուլերի խումբը (պ, կ, ա, ծ, ճ):

Չայնական փոփոխությանց մեջ ամենից կարևորն է շեշա-
յալ ա > օ, որ գտնում ենք Չեյթունում, Մարաշում, Հաճինում
և Անտիոքում (քաղօր, էխօր «աշխարհ», իչնօ «իջանել» ևն)

—ե և է դառնում են հաճախ ի (իյգոն «երեկոյ», իս «ես», իյիս
«երես», իյգոմ «երիկամունք», իյգոնք-քոյ «երկանաքար»): — Ի
ձայնավորը հետզհետե բացվելով հասնում է մինչև ա (ինչ. միս
> մր՛ս, մաս, կնիկ > գր՛նագ, Մրշ. գրնագ ևն). — ր բաղաձայնը
Չեյթունում և Հաճինում դառնում է յ. իսկ ո՝ Հաճինում դառ-
նում է ր:

Չայնավորների մեջ նկատում ենք նմանեցման ձգտումը.
բառի մեջ գտնված բոլոր ձայնավորներն էլ ձգտում են վերած-
վել մեկի. ինչ. գ՛օնօց «գնաց», քօսօն «քսան», գօնգօն «կնկան»,
իսկի «տոկի», իսկիյ «տոկոր», սեռ. իսկիյի, գօրքօմ «կերթամ»,
իսիր «սրա», իսիս քյիրիստիս «Հիսուս Քրիստոս»: Այս բոլո-
րի մեջ ր, ո, ե, ա, ի ձայնավորները իրենց երանգը թողած՝ վե-
րածված են հաջորդ վանկի ձայնավորին:

Քերականության մեջ կան մի քանի նորմուծություններ.
Իսկ ձայնական օրենքները առաջ են բերել զանազան տարօրի-
նակ ձևեր. ինչ. Մարաշում որոշիչ ր և անորոշ մը հոգերը ստա-
ցել են՝ բառի վերջավանկի ձայնավորի համաձայն՝ ր, ի, ու, իս
և մը, մի, մու, միւ ձևերը: Այսպես՝ շաբա՛գը «շապիկը», փէ՛ղի
«փայլը», ախշի՛նի «աղջիկը», դանօ՛գու «դանակը», մո՛ւգու
«մուկը», խի՛ղի «խոտը», շաբա՛ց մը «շապիկ մը», փէ՛ղ մի «փայտ
մը», ախշի՛ն մի, դանօ՛ց մու, մուգ մու, խիւ՛ց մի, էօր մի «օր մը»:
Հողնակիի մասնիկներն են բացի իր, եիր (իյ, եիյ) ձևերից,
նաև նա, նը, դաք. ինչ. ցիյիննիր, սը՛սը՛նը, սէօյտիյնա, ձա-
ղընա ևն:

Ներկայի և անկատարի շարունակական ձևը Չեյթունում
կազմվում է կը մասնիկի կրկնությամբ. ինչ. զօ գիփիմ, զօ գու-
զիմ, զօ գուդօս «կեփեմ, կուզեմ, կտաս»: — Անկատարը Հաճինում
ունի երկու ձև. առաջինը սովորականն է, երկրորդը նրա վրա
ավելացած թուրքերենի idi անկատարի մասնիկը. ինչ. գագ՛ի
կամ գագ՛ի իդի «գալիս էի»:

Ապառնին երկու տեսակ է Մարաշում. սովորական ապառնի,
որ կազմվում է բիդէ (պիտի) մասնիկով, և անմիջական ապառ-
նի, որ կազմվում է իգիլ (ուզել) բայով. ինչ. բիդէ բիրիմ «պի-
տի բերեմ», գիգիմ բիրի «անմիջապես պիտի բերեմ»: Հաճինում
ապառնիի պիտի մասնիկը դարձել է բ, իսկ անցյալ ապառնին
կազմվում է թրք. idi մասնիկով. ինչ. բիշտօմ, բիգ՛օմ «պիտի եր-
թամ, պիտի դամ», բիշտի իգի, բիգ՛ի իդի «պիտի երթայի, պի-
տի գայի»:

Գերբայի համար ունենք իր, իյ, օն, մօն ձևերը. ինչ-գիրի է, գիրի է, գիրօն է (հերի է), իփմօն է (եփած է):

12) Սյուրբայի բարբառ.— Հայերենի ամենից այլափոխված բարբառն է, որ խոսվում է Սվետիա գավառում և Ասորիքի մի քանի հայաբնակ գյուղերում. այն է ձիւր-ի-Շուզուր ավանի մոտ Արածո, Կնեյ, Յազուզիե գյուղերը և Լաթաքիայի մոտ Ղնեյմիե գյուղը: Ունեմ այս բարբառի ընդարձակ ուսումնասիրությունը, որ առայժմ անտիպ է: Բարբառը պահել է հին հայերենի ձայնավորները, ունի նաև ա, էօ, իւ և հարուստ է երկրորդականի (ինչ. այ, աք, աւ, էյ, ե, ուա): Չայնական փոփոխությանց մեջ նկատելի են ա > ու, ե > ի, ք > ա, ի > էյ, ու > աւ, (ինչ. հուց, բուքք, բէրուե, շուր' փի. հաց, պարաք, բերան, չար,— հուցա, բէրուեա, բուքքէրա' փի. հացը, բերանը, պարաքերը,— յէրգէյնք, հօքէյն, յէյա' փի. երկինք, հոգին, զիւ,— սարփ, աեան' փի. սուրբ, անուն են): Սվետիայում ա գ-ից առաջ դառնում է իւ (ինչ. մաղ > միւղ, աղ > իւղ, թաղ > թիւղ): Նորգիրներից պահպանված են զ հայցականի համար և ի' բացառականի ու ներգոյականի համար. ինչ. ի գէղէյնքա շի գեաթին, ի փուրցուեքա շի փորձանո, ի շուրքէյն շի չարէն» են:

13) Արարիի բարբառ.— Այս բարբառը խոսվում է Փարսի Հայքի հարավային մասում. գլխավոր քաղաքներն են Արարիի, Տիգրիկ, Կյուրին, Տարենան, ինչպես նաև Կեսարիայի և Յազուզի գյուղերից մի քանիսը (Ֆնացյալը լինելով թրքախոս): Շրջանիս մեծագույն կենտրոնը լինելով Արարիի, բարբառը կոչեցինք որա անունով:

Այս բոլոր տեղերից կան մանր-մուկեր նմուշներ. մանր-մասն քննության ենթարկված է միայն բուն Արարիի բարբառը (Մելիք Ս. Գավիթ բեկ, Արարիի գավառաբարբառը, Վիեննա 1919):

Արարիի բարբառը ընդհանրապես դրաբարին հավասարիմ է. կարևոր նախանիշները հետևյալներն են. 1) Գործիականի մասնիկն է օք. ինչ. ձէրօք, խօւէլօք: 2) Սահմ. ներկայի և անկատարի մասնիկներն են գա, զօ, գու նախադաս կամ հետադաս, որոնք ձայնավորով սկսվող բայերի մոտ կրկնվում են. ինչ. գէրա գու, զօ գէրամ, գա գէրամ կամ գէրամ գա' ըստ տեղի: 3) Գերբայի սեռականն է Կեսարիայում-ույի. ինչ. մեալույի, էր-

բալույի. 4) Շարունակական ներկան և անկատարը կազմվում են բեր, քր կամ ք մասնիկներով. ինչ. գէրքամ բեր, գէրքամ քր, գէրքամ ք: 5) Ապառնին կազմվում է դի (ձայնավորի մոտ դ) մասնիկով. ինչ. դի խմիմ, խմիմ դի, դէքամ «պիտի երթամ»:

14) Ակեա բարբառ.— Խոսվում է համանուն քաղաքում և նրա շրջակա մի քանի հայ գյուղերում: Այս բարբառով գրված մեծագույն ժողովածուն է Հ. Ճանիկյանի «Հնուսթիւնք Ակեայ» (Թիֆլիս 1895). մի լուրջ գիտական ուսումնասիրություն ունի Մաքսուդյանց, Le parler arménien d'Akn, Paris 1912.

Բարբառիս գլխավոր հատկանիշներն են.—

Չայնական փոփոխություններ.— 1. ա ձայնավորը անգականից առաջ դառնում է օ. ինչ. ջօնը, օլլի, օրգէվ (ճանճ, անալի, անձրե). 2. ու դառնում է իւ, իսկ ո և օ դառնում են էօ. ինչ. իւք, իւնիս, շէօս, դ'էօն, աւէօր (ութ, ունիս, շորս, դուս, այսօր). 3. բառավերջի հ-ից առաջ ավելացվում է յ կիսաձայնը. ինչ. մայն, գ'օյն, շայն, այն (մահ, գոհ, շահ, ահ). 4. բաղաձայնները ունեն երեք աստիճան և նրանց ձայնափոխությունը ճիշտ նույն է' ինչ որ Խարբերում և Արարիիում:

Քերականության մեջ արտասովոր նորություններ չկան. եղածները արդյունք են ձայնական փոփոխությանց. բայերի հզ. Ա դեմքը վերջանում է անք, փի. ինք. ինչ. գիւղէանք, բ'երանք (կուտէինք, բերինք).— ապառնիի մասնիկն է դի, ձայնավորի մոտ դ (դի բ'երիմ, դիւղէք «պիտի բերեմ, պիտի ուտեք»):

15) Սերաստիայի բարբառ.— Խոսվում է Սերաստիա հայաշատ քաղաքի և նրա շրջակա բազմաթիվ գյուղերի մեջ: Առանձին ենթաբարբառ է կազմում Բրգնիկ գյուղը:

Այս բարբառով ոչ մի գրվածք չկա հրատարակված. Կ. Գարիկյան կազմել էր մի ընդարձակ ուսումնասիրություն, բայց մնում է անտիպ:

Չայնական դրությունը բավական հարուստ է. ունի ա, էօ, իւ ձայնավորները և ե, ո երկրորդականի հնչույթները. վերջինս որ հատուկ է միայն Սերաստիայի բարբառին, ունի մոտավորված նաև ուէօ հնչյունը և գտնվում է միայն շեշտի տակ: Պայթական բաղաձայնները ունեն երեք աստիճան և փոփոխվում են ճիշտ այնպես, ինչպես Խարբերի բարբառում: Կա նաև բացառականի և ներգոյականի հատկանիշներ:

Ձայնական փոփոխութեանց մեջ նկատելի են ք դարձած յն (ինչ. վայն, իրէյն, փափայն=վանք, երևք, փափագ)։— Կ դարձած յ՝ բաղաձայնից առաջ (ինչ. բ'այլա, ջայ մը, ախլի-դղա=բակլայ, ճանկ մը, աղջիկ-տղայ)։ Հ դառնում է ֆ՝ միավանկ բառերի ու ձայնի մոտ. ինչ. ֆորք, ֆոդ, ֆոք=հորթ, հոդ, հոդ.— տր դառնում է յյ. ինչ. գըյյէլ, հըըյէլ, մայյը=կտրել, ընտրել, մանտր։

Բայերի ներկան և անկատարը կազմվում են հետադաս գրմասնիկով՝ նման Կարնոյ բարբառին. ինչ. ցքէ գը, գելէ գը, գէրթա գը.— շարունակականը կազմվում է գօր մասնիկով. ինչ. բ'էրէմ գօր, բ'էրէյի գօր.— ապառնի մասնիկն է բիդի (նախադաս կամ հետադաս), որ կարող է կրճատվել բի. օր. բի ընենք.— կատարյալ հգ. Ա դեմքի վերջավորութունն է անք. ինչ. գ'րէ-ցանք։

16) Եվդովկիայի բարբառ.— Խոսվում է Եվդովկիա կամ Քոքաթ քաղաքում. գաղթականութեան միջոցով տարածված է մինչև Ամասիա, Մարսիան, Օրտու, Մամսոն և Մինուպ։ Առանձին ենթաբարբառ ունի Գիրզոզես գյուղը։ Բարբառիս ուսումնասիրությունը պատրաստել է Հ. Գազանձյան (Վիեննա 1899), որ տալիս է նաև մի քանի նմուշներ։

Ձայնական դրությունը հաշուատ չէ. նոր ձայնավորներից կա միայն ա.— ու ձայնավորը ստացել է ուն էրկարբառային հընչյունը.— բաղաձայնների երեք աստիճանները վերածված են երկուսի, այն է բ, փ, գ, ք ևն, ըստ որում հին հայերենի թեթրթուուն և թե խուլ բաղաձայնները հավասարապես վերածված են թրթուունի։ Քերականությունը ընդհանրապես Պոլսի բարբառին նման է։

17) Ամասիայի բարբառ.— Այս բարբառը խոսվում է Ամասիա քաղաքում, որ գտնվում է Եվդովկիայից հյուսիս-արևմուտք։ Այս բարբառի մասին կա միայն մի հոդված՝ «Ամասիոյ հայերը» խորագրով, որ պատկանում է ծանոթ բարբառագետ Հ. Գազանձյանի գրչին և հրատարակված է Մադիկ օրաթերթում, 1899 սեպտ. 29, № 21։ Այս հոդվածը ես չեմ տեսած, բայց հեղինակը առանձին նամակով ուղարկել էր ինձ նրա լեզվաբանական մասի բովանդակութունը, որ և դնում եմ այստեղ։

Ընդհանրապես ձայնական դրությունը նման է շրջապատի

բարբառներին (Եվդովկիա ևն)։ որոնցից հիմնական տարբերություններ չունենալով հանդերձ, ունի մի քանի բնորոշ գծեր։ Թե՛ ձայնավորները և թե՛ բաղաձայնները ըստ կարելիության հավասարիմ են հնին և չեն ներկայացնում սղման ու անկման երևույթներ։ Տր ձայնախմբի մեջ ք ստացել է ուժեղ ու հնչումը. ինչ. լիտր>լտրո, մանր>մանարո, ծանր>ծանարո, կտրել>կտրեյ, կտրել>կտարել, Պետրոս>Պետրոս ևն։

Քերականութեան մեջ ուշագրավ է հոգնակիի նվեր մասնիկը, որ ուրիշ բարբառների մեջ երկակիի վրենք մասնիկն է (սովըներ, ձեռվըներ ևն), բայց այստեղ շրջվել է և դարձել հոգնակիի համար ընդհանուր մասնիկ. ինչ. աղջիկներվեր, երեսներվեր ևն։ Միևնույնը գործածվում է նաև ստացականի համար. ինչ. ձեռներվիս, տուներվիդ (այն է՝ ձեռվընիս, տուևվընիդ) ևն։

Հոլովման մեջ հայր, մայր բառերը հետևելով քոյր բառին՝ դառնում են սեռ. հարոջ, մարոջ, կամ նաև սեռականի կրկնակ ձևով՝ հորոջ, մորոջ։

Պոնարման մեջ սահմ. ներկան կազմվում է հետադիր կա մասնիկով. ինչ. կերթամ կա, կուգամ կա, հստիմ կա ևն. Բայց եզակի Գ դեմքը ունի բոլորովին առանձնահատուկ մի ձև՝ առանց կա մասնիկի. այսպես՝ կուզև «կուզէ կոր», կուզու «կուզայ կոր», կառև «կառնէ կոր», վազև «կը վազէ կոր», ի՞նչ կարգավ «ի՞նչ կկարդայ կոր»։ Այս ձևը գտնվում է նաև Չարշամպայի մեջ և ուրիշ որևէ բարբառում չկա։— Ապառնին կազմվում է պուտու մասնիկով. ինչ. պուտու երթամ, պուտու պառկիմ ևն։— Ա. լծորդութեան եմ վերջավորությունը դառնում է իմ. ինչ. խմիմ կա, խմիս կա, պուտու խմինք, լի՛ց որ խմին ևն (բացի եզ. Գ դեմքից, որ տեսանք). Լծորդութեան ձևափոխութեամբ ունենք մօտալ, խօսալ. ինչ. մի՛ մօտար «մի՛ դիպչիր, մի՛ մօտիր», խօսօգը խօսաց «աջրորը կանչեց»։ Դարձյալ՝ կայնացի, կայնացիր, չի կայնացինք «կըցայ, կըցար, չկըցանք» ևն։

18) Օրտուի բարբառ.— Խոսվում է Սև ծովի ափին Օրտու քաղաքում (մինչդեռ գյուղերը պատկանում են Համշենի բարբառին)։ Մալաթիայի և Տիգրանակերտի բարբառի նման այստեղ էլ պայթական բաղաձայնները երկու աստիճան ունեն. թրթուուն և թավ, ըստ որում խուլերը դառնում են թրթուուն, իսկ թրթուունները թավ. ինչ. կատու>գաղու, տարի>գարի

առանձնաբար, բերան>փէրան, դանակ>քանագ ևն. Գիտապար-
թական բաղաձայնները ուրիշ բաղաձայններից առաջ հաճախ
կորցնում են իրենց ատամնական մասը. ինչ. տարածվիլ>դո-
րազվիլ, մեծ մարդ>մէզ մարք, բարձր>փարս, լցվան>լսվան,
վեց տարի>վէս դարի ևն. նմանապես կ, գ ձայնները ուրիշ բաղա-
ձայնից առաջ դառնում են յ. ինչ. լոգանալ>լոյնալ, քակվի
է>քայվէր է, նամակ մի>նամայ մը ևն:

Հոլովման մեջ հետաքրքիր են շուն, տուն բառերի սեռակա-
նը շունան, դունան. ինչ. շունան ցան «շան ձայն», դունանը դեր-
բով «տանը տէր եղաւ»:

Խոնարհման մեջ Ա լծորդության և ձայնավորը դառնում է
ի՛ ռնգականի մոտ. (ինչ. ըսիմ, անիմ, բաղմիմ). շարունակա-
կանը կազմվում է գոր մասնիկով (բաղմիմ գոր «պատմում եմ»)
կատարյալ հգ. Ա դեմքի վերջավորութիւնն է անք, ցանք. ինչ.
ըսանք՝ «ասացինք», քնացանք՝ «քնացինք», մնացանք՝ «մնացինք»:
Ապառնին կազմվում է բի մասնիկով, որի ձայնավորը կարող է
կրճատվել կամ ոչ. ինչ. բի անիմ «պիտի աննմ», բի էրթամ
կամ բէրթամ «պիտի երթամ»: Բացասականի խոնարհման մեջ
էական բայը կրկնվում է. ինչ. չէմ դէսէր էմ «չեմ տեսել», չես
դէսէր էս «չես տեսել», չի դէսէր է «չի տեսել», չէի դէսէր էի
«չէի տեսել» ևն:

Այս բարբառով ոչ մի նմուշ չէ հրատարակված, և ոչ մի
ուսումնասիրութիւն էլ գոյութիւն չունի: Այս տողերով առաջին
անգամն է, որ ծանոթանում է այս բարբառը գիտութեան:

19) Զմյուռնիայի բարբառ.— Խոսվում է Զմյուռնիայի և նրա
մոտակա մի քանի հայաբնակ քաղաքների մեջ. այն է Մանիս,
Գառապա, Պայընտըր, Գրգաղաճ ևն: Այս բարբառի վրա ոչ մի
ուսումնասիրութիւն չկա. հրատարակված է միայն մի կարճ
հատված, որից երևում է, որ բարբառը չափազանց նման է Պու-
սի և հատկապես Եվդոկիայի բարբառին:

20) Նիկոմիդիայի բարբառ.— Այս հայաշատ շրջանը, որ
Փոքր—Ասիայի հյուսիս-արևմտյան ծայրում աննկուն պահել է
հայ լեզուն, երկու գլխավոր քաղաք ունի. Նիկոմիդիա և Ատա-
փազար: Սրանց շուրջը ցրված են բազմաթիվ մեծ մեծ գյուղեր,
որոնցից հիշատակելի են Յալովա, Ասլանբեկ, Պարտիզակ, Կեյվե,
Չենկիլեր ևն: Այս գանազան տեղերից կան մանր-մուշր նմուշ-

ներ. բայց մի ամբողջական ուսումնասիրութիւն չկա. Ամենից
ավելի ծանոթ և հետաքրքրական է Ասլանբեկի ենթաբարբառը,
որի մասին ունեմ մի փոքր ուսումնասիրութիւն (Վենետիկ
1898):

Այս ենթաբարբառը հարուստ է ձայնավորներով. բացի ա, էօ
իւ հնչյուններից, ունի մի տեսակ բաց è և մի ռնգային գ.—
բաղաձայնները ունեն երեք աստիճան (բ, բ', փ) կա նաև մի
տեսակ հաստ լ:— Զայնավորների ձայնափոխութեանց մեջ հե-
տաքրքրական է օ դարձած ռնգականի մոտ ա (գամէլ), ա ուր-
գականի մոտ է, էօ կամ օ. ինչ. էնիւ, էնիւն, էնէօթի, էմիւր,
մօրյը, մօրյը, սօրյը, քէօրգը (անուշ, անուն, անօթի, ամուր,
մանր, ծանր, սանտր, թանձր), գէօշնալ (ճանաչել), էօրգով (անձ-
րե) ևն:

Շատ ավելի հետաքրքրական է բաղաձայնների փոփոխու-
թիւնը. ուր որ երկու բաղաձայն պատահին միմյանց, առա-
ջինը կկրճատվի. գ դառնում է յ.—բ, բ, փ, դ, ք ընկնում են
կամ փոխանակվում են կոկորդի մի սեղմումով, որ նշանակում
եմ * նշանով.— և, շ, շ, ծ, ձ, ց վերածվում են ծ, շ, գ, ս. ինչ.
նիյ մարք «հինգ մարդ», շա* փա* գա «շատ փայտ կայ», շած
մը «ճանճ մը», վէս դղա «վեց տղա», ի՛շ գա «ի՛նչ կայ» ևն:

Քերականութիւնը նման է Պուսի բարբառին. շարունակա-
կան ձևը կազմվում է հա՛յէ մասնիկով (զը՛սիրիմ հայէ, զը
սիրէի հայէ), որ նիկոմիդիայում յօր ձևն ունի:

21) Պուսի բարբառ.— Այս բարբառը խոսվում է միայն Կոս-
տանդնուպոլիս քաղաքում, որ աշխարհիս ամենահայաշատ քա-
ղաքն էր մինչև Ա համաշխարհային պատերազմը: Այժմ այդ
պատիվը անցավ Երևանին: Այս բարբառով զրկածքներ շատ
բազմաթիվ են. կա և իմ մի ընդարձակ ուսումնասիրութիւնը
(Երևան 1941):

Զայնական դրութիւնը աղքատ է. պակասում է ա ձայնը,
թեև կան իւ և էօ ձայնները: Չկա նույնպես և, է և ո, օ ձայնա-
վորների տարբերութիւնը: Երկբարբառներ նույնպես պակա-
սում են: Բաղաձայնների երեք աստիճանները վերածված են
երկուսի. թրթուուն և թավ (բ, փ, գ, ք) ևն:

Սրանց հակառակ ձայնական փոփոխութիւններ տեղի
ունեցած չեն մեծ չափերով. և Պուսի բարբառը՝ թեև հայ հայ-
րենիքից շատ հեռու, բայց շատ ավելի հավատարիմ է մնա-

ցած հայ լեզվին, քան նույն իսկ Հայաստանի բարբառներից շատերը:

Այսպես է նաև քերականությունը, ուր մեծ փոփոխություններ չկան. Պոլսի բարբառը արևմտյան գրական բարբառի նախատիպն է: Նորություններից մեծագույնը բայերի շարունակական ձևի գոք մասնիկն է, որ գրական լեզվում ընդունված չէ:

22) Ռոտոսթոյի բարբառ:— Պոլսից դեպի արևմուտք հայերեն լեզուն ջնջված է. Եվրոպական Թուրքիայի և Բուլղարիայի բնիկ հայությունը թրքախոս է: Այս թրքախոս շրջանում բացառություն է կազմում Ռոտոսթոյի հայությունը, իր հարևան Մալկարայի հետ միասին, որոնք ներկայացնում էին բավական ստվար բնակչությամբ մի հայ գաղութ:

Ռոտոսթոյի բարբառը գրի առնված չէ. չկա նրա վրա որևէ ուսումնասիրություն:

Ռոտոսթոյի բարբառը շատ չի տարբերվում Պոլսի բարբառից. ձայնական դրությունը նույնն է. բայց կա մի խոշոր տարբերություն ձայնական փոփոխությունաց մեջ. այդ այն է, որ մինչդեռ Պոլսի բարբառում ք, գ, դ, ձ, շ թրթուռն բաղաձայնները պահված են անփոփոխ, այստեղ ընդհակառակը վերածված են թավ փ, ք, ք, ց, շ (ձիշտ ինչպես Օրտուռի, Մալթիայի և Տիգրանակերտի բարբառներում): Այս ձայնափոխությունը, որ ապա անցել է նաև Պոլսի գրական արտասանության, շատեր վերադրում են նաև Պոլսի բարբառին, ինչ որ բացարձակ սխալ է: Պոլսի ուսմիկը հնչում է բէքան, գիրք, դուռ, շուր, ձմէռ, և գրաչետն է միայն, որ հնչում է այդ բառերը փէքան, քիրք, բուռ, շուր, ցմէռ:

Քերականության մեջ էլ Ռոտոսթոյի բարբառը նման է առհասարակ Պոլսի բարբառին. այստեղ էլ դտնում ենք շարունակականի համար գոք մասնիկը, որի դեմ երբեմն գործածվում է զօ կամ օր: Ապառնին կազմվում է բբբբ, բբդ, բբդբ մասնիկներով, մինչդեռ Պոլսի բարբառը ունի միայն բիդի:

23) Խրիմի բարբառ.— Այս բարբառը խոսվում էր նախապես միայն Խրիմի թերակղզում. 1779 թվի գաղթականությամբ փոխադրվեց հարավային Ռուսաստան, ուր հայերը շինեցին Նոր-Նախիջևան քաղաքը, իր շրջակա 5 գյուղերով: Այստեղից էլ հայերը տարածվեցին Ռոստով և այլ շրջակա քաղաքները:

Այս բարբառով կա ճոխ գրականություն. հիշելու արժանի են հատկապես Ռ. Պատկանյանի երկերը (հտ. I և II Պետերբ. 1893, հտ. III Ռոստով 1904): Կա ընդարձակ և մանրամասն ուսումնասիրություն (Հ. Աճառյանի, Երևան 1926, Համալսարանի ապակետիպ):

Խրիմի կամ որ նույն է Նոր-Նախիջևանի բարբառը շատ մոտիկ է Պոլսի բարբառին. ձայնական դրությունը նույն է. միայն պակասում է էօ ձայնը: Պոլսի բարբառին նման այստեղ էլ բաղաձայնները ունեն երկու աստիճան (ք, փ, գ, ք և ն), բայց գյուղերում կան բոլոր երեք աստիճանները (ք, ք', փ և ն):

Քերականությունն էլ նման է Պոլսի բարբառին. միայն հայցականը Ում ձյուղի նման՝ նույն է տրականի հետ: Դասական թվականները կազմվում են ում մասնիկով (էրկուսում, ժէքում, չօրսում ևն): Շարունակական ձև գոյություն չունի բայերի խոնարհման մեջ:

24) Առախալի բարբառ.— Լեհաստանի, Բուկովինայի, Սուչավայի, Տրանսիլվանիայի, Հունգարիայի և Ռումինիայի գանազան կողմերը ցրված մեծ ու փոքր հայ գաղութները, եթե հայերեն լեզուն մոռացած չեն, խոսում են մի բարբառ, որ հարմար դատեցինք կոչել այս անունով: Սրանցից լեհահայ բարբառը ուսումնասիրել է Հանուշ հայագետը իր երկու գործերի մեջ (Sur la langue des Arméniens polonais, I. Mots recueillis à Kuti, Cracovie 1886 և Beitrage zur Armenischen Dialectologie): Այս գանազան բարբառները ուսումնասիրել եմ ինքս (Քննություն Առախալի բարբառի, գեռ անտիպ): Հունգարիայից կան մանր-մունք մնազիրներ, բայց առանձին ուսումնասիրություն չկա:

Այս բարբառը հայերենի վերջին սահմանապահն է:

Սուչավայի բարբառը պարունակում է հայերենի սովորական ձայնավորները (չունի ու, էօ, իւ), երկբարբառների կողմից շատ հարուստ է. ունի աւ, իւ, օւ, իեւ, իբ, ե, բայց չգիտե ո (ինչ. ցաւ, բաղիւ, սի՛րդ ևն): Բաղաձայնները ունեն երեք աստիճան (ք, ք', փ և ն):

Բարբառը ընդհանրապես հավատարիմ է հին հայերենին և աչքառու ձայնափոխություններ չկան:

Քերականության մեջ նկատելի երևույթները հետևյալներն են. 1) հայցականը ստանում է գ նախդիրը Մշո բարբառին նման.

2) գործիականը կազմվում է օւ մասնիկով. 3) դասական թվական անվանները կազմվում են ում մասնիկով (էրգուում, իրէքում ևն), ինչպես Խրիմի բարբառի մեջ. 4) Սահմ. ներկայի և անկատարի մասնիկն է գի. ինչ. գի սիրիմ, գի սիրիս, գի սիրէի ևն. 5) անկատարի եզակի բ դեմքը ներկայի նմանողությամբ ստանում է ս. ինչ. գի սիրէի, գի սիրէիս ևն. 6) շարունակական ներկայի և անկատարի ձև չկա, ինչպես Խրիմի բարբառում. 7) ապառնին կազմվում է բիզօր մասնիկով. իսկ Հունգարիայի հայերը գործածում են բի, ձայնավորի մոտ բ. 8) կատարյալ գործածությունից ընկած է և նոր եվրոպական լեզուների հետևողությամբ փոխանակված է հարակատարով. ինչ. սիրիլ իմ փոխանակ սիրեցի:

Գ) Եւ ճյուղ

Այս ճյուղը ունի 5 բարբառ.

1) Մարաղայի բարբառ.— Խոսվում է Պարսկական Ատրպատականի Մարաղա քաղաքում, որ Ուրմիայի լճի արևելյան երեսում է գտնվում: Բարբառիս չվրա ունիմ ընդարձակ ուսումնասիրություն (Քննություն Մարաղայի բարբառի, Երևան 1926, Համալսարանի ապակետիկ), ուր: Կան նաև բազմաթիվ բնագրեր:

Ձայնական դրությամբ բարբառու շատ հարուստ է ունի 11 ձայնավոր, 6 երկբարբառ և 34 բաղաձայն, ընդամենը 51 ձայն. Բացի սովորական ձայնավորներից, այստեղ գտնում ենք m, էօ, իւ, ինչպես նաև մի տեսակ փակ ը և մի տեսակ բաց ի' (i): Երկբարբառներն են ըէ, ըի, ուէ, ուի, օւ, օի.— բաղաձայններն են, բացի սովորականներից, գյ, կյ, բյ, հյ և կիսաձայն u:

Մարաղայի բարբառը բավական հեռացած է հին հայերենի ձայնական օրենքներից. օրինակ՝ ի հաճախ դառնում էի, բ (կյոբբ, տբպրբ), ո դառնում է վրի, լէօ, ըի, ուէ, ուի (կուիթ, վրիթթ, խուէդ, կյիլլէթէլ), ոյ դառնում է չի, ուի (ուիս), հ դառնում է խ (խաց, խավ), թրթուուն բաղաձայնները վերածվում են խուլի ևն, Ամենից կարևորը ձայնավորների ներդաշնակության օրենքն է, որ թուրքերենի ազդեցությամբ է առաջացած: Ձայնավորները բաժանվում են երկու կարգի. ծանր և թեթև. ծանր են ա, բ, բ, օ, ու, թեթև են m, է, ի, ի', էօ, իւ:

Մկրտչեն այն է, որ մի բառի բոլոր ձայնավորներն էլ պատկանեն միևնույն կարգին, այսինքն կամ բոլորն էլ լինեն ծանր և կամ բոլորն էլ լինեն թեթև: Օրինակ՝ գարի, բարի բառերի առաջին ձայնավորը ծանր է, երկրորդը թեթև, ինչ որ ձայնավորների ներդաշնակության օրենքի համար անկանոնություն է, ուստի առաջինն էլ դառնում է ա, որով առաջանում են կյոբի', պոաի, երկուսն էլ թեթև՝ ձայնավորներով: Այս օրենքը տիրում է նաև քերականության մեջ, ուր ամեն ինչ՝ հոդ, անվանական ու բայական մասնիկներ ու վերջավորություններ ձևափոխվում են ձայնավորների փոխադարձ ազդեցությամբ:

Հոգնակիի մասնիկներն են իք, ճիք, քիք. հոլովման մեջ սղում կամ անկում գոյություն չունի. ներգոյական չկա. բացառականը կազմվում է էն մասնիկով, իսկ հայցականը ում ճյուղի նման է:

Բայի խոնարհումը շատ է փոփոխված. ներկայի բունը կազմվում է բայի անորոշից՝ նրան կցելով կամ հետը խոնարհելով օժանդակ բայը. օր.

իւզէլ իմ, իւզէլ իս, իւզէլի,

իւզէլինք, իւզէլեք, իւզէլին:

Անկատարը կազմվում է ներկայի վրա ավելացնելով էր մասնիկը՝ առանց դեմքի և թվի խտրության. ինչ.

իւզէլիմ էր, իւզէլիս էր, իւզէլեր...:

Կատարյալի համար հնարված է նոր ձև.

իւզում, իւզիր, իւզից,

իւզունք, իւզուք, իւզուն.

Ապառնին կազմվում է սովորական ձևով և կը մասնիկով կիզիմ, կիզիս, կիզիս ևն:

Անցյալ ապառնին՝ կիզիմ էր, կիզիս էր, կիզէր ևն:

2) Արզվիների բարբառ.— Այս բարբառը խոսվում է Արզվին քաղաքում, մոտակա Արտանուշ ավանում. թերևս նաև Արտանուշում և նրանց շրջակա հայաբնակ գյուղերում:

Արզվիների բարբառի ձայնական դրությունը նման է Տփղիսի բարբառին. բաղաձայնների երեք աստիճանները անվթար պահված են. հոլովման մեջ բացառականը կազմվում է մէն մասնիկով, ներգոյականը ում, հոգնակի սեռականը էրու. այս բոլորը հիշա նման են Տփղիսի բարբառին:

Խոնարհումը սակայն տարբեր ձևով է: Մինչդեռ Մարաղա-

յի բարբառը ներկայի բունը կազմելու համար առնում էր անորոշի բունը, Արդվինի բարբառը այդ անորոշի վրա ավելացնում է նաև իս մասնիկը և խոնարհում է էական բայի հետ. ինչ խօսելիս էմ, էրթիս էս, փնտոելիս է ևն: Գարեղի է նաև վերջածայն u կրճատել. հատկապես երբ օժանդակը առաջ է անցնում. ինչ. քլնելի է, վօօրդի էս էրթի, չէմ կայի խօսելի ևն: Այս ձևով Արդվինի բարբառի սահմանականի կազմության այս եղանակը նույնանում է Երևանի բարբառի միավանկ բայերի խոնարհման ձևի հետ (տալիս եմ, գալիս եմ, լալիս եմ, ե՛ս եմ գալի, տալի ու լալի): Ուրիշ խոսքով Երևանի բարբառի բացատրիկ ու մասնավոր մի երևույթը այստեղ դառնում է ընդհանուր:

Առանձնապես հետաքրքրական է Արդվինի բարբառի հրամայականի մի ձևը, այն է՝ գրիս ա, խօսիս ա ևն:

3) Հավարիկի բարբառ.— Խոսվում է Կուր գետի ձախ օփին՝ Արեշ գավառի 6 հայաբնակ գյուղերում, որոնցից կարևորը Հավարիկն է:

Այս բարբառի վրա մանրամասն մի ուսումնասիրություն ունի Գր. Տեր-Պողոսյան, որ նրա մի համառոտությունն էլ հրատարակել է Հայաստանի Գիտական ինստիտուտի Բանբեր ժողովածուի մեջ, էջ 160—177, նմուշներով միասին:

Բարբառս շատ կետերով նման է Ղարաբաղի, Ջուղայի և Շամախիի բարբառներին, բայց իր քերականական կազմությամբ անջատվում է բոլորից:

Գլխավոր հատկանիշներն են.

1. Սահմանական ներկայի և անկատարի կազմության մեջ ոչ միայն ընդունում է Արդվինի բարբառի գրությունը, այլ և մի քայլ ևս առաջ գնալով՝ իս վերջավորություն հետ գնում է նաև -ում. այսպես՝

Գիրելիս ըմ, խինդուլիս ըմ,

Գիրելըմ ըս, խինդուլիմ ըս,

Գիրելիմ ի, խինդուլիմ ի...

Գնալըմ էի, գնալըմ էիր...

Կա սակայն նաև դերբայի կրճատված օ ձևը. ինչ.

Գնալօյըմ, գնալօյըս, գնալօյի,

Գնալօ էի, գնալօ էիր ևն:

Այս ձևով միանում են այստեղ Երևանի բարբառի տալիս եմ, գալիս եմ, լալիս եմ ձևերի հետ նաև Նոր-Բայազետի ենթա-

բարբառի գալում եմ, տալում եմ, լալում եմ համապատասխան ձևերը:

2. Ապառնիի համար կը ձևը չկա, այլ միայն դերբայական ձևեր, որոնք են՝

գնալւմ յըմ, գնալւմ էի,

գնալւցուկ ում, գնալացուկ էի,

գնալական ըմ, գնալական էի...

3. Ստորադասականը կազմվում է միայն անորոշով. ինչ. գնալ ըմ, գնալ ըս, գնալ էի, գնալ էիր ևն:

4) Խոյի բարբառ.— Այս բարբառը ընդարձակ տարածություն ունի. նա բռնում է ոչ միայն Պարսկաստանի Խոյի, Սալմաստի և Ուրմիայի գավառները, այլ և Արաքսից այս կողմ՝ Իզդիր և Նախիջևան: 1828 թվի Պարսկահայոց գաղթի ժամանակ Սալմաստի, Խոյի և Ուրմիայի կողմերից շատ հայեր եկան հաստատվեցին Արարատյան նահանգի զանազան կողմերը, մինչև իսկ Զանգեզուր և Միսիան: Քաղաքներում և ավաններում հաստատված նորեկներից շատերը բնիկների հետ խառնվելով՝ կորցրին բարբառը. բայց տեղ տեղ էլ երկու բարբառները կողք կողքի մնացին: Այսպես օրինակ՝ Աստապատում կան թե՛ բուն աստապացիք, որ խոսում են Երևանի բարբառի մի ենթաբարբառը, և թե՛ նորեկ խոյեցիք, որ պահել են իրենց բնիկ բարբառը: Գալով պարսկահայոց նոր հիմնած գյուղերին, սրանք բնականաբար մինչև այսօր անփոփոխ պահում են իրենց բարբառը, մինչև իսկ Երևանի շրջակայքում:

Այս բարբառով կան մի քանի գրվածքներ. մեծագույններն են Ն. Տեր-Աւետիքյանի «Ոտանաւոր աշխատութիւններ և Նշանադրութիւն Պարսկաստանից գաղթած Խոյեցւոց բարբառով» (Վաղարշապատ 1900) և «Բանաստեղծութիւններ և Կիրակոսի հարսանիքը» (Վաղարշապատ 1903):

Այս գրվածքներից երևում է, որ Խոյի բարբառը բռնում է միջին դիրք Վանի և Մարաղայի բարբառների միջև: Չայնական օրենքները նման են Վանի բարբառին, ուրիշ խոսքով Խոյի բարբառը Մարաղայի բարբառից մի քիչ ավելի մոտիկ է դրական հայերենին:

Քերականության կողմից Խոյի բարբառը ներկայացնում է Արդվինի բարբառի էլ ավելի զարգացած պատկերը: Մինչդեռ Արդվինի բարբառը սահմանականի բունը կազմում է -ելիս եմ

ձևով, այստեղ լի միջաձայնը մաշվելով և ընկնելով ստացվել է:
Ես: Այսպես են ստացվել Խոյի բարբառի ասէս եմ, Ուրմիայի
բարբառի բովէս եմ, քսնէս եմ ևն ձևերը, որոնք ուրիշ բան չեն:
Եթե ոչ շասելիս եմ, ասելս եմ, անցնելիս եմ, անցնելս եմ, ըս-
նելս եմ» ձևերի վերջին աստիճանը:

5) Մեղրիի բարբառ.— Այս բարբառը խոսվում է Մեղրի-
ավանում և մոտակա Կարճեան գյուղում: Ընդարձակ ուսումնա-
սիրությունը գրեց է. Աղայան «Քննություն Մեղրու բարբա-
ռի», Երևան 1941:

Չայնական տեսակետով շատ փոփոխված մի բարբառ է.
այնպես որ Ազուլիսի բարբառից հետո մեր ամենազժվար հաս-
կանալի բարբառը կարող ենք համարել: Շատ ձևահան եղած
բառերից են օրինակ՝ նիլ «գալ», նա՛նիլ «ընկնել», նածա «ըն-
կած է», խնդիլ «խնդրել, ուզել, ցանկանալ», շո՛մէնչ «չամիչ»,
նիր «եքք» ևն:

Հոլովական վերջավորություններն են սեռ. ու, բցռ. է,
գործ. ավ, ներգ. ամ, հոգնակիի մասնիկներն են ար, որ, նէր, նէ:
Կան նաև ձայնավորների ներդաշնակության հետքեր:

Պոնարհման մեջ կարևոր է դիտել սահմանականի կազմու-
թյունը, որ գրեթե նույն է Խոյի բարբառի հետ, միայն մի քայլ
ավելի առաջ դնացած: Մինչդեռ Խոյի և Ուրմիայի բարբառում
սահմ. ներկայի վերջավորությունն է -էս եմ, Մեղրիում դառ-
նում է -ի՛ս իմ. իսկ անկատարը կազմվում է ավելացնելով
նույնի վրա լու. Օր.

- | | |
|----------|-------------|
| սիրիս իմ | սիրիս իմ լո |
| սիրիս իս | սիրիս իս լո |
| սիրիս ի | սիրիս ի լո |
| սիրիս իք | սիրիս իք լո |
| սիրիս ին | սիրիս ին լո |

(Հոգնակիում Ա և Բ դեմքերը նույն են, ինչպես Ազուլիսի բար-
բառում):

Այս լու ձևը կրճատումն է գրք. լեալ «եղած, եղել» ձևի,
ուր վերջաձայն լ ընկել է, ճիշտ ինչպես բառի բնի մեջ (սի՛րիս
իմ<սիրելիս, *սիրելս եմ):

Մեղրու բարբառի նման -ել, ելիս ճյուղին են պատկանում
նաև Մեղրիի հարևան գավառներից Հաղրութ, Շաղախ, և Գար-
կատանից էլ Ղարաղաղ, որոնք թեև այլ կողմերով պատկանում

են Ղարաղաղի բարբառին, բայց սահմանականի կազմության
կողմից ել, ելիս ճյուղի տակ են ընկնում:

Վերջին 4 բարբառների վրա առանձին ընդարձակ ուսում-
նասիրություն ունի Ա. Ղարիբյան, «Հայերեն բարբառների մի-
նոր ճյուղ». Երևան 1939 թ.: Բոլոր բարբառների քննության է
նվիրված մեր «Հայ բարբառագիտութիւն, ուրվագիծ և դասա-
սիրութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով)».
Մոսկուա-Նոր-Նախիջևան, 1911 թ.:

ՀԱՅ ԲԱՐՔԱՌՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Առաջին և ամենակարևոր հարցը, որ ներկայանում է մեզ հայերեն բարբառների մասին, այն է, թե ե՛րբ է տեղի ունեցել նրանց ծագումը:

Երկու կարծիք կա այս մասին: Ոմանք կարծում են, թե հայ բարբառները ժամանակակից և կամ նույն իսկ ավելի հին են գրաբարից, հետևաբար և նրանից անկախ են: Ուրիշներ կարծում են, թե հայ բարբառները գրաբարի շարունակությունն են և հետևաբար նրանից ավելի ուշ են ձևացած: Երկու կարծիքները ձևակերպելով մի ուրիշ ձևով, կարելի է ասել, որ ըստ առաջինների Ս գարում կային մի խումբ հայերեն բարբառներ, որոնք ապրում էին իրար հետ կողք կողքի և որոնցից մեկը միայն բարձրացավ գրականության և կոչվեց գրաբար. մյուս բարբառները թեև նրան ժամանակակից, բայց մնացին միայն ժողովուրդի մեջ՝ իբրև խոսակցական լեզու և նրանց շարունակությունն են կազմում արդի բարբառները: Երկրորդ կարծիքին հետևողները Ս դարում առանձին բարբառների գոյությունը չեն ընդունում և հետևաբար նոր բարբառները հին բարբառների շարունակությունը չեն համարում:

Ի՞նչ պատճառաբանություններ ունին առաջին կարծիքին հետևողները. — նախ՝ այն ընդհանուր սկզբունքը, որ ոչ մի լեզու միօրինակ չէ և չկա լեզու, որ բարբառներ չունենա. հայերենը, որ խոսվում է մի լեռնոտ երկրի մեջ, իրարից անջատ մեծամեծ նահանգներում և գավառներում, պետք է որ անպատճառ բարբառներ ունեցած լիներ: Երկրորդ՝ հին քերականների տված հայտնի վկայությունները մի խումբ հայ բարբառների գոյության մասին: Երրորդ՝ մի քանի բառական ձևեր, որոնք ըստ իրենց կազմության ավելի հին են, քան գրաբարի ծանոթ ձևերը:

Մենք վերը, 41. ԺԹ և հատկապես էջ 125 խոսեցինք Ս դարի հայերեն բարբառների մասին և մանրամասն շոշափեցինք առաջին երկու պատճառաբանությունները: Համաձայն ընդհանուր սկզբունքի, մենք ընդունեցինք Ս դարում հայ բարբառների գոյությունը, բայց ցույց տվինք միաժամանակ, որ այդ բարբառները իրարից խիստ կերպով զանազանված չէին և կարելի էր նրանք ավելի ենթաբարբառ կոչել քան բարբառ: Օրինակ բերինք նաև այսօրվա թուրքերենը, որ Պարսկաստանից սկսած մինչև Ադրիական ծովի ափը, այն է Հայաստանից 3—4 անգամ ավելի ընդարձակ տարածության մեջ չի ներկայացնում իրարից այնպես խիստ կերպով անջատված բարբառներ, ինչպես ենթադրվում է, որ պիտի լիներ համաձայն ընդհանուր սկզբունքի: Երկրորդ՝ գտանք որ քերականների վկայությունները վերաբերում են ոչ թե հայերեն բարբառներին, այլ Հայաստանի մեջ բնակվող օտար մանր ազգերի լեզուներին:

Մեր ապացույցները այս երկու կետերի մասին բնականաբար կրում էին ավելի պատմական ու բանասիրական բնույթ. այժմ անցնում ենք զուտ լեզվաբանական ապացույցներին, ինչպես պահանջում է երրորդ պատճառաբանության բնույթը:

Որպեսզի Ս դարում զանազան բարբառներ գոյություն ունեցած լինեին և արդի բարբառները գրաբարից տարբեր հիմք ունեցած լինեին կամ մինչև անգամ ավելի հին եղած լինեին քան գրաբարը, պետք էր, որ արդի բարբառները ներկայացնեին այնպիսի բառական ձևեր, որոնք ձայնաբանորեն կարող չլինեին առաջանալ գրաբարի ձևերից և ավելի հին լինեին քան գրաբարի ձևերը:

Գրաբարի ամենահին ձևը հնդեվրոպական նախալեզուն է, որ և հայերեն լեզվի ելակետն է: Բնականաբար մեր համեմատությունները պիտի կատարենք ուղղակի նրա հետ. եթե բարբառները կարողանան առաջ մի այնպիսի ձև, որ բունում է հընդերոպական նախալեզվի և գրաբարի միջին տեղը, իրոք որ դա կլինի գրաբարից ավելի հին մի ձև:

Բացի հնդեվրոպական նախալեզվից կարող են մեզ իբրև համեմատության եզր ծառայել շատ անգամ նաև այն լեզուները, որոնցից բառեր են փոխ առնված հայերենի մեջ և որոնք գոյություն ունին թե գրաբարի և թե բարբառների մեջ: Եթե բարբառները փոխառյալ բառերի համար ներկայացնեն մի ձև,

որ ավելի մոտ է փոխատու լեզվի ձևին քան գրաբարը, նշանակում է նա ավելի հին է քան գրաբարը:

Մեր քննության մեջ առաջին տեղը տալիս ենք Ազուլիսի բարբառին, ըստ որում նա ամենից ավելի ձևափոխվածն է և հենց այս բարբառն է հատկապես, որ համարվում է ավելի հին քան գրաբարը. հմմտ. Վանցեան, «Նախահայերէնի հետքեր զոկերէնում», ՀԱ 1899, էջ 147—9 և 1901, էջ 180—181:

Ի՞նչ ապացույցներ է տալիս հեղինակը զոկ բարբառի հնությունը հաստատելու համար:

Նա բերում է երեք ապացույց:

1. Լեզուների զարգացման տարրական կանոնն այն է, որ նորը հնից ավելի կարճ և մաշված է լինում. օր. հայր>հէր, հար, փայտ>փէտ, փատ. իսկ զոկերենը ցույց է տալիս հակառակը. ինչ. տէր>տայր, միս>մայս, սպիտակ>սպայտակ, սիրելի>սայրել ևն: Ուրեմն զոկերենը ավելի հին է քան գրաբարը: Հենց տայր ձևը ավելի հին է քան գրբ. տէր, որ առաջանում է տի-այր «մեծ մարդ» ձևից: Հնագույն ձևն է տիայր, երկրորդ աստիճանն է Ազլ. տայր, երրորդ աստիճանն է Ղբբ. տար, և միայն չորրորդ (նորագույն) աստիճանն է գրբ. տէր, որ մինչև այսօր շարունակվում է գանազան բարբառներում:

2. Էական բայի եզ. գ դեմքն է և (որ գրում է այ), հզ. բ դեմքն էլ աք: Մրանք ավելի հին են քան գրբ. է, էք, որովհետև «հնդիկ-եւրոպական լեզուներից շատերում բայի 3-րդ դեմքը վերջանում է -ով, որը Հայոց լեզուում հաւասար է յի»:

3. Ազուլիսի բարբառում և առհասարակ արևելյան բարբառներում շեշտը գտնվում է նախավերջին վանկի վրա, մինչդեռ արևմտյան բարբառների և գրաբարի մեջ շեշտը վերջավանկումն է: Առաջինը ավելի հին երևույթ է քան երկրորդը:

Այս բոլորի պատասխանը պիտի գտնենք հաջորդ տողերի մեջ:

Առնենք նախ զոկերենի ձայնավորները:

1. Ա ձայնավորը որոշ պայմաններում Ազուլիսի բարբառում դառնում է օ: Հարց պետք է տանք.— Ազուլիսի բարբառն է դարձնում ա>օ, թե այդ օ հնչումը հայերենի ամենահին վիճակն է, որ հարազատորեն մնացել է մինչև այժմ այս բարբառում. մինչդեռ գրաբարը Ծ դարից առաջ վերածել է ա, որին և հետևել են մնացյալ բոլոր բարբառները (բացի անշուշտ Կիլիկիայի բարբառից, որ նույնպես ա դարձնում է օ):

Երևույթը լեզվաբանորեն տարօրինակ և անկարելի չէ. որովհետև ինչպես ա կարող է դառնալ օ, նույնպես և օ կարող է դառնալ ա. օր. ուսերենում բոլոր նախաշեշտ օ-երը դառնում են ա. անգլերենում օ ձայնը այժմ շատ տեղ դարձել է ա. ինչ. object, oblate, obligate, oblige, office, opponent, orator ևն բառերի մեջ նախաձայն օ հնչվում է ա.

Ստուգելու համար թե ա և օ ձևերից որն է ավելի հնագույնը, մենք իբրև միակ ուղիղ միջոց ունինք բառի ծագումը, հատկապես փոխառյալ բառերի մայր ձևի համեմատությունը: Այսպես՝

- Արջ>օռջ=հն. ἄρκτος, գնդ. arša
- Գազ>գյէօզ<պրս. gaz
- Գազար>գյէօ՛զոր<պրս. gazar
- Գաճ>գյէօճ<պհլ. gač, պազ. gač
- Դափ>դէօփ<պրս. daf
- Դժուար>դրժէօր<պրս. dušvar
- Դիւան>դիվուն<պհլ. dēvān, պրս. divān
- Դմակ>դրմօկ<պհլ. *dumak, օսս. dumāg, գնդ. duma
- Թանկ>թունգյ<պհլ. պրս. tang
- Թաս>թօս<արաբ. tās
- Մրար>ժրօր<ասոր. šəṛār
- Հազար>հրզզէօր<պհլ. պրս. hazār
- Ճաշ>ճօշ<պհլ. պրս. čašt, čaš
- Ճար>ճօր<պհլ. պրս. čār
- Ճրապ>ճրօյգյ<պրս. čirāy
- Մախաթ>մխօթ<ասոր. məxaṭṭā
- Մաշ>մօշ<պրս. māš, սանս. māša
- Մկրատ>մկրօտ<արաբ. miqrād
- Նազ>նօզ<պրս. nāz
- Նշան>նշուն<պհլ. պրս. nišan
- Շամամ>շամում<արաբ. šammām
- Պատինջան>պատընջուն<արաբ. bādinjān
- Վարդ>վէօռդ<գնդ. varəḏā, ասոր. vardā
- Վարս>վէօրս<պհլ. vars, գնդ. varəsa
- Վկայ>վկօ<գնդ. vikaya
- Տաշտ>տօշտ<պհլ. պրս. tašt, գնդ. tašta
- Տղայ>տղօ<ասոր. ṭalyā
- Եթե այս բոլոր բառերը հին հայերենում ունին ա, որ

համեմատված լեզուներում նույնպես a է, իսկ Ազուլիսի բարբառում o կամ նույնից առաջացած էօ, ու, նշանակում է, թի գրաբարի ձևերը հնագույններն են, իսկ Ազուլիսի ձևերը առաջացած ավելի ուշ:

2. Գրաբարի և ձայնավորի դեմ Ազուլիսում մեծ մասամբ գտնում ենք ի. իրն է սրանցից հնագույնը:— Այս մասին իրանական լեզուների համեմատությունը շատ ակնհայտ փաստեր չի տալիս մեզ. բայց մենք կարող ենք դիմել համեմատական լեզվաբանության: Այսպես՝

Աղուէս > անգլիս = հուն. ἀλώπηξ

Բերել > բիրել < հնի. bher, հուն. φέρω

Գետ > գլիտ < հնի. ved, vod, ud (բայց ոչ մի լեզվի մեջ էլ չկա i ձայնավորով ձև)

Ես > իս = հուն. ἐγώ, լատ. ego, հիսլ. ek, հնի. eg'o. ավելի նոր լեզուներում կա i ձևը. ինչ. գերմ. ich են:

Եփ > իփ = հուն. ἔψω, արմատը հնի. sephs.

Մեծ > միծ < հնի. meg'a արմատից. հմմտ. հուն. μέγας. ավելի նոր լեզուներում կա i ձևը. ինչ. գոթ. mikils, պրս. mih.

Այստեղ էլ ուրեմն հնությունը պատկանում է գրաբարին և ոչ թե Ազուլիսի բարբառին:

3. Գրաբարի ու ձայնավորի դեմ գտնում ենք շատ անգամ էօ, ու. համեմատված ձևերը տալիս են մեզ o և ոչ թե ուրիշ ձայնավոր. ինչ.

Փոս > փոս < հուն. φόσσα

Բոց > բուց < հնի. bho, հուն. φώς, φῶς

4. Գրաբարի ու ձայնավորի դեմ Ազուլիսի բարբառը շատ հաճախ հանում է o (ծ-ից առաջ է). համեմատելով ուրիշ լեզուների հետ, գտնում ենք, որ հին և հարազատ ձևն է ու և ոչ թե o. ինչ.

Կուպր > կոպր < ասոր. արամ. kufrā, ասուր. kupru, արաբ. kufir

Թութ > թօթ < արամ. tūṭā (այսպես և բոլոր լեզուները u).

Կուժ > կէժ < հպրս. *kuža, պրս. kūza

5. Գրաբարի ի ձայնի դեմ Ազուլիսի բարբառը շատ տեղ ունի իր շատ հետաքրքրական այ ձևը: Մեր համեմատությունները օտար ձևերի հետ՝ այստեղ էլ ցույց են տալիս, որ հնագույնն է ի և ոչ ուրիշ ձայնավոր. ինչ.

Կիր > կայր < եբր. արամ. gir, արաբ. ġir (կա արդարև եթովպ. gāvār, բայց պարզ է որ չի կարող նա մեզ հետ համեմատության դրվել):

Ինն > անյն. ծագում է հնի. enwՆ արմատից, որ մեր բառի ի ձայնավորը հայտնի կերպով ցույց չի տալիս. բայց նույն իսկ Ազուլիսի իննա՛ուն (90) բառը հաստատում է, որ արմատն է ինն:— Հայերենի օրենքով, ռնգականից առաջ գտնված e դառնում է ի. ինչ. հիև < հնի. senos, հուն. hénos, հիև < հնի. penkwe, հուն. pénte, լիթ. penki, գինդ < հնի. vendhā, լիև < հնի. lendh, խիև < հնի. khendh, ծիև < հնի. g¹en, հուն. génos, կալիև < հնի. g²eleno, կիև < g²en են: Սրանով հնի. énwՆ տալիս է հյ. ինն:

Հին > հայն < հնի. seno, հուն. hénos.

Միս > մայս < հնի. mēmso, mēs, քուչ. misa, գոթ. mimz. լիթ. miesa.

Վանցյանը (տես վերը) հիմնվում է հատկապես այս երեք վոյթի վրա և սրանով էլ հաստատում է Ազուլիսի բարբառի հնությունը գրաբարից: Իր սկզբունքային սխալն այն է, որ կարծում է թե միշտ երկրաբառն է ձայնավոր դառնում (այ > է), մինչդեռ լեզուների կյանքում ձայնավորն էլ կարող է երկրաբառ դառնալ: Այսպես օր. լատ. e, o ձայնավորները դառնում են ie, uo, ue, հմմտ. լատ. bene > ֆրանս. bien, լատ. bonus > ֆրանս. bon, բայց իտալ. buono, սպան. bueno.— լատ. novem «ինը» > ֆրանս. neuf, սպան. nueve, լատ. novus «նոր» > ֆրանս. neuf, neuve, սպան. nuevo. իտալ. nuovo. նույն իսկ հայ բարբառներում ունինք շատ տեղ և դարձած իէ (ie) և ու դարձած ուօ (uo): Ի > այ ձայնափոխությունը նկատելի է հատկապես անգլիերենում, ուր հին հնչմամբ i այժմ հնչվում է ai (թեև զրվում է դարձյալ i). օր. nine «ինը», այժմ հնչվում է naïn, անգլ. light «լույս» = գերմ. licht. այժմ հնչվում է laït են: Հստ այսմ Ազլ. մայս (միս), սպայտակ (սպիտակ), սայրիլ (սիրելի), տայր (տէր) ուշ առաջացած երևույթներ են: Հյ. սպիտակ փոխառյալ է պլ. spētak հոմանիշից, ուր անշեշտ ē հայերենի շատ սովորական օրենքով դառնում է ի և ոչ թե այ. հմմտ. սէր—սիրելի, տէր՝ տիրելի, անգլ. ee=ի, հուն. η (ē)=այժմ i են: Նմանապես հյ. սիրտ ծագում է հնի. k¹ērdi հոմանիշից (լիթ. sirds, լիթ. širdis, ռուս. сердце), ē > ի ձայնափոխությունը. ուստի Ազլ. սառտ ձևի մեջ ի > ա ձայնափոխությունը

ուշ առաջացած երևույթ է: Հյ. միս>Ազլ. մայս, Ղրբ, մրէս, ինչ-
պես և ճին>Ազլ. հայն տեսանք քիչ վերևում: Գալով տէր<տի
այր բառին, պետք է նկատենք որ հյ. իա դառնում է ն, իսկ
իայ կամ եյ, դառնում են է, ինչպես ցույց են տալիս միատասան>
մետասան, բարիարար>բարերար, միակ>մէկ, միայն>մէն,
մենակ, հրեայ>հրէի. հրէական ևն: Այնպես որ Ղրբ. տար և
Ազլ. տայր ոչ թե հնագույն ձևերն են, այլ ընդհակառակը շատ
նոր ձևեր, որոնք հետ դառնալով հասել են նորից հնագույն
ձևին (պատահաբար): Այս երևույթին պիտի հանդիպենք քիչ
հետո, պ, կ, տ... բաղաձայնների ձայնաշրջութայն առթիվ
նույն իսկ Ազլ. հայր, փայտ, մայր բառերը, որոնք ցույց են
տալիս զբարարի այ երկարբառը, ոչ թե պահել են այդ ձայնը
անփոփոխ, այլ նախ դարձել են հէր, փէտ, մէր և ապա է>այ
ձայնափոխությամբ հասել են նորից նախաձևին:

6. Ձայնավորների մյուս փոփոխությունները և երկար-
բառների սղուժը՝ համեմատելով ուրիշ լեզուների հետ, գտնում
ենք նույնպես որ նոր առաջացած երևույթներ են. ինչ:

Ալեւր<ալլիւր=հուն. ἄλευρον. զբարարը ունի մի բաղա-
ձայն (l), ինչպես և հունարենը. մինչդեռ Ազուլիսի բարբառը
կրկնել է. նույնպես հյ. և ճիշտ համապատասխանում է հուն. εϋ
երկարբառին, որ Ազուլիսում միայն մի պարզ ձայնավոր է
դարձել. — հետին սղման արդյունք:

Գագաթն>գլէգյաթ<բարել. gaggadu, ասուր. kakkadu,
երբ. qadqod. բոլորն էլ առաջին վանկում ունին a ձայնավորը,
որին համաձայն է հյ. ա. միայն Ազուլիսի բարբառն է, որ վի-
րածել է է:

Բամբակ>բիմբակ<պհլ. pambak, պրս. panba. այսպես
նաև բոլոր իրանական և այլ լեզուները. միայն Ազուլիսի բար-
բառն է, որ առաջին վանկում հանում է ի:

այրել>ի'րիլ<գնդ. ātar ևն. հայերենի ա ձայնավորը հո-
մապատասխան է a ձայնավորին, որին հաջորդող t բառ օրենքի
վերածվել է յ. իսկ Ազուլիսի բարբառը ներկայացնում է ի,
որ միայն կարելի է այ երկարբառի ամփոփմամբ բացատրել:

7. Ձայնավորների անկումը շեշտից առաջ՝ մի երևույթ է,
որ անկարելի է բացատրել նույն իսկ Ազուլիսի բարբառով, և
գտնում է իր բացատրությունը միայն զբարարով. այսպես՝

ապսպարել>պսպարիլ<պհլ. apaspāram

ապաշխարող>բշխարուղ<պհլ. apaxš—
աղալ>ըղանիլ=հուն. ἀλέω
կարաւան>կրավան<պհլ. kāravan

Ազուլիսի բարբառը ունի ծէ'ի, քա'ցի, որոնք պիտի մնային
իբր տարրինակ և անհասկանալի ձևեր, եթե չլինէին զբարարի
ածելի, աքացի ձևերը, որոնք ցույց են տալիս, որ նրանց ար-
ժատն է ած, աք, մասնիկներն են ելի, ացի:

Ազլ. բժմ'նիլ բայի դեմ բո ժին և բէ ժինքյ ձևերը պիտի
մնային անըմբռնելի, եթե չլինեք զբր. բաժանել, որ ցույց է
տալիս թե արժատն է բաժ<զնդ. bažat, սանս. bhaṣ, որոնց a
ձայնավորը ընկած է Ազուլիսի բարբառում:

8. Բաղաձայնների մասին հարկ չի մնում երկար խոսելու,
որովհետև Ազուլիսի բարբառը այս կողմից զժվարություններ
չի հանում, գրեթե միշտ հավատարիմ մնալով զբարարին: Գըլ-
խավոր տարբերությունը խ>հ ձայնափոխությունն է, որ նույն-
պես նոր երևույթ է և չի արդարանում մյուս լեզուներով. ինչ.
սոխ>սուհ<պրս. sōx

մարախ>մարահ<գնդ. mēdaxā, պրս. malax, աֆղան.
mlax. ոչ մեկի մեջ չկա հ ձայնը. բոլորն էլ ունեն
զբարարի պես խ:

խրատ>հրատ<պհլ. xrat, պրս. xirad
ճախարակ>ճհարակ<գնդ. čaxra, պրս. čarx
ախոռ>ահուռ<պրս. āxūr

9. Ձանազան բաղաձայնների հավելումները, անկումն ու
տեղափոխությունը նույնպես չեն արդարանում օտար լեզուների
համեմատությամբ. ինչ.

Թի>թայն=հուն. πτίον, հնիւ. ptio (ոչ միայն ի դարձել է
այ, ինչպես տեսանք վերևում, այլ և ն որոշիչ հոդն էլ եկել
միացել է բառին, ինչպես ունինք այլուր (հմմտ. Պլ. ձին «ձի»,
դրացին «դրացի», Մչ. մէդուն «մեդուն» ևն):

Համարել<հմբարիլ<պհլ. պրս. hamār (չկա b):

Պանիր>պանգիր<պրս. panīr (միայն գնչուներենը և արևել
թրք. ունին pendir):

Թոնիր>թարան<ասուր. tūnūru. ունի նախ n, ապա r,
ինչպես են նաև մյուս բոլոր սեմական լեզուները. միայն վրա-
ցին ունի թոքն, որ հետին է:

Արժան>է'ժոն<պհլ. aržān, պրս. aržān, երկուսն էլ ցույց-
են տալիս, որ եղել է r և ապա ընկել:

Արմաւ>ամբրով<պրս. xurmā. ցույց է տալիս հայերենի պես բմ. տեղափոխութիւնը և շրթնականի հավելումը հետին երևույթ են:

Էական բայի եզ. գ դեմքը գրաբարում է ձևն ունի, որ շատ բարբառներ, մինչև իսկ հեռավոր պոլսահայ բարբառը պահում են անփոփոխ: Չգիտեմ ինչն է Ազուլիսի, ինչպես նաև Երևանի և ուրիշ բարբառներ դարձրել են ա: Վանցյանը (ՀԱ 1901, էջ 180) կարծում է, թե այս է հնագույն ձևը և ապացուցելու համար՝ նախ ա դարձնում է այ և ապա կցում ինչ որ «հնդիկեվրոպական» at-ի: Միամիտ ու անճարակ լեզվաբան էական բայի եզ. գ դեմքն է հնիս. esti, որ հնում է հուն. esti, հին լիթ. esti, հին ռուս. j հավելվածով՝ jesti, լտ. վերջին ձայնավորի անկումով est, որի անփոփոխ պատկերն է Փրանս. est «է»: Միայն հնդիկներն ու իրանցիք են, որոնք ինչպես ամեն e և o, նույնպես և այս e դարձրել են a և կազմել սանս. asti, պրս. ast «է»: Հայերենը հավատարիմ է esti ձևին, որի վերջին ձայնավորը (i) հապավում է լատիներենի նման և st խումբն էլ կրճատելով՝ կանգնում է այն աստիճանի վրա, ուր գտնվում է Փրանս. est (հնչվում է e):—Վաղուց է հաստատված, որ հայերենը ոչ հնդիկ է և ոչ արիական:

Վանցյանը համարձակվում է նույնիսկ Ազլ. աճիլ, աշխ. անել ձևը միջին հյ. այնել ձևի հետ միասին ավելի հին համարել քան գրբ. առնել «անել»: Այսպեսով այս սքանչելի բայը իր կրկնավոր կատարյալ արարի ձևով, որ հին հայերենի ամենապատվական մնացորդն է և կենդանի է դեռ Նոր-Ջուղայի հեռավոր բարբառում, ընկնելով իր բարձր դիրքից հասել է մի խղճուկ աստիճանի: Իրողութիւնն այն է, որ առնել առաջնում է հնիս. ar արմատից, որի կրկնավորը (արարի, արարայ, արար) ճշտով նույն է հուն. ἀραρα, ἤραρον, ἀραρίσσω, ἀρήραμαι հոմանիշ ձևերի հետ: Պարզ արմատը (ար) գտնվելով ն-ի մոտ, վերածել է p>n (առնել): Լինելով շատ գործածված մի բայ, մաշվել է հետզհետե և դարձել աստիճանաբար այրնել, արնել, այնել, անել, էնել, ընել և մինչև անգամ ալ (Հավարիկի բարբառն ունի ուլ «անել»)...

Ազուլիսի բարբառը ինքը չի կարող բացատրել օր. խմբտանք, դիս, գյա՛նճուկ, բլտ՛նիք, բարաղճը, բխպախուտ ևն ձևերը և կարոտ է հնագույն խղճմտանք, դուրս, գորտնուկ, բաճալիք, բաղեղն, աղբախուտ բառերին, որոնք էլ իրենց հերթին

ծագում են խիղճ, դուռն, գորտ, բաճալ, բաղ («կից»), աղբ արմատներից: Ազուլիսի բարբառն էլ ճանաչում է այս արմատներից մի քանիսը (ինչ. խէխն, դուրք, բո՛նիլ), բայց իր միջոցներով կարող չէ կապել նրանք իրար հետ:

10. Մնում է խոսել շեշտի մասին:

Լեզուների կյանքում շեշտը հետևյալ դիրքերից է անցնում:

ա) Նախնական վիճակում բոլորովին անկանոն է. այսինքն կարող է գտնվել բառի որևէ վանկի վրա անխտիր: Այսպես էր հնդեվրոպական նախալեզուն. նույնը շարունակում է նաև այսօր ուսերեհներ. ինչ. óколо (առաջին վանկի վրա), подáрок (երկրորդ վանկի վրա), заголóвок (երրորդ վանկի վրա), пред-полагáть (չորրորդ վանկի վրա):

բ) Շեշտի տեղը հաստատել ուղիով՝ լեզուները ընտրում են վերջից հաշված երրորդ վանկը (եթե վանկերը սուղ են) կամ երկրորդ վանկը (եթե վանկերը երկար են): Այսպես են հունարենը, լատիներենը ևն:

գ) Շեշտը աշխատում են դնել բառի արմատի վրա. այսպես է օրինակ՝ գերմաներենը:

դ) Ընդհանրապես շեշտը դնում են բառի նախավերջին վանկի վրա. այսպես օր. լեհերենը համեմատությամբ ուսերենի. ինչ. ру́копись, որի շեշտը ուսերենում նախավերջնաթեր (նախավերջինից մի հատ առաջ) վանկի վրա է, իսկ լեհերենում նախավերջին վանկի վրա (rukópis):

ե) Շեշտը նախավերջին վանկի վրա հաստատվելուց հետո, նրա ազդեցությամբ ընկնում կամ սղվում է վերջին վանկը և շեշտը մնում է վերջին վանկի վրա: Այսպես են հայերենը, պարսկերենը, Փրանսերենը ևն:

Հին հայոց շեշտը (գրաբարում) վերջին վանկի վրա էր. օրան իբրև անհերքելի ապացույց կարող ենք հիշել Ագաթանգեղոսի հունարեն թարգմանութիւնը, ուր բոլոր հայերեն հասարակ թե հատուկ անունները շեշտադրված են վերջավանկում: Օր. Վաղարշապատ=(Ὀὐλαρχαπατά, Մասիս=Μασίς, Ատրպատական=Ατραπαταχάν, սահմի (ամսանունը)=σαομί, ասպետ=ἀσπέτ ևն*): Ագաթանգեղոսի հույն թարգմանութիւնը անշուշտ Ե դարից չէ, այլ 2—3 դար դրանից ուշ, ուստի կարող ենք վկայության կոչել աշխարհագրական անունների այն տառադարձութիւնները, որոնք հույն պատմիչները հասցրել են մեզ նույն

* Գեղեցիկ նկատողութիւն է. Տաշյանի, Ագաթանգ. էջ 71, ժան.:

խոյն Ե դարից առաջ: Այսպես՝ Νιφάτης=Նպատ, Δερζήνη=Գեր-
ջան, Ταμωρίτης=Տամորիք, Καρδοῦχοι=Կորդուք, Οὐτία=Ուտի,
Εὐφράτης=Եփրատ, Μελιτηνή=Մելիտինէ ևն.

Թե հայերենի շեշտը Ե դարում և դեռ ավելի առաջ էլ
գտնվում էր վերջավանկի վրա՝ կարելի է հաստատել մի քանի
լեզվաբանական ապացույցներով, որոնցից կարևորագույնն է
հետևյալը:

Երբ մի հայերեն բառ համեմատում ենք համապատաս-
խան հնդեվրոպական ձևի հետ, նկատում ենք որ սրա վերջին
վանկը ընկած կամ սղված է հայերենում: Օր.

հնիւ. penkwe>սանս. pāñca, հուն. pénte=հյ. քինգ.

հնիւ. ebheret>սանս. ábharat, հուն. éphere=հյ. երեք
բերեցո.

հնիւ. edhēt>սանս. ádhāt=հյ. եղ չորեք.

հնիւ. swópnos>սանս. svápnah, հուն. hy'pnos, լատ. som-
nus=հյ. քուն.

հնիւ. pāfēr,>հուն. patēr, լատ. pater=հյ. հայր.

հնիւ. podn>հուն. póda=հյ. *ոտան>ոտն.

Այս ձայնաբանական երևույթից հետևում է, որ Ե դարից
բավական առաջ շեշտը հաստատվել էր հայերեն բառի նախա-
վերջին վանկի վրա (այն է շեշտի չորրորդ դիրքը, որ տեսանք
վերը), որից հետո վերջին վանկը ընկավ կամ սղվեց և շեշտը
ստացավ այսօրվա դիրքը, այն է մնաց վերջին վանկի վրա
(հինգերորդ դիրքը):

Այս այսպես լինելուց հետո, այլ ևս անհնարին է մտածել,
թե Ազուլիսի, Ղարաբաղի կամ Երևանի արդի շեշտը ներկա-
յացնում է գրաբարի հնագույն վիճակը: Որովհետև եթե հայե-
րեն բառերը համեմատենք այս բարբառների ձևի հետ, պիտի
տեսնենք, որ շեշտը մի վանկ ավելի ետ է տեղափոխված: Օր.
հնագույն հայերեն ձևն էր *բազաւո՛րա, դասական հայերենում
դարձավ բազաւո՛ր (երկուսի մեջ էլ շեշտը ո ձայնավորի վրա),
ինչ որ այսօր էլ շարունակվում է արևմտահայոց մեջ: Եվ եթե
արևելահայ բարբառները հնչում են բազա՛ւոք, ուրեմն շեշտը
կրել է երկրորդ տեղափոխութուն, վերջավանկից փոխադրվելով
նախավերջին վանկի վրա: Ենթադրում եմ, որ այս էլ հին նա-
խաբնիկ ժողովուրդների լեզվական սովորության շարունակու-
թյունը կամ մնացորդն է: (Այս մասին տես իմ Քննութ. Ղա-
րաբաղի բարբ. էջ 184—6):

Այս բոլոր երևույթները որ հիշեցինք, ցույց են տալիս թե
Ազուլիսի բարբառի ներկայացրած ձևերը ավելի նոր են քան
գրաբարը և գրաբարն է նրանց նախաձևը:

Եթե Ազուլիսի բարբառը գրաբարի մի նոր ձևափոխու-
թյունն է, պետք է քննել, թե ե՛րբ է ձևացած այն:

Նկատենք նախ և առաջ, որ բարբառիս մեջ թուրքերենից
և ուսերենից փոխառյալ բառերը չեն ենթարկվում ա>օ,
ու ձայնափոխության, իսկ պարսկերեն և արաբերեն բառերը
բնիկ հայ բառերի նման ենթարկվում են: Այս երևույթը
ստույգ է ոչ միայն ա ձայնի, այլ և ուրիշ ձայնավորների հա-
մար էլ:

Ստորև տալիս ենք այս կարգի փոխառյալ բառերի մի
խումբ օրինակներ, իրենց մայր ձևերով միասին:

աբօ՛սի (ղրամբ) <պրս. ‘abbāsī
աղվակատ «փաստաբան» <ռուս. адвокат
ախսախկալ «ծերունի» <թրք. aqsaqal
անջախ «հազիվ» <թրք. anjaq
ավրօ «անգործ» <պրս. āvāra
ավօղ «շեն» <պրս. ābād, āvād
բոհոյօ՛ «անսպառկատ» <պրս. bēhāyā
բիրդոն «հանկարծ» <թրք. birdān
բրախ տօլ «բաց թողնել» <թրք. bəraç
բօ՛ղար «շուկա» <պրս. bāzār
բօխա «կապոց» <թրք. boçca
բօշ «պարապ» <թրք. boş
գաճամօլ «գաճածեփ» <պրս. — māl
գէնէրալ «գորավար» <ռուս. генерал
գիւլլո «գնդակ» <թրք. gülülā
դէ՛շոկ «անկողին» <թրք. dōşāk
դիւշման «թշնամի» <պրս. duşman
դքան «խանութ» <արաբ. dukān
զուռնաշի «փողահար» <թրք. zurnaç
ըմբրուղ «շնիճ» <արաբ. ibriq
թարաղա «թերթ» <արաբ. řabaqa
թամում «կատարյալ» <արաբ. tamām
թաղտղոն «նորից» <tāzādān
թո՛մբուլ «ծուլ» <թրք. tānbāl

թորս «հականակ» <թրք. târs
թորյ «միայն թե» <թրք. tāk
թըհմ'ր «ձև, կերպ» <թրք. tahir <արաբ. tavr
թո'ղա «նոր» <պրս. tāza
ինսան «մարդ էակ» <արաբ. insān
իւմբիւր «կյանք» <արաբ. 'umr
լամփ «ճրագ» <ռուս. лампа
լափ «բուլորովին» <թրք. lap
լոգյո'ն «կոնք» <պրս. lagan
լոնգյորի «կոնք» <թրք. lāngyār
խաթո' «փորձանք» <արաբ. xaṭā
խարօբ «ավերած» <արաբ. xarāb
խէշկ «չոր» <պրս. xušk
խիյոլ «զգլանք» <արաբ. xayāl
խիյո'ր «վարունգ» <պրս. xiyār
խուն «պարսիկ խան» <պրս. xān
խոյլա «հորաքույր» <արաբ. xāla
հալալ «հարազատ» <արաբ. ḥalāl
հավօ' «օդ, եղանակ» <պարս. havā
հարամզօդա «պոռնկորդի» <պրս. harāmzāda
հաքյո'թ «պատմվածք» <արաբ. ḥikāyat
հէյվորտ «գատարկապորտ» <թրք. ? häyvarā
հէյվուն «անասուն» <արաբ. hayvān
հրբրզէօ'կ «սեխ» <պհլ. xarbūzak, պրս. xarbūza
ղասօբ «մսագործ» <արաբ. qaşşāb
ղարավւն «աղախին» <թրք. qaravaş
ղէյթուն «եռիզ» <թրք. ḡaytan <արաբ. xaytan
ղըմօշ «կերպաս» <արաբ. qumāş
ղըրաղ «եզր, ծայր» <թրք. qəraḡ
ղըրբուն «մատաղ» <արաբ. qurbān
ղուզի «գառն» <թրք. quzə
ղութին «տուփ» <թրք. qutə
ղուշ «թռչուն» <թրք. quş
մազո' «աղանդեր» <թրք. māzā
մաղազն «նկուղ» <թրք. maḡaza
մաղարն «քարայր» <արաբ. maḡāra
մաղունդո «սակազին» <պրս. māzāndā
մոժմոնի «մատուցարան» <արաբ. maǰma'i

մոնյո «թաղ» <արաբ. maḡalla
մոնդիլ «կրծկալ» <թրք. mändil
յան «կողմ, դի» <թրք. yan
յըհմ'ր «թամբ» <թրք. äyār
յիմիշ «սեխ» <թրք. yemiş
յօ'րղան «վերմակ» <թրք. yorḡan
նաղմը «ական» <թրք. naḡəm
նաղրաշի «թմբկահար» <թրք. naḡaraçi
նարդիվուն «սանդուղք» <պրս. nardivān
նաշալնիկ «գավառապետ» <ռուս. начальник
նօյնը «պայտ» <արաբ. na'l
շալթն «ներքնակ» <թրք. şiltā
շան «մեղրահաց» <թրք. şan
շաքսն «մեծ դավաթ» <պրս. şah-kāsa
շոնշո «բաժակակալ» <պրս. şumčā
շօ'հի (դրամը) <պրս. şāhī
շախախ «դուան թակ» <թրք. şaxşax
շարվադօ'ր «ջորեպան» <պրս. şarvadār
շաքուն «մուրճ» <թրք. şākuş
շոնդյօ'լ «կեռ, ճանկ» <պրս. şangāl
շոմ «պղնձե աման» <պրս. şām
շո'նոն «վիրաբույժ» <արաբ. şarrāḥ
շիգյոր «թոք» <պրս. şigar
շուն «հոգլակ» <պրս. şān
շօ'հի «երիտասարդ» <արաբ. şāhil
ոսսո «պատահել» <թրք. rast
սաթլը «պղնձե դույր» <թրք. sitil
սալդաթ «զինվոր» <ռուս. солдат
սանաթ «ժամ, ժամացույց» <արաբ. sā'at
սու «ձայն» <թրք. sās
սըվաղ «ծեփ» <թրք. səvaḡ
ստաքան «բաժակ» <ռուս. стакан
սօզ «քնար» <պրս. sōz
վազ «պտղաման» <ռուս. ваз
վախտ «ժամանակ» <արաբ. vaqt
վոդո' «պայմանագրամ» <արաբ. va'da
վո'թոն «հայրենիք» <արաբ. vaṭan
տնիք «ափսե» <ռուս. тарелка

փահմ «հասկացողութուն» <արաբ. fahm
 փոհլիվհեն «ազնավոր» <պրս. pahlavan
 փոյլ «գուշակութուն» <արաբ. fal
 քարփուճ «աղյուս» <թրք. karpiş
 քէշք «պատշգամ» <թրք. köşk
 քիւլֆոթ «ընտանիք» <արաբ. kulfat
 քյավոն «պրաս» <պրս. kavār
 քյուլոմ «կաղամբ» <պրս. kalam
 քյուլփոթին «աքցան» թրք. <kālpätin <արաբ. kalpatayn
 քյոնդիր «պարան» <պրս. kandir
 քյոնդիրբազ «լարախաղաց» <պրս. kändirbāz
 քյուրվան «կարավան» <պրս. kārvan
 քյուլինգ «բրիչ» <թրք. küling
 ֆոնդ «հնարք» <պրս. fand

Ամեն մի ձայնական օրենք ունի իր գործունեության ժամանակը: Հնդկերոպական նախալիզվի ք ձայնը բառասկզբում տալիս էր հյ. հ. ինչ. pətēr > հայր, puro > հոր ևն: Բայց այդ օրենքը պատկանում է հայերենի հնագույն շրջանին. և Բ, Գ, Դ և այլ դարերում, երբ հայերը փոխ են աւնում պարսկերեն, ասորերեն, լատիներեն և հունարեն բառեր, նրանց նախաձայն ք չեն դարձնում այլ ևս հ, այլ պահում են այ. օր. պհլ. pāi-kar > հյ. պառկեր, ասոր. plāfīā > հյ. պոդոտայ, հուն. patriar-chēs < հյ. պատրիարք ևն:

Հստ այսմ եթե պարսկերեն և արաբերեն բառերը Աղուլիսի բարբառում ենթակա են եղած ձայնափոխության օրենքների, իսկ թուրքերեն և ռուսերեն բառերը ոչ, նշանակում է թե ձայնափոխության օրենքը սկսել է գործել և իր ազդեցությունը վերջացրել է այն ժամանակ, երբ պարսիկներն ու արաբները Հայաստանում էին և նրանց բառերը փոխ էին առնված հայերենի մեջ, սակայն դեռ թուրքերն ու ռուսները մտած չէին Հայաստան: Արաբների առաջին արշավանքը եղավ 640 թվին, բայց հազիվ 700 թվին տիրեցին երկրին: Առնվազն մի դար էլ պետք է դնել մինչև արաբերեն լեզուն այնպես ազդեր հայերենի վրա, որ շատ բառեր մտնեին նրա մեջ: Թուրքերը առաջին անգամ Հայաստան մտան 1021 թվին և եթե դենք նույնպես մի դար, մինչև թուրքերեն բառերը մտնեին հայերենի մեջ, կհետևի, որ այդ ձայնարանական օրենք-

ների ծագումը, հետևաբար և զոկերենի ծագումը ընկնում է թ - ժ դարերում:

Այս սահմանը կարելի է ավելի սեղմել:

Կա մի բան, որ ավելի որոշ բան կարող է ասել մեզ. դա պատրեջուն բառն է: Այս բույսը հնդկական ծագում ունի. արաբների միջոցով մտավ Հայաստան և նյութի հետ արաբերեն անունն էլ անցնելով հայերենի, ենթարկվեց ա > ու ձայնափոխության զոկերենում: Եթե բուսաբանության պատմությանը կարողանանք որոշել, թե ե՞րբ նույն բույսը մտավ և տարածվեց Հայաստանում, կորոշվի նաև զոկերենի ծագման ժամանակը:

Դժբախտաբար Larousse-ի Հանրագիտակը, ինչպես նաև Encyclopedia Britannica ոչ մի թվական չունին այս մասին: Ավելի լավ է Becker-Dillingen, Handbuch des Gemüesebaues (Berlin 1929), որ էջ 581 տալիս է 1543 թվականը: Բայց այս էլ բույսի Եվրոպա մտնելու թվականն է: Միաժամանակ հայտնում է, որ այս բույսը հիշում է առաջին անգամ արաբ բժիշկ Իրն-Բայթարը (իսկական անունն է Աբու-Ջիաէդդին-Աբու-Մուհամմեդ-Աբդալլահ-բին-Ահմեդ-Էննարաթի-էլ-Մալաքի-էլ-Աշշար): Այս բժիշկը մեռել է Դամասկոսում 1248 թ.: Այս թվականն էլ շատ ուշ է: Ավելի լավ են մեր աղբյուրները: Մխիթար Հեքաղին իր «Ջերմանց մխիթարութիւն» գործի մեջ (էջ 114, 128) հիշում է պատինճանը 1184 թվին: Ուրեմն ամենաուշը ժԲ դարից է:

Ունինք դարձյալ արժի, շօհի պարսկական դրամների անունները. բայց սրանց ա > ձայնափոխության պատճառը հայտնի չէ (հմմտ. Քննութ. Ազլ. բարբ. § 14 և 24): Ինչ հայտնի չէ նաև այդ բառերի ծագման ժամանակը, որ որոշել պարսկական դրամագիտության գործն է:

Կա նաև մի ուրիշ նկատելի կետ: Վերի ցուցակում գտնվում են այնպիսի բառեր, որոնք թեև պարսկերեն կամ արաբերեն ծագում ունին, բայց չեն ենթարկված ձայնափոխության օրենքին: Այդ բառերը թուրքերի միջոցով մտած են մեր լեզվի մեջ և իբրև թուրքերեն՝ չեն ենթարկված օրենքին: Այս տեսակետից հետաքրքրական է համեմատել պրս. tāza «նոր» բառը, որ Ազլ. դարձել է բօզտ, իսկ նրանից կազմված թրք. tazadan «նորից» բառը իբրև թրք. մնում է Ազլ. բոզտոզան:

Մեր եզրակացությունը կարելի է հիմնավորել կամ հաս-

տատել նաև ուրիշ միջոցներով: Օրինակ ֆռնդ բառը պարսկե-
րեն է. ուստի պիտի տար Ազլ. փունդ. բայց քանի որ ֆռնդ
ձևով է, ուստի մտած է թուրքերենի միջոցով: Այդ արդարա-
նում է նաև նրանով, որ ունի ֆ բաղաձայնը, որի հնագույն
գործածությունը 1270 թվից է: Ըստ որում, եթե պարսկերենից
կամ արաբերենից մտած լիներ, պիտի ունենար փ. հմմտ. արաբ.
fāl «գուշակություն», որ դարձել է Ազլ. փոյլ:

«Մանր դրամ» բառը ունինք երկու ձևով՝ խրտոկ և խու-
դա. առաջինը հին պարսկերենից (իմն պահլավերենից) է, որին
ապացույց են կ և ա բաղաձայնները, ըստ որում և ա դարձել
է օ. երկրորդը թուրքերենից է, ուստի և մնում է ա:

«Սահաթ» բառը թեև արաբական ծագում ունի, բայց
անշուշտ թուրքերենից անցել է մեզ, որովհետև արաբերեն ձևը
պիտի տար սա'օթ. թուրքերեն լինելու մի ուրիշ ապացույց է
ներմուծված հ ձայնը: (Գրպանի ժամացույցը հնարված է ժե
դարի վերջին. գարկավոր ժամացույցը ժԳ դարի երկրորդ կե-
սին. իսկ անվավոր ժամացույցը շուրջ 1100 թ.):

Շատ հետաքրքրական է պրս. karvānsarāy «իջևանատուն»
բառը, որ կազմված է պրս. karvān «կարավան» + sarāy «պա-
լատ» բառերից: Զոկերենում այս բառը դարձել է Վերին Ազու-
լիսում քելվարթոն, Ներքին Ազուլիսում քելարթոն, երկուսն էլ
պրս. sarāy բառի դեմ դնելով հյ. սրթոն, որ է սրահ: Արդ՝ այս
բառը փոխառյալ է պհլ. *srāh ձևից, Վեճ կա իրանագետների
մեջ թե պրս. sarāy բառն էլ նույնից է (ինչպես ընդունում է
Horn § 727), թե ոչ (չի հիշում Hübsch. 224). Ազուլիսի բար-
բառում sarāy բառի դեմ հյ. սրահ ձևը դնելը առանձին նշա-
նակություն է ստանում այս դեպքում:

Ազուլիսի բարբառից հետո քննության առնենք Ղարա-
բաղի բարբառը և հատկապես նրա այն առանձնահատկությու-
նը, որի համեմատ գրաբարի բ, գ, դ, ձ, ջ բաղաձայնները դառ-
նում են կանոնավորապես պ, կ, տ, ծ, ց, թե բնիկ և թե փո-
խառյալ հաթերեն բառերի մեջ: Օր.

բերել հնխ. bher	Ղրբ. պիրիլ
բրինձ պրս. birinj	պրինձ
գազար պրս. gazar	կե'գոր
գոմէշ պհլ. gävmeš	կյոմաշ
դարբին հնխ. dhabhro	տարպին

դարման պհլ. darmān	տէ'րման
ձեռն հնխ. g ¹ hers	ձէռք
ձիւն հնխ. g ¹ hiyōm	ձիւն
ջերմ հնխ. g ² hermo	ճէրմէլ
ջուխտ պհլ. juxt	ճօխտ

Եթե այս բառերի մեջ գրաբարն ունի բ, գ, դ, ձ, ջ, որոնք
համապատասխան են գալիս մյուս լեզուների բ, ց, ժ... ձայնե-
րին, մինչդեռ Ղարաբաղի բարբառը (ինչպես նաև Շամախիի,
Վանի, Մարաղայի, Խոյի և Մալմաստի բարբառները) ունի
պ, կ, տ, ծ, ց, որոնք չեն համապատասխանում համեմատված
ձևերին, ուրեմն գրաբարն է հին և հարազատ, իսկ Ղարաբաղի
բարբառը (ինչպես և մյուսները) հետո ձևացած:

Նկատենք անցողակի, որ այս բաղաձայնները Ազուլիսի
բարբառում մնում են անփոփոխ, իսկ Յղնայում, որ Ազուլիսի
ենթաբարբառն է, ձևափոխված են ճիշտ Ղարաբաղի բարբառի
նման, ուստի նա էլ հետին ձևափոխություն է և ավելի ուշ քան
Ազուլիսի բարբառը:

Եթե վերոհիշյալ բարբառները գրաբարի բ, գ, դ, ձ, ջ ձայ-
ները դարձնում են պ, կ, տ, ծ, ց, կան մի խումբ ուրիշ բար-
բառներ (Խարբերդ, Երզնկա, Սերաստիա, Կիլիկիա, Նոր-Նախի-
ջևան, Սուչավա ևն), որոնք ընդհակառակը գրաբարի պ, կ, տ,
ծ, ց ձայները դարձնում են բ, գ, դ, ձ, ջ: Այս է «արեմտյան»
կոչված արտասանությունը: Օր. պատկեր, տասը, տուն, կին,
կարմիր ևն բառերը, որոնք ըստ Մեսրոպյան հնչման (և ըստ
արևելյան գրականի) արտասանվում են պ, տ, կ ձայնե-
րով, ըստ արեմտյանի արտասանվում են բաղգեր, դասը,
գուն, գին, գարմիր ևն: Արդ՝ իրապես սրանցից այն բա-
ռերը որ ունին բուն հնդկերոպական ծագում, առաջանում
են Բ, ց, ժ ձևերից և ոչ թե ք, կ, տ. այսպես՝ տասն<հնխ.
dék'm, տուն<հնխ. dōm, կին<հնխ. g²en ևն: Արեմտ-
յան արտասանությունը ճիշտ ու ճիշտ համապատասխան է
հնդկերոպական հնչումներին, մինչդեռ գրաբարը՝ ոչ: Ուրեմն
կարելի է եզրակացնել, թե արեմտյան արտասանությունը ավելի
հին է քան գրաբարը և հետևաբար արեմտյան բարբառները
ավելի հին են քան գրաբարը:

Այս բնական եզրակացությունը խանդավորում է սակայն մի
դժվարություն: Վերի բառերի մեջ կան նաև այնպիսի բառեր,
որոնք ոչ թե բնիկ հայերեն են, այսինքն հնդկերոպական ծա-

դում ունին, այլ փոխառյալ են հարևան լեզուներից: Այսպես օր. պատկեր և կարմիր: Արդ՝ այս բառերի մայր ձևերն են պհլ. patkar, karmūr, որոնցից երևում է, թե նույն պ, կ, ա ձայների Ծ, ց, ճ արտասանությունը համապատասխան չէ մայր ձևերին, որոնք պահանջում են ք, կ, տ ըստ արևելյան արտասանության:

Ինչ է հետևում պ, կ, ա... ձայների այս երկդիմի գիրքից արևմտյան արտասանության մեջ: Հետևում է այն, որ ձայնաշարությունը տեղի է ունեցած երկու անգամ: Հնթ. Ծ, ց, ճ տվել են նախահայերենում ք, գ, դ, որոնք ապա, Ե դարից առաջ արդեն դարձել էին պ, կ, ա: Այս պ, կ, ա ձայները երկրորդ անգամ փոխվելով (Ե դարից շատ ուշ), դարձել են ք, գ, դ՝ հայերեն բարբառների մի ստվար մասի մեջ և այս երկրորդ ձևն է, որ գտնում ենք արևմտյան արտասանության մեջ: Եթե արևմտյան արտասանության ք, գ, դ հնչյունները ներկայացնեն նախահայերենի ք, գ, դ հնչյունները, պետք էր որ արդի արևմտյան արտասանության մեջ՝ եթե ունինք մի կողմից դասը, դուն, գին, մյուս կողմից էլ ունենայինք պատկեր, կարմիր, կամ փաթեթ, քարմիր, և ոչ թե բաղգեր, գարմիր:

Այս բոլորից հետևում է այն, որ նաև այս կետում էլ, ուր արևմտյան բարբառները զբաբարից ավելի հին լինելու երևույթն են ընծայում, դրությունը նույն է, այսինքն զբաբարը ավելի հին է և բարբառները ծագած են նրանից շատ ավելի ուշ:

Բարբառների ծագման ժամանակը որոշելու համար Ազուլիսի բարբառի նման և ավելի ցայտուն ձայնաբանական մի երևույթ ներկայացնում է Ղարաբաղի բարբառը: Այստեղ, ինչպես քիչ առաջ տեսանք, ք, գ, դ, ձ, ջ բաղաձայնները վերածվում են պ, կ, ա, ծ, ճ: Բայց այս օրենքին ենթարկվում են միայն հայերեն բառերը, նրանց մեջ առնելով նաև ասորերենից, հունարենից և պարսկերենից առնված փոխառությունները (հին փոխառություններ): հմմտ. ջուխտ > ճօխտ, բրինձ > պրինձ, դարման < տէրման, գազար > կէզար ևն: Իսկ թուրքերենից փոխառյալ բառերը մնում են անփոփոխ. ինչ. բոգ շիշխան, beg, դեօեքմ «անգամ», բոլ «բավական», բյուսիբ «աղքատ», դեօշմկ «անկողին»: Ձայնափոխության այս զանազանությունը ցույց է տալիս, որ օրենքը գործել է թուրքերի Հայաստան գալուց առաջ և հետևաբար Ղարաբաղի բարբառի ծագումը ընկնում է նույնպես ԺԲ դարուն:

Միջին հայերենում կա խառապ «թոք» բառը, որ փոխառյալ է արաբ. qaṣab ձևից: Այս բառը ոչ մի բառարանում նշանակված չէ. երկու անգամ գտել եմ գործածված մեր միջին հայ գրականության մեջ (Վաստակոց գիրք 162 և Սմբատի Դաստն. 60): Այս բառը մինչև այժմ էլ կենդանի է Հաճինի բարբառում խասոք ձևով: Որովհետև բացի Կիլիկիայից ուրիշ տեղ գոյություն ունեցած չէ և հայերը Կիլիկիայում հազիվ ժԲ դարից սկսեցին հարաբերություն ունենալ արաբների հետ, ուրեմն և Հաճինի բարբառի ա > ռ ձայնափոխությունը, ուրիշ խոսքով Հաճինի բարբառի ծագումը ԺԲ դարից է կամ ավելի ուշ: Ինչ է նաև ՀՃ. հանօք «բաժակ» < Քր. hanap.

Տարակույս չկա, որ այս թվականը (ԺԲ դար), որ դրինք այստեղ հայերեն բարբառների ծագման համար, առաջին և վերջին եզրը չէ: Կան բարբառներ, կամ ավելի ճիշտ՝ բարբառային երևույթներ, որոնք էլ ավելի ուշ են առաջացած. ինչպես որ կան երևույթներ էլ որոնք դեռ նոր միայն սկսել են ձևանալ և կամ ապագային պիտի ձևանան: Այսպես՝ հակառակ իր խիստ այլափոխված ձևին, բավական ուշ ձևացած մի երևույթ է Սվեդիայի բարբառում ա > ու ձայնափոխությունը, որովհետև նրան են ենթարկվում ոչ միայն հայ. և արաբ. բառերը (բերան > բերուն, habbalās > հըմբտուս «մրանի»), այլ և թրք. բառերի մի մասը. ինչ.

- բայրուղ՝ «դրոշակ» < թրք. bayraq
- բուղուզ «կոկորդ» < թրք. boğaz
- բուջուղ՝ «անկյուն» < թրք. bujağ
- դալօխ «փայծաղ» < թրք. dalağ
- դամուր «երակ» < թրք. damar
- թանաքօ «թիթեղ» < թրք. teneke
- դ'աղ'րուն «ձյութ» < թրք. qatran
- դ'անթուր «կենդինար» < թրք. qantar
- դ'առթուլ «արծիվ» < թրք. qartal
- չտնիթօ «պայուսակ» < թրք. çanta
- չանուղ՝ «չանաղ» < թրք. çanağ
- Նույն օրենքին չեն ենթարկվում ուրիշ թրք. բառեր.
- դիշազ «անկողին» < թրք. döşəğ
- դուխսան «իննսուն» < թրք. doqsan
- զընզըրդաղ «բոժոժ» < թրք. zəngərdağ
- էամէր «թուխ» < թրք. esmer

իւան Վե) <Քրք. ilen
 դ'ուենդադ' Վեանձարուր, հրացանի կոթ) <Քրք. qundaq
 չօբար Վուլպա) <Քրք. čorab
 Չիգար Վոթ) <պրս. jīgār
 սէքսան Վութուեն) <Քրք. seksen
 Այսպես նաև նոր արարերեն բառեր. ինչ.
 լուղաթ Վրառ) <արար. luyat
 դ'ալա Վրերդ) <արար. qal'a

Ձայնափոխության մեջ այս խտրությունը ցույց է տալիս, որ երևույթը տեղի է ունեցել թուրքերի գալուց հետո, բայց ոչ շատ հետո: Դրա համար էլ հնագույն թուրքերեն փոխառությունները հպատակվել են օրենքին, բայց նորերը, ինչպես նաև նոր փոխառյալ արարերեն բառերը՝ ոչ: Որովհետև այդ ժամանակ արդեն օրենքը դադարել էր գործելուց:

Սվեդիայի բարբառից էլ ավելի ուշ ձևացած մի երևույթ է ա ձայնավորի վերածումը օ՝ ոնգականից առաջ, Համշենի բարբառում: Սրան իբրև ապացույց է ծառայում այն հանգամանքը, որ հայերեն բառերի հետ՝ նաև բոլոր թուրքերեն բառերը երթարկվել են նույն ձայնափոխության. ինչ.

խօն Վիջևան) <Քրք. xan
 կազոնմիշ էղա Վշանցի) <Քրք. qazanməš
 կօնանաթ Վրավականանալ) <արար. qana'at
 կօնդըմիշ անել Վհամոզել) <Քրք. qandərməš (Սվեդ-դ'անդըրմըշ)

կօնջա Վկարթ) <Քրք. qanjā
 դօնթար Վկենդինար) <արար. qantār
 մօնդալ Վփակաղակ) Քրք. mandal
 մօնթար Վայտույց) <Քրք. mantar
 մօնդալ Վկրակարան) <Քրք. manyal
 չօնախ (ամանը) Քրք. čanaq
 չօնթա Վպայուսակ) <Քրք. čanta
 սալլօնմիշ էղար Վշարժվեցիր) <Քրք. sallanməš
 օ՛նէդէ Վիսկույն) <Քրք. anide

Եթե զոկերենը և Ղարաբաղի բարբառը իրենց այնքան բնորոշ առանձնահատկություններով հանդերձ դառնում են ժՖ դարի արդյունք, նմանապես Սվեդիայի և Համշենի բարբառները ավելի ուշ ժամանակի ձևափոխություն, հապա թնչ պիտի լինեն մյուս բարբառները, որոնք արդեն մի մեծ տար-

բերություն չեն ներկայացնում գրաբարից: Այսպեսով վերջին անգամ հաստատվում է այն միտքը՝ թե Ե դարում կամ նրանից առաջ էլ Հայաստանում խոսվում էր մի՛ հայերեն, որի ներկայացուցիչն է գրաբարը: Բարբառների այնպիսի սուր տարբերություններ, ինչպես նկատում ենք այժմ մեր մեջ, չկային, երանքը մանր բաներ էին:

Ուզեցի մի քանի փաստացի վկայություններ տալ գավառական ձևերի հին գործածություն մասին. Ահա ինչ որ կարողացա գտնել իմ պրպտումների միջոցին:

1. Վասպուրական նահանգի անունը արարերեն տառագարձված է Basfurrajan. այստեղ հայերեն բառի կ ձայնի տեղ գրված է արար. յ. արարերեն լեզուն թեև ունի երկու տեսակ k (k p k q), բայց չունի q=ց ձայնը և ուր որ հարկ է լինում ասել ց=գ, դնում է յ. ուստի վերի Basfurrajan ձևը ենթադրում է, թե բառը հնչվում էր հայոց մեջ Վասպուրաճան. այսինքն կ դարձել էր գ կամ ընդհանրացնելով օրենքը՝ խուլերը դարձել էին թրթուռ, ինչպես է արդի արևմտյան արտասանության մեջ: Եթե գտնենք այն արար հեղինակը, որ առաջին անգամ գործածել է այս ձևը, կգտնենք նաև այդ ձայնաշրջության թվականը: Արար պատմիչ Բելագորի արդեն գործածել է այդ բառը (տե՛ս Բ. Խալաթ. Արար. մատ. էջ 27). Բելագորին մեռել է 892 թվին, ուստի օրենքը արդեն գոյություն ուներ թ դարում:

2. Մագիստրոսի «Մեկնութիւն քերականին», էջ 224 կարդում ենք. «Որպէս և արդ իսկ բազումք ի մէջ ոչ գիտելով զգիր և զվանդ կամ զչափաւորութիւն և զկշիռ, ուղիղ խօսին պարզաբար. և ոմանք ի մէջ ամենեին թիւր և անյարմար դաւանութեամբ իբրու գօրէնս ստացեալ ունին և ոչ երբեք զձայնակիցս կամ զլծորդս փոխանակեն իբր զմանկանց կամ զպատանեաց, որպէս զիսէ փոխանակ հոյի գիտեալք կամ զձա՛՝ ծայի և զայլս ոմանս բազումս»: Այս տողերից հասկանում ենք, որ Մագիստրոսի ժամանակ (ԺԱ դար) ծ և ձ խառնում էին իրար և և ձայնի տեղ հնչում էին իս: Առաջին երևույթը (խուլ և թրթուռ բաղաձայնների շփոթությունը) մենք ընդունեցինք նույն իսկ Զ դարում (տես վերը՝ էջ 135), իսկ երկրորդը (որ Վանի և հարևան բարբառների մեջ այսօր էլ նկատում ենք) հաստատվում է սրանով ժԱ դարում, և անշուշտ ավելի հին էլ է:

3. Համամ Արևելցու (Թ դար) «Մեկնութիւն քերականին» մեջ (էջ 271) կարգում ենք. «Ի վաղիւն տեսանէ զՅիսուս զի գայ, զոր գոհեհիկքն յեզուց ասեն. եզուց դառնամք»: Սա մի հաստատուն վկայութիւնն է, թե Թ դարում ի վաղիւն բառի տեղ արդեն գործածվում էր էզուց: Բայց չի իմացվում, թե այս բառը ինչպես էին հնչում. էզո՞ւց թե յէզուց. որովհետև երկու ձևն էլ կրկնած է. և մենք էլ այսօր երկու ձևով էլ ունինք բարբառներում՝ էկել է, յէկալ ա: Բայց տրված օրինակից ստույգ կերպով իմացվում է, որ այ երկբարբառը դարձել էր Թ դարում է. այսպես այգ-այգույց>էզուց:

4. Մխիթար Գոշի Դատաստանագրքում (հրատ. Բաստամեան), էջ 9 գրված է. «Այոն այո լիցի և ոչն ոչ. որ է հան՝ հա և ոչն՝ ոչ». Ավելի ուշ նույնը կրկնում է Երզն. մտթ. էջ 123 «Այլ եղիցի ձեր բան, այոն այո և ոչն ոչ... այսինքն գհայն հա և զէն չէ»: Սրանից երևում է որ ԺԲ դարում այո՝ բառը վերացված էր և ժողովուրդը ասում էր «հա»:

5. Կարևոր, բայց դժվարհասկանալի հատված է Թրակ. էջ 25-26. «Եւ պարոյկ բայից լծորդութիւնք են երեք. որոց առաջինն արտաբերի յառաջին և յերկրորդ դէմս այբիւ երկայնիւ. որպէս գամ, գաս, գայ. և երկրորդն՝ ոյիւ երկբարբառով, որպէս առնում, առնուս, առնու. և երրորդն՝ եչիւ և այբիւ դարձեալ որպէս գեամ, գեսս, գեայ. և ըստ լեզուաց ոյիւ, որդոն գոմ և յղոմ»: Ավելի հետաքրքրական է այս հատվածի բացատրականը, որ տալիս է Համամ Արևելցին (Քեր. էջ 264-5): «Պարոյկ բայից լծորդ երեք, որպէս սեռն և տեսակ և կենդանին, որոց առաջինն արտաբերի յառաջին և յերկրորդ դէմս, որ է կենդանին, այբիւ երկայնիւ. որպիսի գամ, գաս, գայ: Գամն որպէս յօժարական ի հոլովս անուանցն. և գասն որպէս ի քերդողականացն լուծս. իսկ գայն որպէս զինքնակամ տրոհողս ի պարոյկս բային կահաւորելով: Եւ յերկրորդումն ոյիւ երկբարբառով. առնում զմիտս արուեստին, առնուս դու առաւել, որ քաջն է և կիրթ յառնուլ զբոլորս լծորդացն: Երրորդն՝ եչիւ և այբիւ. գեամ, գեսս: Մեքական է բառս ըստ մթին լեզուաց: Ոյիւ և եչիւ՝ գոմ և յղոմ. գոմ՝ որպէս խիտ իմաստիւք ընդ լծոյն գալ, որ են քերդութիւնք չափուց: Եւ յղոմն առաքողական դիմօք»:

Բացատրեմ ասելով ավելի դժվարացրեց Համամ Արևելցին. բայց միևնույն ժամանակ հասկացալ ու հասկացրեց թե հարցը

բայերի վերջավորութեանց մասին է: Առաջին երկու խումբը «գամ, գաս, գայ» և «առնում, առնուս, առնու» ա և ու լծորդութեան բայերն են: Անորոշ են «գեամ, գեսս, գեայ, գոմ և յղոմ»: Առաջին երեքը, որովհետև ըստ Համամի «ձեքական է և ըստ մթին լեզուաց» (այսինքն բարբառային ձև), ուստի կարող ենք հասկանալ «գամ, գաս, գայ» բայի բարբառային ձևը: Նմանապես գամ, որ Թրակացին կոչում է «ըստ լեզուաց» (բարբառային) և Համամն էլ մեկնում է «ընդ լծոյն գալ», ուստի նույնպես գամ բայի բարբառային մի ձևն է. Այսպեսով ունենում ենք գամ, գաս, գայ բայի երկու բարբառային ձևերը գեամ, գյաս, գեայ և գոմ (գոս, գոյ): Առաջինը արդի գյամ, գյաս, գյա կամ կյամ, կյաս, կյա (Ղարաբաղ, Վան) ձևերին է համապատասխանում, երկրորդը Նոր-Ջուղայի գ՛ոմ, գ՛ոս, գ՛ոն ձևերին: Առաջինի մեջ գտնում ենք գ բաղաձայնի քմային ձևը, երկրորդի մեջ ա ձայնավորը դարձած ո. Բայց այս երևույթը ոչ թե պետք է համարել ընդհանուր, ինչպես է այժմ Ազուլիսի և Կիլիկիայի բարբառներում, այլ մի բացառիկ դեպք, ինչպես է այժմ Նոր-Ջուղայի բարբառում: Վերջին բառը (յղոմ) անշուշտ յղեմ բայն է, ինչպես երևում է Համամի մեկնությունից (յղոմն՝ առաքողական):

6. Խոսքով Անձևացին իր «Մեկնութիւն աղօթից պատարագին» աշխատութեան մեջ (տպ. Վենետ. 1869, էջ 55) ասում է. «Ամբողջ է՝ զոր մեք համբողջն ասեմք. բովանդակ, ասէ, ամենեքեան ամբողջ պահեսցին»: Սրանից երևում է, որ Ժ դարում Անձևացեաց գավառում ամբողջ բառը հնչվում էր համբողջ:

7. Գեորգ Կեղրենոս հույն պատմիչը (1057 թ.) Բաբերդ քաղաքի անունը գրում է Παλιεργε, ուստի ԺԱ դարուն արդեն Թրթուռները հնչվում էին իբրև Թավ (Տաշեան, Հայ բնակչութիւնը, Վիեննա 1921, էջ 44):

Այս մանր մուկն տեղեկութիւնները շատ բան չեն ասում հայ բարբառների ծագման, մանավանդ քերականական ձևերի լուսարանութեան համար: Անհրաժեշտ է կատարել մեր 2000-ից ավելի հին արձանագրութեանց և 20 000-ից ավելի ձեռագրերի հիշատակարանների բժախնդիր ու մանրակրկիտ ուսումնասիրութիւնը, որով Թերևս կարողանանք որոշ չափով հասնել մեր նպատակին: Ինչ էլ որ լինի սակայն, պետք է ի նկատի ունենանք, որ մեր ձեռագրերն էլ Թ դարից այն կողմ չեն գնում և

հետևաբար ավելի հին հայերենի մասին զուր է նրանցից որևէ օգուտ սպասել:

Այժմ անցնենք այն բառաքննական ծանր աշխատանքին, որ խոստացանք վերը՝ էջ 126, արդի հայ բարբառների բոլոր բառաձևերի վերաբերմամբ: Այս մասին մեր անխաղախ առաջնորդը պիտի լինի «Արմատական բառարանը»:

«Արմատական բառարանի» արմատ բառերի թիվն է 11,000 (ճիշտ թվով 10,996): Այս բառերից միայն 4231-ն է գործածական մեր արդի երկու գրական լեզուներում: Գալով բարբառներին, այդ թիվը շատ ավելի պակասում է: Այն 11,000-ի մեջ կան հունարենից, արաբերենից, նոր պարսկերենից և թուրքերենից վերցրած բազմաթիվ բառեր, որոնք հազիվ են գործածված հին հայ գրականության մեջ և այսօր էլ անգործածական են, ինչպես գրական լեզվի մեջ, նույնպես և բարբառներում: Կան նաև շատ բառեր, որոնք բնավ կյանք չեն ունեցած հայ մատենագրության մեջ, գոյություն ունին միայն հին բառարաններում (հատկապես Նրեմիա Մեղրեցու բառարանում) իբրև արդյունք սխալ ընթերցման, կամ թյուրիմացության և կամ անհատական փոխառության: Այս բառերն էլ, որ մի բառով կոչում ենք «անվավեր բառեր», թվով 2224, չկան ոչ արդի գրականում և ոչ էլ բարբառներում:

Վերը տեսանք, որ 1066 հուլյն և լատին փոխառյալ բառերից միայն 68-ն է գործածական արդի բարբառներում (էջ 49), երբայական 138 փոխառություններից հազիվ 6 հատը (էջ 62), արաբական 702 փոխառություններից միայն 36 հատը, 87 եվրոպական փոխառություններից հազիվ 4-ը ևն: Այսպեսով ուրեմն 2000-ից ավելի բառ իսպառ ջնջված է բարբառներից, չհաշվելով անվավեր բառերի (2224) մեծ շարքը:

Մնացյալ բառերը բաժանվում են չորս կարգի.

ա) Բառեր, որոնք թեև գրական լեզվի մեջ ազատ գործածվում են, բայց բոլորովին անգործածական են բարբառներում: Այսպես օր. անձուկ, անօթ, ապաստան, ասր, գեղմե, գորգ, այտ, գիստ, ըմբիշ, թաղանթ, թիթեղ, ծնօտ, կոզի, կոկորդ, պատռան, պատսպարան, տակալին և այսպիսի հազարավոր բառեր:

բ) Բառեր, որոնք ինչպես գրաբարում, նույնպես և բոլոր բարբառներում ազատ գործածական են: Այսպես են օր.

մի, երկու, երեք... տասր, հարիւր, հազար, ես, դու, եա, մենք, դուք, նոքա, արին, ալիւր, ականջ, անծրև, հաւ և այսպես հազարավորներ:

գ) Բառեր, որոնք գործածական են բարբառներում, բայց ոչ բոլորի մեջ, օր. սեր (կաթի), սերկևիլ, սերմ, սպիտակ, ստերջ, սրսկել ևն, նույն իսկ եօթալեասուն, ուրսուն, իննսուն բառերը թեև շատ բարբառներում գործածական են, բայց կան բարբառներ էլ՝ որոնց մեջ փոխանակված են թուրքերենով կամ մի ուրիշ հայերեն համանիշ բառով:

դ) Բառեր, որոնք հազիվ մի կամ երկու բարբառի մեջ գործածական են: Այսպիսի հազվագյուտ բառերից են օրինակ՝ արբանեակ (Վան), ամբևտ «խլուրդ» (Պոտրջուր), աճապարանք (Ակն), աղտոթ «սոււմաղ» (Պարբերդ), աղթաման «ապարանջան» (Բուլանըխ), աղերսել (Մուշ), աքսորել (Եվդոկիա), ափլէզ «ապտակ» (Գանձակ), ապո «ձկնորսի կարթ» (Չեյթուն), ագուտ «բուռ, ափ» (Պոտրջուր), ալոջ «էդ ուլ» (Մուշ, Մոկը, Ոզմի), անգորթ (Ատանա), անիւ (Մուշ), անդանել «մտածել» (Եվդոկիա), այպանել (Արտանուշ), անալուք «եղնիկ» (Համշեն), բղեջի (Պարբերդ), բոթ «հաստ անկողին» (Ազուլիս), դարաստան (Մթանոզ), դուստր (Սուչալա), եղուկ (Ատանա), գերծեղ (Համշեն), լուցանել «վառել» (Համշեն), կթիլ «հոգնել» (Մարադա), կնին «ուէդ, ճիւ» (Ոզմի), մուռզ «բեղ, պիս» (Սվեդիա), յամել, «ուշանալ» (Ակն, Սվեդիա), յոյլ, յուլանալ (Մոկս, Հարաբադ, Հազախ), յոյզ «վեզ, ճան» (Ցղնա, Մուշ), ևն ևն:

Հայերեն արմատների բարբառային (գավառական) ձևերը հազվաքելու համար մեծ աշխատանք եմ թափել տարիներ շարունակ: Ինքս տեղացի դիտակ անձանց միջոցով կազմել եմ 28 բարբառի բառարանը. այն է Երևան (Քանաքետ), Տփղիս, Հարաբադ, Գորիս, Շամախի, Նոր-Ջուղա, Ազուլիս, Կարին, Ախալցխա, Մուշ, Ալաշկերտ, Վան, Ոզմի, Մոկս, Տիգրանակերտ, Պարբերդ, Համշեն, Չեյթուն, Հաճին, Սվեդիա, Սեբաստիա, Ալանբեզ, Պոլիս, Ռոտոսթո, Նոր-Նախիջևան, Սուչալա, Մարադա, Սալմաստ: Այս բոլոր բարբառներից հավաքած գավառական ձևերը գրել եմ Արմատական բառարանիս ամեն մի արմատի դեմ՝ այբուբենական կարգով և ձևի հարստացման համաձայն դասավորած: Նույն 28 բարբառներից դուրս կան նաև ուրիշ բարբառներից ձևեր (շատ սակաթիվ), որոնք կամ անձամբ լսել եմ և կամ հավաքել տպագրյալ աղբյուրներից,

եթե նրանք վստահելի էին (Ակն, Հաժարիկ ևն): Այսպես օրինակ՝ հաց արժատի դեմ ունինք բացի այն 28 ձևերից, նաև Ակն, Անտիոք, Այնթապ, ինչպես նաև 5 ածանց ձևեր, ընդամենը 36 գավառական ձև:

Արժատական բառարանիս 11,000 բառերից միայն 2878 բառ ենին այսպիսի գավառական ձևեր՝ մեկից մինչև մի քանի տասնյակ: Ուրիշ խոսքով 11,000 արժատներից միայն 2878 կենդանի է մնացել արդի բարբառների մեջ (ինչ որ անում է 26%): Այս 2878 բառերի դեմ հիշատակված գավառական ձևերի (օր. հաց բառի դեմ 36) ընդհանուր գումարը (է հատորի հավելումներով միասին) անում է 40,540: Եվ անա մենք սկսում ենք համեմատել այս 40,540 գավառական ձևերը մայր բառերի հետ՝ տեսնելու համար, թե ինչ նոր բան են ներկայացնում նրանք գրաբար ձևերի հանդեպ:

Անշուշտ իմ ներկայացրած 2878 թիվը վերջին խոսքը չէ կլինեն նաև ուրիշ արժատներ, որոնք ով գիտե չի գավառի խորքում թաքուն պահված կլինեն: Օրինակ ըստ իմ Արժատական բառարանի բոլոր «գաճ, ծեփ» արժատը ոչ մի տեղ պահված չէ: Բայց վերջերս կինս (Սոֆիա Աճառյան) հայտնեց ինձ, թե այդ բառը պահված է Ախտայի գավառականում բոլոր ձևով: Ասում են միայն «բոլոր սպիտակ մազեր» և հասկանում են «բոլորովին սպիտակ մազեր», առանց գիտակցելու, թե այս բոլոր բառը «գաճ, ծեփ» նշանակություն ունի:

1944 թվի ամառը Համշենի բարբառը ուսումնասիրելու ժամանակ (Գագրի) գտա երկու պատմական բառ (տօսախի և զլփիեն), որոնք չկան ոչ մի բարբառում և գոյություն ունին միայն Համշենի բարբառում՝ դօսխի և տըլպին ձևով:

Այսպիսի հավագյուտ արժատների թիվը անշուշտ չափազանց քիչ պիտի լինի:

Ընդհանրապես կարելի էր շատ ավելի մեծացնել գավառական ձևերի թիվը (40,540), եթե փոխանակ 28 բարբառի՝ որ ես քննել եմ, քննեինք հայերենի բոլոր բարբառները (չնրջ 40): Բայց վստահ եմ, որ այս նոր քանակը եղած ձևերի վրա մեծ նորություն չպիտի ավելացներ:

Վերոհիշյալ 40,540 ձևերի քննության ժամանակ մի անգամից դուրս եմ գցում այն բառերը, որոնք ներկայացնում են թրթուր, խուլ և թավ ձայների փոխանակությունը. այսպես՝ բան>բ'ան, պան, փան կամ տուն>դուն ևն: Դուրս եմ գցում

նաև բաղաձայնների այնպիսի փոփոխություններ, որոնք ինքնին հասկանալի է թե առաջացած են հետնաբար. ինչ. հաց>խաց, ուղարկել>ղարկել, ղարկել>խրկել, թուղթ>թուխտ, աղջիկ<ախնիկ ևն: Չայնավորների փոփոխության մեջ դուրս եմ գցում սղուճները, անկուճները և նման ձայնական երևույթներ. ինչ. հաց>հօց, պատառել>պատռել, ածելի>ծելի, պսպարել>փսպարել, ուղղորդ>ղորդ, խորթ, խօշտ ևն ևն:

Մի խոսքով գավառական ձևերի այն բոլոր փոփոխությունները, որոնք հայտնի կերպով գրաբարից նոր առաջացած երևույթներ են, չեմ քննում առաջադ. որովհետև նրանց մանրամասն քննությունը հատորներ պիտի լցնեմ:

Իմ նպատակն է միայն երևան հանել այն ձևափոխությունները, որոնք գրաբարով չեն կարող մեկնվել և գրաբարից տարբեր մի աղբյուր են ենթադրում:

Առաջին խումբ

Կան բառեր՝ պարսկերենից, ասորերենից և հունարենից փոխառություններ, որոնք գրաբարում ունին մի ձև, իսկ բարբառներում գրաբարից տարբեր զանազան ձևեր: Որովհետև մայր ձևը հայտնի է, որին ճիշտ համապատասխանում է գրաբարը, ուստի գրաբարն է հին և հարազատ ձևը, իսկ բարբառները նոր ձևափոխություններ են: Առենք միայն երկու օրինակ. —

Կաթողիկոս բառը (Ե դար) փոխառյալ է հուն. καθολικός բառից, որին համապատասխանում է տառ առ տառ: Ուշ ժամանակ (867 թ.) դարձել է կաթաղիկոս: Նոր ձև է նաև կաթողիկոս, ուր ո դարձել է ու՝ հաջորդ դ-ի պատճառով (հմմտ. Բարթողիմէոս դարձած ապա Բարթողիմէոս): Արդի բարբառային ձևերն են՝ «կաթողիկոս, կաթըղիկոս, կաթուղիկոս, կաթողիկոս, կատողիկոս, կատրիկոս, գաթողիկոս, գաթողիկոս, կաթողիկոս, կաթաղիկոս, կաթըղիկոս, կաթաղիկոս, կըթըղիկոս, կաթաղիկոս, գյոթէօղիկոս, գյաթիկոս, գաթաղոս», որոնք տարբերվում են մայր ձևից կամ ձայնավորների փոփոխությամբ ու անկամար և կամ կ բաղաձայնի ձայնաշարությամբ: Այս բոլորն էլ նոր առաջացած երևույթներ են և ոչ մի արժեք չունեն Ե դարի գրաբար կաթողիկոս ձևին ժամանակակից որևիցէ ձև ենթադրելու համար:

Եկեղեցի փոխառյալ է հուն. ἐκκλησία բառից և անշուշտ Գ

գարում արդեն մտած էր հայերենի մեջ: Մեր բառը հունարենի ճիշտ տառագարձությունը չէ, այլ հայ ժողովրդի բերանում ձևափոխված մի բառ, ուր հատկապես նկատելի է հուն. σ=S ձայնի դեմ հյ. ց: Արդի բարբառներում այս բառը ստացել է հետևյալ ձևերը. «եկեղեցի, էկեղէցը՝, էգէղէցի, ագէղէցի, էղեգէցի, գ'եղիցե, կղեցի, գըղէցե, գէլցի, եղեցի, եղեցին, եթի, եխցէ, եխձէ»: Այս բոլորը առաջանում են հյ. եկեղեցի ձևից՝ զանազան կրճատումներով, բաղաձայնների տեղափոխությամբ են: Բոլորն էլ ուշ ժամանակ առաջացած երևույթներ: Եթե նրանցից որևէ մեկը ց-ի փոխարեն ունենար ս բաղաձայնը, դա կլինեք հունարենին ազելի հարազատ մի ձև և հետևաբար ազելի հին քան հյ. եկեղեցի ձևը: Նա ենթադրել կտար մեզ Գ դարում մի այլ հայերեն բարբառ: Բայց չկա ոչ մի այդպիսի ձև. բոլորն էլ ունեն ց կամ նրանից առաջացած ծ, հետևաբար բոլորն էլ հետին «աղավաղումներ» են և ոչ մի արժեք չունեն որևէ հին բարբառ ենթադրելու համար:

Այս երկու օրինակները մենք դիտմամբ ընտրեցինք. նրանք հայ ժողովրդի ամենօրյա գործածած բառերն էին, որ կրոնավորները շարունակ կրկնում ու կրկնում էին: Եթե այդպիսի սովորական ու շարունակ կրկնված, կրոնավորների միջոցով միշտ ուղղված ու սրբազրված բառերը այսքան այլանդակ ձևափոխությունց են ենթարկվել, հապա թնչ կլինեին մյուս շատ ազելի քիչ գործածական բառերը:

Ավելորդ ենք համարում այս առաջին խմբի մնացյալ օրինակները մի առ մի քննել ու բացատրել այստեղ. և տալիս ենք նրանց այբուբենական ցանկը՝ դնելով նախ գրաբար ձևը, երկրորդ նրանց մայր ձևը (փոխատու լեզվից) և երրորդ արդի բարբառային ձևերը, եթե նրանք ներկայացնում են որևէ կարևոր կետ: Չեմ հիշում միայն ձայնավորների սովորական տեղումը և բաղաձայնների արևմտյան ձայնաշրջությունը:

- ագուզայ, ասոր. agōgā, հաբուքա, արքուքա ախոռ, պրս. āxūr, ախվոր
- ամիրայ, աս. amīrā, ամբրա
- ամղան, աս. āmelā, āmlōn, արղան
- անիսոն, հուն. ānison, անասուն
- ապարանջան, պրս. abranjan, ապռջան, առպնջան
- աստուած, փռիզ. Σαβᾶζιος, աստոժ, ասված, ասպած

արժան, պհլ. aržān, արժան, յերժան, յեժան, հեժան, էժան, իժան

արժեի, պհլ. aržitan, արժեի, արժեի, նարժեի, յեժիլ արճիճ, պհլ. arčīč, էռճիճ

աւաչ, պհլ. āvāč, էվաչք, էվէչք

աւերել պհլ. avēr, արվել

ափսոս, պրս. afsōs, ափսույս, ափսուզ

բաժանել, իրան. baž, բեժնել, բեժին

բակլայ, արար. baqla, բակլակ, բանկլա, բեկլայ, բայլա

բամբակ, պհլ. pambak, բեմբակ, բիմբեկ

բարակ, պհլ. bārak, բերակ

բղուկ, պրս. balūk, բղիկ, բղուկ, բղոդ, բլութ, բլուզ

գագաթն, բարել. gaggadu, գեգաթ

գագար, պրս. gazar, գեգար

գաւազան պհլ. gavāzan, գազզոն

գավաթ, հուն. γαβάθα, գևաթ

գուրպայ, աս. gurba, գուլպայ

դահիճ, պհլ. dahič? դահիճ

դամ «ուռկան», պրս. dām, դամբ

դայեակ, պհլ. dāyak, դահեկ

դաստիշոն «կոնք», պրս. dastšūy, դաշտըշուն, դէօրգիւշին, դաշուն

դատաւոր, պհլ. datavar, դատամէր

դարապաս, պրս. darvās, դարպաստ

դարման, պհլ. darmān, դերման

դափ, պհլ. daf, դեփ

դժուար, պհլ. dušvār, դժեր

դրուժան, պհլ. drōžan, տոճան, ըոճան, ըոժանգ

զմուռ, հուն. ζώρνα, զմբուր, զմբուրթ, ձումուռ

զոյգ, զուգել, ասոր. zaugā, սուքել

թակալակ, պրս. tagalā, թայլա

թարգմանել, ասոր. targmānā, թարթմանել

թափուր (սինի), պրս. tafūr, թեփուր, թեփիր, տեփուր

թերմոն, հուն. θερμόν, թերմուն

թոնիր, ասոր. tinūru, թոնդիր, թուրուն, թոունը, թորան,

Քարան

ժահ, պհլ. žah, ժեխ, ժահր

իշխել, իրան. xši, կիշալ, յիշխընալ, կիշխել

լաթ, պրս. lat, լանթ, լանձի
լեղակ, պհլ. lēlak, լողակ
լիտր, հուն. λίτρα, լիբ, խիտր, կիտր
լկամ, պրս. ligām, լղամ, լղկամ, լգան
խաշխաշ, պրս. xašxaš, խաժխաժ
խարազայ «լեղիի քար», պրս. xaraza, խարզան
խարբրգակ «սեխ», պհլ. xarbūzak, խարբրգակ, հրբրգակ,

խարբձագ

խաւիծ, ասոր. xəwīšā, հաւիծ
խուց, ասուր. xuššu, խոււնց, խուրց
ծնծղայ, աս. šiššəlā, ծնծղակ, ցնծղակ, ցնձղայ, ցնծախ.

ցնծայ

ծրար, աս. šəṛār, ծլար
կաղամար, հուն. καλαμάριον, կաղամպար, դամբար
կանեփ, հուն. κάναβις, կանամփ, կամփ
կաչաղակ, պհլ. *kačalak, կչեղակ, քչեղակ
կարմիր, պհլ. *karmīr, կարմիր, կամբրեր, կարմեր
կացին, աս. xaššīnā, կացցին, կածի
կաքաւ, աս. qaqqəwā, կաքե, կանքու
կողով, եբր. kəluw, կովող, կողող
կտիրայ, հուն. κόλυβα, κόλβα, կուլիրա, կովլա
կուշտ, պհլ. kušt, կուրդ
հաղբ, խաղբ, աս. xawlā, խաբ
համար, պհլ. hamār, համբար, հմար, համա, մհար, մար»

ամա

հաշտ, պրս. aštī, հիշտուիլ
հաւասար, պհլ. hāvasār, հափսար
հեգ, հեգեյ, աս. həṅā, հենգ
հրամայել, պհլ. framāy, հրամամայել, համել, բամել
հրեշտակ, պհլ. frēštak, հրեշտրակ, հարաշտարակ
ձիւթ, արամ. ziftā, ձայթ
ճակատ, պհլ. čakāt, ճատակ
ճանապարհ, իրան. čarana-parθ, ճանապա, ճամբախ, ճամ-

բա

ճանկ, պրս. čang, չանգ
մակաղ, եբր. mīkəlā, մակալ, մաղալ, մանգղնոց
մաճ, պհլ. mač, մանճ
մանգաղ, աս. *mangəlā, մանգեղ

մարձել, իրան. marz, մորձել, մերսել, մորսել, մաժել.
մերժել

մելան, հուն. μέλαν, մելամ
մեխակ, պրս. mēxak, միխակ, մուխակ, մխակ
մկրատ, արաբ. miqrāḏ, մրկատ, մրիատ, մնյատ
նամակ, պհլ. nāmak, պամակ
նաշին, ասոր. nəšīfā, նաշիվ
նարինջ, պրս. nārinj, լառանջ
նեռն, հուն. Νέρον, լեռ
նզար «վտիտ», պհլ. nizār, մզար
նման, պհլ. nimān, մնան, լման, ըլմանիլ, ըրմանիլ.

մանիլ

նշան, պհլ. nišan, շանվել, շանց տալ, շաշ տալ
նշմար, պհլ. nišmār, մշմրել?
շաղկամ, պրս. šalḡam, շողգամ, ժոխպանք
շար «շղարշ», պրս. šār, չար, շալ
շաւիղ, ասոր. šəwīlā, շաւի
շաքար, պրս. šakar, շանքար, շաքար
շեղբ, ասոր. šelpā, շխպլիկ, խշպիկ
շէն, շինել. պհլ. šēn, շնել, շոււնել, շիքել, շէնքել
շոււրայ «սամիթ», ասոր. šūmrā, շոււրրա
շուտտ, պրս. šubat, šifūt, ֆշոտ
ոյժ, պհլ. ōž, ուժ, օժ, ոժ, վոժ
ուրար, հուն. ὠράριον, ուլար
պանիր պրս. panīr, պանդիր, փանիր, պենիր
պառա, պհլ. pārāv, պառապ
պատկեր, պհլ. patkar, պարկենք, պատվերք, պարյեթ,
պարկետ

պարարտ, պհլ. parart, պաւարտ, պալարտ
պարիկ, պհլ. parīk, (Չորե)պաղիկ
պարիսպ, պհլ. parisḡ, պարիս
պարտակել, պհլ. partak, փրտակել, փրթակել
պէս, պհլ. pēs, պէստ, տէս
պնակ, հուն. πίναξ, փնակ, բնակ
պնակիտ, հուն. πιναξίδος, փնարթիթ
պոռոյգ, հուն. πορρέ, պոիգ, պոաք
սահման, պհլ. sāhmān, զաման, սամհանք
սալամանդր, հուն. salamandra, սալատրանա

աղմոս, հուն. psalmós, աղմոց
սանդալ, պրս. sandal, հուն. sandalon, սնդլայ
սատանայ, ասոր. sātānā, սուտանայ
սարաղուճ, պրս. sarayūj, սարախուճ, սարաղուճ
սարբինայ, պրս. sar-binā, սարբանա, սարբունա
սափարայ «սրինգ», արաբ. suffāra, սավառնա
սեպտեմբեր, հուն. septémbrios, լատ. september, սեպ-
տեմբեր

սկիհ, ասոր. esqəfā, սկի, սկին
սկուտեղ, լատ. scūtella, կտեղ
սպանդ (բույսը), պրս. sipand, սպանջ
սպլիտակ, պհլ. spētak, սիվտակ, սֆտակ, պիտակ
ստեպղին, հուն. σταφυλῖνος, ստաղպին, սպետղին, ստպղին,
տեղպին, տեղպինդ

սրահ, պհլ. srāh, սրաֆ, սրա
սրսկել, իրան. srisk, սրսնքել, ցրսկել
վասն, պհլ. vasn, վանց
վարժ. պհլ. varž, վարջ
վարժապետ, պհլ. varž, վորջապետ
վիճակ, պհլ. vāiçak, վճակ, վճիկ, վոճորք
վիշապ, պհլ. vēšāp, վշապ, յուշապ, ուշապ, հուշապ
վկայ, պհլ. vīkay, ուկա
վճարել, պհլ. viçar, ուճարել, ճարել
տաճկինակ, պհլ. tāçikēnak, տաճար, տաճակ, տաճարի
տապ, պհլ. tap, տաք
տատրակ, մար. taturak? տեարակ, տատուրակ, տատարակ
տզրուկ, պհլ. tuzurūk, տրզուկ, պզտրուկ, տրծուկ, ծծրուկ,

ձնձրուկ
տնազ, արաբ. tanz, թնազ, տնաձ, ձնաձ
տոհմ. պհլ. tohm, տորմ
տոմար, հուն. tomáron, տամար
տոպրակ, թրք. dobra, dorba, տոնպրակ
տստակ, պրս. dastak, թստակ
փաթերակ, պհլ. patyāarak, փեթերակ, փոթերակ, բոթե-
րանք, պոտոռիկ
փիլիսոփայ, ասոր. fiłōsōfā, փիլուս
փշուր, հովհ. pš-, փսոր
փուխը, փխրիլ, վրաց. փխուրա, փուխ, փուրի

փուտ, փտիլ, պհլ. pūt, փտտիլ, փթիլ, փննուկ
քահանայ, արամ. kāhanā, քահաննա, գահաննա, կահաննա,
գահաննա, քախանա
քուռակ, պհլ. kurrak, քուռիկ
քսակ, պհլ. kīsak, քիսիկ
օրհնել, պհլ. aḫrīnam, օրթնել, օրխնել, օրշնել, օխնել
Որովհետև մեր բուն նպատակն է ցույց տալ, թե ե դա-
րում հայերենը դեռ բարբառներ չունի, ուստի վերի ցանկում
մենք չպիտի դնենք այն բառերը, որոնք ե դարից ուշ են
փոխ առնված: Այսպես օրինակ արաբերենից և թուրքերենից,
ինչպես նաև նոր պարսկերենից առնված բառերը: Բայց մենք
դիտմամբ դրինք նաև մի քանի այս կարգի բառեր, ցույց տա-
լու համար, որ եթե ուշ ժամանակի փոխառությունները կարող
էին այնքան փոփոխվել լեզվի մեջ, որչափ ևս առավել հնա-
պոյն բառերը:

Ջգուշացանք դնել նաև վրացերենի և ուրիշ կովկասյան
լեզուների հետ եղած համեմատությունները ընդհանրապես,
որովհետև կարելի էր առարկել, թե նրանք կապ ունենալով
միայն հյուսիսային Հայաստանի հետ, չէին կարող արժեք ու-
նենալ Հայաստանի այլ կողմերի բարբառների համար. ուրիշ
խոսքով նրանց տված ցուցումները խաբուսիկ կլինեին այս հար-
ցում: Օր. փշատ բառը բարբառներում ունինք ինչպես փշատ,
նոյնպես և «փշրատ, փրշատ» ձևերով. և երբ վրացերենը
ցույց է տալիս փշատի ձևը, դա մե՞ծ արժեք ունի իհարկե մեր
փշատ ձևի հաստատության համար, բայց չի կարող հերքել
փշատ, փրշատ ձևերի գոյությունը:

Երկրորդ խումբ

Այս խմբի մեջ դնում ենք հայերենի բնիկ բառերը, որոնք
մեկնվում են հնդկերոպական նախալեզվյան արմատներով: Բար-
բառներում այդ բառերը ունին զբաբարից տարբեր ձևեր, բայց
նրանք չեն արդարանում նախաձևի միջոցով. ուստի և համար-
վում են բարբառներում ուշ ժամանակ առաջացած ձևափոխու-
թյուններ.

ալևք, aleuro, ալլուր, լուր
ածել, ag¹, նածիլ, ծել
ածելի, ag¹+ելի, արծելի, ծելի
աղուէս, alōpek¹u, աղուէզ, աղուս

աղա, ard, եղա, յեղա
 անուն, nōmṛ, անում, անուն
 առիւծ, reug¹, ալլուծ
 ասել, ag¹, անել, ըսել, նահիլ, սել
 աստիճան, steigh, ասլիճան
 աստղ, stēr, ասղ, ասկ
 արեգակն, rev-ակն, յերգակ, էրէգակ, ըրէգնակ
 արթուն, pṛth, զարհնել
 արծաթ, arg¹ato, արգաթ, էրծաթ
 արժուկն, arm-ուկ-ն, արժունկ, էրժունկ, երժունկ
 բահ, բիր, bher, բահր, բիր
 բերան, bher, պինոր
 բովել, bho-u, բովհրել, բոհրել
 գառն, vārēn, գոռն
 գինձ, vendhā, ծինձ
 գորտ, wordo, քունթոուկ, գառնուկ
 դադարիլ, dhṛ, դահրիլ
 դաղձն, dh], դաոց
 դարբին, dhabhro-ին, դարբուն
 դեռ, dher, դել
 դու, tū, դուն, դուվ
 եզր, eg¹h, երզ (g¹h > գ կ ոչ ձ)
 եղուկ, leug, եղունկ
 երեկոյ, rég²os, էրիգու, էրիգուն, հիրիկու, հիրիկուն,
 արակու, հարակու
 երես, prepsā, էրես, յերես, յիրես
 երեսուն, trīk¹omtə, հեռսուն, յառասուն, արասուն
 երկիլ, prep, երաւալ, արևալ, յարևալ, էրկիլ, հերկնալ
 երեք, tréyes, էրեք, ժեք, շեք
 երէկ, rég²os, հերէկ, էրէկ, էրակ, արակ
 երէց, preisk¹hu, էրեց
 երի, péra, ների
 եօթն, եւթն, septṛ, օխտը, էխտը, եխտը
 ընարել (ընդ+դիր), հընդրել, հնյել, հըրել, հոել, հըյել
 հըլլել, հըլլել, հարել
 թեկն, թիկունք, teigno, թէյնը
 թեքել, tek, թիհվել
 թէ, te, թա, դը

թի, ptio, թին, թայն, թը
 թիթեռն, pter, թոթոնեկ, թթրմաղէ, թիթեղն, թիթմու-
 չիկ
 թուք, stiu-ք, թեք
 ինն, enwṛ, վինը, այնը
 լայն, plātno, նել
 լերկ, lerg², լեկ
 լողանալ, lov, լոյնալ, լողկնալ
 լողկել, lob, պլոկել
 լուանալ, plu, վլալ
 ծիծաղիլ, g¹], ծծղալ, ծծաղիլ, ծղաղիլ, ծղգալ
 կաղին, g²eleno, տկողին, կտողին, թակուղին
 կամուրջ, g²ebhura, կարմունջ
 կարկուտ, g²ag²rōdo, կարկունտ
 կերակուր, g²er, կերակուր
 կով, g²ov, կև, կաւ
 կուլ տալ, g²ul, դուլ տալ
 կուրծ, կրծել, gurg¹, կործել, կրծկործել
 կոունկ, gurōng, կոլունկ
 հերիւն, per, հելուն, էրոն
 հովիւ, ovipā հովիկ
 ձաղկել, g¹halg, ձաղտել
 ձիւն, g¹hiyōm, ձայն
 մեծ, még¹a, մենծ, վենձ
 մեք, mes, մենք, մունք
 մէջ, médyos, մաջ, մանջ
 մի' (նչ), mē, մը', մէր, մա, ման
 մղեղ, mōl, մոեղ, մղմեղ, մղաղ
 յղի, plē, յղա, յաղա, աղղա, յուղի, յեղղա
 նիգ, knig²h, նինգ, լինգ
 նիստ, նստել, nizdo, տատիլ
 շուն, k¹wōn, շըվըն
 ոգնի, og¹hinio, օձնի, ոնձնի, կոզնի, կոնձնի, կուզ, խոզնի
 ոլոք, oleq, ոլորք, լոլոք
 ոռ, orsos, վորդ
 ոռնալ, rū, նըռնուլ (=նոռնալ)
 ոտտ, ozdōs, ոտտղ, կոտտղ
 ործալ, rug¹, հործկալ, ոծկալ, կոծկալ, կործկալ

որոճալ, rod, կորճալ
 ուրուր, օ՛ր, ցուրուր, ուլուրիկ
 սիրտ, k'ērdi, սիւտ
 սուրբ, k'ubhró, սոււփ, զրբել
 ստեղծել, stel, սեղծել, տեղծել
 ստերջ, ster, տերջ
 տալ (ամուսնու քույրը), g'əlōu, տալվ, տավլ
 տեսանել, derk', տեսնիլ, տեսալ
 տտիպ, stib, տղում
 ցրուել, skēr, ցրիւ, ցվիր, ցվրել
 փուլ, փիլ, phōl, պլիլ, բ'լել, բիլել
 փուքս, phu, փուզ, փուսկ, փուս
 փոքր, փոքրիկ, phuku, փորիկ
 քէն, k'oinā, քիմ, խէն
 քոյր, svésōr, քիր, քոր, քայր
 օգուտ, auw, հօգուտ, օտկել
 օձ, աւձ, ang²hi, օխձ, օղձ, աղձ:

Այս կարգի բառերը երբեմն չափաչանց ձևափոխված են բարբառներում և ստացած այնպիսի կերպարանք, որ նախալեզվի պատկերը գրեթե անճանաչելի է դարձած: Գրաբարը կանգնած է շատ մոտիկ նախաձևին և ծառայում է Գրք միջոց՝ բացատրելու համար նաև բարբառային ձևերը: Այսպես են՝

Բոկ «բոկոտն, ստարորիկ». ծագում է հնիւ, bhosós ձևից, որ տալիս է հայերենի օրենքներով բո. սրա վրա ավելանալով կ' մասնիկը, դառնում է բոկ: Ծատ կարճ բառերը դատապարտված են կորչելու և կամ կորուստից ազատվելու համար՝ պետք ունեն որևէ մասնիկով զորանալու: Այսպես է եղել և բոկ, որ բարբառներում մի նոր մասնիկ էլ ստանալով դարձել է բոկիկ, բաղաձայնների նմանութամբ բորիկ, ապա ձայնավորների տեղափոխութամբ և այլ միջոցներով՝ ստացել է հետևյալ պատկերները. — բոկ, բոկիկ, բորիկ, բորլիկ, բապիկ, բիւբիկ, բիւպիկ, ստարորիկ, բեպիկ, բիբիկ, բիպեկ, պէօպիւկ, տեպեկ, նաև հաքբբբիկ:

Բանձր բառը առաջանում է հնիւ. tng¹hú ձևից, որի պատկերը ճշտիվ երևում է սեռ. բանձու ձևի մեջ: Բարբառներում գտնում ենք բացի բանձր գրաբար ձևից, նաև թանձր, թանձա, թանդա, թունձր, թոնձր, դրանձը, թարզը, թարզ, թորզ, մինչև խկ թոր, որոնք բոլոր ծագում են առաջինից:

Լիճ դառը առաջանում է հնիւ. lendh ձևից. բարբառներում ընդհանրապես մնում է այս ձևը, մյուսների մեջ՝ ստանում է հոգնակի լիճք: Լճիք (հմմտ. հնիւ. lendir, որ նույնպես հոգնակի է և պատահաբար նման մեր բառին), կամ կրկին հոգնակի լճիքք ձևը: Իսկ այս վերջինն էլ բազմաթիվ հետևառջություններով՝ դառնում է՝ լնդեսք, լրդեսք, լնդեսք, նընդեսք, ընդեսք, լզդեսք և մինչև ժենդ!

Շուճգ, որ ավանդված է նաև ծուճկ, ծուճր, ծրուճք! ձևվերով, ըստ Meillet-ի հայերենի նախնական ձևն է ծնու, որ հին հայերենում չի ավանդված և կա միայն ժղ. ծնուի, ծնվրենք. ձևերի մեջ, Այս ծնու ձևը համապատասխանում է սանս. śanu ձևին և ծագում է հնիւ. gōnu բառից: Սրա երկակին է g'ōnwi, որ դառնում է հյ. ծուճգ. հոգնակին ծուճգք, հյց. ծուճգս, ուր ս-ի պատճառով գ դառնալով կ' ծուճկս: Ինչպես ունինք մեղք, մեղու, քանձր-քանձու, նույնպես ծնու ձևից առաջացավ եզ. ծուճք, որից ձևացավ հոգնակի ծրուճք! բարբառների մեջ ծուճգ ստացավ և հողը և ն-ը բաղաձայնների միջև էլ առաջանալով դ ատամնականը, ձևացան՝ ծուճար, ծուճդր, ծուճզն, ծոճըր, ծէյնը:

Մօրուք, գրաբարի հին ձևն է մարուք, որ հոգնակի է. եզակին մարու. ծագում է հնիւ. smakru ձևից, նախաձայն s-ի սովորական անկումով և k բաղաձայնը r-ի մոտ վերածվելով u: Ապա աւ երկրաբար դարձավ օ, բարբառների մեջ՝ ազդվելով հաջորդ ու-ից՝ նաև ու, և առանձին ձայնափոխութամբ՝ ի: Այսպես առաջացան մօրուք, մուրուք, միրուք, մերուք, մայրուք, մրօք և գրաբարի հայցականը ուղղականի վերածելով՝ մօրուս, մուրուս, մրուս, մօրոս:

Հոտոտել, կրկնված է հոտ արմատից, որ հնիւ. od ձևից է առաջանում, կրկնական ձևն ունի նաև հուն. ὀδοδός. բարբառներում թեև ունինք հոտոտիլ, բայց նաև հոտոտալ, հոտոտալ, հետվալ, հոտֆտալ, հոտմտալ, հոտնտալ, հոտթըթալ, հնթնթալ, հոտվրալ, ֆոտվրալ, հոտմրալ, փթվթալ, խոտոտալ, խոտխտալ, խուտրտալ, խուտխուտալ, մինչև անգամ խոտթրնալ (Rivola):

Մանր բառը իր սեռ. մանու ձևով ճիշտ նույն է հնիւ. mēnu ձևի հետ: Ծաս լեզուների մեջ և և բաղաձայնների միջև գոյանում է դ ատամնականը. այսպես՝ հուն. ἀνήρ, սեռ. ἀνδρός, լատ. cinis «մոխիր», սեռ. cineris > Փրանս. cendre, պրս. panīr > Թրք. pendir «պանիր» են: Այսպես և հյ. մանր դառնում է բարբառ-

ներում մանր, որից առաջանում են հետզհետե մոնղր, մունդր մանյը, մայրը, մոյը, մայր, մոյը, մոյ: Ճիշտ նույն ձևով ծանր բառից ստանում ենք ծանդր, ծունդր, ծայր, ծորը, ծոյը ևն:

Մրջիւն ծագում է հնիւ. mōr արմատից ջ մասնիկով, մյու լեզուներն էլ շատ են փոփոխել այս բառը. մեր բարբառներում ունինք 26 ձև, որոնք զանազանվում են զլիսավորապես երկրորդ վանկի ձայնավորով (մրջիւն, մրջում, մրջիմ, մրջեմ, մրջում և մորմոնջ):

Այսպիսի շատ փոփոխված բառերից են արտասուք, արտուր, արցունք (<հնիւ. drak'ru), բարձր, երթալ (էթալ, էհալ, էալ), լպրծիլ (հնիւ. slibr), լի (հնիւ. plē), անկանիլ (հնիւ. spg), հորեղբայր, քան գ:

Բացարձակ անճանաչելի ձևի է հասած հնիւ. pedo «հեռք, սոռք», որ հյ. հետ > գվո. խետ ձևից անցնելով և ապա կրճատվելով դարձել է Մոկաց և Ոգմիի բարբառում՝ խա!

Երրորդ խումբ

Այս խմբի մեջ դնում ենք այն բառերը, որոնց ծագումը թեև հաճախ հայտնի չէ, բայց ունին այնպիսի կազմութուն, որ շուտ հայտնի է լինում, թե նրանց բարբառային ձևերը հետին ձևափոխության արդյունք են: Առնենք մի քանի օրինակ.

Բարեկենդան բառը բարդված է բարի և կենդանի բառերից. շատ սովորական մի բառ է. բայց ինչքան է փոփոխված նա հայ ժողովուրդի բերանում: Չաշվելով բ, կ, դ բաղաձայնների կրած ձայնափոխությունները, այդ բառը ստանում է 14 տարբեր ձև, որոնք են. բարիկենդան, բարկենդանք, բարկենդան, բարկանդանք, բարկենանք, բարկեդանք, բարկինդանք, բարկընդանք, բըրկինդան, բըրըկենդան, բարկիդանք, բարկանանք, բանկըդանք, բարանկեդան: Իսկ բոլորը միասին 26 ձև:

Ուղարկել կազմված է ուղի և արկանել բառերից. ժողովրդական լեզվում դարձել է ողորկել, որողկել, հորողկել, դարկել, ղրկել, խրկել. հվ չգիտեմ. թե այս բոլորը առաջին գրաբար ձևից «աղավաղություններ» են և բոլորն էլ ուշ ժամանակի և այն էլ շատ ուշ ժամանակի արդյունք:

Ոք մին գրաբարով շատ հասկանալի բացատրություն է բարբառներում դարձել է օքմին, ոմքին, օքնիմ, էքմին, ուրման. մթթե կարող են սրանք Ե դարի ժամանակակից բարբառների մասին որևէ բան ասել...

Մտազարդար բարդված է ծառ և զարդարել բառերից. այս ձևի տակ վկայված է 1221 թվի մի արձանագրության մեջ. չհաշվելով ծ և դ բաղաձայնների ձայնաշրջությունը. այս բառը բարբառներում ներկայանում է 11 տարբեր ձևերով.— ծառադարդար, ծառազարդար, ծառազարդաք, զարզարդար, զազարդար, զրզառդառ, զարդառ, զրըզարդառ, զարզադար, ծառծադար, ծառծառդար, մյուսներն էլ միասին՝ 18 ձև:

Օր հասարակ, գրաբարում նշանակում է «կէս օր, միջօրէ» . բարբառներում դարձել է օրարսակ, օհարսակ, հօրայսակ, էօրարսակ, օրասսակ, օսըրաք, օվարսակ, հօրսակ, հօրսուկու, հօրցակ, որոնց մեջ բավական դժվար է գտնել բառի բուն հետքը և կազմությունը:

Սարդոստայն դառնում է սարանդոստիկ. սալանդոստիկ, սանտրոստի, սարդոստ, սարդոյ.— Զրադաց (ջուր + աղաց) դառնում է շադարջ, շադարց, շադարցք, շադաց, շադացք, շադաջ, շադաջք, շադաչկ, ճեղաց, քեղաչք ևն:— Զրոքան տալիս է ճուռաթան, ճոռոթան, ճոթան, ճոլտրան, շրթոն, ճոլտրան, շորգէն, շոգդրան, շոիդան, շոռոդան, շոինդան, շոթթկան, շոնոթակ, շոնոթ, ճոռնակաթ, շոռնաղաթ ևն, որոնց մեջ շուր և յորդ արմատները իսպառ մոռացված են և բառը կապված է հոռ «կիսախողովակ», շոռալ և կաթիլ գաղափարների հետ:

Թե այս կարգի ձևափոխություններից գոնե մի մասը հետին «աղավաղություն» է՝ երևում է հենց նրանից, որ միևնույն բարբառի մեջ միևնույն «աղավաղ» ձևի հանդեպ կա արմատի ամբողջական ձևը, որ նույն է գրաբարի հետ: Օրինակ՝ Սեբաստիայի բարբառում կաղալ դարձել է աղալ, բայց մնում է արմատը կաղ, պետք է ուրեմն կարծել որ կաղալ առաջացել է նախաձայնի ջնջմամբ, շփոթելով սանմանական եղանակի կը մասնիկի հետ:— Սալմաստի բարբառում կայծակ դարձել է կէրծակ, բայց ունի արմատը կէծ «կայծ»:— Զուղայի բարբառում հանգչել դարձել է խանգչել, բայց գոյականն է խանգիստ:— Զաբաբաղի բարբառում հարսն դարձել է հարթնը, բայց միևնույն ժամանակ ասվում է հրսանէթյ:— Զգել շատ տեղ դարձել է գցել, բայց արմատը պահում են ձիգ:— Ագուլիսի բարբառով ասում են ձմբարուկ «ձմերուկ», բայց շատ լավ պահված է ձմեռնը (և ոչ թե ձմբեռնը):— Նույն բարբառում միմեանց դարձել է մրմանու, բայց արմատական ձևն է մի, մույն:

Երբեմն էլ բարբառները այնքան ձևեր են ներկայացնում,

որ եթե գրաբարը հայանի չլիներ և մենք համադրեինք այդ բոլորը իրար հետ, պիտի գտնեինք հենց գրաբարի ձևը: Այսպես օր. «կաղնի, կայնի, կաննի, կոյնի, կանդրի, կանգ առնի, կանի, կան առնի» ձևերը, որոնք եթե միացնենք, պիտի տան կամգնի:— Այսպես նաև խանգարիլ (խաղոբիլ, խանդոբիլ, խաղոբիլ) և այլն:

Երբեմն էլ բարբառային ձևը ժողովրդական ստուգարանության արդյունք է. օր. ծուարիլ դարձել է «ձուարիլ, ձուաւորվիլ», իբրև թե ձու բառից: Քիչ վերև տեսանք նաև ջրարդան: «Էֆիմերտէ» որ շատ նոր ժամանակի բառ է (հունարենից), դարձել է Կովկասում Եփրեմովերդի, (կարծես թե թրքական մի անուն լիներ, ինչպես Ալլահվերդի), իսկ Սեբաստիայում արուվերդէն, որ պրս. abigerdan «ջրաման» բառի ձևն է առել:

Շրջումը կամ բաղաձայնների տեղափոխությունը սովորական երևույթ է բոլոր լեզուների մեջ: Նախորդ օրինակների մեջ տեսանք լուանալ, լուալ—վլալ, ծիծաղիլ—ծծղալ, ծղալ, ևն: Ամենքին հայտնի են ոչխար—ոխչար, աշխատիլ—ախշատիլ, կուսակցություն—կուսացկություն և նման ձևեր: Հաջորդ օրինակների մեջ պիտի տեսնենք աթոռք—առթոք, այրելիք—իլերիք «վառելիփայտ» ևն, Ավելի հետաքրքրական է կայծոռիկ—ծիկուռի, որի մեջ մինչև անգամ բառի ստուգարանությունը (կայծ բառից) անհետ է դարձել: Բայց այս շրջումը իր ծայրագույն աստիճանին է հասնում, երբ ամբողջ բառն է շրջվում: Այսպես օր. լայն դառնում է ցել (անցնելով լեմ ձևից), պուտ (ծաղիկը)—տուպ, պուտ (կաթիլ)—տուպ, դեպիլ—բըդիլ:

Կան բառեր, որոնց մեջ ձայնական կապակցությունները այնպես են, որ ենթակա են անհրաժեշտ ձևափոխության: Այսպես օր. խղճմտանք բառի մեջ հինգ բաղաձայն իրար կողքի խճճված, բավական ծանր է. և պետք է որ կրճատվեն: Ուստի բարբառներում ձևացան «խճմտանք, խժմտանք, խճպտանք» ձևերը, ուր գրաբարի խեղճ մտաց ասութային հազիվ հետքն է երևում:

Այսպիսի խախուռ և անհաստատ դիրք են ներկայացնում նաև հայելի, կայանալ, վայելի, ընտրել ևն: Հայելի բառի մեջ միջին և ձայնավորը ենթակա է ընկնելու, այ երկրաբարը միայն չէ, նախաձայն և կարող է դառնալ իս և մնում է միայն ի: Ահա այս եռյակ պատճառներով բառը դարձել է բար-

բառներում՝ հայլի, հէյլի, հալի, հալի, հիլլէ, հիլի, հալիլա, հիլիլա, հլլէրի, խէյլի, խալլի, խայլիկ: Սրան նման է արմատը՝ հայել «նայել», որ շատ տեղ ջնջված է, իսկ տեղ տեղ էլ մնում է խել, ըխիլ «տեսնել», ըխը «տես», խեքք «տեսնենք» ևն ձևերով: Վայելիլ դառնում է վէլիլ, լէվիլ, վայելիլ, վիլիլ:

Գիպքեր կան, երբ բառի փոփոխության կանոնավորությունը բարբառի մեջ՝ ցույց է տալիս, թե փոփոխությունը ուշ առաջացած երևույթ է. օր. Հաճինի բարբառում հոգի, ոջիլ, տոլի դառնում են հիգի, իջիլ, դիլի, այսինքն երկավանկ բառերի մեջ առաջին վանկի բաց ո դառնում է ի, եթե երկրորդ վանկը վերջանում է ի: Սրան նման Ջեյթունի բարբառում ոլորիլ դառնում է իլլիլ, բոլորիլ>բիլիլ, խոլորիլ>խիլիլ, բոլորն էլ նոր ձևափոխություն:

Այսպիսի մի զարմանալի ձայնափոխություն ներկայացնում են եօրն, օծ, գօտի, քօրափել բառերը, որոնք բարբառներում դառնում են օխտը, աղծ, գախտի, քախքիլ: Meillet հայագետը այս բոլորը բացատրում էր հետևյալ ձևով. այդ բառերը հնապես ունեին ւ, որ բաղաձայնից առաջ թավանալով դարձավ ֆ, բայց որովհետև հայերենը չունի ֆ, ուստի շուտ ավելի իս-ի, ճիշտ ինչպես հին հայերենում կազմվել են գառնաուխտ, հառնաչաուխտ, Հագարաուխտ բառերը, իրանական ի վերածելով հյ. խտ: Իսկ օծ>հին աւծ բառի մեջ ֆ գտնվելով թրթռուն բաղաձայնի մոտ՝ դարձել է դ (Ազլ. աղծ):

Այսպիսի շատ շարժարված բառերից են՝ առաւօտ, աղաւնի, բանալի, բարձուենեակ, ջրցանիլ, շնորհաւոր, խլէզ, դժգոհիլ (>ջոշալ), քարաթոթոշ, թրթնջուկ, ժամ (ժում, ժէմ, յում), կոծիծ, պատիծ, աւետարան, որբևայրի, անկողին, լինել, խախիծ (խարխնծի) ևն:

Առանձնապես հիշելու արժանի եմ համարում տաք, շաք բառերը: Այս երկուսը այնքան տարբեր են տապ և շափ բառերից, որ բոլորովին անմեկնելի էին համարվում և բոլոր բառարանները գնում էին իբրև առանձին արմատ: Հայագետ Karst, որ նախապես ընդունում էր, թե հին հայերենը բարբառներ չունի, այս տաք ձևից այնպես էր ազդվել, որ վերջում փոխեց իր կարծիքը և ընդունեց, որ հին հայերենն էլ ուներ բարբառներ: Վերջերս միայն հաջողվեց ինձ մեկնել այս բառերի ծագումը (տե՛ս Տեղեկ. Ակադ. 1946, № 1, էջ 33) և այնպիսի հասարակ ձևով, որ ոչ մի կասկած չի վերցնում: Այս բառերը առաջանում են հոգնակի տապք և շափք ձևերից,

ճիշտ ինչպես բամբռ ձևից ունենք բամբ: Երկրորդից կա նույն իսկ (հյց.) շափս, ինչպես կա ձև: Ե գարում Եզնիկը գրում է. «Եւ գհազար՝ եթէ ի տօթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի գովացուցիչ է, գտապս ի փորոյն փարատէ» (էջ 66): Այս օրինակից երևում է, որ իբրև գոյական Ե գարում գործածական էր տապք ձևը, որ պետք է այսուհետև առանձնապես նշանակի բառարանում:

ագահ—անգահ, ագաֆ
ագի—ագիւ, հագի
ագուաւ—առգաւ
աթոռ(ք)—առթոք
ածուխ, ածուղ—անձուղ, հանձուղ
աղաչանք—աղանչաք, աղանչել
աղջիկ—աղջկին, աչխին, աչգին, աշխնակ, աչին, աչիկ
աճապարանք—ապաճարանք
ամաչել—ամանչել, մահանչ
ամուլ—ամբուլ, ամբուլ
ամուր—յամբուր
այրելիք—իլիքիք
անգղ—անգ
անհաց—ախանց
անձրև—անձև, անձվեր, անձրով, արգև, արև!
անսուաղ—անսուար
աքցան—անցակ
բաղարջ—բեղարջ, բաղաջ, բաջուկ
բաղեղն—բառեղ, աղեղ, բարեղն
բուրվառ—բուրվալ, բուրվառ
գոգ (մէզ)—գոս
գոռոզ—գոռէզ, գուռուզ
գուլ—խուլ
գուղձն—գունցխ, կուճնձ
գանակ—դենակ
դատարկ—դարտակ, դերտակ
դդում—դնդում
երազ—երած, արազ, ներազ
երախայ—երեխա, արախա, յարախա, բախա
երանի, երանեակ—ընեբակ, հնեբակ, նեբակ
երբ—երբ

երզ—երզիք, երզիս—էրծիս, հիւրթ
երիկամն—իրիկամ, իլիկամ
զարդարել—զանթրել, ջարդըրել
զզուիլ—զվզալ, սսվալ
զսպել—սսպել
զուտ—զուար
զոքանչ—զոնքաչ, զոնքանչ, զանկաչ, զամքուչ
թաթպան—թաթման
թաթախել—թախթել, թանթիել
թամբ(ք)—թամք, թափ
թեթև—թեթր (նմանությամբ ծանր-ծանդր բառի)
թիզ—թիլ (հմմտ. քիլ)
ժողով—ժողվողք, ժողել, ժողոտել
իմանալ—ինալ, մանալ
ինչ—հինչ, ունչ
լիսեռն—նիսեռ
խակ—դակ (դ նախաձայն չկա հայերենում)
խաղ, խաղալ—հաղ, հաղալ
խաղաղ, խաղաղվել—հաղազ, խաղվել
խաղող—հաղող, հաւող, խաւող, խաղ
խարշել (խար+շ)—խաշել
խեչափառ—խաչեբփարա
խէժ—խէճ, դիժ
խլին, խլինք—խնլիք, խլլիք, խնլինք, խլլինք, խնլիք
խողովակ—խովակ, խվլակ
խոնարհ—խոնարխ, խոնարք
խորիսխ—խորիս, խորիզ, խորիձ, խորինձ
ծածկել—ծասկել, տասկել
ծանծաղ—ձանձաղ, ցանծաղ
ծերպ—ծելպ, ծեպ
ծոծորակ—ծործորակ, ծործակ, ծիծիրակ, ծիրակ, ծածրակ, ծոծրակ, ծոծր
կազմել—կազնել
կաղճին—կարճին, կաւճին, կարճնկաւ
կամակատար—կամարկատար
կամն—կամնը (կաւն)
կայծոռիկ—ծիկուռի
կանաչ—կանանչ, կենաչ, կանէչ

կանչել—դանչել (բառասկզբում ղ!)
կապերտ—կարպետ (հմմտ. կամուրջ, դատարկ, փիփերդ)
կասել «կամենել»—կալսել (կալ բառից)
կատաղիլ—կաղտիլ
կարժ—կաժ, կան, կարճ
կզակ—կծակ (կծել բայից)
կթիլ «հոգնիլ»—քթիլ
կիզն «բուրդ»—գիզ (զզել բայից)
կոկոն—կոկոմ, կոկոց
կողոպուտ—կողոպուրդ, կողովուրդ
կողով—կովոզ, կողոզ
կորի—կորին, կորիմ
կորնկան—կորնկալ, կորնկա, դոռնկա
կում (անել)—դում
կտուց—կտնուց
հաղորդ—հաղվորդ, խաւորդ, խովորդ
հացահան—խասխան, ծահան, ծհան
հի՛—խի՛
հիւսել—հիւսսել, ուսել, հուսքել, հսել, ֆսել
հպարտ—(հ+պարտ)—հմպարտ
ձագար—ձագառ, զաքար
մեղու—մեղուն, մեղոն, մեղուկ, մողիկ, մեղրուկ
յեսան—լեսան, օսան
յիմար—ումար
ներհակ—նեհրակ
շող—շեհ
շարժ—շաժիլ, շաշք, ժաշք, ժաժ
շեղշ—շեղք, սեղջ, չխչել
ուլուն, ոլեուն—ուլեո, ոււել
ողկոյզ—կոյզ
որդն—իււնը
որոտալ—կորտալ, որորտում
ուրագ—վրագ (հմմտ. ուր>վուր)
ուրդ «առու»—յուրդ, ուրց
ուրուկ «բորոտ»—ուրուտ
չամիչ—չամինչ, չամուչ
պաղատանք—պաղանտաք
պապանձիլ—պաղպանձիլ

պատիժ—պատիճ, պատինճ
պատրոյս—պատրուստ
պարծենալ—պարժմանալ, պարդենալ
պղտոր (պիղտ+որ)—պրտող, պղտիր
պոզ—պոզա
սարկաւադ—սարկաւարդ
սարսատիլ—սարսարտիլ, սարսնտիլ
սեղմել—սխմել, զխմել, դսմել (թրք. səxə)
սոթոթել—սոփտել
սողալ—զողալ, սողղալ
սոսինձ—սոսինջ
սովորիլ—սորվիլ
սպանանել—պաննել
վարագոյր—վարագուլ, վարագու, վարարզու
վարդապետ—վարպետ
տաղախ—տախախ (=վրաց. տախախի)
տաշտ (որթի ճյուղ)—տաշտակ, տաշնակ
տապաստ (հիվանդութունը)—տապաս
տարակուսիլ—տարեկուսիլ
տարմ (թռչունը)—տամբ, տարբ
տորոն—տուրուն, տոնիր, տարան
տրորել—տլորել, տվորել
ցած—ցածր, ցանծր (բարծր, բանցր բառի նմանութամբ)
ցասումն—սասում
ցերեկ—ցորեկ
ցնկնիլ—ցղնել, ցննել, ցըյնիլ
փափագ—փափաք, փափանք
փետուր—թեփուռ, թեպուր, թուպուլ, թեուր
փոթ—փոնթ, (հմմտ. փաթ)
փորել—պորել, բորել (հմմտ. բրել)
փորձել—փերձիլ, փեռզիլ
փսխել—փխսել
փրցիւնք—փցիւնք, փսիւնք, սիւնք, ցմբիւնք
քաղցր—քրախցը, քոցի, քարո
քարկոծել—քարկործել
քիթ—քինթ
քշոց—խշոց
քչփորել—կչպորել, կչփորել, պչկորել, փչխորել, փչփորել

քչպորել, կճպորել, քցպորել, քցփորել (որոնց բոլորի նախաձևն է պնկորել):

Չորրորդ խումբ

Այս խմբի մեջ հավաքում ենք այն բառերը, որոնք թեև բարբառներում ունին զանազան ձևեր, բայց մենք չենք կարող դատել նրանք, որովհետև չգիտենք այդ բառերի ծագումը.

ակումբ—ակում, ակամ, ական

ողեղն—անեղ

աղիւս—օղիս

անծեղ—հանծեղ, անծուղ

անթ, անութ—անթ, հունթ

անօսը—նօսը, նօստը, նորս

աշխոյժ—աշկուշ

ասեղն—ասուղ

արջասպ—արջապս

աքիս—աքիստ

բանկն—բնգըլ, բունգլ, բանկլիկ

բանջար—բենջար

բևեկն—բիբկի, բեմպիկ, բիբիկ

բևեռ—բիբեռ

բորբոս(ն)—բրբեշն

բոինչ—բղինչ

գար «կեռ»—գեր

գայլ—գիւլ

զանգատ—գենգատ, գինգատ

զգել—զձիլ

գիրկ—գիւրկ

գնալ—նուլ (=նալ)

դազաղ—գադաղ

եղան—եղուի

էգ—ազ

ընկոյզ—անկուզ, անկէզ, նընգուզ, գուզ

լուսան—լիւսեմը, լիսամ

խուրձն—խուրթն, խուրզն

խոնդատ—ֆոնդատ

ծալել—ծալլել

ծիծեռնակ—ճճոնիկ

ծիրան—ճիրան (=վրաց. ճերամի)

կանդրիւ—կանուիւ, կանդրե, կանդրիկ, կանրեղ, կանդակ.

կճղակ—կճեղակ, կճողակ

կորիզ—կորուզ, կորինձ, կողինձ, կղէզ

կուրծք—կրուծք, կուրսք, կուրք

կոէզ «խէժ»—կոէժ, կոիզ

հալածել—հըլըզիլ

հաճար—աճար (>վրաց. աճարա)

հաճարի—աճարի (ծառը)

հայհոյել—հովհովել

հանգոյց—հանգուրց, հանգուստ, հանգուրստ. հանգուշտ

հասկ—հաշկ

հաւատալ—աւատալ

հնձան—ընձան

հոյն (պտուղը)—հոն, հուն

հոսելի—հորսելի

հունձ, հնձել—ունձ, ունձել, ընձել

հրճհրճուկ—կոճիկ, կոճուկ, դրճդրճան, խոճիկ, խոճուկ.

խոնճիկ, դոթիկ, կոկոթիկ, խոխոթիկ

ձաւար—զաւառ

ձգուտալ—զկուտալ, սկուտալ

ձեղուն—ձողուք, ցխինք

մասուր—մանուուր, մասուլ, մահասուր, մասպուր, մարսիկ.

(իմն մասրիկ)

մացառ—մոցառ, մոցեռ, միցեռ, մացակ

մոխիր—մախիր, մոխուր

մոծիր—մոծիլ, մոծեղ, մճիր, մճիլ

մսխել—մխսել

յօնք—վօնք, յունք, ունք

նապաստակ—լապստակ, լապտրակ, ալապստրակ

նինջ, ննջել—նունջ, լնջել, մնջիլ

նուաղիլ—նղաւել

նուիկ—լուիճ, լուինջ

նօթի—անօթի, անութի

շիճուկ—սիճուկ, շտուկ, սուճուկ

շորթել—շորփել

շուք—շուսք

որոմն—որեմ

ունջ ամուրծ—մուսջ
 պայծառ—պոյծառ, պոծառ
 պատուհան—պատուրհան, պահատէն
 պինչ—փինչ, փանչ
 ջահ—ջարհ
 սալոր—սալուոր, շլոր
 սակառ—սաղոռ, սաքոր
 սահիլ—սեհիլ, սաֆիլ
 սեպ—շեպ
 սերեկ—սարեկ
 սերկեկիլ (ուսի 19 ձև)
 սպտուր, սպրտուր—սպլտուր, պտտուր, պտուր, կտտուր,
 պտրուկ, պարտուկ
 սպրդիլ—սպտուկ, սպլտալ, սլպտալ
 ստէծ—ստերծ, ստերծ, ստեց
 վագել—վարգել, վազգել, վագկել, վասկել, վագնել
 տատառիկ—տատառ, տատառչ, տատառչի
 տուղտ—տեղտ
 ցախ—ցաք
 փթթիլ—փտպտիլ, փթթրիլ
 փնտուկ—պտուկ
 փշատ—փշապ, փրշատ, փշրատ, փշրհատ
 փոխինդ—փոխինծ
 քող—քողր
 քոս—քոզ
 քցիմ—քցիպ, քծեփ, քծծ:

Այժմ սկսենք հավաքել այն բառերը, որոնց բարբառային ձևերը ունին որոշ գրավական՝ ավելի հին լինելու քան գրաբարի ներկայացրած ձևը:

Հինգերորդ խումբ—Հ հավելված

Երբ գրաբարի մի խումբ բառեր (ընդհանրապես ձայնավորով սկսող, մի քանիսն էլ բաղաձայնով սկսող) համեմատում ենք նախալեզվյան ձևերի հետ, տեսնում ենք, որ բառակզբից մի բաղաձայն (ընդհանրապես p կամ s) ընկած է հայերենում, մինչդեռ բարբառային ձևում մնում է: Օրինակ՝ սրբի արմատը տալիս է հյ. սրբ(ենալ), sephs > եփել, perə > երի, porthu > որբ, բայց սրանց բարբառային ձևերը լինում են հար-

բիլ, եեփել, հերի, հորբ: Բնականաբար այս բարբառային ձևերը, որոնք ունեն նախաձայնը, ավելի հին են, քան գրաբարը, ուստի և ներկայացնում են մի բարբառ կամ բարբառներ, որոնց մեջ նախաձայն p, s չէր կորչում:

Երևույթը նույն է այսօրվա գրության հետ: Այսօր մեր բարբառները այս որբ բառի ձևի կողմից բաժանվում են երկուսի. մի խումբը գիտե որբ, մյուսը հորբ: Այսպես վան, Մակո, Մալմաստ, Մարաղա, Ագուլիս ունեն որբ, որբիկ ձևը, իսկ Ախալցխա, Կարին, Ալաշկերտ, Մուշ, Խարբերդ, Տփղիս, Սվեդիա, Ալանբեկ, Համշեն, Արդվին ունին հորբ, հորբուկ: Երևվան, Մուշավա, Սերաստիա, Խրիմ ունեն ֆորբ, որ առաջնում է հորբ ձևից, ուրեմն նրանք էլ պատկանում են երկրորդ խմբին: Ղարաբաղ ունի վրէթք, որ անորոշ է և կարող է ծագել թե՛ որբ և թե՛ հորբ ձևից. հմմտ. մի կողմից ոսպ > վրէթպ, որձ > վրէթց, և մյուս կողմից հող > վրէդ: Աշխարհաբարը երկու գրականում էլ ընդունել է հորբ, ընդդեմ գրբ. որբ ձևի:

Այստեղ հավաքում եմ ուրեմն այն բոլոր բառերը, որոնք բարբառներում ունեն ն, երբեմն էլ Յ նախադասվածքը, որից գուրկ է գրաբարը, թեև նախալեզվյան համապատասխան բառը ունի p կամ s.

- ալուոր, plyo, հալիվոր
- ամառն, sem, համառ
- ամէն, smmo, համէն
- անիծ, knid? հանիծ
- անկանիլ, snq, հընգնել
- աջ, sādhyos, յաջ
- առու, sru, հառու, յառու
- արբենալ, srbh, հարբենալ, հարբիլ
- արթուն, prth, հարթուն
- աւազ, sabh-? հաւազ
- երեսուն, trikomtə. յէսսուն, հէսսուն, յաբասուն
- երեկիլ, prep, հերջնալ, յարկալ
- երի, perə, հերի
- եփել, sephs, հեփել
- լալ, plā, յիլալ
- ոզ, k^o, հոզ
- ոռն, pod, յոռ
- որ, k^o, հոր

որթ, porhu, հորթ
որս, pork¹os? հորս
ուլ, pōlo, հուլ
ուր, k³u-r, յուր, հուր:

Այս 22 բառերի դեմ ունինք սակայն 28 բառ, որոնք թեև հակառակ գրաբարի ունին և կամ յ հավելվածք, սակայն նրանց նախալեզվյան ձևն էլ չունի ոչ p և ոչ s, այլ ներկայացնում է պարզ ձայնավոր: Ահա այդ բառերի ցանկը.

ազանիլ, evo, հագնիլ, խագնիլ
ածել, ag¹, հածել
աղբիւր, bhrevr, հաղբիւր, յաղբուր
ամբ(ողջ), ambho, համբողջ
այգի, oiwā, հէգի
այծ, aig¹, յէծ
անդ, anta, հանդ
անդունդ, ան+dhundhos, հանդունդ
աչք, akī, յաչք
արգանդ, arq², հարգանդ
արտ, ag²ro, յարտ
արօր, aratro, հարօր, խարօր
ափ (ձեռքի), aph, յափ
ելանել, el, յելնել
եռալ, ers, հեռալ
երդումն, ertu, յերդում
երեկոյ, rég²os, հիրիկուն, հարակու
երէկ, rég³os, հերէկ
իսկ, istwo, հսկի
լոր, lor?, հլոր
ոռ, orsos, յոռ
ործկալ, rug, հործկալ
ուղի, ul, հեղի, հղի
ուղուկ, òl, հղուկ
ուս, omso, յոսս, յուս, հուս
օդ, audho, յօդ, հօդք:

Մրանց վրա ավելացնում ենք ընկեր-երեկեր, ցրկեր և ընտրել-ընտրել, նրմարել, որոնք կազմված լինելով ընդ (հնխ-anti) նախդիրով (իրը ընդ-կեր, ընդ-դիր) նույնպես չունեն իրենց վրա որևէ բաղաձայն:

Այս խմբին պատկանող ուրիշ բազմաթիվ բառեր էլ կան (օտար լեզուներից փոխառություններ), որոնք թեև բարբառներում ունեն և հավելվածք՝ հակառակ գրաբարի, բայց նրանց փոխառու մայրն էլ չունի այդ և նախաձայնը: Այսպես են՝

արեղայ, ասոր. abīlā, հաբեղայ
ագուգայ, ասոր. agōgā, հագուգայ
ախոռ, պրս. āxūr, յախոռ
անապատ, պհլ. anāpāt, հանապատ
աւեր, պհլ. avēr, յաւերել
ուխտ, պհլ. uxt, յուխտ
ուրագ, ասուր. urraku, հուրագ
օրէնք (աւրէնք), պհլ. awdēn, յօրէնք:

Այս խմբին պատկանող այս երեք կարգի բառերից դուրս ունինք նաև չորրորդ կարգի բառեր, որոնց ծագումը անհայտ լինելով, նրանց և, յ հավելվածի հարցն էլ մնում է անորոշ: Այսպես են՝

ագի-հագի
սկանջ-յանկաջ, հանգաջ
ամաչել, ամօթ-համանչիլ, համօթ
ամոլ-համոլ, յամոլ
ամուր-համուր, յամբուր
այր (քարայր)-հէր
անագան-հանագան, յանագան
աներ-հաներ
անցանել-հընցանել, հընցնել
առիք-հառիք, յառիք
արտոյտ-յարտուտիկ
արօս «կորդ հող»-հարօս
ափն (ջրի եզերք)-յափ
աք (ոտք)-հաք
եղի (ցորենի)-հեղի
եռանդ (նախորդ օրը)-հեռանդ
երբ-հեփ
երդ, երդիք-հերդ, հերդիկ
երինջ-հերինջ
երկայն-հերկէն
է՞ր (ինչ՞և)-հէ՞ր (նաև նէ՞ր)
ընթրիք-հընթրիք

Իմանալ—հիմանալ
 Ինքն—յինք
 Իրեար—յիրար, հրօր
 Խթիս—հոթիս
 Ոլտոն—հոլտոն
 Ոլտրել—հոլտրել, յոլտրել
 Ոջիլ—հոջիլ, յոջիլ
 Ոսպն—հոսպ
 Որդն—հորդ
 Որիշ, որոշ—հուրիշ
 Ուղեղ—յղեղ, հղուղ
 Ուղղորդ—յաղորդ (մհյ. յղորդիլ)
 Ունդ—հունդ
 Ուշի (ծառը)—հոշի
 Ուռի—հուռի
 Ուստի—յուստի
 Օփ «խոտոչ»—հոփ
 Օգնել—հօգնել:

Այս բոլորից դուրս է պարապ > Ղրբ. հպարապ, որի սկիզբը զրված և հավելվածը ոչ թե նախորդների կարգից է, այլ պրս. հս մասնիկն է, որ գտնուում ենք նաև հլու, հզոր, հպարտ, հուժկու, հմուտ և ուրիշ մի քանի բառերի վրա: Մրանով հպարապ դառնում է «բոլորովին պարապ»:

Վեցերորդ խումբ—Ե հեևարան

Գրաբարում ք կամ ղ բաղաձայնով սկսվող բառ չունինք. այդ կարգի բառերը ստանում են Ե կամ ա հենարանը: Այսպես ունենք երագ և արագ, առասան և երասան, արաստոյ և երաստոյ «կարծր քար» են: Այս երկու հավելվածների պայմանները մեզ լավ հայտնի չեն. գրաբարում երկու ձևերն էլ հավասարապես կան, բայց ի վերջո հաղթում է մեկը: Այսօր մենք գիտենք արագ (ջնջված է երագ), առասան և երասանակ ստացել են տարբերացում, առաջինը նշանակում է «գիթձան», երկրորդը՝ «սանձ». Արաստոյ մեքրոպյան շրջանից է. երաստոյ թ գարից. այժմ երկուսն էլ ջնջված:

Կարելի է ընդունել, թե այս երկուսը բարբառային ձևեր էին: Արդի բարբառներում կան թե՛ Ե-ով և թե՛ ա-ով սկսվող ձևեր. աալիս ենք նրանց ցանկը:

աղաւնի—եղունիկ, եղվնիկ
 Եկ, Եկն—ցձ, ակալ, ալիք
 Եղբայր—աղբայր, աղբար, աղբէր
 Եղիճ—աղիճ, աղինջ, եղինջ (նաև լէղիճ, խաղինջ)
 Եղունգ—աղունգ, օղունգ, ուղունգ, ղունգ, ըղինգ, ղինգ
 Եղջիւր—աղջիւր, աղջեր
 Երագ—արագ
 Երախայ—արախայ
 Երաշտ—արաշտ
 Երէկ—արակ
 Երեկոյ—յարակու, հարակու
 Երեսուն—արասուն, յարասուն
 Երևալ—արևալ
 Երինջ—արինջ
 Երկաթ—արկաթ
 Երկան—արկան, արկանք
 Երկու—արկու, օրկու:

7-երորդ խումբ—Ն հավելված

Գիտենք որ գրաբարը հաճախ դնում է բառավերջում և հավելվածը, որ հոլովման և ածանցման ժամանակ էլ պահվում է: Այս և հավելվածը նախալեզվի դ կամ ո վերջավորութունն է, ինչ որ հայտնի կերպով երևում է, երբ համեմատենք իրար հետ եօրն<հնխ. septm, ինն<էոնո, տասն<dek'ո բառերը: Բայց հայերենը այս հավելվածին մեծ ուժ է տվել, այնպես որ շատ ու շատ բառեր օժտված են նրանով, մինչդեռ մյուս լեզուները չունեն: Օր. դուռն<dhur, դուրգն<dhrogh, եզն<eg'h, կաթն<g'alakt, ձեռն<g'her, g'hers ևն:

Հայերենի այս և հավելումը ուշ ժամանակի գործ է. սրա ապացույցը նախ այն է, որ շատ լեզուներ նույն ո հանգը չունին, ինչպես ասացինք: Երկրորդ՝ նույն իսկ հայերենի վաղադույն շրջանում այդ բառերը և չունեին և հետո ստացան. հմմտ. դուռն, որի հին ձևն էր դուր, որից յգ. դուրք. հյց. ի դուրս. ածանցներ՝ դրացի, դրանդի ևն.—նույնպես ձեռն, հինը ձեր, որից գծ. ձերք, որից ձերբացի, ձերբակալել, ձերբազատ:

Արդի գրական լեզուն ջնջել է այս և հավելվածը. թև ածանցման մեջ պահում է. ինչ. ձուկն>ձուկ, ձկնեղեն, դուռն >դուռ, դռնապան ևն: Բարբառներն էլ մեծապես մասամբ

գուրկ են ն-ից, բայց կան մի քանի բարբառներ (հատկապես Ղարաբաղի և Ազուլիսի), որոնք ամենայն հավատարմությամբ պահում են այդ ն ձայնը. ինչ. ձուկն > Ձղ. ձուկն, Ազլ. ձուկն, Աժտ. ծուկնը, Ղրբ. ծուկնը, ծիւկնը, Շմ. ծիւկնը, Գոր. ծիւկնը:

Այս բարբառների մեջ կա սակայն մի ուրիշ երևույթ էլ: Հաճախ գրաբարը չունի գոյականի ծայրին ն, մինչդեռ բարբառները ունեն: Ահա այս կարգի բառերի ցուցակը:

անդամ—անդեմնը (պհլ. andām, մհյ. անդամն. յգ. անդամունք)

բծիծ «ոջիլ»—բծիծն (պծէզնը)

բոռ «իշամեղու»—բոռն

բորբոս—բորբոսն

բոինչ (պտուղը)—բոինչն (պուէշնը)

գորտ—գորտն (մհյ. ևս գորտն, որից էլ գորտնուկ)

զկեռ—զկեռն

թուզ—թուզն (թօզնը)

խէժ—խէժն

խլէզ—խլէզնը (ասոր. xlēzōnā)

ծուռ—ծուռն

կանկար—կանգառն

կուէզ «խէժ»—կուէզն

հակ «բեռան մի կողմը»—հակն

մամուռ—մամուռնը

սինձ—սէզնը (=սինձն)

տալ «ամուսնու քույրը»—տալն:

Ութերորդ խումբ—Ձայնդարձ

Ձայնդարձ (Ablaut) ենք կոչում հնդեւրոպական նախալեզվի այն երևույթը, որով արմատի e ձայնավորը ածանցման ժամանակ դառնում է o կամ ջնջվում է: Այս երևույթը թեև նախալեզվյան շրջանին ընդհանուր էր, բայց պիտի ուշ, ժառանգ լեզուների մեջ հետզհետե ջնջվեց, պահելով միայն աննշան հետքեր: Հայերենն էլ պահում է ձայնդարձի զանազան հետքեր, ինչ. հետք, ոտն, յատակ.—հեղուլ, ողողել, հալել.—քերել, քորել ևն:

Բարբառներում կան ձայնդարձի այնպիսի հետքեր, որ գրաբարը չգիտե. այսպես՝

բանալ—բենալ, բաց—բեց

բառնալ—բենալ, բարձ—բերձ

բորբել—բերբել «բորբոքել»

զազան—զեզան

զահել—զեհել,

գաղել—գեղել, գաղտուկ—գեղտուկ

գամփո—գոմփոո

գանգատ—գենգատ

գարի—գերի, գորի

գաղձն—գեխսնը

դառնալ, դարձ (dhr̥gʰh)—դեռնալ

երդումն (ertu)—օրդում, ուրթում

լեսուլ—լոսել

հաղ—հեղ «անգամ»

ձեռ—ձուռ

ճիպո—ճեպո, ճուպո, ճպուռ, ճպեռք

ճիռ—ճուռ?

ճիւղ—ճեղ, ճող

մոռանալ (mors)—մառնալ

ոռ—(orsos)—եռ

չանչ—չենչ, չինչ

պիշ—պուշ

սառն—սուռ

քերել—քորել:

Իններորդ խումբ—Արմատներ

Գրաբարում կան բառեր, որոնց արմատը կարելի է գուշակել, բայց գրականության մեջ ավանդված չէ: Այսպիսի արմատներից մի քանիսը գտնում եմ բարբառներում: Այսպես են՝

բոժոժ—բոժ

զգենուլ, զգեստ—զենալ, գեստ

ընկեր—գեր (հմմտ. ընկոյզ—կուզ, անկողին—կողինք)

ծմակ—ծմալ

կողկանձել—կոնձկոնձալ, կնձկնձալ, կոնձալ

կանգնիլ—կանգ առնել

կողկողիլ—կողալ «ողբալ»

կոճան—կոճի, գոճի

կոճել—կուճ

հակառակ—հակառ

հանգչիլ, հանգիստ—հանգ
ճառագայթ—ճառագիլ, ճառագ
ճնճղուկ—ճնճուղ
նաւակատիք—աւակատիք! կատիկ (=աւագ կատիկ)
շուրջ—շուռ գալ
պեպէն—պէն
պօսպօսող—պոս տալ
տիղմ—տիլ
ցողուն—ցող
օրօրիլ—օրիլ:

Տասներորդ խումբ

Այս բաժնում քննում ենք այն բառերը, որոնք ավանդվել են մեզ հին հայ ձեռագրերում, զանազան սխալ գրչութիւններով:

Լեզվաբանութեան մեջ հայտնի է, որ «սխալ» գրչութիւնները ներկայացնում են իսկապես «ճիշտ» արտասանութիւնը: Ուսումնական գրիչները հետևում են միշտ ավանդական ուղղագրութեան, աշխատում են պահել ճիշտ՝ իրենց առաջ գտնված օրինակի պատկերը. իսկ «տգեա» կամ «անփութ» գրիչները հաճախ անգիտակցաբար և բնական բերմամբ կամ երբեմն էլ դիտմամբ գրում են այնպես, ինչպես իրենք են արտասանում: Այսպեսով երևան են դալիս գրիչների գործածած բարբառային ձևերը:

Մեր մեջ չկա դեռ մի այնպիսի աշխատութիւն, ուր հավաքված ու դասավորված լինեին մեր բոլոր հին ձեռագիրների սխալագիր գրչութիւնները: Այս մասին եղած միակ աշխատութիւնը Նոր Հայկազեան Բառարանն է, որ երբեմն իր հիշած բառերի մոտ դնում է նաև նրանց տարբեր գրչութիւնները: Այսպես հեղինակ բառի դեմ դնում է նաև հեղինակ և հեղանակ.— ծուղակ բառի դեմ դնում է ծողակ, ծողակ և ծաղուկ. և այսպես ուրիշներ: Նույնը կատարել եմ ես ավելի մեծ չափերով իմ Արմ. բառարանում. այսպես նույն հեղինակ բառի դեմ, բացի այն երկուսից, կան նաև հիւղանակ, հիւղենակ, հիւղական.— ծուղակ բառի դեմ դրել եմ նաև ծողղակ, ծաղղակ ևն: — Հայկազեանը արշալոյս բառի դեմ ունի 11 ձև, որոնց դեմ ես ավելացրել եմ ևս երկուսը:

Մենք այժմ մեր նոր գրական լեզվի մեջ ընդունել ենք

հեղինակ, ծուղակ, արշալոյս ձևերը. սակայն սրանք չեն այդ բառերի նախնական ձևերը: Հեղինակ բառի նախնական ձևը հայտնի չէ, որովհետև ծագումը հայտնի չէ: Նույնպես նաև ծուղակ: Ենթադրել էի, որ արշալոյս բառի նախնականն է արշալուրջը, իբր թե կազմված արշ «սկիզբ» և լուրջ «կիսամութ» բառերից. բայց արշ «սկիզբ» ձևով բառ գոյութիւն չունի. ուստի այժմ ենթադրում եմ արշալուրջը (իբր թե արշ «մութ» բառից), որով բուն իմաստը լինում է «մութն ու լուսուն, մութն լոյս»:

Երբ բառի ծագումը հայտնի չէ, բնականաբար հայտնի չէ նաև, թե այն ձեռագրական. զանազան ձևերից որն է ստույգ կամ հարազատ, որը ոչ:

Բացի գրչագրական ձևերի հարազատութիւնը որոշելուց, մեզ հարկավոր էր իմանալ նաև նրանց թվականը: Որովհետև հաստատ գիտենք, որ մեզ հասած առաջին և հնագույն ձեռագիրը (Լազարյան Ճեմարանի Ավետարանը) 887 թվից է, ուստի մնացյալ բոլոր ձեռագրերը հազիվ թ դարից են, հետևաբար և այսքան նոր են նրանց ներկայացրած գրչագրական ձևերը: Չկա ոչ մի ձև, որ մեր Ե դարի տարբեր բարբառների մասին մի հաստատուն բան ասի:

Իրաց այս վիճակում մենք բավական ենք համարում հիշել մեր գրչագրերի այդ տարբեր ձևերը՝ համեմատելով արդի բարբառների ձևերի հետ:

Մուղակ բառը գրված է նաև ծողակ, ծողակ, ծաղուկ, ծողղակ, ծաղղակ ձևերով, իսկ արդի բարբառներից Ղարաբաղը գիտե ծղաղակ և ծղարակ ձևերով: Ծագումը անհայտ է:

Կրեայ բառը հների մոտ գրված է կրայ, կրիայ, կիրիայ, կիրայ, արդի բարբառներում ստացել է 18 ձև՝ բայց որովհետև նա ծագում է կուր «տաշտակ» բառից, ուստի բոլորն էլ ձևափոխված են կրեայ ձևից:

Բարբառային ձևերի զանազանութեան կողմից նշանավոր են կեղև և իր հոմանիշները կեեպ, խեեեպ, կլեպ, փոռոկ, որոնք միասին մի քանի տասնյակ ձևեր են ստացած արդի բարբառներում: Հնագույն ձևն է կեղև, որ ծագում է ասոր. qalāfa ձևից. բայց պետք է որ այս բառը երկու անգամ փոխ առնված լինի տարբեր տառադարձութեամբ, հնագույնը կեղև, նորագույնը կլեպ ձևով: Այս բառերի ծագման պատմութիւնը կարող է առանձին ուսումնասիրութեան:

Մողէզ բառի ծագումը ճիշտ հայտնի չէ. բայց անշուշտ պիւ. փոխառութիւնն է (ինչպես ցույց է տալիս պրս. māiūs). հնից ավանդված է նաև մողիզ, մողոզ, մայաղէզ, մողէզ, մողէս, մուղէս, մուղիզ գրչութեամբ. նոր բարբառներն էլ ներկայացնում են մողէզ, մողէս, մողոզիկ, մողլոզիկ, մկլէզ, մկլարէզ, մոխլէզ, մողոզրիկ ձևերը:

Գրալ բառը իրատական է մեզ համար. այս բառի զանազան գրչութիւններ են՝ տարգալ, տրգալ, դրգալ, դգալ, դքալ, դգէլ. արդի բարբառներն ունին նաև քրքալ, գղալ, գղոլ, գղէլ ևն. բայց այս բոլորը հետին աղավաղութիւններ են բացի տարգալ ձևից, ըստ որում բառս ծագում է հնիս. darva ձևից՝ 1 մասնիկով:

Միալ բառի ծագումը հայտնի է. այն է հնիս. sqhal. միջ. հյ. գրված է սղալ, որից հետո էլ զաղալ. արդի բարբառներն էլ գիտեն սղալ և զղալ: Խուլ բաղաձայն ս-ի մոտ խ-ի թրթռացումը լեզվաբանորեն անըմբռնելի է. բայց նա լիովին հետին է, որովհետև ներկայացնում է ղ-ի կոկորդային հնչումը: Ճիշտ սրա նման է նաև՝

Միալակ «հարբած», գրված նաև զխաղակաճալ, բարբառում՝ զղալել «հարբել»:

Յօրանջել բայը ձևերի բազմազանութեամբ գերազանցում է բոլորից. հնից ավանդված ունինք միայն յօրանջ, յորանջ, յօրոնջ, յորաչ, յօրանչ, յորոնչ, որոնչ, որոնջ, յորանջ, նաև որոչտալ, յարանջտիլ, յարանջտիլ ձևերով. իսկ բարբառները ունեն 30 ձև, որոնք ըստ իս բոլորն էլ բխում են յօրանջ արմատից, աճած զանազան հաճախական մասնիկներով (բոլորի բացատրութիւնը տես Արմ. բռ.):

Ավելի հետաքրքրական է ծարիր, որ գրված է նաև ծարիր, ծարուր, ծարոյր: Այս բառը փոխառյալ է ասոր. šadīdā ձևից, ուրեմն ուղիղ ձևն է ծարիր: Մյուս սեմական լեզուներն էլ ունեն այդ բառը. այսպես ասուր. šadīdu և արաբ. šudūd. առաջինը նույն է ասորականի հետ, իսկ երկրորդը ցույց է տալիս, որ ասորի ձևի մոտ կարող էր գտնվել նաև šadūda ձևը, որից էլ հյ. ծարուր: Մյուս երկու հյ. ձևերը ծարիր և ծարոյր միևնույն են և ցույց են տալիս մեզ Ը հնչումը, որ այն ժամանակ արդեն ձևացել էր հայոց մեջ:

արմաւ, ամբրավ—ամբաւ, ամբրաւ, ամբրաբ
զրահ, զրեհ, զրեայ—զրեխ

զկեռ, սգեռ, սկեռ, զղեռ, զղեար, ըզկեռ—զղիր, զկեռն
թառամ, թարշամ, թոռոմ, թորշոմ, թորշոմիլ, թոշմիլ
(ուրիշ է թօշնիլ)

թարթել, թարթեանք.— թերթել, թերթելիչ, թերթերունք,
թերթեունք, թերթեուչք, թրթառունկ, թեթեանունք (ազգված
արտեանունք բառից)

ժպիտ, ժմիտ, ժմբախլ—ժմնիլ

լեզու—լիզու (Meillet MSL 8, 164 համարում է ավելի հին
քան լեզու)

լող, լեղ, լիւղ, լուղ—լողալ

խոժոռ, խոշոր

ծագիլ, ծայգիլ—ծէզ, ծաղկիլ

ծղխնի, ծխնի, ծխղնի, ճխնի, ճղան—ճխան, ճլխան

ծոթոր, ծոթորին, ծոթորուն, ծոթրին, ծոթրուն, ծաթրին,
ծայթրին, ծեթրուն (ավելի շատ են ժղ. ձևերը. իսկ նրանց ազ-
բյուրն է միայն ասոր. šāṭrā, արաբ. ša'tar)

կակժիրակ, կակժիրակ, կակճիրակ, կաճկիրակ, ծակժիրակ,
կաճկրակ, հակժիրակ, հաճկիրակ—կանճրակ, կանճարակ, բոլորի
մայրն է պիւ. kākšīrak կամ kākjīrak

կաղանչանն, կաղնչան, կաղնչանն, կաղանչան, կաղնչան,
կաղնան, կաղնշայ, կաղննայ, կաղնճանա—կաղնա, կայնչրան,
կարչնա

կաննի, կանափ, կանամփ—կամփ

կնիք, կնուք, կնունք—ասուր. kunukku, kaniku

կշիռ, կշեռ, կշիւռ—կշեռք, կշառք, կիշառք, շեռք. սրանց
մայրն է ասուր. gišrinnu, սումեր. gušur

կոկոն, կոնկոմ, կոնզոմ—կոկոմ, կոնկոն, կուկուց

կոճղէզ, կոճղիզ, կոճողէզ, կոճողիզ—մուճուղէզ

հարբուխ, խարբուխ—խրփոխ, խրքոխ. հարագատ ձևն է
հարբուխ, որի նախաձայնը վերջաձայնի համեմատ դարձել է խ:
ճկոյթ, ծկոյթ (որովհետև ծագում է լազ. ճո'լու քի'թի
«փոքր մատ» ձևից, հին ձևն է *ձլկոյթ, որի հետքը պահում են
ժղ. ձլիկ բուք, ձկլա մատ ձևերը: Բայց ըստ որում կովկասյան
լեզուներում ծ և ց փոխանակում են իրար, ուստի ճկոյթ ևս
տարբեր բարբառային ձև է)

մանիշակ, մանուշակ (առաջինը ասորերենից, երկրորդը
պահլավերենից)

մարախ, մորեխ, մորեախ (ուղիղ է առաջին ձևը, որ ծա-

գում է պհլ. maðax բառից. իրանականում կան նաև maig, malax, malax, milax ձևերը, բայց չկա morex, որ կարելի է ենթադրել ըստ հայերենի).

մծեխ, մծիխ, մծիղ, մծիկ, մծղուկ, մծեղ, մծղիկ, մնջեխ, մնճղեխ, մնճղուկ, որոնց վրա բարբառները ավելացնում են մրծեխ, մրծեղ, մջեղ. բուն ձևը հայտնի չէ, ըստ որում ծագումն անհայտ է:

մուզ, մզել—մրզել

մուսյլ, մաուսյլ, մլար—մլալ

շղարշ, շղաշ, շարշ—շաշ, շղա—(բուրբի համադրութունը տալիս է շղարշ).

շիւղ, շիղ, շեղ

ոլոռն, ոլռո

ուրոշ, ուրիշ, ուրուշ, ուրիշ, ուրուշ

ուլունք, հլունք—հուլունք

ուղեղ, ուղիղ, ուղիւղ—յղեղ, ուղող, ըղուղ, ըղեղ, ողող, ըղող, հղուղ, էղու

ուղիղ, ուղիւղ, ուղևղ, ուղեղ

ուռն, վուռ «մուրճ»—վուռ, վուվել

ոփի «ծառը», յոփի, հոփի

պախուց, պախուրց, պախոյց

պիծակ, պիծեկ, պուծեկ—պիծիկ, պուծեկ

պիղծ, պեղծ, պիւղծ, պիւծ

պուրծ, փուրծ, պրծանիլ, փրծանիլ

պրշակ պշրակ, պչրակ, բրշակ—պրջակ

սանդուխ, սանդուղ

սեամ, շեմ

սին, ոսին, հոսին. առաջինը ծագում է հնիս. k'eno ձևից. հայտնի չէ սակայն, թե ի՞նչ են ո և հո, որոնցից երկրորդը պահվում է նաև բարբառում.

սոճի, շոճի

սոնիճ, շոնիղ (մին պհլ. մյուսը արաբ.)

սուզ, սզալ, զզալ—պհլ. sūg, գվռ. զուզ

ստերջ, ստերդ, հնիս. ster (բայց իսլ. stirtla)

վախճան, վաղճան, վաղջան

վայթել, վոթել, վիթել

ցայտել, ցայթել, ծայթել

քիստ, քիս—գվռ. քիստղ, քիստի

Այժմ տալիս ենք սույն տասը խմբի բառերի ամփոփումը: Առաջին խմբի բառերը համեմատելով մայր ձևերի հետ՝ քջին ակնարկով իսկ տեսնում ենք, որ միծաղույն մասամբ ժամանակի ձևափոխութուններ են:

Մի որևէ լեզվից կատարված փոխառութունները կարող լինել հետևյալ հանգամանքների տակ: Փոխառութունը տղ է կատարվել մի լեզվի մի բարբառից, բայց նաև մի նի բարբառներից: Առաջին դեպքում փոխառյալ բառը մի սկ ձև կունենա, երկրորդ դեպքում՝ մի քանի ձև, որոնցից են մեկը կտարածվի փոխառու լեզվի այս կամ այն բարբառում: Օրինակ՝ այսօր թրք. ūzerlik («սպանդ խոտը») փոխ է նվել հայերենի մեջ Երևանում ուզալիկ ձևով, իսկ Ղարաղում զա՛ռեիկ ձևով: Ստեղծվել է երկու բարբառային ձև: Կայն այսպիսի մի երևույթ տեղի կունենա միայն այն դեպքում, երբ փոխառու լեզուն շրջապատում է փոխառու լեզուն՝ նե կողմից: Հայերենի հին շրջանում այսպես չէր. վրացները հյուսիսից միայն շփվում էր հայերենի հետ, ասորերենը ասորերենը՝ հարավից, հունարենը՝ արևմուտքից, իսկ պարսերենը (որ ներկա հարցում մեզ համար ամենից կարևորն է)՝ միայն արևելքից: Հայերենը փոխառութուններ է կնքել սկիավերենի հյուսիս-արևմտյան բարբառից, որ այժմ մեզ արն ծանոթ է:

Փոխառութունները կարելի է կատարել զանազան ժամասկներում, ուստի նրանք կունենան տարբեր ձևեր: Օր. այր ունինք ճանկ, որ (հին) պահլավական ձևից է և՛ շանգ, որ որ) պարսկական ձևից է և գործածական է Երևանի բարբառում: Տարբեր ժամանակի փոխառութունները կարող են մնալ զվի մեջ իրրև հոմանիշներ կամ նույնիսկ իրրև բուրբովին արբեր բառեր: Այսպես են օր. պաշտպան և փուշտիպան, բամազ, Որմիզդ և հիւրմիզ ևն (տես վերը. Ա մաս, էջ 234): անլավերենը ունեք dušvār և հպրս. dušādra. առաջինից տացվեց հյ. դժուար, երկրորդից՝ դժար, իսկ ավելի նոր պրս. iž մասնիկով՝ դիժար: Մրանք մնում են մեր մեջ իրրև տարբեր բարբառային ձևեր: «Հրեշտակ» բառը իրանականում ունեցել երեք ձև՝ fireštak, frōštak և firīštak, որոնք տվել են հայ. բեշտակ, հրիշտակ և հրշտակ. վերջին երկուսը մնում են դևո՛նր բարբառներում: Ասոր. xawlā տալիս է հյ. խաղբ, որ ապա

մեր մեջ դարձել է հաղբ «որոգայթ» (ձևի համար հմմտ. խաղ > հաղ, խաղող > հավող): Թեև այսօր բարբառներում պահված է միայն խաղբ ձևը, բայց հին գրականություն մեջ երկուսն էլ գործածված են և ավելի շատ՝ հաղբ:

Ժամանակի տարբերությամբ ձևի տարբերության շատ լավ օրինակ է պողպատ բառը: Գրաբարում այս բառի համար ունինք երկու ձև. պողպատ և պողոպատ: Արդի բարբառներում ունինք 5 ձև. պողվատ, պողպատ, պողդատ, պողատ, փոլաթ. սրանից առաջինը առաջանում է պհլ. pōlavāt ձևից, երկրորդն է պհլ. pōlāpat, երրորդը առաջանում է դ և վ ձայների համանմանությամբ, չորրորդը՝ պրս. pōlād կամ *pōlāt ձևից, իսկ վերջինը՝ Թրք. polat ձևից:— Դերձակ և դերձան բառերը (որոնց ծագումը լավ պարզված չէ) պարսկերենի ազդեցությամբ ու ժամանակ դարձան դերգիկ և դերգան:

Երբ փոխառյալ բառը մտնում է նոր լեզվի մեջ, բնականաբար մի անգամից բոլոր գավառներում չի տարածվում. այլ նախ՝ սահմանակից գավառները, ապա՝ ավելի հեռուները: Ձեք բառը անցնելով ասորիներից մեր լեզվին, բնականաբար գտնվում էր նախ Հայաստանի հարավում: Մյուս տեղերում կար միայն իւղ. ապա եկավ նաև ձէթը: Նոր փոխառյալ բառը ստեղծում է երեք դիրք. 1) մտնում է լեզվի մեջ, իբրև մի նոր հոմանիշ, իմաստի տարբերությամբ. ինչ. ձէթ և իւղ: 2) Գրավում է երկրի սահմանակից մի մասը, հաստատվում է այնտեղ, ջնջելով նախկին բառը, որ սակայն շարունակում է իր գոյությունը երկրի մնացած մասում: Այսպիսով ստեղծվում է բարբառային տարբերություն: Այսպես պրս. հարևան բառը եկավ Արևելյան Հայաստան, վանեց բնիկ հայ դրացի բառը, որ սակայն շարունակում է իր գոյությունը մինչև այսօր արևմտահայոց մեջ (տես վերը, էջ 137): 3) Մրցման մեջ հաղթում է բնիկ բառին և բոլորովին դուրս վտարում գործածությունից. այս դեպքում բարբառային տարբերություն չի առաջանում, կամ ավելի ճիշտ՝ եթե բարբառային տարբերություն առաջանում է սկզբում, ապա վերանում է: Այսպես հայերենը գիտեք կոզի, որ բնիկ է (հնխ. g^oovio). եկավ պարսկական կարագը (պրս. kara, պհլ. *karak) և այնպես վտարեց կոզին, որ ոչ միայն չի պահված ոչ մի բարբառում, այլև բնավ չի էլ գործածվում նոր գրականության մեջ: Ավելի վատ են պանիր, կարմիր, կապոյտ, սեալ, սպիտակ և շատ ուրիշ բառեր, որոնք

Պարսկաստանից եկան Հայաստան և այնպես ջնջեցին հայերեն բառերը, որ ոչինչ չգիտենք նրանց գոյություն մասին (տես Ա մաս, էջ 106):

Փոխառյալ բառերի ժամանակի և ձևի մասին լավ օրինակ է հյ. պատասխան բառը: Այս բառի հնագույն՝ մեարոպյան ձևն է պատասխանի, որին հաջորդեց պատասխան: Սրանք փոխառյալ են պհլ. *pātsaxuan բառից, որ նախ դարձել է *պատասխան և ապա շրջվելով՝ պատասխան: Հայերենի մեջ ի վերջավորությունը ըստ Bailey JRAS 1930, էջ 19 համապատասխանում է քրիստ. սոգդ. ուղ. հյց. Ի վերջավորություն: Կարող է լինել, որ շրջումը նախապես պահլավական մի բարբառի մեջ կատարված լինի և այնտեղից անցած հայերենի. բայց կարող է նաև հայոց մեջ կատարված լինել: Առանց ի վերջավորության ձևը ավելի ուշ ժամանակի պահլավերենից է: Միջին հայերենում այս բառը դարձավ պացխուն: Որովհետև այժմ այս բառը մեր բոլոր բարբառներից ջնջված է (փոխանակվելով արար. յավաբ, աղավ. յսրաբ ձևով), ուստի չենք կարող իմանալ, թե բարբառներում ինչ ձև է ունեցած եղել: Ա>ու ձայնափոխությունը բարբառներից է, թե նա էլ պարսկերենից է, քանի որ գիտենք թե պարսկերենում էլ ան դառնում է un (օր. nān «հաց» > nun): Բայց պարսկերենում այդ բառը դարձել էր pāsux (որից վրաց. պասուխի) և պահլավիկ ձևը ջնջվել էր: Ուրեմն-ան>ուն ձևափոխությունը ուշ ժամանակ հայոց մեջ է տեղի ունեցել և հին չէ (չի կարող հասնել մինչև Ե դար): Բայց այս ա>ու ձայնափոխությունն էլ հաջորդ ն-թ պատճառով է (ինչպես Ազլ. ճանճ > ճունջ, վանք > վունք), այսինքն՝ ձայնափոխության մասնավոր մի դեպք, թե Գիլիկյան բարբառում ընդհանուր երևույթ էր, ինչպես տեսնում ենք այսօր Սվեդիայի բարբառում, ուր ամեն ա դառնում է ու: Ինչ էլ լինի, պացխուն ձևը ավելի ուշ է, քան բառերի միջին ձայնավորի անկման օրենքը, առանց որի տ և ս իբրև մոտ չպիտի ընկնեին, որով և ց չպիտի առաջանար: Տեսնում ենք, որ մի բառի քննությունը բազմաթիվ հարցեր դրեց մեր առաջ, որոնց գոնե մի մասը անլուծելի է:

Իրաց այս դրություն մեջ մենք կաշխատենք առաջին խմբից ջոկել այն բառերը, որոնք կարող են գրաբարից ավելի հին և կամ ժամանակակից հայ բարբառ ենթադրել:

Աստուած, փոխուգ Σαβᾶτος բառի մեջ շատ լավ է շեշտը (á դարձած հայերենի վերջին վանկը),—OS պահված սեռ. Աստու-

ծոյ ձևի մեջ և Շ (հնապես հնչում էր ձ և ոչ թե զ) դարձած է. ծ. բայց sa նախաձայնի դեմ ունենք հյ. առ. ավելացել է հյ. ա իսկ b դարձել է ու. մինչդեռ ավելի հարմար է պ, որ գտնուած ենք ասպած ձևի մեջ: Ուստի և սա հին բարբառային մի ձև է, որ չի մեկնվում հայերենով:

Մարձել բառի դեմ մարզել համարում ենք տարբեր ժամանակի փոխառություն. բայց իրանական առանձին բարբառային ձև ենք համարում մարծել:

Ոյժ բառի դեմ ուծ և վոժ հին բարբառային ձևեր չեն. նրանք առաջացել են մեր մեջ այն ձևով, ինչպես քոյր > քոր և ուր > վուր:

Ստեպլին > հուն. staphylinos ձևին ավելի համապատասխան են ստաղպին և տապլին, ուստի պետք է ենթադրել ստապլին կորած բարբառային ձևը:

Վիշապ ձևի դեմ յուշապ պետք է համարել իրանական առանձին բարբառային ձև:

Տատրակ բառի դեմ ավելի հին են տատուրակ, որ համապատասխանում է մարական taturak? ձևին, ապա տատրակ, որից սղմամբ՝ տատրակ:

Փշուր բառի դեմ փսուր, փսոր արմատը ընդունելի բարբառային ձև է:

Այս բոլորից ավելի պայծառ և վստահելի է սիմամարգ, որ ցույց են տալիս բարբառները գրք. սիրամարգ ձևի դեմ: Այս բառը ծագում է գնդ. saēnōmərəγō, պհլ. sēnimuruk (պաղ. sīnmurū) ձևից, որոնց մեջ ո գառնում է հյ. ց. ուստի սիրամարգ երկրորդական ձև է, որ առաջացել է մեր մեջ կամ ց—ր ձայների համանմանությունից, կամ կապելով բառը սէր գաղափարի հետ և կամ հենց երկուսի միասին ազդեցությունից:

Երկրորդ խմբի բառերը, իբրև հայ լեզվի բնիկ, ուստի և իբրև ամենից հիմնական բառերը, շատ կարևորություն ունին: Այս պատճառով էլ մենք զանազան ուղղությունից խոսեցինք նրանց մասին 5—10 խմբերի մեջ: Այստեղ աշխատում ենք երևան հանել մի քանի նոր բարբառային ձևեր:

Բահ և բիր ունեցել են հին բարբառային բարհ և բիր ձևերը, որոնցից առաջացան ապա սղմամբ բահ և բիր:

Մղեղ «փոշի» բառի դեմ առանձին բարբառային հին ձև է մղմեղ, որ կազմված է նույն արմատի mel ձևից՝ ամբողջական կրկնությունից:

Ողբի բառի դեմ ունինք նաև ոձնի. որովհետև կարելի չէ ողբից դուրս բերել ոձնի, և որովհետև հնի. ց¹h տալիս է թե՛ ձ և թե՛ զ, ուստի և ոձնի համարում ենք հին բարբառային ձև: Այս ձևի գոյությունը պատճառ է դառնում, որ նաև կորինձ ձևը կորիզ բառի դեմ՝ ընդունենք իբրև հին բարբառային ձև:

Տալ ժամուսնու քույրը ծագում է հնի. ց¹alōu ձևից, որ սակայն պիտի տար ծալ: Ենթադրվում է, որ տայգր բառի ազդեցությամբ նախաձայնը փոխվելով դարձել է տալ: Այժմ էլ շփոթվում է տալ բայի հետ: Բարբառներում ունինք նախ տալն և երկրորդ տալվ և տավլ ձևերը, որոնց վրա ավելացրած վ ձայնը դրված է անշուշտ բայից զանազանելու համար, բայց թե ինչ ծագում ունի, հայտնի չէ:

Չորրորդ խմբում անշուշտ կան հետնաբար ձևափոխված բառեր. Օր. գնալ—նալ բայի մեջ գ ընկած է պարզապես. ֆոնդատ բառը չի կարող գոյություն ունենալ մեր մեջ՝ նախաձայն ֆ-ի պատճառով: Բայց ՀԲուսակ § 3099 ունի ֆոնդադ բույր, որի նախաձայնը մեկնում է ֆ-ի ծագումը:

Այս բոլորի մասին չենք խոսում:

Հին բարբառային ձևեր պետք է լինին հատկապես դարսել (=դասել), պատուրհան (=պատուհան), նապարստակ (=նապաստակ): Վերջինը ունենալով երկու նայ ձայն (ն և ր) առաջինը (ն) բարբառներում վերածվել է լ (լապստրակ), իսկ դրաբարում ր ընկնելով՝ ազատ է մնացել փոփոխությունից:

Հոսելի բառի դեմ հորսելի հին բարբառային ձև է և ենթադրում է հոսել բայի դեմ հորսել ձևը: «Հոսելի» բառի հետ նման կազմություն պիտի ունենա նաև եղլի «եղան», որ ենթադրում է *եղելի ձևը (առաջինը-ան մասնիկով, երկրորդը -ելի մասնիկով):

Ս և շ ձայների փոխանակությունից առանձին օրենք են ցույց տալիս սալոր-շլոր, սեամ-շեմք, սեպ-շեպ:

Հինգերորդ խումբը չորս կարգի է բաժանվում. առաջինը և հենարանն ունի հակառակ գրաբարի և համաձայն հնդկերոպականին, ուստի ներկայացնում է գրաբարից ավելի հին և հարգատ բարբառային ձև: Երկրորդ խումբը սրա հակառակն է. բարբառը ունի և հենարանը, մինչդեռ գրաբարն ու նախալեզուն չունին: Այս պարագային հնարավոր էր ծայրահեղ դեպքում ենթադրել, որ նախալեզուն էլ ունեք բարբառային մի ձև, որից առաջացել է հայերեն բարբառային ձևը! Բայց երբ տեսնում

ենք երրորդ խումբը, օտար լեզուներից փոխառություններ, որոնք նույնպես գրաբարին և փոխատու լեզվին հակառակ ունեն նույն և կամ յ հենարանը, ստիպված ենք փոխել մեր կարծիքը և հրաժարվել ոչ միայն երկրորդ ենթադրությունից, այլ և չորրորդից և նույն իսկ առաջինի վրա էլ կասկածով նայել: Այդ բարբառները սովորություն են ունեցել ուրեմն ձայնավորով սկսող բառերի վրա դնել և կամ յ հավելվածը, որ կարող է լինել գրաբարի յ նախդիրը և ոչ թե հնի. ք կամ 8 նախաձայնի շարունակությունը:

7-րդ խումբը կարող է ավելացնել Ե դարի հայերենում մի խումբ այնպիսի բառեր, որոնք այս կամ այն բարբառում չունենին և հավելվածը, իսկ ուրիշ բարբառներում ունեին: Ե դարի գրաբարում էլ կան այնպիսի բառեր, որոնք գործածվում են երկու ձևով ինչ. որմ և որմն. կան էլ որ թեև չունին և, բայց հոլովման մեջ ստանում են, ինչ որ ցույց է տալիս թե նախապես ունեին. ինչ. մանուկ-մանկան, աղջիկ-աղջկան կն-Հոդմ բառը չունի և, բայց հետո եղավ հոդմն, հգ. հոդմուք. ապացույց՝ թե այս և հետին է, այն է, որ ոչ մի բարդ բառ չունենք հոդմն ձևով, այլ միշտ հոդմ:

Ութերորդ խումբը տալիս է մեզ ձայնդարձի զանազան օրինակներ: կարելի էր կարծել, որ մեր հարցի ամենատեղ կողմը այն էր, սակայն բարբառների ուսումնասիրությամբ երևան հանված ա ձայնի փոփոխությունները ցույց են տալիս, որ այդ էլ ոչ թե նախնական ձայնդարձն է, այլ ուղղակի ա ձայնավորի կրած տարբեր փոփոխությունները՝ հայերենի մեջ:

Իններորդ խումբը ոչինչ չի փոխում լեզվի կազմության մեջ, այլ ավելացնում է մի խումբ նոր բառեր, որոնք գոյություն ունեին հնապես, և պատահաբար միայն չեն ավանդված Ե դարի գրականության մեջ:

Տասներորդ խմբի բառերը դնում են մեր առաջ հին բարբառների խնդիրը ամենայն լրջությամբ և դրական ձևով. բայց դժբախտաբար մենք միայն տեսնում ենք հեռվից մի երևույթ, որին սակայն չենք կարողանում մոտենալ ու շոշափել և որ թերևս խարուսիկ է միայն: Ամենից առաջ անհրաժեշտ է իմանալ, թե այդ գրչագրական ձևերը առաջին անգամ ո՞ր ձևով գրում են ավանդված և ո՞ր թվականից են: Եթե նրանք ժԵ, ժԶ ևն դարերից են, ինչ արժեք են ներկայացնում մեզ համար: Անհրաժեշտ է ուրեմն քննել և մանրամասն խուզարկել մեր:

ամենահին ձևագրերը և հավաքել նրանց ընթերցվածները: Քրչագրական այն ձևերը, որոնք գոյություն ունեն նաև արդի բարբառներում և հաստատվում են օտար լեզուների համեմատությամբ, անշուշտ հին են և հաստատում են Ե դարում (և ավելի հին) հայ բարբառների գոյությունը: Այսպես օր. կնիք և կնուք (բայց ոչ կնուք), որոնք հաստատվում են ասուր. kaniku և kunočku ձևերով: Իսկ այն ձևերը, որոնց ոչ ծագումը գիտենք և ոչ էլ համազոր ձևերը, մնում են խավարի մեջ անորոշ: Ավելորդ է ասել, թե կան նաև նրանց մեջ ուշ առաջացած ձևեր, ինչ. կեղև և կլեպ, կամ կրեայ և իր ժառանգները:

Ինչ էլ որ լինի, լավագույն դեպքում, այս տասներորդ խումբն էլ երևան պիտի հանի մեր առաջ՝ Ե դարում գործածական մի քանի բարբառային ձևեր և ոչ ավելին:

Վերջացնելու համար այս գլուխը և իբրև լրացում ժԹ գլխի, հավաքենք այն տարբերությունները, որ ներկայացնում էին Ե դարում հայերեն բարբառները իրարից:

ա) Արտասանական տարբերություններ և հատկապես թրթռուն բաղաձայնները թավ արտասանելու սովորությունը, ճիշտ ինչպես ունենք այժմ Տիգրանակերտի, Մալաթիայի, Օրտուկի և Ռոտոսթոյի բարբառներում, ինչպես նաև Պոլսի գրական լեզվի մեջ (բ>փ, գ>ք, դ>թ, ձ>ց, ջ>չ):—Տես էջ 135:

բ) Ամբողջական բառեր, որոնք գոյություն ունեին այս կամ այն բարբառում, իսկ մյուսներում ոչ: Այս բառերը մենք կարող ենք բաժանել երեք կարգի. 1) բառեր, որոնք ժառանգություն էին մնացած Հայաստանի հողի վրա բնակվող և ապա հայոց մեջ ձուլված զանազան մանր մունր ազգերից, գործածվում էին տեղական նեղ շրջանակներում և որոնք գտնում ենք այսօր էլ ցրված մեր զանազան բարբառներում: Այսպիսի բառերի թիվը բավական մեծ է:—2) Բառեր, որոնք փոխառյալ էին սահմանակից լեզուներից և գործածվում էին ծայրամասերում, բայց դեռ չէին թափանցած մինչև կենտրոնական վայրերը: Մի քանի այսպիսի բառեր մենք տեսանք Կորյունի լեզվի մասին խոսելիս. այն է՝ աքրուշամ, նուագ, գումարտակ, զղեակ, որոնք փոխառյալ էին սահմանակից Պարսկաստանից (էջ 120): Նման փոխառություններ կարող էին գտնվել հյուսիս-արևմուտքում (վրացերենից), հյուսիս-արևելքում (աղվաներենից), հարավում (ասորերենից) և արևմուտքում (հունարենից):

Այսօր էլ ունինք հարևան բառը պարսկերենից, գործածական արևելահայոց մեջ, մինչդեռ արևմտահայերս գիտենք դրացի, որ բնիկ հայ է (էջ 137),—բոլի շչվան, պարան» վրացերենից (թոկի), գործածական միայն հոգկասում,--խալիկն «կաթսա» նոր-հունարենից (χαλκίον), որ գործածական է արդի բարբառներում, սկսած Կարինից մինչև Ռոտոսթոն և այստեղից նոր-Նախիջևան և Սուչավա: Ունինք նաև այս կարգի ուրիշ բառեր, որոնք գործածական են այժմ այս կամ այն բարբառում, բայց ըստ որում ձևով ներկայացնում են պահլավական հին փոխառություններ, ուստի և կենդանի էին հին հայերենի էլ այս կամ այն բարբառում և ընդհանուր գործածական չէին. այսպես են օրինակ՝ ջամուկ «եղկվորյակ» (տես էջ 137), խրաակ «մանր դրամ» (գործածական է Ազուլիսում խրաուկ ձևով, տես էջ 378), արծանիկ «արծանի» (<պհլ. aržānīk, գործածական է Տփ. արծնիկ և Մշ. ածնեկ ձևերով) ևն:—3) Բառեր, որոնք բնիկ հայ են, այսինքն հնդկարոպական ծագում ունին, ընդհանուր էին հայերենի մեջ այն ժամանակ, երբ հայերը նոր մտան Հայաստան (Ն. Բ. 2 գլուխ), բայց ավելի ուշ՝ երբ հայերը հաստատվեցին զանազան գավառներում, կենտրոնում ջնջվեցին և մնացին միայն այս կամ այն գավառում, ուր շարունակում են մնալ մինչև այժմ: Այս բառերը կոչում ենք կորած հայ բառեր, որոնց մի փոքր ցանկը դրինք Ա. մաս, էջ 119—126. սրանց մեջ ամենից ավելի հետաքրքրական են կուլ «կոկորդ»=լատ. gula, մորտեկ «կրծեկ»=լատ. mordeo.

գ) Զուտ բարբառային ձևեր, որոնցից մի քանիսը երևան հանեցինք նախորդ էջերում, մասամբ ստույգ, մասամբ կասկածական: Սրանք գրաբարից տարբեր են ձևով և ներկայացնում են ավելի հին վիճակ քան գրաբարը: Այսպիսիներից հիշատակելի են հատկապես *պատուրհան, *նապարստակ և փայծաղն, որի գավառական մի ձևը՝ սիպեխ (Պտորջուր) այնքան տարբեր է նրանից, որ մատնանիշ է անում մի բոլորովին տարբեր բարբառ:

Ամենախոր հնության օրինակ է Ազուլիսի բարբառի կախց «կաթն» բառը: Այն բառի հնիս. ձևն էր g²alakt, որի մյուս ժառանգորդներն են հուն. gála և լատ. lac «կաթ»: Հնիս. g²alakt ձևից առաջացել է նախ հուն. *gálakt, որ պահլավ է միայն սեռական gálaktos ձևի մեջ, իսկ ուղղականում՝ վերջաձայնի անկումով եղել է նախ *galak և ապա gála: Նույնպիսի անկու-

մով և առաջին ձայնավորի կորուստով ձևացել է լատ. *glact, ապա *lact (պահլավ է սեռ. lactis ձևով) և ապա lac: Հայերենում նույն հնիս. g²alakt նման սղուճներով տվել է նախ *g²alt >հին հյ. *կաղթ, որ ավելի կրճատվելով դարձավ գրբ. կաթ-ն: Հայերենի մեջ 1-ի սղման այս երևույթը գտնում ենք *ծկոյթ>ծկոյթ, կոյթ ձևի մեջ և հատկապես ց-ից առաջ՝ հնիս. bul-sk²-բառի մեջ, որի վրա ընդարձակ տես Արմ. Բռ, հտ. Ե, էջ 1138: Ազուլիսի կախց ձևը, որ ծագում է *կաղց<*կաղթ ձևից, պահում է ուրեմն ոչ միայն հնագույն հայերենի դ ձայնը, այլ և ավելի ամբողջական է քան հուն. gála և լատ. lac. ուստի ոչ միայն ավելի հին է քան հայերենը, այլ և ավելի հին ձև ունի քան հունարենն ու լատիներենը: (Ավելի մանրամասն տես Արմ. Բռ. հտ. Գ. էջ 851 և Քնն. Ազլ. բարբ. էջ 23):

Մինչ այժմ ասվածները վերաբերվում էին գրաբարի բառամթերքին: Բայց լեզուն որոշվում է հատկապես քերականությունը:

Վերևում, էջ 137, մենք խոսեցինք մի քանի քերականական տարբերություններից վրա, որոնցով ենթադրեցինք, թե զանազանում էին Ե դարի հայ բարբառները: Բայց իրոք ի՞նչ են դրանք, եթե ոչ գրաբարի մի հոլովումից մի ուրիշ հոլովում և մի լծորդությունից մի ուրիշ լծորդություն փոխանցելու երբվույթներ: Այս է եղել հայերենի ամբողջ կյանքը սկսած Ե դարից մինչև այսօր:

Գրաբարի 5 հետամասնկավոր, 5 միջամասնկավոր և 8 անկանոն հոլովումների ամբողջ կյանքը եղել է մի կողմից նրանց ջնջումը, մյուս կողմից նրանց վերածումը մեկ ձևի: Ութ անկանոն հոլովումներից (այբ, տէր, հայր, քոյր, կին, օր, գիւղ, տիւ) այժմ մնում են միայն երկուսը (հայր և կին), ձևափոխվել է օր, մնացյալ հինգը ջնջվել է: Հինգ միջամասնկավոր հոլովումները վերածվել են հետամասնկավորի և նրանցից մնում են միայն աննշան հետքեր (ձկան, եզան, գառան, մկան ևն): Իսկ հետամասնկավոր հոլովումներից (ի, ի—ա, ո, ու, ա) երկուսը (ի—ա, ա) բոլորովին ջնջվել և մյուսները իրար են խառնրվել.—ի հոլովումը մնացել է սեռ. տր. բց. հոլովներում, ո հոլովումը գործիականում. Հոգնակի հոլովման ամբողջ դրուժյունն է վերացվել. ջնջված են ուղ. ք, հյց. ս և խոտոր հոլովների ց հանգերը. բայց հայոց բոլոր բարբառները՝ սկսած Սուչավայից մինչև Զավա, հաշվում են երկուք կամ երկուս, երեք, չորք կամ

չորս, որոնց մեջ մնում են դեռ ք և ս հանգերը: Ամեն տեղ էլ ասում են «աչք, ունք, մորուք կամ մորուս», որոնց մեջ լսում ենք տակավին նույն ք և ս հանգերը: Ամբողջ Հայաստանի հող ծածկված է ս վերջացող տեղանունների ցանցով, որոնք գրաբարի հոգնակի նախդրիվ հայցական հոլովն են պահում.—չյուսիսից Ագուլիս, Նորադուզ (Նորատուս), Ալափարս (Ալաբերդ) մինչև հարավ՝ Մոկս...: Ամբողջ հայության մեջ հնչում են ամեն տեղ «տղոց, տղերանց, աչիչ, աղջկանց» և նման ձևեր, որոնք պահում են հոգնակի սեռ. տր. վերջավորությունը: Վերացված է հոգնակիի ք վերջավորությունը, բայց նրա տեղ դրված եր կամ մեր մասնիկն էլ ուրիշ բան չէ, եթե ոչ գրաբարի հավաքականի ետ մասնիկը (որեար, վանեար): Վերացված է հոգնակիի հոլովման դրությունը, բայց նրա փոխարեն եկել է հետամասնկափոր ու ի, ո հոլովումը (հացերու, հացերի, հացերով): Ո՛չ մի տեղ դրություն հիմնական ձևափոխություն չկա և ամբողջ հայ լեզվի հին ու նոր կյանքի մեջ տիրում է նյութական պաշարի նույնություն:

Այսպես է նաև խոնարհումը:

Գրաբարի 4 լծորդությունները աշխարհարարում վերածվել են երեքի: Արևելյան գրականում այս երեքն էլ մեր աչքի առաջ վերածվեց երկուսի: Դեռ մի քանի տարի առաջ ասում էինք «վերածվեցաւ, խօսեցաւ», այժմ ասում ենք «վերածվեց, խօսեց»: Ես այս բոլորիս էլ գրում եմ «ունիմ, լինիմ», գրաչարս ու սրբագրիչը շարունակ փոխում են «ունեմ, լինեմ»: Մվետիայի բարբառը ավելի ևս կրճատելով լծորդությունների թիվը հասցրել է մեկի, այն է -իլ. օր. երթալ>ուրթիլ, աղալ>աղիլ, աղել>աղդիլ, անկանել>իյնիլ, լալ>լալիլ, գալ>ուգիլ, տալ>ավիլ, գողանալ>գուղնիլ, լողալ>լուղիլ ևն:

Գրաբարի խոնարհման քայքայումը, այսինքն գրաբարից միջին հայերենի և աշխարհաբարի անցումը հետևյալ ձևով տեղի ունեցավ:

Գրաբարի խոնարհումը ունեւր 6 բայական ձև. սահմանական ներկա, սահմանական անկատար, կատարյալ, ապառնի, հրամայական, ստորադասական ներկա:

Գրաբարը ստորադասականի ներկան ունեւր (սիրիցեմ), բայց անկատար չունեւր. չկար սիրիցեի ձևը և նրա փոխարեն գործածվում էր սահմանականի անկատարը: Սահմ. անկատարի այսպիսի գործածությունը պատճառ դարձավ, որ սահմ. ներկան

էլ սկսեց գործածվել իբրև ստոր. ներկա և գրաբարի բուն ստոր. ներկայի ձևը ջնջվեց: Ջնջվեց նաև ապառնին և գրաբարի սահմ. ներկան սկսեց գործածվել նաև նրա փոխարեն: Այսպեսով գրաբարի սահմ. ներկան (սիրեմ) ունեցավ երեք գործածություն. սահմ. ներկա, ապառնի և ստոր. ներկա: Եփոթություն առաջին առնելու համար լեզուն ստեղծեց կու մասնիկը առաջին երկուսի համար: Այսպեսով առաջ եկան սահմ. ներկա կու սիրեմ, որ նաև ապառնի էր և ստոր. ներկ. սիրեմ: Այս երկու ձևերը՝ սկսած ԺԲ դարից (երբ առաջին անգամ երևում է կու մասնիկը), ընդհանուր էին ամբողջ հայության համար: Եվ որովհետև այս ձևով սահմ. ներկան ու ապառնին շփոթվում էին իրար հետ, լեզուն ստեղծեց նոր ձև. արևմտահայերը կու (կը) ձևը պահեցին սահմ. ներկայի համար և հնարեցին պիտի մասնիկը ապառնիի համար. իսկ արևելահայերը կը ձևը պահեցին ապառնիի համար և ներկայի համար հնարեցին ում ձևը (սիրում եմ):

Այս փոքրիկ պատկերից երևաց, որ գրաբարի խոնարհման 6 եզրերից երկուսը (կատարյալ և հրամայական) անփոփոխ մնացին ամեն տեղ, ապառնին և ստոր. ներկան ջնջվեցին ամեն տեղ. սահմանական ներկան դարձավ ստոր. ներկա ամեն տեղ, սրա հետևանքով գրաբարի անկատարը դարձավ ստորադասականի անցյալ անկատար, որով և բայական ըի նոր ձև ավելացավ հայերենի խոնարհման մեջ ամեն տեղ, պակաս մնացած եզրերը լրացնելու համար կազմվեց կու-ով սահմ. ներկա և անկատար, որ մի ժամանակ ընդհանուր էր ամեն տեղ, ապա բաժանվեց երկուսի (կը և ում) և ապառնիի համար էլ ստեղծվեցին պիտի և կը ձևերը:

Այս ամփոփումը ցույց է տալիս, որ գրաբարի խոնարհման քայքայման և նոր կերպարանափոխության ընթացքը նույնն է ամբողջ հայության մեջ իր բոլոր բարբառներով. հայերեն բարբառների խոնարհման նոր ձևը ԺԲ դարում դեռ ընդհանուր է ամեն տեղ և կը և ում ձևերի երկնյուղությունը սկսում է հայերեն նոր բարբառների բաժանումը ԺԲ դարից հետո: Մինչև այդ ժամանակը տիրում է հայերենի մեջ համատարած միություն ինչպես քայքայման պատճառների, նույնպես և քայքայման ընթացքի և արդյունքի մեջ: Չէին կարող տարբեր բաներ նույն արդյունքին հասնել. իսկ եթե բոլոր բարբառները ինչպես հոլովման, նույնպես և խոնարհման ըն-

Թացքում հասել են ընդհանրապես նույն արդյունքին, ուստի նրանց մեջ նախապես էլ տիրում էր համատարած միութուն։

Հայ լեզվի համատարած միության ապացույցներին մեկն էլ ղ բաղաձայնի պատմությունն է։ Այս բաղաձայնը սկզբում լ հնչումն ուներ և տարբերվում էր նրանից միայն արտասանության եղանակով.— արտասանվում էր լեզվի ծայրով (նուրբ էր), իսկ ղ լեզվի հետևի մասով (թավ էր)։ Պարսկերենից առնված բառերը ընդհանրապես չ ունեն, իսկ հունարենից առնվածները՝ ղ։ Հայերենում լ գտնվում է երկու ձայնավորի միջև, և ոչ բաղաձայնից առաջ. այս վերջին դեպքում դառնում է միշտ ղ (Meillet-ի կանոնը)։ Բառավերջում (ինչպես նկատել եմ) բաղաձայնից հետո լ դառնում է ղ (արկղ, կոճղ, աստղ)։ Ճիշտ հայտնի չէ, թե որ թվին, բայց շուրջ 10 դարում ղ ստացավ կոկորդային արդի հնչումը և ունեցանք այնպիսի սոսկալի բառեր, ինչպես են խաղաղ, խաղող, ուղեղ ևն. Փոխառությունց մեջ այլևս չենք գտնում ղ և օր. գունդատապալ բառը, որ ըստ հին հայոց պիտի զրվեր կուճատաբղ, ստացավ վերի ձևը։ Այս փոփոխությունը համատարած եղավ բովանդակ հայության համար։ Չկա մի վայր, մի հեռավոր գաղութ, ուր ղ իր լ հնչումը պահած լինի։ Այնպիսի դեպքեր, ուր լ երկու ձև ուներ հին լեզվում, այդպես էլ մնում են այժմ ամեն տեղ. ինչ. աղ, աղի և անալի, եղանիլ և լինել (եղնիլ, ըլլալ), թող և թուլ, թողուլ և թուլանալ, ալի, աղալ և ջաղաց, ծիլ և ծեղ, ծաղ և ծալծու, ողողանալ և ուլուլալ չլալ, ողբալ, ջիղ և ջիլ, միջին հայերենում արաղաղ ձևի դեմ եղել է արալալ (Մամ. անեց. շար. 162) և այս ձևն է, որ գանազան փոփոխությանը դարձել է աքլալ, աքլար, աքլոր, աքլով՝ եվ եթե տեղ տեղ գտնում ենք ղ-ի դեմ չ, զրանք էլ բացատրվում են նմանողությանը։ Օր. «եղայ» ասելու փոխարեն Տփ. էլա, Երև. էլավ, Ղրբ. իլա, իլար, իլավ ևն, բուրն էլ կազմված են չլինել, լեալ» ձևի նմանությանը։ Բացառիկ ձևեր են աղխ (ախլանք, ախլել), մղել և մլել, մոլ «ճյուղ» և մող, մողկ, ծղխնի և ճլխան, մակաղ և մակալ, որոնց համար կարելի է ասել թե նույնպես հին բառեր են, և պատահաբար չեն ավանդված մեր հին մատենագրության մեջ։ «Պողովակ» բառի դեմ ունենք ժղ. խովակ և խվլակ. առաջինը բնականաբար խողովակ ձևի կրճատված, իսկ երկրորդը անհայտ է։ Ղ-ի այս թանձր հնչումը այնպես է տարածված մեր լեզվում, որ շատ դեպքերում հնչում ենք խ. ինչ. թուղթ>թուխտ, աղջիկ>անջի և մինչև ան-

գամ երկու ձայնավորի միջև տաղախ>տախախ (Ռշտունիք)։ Սրա համար է նույնպես, որ այն դեպքերում, երբ բառի գրչունթյունը անորոշ է հին լեզվում, բարբառները ոչնչով չեն կարողանում օգնել։ Այսպես օր. ածուխ-ածուղ, սանդուխ-սանդուղք, դոռեխ-գոռեղ։

Ղ ձայնի այս փոփոխությունը անշուշտ արարների արշավանքից հետո է. սրա համոզիչ ապացույցն այն է, որ արաբ. quif բառը դարձել է հյ. կողպէք, կպղակ, կղպաք, կմղակ ևն։ Գծբախտաբար բառիս հին վկայությունը չկա. ամենահին վկայությունը Օրբելյանից է († 1304 թ.). բայց իրապես շատ ավելի հին է քան Սմբատ Գունդատապալը († 1276 թ.), որովհետև պահում է բառավերջում, բաղաձայնից հետո լ-ի ղ դառնալու օրենքը, մինչդեռ գունդատապալ բառը չի պահում այդ օրենքը։ Այս երևույթը ցույց է տալիս, որ մինչև արարների աշխարհակալության հետագա շրջանը հայերը Հայաստանում լեզվական մի միություն էին կազմում։

Յովհաննէս Վանական վարդապետի (ծն. 1181 թ.) «Մեկնութիւն Յորայ» գրքում, որից հատվածներ կան հրատարակված Իսիդորոսի երիցու Երուսաղէմացւոյ «Մեկնութիւն Յորայ» գրքում (տպ. Վենետ. 1913), էջ 309 գրված է «Ջայլամն ոմանք ղիշորմուղն անուանեն»։ Այս բառը պրս. ušturmarç «ջայլամ» բառն է, որից երևում է որ 1181 թվին հյ. ղ արդեն թանձրացած էր։ Մխիթար Գոշը սկսել է գրել իր Գատաստանագիրքը 1184 թվին. այդտեղ գտնում ենք հուն. ληγῆτον բառի դեմ լիզատ տառադարձությունը, որ ցույց է տալիս նույնպես, թե այդ թվին ղ ձայնի թանձրացումը կատարված իրողություն էր, որ և այսօր էլ ընդհանուր և միատեսակ է ամենուրեք, ուր հայ կա։

ԺԱ դարի կեսին (1046 թ.), Բագրատունյաց թագավորության կործանումով ջնջվեց հայ պետականությունը մեր երկրից։ Այնուհետև ընդհանուր հայության միարար կապը եթե կար, վերացավ. և գաղթականության պատճառով էլ լեզվական անջատականությունը ծայրագույն աստիճանի հասավ։ Այն բոլոր լեզվական միությունները, ընդհանուր միօրինակությունները՝ որ նկատում ենք այսօր հայերենի զանազան բարբառներում, թե երկրի ներսում և թե մանավանդ զբոսում, չէին կարող պաղթականությունից հետո առաջացած լինել՝ միարար կաղի բացակայության պատճառով։ Արժեք պետք չէ տալ բնավ

եկեղեցու ենթադրյալ կապին, որովհետև նախ եկեղեցու լեզուն գրաբար էր և ոչ աշխարհաբար, և երկրորդ եկեղեցին ինքը բաժանված էր աթոռների: Նույն իսկ «եկեղեցի, եպիսկոպոս, կաթողիկոս» բառերը միաձև չմնացին հայ լեզվի մեջ, ինչպես տեսանք վերը, էջ 390: Եթե եկեղեցին որևէ ուժ ունենար այս կետում, նախ և առաջ Սօի կաթողիկոսական աթոռը չէր թույլ տա, որ նույն իսկ Սիս աթոռանիստ քաղաքի ամբողջ հայութունը հայերենը կորցնեի և թրքախոս! դառնար: Մրանից հետևում է, որ այն բոլոր երևույթները, որոնք միօրինակ և ընդհանուր են այսօր մեր լեզվի բոլոր բարբառներում, բխում են հայերենի նախավոր միութունից և ապացույց են հայերենի համատարած միության Հայաստանում՝ ԺԱ դարից առաջ:

Մենք այսօր ունինք շուրջ 40 բարբառ. այս գրքում մենք նկարագրեցինք 36 բարբառ, որոնցից 20-ը գտնվում է Հայաստանից դուրս: Մրանք են Տփղիսի, Շամախիի, Պարսկահայոց և Աստրախանի, Նոր-Ջուղայի, Տրապիզոնի, Մալաթիայի, Ասորիքի, Արարկիլի, Ակնի, Եվդոկիայի, Ամասիայի, Օրտուի, Ջմյուռնիայի, Նիկոմիդիայի, Պոլսի, Ռոտոսթոյի, Խրիմի, Ավստրա-Հունգարիայի, Մարաղայի, Հավարիկի բարբառները (չհաշվելով Սեբաստիան և Գիրիկիան):

Կարող ենք ընդունել, որ այն 20-ից դուրս կային նաև մի քանի ուրիշ բարբառներ, որոնք այժմ չկան: Դրանք պիտի լինեին Կեսարիայի, Յոզղատի, Անկորայի, Ատանայի, Հալեպի, Կիպրոսի, Բուլգարիայի հին գաղութները, որոնք նախապես հայախոս էին և ապա թրքախոս կամ արաբախոս դարձան: Այս բոլորը Հայաստանից դուրս են, բացի Սղերդից, որ Հայաստանի վերջին քաղաքն է, այժմ արաբախոս և քրդախոս:

Հարց է, թե այս 20 և ավելի արտաքին բարբառները Հայաստանից են փոխադրվել, թե գաղթականութունից հետո են կազմվել: Պատասխանն է թե՛ մին և թե՛ մյուսը: Արտաքին բարբառները ունեն այնպիսի երևույթներ, որոնք ընդհանուր են Հայաստանի բարբառներին, ուստի և չեն կարող հետո առաջացած լինել: Երևույթներ էլ կան, որ միայն իրենց են պատկանում և չկան Հայաստանի բարբառներում: Այսպես՝ ընդհանուր է դ-ի ձայնափոխությունը. քիչ առաջ մեր տեսած այն կողպել բառը գոյութուն ունի Հայաստանից դուրս՝ Տփղիս, Սեբաստիա, Սիվրիհիսար, Հաճին, Սվեդիա, Պոլիս, Նոր-Նախի-

չկան, Սուչավա: Սեբաստիայից մինչև Սուչավա տիրում է սահմ. ներկ. և անկ. կը ձևով կազմութունը, որ բուն Հայաստանի բարբառների էլ գործածած ձևն է (Պարբերդ, Երզնկա, Վան, Մուշ, Լեն): Այս ձևով բոլոր արտաքին գաղութները միացան Հայաստանի բարբառների գոնե մի մասի հետ: Բայց նրանք ունին շարունակական ներկայի և անկատարի (կոր) ձևը, որ չկա բուն Հայաստանում և սկսելով Շապին-Գարահիսարից ու Սեբաստիայից և բարբառից բարբառ տարբերվելով հասնում է մինչև Ռոտոսթո: Բուլգարիայի կորած բարբառը երևի ունեի նույն ձևը: Բայց Ռուսիան, Սուչավա և Խրիմ չունին: Այս զանազանութունը ցույց է տալիս, որ այդ բոլորը կազմված են տաճիկների տիրապետութունից ուշ: Հայաստանի այն գավառները, որոնցից գաղթեցին արտաքին հայերը, անշուշտ ամբողջովին չդատարկեցին, այլ ժողովուրդի մի մասը մնաց տեղում և մինչև այժմ շարունակում է իր բարբառը: Այս հաշվով, դուրս հանելով մեր ցուցակից 20 արտաքին բարբառները, ինչպես նաև թրքախոս և արաբախոս հայերի կորած բարբառները, որոնք նույնպես Հայաստանից դուրս են, Հայաստանի համար կունենանք թուրքերի տիրապետութունից առաջ ընդամենը 16 բարբառ, որ մեր բարբառների ընդհանուր թվի մոտ մի երրորդն է կազմում: Թուրքերը (տաճիկները) սուպարեզ դուրս եկան Փոքր-Ասիայում 1300 թվին, ուստի 650 տարի առաջ: Մենք չգիտենք, թե մեր ինչ գաղութը Հայաստանի ինչ գավառից դուրս եկավ. միայն գիտենք, որ այսօրվա մեր ինչ մի արտաքին բարբառը ինչ մի ներքին բարբառի հետ ամբողջապես նույն չէ: Հետևաբար այն բոլոր բարբառները դեռ գոյութուն չունենին, երբ Հայաստանի հողի վրա էին. ուրիշ խոսքով ձևացան վերջին վեց դարի ընթացքում:

Ասացինք, որ մեզ հայտնի չէ, թե մեր ինչ գաղութը Հայաստանի որ գավառից է դուրս եկել: Սա մի շատ հետաքրքրական հարց է թե՛ պատմական և թե՛ լեզվաբանական տեսակետով: Բայց այս մասին գրեթե ինչ մի աշխատանք չի կատարված: Պատմութունից հայտնի է, որ Սեբաստիայի հայութունը Վանից է գաղթած 1021 թվին. Նոր-Ջուղան՝ Հին-Ջուղայից է գաղթած 1605,6 թվին. Ռոտոսթոյի հայերը գաղթել են Կամախից 1606/7 թվերին. Պուրտուր և Էտեմիշ գաղթել են Հարաբից Ժե դարում կամ ավելի ուշ. Պոլսի հայոց սավար մի

մասը Թրիմից է գաղթեցրած 1475 թ. մյուս գաղութների մասին ոչինչ չգիտենք:

Այս հարցում մեզ լուսաբանող պիտի հանդիսանան լեզվական այն հազվագյուտ երևույթները, որոնք հասարակաց են արտաքին այս կամ այն բարբառի և ներքին այս կամ այն բարբառի միջև: Օրինակ Ախտայի գավառականով ասում են մուք մըղըրք ա շլատ մութ է՝. ուր մըղըրք անսովոր բառը փոխառյալ է արաբ. بجره mayrəb «արևմուտք» ձևից: Եթե գտնենք այն գավառը, ուր այս դարձվածը սովորական է, գտած կլինինք նաև գաղութի ծագումը: Ձեյթունի բարբառում պախրքա նշանակում է «հյուսիսային ցուրտ քամի»: այս բառը ծագում է Պարխար լեռների անունից (որ է Պոնտական լեռնաշղթան): Բարբերդի և Պոտըջուրի բարբառով էլ նույն քամին կոչվում է պարխար (տես Արմ. բու. հտ. Ե. էջ 983): Մրանով Ձեյթունի գաղութը կապվում է հյուս. արևմտ. Հայաստանի հետ և հատկապես Համշենի շրջանի հետ, ըստ որում այս բարբառում ունինք ա>օ ձայնափոխությունը (թեև միայն ունգականից առաջ): «Բիւրակն» հանդեսի մեջ, 1899 թ. էջ 402—5, ես ու. Կայծոռիկը (==բժ. Անդրանիկ Հակոբյան, Խարբերդցի) մի հոդված ունինք, ուր նման փաստերով հաստատում ենք, որ Մանիսայի վերի թաղի հայերը Խարբերդի գաղթականներ են:

Բացի վերոհիշյալ բարբառներից ոչ մեկը նույն չէ իր գաղթած տեղի բարբառի հետ. Սեբաստիայի բարբառը նույն չէ Վանի բարբառի հետ (նույն իսկ սրա գլխավոր հատկանիշ հ>խ ձայնափոխությունը չկա Սեբաստիայում). Ռոտոսթոյի բարբառը նույն չէ Կամախի հետ (պայթականների թավ արտասանությունը չկա Կամախում). Ձեյթունի բարբառը նույն չէ Համշենի բարբառի հետ (առաջինում ա>օ ձայնափոխությունը ընդհանուր երևույթ է, երկրորդում միայն ունգականից առաջ, ինչպես է նաև Ակնեցոց բարբառում): Նույն իսկ Նոր-Ջուղայի բարբառը թեև շատ կետերով նման է Հին-Ջուղայի բարբառին, բայց սրա հետ նույն չէ (տես իմ Քնն. Նոր-Ջուղայի բարբ. էջ 28—32): Նույն են մնում միայն այն բարբառները, որոնք անցյալ դարում փոխադրվեցին. այսպես Նոր Բայազետի բարբառը Հին-Բայազետից, Շիրակի, Ախալցխայի

և Ախալքալակի բարբառները Կարինից, Արարատյան դաշտի բազմաթիվ գյուղերի բարբառները Խոյից, Սալմաստից, Ուրմիայից և Մարաղայից:

Եթե քսանից ավելի բարբառներ ձևացել են վեց դարում, եթե նույնիսկ Նոր-Ջուղայի բարբառը ձևակերպվել է երեք դարում, ի՞նչ զարմանք, որ բուն Հայաստանի 16 բարբառներն էլ կազմված լինեին 6 դարից հետո, 1500 տարվա ընթացքում:

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԿԱՍ ՆՈՐ ՀԱՅԵՐԵՆ

Նախ երկու խոսք այն մասին, թե պետք է ասել աշխարհաբա՞ն թե աշխարհաբար (ինչպես և գրաբա՞ն թե գրաբար) այսինքն՝ այս բառը կազմված է բառ բառով, թե արար մասնիկով:

Շատ վեճեր են եղած այս մասին, հատկապես արևմտահայ գրականության մեջ, որոնց թվումը կամ ամփոփումը մեր աշխատության ծրագրից ու նպատակից դուրս ենք համարում: Հաղթահարեց այն կարծիքը, թե երկրորդ ձևն է ուղիղ, որին հետևում է այժմ գրողների ամենամեծ և լավագույն մասը: Գլխավոր ապացույցը ռամկօրենն բառն էր, որ կազմված է նույնպես օրեն մասնիկով, իբրև մակբայ: Ավելի լավ ապացույց է աշխարհօրենն բառը, որ գործածել է Շնորհալիին Ս. Պարսամի վկայաբանության հիշատակարանում. «Ըստ Ասորուց (բնագրի) շաղիազի և ծամածուռ, անյարմար և աշխարհօրեն բանիցն գոյր»*):

Ինչպես որ միջին հայերենը շարունակությունն է գրաբարի, նույնպես և աշխարհաբարը շարունակությունն է միջին հայերենի: Սակայն մենք տեսանք, որ միջին հայերենը մի ընդհանուր բառ է միայն և կան իրար ժամանակակից զանազան միջին հայերեններ, որոնցից մեկը՝ Կիլիկյան հայերենը, պետականության շնորհիվ բարձրացավ գրականության. Հետվարար և ունինք բազմաթիվ «աշխարհաբարներ»: Այս բառով հասկանում ենք այստեղ այն խոսակցական հայերենները, Հայաստանի և գաղութների զանազան կողմերում, որոնց շարուն

*) Նկատողություն Հ. Մ. Գոտուրյանի, Բազմ. 1907, 268:

ակությունն են կազմում արդի բարբառները, և որոնց վրա հիմնվեց աշխարհաբարը իր ճյուղերով:

Բայց ինչպես որ գրաբարի և միջին հայերենի սահմանը որոշելու համար կարելի է ղենել մի որևէ վճռական կետ, նույնպես նաև միջին հայերենի և աշխարհաբարի համար: Այնպես որ, երբ կարողում ենք աշխարհաբարի հնագույն շրջանի գրվածքները, դեռ զգում ենք միջին հայերենի շունչը:

Աշխարհաբարի հնագույն նմուշը ըստ Այտընյանի (Քնն. քեր. էջ 169) Բջնիի 1358 թվի արձանագրությունն է, որ քաղել է Շահխաթունյանի գրքից: Մեջ ենք բերում այդ արձանագրությունը ամբողջությամբ:

1358 թ.

Ես Աբաբակ շահինշահ, ի բռնակալութեան Մելիք Աշրափին՝ զմեր հայրենիքս զԲջնի՝ քաղաք յիսնէ հուրմով խլեր էր, զիր նորտերին էսիր¹⁾ կացուցեր. և Հանի Բեկ նիագեցավ ու զքաղաքս ի հիմանց քակեց, ու ջառ յանուանի մարդ ի սուր քաշեց ու զերկիրս ի շորս դիաց անբնակ արար ու զբրիտոնէք անխնայ կտորեաց, մեք յԱստուած ապաւինելով զմեր սալահր²⁾... հեծելին գլովս կացուցաք, որ զիր ապրանքն նախնա³⁾ բաշխէր, որ Աստուած խղեաց մեզ ու մեր հայրենիքս զԲջնու բերդս ի մեր ձեռս բերաց, զբուրհաք⁴⁾, արձանս վերստին հաստատեցաք. զվիճակ, զվանք, զգեղ, զսարի զղաշտի հայրենիք, բեց⁵⁾ ու շինական ու գործաւոր ազատ և քարխան⁶⁾ արարին հարկէ և ի ծառայութենէ... ով որ զմեր հաստատած արձանս խափանել ջանայ՝ դատի յԱստուծոյ:

(Շահխաթ. Բ 183)

Այս արձանագրությունը միայն 70 տարով նոր է լինում Գ թագավորի տված հրովարտակից (տե՛ս էջ 238): Բայց ընթերցողը եթե այս երկուսը համեմատի իրար հետ, առաջինը ավել

- 1) Գերի.
- 2) Զորապետ.
- 3) Անխնա.
- 4) Հիմն, հիմնական.
- 5) Պէշ, ծառայ, պատանի.
- 6) Ծառայությունից ազատ:

ի մտիկ պիտի զգա աշխարհաբարին, քան երկրորդը: Պատճառն այն է, որ այս վերջինը ամբողջապես կատարյալ ժամանակի բայ է գործածում, որ միշտ նույնն է գրաբարի հետ: Եթե պատահաբար գտնվեք այստեղ ներկայի կու ձևը (ինչպես Լևոնի հրովարտակում), անշուշտ տպավորությունը բավական պիտի փոխվեր:

Բջնիի արձանագրությունից 120 տարի ուշ է Ամիրզով-լաթ բժշկի «Անգիտաց անպէտը», որ գրված է 1478 թ.: Այստեղ ավելի լավ է զգում մարդ աշխարհաբարի շունչը: Ահա երեք հատված նաև այս գրքից, որ քաղում ենք Կ. Բասմաշ-յանի հրատարակությունից (Վիեննա, 1927 թ.):

1478 թ.

ԱՆԳԻՏԱՅ ԱՆՊԷՏ

Ասէ իմաստունն Սողոմոն, թէ գիտութիւնն լոյս է և անգիտութիւնն խաւար է. Աստուած լոյս է և սատանայ խաւար է. և ով որ գուտումն ունի, զլոյսն ունի. և այս բժշկութեան արհեստս ի գիտեականութենէն և յուսմանէն մաս մըն է, և հանապազ գմարդոյն կենդանութիւնն առողջ կուզէ: Եւ որ չէ առողջ մարմնով, ոչ կարէ ծառայել Աստուծոյ հոգւով. և ի յայս բանիցս առին առաջին բժշկապետքն մեր՝ մեծն Մխիթար բժիշկն և Ահաբոն բժիշկն և որդին նորա՝ Ստեփանոս բժիշկն... որ շատ գրեանք շիներ էին վասն դեղերուն զօրութեան և օգտութեան. կարեառօտ էին արել. և թէ զբնութիւնն կու գիտէաք նա, զէութիւնն չի գիտէաք. և թէ զօրութիւնն կու գիտեայեաք, զբնութիւնն չէաք գիտեալ և կար որ զանուանքն գիտէաք և զինքն չի գիտէաք. և կար որ [ո՛չ] զանուան գիտէաք և ո՛չ զինքն...

(էջ 2)

Ձահարայ. ինքն խոտ մըն է, որ աղէկ և անուշ հոտ ունի. և ի կիպարու ծառին ներքևն կու բուսնի. և խոշոր տերևնի կուենեա, նման է մանուշակի տերևին և ծիբանի ծաղիկ ունի, որ ի սպիտակութիւն կու քշտէ և յերկանութիւնն մէկ մէկ կանկուն կու լինայ, և ոմանք այսոր վայրի դարանֆուլ կու ասեն. և տակեր կունենայ գերդ սև խարպախ. և հոտն նման է տարչինու, և թէ գտակն

չրով եփեն և զշուրն խմեն, օգտէ հազին և հին զինաֆա-սին. և որոյ զոգն բունուի և զհայզին արունն բանայ, և զաղան ի փորուն ձգէ. և թէ զինով խմեն, օգտէ գագանա-հարին. և թէ ի տակերուն զմէկն որ թածայ լինի՝ կանայքն վերցնեն, զմեռած տղան ձգէ:

(էջ 144)

Եւ ասացել է գրոցս ժողվողն թէ ես տեսայ մարդ մի, որ յործամ արեգակն ի հոյն մտաւ. Ա մթխալ այս դեղէս գի-նով խմեց, և այն տարին քանի հեղ նորա մահացու դեղ տուին, զեն շարաւ. հենց որ բ դանկ և կէս արմաս տուին և այն օրն՝ այլուի բ դանկ արմաս տուին և հեղ մըն այլ օձի լեղի մահացու արբուցին և քանի ազգ այլ մահացու դեղ տուին, զեն շարաւ. և յետոյ իմացան որ այս մարդս Ա մթխալ մուխալլասայ է կերել, ինչպէս որ վերն գրած էր. և այս դեղիս մուխալլասայ անոր համար կասուի, որ յա-մենայն շարէ փրկող է և ի մահացու դեղոց որ զեն կառ-նէ՝ դարձուցանէ:

(էջ 372)

Թեև վերևում ասացինք, որ միջին հայերենը որոշ սահ-մանադիժ չունի գրաբարից բաժանվելու համար, բայց գոնե ունի կու մասնիկը, որ միջին հայերենի բացարձակ որոշիչ նշանն է: Մի գրաբար գրվածք, որ ունի կու մասնիկը, արդեն գրաբար չէ: Աշխարհաբարն էլ միջին հայերենից բաժանելու բնորոշ նշանն է հայցականի զ նախդիրի բացակայությունը: Բայց այս էլ երկու անպատենությունն ունի.

1) Կան բարբառներ, որոնք մինչև այսօր էլ գործածում են հայցականի զ նախդիրը. այսպես Մուշի, Ալաշկերտի, Ապա-բանի, Տիգրանակերտի, Միրիայի, Լեհաստանի և Սուչավայի բարբառները: Մյուս բարբառները չունին զ, բայց կար ժամա-նակ, երբ բոլորն էլ ունեին. բոլորն էլ կամաց կամաց կոր-ցըրին: Տիգրանակերտի բարբառը այսօր վարանոտ դրության մեջ է. այստեղ հայցականը կարող է և՛ ստանալ զ նախդիրը և՛ չստանալ: Պոլսի բարբառը այսօր զ չունի. բայց նրա երբեմ-նի գոյության ապացույց են այն մի խումբ բառերը, որոնց մեջ թաքնված է զ նախդիրը. ինչ. մէկգմէկ, ինքզինքը ևն: Արդ՝ անհնարին է որոշել, թե ո՞ր բարբառը ո՞ր թվին զրկվեց զ նախդիրից:

2) Ամեն հեղինակ որոշ չափով ծանոթ էր գրաբարին, ուստի ամենայն հեշտությամբ կարող էր գործածել զ նախդիրը, եթե մանավանդ իր խոսած բարբառն էլ դեռ բոլորովին ազատագրված չլիներ նրանից: Օրինակի համար՝ Ամիրտովլաթ Ամասիացու հատվածների մեջ միշտ գտնում ենք զ. այսօր Ամասիայի բարբառը զ չգիտե. ուրեմն ենթադրենք, որ Ամիրտովլաթի ժամանակ Ամասիայի բարբառը դեռ զ կորցրած չէ՞ր, թե զ-ի գործածությունը վերագրենք Ամիրտովլաթի գրաբարագիտության: Հարցը փնտռում է անորոշ:

ԺԶ դարից մեջ ենք բերում երկու հատված: Առաջինը Կապանի բարբառով է, երկրորդը Վանի բարբառով: Կապանցին բավական անգրագետ է. գրում է կեղոս (գեղոս), տաղայ (տղայ). այս արտասովոր ձևերը՝ որ բարբառում չկան, այն ժամանակի բարբառից են, թե ուղղակի անգրագետ մարդու սխալ Ստույգ է սակայն, որ այն ժամանակ ձևացած էր արդեն թրթռուն > խուլ ձայնափոխությունը, էական բայի եղ. գ դեմքը դարձել էր ա հն:

Վանեցին գրաբարագետ է. ուստի ունի զ նախդիրը, բայց միաժամանակ կու. անցյալ դերբայը -եր ձևով է (և ոչ -ել). բացառականի վերջավորությունն է -ից, որ այսօր էլ սովորական է Վանի բարբառում: Հ>խ ձայնափոխությունը սկսած էր շատ ավելի վաղ (տես էջ 383):

1586 թ.

Ես մեղաւոր Փիրգատա Ղիզիլպաշէն, երկիր Ղապանէն, Իրոտէն ձորէն (Որոտան), կեղոս (գեղոս) Գետաքաղէն, Պաստամէցէց ասքէն, Զաքէրի բոռն Միրգից, Հոռոմսիմի տաղայ, Իսայիոսն Փարուն, Պահալվէն աղբէր: Էն տարին որ Հայոց թվ. էր ՌԼԵ (=1586), ես իմ տանէն ելայ, գլոխս առայ ասկական մուրթեցի, օտար աշխարհ եկայ: Առչի քաղաքն Վան. էնկից կիճեցի Հիզու քաղաքն. էնկից կիճեցի Ղարաճէմիդ ևն. էնկից կիճեցի Իգնայմիտ. էնկից կիճեցի Աստաճուլ քաղաք, որ խոնդքարին բախտն այ...

Դէյիլանայ երկիրն, Վէնէտիկ քաղաք՝ ԺԲ մեծ պարոնի ձեռն այ. որ Ս. Մարկոս Աւետարանիցին մարմին այ. ծովի մէջ այ. ԶՌ (6000) կարմոն կայ մէջն.

ԶՌ (6000) պարբայ կալ իւր մէջն. խիստ (մեծ) քաղաք այ: էնկից կիճեցի Եանուայայ. էնկից կիճեցի Հոռուայ քաղաք...

Այիշան, Հայ-Վեճե. էջ 458—

1591 թ.

ՔԱՐՍԵՂ ՎԱՐԱԳԵՑՈՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ
(Դիւան Հայոց պատմ. հտ. Ժ, էջ 34)

Աստուած ողորմի ասացէք խոս Սարգսին, որ բազում աշխատանք ունի սուրբ եկեղեցեաց վերայ, որ երեք զեկեղեցոյ դրանդին և եղև պատճառ որ դոճերն ամէն քարէ շինեցին. զերկու եկեղեցոյ սալարս, զերկու ժամտան զերկու խորանն, զսան քարերն, զղաքարի քարերն, որ յառաջ չկայր՝ նոր արարին. Զաֆար փաշէն Քարէզ կու նստէր, քէնից դաստուր առանք շինեցինք. քէնէն ի Վան կու նստէր. սուպաշին երէկ. թէ կու քակեմ, ժամատուն ի դուրս էր գրեր. նոր խորան էր շիներ. Խոսրով աղէն Իսքանտար փաշի դուրս Զաֆար փաշին խզմար կանէր. մէջն անկաւ շերոզ. ու զմարդիկ յափսէն եճան. թէ չի քակուէր նա շատ տուգանք կառուէր: Փառք ներողութեան Աստուծոյ. յամենայն ժամ. ամէն:

Երկու հատկություն ենք տեսնում աշխարհաբարի առաջին նմուշների մեջ. 1) գրաբարի առատ խառնուրդ, 2) տեղական բարբառների կնիքը. այնպես որ կարելի է ասել, թե ամեն մի գավառ ունի իր տեղական առանձին աշխարհաբարը, որ գրողի գիտության համեմատ մոտենում կամ հեռանում է գրաբարից:

Տալիս ենք այստեղ 9 նմուշ աշխարհաբարի, բոլորն էլ ԺԵ դարից:

1609 թվից մի արձանագրություն, որ պատմուհու է Զարեա սարկավազը, հտ. Գ. էջ 22 (Յովհաննատմանք). կրում է Երևանի բարբառի կնիքը:—

Դիլանու Ամրումի այգին տուինք յիշատակ սուրբ Կարապետիս. ինչ մարդ էս բանիս միջումն այլևայլ խօսք յես և յառաջ բան ասայ ո՛ր կարայ, սուրբ Կարապետն իր յիշատակն կարայ:

ԳՐ. ԴԱՐԱՆԱՂՅԻ

Ժամանակագրութիւն, ապ. Երուսաղէմ 1915 թ.

(Կիւմբն է Կամարի բարբառը)

Ոմանք ասացին թէ նոյն ժամին ի Զուղայ լինելով նորընծայ կաթողիկոսին, կու բմբոնէ Շահն, անասելի դժնդակ տանջանօք կու շարշարէ, յետոյ հետ շան մի ի դարար քրծին կու դնէ կու կախէ: Եւ՛ շուրայեցի խոնաներն զանձներ ի մահ կու դնեն, կու հասկցանն Շահին գորպէս բերելն և բազում աղաչանօք և մեծաւ տաժանմամբ հազիւ իշուցանել կուտան ի կախադանէն և վեց հազար դուրուշ տուծիւք կուտան և կու գերծուցանեն ի անանէ Շահին (էջ 58):

Երբեմն աներևոյթ կու լինէին, երբեմն կու երևէին: Եպիսկոպոսն ասաց թէ սիրտս կու վախէ ի դոցանէ լաւ մարդիկ չեն նմանիր: Օր մի տեսնունք, որ ի քաղաք գնացին. քուրդ ընկեր այլ են ունեցեր. ի քաղաքն կու պատահի, կասէ թէ Սևաստի փաշայէն մարդ եկեր զձեզ գեղազեղ, վանք ի վանք կորոնեն, ելի՛ք կորի՛ք: Զայն տեսաք, որ եկին գիրեանց զինչսն ժողովելով շփոթմամբ. ասացաք թէ զի՞նչ եղև ձեզ, որ շփոթեցաք այդքան. ասացին կարաւան կու գնայ էջմիածինն, մեք անդ կամք ունիմք գնալոյ (էջ 85—86):

Քաֆիրնի՛, դուք սուլթան Մուհամմատին Աղբրմանի բերած սուրկուն շէ՛ք. գայդ քիլիսանիդ ի հոռմէն (առեր) և ձեզ օծիտ արար. ձեր մուլքն ուստի՞ց է, որ գայդ ֆուսարաներդ կու նեղացնէք, իգրապ և նաֆայ կենէք. սախին այլ չնեղէք և բռանչուտա չենէք. թող պարաթ մուհիպիննայ շորսական ստակ տուն գլուխ տան ձեզ ի յօգնութիւն ձեզ... (էջ 135):

ԶԱՔԱՐԻԱ ԱԳՈՒԼԵՑՈՒ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(ապ. Երևան 1938)

Յամի ՌՂԶ (=1647) մարտի ամսոյն քն-ումն Ագուլիս որ եւ Քրդունց Աղամիրի որդի Զաքարիայ այսօր Ագուլաց դուս գնացի, որ հոգին սուրբ Աստուած առաջ-

նորդէ, որ ուր որ գնամք, թէ գիւղ և էթէ քաղաք թէ մտանիցեմ, կամ թէ գատիկ արարիցեմ, կամ թէ նշանաւոր բան կամ թէ օր հանդիբիցէ, գրիցեմ. պատճառն այս է. որ ով որ հարցնէ, սուրբ հոգին տացէ պատասխանին. այս է, որ կայ, յառջևն գրած է:

Յամի ՌՂԶ մարտի ամսոյն Եւմն Ագուլաց եւ Զաքարիայ այսօր դուրս ելայ Աստուծով: Սուրբ հոգին Աստուած առաջնորդէ:

Յամի ՌՂԶ ապրիլի ԻԱ ումն այսօր եւ Զաքարիայ որ մտայ ի քաղաքն Աղոռում, գումրուկչին էր Պետրոս շալարին: ... Ժէնգիշարին, ըսպահին կրիւ տվին Ըստամբօլու միշումն, շատ մարդ կոտորեցաւ ըսպահունանէ. այս պատճառէս, որ ուզում ին, թէ թագաւորն սպանին, թէ դուլի ուլուֆայ չէ ալիս. գերայ ըսպահին թագաւորն ուզում էն, ժէնգիշարին թագաւորն ուզում չէր: Վասն այս պատճառէս շատ արիւնհեղութիւն արարին Ըստամբօլու միւնչումն: Ախր վերջն Սուլթան Իբրահիմ թագաւորն խեխեցին, իւր մեծ որդին թախտ նստուցին (էջ 29—31):

ԱՌԱՔԵՆԻ ԴԱԻՐԻԺԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(ապ. Վաղարշապատ 1884, էջ 457)

Եւ է քար մի, որ օձի քար ասեն. թուրքերէն խրտրելիազ աղչասի ասեն, բոլոր և սպիտակ լինի, ի սատաֆի ջրնսէն է. մէկ երեսն դուայայ (գմբէթաձև) է և մէկէլ՝ երեսն դուր. և ի դուր երեսն ունի մարդուրայ բարակ սև թել և է՞ այսպէս. խասիաթն նորա այն է, որ թէ ռուպ, որ է պէգմագով ի վերայ օձիկ ցաւոյն կարմիր տեղին զնես, նա կպի ի վերայ կարմիր տեղին, և ուրն օր չի փրթիր ի վերայէն մինչև որ ողջանայ Աստուծով:

Եւսար՝ որ է գոյնն կանաչ փերփերի գոյն, և կայ ի յինքն կարմիր կեանք շատ և, Վտ իսկ մախպուլ է. և պինդ է ի բանելն, և շատ է. ամեն տեղ կայ:

ՅԱԿՈՐ ԿԱՐՆԵՑԻ
Տեղագիր Վերին Հայոց
(տպ. Վաղարշապատ 1903)

[Գատմուհի է 1622—1662 թվերի դեպքերը, ուրիշն զբովս
կարելի է համարել 1663 թ.]

Եւ դուռն բերդին, այն որ ընդ հիւսիս հայի, Կա-
նայ և Վրաստան դուռն կոչեն, որ գարմանալի խաշեր
կան դրոշմեալ ի պարիսպն, հիանալի տեսողացն, և ի
վերայ միջի դրանն սեմոցն դրոշմեալ կայ սրբոյն Սարգ-
սի պատկերն, նիզակ ի ձեռին և հեծեալ երիվար առ ի
պահպանութիւն բաղաքիս: Եւ պարսպէն դուրս շորս կողմն
շինութիւնք բազում, և կան բնակեալ մինչ ի քառասուն հա-
զար տուն մարդիկք իսպանիք և ենկիշարիք յոյժ ընչասէրք,
բայց յազգէս Հայոց երկու հազար տուն հազիւ թէ գտանի-
և վանառականք ի շորից կողմանց Հայոց ազգէս անթիւ
կան նստեալ տարին բոլոր բովանդակ ի գնել և ի ծախել
փառչայ և ապրշումեղէն, ցեղ ու ցեղ դումաշ և դանաուզ,
չուխայ, կտակեղէն և քթան, անթիւ և բազում շավանիք
քար՝ ալմաստ և յեաղութ, գմբուք, լալ, սամուր և վարշախ
և ամենայն մագեղէն տարին բոլոր յայտնի գնեն և վաճա-
րեն. զի այժմ քաղաքս այս յոյժ բանտար է նման Ստամ-
պուլայ, որ տարին ժմ բեռ մտանէ և ելանէ, որ նո դուռուշ
մտանէ քսակն փաշային. թո՛ղ զիր թեմի և սարերու Քրք-
դերուն գելուրն, այս ամենայն գալող և գնացող վաճառա-
կանացն: ...որ բոլոր շրջակայ գաւառներն նոքա լնուն ձի-
բով, որ տասներկու նուկի ձէթն երկու դրամ արծաթոյ կու-
տան: ...ծառոց պտուղն՝ խնձոր և տանձ և խաղող շուկա-
ներն ի լի մինչև ի Հայոց գատիկն, ձիթապտուղ, շապա-
լութ, կաղին և չամիչ անթիւ, արմաւ և նուշ ի բոլոր տա-
րին... (էջ 36—39):

Պարզաբանութիւն հոգեհուազ Սաղմուսացն Դարթի ի
նուաստ Յոհաննիսէ վարդապետէ Կոստանդինուպոլսեցոյ
ապագրեցեալ արդեամբք և գոյիք Ազուլեցի խօնայ Գուլեա-
գարի որդի խօնայ Նահապետին, Վենետիկ 1687:

Իմ հոգույս խորուչ և ծածուկ խոցերն և ցաւերն սր-
տիս և լերդիս խորուչ տեղերէն գոռալով դէպ քեզ ազադա-
կեցին տէր Ած. քոյ սահանաց ձայներովն, իբր քոյ երկնային
դռներին ձայնին նման ձայն հանելով և որոտալով առ քեզ
գոչեցին, և նար խնդրեցին բժշկութեան: Զէրէ՛ ամէն քո զբո-
սանքդ և քո ալիքդ իմ վերայես անցկացան, իբր քո ամէն
բարկութիւնդ և ցասմունքդ, քո զանազան փորձութիւնքդ և
քո պատուհասներդ խառնակեալ ծովու մրրկած տալղաներին՝
նման իմ վերայես անցկացան, և զիս ծածկեցին և խեղճ արա-
քին: Բայց ինչպէս որ կու հրամայէ տէր Ած որ ցերեկն, իբր
մեր աշողութեան միջումն իւր ողորմութիւնն յիշենք և գոհա-
նանք. և գիշերն, իբր մեր անաշողութեան և փորձութեան
միջումն իւր սուրբ կամքն նոր օրհնութեամբ օրհնենք և փա-
ռաբանենք, իբր ամենոր նոր փորձանքի և նեղութեան գօրայ՝
իւրն նոր օրհնութիւն և գոհութիւն մատուցանենք. այսպէս
միշտ իմ աղօթքս և պաղատանքս առ Ած է իմ հոգույս կեն-
դանութեան և փրկութեան համար: Եւ իմ աղօթից և արտա-
սուաց միջումն ասացի Աստուծոյ, թէ տէր Ած, դու իմ ընդու-
նօղն ես, և իմ խնամք տանօղն ես, է՛ր զիս երեսաց ձգեցիր.
է՛ր կու թողուս որ ես տրտում շուրջ գամ, երբ որ իմ անե-
րեոյք թշնամիքն զիմ հոգիս կու վշտացնեն: Երբոր ես սաս-
տիկ վշտէս և տառապանքէս կու հալէի կու մաշվէի և ՚ի
գօրութենէ կու անկանէի, և իմ ոսկոտանքս կու թվէր թէ կու
փշրվէր և կու թուլանայր. շուտով կու սկսանէին իմ թշնա-
միքն գօրն ՚ի բուն զիս նախատել և տնագ անելով ասել թէ
ուր է քո Աստուածդ, որ դու յուսացեր ես, է՛ր քեզ յօգնու-
թիւն շի՛ հասանիր, և զքեզ մխիթարեր: Բայց դու ո՛վ հոգի
իմ, ինչի համար կու տրտմիս, է՛ր զիս կուխոտկեցնես և կու-
շփոթեցնես. յուսացիր յՄԱԾ, և խոստովանիր իւր սուրբ անունն.
զէրէ՛ իմ երեսիս փրկօղն և լուսաւորօղն աստ և ՚ի հանդեր-
ձեալն Ած. է (էջ 218)*:

*) Հառաջաբանում ասում է, թե Ազուլեցի խօնայ Գուլեազարի որդի
խօնայ Նահապետը տեսնելով որ խառնացիք ունին այնպիսի լեզվով Սաղ-
մուս, որ ամենքը հասկանան, ինքն էլ ցանկացել էր ունենալ նույնպիսի
լեզվով հայերեն Սաղմուս: Իր փափազը հայտնել էր Գուլիս. բայց չէր կար-
ողցել լրացնել, Վենետիկ գալով տեսել է պոլսեցի Հովհաննես վարդապետին
և նա էլ կատարել է նրա խնդիրը: 840 երեսանոց ընդարձակ մի գիրք է՝
որի լեզուն խառնուրդ է գրաբարի, արեմոյան աշխարհագրի և արեւելյան

1699 թ.

Մի հատված Ջաքարիա Սարկավազի պատմութիւնից (հա. Բ. էջ 9). գրված 1699 թ. Կարբեցի զեղացոց բերանը գրված մի խոսք է. ընդհանուր ձևը գրաբար է, բայց կրում է նրեանի բարբառի կնիքը:

Շանի ոտաց հողի յայտնի լիցի ի Կարբոյ ողորմելի շինականաց: Ձի մեր լուաք թէ Օսմանլու է գալիս աշխարհս մեր, մեր Դզլբաշի ենք սովոր. գեղով էլանք փախանք թէ Օսմանցուցն ծառայ շենք կարող լինել և եկաք դէպ ի սահմանս քոյոյ տերութեանդ:

1699

**ЭЗОВ, СНОШЕНИЯ ПЕТРА ВЕЛИКОГО
Санктпетерб. 1898, էջ 19**

Գարձեալ իմացնէմք քո ինքնակալ թագաւորիդ ինչպէս որ գրեր ենք ի մէջ թղթին թէ այս պայծառ տունս պարոն Իսրաել Օռին որչափ լի շարչարանք է քաշեր որ մենք ակներև տեսալ ենք և ի պատմութիւնս գրեալ կա, որ Գ մարդ մահատակեցաւ այս պայծառ տանէն մեր ժամանակաւն վառ քրիստոնէից համար. մենք¹ դատաստանաւ տեսինք որ հնոց և վաղէվէ իշխանաց զարմէ է քան զամենեքեանքս առանկ գերագուն է ամենայն իրաց. արինք զխաւոր և տուինք իւրն ներմակ թուրք և դրինք զմեր մօհրն ի վր. որ գայ առ քո թագաւորութիւնդ որ քո տէրութիւնդ ինչ որ կու հրամաէ իւրն ովսաադրութեամբ դաշանօք մեզ խապուլ է. Միմաս վարդապետին հրամանաւ որ մեր վաքիլ է. մեր խորհուրդն այն է որ մենք մեր իշխանքով պարօնօքս ամենեքեանքս հնազանդ լինինք քո մեծ թագաւորութեանդ որպէս հնազանդ են բազում իշխանք քո հրամանին ներքև, լինինք մենք² նմանապէս մին ծառայ քո մեծ տէրութեանդ. որ ժամանակաւ ինչ

աշխարհաբարի: Կան նույնիսկ ինձանից, ևնգանից ձևերը: Գրողը պորտեցի լինելով՝ ընդհանուր ոճը արեւմտյան հայերենն է:
Հատվածիս մեջ գործածված թուրքերեն բառերն են 1. զէրէ արովհեան» 2. տալդա արիք», 3. գօրայ Եհամեաստ»:

որ կու հրամայես բարուն բարի և շարուն շար, կենամք հաստատ ի վր. ուխտիս, գլխով և ապրանքով, որդովք և դատեովք, կենամք հնազանդ առ քո հրամանատութեանդ. որ կու խնդրեմք առ տէքն մեր յս. քս....

Թվին Ռձե՛՛՛՛՛՛ (=1699) ի գիտաբաղաքն Ընկեղակուր. ի Ապրիլի ԻԹ. *):

1699 թ.

Գանձ չափոյ՝ կշոոյ՝ թլոյ՝ և դրամից բոլոր աշխարհի. ժողովեալ Դուկասու Վանանդեցոյ, ծախիւք և ի խնդրոյ հայցման Զուղայեցի Խաչատուրի որդի Պարոն Պետրոսին, 1699 յԱմստէրդամ: (Կրում է Զուղայի բարբառի կնիքը):

Մօսկօվի ալիշվերիշի¹ փողն արծաթ է, որ սօմ ասի: 1 ունկաուզ ոսկին 110, 120 կօպէք այ: 1 թօքմայ մարչիւն՝ 55, 60 կօպէք այ, գահ² ավել՝ գահ պակաս: Ինչ դարայ³ հաստ իքմին կայ՝ ողջ փութով կու խօսին. և ինչ բարակ իքմին կայ՝ ֆունթով խօսին:... Մօսկօվէն այս ինչ բահամ⁴ կու գայ. սամուր, որ 20 ջուխտն մին դօնլուղայ. սև աղուէս, գօջան, սնջաֆ, բալաթին՝ որ է՝ բուլդարն. բալիս, ձկան կեռիք դունդուղարայ, ժիպակ. ամա էստունց գինն դարար⁵ շունի: Ով ուզէ ապրիշում տանել Մօսկօվն, ՚ի Հաշտարխան կու կշոեն. 1 փութին մին բուման՝ 6000 դիան կու հսարեն⁶: 1000 դիանին՝ 50 դիան գօմրուկ⁷ կառուն (sic): 1 փութի փողի ջամն⁸ լինի՝ 800 դիան: Հաշարխանու մինչև ՚ի Մօսկօվն՝ մին փութին 1000 դիան քիրայ⁹ կառուն (էջ 36):

**) 1, 2. Երկու անգամ էլ գրված է մենի տառնց պատվի. ուրեմն զեռք է կարգալ սենթլ. ու Խարբերդի բարբառի հատկութիւնն է, ուր էլ զանուս է քլ. հմմտ. իմ չայ բարբ. էջ 170 մամիգն քլ Եհամիկն էլ», քն քլ Եայն էլ»: Մրանից երևում է, որ Թուղթը գրված է Միմաս վարդապետի ձեռքով, որ Խարբերդցի էր:*

- | | |
|------------------|------------|
| 1. Առուտուր. | 6. Հաշվել. |
| 2. Երբեմն. | 7. Մաքս. |
| 3. Թանձր. | 8. Գումար. |
| 4. Դուրս գալ. | 9. Վարձ. |
| 5. Կայունութիւն. | |

Ներայր Վանառական, յ'այս գրքումս ինչոր գրեցաւ վասն քաջից, դրամից՝ և դիմաթի¹⁰, ժամանակաւ կու փոխվի, կամ կավելանայ՝ կամ կու պակասի: Զարա¹¹ Ալիշվերիշի¹ բանն Աճադիր կանոն չէ, որ անփոփոխ լինի, բայց փոփոխական է, և մարդագիր կանոն, և ժամանակատը: Յայտնապէս միշտ՝ և հանապազ կու տեսնունք՝ քաջից՝ դրամից՝ և ապրանաց դիմաթի¹⁰ փոփոխումն. ինչպէս՝ ապրիշումին՝ մանածին՝ բրդին՝ դրամին՝ և այլ ապրանաց. էս պատճառէս՝ թէ ժամանակաւ մեր գրածին դարշու¹² տեսնիք, չգարմանաք, և ոչ վատ ասէք մեզ՝ սաբաբ¹³ փոփոխումն. ինչոր մեր գրեցինք՝ ժամանակաւ նշմարիտ էր՝ և ժամանակաւ բազի¹⁴ բաներ կու փոխվի. ամա մեր գրածն բոլորովի՛մք սուտ չէ դատնալու (էջ 53):

ԺԸ դարում շարունակվում է դեռ այս ոճը. գրականության լեզուն դուռ գրաբար է, մանավանդ լատինարան գրաբարը: Հազիվ երբեմն երևում են աշխարհաբար գրքեր: Քննելով Զարբանալյանի Մատենագիտությունը, գտա որ ԺԸ դարում հրատարակված բոլոր աշխարհաբար գրքերի (հաշվելով մի գրքի զանազան տպագրություններն էլ իբր առանձին գիրք) ընդհանուր թիվն է 14: Իսկ տարբեր տպագրությունները չհաշվելով՝ բոլորի թիվը լինում է միայն 10! — Հարյուր տարվա մեջ միայն 10 գիրք:

Ահա այդ գրքերից և ուրիշ աղբյուրներից քաղված նմուշներ՝ ժամանակագրական կարգով:

1711 թ.

Մի հատված Schröder-ի «Արամեան լեզուի Գանձից», որ հայերենի քերականությունն է լատիներեն լեզվով գրված (տպ. Amstelodami 1711): Այստեղ իբր հավելված կան աշխարհաբարի նմուշներ, բոլորն էլ բարբառով: Հաջորդը Երևանի բարբառով է (էջ 347).

¹⁰. Արժեք.
¹¹. Որովհետև.
¹². Հակառակ.
¹³. Պատճառ.
¹⁴. Մի քանի.

— Այ տղայ Ղազար գեա մին մեր Մատուրն կանչէ գայ:

— Աղայ գնացի Մատուրն նոր տեղ էր մտել. ասաց թէ շորս հագնիմ գամ:

— Բարի իրիկուն Աղային բողոքին անես Աղայ շատ վաստակի էսօր շուտ գնացի տեղս շազարն եկաւ ասաց Աղէն կանչում այ:

— Գիտես ախպէր Մատուր, ինչու քեզ էսէնց բիվախտ կանչեցի:

— Հրամէ Աղայ դուլուդիդ հագիր եմ:

— Իգուց ախպէր Մատուր մեր տանն հացկերուտ այ՝ շատ մարդ եմ կանչել...

1717 թ.

**ՆԱՄԱԿ ՀՈՎԱԿԻՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՑ
 ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻՆ**

(Կրթ. Գալէմբեարեան, Կենսագր. երկու հայ տար. Վիեննա 1915, էջ 231)

Յայտարարութիւն լիցի մեծի տէրութեանդ բուս գի անցեալ ամին յայսմու ժամանակի մեր աննարութիւն և մեր խեղճ ողորմելի կեանքն գոր ունէիք ի Հոսմայ ի մէջ տէրութեան յայտարարեալ եմ ձեռամբ Գօրեցի մահտեսի Պետրոսին... թէ զինչ պատճառաւ այսքան ամ մեզ արգելեցին տեղն և մեր որքան բողոք բարձեալ առ մերային վանառականացն թէ Ալիկոնա եթէ Մարդամ... լաւ տեղեկացանք ճանապարհներին. մարդ բեռնեցինք թէ մեզ պիտի ուրիշ ճանապարհաւ տանես Ալիկոնա. անցեալ տարին որ թվ. ՌՃԿԵ (=1716(նոյեմ. Դ. գիշերով դուռ ելանք, եկե՛նք Ալիկոնա Ժ օրին տեղէն մեր բազրկաներն շուտով դրին նստում. եկինք Մարչէլիա... տեղս տեսինք նոր շինած եկեղեցին բազում պարտուց մէջ կեցալն ձիո շտվաւ. գիրս գրեցի էլա տեղի դէպի Մօսկօվն. խնդրեմ աղաչանօք վեհանձնութե՛նէդ, որ մեզ աչքէ ձգես ոչ. խնամքդ մեզանէ անպակաս եղիցի... ապա խնդրեմ վեհանձնութե՛նէդ որ այս մէկ խնդիրս կատարես. մատ մի օրհնութեան բուրք յղես...

ЭЗОВ, СНОШЕНИЯ ПЕТРА ВЕЛИКОГО

(Санктпет. 1898, էջ 436)

Ի բմին քմբր՝ փոքր ծառայողէդ արգ և պանտակի՝ լինի վերոյգրեալ մեծ սահապի դուրուումն. եթէ կամենաս մեր Հայոց ազգի աֆալն իմանաս մինչի այս բարեզս 2 տարի է անօրինաց ձեռքն գերի անք մնացել. հօրէս Բ տարի է որ Օսմանլուի հետ կռիւ ենք տալիս վասն մեր բազաւորի հրամանովն, կամ թէ մեր հաւատի խաբրի համար. մենք էս ճանապարհից ետ դառնալու չենք, մինչի մեր մինն մնալն բազաւորի ուղորին գլուխ ենք դրեր. մեծ իմփոադրիցին դուլ ենք գրվել. որ է Իվան Կարապետն բազաւորի ուրազովն եկել էր առ մեզ. ինչ որ բազաւորի հրամանքն էր մենք տեղ կատարեցինք. մնացեալն էլ տեղ կուկատարացունենք ի քմինայ փոքր ծառայ Իվան Կարապետս որ սղնաղէն եկի Ավան ուզպաշի եղբայր, Սիւսն ուզպաշին և Թարխանի հետ Խախանըն և Պաղի ուզպաշին, որ է մեզանով ԻԶ մարդ եկինք Սալիան դօշունի համար, Սալիանէն մեզ ուղարք՝ տվին գնացինք Կիլան ճրնդրալ քնեազ Վասիլ Վալայդօմրիչ Դօլկաուպի մոտ, դօշում ուզեցինք, հրամանոցդ շաֆաղարամի էրէսօվն, որ Չալապի քէվխին էյիք տվել են, եկել էր Դարպանդ, ուղարկել էր մեզ, մէնք էնդուր էրէսովն ուզեցինք չի տվին. հիմա մնացել ենք Դարպանդումն մեր սղնաղի խալը աչքն մնացել է դիպայ ետ, որ բազաւորն մեզ մին ֆիքր քաշի. վասն Քսի խաբրին մեր այս խեղն հայերին մին ոտնմ անէք.՝ հիմա Պաղի ուզպաշին և Չալապն քէվխէն աղարկեցինք քոյ հրամանոց դուրուոն, մեր ամեյ՝ հալ աֆալն սրանցանէ հարցանես. ես Իվան Կարապետս էլ իմ տղէն ուղարկեցի սրանց հետ, որի անուոնն Վասիլ:

ԻՃՀԶ Բվն մայիսի Թ-ումն գրվեցաւ ի քաղաքն Դարպանդ.

1) Քմն քմբր բառերի մոտ դրված է ? հարցական. պարսկերէն كمينه kemīne kemter «պակասավոր պակասազույն» ձևն է. 2) Պրս. باندگی bāndāgī «ծառայություն», 3) ա-

բար. رخصت ruxşat «արտոնություն, հրաման». 4) տպած է «ոսման էք». 5) տպած է ամեյ (պատվով). կարդում եմ «ամենայն»:

ԲԱՆԱՍԷՐ ՀԱՆԳԷՍ
(Պարիս 1907, № 1, էջ 7)

Այլ երկրում մին բարեպաշտ բազաւոր կէր, որ միշտ տխուր և տրտում էր. և հարգիվ՝ տեսել չեն որ ծծաղ գէր ուր յերեսն. ամիքն զարմամանին և ուր ամարաքին՝) մեծայմարդիքն վախմանին խարցանելն. և խնդրեցին բազաւորին ախօրն, որ խարցանի նրայ տխրութեան պատճառն. յեփ սայ խարցուց, բազաւորն ուր ախօրն ասաց թէ «բարի սըրտով ֆլան՝) օրն ես քե չուղարք՝) կը տամ»:

Եւ յեփ օրն խասանելէց էր, հրամայեց թէ մին մեծ խորբոբն և խորին կէսն թոնդրի պէս կրակ լցեն. յետ էստից խորին վերէն մին խին և լախլախկաց առթոք դնեն և առթոքին վերէն մին սուր թուր կախ տան, միայն մին թելով կապած. և յետոյ առթոքին առչկումն մին սիրուն սեղան դնեն, որ լի հնի ամ կերպ խամեղ կերակրէրով, գինով և եմիշանօվ՝) և հուքմ՝) արար շոք զինվորքի որ ուրէնց թրէրն տկուր առթոքին շոք գմանն կանգնեն, որ նստածն դիրուր շրգոյ. յետ էստոնցէ բազաւորն ուր ախօրն կանչեց թէ «եկ էն առթոքումն նստիր և էն սեղանին պո՛ծառութենէան անոշ արայ. գրայ՝) էսօր պիտիլ այ սազօվ և յոյծ ցնջութեամբ խաց ուտես»: Ախբէրն ասաց. «Ես դո՞ր ամ գդել խաց ուտել գողվ՝) առել ծծաղել և ուրախանալ էղչանք մահուան երկիւղի միշում գրայ՝) թէ դավերամ ականում, դժոխկի պէս կրակ ամ տեսման, որ եթէ էն լախ առթոքէն փոքրիկ դիրուր գոմ, վէր կրնգանեմ էս կրակին մէջն. թէ դավեր ամ ականում, հանց արեման թէ թուրն գլխիս ընգաւ էն բարակ թելիցն. թէ աչ և

1) խկի.
2) պալատ.
3) այս ինչ.
4) պատասխան.
5) պտուղներ.
6) հրաման.
7) որովհետև.
8) ուրախություն.

ձախ գմանն ամ ուզում գնամ, ոխչ տկոբ քրքրով լցած այ-
արայ էսչափ երկնչութեան միջումն դո՞ր աս ուզում ես ուտեմ
խմեմ և ծծաղէմ:

(Ամբողջապես Նոր-Ձուղայի բարբառով է: Նկատելի են
հատկապես այս բարբառին հատուկ ձևերից հետևյալները.
կէր=կար, ծծաղ=ծիծաղ, գէր=գար, գայր, ուր=ուր, յերես=
երես, զարմամանին=զարմանում էին, վախմանին=վախում
էին, խարցանել=հարցնել, քե=քեզ, խասանելէց էր=հասնելու
էր, խոր=հոր, բորեն=փորեն, խին=հին, առթոք=աթոռ, խու-
մեղ=համեղ, չոք=չորս, չոք գման=չորս կողմ, անոշ=անուշ,
պիտիլ այ=պետք է, խաց=հաց, ականել «նայիլ», արեման ա=
երևում է: Սրանք կենդանի են նաև այսօր Նոր-Ձուղայի բար-
բառում:

1760 թ.

ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊՐԻ

Գիրք քերականութեան (Պոլիս 1760).

Գրոց բան հասկրնալու սէր ունեցող փոքրիկ տիրացու-
ներուն համար է այս փոքրիկ քերականութիւնս: Որ թէ զայս
կարդան և սորվին, զմեծ քերականութիւնն հեշտ կու հասկը-
նան. Եւ ով որ քերականութիւն չէ կարդացեր, անոր կար-
դացողութիւնն պակաս կը սեպվի ի մէջ կարդացողաց. ինչ
դատար¹ շատ բան կարդացած ու գիտցած ըլլայալնէ. Ձերէ²
սա՛ խօսքիս արմատը՝ եանի³ ասլը⁴ թէմէլը⁵ ո՞րն է, կամ
թէ այս խօսքս քանի կերպ կըլլայ ըսես նէ, չի կրնար գիտ-
նար. Եւ երբ որ մէկ բանին ասլը⁴ թէմէլը⁵ չիգիտցրվի՞նէ,
պէլլիլն⁶ որ այն բանը աղէկմը գիտցրված չլար (էջ 1):

1768 թ.

Պագտասար դպրի տաղարանից

Ձիս քո սիրոյն, ո՞վ նագելի, հովերն առեր կու մաղէ,
Օտարին լեզուն աւելի ցաւ եղեր զիս կու դաղէ,
Այս կարօտուս չի գիմացվիր միշտ զհոգիս քու քաղէ,
Դէպ ի երկիրն իմ սիրելոյն առնէր տանէր հովն զիս,
Դէպ ի յայգին իմ նագելոյն փշէր տանէր քամին զիս:

- 1. Ձափ.
- 2. Ոքովհետև.
- 3. Այսինքն.
- 4. Բուն.
- 5. Հիմք.
- 6. Հայտնի է.

եղնալի այն և ցավալի թոշնակին ես նման եմ,
Որ սիրովն իմ կարմիր վարդին յարակ ի սուգ մտանեմ,
Ի սար, ի ձոր շրջաբերիմ, խնդրեմ և ոչ գտանեմ,
Դէպ ի երկիրն...

Սրաթե թոշնակ լինէի, թոշէի ուր կամէի,
Կամ ի յայգին իմ սիրելոյն փշող քամին լինէի,
Թեքիկ ամպիկ պիտէի, հովուն առջև իյնէի,
Դէպ ի երկիրն...

Այս բոցոյս թէ ծովեր կապեն չգիտէ իսկի մարիլ,
Այլ հաճապագ նոր ի նորոյ սկսանի ի վառիլ,
Ձինքն այլ տեղ, հոգին այլ տեղ, ո՞վ կարէ կալ դադարիլ,
Դէպ ի երկիրն...

(Քաղել եմ Գ. Լևոնյանի հոդվածից, որ տպված է «Տե-
ղեկագիր գիտութ. և արվեստի ինստիտուտի», № 2, Երևան 1927,
էջ 124—5: Հոդվածագիրը այդ երգը օրինակում է Պաղտասար
դպրի Տաղարանի 3-րդ տպագրութիւնից, Պոլիս 1768. Նույն
Տաղարանի Ա. տպ. 1723 թ. և Բ. տպ. 1734 թ. մատչելի չեն
եղել մեզ: Կարող է լինել, որ այս տաղը տպված լինի նաև այդ-
տեղ, ուստի և ավելի հին):

1783 թ.

ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ ՀԻՄՆ ՍՏՈՒԳՈՒԹԵԱՆ
ՀԱՒԱՔԵՑԵԱԼ ՅՈՒՄԵՄՆԷ ԲԱՆԱՍԻՐԷ
Պոլիս 1783

(Գրաբարը միացած Պոլսի ուսմականի հետ՝ Թուրքերեն
բառերով խառն)

Ձէ՛րէ՛ ամենայն ազգքն խաշապաշտից՝ են նո՛յն առա-
քելականի սրբոյ եկեղեցոյն անգամք, և որդիք, և հետեօք
առաքելականի եկեղեցոյն առձայնին. զէրէ Ազամ բանական
էր և մենքալ Ազամայ որդիք նմք, անոր համար բանական
կուրիմք. վասնորոյ՝ հիմիալ, թէ որ Քսի առաքելոցն հետե-
փմք նէ՝ առաքելական կլամք, և առաքելական կու կո-
չուիմք: Եւ եթէ չի հետեւիմք նէ՝ չեմք ըլլար (էջ 29—30):

ԶԷՆ ՀՈԳԵՒՈՐ

Պոլիս 1787

(գրեթե նույն լեզվով ինչ որ նախորդը)

Թէ որ ասեմ, յաուրս մէսիային պիտի խոր խաղա-
դուրիւն լինի: Ինչպէս ասեր է Դաւիթ... իմտի¹ ասոնք ի՞նչ
պէս զըթ² շեն: Ասեմ քի ո՛վ հրէայք, զայն Դաւիթ սաղմոս
դուր ի վերայ սաղմոսնի կու մեկնէք. և յորժամ կամիր... ի
վերայ անտարանշացն, կու դարցընէք գտիւմէնն³ ի վերայ
Քի: Լաքիս⁴ մանի⁵ չէ. կէրչէքտէն⁶ այն սաղմոսն ի վերայ
Քի Եախշմիշ⁷ կու լինի. գէրէ⁸ կասէ Դաւիթ... (էջ 94):

ԽԱԶ. ՎՐԴ. ՍԻՒՐՄԷԼԵԱՆ

Համառոտ բուարանութիւն աշխարհաբառ
Վենետիկ 1788

(զուտ աշխարհաբար է առանց գրաբարի, միայն դարձյալ
Պոլսի ուսմիկ ձևերով)

Իրեք կերպ կըլլայ կտորը⁹: Առջի կերպը այն է՝ որ
համբողջ¹⁰ ու յայտնօղբ¹¹ հաւասար կըլլան, այսինքն թէ՛
վերինը, և թէ՛ վարինը նոյն ըստիւմ¹² կըլլան. գործիմակ
ասոնք. $\frac{2}{2} \cdot \frac{3}{3} \dots$

Երկրորդ կերպը աս է, որ վերինը մենձ կըլլայ բան
զվարինը. գործիմակ ասոնք. $\frac{3}{2} \cdot \frac{5}{3} \dots$

Երրորդ կերպը աս է, որ վերինը պզտիկ կըլլայ բան
զվարինը. գործիմակ ասոնք. $\frac{1}{2} \cdot \frac{3}{4} \dots$ (էջ 60).

1. Այժմ, արդ.
2. Հակառակ.
3. Ղեկ.
4. Սակայն.
5. Արդեւ.
6. Իրոք.

7. Սաղի.
8. Որովհետեւ.
9. Իմն կոտորակ.
10. Համարիչ.
11. Հայտարար.
12. Թվանշան:

ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ ԲԱՆԱԼԻ ԳԻՏՈՒԹԵԱՆ

(Բառարան հայ-ռուս, ռուս-հայ և խոսակցութիւն հայ-ռուս)
հեղ. Կղէօպատրայ Սարաֆեան, Սանկտեթերբուրգ 1788

(մաքուր արևելահայ աշխարհաբար է՝ խառն գրաբար ձևերով)

- Ուրես գնում հրամանքդ այտպէս կանուխ:
- Ես գնումեմ դպրատունն:
- Յորում ժամու պարտիս հրամանքդ տեղն լինիլ:
- Երբ որ զանգակն հարէ:
- Յորում ժամու հարէ զանգակն:
- Եօքներորդ ժամուն:
- Աշակերտքն որք գալիսեն յես հարելոյ զանգակին
լինումէ նոցա պատիժ:
- Ուսուցիչն նոցա նստուցանումէ ՚ի վերայ ծնկանց:
- Շատեն նստում նոքա այնպէս:
- Մինչի այն ժամանակն երբ ուսուցիչն նոցա հրա-
մայէ կանգնիլ: (էջ 245):

Հ. Ղ. ԻՆՃԻՃԵԱՆ

Տեսութիւն համառոտ հին և նոր աշխարհագրութեան, Վենետիկ 1791
(մաքուր արևմտահայ աշխարհաբար)

Վառչավա կամ Վարչո մայրաքաղաքը բոլոր բազաու-
րութեան Լեհու. ուր կընստի բազաուրը. քաղաքը պարսպա-
պատ է, Վիսլա գետին վրա շինած. պզտիկ՝ բայց իրեն եօթը
արուարձաններով կամ վարըշներով մեծ է. աս տարիներըս
արուարձաններուն շորս դիացէն ցըցերով պատնէշ կամ մէ-
թէրիզ քաշեցին. բովը ունի մէկ մեծ դաշտ մը՝ ուր տեղ
կըլլայ իրենց ժողովը բազաուր ընտրելու, վրանի կամ շա-
տրրի տակ (էջ 71):

ԺԸ դարը փակվում է Յարութիւն իսլաֆայեանի ժամա-
նակագրութեամբ: Այս անձը Վանեցի է. ծնվել է 1775 թվին.
իր գրած «Ժամանակագրութիւն»-ը պատմում է 623—1800 թվե-
րի զեպքերը. ունի զուտ Վանի բարբառով գրված ամբողջական

հատվածներ, որոնցից դնում ենք այստեղ երեք լավագույն կտորները (տպված է Դիւան Հայոց Պատմութեան, հտ. ժ, էջ 123—152):

ՌՄԳ=1754 Ղարսեցի կոր Ուսուֆ փաշէն հետ կլում կովան. մտուցին սարէն. էլան մաշիք բոնեցին բուսքի առջև. յղեց հօշապայ մարդ իրեյ. ելան դէմ շի բողին. գիշերով գաղտ դոնէն ելա փախաւ (էջ 137):

ՌՄԴ=1755 մարտ 1. Գուրջի Հանի փաշէն իրեյ եկն Նորովանց նստաւ. քաղաք շի բողին. Իսայ աղէն ասքար առեց դէմ գնաց, կովան. շատ մարդ մեռաւ. գեղրանք գմէն փախան. ցանքեր կերուցին (էջ 137):

Ի նոյն թուին. Կայմաղ փաշէն թուղ ոչ ունէր. ի սորա աուրս մուֆթու թոռ ձեռ իսկեցին. երկրով գնացինք հայ տանիկ Մաղազանի օղլոնց իգին, ծառեր կտրեցին լամուկ փախաւ (էջ 143):

Արդեն մտնում ենք ժԹ դարը, որ աշխարհաբարի տիրապետութեան դարն է: Դարիս միայն առաջին երեսնամյակում (չհաշված պարբերական հրատարակութիւնները) լույս են տեսել քառասուն աշխարհաբար գիրք, որոնցից երկուսը արեւելահայ բարբառով: Հիմք է դրվում հայ լրագրութեան: Չհաշվելով Հնդկաստանի «Ազդարարը», որ հայոց առաջին թերթն էր (1794—96, գրաբար լեզվով), 1800 թվին Վենետիկում, Ն. Ղուկաս Ինճիճյանը հրատարակել է սկսում «Տարեգրութիւն» անուն հանդեսը, որ տարին մի անգամ էր լույս տեսնում և նույն տարում պատահած դեպքերի ամփոփումն էր: «Տարեգրութիւնը» շարունակվեց մինչև 1802: Այս թվին դադարեցնելով նրա հրատարակութիւնը՝ Ն. Ղուկաս Ինճիճյանը հաջորդ 1803 թվից սկսեց հրատարակել «Նշանակ Բիւզանդեանը», որ նույնպես տարեկան մի անգամ էր դուրս գալիս և որի հրատարակութիւնը տևեց մինչև 1820 թիվը: 1812 թվին, դարձյալ Վենետիկում, Պոլսի Արշարունյաց ընկերութեան նպատակով հրատարակվել սկսեց «Դիտակ Բիւզանդեան» երկշաբաթաթերթը, որի խմբագիրներն էին Ն. Գրիգոր վրդ. Գապարաճյան և ուրիշները: Այս թերթն էլ տևեց մինչև 1816 թ.: Այնուհետև մի քանի տարի հայերը զուրկ են լրագրութիւնից: 1822 թ.

Հնդկաստանում հրատարակվում է «Շտեմարան Օճանսփոհան» թերթը՝ Չուղայեցոց բարբառով:

1831 թվին Պոլիս էր եկել Ալեքսանդր Բլակ անունով ֆրանսիացին և սկսել էր հրատարակել Moniteur ottoman անունով ֆրանսերեն լրագիրը, իբրև Բ դուան առաջին պաշտոնական թերթը: Հաջորդ տարին սկսվում է նույն նպատակով «Թաքվիմի վաքայի» թուրքերեն թերթը: Խմբագրութիւնը որոշում է միաժամանակ հրատարակել նաև նույն թերթի հայերեն թարգմանութիւնը, անունը դնելով «Թաքվիմի վաքայի, լրոյ գիր», որ ապա դարձավ «Լրոյ գիր մեծի տէրութեանն Օսմանեանն»: Այս թերթը լույս էր տեսնում շաբաթական մի անգամ և պարունակում էր միայն տեղական լուրերը: Նա ապրեց միայն մի տարի (1832—3) և թեև բովանդակութեան կողմից շատ ոչինչ թերթ էր, բայց և այնպես վայելում է առաջին պոստահայ թերթը լինելու պատիվը:

Դնում ենք այս շրջանի զանազան հրատարակութիւններից և անտիպ գործերից հետևյալ նմուշները:

1801 թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿ ԱՇԽԱՐՀԻՄ

(Տետրակ հրատ. Մխիթարեանց)

(Քաղել եմ Ձերագիր «Ազգային դաստ.» գործից, էջ 101)

Մեծիս ատենը ինկիլիգները մէնգիլ¹ մը սահմանեցին հետստանէն ինչվան լօնտոա իրենց փայքահտը², որ 2 ամսրվան մէջ անդտար³ հեռու տեղ թուղք կհասցնեն. էն՝ առաջ պէնկալայէն և ան դիէրու երկիրներէն թուղքերը կը ժողվին պումպայի քաղաքը. անկէց վազուկ նաւ մը կրբերէ պասրա. անկէց թղթերը կուզան պաղտատ. պաղտատէն թաքաթ⁵ կրհանեն հազար դուռուշ վնարելով այնու բէութեամբ՝ որ 20 օրվան մէջ հասնի ստանպօլ. թէ որ 20 օրէն պակաս հասնի՞նէ, ամմէն մէկ աուր պակասին հարիրական դուռուշ աւելի կը վնարեն. ստանպօլէն սովորական մէնգիլը՝ կառնէ կը բերէ լօնտրա: Մարայ ծեծին ատեննալ իրենց փօրսգմուղ

1. Իջևան.

2. Մայրաքաղաք.

3. Այնչափ.

4. Ամենից.

5. Սուբհանգակ.

իմանէն⁶ մէնզիլ⁷ մը սահմանեցին ինչպան սիքէնտը մախսուս⁷ նաւ մը հանելով որոշեալ օրերը. հետեալ մէկ պէ լիկ⁸ ֆրիխաբա⁹ մը:

1805 թ.

ԳՊՐՈՒԹԻՒՆ ՆԱՄԱԿԱՅ

(Հեղ. Հ. Նդիա վրդ. Թովմանեան, Պոլսեցի)
սպ. Վենետիկ 1805

(Նամակազրուեցյան կանոններն ու նամակների օրինակներ են թե՛ գրաբար և թե՛ աշխարհաբար երկու լեզվով գեառ դեմ):

Ամենևին չէիք յուսար, որ այսպիսի թուղթը քեզ գրենք, բայց ինչպէսոր մենք բու վրադ այնպիսի բանը լսեցիք⁶՝ որ չէիք կարծեր, նմանապէս դունալ բու ծնողաց պէտք է որ լսես աւ խօսքերս՝ որոնցոր բու խղճմտաճօք քեզ հիմա արժանի կընանչնաս: Չե՞ս ամչնար, որ բոլորովին մէկ դի ձգելով մարդկային ամօրը և Ա՛յ վախը, բու կենակցութիւնդ ցոփ, անառակ և դատարկ մարդկանց հետ կընես. զարմանք չէ որ բոլորովին անամօք աներեսը եղբես. վասն զի առ բազմութիւնը անառակ մարդկանց՝ որ շորս դիդ առերես, ամմէն ամօրը մարդուս վրայէն կըվերցրնէ. անոնց հետ ուտելու խմելու և խաղալու հետ կըպարապիս. և ձեռքդ բաց ունեցածդ կըմսխես. քեզի պետք է որ առաջ նայէիր թէ որոնց հետ կուտես կըխմես կոր, քան թէ ի՞նչ կուտես կըխմես (էջ 283):

1806 թ.

ՆԻԻԹ ԲԺՇԿԱԿԱՆ

Հեղ. բժ. Յովակիմ Օղուլլուխեան
Վենետիկ 1806

Շատ սխմօղ է. անմիշտպէս վազած արիւնը կը ծրծէ, ու կը կարէ: Մեծելով, կամ տաք ջրի մէջ բըշելով կակըղցո՛ր. յետոյ դի՛ր արիւն վազած տեղը. կը սխմէ երակներուն բերանները. կը բանձրացրնէ արիւնը, և կը կաշի խ-

6. Նամականգրութեան.
7. Հատուկ.
8. Պետական.
9. Պատերազմական երկհարկանի նամ.

ցից վրայ. կը մնայ մինչև որ խոցը բարախ կապէ. յետոյ կիցնայ. գգո՛ւշ կեցիր, իյնալիցի՛ն՝ նորէն արիւնի կորուստ չի պատահի (էջ 107):

1814 թ.

ԴԻՏԱԿ ԲԻԻՉԱՆԴԵԱՆ

(Կիսամտեայ թերթ. Վենետիկ 1814)

Շէքէրին գորութիւնը՝ պղինձի ժանկի դէմ է դէի իմացվեցաւ մէկ փորձովմը: Մէկ տղամը խաղալու ատեն յանկարծակի կլեց երկու պղինձէ ստակ, ու մէկ քանի վայրկեան անցնելէն ետև՝ սկսաւ մէկ ստամոքսի ցամը այնպէս սաստիկ՝ որ տղան կըմարմրէրկոր: Ավէզնի դեղածախներուն մէկը լսելունպէս աւ դիպումաճքը, մէկէն տղուն 16 արէմ քելէ շէքէր կերցրնել տըվաւ, քիշը ժամանակ անցաւ շանցաւ ամմէն ցաւերը կըտրեցան, և առաջ որ տղուն երեսները կանանչցեր էր՝ շէքէրը ուտելէն ետքը մէկէն առջի գոյնը վրան եկաւ: Աս ստոյգ ու ճշմարիտ փորձէն ետև, ամմէն մարդ՝ առանց գիտնալու թէ որ մէկ ժանկրոտ նիւրմը ուտ կամ ժանկրոտ շուրմը խմէնէ՛ մէկէն պօլ շէքէր ուտէ, գէրէմ պիրապիր ան գէնիրին կտրող դեղնէ (1814 թ. № 16, էջ 146):

(Ինչպես նկատելի է, գրութեան մեջ իրարից բաժանված չեն մը, մէ, կոր, կը, պէս, է, որոնք կցվում են բուն բառին):

1819 թ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊՈՆՏՈՍԻ

(Հեղ. Հ. Միմաս վրդ. Բժշկեան, Տրապիզոնցի)
Վենետիկ 1819

Աս ծովուն անհաւասար խորութենէն, մեծամեծ սարերէն, և գետերէն կը հետևի որ ջրին բնբացքը ամէն տեղ միակերպ չըլլայ. երբեմն ներս, երբեմն դուրս կը վազէ. տեղ կայ դէպ ՚ի արևելք, տեղ ալ կայ դէպ ՚ի արևմուտք կը վազէ. գոր օրինակ Յոնօզ սարին առաջ դէպ ՚ի արևելք. բացը՝ դէպ ՚ի հիւսիս կը վազէ: Իսկ Ազախու ծովուն բերանը շատ անգամ դէպ ՚ի հարաւ կը վազէ. և ինչպէս որ հովը փոխվի՝ շուրս ալ կը փոխվի. որպէս ստուգեցիք (էջ 8):

1819 թ.

ԲՆԱԿԱՆ ՕՐԷՆՔ ԿԱՄ ԿՐԹՈՒԹԻՒՆ ԱՌ 'Ի ԼԻՆՆԻ ԲԱՐԻ ԵՒ
ՊԱՐԿԵՇՏ ՔԱՂԱՔԱՑԻ

(Հեղ. Հ. Մեսրոպ վրդ. Աղաչրագեան, Պօլսեցի)
Վեճեաիկ 1819

Դարձեալ, մեր բաղձանքը երջանկութեան բացորոշված շրլլալուն համար՝ շի շատանար շի կշտանար, որչափ որ ունենայ՝ այնչափ ալ ունենալ կուզէ: Արդ՝ այսպիսի անկուշտ իղձով շատ անգամ վտանգներու մէջ կիյնայ, մինչև իր հասարակ պահպանութենէն կրպակսի, կրմոլորի. ասոր համար հարկատր է մեզի շափատրելը մեր բաղձանքը, աս աշխարհքիս մէջը երջանիկ ըլլալու համար: Նակ հարկատր է արդարութեան կշոով վարիլը. որ մարդս ուրիշներուն ալ պահպանութեանը արգելք ու վնասակար շրլլայ (էջ 32—33):

1819 թ.

ԵՂԱՆԱԿ ԲԻԻՉԱՆԴԵԱՆ

(Խմբ. Հ. Ղ. վրդ. Իննիսեան)
Վեճեաիկ 1819

Գիտելիք գշրոյ և զսառուցէ

Իրեք կերպ վիճակի մէջ կրգտանք չուրը: Մէյմը՝ Հեղուկ, ինչպէս են աղբիւրները, գետերը, լիճերը, ևն: Երկրորդ՝ Հեղուկ առածգական, ինչպէս են գոլորշիք, ամպք, ևն: Երրորդ՝ հաստատուն կամ պինդ, ինչպէս է սառոյցը, որ է պուզ: Բարձր լեռներու վրայ եղած չուրէրը, և աշխարհիս հիւսիսային կողմի եղող չուրէրը, միշտ սառուցեալ են (պուզ կտրած), բայց հիւսիսային աշխարհներուն սառոյցը (պուզը) աւելի պաղ է, քան մեր աշխարհ եղածները: Ջուր մը ստանլու (պուզ կտրելու) համար՝ պէտք է որ իր տաքութենէ 60 աստիճան կորսնցրնէ, ասոր համար սառոյց մը թէ որ 60 աստիճան տաքութիւն գտնայ, նորէն հեղուկ չուր կըղառնայ (էջ 87):

1820 թ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի Գրիգոր վարժապետէ Փէշտիմալեան 1820

... Յիրաւի մենք ալ կը վկայենք թէ Գոլէնցի ստախօսները խաբեցին այն տիլ պիլմէզ՝ Եպիսկոպոսը, գէրէ՞ այսպէս կուրաբար գրուածը հասարակ մարդու պիլէ՞ թէօհմէթ՝ է, ո՞ր մնաց Հոովմայու աստուածաբան արքեպիսկոպոսի մը. լաքին՝ խիստ թաանհուպ՝ քաշելու մասլահաթ՝ չէ:

Ջէրէ՞ այս Գոլէնցիները՝ այնպէս անխղճմտանք և սուտ գրուց մարդիկներ են, որ իրենց բահաթուրյանը՝ և սէֆալից՝ համար՝ շատ անգամ Հոովմայու պապերը խաբեր են և կը խաբեն, և ծուռ դատումներ ընել կուտան*):

1822 թ.

ՇՏԵՄԱՐԱՆ ՕՃԱՆՍՓՈՒՅԱՆ

(Թերթ Հնդկահայոց, 1822, էջ 135—136)

Ապրիկէշն

Անցեալ երեկոյ արագի տեսի մին ազուս բոման էր, ոսնումն մին ձիք ոսկէ գնջիլ կէր կախ. բազում շքարչիք յետնէն վազ ին տալման, որ բոնին. ոմանց ձեռնումն բոն կէր, ոմանց թալակ, ոմանց հա, ոմանց շանկալ, ոմանց բրվանգ: Էս որսորդաց միշումն տեսի երկու հոգի հետևող որսին. էստոնց մինն ուր ձեռնումն ունէր սոպոն, միս ձեռնումն փուքս, միսն դատարկ գլուխն կոռ հետևում էր բնկերին միամիտ կերպիւ: Տեսածս զանագան գործիքն խասկացայ որ որսորդական գործիք էին. սակայն էս երկքինն ինձ անծանօթ արևաց. խաբքի դուք ինչ յուսով էք առաջաման. ասացայ փքսով քամի կտամ, սոպոնով սոպոն. էս գլխատր գործիք այ. զարմանք շի որ բոնվի: էս զարմանա-

1. Լեզու չիմացող.

6. Չարմանք.

2. Որովհետև.

7. Խնդիր.

3. Մինչև անգամ.

8. Հանգիստ.

4. Հանցանք.

9. Զվարեութիւն:

5. Սակայն.

*) Տես Ա. Գէրգէրեան, Պատմ. հայոց, Պոլիս 1871, էջ 145:

սրանչ բանն ինձ շուարացրէց. միւսիցն որ հետևում էր սրայ, կամեցայ նորին դիտումն տեսնել. ինքն ինչ յուսով էր առաջաման. շփոթվեց, ես ևս շփոթեցայ, ասել ինչ չկարացի:

Ես էս բազմութեան շանացողութիւնն տեսնելով գարմացաց մնացել ի. շի խասկաման զնշլի համար ին ուզում ազոաւին բռնել թէ ազոաւին ին սիրում, կամեման ին բռնել. մինչ էս մտացմանց միջումն ի, տխուր քնից վեր բայ:

էս արագն ինձ շատ մտատանջութեան մէջ ա գծել. ով որ մեկնի, շնորհակալ կլինեմ:

1824 թ.

ԴԱՐԱՊԱՏՈՒՄ

(Հեղ. Հ. Ղուկաս վրդ. Իննիներան)

(Վեհերիկ 1824, Դար ԺԸ, 1750—57)

Կարելի է որ՝ դուն զբայարտըված ես, կրգարմանս կընշգոհաս, աս ինչ մեծ խաչ եկաւ վրաս կըսես: Կարգա՛ս գրքիս մէջը փորթուկալին մէջի եղած զբայարտութիւնը մեծ մեծ ազնուական մարդիկնէրու վրայ, շատվորնէրուն վրայ, շարաշար պատիժ քաշելնէրուն վրայ, որին քշվել, որին մեռնիլ: Կարգա՛ւալլի աշխատասէր գորապետին զբայարտըվելով մեռնիլը. ան ատենը քուկին զբայարտըվիլդ՝ բայց առանց պատժի մնալդ՝ մէկ պատիկ բան մը պիտոր երևնայ. քեզի քաշելը հեշտ (խօլայ) կըլլայ:

Կարելի է որ՝ խիստ նեղութիւն ունիս տունէ տուն բարբարական (տէտիրկին) ըլլալով, տունդ կրակը երելով, տարիներով տուն մը քեզի յարմար շիգտնալով. ասիկայ իրաւ մեծ խաչ մընէ: Բայց աս ժԸ դարուս պատմութեանը մէջ կըկարդաս որ՝ նաև կայսրուհին մարիամ քերեզիման՝ որ քէնէ շատ վեր մարդ էր, աս բարբարականութիւնը քաշեց, քաղաք մը շունեցաւ հանգիստ գլուխը խօթելու (էջ 68):

1825 թ.

ԴԱՐԱՊԱՏՈՒՄ

(Հեղ. Հ. Ղուկաս վրդ. Իննիներան, Վեհերիկ 1825)

(Դար ԺԸ, 1757—1768, էջ 1—2)

Ամերիկային պատերազմին պատճառը, ու սկզբնաւորւթյունը. Աս տարի մեզի մէկ նոր տեսիլ մը կըցըցընէ աշխարհ. ձեռ մը կըբացվի ամերիկայ վարի աշխարհ ինկիլիզին ու ֆրանսոզին մէջ, ան վարի աշխարհին ձեռը պատճառ կըլլայ որ վերի աշխարհ երոպա տակնուվրայ կըլլայ, ա՛լ անլի սաստիկ ու երկան. ձեռ կըբացվի զանազան տէրութեանց մէջ. անանկով իրաւ կըլլայ ոմանց ըսելը՝ թէ ամերիկային գիտը անլի վնաս տըվալ երոպացոց քան թէ շան: Մարդուս ազանութիւնը ու սաստիկ շահասիրութիւնը պատճառ կըլլայ, ան բաննալ որ շահ պիտի բերէր, անլի վնաս բերելու պատճառ կըլլայ:

Մէկ ուրիշ զարմանալի տեսիլ մընալ ան է որ՝ կրտսեմաս մէկ պատիկ տէրութիւն մը՝ ինչպէս էր պրուշին տէրութիւնը. աս պատիկ տէրութիւնը ժխտը տարի հինգ մենձ տէրութեանց դէմ կըդնէ կըպատերազմի, նեմցէին, ֆրանսոզին, մոսկովին, շվեդին, ու գերմանական տէրութեան դէմ: Աս կըցըցընէ որ՝ աշխրհիս շատ բանը միայն բազմութեանով առաջ չերթար, հապա անլի պէտք է որ՝ գլուխ եղողը վարպետ ու յարմար ըլլայ ան բանին մէջ՝ որ բանին մէջն որ գլուխ է եղած:

1831 թ.

ՀԱՄԱՌՈՑ ՔՆՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱՄԱՏՈՅ ԵՒ ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ԿՐՈՆԻ

Յաշխարհաբառ լեզուի շարադրեալ յումեմնէ հոգեծիրէ
ի պէտս պարգամտաց

1831 ի Մոսկով

էնտոր համար օրէնքով յայտնի էլաւ մարդկանց՝ թէ մեղքի տակն են և մեղաց համար դատապարտուած են, և ապա նանանչեցին թէ ո՛րքան պէտք է որ փրկիչ գայ և նորանց ազատէ փրկէ, և մեղքիցըն սրբէ: Ապա էլ անլի

սկսեցին իրանց յոյսն էն նոր եկող փրկչին վերայ դնել. նորա գալոյն ցանկանալ և հաւատով նորա փրկութիւնըն բնդունել: Եւ որ էն յոյսն և հաւատքն օրէցօր հաստատվի նորանց սրտերումն, Աստուած շատ նշաններ տուաւ նորանց որ իբր պատկերով էն փրկութիւնըն նշանակեցին՝ յայտնեցին և մարդկանց միտքըն բերին: Ամէն կարգացողն որ աղօթքով և միտք անելով սուրբ գիրքն կարդումէ՝ շատ տեղ էն նշաններըն կրտեսնէ և նորանց նշանակութիւնըն կիմանայ և էնտուր համար էստեղ նորանցից մէնակ մին քանիսը կըլիշենք և կըմտածենք (էջ 24):

1832 թ.

ՇԱՏ ՀԱՐԿԱՌՈՐ ՀԱՐՅՄՈՒՆՔՆԵՐ ԱՄԷՆ ՄԱՐԴՈՅ ՀԱՄԱՐ

(Քարգմանութիւն, Շուշի 1832)

Մի թէ շանք ես անում որ Ա՛յ շնորհքըն գտնելոյ հրնարքներըն գործ ածես: Մի թէ սիրումես և պատու՛մես Տէրի օրըն, և սուրբ պահումես նորան: Մի թէ բող չե՛ս անում որ պղծվի նա ծուլութեամբ կամ ունայն՝ ուրախութեան հետեւելով և կամ աշխատանք անելով: Մանաւանդ՝ մի թէ համարումես՝ թէ քեզ համար մեծ պարտաւորութիւն և յատուկ առանձին շնորհք է՝ որ էն սբ օրըն գործ ածես քո հոգոյ և յախտեանական կեանքի համար, և նորանում մէնակ Ա՛յ ծառայութեանն պարապվիս (էջ 27):

1833 թ.

ԱՒԵՏԱՐԱՆԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԶՕՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

(Քարգմանութիւն, Շուշի 1833)

Շատ ժամանակ է, որ մենք Քրիստոնեայ անունով զարդարվումենք և մեր հաւատքն սուրբ գրք-քերի վերայ հաստատված է: Եւ թէ և ժամանակից ժամանակ շատ փիլիսոփաներ շանք արին որ սուրբ աստուածաշունչ գրքերի վարդապետութիւնըն ծոնն և քանդեն, բայց մենք մինչև հիմիկ աստուծոյ շնորհքովն հաստատ դաւանեցիք և պահպանեցիք նորան: Աստուածաշունչն միշտ էր մեր մանկութեան առաջնորդն և խրատողն, ծերութեան հաստատութիւնն՝ հի-

ւանդների մխիթարութիւնն և մեռնողների մին մէնակ յոյսն: Բայց դեռ շատ մարդիք կան, որ շանք են անում որ մեզ յետ դարձնեն էն երկնատր գանձիցն: Նորանք աւելի քարասիրտ բշնամի են, քան թէ նորանք, որ գրկումեն մեզ մեր օրվան կերակրիցն և հացիցըն: Ապա մի՛ թէ կամենում՞ք դուք և հենց կարօղ է՞ք ձեր աստուածաշունչ գիրքըն թողել: Դուք՝ որ էս ողորմելի կեանքումս մեղքով և ցաւերով լցված էք և շոտով մահի ձեռքն պիտի ընկնիք՝ կարօղ էք Աստուծոյ էն խօսքըն թողել (էջ 3—4):

1833 թ.

ՄԵՂՔՆ ԽԱՂ ԱՆԵԼՈՅ ԲԱՆ ՉԷ

(Քարգմանութիւն, Շուշի 1833)

Էս ի՞նչ զարմանալի աշխարհք է որ նորա մէջն մենք կենումենք: Լուսոյ իշխանն և խաւարի իշխանըն. բարի մարդիքն և շար մարդիքըն. սրբութիւնն և մեղքն՝ էղ ամէնին ծաղր անելոյ բան են շինում և ընտրվում: Բայց շատ վախենալի և վնաս տուող յիմարութիւն է՝ էնպէսի բաներով ծաղր անելն, որ շատ ահատր և ծանր են ինչու որ՝ սաղօմօնն սովորցնումէ. թէ յիմար են նբանք՝ որ մեղքով ծաղր են անում: Էս տեղ երեխաներ ենք տեսնում որ առաջ անխրատութիւն են. գործում, և յետոյ ծաղր են անում նորանով. վա՛յ, որ շատ անգամ էլ անօրէն ծնողքն սիրտ են տալիս նորանց էնպէս ծաղր անելոյ համար:

1833 թ.

ՔԱՐՈՉ ԱՒԱԿ ՈՒՐԲԱԹ ՕՐԻՆ ՀԱՄԱՐ

(Մեր փրկիչ Յիսուսի Քրիստոսի շարշարանաց և մահուան վերայ)

(Քարգմանութիւն, Շուշի 1833)

Քրիստոսումն սիրեցած եղբարք՝ որովհետև Քրիստոս փրկեց մեզ սատանայիցն և մեղքիցն և մահիցն և յախտեանական դատապարտութեանիցն՝ արժան չէ՛ մեզ որ էս ժամանակըս բաց թողենք և անցկացնենք առանց միտք անելոյ և մտածելոյ էն հոգի ապրեցնող փրկութեան համար՝ որ մեր

փրկիչ Յիսուս Քրիստոսն հենց էս ժամանակուսն իրան ան-
շափ գործենովն և ողորմութենովն կատարեց մեզ մեղա-
րիս և հենց իրան մահաբեր թշնամիքներին համար (էջ 1):

Ի՞նչ ընթացք է բռնում աշխարհաբարը այս շրջանում: Գրողների մեջ կամաց կամաց սկզբունք է դառնում այն միտ-
քը՝ թե լավ և գյուրահասկանալի աշխարհաբար ունենալու համար
պետք է նախ հրաժարվել գրաբար քերականությունից և ըն-
դունել աշխարհաբարի քերականությունը. երկրորդ՝ օտար
(ընդհանրապես թուրքերեն) բառերի տեղ դնել նրանց համա-
պատասխան հայերենը. երրորդ՝ խուսափել տեղական բարբա-
ռային ձևերից: Առաջին կետը շատ հեշտ գործադրելի մի միջոց
էր. բայց դա ծնունդ էր տալիս մի նոր հարցի.—Ո՞ր բարբառը
ընդունել հիմք՝ հետևելու համար նրա քերականության, եթե
այդ հարցը դրված լիներ մի այնպիսի ժամանակ, երբ հայ
ժողովուրդը ամեն տեղ մամուլ, դպրոց և գրականություն ունե-
ցած լիներ, իսկապես լուծումը շատ դժվար պիտի լիներ և տեղի
պիտի տար մեծամեծ վեճերի և տարաձայնությունից: Բայց այն
ժամանակ մամուլ կար միայն Վենետիկում, Պոլսում, Չժյուռ-
նիայում և Հնդկաստանում: Մյուսները, եթե գոյություն ունե-
նային էլ, շատ երկրորդական արժեք ունեին և սրանցից մեկին
կամ մյուսին հպատակ (այսպես Չուղա, Պետերբուրգ, Միլան,
Լիվոնո, Տրիեստ, Վիեննա ևն): Հոռոմի տպարանը փակվել էր
1784 թվին. Ամստերդամինը նույնպես. բայց Պոլիս և Չժյուռ-
նիա գրեթե միևնույն բարբառն ունեին. Վենետիկում նստած
հայերն էլ ամենամեծ մասամբ Պոլսեցի էին: Միտրանության
հիմնարկության առաջին 200-ամյակում Վենետիկը ունեցել էր
ընդամենը 277 միաբան, որոնցից 138 պոլսեցի: Այդ 277 միա-
բաններից որևէ գրական աշխատանք (մեծ թե փոքր) արտա-
դրողների թիվը եղել էր միայն 91, որոնցից 49 պոլսեցի, 8
տրապիզոնցի, 5 կարնեցի, 3 էնկյուրիցի, մնացյալները այլևայլ
տեղերից: Վիեննայի Մլխիթարյան միաշանություն համար նը-
ման վիճակազրույթուն չեմ կազմած. բայց այստեղ էլ բոլոր
նշանավորները պոլսեցի են եղել: Այսպես՝ պոլսեցի են Չալի-
յան, Պ. և Ղ. Հովնանյաններ, Գարագաշյան, Չազրճյան, Սպեն-
յան, Էմինյան, Գաթըրճյան, Այաբնյան, Տերվիշյան, Ազարյան:
Այսպեսով հարցը լուծվում էր ինքնին. Պոլսի բարբառը պիտի
հաղթանակեր առանց որևէ պատճառաբանությունից, լոկ տեղի և

հանգամանքների բերմամբ: Ավելացնենք նաև այն, որ գա-
վառների ժողովուրդն էլ շարունակ Պոլիս պանդխտելով, սովոր-
ում էր Պոլսի բարբառը: Վերջապես այն ուսումնասիր անձերն
էլ, որոնք ուզում էին գրականություն արարել, իրենց գա-
վառներում մամուլ չունենալու պատճառով, ստիպված էին
բնականաբար Պոլիս կամ Չժյուռնիա հաստատվել և հետևաբար
մայրենի բարբառը թողնելով՝ մշակել պոլսականը: Այսպեսով
ուրեմն Պոլսի բարբառի դիրքը՝ իբրև հիմք գրական լեզվի քերա-
կանության՝ վճռված էր:

Պոլսի բարբառի քերականությունը ընդհանրապես նույն է
Արևմտյան Հայաստանի և Փոքր-Ասիայի հայ բարբառների
քերականության հետ: Բոլորն էլ սահմանական ներկան և ան-
կատարը կազմում են կը մասնիկով, որով այդ ձևերը մասամբ
նույնանում են ապառնիի առաջին ձևի հետ (ի՞տարբերություն
հովկասի հայ բարբառների): Պոլսի բարբառի գլխավոր առանձ-
նահատկությունն է շարունակականի կոր մասնիկը, որ կա
նաև մի քանի Փոքր-Ասիական բարբառներում (Սեբաստիայից
Չժյուռնիա և Ռոտոսթո). բայց չի գտնվում Հայաստանի և հով-
կասի բարբառներում, որոնց համար նույն իսկ ծաղրելի է: Մեր
առաջին գրողները այս կոր մասնիկը պահում էին իրենց գրու-
թյանց մեջ. բայց հետո համարելով թուրքական ծագումից, այն
էլ վտարեցին, ի հեճուկս լեզվի պարզության և հսկառակ բար-
բառի պահանջներին: Բայց սրանով ավելի մոտեցան մի կողմից
գրաբարին, մյուս կողմից բուն երկրի բարբառներին:

Երկրորդ սկզբունքն էր օտար բառերի տեղ դնել նրանց
համապատասխան հայերենը:

Մենք գիտենք, թե ինչպիսի՞ անկաժույթյան էր հասած
հայերենը այդ ժամանակ.—Պոլսի և մի շարք վայրերի ժողո-
վրդական լեզուն արժանի չէր կրելու լեզու անունը: Նա մի
ժարգոն էր, թուրքական ժարգոն, որ զգալնք էր պատճառում
բանիմաց մարդկանց: Եւ շատերը այնքան էին խորշում նրանից,
որ ավելի լավ էին համարում խոսել օտար լեզվով (թուրքերեն
կամ ֆրանսերեն), քան թե խոսել այդ «ազգային» կոչված ժար-
գոնը: Արտաքուստ՝ անկաժույթյան գլխավոր նշանը օտար բա-
ռերն էին, որովհետև քերականության և շարահյուսության մեջ
օտարաբանությունը շատ աչք ծակող երևույթ չէ ընդհանրա-
պես: Պոլսի բարբառում թուրքերեն բառերի թիվն էր 4000,
ինչպես տեսանք դուռի իՐ, էջ 270: Գավառների հայերը գրեթե

սրա կեսն ունեին: Դրա համար էլ շարունակ ծաղրում էին պոլսեցոց խոսակցութիւնը. տարօրինակ և անախորժ էր նրանց համար լսել թուրքերեն բառերի այնքան հաճախակի գործածութիւնը՝ հայերեն գրվածքներում:

Այս պահանջին բավարարութիւն տալու համար գրողները ստիպվեցին թուրքերեն բառերի տեղ դնել հայերեն համապատասխան ձևերը: Սրա համար էլ երեք միջոց կար. առաջին՝ դիմել գրաբարին և այնտեղից փոխ առնել պատրաստ հայերեն ձևերը. երկրորդ՝ գովառական բարբառների մեջ փնտրել իրենց ուզածը. երրորդ՝ հնարել նորանոր հայերեն բառեր: Սրա համար հրատարակվեցին զանազան ժամանակ մեծ ու փոքր բառարաններ ու բառացանկեր՝ գրաբարից աշխարհաբար (հետոն առնելով նաև թուրքերեն ձևերը), և աշխարհաբարից գրաբար: Վերջին անունն է կրում Մխիթար աբբայի (Հին Հայկազյան) բառարանի Գ հատորը, որ մեծագուշն մասամբ թուրքերենից գրաբար բառարան է (Վենետիկ 1769): Բայց տպված բառարանների համեմատութեամբ որքան շատ էին անտիպ բառացանկերը, որ ամեն մի աշակերտ անձամբ հավաքելով կամ ուրիշներից օրինակելով կազմում էր իր անհատական գործածութեան համար, պահելով գրպանում միշտ և սովորելով շարունակ: Անհիշատակ ժամանակներից սկսած՝ այդ սովորութիւնը շարունակվում էր նույն իսկ իմ պատանութեան օրերին, 90-ական թվականներին:

Բառարան գրելու և բառեր «գոց անելու» ինչպիսի եռանդագին սեր կար ամբողջ Պոլսում՝ վերևից մինչև ներքև:

Բառերի ուսման հետ բառակերտութիւնն էլ լայն ծավալ բռնեց և հատկապես եվրոպական գիտական բառերը արագութեամբ հայերենի թարգմանվեցին: Վերացվեցին նույն իսկ այն մասնիկները, որոնք թուրքերենից անցել էին հայերենի: Այսպես հարցականի մի մասնիկը (կերմը մի, տեսմը մի=թրք. yedin mi, gördün mi), գերադրական ածականի է՛ն մասնիկը (է՛ն մեծ=թրք. én böyük): Քիչ առաջ տեսանք, որ շարունակականի կոր մասնիկը ջնջեցին. բայց նրա հետ ջնջեցին վերացրին լեզվից մինչև անգամ ստորադասականի Յէ մասնիկը (ուտեմ նէ «եթե ուտեմ»), սխալմամբ կարծելով թե այդ էլ է թուրքերեն: Այսքան խիստ վարվեցին նորագիշները հայ ժողովրդական լեզվի հետ:

Յույց տալու համար թե որքան խստապահանջ էին մեք

նորագիշները քերականական ձևերի ընտրութեան հանդեպ, հիշենք Պոլսի բարբառի «ձայներնիս, գլուխներնուս, պարտէզներնուս» ևն դերանվանական ձևերը, որոնք ինչպես հայտնի է, հայերեն ծագում ունին: Վերանորոգիչները այս ձևերն էլ սխալմամբ թուրքերեն համարեցին, որովհետև ձայներնիս=թրք. seslerimiz պատահաբար կրում էին նման վերջավորութիւն: Իրողութիւնն այն է որ հյ. -Յերնիս կազմված է հոգնակի ներմիջնադարյան հոգնակերտ նի+դիմորոջ ս հոդով. մինչդեռ թուրքերենը հոգնակի ler+դիմորոջ im+դերանվանական հոգնակերտ iz մասնիկներով: Այնպես որ համապատասխան ձևերն են հյ. ներ=թրք. ler, նի=iz և ս=im, որոնք ո՛չ մի կապ չունին իրար հետ և տարբեր շարքով դասավորված լինելու պատահաբար «կեղծեօք» ստեղծել են որոշ ձայնական նմանութիւն: Այս նմանութիւնից խաբվելով՝ լեզվի նորագիշները այդ ձևերը թուրքերեն համարեցին և գրական լեզվից դուրս վտարեցին (Այտն. Քնն. քեր. 268):

Հաճախ մտածում է մարդ, թե ինչո՞ւ էր այս տարապայման խստութիւնը օտար բառերի և ձևերի հանդեպ, որ լեզուն թուրքերեն բառերից մաքրելուց և հարազատ հայերեն ստեղծելուց հետո էլ չմեղմացավ և շարունակեց իր օտարամերժ ոգին նաև եվրոպական (ինչպես հաճախ ասում են «միջազգային») բառերի հանդեպ: Հայտնի է ամենքին արևմտահայ գրողների այն սկզբունքը, որով ամեն մի եվրոպական բառ, ինչ էլ ուզում է լինի, վտարվում է հայերենից. այսպես նույն իսկ «իօդ, խոր, էվոլուցիա, սոցիալիզմ» և նման միջազգային բառերը վտարված են արևմտահայ լեզվից և նրանց տեղ հնարված են «մանիշ, կանչոն, բարեշրջութիւն, ընկերվարութիւն» ևն: Ամբողջ աշխարհը ասում է «կիսօ (կամ սինեմա) և ուտիօ». իսկ արևմտահայերը նույն իսկ Յրանսիա և Ամերիկա նստած՝ գրում են դրանց փոխարեն «շարժանկար և ձայնասփիւռ»:— Դիվտորն էլ կոչվում է «խօսնակ»:

Այս տարապայման խստութեան պատճառը հենց պոլսահայ բարբառի փոխառութեանց չափազանցութիւնն էր: Եթե պոլսահայ բարբառը բավական չափավոր եղած լիներ իր փոխառութեանց մեջ, երևույթը այդ չափի ծակեր, և թերևս այդպես էլ մնար: Բայց երբ փոխառութեանց «չափը անչափութիւնն» էր, երբ հայերեն բառերը խեղդված էին թուրքական

բառերի հեղեղի մեջ, այդ երևույթը սարսափեցրեց բանիմաց մտքերը և չափազանցութունը ունեցավ իր էլ չափազանցութունը, ստեղծեց այն տարապայման խստութունը, այն բացարձակ օտարամերժ ոգին: Այնպես որ այսօր աշխարհում քիչ կա այնպիսի մի լեզու, որ իր սեփական տարրերով կազմված լինի, որքան արդի հայերեն գրական լեզուն, հատկապես արևմտահայ գրական լեզուն (Այտն. Քնն. քեր. 237):

Պոլսահայոց մոլութունը օտար բառեր թարգմանելու մեջ ունի նաև մի այլ պատճառ, որ կովկասի հայի համար գոյութուն չուներ: Դա պոլսահայ ազգաբնակչության դիրքն ու ոգին է շրջապատող ազգերի միջև:

Պոլսի ազգաբնակչութունը երեք գլխավոր տարր ուներ. թուրք, հույն և հայ: Հայերը վաղուց ձգտում էին ունենալու իրենց «Ազգային Սահմանադրութունը», որից հետո սկսվեց ազգային ինքնավարության հարցը: Թուրքերը ծաղրում էին միշտ հայերին. «Դուք ինչ ազգ եք, որ պահանջում եք ինքնավարութուն. դուք մինչև անգամ ազգային լեզու էլ չունիք. դուք լեզվով թուրք եք»:

Եվրոպական գիտական բառերի մեծագույն մասը հունարեն է. երբ հայերը ֆրանսերենից կամ անգլերենից փոխ առնելով ասում էին «գէոմէտրիա, գէոգրաֆիա, գէոլոգիա, արիթմետիկա, մաթեմատիկա, ֆիզիկա, ֆիզիոլոգիա, անատոմիա, տեխնոլոգիա, տեխնոն, ֆոնոգրաֆ, ֆոթոգրաֆ, լիթոգրաֆիա, տիպոգրաֆիա, թերմոմետր, ֆոսֆոր ևն», նույնները ծաղրում էին հայերին և ասում. «Ինչո՞ւ եք այդ բառերը գողացել մեզանից. այդ բոլոր բառերը հունարեն են»:

Ահա այս պատճառով հայերը ստիպված էին ինչպես մի կողմից թուրքերեն բառերը վտարել, նույնպես և մյուս կողմից եվրոպական բառերը թարգմանելով՝ հորինել շեղակա շափուկներ, աշխարհագրութիւն, երկրաբանութիւն, թուրքաբանութիւն, ուսողութիւն, բնագիտութիւն, բնախօսութիւն, անդամագննութիւն, նեոագիր, հեռախօս, ձայնագիր, լուսանկար, վիճակագրութիւն, տպագրութիւն, ջերմաչափ, լուսածին...»:

Այս բառերի մի մասը ստեղծված էր հին հայ գրականության բառազանձից:

Որովհետև ինչպես նորակերտ բառերը, նույնպես և զբար բառերը շատերին անհասկանալի էին, ուստի գրողները միշտ

միտին դնում էին նաև ուսման կամ թուրքերեն ձևը: Օրինակ վերի էջ 459 հատվածում ունինք

արուարձաններով կամ վարըշներով

պատնէշ կամ մէթէրիզ

վրանի կամ չատըրի

Այս ձևով գրողները ուսման թուրքախոս ժողովուրդին հայերեն էին սովորեցնում:

Երրորդ սկզբունքն էր խոստովել բարբառային ձևերից: Այս կետը կարոտ է առանձին քննության:

Քանի որ քերականութեան համար հիմք էր ընդունված Պոլսի բարբառը, սպասելի էր բնականաբար, որ բառերի ձևերն էլ Պոլսի բարբառից առնվեին:

Պոլսի բարբառը իր ձայնարանական դրությամբ բավական վաղնջական երևույթ ունի, կամ սովորական լեզվով խոսելով «մաքուր» է: Բառերի այնպիսի ձևափոխութուն, հնչույթների այնպիսի մեծ փոփոխութուն, ինչպես նկատում ենք օր. Ջեյթուհի, Վանի, Ագուլիսի, Մարաղայի, Ղարաբաղի ևն բարբառներում, չկան: Պոլսեցի ուսմանը արտասանում է «հաց, հաւ, ջուր, մարդ, կատու, շուն, տուն...» և ո՛չ թե «հօց կամ խաց, խավ, ձիւր, մօրթ, կատիւ, շօն, տօն կամ տիւն...»: Շատ կետերում նա ավելի «մաքուր» է նույն խի Նրեանի բարբառից, որ գիտունները համարում են «ամենամաքուր» բարբառը: Երեւանի բարբառով ասում ենք «քիր, լիս, հաղ, հաղալ, էթալ, պտի», իսկ Պոլսի ուսման բարբառով «քուր, լուս, խաղ, խաղալ, էրթալ, պիտի», որոնք ավելի մոտիկ և կամ մինչև անգամ նույն են զբարարի (նեո*): Չմոռանանք հատկապես էական բայի Գ դեմքի անախորժ ա, որի դեմ Պոլսն ունի մաքուր «է»:

Այնու ամենայնիվ, կան բառեր, որոնք կրում են բավականին ակնբախ ձևափոխութուն. ինչ. ականջ > անկաճ, անձրե > արգև, դժգոհիլ > ճուշգուհալ, անդամալոյժ > անդամալուճ ևն:

Ի՞նչն է դրան պատճառ, որ մեր գրողները չվերցրին այս ձևերը, նորից դիմեցին զբարբառին և նրա համեմատ «մաքուրեցին», այսինքն ձևափոխված բառերը իրենց հին մեռած ձևին վերածեցին:

Պատասխանը դժվարանում հիմ տալ:

* չմատ. Մ. Արեգյան. Հայոց հին գրակ. պատմ. Ա. էջ 87-ի անճիշտ ընկառնական Նրեանի բարբառի մասին:

Պատճառը թերևս գրողների հնասիրությունն էր, կամ այն գավառների ազդեցությունը՝ որոնք Պոլսից տարբեր և զրաբարին ավելի հարազատ ձևեր ունեին, և կամ թե մի անգամ որ օտար բառերի համար ընդունված էր զրաբարին դիմել, սովորություն եղավ նաև մյուս (ձևափոխված) բառերի համար էլ դիմել զրաբարին: Կարելի է որ այս երեք պատճառներն էլ գործակից հանդիսացան: Արդյունքն այն եղավ, որ մինչդեռ առաջ գրում էին այս կամ այն գավառական ձևով, հետո արդեն անցան բառերի զրաբար ձևերին:

Սա մի հետադարձ շարժում էր, լեզուների կյանքում չտեսնված մի երևույթ, մի ուսակցիա, որ Այտընյանը կոչում է «չետաշըջութիւն» (Քնն. քեր. 238): Բայց այդ հետաշըջությունը մեզ համար մի մեծ բարիք եղավ: Այդ միջոցով 1) մեր զանազան բարբառները գոնե գրականության մեջ ի մի ձուլվեցին և հայության երկու մեծ հատվածները միայն մի մի գրական լեզու ունեցան: 2) Ժամանակակից հայը չկտրվեց անցյալից. և Ե դարից սկսած մինչև այսօր՝ հայերեն բառերը գրական լեզվի մեջ անփոփոխ պահեցին իրենց պատկերը:—Գրաբար և աշխարհաբար ուղղագրությունը նույն է:

Որքան դժվար պիտի լիներ հին հայերենի ուսումը կամ նույն իսկ իրար հասկանալը, եթե Վանի կամ Ագուլիսի նման մի բարբառ ընդունված լիներ իբրև հիմք նոր գրականի, և քերականությունը փոխելուց հետո, նաև բառարանը կամ ուղղագրությունը փոխված լիներ:

Ո՞վ եղավ արդյոք այս գեղեցիկ նորմուծության հնարիչը և Երբ: Կարծիք կար որ առաջին անգամ լեզվի մաքրության վրա ուշադրություն դարձնողն եղավ Զմյուռնիայի անդրանիկ հայ թերթը՝ Շտեմարանը, որ ամերիկյան բողոքական միսիոնարների հրատարակությունն էր, և որի առաջին համարը լույս տեսավ 1839 թ. հունվարի 1-ին: Այս կարծիքը սակայն սխալ է: Շտեմարանից շատ առաջ, 1687 թվին Վենետիկ տպված Պարզաբանությունը արդեն շատ մաքուր լեզու ուներ. թուրքերեն բառերի թիվը խիստ քիչ էր նրա մեջ և հայերեն բառերն էլ բարբառային ձևով չէին, այլ զրաբար, ինչպես ընթերցողը կարող է տեսնել վերը մեզ բերված հատվածից (էջ 449): Շատ մաքուր է նույնպես 1791 թ. Վենետիկ տպված «Տեսութիւն համառօտ հին և նոր աշխարհագրութեան» Հ. Ղ. Ինճիճյանի, որից նույնպես մի հատված գրինք վերը (էջ 459): Վերջապես մա-

քուր և ամեն կերպով անթերի լեզու ունի Հ. Եղիա վրդ. Թովմաճանյանի (Պոլսեցի) «Դպրութիւն նամակաց», տպ. Վենետիկ 1805, որ պարունակում է նամակագրության կանոններն ու օրինակները՝ զրաբար և աշխարհաբար, երկու լեզվով դեմ առ դեմ (տես վերը էջ 462): Այսպես են դարձյալ Հովակիմ րժ. Օղուլլուխյանի «Նիւթ բժշկական», տպ. Վենետիկ 1806, Հ. Մինաս վրդ. Բժշկյանի «Պատմութիւն Պոնտոսի», Վենետիկ 1819 (տես վերը էջ 463), Հ. Մեսրոպ վրդ. Աղաչազյանի «Բնական օրէնք կամ կրթութիւն առ ի լինել բարի և պարկեշտ քաղաքացի», Վենետիկ 1819 (տես էջ 464) ևն:

Այսպես ուրեմն նորոգության հեղինակն ու ժամանակը կորչում է դարերի հնության մեջ և, ինչպես ասում է Այտընյան, «ոչ ու երբը բնականապես ընդհանրոյ վրայ կիյնայ, և չի կրնար իրեն որոշեալ հեղինակ կամ որոշ ժամանակ մը ցուցիլ» (Քնն. քեր. 249):

Ավելորդ չենք համարում իբրև նմուշ դնել այստեղ շատ մաքուր, բոլորովին արդիական աշխարհաբարով մի տապանագիր 1836 թվից (Շտեմարանից երեք տարի առաջ), որ գտել և հրատարակել է Ֆնտքլյան, Մասիս 1892 թ. սեպտ. 19:

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Սիրականեան Սարրաֆ նիկողոս աղայի դուստր

ԻՍԿՈՒՀԻ

Անօրէն մահուան ուժն ինձի հասաւ
Անուշիկ արևս ինձի շատ տեսաւ
Կաղաչեմ, Փրկիչս, այս խաւար բանտէն
Անմահ կեանքով զիս ողջնցուր նորէն
Հարս եկայ քեզ ես Յիսուս իմ Յիսուս
Պատիկ է տարիքս, բայց մեծ է յոյսս:

Նույն դժբախտ հոր երկրորդ գավակի տապանագիրն է հաշորդը, որ գտավ բանաստեղծ Միհրան Հովհաննեսյանը և հրատարակեց իր «Իրական կեանքի նուագներ» հատորիկի մեջ, Ա տպ. Պոլիս 1892, էջ 38 և Բ տպ. Պոլիս 1893, էջ 51:

Սիրականեան Սարրաֆ Նիկողոս աղայի որդի Եփրեմ

Երբ կը ծաղկէի
 Ես վարդի նման,
 Արմատէս չորցուց
 Չիս մահն դաժան.
 Մանուկ էի ես
 Ինք տարեկան,
 Կարճըցուց օրերս
 Խոթեց յայս տապան.
 Բայց շատ մի լաք դուք,
 Մնողք սիրական,
 Յիսուսն է յոյսս,
 Չի գրկեր գիս Ան:

Յամի Տեառն 1836 սեպտ. 30

Անա այսպես գրաբարը, ինչպես որ աշխարհաբարի ծնողն էր, այժմ էլ դարձավ նրա դայակն ու սնուցիչը: Բացվեց մեր առաջ հին գրականութան անբավ գանձարանը. առատութան մի անսպառ աղբյուր, որից նոր լեզուն կարող էր օգտվել ուզած չափով և ուղած ձևով: Բայց գրաբարը չէր արգելում ընդունել միաժամանակ նաև աշխարհիկ բառերը և անա նոր լեզուն ունեցավ իրար հանդեսը՝

Հիտակ—ուղիղ
 Հտկել—ուղղել
 աղւոր—գեղեցիկ
 աղէկ—լաւ
 դէշ—վատ
 վախ—երկիւղ
 մինակ—միայն
 մէկտեղ—միասին
 հիմա—այժմ
 հիմակու հիմա—առայժմ
 սորվիլ—ուսանիլ
 պոչ—ազի
 առեն—ժամանակ

ետք—յետոյ
 անկէ ետքը—այնուհետեւ
 թուշ—այտ
 խեղճ—թշուառ
 կարդալ—ընթեռնուլ
 մեռել—գի
 պոօշ—շրթունք
 դի—կողմ
 անանկ—այնպես
 ամէն մէկ—իւրաքանչիւր
 մէկիկ մէկիկ—մի առ մի
 ճար—հնար, միջոց

Երբեմն գրաբարի ձևը և աշխարհաբարի փոփոխյալ ձևը

կրկնակ կազմեցին և ստացվեց հոմանիշները կամ իմաստի երանգավորման մի նոր միջոց. ինչ.

շատանալ—շատնալ
 աւերել—աւրել
 սովորիլ—սորվիլ
 նեղանալ—նեղնալ
 համարել—համբել
 հաւանիլ—հաւնիլ

բանաւոր—բանոր
 աշակերտ—աշկերտ
 ճանապարհ—ճամբայ
 համարիչ—համբիչ
 վայելել—վայլել
 այլ—ալ (էլ)

Գրաբարից առնվեցին բազմաթիվ սասցվածներ, ոճեր, հոլովական ձևեր, նախդրավոր բացատրություններ ևն. օր.

Ժամանակաւ
 պատճառաւ
 հրապարակաւ
 հարկաւ
 շնորհիւ
 միով բանիւ
 մեծաւ մասամբ
 այնու ամենայնիւ
 ամենայն հաւանակա-
 նութեամբ
 ըստ մեծի մասին
 ըստ օրինի
 ըստ որում
 ըստ այսմ
 օր ըստ օրէ
 ըստ ամենայն հաւա-
 նականութեան
 ընդ սմին
 ընդ հուպ
 ընդ հակառակք
 այլ ընդ այլոյ
 մէջ ընդ մէջ
 ուսընդանութ
 ի բաց առեալ
 ի վերայ այսր ամենայնի

ի հարկէ
 ի յիշատակ
 ի պատիժ
 ի պատիւ
 ի փառս
 ի մի բան
 ի վիճակի
 յանձին, յանձինս
 ի դարձին
 ի պաշտօնէ
 ի նպաստ
 ի գործ դնել
 ի նկատի առնելով
 ի մասնաւորի
 ի հարկին
 բացէ ի բաց
 խառն ի խուռն
 վեր ի վայր
 առ այժմ
 առ հասարակ
 առ նուազն
 առ առաւելն
 գիրկընդխառն
 կոյրովուրայն
 հետզհետէ

Ճվելացնենք այս բոլորի վրա՝

1) Նորակերտ բառերի խոշոր բազմութիւնը. ինչ.

ածխավաճառ
արտօնագիր
արտօնատեր
դյուղախումբ
գյուղանկար
գործագուլ
դասադուլ
դեռափթիթ
երախտապարտ
երկաթուղի
զուգադիպութիւն
լիաշոգի
լուսամբոփ
խմբագրական
խմբագրութիւն
խմբանկար
խոշորացույց
ծաղկավաճառ
ծաղկատի
հանգիւղի
հացադուլ
հերակալ
հրատարակութիւն
ձկնկիթ
յուղանկար
ներկանյութ

ներկարար
նկարչական
շնչահեղձ
շոգեկառք
շոգեմեքենա
շոգենավ
շոգեշարժ
պայթուցիկ
պաշտօնագուրկ
պատկերագարդ
պարտաճանաչութիւն
պատվանշան
պարտամուրհակ
ջերմաչափ
ջերմաստիճան
ջրաներկ
սավառնակ
սավառնորդ
սեղմիրան
սիրասուն
վշտապատում
վայելչագրութիւն
տպարան
տպարանապետ
ցնորամիտ

2) Գավառական բառեր, որոնք նույնպէս ստացան կամ
կարող են ստանալ քաղաքացիութեան իրավունք. ինչ.

առնակավոր
առնկող
արտառոց
աքլոր
բւրեցիկ
գովական
գործարար

հավարույն
հավկուր
հենց
հորթարած
մեռելկոխ
նախրապան
նորելուկ

տարմանագող
դարսել
թանապուր
թործ
թուլբերան
կուփիկ
կաահել
կատիլ (քունը ևն)
կոս

շիշակ
պարկապուկ
պլթպլթալ
տարեց
տարիքավոր
տնեցիք
տնտնալ
փոշեկալել
փքփքոտիլ

3) Գրաբար բառեր, որոնք նոր իմաստ ստանալով մտան
աշխարհաբարի գանձարանը: Օր.

Դիտակ. հին լեզվով նշանակում էր «աչքի ընկած բան. 2
պահակ, հսկող. 3. թուղթ, նամակ»: նոր լեզվով դարձավ այն
գործիքը, որ հեռու առարկաները մոտեցնում է մեր աչքին:

Լուսանկար. հին լեզվով նշանակում է «լուսավոր, լուսա-
գարգ». այժմ նկարելու այն ձևն է, որ օտար բառով կոչվում է
«ֆոտոգրաֆիա»: Սրանից էլ կազմվեցին «լուսանկարել, լուսա-
նկարիչ, լուսանկարչութիւն, լուսանկարչական, լուսանկար-
չատուն»:

Պաստառ. հին լեզվով նշանակում է «աստառ, շորի կտոր». նոր
լեզվով դարձավ «թուղթ, որով ծածկում են սենյակի պա-
տերը, շպալ»:

Պաղպաղակ. հին լեզվով նշանակում էր «բյուրեղ». այժմ
ձանոթ օտոցրած քաղցրեղենն է (մարոմնի):

Պահպանակ. հին լեզվով «զինվորի մարմինը պաշտպանող
չրան. 2. համայնի». նոր լեզվով «այն թերթը, որ կազմարարը
գնում է գրքի և գրքի կողքի միջև, բնագիրը մաքուր պահելու
համար»:

Օղապարիկ. հին լեզվով ձիու համար գործածված մակդիր
է. իբր թե օդի մեջ սավառնող. արդի լեզվի մեջ մտավ սավառ-
նակի նախնական ձևի իմաստով:

Պահպանողական,
Ռամկավար. Այս երկուսը հին լեզվի մեջ սովորական
իմաստ ունին. առաջինը ածական է «պահող, պահպանող» իմաս-
տով, իսկ երկրորդը «ժողովուրդի կառավարիչ» իմաստով:
Երկուսն էլ երկու տարբեր քաղաքական պարտիաների կողմնա-
կիցներ էին ներկայացնում:

Անտիպ. հին լեզվով նշանակում է «անձև, անկերպարան»
այժմ եւր տպված չէ դեռ»:

Դյուրասար. հին լեզվով նշանակում է «որին հեշտ է համ-
բերել, որ հեշտ կարելի է հասկանալ»=դյուրահասկանալի»,
այժմ նշանակում է «այն որ ծավալը փոքր լինելով, կարելի է
հեշտութեամբ տանել»:

Ազատակամ. հին լեզվով նշանակում է «ազնվականի հա-
տուկ, համարձակ». նոր լեզվի մեջ «ազատամիտ գաղափարնե-
րի տեր»:

Այս երեքի մեջ մեծագույն բաժինն ունին նորակերտ բա-
ռերը:

Պետք չէ կարծել, թե նոր բառեր շինելու գործը միայն
անցյալ դարի երկրորդ կեսից է սկսում: Ընդհակառակը նա շատ
հին է: Հայ ազգայնութեան թշնամի, կաթողիկ կրոնի մոլեռանդ
քարոզիչ, Հոռոմի արբանյակ Վարդան Հունանյանը, որ Ա-
հաստանի հայերին կաթողիկ դարձրեց, ունի «Ձեռքածութիւն յեր-
կինս» վերնագրով կրոնական մի աշխատութեան, տպ. յԱմսդէ-
լոյումի 1671 թ.: Այս անպետք գրքի վերջում, էջ 291—343 կո-
մի հետաքրքրական լատինարան բառարան, ուր կգտնենք բոլոր
մաթիւմ նորակերտ բառեր: Ա. Մ. Գարագաշյանի «Արուեստ
ճարտարախօսութեան» գրքում, որ տպված է Վիեննա 1844 թ.,
իբրև հեղինակի նոր կազմած բառեր՝ կան մանրադէտ «micro-
scope» և հեռադէտ «telescope»: Ձկա մի բառարան (Ֆրանսե-
րենից, գերմաներենից, անգլերենից, իտալերենից և ռուսերե-
նից հայերեն), որի հեղինակը պարտավորված չլինի կազմելու
նորակերտ հայերեն բառեր: Ե. Տեմիրճիպաշյանը Պոլսում հրա-
տարակած իր փոքրիկ ֆրանսահայ գրպանի բառարանի առա-
ջաբանում խոստովանվում է, թե ինքը այդ գրքում կազմել է
1000 նորակերտ բառ: Այն բոլոր վեպերը, որոնք Պոլսում և
Ջմյուռնիայում հրատարակված են (մեծավ մասամբ ֆրանսե-
րենից թարգմանութեամբ), ունին իրենց մեջ հազարավոր նո-
րակերտ բառեր:

Տալիս եմ այստեղ մի երկու այս կարգի վեպերից քաղված
նորակերտ բառերի մի ցուցակ:

Ա. Տիւմա, Երեք հրացանակիրը, թրգմ. Մ. Մամուրեան,
Ա հտ. (Ջմիւռնիա 1871 թ.).

արևնակ (balcon) էջ 28

թթուիկ (piquette) 38

պարծունակ «պարծենկոտ» 3

քառուղի «խաչփողոց» 39

սրտովին 36, 42

մտովի 47

ինքնովին (ինքնիրեն ըսաւ) 48

որմածակ 50, որմնածակ 76

գրագող «նամակ գողացող» 50

տղայակեր «երեխա սպանող կամ ուտող» 63

դժբախտորէն «դժբախտաբար» 64, 68

կանոնապահ «կարգապահ» 64

հակադէմ «իրար հակառակ» 65

դիմահարել «դիմադրել» 71

տեսապէս «տեսականորէն» 71

մարմնովին «ամբողջ մարմնով» 71

սուսերամարտիլ «սրերով կռուել» 71

դինաթափ ընել 72

սրաշարժ «արագաշարժ» 72

դիմակալել «դիմադրել» 73

վերակեղծել «նմանեցնել» 73

ռազմապետ 73

բանացի «բանավոր» 82

որսորդապետ 84

սենեկասպայ 85=սենեկասպաս 92

ուժաթափ 87

շնչասպառ 87

նախասենեակ 88

զայրալիր 88

բազէակիրթ 89

անկողնասէր «անաչառ» 92

լիափ «լիարուռն» 99

կահեալ «կահավորված» 101

գոհարակուռ 102

պճնազգեստ 102

թարմաւէտ 103

նանրասէր 103

խղճավար (casuiste) 106

անցախօս (parola) 107

թխերես «թխադէմ» 124

բանահարել 131
արևակնեայ «փայլուն աչքերով» 133
լանջանակ «կրծքի զարդ կանացի» 143
ջրափ 159

սպասատուն 163
արդարել «արդարացնել» 169
բանտուր «բանտարկյալ» 184
նիրհեակ «ննջասենյակ» 190
ընթերցուհի 210

երջանկարար «բարեբախտարար» 217
անձնովի «անձամբ» 238

Անիծեալն, թրգմ. Մ. Մամուրեան, հտ. Գ. տպ. Չմիւռ-
նիա 1875.

ստազործ «կեղծարար», էջ 75
համաբառարան «encyclopédie» 81

• քայլարկ «այն պատվանդանը, որի վրա կոխելով կառ-
կամ տրամվայ ենք բարձրանում» (հտ. Բ. էջ 80):

Բազմաթիվ են այն բառերը, որոնք առաջարկվեցին այ-
կամ այն հեղինակի կողմից, գործածվեցին զանազան գրվածք-
ներում, շատերը մերժվեցին (այսինքն անգործածական մնա-
ցին), մինչև որ մեկը հաղթեց ու անցավ լեզվի զանձարանը

Բառերի այսպիսի պայքարի համար իբր օրինակ դնու-
եմ այստեղ Ա. Տիւմայի «Բօլին» վեպը, թրգմ. Գր. Մսերեան.
տպ. Չմիւռնիա, 1872: Այս գրքում ունինք հետևյալ նորակերտ
բառերը.

նորելիք, էջ 38=այժմ ասում ենք «նորաձևութիւն
moda», մինչ ավելի լավ պիտի լիներ նորոյք:
նորել «նոր ելած», այն է նոր դուրս եկած (եղանակ-
ներ) 42.

օթել 43=օթևանիլ.

մեքենօրէն 44=մեքենարար.

հրճիւ 44=հրճվանք.

մահավէր 50=մահացու վիրավորված.

նախերգ 70=նախերգանք

զուգերգ 72 (այժմ չունինք).

մատիտեալ 74 (մատիտով գրված).

այցատոմս 75=այցետոմս.

առաւօտեայ, օր. առաւօտեայ ժամը ինն էր 89. առա-
ւօտեայ ժամերս 96. այժմ չկա այսպիսի բառ. ասում
ենք առաւօտեան:

աշխատ չեղայ 90=չաշխատեցի.

ընդ վազ 90=վազելով.

իրութիւն 101=իրողութիւն.

Պայքարի մեջ պարտված բառերից հիշելու արժանի են՝

Կայանակեցիկ «poste restante, նամակ որ փոստում սպա-
սում է հանձնվելու համար տիրոջ» (Հաճեան, Բերայի գիշերներ,
Պոլիս 1885, էջ 400).—անշնորհք բառ, որի տեղ այժմ գործա-
ծում ենք ցպահանջ:

Ստոնոյշ. այս բառը հնարեց կարծեմ թովմաս Թերգյանը,
իբրև «մարոսնի». թեև կարճ ու ներդաշնակ բառ, բայց մըրց-
ման մեջ հաղթվեց և նրա տեղ անցավ պաղպաղակ, որ փոխ
էր առնված գրաբարից, իմաստի դուշգն ձևափոխությամբ:

Լուցափայտ. գերմ. Zündholzchen բառից թարգմանաբար
կազմված. մի ժամանակ գործածական էր, բայց հետո վերաց-
վեց և նրա տեղ տարածվեց լուցկի, որ նույնպես գրաբարից
փոխ առին՝ իմաստի փոքր ձևափոխությամբ:

Լուրջ բառարանագետի պարտականությունն է հավաքել
այս բոլոր տեսակի նորակերտ բառերը, հիշել նրանց հեղինա-
կը, գործածված տեղն ու ժամանակը, մի խոսքով կազմել հա-
յոց նորակերտ բառերի պատմությունը:

Ընդհանրապես մեր մեջ բացասական կարծիք է տիրում
նորակերտ բառերի հանդեպ, որոնք անարգական ձևով էլ կո-
չում ենք «թխած բառ»: Այս բանը ճիշտ է կայանակեցիկ կամ
նման բառերի համար, բայց սխալ է ընդհանրապես նորակերտ
բառերի մեծ մասի համար. Մեր գրողները բազմաթիվ ընտիր
բառեր կազմեցին գիտությանց բոլոր ճյուղերի համար, ճիշտ
ու ճիշտ թարգմանելով եվրոպական բառերը: Ահա մի համեստ
ցուցակ այս կարգի բառերի.

երկաթուղի - chemin de fer

ծանրաչափ - baromètre

ջերմաչափ - thermomètre

ուժաչափ - dynamomètre

երկրաբանություն - géologie

հնագրություն - paléographie

հնեաբանություն - paléontologie

մենագրություն - monographie

հեռագիր—télégraphe
 երկրաբանութիւն—géologie
 քննախոսութիւն—physiologie
 հոգեբանութիւն—psychologie
 տիեզերագրութիւն—cosmographie
 լուսատպութիւն—phototypie
 սղագրութիւն—sténographie
 կենդանաբանութիւն—zoologie
 հարթաչափութիւն—planimétrie
 մարդաբանութիւն—anthropologie
 ազգագրութիւն—ethnographie
 հանքաբանութիւն—minéralogie
 եռանկյունաչափութիւն—trigonométrie
 ջրածին—hydrogène
 թթվածին—oxygène
 ձևաբանութիւն—morphologie
 հյուսվածաբանութիւն—histologie
 մանրէ—microbe
 մանրէաբանութիւն—microbiologie
 ախտաբանութիւն—pathologie

Այս բառերը, ինչպես ասացինք, ճիշտ ու ճիշտ համապատասխան թարգմանութիւնն են եվրոպական բառերի: Բայց երբեմն համապատասխան հայերեն բառը մի քիչ շեղվում է բնատիպից՝ ավելի հաջող կերպով ներկայացնելու համար առարկայի պատկերը: Այսպես են՝

վիմատպութիւն—lithographie
 հեռախոս—téléphone
 ռազմազինութիւն—stratégie
 բուսաբանութիւն—botanique
 գեղեցկագիտութիւն—esthétique
 տնտեսագիտութիւն—économie
 վիճակագրութիւն—statistique
 ախտաճանաչութիւն—diagnostic

Հաճախ հայերեն բառերը իրենց կազմությամբ զերազանցում են համապատասխան եվրոպական բառերից: Օր.

Ֆրանս. restaurant նշանակում է «ճաշարան» և փոխ է առնված նաև անգլերեն լեզվի մեջ restaurant ձևով: Բայց ինչ կազմութիւն ունի այս բառը: Ֆրանս. restaurant դերբայ

կամ ածական է և նշանակում է «կազդուրիչ». բայց է restaurer «կազդուրել, վերակազմել». օրինակ՝ ասում են le vin est un bon restaurant «գինին լավ կազդուրիչ է»: Դառնալով գոյական, ստացել է «ճաշարան» իմաստը: Բայց «կազդուրիչ» և «ճաշարան» բաղական հեռու են իրարից. որքան ավելի լաւ է ճաշարան բառը:

Ֆրանս. uniforme ածական է և նշանակում է «միաձև, միատեսակ, միանման». իբրև գոյական նշանակում է որոշ խմբի մարդկանց միատեսակ զգեստը, որ ուռւերեն՝ ավելի կարճ ձևով ասվում է форма (նշանակում է պարզապես «ձև»): Սքանչելի է հայերեն բառը՝ համազգեստ և տեղիք չի տալիս ոչ մի թյուրիմացութեան:

Ֆրանս. concert նշանակում է «համամիտ, համակամ, համախորհուրդ լինել իրար հետ». միևնույն ժամանակ երաժշտական կոնցերտն է, ուր սակայն «երգ կամ նվագ» նշանակող ոչինչ չկա: Հիանալի է հայերեն համերգ բառը, ուր համ (ընդհանուր համաձայնութիւն, խումբ) իմաստն էլ կա, երգ (կամ նվագ) իմաստն էլ կա միաժամանակ:

Շանթարգել. Ֆրանկլինի հնարած այն գործիքն է, որով շնչերը պաշտպանվում են կայծակի (շանթի) հարվածից: Ֆրանս. ասում են paratonnerre, որ կազմված է parer «կասեցնել» և tonnerre «որոտում» բառերից: Անգլ. նույնը կոչվում է lightning-rod, որ կազմված է lightning «փայլակ» և rod «ձող» բառերից: Ռուսերեն էլ ասվում է громоотвод, որ կազմված է гром «որոտում» և отвод «հետ դարձնել» բառերից: Բայց շանթարգելը ոչ որոտումն է արգելում և ոչ փայլակը: Ավելի լավ է իտալ. parafulmine, որ կազմված է fulmine «կայծակ» բառից, Հիանալի է հյ. շանթարգել թե՛ իր կարճությամբ, թե՛ ներդաշնակությամբ և մանավանդ իմաստի ճշտությամբ:

Ֆրանսերեն ասվում է vermicelle, որ փոխ է առնված իտալերեն vermicelli հոմանիշից. Ֆրանսերենից էլ փոխ է առնված ուրիշ լեզուներով. ծանոթ ուտելիղենն է: Բուն նշանակութիւնն է «փոքրիկ որդեր»: Այսպիսի անախորժ իմաստ կարելի էր տալ որևէ ուտելիղենի...: Հայերենում (արևմտահայերէ) սարքեցին թելահայս, որ կազմված է թել և հայս «խմոր» բառերից: Բոլորովին ճիշտ բացատրութիւն, բայց և այնպես՝ չմնաց:

Ֆրանս. journal նշանակում է բուն «օրական» և հատկացվել է «օրագիր կամ լրագիր» իմաստին: Սա գեռ տանելի է,

Բայց նույնը դարձել է անգլ. journal, որ նշանակում է «չաբաթաթերթ, ամսաթերթ», և հակասում է «օր» գաղափարի: Հայերենը շատ հարմար ձևով կազմել է «օրագիր, օրաթերթ, լրագիր, շաբաթաթերթ, երկշաբաթաթերթ, ամսագիր, ամսաթերթ, հանդես» բազմատեսակ բառերը:

Ֆրանս. droit նշանակում է 1. աջ (կողմը), 2. ուղի, ուղղակի: 3. իրավունք: 4. իրավաբանություն, իրավագիտություն:—Այս չորս գաղափարները, որոնք շատ տարբեր են իրարից, արտահայտվում են ուրեմն միևնույն բառով: Ճարտրինակ է հատկապես վերջինը, որի դեմ հայերենը ոչ թե մի այլ միաժամանակ երկու բառ ունի, և երկուսն էլ ունին գիտական բառերի բնույթ, մինչդեռ ֆրանսերենը սովորական բառի ձև ունի:

Ֆրանս. vélocipède նշանակում է «հեծանիվ»: Անցյա դարի վերջին տասնամյակին հնարվեց ճամբորդական այս գործիքը: Ֆրանսիացի հնարիչը հնարեց նաև այս անունը, որ կազմված է երկու լատին բառերից և նշանակում է «արագ ոտք» Բայց ինչ անհարմար անուն: Այդ անունը կարելի էր տանապատակին կամ մի ուրիշ արագընթաց կենդանու: Գերմաներեն կոչեցին նախ Rad «անիվ», որ նույնպես անհարմար էր ավելի հարմար եղավ Fahrrad «ճամբորդելու անիվ»: Սակայն շատ ավելի հարմար եղավ հյ. հեծաճիւլ «մի անիվ, որի վրա հեծնելով գնում են»:

Շատ լավ են դուրս գալիս այն բառերը, որոնց երկրորդ եզրը միավանկ է. ինչպես պետ, պաշտ, կազմ, տիպ, մտ Սրանցից ունինք՝

Պետ. — կայարանապետ, ոստիկանապետ, ճաշարանապետ, դերասանապետ, արարողապետ, գրադարանապետ, մատենադարանապետ, միապետություն, մեծապետական, նահանգապետ, արհեստապետ, ոսկերչապետ, խմբապետ, խմբագրապետ ևն:

Պաշտ. — բնապաշտ, ձևապաշտություն, իրապաշտական, հոգեպաշտ, գաղափարապաշտ, անկապաշտ ևն:

Կազմ. — ամբակազմ, թուլակազմ, տկարակազմ, անկազմակերպ, կազմակերպիչ, կազմակերպչական, կազմարար, կազմատուն, կաշեկազմ, թղթակազմ, լաթակազմ, փառակազմ, կազմալուծել, կազմախոտություն, նրբակազմ, փափկակազմ ևն:

Տիպ. — տպածո, տպածոյաճառ, տպել, տպարան, տպարանապետ, տպագիր, տպագրական, տպագրատուն, ապակետիպ, խմբատիպ, զնկատիպ, տողատիպ, տպարանական, տպավորիչ, արտատպել, արտատպություն ևն:

Նաւ. — առագաստանավ, բեռնանավ, ականանավ, հակահանանավ, ցուկանավ, փոխադրանավ, ռազմանավ, շոգենավ, շոգենավակ, մարտանավ, հաժանավ, սուզանավ, օդանավորդ, նավախումբ, նավամատուց, նավային, նավաշինություն, նավաշինարան, նավապաշարում, նավավարձ, նավարան, նավարչավ ևն:

Ավելի կարճ և ավելի գեղեցիկ են դուրս գալիս բառերը, երբ երկրորդ եզրը միավանկ լինելով հանդերձ ձայնավորով է սկսում. ինչպես ախտ և երգ: Առաջինով ունինք բազմաթիվ բժշկական բառեր. ինչ. թոքախտ, այտուցախտ, գեղձախտ, հոգախտ, հյուծախտ, հյուծախտավոր, շաքարախտ, ծովախտ, շքանախտ, շնախտաբույժ, ֆրանկախտ ևն: Երկրորդից երգի կամ բանաստեղծության բազմաթիվ տեսակներ. ինչ. մեներգ, սիրերգ, ցայգերգ, թատերգություն, դուցազներգություն, հովվերգություն, քայլերգ, համերգ, խմբերգ ևն:

Երբ նկատի առնենք այս բոլոր տեսակի հին, միջին ու նոր, գրական թե զավառական բառերը, այն ժամանակ կարող ենք ասել, որ նոր գրական լեզուն իր հարստությամբ գերազանցեց նույն իսկ գրաբարը:—Ահա նոր լեզվի առավելությունը:

Այստեղ ուզում եմ կատարել հայերեն բառերի մի ամփոփ վիճակագրություն:

Մեր ամենից կատարյալ բառարանն է Վեր Բառագիրք Հայկազեան լեզուի», հտ. Ա և Բ, Վենետիկ 1836—7, աշխատադրություն հավիտենական հիշատակաց արժանի Հ. Գ. Ավետիքյանի, Հ. Խ. Սյուրմելյանի և Հ. Մ. Ավգերյանի: Այս աշխատությունը, որով հայ ազգը կարող է պարծենալ բոլոր եվրոպական առաջադեմ ազգերի առաջ, պարունակում է գրաբարի բոլոր բառերը անխտիր, մասամբ նաև միջին հայերենի բառերը: Ամեն մի բառի դեմ դրված են բացի հունարեն, լատիներեն, տաճկերեն համանիշներից, բազմաթիվ վկայություններ, որոնց տեղերն էլ նշանակված են ճշտիվ: Դրված են նաև նույն բառով կազմված բազմաթիվ ոճեր և դարձվածքներ: Ամբողջի համառոտությունն է Առձեռն բառարանը (առանց վկայությունների), որի երկրորդ տպագրության մեջ (1865 թ.), ըստ հրատարակիչների հայտա-

բարութիւնն, այսելաք բառս աւելի քան զհինգ հազար և ոճս քանից սազումս»:

Ինչպես մեծ Հայկազյանը, նույնպես և Առձեռնը, թեև սպազրական արվեստի կողմից անթերի գործ, բայց բառերի շարակարգութեան մեջ մի փոքրիկ անհարմար կողմ ունին: Այդ այն է, որ շատ անգամ միևնույն բառի տարբեր իմաստները կամ առումները իբրև տարբեր բառեր են գրված: Այսպես օրինակ՝ Առձեռնում կազմ ած. «պատրաստ» և կազմ գյ. «կազմուածք» իբրև տարբեր բառեր են հիշված: Ըստ այսմ երկերի անգամ են հիշված բառական, բիրեղ, բարեխօս, արդի, բոլորակ, սառչիմ, գերազանց, դիրահնար, դոնբաց, եկ, եղչիւր, երևոյք,—երեք երեք անգամ են հիշված դաշն, դէպ, եթէ, երբ, կշիռ, հուպ, մինչև, ուստի, շափ.—4 անգամ հիշված է արդեօք.—5 անգամ հիշված են վարել և յառաջ. իսկ զի բառը հիշված է 6 անգամ: Պատկանեմ և պատկանիմ բայերը երկու տարբեր տեղերում հիշված են երկու անգամ. և այսպես շատ օրինակներ:

Մի ուրիշ անհարմար կետ էլ այն է, որ միևնույն բառի տարբեր գրչութիւնները հիշված են առանց որոշ նշանի, և ընթերցողին է մնում զուշակել այդ: Այսպես օր. աստուածապետական և աստուածպետական, խնոյք և խնեոյք, բաժակ և բարժակ, բարէագգի և բարիագգի, նծոյգ և նշոգ ևն:

Դուրս գցելով այս տարբեր գրչութիւնները և տարբեր առումները, հաշվեցի Առձեռն բառարանը ամբողջ և գտա 56,410 բառ: Այս է մեր հին մատենագրութեան ամբողջ հարստութիւնը:

Եթե հանենք սրանից 5000 բառ, դուրս կգա 51,400, որ է նոր Հայկազյանի բառերի քանակը:

Հայերեն լեզվի առաջին և հնագույն վիճակն սրբայան շրջանի հայերենն է: Թեև Վիեննայի Միթարյանսը կազմել են մեսրոպյան շրջանի Համարարբառը (տես էջ 93) և գիտեն ճիշտ ու ճիշտ հայերեն բառերի քանակը այդ շրջանում, բայց որևէ տեղ ոչինչ չեն հրատարակած այդ մասին: Ես, օգտվելով նոր Հայկազյան բառարանի վկայութիւններից և բառարանի իմ օրինակի վրա, լուսանցքում գծեր քաշելով հաշվեցի նաև մեսրոպյան շրջանի բառերը և գտա 15,471 բառ:

Այս թիվը ճիշտ չի ներկայացնում մեսրոպյան շրջանի հայերենի հարստութիւնը: Եվ ահա թե ինչու:

1. Հայկազյան բառարանի հորինման ժամանակ գիտու-

թյան պահանջները տարբեր էին: Բառարանի հեղինակները թեև կարող էին, բայց ավելորդ էին համարած ամեն անգամ տալ բառի ամենահին (մեսրոպյան) վկայութիւնը. այնպես որ շատ անգամ պատահում են բառեր, որոնք թեև մեսրոպյան են, բայց Հայկազյան բառարանում մեսրոպյան շրջանից վկայութիւն չունին: Այսպես օրինակի համար մսիլ, մրսիլ Հայկազյանում վկայութիւններ ունին ՅՏ. կթ. Սարգ. յուդ. բ և Ոսկիփ. անուններով. բայց չկա հնագույն մեսրոպյան վկայութիւնը՝ Ոսկ. փիլ. 456. «Եթէ ցուրտ մսէր զմարմինն»: Եպերանք բառի դեմ կան վկայութիւններ՝ ՅՃԽ. Փիլ. իմաստ. և լին. Նար. 1մբ. պտրգ. անուններով. ոչ մեկը մեսրոպյան չէ. մինչդեռ այդ շրջանից ունինք Վեցօր. 48 (Արդ որչափ պատճառս եպերանաց պահեստիւր յինէն). Եփր. ել. 191 (Բարձցէ զեպերանսն յայնմանէ, որ արդարութեամբն ինու ըեսաց զվրէժն). Թգ. 431: Պարտուակ բառի դեմ ՆՀԲ ունի 7 վկայութիւն (Պրպմ. Նիւս. Պիտ. Բրս. արբեց.) բայց պակասում է Կոչ. 228 մեսրոպյան վկայութիւնը (Կաւ զանգեալ՝ աչաց պարուտակս և առագաստս և ճաճանչս ծնանէր): Այսպես են նաև սահմի, քաղոց, օշինդր, պար (մեղվաց), բաջաղիլ, բազմահոյլ, եթեր, դառնաթոյն, խայտարետուրիւն, կրան ևն ևն*):

2. Կան մեսրոպյան բառեր, որոնց վկայութիւնը գիտե Հայկազյան բառարանը, բայց այլ վկայութիւնը դնում է ոչ թե այդ բառի, այլ մի ուրիշ բառի տակ: Օր. միախորհ վկայված է միաշունչ բառի տակ (Ագաթ.):

3. Կան բառեր, որոնք մեսրոպյան շրջանից վկայութիւն չունին, բայց նրանցից կազմված մի ուրիշ բառ վկայված է: Օր. մսավանառ վկայված չէ, իսկ մսավանառանց վկայված է (Եզնիկ). յեսան չէ վկայված, յեսանասուր վկայված է (Եզնիկ. Ե. 1): Այսպես են նաև շոայլ և շոայլամիտ, ոզոր և ոզորածեծ, ոջիլ և ոջլակեր, որջլաից, մսակեր և մսակերութիւն, տանձ և տանձի, վաղր և վաղրաւոր, որքին և որքինոտ, միաւորական և միաւորականութիւն, միատուն և միատնութիւն, սերեկ և սերեկիլ, խազմ և խազմադործ, խազմարար, դեղին և դեղնութիւն ևն: Մինչև իսկ մեսրոպյան շրջանից վկայված է մտայօժարութիւն, բայց բնավ չէ իսկ նշանակված մտայօժար:—Ձևական ճրչութիւնը պահելու համար ես իմ հաշվի մեջ առել եմ միայն այն բառերը, որ ՆՀԲ նշանակել է իբրև մեսրոպյան:

* Ցեա իմ Արմ. բո. հտ. է, էջ 6:

4. Ընդհակառակը ՆՀԲ իբր մեսրոպյան է վկայում մի քանի այնպիսի բառեր, որոնք այնպես չեն. ինչ աստուածային, գերա-հրաշ, կատառօթիւն են: Նախորդ պատճառարանութեամբ ես առաջին երկուսը հաշվել եմ, բայց դուրս եմ վտարել երրորդը, որ հայտնապես արարներն բառ է և գործ չունի Ե դարում:

5. Վերջապես 15,471 թվի մեջ չեմ մտցրել այն բառերը, որոնք ներկայացնում են միայն գրչութեան տարբերություն: Այսպես չեմ հաշվել արժիւմ և արժուութիւն, քանի որ հաշված եմ ապշիւմ և ապշութիւն:

Բայց այս չէ հայերենի ամբողջ հարստութիւնը:

Զանազան պատճառներով Հայկազյանի հեղինակները չեն կարողացել բառաքաղել բոլոր հայերեն երկերը: 1) Դուրս են մնացել նախ այն բոլոր երկերը, որոնք դեռ չէին հայտնաբերված այն ժամանակ: 2) Նույն իսկ ծանոթ երկերից չեն դուրս բերել այն բառերը, որոնց ընթերցվածը անստույգ կամ իմաստը անհայտ են համարել: 3) Օգտագործված չեն մեր 25,000 ձեռագրերի հիշատակարանները և 2000-ից ավելի արձանագրութիւնները:

Իմովսանն լրացնելու համար այս թերին, ես կարգացի ամբողջ մեր տպագրչալ մատենագրութիւնը և հավաքեցի 2000 բառ, որ մուծել եմ իմ Արմատական բառարանի մեջ «նորագիտ բառեր» անունով: Բայց այս գործը պետք է դեռ շարունակել և հավաքել մնացյալները*): Հիշենք օր. մատնագրիկ «թոյլ, սկար» (գրիչ). յիշատ, 1575 թվից (Թորոս աղբ. Բ. 258), ջրակորոյս Միխ. ասոր. Ա. տպ. 465=Բ տպ. 464, քերականագր Վլավ շքամված» Միխ. ասոր. Բ տպ. 497:

Պետք է հավաքել միջին հայերենի բառերը, ինչ որ շատ փոքր չափով է միայն կատարված:

*) Լսել եմ որ վենետիկի Միխայելյանները պատրաստել են տպագրութեան համար Առձեռն բառարանի երբորդ հրատարակութիւնը, ուր ավելացրել են 25,000 բառ: Լսել էի նաև, թե այս հրատարակութիւնը պատրաստողը եղել է Ալիշանը: Բայց թե ինչ ենք կարողում Ն. Ս. Սրեմեանի կազմած «Վենետիկցիութիւն» շխատութեան մեջ (տպ. Վենետիկ 1902, էջ 170). «Առձեռն բառարան.—Մանօթ Առձեռն բառարանէն պակաս(ող) հազարուր բառեր հաւաքած է (Ալիշան) իր ամենօրեայ կորագացած, քննած և ուսումնասիրած, պատմական, կրօնական, և այլ անհամար անտիպ նախնեաց գործերէն: Պակասուոր կը համարուի այս գործս, այն պատճառաւ, որ Ն. Ալիշան իր հաւաքած ամէն բառերու աղբիւրներն չէ նշանակած»:

Վերջապես պետք է հավաքել հայերենի նորակերտ բառերը, որոնց ճիշտ թիվը հայտնի չէ: Իմ Արմատական բառարանի մեջ ես հավաքել ու մուծել եմ միայն 4050 նորակերտ բառ. այս թիվը շատ ու շատ մեծանալու կարիք ունի:

Սակայն գրաբարի 56,410 բառերը բոլորն էլ ընդունված չեն մեր նոր գրական լեզվի (աշխարհաբարի) մեջ: Չեն գործածվում պարսկական, հունական, ասորական և մանավանդ երբայական և արաբական ավելորդ փոխառութիւններ: Չեն գործածվում բազմաթիվ հնացած ձևեր և ճամարտակ ածականներ, որոնք սիրում էին գործածել մեր միջնադարյան հեղինակները: Դուրս հանելով Առձեռն բառարանից այս բոլորը, գտա, որ Առձեռնի 56,410 բառերից աշխարհաբարում գործածական են միայն 17,488 բառ, որ անում է գրաբարի բառամթերքի 31%: Սրա վրա պետք է ավելացնել 1) նորակերտ բառերը, 2) զավատական այն բառերը որոնք ընդունված են արդի գրական լեզվի մեջ և վերջապես 3) այն օտար բառերը, որոնք նույնպես քաղաքացիութիւն են ստացած մաքուր գրական աշխարհաբարում: Այս երեք կարգի բառերի քանակը դեռ հայտնի չէ: Նրանց բոլորի գումարը պիտի ներկայացնի աշխարհաբար գրական լեզվի բառամթերքի էլ գումարը*):

Այսպես հայերենը նորոգելուց և կազմակերպելուց հետո, հարկավոր էր այս նորակերտ լեզուն տարածել վերևից ներքև և ուսմիկ ժողովուրդի էլ սեփականութիւնը դարձնել:

Ինչ միջոցի դիմեցին մեր գործիչները սրա համար: Լեզվի տարածման միջոցներն եղան դպրոցը, լրագրութիւնը, թատրոնը, երգերն ու վեպերը:

Ազգային ժողովրդական դպրոցների հիմնադրին է եղել

*) Մեր Ակադեմիայի Լեզվի ինստիտուտը կազմում է արդի գրական հայերենի ամբողջական բառարանը: Առայժմ հավաքել են 90,000 բառ, որից պետք է դուրս հանեն 1) խորթ կամ անգործածելի գրաբար բառերը, 2) անտիր նորակերտ բառերը և 3) քաղաքացիութեան իրավունք չստացած օտար բառերը: Այս աշխատանքը կատարելուց հետո միայն կարող պիտի լինենք իմանալ արդի հայ գրական լեզվի բառերի ճիշտ թիվը: (Շուրջ 60,000):

Շնորհք ամիրան, որ 1790 թվին առաջին անգամ բաց է արել Պոլսի գանազան թաղերում առաջին հայ վարժարանները և մի դպրոց էլ աղջկանց համար: Այս բոլորը իր ծախսով: Այնուհետև այնպես արագ տարածվեց ուսումնական գործը, որ Պոլսի բոլոր 40 հայաբնակ թաղերը ունեցան մի երկուս, կամ մի քանիսն էլ արական և իգական երկու դպրոց: Այնպես որ ժողովրդում Պոլսի հայոց թաղային դպրոցների գումարը 53 էր, չհաշվելով մասնավոր դպրոցները և երկու կամ երեք միջնակարգ դպրոցները:

Հրագրությունը մեծ զարկ է ստանում: Սկսելով 1840 թվից, տարուց տարի շատանում են հայ թերթերը թե՛ Պոլսում և թե Չամբուղիում: Նրանք աշխատում են հետզհետե մաքրել, պատրաստել ու տարածել նոր գրական լեզուն: Սրանցից նշանավոր են՝ Չամբուղիի Արշալոյս Արարատեանը (1840—1886), եվրոպական անվան արժանի մի թերթ, որ առատ թղթ-թակցություններ ուներ ամեն մի հայ գաղութից, սկսած Զինաստանից մինչև Ավստրիա, և այս բոլոր երկիրների մեջ ցրված հայոց համար իբր մի կապ էր ծառայում.—Վենետիկի Բազմավէպը (1843-ից մինչև այժմ),—Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթ Սուրհանդակը (1846), որ ապա կոչվեց Հայաստան և վերջն էլ Մասիս: Այս վերջինը (Մասիս) հայ մտքի մեծագույն աշխատանոցը դարձավ. այնտեղ ստեղծվեցին, առաջարկվեցին, քննադատվեցին, կազմվեցին և քաղաքացիության իրավունք ստացան բազմաթիվ հայերեն նոր բառեր, գիտական, գրական, ուսումնական ու հասարակական կյանքի վերաբերյալ բառեր, պաշտոնական լեզվի դարձվածքներ, և եթե այսօր հայերս ունինք քիչ թե շատ մշակված լեզու, կանոնավոր գիտական ու պաշտոնական լեզու, ապա այդ բանում զգալի դեր է խաղացել «Մասիսը»:

Թատերական ներկայացումները սկզբում տեղի էին ունենում շատ սահմանափակ շրջանում, այս կամ այն հարուստի տանը՝ իբրև ընտանեկան զվարճութուն, կամ դպրոցներում՝ իբրև աշակերտական զրոսանք: 1820-ական թվերին Տիգրիսում, Ներսիսյան դպրանոցի դահլիճում կազմակերպվել են հայերեն ներկայացումներ: 1836 և 40-ական թվերին արդեն կանոնավոր ներկայացումներ էին տեղի ունենում նույն քաղաքում (ա՛ն՝ Տեղեկ. Ակադ. 1946, № 2, էջ 90—91): Պոլսում առաջին կանոնավոր հայկական թատրոնը հիմնվեց 1858 թ.: Այնուհետև թատ-

րոնը դարձավ հայ աշխարհաբար գրական լեզվի տարածման զիջավոր միջոցներից մեկը՝ հատկապես մեծ քաղաքներում:

Հետաքրքրական է երգի դերը: Սկզբում հայերը երգում էին կամ եկեղեցական գրաբար շարականներ ու տաղեր և կամ թուրքերեն աշուղական երգեր: Գյուղերում կային նաև հայերեն բարբառով ժողովրդական երգեր ու պարեր, շատերը զուտ հայկական եղանակներով: Սրանց հնագույն նմուշ է Կոունկը, որ 300 տարվա կյանք ունի: Գրական աշխարհաբար լեզվով երգը սկսեց 19-րդ դարի կեսից: Պոլսում, մեր բանաստեղծները և գրական գործիչները սկսեցին գրել «Ազգային երգեր», որոնց եղանակները հորինում էին հայ երաժիշտները, երբեմն էլ փոխ էին առնում եվրոպական ժողովուրդներից: Գյուղացի և աշակերտության միջոցով ազգային երգը մտավ տուն և հայ ընտանիքների սիրելի զրոսանքը դարձավ:

Ինչպես հայերեն բառ սովորելը մոլություն էր դարձել Պոլսում և ամեն աշակերտ ծոցին ուներ իր բառատետրը, նույնպես եղավ և երգը: Ամեն աշակերտ ուներ իր ծոցի երգաբանը: Երգում էին թե արևմտյան և թե արևելյան գրական բարբառով երգեր: Ահա իմ պատանեկության ժամանակի սովորական երգերի ցուցակը.—

Ակոռիին մեծ կարասին բոլորտիքն են բազմեր

Անի քաղաք նստեր կուլայ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ.

Ազատն Աստուած այն օրից

Առ ընկալ ի գիրկդ մայրդ Հայաստան

Արիք, Հայկազունք, յառաջ ընթանանք

Ախ Հայաստան, սիրտս ու հոգիս

Առտուն կանուխ թէ ելլենք, քաղցր վաստակը դադարին,

Գիշեր ցորեկ կը հառաչեմ ախ օրիորդ քու սիրոյդ

է՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից

Թէ իմ ալևոր հերքս սենային

Թէ իմս հայրենեաց քնար սգաւոր

Թէ հայրենեաց պսակադիր Գողթնի քնարք լսեր են

Ի բիւր ձայնից ընութեան շքեղ

Իմ հայրենեաց հոգի վարդան, հոգիս հոգուդ եղնի զուրպան.

Իմ սիրելի զաւակունքս կթափառին օտար աշխարհ

Իմ սիրելի զաւակունքս կթափառին օտար աշխարհ

Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու գարնան սիրուն թռչնակ

Կոունկ, ուստի կուգաս, ծառայ եմ ձայնիդ

Հայաստան, երկիր գրախտավայր
Հայրենեաց սիրով վառված վեհ սրտեր
Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից
Ձայն տուր, մզ ծովակ, ինչ՞ու լուռւմ ես
Մայր Արաքսի ափերով

Մնացես բարեաւ, սէր իմ սէր, հրաւէր մարտին որոտայ
Ո՛հ ինչ անուշ և ինչպէս զով
Ո՛վ մեծաքանչ դու լեզու
Ո՛րն է աշխարհ Հայաստան,
Ցուրտը փչեց, ձմեռ սաստիկ

Անցնում ենք վեպին: Մեր գործիչները տեսան, որ կրոնական, բանաստեղծական, ուսումնական և առհասարակ միջակից բարձր նյութերը հետաքրքրական չեն ժողովրդի համար: Հասարակ ժողովուրդը սիրում է վեպը, գրական արժանիքից թերևս դուրի, բայց արկածներով, դավադրութեան, դողութեան, հրդեհի և սպանութեան դեպքերով լի վեպը, որ ինքը իրան է կարդալ տալիս: Եվ սկսեցին թարգմանել ֆրանսիական սովորական վեպերը: Մի ամբողջ գրականութիւն հայերենի վերածվեց: Ժողովուրդը կարդաց, լափեց այդ վեպերը անհուն հետաքրքրութեամբ. ընթերցանութիւնը պահանջ դարձավ և այդ ընթերցասիրութեան արդյունքն եղավ աշխարհաբար գրական հայերենի համատարած ուսումը:

Առանձին ուսումնասիրութեան նյութ է կազմում այս կարգի վեպերի թարգմանութեան և թարգմանիչների պատմութիւնը: Հիշենք նշանավոր թարգմանիչներից Իւթիւճեան, Տեսեյան, Զիլինկիրյան, և բոլորից ավելի Մամուրյան: Այս վերջինը իրավամբ գրավում է այդ թարգմանիչների մեջ առաջնակարգ տեղը: Ինքը միայն ավել է ժողովուրդին 58 հատոր թարգմանութիւն, որոնց ցանկը հետևյալն է:

- Վալտեր.—Չաղիգ, Ֆիլիին, Միկրո-Մեղաս, Ժան և Կոլէն, Ճերմակ ու սև.
- Գէօթէ.—Վէրթէր (2 տպ.),
- Բոմոն.—Մենաստանի աղօրին:
- Բոմարշէ.—Սէվիլի սափրիչը:
- Էօմէն Սիւ.—Գաղտնիք Բարիգի (8 հատոր),
- Ալ. Դիւմա.—Երեք հրացանակիրք (3 հտ.), Բասն տարի ետք (4 հտ.), Պրաժլոն Դերակոմս (12 հտ.), Ամօրի:

Վալտեր Սկոտ.—Իվանօէ (3 հտ.):
*** արբա.—Անիծեալն (4 հտ.):
Իկ. Մարվէլ.—Ամուրիի մը երազները:
Ժիւլ Վէռն.—Աշխարհի շրջանն 80 օրուան մէջ, Սորհրդաւոր կղզի (3 հտ.):

Շանֆլէօրի.—Մանկտիք:
Փ. Գլասկօ.—Սիպերիականի մը յիշատակք:
Օնէ.—Կարապի երգը:
Կորբէն.—Բերուզակ:
Արաբական հազար ու մէկ գիշերներ (6 հատոր):
Մյուս շատ նշանավոր գործերից են Վիկտոր Հյուգոյի Քշմանները (10 հատոր), որ թարգմանեց Զիլինկիրյանը (Չմյուռնիա) և Էօմէն Սյուրի Թափառական հրեան (4 հատոր), որ թարգմանեց Իւթիւճեանը (Պոլիս):

Գրական այն շարժումը, որ նկարագրեցինք, մեծ մասամբ կատարվում էր մեր արևմտահայ հատվածի կողմից. բայց նրան անմիջական բաժնեկից էր նաև մեր արևելահայ հատվածը: Այն ժամանակ մեր երկու հատվածների միջև չկար այնպիսի անջրպետ, ինչպիսին առաջացավ շատ ավելի ուշ՝ Գալիցիայան և ռեժիմի ժամանակ: Արևելահայերը երկար ժամանակ օգտվեցին արևմտահայոց գրականութեամբ, գործածելով այն թերթերն ու գրքերը, որ հրատարակվում էին Պոլսում, Չմյուռնիայում կամ Վենետիկում, մեծ մասամբ գրաբար: Ռուսահայոց առաջին զարոցը բացվեց 1810 թվին. դա Աստրախանի Աղաբայան վարժարանն էր, որի վարիչն ու հայկարան վարժապետն էր պոլսեցի նշանավոր վարժապետ Սերովբե Պատկանյանը: 1816-ին բացվելով Մոսկվայի Լազարյան ձեմարանը և 1824-ին Տիգրիսի ներսիսյան դպրանոցը, արևելահայերը ունեցան ընդամենը 3 վարժարան: Արևելահայ գրական գործիչները կարող էին ընդունել արևմտահայ գրական լեզուն, որ արդեն պատրաստ էր, և փոքր աշխատանքով հարմարեցնել արևելահայ ժողովուրդի լեզվական պահանջներին: Բայց այդպես չեղավ: Նրանք ստեղծեցին մի ուրիշ գրական լեզու, որի հիմքը Երևանի բարբառն է և որի հեղինակն է համարվում Մոսկվայի Լազարյան ձեմարանի սուսնողութիւնը: Այստեղ ամեն կողմից հավաքված հայ աշակերտները սովորական գործածութեան մեջ հետզհետե կոկում են իրենց լեզուն, մասնավորը տեղի է տալիս ընդհանուրին և

կամաց կամաց այդ կողմած մաքուր լեզուն դառնում է խոսակցական ընդհանուր լեզու նույն դպրոցի սաների մեջ: Այստեղ աշխատանքը տարվեց ճիշտ այն ձևով ու ծրագրով, ինչպես արևմտահայ գրականի համար:—Քերականությունը վերջվեց բարբառից, օտար բառերը վտարվեցին և հայերեն բառերը վերածվեցին իրենց գրաբար ձևին:

Արևելահայ լեզվի առաջին նմուշները տեսանք արդեն վերևում: Մաքուր գրական լեզվի առաջին օրինակն է Կղեոպատրա Սարաֆյանի «Բանալի գիտութեան» (Պետերբ. 1788): Ավելի ուշ են «Համառօտ քննութիւն քրիստոնէական հաւատոց» (Մոսկուա 1831), «Աւետարանի ճշմարտութեան և գօրութեան համար» (Շուշի 1833), և վերջապես Սաղմոսի թարգմանությունը (Ձմյուռնիա 1843): բոլորն էլ մաքուր գրական արևելահայ լեզվով:

Լազարյան ճեմարանի ուսանողները ճեմարանն ավարտելուց հետո անցան Դորբատ. այստեղ գերմանական ուսանողների օրինակով կազմեցին ուսանողական ընկերություն և ուսանողական եռանդով տոգորված սկսան երգել ուսանողի կյանքը, սեր, գինի և հայրենիք: Թեև երգերի մեծ մասը թարգմանական էր և գրական տեսակետից չունեի առանձին արժանիք, բայց նրանք այն մեծ արժանիքն ունէին, որ արևելահայոց առաջին աշխարհարար տաղերն էին՝ գրված այն մաքուր գրական լեզվով, որ պատրաստվել էր Լազարյան ճեմարանում: Այս երգերը տարածվեցին հայոց մեջ, ումանք մինչև իսկ Ռուսաստանի սահմաններից դուրս, ինչպես է Գևորգ Իոզոխյանի գեղեցիկ «Ծիծեռնակ»-ը, և իրենց հետ տարածեցին արևելահայ գրական լեզուն:

Արևելահայ առաջին թերթը եղավ Տիգրիսի «Արարատ»-ը 1850 թ. (չհաշվելով «Կովկաս» պաշտոնաթերթը՝ 1846 թ., որի լեզուն գրաբար էր): «Արարատ»-ը շատ կարճ կյանք ունեցավ. նա դադարեց 1851 թվին, բայց գրականության հիմքը արդեն զրված էր:

Հայերենի նորագության պատկերը նույն կամ նման է նոր հունարենին:

Հույներն էլ շատ կողմերով մեզ բախտակից ժողովուրդ են եղել: Նրանք էլ ունեցել են շատ հին և շատ ճոխ լեզու և գրականություն (հելլենական շրջան, որ համապատասխանում է մեր մեսրոպյան գրաբարին և հին մատենագրության): Այս

լեզուն տեղի տվեց ապա բյուզանդական հունարենին (որ համապատասխանում է մեր միջին հայերենին և կիրիկյան գրականության): Բյուզանդական հունարենն էլ մեռավ, ինչպես մեր գրաբարը: Հույները ընկան տաճկական տիրապետության տակ. Փոքր-Ասիայի հույները կորցրին իրենց մայրենի լեզուն՝ և թուրքախոս դարձան, ճիշտ ինչպես մերոնք: Բայց գրադետ և ուսուցնական հույները երբեք չլքեցին իրենց հին լեզուն և շարունակ գրում էին իրենց հին հունարեն լեզվով, ինչպես մերոնք գրաբար: Կարիք եղած դեպքում միայն դիմում էին ուսման լեզվին և նույն իսկ ուսման հունարենը առողները հին հունարեն գրքերը ուսման լեզուն էին վերածեցին: Այսպես Նեոֆիտոս Դուկասը թարգմանեց Թուկիդիտեսը ուսման լեզվին: Նոր հույները ուղեցին մեզ նման վերանորոգել իրենց լեզուն և խոսակցական ուսման լեզուն մաքրելով ու կոկիլով հին հունարենի օրինակով՝ ստեղծեցին նոր հունարեն գրական լեզուն: Առաջին անգամ, ԺԸ դարի վերջերը և ԺԹ դարի սկիզբը Ադամանտիոս Քորայիս (1748—1833) զմյուռնիացի նշանավոր հելլենագետը հին հունարենի և ուսման խոսակցական լեզվի միջին ճանապարհը գտավ: Նա վտարեց ուսման լեզվի միջից բոլոր օտար (թուրքերեն) բառերը և նրանց տեղ դրավ հին հունարեն բառեր, որոնք քաղում էր բոլոր դարերի հունարենից: Այսպես նա կազմեց նոր հունարեն գրականության գարազուխը: Բայց նա շատ էր հարած ուսման լեզվին և եթե իր բառարանը հին հունարենից էր, քերականությունը մեծ մասամբ ուսման լեզվի էր: Այս պատճառով նա շատ հակառակորդներ ունեցավ: Իր հաջորդները ավելի մաքրեցին լեզուն՝ քերականությունն էլ հնին մոտեցնելով: Ավելի ուշ, Ալեքսանդրոս Սուցցոս բանաստեղծը (ծն. Պոլիս 1802 ՝ 1864 թ.) ավելի գարազացրեց գործը և նոր հունարենը հին հունարենի վրա ձևելով՝ կազմակերպեց նոր գրական լեզուն (Այտն. Քնն. քեր. 290—1):

Այս է միակ ճանապարհը բոլոր այն ժողովուրդների համար, որոնք թուրքերի իշխանության տակ խավար ու հեռանաց վիճակի հասած, ունին իրենց ձեռքին ազգային մի մեռած լեզու և իրենց ետևում մի հին ու ճոխ գրականություն, և ազգի գոյացման ժամանակ զարթնելով իրենց դարավոր քնից՝ ուզում են ստեղծել իրենց համար նոր և ազգային առաջադեմ գրականություն:

Այնուամենայնիվ, մեր նոր գրական լեզվի նման՝ նոր հունարենն էլ (թեև մեր գրականից ավելի հնաձև և ավելի մոտ

գրաբարին) երբեք չհասավ և չէր էլ կարող հասնել հին հունարենին: Բայց և այնպես նա էլ դարձյալ ուսմիկ և տգետ հույն համար դժվարահասկանալի լեզու է (գրաբար է), ինչպես մեր գրական աշխարհաբարը ուսմիկախոս անգրագետ հայի համար:

Եվրոպացիք շատ չեն հասկանում այս երևույթը. և մեր (ինչպես և հույների) արարքը բանական չեն համարում. նրանք կարծում են, թե գրական լեզուն պիտի լինի ուղղակի ժողովրդական խոսակցական լեզուն, ընդունելով որևէ բարբառ. օտար բառերի (և ոճերի) մաքրագործումը անտեղի է իրենց համար. հին բառերի վերանորոգումը նշանակում է հին լեզվի նորոգումը նոր բերանների մեջ:

Բայց եվրոպացիք թուրքերի հպատակության տակ չեն գտնված. հետևաբար և չեն գտնված այն սոսկալի դուռթյան մեջ, ուր գտնվում էին հայերը և հույները լեզվի տեսակետից: Ֆրանսերենը, իտալերենը, սպաներենը, գերմաներենը ևն, ամեն մեկը իր մեջ ամբողջովին ազգային լեզու է՝ ազգային ամեն մեկը իր մեջ ամբողջովին թուրքախոս, տեղ անդ բառով: Իսկ հայերը տեղ տեղ բոլորովին թուրքախոս, տեղ անդ էլ այնպիսի օտարախոսն մի լեզու էին խոսում, որ լեզու չէր, այլ ժարգոն: Այսպես նաև հույները: Այնու ամենայնիվ ֆրանսերենն էլ բառարանի տեսակետից շատ հեռու է գուշ ժողովրդական լինելուց: Ֆրանսերեն լեզվի բառամթերքի մեջ՝ 6 ժողովրդական բառի դեմ պալիս է 10 ուսումնական բառ, այն է լատիններենից ու հունարենից սարքված բառեր:

Եթե մեր նոր գրական լեզուն այժմ ընդհանուր տարածված է և շուտով կգա այն օրը, երբ դպրոցի շնորհիվ նա նաև վերջին գյուղացու խոսակցական լեզուն կդառնա, ուրեմն փորձը հաջող և գործը լավ է եղել:

Պահել մի որևէ ժարգոն՝ կնշանակեր հավիտենական դարձնել թրքական ստրկության ամոթալի կնիքը:

Հարց է, թե կարելի՞ էր արդյոք առանց գրաբարին դիմելու, լուրջ ժողովրդական տարրերով, բայց այնու ամենայնիվ զուտ հայերեն գրականութուն ստեղծել: Այսպիսի մի փորձ արել է Այաթնյանը՝ իր Գննական քերականության մեջ, էլ 248—9, ուր տալիս է միևնույն գրվածքը թե ժողովրդական հասարակ բառերով (առաջին սյուն) և թե գրական լեզվով (երկրորդ սյուն): Այդ գրվածքը արտատպում ենք այստեղ.

Կօզտէ որ դուն հիմակու-
հիմայ ծուռը շտկես, մէկալ
պէտքի կտորները կընայ ըլլալ

Բաւական է որ դուն ա-
այժմ սխալն ուղղես. ի՞նչ
միւս հարկաւոր մասերը կո-

որ ինքը միւսակ ալ կարենայ
ճարել:

Անանկ ուժով էր, կըսեն,
որ մէկ ձեռքով ալ միւսակ
ծառեր չէ, հապա քարեր ալ
ճղքելու հերիք էր:

Անանկ աղվոր լուսնկայ
մ'ալ ելած էր որ, գիտես որ
արև էր ծաթեր:

Թէ որ ամեն իժիր ասանկ
չըլլալու բաներու վրայ պա-
րապ տեղ մտմտալով ատեն
կորսընցընես նէ, ձեռքդ ալ
բան չի վաստըկիր, միտքդ
ալ:

Ետքի հեղուն գրած գիրս
առեր են նէ՝ եւելօք խնտում
են իմացեր. ինչու որ մեր
աս դիերը քաշած խեղճու-
թիւններուն վրայօք ինչվան
ետքի ատենները պտըտող ի-
րաւ ու սուտ ձայներէն իրենք
ալ մեծ մեծ հոգերու ու մըտ-
մտութի մէջ մնացած՝ իրաւը
չգիտնալով հա թէ չէի մեջ
կերերան եղեր:

Այաթնյանից 26 տարի հետո, երբ գրական լեզուն արդեն կազմված վերջացած էր, ժողովրդական լեզվի շատ ավելի մեծ մի փորձ կատարեց Միհրան Հովհաննեսյան, որ հրատարակեց «Իրական կեանքի նուագներ» վերնագրով բանաստեղծությանց մի փոքր հատոր (տպ. Պոլիս 1892, 52 էջ): Նույն տարվա մեջ հատորը սպառվեց և հաջորդ տարին (Պոլիս 1893) նույնը անփոփոխ լույս տեսավ երկրորդ տպագրությամբ: Չտեսնված երեք վույթ հայ տպագրության պատմության մեջ: Որքան սիրելի էր ուրեմն զուտ ժողովրդական լեզուն, — Երեք տարի հետո հե-

րելի է թէ նաև ինքն առան-
ձին կարող ըլլայ յարմարել
Կըսեն թէ այնչափ զօրա-
ւոր էր, որ նաև մէկ ձեռքը
չէ թէ ծառեր միայն, այլ
քարեր ալ ճեղքելու բաւա-
կան էր:

Այնպէս 'գեղեցիկ լուսին
մ'ալ ելած էր, որ կարծես
թէ արեգակ ծագած էր:

Եթէ միշտ այսպիսի ան-
կարելի բաներու վրայ վայ-
րապար մտածելով ժամանակ
կորսնցընես, ոչ ձեռքդ շահ
մը կը շահի և ոչ միտքդ:

Վերջին անգամուան գրած
նամակս ընդունելով՝ մեծա-
պէս ուրախացեր են. վասն
զի ստոյգ կամ սուտ լրերուն
պատճառաւ, որ մեր այս կող-
մերը կրած դժբախտութեանց
վրայ մինչև վերջին ժամա-
նակները տարածուեր են,
իրենք ալ մեծամեծ հոգոց և
մտատանջութեանց մէջ մնա-
ցած՝ անստուգութեամբ այո
և ոչի մէջ կը ծփան եղեր:

դինակը հրատարակեց և մի ուրիշ փոքրիկ հատոր «Քնարիկ» վերնագրով (Պոլիս 1895, էջ 16), որին հաջորդեց ամբողջական մի վեպ «Անճարակին հարսնեորները» վերնագրով:

Այս բոլորը զուտ ժողովրդական խոսակցական լեզվով են, պոլսական բարբառով, բայց մաքուր հայերեն, առանց օտար բառերի և առանց սղակաղությունների:

Ինուժ ենք այստեղ մի կտոր «Նուագներ»-ից:

ժամուն կոչնակները ինչո՞ւ կը չալեն,
Ինչո՞ւ Խասգեղ կուզան որբերը լալէն.
Փրկիչի տղաքներ, ի՞նչ սուգ էք մտեր,
Ինչո՞ւ իրար կանցնին վարդապետ, տէրաէր:
Մէկդի կեցէք քիչ մը, թողէք ներս մտնեմ.
Ի՞նչ կայ, ո՞վ է մեռեր, աչքովս տեսնեմ:
Հիմա խելքիս կուզայ. ի՞նչ, մարապետն է...
Մի, ո՞վ ժամկոչ, ճաղը վեր մ'առներ գետնէ:
Չէ, չեմ թողուր որ զինք տանին մեր թաղէն,
Չեմ թողուր որ ամբիծ Սրբուհիս թաղեն:
Ե՛լ, Սրբուհի, աղջիկ, ե՛լ, աչքերդ բաց.
Ա՛խ, դուն քուն ես, գիտեմ, թարթիճներդ խփած.
Ե՛լ, մի թողուր որբերդ անտէր անտէրունչ,
Նայէ՛, ինտո՞ր չորս դիդ կուլան անմուռնչ:
Էյ վա՛խ, որո՞ւ կըսեմ, թուր է հոգին,
Ձեռքերը խաչաձև ծալլեր են կուրծքին:
Լացս ի՞նչ խեր կընէ, պարապ աշխատանք.
Նոր հարսի քողքի պէս, առեր է պատանք:
Ես եմ որ ցից զարկի հող կտրած պառաւ,
Մահը զիս հոս թողուց եկաւ քեզ տարաւ:
Խեղճ կնիկ, ո՞ւր գացիր. պէտք էր որ հիմակ
Քուկին չորս դիդ ցաթէր արև արեգակ:
Պէտք էր որ աչքդ բաց փառքդ տեսնայիր.
Աշխրբքէն կշտացած սև հող մտնայիր:
Չըսիր, «Շատ կանուխ է ապրել կուզեմ ես,
Կեցիր, ո՞վ մահ, մեղք է զատուիլ որբերէս»:
Անուշ գառնուկ վիզդ տուիր խաղաղիկ,
Ճղակոտոր եղար անթառամ ծաղիկ:

(Ա տպ. էջ 45, Բ. տպ. էջ 38)

Միհրան Հովհաննեսյանից մի-երկու տարի հետո, Պոլսում

մի ընդհանուր շարժում առաջ եկավ ժողովրդական լեզվով գրականություն ստեղծելու: Այս անգամ երևան եկան մի խումբ գավառացի գրողներ (Թլկատինցի, Մալկարացի Կարօ, Գեղամ, Ջարդարեան ևն), որոնցից ամեն մեկը սկսեց իր գավառի բարբառով գրել զանազան պատմվածքներ: Այսպես հրատարակ իջան Խարբերդի, Մալկարայի, Մուշի և այլ բարբառներ: Լեզվաբանական տեսակետով հետաքրքրական երևույթ, բայց գրականության համար անհաճո էր, որովհետև շատ բան անհասկանալի էր մնում: Ըստ այսմ կարելի չեղավ մի լուրջ արդյունքի հասնել և շարժումը կանգ առավ:

ԳՐԱՊԱՅՔԱՐ, ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԵՐ

Ամեն ազգի մեջ նկատված մի երևույթ է, որ երբ մի հին լեզու այլ ևս գործածությունից ընկնում է և նոր լեզուն նրա տեղն է անցնում, հնասեր գիտնական մարդիկ, որ ճանաչում են հին լեզվի հարգն ու ճաշակը, չեն կարողանում միանգամից բաժանվել նրանից և ամեն ջանք պործ են դնում հինը վերանորոգելու: Բացվում է այստեղ էլ հնի և նորի, պահպանողականության և ազատամտության կռիվը: Հենքը սկզբում ուժեղ դիմադրություն են ցույց տալիս, կարողանում են մի ժամանակ հին լեզվի հիշատակը վառ պահել, որովհետև գրողները իրենք են: Բայց իրենց հաջողությունը վաղանցուկ է, սրովհետև նրանց գրածները կարդացող չկա: Նրանք օրեցօր տեղի տալով՝ վերջապես հաղթվում են նորերից եւ նոր լեզուն գրավում է հնի բոլոր ասպարեզները: Այս ընդհանուր ճակատագրական օրենքը տեղի պիտի ունենար նաև մեր մեջ:

Հին և նոր լեզվի, այսինքն գրաբարի և աշխարհաբարի վեճը կոչվում է մեր մեջ գրայայքար:

Սկզբում, երբ աշխարհաբար գրվածքները շատ սակավաթիվ էին, գրայայքար չկար: ամենքն էլ արհամարհում էին աշխարհաբարը, իբրև թուրքացած լեզու, որ ուսմիկին միայն վայել է: Հետո, երբ աշխարհաբար գրականությունը մեծացավ ու զարգացավ, այդ երկուսի միջև վեճի դուռը լայն բացվեց: Հարձակողականը աշխարհաբարյանների կողմից էր. մինչդեռ գրաբարյանները ավելի պաշտպանողական կռիվ էին մղում: Գրայայքարը սկսում է 50-ական թվերին, 1848-ի ֆրանսիական գաղափարներով սնված ու տոգորված արևմտահայ ազատական-

ների կողմից: Կռիվը միաժամանակ մղվում է թե արևմտահայոց և թե արևելահայոց մեջ. և թեև վերջինները շուտով լուծում են հարցը հօգուտ աշխարհաբարի, բայց արևմտահայոց մեջ կռիվը շարունակվում է մինչև 90-ական թվականները: Անթիվ են այս անթիվ լույս տեսած հոդվածները, բանակոիֆները, վիճարանությունները: Գրաբարյանները հետևյալ պակասություններն էին պահում աշխարհաբարի մեջ:

- 1) Աշխարհաբարը մի լեզու չէ, այլ բազմաթիվ բարբառների ունի և հայտնի չէ թե ում պետք է տալ իրավունքը:
- 2) Նա լցված է ուսմիկ բառերով ու ձևերով:
- 3) Այնքան բազմաթիվ օտար բառեր ու ոճեր ունի, որ հայերեն չէ:
- 4) Լի է սխալներով:
- 5) Աղքատ, տկար, անշուք լեզու է:
- 6) Աշխարհաբարը անկանոն է, այսինքն չունի քերականական ձևերի միօրինակություն:
- 7) Աշխարհաբարը մութ լեզու է, չունի գրաբարի պարությունը:
- 8) Բարդ բառերի կազմության մեջ ճաշակ չի դրած:
- 9) Աշխարհաբարը սովորել ավելի դժվար է, քան թե գրաբարը:

Թողնենք հիշել այն անմիտ պատճառարանությունը, թե աշխարհաբարը պաշտպանել հակառակ է «ազգասիրութեան»։ Կամ թե ավելի անմիտ այն պատճառարանությունը թե գրաբարը այն լեզուն է, «գոր Աստուած Ադամի սովրեցուց, Ադամ Նոյի և Նոյ Հայկի. ուրիշ ազգերն կը նախանձին մեզ, որ մի այսպիսի լեզու ժառանգած եմք, և մեք ջնջեմք զայն: Թէ մեր մէջ գտուի ոք որ գրաբարին դէմ խօսի, Հայաստանի լուսաւորչական սուրբ եկեղեցիի թշնամին է նա, զի գրաբարն է մեր կրօնական լեզու» (Չերազ, Ազգ. դաստ. էջ ԻԷ):

Գրաբարի դեմ և աշխարհաբարին ի պաշտպանություն գրված գրքերի մեջ ամենից ավելի նշանավոր են՝ Այտընեան Բնական քերականութիւնը (Վիեննա 1866) և Չերազի Ազգային դաստիարակութիւն (վարժապետական ժողովի մէջ խօսված ճառեր), Պոլիս 1876, Առաջինը (հատկապես իր ընդարձակ ներածության մեջ) գուտ գիտական մեթոդով ապացուցանում է, որ լեզուների մեջ մաքուր և աղավաղյալ չկա, բոլորն էլ հարաուկ փոփոխության, բարեշրջության ընթացքի մեջ են և պատ-

մական անհրաժեշտութիւնն է, որ նորերը փոխանակեն հնրերը: Եթե աշխարհաբարը՝ իբրև նոր լեզու, աղավաղութիւնն է գրաբարի, գրաբարն էլ աղավաղութիւնն է իրենից ավելի հին հայերենի և այսպես կհասնինք մինչև ռւր: Աղավաղութիւնն այն է, որ մի լեզվի կենդանութեան ժամանակ է կատարվում, և դա ինարկե դառնում է սխալ և կարոտ ուղղութեան (Այտն. էջ 273): Երկրորդը շատ ավելի վիճաբանական է և աշխատում է ապացուցանել թե՛

1) Աշխարհաբարը ավելի կարճ լեզու է քան գրաբարը. ինչ. չողորմեցայ—ոչ սողորմեցայ:

2) Աշխարհաբարը ժողովրդական լեզու է, մինչ գրաբարը ազնվապետական է. այսպես ժողովրդական են «վախ, հոգ, վիզ», մինչդեռ ազնվապետական են սրանց հոմանիշները՝ «երկիրդ, հողմ, պարանոց»:

3) Գրաբարը ունի բազմաթիւ ավելորդ բառեր, որոնք աշխարհաբարը ջնջել է. այսպես գրաբարն ունի «սւր, յթ, յթվ», իսկ աշխարհաբարը միայն «ո՛ւր»:

4) Գրաբարի ձևերը երկդիմի են, աշխարհաբարը եկավ զանազանելու և ամեն մի ձևը որոշելու. այսպես՝ գրաբար զարդու թե սեռական և թե գործիական է. աշխարհաբարը որոշեց սեռական «զարդի» և գործիական «զարդով»:

Ինչ վերաբերում է այն անմիտ պատճառաբանութեան, թե գրաբարը կրօնական կամ սուրբ լեզու է, ահա իր խոսքերը.

«Ոչ մի լեզու սուրբ է, ոչ մի լեզու անսուրբ: Մուհամմէտ կասէր թէ արաբերէն կը խօսուի դրախտին մէջ. դուք ալ, որպէս կերևի ինձ, շատ հեռի չէք կարծելէ թէ գրաբար կը խօսուի անդ: Այսպիսի ծայրայեղութիւններ պատիւ չեն բերեր: Աստուած բարի սիրտ կը պահանջէ, եւ ոչ կանոնաւոր լեզու, առաքինութիւն, եւ ոչ քերականութիւն: Ի՞նչ, միթէ կարելի չէ՞ աշխարհաբարով օրհնել. ի՞նչ, միթէ կարելի չէ՞ գրաբարով հայհոյել»: (Չերազ, Ազգ. դաստ. էջ 71):

Այս համառոտ ակնարկով մենք բավականանում ենք և հրաժարվում ենք տալ գրապայքարի մանրամասն պատմութիւնը: Ասենք միայն այն թե գրաբարյանների առարկութիւններից շատերը իրավացի էին, բայց վերաբերում էին աշխարհաբարի հին շրջանին: Ավելի հետո այս թերութիւնները ընդհանրապես վերացան. այսպես՝ վերացվեց բարբառների բազմազանու-

թեան հարցը՝ արևմտյան գրականի համար հիմք ընդունելով Պոլի բարբառը, իսկ արևելյան գրականի համար Երևանի բարբառը: Վերացան ուսմիկ (այն է աղավաղյալ), ինչպես և օտար բառերը, որոնք փոխարինվեցին գրաբար ձևերով կամ նորակերտ բառերով: Պոլի բարբառը հիմք ընդունելով՝ հաստատվեց քերականական ձևերի միօրինակութիւն, որով «անկանոն» վերադիրը, որ շատ հաճախ շարտվում էր աշխարհաբարի ձևատին, նույնպես վերացվեց:

Մի ժամանակ պոլսահայ գրողները հետևում էին տաճկերեն պաշտոնական լեզվի պատիպատ ոճին: Տաճկական այս ոճի մեջ սիրելի և փնտրված է դերբայական ձևի խճողումը (ընելը, ընելէն, ընելով, ընելին, ընելոյնին, ընելու պատճառով ևն) և ընդհակառակը դիմավոր բայի շատ քիչ են գործածվում: Մեր գրողներն էլ հետևելով այդ ոճին իրոք որ մութ և անհասկանալի էին դարձնում հայերենը: Ահա մի փոքրիկ նմուշ այս անիմանալի ոճի:

«Ուստի տարապայման ու ձեռք եղած միջոցներով լենալնին անհնար եղած իղձերը մէկդի առնելով, ժրութիւն ու բարենախանձ գրգռելու եւ մարդուս կարողութիւնները զարգացնելու իղձերը արհամարհելը՝ իմացական ու նիւթական թմբութիւնը՝ մարդուս օրինաւոր վիճակ մը սեպել է...»

Զօրայեան, Քաղաքական տնտեսութեան վրայ տեղեկութիւններ, 1849, Պոլիս, էջ 267.

Ուզում է ասել.

«Ուստի, եթե մեկը մի կողմ դնե այն իղձերը, որոնք տարապայման են և առձեռն միջոցներով անգործադրելի, և արհամարհե այն իղձերը, որոնք ժրութիւն ու բարի նախանձ են զրգուում և մարդուս կարողութիւններն են զարգացնում, նշանակում է թե նա իմացական ու նյութական թմբութիւնը համարում է մարդուս օրինավոր վիճակը»:

Բայց այս ոճը շատ երկար չտևեց: Պոլսում եվրոպական լեզուների, հատկապես ֆրանսերենի, իսկ Արևելյան Հայաստանում ռուսերենի ուսումով և նրա հետևողութեամբ, պարզունութիւնը ոճի մեջ սիրելի հատկութիւն դարձավ: Սրանով վերացավ նաև գրաբարյանների այն առարկութիւնը թե աշխարհաբարը մութ լեզու է և գրաբարի պարզութիւնը չունի: Այսպեսով և աշխարհաբար սովորել շատ ավելի հեշտացավ քան գրաբար:

Անա թե ինչպես էր գրում Օտյանը իր գեղեցիկ Վիսպառը՝
Ջորայանից քիչ հետո.

Վիսպառ ենք:

Վայրն է գեղեցիկ ու հանդարտիկ.— Հոս ջուրը ծիծաղ մ'ու-
նի, օդը ծիծաղ մ'ունի, երկինք ծիծաղ մ'ունի, որ անմեղ աղջկան
ծիծաղին կը պատասխանեն: Անտառն իր զօս տերևոց խօշիւնն
ունի, իր մամուլապատ ծառերն ու ծառի կոճերը, իր քարան-
ձաւը, իր սահանքը, իր բացավայրը եւ իր հովուաց հովիտը: Կը
մխիտ անտառին մէջ, կը խորասուզիս, եւ նա ի խորոց անհուն
մթութեանն կերկերաձայն թռչնոց վայելունքովը ու անագ-
նագոչ ծառերուն սօսափիւնովը կը պատասխանէ սրտիդ անհուն
աղաղակներուն: Քիչ մ'անգին կը տեսնես, որ անագին ապառաժ
մը երկնից դէմ կը ցցուի ու կարծես շանթը կարհամարհէ: Իր
լօռուտ կողերուն վայրի կանաչին վրայէն կաթիլ կաթիլ ջուր
մը կը մզի վճիտ, փայլփլուն, զովագին, եւ այն կաթիլը հեղեղ
կրլայ որ զմայրիս կը խորտակէ ու անհուն հովիտ մը կը փորէ
իր ճամբուն վրա. հոս ջրվեժ, հոն՝ ջրի առուակ, հոս՝ կը դը-
ղըչէ, հոն կը կարկաչէ, հոն՝ ամպերուն հետ թխազոյն կորոտայ,
հոս՝ դալարագեղ ծաղկափիւռ խոտերուն եզերքը՝ մանուածա-
պատ ման կուզայ, հոն՝ կը փրփրայ, հոս կը փայլփլայ, եւ
արեւուն նախածագ փայլիւններուն առջև կը կարմրի:

Հոն է ներդաշնակութիւնը, կարգը այս անկարգութեան
մէջ է. եւ զի մարդուն ձեռքը ոչ ժպիրհ այլ համեստօրէն խառ-
սուած է բնութեան գործոցը, անոր կամացն ու քմացը հնա-
զանդելով. եւ զի բնութիւնն է որ կը տիրապետէ:

Մշուշ չունի երկինքը՝ որ այն մշուշը պատէ նաեւ գտի-
տը. կապոյտ կը տեսնես ցերեկը. աստղունք կը տեսնես գիշե-
րը. ամպերն ալ, երբ ամպեր պատեն, զովագին են եւ թափան-
ցիկ արեւին լուսովը:

Գրաբարյանների առարկություններին վեճով ու հակա-
ռակություններով պատասխանելու հետ միասին աշխարհա-
բարյանները աշխատեցին բարեկարգել աշխարհաբարը: Ոմանք
իրենց այս բարեկարգիչ գործունեության մեջ շատ չափավոր եւ
արդյունավետ եղան: Սրանք են այն հեղինակները, որոնք գա-
նազան հաջող նորակերտ բառեր հնարելով հայերեն լեզուն ճո-
խացրին: Այս կարգի նորակերտ բառերի վրա բավական երկար
խոսեցինք էջ 482—489 և ցույց տվինք նրանց արժանիքը: Մեջ բերինք նաև մի փոքր ցանկ այդպիսի նորակերտ բառե-

քի. բայց դա մի շատ չնչին բան է, հանդեպ այն հազարավոր
բառերի, որոնք չկան գրաբարում և չկային դեռ աշխարհաբա-
րում: Ուրիշներն էլ իրենց պարզ ու մաքուր աշխարհաբար գըր-
վածքներով՝ աշխարհաբարի պատիվը բարձրացրին և նոր գրող-
ներին լեզվի օրինակ տվին: Եղան սակայն այնպիսիներն էլ,
որոնք սխալ ճանապարհի մեջ ընկան և չըմբռնելով լեզուների
կազմության ընդհանուր օրենքները, ինքնազուլս նորմուծու-
թյուններ հնարեցին և ուզեցին մտցնել լեզվի մեջ: Այսպիսի-
ներից կարելի է հիշատակել.

1) Եղիա Տեմիրճիպաշյան, որ իր «Շահնագարեանի մը
խղճին պարզ քննութիւնը» (Պոլիս 1840) աշխատության մեջ
վերացրեց կը մասնիկի գործածությունը բայերի սահմանակա-
նի վրայից: Այսպեսով բայը մասամբ գրաբարի ձև ստացավ:

2) Կարապետ Իւթիւճեան, որ Մասիսի խմբագիր եղած ժա-
մանակ տեսեր եմ, բերեր եմ ևն ձևերի փոխարեն սկսեց գոր-
ծադրել արևելահայոց տեսել եմ, բերել եմ ձևերը, որոնք գրա-
բարին ավելի մոտիկ են: Միևնույն ժամանակ «տեսնելու, իմա-
նալու» և այլն ձևերի փոխարեն մտցրեց «տեսանելոյ, իմանալոյ»
ևն զուտ գրաբար ձևերը: Ավելի ուշ նույն հեղինակը (Արևելք
1888) առաջարկեց փոխել արևմտահայ տառադարձությունը,
գրություն և հնչում միանգամայն, հնչել գգիր գրել» (gir grel) և
տառադարձել Բերլին, Պարիս և այլն:

Բայց լեզվի վերանորոգության մեջ ամենից ավելի խիզախ
հանդիսացան երկու հոգի՝ Ռուսինյան և Չերազ:

Ռուսինյանը Ֆրանսիական 1848 թվականի գաղափարներով
տոգորված մի անձ էր: Նա ուզում էր հայ կյանքի բոլոր երե-
վոյթները հեղափոխել: Ռուսինյանը սակայն մենակ չէր, այլ
մի ամբողջ խմբի ներկայացուցիչը: 1853-ին Ռուսինյան, Օտյան
և Թևիլյան հրատարակեցին «Ուղղախօսութիւն արգի հայ լե-
զուին, յօրինված. ուսմնական խորհրդակցութիւնով» (առանց
հեղինակի անվան): Այս ուղղախօսությամբ՝ որ Պոլսում տպված
Ա. աշխարհաբար քերականությունն է, կարելի է ասել հնար-
վում էր մի բոլորովին նոր աշխարհաբար: Քաղելով այս աշ-
խատությունից՝ տալիս եմ այս նորաձև աշխարհաբարի քերա-
կանության ամփոփումը:

Հոլովումը վերածվում է մեկի. այն է՝ Ո.Չ. բառ, Ս.Տ.
բառ, Բ. բառէ, Գ. բառով:

Հեղինակը մնացյալ բոլոր հոլովական տարբերություննե-

ըր նչ թե ջնջում կամ փոխում է, այլ համարում է արտուղութուն:

Այսպես՝

1) Ի վերջացող բազմական բառերը սեռ. տր. լինում են ու. ինչ. հոգու, տարու ևն:

2) -ուքիւն և -ում վերջացող բառերը հոլովվում են հետևյալ ձևով. օր.

Ո.Ն. զօրութիւն ուսում

Ս.Տ. զօրութիւն ուսման

Բ. զօրութիւնէ, թէնէ ուսումէ

Գ. զօրութիւմ ուսմամբ

3) Աստուած բառը հոլովվում է Ս.Տ. Աստուծու, Բ. Աստուծմէ, Գ. Աստուծով:

4) Այբ «տղամարդ» բառի համար հնարում է նոր հոլովում. այսպես՝ Ո.Ն. այբ, Ս. Տ. արոջ, Բ. արոջմէ, Գ. այբով: Եվ այս հոլովման տակ է դնում տէր (տիրոջ, տիրոջմէ, տիրով), կին (կնոջ, կնոջմէ, կնով), կեսրայր (կեսրարոջ) ևն:

5) Հայր հոլովվում է Ս.Տ. հօր, Բ. հօրմէ, Գ. հայրով. և սրան նման՝ մայր, եղբայր և քոյր, ինչպես և սրանցից ծագած բառերը՝ նախամայր, տիրամայր, հօրեղբայր, մօրեղբայր, հօրքոյր, մօրքոյր:—Նորածն է քայր բառի սեռականը՝ քօր, որով և հօրքօր կամ հօրքրոջ, մօրքօր կամ մօրքրոջ ևն:

Ու հոլովման հետևող այլ բառեր հոլովվում է ի ձևով. ինչ. մարդի, սէրի, իրարի. նմանապես օր, սեռ. օրի ևն:

Հոգնակին կազմվում է էր կամ նէր մասնիկով. հոլովվում է Ս.Տ. բառէրու, Բ. բառէրէ, Գ. բառէրով ընդհանուր ձևով:

-ութիւն, ում, եան, նի, լի, ցի վերջացող բառերը կարող են ստանալ հոգնակիում ք և հոլովվում են հետևյալ ձևով—ութիւնք, ութիւնց, ուսմունք, ուսմանց, արկեանք—արկեանց, հայրէնիք—հայրէնիաց, արծրունիք—արծրունիաց, լսելիք—լսելիաց, կրկնիցիք—կրկնիցոց ևն, նաև հայք, հայոց ևն:

Սղումը և ամփոփումը ընդունում է հոլովման մեջ. օր. աշխրհի, ակընձի, բերնի, զաւկի, վէմ—վիմի, օրէն—օրինի, թիւ—թլւի, բժիշկ—բժշկի, պատիւ—պատւի, օժիտ—օժտի, հունձ—հընձի, խորհրդի, օգտի, գլխի, կոյս—կուսի, համբոյր—համբուրի:

Թվականները թեև պահում է «մէկ, երկու, չորս, հինգ» ևն

ձևերով, բայց հնարում է նաև՝ մի, երկ, եռ (կամ իրեք), քառ, հինկ, վեց, եօթ, ութ, ին, տաս, տասմի, տաս-երկ, տաս-եռ, տաս-քառ, տաս-հինկ, տաս-վեց, տաս-եօթ, տաս-ութ, տաս-ին, երկ-սուն (կամ քսան), եռսուն, քառսուն, հինկսուն կամ հիսուն, վեցսուն, եօթսուն, ութսուն, ինսուն, հարիւր ևն:

Ըստ այսմ դասակարգման էլ բացի սովորական ձևերից, դառնում են նաև միտրդ կամ առջին, երկորդ, եռորդ, քառորդ, հինկորդ, վեցորդ, եօթորդ, ութորդ, ինորդ կամ ինեորդ, տասորդ կամ տասերորդ, տաս-միորդ կամ տաս-միերորդ, տաս-երկորդ, տաս-եռորդ, երկսունորդ (20-րդ), երկսուն-միորդ (21-րդ), երկսուն-երկորդ (22-րդ) ևն:

Գերանունները ընդհանրապես անփոփոխ են. բայց հոլովվում են պոլսական բարբառային ձևով՝ ես, իմ, ինձի, ինէ, ինով, իս, մենք, մեր, մեզի, մենէ, մենով. մեզ, դու, քենէ, քենով, ձեզի, ձենէ, ձենով:

Նկատելի է որ իրարից տարբերվում են տր. ինձի, մեզի, քեզի, ձեզի, և հյց. իս, մեզ, քեզ, ձեզ:

Գ դեմքը ունի հետևյալ ձևը.

Ո.Ն. նա նաոնք

Ս.Տ. նաոր նաոնց

Բ. նակէ նաոնցմէ

Գ. նաով նաոնցմով

Այսպես են հոլովվում նաև սա, դա, առ, առ, ան, (ասի, առի, անի): «Որ» բառը լինում է սեռ. որի, տր. որու:

Նոր ձև ունին իւրիմ (որ և իրեն), անձիւր, իւրաքանձիւր (ն ձայնով փոխանակ չ):

Նախադրությանց մեջ նորածն են բաց «բացի» և անց «առանց»:

Բայերի երեք լծորդությունները ներկայացնում են խոնարհման հետևյալ պատկերը.

Առաջին լծորդություն

գործէմ տեսնէմ

գործէի տեսնէի

գործէս տեսնէս

գործէիր տեսնէիր

գործէ տեսնէ

գործէր տեսնէր

գործէնք տեսնէնք

գործէինք տեսնէինք

գործէք տեսնէք

գործէիք տեսնէիք

գործէն տեսնէն

գործէին տեսնէին

գործէցի	տեսի	գործելու էմ	տեսնելու էմ
գործէցիր	տեսիր	» էս	» էս
գործէց	էտես, տեսաւ	» է	» է
գործէցինք	տեսինք	» էնք	» էնք
գործէցիք	տեսիք	» էք	» էք
գործէցին	տեսին	» էն	» էն

գործէ՛	տես՛ս	գործող	տեսած
մի՛ գործէր	մի՛ տեսնէր	գործած	տեսնող
գործէցէ՛ք	տեսէ՛ք	գործել	տեսնելու
մի՛ գործէք	մի՛ տեսնէք	գործելու	տեսնել

Ըստ այսմ լինում են՝

առնել, առի, էառ, առաւ, սոս,
 պահնել, պահի, էպագ, պագաւ, պագ,
 խածնել, խածի, էխած, խածաւ, խած,
 գտնել, գտի, էգիտ, գտաւ, գտինք, գի՛տ,
 թքնել, թքի, էթուք, թքաւ, թո՛ւք,
 ուսնել, ուսի, էուս, ուսավ, ո՛ւս,
 հագնել, հագի, էհագ, հագաւ, հագ,
 հարցնել, հարցի, էհարց, հարցաւ, հարց,
 ցուցնել, ցուցի, էցոյց, ցուցաւ, ցո՛յց.

Այսպես նաև՝

ընել, ըրի, ըրաւ, ըրէ՛,
 դնել, դրի, էդիր, դրաւ, դի՛ր,
 տանել, տարի, էտար, տարաւ, տար,
 լնել, լցի, էլից, լցաւ, լից,
 խնել, խցի, էխից, խցաւ, խի՛ց,
 ընթեռնել, ընթեռցի, ընթեռցաւ, ընթեռցի՛ր,
 ըզգեսնել, ըզգեսցի, ըզգեսցաւ, ըզգեսցի՛ր,
 ածել, ածի, էած, ածաւ, ած,
 բերել, բերի, էբեր, բերաւ, բի՛ր,
 ըսել, ըսի, ըսաւ, ըսէ՛.

Երկրորդ լծորդութեան հետևում են կրավորական բայերը՝ որոնց խոնարհման համար նոր ձևեր չի հնարում: Միայն բոլորը գրում է Վ տառով. ապառնին լինում է գործվիլու էմ, գործ-

վիլու էս ևն. կրավորականների մեջ են՝
 ճանչվիլ. ճանչվեցայ, ճանչվէ՛
 ունվիլ, ունվեցայ, ունվէ՛,
 տեսնել—տեսվիլ, տեսվեցայ, տեսվէ՛,
 առնել—առվիլ, առվեցայ, առվէ՛,
 պահնել—պահվիլ, պահվեցայ, պահվէ՛,
 խածնել—խածվիլ, խածվեցայ, խածվէ՛,
 գտնել—գտվիլ, գտվեցայ, գտվէ՛,
 թքնել—թքվիլ, թքվեցայ, թքվէ՛,
 ուսնել—ուսվիլ, ուսվեցայ, ուսվէ՛,
 հագնել—հագվիլ, հագվեցայ, հագվէ՛.

ինչպես և հարցվիլ, ցուցվիլ, ըրվիլ, ընթեռցվիլ, ըզգեսցվիլ.

Այս երկրորդ լծորդութեան նման են խոնարհվում նաև իլ, ճիլ, շիլ, ճշիլ հանգող բայերը, որոնց մեջ նորաձև են միայն հետևյալները.

ամաչիլ, ամաչեցայ, ամաչէ՛,
 երդմիլ, երդմիլ, երդմեցայ, երդմէ՛,
 քաղցիլ, քաղցեցայ, քաղցէ՛,
 ննջիլ, ննջեցայ, ննջէ՛,
 ազնիլ, ազայ, ազի՛ր,
 պշնիլ, պշայ, պշի՛ր,
 ելնիլ, ելայ, ելի՛ր,
 իջնիլ, իջայ, իջի՛ր,
 զիջնիլ, զիջայ, զիջի՛ր,
 զբոսնիլ, զբոսայ, զբոսի՛ր,
 ջեռնիլ, ջեռայ, ջեռի՛ր,
 յեցնիլ, յեցայ, յեցի՛ր,
 ոստնիլ, ոստայ, ոստի՛ր,
 յանցնիլ, յանցայ, յանցի՛ր,
 յառնիլ, յարայ, յարեայ, յարի՛ր,
 մատչիլ, մատայ, մատեայ, մատի՛ր,
 հանգչիլ, հանգայ, հանգի՛ր,
 թագչիլ, թագայ, թագի՛ր,
 երկնչիլ, երկայ, երկի՛ր,
 կորնչիլ, կորայ, կորի՛ր,
 մեղնչիլ, մեղայ, մեղի՛ր.

Երրորդ լծորդութեան են պատկանում ալ, նալ հանգող բայերը, որոնց համար նոր ձևեր հնարած չէ: Նոր են միայն տալ, տրի կամ տըւի, էտուր, տուր, տրէք, տրած,

բառնալ, բառձի, բանձ,

դառնալ, դառձայ, դառձիր,

երթալ, երթացի, երթացիր, երթաց, երթացինք, երթացիք, երթացին, երթած (ե՛րթ), երթացե՛ք, երթացած.

Առհասարակ Ռուսիայանի նպատակն էր բոլոր ներգործական բայերին տալ -ել վերջավորութիւնը, կրավորական և կրավորակերպ չեղոք բայերին՝ վիլ, իլ, իսկ չեղոքներին՝ ալ: Այս մտադրութեամբ շինում է նորանոր բայեր. ինչ. զգայել (զգացնել), կարդացել (կարդացնել), լալել, լացել (լացնել), մոռնել (մոռացնել), ունել (ունենալ), խօսումել (խոստանալ), մարգարել (մարգարեանալ), թանել (թացացնել), դիմիլ, մտնիլ, տիրիլ, իշխիլ, թագաւորիլ, ճամպորդիլ, ելնիլ, իջնիլ, քայլիլ ևն ևն: «Ունիմ» բայը՝ որովհետև ներգործական է, դառնում է ունել, ունէ, ունէցի, ունէ՛ (հրամայական). չ՛ունէ և չ՛է ունած:

Բացասական բայերը խոնարհման մեջ ստանում են չը՛ կամ ոչ. (երկուսն էլ միշտ շեշտով). ինչ. չը՛ գրէի, չը՛ գրէիր. չը՛ գրէր կամ ոչ գրէի, ոչ գրէիր, ոչ գրէինք, չը՛ գրէմ, չը՛ գրէս կամ ոչ գրէմ, ոչ գրէս, չը՛ վերցնէլով:

Ավելի բացահայտ դարձնելու համար Ռուսիայանի ձևակերպած հայերենը, դնում ենք այստեղ մի բավական երկար հատված իր Ուղղախոսութեան առաջաբանից, ճիշտ այն մասը, ուր նա բացատրում է իր նորատեսակ հայերենի հորինման պայմանները:

«Մեր ազգն ալ՝ շատոնց ի վեր իր հին լեզուն՝ ան վսեմ գրաբառը կորուսած, կը զգար իր կրթութիւնը համար ընդհանուրին հասկընալի ազգային լեզուի մը կարօտութիւնը: Աս լեզուն կար. բայց այնչափ խեղճ վիճակի մեջ էր, որ ոչ ոք կը համարձակէր լեզու ըսելու անոր: Սակայն տաս տաս-հինկ տարիէ ի վեր, ուսմանական անձէր՝ մասնաւոր ու պարբերական գրվածներով՝ գանի շատ շրտկէցին շրտկըտէցին. և ազգն իր հին կորուսած լեզուին տեղ՝ ունէ այսօր, թէ ոչ կատարեալ, գէ՛թ բաւական գործածէի արդի լեզու մը ազգային,՝ զոր շատ մարդիկ իրարմէ քիչ տարբերութիւմբ կը գրէն, ու հասարակութիւնը քանի կ'երթայ, վարժ ու անուշ կերպով կը խօսէ:

«Յայտնի է որ Պօլխի մեջ գործածված արդի լեզուին վրայ է խօսքէրնիս. վասն զի Պոլսէցուն խօսած Հայերէնը՝ թէպէտև աւելի խառն է օտար բառերով քան ուրիշ տեղացոց Հայերէնը:

սակայն արտասանութիւն կողմէն աւելի յստակ, աւելի մաքուր ըլլալէն զատ՝ երկու գլխաւոր պատճառներ կը վաւերացնեն անոր նախապատուութիւնը: Նախ՝ Պոլսէցուն խօսածն այսօր ազգին մեծագոյն մասին լեզուն կը սեպվի. զի ոչ ուրէք այնքան Հայերու բազմութիւն մէկ տեղ հաւքըված կը տեսվի՝ որդէս ի Պօլխ. և բազմութիւն լեզուն է անտարակոյս ընդհանուրին ալ լեզուն: Երկրորդ՝ մայր-քաղքին լեզուն աւելի զերսով կը տարածվի քան ո՛ր և է գաւառական բարբառ. վասն զի հոն յաճախէլով գաւառականներու բազմութիւն, և հոն՝ արհեստական ու վաճառական զանազան գործողութիւններէ հարկադրված՝ երկար ատեն մնալով, երբ իրենց երկիրը դառնան, հետէրնին կը տանէն վերջապէս մայր-քաղքին լեզուն ալ:

«Աս արդի լեզուն՝ կը տեսնէնք որ, ամէն տեղ, օրէ օր փոփոխութիւններ կրէլու վրայ է. և աս՝ երկու պատճառով. մէյ մ'որ՝ կատարելութիւն ըստացած լեզու մը չ'է. երկրորդ որ՝ ուղղախօսութիւն ու բառցոյց չ'ունէ: Ասոր համար՝ ամէն մարդ ուզած կերպովը կանոն և ուղղագրութիւն կը սեփհականէ իրն: Աս ետքի պատճառը՝ անանկ անպատեհութիւն մըն է, որ կըրնայ լեզուն շատ գժար ու անկանոն ընէլ ատենով. վասն զի ժամանակը հաստատութիւն կուտայ սովորութիւն հնարած կերպ կերպ այլընդակ կիրառութիւններուն: Դարձեալ աս անպատեհութիւնը՝ նոյն լեզուով գրօղնէրուն մեծ դժարութիւն կը հանէ. վասն զի իւրաքանձիւր ոք չը՛ գիտնայ որ կանոնին հետեւիլ:

«Արդ՝ աս արդի լեզուն կանոնաւորելու, և միանգամայն կատարելութիւն շաւղին մեջ քայլ մ'առաջ մղելու մըտքով է, այսինք՝ անոր աւելի պարզութիւն, ճշտութիւն, անուշութիւն, ուղղագրութիւնը դիւրութիւն, ու բառերուն համառօտութիւն սալու մըտքով է, որ ձեռք գարկինք՝ ուսմանական անձերու խորհրդակցութիւմբ, ուղղախօսութիւն մը յօրինելու նոյն լեզուին: Աս աշխատութիւնն ուշադրութիւմբ աչքէ անցնողը կը տեսնէ, որ սովորութիւն տըրած (!) կանոններուն հետեւած էնք ամէն ուր որ բանաւոր պատճառն ուրիշ կերպ մը չ'է՛ ցուցած. միայն զգուշութիւմբ ու հասուն դատմամբ անոնցմէ ի՛նչ ի՛նչ ամփոփած ու միաձեւութիւն տակ ձգած էնք: Մեր աշխատութիւն ընթացքին մէջ՝ արդի լեզուն գրաբառին ըստ կարի մօտէցնելու նպատակն ալ երբէ՛ք աչքէրնէս չը հեռացնելով, ուղի տեսութիւնն ու միաձեւութիւնը՝ մեզի երկու գլխաւոր դի-

տակէտնէր էղած էն: Ինչ որ գրաբառին մօտ երթալ կըրնալով՝ ուղղութիան ու միաձեւութիան դէմ կը մեղընչէր, 'զանի հարկ կ'ըլար գաւառական բարբառներու մէջ սովորոյթ էղած կերպին հետեւցնելով համեմատել մեր կանոնին:

Դիտաւոր բան մը աս ուղղաթուօսութիան մեջ ան է, որ հոլովումը մէկի՛ վերածած էնք. որով ամէն բառ ընդհանրապէս միօրինակ կըրնան հոլովիլ նոյն վերջաւորութիամբ. բաց քանի մը բառէր, որոնց արտուղութիւնն անկարելի երեւցած է մեզի կանոնաւորել: Աս բանս մեծ պարզութիւն ու դիւրութիւն կը բերէ լեզուին. և ամէն բառ՝ մանաւանդ յատուկ անուններն իրենց ամբողջ գիրէն ու ճիշտ հընչումը կը պահէն ամէն հոլովներու մէջ. որ խիստ հարկաւոր բան է:

«Դարձեալ՝ բայերուն խոնարհման գաղտնիքը լաւ մը դիտելէն ետեւ, բոլոր բայերն իրեք յանգով, իրեք կանոնաւոր խոնարհման տակ ձգած էնք. ասով դուրսն ամէնեւին անկանոն բայ չը՛ մնայ: Գրաբառին չորրորդ լծորդութիւն ըսած ուլ յանգը մէկդի թողինք. ասոր ալ պատճառ՝ արդի լեզուին մէջ հազիւ մէկ երկու բայ կը գտվէր ուլ յանգով, որոնք ոչ միայն չ'արժէն գատ խոնարհում, այլ մանաւանդ միւս յանգէրուն մէկին տակ խիստ վայելուչ կըրնան երթալ. և ասով՝ չորրորդ յանգի մը աւելորդ բեռը կը վերնայ:

«Աս երկ երեւիլի բաներէն գատ, այսինք՝ հոլովումը մէկի, և խոնարհումը եռ յանգի վերածելէն, խօսքի մասերուն վրայ ալ մանր մունր փոփոխութիւններ ըրինք. և նոյն իսկ ուղղաթուօսական բառէն ալ տեղ տեղ փոխէցինք»:

Քննելով այն բոլորը, ինչ որ առաջարկում է Ռուսինյանը իր Ուղղաթուօսութեան մեջ, կտեսնենք հետևյալ հիմնական գծերը:

1) Բառերի կարծւորյուն. այս նպատակին հասնելու համար զանազան պատճառաբանութիւններով (որոնց մասին ինքը չի խոսում սակայն) բառերի միջից սղում է այս կամ այն առաջ և վանկ է շահում. այսպէս՝ յարբերական, վերբերութիւն, կը վերբերի, մարգարէնալ, այսինք, անունական. հրամայան. կը հրամէ, ցուցինք, նախընձոտ, կը տեսվի, էվէլ (աւելի), էվէլորդ, էվէլցնէլ. ճանչել, կը ճանչվի, ուտնէլ (ուտանիլ), ժողվական, ժողվուրդ, խօսամէլ (խօսաւանալ). սովորութիւն, սովրական, արնաէր (աւնուաէր), բաւցոյց (բաւարան), յանգ (խօսափում է տեւ վերջաւորութիւն), ունէլ (ունենալ), թուցէլ (թացնել),

դժար (ոչ թե դժուար), աշկերտ, ևայլ, մատուցէլ, սատան, կանչիլ (կանաչիլ), անունէլ (անուանել), էգի (այգի), թագաւոր (թագաւոր), հաւսար, էրէլ (այրել), բավընդակէլ (բովանդակել), ունած (ունեցած):

2) Հետևելով միօրինակութեան սկզբունքին իլ վերջացող դերբայների հոլովման մեջ պահում է ի ձայնավորը և չի վերածում ե. ինչ. յարմարիլ, յարմարիլով, յարմարիլու, մտնիլ, մտնիլու, մտնիլով են: Որովհետև դառնալ, ընթեռնուլ ունին ո, ուտի և գրում է անդրադառն, ընթեռցող: Որովհետև -ուրիւն գրվում է ի ձայնավորով, ուտի հոլովման մեջ էլ գրում է —թիւն, թիւմբ, թիւնց:

3) Ուղղագրական փոփոխութիւններ. այս կետում իրեն առաջնորդ է ընձում տրամաբանութիւնը և ստուգաբանութիւնը, որոնք հաճախ սխալ են: Օրինակ՝ գրում է խօսաւանալ, կարծելով թե արմատն է խօսք: Բայերի վերջավորութիւնը դարձնում է էլ, այն սխալ դատողութեամբ թե երկրորդ լծորդութիւնը վերջավորվում է իլ և «է» ձայնավորն է որ դառնում է «է» և ոչ թե ե. Սրա հետևանքով գրում է ոչ միայն էմ, էն, էղայ, էղած, այլև արծէցի. հողէղէն, ջրէղէն, լուսէղէն, սիրէլի, պատուէլի, հոլովէլի, ունէլի, բնդունէլի են: Ով գիտե ինչ պատճառով գրում է նաև հայերէն, վարդէնի, նունէնի, արէնակից, աղբէրակ, բնտէլ են: «Անկողին» բառը դարձրել է «ընկողին»:

4) Թեև ինքը չէ բացատրած, բայց քննելով ամբողջ գիրքը, գտնում եմ որ անգիր ը ձայնավորը գրում է այն դեպքում, երբ երկուսից ավելի բաղաձայն հաջորդում են իրար. ինչ. կը հընչվի, կըրնայ, հընչում, հընչվիլ, խորհրդաժութիւն, հասկըցվիլ, կը ճըշտէ, խնդրվի, սըբբէլ, գըբկէլ, ըստեղծէլ, ըստացական, թըղթակցէլ են: Այս կանոնը սակայն խստիվ չի պահպանված:

5) Կազմել է նաև մի խումբ նորակերտ բառեր. ինչ. Ուղղաթուօսութիւն (քերականութիւն), բաւցոյց (բառաբան), ընդուկ (ընդունակ), ըստացական (սեռական հոլով), մականուն (ածական), պարանուն (նախդիր), կցորդ (մասնիկ), բառկապ (շաղկապ) են են: Հետաքրքիր են շրջև (շուրջը), վարև (վաբը, ներքև), ինչպես կան վերև, ներքև, դրսև են:

Ինչ ընդունելութիւն ունեցավ Ռուսինյանի հնարած հայերենը.

Այն փոփոխութիւնները, որ առաջարկված էին այնտեղ, համարվեցին սրբապղծութիւն և ամեն ոք վեր կացավ նրա դեմ: Ընդհանուր պահանջին զոհացում տալու համար որոշվեց սրբագրել այդ գիրքը և 1854-ին կազմվեց մի մասնախումբ, որի անդամներն էին Օտյան, Ռուսինյան, Պալյան, Պարտիզպանյան և Իւթիւճեան: Հանձնաժողովի սրճանագրութիւններից մի քանիսը մնում են դեռ և հրատարակված են (տես՝ Արևելք 1898, դեկտ. 5): Այս խմբից Պարտիզպանյանն ու Իւթիւճեանը եղած են հակառակորդ նորաձեւությանց և նրանց կարծիքներն են անցել:

Այսպեսով Ռուսինյանի կազմած նորաձե հայերենը (որ ինքը նոր անունով «արմեներէն» էր կոչում), տարածում չունեցավ և ինքը միայն գործածեց: «Ուղղախօսութիւն»-ից հետո Ռուսինյանը հրատարակեց «Տարեցոյց»-ը (տպ. 1855 թ., երկրորդ տպ. 1872 թ.), «Ազգային հանգանակութիւն» (հայոց ազգային տուրքի մասին ճառ, տպ. 1865 թ.), թարգմանեց նաև «Վիքթոր Հեկոյի՝ Ռւյ Պլաս եղբրդը» (տպ. 1873 թ.), իսկ մյուս բոլոր աշխատութիւնները անտիպ մնացին: Այսպես ատենաբանութիւններ, ճառեր, ոտանավորներ, նամակներ, բժշկական բառերի բառարան և թարգմանութիւններից էլ էմէ—Մարտէնի «Մայրէրու դաստիարակութիւնը», Լամարտինի Դաշնակները, Մտածութիւնները: Ինքնապիր գործերի մեջ կան գրական արժեքով կտորներ, որոնցից չորս նմուշ գրել եմ իմ «Հայոց նոր գրականութիւնն պատմութիւն» մեջ, էջ 209—215: Սրանց մեջ հիշատակելի է հատկապես «Երբոր բացուին դռներն յուսոյ» երգը՝ Կիլիկիայի մասին:

Ռուսինյանի առաջարկած հայերենից ավելի նորաձե եղավ այն լեզուն, որ հորինեց Մինաս Չերազը: Այս լեզուն կոչվում է հեղինակի բառով «Ընտրողական հայերէն»:

Ընտրողական հայերենի քերականութիւնը (ընդամենը 3 թերթ) տպված է նախ հեղինակի Գրական փորձեր աշխատութիւնն մեջ (տպ. Պոլիս 1874) և երկրորդ նրա Ազգային դաստիարակութեան սկիզբը (Պոլիս 1876): Երկուսը իրարից փոքր տարբերութիւններ ունին:

Քաղելով այս երկու աղբյուրներից, դնում ենք այստեղ ընտրողական հայերենի քերականական ուրվագիծը, շեշտելով միայն այն կետերը, ուր հեղինակը որևէ փոփոխում մտցրել է լեզվի մեջ:

1) Հոգնակի կազմելու համար աշխարհաբարը գործածում է եր և ներ մասնիկները. առաջինը միավանկ, երկրորդը բազմավանկ բառերի համար:—Չերազը երևան է հանում մի և կիսավանկ բառերի հարցը. այսպես են կոչվում այն բառերը, որոնք իրապես երկու վանկ են, բայց առաջին կամ վերջին վանկում ունին ք ձայնավորը. ինչ. գրլուխ, աստղ. Այս կարգի բառերից առաջինները արդի գրականում հոգնակիի մեջ ստանում են ներ մասնիկը, իսկ երկրորդները եր մասնիկը.—գլուխներ, աստղեր: Չերազը հետեւելու համար միօրինակութեան և տրամաբանութեան, կրկրորդների հոգնակին էլ կազմում է ներ մասնիկով, աստղներ, կայսրներ և այլն: Անձայն յ-ով վերջացող բառերը հոգնակիի մեջ պահում են իրենց վերջաձայն յ-ին. ինչ. շղթայներ, ապագայներ և ոչ շղթաներ, ապագաներ:

2) Հոլովումը վերածված է միայն մի տեսակի.

Ո. Հ. հաց	հացեր
Ս. Տ. հացի	հացերի
Բ. հացէ	հացերէ
Գ. հացով	հացերով

Հոլովման ընդհանուր պատկերը արևմտյան գրականին է, բացի հոգ. սեռ. հոլովից, որ առնված է արևելյան հայերենից, քանի որ սրանով մտցվում է միօրինակութիւն սեռականի կազմութեան մեջ (հացի-հացերի, փխ. հացերու):

Հոլովման ժամանակ սղման և ամփոփման բոլոր օրենքները վերացված են. այսպես՝ օրինակ՝ սիրտի, ջուրի, թէրի, լոյսի, ձուկի, մուկի, քիթի և այլն:

Բոլոր անկանոն հոլովները, ինչպես նաև հոլովման երկրորդական տեսակները ջնջված են. այսպես՝ հայրի, մայրի, եղբայրի, քոյրի, Աստուածի, օրի, մարդի, հայի, առաւօտի, երեկոյի, այժմի, վաղի, էջի, քաջութիւնի, սահմանադրութիւնով, լեռերի, դուռերէ, թշնամիով, տէրի, կինի, կինէ, կինով, կայսրի, երկուի, Սպանիաի, տեսնելի, խօսելի, մարբիով, նստելի, իրարի, իրարէ, իրարով և այլն:

3) Որոշիչ հոգը սկզբում ընդունված էր ձայնավորահանգ բառերի համար և, բաղաձայնահանգ բառերի համար ը. (սրանց մեջ հաշվելով նաև յ հանգող բառերը. շղթայը, քահանայը). բայց հետո ընդունեց միայն և ամեն բառի համար. հայրն, քահանայն, նաճան:

4) Թվական ուժականների մեջ դիտելի են.

Բացարձակներ—մի, եօթ, ութ, ին, տաս, տասմի, եօթսուն, ինսուն:

Դասականներ—եօթերորդ, ութերորդ, իներորդ, տասերորդ, տասմիերորդ, եօթսուներորդ, ինսուներորդ:

Բաշխականներ—միական, հարիւրական:

5) Ստացական, ցուցական և անորոշ ածականներ.—

Պետք է ասել տունս կամ իմ տուն, մայրք կամ քո մայր, որդին կամ իւր որդի, մեր զինուորներ, ձեր ծառ, իւրեանց արիւն, նորա հրացան, սորա բաճկոն, դոցա վերարկու, այս մե-լան, այդ գրիչ, այն թուղթ, սա նամակ, որ ծով: (Առաջ բոլոր այս ձևերը դնում էր հոգով իմ տունը և այլն, հետո հոգերը ջնջել որոշեց):

6) Դերանունները առնվում են զրարբարից.

Անձնական—նա, նոքա, զայն, զայնս, նորա, նոցա, նմա, ի նմանէ, ի նոցանէ, նովաւ, նոքօք: Այսպես և սա, դա:

Հարաբերական—որ, որք, զոր, զորս, ոյր, ոյց, սւմ, յումէ, յոյց, որով, որովք:

7) Բայ.

Էական բայի խոնարհման մեջ նկատելի են միայն ներկեմք, անկ. էինք, ստոր. ներկ. լինիմ, լինիմք, անկ. լինէի, լինէինք, ապ. պիտի լինիմ, անկ. պիտի լինէի, հրամ. լեր, եղէք, մի լինիր, մի լինիք, լինիլ, ապ. ընդ. լինիլիք (փխ. ըլլալ և այլն ձևերի), որոնք գործածական են արևմտյան զրականում:

Պարզ կանոնավոր բայերի մեջ.—

Ա լծ.—կը սիրեմք, կը սիրէինք, սիրէ'. (սրան են հետևում ամաչել, վախել, գողել, գիտել, սպանել, զենել, արգելիլ, կիզել, յաւելիլ, հինել, քաղցել, թքել, ասել և այլն):

Բ լծ.—նստեցայ, նստէ',

Գ լծ.—կը հազամք,

Դ լծ.—կը թողումք, կը թողուր, կը թողուինք, թողի, թողիր, թողաւ, թողինք, թողիք, թողին, թող.

Բաղադրյալ կանոնավոր.—

Ա լծ.—կը տեսնեմք, կը տեսնէինք, տեսայ, տեսանք, տես (ինչ. զարկնել, գտնել-գի'տ, մտնել-մօւտ, իջնել-է'ջ, ցուցնել ցնայ, մատուցնել-մատոյց).

Բ լծ.—կ'ուսնիմ, կ'ուսնէի, ուսայ, ուսիր. (ինչ. անկնիլ, ուսնիլ-սնայ, ծնիլ-ծնայ):

Գ լծ.—կ'իմանամ, իմացայ, իմացի'ր...

Դ լծ.—կը զբօսնում, կը զբօսնուի, զբօսայ, զբօսիր. (ինչ. կալնուլ, ցածնուլ-ցածեայ, զգնուլ-զգեցայ, զգեցի'ր, ընթեռնուլ-ընթերցայ, ընթերցիր, յինուլ-յեցայ, յեցի'ր, լնուլ-լցայ, լցիր, երդնուլ, երդուայ, երդուի'ր):

Անկանոն բայերն են.—

Եմ, եղայ, լեր կ'առնում, առի, առ, առնուլ

կը լամ, լացի, լաց.

կընամ, կըցայ, կըցիր. կը տամ, տուի, տուր.

կը գամ, եկայ, եկ, գալ.

կ'անեմ, արի, արէ', անի.

կ'երթամ, գնացի, գնա, երթալ.

Ասել, ասի, ասէ'.

Անցողական բայեր.—կատարյալի ի, այ, ցի, ցայ հանգերը փոխել ցունել. օր. կը մոռցունեմ, կը մոռցունէի, մոռցուցի, մոռցու, մոռցուցէք:

Այսպես և թողունել, ուսցունել, սիրեցունել, մաշեցունել, կ'անցունէի, խմեցու, փրթեցու, կորցու, փախցուցիր, փախցու, փլցու, փակցու:

Կրավորական բայեր.—կատարյալի հանգերը փոխել ուրի. ինչ. թողուիլ, կերուիլ, կը տեսուէի, պիտի լացուի, տրուի:

Ժխտական.—օր. չ'եմ տեսներ, չ'ես տեսներ, չ'է տեսներ, չ'եմք տեսներ, չ'էք տեսներ, չ'են տեսներ—չ'էի տեսներ, չը տեսայ, չը տեսանեմ, չը տեսանէի, չը տեսանել, չ'է մոռցուիր, չ'էի տրամիր:—

Բաղադրյալ—լսած եմ լավագույն է քան լսեր եմ:

Դերբայ.—թողոյ, զբօսոյ, զբօսած, զբօսեր, մտոյ, փախոյ, լացուցոյ,—ապ. յոգնիլիք, կոտրելիք, կոտրելիք, կոտրուելիք:

Բայերի մեջ, ինչպես տեսնում ենք, փոփոխությունները կատարված են հետևյալ կետերի մեջ.

1) Ներկա հոգնակի Ա գեմքի մեջ վերակենդանացել է զրարարի մ ձայնը. եմք, լինիմք, հազամք, թեև անկատարը աշխարհաբարի պես է. էինք, լինէինք:

2) Չորրորդ լծորդությունը, որ աշխարհաբարը ձգտում է ջնջել, վերանորոգված է:

3) Մի խումբ բայերի լծորդությունը փոխված է. ինչ. գողի, գենել, արգելիլ, յաւելիլ, քաղցել, թքել, ասել, զարկնել, մատուցնել, ուսնիլ, անկնիլ և այլն. այս ձևերը երբեմն վերցրած

են գրաբարից, երբեմն արևելյան հայերենից (թքել), երբեմն էլ ինքնահնար ձևեր են (ինչ. զարկնել, ուսնիլ. մատուցնել):

4) Խոնարհման ձևերից մի քանիսը առնված են գրաբարից. ինչ. հրամ. էջ, մուտ, գիտ և այլն. կտր. թողին (փխ. թողուցին):

5) Կը մասնիկը ընդհանրացված է նաև միավանկ բայերի վրա համաձայն արևելյան հայերենի, մինչ արևմտյան բարբառը դնում է կու (կը լամ, կը գամ, կը տամ):

6) Անկանոն բայերը առհասարակ շարունակում են իրենց գոյությունը. արևմտյան գրականի համար նոր ձևեր են՝

Գրաբարից առնված—լեր, առնում:

Կովկասից—ե'կ, կ'անեմ, արի, անել, գնացի, ասել, ասի.

Ինքնահնար—արէ', ասէ':

7) Անցողականների մեջ նկատելի է ցունել վերջավորությունը, որ գրաբարյանների ընդունած ձևն էր արևմտյան հայոց մեջ:

Մակբայ, նախադրություն և շաղկապ ընդունում է շատ անգամ գրաբարից. ինչ.

Ուստի, է՞ր, որպէս, աստ, անդ, աստի, անտի, յայնժամ, այժմ, վաղ, յետանդ, բարեաւ,

ի, յ, ըզ, իբբ, քան, ցը, առ, դէպ, փոթան, հեռի, յառաջ, զազտ,

զի, մինչ, այսինք, զոր. օրինակ, ըստ այնմ:

Աշխարհաբարի մեջ է հանգող բառերի վերջատառը, եթի չունի գրաբարը և եթե չկա համանուն բառ, պետք է ջնջել. օրէն, ընթայ, խօս, միտ, ծալ, պարտ, դիր, կրօն, հաւատ, յորձան, գործի, ծնօղ, սրուն, մուտ, սանդուղ, անարգան, բայց, կիրք, բանուածք, կուրծք, աչք, ձեռք, ոտք, հետք, ալիք, գէնք, ձիբք: Այսպես նաև և հանգը. ինչ. օզ, դաշ, թոռ, քիրտ, բայց եղէգն, երբեմն:

Վայելուչ է կարճ բառերը երկարներից գերադասել.—մըռունչ, մօտիլ, թառ, սփոփ, սպառնում, գիղջ, առաջել, յանց, սեմ, մաղթ, հարց, լքել, նախատ, նօթի, յագիլ, իրանալ, արշաւ, բխիլ, բախել:

Ներդաշնակությունը պարտավոր է գրագետի ուշն գրավել իբր էական պայման. քաջապէս լավագույն է քաջարարից, հոնաւ՝ խոնաւից:

Ոճերը պետք է առնել ընտրողաբար թե հին և թե նոր լեզ-

վից. ինչ. թէկն ածել, ի յուշ ածել, յամօթ մատնել, յօդս ցնդիլ, բողոք բառնալ, խրախոյս կարդալ, հոգ տանիլ, սուգ առնուլ, զանց առնուլ, կանգ առնուլ, թունդ հանել, վրէժ հանել, տուն տալ, երգում տալ, միտ դնել, աչք դնել, ժանիք անել, սիրտ անել, դիրևտար անել:

Տառադարձության օրենքն է հին բառերը պահել անփոփոխ, նորերը գրել ամեն մի ազգի ձիշտ հնչման համեմատ.— օր. Պետրոս առաքեալ, Բիէռ Վէրօն:

Ուղղագրությունն էլ պահանջում է ընտրողականություն.— պոռալ, թօթվել, փնտուել, կարօղ, կետ (նիշ), կէտ (ձուկ), ամեն (բուր), ամէն (եղիցի), տարէւոր, բարէբար, հոգէլից, իրողութիւն, ձախող, աջող, կիրակէ:

Քերականության այս համառոտ ուրվագծից հետո հարկ էր պարզել այն սկզբունքները և հանգամանքները, որոնց համեմատ հեղինակը հորինել է այս լեզուն. Սրա համար ավելի լավ ենք համարում խոսքը տալ հեղինակին, քանի որ սրանով տված կլինենք նաև նույն լեզվով գրված բավական ընդարձակ և հարազատ մի նմուշ:

«Ժողովուրդի գաւակ լինիլով, ես բնազդով յարած եմ աշխարհաբար հայերէնին, և գրաբարը նկատած եմ միշտ իբր մի ազնուապետական լեզու, որպէս է իսկ. Սակայն վարժարանին մէջ մի դպրոցական գրաբար միայն կ'աւանդուէր մեզ, որով գրուած են տաղերս. այլ ուշագիւր ընթերցողը պիտի նշմարէ նոցա մէջ իսկ մի ձկտում դէպ աշխարհաբարը, մի հզօր մղում դէպ ժողովրդական լեզուն. գրիչս կը դժկամակէր գրել մեռած խօսեր կենդանի ակունջների համար. ողջմտութիւնս կ'ապրտամբէր, զի կը զգայի թէ մի ափ ուսումնականների համար կ'աշխատէի, քանի որ պարտաւոր էի աշխատիլ ազգին մահաւանդ տղէտ մասին համար, որ մեծամասնութիւնն է. այս ներքին պատերազմը չը տեւեց երկար. աշխարհաբարը յաղթանակեց, զի ճշմարտութիւնը կը յաղթէ վերջապէս:...

«Սակայն, այն օրը, ուր աշխարհաբարը սկսեցայ գրել, զգացի թէ քառսի մէջ է այն, Բարբլոնի աշտարակ կամ Բէզօ թագաւորի արքունիք. տեսայ իսկոյն թէ այս լեզուն անիշխանութիւնի մէջ է, նման այն ազգին որ 'գայն կը գործածէ: Ուստի, մեր բոլոր ականաւոր գրագէտներին դիմեցի, որպէս զի լոյս առնում ի նոցանէ. ուշի ուշով կարդացի նոցա գործերը որք հեղինակութիւն ունին արդի լեզուին մէջ. ամեն գրութիւն փորձեցի, ամեն

ուղղութիւն դիտեցի, ամեն առաջարկութիւն քննեցի. աւագ, սա տխուր եզրակացութիւնը ստացայ թէ ոչ ոք կարօզ է գոհացու- նել լինողին, թէ չը կայ մի գրական գրութիւն որ կարենայ տու- կալ մի խիստ հարցաքննութիւնի, թէ ոչ ոք գերծ է հակասու- թիւններէ, թէ չը կայ մի գրագէտ, որ գրական սկիզբներ ունենայ որոշ և հաստատ: Ուրիշներէ յոյսս կտրած, հարկադրուեցայ ես ինքնին կազմակերպել այն լեզուն 'գոր պիտի գործածէի, և օրինաւոր սկիզբներով ճշդեւ 'գայն վերջնապէս: Ռօպէնսօսի վի- ճակին մէջ երևակայեցի 'գիտ, ամեն բան յինէն միայն ակնկա- լելի բռնադատուած:

«Մի մեռած լեզու կար իմ առջև, և մի կենդանի լեզու, իւր գաւառալեզուներովը և գաւառաբարբառներովը հանդերձ. մըրը ընտրել. ոչ ոք կ'ուզէ հպատակիլ, իբր բացարձակ տէրի, մի այն- պիտի լեզուի որ տարբեր լինի յիւրոյն. նաև, այս բազմաճիւղ ծառին անձնիւր ոստը ունի սեփական գեղեցկութիւններ, 'գորս ներելի չ'է բնաջինջ անել. այս նկատումներին առջև, զգացի թէ մի գրութիւն միայն կայ որ կարենայ լուծել այս գորդիոնեան հանգոյցը և որով կարենայ իրանալ լեզուի միութիւնը, որ միշտ ազգասէր սիրտերի տենչն է եղած: Այս գրութիւնն է ընտրու- ղականութիւն:

«Սա 'գիտ առաջնորդեց խարխափանքիս մէջ: Զերծ ամեն նախապաշարումէ, հաւասարապէս սիրելով ամեն գրութիւն, չը բողոքով ինձ տածել մի բացառիկ համակրութիւն կամ հակա- կրութիւն, բաղդատեցի մեր լեզուին զանազանութիւնները. ուր գրաբարը աշխարհաբարէն աւելի բանաւոր, կանոնաւոր, դիւ- րին, պայծառ էր, գրաբարը ընդունեցայ. ուր Տփղիս լաւագոյն էր Կոստանդնուպօլիսէն, Տփղիսին յարեցայ ուր Վասպուրական իրաւունք ունէր և ոչ Լեհաստան, Վասպուրականին հետեցայ, և, այսպէս ջանացի կազմել մի լեզու որ կարենայ ընդունելի լինիլ ամենին, անձնիւր գաւառ իւր երեսփոխանը ունենալով հոն:

«Ինչ որ անսովոր է, խորթ կը թուի, ոչ թէ լուրջ անձերի, այլ նախապաշարեալների: Գիտեմ որ սոքա հագուազիւտ չ'են այսօր մեր ազգին մէջ. այլ գիտեմ նաև թէ մի առողջ դաստի- արակութիւն հետըզհետէ պիտի նուազեցունէ սոցա թիւը, որք կը կարծեն ունենալ մի փափուկ, մի շատ փափուկ ճաշակ:

«Սովորութիւնը տրամաբանութիւնէ վեր չը կրնայ դա- սուիլ, երբ խնդիր է մի այնպիսի լեզուի վրայ որ, մեր արդէ

հայերէնին պէս, դեռ վերջնական ձև տաած չ'է, դեռ զարգացումի ընդունակ է և փոփոխութիւնի ենթակայ: Գիտեմ որ քիչեր պի- տի ըմբռնեն այս ճշմարտութիւնը. քիչեր պիտի հրաժարին սովորոյթի կուռքին երկրպագելէ, ճշմարտութիւնը ընդունելի համար: Ինչ փոյթ. երբ լոյսը ծաւալի, չիղջը աներեսոյթ կը լինի: Եւ լոյսը պիտի ծաւալի:

«Նոցա, որք վեր են ամեն նախակապէ և որք ազատ կը խոր- հին, հրաւէր կը կարդամ քննել իմ գրութիւնը և, երբ համո- ղուն թէ որքան բանաւոր է նա, ընդունիլ 'գայն: Եւ ոչ մի գրագէտի անձնասիրութիւնը կրնայ վիրաւորուիլ սովաւ, զի, ինչ որ պիտի ընդունի, չ'եմ ստեղծած 'գայն, այլ հաւքած: Նաև գրագէտը, որոյ կոչումն է լուսաւորել ժողովուրդը, պարտաւոր է խեղդել իւր մէջ ամեն ետական բզզում, երբ ազգային օգուտն է որ կը հրամայէ: Այն հրատարակիչը, որ այս արութիւնը չ'ունի, լաւ կ'անէ թէ գրիչը թողու և բրիչը ձեռք առնու: «Կամ անունդ փոխէ կամ սիրտդ», ասաւ Ալեքսանդր իւր մի համա- նուն այլ ոչ համասիրտ զինուորին:

«Գալով ինձ, ուրախ եմ որ, երկար թարթափումներէ յետոյ, հաստատուեցայ վերջապէս մի գրութիւնի վրայ, ուր ամեն բան որէնով կը շարժի, ամեն բան տրամաբանութիւն է, ամեն ար- դիւն իւր պատճառը ունի, ամեն նորութիւն իւր փաստը: Այս է իմ դաւանութիւնը. և, զի իմ ազգը կը սիրեմ, կը ցանկամ որ այս լինի եւ նորա դաւանութիւնը»:

(Գրական փորձեր, էջ ԼԸ-ԽԲ)

Պոլիս 1874

Ընտրողական հայերէնը ազգի մեծամասնութեան կողմից ընդունելութիւնը չգտավ. իրեն համակիր եղան Գր. Օայան, Ե. Տեմիրճիպաշյան, Մ. Փորթուգալյան և շրանտ Ասատուր: Առա- ջինը սակայն նույն լեզվով ոչինչ չգրեց. երկրորդը հրատարա- կեց «Նոր կեանք» վերնագրով մի փոքր հատոր, երրորդը Ասիա- թերթի պաշտոնական լեզուն դարձրեց, իսկ վերջինը նույն լեզ- վով հրատարակեց իր «Պատանէկան ներշնչումները» (Պոլիս 1879): Ընդհակառակը հակառակորդների թիվը շատ մեծ էր. բոլոր թեր- թերը դէմ գրեցին ու ծաղրեցին նորելուկ նորոգչին: Այս տես- րակներից հիշենք Ս. Պոնտացի. — Ներկայ հայերէնին ապագայ վի- ճակը, Պոլիս 1879: Մինչև անգամ ոմն Կարապետ Ստեփանյան գրեց ճակը, Պոլիս 1879: Մինչև անգամ ոմն Կարապետ Ստեփանյան գրեց «Նոր մահ կամ լեզուաքննական ատեան» վերնագրով զվարձալի

մի կատակերգութիւն (Պոլիս 1880), որի մեջ գործող անձերը հայերէն թերթերն են, որոնք Նոր մահի ամբաստանությամբ դատում են Նոր-Կեանքը և ընտրողական հայերէնը և վերջապես նրան մահվան են դատապարտում: Չերազը պաշտպանեց իր լիզուն մի շարք հողվածներով Փորթուզալյանի Ասիա և Պարսկաստանի թատրոն թերթերի մեջ՝ «Գրիչ և սուր» ընդհանուր վերնագրի տակ, որոնց հավաքածուն էլ հրատարակեց առանձին գրքով:

Իսկ ինչ էին պահանջում գրաբարյանները:

Գրաբարյանները նախ նպատակ ունեին ուղղակի կենդանացնել գրաբարը թե գրականության մեջ և թե իբրև խոսակցական լեզու: Հետո ավելի մեղմանալով՝ ընդունում են խոսակցության մեջ աշխարհաբար, բայց պահանջում են, որ գոնե գրականության լեզուն գրաբար լինի: Այսպես էր մտածում դեռ Գարագաշյան, որ Յ. Գուրգենի հետ միասին հիմնեց 1886-ին «Ճաշակ Ոսկեղէն դպրութեան» գուտ մեքուպյան գրաբար ամսաթերթը: Այդ թերթը միայն մեկ ու կես տարի կյանք ունեցավ: «Ինչո՞ւ համար բացինք այս մեծ գալուցները, ասաց մի օր իմ այդ սիրելի և ամենաբարի ուսուցիչը՝ Կեղրոնական վարժարանի ավագ դուռն սյուների առաջ կանգնած, եթե ոչ գրաբարը նորեն կենդանացնելու համար»:— Երրորդ շրջանին գրաբարյանները ավելի մեղմանալով ընդունում են աշխարհաբարի իրավունքը գրականության ցածր աստիճանների համար, սակայն բարձրագույն գրականությունը, հատկապես տաղաչափությունը պահանջում են գրաբար: Այսպես էր մտածում մի ժամանակ Եղիա Տեմիրճիպաշյանը և իր ոտանավորներն էլ գրաբար էր գրում: Այս ժամանակ կային այնպիսիները, որ գրում էին մի այնպիսի լեզու, որ գրաբարի և աշխարհաբարի մի այլանդակ թառնուրդ էր, ուր թունդ գրաբար ձևերի մոտ գտնում ենք հանկարծ մի «ամենառամիկ» ձև: Այսպես, օրինակ՝

Ընելով զնոսա ինքնօրէնս (Գարագաշեան, Քնն. պատմ.) Բ. 46): Խնդրեց ի կայսերէ շընել զնա հպատակ Հերովդի (անդ. Գ. էջ 257):

Ահա և երկու տուն Պեշիկթաշլյանի «Եղբարք եմք մեք» նշանավոր երգից, որ ուղղված լինելով ժողովրդի ընդհանրության, և հենց գրված լինելով երգելու համար, պարզ է որ պիտի ունենար ամենքին մատչելի հասարակ մի լեզու:

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ
Թէ երգք թոչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քնար,
Չունին մի ձայն այնքան սիրուն,
Քան զանձկալի «եղբայր» անուն:
Տւր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մեք,
Որ մրրկաւ էինք զատուած,
Բաղդին ամէն ոխ չարանենդ
Ի մի համոյր ցրուին ի բաց.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն՝
Քան զանձկալի «եղբայր» անուն:

Բայց ինչ ենք տեսնում այստեղ. գրեթե մաքուր գրաբար աշխարհաբար ձևեր երևում են միայն չորս տեղ՝ ամբողջ 12 տող գրության մեջ (այդ ձևերը մենք շեղագրել ենք):

Նույն իսկ Դուրյանը, որ այն ժամանակի աշխարհաբարյան բանաստեղծն էր, իր ամենից ավելի քնարական տաղերի մեջ անգամ հաճախ գործ է ածում շատ գրաբարախառն մի լեզու: Ահա «Հճակ»-ից երկու տուն (գրաբար ձևերը շեղատառ):

Ինչո՞ւ ապշած են, լճակ, Եւ կամ միթէ կգմայլի՞ն
Ու չեն խայտար քու ալեակք. Ալեակքդ երկնի կապոյտին,
Միթէ հայլոյդ մէջ անձկաւ Եւ այն ամպոց լուսափթիթ,
Գեղուհի՞ մը նայեցաւ: Որք նմանին փրփուրիդ:

Սակայն քիչ հետո գալիս է գուտ աշխարհաբար մի տուն.

Որքան ունիս դու այի՛
Ճակատս այնքան խոկ ունի.
Որքան ունիս դու փրփուր,
Միրտս այնքան խոց ունի բիւր:

Ճմարիտ է թե այս տունը, եթե գրաբար էլ գրված լիներ, նույն ձևը պիտի ունենար:

Դուրյանից նույն իսկ 30 տարի հետո՝ Նորայրը գրում է դեռ մի այնպիսի լեզու, որ գրաբարի ու աշխարհաբարի մի սարսափելի խառնուրդ է և որ աշխարհաբար լինելուց ավելի գրաբար է:

Ահա մի նմուշ նրանից:
«Ինչպէս կը տեսնուի՝ հնգեակ մատենագրութեանցդ աղերսն

այնպիսի է որ մեք հարկաւորեալ եմք նկատել զայնոսիկ ան-
բաժան յիրերաց, իբր միոյ անձին սեպհականութիւնս. անմարթ
է ուրեմն ըսել թէ Կորիւն բացաքաղած է յօտարաց, երբ օտարք—
միւս մատենագիրք Ոսկեզարու.—չգիտենք բնաւ իսկ ամենեւին
եւ ոչ զմի ի բանից Երրորդ տեսակին, և յերկրորդ տեսակին՝
թէ եւ զբառսն գիտեն, ոչ նովին խառնուածովք եւ կազմու-
թեամբք կը շարադրեն, ոչ նովին դասաւորութեամբք, այլ
Կորիւն ինքնին է որ կը խօսի ծայրէ ի ծայր ի Վարս Մալ-
տոցի՝ յորոց զոմանս ի կիբ արկած էր յեւթաղ եւ ի Մակարա-
յեցիս: (Նորայր, Կորիւն վրդ. էջ 37):

Այս բոլորի մեջ աշխարհաբարը երևում է միմիայն հինգ
տեղ.—ինչպես կը տեսնուի, ըսել, բանաքաղած է, կը շար-
դրեն, կը խօսի:

Նորայրի լեզվին գրեթե հար և նման է գրում մեզ ժա-
մանակակից մի անձ, որից մեջ եմ բերում հետևյալ հատվածը:

«Այսու դարձեալ կը յայտնուին տոհմային հին աւան-
դութեանց անյարմար կիրառութիւնքը, որոնց մի մա-
տը ի կենսագրէն Տրդատայ և միւսն ի խմբագրողէ պատ-
մութեանս պէտք է ներմուծուած համարել: Յիբուի,
որքան անյարմար է և հակապատմական մտածել զԹոս-
րով յամին 210, իբրև անմիջական որդի և յաջորդ Վա-
ղարշու, և տալ նմա բազմաթիւ արշաւանքներով աւե-
րել զՊարսկաստան մինչև ցամա 260, նոյնքան ևս բա-
նաւոր է դնել յամին 217 զՏրդատ Բ. իբր հարազատ
որդի և յաջորդ նմին իսկ Վաղարշու, և ընդ Սեպտ.
Սեբրոսի տալ արշաւել մինչև ի դրունս Տիգրոսի, և
հուսկ ուրեմն յամին 222 անել ի հանդէս գորդին Տըր-
դատայ Բ. զԹոսրով Ա. և զոյգ ընդ Աղեք. Սեբրոսի
տալ պատերազմել ընդ Արտաշէրի և յաղթել:»

(Սարգիսեան, Ապաթանգեղոս և իւր բազմ.
գաղտնիքն, Վենետ. 1890, էջ 37):

Այն բոլոր հառվածները, որ մեջ բերինք մինչև այժմ,
վերցրած են բանասիրական ուսումնասիրութիւններէրից, որոնց
մեջ թերևս ներելի համարվեր գրաբար ձևերի գործածութիւնը:
Բայց ինչ ասել այն հասարակ ժողովրդական գրվածքների հա-
մար, ուր ամենեւին ներելի չէր մի այդպիսի լեզու գործածելը
Օրինակի համար Ֆրանսիացի Պոլ դը Կոքի մի հասարակ վեղը
(Կիւսթով, ազ. Պոլիս 1882, Թարգմանված ինչ որ Սեզրուք

Ֆյուլանդյանէ) ներկայացնում է մեզ հետևյալ գտնարները.—

էջ 209.—Օն ուրեմն, բացարձակապէս նա ոչ կարէ ձեռ
առա. պէտք է նմա վարձել քոքը սենեակ մը, որպէս զի ամէն
օր կտրենամք զիրար տեսնել անվթար. անզ նա պիտի կրնայ
կրդել, խօսիլ, օգ տունու և ուղածին պէս ուտել, խմել:

էջ 224.—Ներեցէք ինձի, այդ եղբարնաց համար, բարե-
կամզ իմ, ոչ ունիմ իրաւունս մեղադրել զանգ: Հետու յինէ
կրնամ յուտալ որ չձանաչիցէք զտէր:

էջ 226.—Մեր երիտասարդը տեսաւ գեղեցիկ սենեակ մը
վայելուչս յարդարեալ և նորոգապէս շքեղացուցեալ կանկարտեօք:

էջ 251.—Ա՛հ, տիկին, պարագայները ստէլ կը տիրեն առ
մեզ. մեք պատահարաց խաղալիքն եմք:

Բայց տարօրինակն այն է, որ այդպիսի գրաբարմով
գրիչներ, որոնք աշխարհաբարը թերի համարելով ուզում են
«մաքրել» աշխարհաբարը գրաբարով, հաճախ իրենք հասարակ
գրաբար էլ չգիտեն, անում են անճոռնի սխալներ և այդպիսի
սխալներով ազականում են թե՛ գրաբարը և թե՛ աշխարհաբարը:
Օրինակ Ս. Հայկունի, «Յուսէփցի ազգատուն» աշխատութեան
մեջ (ապ. Վրդշատ. 1905) գրում է.

էջ 65) Եղնիկի նման արագավազ էր, գնդակ ու սուր նա-
րա չէր բռնեք... մարդ չէր կարող նորա սպաննել:

էջ 46) Դիւղի մէջ ցոյց տուին նորա, որ Տէր Կարապետի
տանը օթեանի:

էջ 35) Նորա հրամայեց, որ եղները քչէ տանէ:

էջ 93) Իմաստալից առարկաներ, զորս ընտրովի հավաք-
ւած են այլևայլ բարբառներով:

Սխալներ Պոլ դը Կոքի վերոհիշյալ վեպից.

էջ 78) Նորա մոռցնել տալու այն վախը զոր յակամայս
առթած էր:

էջ 86) Նորա ծառայել ուզեց:

էջ 89) Նախորդ օրուանց! յոգնութիւնը:

էջ 189) Չի մեք էրիկքս! փոխանակ առաքիւնութեան և ար-
ժանաւորութեան՝ պչրանք և վայելչութիւն կը փնտռենք ի
նոցանէ:

էջ 198) Քեռիս զիս կսպասէ:

էջ 206) Կիւսթով գրան առջև զայն կոպասէր:

էջ 232) Անձնատուր լինել մեր էրկանց փափաքներուն:

էջ 290) Բաւական նեղութիւն քաշեցի Սիւզոնը զնետ բերելու համար:

Բայց սրանք հասարակ գրողներ են: Այժմ անցնենք մեծ գրաբարակետներին:

Վենետիկի միաբան Ն. Բ. Սարգիսյանը, նշանավոր բանասեր, որից գրաբարախառն մի նմուշ դրինք քիչ առաջ, գրում է նույն գրքում:

էջ 105) Այս պատճառաւ կը մասնակցէ! զթագաւորն՝ օրհնութեանն այնորիկ:

էջ 106) Միահամուռ կը ժողովին Հայաստանեայք յամենայն սահմանաց, շինից և քաղաքաց, ի պաշտօնարանի անդ որբոց և ի յարկի տանն Աստուծոյ՝ պատելոյ քաղաքորմով: (Ուզում է ասել պատելու, իսկ եթե գրաբար է՝ ի պատել):

Մեծ հայկաբան Ն. Եղուարդ Հիւրմիւզեանը «Նուժա Պոմպի-իոս» վեպի զուտ գրաբար թարգմանութեան մէջ (Ն տպ. Վենետիկ 1853=Բ. տպ. 1866) թույլ է տվել իրեն հետևյալ սխալները:

էջ 25 (=էջ 33). Թողեալ զխաղաղաւէտ դաշտորայքս:

էջ 95 (=103). Ջի է տակաւին դոյզն ինչ արիւն յերակունս իմ (էջ 256 ընդ երակս իմ):

էջ 149. Թացեալ արտասուօք զսպիտակափառ և զերկայնահեր մարուսս (Բ. տպ. 157 մորուս) ծերունւոյն:

էջ 154 (=162). Ընդ ևրակունս:

էջ 169 (=177). Ընդ երակունսն ցամաքեալս:

էջ 242 (=252). Լսել ի շրթանց Աթենասայ խորհուրդ նորահրաշ:

էջ 244 (=254). Համեմատէք զՀերոսիլիա ընդ պարկեշտն Անայիս:

էջ 244 (=254). Աչք նորա արտասուալիցք չկարէին տեսնել որ ինչ յաճախն տեսեալ էր նոցա:

էջ 247 (=257). Լոեմ, սիրեցեալդ իմ, որ ինչ յայնժամ յուզէին ի միտս իմ խորհուրդք:

էջ 255 (=265). Եւ բացատրէին գորովանօք որ ինչ չկարէին շրթունք նորա արտաբերել:

էջ 261 (=271). Յետ զերկեամ թագաւորութեան նորա: Գրաբարի սխալը կանգնած է նույն իսկ Վենետիկ 1913

հրատարակված «Միէնքէվիչ, Ջրհեղեղը» վեպի Բ հատորի կողմից. «Երկու հատորաց գինն է՝ Ֆռ. 4»:

Գրաբարյանների վերջին առաժնային էին կազմում այն շատ մեղմացած աիպերը, որոնք ուրիշ բան չէին ուզում, եթե

ոչ աշխարհաբար գրվածքի մեջ երբեմն երբեմն խառնել գրաբար ոճեր ու գարձվածքներ: Իբրև այս վերջինների ներկայացուցիչ մտում էին Վենետիկի և Վիեննայի Միթիթարյանները, որոնք այսօր նույնպես հրատարակված են իրենց փափագից:

Շատ ուշ մնացած մի անձնավորութուն է Մ. Վայկունի, որ Ամերիկայում նստած սկսեց քարոզել վերջերս այն, ինչ որ մեր ամենահին գրողներն էին քարոզում.—վերականգնել գրաբարը: Նա հրատարակել է այս առթիվ մի գիրք, որի վերնագիրն է՝ «Մի միակ հայկազն հայերէն թէ դարձեալ բազում տեղական ճարդի ճշգրտութեամբ»—անուամբ խարդախեալ, ձեռով թարթափեալ և մտովին մօնղոլացեալ—վասն վերականգնեալ հայութեան: Դժբախտաբար այս գիրքը չգտա Երևանում. բայց ունինք սրա երկրորդ հատորը, որի վերնագիրն է «The Raven—Որին և այլ քերթուածք ինչ յեղեալ ի պարզ հայկազներէն»: Տպված է Վիեննայի Միթիթարյանց մօտ, չունի թվական, բայց իմացվում է որ 1925 թվից է կամ քիչ ուշ:

Հեղինակը քարոզում է հետևյալը.—մեր ժողովուրդը գրական լեզուն չի հասկանում. նա խոսում է զանազան բարբառներ. գրական աշխարհաբարը մեկ չէ, այլ մի քանիսը.—«Պոլսերեն, թիֆլիսերեն, վանեցերեն են»: Եթե դպրոցում հայ աշակերտը երկար ջանքերով պիտի սովորի այդ նորահնար աշխարհաբարը, ավելի լավ չէ՞ սովորել գրաբար: Այստեղ հեղինակը սկսում է ծաղրել մեր գրական լեզուն, որ համարում է ոչ միայն աղքատ, թերի, անընդունակ կամ պակասավոր, այլ և օտարածկ և «մոնղոլական»: Մյուս կողմից ծաղրում է նաև այն գրաբարը, որով գրել է Բագրատունին, իբրև դժվարին, ճամարտակ լեզու: Ինքը առաջարկում է մի նորածկ պարզ գրաբար, որ կոչում է «Հայկազներէն»: Այս լեզուն իբրև թե ունի ճոխագույն բառաբանը, քերականական համառոտ ձևեր, ոճաբանութեամբ «ամենաարտայայտունն է, կառուցվածքով նման է եւրոպամերիկեան լեզուներին (և ոչ մոնղոլականին), զուտ ազգային է և մեր ժողովուրդի բոլոր խավերի համար հարմար և ընդունելի»:

Հեղինակի փաստարկութեան ձևը և սարսափելի լեզվի ճաշակը ցույց տալու համար դնում ենք հետևյալ հատվածը (էջ 10): «Յորքան առ նուազն երկու տեսակ քերականութիւններ կը գործածուին մեր նոյն իսկ ամենազուտ աշխարհաբարեան կոչուած գրողներու կողմէ... երկու քերականութիւններ որոնցմէ մեկը ճիշտ այդ մեռած, հնացած և անհնար կոչուած գրաբար»:

ռինն է (միւր միայն ըլլալով այս կամ այն մաքուր աշխարհաբարինը!)... ցայնքան ամենապարզ անպարկեշտութիւն է, չ'ըսենք աներես խարերայութիւն իսկ, ջանալ ատանկ քշել ու քշել թէ՛ մեր Հայութիւնը այսօր մէկ հատիկ ժողովրդական կոչուած, կամ մանաւանդ արդի գրական կոչուելու արժանի, և գրաբառէն մասնաւոր կերպով տարբերող լեզու մը ունի, ապա և թէ՛ «այդ գրաբառի և աշխարհաբարի խնդիրը շատոնց կարգադրուած է, հա...» (այո՛, և... կարգադրուեք ալ է, անշուշտ, ըստ ոմանց, և կարգադրուել է, և, նոյն իսկ կարգադրեալ է!!) ճիշտ ինչպէս անպարկեշտութիւն պիտի ըլլար, և խարերայութիւն իսկ, մեր այդ գրողներուն կամ առաջնորդներուն կողմէն եթէ համարձակէին անոնք գործածել այսօր և միւսին գրութեան մը մէջ միշտ Քիֆլիսաձե, զոր օրինակ, և Պօլսաձե քերականութիւններու խառնուրդ մը, ընտրուած ըստ մղման ներքին քմահաճութեան, կամ քերթուածային նեղիչ պետքերէն, կամ մանաւանդ զանազանութեան սէրին համար (ինչպէս ըստ մը երանելիներ կը ջանան արդարացունել այսօր իրենց մաքուր աշխարհաբարին մէջ զուտ գրաբառեան ձևեր խոկելը— թէպէտ մինչև այսօր այդ երանելիներուն և ոչ մեկ հատը համարձակած է գործածել գոնե երկու այսպիսի ծանօթ արդի... ժողովուրդական հայերէններու քաջապէս զանազանուած խառնուրդ մը, որ է, զոր օրինակ՝ «իմից հայրս հէնց վեր վեցնում նրան, և անոր հետ խնդալէն փողոցների մէջից կ'անցնէր կոր. մի տեղ քշիկ մը կենալուց ետքը, իրան քննութիւններուն և դատողութիւններին համեմատ ևն ևն...») և միանգամայն հոչակել թէ Պօլսերէն, զոր օրինակ մեռած կամ անգոյ կամ մանաւանդ անհնար բան մըն է այսօրուան հայութեան համար բաղատամբ Քիֆլիսերէնին հետ, կամ, փոխադարձաբար Քիֆլիզերէն անհնար բան մըն է պօլսականաց համար, ապա և թէ՛ ասոնց մեկ հատին կամ միւսին բաղը կարգադրուած է, խէրը անիծուել է!!» (մի պարբերութիւն 34 տողանի)։

«Հայկազներէնը», ինչպես կոչուած է հեղինակը իր նորածէն լեզուն, սովորական գրաբարն է, որի միջից վերացված է սուկայն՝

1) Ցուցական, ստացական, ինչպես նաև որակական ածականների համաձայնութիւնը գոյականի հետ: Օր. Արդիւնք քննութեան իմ հարցիդ այդ՝ ի տեսակէտէ գիտական՝ մարթ էր լինիլ օգտակար վասն Հայութեանն մեր վերականգնելի էրը

ժողովուրդ (էջ 241).—Գրաբառին մեր հիմնական և պարզագոյն (էջ 242).—Ջարդիւնսն քննութեան իմ այդ, երկոց իմ այդ (էջ 242).—Հարք մեր պատկանելի (էջ 248).—Միսինսարք օտարազգի (էջ 242):

2) Անցողական բայերը վերջավորվում են—ացումել (և ոչ թե—ացուցանել). ինչ. ներկայացունել (252), վատթարացունել (249), անցունել (11), վասն ցուացունելոյ (12), անհետացունել (13):

3) Մի քանի աշխարհիկ ձևեր մտցրել է գրաբարի մեջ. ինչ. անել (փխ. առնել). ինչ. անել լսելի զձայն իմ (242), անէ (250):

4) Հնարում է մի քանի անսովոր ձևեր գրաբարի մեջ. ինչ. զայնմէ «այն մասին» (252), ասդր «փխ. այսր» (242), հետև այսու «այսուհետև» (15, 247) ևն.

Ահա մի փոքրիկ հատված իր քարոզած «հայկազներէն» արձակից.

«Եթէ անհրաժեշտ է, և քաջ հնար իսկ, ասացի, վերստին արդիացունել և իրապէս գործնականացունել զլեզուս մեր ի բերանս մեր սերկեան յիրս արձակ պիտոյից, պատուաստելով զգրաբառեան տարազն հայերէնին մեր ի պարզութեան իւր և զգրաբառեան տարազն հայերէնին մեր ի պարզութեան իւր և միանգամ ընդ միշտ. նոյնպէս, և ևս առուել, անհրաժեշտ է, միանգամ ընդ միշտ. նոյնպէս, և ևս առուել, անհրաժեշտ է, և ոչ նուազ լիովին հնար, վերստին մարդավարացունել և ազնուացունել զայնս յիրս գեղեցիկ գործածութեան, իմա յիրս քերթուածային կամ բարձրագոյն գրական կիրարկման, վայել Մուսայիցն երկնային...» (էջ 5):

Մի հմուշ էլ տալիս ենք իր այն ոտանավորներից, որ անզլերենից թարգմանել է «հայկազներէն»-ի (էջ 234).

«Բուշակ, ասի, դու ոյն դիաց, գուշակ ևրս՝ թոչուն թէ Այս. Եթէ յղեալ ի Փորձողէն, եթէ խոլեալ յ'ամբոխցն ես, Գոս, թէ լքեալ, սաս, անհրաւէր, յայս վայր դրճեալ, ամայ, աւեր,

Յ'այս բնակս հոյից, խոյից քնաւեր, ասս ինդրեմ եղուկըս, Գուցէ՞, գուցէ՞ դեղ ի Գաղատտ, սաս խնդրեմ եղուկըս:

Ավելի պերճ մի տող է (էջ 231).

Այս ժանտ ու ծիւր, ձառ ու ձոճիր, ձանձամ, դուժկիր թոչունս: Ո՞ր թեկուզ մասնագետ հայագետը հասկացավ այս խրթին հանելուկը և ի՞նչ առանձին տարբերութիւն Գր. Մագիստրոսի

«Մրգուզ փանաք ծրդեալ ծեքեալ»-ի (տես վերը՝ էջ 181) շին-
ծու հայերենի և այս «հայկազներէն»-ի միջև:

Եվ այս ցնդարանությունը քարոզվում է այն երկրում,
ուր սովորական հայերենը մեռնելու վրա է:

Ինչպես որ գրապայքարը ուներ իր կենտրոնը (աշխարհա-
բարյաններ) և իր աջ թևը (գրաբարյաններ), նույնպես ունե-
ցավ իր ձախ թևը: Մրանք տեսնում էին, որ նորակազմ գրա-
կան աշխարհաբարը ժողովրդի անուս մասի համար անհասկա-
նալի լեզու է. նա էլ մի տեսակ գրաբար է: Ուստի մտածեցին
ձեռք քաշել նաև նրանից և գրել զուտ ժողովրդական բարբա-
ռով: Այս ձախակողմյան պայքարողների առաջին ախոյանն է
Քաջատուր Արովյանը:

Արովյանը ծնվել է Քանաքեռում 1804/5 թվին. Ռուսա-
տանում ուսում ստանալուց հետո հայրենիք է վերադարձել
1836 թ. բաց է արել հայկական դպրոց. գրել ու թարգմանել է
բազմաթիվ գրքեր:

Այն ժամանակ երբ Արովյանը ձեռնարկեց գրական գոր-
ծունեության, արդեն հայերեն աշխարհաբար լեզուն կազմա-
կերպված էր: Ո՛չ միայն արևմտահայոց, այլ և արևելահայոց մեջ
հրատարակված էին զանազան աշխարհաբար գրքեր: Այս վեր-
ջինների մեջ հիշենք բացի հնագույններից՝ Գիրք որ կոչի Բանալի
գիտութեան (Պետերբ. 1788), Համառոտ քննութիւն (Մոսկով
1831), Հարկաւոր հարցմունքներ (Շուշի 1832), Աւետարանի
ճշմարտութեան և զորութեան համար (Շուշի 1833), Մեղքն
խաղ անելոյ բան չէ (Շուշի 1833), Քարոզ աւազ ուրբաթ օրին
համար (Շուշի 1833) և թերևս ուրիշներ, որ մեզ անհայտ են:

Ինչպես տեսնում ենք, քանակով մեծ չեն սրանք. 45
տարվա մեջ (1788—1833 թ.) վեց կտոր գիրք: Իսկ որակով...
բոլորն էլ խղճուկ բաներ, ընդհանրապես բողոքական կրոնի քա-
րոզություն...

Արովյանը դժգոհ էր ոչ միայն նրանց լեզվից, որ գրաբա-
րախառն աշխարհաբար էր, այլև մանավանդ նրանց նյութից:
Նա ուզում էր ճիշտ ժողովրդական բարբառով և ժողովրդի սըր-
տին խոսող նյութով գրականություն: Այս մտածությամբ նա
ձեռնարկեց գրել «Վերք Հայաստանին»:

Դնում եմ այստեղ մի հատված այս գրքից, որով կարող

ինինք ծանոթանալ ոչ միայն նրա լեզվին, այլ և նրա շա-
արքության նպատակին:

«Բանը հէնց էս էր՝ որ ասում էի մտքումս՝ թէ նըս-
տիմ, ինչքան խելքս կրերի, մեր ազգին գովեմ, մեր
երևելի մարդկանց արած քաջութիւնները պատմեմ,
էլի մտածում էի, թէ ում համար գրեմ, որ ազգը լե-
զուս չի հասկանալ: Թէկուզ ոսերէն, նեմեցերէն, ես
Ֆռանցուզերէն գրած, թեկուզ գրաբառ՝ տասը՝ կրլի որ
հասկանային, բայց հարիր հազարի համար՝ թէկուզ իմ
գրածը, թէկուզ մէկ քամու ջաղաց: Ախր որ ազգը էն
լեզվովը չի խօսում, էն լիզուն չի հասկանում, սաքի
հէնց բերնիցդ էլ ոսկի վեր ածիր. ո՛ւմ պէտք է ասեա:
Ամեն մարդ իր սրտի խարջ բան կուզի: Քո դարբու
փլաւն ինձ թնչ օգուտ, որ ես չեմ սիրում. Ում հետ էլ
որ խօսում էի, էն էին քանխայ տալիս՝ թէ մեր ազգը
ուսումնասէր չի, կարդալը նրա համար գին չունի. բայց
ես տեսնում էի, որ էս մեր կարգալ չսիրող ազգը Ռո-
պէնսոնի պատմութիւնը, Պրնձէ քաղաքի յիմար գիրքը
ձեռնէձեռ էր մանածում: Էս էլ լաւ գիտէի, որ ինչ երևե-
լի ազգեր կան, բոլորն էլ երկու լեզու ունին, հին ու
նոր. Ախր թէ լուսաւորեալ լեզուն լաւ ա, ու քարերն էլ
պէտք է տրաքին ու հասկանան, էլ տօնլուդ, նշան, պա-
տիւ ո՛ւր են տալիս դիրքանդին: Էն լեզուագէտ իմաս-
տունը թող գնայ, կանգնի, գոռայ, ջաճը դուրս գայ,
լսողը թող ինքը հասկանայ, լուսաւորեալ գլուխն ափ-
սոս չի, որ ցաւի:

«Միտք էի անում, որ գիծն էլ էս չի անիլ: Էլի էս-
պէս մտքիս հետ ընկած՝ շատ անգամ՝ որ դօճաղ էի
գնում, ես քաղաքօջն անց կենում, ուշ ու միտքս հաւա-
քում էի՝ թէ տեսնիմ, խալխը խօսալիս, քէֆ անէլիս,
թնչ բանից ա աւելի հազ անում: Շատ անգամ տեսնում
էի, որ մեյզաւում, փողոցում մէկ քօռ աշրդի էնպէս են
հայիլ մայիլ մնացել ու կանգնել՝ ականջ դնում, փող
քաշխում նրան, որ բերնըների ջուրը գնում էր: Մէջիս
ու հարսանիք հօ՛ առանց սազանգարի երբ հացը կու-
կէրթար: Ասածները թուրքերէն էր. շատը մեկ բառ էլայ
չէր հասկանում, ամա լսողի, տեսնողի հոգին գնում էր
գրախտը, եղ գալիս: Միտք արի, միտք արի, մէկ օր էլ

ասեցի ինձ ու ինձ, արի՛ քո քերականութիւն, ճարտասանութիւն, արամարանութիւն ծալիբ, դրազ դիբ ու մէկ աշղղ էլ դու դճու, ինչ կըլի, կըլի, խանչալիդ քարբ հօ վեր չի բնկնիլ, զառ վարադդ հօ չի գնալ: Մէկ օր էր դու վեր կընկնիս, կմեռնիս, մէկ ողորմի ասող էլ չես ունենար:

Եթե քննենք Արովյանի լեզուն, հետեյալ հատկութիւնները կզանենք:

1) Արովյանը գործածում է բարբառային ձևեր թե՛ բառերի հնչման և թե՛ քերականական ձևերի մեջ: Օր. վերի հատվածում ունինք «էս, էն, կըլի, հարիբ, էրկու, լիկու, դուս, էսպէս, տեսնիմ, խօսալիս, անկաջ, բերնըների, դճու (գարձիբ)»: Մանավանդ էական բայի ա ձևը. ինչ. լավ ա, թնչ բանից ա: Ըստ այսմ բառերի ուղղագրութիւնը թեև ընդհանրապես գրաբար է, (օր. գրում է քազաութ և ոչ թե քաքավոր), բայց երբեմն էլ շեղվում է. ինչ. եդ (ետ, յետ), բարիկենդան, ձին (ձիւն), էկել (եկել), ձէն (ձայն) ևն: Վերի հատվածում լեզու բառը գրված է 4 անգամ լեզու, մի անգամ էլ լիզու ձևով:

2) Հայն չափով տեղի է տալիս գավառական բառերին, օրինակ՝ Ա գլխի սկզբի մի քանի տողերի մեջ ունինք՝ արաքուրբաքում, ճոճոում, ճքճքում, սրսոսցնում, ճղկներ, ձնի քուլայ ևն:

3) Ընդունում է ժողովրդի մեջ գործածական օտար (թուրքերեն) բառերը. օր. վերի հատվածում կա 23 բառ (դրել եմ շեղատառ):

4) Մրան հակառակ, երբ կարիքը պահանջում է, գործածում է այնպիսի գրաբար բառեր, որոնք չկան բարբառում: Օր. «Վերքի» հենց առաջին երեսում գտնում ենք «գօրապետ, գօրական, միամօր, թագաւորազն, վայելչութիւն, ներգործութիւն» բառերը:

Ինչիցն է այս երկընտրանքը Արովյանի մոտ:

Արովյանը մի քանի ուրիշ գրվածքներ էլ ունի, որոնք «Վերքից» մի քիչ առաջ են գրված կամ գրեթե ժամանակակից են: «Վերքը» ըստ Լեոյի (Անի, էջ 30) սկսել է 1840 թվին և վերջացրել է 1842 թվին: «Վերքից» երկու տարի առաջ է նախաշաւիղը, որ ըստ Ռուբեն Զարյանի գրված պիտի լինի 1838 թվին: Այս գիրքը մաքուր աշխարհաբար է, տեղ տեղ համեմված ժողովրդական տարրերով: Վերքին ժամանակակից է «Պարապ

վաթի խազալիքը», որ գրված է 1841 թ. այս գիրքը աշխարհաբար լեզվով է, թեև գրքի առաջաբանում գտնում ենք գրաբարի գովասանքը: Երրորդ գրվածքն է «Ձանգին», որի թվականը հայտնի չէ (ազված է նախ Կուսնկի մեջ, 1860 թ. էջ 876—890): Այս գրվածքը, որ ընդամենը բաղկացած է 14 էջից, շատ հետաքրքրական է լեզվի տեսակետից: Նրա առաջին 10 էջը բարբառով է, մի էջը աշխարհաբար, իսկ երեք էջը գրաբար: — Այս բոլոր հանգամանքները միացրած բացատրում են Արովյանի երկընտրանքի պատճառը:

Արովյանը մտածում էր հասարակ ժողովուրդի համար նախ տեղեկ ըստբառով գրականութիւն, նրանից նետո անցնել աշխարհաբարին, իսկ ազելի ուշ ժամանակի վերագտնել գրաբար գրականութիւնը: Նա վարվել է ուրեմն իրրե բանիմաց մանկավարժ ուսուցիչ, ինչպես էր իրօք ինքը, անգրագետ ժողովուրդի համար սկսելով հեշտից և բարձրանալով նեպոնտե ազելի գծվարինը:

Ինչ ազդեցութիւն ունեցավ Արովյանի «Վերք»-ը:

Արովյանը անհետացավ 1848 թվին, առանց կարեւորապես տեսնել իր գործի հրատարակութիւնը: «Վերքը» կորագցին միայն սակավաթիվ անձինք: Հեղինակի մահից 10 տարի նետո, 1858 թվին, Ներսիսյան գպրոցի աղարանում ազվեց Վերքը առաջին անգամ: Բայց արդեն ուշ էր: Արդեն աշխարհաբար գրական լեզուն ծաղկել ու ընթացք էր ստացել: Վերքի հրատարակութիւնից առանձինգ տարի առաջ, 1843 թվին, Չմյուռնիայում, բողոքական միսիոնարները հրատարակել էին Սազմոսի աշխարհաբար թարգմանութիւնը՝ արեւելայ մաքուր գրականով, որից մի փոքր նմուշ դնում եմ այստեղ:

Թող Աստուած վերկենայ՝ նորա թշնամիներն ցըրվըվին, և նորա երեսիցն փախչին նորանք՝ որ առում են նորան:

Ինչպես որ ծուխն փչանում է, փչացրու նորանց. ինչպես որ մոմն հալվում է կրակի առաջին, թող ամպարիշտներն կորչին Աստուծոյ երեսիցն (Սղ. Կէ 1—2): «Վերքի» հրատարակութիւնից ութ տարի առաջ, 1850 թվին, Տփղիսում Գարրիել քն. Գատկանյանի խմբագրութեամբ սկսվել էր հրատարակվել Ռուսահայոց առաջին աշխարհաբար պարբերականը՝ «Արարատ» շաբաթաթերթը. թեև նա շատ կարճ կյանք ունեցավ և դադարեց 1851 թվին: Նույն տարին սաղարեկ էր

իջել Ստեփաննոս Նազարյանը՝ հրատարակելով «Ճառ յաղաքս փորձառական հոգեբանութեան» գրքարար գործը, որի առաջաբանում կոչվ էր հայտարարում գրքարարի դեմ և պաշտպանում աշխարհարարի դատը: 1853 թվին հրատարակել էր նա իր աշխարհաբար գործերը՝ Առաջին հոգեղէն կերակուր, Վարդապետարան կրօնի և 1857 թ. Հանդէս նոր հայախօսութեան: 1855 և 1856 թվերին լույս էին տեսել Պետերբուրգում հայ ուսանողների երկու տետրակները, որոնց մեջ հավաքված էին զանազան արձակ և ոտանավոր բանաստեղծութուններ, ի միջի այլոց Պատկանյանի «Մայր Արաքսին», որ ոչ միայն Ռուսաստանում, այլ և Կովկասում ու հեռու Տաճկաստանում ազգային սիրելի երգ դարձավ:

Այն թվին, երբ հրատարակվեց Արովյանի ուշացած Վերքը, հրատարակվեցին նաև Ստեփաննոս Նազարյանի թարգմանությամբ «Պաւլոս և Վիրգինիա» գեղեցիկ վեպը, ինչպես և նրա խմբագրությամբ «Հիւսիսափայլ» ամսաթերթը, բոլորն էլ մաքուր գրական արևելյան աշխարհարարով:

Այսպեսով Արովյանի Վերքը թե՛ իր քարոզած նոր սկզբունքի գործադրության և թե՛ առհասարակ աշխարհարարի կազմության համար իրականության մեջ ոչ մի մասնակցութուն չունեցավ: Նա եղավ և մնում է իբրև մի լավ նմուշ արևելահայոց այնքան հարուստ բարբառային գրականության, որի հնագույն երկն է «Սայեաթ-Նովայի երգերի ժողովածուն» (տպ. Մոսկուա 1852, Վերքի հրատարակութունից վեց տարի առաջ): Հետագայում լույս տեսան Սունդուկյանի, Պատկանյանի, Տրմբլաչի Խաչանի և այլոց բազմաթիվ երկերը: Արևմտահայերը այս կողմից չեն կարող մրցել արևելահայոց հետ: Միայն Նոր-Նախիջևանի բարբառով գրված երկերի ընդհանուր գումարն է, ինչպես հաշվել եմ, 3000 էջ:

Այժմ մի քանի խոսք էլ ասենք Ստ. Նազարյանի լեզվի մասին, որ արևելահայ աշխարհարարի մի ինքնահատուկ շրջանն է կազմում:

Իննենք նախ մի հատված իբր նմուշ «Պաւլոս և Վիրգինիա» վեպից (տպ. Մոսկվա 1858, էջ 104—6):

«Մեք զգում էինք մի հիացք, առանց կարողանալու զորա պատճառը հասկանալ: Մեր անարատ ցանկութիւնների մէջ կամենում էինք մեք լինել ամենեկին աչք, արևարացի փառաւոր գոյները վայելելու համար:

ամենեկին հոտոտելիք, մեր բոյսերի խնկահոտութիւնը զգալու համար, ամենեկին լսելիք, մեր թռչունների քաղցր երգասացութիւնքը լսելու համար. ամենեկին սիրտ, այս բարեգործութիւնքը խոստովանելու համար: Այժմուս նստած այն գեղեցկութեան աղբիւրի մօտ, ինչ տեղից բղխում է ամենայն ախորժելի բան երկրի վերայ, իմ հոգին տեսանում է, ճաշակում է, լսում է, անմիջապէս շօշափում է այն բանը, որ յառաջուց կարող էր իմանալ միայն թոյլ, հոգեղէն զգայարաններով: Ո՛հ, ինչ լեզու կարող էր նկարագրել այս միշտ արեգակնափայլ ծովեզերեայքը...

Պաւլոսի մասին պիտոյ է ասել, թէ նայելով իմ վերայ անթարթ աչքով. ձայն արձակեց.— «Վիրգինիան չկայ, չկայ... ապա և ես կամիմ մեռանիլ...»:

Նա ասաց ինձ.— «Ո՛վ իմ բարի զբացի, այս գիշերիս երազումս տեսայ ես Վիրգինիան սպիտակ զգեստով... բայց ինչ որ ևս աւելի զարմանալին է իմ համար, այն է, որ և Դը լա Տուր տիկինը այս գիշերիս տեսել է մի երազ նմանապիսի հանգամանքներով»:

Երազը երբեմն ծանուցանում են ստոյգը...

Թող լինի այդ բանը, ինչպէս կամի ... Մահն է մի ամենամեծ բարի, յաւելացրեց նա.— պիտոյ է ցանկանալ նորան. եթէ կեանքը մի պատիժ է, պիտոյ է փափագել նորա վախճանին. եթէ դա մի փորձութիւն է, ապա պիտոյ է խնդրել, որ այդ փորձութիւնը լինէր կարճատև:

Կուսակալը հոգաբարձութիւն արեց Դոմինիկոսին և Մարիամին, որ այլ ևս կարող չէին սպասաւորութիւն առնել, որ և երկար չապրեցին իւրեանց տէրոնց մահուց յետոյ:

Ահա Ստ. Նազարյանի լեզվի ներկայացրած գլխավոր հատկանիշները: (Օրինակները քաղում եմ վերոհիշյալ «Պաւլոս և Վիրգինիա» վեպից. նշանակում եմ նրա էջերը):

1) Շատ տեղ հոգնակի ուղղականը կազմում է ք հանգով. ինչ. երկու բողբոջ 9, կարողութիւնքը 19, տերեքն 23, իրօնքը 71, մեծամեծքը և հասարակութիւնքը 71, բնակիչքը և մեծամեծ աստիճանաւորքը 94:

2) Նույն ձևը ունի նաև հայցական հոլովի մեջ. ինչ. զգալով իւր նորոգված զորութիւնքը 17, թաղեցին նոցա հաւատա-

ըիմ սպասաւորքը 108, հրացանքը դէպ ի ցած թողած 93, տարածելով այստեղ իւր ապականութիւնքը 39:

3) ութիւն վերջացող բառերը հոլովում է -թենն ձևով. ինչ. ամուսնութենից 13, մտատանջութենով 17, դալարութենից 19, հեռաւորութենով 18, ընկերութենների 71, քաղցրութենների 80, լուութենից 92:

4) Անսովոր հոլովական ձևեր են՝ «պատերազմերի 93, մօրերի (մայրերի) վերայ 93, ամեններին (ամենքի) 23, իւրեանց տէրոնց մահուց յետոյ (ուզում է սաել շիրենց տէրերի մահից յետոյ)» 106:

5) Դերանունները գրաբարաձև են. ինչ. նորա, նոքա, նոցա, նորան, իւր (12 կն), իւրեանց 17, 93, մեք (=մենք) 92, միմեանց 93:

6) Այսպես նաև նախադրութիւնները. ինչ. վերայ (11 և շար.), առաջև 13, 93, դէպ ի (փխ. դէպի) 93:

7) Շատ բառեր գրաբարի ձևով են. ինչ. սեաւ 38, լեաւնը (լեռը) 18, ամենայն 13, 71, յաւելացրել էր 13, բարի առնել «բարիք անել» 23, առաւել 93, յառաջուց 104, որպէսը 92:

8) Բայերի մեջ պահում է ներքին և հողակապը. ինչ. մտանելով 39, որ գտանէ 39, գտանվում էին 18, չեմ տեսանում 92, եթէ որպէսը հարցանես 92, ցուցանում են 38:

9) Անցողական (պատճառական) բայերը կազմվում են -ուցանել ձևով. ինչ. կացուցանում է 13, դարձուցանում էր 17, 93, լցուցանում էր 23:

10) Նշանավոր է իր «պիտոյ է» ձևի գործածութիւնը՝ փոխանակ սաելու «պէտք է». ինչ. պիտոյ է վշտանար 17, պիտոյ էր գնալ 95 կն:

11) Աչքի են ընկնում մի խումբ անսովոր բառեր. ինչ. նմանապիսի (տես վերը), զուգաւորապէս «հաւասարապէս» 11, մշակագործվել «մշակվել» 71, ցուցակութիւնք «ցուցներ» 93, մի բոլորամասն թուլութիւն «մի ընդհանուր թուլութիւն» 38 կն:

Այս բոլոր լեզվական հատկութիւնները ընդհանրապես գրաբարի մնացորդներ են, որոնցից պիտի ազատվել աշխարհաբարը հետագայում:

Գրապայքարի և աշխարհաբար լեզվի մշակման մեջ ավելի նշանավոր եղավ մեծ դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: Նա էր այն մարտիկը, որ մի կողմից տեսական պայքար էր վարում գրաբարամուտ պահպանողականների դեմ, մյուս կողմից մշակում նոր գրական ազգային լեզուն զարգացնելու ճշմարիտ սկզբունքները

և ուղղութիւնը, և, վերջապես, երրորդ կողմից՝ գործնականում տալիս աշխարհաբարը մշակելու օրինակը: Գրաբարի դեմ վարած պայքարում իր ճշմարիտ և զորեղ կռիվան այն էր, թե գրաբարը մեռած լեզու է, որ նա հին ժամանակների լեզուն է և որևէ ջանքով կարելի չէ այդ մեռած լեզուն վերստին կենդանացնել ու ժողովրդի բերանը դնել: Մինչդեռ գրաբարի քուլմերը փորձում էին մարդկանց շլացնել գրաբարի գանձերով, Նալբանդյանը պահանջում էր, որ իր ժամանակի հայ գործիչները ժողովրդին հոգևոր ու մտավոր սնունդ տան ժողովրդին հասկանալի լեզվով: Այս պատճառով էլ նա հետևողական կերպով պաշտպանում էր աշխարհաբարի դատը՝ ամենագործող տեսական հիմնավորումներով: Գալով նոր լեզվի մշակման և կատարելագործմանը՝ այստեղ էլ նա միանգամայն ճիշտ ուղու վրա էր կանգնած: Նա ճիշտ կերպով գտնում էր, որ նոր լեզուն, աշխարհաբարը, ինքնուրույն լեզու է արդեն և պետք չէ, որ ստրկանա ինչպես գրաբարին, այնպես էլ որևէ բարբառի: Նա ասում է, թե «տեղական բարբառը ազգի ընդհանուրի համար գործական արժեք չունի և նոր լեզուն այս կամ այն գավառական բարբառի տակ, դրականապես, մշակելու գաղափարը նույնպես ամուլ և անգործադրելի է, ինչպես հին լեզվի գաղափարը, ինչպես սորա ստրկութեան տակ աճած նոր լեզվի գաղափարը: Այս տեսակ մշակութիւնը ինքն իրեն հակասում է նոր լեզվի մշակութեան գաղափարին, որ է որքան կարելի է առավել շատ և առավել մեծ բազմութեան հասկանալի կերպով խոսել»*):

Այս խոսքերը լույս են սփռում ոչ միայն այն հարցի վրա, թե ինչ դեր էր հատկացնում Նալբանդյանը գրաբարին և բարբառներին, այլ և այն հարցի վրա, թե ինչ էր պահանջում նա նոր լեզվից: Ելակետ ունենալով այն ճիշտ սկզբունքը, որ ազգի լեզուն ազգի ընդհանուր հաղորդակցման միջոցն է, նա այդ լեզվի կյանքը տեսնում էր նրա ընդհանրութեան մեջ: Այս պատճառով էլ նա առավելութիւն չէր տալիս այս կամ այն բարբառին, չէր քարոզում գրական լեզուն ողողել այս կամ այն բարբառին հատուկ բառերով ու ձևերով, այլ պահանջում էր, որ կենդանի, ժողովրդի խոսակցական լեզվից առնել այն, ինչ որ ընդհանուր է: Նա գտնում էր, որ նոր լեզուն մշակելու, հարստացնելու և զարգացնելու համար անհրաժեշտ է հիմնավոր կերպով քննել, ուսումնասիրել տեղական բարբառները և առնել նրանցից այն

* Մ. Նալբանդյան, Երկեր, հ. 3-րդ, էջ 197:

ամենը, ինչ որ անհրաժեշտ է, բայց գտնուած էր, միաժամանակ, որ այդ բանը պետք է կատարվի խիստ ընտրութեամբ և դարձյալ՝ ընդհանրութեան սկզբունքին համաձայն. «Մենք կարող ենք որևէ-ցեզավառական բարբառ քննել, սովորել, տեսնել նորա արժանա-վորութիւնը և թերութիւնը. բայց այսչափ միայն և ոչ ավելի...»

Բոլոր գաղափարական բարբառների էական տարբերքը, որ հրենց ձևով և կաղմութեամբ ավելի ընդունակ են կենդանի ընդհանրութեան լեզվի վրա պատմաստվելու, պիտի ընկնեն ճար-տարապետ հեղինակների քուրայի մեջ և այնտեղ հավելով և քիմիաբար (Ֆիզիկաբար ոչ) միանալով պիտի դուրս գան ոչ որպես թլպատութիւն կամ անթլպատութիւն, այլ որպես նոր արարած*):

Այսպիսով Նալբանդյանը ճիշտ էր գնահատում թե զբա-բարի և թե բարբառների դերը նոր լեզվի զարգացման մեջ, և իր այդ տեսակետն էլ առաջնորդ ուներ գործնականում, նրա լեզվի քննութիւնը ցույց է տալիս, որ առաջին շրջանում ընդ-հանուր առմամբ շատ մոտ լինելով Նազարյանի լեզվին, հետո սակավ առ սակավ ավելի մշակվում է և շատ կետերում զգալապես տարբերվում նրանից: Մի գաղափար տալու համար նրա լեզվի մասին, դնում ենք այստեղ երկու նմուշ. մեկը 1857 թվից, մյուսը՝ 1863—64 թվից.

«Տեղիք չունինք ամենևին մեր ժողովրդի անգրասիրու-թեան վերա զարմանալու. պատճառ, մեր մատենագրութիւնը մինչև այսօր արեղայական մատենագրութիւն է, միջին դա-րերի դպրոցական մատենագրութիւն, եթե այս անունը ևս կա-րելի էր տալ. չկա նորա մեջ կյանք և կենդանութիւն, այլ սկզբից մինչև այսօր մի վհատեցուցիչ միօրինակութիւն: Եվ դնենք թե մի հայ մարդ առնուր յուր ձեռքը հին լեզվով շա-րազրած մի գիրք (իհարկե հայերեն) և սկսեր չոր չոր կարդալ այնքան, մինչև որ անգիր ուսաներ միանգամայն կարդացածը, թեպետ այս մի մեքենական սարսափելի տանջանք է, բայց ի՞նչ օգուտ կարող էր քաղել գորանից. ոչինչ, և աստված վկա է ոչինչ. մարդկային մարմինը երբեք չէ կարող սնանվիլ այն-պիսի կերակրից, որ ինչ հատկութեններով մտանում էր բե-րանը, նույն հատկութեններով դուրս գար որովայնից առանց մարսվելու և արյուն դառնալու. պատճառ, մարմինը յուր շին-վածքի համար նյութ չստանալով այնպիսի կերակրից, անտա-

* Մ. Նալբանդյան, Երկեր, հ. 3-րդ, էջ 106, 107—108:

բակույս կթուլանար և հետո կքանդվեր ևս. հոգու համար մի-այսպիսի կերակուր է չհասկացած բան կարդալը»:

(Երկեր, II հ. էջ 63)

«Շատ և շատ զարմանալի է, որ այդ հնամուլ պարոնները խոսելու ժամանակին թեև աղավաղ, այնուամենայնիվ նոր լեզ-վով հայտնում են յուրյանց միտքը: Սորանով իրանք իրանց ապացուցանում են, որ նոր լեզուն ուներ կյանք և գործածու-թիւն ընկերութեան մեջ, եթե պատահում էր հարցանել դոցա, թե ինչու համար հին լեզվով չեն խոսում ընդհանրապես, այլ նոր լեզվով, կը լսեիր պատասխան, թե սովորական լեզուն ազգի բերանում այս է, և եթե կամենային հին լեզվով խոսել, այդ անհասկանալի էր ժողովրդին: Այս պատասխանը արդար էր և ճշմարիտ. բայց արիք քննենք, թե ինչ է պատճառը, որ այդ պատվելի պարոնները ինչ ժամանակ կամենում էին յուրյանց միտքը գրի միջնորդութիւնով հայտնել, իսկույն այն ժամ հա-ռաջ սովորական խոստովանյալ լեզուն կը պղծվեր, և անհաս-կանալի նոր ժողովրդին հին լեզուն կը գար հանդես, մինչև որ կամենում էին մինչև հետին շունչը պատերազմիլ և ճշմարտու-թիւնը չխոստովանել: Սորա պատճառը մեզ քաջ հայտնի է և այդ պարոնները իրանք ևս գիտեին, որ գիտենք. բայց որով-հետև մինչև այժմ հանդես չէինք բերած, այժմ պիտո էր հան-դեսով ցույց տալ, որ հաստատվեին յուրյանց կարծիքի միջում, թե յուրյանց կամակորութեան աղբյուրը մեզ քաջ հայտնի է:

... Նոր լեզվի միջում կա հիանալի խորհուրդ, երանի թե հնար լիներ ասել այդ հնամուլ պարոններին. հին լեզվի միջում ևս կա խորհուրդ, բայց կորստական և շատ տարբեր այն խորհրդից և միանգամայն հակառակ՝ ինչ որ կա նոր լեզվի մեջ: Այդ պատ-վելի պարոնները եթե փոքր ի շատե ուղիղ տեսութիւն ստացած լինեին, կտեսանեին այդ խորհուրդները, բայց փսոս որ միմիայն հայոց հին և մեռյալ լեզուն ուսանելով մնացել են դեպի ուրիշ գաղափարները անզգա: Մին օրինակ. դեռ չենք տեսած, որ հացը՝ թեև միայն նյութական բան էր, մի մարդ ունենալով երկու մյուսը թարմ և տաք, բայց թողնէր այն թարմ և նոր եփած հացը, որ ավել սննդաբար էր և ձեռքը պարզեր դեպի քարացած հացը, որ հառաջ քան ստամոքսը գնալը բոլոր ատամները ևս կփշրեր: Նայոց հին լեզուն հնացած հաց է արդեն, և 1300 տարի է որ թխված է, իսկ նոր լեզուն ամենայն օր եփվում է, ջերմ է և

աննդարար, ուստի սորանով շատ հեշտ կլինեն կերակրել հայոց ազգի սոված հոգին և սա ավելի հյուժ և արյուն կդառնար նորա մեջ, քան թե այն չորացածը և քարացածը, որ շունի յուր մեջ այն կենդանական մասները: Ով որ ականջ ունի լսելու թող լսե, պատճառ որ ասվում է լսվելու համար»:

(Նույն տեղ, էջ 404—405 և 407)

Այն միջոցին, երբ սկսեց Նազարյանը հրատարակել Հիւսիսափայլը, ճիշտ նույն թվին (1858), իբր հակազդիչ ուժ նրա ազատական գաղափարներին, սկսեցին հրատարակվել ձառքաղը Մոսկվայում և Մեղու Հայաստանին Տփղիսում: Երկուսն էլ աշխարհարար էին, բայց շատ ավելի գրաբար խառնուրդով: Մի գաղափար տալու համար նաև սրանց լեզվի մասին, դնում եմ այստեղ երկու փոքր հատված:

Սագ (ղազ) արժանի յիշատակի

Միլէյք քաղաքումը, Յովսէփ Սթրոս անունով մարդու մօտ, գտանուում է մի սագ, որ 36 տարեկան է: Յովսէփ Սթրոսն զայս սագը ժառանգութիւն ստացած է յիւր մօրէն, որ 20 տարի յառաջ վախճանուած է: Այս արժանի յիշատակի սագս յետ կրելոյ զայն ամենայն մահաբեր ցաւքը, որք պատահում են այսպիսի կենդանեաց, ողջ մնացած է և դեռ ապրում է: Այս Բոնեմեան հինաւուրց սագս՝ ամենայն տարի ըստ բնական կարգի ձուեր է անում. անցեալ տարի (1857), աներ է 28 ձու, իսկ այս տարի (1858) միայն 8: Նորա ձուերից միշտ առողջ ձագեր է դուրս եկած: Այժմ նորա ձուերթեան նշանն այս միայն է՝ որ խուլ է, և համարեան թէ ոչինչ կարող չէ տեսանել: (ձառքաղ 1859, հտ. Ա. էջ 36):

Այս երկու յաղթող թագաւորքը բաժանեցին իրանց մէջ աւարները, որք էին ոսկի, արծաթ և քանդակագործութիւնք ի զանազան հրահալելեաց: Տիգրան ստացաւ երեքից երկու մասը այս ամէն գանձից, իսկ միւսքը մնացին Կիւրոսին. և Տիգրան յետ դարձաւ իւր Աթոռն՝ ի Հայաստան իւր գօրքով և մեծ աւարաւ. և ձեռք տուաւ աւելի բարեկարգութեան աշխարհին և զինուորականութեան, և վախճանեցաւ յետ 45 տարի թագաւորութեան: (Մեղու Հայաստանի, 1858 յունիսի 28, № 26, էջ 204):

Երկուսն էլ ունին Նազարյանի նման հոգ. ուղ. ք վերջավորությունը. բայց ունին նաև գրաբարի հյց. գ և բացառակա-

նի ի նախդիրով հոլովները, որոնցից հեռու է Նազարյանը: Սակայն Նազարյանը ունի իր նշանավոր բարձր էջ ձևը, որի փոխարեն, նույն իսկ գրաբարամու ձառքաղը դնում է «պիտի»: Օրինակ՝ Որչափ պիտի կարողանան. Հարկ պիտի լինի. Գարաք պիտի համարիմք (ձառքաղ, 1858 Ա. էջ 40): Ոսկի տառերով պիտի գրուէր. Մինչև յիբր պիտի տեէր այս. մինչև յիբր մեր ազգն զայս ամօթը պիտի կրէր (1859 թ. Ա. էջ 56):

Բարբառային—գրական լեզվի ջատագոյններից մեկն է Շուշեցի Ավետիս Բահաթրյանց, անհայտ մնացած մի հեղինակ, որի մասին կարևոր եմ համարում խոսել այստեղ:

Նրա հետ ծանոթացել եմ Շուշում 1903 թ. երբ 70-ամյա ձերունի մարդ էր: Ուննր երկու տպագրված էր. Առակտիրք (Շուշի 1886) և Հին հայոց տաղաչափական արուեստը (Շուշի 1891): Առակտիրքը զապնի ներքնի երկուսն տրված է ընդարձակ ցանկը այն բաղձաթիվ գործերի, որ պատրաստել էր նա և որոնք անտիպ մնացին: Այդ գործերի մեջ նշանավոր է իր Բառարանը:

Արտվյանի նման Բահաթրյանցն էլ այն կարծիքն էր ունեցել, թե գրական աշխարհարարը աւանդին անհասկանալի է, ուստի պէտք է պարզել այն և մոտեցնել ժողովրդական լեզվին: Այս նպատակով նա կազմել էր մի քննարկային բառարան (չուրջ 50,000 բառով), ուր ամօթեւ էր իր կարծիքով ժողովրդին մարտնչի բողոք բառերը: Գտնվում էին այնպեք գրաբարի այն բառերը, որոնք հասկանալի էին կամ կարող էին լինել հասարակ ժողովուրդին, Հարաբարի հայերենի դասական բառերը և հայ ժողովուրդի մեջ գործածված քաղցրեմ բառերը: Վերջինների մասին հեղինակն այն կարծիքն ունեց, թե նրանց թուրքերեն չնն, այլ հայերեն, և թե ոչ թե հայերեն են, որ փոխ են առել այդ բառերը թուրքերենից, այլ ընդհանրապէս: Այդ բառերը նա մինչև անգամ ստուգաբանում էր հայերեն արձատներով. օր. թրք. yorgan բառը, որ է «գինձակ», մեկնում էր հյ. վեր, Հարաբարի բարբառով յօր բառից, որով yorgan = հյ. վերաբկան:

Այս բառարանը նա կազմել էր 1830-ական թվերին, բայց չէր կարողացել լույս ընծայել: Ես հայանեցի, որ ամեն ինչ արդեն ուշ է. գրական լեզուն արդեն հաստատվել է, ետ դարձնել իր ճանապարհից այլ ևս անհնարին է. Միակ անհրաժեշտ բանը, որ մնում էր անել, այն էր որ պետք է քաղել նրա միջից Հա-

բարաղի բառերը և հրատարակել: Բառարանը միայն բառերի ցանկն էր. այսինքն բառերի նշանակությունը չէր դրված. ծերունի հեղինակը՝ աչքերից տկար, չէր կարող անել այդ: Ուստի, ես հանձն առի և ամիսներով իր մոտ նստած աշխատելով, իր թելադրությամբ կազմեցի Ղարաբաղի գավառական բառերի բառարանը: Այս աշխատությունը ուղարկեցինք Պոլիս Իզմիրյան մրցանակին: Այժմ իմ ձեռագիրը գտնվում է Երուսաղեմի վանքում. իսկ ձեռագրի լուսանկարված օրինակը գտնվում է մեր Պետական համալսարանի գրադարանում*):

Առակագիրքը (փոքրադիր, էջ 159) մաքուր գրական աշխարհաբար է, տեղ տեղ խառնված են Ղարաբաղի գավառական բառեր, Ղարաբաղի բարբառային ձևեր և թուրքերեն բառեր: Ահա Առակագրքի 5—15 էջերում գործածված այս կարգի բառերի ցանկը:

Գավառական բառեր.— հեսիք «անավասիկ», ական ական, փոչ փոչ, շախշըխկան (էջ 5), դինջդինջ (7), կայծախարուած, թոյնթորել (8), որձակ, աղբահար, կոտկոտել (9), սալգահել «սահիլ» (11), չալմլտտիկ, տուպտուպորիկ, սաքուլ (14), սիրսիրատել, քլմսոտել, խանչխանչել (15):

Բարբառային ձևեր.— էն, էնպէս, քուն իլ «քնիք» 5, դին են տամ 10, էլին «եղան», եկին «եկան», ելին «ելան» 11, ընկին «ընկան», միր վախիլ «մի վախիլ» 12, ման էր գամ 15, մին քանի 8, սրահին վերայ 6, Խիկարին հայրը, պապին առաջքին 8, ալևորին պատիւը 9:

Թուրքերեն բառեր.— մաթալ մնաց 7, ճահել 8, մանանով 10, դոչի 11, ոանկ 12, ամիկ 14, օթադ, փլով 15:

Բահաթրյանցի կազմած գրական լեզվի ժողովրդական բառարանը ոչ միայն գործադրության չդրվեց, այլև ձեռագիրը տպագրության չարժանացավ և վերջում հրդեհի զոհ դնաց:

Բարբառային—գրական լեզվի վերջին ներկայացուցիչն է համարվում Թումանյանը: Բայց սա թյուրիմացություն է: Թումանյանի բարբառային լեզուն սահմանափակվում է «էս, էդ, էն, էսպէս, էդպէս, էնպէս, էսօր» կամ թե «ծէր, ժեռ, գէլ, ձէն, փէտ», կամ թե «ճամփէն, երեխէք, թամաղէն...» և նման մի քանի ժողովրդական ձևերի մեջ: Եվ որովհետև շատ հաճախ նա

*) Բահաթրյանցի տունը այրվեց Երուզիա մեծ հրդեհին, որին զոհ դնացին հեղինակի բոլոր գործերը, ինչպես նաև ութը հաս հայերեն հին ձեռագիր. որոնցից մեկն էր Գր. Տաթևացու ինքնաձեռագիր մի աշխատությունը:

վերցնում է շատ ժողովրդական նյութեր, ուստի ստիպված է գործածել թուրքերեն բառեր էլ. ինչ. «դուշման, ահել, ջահել, գյուլա, դոնալս, քէֆ, գալում, մայիլ մնալ, բինա, զուռնաչի, փահլեան, փարդա, ադաթ, փէշ, իգիթ, բոստան, բոստանչի» ևն: Նա սակայն չի ասում Արեղյանի նման «անկաջ, լիզու, էրկու, հարիր»... և մանավանդ էական բայի ա ձևը: Այս վերջինը գալիս է միայն այն ժամանակ, երբ գրվածքը զուտ բարբառով է. ինչ.

— Աչքիս վրա, քեռի Գուշի,

Մի գդակ ա, հօ մի քուրք չի.

Փողի մասին ավելնորդ ա.

Մեր մեջ խոսայն էլ ամոթ ա:

Բայց երբ գրում է գրական լեզվով, այն ժամանակ գործածում է «է». ինչ.

Ծիծաղախիտ Վանա ծովի

Փոքրիկ գյուղից առափնյա

Մովն է մտնում գազաագողի

Ամեն գիշեր մի տղա:

Մոգն է մտնում առանց նավակ,

Բազուկներով առնացի

Ջուրը ճողփում, լող է տալի

Դեպի կղզին դիմացի:

Նույն իսկ այն դեպքում, երբ գեղջուկ շինականն է խոսում, դարձյալ գտնում ենք «է».

Արբի, գութան, վարբի, գութան,

Օրն հկել է, ճաշ դառել,

Առը շուռ տուր, խոփիդ զուրբան,

Օրհնյալ է աստված, հորովե՛լ*):

Այս գլխի վերջին հարցը լեզվի միութայն խնդիրն է:

Քանիցս անգամ շոշափվել է այս հարցը մեր գրականությունում վեջ. վերջին անգամ ավելի ընդարձակ խոսեց այդ մասին հանգուցյալ Մանուկ Աբեղյանը՝ Արարատ 1897 թ., էջ 424—431 և 494—503: Նա ընդունում է, որ մեզ նման ցրված մի ազգի մեջ մի միակ գրական լեզու ունենալը անհրաժեշտ միջոց է ազգային միութայն համար (էջ 427ա): «Եթե այժմ մենք երկու գրական լեզու ունինք, այդ հատկապես արևելյան հայոց անցյալ գրագետների անհեռատեսության շնորհիվ է: Մեր արևել-

*) Թումանյան, Բանաստեղծություններ, Բագու, 1906, էջ 65, 69, 7:

յան գրական լեզուն արդի ձևով իսկապես գոյություն պիտի չունենար, եթե Նալբանդյան, Նազարյան, Պատկանյան և ուրիշները, որոնք սկիզբն դրին այս գրական լեզվին, ավելի ծանր մտածած լինեին իրենց գործի վրա և հայուցյունը Ռուսիայի սահմաններից դուրս ևս տեսնեին» (էջ 431բ)։ Սակայն ընդունելով հանդերձ մի միակ գրական լեզվի անհրաժեշտությունը, չի հավատում որ «կարելի է այդ այժմ, առանց որևէ քաղաքական մեծ փոփոխության կամ մի ուրիշ նշանավոր հանգամանքի» (էջ 431բ)։ Ուստի մտածում է, թե պետք է առ այժմ մտեցնել այդ երկուսը և «այնչափ մոտեցնել, որ երկու կողմից ևս հեշտ հասկանալի լինի» (էջ 496ա)։

Իսկ ի՞նչ պետք է անել մոտեցնելու համար։

Արեղյանը առաջարկում է հետևյալ միջոցները.

- 1) Արևմտահայերը պիտի հրաժարվեն գրաբար ձևեր գործածելուց (ընկերութեանց, մանկանց, ընտանեաց, հայրենեացն)։
- 2) Արևմտահայերը պիտի ընդունեն ներգոյականի -ում ձևը։
- 3) Ի վերջացող բառերը հոլովել ու. ինչ. եկեղեցու, գինու, այգու ևն։

4) Կանոնավորել ը և ն հոդերի գործածությունը. արևմտահայերը ամեն տեղ դնում են ն. պարտավոր են ձայնավորից հետո գործածել ն, բաղաձայնից հետո ը, որ որոշ դեպքերում նույնպես դառնում է ն. ինչ. մարդն շտապեց ևն։

5) Հատուկ անունների ծայրին պետք է դնել որոշիչ հոդ, ինչ որ արևմտահայերը չեն անում. օր. Ստեփաննոսն (և ոչ թե Ստեփաննոս) ասաց։

6) Արևմտահայերը սեռականի վրա դնում են ն հոդը. ինչ. Այս գործին վրա. իր ծարավին հազուերդը։ «Արդարև, արևելյան հայերին այդ տարցե. ությունը ոչինչ դժվարություն չի պատճառում հանդանալի լինելու համար, այլ միայն փոքր ինչ ծանր է թվում» (էջ 500ա), ուստի արևմտյան հայերն էլ պարտավոր են հրաժարվել զրանից և «այս դեպքում ևս արևմտյան գրական լեզուն արևելյանին պետք է հետևի» (էջ 500բ)։

7) Անորոշն է մի արևելահայոց մեջ, մը, մ, մըն արևմտահայոց մեջ. «պահանջել որ արևելյան լեզուն մը, մ, մըն ձևն ընդունի, այդ կլինեք անհնարինը պահանջել, քանի որ մի ձևն իր հաստատուն դիրքն ունի» (էջ 501ա), ուստի պահանջում է, որ արևմտահայերը արևելահայոց պես գրեն միշտ մի, միայն թույլատրում է, որ մի հոդը գրեն հետադաս։

8) Արևմտահայերը առատորեն գործածում են մը անորոշ

հոդը, մինչդեռ առանց հոդի էլ բառը անորոշ է մնում, ինչպես արևելահայոց մեջ։ Ըստ այսմ արևմտահայերն էլ պետք է սահմանափակեն մը-ի այնքան առատ գործածությունը։

9) Արևմտահայերը պետք է հրաժարվեն գործածելուց այն ուսմիկ (իմա ժողովրդական) ձևերը, որոնք չկան գրաբարի մեջ և չկան նաև արևելահայոց մեջ. ինչ. հասկնալ, գողնալ, մոռնալ, ձանչնալ, հարսնիք, ելլել, ըլլալ, ըսել, ընել իյնալ, ինկավ ևն։ Սրանց փոխարեն պետք է ասել՝ լինել, ասել, անել ևն ևն։

Ինչպես ընթերցողը նկատեց, այս 9 պարտադիր որոշումները միայն արևմտահայ լեզվի համար են. արևելահայ լեզվի մասին ոչ մի խոսք չկա, նրանից ոչ մի գիշում չի պահանջվում։ Եթե արևմտահայերը այս 9 կետերը ընդունին, ըստ Արեղյանի կատարվի «երկու լեզվի մերձեցումը»։

Բայց այս վերջին տողը սխալ չէ՞ ասված. ո՞չ թե կկատարվի երկու լեզվի մերձեցում, այլ, ինչպես ամենավերջը անկեղծությամբ ասված է, «արևմտյան լեզուն շատ կը մոտենա արևելյան լեզվին և ամեն մի արևելյան ընթերցողի համար հեշտ հասկանալի կլինի» (էջ 503ա)։

Արեղյանը ճիշտ չի դատում. արևմտյան հայերենի միջից ըլլայ ձևը լինի դարձնելով կամ մը-ն մի շինելով ոչինչ չի դուրս գալ։ Ըլլայ ձևը՝ մի տառի տարբերությամբ (ըլլի) գործածական է նաև արևելահայոց մեջ։ Չկա մի արևելահայ. որ չիմանա, թե է նաև արևելահայոց մեջ։ Չկա մի արևելահայ. որ չիմանա, թե արևմտահայերը ըլլայ ու մը են գործածում։ Երբ ուզում են ծաղարևմտահայերը ըլլայ և մը ձևերն են մեջ բերում, բել արևմտահայերին, հենց ըլլայ և մը ձևերն են մեջ բերում, նաև ռուսիկա, ադիկա, անիկա, հոս, հոդ, հոն, ասանկ, ասանկ, անանկ» ևն։ Այս ձևերը արևմտահայերից ավելի ծանոթ են արևելահայերին։ Մերենցի «Երկունքը» (Թիֆլիս 1879) հասկարևելահայերին։ Պարոնյանի «Մուրացիկաները» (Թիֆլիս, 1891) և մյուս գործերը շատ հասկանալի էին։ «Բաղդասար աղբար» և ուրիշ մի շարք պիեսաներ չափազանց շատ ներկայացրվեցին և միշտ հասկանալի էին։ Ուրեմն հարցը հասկանալի լինելու մասին չէ. այլ միայն խորթություն։ Վերևում ասաց արդեն Արեղյանը, թե «Արդարև, արևելյան հայերին այդ տարբերությունը, թե «Արդարև, արևելյան հայերին այդ տարբերությունը ոչինչ դժվարություն չի պատճառում հասկանալի լինելու համար» (№ 6), այլ միայն փոքր ինչ ծանր է թվում»։ Ուրեմն այն բոլոր պարտադիր որոշումները արվում են ո՞չ թե երկու բարրառները իրար մոտեցնելու և իրար հասկանալի դարձնելու համար, այլ որովհետև արևելահայոց «փոքր ինչ ծանր է թվում»։

Արեղյանի սխալ դատողութիւնը հատկապէս երևում է Ք 2 կետից, որով առաջարկում է արեւմտահայերին գործածել ներգոյականի ում ձևը. Բայց մի՞թե մեջ բառը անհասկանալի է արեւելահայոց, մի՞թե արեւելահայերը չեն կարող ասել «պարտեզի մեջ, փողոցի մեջ, հասարակութեան մեջ են» և կամ մի՞թե ամեն անձնական հատուկ անվան ներգոյականը մեջ ձևով չի գործածվում, ինչպէս «Պետրոսի մեջ, Գրիգորի մեջ և ո՛չ թե Պետրոսում, Գրիգորում են»: Եթե հարցը իրար հասկանալի լինելու մասին լիներ, պիտի պահանջեր, որ արեւելահայերը թողնեն այդ ում-ը և գործածեն միայն մեջ, որ թե՛ իրենց հասկանալի է, և թե՛ խորթ էլ չէ: Դժվարը և անսովորը կընջեն և հեշտը կտարածեն, թե՛ հակառակը:

Ուրեմն հարցը դարձյալ ո՛չ հասկանալի լինելու և ո՛չ էլ խորթ լինելու մասին է:

Արեղյանի հարուցած հարցին արձագանք տվին ուրիշները, որոնց հոգիվածները մի առ մի չեմ հիշատակում: Կհիշեմ միայն Կրկուցը: Առաջինն է Սեդրակ Մանդինյան նշանավոր մանկավարժը, որ Արարատ հանդեսի մեջ (1898, էջ 128—137) պատասխանեց իր պաշտոնակցին շատ գեղեցիկ ձևով: Նա «աւարդար և խիստ վտանգավոր» է գտնում այն պահանջը, որ անում է Արեղյանը. «Այսուհետև բոլոր գիջումները արեւմտյան բարբառից պետք է պահանջվին, իսկ արեւելյանը հանգիստ հոգով կարող է ոչ մի նշանախեցից չհրաժարվիլ. ուրիշ խոսքով՝ այստեղ իսպառ արեւմտարեւել է իրավախոհութեան առածը. «տալիս եմ, որպէսզի փոխարինես» (էջ 128):

Այնուհետև Մանդինյանը հաստատում է, որ «կը, մը, զ թեան և այլ այսպիսի շնչեղիքներ» չեն, որ կազմում են արեւմտահայ լեզվի տարբերութիւնը, որոնց վերացմամբ մենք կարող ենք իրար հասկանալի դառնալ (էջ 129): Երկու բարբառների տարբերութիւնը այն է, «որ արեւմտյան և արեւելյան հայերը հոգեբանորեն իրարից տարբեր են մտածում» (էջ 130):

Իր այս միտքը ապացուցելու համար նա վերցնում է Գեղեցիկի մի հոգիվածը, որ զուգադիպորեն գրեթե միաժամանակ թարգմանվել և հրատարակվել էր թե՛ արեւելյան, և թե՛ արեւմտյան բարբառով, առաջինը՝ Արարատ հանդեսում (1896 նոյ.) և երկրորդը՝ Հանդես ամս. (1897 փետր.): Մի առ մի, հատված առ հատված համեմատում է մեկը մյուսի հետ և ցույց տալիս երկրորդի առավելութիւնները: Իր եզրակացութիւնն է «արեւմտ-

յանը արեւելյանին դեռ ևս շատ բան կարող է ուսուցանել և ոչ թե ինքն է կարող մեզանից խրատվելու» (էջ 137ա):

Ավելի ծանր է այն դատավճիռը, որ տալիս է արեւելահայ գրողների հանդեպ ընդհանրապէս. «Մածուկ բան չէ, թե ինչպէս արեւելյան բարբառի գրագետները, նույն իսկ լավագույն լինելու կոչվածները, տանջում և նահատակում են հայոց քերականութիւնը, հայոց լեզուն. ինչպէս իրանց դատապարտելի անփութութիւնը պարծանք և հերոսութիւն են համարում, ինչպէս պատրաստ են լեզուն ավելի քարկոծել և կործանել, քան խոստովանել և փարատել իրանց տգիտութիւնը, ինչպէս ավելի դուրսութեամբ վստահում են սրբագործել տգեղութիւնը, անկանոնութիւնը, կազմալուծութիւնը, այլանդակութիւնը, օտար փետուրներով պշրանքը, քան ջանք անել ուղղվելու» (էջ 129ա):

Երկրորդ հեղինակն է Գր. Վանցյան (Անահիտ 1899, էջ 133—6): Սա արդեն հիմքից է կտրում հարցը. իր ասելով արեւելահայ լեզու չկա. «չոչակավոր ներսիսյան դպրոցի ուսուցիչներից սկսած մինչև վերջին գործակատարը օտար լեզվով են ձեքախոսում: ... Այսօր ուտիերեն խոսողների թիվը ավելի շատ է, քան արեւելյան հայերեն» (էջ 134): Մինչդեռ արեւմտահայ կենդանի լեզուն խոսողների թիվը դնում է 1¹/₂—2 միլիոն: Գովարանում է արեւմտահայ լեզուն. և մինչև իսկ արեւելահայ գրական լեզվի ստեղծումը արեւմտահայերին է վերագրում: Այսպէս նախանդյան, Պատկանյան, Պալասանյան ևն: Այսօր էլ, ասում է նա, հայերենի գիտութեամբ զբաղվողները արեւմտահայ գաղթականներից են. ինչպէս Խալաթյան, Մալխասյան, Կոստանյան, ավելացնենք Լալայան, Տերյան, Ավ. Իսահակյան, Մանանդյան, նույն ինքն Վանցյան ևն: Այս սոսկալի հայտնութիւններից հետո, որոնք անշուշտ մեծապէս չափազանցված են, վճռում է. «Արեղյանի մեթոդի սխալն այն է, որ արեւմտյաններին խրատ է տալիս այս կամ այն ձևով մեզ մոտենալու, ավելի խելացի կլինել, եթե նա մեզ խրատեր արեւմտյանի այս կամ այն առավելութիւնից օգտփիւն» (էջ 136):

Ավելի չերկարելու համար հարցի քննութիւնը, կարող եմ վկայել, թե արեւմտահայերը բնավ երբեք դժվարութիւն չեն կրում արեւելահայ լեզուն հասկանալու համար, որ չափազանց սիրում են*): Նրանք գերագնահատում էին արեւելահայերին,

* իմ անձնական կյանքից հիշում եմ հետևյալ դեպքը:—Գոլիսի Սամբիա թաղի Սահակյան վարժարանում, ուր սովորում էի, աշակերտներս շատ

իրբև ողջախոհ, իրապաշտ, ազատամիտ, հեղափոխիչ մարդկանց։ Նրանց ականջին եգալիս եմ, տալիս եմ, սիրում եմ, գնում եմ՝ ձևերը իբրև երաժշտութուն, իբրև նվագ էին հնչում։ Ո՛չ թե խորթութուն էին շողում, այլ ընդհակառակը մեծ հրճվանքով էին լսում մի եկվոր ոռուսահայի խոսակցութունը։ Ո՞վ ստեղծեց ոռուսահայոց մեջ այն արհամարհանքը դեպի տաճկահայերը, դեպի նրանց լեզուն ու գրականութունը։ Զուգը գլխից կհոտի Դա Գր. Արծրունու խոստապահանջ և աններող բնավորության արդյունքն էր, որ ավելի բորբոքվեց 90-ական թվականներին, տաճկահայոց գաղթականության ժամանակ, մրցակցության տնտեսական հիմքի վրա։ Եվ երբ հայոց բոլոր դպրոցները ցարական կառավարության հրամանով փակվեցին և նրանց տեղ ոռուսական դպրոցներ բացվեցին, այլ ևս ոռուսահայ սերունդը իր սովորական հայերենն էլ չսովորեց, ուր մնաց թե արևմտյան լեզուն, որ գրաբարի խառնուրդով ավելի ճոխացած, հետևաբար և ավելի դժվար էր։

Այժմ այս բոլորը անցյալին են պատկանում։ Սովետական իշխանության հաստատությամբ, ո՛չ միայն ամեն մի նույն իսկ հետնյալ գյուղ իր հայ դպրոցն ունեցավ, այլև Հայաստանը ունեցավ իր Պետական համալսարանը և բազմաթիվ ու բազմատեսակ բարձրագույն դպրոցներ։ Հայերեն սովորելով նոր սերունդը հեշտությամբ հասկանում է նաև արևմտահայ լեզուն։ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» և «Բաղդասար աղբարը» ամենքի բերանն են։ Հրատարակվեցին ո՛չ միայն Պարոնյանի ամբողջական երկերը (ինչ որ նույն իսկ տաճկահայոց մեջ տեղի չի ունեցած), այլ և շատ ուրիշ հեղինակներ (Օտյան, Երուսան, Մեծարենց, Վարուժան, Դուրյան, Պեշիկ-

բաթական 2 կուպեկ մուծելով մի գրադարան էինք հիմնել (1888 թ.)։ Շատ թանկ գնով (80 դուռլ=4 ու. 80 կ.) ձեռք բերինք Բաֆֆիի Զալաբզդինը, որ խոսիվ արգելված էր։ Երբ հերթը ինձ հասավ, տարի տուն և հափշտակված կարգացի։ Ո՛չ միայն լեզուն հասկանալի էր ինձ, այլ և այնքան ազգվեցի և այնպես սովորեցի, որ իսկույն ձեռնարկեցի նրա նմանությամբ մի վեպ գրելու արևելահայ բարբառով։—Այդ ժամանակ ես 12 տարեկան էի։ Ուրեմն մեզ մոտ երեխաներն էլ հասկանում էին արևելահայ լեզուն, ուր մտք մեծերը։

Պոլսում ոչ մի ծագրական ածական չկար կովկասեցոց համար։ Ոմանք հնարել են «հենց—մենց» բառը կովկասեցոց օրինակով, բայց չի անցել։ Իսկ եգալիս ես թե չուգալիս ես՝ կատակաբանութունը հնարված էր ոչ թե կովկասեցոց ծագրելու, այլ իբրև հետ կատակելու համար։

Թալյան ևն)։ Զոհրապի, Ռ. Զարդարյանի և ուրիշների նորավեպերը նույն իսկ ոռուսերենի թարգմանվեցին վարպետ թարգմանիչ Հակոբ Պաշտորյանի ձեռքով և ինչպիսի գնահատության արժանացան. ոռուսական խոստապահանջ քննադատների կողմից նրանք համարվեցին նովելների մեծագույն վարպետներ...։

Արևելահայը այժմ ոչ թե դժվար, անհասկանալի և խորթ է համարում արևմտահայ լեզուն, այլ ընդհակառակը ճոխ, պերճ, հարուստ, ներդաշնակ ու ակործալուր, բայց և՛ արվեստական։

Ահա Արծրունու և Արեղյանի ժամանակակից հայի և արդի սովետական շրջանի հայի մեծ տարբերությունը։

Լեզվի միության մասին խոսել է նաև տողերս գրողը՝ «Պատմութուն հայոց նոր գրականության» Վլրապտ. 1906, էջ 39։ Ընթերցողին ուղարկում եմ այնտեղ։ Ավելացնում եմ այժմ միայն այն, թե հարցը կարող ենք սպառած համարել՝ Արևմտահայաստանի և Փոքր Ասիայի հայության բնաջնջումով։ Հայոց մեծամասնությունը հավաքված է այժմ Սովետական Հայաստանում, որ է և կմնա իբրև հայոց բնավայրը։ Նրան կից է Կովկասի և Ռուսաստանի հայությունը, որ գործածում է արևելահայ գրական լեզուն։ Նույնը նաև ամբողջ Պարսկաստանի հայությունը։ Դաղութներից Ամերիկայի հայերը լեզուն կորցնելու նախօրյակին են. Ֆրանսիայի, Ռումինիայի, Բուլգարիայի, Հունաստանի, Տաճկաստանի և Եգիպտոսի հայ գաղութները փոքր թիվ են կազմում։ Սիրիայի հայությունն էլ թեև բավական բազմաթիվ է, բայց էլի Երևանի կեսից ավելի չէ։ Իսկ երբ, ինչպես ծրագրված է սփյուռքի հայերը հայրենադարձ լինին, կարճ ժամանակում նրանք էլ, կամ նրանց որդիները կըփոխեն իրենց լեզուն և արևելահայ գրականը միակ տիրողը կդառնա*):

Այստեղ ուզում եմ հավաքել այն տարբերությունները, որով երկու գրական լեզուները բաժանվում են իրարից։

*) Ընդհանրապես սավում է, որ իտալերեն լեզուն կազմակերպվել է շնորհիվ Դանտեի։ Հայերն էլ սպասում էին, որ իբրև մեջ էլ մի այդպիսի նշանավոր գրող դուրս գա և օրինակ տա հայերեն լեզվի։ Մի ողորմելի վարժապետ, ոմն Պաշտորյան Բաղդասարյան իրեն հայտարարեց իբրև Դանտե և հրատարակեց մի «Գրքագրանբրգութիւն» Ատրիկն անունով։ (տպ. Պոլս 1893)։ Ահա մի քանի տող նրա առաջաբանից։

... Մաքս Միլլէր ըսած է թէ, արդի հայերենի համար Տանդէ մի կը պակսի։ Ուտտի հրախանդ փափազանօք կը սպասէի, որ Հայ Տանդէ մի՛ կը պակսի։ Ուտտի հրախանդ փափազանօք կը սպասէի, որ Հայ Տանդէ մի՛ կը պակսի։ Ուտտի հրախանդ փափազանօք կը սպասէի, որ Հայ Տանդէ մի՛ կը պակսի։

Ա) Հնչական տարբերություններ. — 1. Գլխավորապես պայթականների թրթուռն և պարզ խուլ աստիճաններն են, որ երկու գրական լեզուների մեջ իրարից տարբեր են հնչվում: Արևելյան գրականում այդ աստիճանները մնում են անփոփոխ և համաձայն մեսրոպյան հնչման: Իսկ արևմտյան գրականում պարզ խուլները դառնում են թրթուռն, իսկ թրթուռները դառնում են թավ: Ուրիշ խոսքով պ, կ, տ, ծ, և ձայները հնչվում են իբրև ք, գ, դ, ձ, ջ (b, g, d...), իսկ ք, գ, դ, ձ, ջ հնչվում են ճիշտ փ, ք, ք, ց, չ ձայների պես: Այսպեսով հայերենի պայթականները ունենում են ո՛չ թե երեք աստիճան, այլ միայն երկու: Բառերի գրությունը սակայն չի փոխվում և գրողներին է մնում որոշել, թե այս ինչ բառը բ տառով պետք է գրել, թե փ տառով են:

2. Հնչական տարբերություն կա նաև հայեացք, երկոյեան և բառերի մեջ, որոնք արևմտյան գրականում համաձայն գրչության հնչվում են երկու յ-ով (հայացք), իսկ արևելյան գրականում ոմանք մեկ յ-ով (հայացք), ուրիշներ երկու յ-ով:

3. -ուի գրչությունը արևելահայ լեզվով կարդացվում է միշտ -վի. իսկ արևմտահայ լեզվով թե՛ վի և թե ուի: Այսպես կրավորական բայերի մեջ կարդում ենք վի (սիրվի, բերվի, տարվի), բայց սեռականի մեջ ուի, ինչ. կատուի (կատու-ի և ոչ թե կատվի), թթուի, առուի, արուի, քաղցուի: Միայն լեզուի սեռականն է, որ թեև պոլսահայ բարբառում հնչվում է լեզուի, բայց գրականում՝ լեզվի:

4. Հնչական տարբերություն ներկայացնում են նաև մի քանի բառեր, ինչ. բզկտել, ձեռնհաս, ձեռնտու, ընկճել, ևն, որոնք արևմտահայոց մեջ հնչվում են բզկտել, ձեռնհաս, ձեռնտու, ընկ-ճել, իսկ արևելահայոց մեջ՝ բզկտել, ձեռնհաս, ձեռնտու, ընկըճել ևն:

5. Ամենից մեծ հնչական տարբերությունը ներկայացնում են օտար բառերը և հատկապես նոր անձնանունները և տեղանունները: Արևելահայոց կոմիտե, կուրս, կիրոգրամ ևն բառերը արևմտահայը կարդում է gomidé, gurs, gilokram և որպեսզի

թյամբ մի... ի զուր սպասեցի ու սպասեցի, տենջանք տանջանք եղաինձ, և հոգ չըրին չայ հանճարք. լոեցին ու լոեցին: Վերջապես փափազանքս ուժգնութիւնն խորտակեց, կործանեց այն հպտաբեստ թումբը, զոր հանճարիս պակասութեան երկիւղն էր կանգնած նոյնպիսի քերթուածոյ մի անձամբ փորձ փորձելու դիտմանս առջև: ...Նլայ յասպարէզ: ...Յաղթեցի՛, թէ յաղթուեցայ:)

Ժամանակակիցները լավ ծաղրեցին այս ինքնակոչ նորոգչին:

կարգա կովկասեցոց ձևով՝ գրում է գոմիդէ կամ քոմիթէ, զուրս կամ ջուրս, քիլօկրամ ևն: Այսպես նաև անունները. օր. Վիկտոր Հիլգո, Գի-զը Մոպասան, Գոգոլ, Տոլստոյ կարդում է Վիդոր Հիլքո, Գի-թը Մոբասան, Գոքոլ, Գոլլսո. և որպեսզի կարգա ինչպես իրականն է՝ պետք է գրել Վիթթոր Հիլկո, Գիտը-Մօփասան, Գոկոլ, Թօլլսթոյ, ևն:

Հին անունները՝ Պետրոս, Պողոս, Մարտիրոս, Գրիգոր, գրությունը անփոփոխ պահելով կարդում են Բեդրոս, Բողոս, Մարգիրոս, Գրիգոր... իսկ նոր անունները գրում են Բիեռ (Լթի) կամ Փիեռ, Բոլ կամ Փոլ, Մարթիր, Կրէկուառ ևն:

Աշխարհագրական անուններից էլ հները պահում են զբրչությունը անփոփոխ (Եգիպտոս, Պելոպոնէս, Գաղիա, Գերմանիա), բայց կարդացվում են նորաձև (Յեքիբոս, Բելլոնէս, Գաղիա, Գերմանիա): Նոր անունները, հետևելով ընդհանրապես իտալական ձևին, գրվում են Պելճիթա, Ձուիցերիա, Շուէտ, Մարսիլիա, Արճենթին, Նոր-Ջիլանտա, Պրիլքսել, Ռումանիա, Տանիմարթա ևն, մինչդեռ արևելահայերը հետևելով ուսուսական ձևին՝ գրում են Բելգիա, Շվեյցարիա, Շվեդիա, Մարսել, Արգենտինա, Նոր-Ջիլանդիա, Բրյուսել, Ռումինիա, Գանիա ևն:

Այսպես են վարվում նրանք նույնիսկ Սովետական մեծ երկրի անվան հետ, որ մինչդեռ մեզ մոտ ընդունված է հայերեն ճիշտ ձևով՝ Ռուսաստան (հմմտ. Զրնաստան, Հնդկաստան, Հուսաստան ևն), արեմտահայերը, հետևելով դարձյալ եվրոպական ձևին, գրում են Ռուսիա:

Բ) Ուղղագրական տարբերություններ. — 6. Վերոհիշյալներից զուրս քիչ բառեր կան, որ այս կամ այն պատճառով տարբերվում են իրարից երկու գրական լեզուներում: Այսպես են փափազ (=փափաք), կենտրոն (=կեդրոն), արձագանք (=արձագանգ), դաղել (=տաղել), դժգոյն (=տժգոյն), դժգոհ (=տժգոհ), բարդի (=բարտի), բեղ (=պեխ), նարդի (=նարտ), բացօղյա (=բացօթյա) ևն: Սրանց մեջ առաջին ձևը արևելահայոցն է. փակագծի մեջ դրված է արևմտահայոց ձևը. այս երկուսից սխալաձևը շեղատառն է:

Գ) Քերականական տարբերություններ. — 7. Հոլովման մեջ ունինք երեք հիմնական տարբերություն. 1) ներգոյականի ուժ վերջավորությունը չգիտե արևմտահայ լեզուն և նրա փոխարին վերջավորությունը չգիտե արևմտահայ լեզուն (դպրոցում = դպրոցի մ: ջ): դճում է մէջ նախադրությունը (դպրոցում = դպրոցի մ: ջ): 2) Բացառական հոլովը արևելահայոց մեջ ից մասնիկով և հազ-

մըվում, արևմտահայոց մեջ՝ էն (քաղաքից—քաղաքէն). 3) հոգ- նակի սեռական-տրական հոլովը լինում է արեւելահայոց մեջ երի, ների, արևմտահայոց մեջ՝ եղու, ներու:

Այս երեք հիմնական տարբերություններից դուրս կան բազմաթիվ մանր կետեր: 1) Մեկ և կես վանկանի բառերի հոգ- նակին արևելահայոց մեջ լինում է ներ, արևմտահայոց մեջ՝ եր (ռուսներ=ռուսեր, աստղներ=աստղեր, կայսրներ=կայսրեր, ուսանողներ=ուսանողներ): 2) Կան հոգնակիի մի քանի բացառիկ ձևեր. ինչ. կանայք=կինները, աղջկերք=աղջիկներ, տղերք=տղայք, տղաներ, տղաքներ, կանանց=կիններու, ծնկներ=ծուկներ, ծընկ- վրներ, մատներ=մատեր, մատվրներ: 3) Ի վերջացող բազմա- վանկ բառերը հոլովվում են արևելահայ լեզվում ու ձևով, իսկ արևմտահայ լեզվում կամ գրաբարաձևւոյ և կամ ավելի հաճախ՝ ժողովրդական -ի ձևով, որ սկսել է նաև մուտք գործել արևելահայ- յոց մեջ. օր. գինու, գարու=գինիի, գարիի, եկեղեցու=եկեղեցւոյ, եկեղեցիի, Նուխու=Նուխիի (որ նաև արևելահայոց մեջ գործա- ծական է): 4) Մբանց բացառականը լինում է գօտուց, գինուց են, իսկ արևմտահայոց մեջ՝ գօտիէն, գինիէն են: 5) Սեռ. ու հոլովածը համարյա վերջացել է արևելահայ լեզվի մեջ, իսկ արևմտահայոց մեջ դեռ կենդանի է. ինչ. գարու, դիւու, ծովու, հայու, մարդու, ճամփու, տղու, մեկ ժամու, են: 6) ութիւն վեր- ջացող բառերի բացառականը արևելահայ լեզվում կանոնավոր կերպով լինում է ությունից, իսկ արևմտահայոց մեջ՝ թե՛նէն. (մեծությունից=մեծութե՛նէն): 7) Անորոշ դերբայի բացառա- կանը կանոնավորապես լինում է արևելահայոց մեջ ուց ձևով, արևմտահայոց մեջ է ձևով (տեսնելուց=տեսնելէ): 8) Մի խումբ բառեր իրենց սեռականը կազմում են արևմտահայոց մեջ ան, ուան (վան) ձևով, որի փոխարեն արևելահայն ունի ա, վա, ինչ. աղջկա=աղջկան, ժամվա=ժամվան, օրվա=օրվան, բայց ընդհանուր է մահվան: 9) Բացառիկ գրաբարաձև սեռականներ են արևելահայոց մեջ տան, շան, որոնց դեմ արևմտահայը դը- նում է շունի, տունի: 10) Արևմտահայոց մեջ գործածական էր բացառականի տղոցմէ, հայոցմէ, ռուսացմէ, անգլիացոցմէ ձևը, որ հիմա անսովոր է: 11) Թե՛ արևմտահայոց, և թե՛ արևելահայոց մեջ կա «տնէ տուն, գիւղէ գյուղ, փողոցէ փողոց» ձևը, բայց արևելահայերը ունին նաև «տնից՝ տուն, փողոցից փողոց» են: 12) Հայցականի փոխարեն տրական գործածելու սովորությունը անձնական անունների մեջ չկա արևմտահայ լեզվում, բացի դե-

րանուններից. օր. ինձի, քեզի, մեզի, ձեզի, որոնք թե՛ տրական են և թե՛ հայցական: «Աղջկանս տուի» միմիայն նշանակում է «ետու աղջկան իմում» (արևմտահայոց մեջ) և ոչ երբեք «ետու գոուսար իմ», ինչպես կարելի է նաև հասկանալ արևելահայ լեզվի մեջ:

8. Գրաբարի սղման և ամփոփման օրենքը հոլովման մեջ վերացված է արևմտյան հայերենում. իսկ արևելյան գրականում թեև մասամբ վերացված է, բայց շատ տեղ դեռ կենդանի է: Օր. արևմտահայերեն ասվում է «Չուրի, միսի, սուրբի, դուրսի, մարմինէն, կարմիրով, խումբը, դուռեր, տունի, շունի» են, իսկ արևելահայերեն՝ «Չըրի, մսի, սրբի, դրսի, մարմնից, կարմը- րով, խմբեր, դռներ, տան, շան» են: Ամփոփումը շատ է կըր- ճասված արևելահայերենից. այլևս չեն ասում «հանդիսի, հան- դիսում, պարտիզում են», բայց դեռ շարունակում են «միջի, միջից, այսպիսով են», «մինչդեռ արևմտյանը ասում է «մէջի, մէջէն, այսպէսով են»:

Արևմտահայոց նախաք սերունդը հոլովման մեջ սղմամբ գործածում էր «գաւկին, ճակատին, դեանէն, տղէն, բերնին, բեր- նէն, բերնով, ծաղկընէն» են, բայց այժմ այս ձևերը հնացած են և ավելի շատ գործածական են «գաւակին, ճակատին, գետի- նէն, տղայէն, բերանիւն, բերանէն, բորանով, ծաղիկներ են»:

9. Որոշիչ հոգը (ը կամ ն) և նրա գործածության օրենք- ները նույն են թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ գրականում: Եթե կան տարբերություններ, գրանք անհատական են և ոչ թե՛ բխում են լեզվի ընդհանուր օրենքներից: Երկու լեզուների մեջ որոշիչ հոգի տարբերությունն պատմում ենք միայն հետևյալ կե- տեցում: Նախ արևելահայերենը սեռականի մեջ որոշիչ հոգ չի ճանաչում և նույն կողմնակցների շնորհիւ ն ձայնը ջնջում է, սխալմամբ հոգ կոչվելով Օրինակ՝ աղբիկ բառի սեռականն է գըր. աղբկան, որ անշուքիտի մեծ է արևմտյան հայերենում: Իսկ արևելահայերենը գարծբել է աղբկա, թեև բացառականը պահում է աղբկանից և գարծբականը աղբկանով ձևով: Ճիշտ այս- պես է վաղժում նաև իրանի իրան բառի համար, որի արականը լինում է իրան, իրեն, բայց սեռականը լինում է իրա (իրը թե՛ ն որոշիչ հոգ չեն): Այս այսպես լինուուց հետո, զարմանալի չէ տեսնել «նրա աչքի մեջ, նրա անձի խորքը, մեր պարտեզի մասին են» (առանց ն հոգի), մինչդեռ արևմտահայը հոգով ասում է «անոր աչքին մեջ, անոր անձին խորը, մեր պարտեզին մասին են»:

10. Երկրորդ տարբերությունն այն է, որ անձնական հա-

տուկ անունները գրաբարի և եվրոպական լեզուների նման հող
չեն ստանում արևմտյան հայերենում, մինչդեռ արևելահայ լեզ-
վում ստանում են: Բայց այստեղ էլ կա մի նրբութուն, որ շատեր
չեն նկատած: Արևմտահայ լեզվում միայն նշանավոր մարդկանց
անուններն են, որ չեն ստանում որոշիչ հող, իսկ սովորական
մարդկանց անունները ստանում են: Օրինակ ասում են. «Հայկ
հայոց ազգին նահապետն է. Մեսրոպ հնարեց մեր այրուբներ,
Վարդան Աւարայրի հերոսն է. Մեծն Պետրոս հիմնեց Բեդրսպուրի
մայրաքաղաքը». բայց սրանց դեմ՝ «եղբայրս՝ Հայկը վաղամեռիկ
եղաւ. Մեսրոպը մեր դրացին է. Յւր գնաց Վարդանը ևն»:

11. Անորոշ հողն է արևմտահայոց մեջ մը, որ հետագաս է
միշտ և ճայնավորի մոտ գառնում է մ', մըն: Մինչև անգամ
կարելի է ասել հոգնակիի հետ՝ բաներ մը ևն: Արևելահայը դիտե
միշտ նախադաս մի, որ շատ անգամ էլ զեղչում է:

12. Ածականների մեջ նկատելի է նախ գերադրականի
կազմութունը: Արևմտահայ գրականը այս դեպքում գործածում
է նախ «էն» նախամասնիկը, որ թուրքերենից է փոխ առել. և
երկրորդ «ամենէն» բացառական ձևը. օր. էն մեծ, էն գեղեցիկ:
Առաջինը գոյութուն չունի արևելահայ գրականում, երկրորդը
փոխանակված է «ամենից» ձևով. այսպես՝ ամենից մեծ, ամե-
նից գեղեցիկ:

13. Արևմտահայ գրականը ունի նաև գերադրականի նոր
օրինակ մասնիկներ, որոնք ձևացած են թուրքերեն լեզվի ոճով,
բայց թուրքերեն չեն: Այսպես՝ լեփ-լեցուն, ճեպ-ճերմակ, սեփ-
սև, կաս-կարմիր, կափ-կանաչ, շիփ-շիտակ, միս-մինակ, դեփ-
դեղին ևն: Սրանք գործածական չեն արևելահայ գրականում,
բայց սկսել են արդեն կամաց-կամաց մուտք գործել:

14. Արևմտահայ գրականը ընդունել է նաև բաղդատական
ածականի մի ուրիշ ձև, որ ժողովրդական լեզվից է փոխ առել:
Այս ձևը կազմվում է կակ կամ կեկ մասնիկով. ինչ. «մեծկակ,
բարձրկեկ, ճերմակկեկ, սեկեկ» ևն: Այսպիսի բառեր չկան արե-
վելահայ գրականում. բայց այստեղ կան լուծ մասնիկով կազմը-
ված ձևեր, որոնք չկան արևմտահայ գրականում. ինչ սեւաւուն,
սպիտակաւուն, երկարաւուն ևն:

15. Անորոշ ածականները (միջակ անուն) քիչ են զանա-
զանվում իրարից. ինչ. շատ մը=մի շատ, քիչ մը=մի քիչ, ոչ
մէկը կամ պարզապես՝ մէկը=ոչ ոք, սեռ. ոչ մէկուն=ոչ ոքի,
ամեն մեկը=գրբ. իւրաքանչիւր, ամէնուն=ամենքի, մէկ քա-

նին=մի քանիսը, սեռ. մեկ քանիին=մի քանիսի, ևն: Արևելա-
հայ գրականում հետաքրքրական ձև է «մեկն ու մեկը, տը-
մեկն ու մեկին» որ չկա արևմտահայ լեզվի մեջ և բացատրվում
է միայն «որևէ մէկը, որևէ մէկուն» ևն:

16. Դերանունների մեջ նկատելի են՝ դուն փխ. դու, ին-
ծի, քեզի, մեզի, ձեզի, փխ. ինձ, քեզ, մեզ, ձեզ. աս, ատ, ան==
այս, այդ, այն, որոնք նաև անական են. միայն իբրև դերա-
նուն են գործածվում՝ ասի, ատի, անի, ասիկա, ատիկա, անի-
կա: Սրանք հղովվում են սեռ. ասոր, ատոր, անոր, բց. ասկէ,
ատկէ, անկէ, հոգն. ասոնք, ատոնք, անոնք, սեռ. ասոնց, ատոնց,
անոնց, բց. ասոնցմէ, ատոնցմէ, անոնցմէ ձևերով, որոնց ոչ
մեկը գործածական չէ արևելահայ գրականում:

Որ հարաբերականը նույն է, բայց հղովվում է տարբեր
ձևով. այսպես՝ սեռ. որու (որի), բց. որմէ (որից), հյց. «զոր,
զորս, զորոնք», որոնք գործածական չեն արևելահայոց մեջ:

Արևմտահայոց մեջ դերանունը հաճախ ստանում է հայ-
ցականում զ նախդիրը. ինչ. զայն, զանիկա, զանոնք, զինքը,
ինքըզինքը, նույն իսկ բց. ինքզինքէն, սեռ. ինքըզինքին (փխ-
ինքնիրան):

Արևելահայոց իրան, իրա ձևը չկա արևմտահայոց մեջ.
այլ միայն իրեն, և կամ պարզապես իր. ինչպես՝ իրանն էր=իրն
էր,—բց. իրմէ=իրանից:

Արևելահայոց մեջ սովորական է միմյանց ձևը, որը արև-
մտահայոց համար զուտ գրաբար է և անգործածական: Ասում
են՝ իրարու, իրարմէ ևն:

Արևմտահայոց մեջ սովորական են ստացականի մասնիկա-
վոր ձևերը. ինչ. երեսնիս, արցունքնիս, հացերնիդ, հացերնին,
իմիններս, իմիններուս, իմիններէս, որոնց դեմ արևելահայն
ունի միայն երեսներս, արցունքներս, հացներդ, հացները,
իմոնքը, իմոնքից ևն:

17. Բայերի մեջ առաջին կարևոր կետը այն է, որ արևե-
լահայերենը ունի սահմ. ներկայի և անկատարի համար ում
ձևը, մինչդեռ արևմտահայը այս դեպքում գնում է կը (սիրում
եմ=կը սիրեմ, սիրում էի=կը սիրէի):

Միավանկ բայերը ստանում են լիս մասնիկը, իսկ արևմը-
տահայերը կը-ի փոխարեն դնում են կալ (լալիս եմ, գալիս եմ,
աալիս եմ=կուլամ, կուգամ, կուտամ):

Արևելահայերը կը մասնիկը գործածում են ապառնիի հա-

մար, մինչդեռ արևմտահայերը կը դնում են ներկայի համար, իսկ պապանիի համար դնում են պիտի (հոսանքն = պիտի տեսնեմ):

Հրամայականի վերջավորութունն է եզ. բ դեմքի համար արևմտահայ լեզվում է, արևելահայ լեզվում իր, ինչ. սիրէ՛, խօսէ՛, յանձնուէ՛ = սիրիր, խոսիր, հանձնվիր: Անկանոն ձևեր են ե՛լ — ելիր, արբի — ե՛կ, եկուք, ասան — ըսէ՛, աշա — ըրէ՛ ևն:

Անցյալ դերբայը արևելահայոց մեջ — ել, արևմտահայոց մեջ — եր ձևը ունի. ինչ. սովորել էր — սորվեք էր. իսկ ան ձևը ընդհանուր է:

18. Արևելահայերենը մեր աչքի առաջ ջնջեց Բ լծորդութունը՝ վերածելով Ա-ին: Այսպես կատաղիլ, պակասիլ դարձան կատաղել, պակասել: Խոնարհման տարբերությունը հայտնի երեվում է կատարյալում, ուր ունինք այժմ

կատաղեցի	պակասեցի
կատաղեցիր	պակասեցիր
կատաղեց	պակասեց
կատաղեցինք	պակասեցինք
կատաղեցիք	պակասեցիք
կատաղեցին	պակասեցին

Մինչդեռ արևմտահայ լեզուն հաշտարիմ գրաբարի խոնարհման և միայն ա-ի սղումով խոնարհում է՝

կատղեցայ	կատղեցանք
կատղեցար	կատղեցաք
կատղեցաւ	կատղեցան

Ըստ այսմ բոլոր նշանակողական բայերը — վիլ վերջավորության փոխարեն ստացան — վել և խոնարհվում են օր. սիրվեցի, սիրվեցիր, սիրվեց... ձևով (փոխանակ սիրվեցայ, սիրվեցար, սիրվեցաւ. որ արևելահայոց հին ձևն էր և այժմ էլ կենդանի է արևմտահայոց մեջ):

Բայց այստեղ մի ուրիշ գծավազություն առաջացավ:

Կան մի խումբ բայեր, որ Ա լծորդությամբ ներգործական են, Բ լծորդությամբ չեզոք. այսպես՝ պատել «շուռ տալ» և պտտիլ «շուռ գալ», շարժել (նեղել) և շարժիլ (չ.) ևն: Այժմ Բ լծորդութունը վերածվելով Ա լծորդության, ներգործական և չեզոք միևնույն ձևն ստացան. Շփոթություն առաջը առնելու համար այժմ էլ չեզոք իմաստի համար ել-ը վերածեցին վել ձևի. այսպեսով բոլոր իլ վերջացող չեզոք բայերը դարձան վել. ինչ. տապալիլ — տապալվել, գլորիլ — գլորվել, — գանգատիլ գանգատվել, յարձակիլ — յարձակվել, շարժիլ — շարժվել, բորբո-

քիլ — բորբոքվել, յուսահատիլ — յուսահատվել, պտտիլ — պտտվել, համարձակիլ — համարձակվել ևն:

Այս դրությամբ առաջացավ նոր խառնակություն. նախ կրավորական և չեզոք նույն ձևն ստացան և հայտնի չէ, թե վել հանգող այս ինչ բայը կրավորական է, թե չեզոք. Երկրորդ — իլ վերջացող ամեն բայ սկսեց ստանալ — վել ձևը. ինչպես ապստամբվել, պարապվել և ուրիշ անճոռնի ձևեր, որոնց դեմ ի դուր կովում են մաքրասերները:

Այժմ անվերջ ասում են ու լսում ենք նույն իսկ ունեմ, ունես, ունի, լինեմ, լինես, լինի ևն:

19. Արևելահայերենը թեև ջնջել է Բ լծորդության բ տիպարի բայերի և հոդակապը (անցնել, մտնել, գտնել), բայց մյուս լծորդությանց մեջ դեռ պահում է: Արևմտահայերենում բայերի և հոդակապի ջնջումը ընդհանուր է. նրանից զերծ են մնում միայն գրաբար բայերը. ինչ. ժամանել, տառապիլ, խաթարել ևն: Մյուսները բոլոր դուրկ են ա-ից. ինչ. արթննալ, բաժնել, պողնալ, կատղիլ, կատղած, հասկնալ, հասկցող, ճանչնալ, ճանչցած, մեծնալ, մեծցաւ, մոռնալ, մոռցած, շատնալ, չորնալ, չորցած, պակսիլ, պատռել, պատռած, սկնալ, սկցած, վերնալ, վերցած է, տաքնալ, փաթթել, փաթթուած ևն:

20. Այս կարգին են պատկանում նաև անցողական (պառճառական) բայերը, որոնց -ացնել վերջավորությունը արևմտյան հայերենում դառնում է -ցնել. ինչ. ավելացնել — աւելցնել, լուսացնել — լուսցնել, մոռացնել — մոռցնել ևն: Խոնարհման ժամանակ կատարյալը լինում է՝

հասկացրի	հասկցուցի
հասկացրիր	հասկցուցիր
հասկացրեց	հասկցուց
հասկացրինք	հասկցուցինք
հասկացրիք	հասկցուցիք
հասկացրին	հասկցուցին

Հրամայականը լինում է հասկացրու (հասկցուր), դերբայը՝ հասկացրած (հասկցուցած):

21. Բացասականը տարբեր կազմություն ունի արևմտահայ խոնարհման մեջ. այսպես՝

չեմ ուտեր	չեմ ուտում
չես ուտեր	չես ուտում
չ'ուտեր	չի ուտում

չենք ուտեր
չեք ուտեր
չին ուտեր

չենք ուտում
չեք ուտում
չին ուտում

Բացասականի կրկնությունը չի ընդունված արևմտահայ լեզվում. չեն ասում «ոչ ոք չկար, ոչինչ չունիմ», այլ «ոչ ոք կար, ոչինչ ունիմ»:

22. Մակրայները և նախադրությունները մեծ մասամբ նույն են. արևմտահայերենը ներկայացնում է հետևյալ տարբերությունները.

ալ (էլ, ալ ևս)
անդին (այն կողմ)
անկէ ալ անդին (նրանից էլ այն կողմ)
առտուն (առավոտը)
առջևը, առջին (առաջը)
ասդին (այս կողմ)
ետին (հետևը)
հոս, հոդ, հոն (այստեղ, այդտեղ, այնտեղ)
հոսկէ, հոդկէ, հոնկէ (այստեղից...)
մեկեն (հանկարծ)
նորէն (նորից, դարձյալ)
շատոնց (վաղուց)
շատ շատ (առ առավելն)
ետքը (հետո)
երթալով (հետզհետե)

ի վեր (օր. վեց տարիէ ի վեր)
իրարու ետևէ (իրար ետև-վից)
իրիկվան (երեկոյան)
հարկաւ (ի հարկե)
հիմա, հիմակ (այժմ)
հիմակուան (հիմիկվա, այժմու)
հիմակուհիմա (առ այժմ)
մըրկէ (որտեղից)
պատճառաւ (պատճառով)
վար (ցած)
քիչեն քիչ (առ նվազն)
քիչ քիչ (սակավ առ սակավ)
վարի (ներքևի)
վերի (վերևի)

Դ) Բառամբերքի տարբերություններ. —

23. Թեև հայ լեզվի բառամբերքը ընդհանրապես նույն է երկու բարբառների մեջ, բայց կան նաև բազմաթիվ բառեր, որոնք քիչ կամ շատ տարբեր են իրարից:

Առաջին հերթին պետք է հիշել այստեղ այն բառերը, որոնց միջավանդի ա ձայնավորը կրճատված է արևմտահայ լեզվում. ինչ. մատանի—մատնի, հարսանիք—հարսնիք, արթնանալ—

արթննալ, դադարիլ—դադրիլ, կատաղիլ—կատղիլ, մեծանալ—մեծնալ—հիվանդանալ—հիվընդնալ ևն:

Կան բառեր, որոնք ամբողջական և սղված ձևով տարբեր իմաստ ունին արևմտահայոց մեջ. բայց այդ նույնը չկա արև-վելահայոց մեջ:

աշակերտ	— աշկերտ
վայելի	— վայլի
համարել	— համբել
համարուիլ	— համբվիլ

Նույնը գտնում ենք նաև արևելյան հայերենում. ինչ.

վերացնել	— վերցնել
----------	-----------

24. Երկրորդ խմբին են պատկանում այն բառերը, որոնք մի երկու տառով միայն տարբերվում են իրարից: Այսպես են՝

ամաչել (ամչնալ)	թամքել (թամբել)
ամսեկան (ամսական)	թքել (թքնել, թուքնել)
անել (ընել)	լինել (ըլլալ)
առաջաբան (յառաջաբան)	լցնել (լեցնել)
առաւօտ (առտու)	լցրած (լեցուցած)
ասել (րսել)	խորքը (խորը)
առե-կոսե (ըսի-ըսաւ)	խորքից (խորէն)
արգելիլ (արգիլիլ)	ծալիլ (ծալիլ)
բաղանիս (բաղնիք)	ծախս (ծախք)
գնացած (գացած)	կակղացնել (կակուղցնել)
գնացի (գացի)	կարենալ } (կրնալ)
գործ ածել (գործածել)	կարողանալ }
գցել (ձգել)	կարող է (կրնայ)
դիպչել (դպչել)	կարող էին (կրնային)
երևի (կերևայ թէ)	կողպել (կղպել)
երկուս (երկուք)	կորած (կորսուած)
էժան (աժան)	կորչել (կորսուիլ)
էլ (ալ)	կրոն (կրօնք)
ընկած (ինկած)	հազին (հազած)
ընկնել (իյնալ)	հազնված (հազուած)
թալանիլ (թալել)	հազնվել (հազուել)
թամք (թամբ)	հիմի (հիմա)

հիմք (հիմ)
հոգս (հոգ)
հույս ունեմ (կյուսամ)
ճանաչած (ճանչցած)
ճանաչել (ճանչնալ)
մենակ (մինակ)
մեկմեկ (մէյմէկ)
մեն մենակ (միս մինակ)
մորեխ (մարախ)
մորթի (մորթ)
մրսել (մսիլ)
մորուս (մորուք)
նմանեցնել (նմանցնել)
շեմք (սեամ)
շոր (սալոր)
շվաք (շուք)

ուղարկել (ղրկել)
ունք (յօնք)
պաչել (պազնել)
պաս (պահք)
սպանել (սպաննել)
սովորած (սորված)
սովորել (սորվիլ)
վախենալ (վախնալ)
վայր, վեր (վար)
վերև (վեր)
ցածր (ցած, վար)
քայլել (քալել)
քանիսը (քանին)
քանիսին (քանիին)
քնած (քնացած)
քնել (քնանալ)
օրեկան (օրական)

25. Բառը միևնույնն է, բայց երկու բարբառներում տարբեր իմաստ ունի Այսպես՝

վայրկյան (¹/₆₀ րոպե. 2. րոպե)
պտտել (շուռ տալ. 2. ման գալ, զրոսնել)
հայտնի (նշանավոր. 2. ակներև)
հով (զով. 2. քամի)
մեկնել (երկարել. 2. բացատրել)
մէջք (թիկունք. 2. գոտկատեղ)
մտիկ անել (դիտել. 2. լսել)
իմանալ (գիտենալ. 2. լսել)
հարկավոր (պիտանի. 2. արտաքնոց)
մրափել (շան քնելը. 2. մարդու ննջելը)
շոր (հագուստ. 2. կեղտոտ շորի կտոր)
լաթ (կեղտոտ շոր. 2. հագուստ)

26. Կան բառեր, որոնք գործածական են միայն արևմտահայ գրականում (անցնելով ժողովրդական լեզվից) և անսովոր են արևելահայ գրականի համար. ինչ.

ակոսայ (ատամ) կրթնիլ (հենվել)
աղէկ (լավ) կօզտէ (բավական է)
աղջնակ (փոքր աղջիկ) հոտիլ անուշ (բուրբիլ)
աղւոր (սիրուն) հրել (մղել)

ատեն (ժամանակ)
ատեն ատեն (երբեմն երբեմն)
արտորալ (շտապել)
արտորնօք (շտապով)
բզկտել (պատառոտել)
զէշ (վատ)
ընթերցարան (դասագիրք)
թաց-խիում (շատ թըջված)
թօթվել (թափ տալ)
խամաճիկ (տիկնիկ)
խաւրել (ուղարկել)
կաղանդ (նոր տարի)
խոֆած (ցնորած)
կանչվուտէլ (գողգոտալ)
կոտտալ (երակը զարնել)
կոահել (գուշակել)

ճանկոտել (չանգոել)
ճանչուր (ծանոթ)
ճմրթիկ (տորթել)
մէկտեղ (միասին)
մուխ (ծուխ)
շտկել (ուղղել)
պաղ (ցուրտ, սառն)
պաղարիւն (սառնարյուն)
պզտիկ (փոքր)
պզտիկութիւն (ստորութիւն)
պլլուիլ (փաթաթվել)
պոթկալ (ժայթքել, ցայտել)
սահմակիլ (սարսափիլ)
սմքիլ (ցածրանալ, նստիլ)
տապլտկիլ (թավավիլ)
քով (մոտ, կողքին)

27. Բառեր էլ կան, որ հատուկ են միայն արևելահայոց (նույնպես բարբառներից անցնելով) և չկան արևմտահայոց մօտ. ինչ.

զազազած (կատաղած) կածան (նեղ ճանապարհ)
զլուխ տալ (խոնարհիլ ողջուներ) հերթ (կարգ)
զարզանդ (սարսափ) կուռ, կոներ (թև)
թխել հաց (եփել) շոգ (տաք)
թոկ (չուան) շուռ տալ (դարձնել)
խսկի (բնաւ) պոկել (փրցնել)
լուսամուտ (պատուհան) պոռ (շրթունք)
խոունանալ (գույնը գցել) պրծնել (ազատվիլ, վերջանալ)
սարքել (յօրինել, շինել) տկլոր (մերկ)
տիկնիկ (կուկլա) քորոց (զնդասեղ)

28. Կան դեպքեր, երբ երկու բարբառները իրար դեմ տարբեր բառեր են հանում, իբր թե տարբեր լեզուներ լինեին.

այժմ — հիմա կուլ տալ — կլլել
այնու ամհնայնիլ — ասոր կպչել — փակչիլ
հետ մեկտեղ կպցնել — փակցնել

անցկացրեց—անցուց
 արի—եկ, եկուր
 ափսէ—պնակ
 բղաւել—պոռալ
 գազար—ստեպղին
 գժված—խենթեցած
 գիժ—խենթ
 գրչահատ—զմելի
 դեղատոմս—դեղագիր
 դեղատուն—դեղարան
 դուրս գալ—ելլել
 երկարած—երկնցած
 երկարել—երկննալ
 էգուց—վաղը
 ընթերցարան—ընթերցատուն
 թանաք—մելան
 թանաքաման—կազամար
 թանկ—սուղ
 թվալ—երևիլ
 իսկի—բնաւ
 ի վերայ այսր ամենայնի—
 այսու հանդերձ
 լիքը—լեցուն
 խաչփողոց—քառուղի
 խմիչք—ոգելից ըմպելիք
 խմիչքեղեն—ոգելից ըմպելիներ
 ծրար (նամակի)—պահարան
 կանգնած—կեցած, կայնած
 կանգնեցրեց—կեցուց
 կանգնել—կենալ, կայնիլ
 կեղտ—աղտ
 կեղտոտ—աղտոտ
 կծել—խածնել
 վեր կենալ—ելլել
 վերցնել—առնել

կռանալ—ծռիլ
 կուուր—տանիք
 համար—թիւ
 հանգել—մարիլ (ուսը)
 հարբած—գինով
 հարմեցրած—գինովցուցած
 հարևան—դրացի
 հացթուխ—հացագործ
 հեծանիւ—հեծելանիւ
 հեշտ—դիւրին, դիւրաւ
 հյուսիսափայլ—հիւսիսայգ
 հրդեհհաշիջ—հրշէջ
 ձեռնարկ—դասագիրք
 ձու—հաւկիթ
 ճղել—պատռել
 մարդ ու կին—էրիկ-կնիկ
 մեխ—գամ
 մեխել—գամել
 մեջք—կոնակ
 նավթ—քարիւղ
 ներքև—վար
 նախավերջին—վերջընթեր
 շեմք—սեամ
 պատվիրած (նամակ) —
 յանձնարարված, ապահոված
 ջոկ—զատ
 ջոկել—զատել
 սազական—վայել
 սազել—վայել
 սար—լեռ
 սպիտակ—ճերմակ
 վաղ—կանուխ
 վաղ թե ուշ—ուշ կամ կանուխ
 փակել—գոցել
 փուլ գալ—փլիլ
 քաղցած—անօթի
 քաղցածանալ—անօթենալ

վայրկյան—երկվայրկեան
 տղամարդ—այր
 տղայ—մանչ
 ըստե—վայրկեան
 ցած, ցածր—վարը
 ցույց տալ—ցուցնել
 փակ—գոց

քամի—հով
 քանդել—քակել, փորել,
 փլցնել
 քեռի—մօրեղբայր
 քերծվել—քերթվել, սկզբփուլ

29. Արեւմտահայերենը կյանքի է կոչել գրաբարի շատ բառեր, որոնք անգործածական էին դարձել. օրինակ՝ ազագուն, ակաղձուն, թիրախ, թոնուրոն, խաթարել, խոկալ, խորհիլ, ու, ծանալ (մի բանից սառչել), պուտել (ունքերը կիտել), նուպայ, քայո (մանեակ), փուլ (phase), ցփսի (շալ), տափատ (շալվար) ամբուկ (պատինջան), լուիկ (պամիդոր) ևն ևն, որոնցից մի քանիսը սկսան գործածվել նաև արևելյան գրականում:

Իրարար բառերի գործածութունը երբեմն հասցնում են սակայն չափազանցության. Հիշում եմ արեւմտահայ մի գրողի մի ոտանավորը, բաղկացած երեք տնից, առաջինը վերջանում էր վսեմը բառով, երկրորդը՝ ցսեմը, երրորդը՝ պսեմը: Այս վերջինը միմիայն Առձեռն բառարանը և Արեւմտականը գիտեն. նշանակում է «վարդի փուշ» և հեղինակը այդ ոտանավորը գրել է անշուշտ ոչ թե բանաստեղծական որևէ ներշնչումից ազդված, այլ միմիայն ցույց տալու համար, թե ինքը այդ բառը գիտե:

30. Արեւմտահայերը հնարեցին բազմաթիվ նոր բառեր, որոնց դեմ արևելահայերը կամ ուրիշ բառ են հնարել և կամ ավելի հաճախ օտար եվրոպական բառ են գործածում. ինչ. կառախումբ (=գնացք), վայրաշարժ (=շոգեքարշ, լոկոմոտիվ), ինքնաշարժ (=ավտո), լուսածին (=ֆոսֆոր), փապուզի (=տունի), կնարան (=գինեկոլոգ), կարծրերակութիւն (=սկլեոտ), կաճառ (=ակադեմիա), կաճառորդ (=ակադեմիկոս), ուսուցչապետ (պրոֆեսոր), սեղմիւրան (կորսետ) ևն ևն: Այս կարգի բառերի թիվը շատ մեծ է, և հատկապես գիտական բառերի:

Այս բոլորը առանձին առանձին վերցրած մեծ բաներ չեն. բայց երբեմն կարող են միասին պատահել և ստեղծել այնպիսի նախադասութիւններ, որոնք անձանոթ կողմերի համար բոլորովին անհասկանալի մնան: Օրինակ՝

Աս ասանկ՝ ըլլալէն ետքը=այս այսպես լինելուց հետո: Խենթը շուքին մէջ հոս հոն կը սլքտար=գիժը շվաքում այս ու այնտեղ թափառում էր:

Անոնց հիմակուան բուսածներուն նայելով կօզտէր որ յա-
ջողէի=նրանց այժմվա ասածների համաձայն՝ բավական էր որ
ինձ հաջողվեր:

Առտուն կանուխ արթնցանք, լաթերնիս թօթվեցինք,
շտկեցինք, շտկոտեցինք, անօթի փորանց մէյմէկ հաւկիթ կլի-
ցինք...=վաղ առավոտյան զարթնեցինք, մեր հագուստները թափ
տվինք, ուղղեցինք, մաքրեցինք, քաղցած փորով մի մի ձու
կուլ տվինք...

Հոն կեցած ատեննին ատ կիներուն ըսածները մտիկ կը-
նէին = այնտեղ կանգնած ժամանակ այդ կանանց ասածներն
էին լուսմ:

Ուշ կամ կանուխ էն աղվոր կաս-կարմիր ստեպղիները
պիտի փրցնենք = վաղ թե ուշ, գեղեցիկ վառ կարմիր գազար-
ները պիտի պոկենք:

Հոսկէ հոն գացած ատեննիս պահ մը հող պիտի կանգ առ-
նենք = երբ այստեղից գնանք այնտեղ, մի քիչ ժամանակ այդ-
տեղ պիտի մնանք:

Սեպէ թէ ակուզ ելաւ = այնպես համարիր, թե ատամք
դուրս եկավ:

Աղուոր ըլար նէ շատոնց կճանչցուէր = եթե գեղեցիկ լիներ,
վաղուց էր ճանաչված:

Սենք այստեղ նշանակեցինք 30 տեսակ տարբերություն
երկու բարբառների միջև. կարելի է դեռ շատ մանր-մունք
տարբերություններ էլ գտնել: Բայց այդ բոլորը այնպես չեն,
որ երկու կողմերը իրար անհասկանալի դառնան. և հայերենը
մնում է բոլոր քիչ թե շատ կրթված հայերի համար իբրև մի
միակ լեզու*):

*) Երկու գրական լեզուների միացման հարցին նվիրված մի տետրակ
հրատարակեց վերջերս բարբառագետ հայկաբան ուսուցիչ Յ. Գ. Վեմյան
(այժմ հայրենադարձ), հետևյալ վերնագրով. «Արևելահայ և արևմտահայ
գրական լեզուներու միաձուլման լեզուական խոչընդոտներու հարթման նա-
խափորձ» (արտատպ. Բեյրութի «Միածան» թերթից, 1946 թ. նոյ.-դեկտ.):
Հեղինակը առաջարկում է հետևյալ 10 կետերը—արևմտահայերը պետք է
ընդունին ներդրականի -ում, յոգ. սեռ. -երի, -ճերի, սահմ. ներկայի -ում
նմ, -ում նս և անցողական բայերի -ցրի, -ցրիր, -ցրեց ձևերը: Արևելահայերը
պետք է ընդունին բացառականի -էն, հրամայականի գրէ՛, խօսւ՛՛ ձևերը, պետք
է հրաժարվին հայցականի տեղ տրական գործածելուց և պիտի ընդունին
«հոս, հող, հոն» մակբայները: Երկու կողմերն էլ միասին պիտի հրա-
ժարվին կրավորականի -վեցա, -վեցաւ, -վեցավ և չեղորի -եցա, -եցաւ, -եցաւ
ձևերից և պիտի գործածեն գեղջկական ա, վա ձևը. ինչ. «գրվա, բացվա»
վառվա, վառա, դադրա, աղչա» են:

ՆՈՐ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆԻ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՎՐԱ

Աշխարհաբարը գրաբարի ծնունդն է: Մայրը իր զավակին
նչ միայն տալիս է ծնունդ, այլ և սնունդ և խնամք: Բայց
հաճախ է պատահում, որ մայրը տկար է լինում, չի կարողա-
նում բավարար չափով խնամել իր զավակին, այն ժամանակ
հրավիրում են մի դայակ կամ դաստիարակ, և մանկան իը-
նամքը հանձնում նրան:

Գրաբարն էլ տվեց աշխարհաբարին այն, ինչ որ ուներ և
կարող էր տալ. բայց գրաբարը իբրև հին մեռյալ լեզու, անըն-
դունակ էր արտահայտելու նոր ժամանակի, նոր գիտության
և նոր կյանքին վերաբերյալ բազմաթիվ գաղափարներ: Ուստի
անհրաժեշտ էր մի նոր լեզվի օգնությունը, մի լեզվի՝ որ կա-
րողանար այդ թերությունները լրացնել ու դարմանել:

Այն ժամանակ, երբ հայերը սկսեցին կազմակերպել իրենց
նոր լեզուն, հայ ժողովուրդը ամբողջապես գտնվում էր տաճիկ-
ների և պարսիկների լծի տակ: Թողնենք շատ խավար պարսիկ-
ներին, Եվրոպայի շեմքին ապրող տաճիկներն էլ այնքան ետ-
նորին մնացած քաղաքակրթությունից, որ նչ միայն չէին կարող
առաջնորդ հանդիսանալ հայերին, այլև նույն իսկ նրանցից
օգտվելու կարիքի մեջ էին գտնվում: Տեղը չէ թուսել գրական,
գիտական, գեղարվեստական և առհասարակ կուլտուրական այն
մեծ օգնության մասին, որ մատուցին հայերը տաճիկներին,
մեծ օգնության մասին, որ մատուցին հայերը տաճիկներին,
բարձրացնելու համար նրանց մտավոր հորիզոնը: Արհեստներ,
արվեստներ, տպարան, պրեքեր, թատրոն, դպրոց, լրագիր, տառեր,
ամեն ինչ կրում է հայ մտավորականի կնիքը: Քիչ էր մնում,
որ նույն իսկ հայերեն այբուբենը որդեգրեին նրանք:

Այդպիսի դրության մեջ ավելորդ էր մտածել, որ հպատակ

հայ ժողովուրդը իր անկիրթ տիրոջներից (տաճիկներից և պարսիկներից) որևէ կուլտուրական օգնություն ստանալը:

Օգնությունը պետք էր սպասել Եվրոպայից:

Մեր երկու ազգային հատվածներից առաջինը (արևմտյան հայությունը) կենտրոնացած էր Պոլսում: Եվրոպացիք շատ վաղուց գաղութներ ունեին այդ քաղաքում: Իտալացիք հաստատված էին Պոլսի մի մեծ թաղում, որ իտալական բառով էլ մինչև այժմ կոչվում է Կալաթա կամ Ղալաթիա: Ահա նրանց հետ շփման մեջ մտան Պոլսի հայերը: Թրիմում էլ կային իտալացիք, որոնց հետ նույնպես շփման մեջ մտան հայերը: Այս շփման արդյունքը եղավ բազմաթիվ իտալերեն բառերի փոխառությունը Պոլսի հայ ժողովրդական բարբառում: Այդ բառերը մինչև այժմ էլ շարունակում են իրենց գոյությունը. ահա մի քանի օրինակ նրանցից.

մանճա «կերակուր»	mangiare
մօրթօ «մեռել»	morto
զանցա «սովորություն»	usanza
ըռասպա «մեծ խարտոց»	raspa
լիմա «փոքր խարտոց»	lima
չափա «փոցիս»	zappa
սինթինա «ծովի հոտը»	sentina
սիկուրթա «ապահովագրություն»	sicurtà
մօտա «նորաձևություն»	moda
ֆանէլա «բրդե սպիտակեղեն»	flanella
ֆալցօ «սխալ»	falso
լօքանթա «ճաշարան»	locanda
սօլֆաթօ «խիմիկ»	solfato
վիտէլա «մի տեսակ ընտիր կաշի»	vitella «եբրինջ»
փիացա «հրապարակ»	piazza
փիաթա «պնակ»	piatta
օմոնէլա «հովանոց»	ombrella
սալամուրա «աղած ձուկ»	salamoia (բայց հմմտ. ֆրանս. saumure).
թօնէլաթօ «տոննա»	tonnellata
անէնթա «գործակալություն»	agente
տիփլօմա «վկայական»	diploma
ֆապրիքա «գործարան»	fabbrica
մաքինա «մեքենա»	macchina

Այս կարգի բառերի թիվը Պոլսի ռամիկ բարբառում շուրջ 600 է: Նրանք պատկանում են կոչկալարություն, ոսկերչություն, դեղագործություն և այլ արհեստների ու գիտությունների, որով երևում է, թե որքան մեծ է եղել իտալական կուլտուրական ազդեցությունը Պոլսի հայոց վրա ընդհանրապես:

Հայ-եվրոպական շփումը ունիթոնների ժամանակից է սկսվում. այդ ժամանակից հայ ֆրաները (կաթոլիկ դարձած հայ կրոնավորները) շարունակ գնում էին Իտալիա (Հոմ), պաշտոնական, կրոնական կամ քարոզչական գործերով: Մինչև անգամ հայկական վանքեր հիմնվեցին այն ժամանակ Իտալիայի գանազան քաղաքներում: Կրոնականի հետ սկսեց նաև թարգմանչական գործունեություն. նոր լատիներենից հայերենի թարգմանեցին բազմաթիվ կրոնական ու փիլիսոփայական գործեր: Այս երթևեկը հայերի դեպի Իտալիա շարունակվեց շատ երկար ժամանակ:

Երբ սլոյսահայոց շփումը Եվրոպայի հետ ավելի շատացավ, երբ եվրոպական գիտությունների ճաշակը մտավ հայոց մեջ, առաջին երկիրը, ուր դիմեցին հայերը համալսարանական (հատկապես բժշկական) գիտություն ձեռք բերելու համար, Իտալիան էր: Վենետիկում, Միսիթաթ արքայի հիմնած վանքը և գլխոցը (1717 թ.) մեծ գորկ տվին հայ-իտալական կուլտուրական հարաբերության: Այս ժամանակից են բազմաթիվ երկերի թարգմանությունը ինչպես լատիներենից, նույնպես և իտալերենից հայերեն: Այս ժամանակից է առաջին հերթին աշխարհագրական նոր անունների մուտքը իտալերենից հայերեն, որ մինչև այսօր էլ շարունակվում է արեւմտահայ գրական լեզվում:

Ահա մի փոքրիկ ցանկ այդ կարգի անունների (բնականաբար արևմտյան աստագործությունը):

Baviera	Գավիէրօ	Prussia	Բրուսիա
Svizzera	Ջուիցերիօ	Napoli	Նաբոլի
Danimarca	Տանիմարքօ	Rumania	Ռումանիա
Formosa	Ֆորմօզօ	Siberia	Սիբերիօ
Genova	Ճենովօ	Spagna	Սպանիա
Giappone	Ճաբօն	Vienna	Վիեննա
Giava	Ճավօ	Groenlandia	Կրօնլանտիա
Irlanda	Իւլաննօ	Islanda	Իսլանտա
Livorno	Լիվօռնօ	Londra	Լոնտրօ

Malta Մալթա
 Montenegro Մոնթենեկրո
 Corsica Բորսիքա

Marsiglia Մարսիլիա
 Costanza Բոստանցա
 Cocincina Բոչինչին

Իտալացոց հաջորդեցին Ֆրանսիացիք, որոնց ազդեցութիւնը շատ մեծ եղավ ամբողջ Արևելքի վրա: Բացվեցին նույն իսկ զուտ ֆրանսիական դպրոցներ, իսկ ֆրանսերեն լեզվի և գրականութեան ուսումը ոչ միայն Պոլսի կամ Ջմյուռնիայի, այլ մինչև ամենավերջին տաճկահայ քաղաքի կամ գյուղի հայ դպրոցում պարտադիր էր: Աշակերտութիւնը սովորում էր պետական լեզուն (տաճկերենը) լոկ իբրև դաս, բայց երբեք չէր սիրում, և երբեք չէր ձգտում խորանալու նրա ուսման մեջ: Ձէք եղած (Թեկնոզ իբրև բացառութիւն) մի աշակերտ, որ այնպես առաջդիմեր տաճկերենի մեջ, որ դասից դուրս մի որևէ տաճկերեն գիրք կարդար: Եվ ինչ կարդար: Տաճիկ գրականութիւնը այնքան ողորմելի էր, որ ամոթ էր համարվում նրանով զբաղվել: Իսկ ֆրանսերենը ուսման կատարելագույն աստիճանն էր համարվում: Բոլորը սիրում էին այդ լեզուն. կրթված մարդք ֆրանսերեն պիտի իմանար կարդալ ու քիչ թե շատ խոսել: Ֆրանսիական էին ու նոր գրականութեան բոլոր ընտիր երկերը Պոլսի և զավառական կարևոր կենտրոններն էին թափանցում: Պոլսում նույն իսկ ֆրանսերեն լրագիր էր հրատարակվում: Ֆրանսիացի բազմաթիվ հեղինակների ընտիր գործերը, ինչպես և ահագին քանակութեամբ վեպեր (ոտմաններ) հայերեն թարգմանվեցին: Կազմվեցին մեծ ու փոքր ամեն տեսակ բառարաններ հայերենից ֆրանսերեն և ֆրանսերենից հայերեն: Գիտական բոլոր տեսակի գրքերը կազմվում էին միշտ այս կամ այն ֆրանսիացի հեղինակի հետևողութեամբ, եթե ոչ թարգմանութեամբ: Մի խոսքով հայ մտավոր, գրական ու գիտական կյանքը զգալի չափով գտնվում էր ֆրանսիական գրականութեան ազդեցութեան տակ:

Այս ազդեցութիւնը աճում և զորանում էր հատկապես Ֆրանսիայում ուսում ստացած հայ ուսանողութեան միջոցով: Իտալիայի համալսարանները երկար ժամանակ չհրապուրեցին հայերին: Արևելքում ֆրանսիական ազդեցութեան զարգացման հետ, զարգացավ նաև Ֆրանսիայի համալսարաններում ուսանելու ջերմ փափազը: Փարիզում հայ ուսանողների թիվը հարյուրի բարձրացավ: Ուսանում էին գլխավորապես բժշկութիւն, ոմանք նաև իրավաբանութիւն, ուրիշներն էլ գրականութիւն:

Այս բոլորի արդյունքն այն եղավ, որ հայ գրական լեզուն սկսեց ենթարկվել ֆրանսերենի ազդեցութեան: Մտածողութեան եղանակը, գրելու ոճը, նույն իսկ առանձին դարձվածներ և ասացվածներ ֆրանսերենի կաղապարի վրա ձուլվեցին և կազմավորվեցին:

Ի տարբերութիւն թուրքերենի ազդեցութեան, պետք է նրկատենք սակայն, որ ֆրանսերենի ազդեցութիւնը լեզվի նյութական կողմից (բառապաշար) երբեք կարելի չէ համեմատել ոչ թուրքերենի և ոչ իսկ իտալերենի հետ: Մինչդեռ Պոլսի ժողովրդական հայ բարբառը թուրքերենից փոխ էր առել մինչև 4000 բառ, իսկ իտալերենից շուրջ 600 բառ, ֆրանսերենից փոխ առնված բառերը պոլսահայ բարբառում շուրջ 200 էին, ինչ որ անհամեմատ սակաս է թուրքերենից և երբեք անգամ պակաս իտալերենից: Եվ այս բանը շատ բնական էր. որովհետև հայերը թուրքերի հետ ամենօրյա շփման մեջ էին միայն Պոլսում շուրջ 500 տարի, իսկ ֆրանսիացոց հետ միայն մի դար: Շփումը անմիջական էր նույն իսկ իտալացոց հետ, մինչդեռ ֆրանսիացոց հետ անուղղակի, հեռվանց հեռու, հաճախ գրական ճամբով:

Ահա մի փոքրիկ գուցակ պոլսահայ բարբառի մեջ մտած ֆրանսերեն փոխառյալ բառերի.

- | | |
|--------------------------|---------------|
| թոէն «գնացք» | train |
| մէրսի «շնորհակալ եմ» | merci |
| ժառթիէ «ծնկակապ» | jarretière |
| ժառտէն «զբոսավայր» | jardin |
| միւսիւ «պարոն» | monsieur |
| մատամ «տիկին» | madame |
| մատմազէլ «օբիտոր» | mademoiselle |
| փարթի «մի ձեռք խաղ» | partie |
| պաֆօռ «շոգեխալ» | vapeur |
| պիլէթ «տոմսակ» | billet |
| ափառթաման «մեծ բնակարան» | appartement |
| աօքթօռ «բժիշկ» | docteur |
| շմէնտիֆէն «երկաթուղի» | chemin de fer |
| փօթին «կոշիկ» | bottine |
| պօթ «կանացի երկար կոշիկ» | botte |

Մրանից ավելին, այսինքն ֆրանսերեն ամբողջական դարձվածներ կամ ասացվածներ, քաղաքավարական բացատրու-

թյուններ են հատուկ էին ֆրանսիական դպրոցներում սովորած կամ Ֆրանսիայի համալսարաններն ավարտած սերունդին, մանավանդ կաթոլիկ օտարամուկ հայերին, որոնց բուն հայերը որակում էին «զեվզեկ, զիւպպե» (թեթևսովիկ) ածականներով: Մրանք ի բնի թրքախոս, ստիպված հայերեն սովորելով՝ փչացնում էին հայ լեզուն թուրքերենի և ֆրանսերենի անձուռնի խառնուրդով, մինչև անգամ հայերեն բառերը արտասանելով ր-ի տեղ ու-ով (անոռ համառ քեզի կսիռեմ կոռ):

Անմահանուն երգիծաբան Պարոնյանը իր Ծիծաղում տալիս է այս կարգի հայերենի մի փոքր նմուշ, որ դնում եմ այստեղ (հրատ. Տփղիս 1899, էջ 480):

— Պօնժուր, մօսեօ Քարլօ:

— Պօնժուր մուշու:

— Մատամն հեր է:

— Մատամն մուշու Բիէռին հետ պղտիկ քուր մը ընելու գնաց երկու օրէ ի վեր և դեռ չգարձաւ:

— Այօն տօն, պղտիկ քուր մը որ երկու օր կը տւէ:

— Գերեայ որ սուարէի մը գացած են:

— Վերջը կուգամ, օրըվուար:

Ի պատիվ պոլսահայ գրողների պետք է խոստովանինք սակայն, որ երբեք այսպիսի լեզու մուտք գտած չէ գրականության մեջ: Ինչպես բուն ժողովուրդի, նույնպես և ավելի գրական լեզվի մեջ չափազանց սահմանափակ էր ֆրանսերեն բառերի գործածութիւնը: Ծայրահեղ դեպքում օտար բառերը գրում էին շեղատառ, կամ նույն իսկ լատինական այբուբենով և հաճախ կցում էին նրան հայերեն հոմանիշը, որ տեղն ու տեղը շինում էին կամ որևէ բառարանից արտագրում:

Ահա մի փոքրիկ նմուշ նաև այսպիսի մի գրվածքից: «Նախ լողարանին մեջ քանի մը կաթիլ Lubin-ի հեղուկէն կաթեցնելէ վերջը թեթև լողանք մը ըրավ և շուտով վրայէն անցուց իր շապիկներուն ամէնէն աղուոր վալանսիէններով զարդարուածը... քորսէն դնել աւելորդ սեպեց... մոխրադոյն demi drap շրջագգեստին տակէն, satin merveilles ժիւրօնը տանթելներով բեռնաւորուած՝ իր շարժումներուն ֆրուֆրուն կաւելցնէր: Cherry Blossom-ի սրուակէն քանի մը շիթ... (Յ. Ալփիար, Յանթագիօ, Պոլիս 1913, էջ 73):

Առաջին բարիքը՝ որ ստացան արևմտահայերը ֆրանսիական լեզվի ու գրականության ծանոթությամբ, մտավոր զարգացումն է: Գիտության բոլոր տեսակները, սկսած փիլիսոփայութիւնից մինչև վերջին արհեստագիտական ծանոթութիւնը և առտնին տնտեսության մեջ կարևոր մի տեղեկութիւն, ֆրանսերենի միջոցով հասավ արևմտահայերին: Նրանք ֆրանսերենին են պարտական նաև ամեն տեսակի քաղաքական հարցերի շուրջ ծագած վեճերի ծանոթութիւնը, և այն բոլոր առաջադիմական գաղափարները, որոնք արծարծվեցին ԺԸ և ԺԹ դարերում Եվրոպայում ընդհանրապես և Ֆրանսիայում մասնավորապես: Բայց այս բոլորը լեզվի պատմության հետ անմիջական կապ չունի:

Լեզվի պատմության հետ կապելու առաջին կետը հայ մտածողության եղանակի փոփոխութիւնն է: Մինչդեռ առաջ հայ հեղինակները հետևում էին տաճկական պատիպատ ոճին (մի նըմուշ տես վերը, էջ 507), այժմ արդեն թողեցին այն և անցան բացատրության այն պարզ ու հստակ ոճին (տես վերը, էջ 508), որ ֆրանսերենի ու անգլերենի հատկութիւնն է (հակառակ գերմաներենի, որ սիրում է կազմել մուլթ, խրթին, անհասկանալի, ամբողջ էջ բռնող նախադասութիւններ ու պլսապտույտ պարբերութիւններ):

Երկրորդը գիտական լեզվի և գիտական բառերի կազմութիւնն է ֆրանսերենի հետևողությամբ: Բոլոր գիտութիւնները նոր էին մեզ համար և բոլոր գիտական բառերը նոր: Ոչինչ ավելի հեշտ բան չկար՝ քան փոխ առնել այդ բառերը, այսինքն տառադարձել նրանք հայերեն տառերով և հրամցնել ժողովուրդին: Բայց ժողովուրդը եթե նույնիսկ սովորեր այդ բառերը, չպիտի կարողանար թափանցել նրանց կազմության, այսինքն չպիտի ըմբռներ նրանց ներքին իմաստը, որովհետև հունարեն և լատիներեն չգիտեր: (Այս երկու դասական լեզուների ուսումը, որ այնպես տարածված էր ամբողջ Եվրոպայում և Ռուսաստանում, բնավ մուտք չգործեց Արևմտահայոց զբոսորդներում): Ահա թե ինչու հայ հեղինակները սկզբունքով հակառակ կանգնեցին փոխառության գաղափարին և բոլոր գիտական բառերը թարգմանեցին: Մի երկրորդ պատճառ էլ, որևէ միջակազային-քաղաքական բնույթ է կրում, բացատրեցինք վերը՝ էջ 474:

Այսպիսով կազմվեց զուտ հայերեն գիտական լեզու, որի գիտական բառերը հաճախ ավելի հաջող էին քան եվրոպական

համանիշը (տես վերը՝ էջ 485—9): Այսպեսով նոր հայերենը մրցակից հանդիսացավ չեխերենին, որ իբրև կռիվ գերմանական ճնշման դեմ, որոշել էր շքնդուներ իր մեջ ոչ մի բառ, որ սլավական չէ: (Հայտնի է, որ չեխերենը օտար բառ չունի. նույն իսկ քատրոն բառը՝ որ համաշխարհային է, չեխերենում թարգմանված է սլավական արմատով՝ зрелище):

Հասնում ենք երրորդ կետին:

Ճրանսերեն լեզվին այսքան ուժեղ հետևողությունը չէր կարող չազդել նաև ոճաբանություն վրա: Եվ տեսնում ենք, որ ֆրանսերենին հատուկ զանազան ոճեր բառացի թարգմանվում են հայերենի՝ մի մասը պատշաճորեն, մի մասն էլ խորթ ձևով: Այս վերջինները պարտավոր ենք վերագրել թարգմանիչներին, որոնք կարող էին իրենց այնքան բազմաթիվ թարգմանությունց ժամանակ երբեմն սխալվել ու շեղվել ուղիղ ճանապարհից:

Այտընյանը, իր Գնն. քերականության մեջ, էջ 330—334, տալիս է մի ցուցակ այս կարգի ֆրանսաբանությունների: Ամբողջությամբ դնում ենք այստեղ դրանք, ա՛վելացնելով նաև մեր կողմից մի քանիսը: Այն օրինակները, որոնք ինչ որ անճարակ թարգմանչի սխալն են, նշանակում ենք աստղանիշով: Փակագծի մեջ գրվածը հարադաս հայ ձևն է:

1. Անխոհեմ (անզգորշ):
2. *Անարժանութիւն (անվայել գործ):
3. *Երիկամունք (մէջք). Երիկամունքը չուանով մը գօտեորեց (մէջքը չուան փաթթեց):
4. Պատիւ (պարծանք):
5. Խորհուրդ (խրատ):
6. Երկչոտ օրիորդ (ամչկոտ):
7. *Արիւնային պատերազմ (արիւնահեղ):
8. Դժբախտ գիշեր մը (աղետալից):
9. *Գէջ գող (անյաջող, անվարժ, անմիտ):
10. Դէպքին վկայ (ականատես):
11. Ծղմարտանման (հաւանական):
12. Գլխէն հնարել (մտքէն, իւր խելքէն):
13. *Հաճութիւն (ուրախութիւն). Հաճութիւն ունեցալ (ուրախացայ). Մէկուն հաճութիւն մը ընել (ուրախացնել):
14. *Հաւ, ոչխար մեռցնել (մորթել):
15. Շուրջ չորս ամիս (չորս ամսու չափ. իբր չորս ամիս):
16. Որոշ անձ մը (այս ոք, այս ինչ):

17. Մեր փոքր թիւը (մեր քիչլորութիւնը):

18. Կրօնական զգածմունքը (կրօնասիրութիւնդ):

19. Գազանի մը պէս յարձակեցաւ (գազանաբար):

20. Առանց ասոր (ապա թէ ոչ):

21. *Այնչափ աւելի որ (մանաւանդ որ):

22. *Ոսկի բաժակներու մէջ զինի խմել (բաժակներով):

Միևնոյն փայտեայ պնակին մէջ երկուքն ալ ոսպ կուտէին (մէջէն). Ձեռաց խոռոչին մէջ ջուր խմել (ափովը, ափին մէջէն). Լրագրի մը մէջ հատուած մը կարդալ (լրագրէ մը). Ափին մէջ բովանդակուած թոյնը (մէջի թոյնը):

23. *Մարգագետնի վրայ ժողված գոյնզգոյն ծաղիկներ (վրայէն քաղված). Կամըջին վրայ կառք մը կանցնէր (վրայէն):

24. *Առջև (առջևէն):

25. *Դեղագործի քով գնուած թոյն (դեղագործէ մը):

26. Առանց հյուսիսայցի՝ գաւառին բնակիչները խոր մթոյ մէջ կը քաղուէին (եթէ հիւսիսայգ չըլլայ՝ տեղացիք խոր մթոյ մէջ կը քաղուին):

27. Մեզի նկատմամբ գիշեր կսկսի. Ձեզի համար շահաւոր. Բոլոր աշխարհի համար փաստակար (ավելորդ են նախադրությունները):

28. *Ձմեռ չէ մսելո՛ համար (ձմեռ չէ որ մսիս):

29. *Երրորդ անգամ մ'ալ ինկաւ՝ մէյ մ'ալ չելլելու համար (և մէյ մ'ալ չելաւ):

30. *Մանուկը գետնէն վերցուց՝ բազկացը մէջ պնդելու համար (և պնդեց):

31. Անորոշ ժամանակի մը համար յապաղուեցաւ պատասխանը (մինչև անորոշ ժամանակ մը):

32. *Ձինքն իր խօսքերէն դատելու համար՝ կըսեմ թէ խաբեբայ է (դատելով):

33. Բաւական սրամիտ է դատաստան ընելու համար (դատաստան ընելու շափ սրամիտ է):

34. Բնակուելու համար բաւական ընդարձակ (մէջը բնակուելու չափ ընդարձակ):

35. Աւելորդ պիտի ըլլայ (կըլլայ):

36. Յոյս պիտի ունենայիք (կունենայինք):

37. *Կերթամ բարեկամս գտնելու (բարեկամիս կերթամ):

38. *Գնա մախաղդ փնտռելու (գնա մախաղդ առ):

39. *Շատ ջրոյն պատճառաւ դիւրաւ կըցանք նաւարկել (ջրերուն շատությանը պատճառաւ):

40. Գեշ օրն արգելք եղաւ ըլլալու հանդէսներուն (եղանակին գէշութիւնը).
41. Նախընթաց ողորմելի ճառերուն համար՝ այս անգամ նստարանները պարապ մնացին.
42. Բաժնուած սև հացերուն համար էր տրտունջը (հացերուն սևության համար).
43. Անխոհեմ եղայ (անխոհեմութիւն կամ անզգուշութիւն ըբք).
44. Առատածեան եղար.
45. *Ես ունիմ քու սուրդ (իմ քովս է).
46. Նայելու յանդգնութիւնն ունեցայ (յանդգնեցայ).
47. *Քիչ մնաց որ հաց շունենայի՞նք (հացերնիս հատնէր).
48. *Եթէ այսպէս վառես՝ ալ ածուխ պիտի շունենաս (ածուխ չի մնար).
49. *Այս դանակը գէշ կը կտրէ (չի կտրեր).
50. *Դուռս գէշ գոցուած էր (աղէկ չէր գոցուած).
51. Գէշ քնացայ.
52. Տեսնել կարծեցի (աչքիս երևաց).
53. Կարծեցի թէ կը լսեմ (ականջիս ձայն եկաւ).
54. *Քեզի օգնելու համար հոս եմ ես (կեցեր եմ).
55. *Ինչպէս կուգես որ չզարմանամ (ի՞նչպէս չզարմանամ).
56. Ինչ կուգես որ ըսէ (ի՞նչ ըսէ).
57. *Ճառերը գորոնք խօսեցար, եռյնչափ նոր հարվածներ եղան հակառակորդներուդ (խօսած ճառերդ մէյմէկ նոր հարուած եղան).
58. Այս գիրը նոյն մեծ կուրին պատմութիւնը կը պարունակէ (պատմութիւնն է).
59. *Իւր ծառաներէն ընկերացած՝ սանդուղներէն վար կիջնար (ծառաները հետն առած, միասին կամ ծառաներու ընկերությամբ).
60. *Հոմերոս Վիրգիլիոսէն հետևեցաւ (Վիրգիլիոս Հոմերոսին հետևեցաւ).
61. *Կշտամբանքները գորոնք արդիւնաւորեցայ (որոնց արժանի էի).
62. *Իւր հպատակներէն վախցուիլ (հպատակներուն ահարկու է).
63. *Բարեկամներէն օգնուիլ (օգնութիւն գտնել).

64. *Բարձրադիր անձերէն մին, որոնց մեջ Լուիզ պաշապաններ շահելու աշխատեր էր, պարոնուհի Դիւրապէլ կ'գտնուէր (էր) (Անիծեալն, թրգմ. Մամուրեան, Չմիւռնիա 1875, հտ. Դ. էջ 7).

65. *Մահը խլեց այդ այլապէս ներհուն բանասէր փրոֆեսորը (շատ).

66. Ձեռք քաշէ արբեցութիւնէ. այլապէս առողջութենէդ ալ կը զրկվիս, հարստութենէդ ալ (ապա թէ ոչ).

67. Հայրս երկու ամսէ ի վեր անկողնոյ կը ծառայէ (հիւանդ պառկած է):

Ինչպէս ասացինք, այս ոճաբանությանց մի մասը անշքնորէք թարգմանիչների գործն է. այսպիսիները մենք նշանակել ենք աստղանիշով: Հաճախ թարգմանիչը չի հասկանում ֆրանսերեն ռճի բուն իմաստը և թարգմանում է բառացի: Այսպէս է օր. № 21 «այնչափ աւելի որ», որ ֆրանս. d'autant plus que ձևն է: Կան ռճեր, որոնք թերևս Այտընյանի օրով ընդունված էին, բայց այժմ բոլորովին անսովոր են: Ուրիշներ էլ ընդհակառակը. օր. այժմ ամեն տեղ ընդունված է № 15 «շուրջ», որ ֆրանս. environ բառի նյութական թարգմանությունն է: Սովորական է նաև № 66 «այլապէս» (ապա թէ ոչ = ֆրանս. autrement), իսկ № 65 «այլապէս» անսովոր ռճ է:

Ֆրանսիացիներից հետո Արևելք դիմեցին անգլիացիք և ամերիկացիք: Բոլորի էլ նպատակը քաղաքական էր. բայց իրենց բուն նպատակը ծածկում էին մերթ առևտրական ձեռնարկություններով, մերթ բողոքական կրոնի քարոզչությամբ և մերթ կրթական հիմնարկություններով: Այս վերջիններից նշանավոր եղան Պոլսի Ռոբերթ կոլէջը, Մարսիանի, իսթաբուլի, Մանսի վոր եղան Պոլսի Ռոբերթ կոլէջը, Մարսիանի, իսթաբուլի, Մանսի վոր աստվածաբանական դպրոցները և աղջկանց «Հոմ սքուլը» Պոլսում: Բայց ինչքան էլ որ աշխատեցին նրանք, անգլիերենը հայոց դպրոցների ծրագրում մուտք չգործեց. եղան միայն մասնակի հետևողներ: Պոլսահայ բարբառում գործածական էին դարձել, որքան գիտեմ, միայն երկու բառ. իսլիմ «շոգի» <անգլ. steam և սոփիէն «կանգ առ» <անգլ. stop here: (Վակոն, թնէլ ևն անցել են ֆրանսերենի միջոցով):

Ավելի ուշ, բայց ավելի մեծ թափով Արևելք դիմեցին գերմանացիք: Հայտնի է այն դերը, որ խաղացին նրանք հայոց հանդեպ, սիրաշահելու համար տաճիկներին, որոնց զոհարեցին ամբողջ արևմտահայ ժողովուրդը, բնաջինջ անել տալով

մի միլիոն հայ, իսկ Թագյալ մի միլիոն հայութունն էլ ցի-
բուցան անելով ամբողջ աշխարհում: Բայց այդ բոլորը ապար-
գյուն ջանքեր եղան. առաջին համաշխարհային պատերազմից հե-
տո Տաճկաստանի մեծագույն մասը անգլիական ազդեցության
տակ ընկավ, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո
էլ գերմանական պետութունը ամբողջովին փուլ եկավ: Գերմա-
ններն ոչ մի ազդեցություն չգործեց արևմտահայ լեզվի և գը-
րականության վրա:

Կազմել եմ մի առանձին աշխատութուն «Եվրոպական լե-
զուների ազդեցութունը հայերենի վրա» վերնագրով, ուր հա-
վաքել եմ պոլսահայ բարբառում գործածական բոլոր օտար բա-
ռերը, թվով 855: Այս թվից 600 հատը իտալերեն է, մնացյալը՝
ֆրանսերեն. Անգլերեն բառերի թիվը երկու է միայն. նույնքան
էլ գերմաներեն. Բուլգարերենից կա մի բառ՝ golém «խոշոր»,
որ բնիկ սլավոնական բառ է (Berneker 320). Ռուսերենից փոխ-
առյալ է պոլսահայ առմիկ բարբառով խափուխա, որ է «կա-
զմբով պատրաստված կերակուր, սովուզ» (=капуст): Կարի-
նում գործածական էր բուլմաճնիկ «դրամապանակ» (<ռուս.
бумажник), 1900-ական թվերին, սահնակի գործածության հետ
Կարին է մտել նաև ռուս. սանքա բառը (տես Քօսեան, Բարձր
Հայք, Ա. 362):

Տրագիզոնում լսել եմ փարախօտ «չոզենավ» (<пароход)
և խալափօր «կառիվ, խառնակութուն» (ռուս. хлопотать):

Աշխատութունս 1922 թվին, Թավրիզից ուղարկել էի Վի-
եննա, հրատարակելու համար Հանդես Ամսօրյայում: Անցյալ
տարի սկսել էր ազդել:

Ավելորդ է տեսլ որ այդ ժողովրդական փոխառութուննե-
րից ոչ մեկը չի անցել գրական լեզվին: Գրական լեզուն ունի
իր ուրույն փոխառութունները նոր եվրոպական լեզուներից:
Դրանց թիվը իմ Արմատական բառարանում 44 է, որոնք հե-
տևյալներն են.

1. Ալմանակ «օրացույց» < իտալ. almanacco
2. Անգեղիկ «նարդոս» < ֆրանս. angélique
3. Անդիմոն (մետաղը) < իտալ. antimonio
4. Անեթում «սամիթ» < լատ. anethum
5. Առինկ «տառեխ» < իտալ. aringa
6. Ապիրակ «բույս է» < ֆրանս. spirée
7. Բաղենա «կեռ ծովի» < իտալ. balena

8. Թէյ «չայ» < ֆրանս. thé (չինարենից)
9. Թողան (ձուկ է) < իտալ. tótano
10. Թոն (ձուկ է) < ֆրանս. thon
11. Թուճ (Վենետիկի դուքս) < իտալ. doge
12. Լոգոր (կաշյա թուչուն) < իտալ. logoro
13. Կարտինար «ծխնի» < լատ. cardinalis
14. Կուսդար «նախաճաշ» < իտալ. gustare
15. Հայդուկ < ռուս. hajdúk
16. Հերոս < հուն. hē'rōs (ֆրանս. héros)
17. Հորիզոն < ֆրանս. horizon (հուն. horizōn)
18. Հումել «գայլուկ խոտը» < լատ. humulus, ռուս. hmel
19. Հրանունկ (ծաղիկը) < լատ. ranunculus
20. Մայժ «եգիպտացորեն» < լատ. mais < ամերիկ. mahis
21. Մանձակ «բաղձյան» < հուն. melitzána, իտալ. melen-
zana
22. Մատիտ < իտալ. matita
23. Մեթոս < հուն. méthodos > ֆրանս. méthode
24. Մելամաղձ < հուն. melancholia > ֆրանս. mélancholie
25. Մետեորայ < իտալ. meteora < հուն. metéoron
26. Մուգայ, մուսայ < հուն. moussa > լատ. musa
27. Մորկեղ «սունկ» < լատ. morchella
28. Չիբութ «մոլեխինդ» < լատ. cicuta
29. Պատրի, պապիկ «կաթոլիկ կրոնավոր» < լատ. pater,
patri
30. Ռոկեղ (ներկանյութ) < լատ. roccella
31. Սաղվիա (խոտ)? < լատ. salvia
32. Սարդոյ (խոտ է) < լատ. sardoa
33. Սեղայ «թամբ» < լատ. sella
34. Սկիւրո < հուն. skiouros
35. Սոնքոն (բույս) < լատ. sonchus, հուն. sónkos
36. Սուկան «վերնաշապիկ» < ֆր. soucanie < սառ. հուն.
soukania
37. Սուդրոն «գարի» < ռուս. soucrion
38. Բոք «իլ» < իտալ. rocca
39. Փարենթազիկ «իտալագիծ» < հուն. paréntesis
40. Փարոս < հուն. pháros
41. Փեկոն (ծառը) < հուն. phēgos, -ón
42. Փեկուղ «նշա» < ֆրանս. fécule

43. Փոստայ «ավերակ» < լեհ. ?

44. Քարտիճ «գնդացրի լիցք» < իտալ. cartoccio

Այժմ անցնենք խոսել ուսերենի ազդեցութեան վրա, որ հայ կյանքի ամենանոր և ամենից նշանավոր երևույթն է:

Հայերի հարաբերութիւնը ուսաց հետ բավական հին է. Առաջին անգամ ուսները Հայաստանում հիշվում են 1000 թվին: Ճիշտ այս թվին մեռավ տայոց կյուրապագատ Դավիթը: Չունենալով որևէ ժառանգ, որին թողնել իր երկիրը, կտակով իր երկիրը (Տայքը) հանձնեց հունաց Վասիլ Բ. կայսեր, որ այն ժամանակ Կիլիկիայումն էր գտնվում: Կայսրը իսկույն իր բանակով արշավեց Հայաստան և Դավթի իշխանութեան տեր դարձավ: Իր բանակում կար 6000 ուս գործ, որ Վասիլը ուսաց Վլադիմիր ցարից էր խնդրել այն ժամանակ, երբ Վասիլի քույրը՝ հայազգի Աննա իշխանուհին ամուսնացել էր Վլադիմիրի հետ և ուսաց քրիստոնյա դառնալուն միջնորդ էր եղել (991 թ.):

Այս է այն առաջին հիշատակութիւնը, որ ավանդում է մեզ Ասողիկ պատմիչը (Գ. խզ):

Այդ հիշատակութիւնը վերածվում է լուրջ պատմութեան նույն դեպքից կես դար հետո, երբ հայերը երևան են գալիս իբրև կազմակերպված գաղութ Ռուսաստանում:

ԺԱ դարում, Տուրքիլի արշավանքի և Անիի առման պատճառով խումբ-խումբ հայեր գաղթում են Թաթարստան և Լեհաստան: Այս գաղթականների մի մասը նստավ ուս-լեհական սահմանների վրա և իր քաջութեամբ անուն հանեց: Այն ժամանակ Գալիցիան, որ կոչվում էր Կարմիր Ռուսիա, անկախ դքսութիւն էր: 1062 թվին, Կարմիր Ռուսիայի Դեմետր դքսի որդին՝ Թեոդոս մեծ իշխանը, լեհաց դեմ պատերազմ ունենալով և լսելով հայոց քաջութեան համբավը, հրավեր ուղարկեց Նաշախաչի գաղթական հայերին և նրանց հետ նիզակակցութիւն կազմեց լեհաց դեմ (Բժշկեան «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան», էջ 85, Աղոնց «Աշխ. Եւրոպ.» Ա. 94, Собрание АКТОВ, ОТД. VIII, էջ 283):

Ռուսաց իշխանը խոստացել էր հայերին տալ այն տեղերը, որ նրանք կընտրեին լեհերից գրավված հողերի մեջ: Ըստ այսմ հայերը բնակութիւն հաստատեցին Կիևում և ուրիշ քաղաքներ:

րում: Նրանց թիվը հետզհետե շատացավ, այնպես որ նրանք մի քարաշեն եկեղեցի էլ կառուցեցին Կիևում:

Հայերի երկրորդ գաղթականական ճյուղը ընկնում է 17-րդ դարում: Այս անգամ պարսկահայերը և հատկապես Նոր-Ջուղայի հայերն են, որ աւետրական կապեր են հաստատում ուսաց հետ և հիմնում վաճառատներ Մոսկվայում, Աստրախանում, Նովոռոդում և Արխանգելսկում: Ռուս կայսրները տեսնելով հայերի ճարպկութիւնը՝ հրավեր են կարգում նաև Եվրոպայի, Լեհաստանի և Տաճկաստանի հայերին, գաղթել Ռուսաստան: Շատերը լուրմ են հրավերը և անցնում Ռուսաստան: Մոսկվան դառնում է ամենից ավելի հայաբնակ քաղաքը, ուր և նրստում է Վեամայն Ռուսիոյ հայոց հոգևոր առաջնորդը՝ 1701 թվին:

Ռուս-պարսկական առաջին պատերազմի և Ղարաբաղի հայոց ապստամբութեան առթիվ սկսեց հայոց երրորդ գաղթը, այս անգամ դեպի հյուսիսային Կովկաս՝ Ղլար, Մոզդուկ, Դերբենդ և Աստրախան: Ավելացնենք սրանց վրա Ղրիմի հայոց գաղթը, որ տեղի ունեցավ 1778 թ. և հիմնեց Դոն գետի ափին Նոր-Նախիջևան քաղաքը: Քաղաքը ամբողջովին հայաբնակ էր. սկզբում ունեւ 12,000 հայ բնակիչ, իսկ վերջին շրջանում, իր 6 գյուղերով միասին՝ 30,000 հայ:

Այս բոլորը սակայն սկիզբն էր միայն այն մեծ պատմական երևույթի, որ տեղի պիտի ունենար հայոց կյանքում 1828 թվականին:

Այս պատմական մեծ երևույթը Արևելյան Հայաստանի ազատութիւնն էր 800 տարվա թուրք-պարսկական ստրկութիւնից:

1828 թվի ուս-պարսկական պատերազմը ոչ միայն Կովկասը և առանձնապես Արևելյան Հայաստանը պարսկական ծանր ստրկութիւնից ազատեց, այլև խավարի մեջ նստած արգետ հայութեանը գիտութեան լույս և կուլտուրական կյանք պարգևեց:

Ամենից առաջ այս երկիրը, որ ուսաց տիրապետութեան նախօրյակին ընդամենը 300,000 հայութիւն միայն ունեւ, ուսաց միջոցով երկու տարվա մեջ 130,000 հայ ևս ստացավ: 1828 թվին Պարսկաստանից ներգաղթեց 40,000 հայ, իսկ 1829 թվին Տաճկաստանից (հատկապես Կարինի շրջանից) ներգաղթեց 90,000 հայ: Այս 430,000 հայերը շուտով այնպես աճեցին

ու բարգաժանեցին, որ մի դար չանցած արդեն երկու միլիոնից ավելի էին:

Երկրորդ. այս երկիրը, որ պարսական տիրապետութեան ժամանակ ոչ գիրք ուներ, ոչ դպրոց, կարճ միջոցում ստացավ կուլտուրայի բոլոր բարիքները: Յաղաղ ու ապահով կյանքը միջոց տվեց հայերին ամեն կողմ բանալու գուղղական դպրոցներ, գլխավոր քաղաքներում՝ թեմական միջնակարգ դպրոցներ, հիմնել տպարան, պարբերական մամուլ, լրագրեր, ամսագրեր, դպրոցական հանդեսներ, լսարան և դասախոսութիւններ, թատրոն և ազգային երաժշտութիւն:

Երրորդ. չբավականացան հայերը միայն իրենց տեղական ազգային դպրոցական կրթութեամբ, այլ հայկական դպրոցները ավարտած աշակերտութեան մի ընտիր մասը դիմեց ուսական համալսարանները և ձեռք բերեց գրականութեան և գիտութեան բոլոր ճյուղերում աչքի ընկնող հմտութիւն: Մեր բոլոր առաջավոր գործիչները ուղղակի կամ անուղղակի ուսական դպրոցի սաներն են, սկսած Աբովյանից, Նազարյանից, Նալբանդյանից և այլն:

Չորրորդ. ուսական գրականութիւնը աշխարհիս ամենաառաջավոր գրականութիւններից է. սնված առողջ գաղափարներով, ժողովրդական և ժողովրդասեր սկզբունքներով, նա այդ բոլոր ընտիր հատկութիւնները պատվաստեց նաև իր հայ սաներին, և նրան ենք պարտական այն ազատասեր, ազատախոս ոգին, որով սնվեց նաև Կովկասի առաջավոր հայութիւնը:

Եթե արեւմտահայոց մտավոր առաջադիմական շարժումը պարտական ենք Ֆրանսիական 1848 թվի շարժումներին և այդ շարժումների մեջ ապրող ֆրանսահայ ուսանողութեան, կովկասահայ մտքի առաջադեմ շարժումներն էլ պարտական ենք ուսական համալսարանին և ուսական դաստիարակութեան:

Արեւմտահայ ուսանողութիւնը, սակայն, Ֆրանսիայում մեծ թիվ չէր կազմում, իսկ բուն ժողովուրդը Պոլսում և մանավանդ ղավառներում, անմիջական շփում չուներ ոչ եվրոպացոց, և ոչ էլ եվրոպական գրականութեան հետ: Նա շփում ուներ միայն մի կողմից օսմանյան բռնակալ ու խավարամիտ կառավարութեան, մյուս կողմից հետամնաց թուրք և քուրդ կեղեքված ժողովրդական մասսաների հետ: Մինչդեռ Կովկասում և մանավանդ Ռուսաստանում, հայ ժողովուրդը ամենօրյա շփում ուներ ոչ միայն ուս ավելի առաջադեմ և կուլտուրական ժողովրդի

հետ, այլև նրա առաջավոր տարրերը, ուսու գրականութեան, ուսու լրագրութեան, ուսու դպրոցի և ուսու թատրոնի հետ: Ահա, թե ինչու՞ Ռուսաստանի հայութիւնն էլ ավելի շուտ թոթափեց իրանից հնութեան փոշին, յուրացրեց նոր և ազատական գաղափարները իր կյանքի, իր գրականութեան և իր լեզվի մեջ:

Ռուս լեզվի ազդեցութիւնը մեր արեւելահայ լեզվի վրա չափազանց մեծ է: Այս կողմից արեւելահայ հատվածը մենք կարող ենք բաժանել չորս կարգի:

Ա) Ռուսաստանի հայ գաղութները, որոնց մեծագոյնն է Նոր-Նախիջևանի հայութիւնը: Սրանք ընդհանրապես պահել են իրենց սեփական բարբառը, բայց թաթարներն ու ուսներն բառերով այնպես խճողված, որ կարող ենք ասել, թե նրանց քերականութիւնն է միայն հայերեն, բառարանը ո՛չ:

Նոր-Նախիջևանցի երգիծաբան-հրապարակախոս Սահակ Մեսնիկյանը պատրաստել և հրատարակել է երեք նմուշ (Գաղութ շարաթաթերթ, 1916 թ. № 8, էջ 121—2) ցարական շէրջանում Նոր-Նախիջևանցոց իրոսած խառնակ բարբառից: Դնում եմ այստեղ այդ նմուշներից մեկը:

— Սուսաննա, դ՛ուշքա, քաքր՛ւթթօ նասթոայէնիդ վաժնըյ չէ:

— Յէշչօ՛՞ բը, Ա՛նիչքա, դուն ալ փաղօ՛բնըյ մամենթներ փէռէժիվաթ անէ՛յիր նը՝ նասթոայէնիդ աղբէս գըլար:

— Փոիչի՛նը. . .

— Նէուժէ՛լի փոիչինը քէզի իզվէսթնը չէ:

— Քանէ՛չնօ:

— Ինա առէխօ՛վըյ գաղէնօփիս դեքօյթէ շօլքըլըյ փլաթիս գար նը՝. . . Ռաստօլ փէռվօքլասնըյ, փառիժանքա մաղիսթքային փէռէդելքայի դարիլ էի դա՝. . .

— Նհւ. . .

— Սալսէմ փոթիթ չանէ՛:

— Դա նէուժէ՛լի. . .

— Ուրիթքանէրս քանէչնօ թռէ՛րօվաթ արի, նասթոնէզ աթքազ արավ:

- Դուքն ալ իննչէ փասթուփիթ արա հէզը:
- Փածայուսթա, Ա'նիչքա, սավէթ դուր, ինչէ՞ս փասթուփիթ անիմ:
- Վսյուլ մի՛նո՛ւթու արոաթիցցը էդիր փավէնէննըյի, թօշ վթօշ իզլաժիթ արա փլաթիիդ իսթօռին ու փոա-սիթ արա նէմէդէննօ սուդ փադավաթ թօ անէ... չուդ-նըյ փոխյածնըյ փավէնէննըյ ունիմ օ՛ր...
- Նախըյմն փոաժիվաթ գանէ...
- Ֆի՛ դօն... Ռաստօվ...
- Փադուօրնըյ ադոէսը գիդի՛ս:
- Ա քանք ժէ...

Հասովածից երևում է երկու կարևոր կետ լեզվարանական տեսակետով:

- ա) Արտասանությունը ուսական բառերի մեջ ճիշտ ժողովրդական է. բայց բաղաձայնները (փ, ք, թ) թաթարական են՝ արդյունք Ղրիմի թաթարական ազդեցության:
- բ) Փոխառությունները միայն բառարանական են. քերականությունը մնում է անվթար հայկական, ինչ որ վաղուց հաստատված գիտական ճշմարտություն է:

Բ) Բնիկ երկրի դյուդական ժողովուրդը, որ ընդհանրապես ուսերեն չգիտե, առնասարակ քիչ շփում ունի ուս ժողովրդի հետ և խոսում է իր մայրենի բարբառը: Այս բարբառների մեջ կան ուսական փոխառություններ, բայց նրանց թիվը մեծ չէ: 1900-ական թվերին ես կազմել էի այդ կարգի փոխառությունների ցուցակը, որ ուներ միայն 600 բառ: Ցուցակս զո՛հ գնաց Բաքվի թալանին՝ տաճիկների արշավանքի ժամանակ:

Գ) Քաղաքներում բնակվող և զուտ ուսական դպրոցներում ուսում ստացած ինտելիգենցիան, հատկապես հին սերընդի այս կարգի ինտելիգենցիան (բժիշկներ, փաստաբաններ, ճարտարապետներ ևն): Սրանք հայերեն համարյա չգիտեն և կամ շատ վատ գիտեն. նրանց առօրյա լեզուն ուսերենն է:

Դ) Հայկական դպրոցներում, մանավանդ Սովետական շրջանի դպրոցներում ուսում առած ինտելիգենցիան ամբողջությամբ, սկսած բժիշկներից, զանազան մասնագետներից, մինչև վերջին հասարակ ուսուցիչը գիտե հայերեն և ուսերեն, մանավանդ հայերեն. նրանց առօրյա լեզուն հայերեն գրական լե-

զուն է, որ գրում են ու խոսում, նրանով դասավանդում, կարդում, առանց կտրվելու զուգընթաց ուսերենից:

Անշուշտ կան նաև այս չորս կարգի միջին աստիճանները: Ռուս լեզվի և գրականության մատուցած ծառայությունը հայ լեզվին ամփոփում եմ հետևյալ կետերում:

- ա) Հայ ժողովուրդը դարերով սնված ու մեծացած կոպիտ շրջապատում, ինքն էլ կոպիտ ասիական ժողովուրդ էր: Ռուսների ազդեցությամբ և օրինակով մեր բարձրը մեղմացան, փափկացան, մտան եվրոպական կարգեր, մարդկանց փոխադարձ հարաբերության մեջ բարեկրթություն, քաղաքավարական ձևեր, մի խոսքով կուլտուրականություն թե՛ ներքին, և թե՛ արտաքին կյանքում: Տաճիկական ու պարսկական զգվելի շոդքորթության փոխարեն տիրեց մեր մեջ էլ չափավոր քաղաքավարություն, խոսակցության մեջ հոգնակի ձևի գործածությունը և նման բաներ, որոնք ժամանակակից կուլտուրական մարդու հատկանիշն են կազմում: Փոխանակ քարև — աստծու բարին՝ հնավանդ ձևին, այսօր մարդիկ բարևում են միմյանց ասելով «հարգանքներս», որ ուս. МОЕ ПОЧТЕНИЕ ձևի թարգմանությունն է: Փոխանակ իրար կանչելու Շլամօ, Համբօ, Կարօ, Սաքօ, Աբրօ, կամ աղա Պետրոս, աղա Գրիգոր, Կարապետ աղա ևն», այժմ սկսել են գործածել, և անշուշտ ապագային ընդհանուր պիտի դառնա, Խորեն Սերգեյիչ, Երվանդ Ակիժիչ, Արտեմ Գրիգորիչ, Սոֆիա Գերասիմովնա, Ամալիա Արտեմովնա ևն ուսական քաղաքավարական ձևի գործածությունը:
- բ) Մեր երկիրը բաղկացած է բազմազգի ժողովուրդներից, որոնցից ամեն մեկը գործածում է իր սեփական լեզուն: Այսպես, վրացի, ադրբեջանցի, արխազ, մինգրել, լեզգի, և այլն: Իմանալ այս բոլորի լեզուն՝ անկարելի է. ուսերենը ծառայում է մեզ իբրև միջազգային լեզու բոլորիս համար, որով կարողանում ենք ազատ հաղորդակցություն ստեղծել մեր բոլոր դրացի ժողովուրդների հետ:

գ) Բայց ուսերենը պետք է ոչ միայն մինչև Ռուսաստանի ծայրը, այլ մինչև աշխարհի էլ ծայրը: Չենք կարող մենք բոլորս իմանալ ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն և նրանց միջոցով ծանոթանալ համաշխարհային գրականության: Ռուս գրականությունը ավել է ծովածավայ քանակությամբ թարգ-

մանուկները բոլոր եվրոպական և ոչ-եվրոպական լեզուներին, և նրանց միջոցով կարող ենք ծանոթանալ բոլոր գրականութուններին:

դ) Հայերենը այսօր ունի գիտական բոլոր ճյուղերի համար դարձրողական դասագրքեր, նույնիսկ բարձրագույն դպրոցների համար որոշ չափով ձեռնարկներ. բայց այդ բոլորը տանում են մեզ մինչև գիտութան շենքի շեմքը: Բայց այդ շեմքից ներս դեռ շատ ու շատ սենյակներ կան: Չունինք դեռևս գիտութան բոլոր ճյուղերի մեջ խորանալու համար ոչ մասնագիտական գրքեր, ոչ գիտական հանդեսներ ևն: Այդ բոլորի համար պիտի օգտվենք ուսուցիչներին գրականութան անսահման աղբյուրներին:

ե) Այս բոլորը ուսուցիչական մատուցած ընդհանուր ծառայութունն է: Բայց խոսելով մասնավորապես, ուսուցիչները մեզ հաղորդակցութան մեջ է դնում եվրոպական գրական ու գիտական աշխարհի հետ: Այն բոլոր բառերը, սկսած Փոսֆորից կամ ազոտից մինչև նորելուկ ստրեպտոցիդը և պենիցիլինը, ամեն ինչ մեզ հայտնի է դառնում միմիայն ուսուցիչների միջոցով: Ի՞նչ միտք ունի թարգմանել կամ աշխատել թարգմանել շակոլադը, վանիլը, վիտամինը, կակոն, խլորը, ատամնարուժի էքսկավատորը, շապոնը, շափերը, արդուզարդի պուզրան, պոմադան, կրեմը, լակը, դերձակի մանիկները, ևն ևն:

զ) Նույնիսկ հասարակ կյանքի մեջ անհրաժեշտ է մեզ փոխ առնել ուսուցիչներին բազմաթիվ սովորական բառեր: Հայերենը գիտե միայն «գլխարկ ու վզակ». ուսուցիչներից պիտի վերցնենք նրա զանազան տեսակները (կարտուզ, կեպի, ցիլինդր, շապո, պանամա, մաշիշ, բերետկա): Հայերենը գիտե միայն «կառք և սայլ». ուսուցիչներից պիտի վերցնենք նրանց զանազան տեսակները (Ֆուրգոն, կալյասկա, տրոյկա, Ֆայտոն, պրալյոտկա, կարետա ևն): Կերակուրներից մենք ունինք մեր «հերիսան, ապուրը, թանե սպասը, խորովածը ևն», ստիպված ենք ուսուցիչներից վերցնել «կատլետ, ժակո, բիտկի, անտրիկոտ, պաժարսկի, ասրիլոյ, կաշա, սուպ, բորշչ ևն»: Խմորեղեններից ունինք «գաթա, նազուկ, անհոգի հաց, անկաճ, կաթնահունց, բլիթ», բայց ուսուցիչներից փոխ ենք առնում «սուշկի, բուրիկ, բարանկի, ուլետ, պրյանիկ, տորտ, պեչենի, գալետ, սուլարի, բիսկվիտ, կեկա, բուլկի, վենսկի, Ֆրանսուլ, պիրոզ, պիշկի, պիրսոկի, պոն-

չիկ, խվորոտ, սլայոնկա, վատրուշկա, վարենիկի, պատա, մազուրկա, պլյուշկի, սիոնիկ, ալադի, բլինի, բլինչիկ» ևն: Կտրեղեններից հազիվ գիտենք «աստառ, կերպաս, թավիշ, կտավ, սնդուս, ևն», բայց ուսուցիչներից հարկավոր է վերցնել «տրիկո, բյադ, բոստոն, Ֆլանել, բումազեյա, սատին, լիբերտին, կավերկոտ, բատիստ, շիֆոն, մայա, կրեպլեշին, Ֆայդեշին, կրեպ-ժետ, կրեպ-գրանատ, կրեպոն, ինդիկո, մարկիզետ, տուսվիլ, շատլանկա, չեռուչա, էպոնժ, կաշմիր, շեփոտ» ևն: Կոշիկների տեսակներից գիտենք «տրեխ, կոշիկ, կիսակոշիկ, կրկնակոշիկ, ոտնաման ևն», իսկ ուսուցիչներից հարկավոր է վերցնել «սապոզ, սկարախոդ, բասանոշի, տանկետկա, տուֆլի, սապոֆի, լոգոչկա, սանդալ, սանդալետ ևն»: Չկենք բավական տեսակներ ծանոթ են մեզ. բայց փոխ ենք առնում մեզ անծանոթ տեսակներից «սիգա, լասասինա, վոբլա, ասետրինա, բելուգա, ստերլոզ, խամսա, սելոտկա, սազան, կեֆալ, սերուգա ևն»:

Այսքանը բավական ենք համարում հիշել փոխառութուններից. բայց նրանց թիվը անվերջ է և կլինի, քանի պիտի փոփոխվի կյանքը և ստեղծվեն նորանոր առարկաներ և երևույթներ:

է) Փոխառութուններից շատ ավելի հետաքրքրական են այն բառերը, որ հայ հեղինակները թարգմանել ու թարգմանում են շարունակ ուսուցիչներից (երբեմն ուղղակի և անփոփոխ, երբեմն էլ բարելավելով ու գեղեցկացնելով) և մտքերը են մեր չեզոք մեջ: Ահա մի քանիսը դրանցից:

- | | |
|--|--|
| поезд — գնացք | совпадать — համընկնել (հյ. զուգադիպել) |
| конка — ձիաքարշ | совместность — համատեղութուն |
| пулемет — գնդացի | поле зрения — տեսադաշտ |
| землемер — հողաչափ | ледяное поле — սառցադաշտ |
| паровоз — շոգեքարշ | опытное поле — փորձադաշտ |
| теплоход — ջերմանավ (հե-տևողութամբ пароход «շոգենավ») բառի. | целесообразный — նպատակահարմար |
| гостиница — հյուրանոց | нецелесообразный — անընպատակահարմար |
| номер — համար, թիվ, բայց նաև հյուրանոցի սենյակ. և այստեղից էլ՝ | закономерность — օրինաչափություն |
| номера — համարներ (երբև հյուրանոց). նաև բաղնիսի համար. | закономерный — օրինաչափ |
| пересмотреть — վերանայել | использовать — օգտագործել |
| | подпольный — ընդհատակյա |

Այսպիսի բառերի թիվը չափազանց մեծ է և օրից օր պիտի ավելանա: Մի քանիսը հրավիրում են մեր ուշադրությունը:

Անպայման (безусловно). հայերեն բառը նշանակում էր «առանց պայմանի». օր. Անդրոնիկոսը պահանջեց թորոսից անպայման հնազանդություն: Հայերենը ուսերենի հետևողությունը այժմ նշանակում է «անշուշտ, անպատճառ». ինչ. Վաղը անպայման կգամ: Այս նոր իմաստը ճիշտ չէ. բայց այնքան հին է և այնքան է տարածված, որ մինչև անգամ մտել է արևմուտահայ գրականություն մեջ:

Ինքնատե, որ թարգմանված է ուս. самовар բառից. ավելի ուշ մտածեցին թե շուրը ինքնին չի ետում և բառը ձևափոխեցին հեշտատե:

Փոխհարաբերություն (взаимоотношение). թարգմանված է ուսերենից, բայց սխալ է. ուսերեն отношение նշանակում է «վերաբերություն», իսկ сношение «հարաբերություն». հետևաբար взаимотношение եթե ճիշտ թարգմանեինք, պիտի լիներ «փոխվերաբերություն» և ոչ թե փոխհարաբերություն, որ անմիաբան է, քանի որ հարաբերությունը միշտ փոխադարձ է:

Հայտնի (известный). սովորական իմաստով նշանակում է «ծանոթ». օր. այդ բանը ինձ հայտնի է. այսպես նաև ուսերենը: Բայց ուսերենը ունի նաև «նշանավոր, երևելի, ակտնավոր» իմաստը, որ մտել է նաև հայերենի մեջ: Չկա արևմտյանի մեջ:

Ոչինչ (ничего). նշանակում է «ոչ մի բան». այսպես նաև ուսերենը. բայց ուսերենը ստացել է նաև «ոչ վատ, համարյա լավ» իմաստը: Օր. «Как живете? — Ничего». այս իմաստը մտել է նաև հայերենի մեջ:

Առդիր (приложением). առաջ ասում էին ներփակ կամ կից. բայց ներփակը ճիշտ չէր, որովհետև կարող էր լինել, որ գրությունը մի ծրարի մեջ ներփակված չլիներ: Նորակերտ առդիր բառը, որի հեղինակը ինձ անհայտ է, շատ գեղեցիկ է և զերազանցում է բոլորից՝ մանավանդ իր ներդաշնակ հնչումով:

Կարճել (сократить). գրաբարումն էլ կա այս բառը և նշանակում է «կարճացնել». բայց արդի հայերենում, ուսերենի հետևողությունը ստացել է նոր, իրավաբանական իմաստ. կար-

ճել գործը, այն է դատական հետապնդումից դուրս հանել, վերջ տալ գործին:

Ոճեր և դարձվածներ ուսերենի հետևողությամբ

Ամուսնանալ մեկի վրա — жениться на...
Տարածվել մի խնդրի վրա — распространяться на...
Նամակ գրել մեկի վրա — писать на адрес

Ավելի ու ավելի — более и более. բուն հայ ձևն է «հետզհետե ավելի». այժմ այս ձևը ընդհանուր դարձավ. նույնը նաև ֆրանսերեն ասվում է de plus en plus.

X-ական թվերին (в X-ых годах). — այս գեղեցիկ ձևը չկար նախապես և մինչև այժմ էլ անծանոթ է արևմտահայոց, որոնք երկար դարձվածներով են արտահայտում նույնը: Ռուսականից մտած լավ սովորություն է նաև թվականի մոտ դնել ք. համառոտագրությունը, որ ոչ մի եվրոպական ժողովրդի մեջ չկա. չկա նաև արևմտահայոց մեջ. ինչ. 1948 թ. (այն է 1948 թվականին): Արևմտահայերը դնում են նախադաս ք. բայց ոչ թե «թվական» իմաստով, այլ «թիվ», որի համար արևելահայերը դնում են №. ինչ. № 16 (=թ. 16):

Առ 1-ն մարտի. — նախապես ասում էին «մինչև մարտի 1-ը». բայց չէր հասկացվում թե մարտի մեկն էլ միասին հաշված էր թե ոչ. սրա համար ավելացնում էին «ներառյալ» կամ «բացառյալ» բառերը: Էջմիածնի Մինոզում, ուսերենի հետևողությունը հնարվեց մինչև մարտի 1-ը, չուս. до 1-го марта մարտի 1-ը չհաշված» և առ 1-ն մարտի, ուս. по 1-ое марта, մարտի 1-ն էլ հետը հաշված: Լավ ձև է:

Մի շարք «բազմաթիվ». առաջ ասում էին մի խումբ. այս վերջինը ցուցանիշն էր մեր ասիական անկարգության. իսկ մի շարք, որ ուս. ряд բառի թարգմանությունն է, ցուցանիշն է կարգի ու կանոնի. ряд вопросов «մի շարք հարցեր»:

Հանդիսանում է (является). վերջերս սկսեց այս բառի գործածությունը. պարզապես նշանակում է «է». օր. Սորենացին հանդիսանում է իրրև մեր հնագույն ազգագրագետը: Չափավոր գործածությունը հաճելի է. բայց կան հեղինակներ, որոնք շարունակ կրկնում են նույն դարձվածը. նրանք հանդիսանում են իրրև անհաջող հետևողներ ուս. լեզվի:

Բոլորովին (совсем). դրական նախադասության մեջ հայե-

լին և ուսերեն շատ լավ համապատասխանում են իրար. **СОВ-СЕМ ЧИСТЫЙ** = բոլորովին մաքուր: Իսկ բացասական նախադասու-թյան մեջ (**СОВСЕМ НЕЧИСТЫЙ**) «բոլորովին մաքուր չէ», համա-պատասխանությունը կորչում է: Արևելահայ ընթերցողը այս նախադասությամբ հասկանում է թե «բնավ մաքուր չէ», իսկ արևմտահայ ընթերցողը հասկանում է «մասամբ մաքուր է». և «բնավ մաքուր չէ» իմաստը ստանալու համար ասում է ամե-նեկին մաքուր չէ: Ուրիշ խոսքով բոլորովին բառի բացասականն է ամենեկին (արևելահայ լեզվով էլ կարելի էր ասել իսկի):

Խանգարել = мешать. ուսերեն բառը երկու իմաստ ունի «1. խառնել. 2. խանգարել». և զանազանելու համար այս երկու իմաստները իրարից՝ առաջինը դնում են հայցական խնդրով, երկրորդը՝ տրական: Որքան «ոուսագետ» հայեր կան, որոնք չգիտեն այս փոքրիկ կանոնը և ասում են «я Вас мешаю? — не мешайте мне», փոխանակ ասելու «я Вам мешаю? — не мешайте мне»: Եվ որովհետև հայերենում դերանունների մեջ ար-բական և հայցական նույն են, ուստի «ինձ մի խանգարիր, ևս Ձեզ խանգարում եմ» ձևերը տրական համարելով՝ ասում են նաև «գործիս մի խանգարի, գրելուն խանգարում է» ևն: Որպեսզի համոզվինք թե խանգարել բայը հայերենում վերցնում է հայ-ցական, օրինակ առենք «կարգը մի խանգարեք» հանրածանոթ ձևը: Արևմտահայերը երբեք չեն ասում «գործիս մի խանգարի ևն». այլ միայն «գործս մի խանգարեք...»:

Ես բաժանում եմ Ձեր կարծիքը, ես չեմ բաժանում Ձեր կար-ծիքը = я разделяю Ваше мнение, я не разделяю Ваше мнение. բնիկ հայ ձևն է «ես Ձեր կարծիքից չեմ, ես Ձեզ հա-մակարծիք չեմ, ես Ձեր կարծիքին համաձայն չեմ» ևն:

Ես Ձեզ շնորհավորում եմ.— ինչո՞վ.— Նոր տարով = ուսու-я поздравляю Вас.— С чем?— С новым годом. բնիկ հայ ձևն է. «Ի՞նչը.— Ձեր նոր տարին»:

Պատկերացրե՛ք, պատկերացնո՞ւմ եք. առաջ ասում էինք «Երևակայեցեք. երևակայում եք». ուսու. воображать ձևի նոր թարգմանությունն է. անհաճո չէ:

Անգամ և. նշանակում է «մինչև անգամ», հենքը գործ էին անում այս ձևը, երեկ ուսու. даже и ձևի հետևողությունը. այժմ վերացվել է:

Միանգամայն. գործածվում է «ամբողջապես, բոլորովին,

շատ» իմաստով. օր. Նրա խոսքերը միանգամայն իրավացի են. Դուք միանգամայն ճիշտ եք ասում: Նա միանգամայն գեղեցիկ է: Այսպիսի ձև չկար ոչ գրաբարում և ոչ էլ արևմտահայոց մեջ: Կարծում եմ կազմված է ուսերենի հետևողությունը. բայց մի ձևի:

Ապրել (ЖИТЬ). գրաբարում ապրիլ նշանակում է «աղատ-վել», աշխարհաբարում «կեալ, կյանք ունենալ», որ է ուսու. ЖИТЬ». բայց ուսու. ЖИТЬ ունի երկու տարբեր իմաստ. ա) «կեալ, ֆրանս. vivre, գերմ. leben, անգլ. to live», բ) «բնակիլ, ֆրանս. habiter, գերմ. wohnen, անգլ. to reside»: Ռուսերենը երկու իմաստը խառնած լինելով, կարող է անհրաժեշտ պարազային ասել առաջին դեպքում «БЫТЬ ЖИВЫМ», երկրորդ դեպքում «ОБИТАТЬ, ПРЕБЫВАТЬ»: Արևելյան գրական հայերենը հետևելով ուսերենի սովորական ձևին, գործածում է ապրել նաև «բնակ-վել» իմաստով, մինչդեռ ժողովուրդը չգիտե այդ և ասում է «նստել, կենալ, մնալ»:

Ինչ վերաբերում է = что касается... (գալով...):

Նայած = смотря (ըստ, համաձայն):

Չնայած = несмотря (թեև, հակառակ):

Վեր առնենք = возьмем. հին ժամանակ գործածում էին «օրինակ, գոր օրինակ» իմաստով. այժմ վերացված է:

Մոտ (у). գրաբարի առ նախդիրը ջնջվելուց հետո, աշխար-հաբարում դժվար եղավ նրա փոխանորդը գտնել. Արևմտահա-յերը ունեցան քով բառը, որ շատ դեպքերում լավ ծառայու-թյուն է մատուցանում: Արևելահայերն էլ ունին կողքը, կողքին և մոտը, որ հաճախ շփոթվում է մոտիկ բառի հետ: Ինձ մոտ է նշանակում է թե՛ «իմ քոֆու է», թե՛ «ինձ մոտիկ է, հետո չէ» և թե՛ «ես ունիմ»: Այսպեսով պատահաբար հայերեն ձևերը դու-գաղիպեցին ուսու. у меня, у тебя, у себя ևն ձևերին: Զգու-շալի է միայն երրորդ դեմքը, երբ ասում ենք «նա իր մոտ է» (նա իր տանն է, նա իր տեղումն է) = ուսու. он у себя:

Որոշ (определённый). հայերենը ուսերենի թարգմանու-թյունն է. ուսերենն էլ կարծեմ ֆրանս. certain ձևի. երեքն էլ նշանակում են ընդհակառակը «անորոշ անձ կամ թիվ»: օր. Որոշ մարդիկ արտահայտում են որոշ գաղափարներ: Արևմտա-հայոց մեջ չկա: Կարելի է ուրիշ ձևով ասել «Կան մարդիկ,

որոնք արտահայտում են զանազան գաղափարներ: Ռուսերենում այս առումը արդեն վերացվեց. բայց հայերենը մնում է և շատ հաստատուն է:

Ինձ հաջողվեց = мне удалось. վերածվել է անդեմ բայի. արևմտահայերը չգիտեն և ասում են «ես հաջողեցա»:

Թանր ինչո՞ւմն է = дело в чем? (բանը թնչ է, թնչ կա, թնչ է եղել):

Ուրիշի ակնոցներով նայել = глядеть чужими очками. այժմ այս ոճը վերացել է ռուսերենից. ասում են այժմ чужими глазами смотреть, որի համապատասխանն է «ուրիշի աչքով նայել»:

Ընդհանուր լեզու գտնել = найти общий язык, նրա հետ լեզու գտավ = с ним язык нашел.

Իրենից ի՞նչ է ներկայացնում = что представляет из себя? (ավելորդ է իրենից):

Տեսակետի վրա կանգնել = статья на точку зрения.

Բավարարել պահանջին = удовлетворить требованиям. այժմ ռուսերենն էլ վատ ձև է համարվում. լավ է ասել «պահանջը»:

Միայն թե = только что. գործածվում է «բայց» իմաստով. այսպես է նաև ֆրանս. seulement.

Տիրել երկիրը = захватить землю. պետք ասել «երկրին» հայերենում տիրել ըմբռնվում է «չ թե իբր «նվաճել», այլ «տեր դառնալ»:

Կան բառեր ու ձևեր, որոնք թեև կազմված են ռուսերենի հետևողությամբ, բայց նրանք ճիշտ չեն, հայերենի մեջ ընդհանուր գործածություն չունին, գործածական են ոչ լավ հայերենագետների կողմից և հետևաբար զգուշալի են: Այսպիսիներին հիշենք մի քանիսը.—

Շնորհիվ սովի, երաշտի, վատ պայմանների ևն. իբր թրգմ. ռուս. благодаря բառի հայերենի մեջ գործածում ենք միայն լավ բաների համար. ինչ. շնորհիվ առատ անձրևների. շնորհիվ իր աշխատասիրության ևն:

Բավականություն (удовольствие). ասում են մինչև իսկ՝ դուք բավական մնացի՞ք: Հյ. բավական բառը քանակ է ցույց տալիս և ոչ թե որակ: Վերոհիշյալ բառերի ճիշտ հայերենն է «հաճույք», գոհունակություն, գոհացում, գոհ»:

Խոսք (слово). հայերենի մեջ բառ կամ խոսք շատ տարբեր բաներ են. բառը մի քանի տառերի գումարն է. իսկ խոսքը մի քանի բառերի գումարն է. ռուսերենում слово գործածվում է թե մի, և թե՛ մյուս իմաստով. հայերենի մեջ ճիշտ չէ խոսք գործածել «բառ» իմաստով:

Դա. մեր ուսանողության մեջ վերջերս սովորություն դարձավ ենթակայից հետո դնել դա ցուցականը, եթե ենթական կապված է էական բայի երրորդ դեմքի հետ: Օր. Երևանը՝ դա Հայաստանի մայրաքաղաքն է: Այս խոսքի երևույթը բարձրացել է գրականության և անցել է նաև հոգնակիին: Այսպես՝ «Եկվորների առաջին խումբը՝ դա շինարարների խումբն է» («Սովետ. Հայաստան» 1946 թ. հունիս 30, էջ ա, սյունակ 3-րդ):— «Նա եզրակացրեց, թե հարեթական, հնդերոպական, սեմական և այլ լեզվաընտանիքները, դրանք լեզվական զարգացման տարբեր վիճակներ դրսևորող լեզվախմբեր են» (Ա. Ղարիբյան, Տեղեկ. Արմֆանի, 1943 թ. № 2, էջ 6): Այս երևույթը բացատրվում է ռուսերենի այն հատկությամբ, որ զեղջելով էական բայը, հաճախ գործածում է это. ինչ. Երևան—это столица Армении.

Փոխադրել (переводить, перевести), փոխադրություն (перевод). ռուսերենում ունի երկու իմաստ՝ 1. «տեղափոխել». 2. «թարգմանել»: Առաջինի մասին ոչինչ չունինք ասելու: Նախասովետական շրջանում մեր մեջ փոխադրել նշանակում էր նաև «թարգմանել» և փոխադրություն «թարգմանություն» (գուցե և ազդվելով գերմաներենից, ուր überse'tzen նշ. թարգմանել, իսկ ü'bersetzen նշ. փոխադրել): Նույնիսկ տարբերում էին թարգմանություն՝ «սովորական. թարգմանություն», փոխադրություն՝ «ազատ թարգմանություն»: Այժմ այս առումը վերացված է: Ռուս-հայ. դպրոցական բառարանում (Կարաքեշիշյան և Սարատիկյան, Երևան, 1941, էջ 300) լավ է արված, որ այդ իմաստը հանված է. իսկ Ռուս-հայ. բռ. (Ղարիբյան, Երևան, 1945, էջ 259) դեռ մնում է:

Ակնոցներ (очки). ինչպես որ հյ. աչք, վարք, բարք, երկինք, տուրք ևն բառերը աննշանակալի են, նմանապես ռուս. оч-

«КН «ակնոց», ЧАСЫ «ժամացույց», НОЖНИЦЫ «մկրատ» անեղա-
կան են. սխալ է ուրեմն ասել հյ. ակնոցներ՝ իբրև եղակի. ինչ-
ես ակնոցներս աչքիցս հանեցի ևն, այլ միայն ակնոց: Հոգնա-
կին կարող է լինել ակնոցներ. ինչ. Այս խանութում լավ ակ-
նոցներ են ծախում:

Ապրիլ (апрель) ամսանունը. մինչդեռ ամբողջ աշխարհը
այս ամսանունը գործածում է i ձայնավորով (ինչ. լտ. aprilis,
հուն. aprilios, ֆրանս. avril, վրաց. ապրիլի ևն), չգիտեմ ինչո՞ւ
ոուս ձևը ունի e (նախկին յաս). մի ժամանակ մեր մեջ էլ հե-
տևելով ոուսականին, ոմանք գրում էին ապրել, որ շփոթվում է
ապրել բայի հետ: Այժմ վերացված է:

Մնվել է կոշկակարի ընտանիքում = родился в семье са-
пожника. հայերենում բոլորովին այլ միտք ունի. պետք է ասել
«կոշկակարի որդի էր»:

Մի քանի խոսք էլ ասենք անհատական թերությունների
մասին, որ կարելի է նկատել այս ու այնտեղ:

Մի քանի տարի առաջ Կուլտուրայի տանը ինչ որ երեկույթ
կար. տոմս առինք, որի վրա գրված էր անգամային բացթողու-
նագեցել են՝ թարգմանել ոուս. разовый выпуск ձևը, այն է
«մի անգամվա տոմս». բայց սխալվել են, որովհետև раз այս
դեպքում նշանակում է, ոչ թե «անգամ», այլ «մի անգամ»:

3—4 տարի առաջ սկսել էր տարածվել որպեսզի բառի մի
սխալ գործածություն. շփոթում էին որ շողկապի հետ. ինչ-
գնա ասա, որպեսզի գա: Անշուշտ շփոթում էին ոուս. что և
чтобы: Շուտ վերացավ այս ձևը:

Երևանի ռադիոյի հայտարարությանց մեջ երբեմն լսում
ենք՝

X-ը կատարում է: Նույնի կատարմամբ: Դաշնամուրի վրա
կատարում է:

Այս ձևերը խորթ են մեր ականջին. պետք է ասել այն,
ինչ որ կատարում է (երգում է, նվագում է ևն):

Տոմսերը դրամարկղում.— լավ է, որ այժմ ասում են
«տոմսերը վաճառվում են»:

Ընտրությունների ժամանակ թերթերում մի քանի անգամ
կարդացինք նկարների տակ «X-ը իջեցնում է քվեն»: Իբր թե
թարգմանել է ոուս. опустить բայը. բայց սխալ է. ոուս. բառը
ծագում է пустить «թողնել, բաց թողնել» արմատից և շատ

հարմար է քվեն դրելուն: Հայերեն «իջեցնելը» շատ անհարմա-
է. կարծես թե վերևից չվանով կամ թելով ցած է իջեցնում:

Մրահներում ցուցանակների վրա գրված ենք տեսնում
«2 ՄՅԵԼ». սա էլ ոուսերենի կույր հետևողություն է՝ նկարիչ-
ների կողմից, ըստ որում ոուսերեն գրում են не курить —
բայց ոուսերեն не առանձին բառ է և պետք է որ բայից շուկ գրվի.
Իսկ հյ. չ մասնիկ է և իրավունք չկա մասնիկը առանձին գրել:

Այսօր Օթելլո է գնում.— идет Отелло (խաղում, ներկա-
յացնում են):

Ռուս. значит բառը, որի իմաստն է «նշանակում է», հա-
ճախ գործածվում է «ուրեմն» նշանակությամբ: Այսպես նաև
հայերենում:— Ռուսաց մեջ, վատ խոսող մարդիկ միտքը ամ-
փոփելու համար իբրև թարմատար գործածում են շատ հաճախ
значит: Մեր մեջ էլ վատ խոսողները 3—4 բառը մեկ կրկնում
են «ուրեմն», որ նույն բառի երկրորդ իմաստն է՝ անցած հա-
յերենի: Որքան ձանձրալի է այս երևույթը:— Ոմանք էլ, չգի-
տեմ ինչո՞ւ, ասում են «ուրեմն»:

Անհատական դեպքերը վաղանցուկ երևույթներ են. կգան
ու կանցնեն. բայց երբեմն էլ նրանք մանրէների նման գիտեն
տարածվել և ընդհանուր վարակում առաջ բերել:

Կան դեպքեր էլ, երբ հեղինակները կամ թարգմանիչները
հետևում են իբր թե ոուսերենին, բայց բոլորովին սխալ ար-
դյունքի են հասնում: Նրանց գրածը ո՛չ ոուսերեն է և ո՛չ էլ
հայերեն:

Օր. Պտղատու վայրի ծառեր՝ ինչպես օրինակ՝ հունական
ընկույզի, վայրի տանձի ևն. (Պորհ. Հայաստան 1934 օգ. 20, վեր-
ջին էջ, սյունակ ա). (Իբր թե թարգմանում է ոուս. грецкий
орех, որ է «կաղին»):

Այսպիսի երևույթներ իրենց ծայրագույն աստիճանին են
հասնում, երբ մի հայ թարգմանիչ, որ ոուսերեն գիտե (???)
բայց հայերեն չգիտե, հանգձնություն է ունենում ոուսերեն մի
գրվածք հայերենի վերածելու և նույն իսկ հրատարակելու:

Տարիներ առաջ Вестник центрального испол. Комите-
та, № 3, Москва 1923 տպագրել էր մի տետրակ հայերեն լեզ-
վով: Նախ քան հրատարակելը՝ Կոմիտեն դիմել էր Հայաստան,
պատկանյալ մարմիններին և խնդրել էր քննություն առնել
տետրակը: Տետրակը ուղարկվեց բանաստեղծ Հովհ. Հովհաննիս-
յանին: Նա քննեց և գտավ այնքան վատ, որ կառավա-

բությունը և Կոմիտեն հանեցին տետրակը շրջանառութիւնից: Նվառտոս էլ ներկա լինելով այդ աշխատանքին, արտագրեցի մի քանի տող նույն տետրակից և դնում եմ այստեղ, ցույց տալու համար թե ո՛ւր կարող է հասնել տգիտութեան չափը:

Պատիվ մեր Կառավարութեան և Կոմիտեին:

Հրամկազմութեան ճեմարանների և բարձրագոյն դպրոցների բոլոր նրանց ըստ շտատերի պատկանող հիմնարկութիւններով և հաստատութիւններով հանդերձ (էջ 51):

Չքափորագույններին և ամենաքչահողայիններին, մանաւանդ նրանց, վորոնք գործելու ընդունակ տղամարդ աշխատավորներ չունեն կամ թե նույնպիսի անասուններ (էջ 55):

Ճանապարհը ծառայեցնող ոճանդակիչ ձեռնարկութիւններից ստացած պրոգնոզայի ավելցուքը ռեալիզացիայի յենթարկելը՝ ծախելով կամ ապրանքը փոխելով, ինչպես և ճանապարհի շահագործութեան անպետք կամ վոչ հարկավոր դույքը՝ շրջանառութեան կապիտալի մասին կանոնները կատարելով (էջ 67):

* *

Այստեղ վերջացնում եմ քննութիւնը «Ռուսերենի ազդեցութեան դերի», որ մեր հայ ազգի և հայ լեզվի պատմութեան ամենամեծ և ամենակարևոր երևույթն է: Կարելի էր դեռ շատ երկար խոսել այս ընդարձակ նյութի մասին, բայց զրքիս սահմանափակ էջերը բավական չեն նրա համար: Դա պահանջում է մի ամբողջ մենագրութիւն: Ընթերցողին ուղարկում եմ երկու նորատիպ աշխատութիւնների, որոնք մասնագիտորեն զբաղվում են այս մեծ հարցով. սրանք են՝

Գ. Սեփակ.— Հայոց լեզվի զարգացման Մովսէսական փուլը. Երեզնի 1946:

Ս. Ղազարյան.— Ռուսերենի դերը արդի հայերենի զարգացման մեջ. (Ն. Մառի անվան Լեզվի ինստիտուտի աշխատութիւնների ժողովածու, հատ. 11): Մեծ մասամբ տալիս է ռուս-հայ հարաբերութեան պատմականը, թվում է ռուսերենից հայերեն

փոխառյալ հնագույն բառերը, քաղելով Նոյանի ժողովածուից (այս բառերից ամենահինն է Կիւստոսը (император 1699 թ.) և ապա ռուսերենից փոխառյալ ամեն տեսակի բառերը արդի հայերենում (հաշվեցի այս բառերը և դուռ 493 բառ, չհաշվելով տոմար բառը, որ սխալմամբ հիշված է ռուսերեն բառերի շարքում): Վերևում դրված իմ բառացանկը բոլորովին անկախ է այս ցուցակից և պարունակում է միայն 111 բառ):

Նույն հեղինակը հայտնեց ինձ, որ ինքը, մեր Ակադեմիայի Լեզվի Ինստիտուտի հանձնարարութեամբ պատրաստում է այժմ ընդարձակ մենագրութիւն, որի խորագիրն է «Ռուսերենի և ռուսական լեզվաբանութեան դերը հայերենի և հայագիտութեան զարգացման մեջ»:

ՎԵՐՉԱԲԱՆ

Այստեղ պետք է տամ հայերենի ամբողջ արմատները վերջնական հաշիվը՝ հիմնվելով Արմատական բառարանիս վեց հատորների և նրա հավելված է հատորի վրա:

Ամբողջ Արմատական բառարանի բովանդակած արմատների թիվն է 11,000 (ճիշտ հաշվով 10,996, որ կլոր թվով դնում եմ 11,000). սրանից միայն 4231 բառն է, որ կենդանի և գործածական է արդի գրականում, ինչ որ անում է 38⁰/₁₀, իսկ բարբառներում՝ 2878 բառ, որ անում է 26⁰/₁₀ (տես վերը, էջ 388):

Այս 11,000 բառերից 1158 հատը Երեմիա Մեղրեցու անհայտ բառերն են, 416 հատը՝ Նոր Հայկազյան բառարանի հիշատակած և «Հին բա.» մակագրած անվավեր բառերն են և 650 հատն էլ՝ սխալ բառեր, որոնք անկյունավոր [] փակագծի մեջ եմ դրած իմ բառարանում: Այս հաշվով անվավեր կեղծ բառերի քանակն է 1158+416+650=2224:—Երեմիա Մեղրեցու 1158 բառերից երեքը (արբայ «աղախին», ետր «աղջիկ կամ բող», ետրոնին «ընկեր կամ պատուակից»), դոցենտ Գևորգ Զահուկցյանը շատ ճիշտ մեկնեց իբրև փոխառյալ հուն. ἄβρα «իր տիրուհուն սիրելի, երիտասարդ աղախին», ἔταρα «հարձ, ապօրինի կին», ἑταῖρος «ընկեր» ձևերից (տես Bailly, էջ 3 և 818): Սրանով Մեղրեցու բառերից երեք թիվ պակասեց և հունյն փոխառությանց վրա երեք թիվ ավելացավ:

Հնդեւոպական ծագում ունեցող բառերի թիվն է 909 (տես հտ. Ա, էջ 33, տող 10 տակից): Սրանց վրա ավելացնում եմ այժմ գի կամ գիհի<հնիս. wīta «ուռի», յանդուգն<dheugh, dhug, բմբուս<bhos-ti, յադթել<in-salt, հիւանդ<pi-r-to, կեղտ<g²ed-lo, ուրջու>putro, իջանել, էջ=ուռւ. ида, առատիկ <չվան><dē, առաքինի<svento, անդ «արտ»=թոխար. ānt «հար-

թավայր» (Lidén, Mél. Peders. 90, մինչդեռ ես Արմ. բա. միացրել էի անդ «չեմք» բառին), կալ «բունել»՝ ավելացնել թոխար. käll «ստանալ, ձեռք բերել» (Lidén, անդ. 91), երի՝ փոխել և դնել ըստ լիթ. հսլ. rēita>հյ. *երի>երի (Lidén, անդ, 88), երանիկ, երջանիկ<prēi, բեռի<swesrós (Բոլորնոր մեկնություններս տես Տեղեկ. Ակադ. «Հայկականք» Ա—է շարքը): Հայել, ճայել<pā-, pat, արտոքալ<dra-, բայոց<bhū, bheu, հիանալ<prī (չորսն էլ ըստ պրոֆ. Աղայանի): Բոլորի գումարը լինում է 927:

Միջերկրյան բառերի վրա ավելանում է մաթուգ (իբր պղամաթուգ), որով գումարը լինում է 5:

Բնաձայն բառերի վրա ավելացնել հոյ «վախ» բառը, որ պետք է բաժանել հոյ<հնիս. poti «պետ» արմատից. գումարը կլինի 153:

Հարավային կովկասյան փոխառությունների մեջ պետք է ավելացնել ծարալ<կովկ. ձղարի «ջուր» (ուղիղ մեկնեց H. Vogt, Arm. et cauc. «Norsk Tidsskr.» IX, 1938, էջ 330, ինչպես հաղորդեց ինձ պրոֆ. Արուստինյան). սրանով գումարը լինում է 60 բառ:

Իրանյան բառերի վրա պետք է ավելացնել 6 բառ. ժպիրհ <aži-piθra «օձահայր», դժպհի<duž-piθra «չարահայր», անեակ <պհլ. hōyak, դեակ<պհլ. *dilek>վրաց. դիլեգի (ըստ Արուստինյանի), տաք<տապք, բարակ «շուն»<պհլ. barak (պրոֆ. է. Աղայան), որով գումարը կլինի 1411:

Հին լատիններենից փոխառյալ բառերի վրա պետք է ավելացնել թուրք<titulus «գրություն», որով գումարը կլինի 11:

Ասորերեն բառերի վրա պետք է ավելացնել 2 բառ. լօշ կամ լուաշ (ասոր. lāš) և սրանից կազմված լօշ կամ լօշտակ բույսը. գումարը 211:

Հունական փոխառությունները 915 հատ էին. նրանցից ջնջել սեմփորի և ավելացնել լառնակ «աճուրդակ կամ գերեզման»<λαρναξ (ըստ Արուստինյանի) և արբայ «աղախին», ետր «բող» և ետրոնին «ընկեր» (ըստ Գ. Զահուկցյանի). գումարը լինում է 918:

Վրացերեն բառերի վրա պետք է ավելացնել մեմեաշաղել, որ ըստ պրոֆ. Լ. Մելիքսեթիի վրացական ազգանուն է (տես հավելված 166), այսպես նաև սեն «ցավ» (ըստ պրոֆ. Արուստինյանի), նաև ակուք «վառարան», որ փոխառյալ է վրացերենից. գումարը լինում է 57:

Հին ֆրանսերեն բառերի թիվն էր 87. ֆոա բառը հաշված է երկու անգամ (մեկ այստեղ, մեկ էլ լատիններենում). ուստի գումարն է 86:

Վերջին հաշվով հայերենի 10,996 արմատների ծագումը ներկայացնում է հետևյալ պատկերը.

Անվավեր բառեր	2221
Հնդեվրոպական	927
Միջերկրյան	5
Բնաձայն	153
Փոքր-ասիական	9
Պարսերեն	15
Ասուրերեն	27
Կովկասյան	60
Իրանյան (966 պհլ. 445 պրս.)	1411
Հին լատիներեն	11
Ասորերեն	211
Հունարեն	918
Հունալատին	151
Երբայական	138
Արաբերեն	702
Վրացերեն	57
Թուրք թաթարական	170
Հին ֆրանսերեն	86
Նոր եվրոպական	44

Ամբողջական թվից (10,996) դուրս գցելով 2221 անվավեր բառերը, մնում է 8775 արմատ: Ըստ վերի հաշվի սրանից մեկնը՝ ված է 5095 արմատ (4015 փոխառյալ), որով չմեկնված են մընում դեռ 3680 արմատ:

Ապագայի աշխատանքներից և նոր գյուտներից ենք սպասում սրանց լուծումը: Այսպես՝

1) Ինչպես գտնվեց հաթերի արխիվը, ուր երևան եկան 13,000 արձանագրություններ, ինչպես գտնվել են հազարավոր արձանագրություններ Նինվեում և Բաբելոնում, ինչպես գտնըվեցին նորիս 30,000 ելամական արձանագրություններ, հույս ունինք որ ապագայում կգտնվի նաև խալդյան մի արխիվ, որից դուրս կբերվեն մեծաքանակ խալդերեն բառեր և կբացատրվեն շատ հայ բառեր:

2) Շատ բառեր կան հայերենում, որոնք իրենց արտաքենով հայտնում են, որ պահլավ են. այսպես են աշտանակ, աշտարակ, ամբաստանել, հանապազ ևն ևն. բայց մենք չենք կարող սրանց մասին մեր վերջին խոսքն ասել, քանի որ իրա-

նական որևէ լեզվում չենք գտել (տես Ա հտ., էջ 317): Սպասում ենք որևէ նոր գյուտի, որով հայտնի պիտի դառնան մեզ նորանոր պահլավական բառեր. Nyberg, Hilfsbuch des Pehlevi գրքում (Uppsala 1928), հտ. Ա. էջ 14 պահլավական փոխառությունները հայերենում դնում է «über 1500, որոնք իրեն հայտնի են», չհաշված նոր պարսկերեն բառերը. Բայց մեզ հայտնի են միայն 966 բառ. ուր են մնացյալ 534 և ավելի բառերը. իր երկնատուր քառարանում էլ չկան:

3, Հայերենը ունի 113 բառ, որոնք հայերենից դուրս միայն մի հնդեվրոպական լեզվի մեջ գոյություն ունին (տես Ա հտ., էջ 85—90): Եթե պատահաբար այս երկրորդ վկաները ավանդված չլինեին, ինչը պիտի ապացուցաներ, թե նրանք բնիկ հայ են: Այսպես էլ կան անշուշտ շատ հայ բառեր, որոնք միայն մեր լեզվի մեջ են պահպանված. ուստի նրանց ծագումը անհնարին է ստուգել:

4) Սպասում ենք մեր եղբայրակից վրացի լեզվաբաններից, որ կազմեն վրացերենի համեմատական բառարանը (ամեն մի բառի հնագույն վկայությամբ), կազմեն բոլոր կովկասյան լեզուների համեմատական քերականությունը և բառարանը, որով միայն վերջնականապես կարելի պիտի լինի վճռել հայ և վրացի հասարակաց բառերի ծագումը, համոզել բոլորին և հասկացնել մերկ պիտական ճշմարտությունը:

* * *

Այս երկրորդ հատորով վերջանում է «Հայոց լեզվի պատմությունը»: Առաջին հատորով խոսել եմ հայ լեզվի սկզբնական շրջանի և դրացի լեզուներից նրա կատարած փոխառությունների մասին: Երկրորդ հատորը նվիրված է հատկապես հայերենի իր մեջ զարգացման երևույթներին: Նախ հայոց անգիր դպրության մասին (վիպասանական շրջան), որի բառարանն եմ կազմել՝ առաջին անգամ լինելով (դժբախտաբար շատ փոքր՝ նյութի սակավության պատճառով): Սրան հաջորդում է հայ դրականության ամենաառաջին շրջանը, որ բռնում է 5-րդ դարի սկզբից մինչև 460 թիվը: Այս շրջանը սովորություն է եղել կոսկզբից մինչև 460 թիվը: Այս շրջանը սովորություն է եղել կոսկզբից մինչև 460 թիվը: Թե ով է տվել այս անունը առաջին անգամ՝ չեմ «Ոսկեդար»: Թե ով է տվել այս անունը առաջին անգամ՝ չեմ հայտնի չէ ինձ. Չամչյանի մոտ (1784 թ.) դեռ չկա. բայց արհապեն երևում է 1836 թ. Հայկազյան բառարանում (Ա հտ. էջ 9ա, դեն երևում է 1836 թ. Հայկազյան բառարանում (Ա հտ. էջ 9ա,

տող 5). «Ընտիր հայկաբանութիւն փայլէ յոսկի դարու սրբոց թարգմանչաց մերոց»:

Մարդկութեան պատմութեան մեջ հնեբը «Ոսկեդար» էին կոչուում այն չորս շրջաններից առաջինը, երբ ամբողջ երկրի վրա տիրում էր մշտական գարուն և բոլոր մարդիկ բարի, մեղմ և առաքինի էին: — Սա մի առասպել է, ծնունդ բանաստեղծական երևակայութեան, որովհետև երկրագնդի պատմութեան մեջ այդպիսի ժամանակ գոյութիւն ունեցած չէ:

Իրական պատմութեան մեջ պատմաբանները սովորութիւն են ունեցել «ոսկեդար» կոչել այս ու այն ազգի որևէ փայլուն շրջանը:

Այսպես հույների Ոսկեդարը մ. թ. ա. 499—429 թիվն է, երբ Աթենքի վրա իշխում է Պերիկլեսը, դեմոկրատների այդ նշանավոր առաջնորդը: Այդ թվից քիչ առաջ պարսից երկու ուժեղ թագավորներ՝ Դարեոսը և Գսերքսեսը, ամբողջ արևմտյան Ասիան, Ասորեստանը, Բաբելոնը, Փոքր-Ասիան և Եգիպտոսը նվաճելուց հետո, մոտ երկու միլիոնանոց բանակով Եվրոպայի վրա էին արշավել: Թրակիան, Սկիթաթոց երկիրները, Ռուսաստանը, ապա Մակեդոնիան նվաճելուց հետո, պարսիկները փոքրիկ Հունաստանի վրա ընկան: Այստեղ երևաց թե ինչ է առավել առաջադեմ կարգերով գինված երկիրը՝ բարբարոս բռնապետութեան դեմ: Փոքրիկ Հունաստանը հաղթեց. պարսկական երկու միլիոնանոց բանակը ջարդվեց. Թրակիան, Մակեդոնիան, Փոքր-Ասիայի հունական գաղութները ազատվեցին և պարսից ոտքը կտրվեց այդ երկրներից: Պարսկական արշավանքը վանելուց հետո, Հունաստանը ուժ տվեց դիտութեան, գրականութեան և գեղարվեստին: Պերիկլեսը այդ շարժման զլուխն էր կանգնած: Իր շուրջը խմբված հանճարներ այնպիսի մեծութեան հասցրին հույն կյանքը, որ այսօր էլ մեր հիացմունքին արժանի է: Էսքլիս, Սոփոկլես, Եվրիպիդես՝ ողբերգութեան մեջ, Արիստոֆան՝ կատակերգութեան մեջ, Հերոդոտ և Թուկիդիդես՝ պատմութեան մեջ, Անաքսագորաս և Սոկրատ՝ փիլիսոփայութեան մեջ, Փիդիաս՝ արձանագործութեան մեջ, Մենսիկլես՝ ճարտարագետութեան մեջ, ինքը Պերիկլես և Լիսիաո՝ ճարտասանութեան մեջ մեծամեծ վարպետներ հանդիսացան:

Հռովմայեցոց «Ոսկեդարը» առաջին դարին է, երբ Օգոստոսն է բարձրանում Հռովմի գահի վրա և հիմնում հռովմեական կայսրութիւնը (30 թ.): Իր օրով հռովմեական պետու-

թիւնը իր մեծագույն աստիճանին է հասնում: Օգոստոսը տեսնելով, որ դրանից ավելի մեծ պետութիւն կառավարել այլևս անհնարին է, փակում է պետութեան սահմանները, վերջ է տալիս դարավոր պատերազմներին, և խաղաղութիւնը տիրում է երկրում: Ինքը աշխատում է այլևս առաջ տանել ներքին բարեկարգութիւնը. իր օրով են ծաղկում լատին մտքի մեծագույն հանճարները՝ Վիրգիլիոս, Օվրատիոս, Տիտոս Լիվիոս, Սալլուստոս, Օվիդիոս և շատ ուրիշներ, որոնք այսօր էլ մեր բոլորի հիացմունքին արժանի են մնում:

Գանք այժմ մեր «Ոսկեդարին»: 384 թվին պարսիկները և հույները համաձայնութեան գալով իրենց մեջ բաժանել էին Հայաստանը. երկրի արևելյան $\frac{1}{6}$ մասը վերցրել էին պարսիկները, իսկ $\frac{5}{6}$ մասը՝ հույները: Երկու մասերն էլ ունեին իրենց հայազգի վասալ թագավորը. բայց հույները շուտով իրենց հպատակ թագավորութեան էլ վերջ տվին և Հայաստանի այն մասը հունական նահանգ դարձրին: Պարսիկները իրենց բաժնի թագավոր Խոսրովի վրա կասկածելով, բանտարկեցին և նրա եղբորը՝ Վռամշապուհին, հայոց թագավոր նշանակեցին (389 թ.): Սրա օրով տեղի ունեցավ հայոց զրեբի գյուտը, և սկսվեց հայոց զրահանութիւնը՝ Մեսրոպ Մաշտոցի ձեռքով և աշակցութեամբ Սահակ կաթողիկոսի (404 թ.): Մեռավ Վռամշապուհը 414 թ. և նրա փոխարեն պարսից թագավորը գահ բարձրացրեց բանտից արձակված Խոսրովին, որ 8 ամիս միայն իշխեց ու մեռավ (415 թ.): Գահը դատարկ մնալով և Վռամշապուհի որդին՝ Արտաշեսն էլ անչափահաս լինելով, պարսից թագավորը իր որդի Շապուհին թագավոր նշանակեց հայոց վրա, որպեսզի նրա միջոցով հայերին պարսիկ դարձնի: Բայց հայերը վաճառեցին նրան: Շապուհը փախավ Պարսկաստան, ուր և պալատական ապստամբութեան զոհ գնաց (419 թ.): Պարսից նոր թագավոր Վռամը «ներեց» հայոց հանցանքը և հայոց թագավոր նշանակեց պատանի և անփորձ Արտաշեսին: Արտաշեսը վարեց ցոփ ու անառակ կյանք. այնպես որ նախարարները զզված սրանից՝ դիմեցին Վռամին, բողոքեցին նրա և Սահակի դեմ և խնդրեցին, որ վերջ տա հայոց թագավորութեան: Վռամը ազնվականութեան ներսում ստեղծված հակասութիւնից օգտվեց, թագավորին ու կաթողիկոսին բանտարկեց և Հայաստանը մի պարսկական նահանգի վերածելով՝ Արշակունի թագավորութեան վերջ տվավ (428 թ.): 451 թվին տեղի ունեցավ հայոց առաջին ապստամբութիւնը՝ Վար-

դանանց ձեռքով, բայց անհաջող: Վարդանը պատերազմում սպանվեց, զորքը ցրվեց, բազմաթիվ իշխաններ և հազարա- կաններ գերի տարվեցին Պարսկաստան, շատերը նահատակվե- ցին, շատերն էլ տասնյակ տարիներ աքսորի մեջ տանջվելուց հետո ներման արժանացան ու Հայաստան դարձան:

Ահա ամփոփումը մեր պատմության այն շրջանի, որ «Ոս- կեղար» անունն է կրում: Եթե համեմատենք հունաց և հռո- մայեցոց Ոսկեղարի հետ, նա ոչ թե «ոսկի», այլ փայտյա էլ չէ: Ի՞նչն է ուրեմն պատճառ, որ այս գեղեցիկ կոչման է արժա- նացել նա:

Քաղաքական կողմը բոլորովին նկատի չէ առնված մեր բանասերների կողմից, այլ միմիայն մատենագրականը: Հայերը սկզբնական շրջանից սկսած, գրից ու գրականությունից զուրկ, հանկարծ 404 թվին հայ գրի և հայ գրականության տեր են դառնում: Դարերով մթի մեջ մնացած խավար աչքերը հանկարծ արևի լույսն են տեսնում: Հայերենի է թարգմանվում Ս. Գիրքը, որ այն ժամանակվա կյանքի համար ամենից հիմնական կը- վանն էր համարվում: Նրանից դուրս գրվում կամ թարգման- վում են նաև 40 կտոր այլ գործեր, որով 56 տարվա ընթաց- քում հայ գրականությունը տեր է դառնում 41 կտոր երկերի:

Այս թվերը պետք չէ համեմատել ներկա կյանքի հետ: Միմիայն մեր Պետհրատի 1950 թվի հրատարակությունների թիվը եղել է 600. Ինչ ահռելի տարբերություն երկուսի միջև: Բայց մենք բաժանված ենք իրարից 1500 տարվա անջրպետով:

Նաև գրական արժանիքով այն գործերը երևելի բաներ չեն: Նախ՝ 41 գրքերի ամենամեծ մասը թարգմանություն է. բնա- գիր են միայն Կորիւնը (հաստատապես), Եզնիկը (խմբագրու- թյուն), Ագաթանգեղոսը և Բուզանդը, որոնց հարցը դեռ լիովին պարզված չէ: Ուրեմն լավագույն դեպքում հազիվ չորսն է հայ բնագիր: Գալով գրական արժանիքին, միայն մի քանիսը կա- բող են հիշատակվել, այսպես՝ Ս. Գիրքը իբրև երբայական գրա- կանության գլուխ գործոցը, Ոսկեբերանը, իբրև բյուզանդական գրականության գլուխ գործոցներից մեկը և «Վկայք արևելից», իբրև ասորական գրականության գլուխ գործոց: Մնացյալը ընդ- հանրապես սովորական կրոնական գործեր են, որոնք այսօր ամե- նեկն չեն հետաքրքրում որևէ մեկին: Կան միայն մի քանի պատմական գործեր, որոնց գիտական արժեքը մնայուն է:

Ըստ այսմ, եթե մեր «Ոսկեղարի» քաղաքական արժեքը

փայտյա է, եթե գրական արժեքը երևելի չէ, իսկ ծագման կող- մից էլ հազիվ 4 կտորն է միայն ազգային, ուրեմն ի՞նչ մնաց:

Մեր այսպես կոչված «Ոսկեղարի» արժանիքը միմիայն լեզվի մեջ է. ամբողջ մեր հին մատենագրության մեջ, սկսած 5-րդից մինչև 15-րդ դարը, նա գրաբար հայերենի ամենահին և ամենահարագատ պատկերն է ներկայացնում, գերծ հունական, արաբական, լատինական և թաթարական ազդեցություններից: Նա մինչև անգամ շատ կողմերով տարբեր է նույն իսկ հինգե- բորդ դարի երկրորդ կեսի հայերենից, որ այս պատճառով էլ կոչվում է «արծաթե դար»: Վերը (էջ 84—89) ցույց տվինք այն 18 կետերը, որով առաջին կեսի գրաբարը տարբերվում է երկ- րորդ կեսի գրաբարից, չհաշված բազմաթիվ ավելի մանր հան- դամանքներ, ինչպես նաև ներքին տարբերությունները և ար- վեստը:

Եվրոպացիք սովորություն ունին «ոսկեղարը» կոչել իշխող անձի անունով. այսպես հունաց ոսկեղարը կոչվում է «Պերիկլեսի դար», լատիններինը «Օգոստոսի դար», մերոնք էլ երբեմն ասում են «Վռամշապուհի դար»: Բայց այս վերջինը բոլորովին անտե- դի եմ գտնում: Վռամշապուհը ոչ մի մասնակցություն չունի մեր գրերի գյուտի մեջ: Նրա միակ մասնակցությունը այն է, որ լուր տվեց Մեսրոպին թե Դանիել ասորու մոտ հին հայերեն գրեր՝ կան: Այս տեղեկությունը սուտ դուրս եկավ, բայց նրա պատճառով Մեսրոպը երկու տարի ավելորդ չարչարանքի ենթարկ- վեց և հայոց գրականությունն էլ երկու տարի ուշացավ: Ահա Վռամշապուհի տված օգուտը:

Ոմանք էլ ուզում են կոչել պարզապես «Հինգերորդ դար», բայց այս էլ ճիշտ չէ, որովհետև խոսքը ամբողջ հինգերորդ դա- րի մասին չէ, այլ նրա առաջին կեսին:

Ոմանք էլ կոչում են «ղասական հայերեն» (arménien classique). բայց այս էլ այն անպատեհությունն ունի, որ շա- տերը դասական ասելով հասկանում են ընդհանրապես գրաբարը:

Քանի որ Ե դարի գրական շարժման գլուխը կանգնած է Տարոնի գյուղացի Մեսրոպը, նա որ նախատեսեց հայ աշխարհի քաղաքական անկախության մոտալուտ անկումը և ժողովրդին կորստից փրկելու իբրև միակ միջոց հայ լեզվի պահպանությունը գտավ, նա որ առաջին անգամ մտածեց ու անձամբ հորինեց հայ գիրը և իր ձեռքով թարգմանեց առաջին հայ գիրքը, նա որ 35 տարի անգուլ անդադար ման եկավ Հայաստանի բոլոր

գավառները և երիտասարդի եռանդով և մեծ ուսուցչի կորովով
անձամբ տարածեց ամեն կողմ հայ գիրն ու գրականութունը, նա,
այո, արժանի է որ այդ դարը իր անունով կոչվի Մեսրոպյան
դար:

Քանի որ սովորական է ասել Մեսրոպյան տառեր, Մես-
րոպյան երկաթագիր, Միջին Մեսրոպյան երկաթագիր, ուստի
կարելի է ասել նաև Մեսրոպյան հայերեն:

Վիեննացիք երբեմն գործածում էին Մաշտոցյան հայերեն.
բայց այս բառից կրոնական հոտ է գալիս, ուստի ավելի լավ է
ասել Մեսրոպյան հայերեն:

ՎԻՐՋ

